

**ՀՀ
ՎՃՈՒԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ**

Հատոր XIII

2021

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ**

Հատոր XIII

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ

Հատոր XIII

ԵՐԵՎԱՆ – 2023

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411
Հ 247



**Խմբագիր՝
Լիլիթ Թադևոսյան**
**Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախագահ,
Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբան,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

**Խմբագրակազմ՝
Էմիլյա Աբրահամյան**
ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի օգնական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Վարագրատ Սուքիասյան
ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Արման Բաբախանյան
ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական

Ժենյա Ստեփանյան
ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների
ծառայության ղեկավար, իրավաբանական գիտությունների թեկնածու

Տաթևիկ Սուջյան
ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների
ծառայության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Հ247 Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի
2021 թվականի որոշումների ընտրանի Հ. XIII. (Խմբագրությամբ՝ ՀՀ Վճռաբեկ
դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Զ.Թադևոսյանի**). – Եր.: Անտարես,
2023. – 984 էջ:

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411

ISBN 978-9939-98-080-5

Գիրքը վաճառքի ենթակա չէ

Համաֆինանսավորվում
է Եվրոպական
միության կողմից



Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Համաֆինանսավորվում
և իրականացվում
է Եվրոպայի խորհրդի
կողմից

Գործընկերություն հանուն լավ կառավարման

Աջակցություն դատախարական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում

Սույն տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից համաֆինանսավորվող ծրագրի շրջանակներում: Սույն տպագրության մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում կողմերի պաշտոնական տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2021 թվականի որոշումների ընտրանին	7
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2021 թվականի որոշումների առարկայական դասակարգում	13
Աղբյուրների ցանկ թիվ 1.	
ՀՀ Սահմանադրության դրույթներ	26
Աղբյուրների ցանկ թիվ 2.	
Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռներ	27
Աղբյուրների ցանկ թիվ 3.	
ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ.....	30
1. Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0009/01/18	31
2. Հ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0046/01/09	43
3. Ա.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0006/01/17	60
4. Կ.Բաքնիաշվիլիի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0015/01/19.....	69
5. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0335/01/19.....	81
6. Գ.Ալեքյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0109/06/19.....	92
7. Ն.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0684/11/18.....	102
8. Կ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0121/01/10	112
9. Հ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0062/01/18	124
10. Վ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0114/01/18	144
11. Գ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1090/01/19.....	155
12. Ս.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0137/01/15	170
13. Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0253/01/19.....	186
14. Ի.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0003/01/15.....	194
15. Ն.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0041/01/19	217
16. Ռ.Քոչարյանի և Ս.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0253/01/19	228
17. Ն.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1076/01/20.....	268
18. Ա.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0161/11/18.....	284
19. Ա.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0054/01/15	296

20. Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1256/06/20	334
21. Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0743/06/18	350
22. Գ.Նավասարդյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0024/01/18	374
23. Տ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0635/11/19	389
24. Է.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԱԲԴ1/0072/01/17	399
25. Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0010/14/19.....	414
26. Դ.Դեղոյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0359/01/18	426
27. Մ.Մեսրոպյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0040/01/12.....	447
28. Ա.Հովակիմյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0068/01/18.....	464
29. Թ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՇԴ1/0038/01/16.....	476
30. Ռ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0756/01/18	491
31. Ս.Հակոբյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԴ/0275/11/18	502
32. Մ.Մալխասյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0045/01/09	515
33. Ա.Օթարյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0069/01/19.....	534
34. Հ.Գյաղուկյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0065/01/17	545
35. Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0253/01/19	558
36. Տ.Բեգլարյանի վերաբերյալ որոշում, ՄԴ/0052/01/18.....	601
37. Օ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0541/11/19	611
38. Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0073/01/17	625
39. Ա.Տեր-Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0149/11/19	634
40. Կ.Թորոսյանի և Լ.Մկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0505/11/18	646
41. «Էլիտ էսվե», «Էլիտ էսվե» և «Պրեստիժ լենդ» ՄԴԸ-ների վերաբերյալ որոշում, ԵԴ/0957/11/19	655
42. Ի.Վահանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0174/06/21.....	664
43. Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0002/06/19	679
44. Ա.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1026/06/20.....	694
45. Վ.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0732/11/20	717
46. Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0558/01/18	726
47. Կ.Ալավերդյանի վերաբերյալ որոշում, ԵԴ-11.....	748
48. Մ.Արզումանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0280/01/20.....	761
49. Հ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0304/01/15	772
50. Մ.Միլիտոնյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0013/06/19	783
51. Ի.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1314/06/19	795

52. Վ.Մկոյանի վերաբերյալ որոշում (ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԱՐԱԴ1/0025/01/15	806
53. Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵՔԲԴ/0198/01/08	836
54. Բ.Նորոյանի վերաբերյալ որոշում, ՇԴ2/0030/01/19	853
55. Ս.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0053/01/18	866
56. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0124/01/20	881
57. Մ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0197/01/19	895
58. Մ.Մովսեսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0273/01/19	906
59. Զ.Մեջլումյանի, Մ.Ենոքյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0159/11/19	923
60. Ռ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0237/06/19	940
61. Ժ.Բրուտյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0279/06/21	951
62. Ա.Թաթուլյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0012/06/20	967



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻՆ**

2015 թվականի սահմանադրական փոփոխություններից ի վեր, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը՝ Վճռաբեկ դատարանը, դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով, ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ու վերացնում մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Գլոբալիզացիայի ժամանակաշրջանում, երբ իրավունքն այլևս լոկ օրենսդրական կարգավորում չէ, իսկ համաշխարհային զարգացումներն աննախադեպ արագությամբ փոփոխում են միջազգային իրավունքի էությունն ու բովանդակությունը, Վճռաբեկ դատարանը, իրացնելով իր սահմանադրական առաքելությունն ու կրելով Հայաստանի Հանրապետությունում կանխատեսելի արդարադատության միջավայր ձևավորելու պատասխանատվությունը՝ չի կարող հայրենական իրավունքի զարգացումը սահմանափակել օրենսդրական կարգավորումների տեխնիկական կիրառման շրջանակով: Բարձրագույն դատական ատյանը չի կարող իրականացնել նաև միջազգային չափանիշների մեխանիկական «փոխադաստում» հայրենական իրավակիրառ պրակտիկա:

Իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի միասնականացմանն ու իրավունքի հիմնարար խախտումները վերացնելուն ուղղված իր սահմանադրական գործառնությունները իրացնելիս, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, դոկտրիններ հաղորդելով օրենսդրական կարգավորումներին, ապահովում է դինամիկ փոփոխվող ու զարգացող միջազգային առաջադեմ չափանիշների տեղայնացումը հայրենական իրավունքի ոգուն և էությանը համապատասխան՝ ուշադրության առանցքում պահելով ավանդական սկզբունքների վրա հիմնված ներպետական իրավունքի համահունչ ու ներդաշնակ զարգացումը: Բարձրագույն դատական ատյանի գործունեության գերնպատակն է ապահովել կանխատեսելի արդարադատության միջավայր՝ ի նպաստ հայրենական իրավակարգի ամրապնդման ու իրավունքի գերակայության ապահովման:

2021 թվականի ընթացքում ևս Վճռաբեկ դատարանի քրեական պալատը կատարել է հսկայական աշխատանք. առանցքային նշանակություն ունեցող մի շարք հարցերով արտահայտվել են միջազգային սկզբունքների վրա հիմնված ուղենիշային իրավական դիրքորոշումներ՝ զարգացնելով ներպետական իրավունքը: Այդ իրավական դիրքորոշումները շարունակել են հենվել միջազգային լավագույն փորձի, Մարդու իրավունքների

եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, Միավորված ազգերի կազմակերպության բանաձևերի և հանձնարարականների, միջազգային փափուկ իրավունքի (soft law) այլ աղբյուրների վրա:

Վերը ներկայացված աշխատանքն արտացոլվել է հարյուրից ավելի դատական ակտերում կայացման արդյունքում, որոնց հիմքում ընկած է երկրաչափական պրոգրեսիայի ձևով տարեցտարի աճող վճարել բողոքների թվաքանակը:

Բարձրագույն դատական ատյանի գործունեության ուղղությունների արդյունավետ կենսագործման և կանխատեսելի արդարադատության միջավայրի ձևավորման գրավականներից է Վճարել դատարանի նախադեպային բնույթի որոշումների բովանդակության մասին հանրային իրազեկումն ու դրանց մատչելիության ապահովումը: Այս առումով վատահելի գործիք են ծառայում յուրաքանչյուր տարի հրատարակվող Վճարել դատարանի նախադեպային որոշումների ժողովածուները: Դրանք կոչված են նաև ապահովելու Վճարել դատարանի գործունեության հաշվետվողականությունը՝ հնարավորություն ընձեռելով ոչ միայն իրավակիրառողներին և իրավաբանական համայնքին, այլև ողջ հանրությանը՝ հետևելու և մշտադիտարկելու բարձրագույն դատական ատյանի գործունեության ընթացքը:

Վճարել դատարանի նախադեպային բնույթի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները ուղենիշ են Հայաստանի Հանրապետության դատական տարբեր ատյանների դատավորների համար և պատահական չէ, որ այսօր դատական ակտերի գերակշիռ մասը հիմնավորված է բարձրագույն դատական ատյանի որոշումներով:

Վճարել դատարանի որոշումները կարևոր կողմնորոշիչ նշանակություն ունեն նաև իրավաստեղծ գործունեության համար, բացի այդ լայնորեն օգտագործվում են ինչպես Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող՝ գործող դատավորների, դատախազների, քննիչների վերապատրաստման ու թեկնածուների պատրաստման դասընթացներում, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ դասավանդման գործընթացում:

2019 թվականից ի վեր, Վճարել դատարանի քրեական պալատի որոշումների ժողովածուները հրատարակվում են ընտրանու ձևաչափով՝ ներառելով նախադեպային նշանակություն ունեցող այն որոշումները, որոնցում մշակվել են իրավակիրառ պրակտիկայում ծագող հիմնահարցերի լուծման, նյութական և դատավարական իրավունքի նորմերի մեկնաբանության առավել առանցքային չափորոշիչները:

Ներկայացվող ժողովածուն իրենից ներկայացնում է 2021 թվականի ընթացքում Վճարել դատարանի քրեական պալատի կողմից կայացված որոշումների ընտրանի և ներառում է նախադեպային նշանակություն ունեցող 62 որոշում, այդ թվում մեկ որոշում՝ Սահմանադրական դատարան դիմելու մասին, և ևս մեկը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու մասին:

Այս առումով պատեհ է շեշտել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը մշտապես եղել է Վճռաբեկ դատարանի երկարամյա գործունեության անբաժանելի ուղեկիցը: Արդյունքում, միջազգայնորեն ճանաչված չափանիշներին համապատասխան, բազմաթիվ խնդրահարույց հարցերով, բարձրագույն դատական ատյանի կողմից ապահովվել է մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների իրապես արդյունավետ ու հուսալի պաշտպանություն:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, կարևորելով Եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրության հիմքում ընկած՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ համագործակցության ամրապնդմանն ապատակով երկխոսությունը, ինչպես նաև միջազգային դատարանի կողմից կայացված վճիռների կատարման Հայաստանի Հանրապետության կողմից կոնվենցիայի վավերացմամբ ստանձնած միջազգային պարտավորության իրագործման արդյունավետությունը, *Հովհաննես Մովսիսյանի և Արմեն Արսենյանի* վերաբերյալ գործով 2021 թվականի հունվարի 27-ի թիվ ԱՎԴ/0009/01/18 որոշմամբ, որն ամփոփված է սույն ընտրանու մեջ, խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Հղում կատարելով մի կողմից՝ խոշտանգման արգելքի՝ որպես միջազգային իրավունքի *jus cogens* նորմի վերաբերյալ միջազգային փաստաթղթերին, Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին, մյուս կողմից՝ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջներին և այդ համատեքստում՝ վաղեմության ժամկետների չկիրառման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին, ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի, Վենետիկի հանձնաժողովի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի արտահայտած դիրքորոշումներին, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը բարձրացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջներին՝ խոշտանգման կամ դրան հավասարեցված հանցանքներով միջազգային իրավունքի աղբյուրների վկայակոչմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների չկիրառման համապատասխանության հարցը:

2022 թվականի ապրիլի 26-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ Պալատը, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դիմումի հիման վրա, Եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրության շրջանակներում տրամադրել է խորհրդատվական կարծիք՝ Եվրոպական կոնվենցիայի կիրառման՝ Եվրոպայի խորհրդի տարածքում ոչ միատեսակ մոտեցում ունեցող խոշտանգման գործերով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի կիրառման խնդրահարույց հարցի վերաբերյալ:

Միջազգային դատարանից ստացված վերը նշված խորհրդատվական կարծիքն իր նշանակությամբ դարձել է օրակարգային քննարկման առարկա

թե՛ միջազգային հասարակական կազմակերպությունների շրջանում, թե՛ միջազգային ակադեմիական միջավայրում:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումների սույն ընտրանին իր մեջ է ամփոփել մի շարք այլ ուղենիշային նշանակություն ունեցող նախադեպային իրավական դիրքորոշումներ պարունակող որոշումներ: Այսպես. զարգացնելով փողերի լվացման վերաբերյալ գործերով՝ նախորդող հանցագործության առնչությամբ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Նշոր Մուքիսայանի* գործով 2021 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ արձանագրել է, որ փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի հանցավոր ծագումը հաստատելու համար ոչ միայն անհրաժեշտ չէ նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայություն, այլև տվյալ գույքի հանցավոր ծագման փաստը կարող է հաստատվել՝ անկախ նախորդող հանցագործության՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված լինելու պայմանից: Տվյալ դեպքում բավարար է գործի փաստերից բխող որոշակի տվյալների, այդ թվում՝ անուղղակի ապացույցների համադրման արդյունքում զալ ողջամիտ եզրահանգման առ այն, որ խնդրո առարկա գույքն ունի հանցավոր ծագում: Այլ կերպ՝ պահանջվում է միայն այնպիսի փաստական տվյալների ներկայացում, որոնք ողջամտորեն կվկայեն փողերի լվացմանը նախորդող արարքի հանցավոր լինելու մասին:

Ուշադրության է արժանի նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության սկզբունքի, ինչպես նաև դրանց վերանայման սահմանների մեկնաբանման կապակցությամբ Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 11-ի՝ *Մելիք Մեսրոպյանի* գործով կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումն այն մասին, որ նոր օրենքի ընդունման հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման համար անհրաժեշտ է, որ ընդունված նոր օրենքը ոչ միայն բարելավի հանցանք կատարած անձի վիճակը, այլև բացառի կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը: Այլ խոսքով՝ օրենքի հետադարձության կանոնը վերստուգիչ (ռեիզիոն) կարգով կիրառելի է այն պարագայում, երբ օրենսդրական փոփոխության արդյունքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հակասում է օրինականության և իրավունքի գերակայության սկզբունքներին, որպիսի պայմաններում դատարանի համար պարտադիր է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը և նոր օրենքի գործողության տարածումն այն անձանց նկատմամբ, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն: Մասնավորապես, որպես այդպիսին կարող են դիտարկվել օրենսդրական այնպիսի փոփոխությունները, որոնք, ի թիվս այնի, վերացնում են արարքի հանցավորությունը, փոխում արարքի իրավաբանական որակումը, մեղմացնում անձի նկատմամբ նշանակված պատիժը կամ այն փոխարինում ավելի մեղմ պատժատեսակով կամ որևէ կերպ բարելավում են հանցանք կատարած անձի վիճակը:

Մեկ այլ՝ *Մերվենիկ Գևորգյանի* գործով 2021 թվականի փետրվարի 25-ին կայացված որոշմամբ, Վճռաբեկ դատարանն անդրադառնալով քրեական գործերի միացման՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի լիազորությանը, արձանագրել է, որ բացի նրանից, որ այն ունի հայեցողական բնույթ, այդ լիազորությունը պետք է նաև բավարարի քրեական գործերի միացման օբյեկտիվ հնարավորության չափանիշին: Այլ կերպ՝ հանցակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերի միացման կամ անջատման օրինականությունն ու հիմնավորվածությունը կախված է ոչ միայն հանցակցության կոնկրետ ձևից, հանցակիցների մեղադրանքների փոխկապակցվածության բնույթից և դրանցով պայմանավորված՝ հանցակիցների վերաբերյալ քրեական գործերով մեղադրանքների փաստական հանգամանքների միջև կապի աստիճանից, այլ նաև քրեական գործերի հետագա համատեղ քննության օբյեկտիվ հնարավորությունից: Մասնավորապես, այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցակիցներից մեկի՝ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ մյուս հանցակիցների վերաբերյալ քրեական գործերն անջատվում և մեղադրական եզրակացությամբ ուղարկվում են դատարան, ապա նման անջատումն ինքնին կրում է օբյեկտիվ բնույթ:

Ուշադրության է արժանի նաև քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի որոշումը վերացնելու ընթացակարգերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 26-ի՝ *Մուրադ Մովսեսյանի* գործով կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով սահմանված է ոչ թե նույն օրենսգրքի 21-րդ հոդվածին հակասող կարգավորում, այլ օրենսդիրը, դատավարության մասնակիցներին հնարավորություն ընձեռելով բողոքարկելու քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները, նախատեսել է համապատասխան ընթացակարգ, որը կոչված է ապահովելու անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված՝ բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը:

Կալանավորման ժամկետի երկարացման պայմանի՝ նախաքննական մարմնի անհրաժեշտ (հատուկ) ջանասիրության (due diligence) մեկնաբանմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Մղասի Թաթուկյանի* գործով 2021 թվականի դեկտեմբերի 24-ին կայացված որոշմամբ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «հատուկ ջանասիրությունը» գնահատելիս, դատարանները ոչ միայն պետք է հաշվի առնեն իրականացված քննչական և դատավարական գործողությունների քանակական կազմը, այլ նաև ուշադրության արժանացնեն գործի բարդությունը: Այս առումով կարևոր է մի կողմից՝ գործով անցնող մեղադրյալների, վկաների, տուժողների, դատավարությանը մասնակցող այլ անձանց, մյուս կողմից՝ մեղադրյալ(ներ)ին մեղսագրվող արարքների քանակը, դրանց փաստական և իրավական բովանդակությունը, ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը և հավաքվող ապացույցների ծավալը:

Միաժամանակ, գործի բարդությունը որոշելիս, պետք է նաև հաշվի առնել վկաների գտնվելու վայրը պարզելու և նրանց հարցաքննելու նպատակով ձեռնարկվող միջոցառումների շրջանակը (օրինակ՝ միջազգային իրավական օգնությամբ այլ երկրում կամ պաշտպանության ներքո գտնվող վկաներին հարցաքննելու ուղղությամբ կատարվող գործողությունները): Բացի այդ, «հատուկ ջանասիրության» առկայությունը որոշելիս, հարկ է նաև հաշվի առնել գործով անցնող շահագրգիռ անձանց վարքագիծը՝ գործի արագ քննությանը չխոչընդոտելու տեսանկյունից: Մասնավորապես, գործի քննության ձգձգումը կարող է պայմանավորված լինել դատավարության մասնակիցների, այդ թվում՝ անագատության մեջ գտնվող մեղադրյալի կողմից գործի քննության ընթացքը շեղելու (օրինակ՝ ի սկզբանե սուտ մատնություն կատարելու միջոցով), պարզման ենթակա հանգամանքների բացահայտմանն իրենց վարքագծով խոչընդոտներ ստեղծելու հանգամանքներով, որոնք կարող են առաջացնել լրացուցիչ քննչական և դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտություն:

Վճռաբեկ դատարանի որոշումների սույն ընտրանու հրատարակումը կյանքի է կոչվել մեր միջազգային գործընկեր Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում, ինչն իր հերթին թափանցիկության, այդ թվում՝ կառուցողական փոխգործակցության համար մեր պատրաստակամության վկայությունն է:

Լիահույս ենք, որ Վճռաբեկ դատարանի՝ վերը ներկայացված, ինչպես նաև սույն ընտրանիում ամփոփված մյուս՝ ոչ պակաս արժեքավոր որոշումները, կհամալրեն իրավունքի աղբյուրների շրենարանը, իսկ մեր ընթերցողը կգրնի իր համար հետաքրքրություն ներկայացնող իրավական խնդիրների վերաբերյալ բարձրագույն դատական արդյունքի ինքնասրիպ լուծումներ:

Լ.Զ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ,

ՀՀ վաստակավոր իրավաբան,

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Ն-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի հետադարձ ուժը (ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդված)

Ն-I-1 Մ.Մեսրոպյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0040/01/12
(27², նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-1).....447

Ն-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած անձանց նկատմամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ հոդված)

Ն-II-1 Վ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0114/01/18
(10, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1)144

Ն-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքների գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց նկատմամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդված)

Ն-III-1 Վ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0114/01/18 (10, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1).....144

Ն-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցակիցների տեսակները (ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդված)

Ն-IV-1 Դ.Դեղոյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0359/01/18 (26, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-2, Ն-XXIV-1, Դ-XLII-4).....426

Ն-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ հիմնական և լրացուցիչ պատիժները (ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդված)

Ն-V-1 Գ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1090/01/19 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-XXIII-1).....155

Ն-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը (ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդված)

¹ Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Ն» տառով:
² Որոշման հերթական համարը:

Ն-VI-1 Գ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1090/01/19 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-XXIII-1)155

Ն-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը դատավճիռների համակցությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդված)

Ն-VII-1 Ն.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0041/01/19 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Դ-XLII-2, Դ-XLIII-1)217

Ն-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդված)

Ն-VIII-1 Ն.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0041/01/19 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Դ-XLII-2, Դ-XLIII-1)217

Ն-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)

Ն-IX-1 Ա.Հովակիմյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0068/01/18 (28).....464

Ն-IX-2 Մ.Արզումանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0280/01/20 (48, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XX-1)761

Ն-IX-3 Բ.Նորոյանի վերաբերյալ որոշում, ՇԴ2/0030/01/19 (54, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-4, Դ-XLII-6)853

Ն-IX-4 Մ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱԲԴ/0197/01/19 (57, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIX-1)895

Ն-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդված)

Ն-X-1 Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0009/01/18 (1, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXII-1)31

Ն-X-2 Գ.Նավասարդյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0024/01/18 (22, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-1, Ն-XII-1)374

Ն-X-3 Հ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0062/01/18 (9, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-1, Դ-XX-1)124

Ն-X-4 Հ.Գյաղուկյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0065/01/17 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-2, Դ-XII-2)545

Ն-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ համաներումը (ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդված)

Ն-XI-1 Գ.Նավասարդյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0024/01/18 (22, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-2, Ն-XII-1)374

Ն-XI-2 Հ.Գյաղուկյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0065/01/17 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-4, Դ-XII-2)545

Ն-XI-3 Հ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0304/01/15 (49, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XII-4).....	772
Ն-XI-4 Բ.Նորոյանի վերաբերյալ որոշում, ՇԴ2/0030/01/19 (54, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-3, Դ-XLII-6).....	853

Ն-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 95-րդ հոդված)

Ն-XII-1 Գ.Նավասարդյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0024/01/18 (22, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-2, Ն-XI-1)	374
---	-----

Ն-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հիմքը (ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդված)

Ն-XIII-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0010/14/19 (25, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-1).....	414
---	-----

Ն-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելը, փոփոխելը և դադարեցնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդված)

Ն-XIV-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0010/14/19 (25, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-1)	414
--	-----

Ն-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված)

Ն-XV-1 Ի.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0003/01/15 (14, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XX-2)	194
Ն-XV-2 Դ.Դեղոյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0359/01/18 (26, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-XXIV-1, Դ-XLII-4).....	426

Ն-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիտավորությանը առողջությանը ծանր վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)

Ն-XVI-1 Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0335/01/19 (5)	81
--	----

Ն-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)

Ն-XVII-1 Ա.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0054/01/15 (19, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-1, Դ-XX-3)	296
--	-----

Ն-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի վաճուճումը) (ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդված)

Ն-XVIII-1 Ա.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0054/01/15 (19, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVII-1, Դ-XX-3)	296
--	-----

Ն-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված)

Ն-XIX-1 Մ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0197/01/19
(57, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-4)895

Ն-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)

Ն-XX-1 Մ.Արզումանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0280/01/20
(48, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-2)761

Ն-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ թմրամիջոցների կամ հոգեմեկ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)

Ն-XXI-1 Մ.Մեսրոպյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0040/01/12
(27, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1)447

Ն-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ խոշտանգումը (ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդված)

Ն-XXII-1 Հ.Մովսիսյանի և Ա.Արսենյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0009/01/18
(1, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1)31
Ն-XXII-2 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0558/01/18 (46)726

Ն-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտոնեական կեղծիքը (ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված)

Ն-XXIII-1 Գ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1090/01/19
(11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-VI-1)155

Ն-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունը պարտակելը (ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդված)

Ն-XXIV-1 Դ.Դեղոյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0359/01/18 (26, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-XV-2, Դ-XLII-4)426

Ն-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը (ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդված)

Ն-XXV-1 Տ.Բեգլարյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0052/01/18 (36)601

Դատաբանական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Դ³-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդված)

Դ-I-1 Կ.Ալավերդյանի վերաբերյալ որոշում, ԵԴ-11 (47, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXVII-1).....748
Դ-I-2 Ս.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0053/01/18 (55, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VI-1, Դ-XXXV-1, Դ-XXXVI-1).....866

Դ-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդված)

Դ-II-1 Ա.Թաթուլյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0012/06/20 (62).....967

Դ-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության լեզուն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդված)

Դ-III-1 Կ.Բաքսիաշվիլիի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0015/01/19 (4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XV-1)69

Դ-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)

Դ-IV-1 Ա.Օթարյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0069/01/19 (33, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLVI-2).....534

Դ-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)

Դ-V-1 Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0198/01/08 (53, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-3, Դ-XIX-1, Դ-XX-5, Դ-XLIV-1).....836

Դ-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդված)

Դ-VI-1 Ս.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0053/01/18 (55, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-2, Դ-XXXV-1, Դ-XXXVI-1).....866

Դ-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդված)

Դ-VII-1 Հ.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0046/01/09 (2)43

³ Մույն դասակարգման մեջ դատաբանական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Դ» տառով:

Դ-VII-2 Մ.Մալխասյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0045/01/09 (32).....	515
Դ-VII-3 Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵՔԴԴ/0198/01/08 (53, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-1, Դ-XIX-1, Դ-XX-5, Դ-XLIV-1)	836
Դ-VII-4 Մ.Մովսեսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0273/01/19 (58, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIV-1, Դ-XXXIII-1, Դ-XXXIV-1).....	906

Դ-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու և հանցագործությունը բացահայտելու պարտականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդված)

Դ-VIII-1 Թ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՇԴ1/0038/01/16 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-1)	476
Դ-VIII-2 Զ.Մեջլումյանի, Մ.Ենոքյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0159/11/19 (59, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-2, Դ-XXXII-2)	923

Դ-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործերի միացումը և անջատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդված)

Դ-IX-1 Ս.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0137/01/15 (12, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIX-1)	170
Դ-IX-2 Ռ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0756/01/18 (30).....	491

Դ-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդված)

Դ-X-1 Ռ.Քոչարյանի և Ս.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0253/01/19 (16, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLV-1)	228
Դ-X-2 Օ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0541/11/19 (37, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XII-3, Դ-XLVII-1)	611

Դ-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական հետապնդումը հանրային և մասնավոր մեղադրանքի գործերով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդված)

Դ-XI-1 Ս.Հակոբյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԴ/0275/11/18 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XII-1, Դ-XXVIII-1, Դ-XXXI-1)	502
--	-----

Դ-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)

Դ-XII-1 Ս.Հակոբյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԴ/0275/11/18 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XI-1, Դ-XXVIII-1, Դ-XXXI-1)	502
Դ-XII-2 Հ.Գյաղուկյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0065/01/17 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ե-X-4, Ե-XI-2)	545
Դ-XII-3 Օ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0541/11/19 (37, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-2, Դ-XLVII-1)	611

Գ-ХII-4 Հ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0304/01/15
(49, նույն որոշումը տե՛ս նաև Ն-ХI-3)772

Գ-ХIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդված)

Գ-ХIII-1 Ա.Տեր-Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0149/11/19
(39, նույն որոշումը տե՛ս նաև Դ-ХL-1).....634

Գ-ХIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննիչը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդված)

Գ-ХIV-1 Մ.Մովսեսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0273/01/19
(58, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-4, Դ-ХХХIII-1, Դ-ХХХIV-1)906

Գ-ХV Մեկնաբանվող իրավադրույթ՝ թարգմանիչը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդված)

Գ-ХV-1 Կ.Բաքնիաշվիլիի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0015/01/19
(4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-1)69

Գ-ХVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ բացարկները, ինքնաբացարկները և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդված)

Գ-ХVI-1 Գ.Ալեքյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0109/06/19 (6, նույն որոշումը տե՛ս նաև Դ-ХVII-1, Դ-ХLII-1)92

Գ-ХVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավորի ինքնաբացարկը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդված)

Գ-ХVII-1 Գ.Ալեքյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0109/06/19 (6, նույն որոշումը տե՛ս նաև Դ-ХVI-1, Դ-ХLII-1)92

Գ-ХVII-2 Մ.Միլիտոնյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0013/06/19 (50, նույն որոշումը տե՛ս նաև Դ-ХХII-6).....783

Գ-ХVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես ապացույց չթույլատրվող նյութերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդված)

Գ-ХVIII-1 Հ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0062/01/18
(9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-Х-3, Դ-ХХ-1)124

Գ-ХIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների ստուգումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդված)

Գ-ХIX-1 Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0198/01/08 (53, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-1, Դ-VII-3, Դ-ХХ-5, Դ-ХLIV-1)836

Գ-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդված)

Գ-XX-1 Հ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0062/01/18 (9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-Ց-3, Դ-XXVIII-1)124

Գ-XX-2 Ի.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0003/01/15 (14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-ՑV-1)194

Գ-XX-3 Ա.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0054/01/15 (19, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVII-1, Ն-XXVIII-1)296

Գ-XX-4 Է.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ1/0072/01/17 (24, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLII-3)399

Գ-XX-5 Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵՔԲԴ/0198/01/08 (53, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-1, Դ-VII-3, Դ-XIX-1, Դ-XLIV-1)836

Գ-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոցների հասկացությունը և տեսակները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդված)

Գ-XXI-1 Ռ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0237/06/19 (60, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIV-1).....940

Գ-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)

Գ-XXII-1 Ն.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1076/01/20 (17)268

Գ-XXII-2 Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1256/06/20 (20)334

Գ-XXII-3 Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0253/01/19 (35)558

Գ-XXII-4 Ի.Վահանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0174/06/21 (42).....664

Գ-XXII-5 Ա.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/1026/06/20 (44).....694

Գ-XXII-6 Մ.Միլիտոնյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0013/06/19 (50, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-2)783

Գ-XXII-7 Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0124/01/20 (56, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIII-1).....881

Գ-XXII-8 Ժ.Բրուտյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0279/06/21 (61)951

Գ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)

Գ-XXIII-1 Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0124/01/20 (56, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXII-7)881

Գ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոցը փոփոխելը և վերացնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդված)

Գ-XXIV-1 Ռ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0237/06/19 (60, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXI-1)940

Գ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետների հաշվումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդված)

Գ-XXV-1 Ն.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0684/11/18
(7, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVI-1)102

Գ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետը բաց թողնելու հետևանքները և դրա վերականգնման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդված)

Գ-XXVI-1 Ն.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0684/11/18
(7, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXV-1)102

Գ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու պարտականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդված)

Գ-XXVII-1 Թ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0038/01/16
(29, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-1)476

Գ-XXVII-2 Զ.Մեջլումյանի, Մ.Ենոքյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0159/11/19 (59, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-2, Գ-XXXII-2)923

Գ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու առիթները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդված)

Գ-XXVIII-1 Ս.Հակոբյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԴ/0275/11/18 (31, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-1, Գ-XII-1, Գ-XXXI-1)502

Գ-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդված)

Գ-XXIX-1 Տ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0635/11/19
(23, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXX-1)389

Գ-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման արդյունքում ընդունվող որոշումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդված)

Գ-XXX-1 Տ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0635/11/19 (23, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIX-1)389

Գ-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդված)

Գ-XXXI-1 Ս.Հակոբյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԴ/0275/11/18
(31, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-1, Գ-XII-1, Գ-XXVIII-1)502

Գ-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդված)

Գ-XXXII-1 Ա.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0161/11/18 (18)	284
Գ-XXXII-2 Զ.Մեջլումյանի, Մ.Ենոքյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0159/11/19 (59, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-2, Գ-XXVII-2)	923

Գ-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննիչի գործողությունները քրեական գործով վարույթը կարճելուց և քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդված)

Գ-XXXIII-1 Մ.Մովսեսյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0273/01/19 (58, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-4, Գ-XIV-1, Գ-XXXIV-1)	906
--	-----

Գ-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդված)

Գ-XXXIV-1 Մ.Մովսեսյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0273/01/19 (58, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-4, Գ-XIV-1, Գ-XXXIII-1)	906
--	-----

Գ-XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրական եզրակացությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդված)

Գ-XXXV-1 Ա.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0053/01/18 (55, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-2, Գ-VI-1, Գ-XXXVI-1)	866
---	-----

Գ-XXXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատախազի որոշումը մեղադրական եզրակացությամբ ստացված գործով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդված)

Գ-XXXVI-1 Ա.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0053/01/18 (55, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-2, Գ-VI-1, Գ-XXXV-1)	866
--	-----

Գ-XXXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի որոշմամբ կատարվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդված)

Գ-XXXVII-1 Կ.Ալավերդյանի վերաբերյալ որոշում, ԵԳ-11 (47, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-1)	748
---	-----

Գ-XXXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունների քննարկման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդված)

Գ-XXXVIII-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0002/06/19 (43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIX-1).....	679
--	-----

Գ-XXXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդված)

Գ-XXXIX-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0002/06/19 (43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-1)	679
Գ-XXXIX-2 Ի.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/1314/06/19 (51).....	795

Գ-XL Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)

Գ-XL-1 Ա.Տեր-Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0149/11/19 (39, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIII-1)	634
Գ-XL-2 Կ.Թորոսյանի և Լ.Մկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0505/11/18 (40).....	646
Գ-XL-3 «Էլիտա էսվե», «Էլիտ էսվե» և «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ների վերաբերյալ որոշում, ԵԳ/0957/11/19 (41).....	655
Գ-XL-4 Վ.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0732/11/20 (45).....	717

Գ-XLI Մեկնաբանվող իրավադրույթ՝ որոշում՝ խափանման միջոցների մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդված)

Գ-XLI-1 Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0253/01/19 (13).....	186
---	-----

Գ-XLII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)

Գ-XLII-1 Գ.Ալեքյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0109/06/19 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XVI-1, Գ-XVII-1)	92
Գ-XLII-2 Ն.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0041/01/19 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-VIII-1, Գ-XLIII-1).....	217
Գ-XLII-3 Է.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0072/01/17 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XX-4)	399
Գ-XLII-4 Դ.Դեղոյանի վերաբերյալ որոշում, ԵԳ/0359/01/18 (26, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-XV-2, Ն-XXIV-1).....	426
Գ-XLII-5 Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0073/01/17 (38, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLV-2, Գ-XLVII-2, Գ-XLVIII-1).....	625
Գ-XLII-6 Բ.Նորոյանի վերաբերյալ որոշում, ՇԳ2/0030/01/19 (54, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-3, Ն-XI-4).....	853

Գ-XLIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդված)

Գ-XLIII-1 Ն.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0041/01/19 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-VIII-1, Գ-XLII-2).....	217
--	-----

Գ-XLIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրական դատավճիռը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդված)

Գ-XLIV-1 Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵՔԲԳ/0198/01/08
(53, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-1, Գ-VII-3, Գ-XIX-1, Գ-XX-5)836

Գ-XLV Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդված)

Գ-XLV-1 Ռ.Քոչարյանի և Ս.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0253/01/19 (16, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-1)228
Գ-XLV-2 Ա.Արբահամյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0073/01/17
(38, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLII-5, Գ-XLVII-2, Գ-XLVIII-1)625

Գ-XLVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոքը և վարույթ ընդունելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդված)

Գ-XLVI-1 Ա.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0006/01/17 (3)60
Գ-XLVI-2 Ա.Օթարյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0069/01/19
(33, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-1)534

Գ-XLVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդված)

Գ-XLVII-1 Օ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0541/11/19
(37, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-2, Գ-XII-3)611
Գ-XLVII-2 Ա.Արբահամյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0073/01/17
(38, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLII-5, Գ-XLV-2, Գ-XLVIII-1)625

Գ-XLVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտ կայացնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդված)

Գ-XLVIII-1 Ա.Արբահամյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0073/01/17
(38, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLII-5, Գ-XLV-2, Գ-XLVII-2)625

Գ-XLIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ Վերաքննիչ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդված)

Գ-XLIX-1 Ս.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԲ/0137/01/15
(12, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IX-1)170

Գ-L Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճռաբեկ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդված)

Գ-L-1 Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0743/06/18
(21, նույն որոշումը տե՛ս նաև Գ-LIII-2, Գ-LIV-2).....350

Դ-LI Մեկնաբանվող իրավադրույթ՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդված)

Դ-LI-1 Կ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0121/01/10 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-LIII-1, Դ-LIV-1)112

Դ-LII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր երևան եկած հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդված)

Դ-LII-1 Վ.Մկոյանի վերաբերյալ որոշում (ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԱԲԱԴԻ/0025/01/15 (52, նույն որոշումը տե՛ս նաև Դ-LIII-3)806

Դ-LIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդված)

Դ-LIII-1 Կ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0121/01/10 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-LI-1, Դ-LIV-1)112

Դ-LIII-2 Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0743/06/18 (21, նույն որոշումը տե՛ս նաև Դ-L-1, Դ-LIV-2)350

Դ-LIII-3 Վ.Մկոյանի վերաբերյալ որոշում (ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԱԲԱԴԻ/0025/01/15 (52, նույն որոշումը տե՛ս նաև Դ-LII-1)806

Դ-LIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտերի վերանայումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդված)

Դ-LIV-1 Կ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0121/01/10 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-LI-1, Դ-LIII-1)112

Դ-LIV-2 Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0743/06/18 (21, նույն որոշումը տե՛ս նաև Դ-L-1, Դ-LIII-2)350

Աղբյուրների ցանկ թիվ 1
ՀՀ Սահմանադրության դրույթներ

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(37), (40)
ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(4)
ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(59)
ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(46)
ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(17), (20), (35), (42), (43), (44), (56), (61), (62)
ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(59)
ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(59)
ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3), (7), (33), (40)
ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(7), (12), (33), (43), (58)
ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(2), (32), (52), (53)
ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(33)
ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3), (33)
ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(16)

Աղբյուրների ցանկ թիվ 2
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. *A. and Others v. the United Kingdom*, 2009 թվականի փետրվարի 19-ի վճիռ (43)
2. *Aleksandr Makarov v. Russia*, 2009 թվականի մարտի 14-ի վճիռ (56)
3. *Ashindane v. the United Kingdom*, 1985 թվականի մայիսի 28-ի վճիռ (33)
4. *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (43), (46)
5. *Association Accept and Others v. Romania*, 2021 թվականի հունիսի 1-ի վճիռ (59)
6. *Axel Springer v. Germany*, 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռ (59)
7. *Becciev v. Moldova*, 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռ (17), (35)
8. *Beizaras and Levickas v. Lithuania*, 2020 թվականի մայիսի 14-ի վճիռ (59)
9. *Bouyid v. Belgium*, 2015 թվականի սեպտեմբերի 28 վճիռ (46)
10. *Bratyakin v. Russia*, 2006 թվականի մարտի 9-ի վճիռ (2), (32), (52), (53)
11. *Bricmont v. Belgium*, 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռ (2), (32), (53)
12. *Brumarescu v. Romania*, 2001 թվականի հունվարի 23-ի վճիռ (27)
13. *Bykov v. Russia*, 2009 թվականի մարտի 10-ի վճիռ (2), (32), (53)
14. *Castillo Algar v. Spain*, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (50)
15. *Chahal v. The United Kingdom*, 1996 թվականի նոյեմբերի 15-ի վճիռ (46)
16. *Constancia v. the Netherlands*, 2015 թվականի մարտի 3-ի որոշում (25)
17. *Couderc And Hachette Filipacchi Associés v. France*, 2015 թվականի նոյեմբերի 10-ի վճիռ (59)
18. *Cuscani v. the United Kingdom*, 2002 թվականի սեպտեմբերի 24-ի վճիռ (4)
19. *Dallos v. Hungary*, 2001 թվականի մարտի 1-ի վճիռ (55)
20. *De Geouffre de la Pradelle v. France*, 1992 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռ (33)
21. *Djundiks v. Latvia*, 2014 թվականի ապրիլի 15-ի վճիռ (56)
22. *Dorokhov v. Russia*, 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռ (32), (53)
23. *Dragojević v. Croatia*, 2015 թվականի հունվարի 15-ի վճիռ (47)
24. *Dudgeon v. the United Kingdom*, 1981 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռ (59)
25. *Efstathiou and others v. Greece*, 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռ (43)
26. *Evans v. The United Kingdom*, 2007 թվականի ապրիլի 10-ի վճիռ (59)
27. *Fayed v. the United Kingdom*, 1990 թվականի սեպտեմբերի 21-ի վճիռ (33)
28. *Fenech v. Malta*, 2021 թվականի մարտի 23-ի վճիռ (62)
29. *Frumkin v. Russia*, 2016 թվականի հունվարի 5-ի վճիռ (32), (53)
30. *Gabor Nagy v. Hungary (No. 2)*, 2017 թվականի ապրիլի 11-ի վճիռ (42)
31. *Grayson and Barnham v. United Kingdom*, 2008 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ (19)
32. *Grievess v. the United Kingdom*, 2003 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռ (50)
33. *Gutsanovi v. Bulgaria*, 2013 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռ (46)
34. *Hakobyan and Others v. Armenia*, 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռ (32)
35. *Hambardzumyan v. Armenia*, 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռ (8)
36. *Hirschhorn v. Romania*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (33), (43)
37. *Hovhannisyán v. Armenia*, 2018 թվականի հուլիսի 19-ի վճիռ (46)

38. *Huseyn and Others v. Azerbaijan*, 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռ (32), (53)
39. *Ibrahim and others v. The United Kingdom*, 2016 թվականի սեպտեմբերի 13-ի վճիռ (9)
40. *Idalov v. Russia*, 2012 թվականի մայիսի 22-ի վճիռ (43), (56)
41. *Ilseher v. Germany*, 2018 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռ (25), (43)
42. *Ireland v. the United Kingdom*, 1978 թվականի հունվարի 18-ի վճիռ (46)
43. *Jalloh v. Germany*, 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռ (46)
44. *Jarzyński v. Poland*, 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռ (42)
45. *Jhangiryan v. Armenia*, 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռ (32)
46. *Jishkariani v. Georgia*, 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռ (59)
47. *Kamasinski v. Austria*, 1989 դեկտեմբերի 19-ի վճիռ (4)
48. *Kampanis v. Greece*, 1995 հուլիսի 13-ի վճիռ (43)
49. *Karabet and Others v. Ukraine*, 2013 թվականի հունվարի 17-ի վճիռ (46)
50. *Kasparov and Others v. Russia*, 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ (2), (32), (53)
51. *Khalifaoui v. France*, 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (43)
52. *Khlaifia and Others v. Italy*, 2016 դեկտեմբերի 15-ի վճիռ (43)
53. *Khudoyorov v. Russia*, 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռ (56)
54. *Labita v. Italy*, 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռ (46)
55. *Luedicke, Bekacem and Koc v. Germany*, 1978 թվականի նոյեմբերի 28-ի վճիռ (4)
56. *Magee v. The United Kingdom*, 2015 թվականի մայիսի 12-ի վճիռ (62)
57. *Mamikonyan v. Armenia*, 2010 թվականի մարտի 16-ի վճիռ (7)
58. *Markovic and Others v. Italy*, 2006 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (33)
59. *Matevosyan v. Armenia*, 2019 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռ (53)
60. *Mattoccia v. Italy*, 2000 թվականի հուլիսի 25-ի վճիռ (55)
61. *Merabishvili v. Georgia*, 2017 թվականի նոյեմբերի 28-ի վճիռ (42)
62. *Mihalache v. Romania*, 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռ (2), (32), (52), (53)
63. *Miragall Escolano and Others v. Spain*, 2000 թվականի հունվարի 25-ի վճիռ (7)
64. *Mkhitarjan v. Russia*, 2013 թվականի փետրվարի 5-ի վճիռ (35)
65. *Morel v. France*, 2000 թվականի հունիսի 6-ի վճիռ (50)
66. *Mushegh Saghatelian v. Armenia*, 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռ (2), (32), (46), (53)
67. *Musc v. Moldova*, 2007 թվականի նոյեմբերի 6-ի վճիռ (56)
68. *Navalnyy and Yashin v. Russia*, 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռ (2), (32), (53)
69. *Neumeister v. Austria*, 1968 թվականի հունիսի 27-ի վճիռ (42)
70. *Nikolova v. Bulgaria*, 1999 թվականի մարտի 25-ի վճիռ (43)
71. *Panchenko v. Russia*, 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռ (17), (35)
72. *Perez De Rada Cavanilles v. Spain*, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (7)
73. *Pélissier and Sassi v. France*, 1999 թվականի մարտի 25-ի վճիռ (55)
74. *Penev v. Bulgaria*, 2010 թվականի հունվարի 7-ի վճիռ (55)
75. *Philis v. Greece*, 1991 թվականի օգոստոսի 27-ի վճիռ (33)
76. *Piersack v. Belgium*, 1982 թվականի հոկտեմբերի 1-ի վճիռ (50)
77. *Polyakov v. Russia*, 2009 թվականի հունվարի 29-ի վճիռ (32), (53)
78. *Popov v. Russia*, 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռ (32), (53)

79. *Radchikov v. Russia*, 2007, թվականի մայիսի 24-ի վճիռ (27)
80. *Raninen v. Finland*, 1997 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռ (46)
81. *Ruiz Rivera v. Switzerland*, 2014 թվականի փետրվարի 18-ի վճիռ (25)
82. *S.R. v. the Netherlands*, 2012 թվականի սեպտեմբերի 18-ի որոշում (25)
83. *S. And Marper v. The United Kingdom*, 2008 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռ (59)
84. *Sahin Alpay v. Turkey*, 2018 թվականի մարտի 20-ի վճիռ (56)
85. *Salduz v. Turkey*, 2008 թվականի նոյեմբերի 27-ի վճիռ (9)
86. *Salman v. Turkey*, 2000 թվականի հունիսի 27-ի վճիռ (46)
87. *Sanchez-Reisse v. Switzerland*, 1986 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռ (43)
88. *Scoppola v. Italy (№2)*, 2009 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռ (27)
89. *Scott v. Spain*, 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ (62)
90. *Sejdovic v. Italy*, 2006 թվականի մարտի 1-ի վճիռ (55)
91. *Selmouni v. France*, 1999 թվականի հուլիսի 28-ի վճիռ (46)
92. *Shtukatuov v. Russia*, 2008 թվականի մարտի 27-ի վճիռ (25)
93. *Simeonovi v. Bulgaria*, 2017 թվականի մայիսի 12-ի վճիռ (9)
94. *Smbat Ayzvazyan v. Armenia*, 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռ (32)
95. *Söderman v. Sweden*, 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռ (59)
96. *Sopin v. Russia*, 2012 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ (35)
97. *Stanev v. Bulgaria*, 2012 թվականի հունվարի 17-ի վճիռ (25), (33), (46)
98. *Stvrtecky v. Slovakia*, 2018 թվականի հունիսի 5-ի վճիռ (17), (35)
99. *Svinarenko and Slyadnev v. Russia*, 2014 թվականի հուլիսի 17-ի վճիռ (46)
100. *Topić v. Croatia*, 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռ (2), (32), (53)
101. *Toth v. Austria*, 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռ (43)
102. *Varbanov v. Bulgaria*, 2000 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռ (25)
103. *Von Hannover v. Germany (No. 2)*, 2012 փետրվարի 7-ի վճիռ (59)
104. *Walchli v. France*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (43)
105. *X And Y v. The Netherlands*, 1985 թվականի մարտի 26-ի վճիռ (59)
106. *Xheraj v. Albania*, 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռ (27)
107. *Zschüschen v. Belgium*, 2017 թվականի մայիսի 2-ի վճիռ (19)
108. *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի*, 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռ (44), (61)
109. *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի*, 2015 թվականի մարտի 31-ի վճիռ (46)
110. *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի*, 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռ (46)

Աղբյուրների ցանկ թիվ 3
ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՄԴՈ-690, 2007 թվականի ապրիլի 9	(33)
2. ՄԴՈ-720, 2007 թվականի դեկտեմբերի 11	(12)
3. ՄԴՈ-751, 2008 թվականի ապրիլի 15	(52)
4. ՄԴՈ-832, 2009 թվականի սեպտեմբերի 22	(12)
5. ՄԴՈ-844, 2009 թվականի դեկտեմբերի 7	(39), (58)
6. ՄԴՈ-864, 2010 թվականի փետրվարի 5	(52)
7. ՄԴՈ-871, 2010 թվականի մարտի 30	(37)
8. ՄԴՈ-913, 2010 թվականի սեպտեմբերի 14	(59)
9. ՄԴՈ-914, 2010 թվականի սեպտեմբերի 14	(52)
10. ՄԴՈ-918, 2010 թվականի սեպտեմբերի 28	(6)
11. ՄԴՈ-922, 2010 թվականի նոյեմբերի 2	(52)
12. ՄԴՈ-935, 2011 թվականի փետրվարի 4	(52)
13. ՄԴՈ-936, 2011 թվականի փետրվարի 8	(33)
14. ՄԴՈ-1020, 2012 թվականի ապրիլի 11	(52)
15. ՄԴՈ-1052, 2012 թվականի հոկտեմբերի 16	(31)
16. ՄԴՈ-1056, 2012 թվականի նոյեմբերի 13	(52)
17. ՄԴՈ-1099, 2013 թվականի մայիսի 31	(8), (52)
18. ՄԴՈ-1121, 2013 թվականի նոյեմբերի 5	(59)
19. ՄԴՈ-1143, 2014 թվականի ապրիլի 8	(52)
20. ՄԴՈ-1192, 2015 թվականի մարտի 3	(33)
21. ՄԴՈ-1222, 2015 թվականի հունիսի 26	(52)
22. ՄԴՈ-1249, 2015 թվականի դեկտեմբերի 22	(58)
23. ՄԴՈ-1257, 2016 թվականի մարտի 10	(33)
24. ՄԴՈ-1348, 2017 թվականի փետրվարի 14	(27), (52)
25. ՄԴՈ-1382, 2017 թվականի հոկտեմբերի 24	(52)
26. ՄԴՈ-1396, 2017 թվականի դեկտեմբերի 26	(59)
27. ՄԴՈ-1421, 2018 թվականի հունիսի 26	(13)
28. ՄԴՈ-1431, 2018 թվականի հոկտեմբերի 23	(2), (32), (53)
29. ՄԴԱՈ-7, 2019 թվականի հունվարի 25	(16)
30. ՄԴՈ-1447, 2019 թվականի փետրվարի 26	(49)
31. ՄԴԱՈ-66, 2020 թվականի մարտի 17	(21)
32. ՄԴՈ-1586, 2021 թվականի մարտի 26	(27), (35)
33. ՄԴՈ-1612, 2021 թվականի հոկտեմբերի 5	(59)

1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՎԴ/0009/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ Ա.ՇԱՀԲԱԶՅԱՆԻ
պաշտպան Հ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ
ամբաստանյալներ Հ.ՄՈՎՍԻՍՅԱՆԻ
Ա.ԱՐՍԵՆՅԱՆԻ

2021 թվականի հունվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հովհաննես Նեգոսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2019 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Բ Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Գրիշա Յաշայի Վիրաբյանի գանգառի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2012

թվականի հոկտեմբերի 2-ին Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով (զանգաստ թիվ 40094/05) վճիռ է կայացրել, որով ճանաչել է Գ.Վիրաբյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 3-րդ, 6-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների խախտման փաստը:

2. Եվրոպական դատարանի վճռի հիման վրա՝ Գ.Վիրաբյանի վերաբերյալ ներպետական դատական ակտերը վերանայվել են, ՀՀ դատախազությունը պարտավորեցվել է վերացնել Գ.Վիրաբյանի իրավունքների և ազատությունների խախտումները:

3. ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից 2004 թվականի ապրիլի 23-ին Գ.Վիրաբյանի նկատմամբ բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ, 2016 թվականի մայիսի 10-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62212316 քրեական գործը:

4. Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մայիսի 13-ի որոշմամբ Գ.Վիրաբյանը ճանաչվել է տուժող:

5. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի փետրվարի 17-ի և փետրվարի 20-ի որոշումներով Արմեն Ռազմիկի Արսենյանը և Հովհաննես Նեգուսի Մովսիսյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

6. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 10-ի որոշմամբ մեղադրյալներ Ա.Արսենյանի և Հ.Մովսիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, և քրեական գործով վարույթը կարճվել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

7. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը 2017 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ վերացրել է վերոնշյալ որոշումը՝ նշելով, որ միջազգային իրավունքի համատեքստում չի քննարկվել վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով քրեական հետապնդման դադարեցման թույլատրելիությունը:

8. 2018 թվականի փետրվարի 20-ին քրեական գործն ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), որտեղ 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճռով Հ.Մովսիսյանը և Ա.Արսենյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով և վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից:

9. Մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ մերժելով բողոքները:

10. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ալանյանը, որը

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 13-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ, որը 2021 թվականի հունվարի 20-ի որոշմամբ փոխվել է բանավոր ընթացակարգի: Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

11. Նախաքննության մարմնի կողմից Արմեն Արսենյանին և Հովհաննես Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքները, ի թիվս այլնի, ներառել են հետևյալ փաստական հանգամանքները. «2004 թվականի ապրիլի 12-ին՝ ժամը 17:40-ին, Գրիշա Վիրաբյանը հրազեն պահելու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության Արտաշարի բաժնի: Բաժնի վարչական շենքի՝ քրեական հետախուզության բաժանմունքի 5-րդ աշխատասենյակում Գրիշա Վիրաբյանի ու նույն բաժնի՝ տվյալ ժամանակ քրեական հետախուզության բաժնի պետի պաշտոնը զբաղեցրած, Հովհաննես Նեգուսի Մովսիսյանի միջև բանավեճ է սկսվել՝ Գրիշա Վիրաբյանին բերման ենթարկելու իրավաչափության հարցի շուրջ: Առաջացած վիճարկության ժամանակ Գրիշա Վիրաբյանը բջջային հեռախոսի լիցքավորման սարքով հարվածել ու վնասել է Հովհաննես Մովսիսյանի աջ աչքը: Դրանից հետո, Հովհաննես Մովսիսյանն ու տվյալ պահին քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագորի պաշտոնը զբաղեցրած Արմեն Ռազմիկի Արսենյանը, գիբակցելով և լրացնելով մեկը մյուսի գործողությունները, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված ֆիզիկական ուժ գործադրելու հիմքերի բացակայության պայմաններում, ակնհայտորեն դուրս գալով իրենց լիազորությունների շրջանակից, և տվյալ դեպքում չունենալով ֆիզիկական ուժ գործադրելու լիազորություն, բռնություն գործադրելով Գրիշա Վիրաբյանի նկատմամբ, բաժնի աշխատասենյակներից մեկում ծեծի են ենթարկել նրան՝ ձեռքերով ու ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցնելով ամորձիներին և մարմնի այլ մասերին՝ վերջինիս առողջությանը պարճատելով միջին ծանրության մարմնական վնասվածք՝ փոշոփ հետրորավմարիկ հեմատոմայի, ձախակողմյան հեմատոցելեի, ձախ ամորձու պարովածքի, աջ սրունքի արյունազեղման ձևով: Հովհաննես Մովսիսյանի ու Արմեն Արսենյանի վերոհիշյալ գործողությունների հետևանքով Գրիշա Վիրաբյանին պարճատվել է ֆիզիկական վնաս՝ առողջության միջին ծանրության սարիճանի մարմնական վնասվածքի ձևով, էական վնաս է պարճատվել նրա իրավունքներին ու օրինական շահերին, այն է՝ խախտվել է Սահմանադրությամբ երաշխավորված խոշորանգումների և անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու անթույլատրելիության նրա իրավունքը,

էական վնաս է պատճառվել նաև պետության օրինական շահերին, քանի որ հեղինակագրվել է ՀՀ նսրիկանությունը»⁴:

12. Առաջին ստյանի դատարանը, 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճռով, արձանագրել է, որ անթույլատրելի է համարում *Mocanu and others v. Romania* գործով Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հիմքով քրեական գործի վարույթը շարունակելը, քանի որ չի պատճառաբանվել, թե ինչու չպետք է կիրառվի ՀՀ ներպետական օրենքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն ու ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը: Դատարանը գտել է, որ անտեսվել է այն, որ Միավորված ազգերի կազմակերպության՝ 1994 թվականի դեկտեմբերի 10-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիան չի պարունակում որևէ դրույթ այն մասին, որ վաղեմության ժամկետներ կիրառելն արգելվում է: Միայն խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն կոնվենցիայի իր մեկնաբանություններում, որոնք ըստ էության կրում են խորհրդատվական բնույթ, նշել է խոշտանգման կամ քրեական օրենսդրությամբ դրան համարժեք դասվող արարքներով վաղեմության ժամկետները վերացնելու անհրաժեշտությունը:

13. Դատարանն արձանագրել է, որ օրենսդիր մարմինը, սահմանելով խոշտանգման մասին ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածը, օրենսդրական որևէ փոփոխություն չի կատարել այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածում սպառնիչ թվարկված են հանցագործության այն տեսակները, որոնց նկատմամբ վաղեմության ժամկետները կիրառելի չեն կամ կիրառելի են սահմանափակումով: Այն նշանակում է, որ օրենսդրական որևէ սահմանափակում չկա խոշտանգում կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետը կիրառելու և քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

14. Միաժամանակ, դատարանը նշել է, որ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Կոնվենցիան, որում որևէ սահմանափակում չկա խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք ցուցաբերած անձանց կողմից հանցագործություն կատարելու դեպքում նրանց նկատմամբ վաղեմության ժամկետներ, ներում կամ համաներում չկիրառելու համար: Եվրոպական դատարանի դիրքորոշումը դեռևս բավարար չէ, որ այն ենթակա լինի պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետությունում, քանի որ ՀՀ իրավական համակարգը ինկորպորացված չէ: Դատարանն ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի դրույթները վավերացման փաստի ուժով պարտադիր են Հայաստանի Հանրապետության համար, սակայն Եվրոպական դատարանի վճիռները որևէ իրավադրույթով չեն կարող հավասարեցվել այդ միջազգային փաստաթղթերի մեջ ամրագրված հոդվածներին: Դատարանը նշել է, որ չի կարող նաև առաջնորդվել Եվրոպական կոնվենցիայի 46-րդ

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 8-10:

հողվածով և առաջնայնությունը տալ նախադեպին, քանի որ *Mocanu and others v. Romania* գործի կողմ Հայաստանի Հանրապետությունը չի հանդիսացել:

15. Դատարանը նաև արձանագրել է, որ նախաքննական մարմինը քննության առարկա չի դարձրել այն հանգամանքը, թե Եվրոպական դատարանի այդ դիրքորոշման կիրառման դեպքում արդյո՞ք չեն խախտվում մեղադրյալների իրավունքները, հիմնարար ազատությունները և օրինական շահերը, քանի որ նրանց կողմից հանցագործությունը կատարվել է դեռևս 2004 թվականի ապրիլ ամսին: Եվրոպական դատարանի վճիռը կայացվել է 2014 թվականի սեպտեմբերի 17-ին և դրան հետագարձ ուժ տալով նախաքննական մարմնի կողմից խախտվել են ամբաստանյալների իրավունքներն ու հիմնարար ազատությունները⁵:

16. Վերաքննիչ դատարանը 2019 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Առաջին ստյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ՝ գտել է, որ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության իրավակարգավորումները կոնկրետ դեպքում դատարանին հնարավորություն չեն տալիս անմիջականորեն կիրառելու Եվրոպական դատարանի դիրքորոշումը: Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ ամբաստանյալներին ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով կատարված արարքների համար քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ Առաջին ստյանի դատարանի պատճառաբանությունները օրինական և հիմնավորված են: Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերոնշյալ պահանջների անտեսմամբ վաղեմության ժամկետների չկիրառումը կհանգեցնի ամբաստանյալների իրավունքների և օրինական շահերի խախտման և կարող է առաջացնել իրավական անորոշություն ու որակվել որպես կամայականություն⁶:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

17. Վճռաբեկ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալներին վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով ազատելով քրեական պատասխանատվությունից, խախտել են Եվրոպական դատարանի մի շարք վճիռներով արտահայտած դիրքորոշումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրով ամրագրված նորմերը՝ խոշտանգման դեպքում վաղեմության ժամկետների կիրառման անթույլատրելիության վերաբերյալ:

18. Վերլուծելով «խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ» Միավորված ազգերի կազմակերպության 1984 թվականի դեկտեմբերի 10-ի կոնվենցիայի դրույթները, ինչպես նաև Եվրոպական դատարանի դիրքորոշումները՝ բողոքաբերը փաստել է, որ ստորադաս դատարանների

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 236-257:

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 89-168:

կողմից տրված մեկնաբանությունները հանգեցնում են պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտման, քանի որ Եվրոպական դատարանի վճիռները Եվրոպական կոնվենցիայի անբաժանելի մաս են և ենթակա են կիրառման Հայաստանի Հանրապետությունում որպես միջազգային պայմանագրից բխող նորմատիվ ակտեր:

19. Բողոքաբերը նշել է, որ խոշտանգումների արգելքն ամրագրված է մարդու իրավունքներին և մարդասիրական իրավունքին առնչվող մի շարք միջազգային պայմանագրերում և ընկալվում է որպես ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունք՝ *jus cogens* նորմ, ինչը նշանակում է, որ այն պարտադիր է բոլոր պետությունների համար, եթե նույնիսկ այդ պետությունները չեն վավերացրել որևէ կոնկրետ պայմանագիր: Միջազգային կամ ներպետական որևէ այլ կանոն չի կարող հակասել *jus cogens* սկզբունքին: Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի բացարձակ արգելքը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև պետության կողմից նման դեպքերի պատշաճ քննության իրականացում, իսկ նման արարքներ կատարողների նկատմամբ համարժեք պատժի կիրառում՝ երաշխավորելով վերջինիս անխուսափելիությունը: Վերոնշյալ արարքներ կատարած պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելը, համաներում, ինչպես նաև անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելը, բողոքաբերի պնդմամբ, ուղղակիորեն հանգեցնում է պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտման:

20. Բողոքաբերը փաստել է, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը Կոնվենցիայի օրգանական մասն է կազմում, ինչից էլ հստակ հետևում է, որ խոշտանգումների վերաբերյալ գործերով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ կիրառելու կոնվենցիոն արգելք է սահմանված: Ուստի, բողոքաբերի պնդմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով այդ գործերով վաղեմության ժամկետներ չպետք է կիրառվեն և դա չի կարող հանգեցնել ամբաստանյալների իրավունքների և օրինական շահերի խախտման, չի կարող առաջացնել իրավական անորոշություն:

21. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշումը և ամբաստանյալների նկատմամբ նշանակել կատարած արարքներին համաչափ պատիժ:

Դատավարության մասնակիցների դիրքորոշումը.

22. Դատական նիստում դատախազը պնդեց ներկայացված վճռաբեկ բողոքը և խնդրեց բավարարել այն՝ հայտնելով, որ միջազգային փաստաթղթերի ուժով ամբաստանյալների նկատմամբ կիրառելի չեն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, քանի որ առաջադրված մեղադրանքները ներառում են խոշտանգման փաստական հանգամանքներ: Միաժամանակ, դատախազը նշեց, որ բարձրացված հարցով

խորհրդատվական կարծիք ստանալու համար Եվրոպական դատարան դիմելու անհրաժեշտության հարցի լուծումը թողնում է Վճռաբեկ դատարանի հայեցողությանը:

23. Դատական նիստում պաշտպանն առարկեց դատախազի բողոքի դեմ և խնդրեց մերժել այն՝ հայտնելով, որ վաղեմության ժամկետներն անցած լինելու պարագայում ամբաստանյալները չեն կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, այն կհանգեցնի նրանց իրավունքների խախտման: Ամբաստանյալները միացան պաշտպանի դիրքորոշմանը՝ գտնելով, որ բացակայում է խորհրդատվական կարծիք ստանալու համար Եվրոպական դատարան դիմելու անհրաժեշտությունը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

24. Հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքի հեղինակը բարձրացրել է խոշտանգման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և միջազգային այլ չափանիշների հիման վրա ամբաստանյալների նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների չկիրառելիության հարցը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **խոշտանգման արգելքի վերաբերյալ իրավունքի զարգացման ներկայիս ժամանակաշրջանում ձևավորված մտեցումների հաշվառմամբ**, Կոնվենցիայի 16-րդ արձանագրությամբ սահմանված կարգով, անհրաժեշտ է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ խորհրդատվական կարծիք ստանալու համար:

Լխոշտանգման արգելքը՝ որպես միջազգային իրավունքի jus cogens նորմ.

25. 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ին ընդունված Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը, ինչպես նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածն ամրագրում են, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

26. Միավորված ազգերի կազմակերպության՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին» 1975 թվականի դեկտեմբերի 9-ի հռչակագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Որևէ պետություն չի կարող թույլատրել կամ հանդուրժել խոշտանգում կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք կամ պարիժ: (...):»*:

27. «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թվականի դեկտեմբերի 10-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է օրենսդրական, վարչական, դատական կամ այլ արդյունավետ*

միջոցներ՝ իր իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում խոչընդոտման դեպքերը կանխելու համար»:

28. Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական դատարանը *Prosecutor v. Furundzija* գործով 1998 թվականի դեկտեմբերի 10-ի վճռով գտել է, որ մարդու իրավունքներին նվիրված պայմանագրերում ամրագրված խոչընդոտման արգելքը երաշխավորվում է **որպես բացարձակ իրավունք**, որն անօտարելի է, նույնիսկ արտակարգ իրավիճակների ժամանակ: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ խոչընդոտման արգելքը պարտադիր նորմ է կամ *jus cogens*: Դատարանը նշել է, որ պայմանագրային դրույթները պետությունների վրա դնում են **պարտականություն արգելելու և պատժելու խոչընդոտմանը**: Դատարանն արձանագրել է, որ միջազգային հանրությունը, գիտակցելով նման զագրելի երևույթն օրենքից դուրս հայտարարելու կարևորությունը, որոշել է ճնշել խոչընդոտման ցանկացած դրսևորում՝ արտահայտված ինչպես միջպետական, այնպես էլ անհատական մակարդակում: Ըստ դատարանի՝ **որևէ իրավական բաց չի թողնվել**: Դատարանը գտել է, որ այսօր առկա է խոչընդոտման դեմ համընդհանուր հակակրանք: Այդ հակակրանքը, ինչպես նաև այն կարևորությունը, որը պետությունները տալիս են խոչընդոտման բացառմանը, հանգեցրել են նրան, որ խոչընդոտման վերաբերյալ մի շարք պայմանագրային դրույթներ և սովորույթային կանոններ միջազգային, նորմատիվ համակարգում ձեռք են բերել առանձնահատուկ բարձր կարգավիճակ: Խոչընդոտման արգելքը պետությունների վրա դնում է *erga omnes* պարտավորություններ, այսինքն՝ **պարտավորություններ միջազգային հանրության բոլոր այլ անդամների առաջ**: Ըստ դատարանի՝ միանգամայն ակնհայտ է, որ խոչընդոտման արգելող նորմի *jus cogens* բնույթը ձևավորել է մոտեցում առ այն, որ արգելքը դարձել է միջազգային հանրության ամենից հիմնարար չափանիշներից մեկը⁷:

29. Եվրոպական դատարանը, հիմք ընդունելով միջազգային իրավական պահանջները, ընդունել է, որ խոչընդոտման արգելքը միջազգային իրավունքում ձեռք է բերել **պարտադիր նորմի կարգավիճակ**⁸:

30. Մեջբերված իրավական դրույթներից և դիրքորոշումներից հետևում է, որ խոչընդոտման արգելքը ստացել է բարձր իրավական ուժ ունեցող *jus cogens* նորմի կարգավիճակ: Այսինքն՝ խոչընդոտման արգելքն **ընդհանուր միջազգային պարտադիր կանոն է**, որը պետությունների, միջազգային հանրության կողմից ամբողջությամբ ընդունվում ու ճանաչվում է որպես նորմ, որից շեղումն անթույլատրելի է: Հետևաբար, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն *jus cogens* նորմերի արդյունավետ կատարումն ապահովելու ուղղությամբ:

⁷ Տե՛ս *Prosecutor v. Furundzija* գործով 1998 թվականի դեկտեմբերի 10-ի վճիռը, IT-95-17/I-T, կետեր 144-154:

⁸ Տե՛ս *Al-Adsani v. The United Kingdom* գործով 2001 թվականի նոյեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 35763/97, կետ 61:

31. Ուստի, խոշտանգումն արգելող *jus cogens* նորմը **չի կարող նաև իր ազդեցությունը չունենալ ներպետական իրավունքի նկատմամբ**: Այդ նորմի խախտման սպառնալիքն անմիջականորեն ծագում է պաշտոնատար անձանց կամ պետական մարմինների միջոցով ներպետական մակարդակում հանգեա եկող անհատների և խմբերի գործողություններից: Ուստի, դրանով է պայմանավորված նաև այն, որ Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական դատարանը *Prosecutor v. Furundzija* գործով նշել է, որ *jus cogens* նորմերը պարտադիր են պետության համար, դրանք ապաօրինականացնում են խոշտանգումը թույլատրող օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ցանկացած ակտ⁹:

32. Վերոգրյալի հիման վրա պետք է արձանագրել, որ իրավունքի զարգացման ներկայիս ժամանակաշրջանում անվիճելիորեն պետք է փաստել, որ **խոշտանգման արգելքը բացարձակ է և իր բնույթով պարտադիր է իրավական պետության համար**: Ուստի, բացարձակ արգելքի խախտման արդյունավետ քննությունը, բացահայտումը և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ապահովումն ունի համընդհանուր միտում:

II. Խոչընդոտման գործերով վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը.

33. Կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: (...)

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի փուլ և պարժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն»:

34. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:

35. ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Ըստադրության և մարդկության անվրանգության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 384-րդ, 386-391-րդ, 393-397-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում: Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված»:

⁹ Տե՛ս *Prosecutor v. Furundzija* գործով 1998 թվականի դեկտեմբերի 10-ի վճիռը, IT-95-17/I-T, կետ 155:

36. ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի համաձայն՝ «Պաշտոնապարանձի կողմից դիտարկություններ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից և էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)»: Նույն հոդվածի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն է սահմանում նույն արարքի կատարման համար, որը զուգորդվել է **բռնություն**, գենք կամ հատուկ միջոցներ գործադրելով:

37. 2015 թվականի հունիսի 9-ին թիվ ՀՕ-69-Ն ՀՀ օրենքի ընդունմամբ ՀՀ քրեական օրենսգրքը 309.1-րդ հոդվածի ներքո լրացվել է խոշտանգման հատուկ հանցակազմով, որը համապատասխանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անարդյկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված խոշտանգման հասկացությանը:

38. Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական դատարանը *Prosecutor v. Furundzija* գործով վճռում նշել է, որ միջազգային հանրության կողմից խոշտանգման արգելքին տրված *jus cogens* հատկանիշի հետևանքները ներառում են նաև այն հանգամանքը, որ **խոշտանգման նկատմամբ կիրառելի չեն կարող լինել վաղեմության ժամկետները**¹⁰:

39. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համատեքստում Եվրոպական դատարանը մի շարք գործերով վճիռներում նշել է, որ պետության ներկայացուցիչների կողմից վատ վերաբերմունքի կամ խոշտանգման գործերով քրեական վարույթը **չպետք է դադարեցվի վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով**¹¹:

40. Միավորված ազգերի կազմակերպության Խոշտանգումների դեմ կոմիտեն ընդգծել է, որ խոշտանգման դեպքում **վաղեմության ժամկետները չպետք է կիրառելի լինեն**, քանի որ դրանք գրկում են տուժողներին հատուցում, փոխհատուցում և ռեաբիլիտացիա ստանալու հնարավորությունից¹²:

41. Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ վաղեմության ժամկետների չկիրառման եղանակը նույնպես **պետք է համահունչ լինի Կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջներին**¹³: Այս համատեքստում հարկ է նաև վկայակոչել Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումն այն մասին, որ երբ վաղեմության ժամկետն արդեն անցել է,

¹⁰ Տե՛ս *Prosecutor v. Furundzija* գործով 1998 թվականի դեկտեմբերի 10-ի վճիռը, IT-95-17/I-T, կետ 157:

¹¹ Տե՛ս *Yeter v. Turkey* գործով 2009 թվականի հունվարի 13-ի վճիռը, գանգառ թիվ 33750/03, կետ 70, *Mocanu and others v. Romania* գործով 2014 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը, գանգառներ թիվ 10865/09 45886/07 32431/08, կետ 326:

¹² Տե՛ս UN Committee Against Torture (CAT), General comment no. 3, 2012, implementation of article 14 by States parties, 13 December 2012, կետ 40:

¹³ Տե՛ս *Mocanu and others v. Romania* գործով 2014 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը, գանգառներ թիվ 10865/09 45886/07 32431/08, կետ 326:

հնարավոր է վկայակոչել իրավական որոշակիության սկզբունքը՝ բացառելու համար այդ ժամկետի վերականգնումը¹⁴:

42. Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պատերազմական հանցագործությունների դեպքում, որոնց արգելքը ևս համարվում է *jus cogens* նորմ, Եվրոպական դատարանը *Kononov v. Latvia* գործով գտել է, որ սույն գործի հանգամանքներում ներպետական օրենսդրության որևէ դրույթ վաղեմության ժամկետի մասին կիրառելի չէ և, երկրորդ՝ դիմումատուին մեղսադրված ոչ մի հանցագործության նկատմամբ, միջազգային իրավունքի համաձայն, վաղեմության ժամկետ չի տարածվում: Ուստի, դատարանը հանգել է այն եզրակացության, որ դիմումատուի կողմից կատարված գործողությունների նկատմամբ **վաղեմության ժամկետ չի տարածվում**¹⁵:

43. Միավորված ազգերի կազմակերպության Խոշտանգումների դեմ կոմիտեն նաև Հայաստանի վերաբերյալ իր զեկույցներում ընդգծել է **խոշտանգում կամ դրան հավասարեցված հանցանքներ** կատարած անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելու արգելք սահմանելու անհրաժեշտությունը¹⁶:

44. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ևս իր հերթին՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի* գործերով վճիռների կատարման ընթացքում որպես ընդհանուր միջոցառում՝ կարևորել է խոշտանգման համար վաղեմության ժամկետների կիրառման բացառումը¹⁷, սակայն այդ առումով համապատասխան օրենք մինչ օրս չի ընդունվել:

45. Նման պայմաններում, ներպետական օրենսդրությամբ շարունակում է գործել ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումը, որտեղ նախատեսվում է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների կիրառման արգելք խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված որոշ հանցանքներ կատարած անձանց նկատմամբ: Միաժամանակ, օրենսդիրն ամրագրում է, որ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև **Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված**:

46. Վերոգրյալի պայմաններում, հաշվի առնելով մի կողմից՝ խոշտանգման արգելքի *jus cogens* բնույթի վերաբերյալ Եվրոպական դատարանի և

¹⁴ Տե՛ս *Amicus Curiae Brief for the Constitutional Court of Georgia*, European Commission For Democracy Through Law (Venice Commission), 16 March 2009, CDL-AD(2009)012, կետ 29:

¹⁵ Տե՛ս *Kononov v. Latvia [GC]* գործով 2010 թվականի մայիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36376/04 կետեր 229-233: Տե՛ս նաև *Kolk and Kislyiy* գործով 2006 թվականի հունվարի 17-ի որոշումը, գանգատներ թիվ 23052/04 և 24018/04, *Penart v. Estonia* գործով 2006 թվականի հունվարի 24-ի որոշումը, գանգատ թիվ 14685/04:

¹⁶ Տե՛ս Concluding observations of the Committee against Torture, Armenia, CAT/C/ARM/CO/3, 6 July 2012, կետ 10, CAT/C/ARM/CO/4, 26 January 2017, կետ 7:

¹⁷ Տե՛ս ԵԲՆ Նախարարների կոմիտեի դիրքորոշումները *Virabyan v. Armenia* գործով կատարման ենթակա ընդհանուր միջոցառումների վերաբերյալ:

միջազգային այլ մարմինների կողմից ձևավորած իրավական չափանիշները, մյուս կողմից՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով ամրագրված պահանջների պահպանման կարևորությունը, սույն գործով բողոքի հեղինակի կողմից ներկայացված փաստարկները քննարկելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիմել Եվրոպական դատարան՝ խորհրդատվական կարծիք ստանալու համար: Վճռաբեկ դատարանը կարևորում է Եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրության հիմքում ընկած՝ Եվրոպական դատարանի հետ համագործակցության և երկխոսության հնարավորությունը¹⁸:

47. Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 171-րդ հոդվածով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրության 1-ին հոդվածով, Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ամբաստանյալներ Հովհաննես Նեգոսի Մովսիսյանի և Արմեն Ռազմիկի Արսենյանի վերաբերյալ գործով խորհրդատվական կարծիք ստանալու համար դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ հետևյալ հարցով. *խոշարանգման կամ դրան հավասարեցված հանցանքներով միջազգային իրավունքի աղբյուրների վկայակոչմամբ քրեական պարասիսանսարվության ենթարկելու վաղեմության ժամկետների չկիրառումն արդյո՞ք համահունչ կլինի Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածին, եթե ներպետական օրենսդրությամբ քրեական պարասիսանսարվության ենթարկելու վաղեմության ժամկետների չկիրառման պահանջ նախատեսված չէ:*

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

¹⁸ Տե՛ս Advisory opinion requested by the *French Court of Cassation*, P16-2018-001, 10 April 2019, կետ 25, Advisory opinion requested by the *Armenian Constitutional Court*, P-16/2019/001, 29 May 2020, կետ 43:

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0046/01/09

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորների*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 1-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հակոբ Վարդանեսի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ Հ.Հակոբյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 235-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը:

2008 թվականի մարտի 2-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված թիվ

58200608 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին ու նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

2008 թվականի մարտի 3-ին Հակոբ Հակոբյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն՝ զանգվածային անկարգություններ կազմակերպելու և ապօրինի կերպով հրազեն պահելու կասկածանքով և նույն օրը ձերբակալվել է:

2008 թվականի մարտի 5-ին Հ.Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 300-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ Հ.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 300-րդ հոդվածի 1-ին մասով:

2009 թվականի մարտի 31-ին դատախազների կողմից որոշում է կայացվել Հ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին՝ վերջինիս արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Նույն որոշմամբ Հ.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով:

2009 թվականի մարտի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ քրեական գործից ամբաստանյալ Հ.Հակոբյանի մասը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով անջատվել է առանձին վարույթ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճռով Հ.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Միաժամանակ, նրա նկատմամբ կիրառվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ 2009 թվականի հունիսի 19-ի՝ «Համաներում հայտարարելու մասին» որոշման 2-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերը և նա ազատվել է պատժի կրումից:

3. Պաշտպան Մ.Առուստամյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2009 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Պաշտպան Մ.Առուստամյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ վերադարձվել է:

5. 2020 թվականի օգոստոսի 19-ին Հ.Հակոբյանը հիմնարար խախտման հիմքով վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 11-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Հակոբ Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Մյա մի խումբ անձանց հետ կազմակերպել է զանգվածային անկարգություններ, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.

Հակոբ Հակոբյանը [և այլոք] երկրում ներքաղաքական վիճակն սպախայունացնելու և զանգվածային անկարգություններ հրահրելու դիրավորությամբ կազմակերպել ու անմիջականորեն իրականացրել են հանցավոր մրադրությունն ի կարար ածելուն ուղղված գործողություններ:

Հասարակության լայն շրջանակներում դժգոհություն առաջացնելու, մարդկանց նոր զանգվածներ ներգրավելու միտումով, ինչպես նաև որպես պետական իշխանության ներկայացուցիչների նկատմամբ ուժ գործադրելու պարրասրականության դրսևորմամբ Հակոբ Հակոբյանը և մյուսները, Կարբեր միջոցներով՝ իրենց շրջապարի նկատմամբ անձնական ծառայողական ազդեցություն գործադրելով, հարկադրելով, խուսրումների և որոշակի վարձադրության դիմաց հավաքագրելով մարդկանց հոծ բազմություն, վերջիններին ներգրավել են 2008 թվականի փետրվարի 20-ից Երևան քաղաքում անցկացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին, որրեղ հավաքված բազմությանը Կրամնորրել, նախապարրասրել են անհնազանդության և զանգվածային բռնարարքների:

Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ իրագործելու մրադրությամբ խմբի անդամներն ինչպես անձամբ, այնպես էլ իրենց հետ համագործակցող այլ անձանց միջոցով կազմավորել են զանգվածային բռնարարքների կարարմամբ պարրասր անձանց խմբեր և կազմակերպել նրանց շրջանում ապորիսի կերպով ձեռք բերված հրազենի և մարմնական վնասվածքներ պարրանտելու համար հարմարեցված Կրարրեսակ առարկաների բաշխում:

Հակոբ Հակոբյանը նյութապես շահագրգռել կամ հարկադրարար Երևան քաղաքի Մալաթիա թաղամասից հավաքագրել է Լալրենար Գասարյանին, Մոշեղ Անրոնյանին, Արա Հարոյությունյանին, Աշոր Մելրոնյանին և մարդկանց նոր խմբեր, ապահովել նրանց Կրեղաիոիումն ու մասնակցությունը զանգվածային միջոցառումներին, անմիջականորեն դեկավարել ու առաջնորրել է նրանց՝ օգրագործելով Արցաիսի ազարագրական պարարի ընթացքում

ձեռք բերած հրամանատարական հեղինակությունն ու փորձը, ունեցած ազդեցությունը: Հավաքված բազմությունն առավել ոգևորելու նպատակով, ի նշան ուժի ցուցադրության՝ Ազատության հրապարակում պարբերաբար շրջել է թիկնապահների և զինակիցների ուղեկցությամբ:

2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան, երբ ոստիկանության աշխատակիցները, իրացնելով Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով հրազենի, ռազմամթերքի, մարմնական վնասվածքներ պարճատելու համար հարմարեցված այլ առարկաների սպորինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկությունը, փորձել են Ազատության հրապարակում հայրնաբերել և առգրավել դրանք, զանգվածային միջոցառման կազմակերպիչների հրահանգով հրապարակում գրնվող բազմության մի սրվար զանգված հանրավրանգ հիշյալ պարագաների օգրագործմամբ դիմադրություն է ցոյց տվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին, կյանքի և առողջության համար վրանգավոր բռնություն գործադրել վերջիններին նկարմամբ:

Այնուհետև զանգվածային միջոցառման մասնակիցները Հակոբ Հակոբյանի և [մյուս հանցակիցների] ուղղորդմամբ ու հրահանգով տեղափոխվել, Վիրաք Մանուկյանի և այլոց կազմակերպմամբ հասարակական և մասնավոր տրանսպորտային միջոցները դիտավորությամբ վնասելով, շահագործումից դուրս բերելով և արգելապարնեշներ կառուցելով դիրքավորվել են Մյանհիկյանի արձանի հարակից տարածքում, որտեղ վերջիններս հրահրել, կազմակերպել, անմիջականորեն դեկավարել են զանգվածային անկարգությունները, մարմնական վնասվածքներ պարճատելու համար հարմարեցված և ձեռնասհաս այլ միջոցներով զինվելու ու հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների նկարմամբ բռնություն գործադրելու, վերջիններին օրինական պահանջներին սկրտիվորեն չենթարկվելու հրահանգներ են տվել:

Հակոբ Հակոբյանի կողմից հավաքագրված Արմեն Ֆարմանյանի, Գարրիել Գարրիելյանի, ինչպես նաև մյուս կազմակերպիչների հավաքագրած այլ անձանց միջոցով ներգրավել են նոր մարդկանց, ամբոխի առավել ագրեսիվ զանգվածին բաժանել զենք, մարմնական վնասվածքներ պարճատելու, հրկիզումներ ու սվերումներ առաջացնելու համար հարմարեցված մեքադական ձողեր, մահակներ, այլ առարկաներ, բենզինով լցված շշեր՝ «Մոլոտովի կոկրել» և այլ պարագաներ: Բացի այդ, Հակոբ Հակոբյանի հանձնարարությամբ, աշխատանքից ազատելու սպառնալիքով, վերջինիս պարկանող «Առուշ» ՏԱՄ ՄՊԸ-ի և Մալաթիայի գյուղմթերքի շուկայի 200-ից ավելի աշխատակիցների՝ Ամարունի Մարգարյանին, Մակար Մահակյանին, Սերոբ Սերոբյանին, Մարտուն Շուշանյանին, Վլադիմիր Եսայանին, Արամ Գրիգորյանին և այլոց 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 11-ի սահմաններում, պարտավորեցրել են ավարտել աշխատանքը, հավաքվել նրա տան մոտ և արդեն այդտեղ հավաքված թաղամասի բնակիչների հետ գնալ քաղաքատարանի հարակից տարածք՝ միանալու հավաքված բազմությանը:

Արդյունքում 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Մյանմիկյանի արձանի և Երևանի քաղաքապետարանի հարակից տարածքում, Երևանի Գր. Լուսավորիչ, Մաշտոց, Լեռ և Պարոնյան փողոցներում հրազեն, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր և սարքեր գործադրելով կատարվել են զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում զինված դիմադրություն է ցույց տրվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին, ՀՀ ոստիկանության զորքերի զինձառայողներին, տարբեր ծանրության աստիճանների մարմնական վնասվածքներ են սրացել 187 ՀՀ ոստիկանության զորքերի զինձառայող ու ոստիկանության աշխատակից, 32 քաղաքացիական անձ, ջարդերի, գույքի դիտարկության ռիսկոսներ, վնասվածքներ և թալաններ հետևանքով ՀՀ ոստիկանությանը պարճատվել է 25.980.093 դրամի վնաս, Երևան քաղաքին և Կենտրոն թաղային համայնքին 69.288.760 դրամի վնաս, իրավաբանական անձանց 339.954.866 դրամի վնաս, հրկիզվել և վնասվել է 92 տրանսպորտային միջոց, որի հետևանքով ՀՀ ոստիկանությանը, քաղաքացիներին և ուղևորատրոսպորտը ընկերություններին պարճատվել է, ընդհանուր առմամբ 70.854.525 դրամի վնաս:

Տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում սրացած մարմնական վնասվածքներից մահացել է 10 անձ:

Զանգվածային անկարգությունները դադարել են միայն արտակարգ դրություն հայտարարելուց և իրավապահների կողմից դրանք կանխելուց հետո: (...)»¹⁹:

7. Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, պաշտպանական կողմը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Գաբրիել Գաբրիելյանին²⁰, ինչը դատարանի կողմից մերժվել է²¹:

7.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճռով ապացուցված է համարվել, որ Հ.Հակոբյանը կազմակերպել է զանգվածային անկարգություններ, որոնք ուղեկցվել են բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ռիսկոսներով, վնասներով, հրազեն, պայթուցիկ նյութեր և պայթուցիկ սարքեր գործադրելով և իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով²²:

7.2. Առաջին ատյանի դատարանն իր կողմից հաստատված հանգամանքների հիմքում դրել է. վկաներ՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցներ Մ.Մխիթարյանի, Ա.Մկրտչյանի, Գ.Այվազյանի, Ս.Հակոբյանի, Ա.Կիրակոսյանի, Մ.Թելոյանի, Ա.Խաչատրյանի, վկաներ Հ.Աթոյանի, Ա.Հարությունյանի, Մ.Աստոնյանի, Ա.Պետրոսյանի, սույն գործից անջատված գործով՝ Երևան քաղաքի քրեական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով դատապարտված Լավրենտ Միշայի Գասպարյանի ցուցմունքները, վերջինիս և Գաբրիել Գաբրիելյանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով

¹⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8, թերթեր 168-315:

²⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 12, թերթեր 25-26:

²¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 12, թերթեր 57-59:

²² Տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 166-186:

հաստատված հանգամանքները, սույն գործից անջատված թիվ 622202608 քրեական գործով մեղադրյալ Համլետ Հովհաննիսյանի ցուցմունքները, գործին կցված՝ 2008 թվականի մարտի 1-ին զանգվածային անկարգությունների ժամանակ հանցագործություններ կատարելու համար դատապարտված Հ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճիռների առկայության փաստը, Երևանի քաղաքապետի 01/7-6295 հ գրությամբ և դրան կից ներկայացված վնասի չափն ու վերականգմանն ուղղված ծախսերը հիմնավորող ակտերով զանգվածային անկարգությունները պատկերող տեսասկավառակները, նյութագիտական փորձաքննության թիվ 08-0142, սառը զենքի փորձաքննության թիվ 479, դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 07100803, դատաձգաբանական, դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 357 եզրակացությունները, 2008 թվականի փետրվարի 24-ին կատարված տեղանքի գնման արձանագրությունները, սառը զենքի փորձաքննության թիվ 300 և 301 եզրակացությունները, սառը զենքի փորձաքննության թիվ 633 և 492 եզրակացությունները, դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 07050803 եզրակացությունը, պայթյունատեխնիկական փորձաքննության թիվ 12960803 եզրակացությունը, դատաձգաբանական, դատահետքաբանական և դատապայթյունատեխնիկական համալիր փորձաքննության թիվ 09410802, 09320802, 09400802 եզրակացությունները, 2008 թվականի մարտի 1-ի թիվ ՆՀ-35-Ն հրամանագիրը, 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևանում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում ՀՀ ոստիկանության իրականացրած միջոցառումների վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի գրությունը, 2008 թվականի փետրվարի 21-ից մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում օրենքով սահմանված կարգի խախտմամբ Երևանում կազմակերպված զանգվածային հրապարակային միջոցառումները դադարեցնելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության ձեռնարկած միջոցառումների մասին ՀՀ ոստիկանության պետի տեղակալի գրությունը, կից ներկայացված լազերային տեսասկավառակը և քրեական գործի այլ նյութերը²³:

8. Վերաքննիչ դատարանը, Առաջին ստյանի դատարանի դատական ակտը թողնելով անփոփոխ, 2008 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ արձանագրել է, «(...) Հակոբ Հակոբյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելը և նրա մեղքը հաստատված, պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկները հերքված են քրեական գործին վերաբերող փոխկապակցված, հավասարի սպացույցների բավարար ամբողջությամբ, այդ սպացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը

²³ Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթեր 112-134:

քրեական գործով ըստ մեղադրանքի Հակոբ Վարդանեսի Հակոբյանի ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով օրինական, հիմնավորված, պարճատարանված է և վերաքննիչ բողոքում նշված պարճատարանությունները դատական ակտը բեկանելու, արդարացման դատավճիռ կայացնելու հիմք համարվել չեն կարող, ուստի դատավճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Քրեական գործի քննության նախորդ փուլերի ընթացքում քրեական և դատավարական նորմերի էական խախտումներ թույլ չեն տրվել: (...)»²⁴:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասին, ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներին, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածին, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման մասին ՀՀ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին, նշել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից չի ապացուցվել, թե կոնկրետ ինչ եղանակներով և գործողություններով են դրսևորվել իրեն մեղսագրված հանցավոր արարքները: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ գործով վկա հանդիսացող ոստիկանության աշխատակիցներից որևէ մեկը չի հայտնել, որ ինքը 2008 թվականի մարտի 1-ի առավոտյան ուղղորդել կամ ղեկավարել է ոստիկանությանը դիմադրություն ցույց տվողների գործողությունները: Ավելին, վկա Ա.Խաչատրյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը շրջապատում, հատկապես Երևանի քաղաքապետարանի տարածքում հավաքվածների շրջանում վայելել է մեծ հեղինակություն և դրա ազդեցությամբ կարողացել է կանխել հակաօրինական գործողությունները և օժտված է եղել լուրջ կազմակերպչական հնարավորություններով:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը, դատավճռի հիմքում դնելով Լ.Գասպարյանի ցուցմունքը և Գ.Գաբրիելյանի ու Լ.Գասպարյանի վերաբերյալ Երևանի քրեական դատարանի դատավճիռը, խախտել է Եվրոպական կոնվենցիայի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանը մերժելով Գ.Գաբրիելյանին որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունը՝ պաշտպանության կողմին զրկել է հնարավորությունից՝ հարցեր ուղղելու այն անձին, որի միջոցով ինքը, ըստ մեղադրական եզրակացության, ապա՝ նաև դատավճռի, կազմակերպել է զանգվածային անկարգություններ:

²⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթեր 112-134:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմքում դրվել են նաև վկաներ Հ.Հովհաննիսյանի, Ա.Հարությունյանի, Մ.Անտոնյանի, Հ.Աթոյանի ցուցմունքներն այն պայմաններում, երբ վերջիններիս ցուցմունքներում չկա մի տվյալ, որով կհաստատվեր, որ ինքը կազմակերպել է զանգվածային անկարգություններ:

Բողոք բերած անձի կարծիքով, լազերային սկավառակների զննում կատարելու մասին արձանագրությունները չէին կարող համարվել թույլատրելի ապացույցներ, քանի որ դրանք ստացվել են տարբեր լրատվամիջոցներից, օպերատիվ ծառայություններից և անհատ անձանցից, և գործի նյութերում առկա չէ որևէ փաստաթուղթ, որը կվկայեր այս կամ այն տեսակավառակը կամ նկարահանված տեսանյութը որևէ լրատվական միջոցից, որևէ անհատ քաղաքացուց կամ օպերատիվ ծառայության կողմից տրամադրված լինելու փաստը:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է միննույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական վնասները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ²⁵:

Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «հիմնարար խախտում» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացույցների պարզ վերազնադատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության Բացատրական զեկույցի 31-րդ կետում ընդգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հօգուտ դատապարտված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախևառաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա»՝ կամ հօգուտ անձի, կամ հակառակը²⁶:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ

²⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

²⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վատթարացում»:

12.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Նյույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

12.3. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»²⁷:

12.4. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՄԴՈ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պատճառահետևանքային կապի մեջ գտնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկատմամբ արդարացի պատիժ նշանակելուն, հանցագործությունից տուժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պատճառված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեգրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի

²⁷ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը ստացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»²⁸:

13. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...):»:

13.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով²⁹ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ³⁰,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությամբ,

²⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԳՈ-1431 որոշման 4.3-րդ կետը:

²⁹ Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

³⁰ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետերը, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետերը:

որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»³¹,

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին³²,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն³³,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին: Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին³⁴,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ

³¹ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետերը:

³² Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետը, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետը, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետը:

³³ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետը:

³⁴ Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետը:

ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վճճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործելին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները³⁵:

13.2. Միևնույն ժամանակ, անդրադառնալով նկարագրված իրադարձություններին, դրանց հիմքում դրված ապացույցների ամբողջությամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռով արձանագրել է նաև, որ՝

ա) առկա չեն բավարար և համոզիչ ապացույցներ, որոնք թույլ կտան եզրակացնել, որ Ազատության հրապարակում տեղի ունեցած հավաքի կազմակերպիչները և մասնակիցները, բռնի մտադրություններ են ունեցել, և որ սլոյակ հավաքը խաղաղ չի եղել³⁶,

բ) առանց բավարար հիմնավորման և ակնհայտորեն առանց ցրելու մասին նախազգուշացման, ինչպես նաև չհիմնավորված և չափից ավելի ուժի օգտագործմամբ Ազատության հրապարակի հավաքը ցրելն անհամաչափ միջոց է եղել, որը իշխանությունների կողմից հավաքների ազատությունը սահմանափակելիս անցել է ողջամտության սահմանները³⁷,

գ) դիմումատուների դատապարտումը կապված է եղել նրանց՝ ընդդիմության կողմից ղեկավարվող բողոքի շարժմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերելու հետ: Հետևաբար, դատարանը ենթադրել է, որ փաստերի ամբողջությունը, որոնց վրա հիմնված էին վերջիններիս քրեական հետապնդումը և դատապարտումը, վիճելի հիմքերով կարող են համարվել որպես իրենց՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի նկատմամբ «միջամտություն»³⁸,

դ) խաղաղ հավաքների ազատությանը վիճարկվող միջամտությունը կարող էր որակվել որպես ակնհայտ կամայական և համապատասխանաբար՝ անօրինական, Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի նպատակների համար³⁹:

³⁵ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետը, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, 83-րդ կետը, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետը:

³⁶ Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 233:

³⁷ Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 248:

³⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smbat Ayvazyan v. Armenia* գործով 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 49021/08, կետ 129, *Jhangiryan v. Armenia* գործով 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռը, գանգատներ 44841/08 և 63701/09, կետ 123, *Mushegh Saghatelian v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, կետ 234:

³⁹ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smbat Ayvazyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը, կետ 132, *Jhangiryan*

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հ.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա և մյուսները տարբեր միջոցներով՝ իրենց շրջապատի նկատմամբ անձնական ծառայողական ազդեցություն գործադրելով, հարկադրելով, խոստումների և որոշակի վարձատրության դիմաց հավաքագրելով մարդկանց հոծ բազմություն, վերջիններիս ներգրավել են 2008 թվականի փետրվարի 20-ից Երևան քաղաքում անցկացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին, որտեղ հավաքված բազմությանը տրամադրել, նախապատրաստել են անհնազանդության և զանգվածային բռնարարքների, որոնց արդյունքում, սկզբում՝ 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան, Ազատության հրապարակում հանրավտանգ պարագաների օգտագործմամբ դիմադրություն է ցույց տվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրել վերջիններիս նկատմամբ, իսկ այնուհետև իր և այլոց կողմից հավաքագրված այլ անձանց միջոցով ներգրավել են նոր մարդկանց, ամբոխի առավել ագրեսիվ զանգվածին բաժանել զենք, և այլ առարկաներ, և 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Մյասնիկյանի արձանի և Երևանի քաղաքապետարանի հարակից տարածքում ու Երևան քաղաքի տարբեր վայրերում հրազեն, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր և սարքեր գործադրելով կատարվել են զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում զինված դիմադրություն է ցույց տրվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին⁴⁰,

- Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում պաշտպանության կողմը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Գաբրիել Գաբրիելյանին, ինչը դատարանի կողմից մերժվել է⁴¹: Առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հունիսի 22-ի դատավճռով ապացուցված է համարել, որ Հ.Հակոբյանը կազմակերպել է զանգվածային անկարգություններ, որոնք ուղեկցվել են բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով, վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութեր և պայթուցիկ սարքեր գործադրելով և իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով⁴²,

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դատական ակտում նշել է, որ քրեական գործի քննության նախորդ փուլերի ընթացքում նյութական և դատավարական նորմերի էական խախտումներ թույլ չեն տրվել⁴³:

v. Armenia գործով վճիռը, 126-րդ կետը, ինչպես նաև *Hakobyan and Others v. Armenia* գործով 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 34320/04, կետ 107:

⁴⁰ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁴¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴² Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

⁴³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13.1.-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանը նախևառաջ անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ստորադաս դատարանները, Հ.Հակոբյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվել են ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա: Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ստորադաս դատարանները Հ.Հակոբյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր են հատկացրել ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ այն դեպքում, երբ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում: Մասնավորապես, սույն գործով ստորադաս դատարանների կողմից հետազոտված փաստական տվյալների ծավալի՝ ուղղակի և անուղղակի ապացույցների ամբողջության համալիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Հ.Հակոբյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակիցներ՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցներ Մ.Մխիթարյանի, Ա.Սկրտչյանի, Գ.Այվազյանի, Ս.Հակոբյանի, Ա.Կիրակոսյանի, Մ.Թեղոյանի, Ա.Խաչատրյանի ցուցմունքներն են:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Հ.Հակոբյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում, պաշտպանության կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Այսինքն՝ բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ պաշտպանության կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ, ընդունելի են Վճռաբեկ դատարանի համար, քանի որ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու վկա Գաբրիել Գաբրիելյանին և ապացուցողական զանգվածում ներառելու նրա ցուցմունքները, որոնք կարող էին կասկածի տակ դնել ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն ու հիմնավորել դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշած վարկածը:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հանգամանքները, Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու

իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, առերևույթ սովորում են գործով ձեռքբերված ապացուցողական զամբյուղի լիարժեքությունն ու վկայում Հ.Հակոբյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքների խախտման մասին:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալի համատեքստում սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Մինևս սույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի իրավական ռեժիմով վճռաբեկ բողոքը քննության առնելու պայմաններում, չի անդրադառնում 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ՝ ապացուցողական զամբյուղում ներառված փաստական տվյալների վերաբերյալ արդեն իսկ տրված գնահատականներին:

16. Վերոգրյալի հաշվառմամբ, անդրադառնալով սույն գործով Հ.Հակոբյանին առաջադրված մեղադրանքում նկարագրված իրադարձություններին, դրանց հիմքում դրված ապացույցների ամբողջությանը, սույն որոշման 13.2-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ մի կողմից՝ նկատի ունենալով, որ Հ.Հակոբյանին մեղադրանք է առաջադրված եղել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով՝ այդ թվում՝ 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան Ազատության հրապարակում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների առնչությամբ, որոնց վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել *Մուշեղ Սաղաթելյանն* ընդդեմ Հայաստանի վճռով, մյուս կողմից՝ հաշվի առնելով այդ մեղադրանքի հաստատման համար սույն գործով ստորադաս դատարանների կողմից հետազոտված փաստական տվյալների ծավալը, այդ թվում՝ անուղղակի ապացույցների ամբողջությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թույլ տրված խախտումները վերացնելու, ապացույցները ողջ ծավալով համակողմանի հետազոտման ենթարկելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

17. Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա Հակոբ Վարդանեսի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը բեկանելու և գործը Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած մոտեցումների և սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է գնահատման ենթարկի գործով ձեռքբերված ապացույցների ծավալը, այդ թվում՝ անդրադառնալով նաև դրանց հետ փոխկապակցված՝ սույն որոշման 9-րդ կետում նշված բողոքարկերի փաստարկներին և գործի լուծման համար Հակոբ Հակոբյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցների բավարարության հարցում հանգի վերջնական հետևություն:

18. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ, հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Հակոբ Վարդանեսի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *սրորագրություն*

Դատավորներ *սրորագրություններ*

3.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0006/01/17

ՀՀ Վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորները</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 2-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Արմեն Վլադիմիրի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 11-ի որոշման դեմ պաշտպան Տ.Սարգսյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի հունիսի 17-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 266-րդ հոդվածի 4-րդ մասի և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 11143516 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 20-ի որոշմամբ Արմեն Վլադիմիրի Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ

մասի 2-րդ կետով, երկու դրվագով՝ 266-րդ հոդվածի 4-րդ մասով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

1.1. 2016 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 62224816 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ թիվ 62224816 քրեական գործը միացվել է թիվ 11143516 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 11143516 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ Ա.Կարապետյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, երկու դրվագով՝ 266-րդ հոդվածի 4-րդ մասով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 333-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի հունվարի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ Ա.Կարապետյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավը՝ 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Մ.Մովսիսյանի՝ 2019 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ Ա.Կարապետյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, երկու դրվագով՝ 266-րդ հոդվածի 4-րդ մասով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 333-րդ հոդվածի 1-ին մասով:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի հոկտեմբերի 14-ի դատավճռով Ա.Կարապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, երկու դրվագով՝ 266-րդ հոդվածի 4-րդ մասով, 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 333-րդ հոդվածի 1-ին մասով և դատավճիռների ու հանցանքների համակցությամբ դատապարտվել է ազատազրկման՝ 9 (ինը) տարի 2 (երկու) ամիս 15 (տասնհինգ) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և տուգանքի՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

4. Պաշտպանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2020 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

5. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Կարապետյանի պաշտպան Տ.Սարգսյանը, որը Վճռաբեկ

դատարանի՝ 2020 թվականի մայիսի 26-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 22-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով ամբաստանյալ Ա.Կարապետյանի պաշտպան Տ.Սարգսյանի վերաքննիչ բողոքը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակվի (...)

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում՝ մեջբերելով դրանց հակասող մասերը և կարարելով համեմատական վերլուծություն (...):

2.1. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը թողնում է առանց քննության, եթե՝

1) վերաքննիչ բողոքը բերվել է սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5.1-ին կետերով սահմանված պահանջների խախտմամբ.

(...):»:

(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում պաշտպան Տիգրան Սարգսյանի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5.1-րդ կետով սահմանված վերաքննիչ բողոքի պահանջները, այսինքն բացակայում են վերաքննիչ բողոքի հիմքերը, մասնավորապես չի նշվել, թե առկա է արդյոք դատական սխալ, թե ոչ, ինչում է դրսևորվել ենթադրյալ դատական սխալը, և նյութական կամ դատավարական ինչ իրավունք է խախտվել և ինչ ազդեցություն է ունեցել գործի ելքի վրա: Եր վերաքննիչ բողոքում պաշտպան Տ.Սարգսյանը չի նշել որևէ դատական սխալ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի կրկնվելու և հստակ խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Հետևաբար չի նշվել նաև գործի ելքի վրա ենթադրյալ դատական սխալի ազդեցության վերաբերյալ հիմնավորումները և այլն:

(...) Ամփոփելով վերոգրյալը, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ տվյալ դեպքում պաշտպան Տիգրան Սարգսյանի կողմից չեն պահպանվել վերաքննիչ բողոքին առաջադրվող պահանջները, ինչի հետևանքով

վերջինս իրավական տեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, հետևաբար վերջինիս կողմից ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության բողոքին առաջադրվող պահանջները պահպանված չլինելու հիմքով»⁴⁴:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածը, ինչի արդյունքում իր պաշտպանյալը գրկվել է իր նկատմամբ կայացված դատական ակտի՝ վերադաս դատարանի կողմից վերանայման հնարավորությունից:

Բողոքաբերը նշել է, որ վերաքննիչ բողոքի բովանդակությանն առավել խիստ պահանջներ ներկայացնելու և ներկայացված բողոքն առանց քննության թողնելու դեպքում կարող են խախտվել անձի՝ արդար դատաքննության կոնվենցիոն և սահմանադրական իրավունքները:

Բողոք բերած անձի համոզմամբ՝ իր բողոքը ենթակա էր վարույթ ընդունման և գործը պետք է նշանակվեր դատական քննության, քանի որ պահպանված էր վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները, նշված են եղել այն խախտումները, որոնք կարող էին գործի ելքի համար էական նշանակություն ունենալ:

8. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 11-ի որոշումը, և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն այն պատճառաբանությամբ, որ չի պահպանվել բողոքի հիմքը և հիմնավորումը ներկայացնելու վերաքննիչ բողոքին առաջադրվող պահանջը, հանգեցրել է ամբաստանյալ Ա.Կարապետյանի՝ դատական պաշտպանության և դատական մատչելիության իրավունքների խախտման:

10. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված

⁴⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 8-13:

միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկասի ու անսաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

11. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատական մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով⁴⁵,

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը⁴⁶,

- դատական մատչելիության իրավունքի սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն⁴⁷,

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա⁴⁸: Դատական մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերաժվում

⁴⁵ Տե՛ս *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում:

⁴⁷ Տե՛ս *Khalifaoui v. France* գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ:

⁴⁸ Տե՛ս *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի⁴⁹:

12. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով դատական մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ «Դատական մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները»⁵⁰:

13. Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշմամբ փաստել է. «(...) [Վ]երաքննիչ բողոքում հայտնաբերված թերությունների կամ սխալների նկատմամբ պետք է դրսևորվի փարբերակված մոտեցում, ինչի հետևանքով անհրաժեշտ կլինի նաև սահմանազարել դրանցից հետևող հնարավոր իրավական հետևանքները: Եթե ձևական պահանջների խախտման դեպքում չստիպանք խիստ հետևանքներ նախատեսելը կասեմանափակի անձի հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը, սապա բովանդակային պահանջների խախտման հանդեպ անհամաձայն մեղմ գնահատականը կարող է այդ իրավունքի չարաշահման նախադրյալներ ստեղծել: (...)

Այսպիսով, եթե վերաքննիչ բողոք ներկայացրել է այն անձը, ով չունեւր այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է (քացակայում է այն վերականգնելու հիմնավոր որևէ պարճատ), կամ այն բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման և նման այլ այնպիսի հիմքերի առկայությամբ, երբ անձը վերաքննիչ դատարանի գնահատմամբ փաստի ուժով, իրավական րեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, սապա վերջինիս իրացման արգելքը, ինչը նախատեսված է [ՀՀ քրեական դատավարության] [օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասում, իրավական պարշաճ գործընթացի արդյունքում կարող է գնահատվել իրավաչափ: Մինչդեռ, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական որևէ նախապայմանի խախտման հիմքով, երբ առկա է այն

⁴⁹ Տնւ Efstathiou and others v. Greece գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիոր, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ:

⁵⁰ Տնւ Վճռաբեկ դատարանի՝ Արթոր Այվազյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԳ2/0007/15/12 որոշումը, 16-րդ կետ, Լևոն Հարությունյանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը, 13-րդ կետ:

շրջելու իրավական ողջամիտ հնարավորություն, անձին Սահմանադրությամբ երաշխավորված դատական բողոքարկման իր իրավունքի իրացումից զրկելը, սահմանափակելը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ չի կարող բխել մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման և իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներից, ինչպես նաև այդ բնագավառում հանրային իշխանությանն առաջադրված սահմանադրաիրավական նպատակներից: Հերևաբար, Սահմանադրական դատարանը գրնում է, որ, վեճի առարկա իրավակարգավորմամբ նախատեսված ձևական պահանջների չլիարժեքացման հիմքով սահմանափակելով անձի հիմնական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մարտեղիության իրավունքը, խախտվել է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքը: Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից այդ իրավակարգավորումը չի համապատասխանում իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման ընթացակարգի չափանիշներին (...)⁵¹:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակվի

(...)

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում մեջբերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը. (...):»

15. Մեջբերված նորմի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը Հարություն Հարությունյանի գործով արձանագրել է, որ եթե կոնկրետ դեպքում առկա է վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական նախապայմանի խախտում, ապա այն շտկելու ողջամիտ հնարավորության առկայության պայմաններում բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելով, Վերաքննիչ դատարանը *prima facie* ոչ իրավաչափորեն սահմանափակում է անձի դատարան դիմելու և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու իրավունքը⁵²:

⁵¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՄԴՈ-1420 որոշման 4.3-4.5-րդ կետերը:

⁵² Տե՛ս Հարություն Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԱՐԱԴ/0033/15/19 որոշման 16-17-րդ կետերը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 14-ի դատավճռի դեմ պաշտպանի բողոքը թողնվել է առանց քննության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5¹-րդ կետերով վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները պահպանված չլինելու պատճառաբանությամբ⁵³:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքը գնահատելով սույն որոշման 10-15-րդ կետերում վկայակոչված իրավադրոյթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե կոնկրետ դեպքում առկա է եղել վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական նախապայմանի խախտում, ապա այն շտկելու ողջամիտ հնարավորության առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից այն առանց քննության թողնելը հիմնավոր համարվել չի կարող: Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող դատավարական պահանջներին տրված նման մեկնաբանությամբ դատապարտյալի բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելով, ոչ իրավաչափորեն սահմանափակել է դատարանի դիմելու անձի իրավունքը, որի արդյունքում խախտվել են անձի՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքները:

18. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ամբաստանյալ Ա.Կարապետյանի պաշտպան Տ.Սարգսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 11-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ համապատասխան որոշում կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

⁵³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արմեն Վլադիմիրի Կարապետյանի պաշտպան Տ.Սարգսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արտրագրություն

Դատավորներ

արտրագրություններ

4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ2/0015/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 2-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 21-ի որոշման դեմ Կախաբեր Գիորգիի Բաքնիաշվիլիի պաշտպան Վ.Սուդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի մարտի 14-ին ՀՀ կառավարությանն առնթեր Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում հարուցվել է թիվ 58205519 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մարտի 14-ի որոշմամբ Կախաբեր Գիորգիի Բաքնիաշվիլին ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի մարտի 15-ի որոշմամբ Կ.Բաքնիաշվիլիի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2. 2019 թվականի մայիսի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի մայիսի 13-ին քրեական գործը դատական քննության նախապատրաստելու փուլում, քննության առնելով Կ.Բաքնիաշվիլիի նկատմամբ խափանման միջոց կիրառված կալանավորումը հիմնավոր կամ ոչ հիմնավոր համարելու հարցը, այն թողել է անփոփոխ՝ միաժամանակ մերժելով կալանավորումը գրավով կամ չեղանալու մասին ստորագրությամբ փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի հունիսի 21-ի որոշմամբ պաշտպանի բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 13-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Կ.Բաքնիաշվիլիի պաշտպան Վ.Սուդյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության ընթացքում Կ.Բաքնիաշվիլիի մասնակցությամբ կատարված քննչական և դատավարական գործողություններին ներգրավված է եղել և մասնակցել է վրացերեն լեզվով թարգմանչական գործառույթ իրականացնող թարգման Մ.Ալավերդյանը⁵⁴:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 13-ի դատական նիստին մասնակցել են Կ.Բաքնիաշվիլին, պաշտպան Վ.Սուդյանը, թարգման Գ.Դանիելյանը⁵⁵:

6.1. Նույն դատական նիստի արձանագրության վերարտադրության համաձայն՝ *«Դատական նիստը հայտարարվել է բացված, հրապարակվել է քննության ենթակա գործը, պարզվել է նիստին ներկայացած անձանց ցանկը. Դատարանը հայտարարել է, որ հայերենից ռուսերեն, ռուսերենից հայերեն թարգմանչական գործառույթ կատարելու համար ներկայացել է Գ.Դանիելյանը, վերջինիս բացատրվել է նրա իրավունքները և պարտականությունները, որին հաջորդել է դատարանի հերկյալ հարցադրումը.]*

Դատարան. – *[Դ]ուք վրացերեն խոսում եք.*

⁵⁴ Տե՛ս Մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստական տվյալները պարունակող լազերային կրիչը, թերթ 1:

⁵⁵ Տե՛ս դատական նիստի արձանագրություն, թերթեր 21-22:

Թարգմանիչ. – խոսում եմ, բայց ոչ իրավաբանական մակարդակի, գրեթե կարդալ գիրեմ (...).

Դատարան. – այսինքն, ըստ անհրաժեշտության՝ նաև վրացերեն էլ (...).

Թարգմանիչ. – շար-շար քիչ, [այն] մակարդակը, ես իմացություն չեմ իմանում.

Դատարան. – չէ, հասկանալի է] (...).

Թարգմանիչ. – ռուսերեն, հայերեն, հա, վրացերենով չէ (...).

Դատարան. – իրավաբանական կողմը պաշտպանը կապահովի, [այ]պետի իրավաբանական [այդ]քան բան չկա, ուղղակի մենք պետք է պահովենք նրա լաված լինելու իրավունքը (...).

Թարգմանիչ. – կենցաղային մակարդակի (...).

Դատարան. – ինքը, որքան որ տեղեկացել եք, ռուսերեն (...).

Թարգմանիչ. – ասում է՝ երկար տարիներ չեմ խոսել, մինչև [այ]դ որ խոսում էինք, ասել է՝ երկար տարիներ [չի] օգտագործել, [այ]դքան [չի] կարողանում.

Դատարան. – լավ:

[Այնուհետև դատարանը հայտարարել է դատարանի կազմը, որին հաջորդել են դատավարության մասնակիցներին բացարկ հայտնելու վերաբերյալ Կ.Բաքնիաշվիլիի դիրքորոշման ճշտումը, Կ.Բաքնիաշվիլիի ինքնության ստուգումը, քննության ենթակա հարցի էության պարզաբանումը և այդ առնչությամբ Կ.Բաքնիաշվիլիի դիրքորոշման ճշտումը, հրապարակվել է մեղադրողի գրությունը, դիրքորոշում է հայտնել պաշտպանը, ռուսերեն և վրացերեն լեզուների համադրությամբ հայտարարություն է արել Կ.Բաքնիաշվիլին, որից հետո դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ]»⁵⁶:

7. Վճռաբեկ դատարանում առկա գործի նյութերում բացակայում է Առաջին ատյանի դատարանում ներգրավված թարգմանի՝ իր որակավորումը հաստատող որևէ փաստաթուղթ⁵⁷, և համաձայն դատական նիստի ձայնային արձանագրության՝ Կ.Բաքնիաշվիլիի իրավունքները և պարտականությունները պարզաբանվել են այնքանով, որքանով վերջինիս բացատրվել է բացարկ հայտնելու իրավունքը, թարգմանությունն իրականացվել է ռուսերեն և վրացերեն լեզուների համադրությամբ, Կ.Բաքնիաշվիլին դատավարության մասնակիցների հարցադրումներին հիմնականում պատասխանել է վրացերեն լեզվով⁵⁸:

8. Գործի նյութերում առկա չէ Առաջին ատյանի դատարանի որոշման վրացերեն լեզվով թարգմանված օրինակը⁵⁹:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Ուսումնասիրելով խափանման միջոցի վերաբերյալ նյութերը, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևություն, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի

⁵⁶ Տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, թերթ 23:

⁵⁷ Տե՛ս նյութեր:

⁵⁸ Տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, թերթ 23:

⁵⁹ Տե՛ս նյութեր:

2019 թվականի մայիսի 13-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել (...)»⁶⁰:

10. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2019 թվականի հուլիսի 29-ի դատավճռով Կ.Բաքնիաշվիլիին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման՝ 6 (վեց) ամիս ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով 2019 թվականի մարտի 13-ից⁶¹: 2019 թվականի սեպտեմբերի 13-ին Կ.Բաքնիաշվիլին, նշանակված պատիժն ամբողջությամբ կրելով, ազատ է արձակվել⁶²:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ, որի արդյունքում կայացրել են անօրինական դատական ակտեր:

11.1. Բողոքի հեղինակը մեջ է բերել քրեական դատավարության՝ լեզվի սկզբունքի վերաբերյալ Վճարելի դատարանի նախադեպային որոշումները, համադրել դրանք սույն գործի փաստական հանգամանքների հետ և գտել, որ խախտվել է Կ.Բաքնիաշվիլիի՝ նախընտրելի լեզվով հանդես գալու իրավունքը:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Կ.Բաքնիաշվիլին ազգությամբ վրացի է, Վրաստանի Հանրապետության քաղաքացի: Բողոք բերած անձը փաստել է, որ դատական նիստի ժամանակ Առաջին ատյանի դատարանը հարցադրումների միջոցով պարզել է ամբաստանյալի՝ դատավարության լեզվին չտիրապետելու հանգամանքը և չի ապահովել վրացերեն լեզվին ազատորեն տիրապետող թարգմանի ներկայությունը: Ըստ բողոքաբերի՝ դատական նիստին ներգրավված է եղել հայերենից ռուսերեն թարգմանչական գործառույթ իրականացնող թարգման, սակայն իրականացրել է թարգմանություն վրացերեն լեզվով՝ չունենալով նման թարգմանչական գործառույթ իրականացնելու համար անհրաժեշտ կրթություն և գիտելիքներ, թարգմանությունների մեծ մասն իրականացվել է ռուսերեն լեզվով, այն դեպքում, երբ Կ.Բաքնիաշվիլին հայտարարել էր, որ ռուսերեն լեզվով խոսում և հասկանում է մեծ դժվարությամբ, իր հայտարարությունները հիմնականում կատարել էր վրացերեն լեզվով: Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Կ.Բաքնիաշվիլին չէն հանձնվել իրեն հանձնման ենթակա դատավարական փաստաթղթերի թարգմանված օրինակները:

⁶⁰ Տե՛ս նյութեր, թերթեր 69-81:

⁶¹ Տե՛ս www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 29-ի թիվ ԼԴ2/0015/01/19 որոշումը:

⁶² Տե՛ս նյութեր, թերթ 109:

11.2. Բացի այդ, բողոքաբերը մեջ է բերել դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, համադրել դրանք սույն գործի փաստական հանգամանքների հետ և գտել, որ սույն գործով խախտվել է նաև Կ.Բաքսիաշվիլիի՝ դատական պաշտպանության իրավունքը:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ համապատասխան որակավորում չունեցող թարգմանի մասնակցությամբ Առաջին ատյանի դատարանն առանց Կ.Բաքսիաշվիլիի իրավունքները և պարտականությունները պարզաբանելու շարունակել է դատական նիստը՝ հայտարարելով դատարանի կազմը, ճշտելով դատավարության մասնակիցներին բացարկ հայտնելու վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը, ստուգելով նրա ինքնությունը և այլ դատավարական գործողություններ կատարելով, որոնց էությունը Կ.Բաքսիաշվիլիի համար հիմնականում անհասկանալի են եղել:

11.3. Բողոք բերած անձը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում բարձրացված՝ քրեական գործը դատական քննության նախապատրաստելիս Կ.Բաքսիաշվիլիի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ փոխելու, ինչպես նաև դրա հիմնավորվածության հարցի քննության ընթացքում թույլ տրված վերոգրյալ խախտումների վերաբերյալ փաստարկին՝ կայացնելով չպատճառաբանված դատական ակտ:

12. Վերոշարադրյալի հիման վրա, Կ.Բաքսիաշվիլիի պաշտպան Վ.Սուդյանը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 13-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 21-ի որոշումը ու Կ.Բաքսիաշվիլիին ազատ արձակել կալանքից:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Առաջին ատյանի դատարանի որոշման օրինական լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը:

14. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Բրեժևսկան հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հեղուկալ նվազագույն իրավունքները.*

(...)

ե. օգրվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:

15. Իրեն հասկանալի լեզվով հանդես գալու իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) նշել է, որ մեղադրյալը, ով չի կարողանում հասկանալ կամ խոսել

դատավարության լեզվով, իրավունք ունի ստանալու թարգմանչի անվճար ծառայություն կամ վարույթի փաստաթղթերի կամ արձանագրությունների թարգմանություններ, ինչը նրան անհրաժեշտ է՝ օգտվելու համար արդար դատաքննության իրավունքից⁶³:

15.1. *Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի* գործով վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետը չի ենթադրում քրեական դատավարությունում առկա բոլոր նյութերի, ապացույցների կամ պաշտոնական փաստաթղթերի գրավոր թարգմանություն: Թարգմանի օգնությունը պետք է ապահովվի այնքանով, որ մեղադրյալը տեղեկացվի իր դեմ առկա գործի մասին և կարողանա կազմակերպել իր պաշտպանությունը⁶⁴:

15.2. *Կուսկանին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուի՝ թարգմանչական ծառայություններից օգտվելու անհրաժեշտության ստուգման համար, դատավորը պետք է խորհրդակցի դիմումատուի հետ. դատավորը պետք է համոզված լինի, որ գործի լուսնների ժամանակ թարգմանի բացակայությունը չի վնասի դիմումատուի լիարժեք ներգրավվածությանը նրա համար վճռորոշ գործում⁶⁵:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է:

2. Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովվում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը:

(...):»

17. Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, դատական պաշտպանության իրավունքի համատեքստում որպես անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի երաշխիք, քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին իրավունք է վերապահում քրեական դատավարության ընթացքում հանդես գալ իր նախընտրած լեզվով՝ միաժամանակ սահմանելով դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց թարգմանի ծառայություններով ապահովելու

⁶³ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Luedicke, Bekacem and Koc v. Germany* գործով 1978 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 6210/73, 6877/75, 7132/75, կետ 48:

⁶⁴ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kamasinski v. Austria* գործով 1989 դեկտեմբերի 19-ի վճիռը, 9783/82, կետ 74:

⁶⁵ Տեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Cuscani v. the United Kingdom* գործով 2002 թվականի սեպտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 32771/96, կետ 38:

վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, բացառությամբ, երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը:

18. Վճռաբեկ դատարանը վերահաստատում է նախադեպային իրավունքում ձևավորած իր դիրքորոշումն առ այն, որ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց՝ իրենց համար նախընտրելի լեզվով հանդես գալու իրավունքը պետք է ապահովվի դատավարության բոլոր փուլերում: Քրեական դատավարության լեզվի սկզբունքը քրեական վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում է քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց ոչ միայն պարզաբանել իրենց համար նախընտրելի լեզվով հանդես գալու իրավունքը, այլև դրա իրականացումն ապահովել այնպես, որ չսահմանափակվեն և գործնականում իրագործվեն ինչպես գործի քննության ցանկացած փուլում իրենց նախընտրած լեզվով հանդես գալու, այնպես էլ՝ մյուս բոլոր այն իրավունքները, որոնք փոխկապակցված են այդ իրավունքի հետ և երաշխավորված են օրենքով⁶⁶:

19. Նշված իրավունքի հետ սերտորեն փոխկապակցված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը, որն ամրագրում է դրա իրացման դատավարական երաշխիքներից մեկը: Այսպես, նշված նորմի համաձայն՝ *«1. Թարգմանիչը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն իրականացնելու համար:*

2. Թարգմանիչը պետք է ազատորեն տիրապետի քրեական դատավարության լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը: (...)

4. Թարգմանիչը պարտավոր է՝

(...)

2) քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել թարգմանչի իր որակավորումը հասարակող փաստաթղթերը.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և համապատասխան քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հետ հարաբերությունների մասին. (...):»:

19.1. Մեջբերված քրեադատավարական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Նաիրա Գելաշվիլու* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց⁶⁷ իրենց համար նախընտրելի լեզվով հանդես գալու իրավունքը թղթակցվում է որպես թարգման ներգրավման ենթակա անձի՝ վերը մեջբերված դատավարական դրույթով սահմանված պահանջներին

⁶⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Նաիրա Գելաշվիլու* գործով 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07, *Գևորգ Խաչատրյանի և Սամվել Բրնոյանի* գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0059/01/14 որոշումները:

⁶⁷ Դատավարության մասնակցի կողմից իր իրավունքների և պարտականությունների իրականացման համար քրեադատավարական լեզվին տիրապետելու հանգամանքի գնահատման մասին մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Խաչատրյանի և Սամվել Բրնոյանի* գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0059/01/14 որոշումը:

համապատասխանելու հանգամանքը պարզելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությանը:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության որևէ փուլում վարույթն իրականացնող մարմինը, ապահովելով թարգմանի օգնությանը քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց կողմից օրենքով երաշխավորված իրենց իրավունքներն իրականացնելու հնարավորությունը, պարտավոր է հանդավել, որ որպես թարգման ներգրավման ենթակա անձի՝ քրեադատավարական լեզվին, այն լեզվին որից կատարվելու է թարգմանությունը, թարգմանության առանձնահատկություններին և տերմինաբանությանը տիրապետելու աստիճանն ակնհայտորեն բավարար է նրա կողմից իր պարտականությունների իրականացման համար: Յուրաքանչյուր դեպքում որպես թարգման ներգրավման ենթակա անձի կողմից համապատասխան լեզուներին ազատորեն տիրապետելու և թարգմանչական գործունեության փորձ ունենալու (ձեռնհասության) մասին վարույթն իրականացնող մարմնի եզրահանգումները պետք է կառուցվեն հստակ և որոշակի փաստական հանգամանքներից բխող հետևությունների վրա: Մասնավորապես՝ քրեական գործով վարույթին ներգրավման ենթակա թարգմանի ձեռնհասությունը կարող է հաստատվել, ի թիվս այլնի՝ համապատասխան բարձրագույն կամ այլ հաստատություն ավարտելու մասին դիպլոմով, դասընթացներ անցնելու, որպես թարգման աշխատելու մասին վկայականով, տեղեկանքով և այլ փաստաթղթերով: Որպես կանոն, թարգման պետք է ներգրավվի համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձը, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում: Քրեական գործով վարույթին որպես թարգման ներգրավման ենթակա չեն նաև գործի ելքով շահագրգռված անձինք⁶⁸:

19.2. Անփոփելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց և մասնավորապես մեղադրյալի իրավունքների լրացուցիչ երաշխիքների շարքում օրենսդիրն առանձնացնում է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ պարզելու որպես թարգման ներգրավման ենթակա անձի՝ քրեական գործով շահագրգռված չլինելու և ձեռնհասության հանգամանքները: Նշված պահանջներից որևէ մեկի բացակայության դեպքում, որպես թարգման ներգրավման ենթակա անձը չի կարող մասնակցել գործի քննությանը և ենթակա է բացարկման:

20. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց՝ իրենց համար նախընտրելի լեզվով հանդես գալու իրավունքի արդյունավետ իրացման նախադրյալ է նախորդ կետում քննարկված պահանջներին

⁶⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Նաիրա Գեղաշվիլու գործով 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշումը:

համապատասխանող անձին որպես թարգման ներգրավելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը:

21. Քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց՝ իրենց համար նախընտրելի լեզվով հանդես գալու իրավունքի համատեքստում Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել նաև այն մասին, որ դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքների լրացուցիչ երաշխիքների շարքում քրեադատավարական օրենսդրությունն առանձնացնում է տվյալ անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն իրենց համար հասկանալի լեզվով տրամադրելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը: Հանձնման ենթակա փաստաթղթերի ներքո պետք է հասկանալ ոչ թե քրեական գործում առկա բոլոր փաստաթղթերը, այլ միայն նրանք, որոնք քրեադատավարական օրենսդրությամբ ենթակա են հանձնման և անհրաժեշտ ու բավարար են անձի՝ արդար դատաքննության, այդ թվում՝ պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից⁶⁹:

22. Վերոնշյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ նախընտրելի լեզվով հանդես գալու անձի իրավունքը դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման նախադրյալ է, որն ապահովում է վերջինիս՝ գործնականում իրատեսական և իրագործելի լինելը: Քննարկվող իրավունքի օրենսդրական երաշխիքների չապահովումը քրեադատավարական օրենքի էական խախտում է, որը նախատեսված է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի շարքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը)⁷⁰:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Կ.Բաքնիաշվիլին քրեադատավարական լեզվին չի տիրապետում և մինչդատական վարույթի ընթացքում ներգրավված է եղել Կ.Բաքնիաշվիլիի նախընտրած՝ վրացերեն լեզվով թարգմանչական գործառույթ իրականացնող թարգման Մ.Ալավերդյանը⁷¹:

Քրեական գործը դատական քննության նախապատրաստելիս, Կ.Բաքնիաշվիլիի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկման ժամանակ, Առաջին ատյանի դատարանը ներգրավել է թարգման, ում որակավորումը հաստատող որևէ փաստաթուղթ Վճռաբեկ դատարանում ստացված գործի նյութերում առկա չէ⁷²:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 13-ի դատական նիստի արձանագրության վերծանումից պարզ է դառնում, որ թարգմանը հրավիրվել է հայերենից-ռուսերեն և ռուսերենից-հայերեն թարգմանություն կատարելու համար, Կ.Բաքնիաշվիլին ռուսերեն լեզվին վատ է տիրապետում,

⁶⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սուրեն Խաչատրյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ 21/32-313-17 որոշման 24-րդ կետը:

⁷⁰ Տե՛ս նույն որոշման 26-րդ կետը:

⁷¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁷² Տե՛ս սույն որոշման 6-րդ, 6.1-րդ և 7-րդ կետերը:

իսկ ներգրավված թագմանի կողմից մեղադրյալի նախընտրած լեզվին՝ վրացերենին տիրապետելու աստիճանն ակնհայտորեն անբավարար է եղել՝ վերջինիս կողմից թարգմանի իր պարտականությունները կատարելու համար⁷³:

Թարգմանը թարգմանությունն իրականացրել է ռուսերեն և վրացերեն լեզուների զուգորդմամբ, մեղադրյալը դատավարության մասնակիցների հարցադրումներին պատասխանել է հիմնականում վրացերենով: Առաջին ատյանի դատարանը Կ.Բաքնիաշվիլիի իրավունքները և պարտականությունները պարզաբանել է այնքանով, որքանով նրան բացատրվել է բացարկ հայտնելու իրավունքը⁷⁴:

Գործի նյութերից երևում է նաև, որ մեղադրյալ Կ.Բաքնիաշվիլիին չի հանձնվել Առաջին ատյանի դատարանի դատական ակտի՝ վրացերեն լեզվով թարգմանված օրինակը⁷⁵:

24. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-22-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ա) Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության վերձևումից ակնհայտ է ներգրավված թարգմանի անձեռնհասությունը, և Առաջին ատյանի դատարանը դատավարության լեզվին չտիրապետող անձի՝ նախընտրած լեզվով հանդես գալու իրավունքի իրացման նպատակով չի ապահովել վրացերեն լեզվին ազատորեն տիրապետող թարգմանի մասնակցություն,

բ) առերևույթ բացարկման ենթակա թարգմանի մասնակցությամբ դատավարական համապատասխան ընթացակարգի ապահովման, անձի իրավունքների և պարտականությունների պարզաբանման ուղղությամբ Առաջին ատյանի դատարանի կողմից ձեռնարկված կոնկրետ գործողությունները ձևական բնույթ են կրել և գործնականում չեն կարող գնահատվել որպես արդյունավետ միջոց՝ դատավարության լեզվին չտիրապետող անձի համար արդար դատաքննության կազմակերպման տեսանկյունից.

գ) Առաջին ատյանի դատարանը պատշաճ չի իրացրել անձի դատավարական կարգավիճակից բխող վերջինիս իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու գործառնությունը ոչ միայն, այն առումով, որ չի ապահովել անձի համար նախընտրելի լեզվին ազատորեն տիրապետող թարգմանի մասնակցությունը, այլև Կ.Բաքնիաշվիլիի իրավունքները և պարտականությունները պարզաբանել է միայն բացարկ հայտնելու իրավունքի համատեքստում:

25. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինական լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն իրավաչափ է:

⁷³ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

⁷⁴ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁷⁵ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

26. Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարում նաև Կ.Բաքնիաշվիլիի՝ արդար դատաքննության, այդ թվում՝ պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից վերոգրյալ դատավարական խախտումներին Վերաքննիչ դատարանի կողմից անդրադարձ չկատարելու փաստը, հատկապես այն պայմաններում, երբ վերջինիս պաշտպանը վերաքննիչ բողոքով փաստարկել է Առաջին ատյանի դատարանի կողմից վերոնշված իրավունքների խախտումը⁷⁶:

27. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Կ.Բաքնիաշվիլիի՝ արդար դատաքննության, այդ թվում՝ պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ ու 83-րդ հոդվածների խախտում, որն իր բնույթով էական է, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Սակայն, հաշվի առնելով, որ սույն գործով Կ.Բաքնիաշվիլիի վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ, իսկ 2019 թվականի սեպտեմբերի 13-ին Կ.Բաքնիաշվիլին ազատ է արձակվել՝ ամբողջությամբ կրելով նշանակված պատիժը⁷⁷, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտերի բեկանման արդյունքում հնարավոր չէ վերականգնել անձի խախտված իրավունքը: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, ճանաչել Կ.Բաքնիաշվիլիի իրավունքների խախտման փաստը, իսկ ստորադաս դատարանի դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Ճանաչել Կախաբեր Գիորգիի Բաքնիաշվիլիի իրավունքների խախտման փաստը:
3. Կախաբեր Գիորգիի Բաքնիաշվիլիի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 21-ի որոշումը թողնել օրինական

⁷⁶ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

⁷⁷ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0335/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 10-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով Արմեն Գագիկի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 10-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի մարտի 25-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնում հարուցվել է թիվ 10174819 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մարտի 28-ի որոշմամբ Արմեն Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մարտի 28-ի որոշմամբ Ա.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2019 թվականի մայիսի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2019 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճռով

Ա.Գրիգորյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: Նշանակված պատժի ժամկետին հաշվակցվել է արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածը՝ 3 (երեք) օրը: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա, նշանակված պատժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Մեղադրող Ա.Գևորգյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի հունիսի 10-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի դատավոր Կ.Մարդանյանը հատուկ կարծիք է ներկայացրել՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճիռի դեմ դատախազի ներկայացրած վերաքննիչ բողոքը պետք է մասնակիորեն բավարարվեր, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը մասնակիորեն բեկանվեր և ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ պատժը պայմանականորեն չկիրառելը վերացվեր:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 25-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Ա.Գրիգորյանի պաշտպան Ռ.Բալոյանը՝ խնդրելով մերժել ներկայացված վճռաբեկ բողոքը, քանի որ ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական են և հիմնավոր:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Արմեն Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ելա 2019 թվականի մարտի 24-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, իրեն պատկանող «MIT-SUBISHI PAJERO» մակնիշի 10 ZU 707 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով իր սանիկ՝ Լևոն Էդուարդի Եղիազարյանի հետ Երևան քաղաքի Հրազդանի կիրճով Հալաբյան փողոցի ուղղությամբ երթնելիս, իր երաշխավորությամբ այլ անձից Լևոն Եղիազարյանի կողմից վերցված 20.000 (քսան հազար) ԱՄՆ դոլար պարտքը ժամանակին չմարելու և ձգձգելու հարցի շուրջ ծագած վիճարանության ընթացքում, վերջինիս առողջությամբ ծանր վնաս պատճառելու դիտարկությամբ, ավտոմեքենայի առջևի ձախ դռան պահոցային մասից վերցված դանակով հարվածներ է հասցրել առջևի սջ նստարեղին նստած Լևոն Եղիազարյանի

մարմնի փարբեր մասերին՝ պատճառելով աջ նախաբազկի հետին մակերեսի, կրծքավանդակի աջ կեսի առաջնային մակերեսի և առողջության ծանր վնասի հարկանիշներ պարունակող, կյանքին վրանգ պատճառող՝ ձախ թուլակողի շրջանի առաջնային մակերեսի թափանցող, ծակած-կտրած վերքերի ձևով մարմնական վնասվածքներ»⁷⁸:

6. Առաջին առյանի դատարանը, անդրադառնալով ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ պատիժ նշանակելու հարցին, փաստել է. «(...) Արմեն Գագիկի Գրիգորյանի անձը դրականորեն բնութագրող հանգամանք է դրականորեն բնութագրվելը:

Արմեն Գագիկի Գրիգորյանի պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանք է՝ ինասնքին 14 տարին չըրացած երկու (Նեյլի Արմենի Գրիգորյան ծնված՝ 2018 թվականի հուլիսի 6-ին և Գագիկ Արմենի Գրիգորյան ծնված՝ 2011 թվականի հունվարի 21-ին) անչափահաս երեխայի առկայությունը:

Գադարանն Արմեն Գագիկի Գրիգորյանի պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանք է դիրում նաև նախկինում արարավորված՝ դարասարված չլինելը, մեղքն ընդունելը, կարարած արարքի համար լիովին զղջալը և խոստովանական ցուցմունքներ րալը: Ընդ որում, ամբաստանյալը խոստովանական ցուցմունքներով հնարավորին աջակցել է նախաքննական մարմնի գործողություններին:

Գադարանը միաժամանակ արձանագրում է, որ պարասիսանարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

(...)

Գադարանը, հաշվի առնելով Արմեն Գագիկի Գրիգորյանի կարարած արարքի՝ հանրության համար վրանգավորության ասրիճանը և բնույթը, այդ թվում՝ նրա գործողությունների վրանգավորության ասրիճանը, նրա անձը դրականորեն բնութագրող րվյալները, պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ Արմեն Գագիկի Գրիգորյանի կողմից կարարված արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի համապարասիսան հողվածի սանկցիայով նախարեաված է պարիժ միայն ազարությունից զրկելու ձևով, գրնում է, որ նրա նկարմամբ պարիժ պերք է նշանակել ազարազրկման ձևով:

(...)

Գադարանը պարիժը պայմանականորեն չկիրառելու հարցի քննարկման առումով կարևորում է սույն գործով առկա մի շարք առանձնահարկություններ: Մանավորասեն՝ հանգագործության կարարմանը որոշակի առումով նպասրել է րուժողի վարքագիժը, քանի որ վիճարանությունն առաջացել է, ըար էության, հենց րուժողի կողմից պայմանավորվածությունը չպահելու արդյունքում: Բացի այդ, պերք է նկարել, որ ամբաստանյալը և րուժողն ունեցել են մոր հարազարական հարաբերություններ, վերջինների միջև թշամանք չի եղել, իսկ ամբաստանյալը նախօրոք ծագած դիրավորությամբ չի գործել և դանակն

⁷⁸ Տեն քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 231:

ի սկզբանե իր մոտ չի պահել, այլ միմյանց միջև տեղի ունեցած խոսակցությունը վերածվել է վիճարանության, որի ընթացքում մեքենայից վերցրել և հարվածել է: Ընդ որում, թեև ընդունելի է, որ հարվածը եղել է արդի հարվածում, սակայն պետք է նաև նկատել, որ քրեական գործում չկան տվյալներ, որ Արմեն Գրիգորյանը կոնկրետացված դիտարկությանը ցանկացել է հարվածել հենց տուժողի արդի հարվածին:

(...) [Տուժողի կողմից ինչպես նախաքննության փուլում, այնպես էլ՝ դատաքննության փուլում որևէ պահանջ չի ներկայացվել: Փոխարենը՝ տուժողի պարտքերը մնարվում է ամբաստանյալի կամ վերջինի հարազատների կողմից, որի վերաբերյալ քրեական գործում ստկա և դատական քննության ընթացքում ներկայացված արացականների համաձայն՝ Արմեն Գրիգորյանը Հայկազ Վանեյանին վճարել է 3000 և 6000 ԱՄՆ դոլար, իսկ Սամվել Զախարյանին՝ 2000 և 2900 ԱՄՆ դոլար:

Ինչ վերաբերում է հանցագործությունից հետո ամբաստանյալ Արմեն Գագիկի Գրիգորյանի դրսևորած վարքագծին, ապա նա ընդունել է մեղքը, տվել է խոստովանական ցուցմունքներ, զղջացել, գերծ է մնացել այլ հանցավոր արարքներ կատարելուց և չի նկատվում կալանավորված՝ չի խոստատել քննությունից և դատից: Այնպես՝ ամբաստանյալի կողմից նախաքննական մարմնին ուղղված նամակի բովանդակությունը ողջամտորեն վկայում է այն մասին, որ Արմեն Գրիգորյանն արարքը կատարելուց հետո գրավել է հոգեբանական ծանր վիճակում և ըստ իրեն գործել է ընտանիքի բարօրության, անվտանգության համար, իսկ վերջինի կինը ցուցմունքով նշել է, որ Արմեն Գրիգորյանն արարքը կատարելուց հետո հայրն էլ է, որ ցանկանում է ինքնասպան լինել:

Դատարանը, հաշվի առնելով վերը նշվածը, այդ թվում՝ նաև՝ ամբաստանյալի պարասխանատվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքները, հանգում է այն հետևության, որ Արմեն Գագիկի Գրիգորյանի ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու»⁷⁹:

7. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, փաստել է. «(...) Առաջին ատյանի դատարանը հանակցության մեջ պատշաճ արուզման և գնահատման է ենթարկել ինչպես ամբաստանյալ Արմեն Գրիգորյանի անձը բնութագրող տվյալները, պարասխանատվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքն ու պարասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայության փաստը, այնպես էլ նրա կատարած արարքի հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը, որի արդյունքում արդարության և պարասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված ու իրավաչափ հետևության է հանգել ամբաստանյալի նկատմամբ ինչպես պարիժի տեսակի ու չափի ընտրության, այնպես էլ նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու

⁷⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 108-110:

միջոցով սույն գործով պատժի նպատակների իրացվելիությունն ապահովելու հարցում»⁸⁰:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և խաթարել արդարադատության բուն էությունը:

Մասնավորապես, բողոքի հեղինակը փաստարկել է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, պատշաճ գնահատականի չեն արժանացրել կատարված հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը:

Այսպես՝ պատշաճ գնահատականի չի արժանացվել այն, որ Ա.Գրիգորյանը դանակով է հարվածել տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում, այդ թվում՝ նաև կրծքավանդակի առաջային մակերեսի ձախ հատվածում՝ նրա առողջությանը դիտավորությամբ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս: Բացի այդ, ստորադաս դատարանների կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ ամբաստանյալը գիտակցել է, որ իր գործողություններով տուժողի առողջությանը պատճառում է ծանր վնաս, նախատեսել է իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս մեղմացնող նշանակություն է տրվել նաև այնպիսի հանգամանքների, որոնք ողջամտորեն չէին կարող նվազեցնել ամբաստանյալի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը: Մասնավորապես, ստորադաս դատարանները չեն հիմնավորել, թե ամբաստանյալի կողմից մեղքն ընդունելը, խոստովանական ցուցմունքներ տալը, հանցագործության բացահայտմանն աջակցելը, կատարվածի համար զղջալի ինչպես են ազդել նրա արարքի և անձի հանրային վտանգավորության աստիճանի վրա:

9. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է պատժի մատով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 10-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

⁸⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 73:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դիրավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ ստողջությամբ այլ ծանր վնաս պատճառելը, որը վրանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այնպիսի վնասվածքներ, ինչպես նաև կյանքի համար վրանգավոր այլ վնաս է պատճառել ստողջությամբ կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխարհային անվտանգության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխարհային անվտանգության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամեղքությամբ կամ թունամեղքությամբ հիվանդացում՝ պարժվում է ազատագրվածներ՝ երեքից յոթ տարի ժամկետով»:

Վճարելի դատարանն ստողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքում պատիժ նշանակելու հարցերին անդրադարձել է Արմեն Շահրազյանի վերաբերյալ որոշման շրջանակներում արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդու ստողջության դեմ ուղղված հանցագործություններից ամենավրանգավորի՝ դիրավորությամբ ստողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Քննարկվող հանցագործության հանրային առավել բարձր վրանգավորությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ հանսպարասիան հակաիրավական արարքի արդյունքում մարդուն պատճառվում է վնաս, որը խիստ բացասական է անդրադարձնում նրա ստողջական վիճակի վրա, այլև նրանով, որ կարող է առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև տուժողի մահ: Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիրավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի (...):

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վրանգավոր արարքը կարող է կատարվել տարբեր եղանակներով: Մասնավորապես, հանցավորը տուժողի ստողջությանը ծանր վնաս կարող է պատճառել իր ֆիզիկական հնարավորությունները գործադրելով (ձեռքով կամ ուրբով հարվածելով, հրել-վայր գցելով, մարմնի որևէ մաս ջարդելով և այլն), տարբեր գործիքներ, իրեր կամ առարկաներ (դանակ, կացին, մուրճ, մեքենայի ձող, քար և այլն) օգտագործելով, զանազան մեխանիզմներ, միջոցներ կամ նյութեր (հրազեն, թույն, թմրամեղք և այլն) կիրառելով, տարերային աղետի իրադրությունը կամ առավել վրանգի աղբյուրն օգտագործելով և այլն: Քննարկվող հանցագործության կատարման նշված եղանակները, ելնելով գործի

փաստական հանգամանքների առանձնահատկություններից, փաստեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վրանգավորության աստիճանը: Այսպես՝ փուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում դանակով հարված հասցնելիս հանցավորը ոչ միայն նախապեսում է հանրորեն վրանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիությունը, այլև գիտակցում է կամ առնվազն պարտավոր է գիտակցել, որ իր գործողություններով փուժողին պարճատում է առողջության ծանր վնաս, որը վրանգավոր է կյանքի համար և անգամ կարող է հանգեցնել մահվան: Այլ խոսքով՝ հանցավորը գործում է ուղղակի դիտավորությամբ և հստակ նախապեսում է իր արարքի և վրանգավոր հետևանքների միջև առկա միանշանակ պարճատական կապը և դրա զարգացումը, այդ թվում՝ գիտակցում է կամ պարտավոր է գիտակցել, որ փուժողին կարող է պարճատել մահ, սակայն ինքնավարահոսությամբ կամ անխոստությամբ հույս է ունենում, որ նշված ծանր հետևանքը չի առաջանա: Վերոգրյալն ինքնին վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վրանգավորության առավել բարձր աստիճանի մասին, ուստի օբյեկտիվորեն պետք է գնահատվի և հաշվի առնվի դատարանների կողմից պարիժ նշանակելիս:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցագործության հանրային վրանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքներին, միջոցներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին ու տեղակայմանը: Համապատասխան գնահատականի պետք է արժանացվի նաև կատարված հանրորեն վրանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: (...)»⁸¹:

12. Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ քննարկվող հոդվածով նախատեսված հանցանք կատարելու դեպքում պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս ստորադաս դատարանները պետք է հաշվի առնեն ինչպես խախտվող հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, այնպես էլ արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մարմնական վնասվածքների քանակը, տեղակայումը, բնույթը և այլն:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում **վնաս պարճատելու համար օգտագործված փաստական գործիքները**

⁸¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Շահրազյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշման 15-17-րդ կետերը:

կամ առարկաները (հրագեն, դանակ, կացին, մուրճ, մեքաղյա ձող, քար և այլն), կյանքի համար վրանգ ներկայացնող վնասի պարճառումը, հանցավորի պարտավորվածությունը, մեղքի դիտարկման ձևը (հարկապես ուղղակի դիտարկությունը) իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, մեծացնում հանցագործությունը հաջողությամբ ավարտին հասցնելու կամ ավելի մեծ վնաս պատճառելու հավանականությունը: Հետևաբար, նման դեպքերում օբյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վտանգավորության աստիճանը⁸²:

13. Սույն գործի կյուրթերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա իր սանիկ Լ.Եղիազարյանի կողմից իր երաշխավորությամբ այլ անձից վերցված 20.000 (քսան հազար) ԱՄՆ դոլար պարտքը ժամանակին չմարելու և ձգձգելու հարցի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում, ավտոմեքենայի առջևի ձախ դռան պահոցային մասից վերցված դանակով, հարվածներ է հասցրել առջևի և նստատեղին նստած Լ.Եղիազարյանի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով և նախաբազկի հետին մակերեսի, կրծքավանդակի և կեսի առաջնային մակերեսի և առողջության ծանր վնասի հատկանիշներ պարունակող, կյանքին վտանգ սպառնացող՝ ձախ թուլակողի շրջանի առաջնային մակերեսի թափանցող, ծակած-կտրած վերքերի ձևով մարմնական վնասվածքներ⁸³:

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Ա.Գրիգորյանի կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, որոշել է ամբաստանյալի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտարկել Ա.Գրիգորյանի խնամքին 14 տարին չլրացած երկու անչափահաս երեխաների առկայությունը, նախկինում դատապարտված չլինելը, մեղքն ընդունելը, կատարվածի համար գոջալը, խոստովանական ցուցմունքներ տալը և նախաքննական մարմնին աջակցելը: Մինչույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ ամբաստանյալը բնութագրվում է դրական, բացի այդ՝ հանցանքի կատարմանը որոշակի առումով նպաստել է տուժողի վարքագիծը, իսկ վերջինս որևէ պահանջ չի ներկայացրել⁸⁴:

⁸² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Սարգիս Խաչատրյանի վերաբերյալ գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԳ/0031/01/14, Նարեկ Խաչատրյանի վերաբերյալ գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0191/01/14, Արսեն Կարասյեղյանի և Ռուբեն Գուրգույանի վերաբերյալ գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱԴԴ/0011/01/14, Սերգեյ Արովյանի վերաբերյալ գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԴԴ/0038/01/15 որոշումները:

⁸³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁸⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ստյանի դատարանն Ա.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում հանգել է հիմնավորված և իրավաչափ հետևության⁸⁵:

14. Նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում վկայակոչված և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական վերլուծության չեն ենթարկել ամբաստանյալի կողմից կատարված հանցավոր արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող մի շարք գործոններ:

Մասնավորապես, ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության և գնահատման չեն ենթարկել՝

- խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ ամբաստանյալը ոտնձգել է այնպիսի հասարակական հարաբերության դեմ, որի խախտումը *ոչ միայն խիստ բացասաբար է անդրադարձել քրուժողի առողջական վիճակի վրա, այլև կարող էր առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև մահ,*

- հանցավորի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, մասնավորապես այն, որ ամբաստանյալը *գործել է ուղղակի դիտարկություններ, գիտակցել է, որ իր գործողություններով քրուժողի առողջությանը պայրճատում է ծանր վնաս, նսխաբեկել է իր արարքի և հետևանքների միջև ստեղծված անմիջական պայրճատական կապը,*

- ամբաստանյալի մոտ (ավտոմեքենայի առջևի ձախ դռան պահոցային մասում) *սուր կորոզ-ծակող գործիքի՝ դանակի ստեղծությունը և հանրորեն վրանգավոր արարքը դանակի գործադրմանը կատարելը,*

- հասցված *հարվածների քանակը՝ 3 հարված,* դրանց բնույթն ու տեղակայումը, մասնավորապես այն, որ ամբաստանյալը հարված է հասցրել նաև տուժողի *կենսական կարևոր օրգանի շրջանում՝ կրծքավանդակի ձախ հարվածին* և առողջությանը պատճառել այնպիսի *ծանր մարմնական վնասվածք, որը վրանգավոր է կյանքի համար:*

15. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պատշաճ ուղղորդություն չեն դարձրել խախտված հասարակական հարաբերության բնույթին ու կարևորությանը, կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին, օգտագործված

⁸⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

գործիքին, պատճառված մարմնական վնասվածքների քանակին, բնույթին և տեղակայմանը:

Ոստի, վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

16. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի կողմից որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող գնահատած՝ նախկինում դատապարտված չլինելու հանգամանքին՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է իր նախադեպային իրավունքում արտահայտված այն դիրքորոշումը, որ որպես անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը ողջամտորեն նվազեցնող չի կարող գնահատվել այնպիսի հանգամանք, որը բնութագրական է անձանց լայն շրջանակին և բխում է անձի կողմից քաղաքացիական հասարակությունում հաստատված կարգը պահպանելու պարտականությունից: Մասնավորապես, իրավահպատակ վարքագիծը բնորոշ է հասարակության լայն շրջանակներին և յուրաքանչյուր քաղաքացու հասարակական պարտքն է: Հետևապես, անձի կողմից նախկինում հանցանք կատարած կամ դատապարտված չլինելը, ինչպես նաև նոր հանցանք չկատարելը, չեն կարող դիտարկվել որպես անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ⁸⁶:

16.1. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի համար անընդունելի է Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշումը, որ թեև հարվածը եղել է սրտի հատվածում, սակայն քրեական գործում չկան տվյալներ, որ Ա.Գրիգորյանը կոնկրետացված դիտավորությամբ ցանկացել է հարվածել հենց տուժողի սրտի հատվածին⁸⁷: Այսպես՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործում առկա փաստական տվյալների համակցությունից բխում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանը, երեք հարված հասցնելով տուժողին, այդ թվում՝ նաև վերջինիս ձախ թուլակողի շրջանում, գործել է ուղղակի դիտավորությամբ, այն է՝ գիտակցել է իր գործողությունների բնույթն ու վտանգավորությունը և ցանկացել է դրանք կատարել:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն դատողությանը, որ տուժողի պարտքերը մարվում են ամբաստանյալի կամ վերջինիս հարազատների կողմից, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ստորադաս դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել, թե վերոնշյալ հանգամանքն ինչ ազդեցություն է ունեցել կատարված արարքի կամ հանցավորի անձի վտանգավորության աստիճանի վրա՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք հանդիսանալով:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով

⁸⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամայիս Հովհաննեսյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԳ/0014/01/14 որոշման 20-րդ կետը:

⁸⁷ Տե՛ս՝ սույն որոշման 6-րդ կետը:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք են:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի արձանագրված խախտումները և ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հանգի համապատասխան հետևության:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արմեն Գագիկի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 10-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արմեն Գագիկի Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

6.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ/0109/06/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 10-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Գևորգ Սիմոնի Ալեքյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման դեմ պաշտպան Ա.Հայրապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2019 թվականի նոյեմբերի 11-ին հարուցվել է թիվ 58231819 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի, 308-րդ հոդվածի 1-ին մասի, 311-րդ հոդվածի 2-րդ մասի, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, 312-րդ հոդվածի 1-ին մասի, 312-րդ հոդվածի 2-րդ մասի և 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

2019 թվականի նոյեմբերի 25-ից թիվ 58231819 քրեական գործի նախաքննությունը շարունակվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնում:

2019 թվականի դեկտեմբերի 2-ին Գևորգ Սիմոնի Ալեքյանը ձերբակալվել է: Պաշտպան Ա.Հայրապետյանի բողոքի հիման վրա Շիրակի մարզի առաջին

ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2019 թվականը դեկտեմբերի 4-ի որոշմամբ արձանագրել է Գ.Ալեքյանի ձերբակալման ոչ իրավաչափ լինելը և կարգադրել իրավասու մարմիններին նրան անհապաղ ազատ արձակել:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ Գ.Ալեքյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և 2019 թվականի դեկտեմբերի 6-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 7 (յոթ) դրվագով, 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով՝ 2 (երկու) դրվագով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

2. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ միջնորդություն է հարուցվել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Գ.Ալեքյանի նկատմամբ որպես խափանման միջոց 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորում կիրառելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Գ.Ալեքյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով, իսկ մեղադրյալ Գ.Ալեքյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը ճանաչվել է անթույլատրելի:

3. Պաշտպան Ա.Հայրապետյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Ա.Հայրապետյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի հունվարի 15-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. 2019 թվականի դեկտեմբերի 9-ին նախաքննության մարմնի միջնորդության քննության ընթացքում պաշտպան Ա.Հայրապետյանն ինքնաբացարկ է հայտնել դատավորին: Առաջին ատյանի դատարանը «Ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ մերժել է պաշտպան Ա.Հայրապետյանի միջնորդությունը՝ դատավորին ինքնաբացարկ հայտնելու մասին⁸⁸:

⁸⁸ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 167-168:

6. Պաշտպան Ա.Հայրապետյանը մեղադրյալ Գ.Ալեքյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի շրջանակներում վիճարկել է նաև Առաջին ատյանի դատարանի՝ «Ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման օրինականությունն և հիմնավորվածությունը: Պաշտպանը վերաքննիչ բողոքի հիմքերի շարքում նշել է Առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից ինքնաբացարկի միջնորդությունը ոչ իրավաչափորեն մերժելը՝ ներկայացնելով իր հիմնավորումները:

Բացի այդ, պաշտպանը վերաքննիչ բողոքում անդրադարձել է նաև Գ.Ալեքյանի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի և կալանավորման հիմքի բացակայության, կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու հարցերին⁸⁹:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման՝ «Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը» մասում շարադրել է, ի թիվս այնի, պաշտպանի վերաքննիչ բողոքի հիմքը՝ Առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու ոչ իրավաչափությունը, և դրա առնչությամբ պաշտպանի հիմնավորումները, սակայն դատական ակտի պատճառաբանական մասում դրանց անդրադարձ չի կատարել⁹⁰:

Վճարակ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարակ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ չի քննել ներկայացված բողոքը, որևէ անդրադարձ չի կատարել վերաքննիչ բողոքում բարձրացված այն հարցին, որ Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշումը կայացվել է դատավորի կողմից, ում ինքնաբացարկ հայտնելու հիմքեր են առկա եղել: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի գնահատել Առաջին ատյանի դատարանում դատական նիստը նախագահող դատավորին ինքնաբացարկ հայտնելու հիմքերի առկայության առնչությամբ վերաքննիչ բողոքի հիմնավորումները:

Արդյունքում, բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով պաշտպանի վերաքննիչ բողոքում առկա վերոնշյալ հիմնավորումներին, խախտել է Գ.Ալեքյանի լավամ լինելու իրավունքը, ինչն էլ հանգեցրել է դատարանի մատչելիության իրավունքի խախտման:

8.1. Բացի այդ, բողոքաբերն անդրադարձել է նաև Գ.Ալեքյանի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի և կալանավորման հիմքի բացակայության, կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու հարցերին:

⁸⁹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 1-22:

⁹⁰ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 41-77:

9. Վերագրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և Գ.Ալեքյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացնել՝ նրան ազատ արձակելով կալանքից, կամ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը՝ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու մասով, և Գ.Ալեքյանի նկատմամբ ընտրված կալանավորումը փոխարինել գրավով՝ գրավի չափ սահմանելով մինչև 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Իրավաչափ է արդյոք Առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու վերաբերյալ պաշտպան Ա.Հայրապետյանի վերաքննիչ բողոքի հիմքին Վերաքննիչ դատարանի կողմից չանդրադառնալը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված պահանջները»:*

Վճարելի դատարանը Մկրտիչ Պողոսյանի և մյուսների գործով արձանագրել է, որ. *«(...) [Վ]երաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ոչ միայն նախանշում են վերաքննիչ վերանայման սահմանները, այլ նաև կանխորոշում են այն հարցերի շրջանակը, որոնք պետք է քննարկման առարկա դարձվեն վերաքննիչ վարույթի շրջանակներում և որոնց կապակցությամբ վերաքննիչ դատարանի եզրահանգումները պետք է արտացոլվեն վարույթը եզրափակող դատական ակտում: Այս առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին արդյոք վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին և պարճատարանել դրանցից յուրաքանչյուրի կապակցությամբ իր եզրահանգումները:*

Այսպես՝ արդար դատաքննության իրավունքի համարեքսպում անդրադառնալով դատական ակտի պարճատարանվածության ինդիքին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ նաև Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ չնայած «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը պարտավորեցնում է դատարաններին պարճատարանել իրենց դատական ակտերը, սակայն դա չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած փաստարկի առնչությամբ պարճատարանված պարտախան ներկայացնելու պահանջ (լրես՝ Van de Hurk v. the Netherlands գործով Եվրոպական դատարանի 1994 թվականի ապրիլի 19-ի

վճիռը, գանգապ թիվ 16034/90, կետ 61): Դատարանի որոշումից պետք է պարզ դառնա, որ գործի համար էական նշանակություն ունեցող հարցերը քննարկվել են (տե՛ս Boldea v. Romania գործով Եվրոպական դատարանի 2007 թվականի փետրվարի 15-ի վճիռը, գանգապ թիվ 19997/02, կետ 30), և ներկայացված պարճատարանությունները սույն առանց լրացուցիչ հիմնավորումների, արդարադաս արյանի եզրահանգումների հավանություններ չեն (տե՛ս Helle v. Finland գործով Եվրոպական դատարանի 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, գանգապ թիվ 20772/92, կետ 60):

(...) Վճռաբեկ դատարանը գրնում է, որ վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ պետք է անդրադառնա բողոքի հիմքերին: Վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ վերաքննիչ բողոք բերելու հիմքը դատական սխալն է, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, (...): Այլ խոսքով՝ վերաքննիչ բողոքի հիմքն ինքնին օժտված է գործի ելքի վրա ազդեցություն ունենալու հարկանիշով:

Ինչ վերաբերում է բողոքի հիմնավորումներին անդրադառնալու հարցին, սալս Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ բողոքի սյն հիմնավորումներին, որոնք ողջամտորեն կարող են ազդեցություն ունենալ գործի համար նշանակություն ունեցող հարցերի լուծման համար և պարշաճ պարճատարանել դրանց վերաբերյալ իր եզրահանգումները:

Վճռաբեկ դատարանը գրնում է, որ վերոնշյալ չախանիշների պահպանման դեպքում միայն վերաքննիչ դատարանի որոշումը կհամապարասխանի դատական սկրի պարճատարանվածության վերաբերյալ օրենսդրական պահանջին և դրա կասակցությամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նսխադեպսյին իրավունքին (...)⁹¹»:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարճատարանված: Պարճատարանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարտորվող բոլոր հերևությունները և որոշումները»:

Դատական սկտի պատճառաբանվածության չախանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նսխադեպսյին իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական սկտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն արդարացիության կարևոր բաղադրատարր է, սյլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից:

Դատական սկտի պատճառաբանվածությունը կոչված է պարգաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է դեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական

⁹¹ Տեն Մկրտիչ Պողոսյանի և մյունների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՇԴ/0034/01/15 որոշման 14-15-րդ կետերը:

ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է⁹²:

Վճռաբեկ դատարանը *Էրիկ Մարգարյանի* գործով արձանագրել է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը վերաբերելի է նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս, վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության, և որ իրավանորմերով է դեկլարվել նման որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերոնշյալ պահանջների պահպանման պարագայում միայն վճռաբեկ դատարանը հնարավորություն կունենա ստուգել կայացված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը⁹³:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի համաձայն՝
«1. Բացարկները, ինքնաբացարկները և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունները հայտարարվում են քրեական դատավարությանը համապատասխան անձանց մասնակցությունը բացառող հանգամանքների հիման վրա:

(...)

4. Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի իր իրավասության սահմաններում լուծել հայտնված բացարկների, ինքնաբացարկների և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունների հարցը (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի համաձայն՝
« (...) 3. Դատավարության մասնակիցները սույն հոդվածի ստաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում իրավունք ունեն դատավորին, իսկ եթե գործը քննվում է կամ պետք է քննվի կոլեգիալ՝ դատավորներին կամ դատարանի անբողջ կազմին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու:

(...)

5. *Ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքում կայացվում է որոշում, որում նշվում են այն բավարարելու կամ մերժելու հիմքերը (...):»*

Ինքնաբացարկի ինստիտուտը կոչված է արդարադատության բնագավառում երաշխավորելու օբյեկտիվ և անաչառ որոշումների կայացումը՝ ինչպես ընթացակարգային (դատավարական), այնպես էլ նյութական

⁹² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ֆրոնզիկ Գալստյանի* գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, *Գևորգ Իսուպյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0030/01/12, *Արսեն Մակարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, *Արամայիս Հակոբյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14, *Մարտին Հակոբյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱԲԴ/0005/11/16, *Արարատ Մարգարյանի* գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԵԱԴԴ/0005/01/17 որոշումները:

⁹³ Տե՛ս *Էրիկ Մարգարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՄԴՅ/0045/01/13 որոշման 13-րդ կետը:

իրավահարաբերություններ կարգավորելիս, և կոչված է երաշխավորելու դատական իշխանության անկախությունը, արդարադատության արդյունավետությունը, անկողմնակալությունը⁹⁴:

13.1. Անդրադանալով դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման բողոքարկման հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված որոշման բողոքարկման հնարավորությունը արդար դատաքննության իրավունքի, մասնավորապես դրա տարրերից՝ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության պահանջի ապահովման երաշխիք է այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցը ողջամիտ կասկածներ ունի գործը քննող դատավորի անկախության և անկողմնակալության առնչությամբ և գտնում է, որ ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը ոչ իրավաչափորեն է մերժվել: Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ քննարկվող որոշման «անմիջական բողոքարկումը» լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման տեսանկյունից: Հետևաբար, այդպիսի որոշումը ենթակա է «հետաձգված բողոքարկման» գործով վարույթն եզրափակող դատական ակտի բողոքարկման շրջանակներում, ինչով էլ պարտադիր պետք է երաշխավորված լինի դատավորին ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման հետ կապված հանգամանքների համակողմանի քննությունը⁹⁵:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը, զարգացնելով *Համազասպ Հովսեփյանի* գործով⁹⁶ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ ինքնաբացարկի մասին որոշումը բողոքարկման ենթակա չէ⁹⁷, փաստում է, որ այն վերաբերում է տվյալ դատական ակտի «անմիջական բողոքարկմանը», այլ ոչ թե առհասարակ բողոքարկման ենթակա չլինելուն: Այլ կերպ՝ ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը ենթակա չէ ինքնուրույն բողոքարկման, սակայն դրա իրավաչափությունը կարող է վիճարկվել կոնկրետ դատավորի կողմից տվյալ գործի քննության արդյունքում կայացված վերջնական դատավարական որոշման բողոքարկման հետ մեկտեղ: Նման հավասարակշռված կարգավորումը կոչված է երաշխավորելու մի կողմից՝ անձի արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտման վերացումը՝ հաշվի առնելով բողոքարկված դատական ակտի հնարավոր բեկանումից հետո անձի իրավունքների ամբողջ ծավալով վերականգնման հնարավորությունը, մյուս կողմից՝ ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

⁹⁴ Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-918 որոշման 5-րդ կետը:

⁹⁵ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-918 որոշումը:

⁹⁶ Նշված գործով ևս բողոքարկվել էր ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը:

⁹⁷ Տե՛ս, *Համազասպ Հովսեփյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0547/06/09 որոշումը:

- Առաջին ատյանի դատարանը «Ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ մերժել է պաշտպան Ա.Հայրապետյանի միջնորդությունը՝ դատավորին ինքնաբացարկ հայտնելու մասին⁹⁸,

- պաշտպան Ա.Հայրապետյանը մեղադրյալ Գ.Ալեքյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքում վիճարկել է նաև Առաջին ատյանի դատարանի՝ «Ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման օրինականությունն և հիմնավորվածությունը: Պաշտպանը որպես վերաքննիչ բողոքի հիմք նշել է Առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից ինքնաբացարկի միջնորդությունը ոչ իրավաչափորեն մերժելը՝ ներկայացնելով այդ հետևության առնչությամբ իր հիմնավորումները⁹⁹,

- Վերաքննիչ դատարանն իր որոշման՝ «Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը» մասում շարադրել է պաշտպանի վերաքննիչ բողոքի՝ Առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից ինքնաբացարկի միջնորդությունը ոչ իրավաչափորեն մերժելու վերաբերյալ հիմքը, և դրա առնչությամբ պաշտպանի հիմնավորումները, սակայն դատական ակտի պատճառաբանական մասում դրանց անդրադարձ չի կատարել¹⁰⁰:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում շարադրված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ «Ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը, որով մերժվել է դատավորին ինքնաբացարկ հայտնելու մասին պաշտպան Ա.Հայրապետյանի միջնորդությունը, ենթակա էր «հետաձգված բողոքարկման» մեղադրյալ Գ.Ալեքյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման բողոքարկման շրջանակներում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտի պատճառաբանական մասում չի անդրադարձել պաշտպանի վերաքննիչ բողոքի՝ Առաջին ատյանի դատարանի կողմից ինքնաբացարկի միջնորդությունը ոչ իրավաչափորեն մերժելու վերաբերյալ հիմքին, և քննարկման առարկա չի դարձրել դրա առնչությամբ պաշտպանի հիմնավորումները, որոնք ողջամտորեն կարող էին ազդեցություն ունենալ գործի համար նշանակություն ունեցող հարցերի լուծման համար: Նման պայմաններում, դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի իմաստով Վերաքննիչ դատարանը պարտավոր էր քննարկման առարկա դարձնել բողոքի նշված հիմքն ու հիմնավորումները և արդյունքում պատճառաբանված որոշում կայացնել:

⁹⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁹⁹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

¹⁰⁰ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը չի կարող համապատասխանել դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ օրենսդրական պահանջին և այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին:

16. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու վերաբերյալ պաշտպան Ա.Հայրապետյանի վերաքննիչ բողոքի հիմքին Վերաքննիչ դատարանի կողմից չանդրադառնալն իրավաչափ չէ:

17. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 385-րդ և 393-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 27-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար¹⁰¹:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշմամբ արձանագրված խախտումների պայմաններում զրկված է բողոքաբերի՝ սույն որոշման 8.1-րդ կետում նշված փաստարկների կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու հնարավորությունից, քանի որ դրանք կարող են քննարկման առարկա դարձվել սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Հետևաբար, նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, պետք է քննության առնի պաշտպան Ա.Հայրապետյանի վերաքննիչ բողոքը՝ դրա հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ անդրադառնալով նաև բողոքաբերի՝ սույն որոշման 8.1-րդ կետում նշված փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹⁰¹ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Գևորգ Սիմոնի Ալեքյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *արտրագրություն*

Դատավորներ՝ *արտրագրություններ*

7.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0684/11/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Հ.ԱՍԱՏԲՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 12-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշման դեմ դիմող Նաիրա Շիրակի Գրիգորյանի ներկայացուցիչ Սեդրակ Մկրտչյանի վճռաբեկ բողոքը

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերի քննիչ Հ.Հովհաննիսյանի (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին)՝ 2018 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ Նաիրա Գրիգորյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ Արտակ Սմբատյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:

2. Վերոնշյալ որոշման դեմ դիմող Ն.Գրիգորյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության պետ Վ.Մուրադյանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ մերժվել է:

3. Դիմող Ն.Գրիգորյանի բողոքի քննության արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), 2019 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ բողոքը մերժել է:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ Ն.Գրիգորյանի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանի՝ 2019 թվականի մայիսի 6-ին ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

5. Դիմող Ն.Գրիգորյանի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանի՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշմամբ մերժվել է:

6. Դիմող Ն.Գրիգորյանի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ բողոքը մերժել է:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշման դեմ դիմող Ն.Գրիգորյանի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Գործի նյութերի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի որոշումը դիմողի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանը ստացել է **2019 թվականի ապրիլի 23-ին**¹⁰², իսկ դիմող Ն.Գրիգորյանի կողմից դատական ակտի ստացման մասին հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը) գործի նյութերում բացակայում է:

9. Ն.Գրիգորյանի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանն Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ 2019 թվականի մայիսի 6-ին ներկայացրած վերաքննիչ բողոքում նշել է, որ դիմող Ն.Գրիգորյանը որոշումը ստացել է **2019 թվականի ապրիլի 25-ին**¹⁰³ բողոքին կցելով RLO26256241AM բեռնային համարով փոստային ծրարի պատճենը¹⁰⁴:

10. Վերաքննիչ դատարանը, դիմողի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին 2019 թվականի մայիսի 20-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [Ն]երկայացված նյութերի համաձայն՝

¹⁰² Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 156:

¹⁰³ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթ 1:

¹⁰⁴ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 11-12:

Առաջին աստիճանի դատարանի դատական ակտեր Նաիրա Գրիգորյանը և վերջինիս ներկայացուցիչ Սեդրակ Մկրտչյանը ստացել են 2019 թվականի ապրիլի 23-ին, իսկ վերաքննիչ բողոքը ներկայացվել է 2019 թվականի մայիսի 6-ին (բողոքը ներկայացվել է առանց ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու միջնորդության), այն դեպքում, երբ բողոքարկման ժամկետն ավարտվել էր 2019 թվականի մայիսի 3-ին՝ ժամը 24:00-ին:

Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով, որ բողոքաբերի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, վերաքննիչ բողոքը ժամկետանց է՝ Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Ն.Գրիգորյանի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանի ներկայացրած վերաքննիչ բողոքն անհրաժեշտ է թողնել առանց քննության: (...)¹⁰⁵:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը կայացրել է ակնհայտ անհիմն դատական ակտ՝ թույլ տալով դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի որոշումը դիմող Նաիրա Գրիգորյանը ստացել է **2019 թվականի ապրիլի 25-ին**, իսկ նշված օրից բողոք ներկայացնելու 10-օրյա ժամկետն ավարտվում է **մայիսի 5-ին**՝ կիրակի օրը: Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածը՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով մայիսի 6-ին ներկայացված բողոքը չէր կարող դիտվել որպես ժամկետանց, քանի որ բողոք ներկայացնելու վերջին օրը՝ մայիսի 5-ը՝ ոչ աշխատանքային օր է:

12. Վերոշարադրյալի հիման վրա, դիմող Ն.Գրիգորյանի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը, և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք դիմող Նաիրա Գրիգորյանի ներկայացուցիչ Սեդրակ Մկրտչյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

14. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

¹⁰⁵ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթ 17:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

14.1. ՀՀ Սահմանադրական դատարանը, դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում անդրադառնալով դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման ժամկետային սահմանափակումներին, 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԴՌ-1052 որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) [Մ]տրուդաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գրնում է, որ ստրուդաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար¹⁰⁶:

(...)

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հիմնավորված չի համարում բողոքարկվող դատական ակտի փաստացի ուշ արանալու հիմքով բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարաններին լայն հայեցողական լիազորության փրամադրումը: Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատարանության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, փոխյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել փոխյալ ժամկետը, կոնկրետ դեպքում հնգօրյա և փրանօրյա ժամկետները, ապա նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից: (...)»¹⁰⁷:

14.2. ՀՀ Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշմամբ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ, ի թիվս այլի, նշել է.

¹⁰⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԴՌ-1052 որոշումը, կետ 8:

¹⁰⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԴՌ-1052 որոշումը, կետ 10:

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի ինպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման¹⁰⁸:

15. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկասի ու անսպառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

15.1. Դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործով նշել է, որ. «(...) «/Դ/ատարանի իրավունքը», որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ: Այն ենթակա է սահմանափակումների, մասնավորապես, երբ քննարկվում են բողոքի ընդունելիության պայմանները, քանի որ այն իր բնույթով թողնված է պետության կարգավորմանը, որն այս առնչությամբ ունի հայեցողության որոշակի սահման: Սակայն այդ սահմանափակումները չպետք է անձի դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակեն կամ նվազեցնեն այն կերպ կամ այն չափով, որ խախտվի իրավունքի բուն էությունը, վերջապես նման սահմանափակումները չեն համապարասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե դրանք չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև առկա չէ ողջամիտ համամասնություն (...): Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամերող իրավական ակտը վիճարկելու հարակ է իրական հնարավորություն ունենա (...):

Գիմումների, բողոքների կամ այլ զանգարների ներկայացման համար սահմանված ժամկետները, անկասկած, նպատակ ունեն սպահովել արդարադատության պարզաճ իրականացումը և համապարասխանությունը, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքին: Շահագրգիռ անձինք պետք է ակնկալեն, որ այդ կանոնները կկիրառվեն: Սակայն, նման կանոնները

¹⁰⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշման 4.1-րդ կետը:

կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտ հանդիսանան դատավարության մասնակիցների համար առկա պաշտպանության միջոցներից օգտվելիս (...)»¹⁰⁹:

15.2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է նաև, որ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է, որ դատավարության կողմերը պետք է կարողանան օգտվել իրենց բողոքարկման իրավունքից այն պահից, երբ արդյունավետորեն ծանոթացել են դատական որոշումների հետ, որոնք որոշակի բեռ են դնում նրանց վրա կամ կարող են խախտել իրենց օրինական իրավունքները կամ շահերը¹¹⁰:

15.3. Բողոքարկման ժամկետների առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովելու արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն¹¹¹:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «(...) Քրեական դատավարությանը մասնակցող անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի ստացման փաստը հաստատվում է գործին կցված նրանց ստորագրությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ « Իր կողմից բաց թողնված ժամկետի վերականգնման համար դիմողը, (...) [նրա] ներկայացուցիչները, (...) միջնորդությամբ կամ խնդրանքով դիմում են վարույթն իրականացնող մարմնին: (...)»:

17. Սույն որոշման 14-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական պաշտպանության իրավունքն անձի անօտարելի իրավունքներից մեկն է և միաժամանակ հանդիսանում է այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց ու երաշխիք: Միաժամանակ, այս հիմնարար իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման որոշակի օբյեկտիվ պայմաններով: Մասնավորապես, դատական ակտերի իրավաչափությունը վիճարկելու համար օրենսդիրը սահմանել է որոշակի ժամկետներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովելու քրեական դատավարության պատշաճ իրականացումը:

Ինչպես նշել է Վճռաբեկ դատարանը, քրեադատավարական ժամկետները քրեական վարույթի պատշաճ ընթացքն ապահովող կարևոր նախադրյալներից են¹¹²: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից սահմանված

¹⁰⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mamikonyan v. Armenia* գործով 2010 թվականի մարտի 16-ի վճիռը, գանգատ թիվ 25083/05, կետեր 25 և 27:

¹¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Miragall Escolano and Others v. Spain* գործով 2000 թվականի հունվարի 25-ի վճիռը, գանգատներ թիվ 38366/97, 38688/97, 40777/98, 40843/98, 41015/98, 41400/98, 41446/98, 41484/98, 41487/98 և 41509/98, կետ 37:

¹¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Perez De Rada Cavanilles v. Spain* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 28090/95, կետ 45:

¹¹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էրիկ Եղիսյանի* գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ

այդ ժամկետներն ինքնանպատակ չեն և ի սկզբանե միտված են հնարավորինս կարճ ժամկետում անձի իրավական պաշտպանության արդյունավետության ապահովմանը: Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ ինքնին իրավական պաշտպանության արդյունավետության չափանիշը փոխկապակցված է նաև այդ պաշտպանությունը հայցողի կողմից սահմանված ժամկետների պահպանման հետ:

17.1. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բողոքարկման ժամկետը հաշվարկելիս, որպես ելակետ պետք է ընդունել դատավարության յուրաքանչյուր մասնակցի կողմից վիճարկվող որոշումը ստանալու օրը: Նշվածն ուղղակիորեն բխում է նաև վերը վկայակոչված քրեադատավարական կարգավորումներից, որոնք մի դեպքում՝ ամրագրում են, որ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձին հանձնման ենթակա փաստաթղթերի ստացման փաստը հաստատվում է գործին կցված նրանց ստորագրությամբ, մյուս կողմից՝ նշում, որ դատավարության մասնակիցներից յուրաքանչյուրն իր բաց թողնված ժամկետի վերականգնման համար միջնորդությամբ կամ խնդրանքով դիմում է վարույթն իրականացնող մարմնին: Այս համատեքստում պետք է փաստել, որ օրենսդիրը տարբերակում է դատավարության յուրաքանչյուր մասնակցի համար բողոք բերելու ժամկետի հաշվարկը: Նշվածն իր հերթին բխում է նաև դատավարության յուրաքանչյուր մասնակցի կողմից բողոքարկման ենթակա դատական ակտն իր ստորագրությամբ ստանալու հանգամանքից: Այսինքն՝ դատավարության յուրաքանչյուր մասնակցից ստանալով դատական ակտը՝ հնարավորություն է ունենում բողոք ներկայացնել՝ այն ստանալու պահից որոշակի ժամանակահատվածում: Նշվածի հիմքում ընկած է նաև այն պատճառաբանությունը, որ դատական ակտը դատավարության յուրաքանչյուր մասնակցին ուղարկելն ինքնանպատակ լինել չի կարող: Այն մի կողմից՝ ապահովում է դատավարության յուրաքանչյուր մասնակցի կողմից բողոք բերելու համար դատական ակտի պատճառաբանություններին ծանոթանալու, բողոքը կազմելիս այն իր տրամադրության տակ ունենալու հնարավորությունը, մյուս կողմից՝ որոշակիացնում դատավարության յուրաքանչյուր մասնակցի բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբը:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- դիմողի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանն Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի որոշումը ստացել է **2019 թվականի ապրիլի 23-ին**, իսկ դիմող Ն.Գրիգորյանի կողմից դատական ակտի ստացման մասին հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը) գործի նյութերում բացակայում է¹¹³,

ՇԴ/0008/11/10 որոշումը, կետ 13:

¹¹³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

- Ն.Գրիգորյանի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանն Առաջին աստյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ 2019 թվականի մայիսի 6-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ նշելով, որ **դիմող Ն.Գրիգորյանը որոշումը ստացել է 2019 թվականի ապրիլի 25-ին**, ինչպես նաև բողոքին կցել է RL026256241AM բեռնային համարով փոստային ծրարի պատճենը,

- Վերաքննիչ դատարանը 2019 թվականի մայիսի 20-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ նշելով, որ Առաջին աստյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի որոշումը Ն.Գրիգորյանը և վերջինիս ներկայացուցիչ Ս.Մկրտչյանը ստացել են **2019 թվականի ապրիլի 23-ին**, իսկ վերաքննիչ բողոքը ներկայացվել է 2019 թվականի մայիսի 6-ին (բողոքը ներկայացվել է առանց ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու միջնորդության), այն դեպքում, երբ բողոքարկման ժամկետն ավարտվել էր 2019 թվականի մայիսի 3-ին ժամը 24:00-ին:

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-17.1-րդ կետերում շարադրված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև վերաքննիչ բողոքում դիմողի ներկայացուցիչը հղում է կատարել ոչ թե իր, այլ դիմողի կողմից Առաջին աստյանի դատարանի որոշումը ստանալու օրվան, սակայն, հաշվի առնելով, որ վերաքննիչ բողոքը ներկայացրել է դիմողի ներկայացուցիչը, Վերաքննիչ դատարանը որպես վերաքննիչ բողոք բերելու ժամկետի սկիզբ՝ համարել է դիմողի ներկայացուցչի կողմից Առաջին աստյանի դատարանի որոշումը ստանալու օրը՝ 2019 թվականի ապրիլի 23-ը՝ վերաքննիչ բողոքն իրավացիորեն համարելով ժամկետանց:

Վերոնշյալ պնդումը համապատասխանում է սույն որոշման 17-րդ կետում նշված իրավական դիրքորոշումներին, որոնք արտացոլում են օրենսդրի մոտեցումը դատավարության մասնակիցներից յուրաքանչյուրի բողոքարկման ժամկետների հաշվարկը տարբերակելու անհրաժեշտության վերաբերյալ: Նշվածի լույսի ներքո պետք է նկատի ունենալ նաև այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համատեքստում դիմողի ներկայացուցիչը հանդիսանում է դատավարության ինքնուրույն մասնակից, ով ունի Առաջին աստյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու ինքնավար իրավունք: Հետևաբար, նրա կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետի հաշվարկման սկիզբը չի կարող պայմանավորվել դիմողի կողմից Առաջին աստյանի դատարանի դատական ակտը ստանալու ժամկետով:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ սույն գործով դիմողն Առաջին աստյանի դատարանի դատական ակտը ստանալուց հետո ողջամտորեն անհրաժեշտ և բավարար ժամանակ է ունեցել վերաքննիչ բողոք ներկայացնելու հարցն իր ներկայացուցչի հետ համաձայնեցնելու և դրա շուրջ խորհրդակցելու համար: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ Վճռաբեկ

դատարանը, դատավարության յուրաքանչյուր մասնակցի բողոքարկման ժամկետի հաշվարկը տարբերակելիս, արդեն իսկ ձևավորված նախադեպային իրավունքով, հատուկ ուշադրության է արժանացնում նրա՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ և իրական ապահովման հնարավորությունը: Այսպես, Նախասարդ Ալավերդյանի գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ պաշտպանի կողմից Առաջին ատյանի դատարանի դատավճռի բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբն անհրաժեշտ էր հաշվել ոչ թե ամբաստանյալի կողմից պաշտպանին հանձնման ենթակա՝ դատավճռի պատճենը դատարանից ստանալու պահից, այլ ավելի ուշ՝ այն պահից, երբ համապատասխան փաստաթուղթը հասու էր դարձել պաշտպանին¹⁴: Նշվածն իր հերթին ևս վկայում է այն մասին, որ քրեադատավարական գործող իրակարգավորումների և ձևավորված կայուն իրավակիրառ պրակտիկայի պայմաններում, բողոքարկման ժամկետի հաշվարկն իրականացնելիս դիմողի և իր ներկայացուցչի՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետների հաշվարկը ենթակա է տարբերակման: Ուստի, սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում, դիմողի ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոքը ներկայացվել է իր համար սահմանված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով դիմող Նաիրա Գրիգորյանի ներկայացուցիչ Սեդրակ Մկրտչյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է:

20. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ չի տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Ն.Գրիգորյանի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹⁴ Տե՛ս Նախասարդ Ալավերդյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԿԳ-1/0143/01/14 որոշումը, կետ 16:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դիմող Նաիրա Գրիգորյանի ներկայացուցիչ Ս.Մկրտչյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0121/01/10

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ԱՍԱՏԲՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան Լ.ՍԻՄՈՆՅԱՆԻ
դատախազ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 12-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով Կարինե Հակոբի Համբարձումյանի պաշտպան Լ.Սիմոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2010 թվականի նոյեմբերի 9-ի դատավճռով Կարինե Համբարձումյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով, 4-րդ մասի 2-րդ կետով, և 34-313-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ՝ հիմնական և լրացուցիչ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով,

Կարինե Համբարձումյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի ժամկետով՝ 8.000.000 (ութ միլիոն) ՀՀ դրամին համարժեք գույքի բռնագրավմամբ:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2011 թվականի մարտի 1-ի որոշմամբ վերոնշյալ դատավճռի դեմ պաշտպան Լ.Միմոնյանի վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 9-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

3. Վճարելի դատարանը 2011 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ ամբաստանյալ Կ.Համբարձումյանի և պաշտպան Լ.Միմոնյանի վճարելի բողոքները վերադարձրել է:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի հունիսի 23-ի որոշմամբ Կ.Համբարձումյանի վերաբերյալ 2010 թվականի նոյեմբերի 9-ի դատավճիռը վերանայվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի նախկին խմբագրությամբ 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով որակված հանցանքը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին: Դատավճիռը մնացած մասերով թողնվել է անփոփոխ:

5. Պաշտպան Լ.Միմոնյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի հունիսի 23-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

6. Կարինե Համբարձումյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2019 թվականի դեկտեմբերի 5-ին «Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի» գործով (գանգատ թիվ 43478/11) վճիռ է կայացրել, որով ճանաչել է Կ.Համբարձումյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման փաստը:

7. Կարինե Համբարձումյանի պաշտպան Լ.Միմոնյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով «Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճիռը, 2020 թվականի հունիսի 9-ին ներկայացրել է վճարելի բողոք: Վճարելի դատարանը 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ հարուցել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ և վճարելի բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 3-ի որոշման համաձայն՝ «(...) /2010 թվականի փետրվարի 2/-ին ԿՀԴԳ ԳՎ է դիմել «Արմվյան»-ի ԲԿՀ-ի բաց տիպային ռեժիմի դատաստանարկով՝ Արևհասր Սարգսյանը այն

մասին, որ նույն հիմնարկի պետի տեղակալ Կարինե Համբարձումյանը իրենից պահանջում է շուրջ 21.000 ԱՄՆ դոլար կաշառք՝ բաց ռեժիմում թողնելու և հետագայում ընդհանրապես նրան ազատ ռեժիմի կարգավիճակ տալու համար:

Այսպիսով, Ա.Սարգսյանի արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի հարկանիշներ:

Եկարի ունենալով, որ նշված հանցագործության հանգամանքների պարզարանման և հանցագործության մասնակիցներին ի հայտ բերելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ պետը միջնորդություն է ներկայացրել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, այն է՝ տեսանկարահանումներ և ձայնագրություններ իրականացնելու մասին:

Ոստանասիրելով նախապարտաված նյութերը, ներկայացված միջնորդությունը դադարանը գրնում է, որ միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման»:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածներով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով՝ դատարանը որոշել է. «Միջնորդությունը բավարարել: Թույլատրել վերը նշված հանցագործության բացահայտման նպատակով մեկ ամսյա ժամկետով իրականացնել տեսանկարահանումներ և ձայնագրություններ (...)»¹¹⁵:

9. Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 9-ի դատավճռով Կարինե Համբարձումյանը մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ նա «խաբեությանը հասիջարակել է րուժող Ա.Սարգսյանի առանձնապես խոշոր չափերով գույքը, լինելով պաշտոնապար անձ՝ Ա.Սարգսյանից կրկին անգամ անձամբ արացել է խոշոր և առանձնապես խոշոր չափերով դրամ՝ վերջինիս օգրին իր պաշտոնեական դիրքն օգրագործելով գործողություններ կարարելուն նպաստելու համար, ու փորձել է կարարել կաշառքի միջնորդությունն նպաստել րուժողի և կաշառք արացողի միջև կաշառքի շուրջ համաձայնության գալուն (...)»¹¹⁶:

10. Կ.Համբարձումյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճռի հիմքում դրվել են տուժող Արևհատ Սարգսյանի, վկաներ Անահիտ Սարգսյանի, Լյովա Թիրաբյանի, Վեհամ Մնացականյանի, Լևոն Համբարձումյանի, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներ Ռոստոմ Մարտիրոսյանի, Պետրոս Պետրոսյանի և Արմեն Մարտիրոսյանի ցուցմունքները, 2010 թվականի փետրվարի 4-ի՝ «Թղթադրամների մշակման վերաբերյալ» և «Թղթադրամներ ներկայացնելու մասին» արձանագրությունները, 2010 թվականի փետրվարի 4-ի գնությանը հայտնաբերված և ազգրավված իրեղեն ապացույցները, դատաքիմիական փորձաքննության 2010 թվականի փետրվարի 18-ի՝ համար 63 Ք

¹¹⁵ Տն քրեական գործ, հատոր 1, թերթ 9:

¹¹⁶ Տն քրեական գործ, հատոր 3, թերթեր 184-185:

եզրակացությունը, տուժող Արևհատ Մարզայանի անձնական գործի զննության արձանագրությունը, «ԱրմենՏել» և «Ղ-Տելեկոմ» ընկերություններից ստացված լազերային սկավառակների զննության արձանագրությունը, օպերատիվ միջոցառումների արդյունքները պարունակող լազերային սկավառակները, դրանց վերաբերյալ կատարված տեսաձայնային փորձաքննության եզրակացությունը¹¹⁷:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոք բերած անձը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-ին, 426.4-րդ հոդվածները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, եզրահանգել է, որ «Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, որով արձանագրվել է Կարինե Համբարձումյանի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում, Վճռաբեկ դատարանի 2011 թվականի ապրիլի 28-ի որոշումը վերանայելու հիմք է: Եվրոպական դատարանի վճռով արձանագրված խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը, ըստ բողոքաբերի, Կ.Համբարձումյանի նկատմամբ կայացված դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

12. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է վերանայել Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 28-ի որոշումը, բեկանել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 9-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2011 թվականի մարտի 1-ի որոշումն ու գործն ուղարկել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. Ներպերական դատարանի ակտերի վերանայումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. «Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռն արդյո՞ք Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 28-ի որոշումը վերանայելու հիմք է:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-ին հոդվածի համաձայն՝ «1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատարանի ակտը:

¹¹⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 179-185:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին աստիճանի դատարանի դատարանի ակտի վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատարանի ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր հանգամանքների հետևանքով դատարանի ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտնող կամ որոշմանը հիմնավորվել է անձի Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետով նախատեսված նոր հանգամանքը հաստատված է համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող փոխ միջազգային դատարանի որոշմանը դրևա ուժի մեջ մտնելու պահից:

(...):»:

15. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատարանի ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հիմնավորվել է անձի Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը¹¹⁸:

16. Այսպես, «Համբարձոսյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանն արձանագրել է բողոք բերած անձի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտում:

Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը «Համբարձոսյանն ընդդեմ Հայաստանի» 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճռով արձանագրել է. «(...) Դիմումատու նշել է, որ դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշմանը չի համապատասխանել Քրեական դատավարության օրենսգրքի 286-րդ հոդվածի պահանջներին: (...) Մասնավորապես, որոշման եզրափակիչ մասում նշված չէ դիմումատուի՝ որպես այն անձի անունը, որի նկատմամբ թույլատրվել է ոստիկանության կողմից տեսագրում և ձայնագրում կատարելը (...): Կատավարությունը նշել է, որ որոշման պարճատարանական մասից պարզ է եղել, որ գաղղղի դիմում թույլատրվել է կատարել դիմումատուի նկատմամբ: Դատարանը նկատում է, այդուհանդերձ, որ դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշման պարճատարանական մասը Կազմակերպված հանցավորության դեմ

¹¹⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Գրիշա Վիրաբյանի գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, Ժիրայր Սեֆիլյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, Արայիկ Զայանի գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, Դավիթ Ավետիսյանի գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՄԴՅ3/0088/01/09, Ալիկ Մաթևոսյանի գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

պայքարի վարչության կողմից ներկայացված համապարասիան միջնորդության բառացի վերարտադրումն է, որում վերջինս նշել էր, որ Ա.Ս.-ի գործողությունները պարունակել են 311-րդ հոդվածով սահմանված հանցագործության, այն է՝ կաշառք արանապու փարբեր (...): Կառավարության մտրեցմանը հեարևելով՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ համապարասիան միջնորդության և դրա հիման վրա ընդունված դատարանի որոշման մեջ դիմումատրուի փոխարեն սխալմանը նշվել է Ա.Ս.-ի անունը, և որ գաղղրնի դիմուման միջոցառումներ թույլարրվել է իրականացնել դիմումատրուի նկարմանը և ոչ թե մեկ ուրիշի: Ամեն դեպրում Դատարանն այն կարծիքին է, որ գաղղրնի դիմումը լուրջ միջամրոջություն է անձի մասնավոր կյանքի նկարմանը հարգանքի իրավունքին, դրա համար հիմք ծառայող դատարանի թույլրվությունը չի կարող այնպիսի անորոջ ձևակերպում ունենալ, որ մրորումների և ենթաորոջությունների րեղիք րա դրա թովանդակության մասով և, որ ամենակարևորն է, այն անձի մասով, որի նկարմանը րվյալ միջոցառումը կիրառվում է:

Ավելին, Զրեական օրենագրքի 286-րդ հոդվածով պահանջվում է, որ դատարանի որոշման մեջ, *inter alia*, նշվի ձեռնարկվելիք քննչական գործողությունը կամ օպերատրիվ-հեարսիուզական միջոցառումը՝ հարակեցնելով գործողության կամ միջոցառման րեասկը (...): Դատարանը նկարում է, որ «Օպերատրիվ-հեարսիուզական գործունեության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում առկա է օպերատրիվ-հեարսիուզական միջոցառումների րեասկների սպառիչ ցանկ, և այդ ցանկում դատարանի 2010 թվականի փեարրվարի 3-ի որոշմանը նախարեալված՝ «ձայնագրում և րեասագրում» կոչվող միջոցառման րեասկ նշված չէ: Սույն գործով ուրիկանությունը ձայնագրել է դիմումատրուի Ա.Ս.-ի հեար խոսակցությունները փեարրվարի 3-ի և 4-ի նրանց հանդիպումների ընթացքում, ինչպես նաև նախորդ օրը նրանց հեռախոսային խոսակցությունը (...): Հեարևարար պարզ է դառնում, որ ուրիկանությունն իրականացրել է երկու րարբեր րեասկի օպերատրիվ-հեարսիուզական միջոցառում, այն է՝ արրաքին դիմում և հեռախոսային խոսակցությունների վերահսկում (...), մինչդեռ դատարանի 2010 թվականի փեարրվարի 3-ի որոշմանը այդ միջոցառումները չեն հարակեցվել:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը գրում է, որ ընդհանուր առմանը դիմումատրուի նկարմանը կիրառված գաղղրնի դիմումը չի իրականացվել պարշած դատական վերահսկողությամբ:

Շված դիարարկումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կերի իմատրով դիմումատրուին գաղղրնի դիմել են ոչ «օրենքով նախարեալված» կարգով (...)¹¹⁹:

Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ «Համարձումյանն ընդդեմ Հայասրանի» գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

¹¹⁹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Համարձումյանն ընդդեմ Հայասրանի գործով 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 43478/11, կետեր 65-67:

19. Հիմք ընդունելով «Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի կողմից բողոք բերած անձի՝ Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված համապատասխան իրավունքի խախտման փաստի արձանագրումը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 28-ի որոշումը վերանայելու հիմք է:

II. Ներպետական դատական արշանների կողմից կայացված ակտերի բեկանման ու փոփոխման հիմքերը.

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. «Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի վճիռն արդյո՞ք Առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 9-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2011 թվականի մարտի 1-ի որոշումը բեկանելու և փոփոխելու հիմք է:

21. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կարարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:

«Սկոցարին և Ջունյանն ընդդեմ Իտալիայի» գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) վճիռը, որով Դատարանը խախտում է արձանագրում, պարասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոփոխարուցման կարգով տրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում վերջ տալու համար Դատարանի արձանագրած խախտումներին և հնարավորինս շտկելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազատ է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով արանձնաձև իր պարտավորությունների կարարման միջոցների ընտրության հարցում պայմանով, որ դրանք համարվելի են Դատարանի վճիռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ»²⁰:

«Մելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի» գործով Եվրոպական դատարանը նշել է, որ. «Կոնվենցիայի խախտում արձանագրած Դատարանի վճիռով պարասխանող պետության վրա պարտավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հարուցում տրամադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ սուկա իրավիճակը (restitutio

²⁰ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Scozzari and Giunta v. Italy* գործով 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250:

in integrum): Եթե *restitutio in integrum*-ը գործնականում հնարավոր չէ, ապա պարասպանող պետությունն ազար է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (...)¹²¹»:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտի սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չհուսիտել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա (...):»:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2013 թվականի մայիսի 31-ին կայացված ՄԴՌ-1099 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն իրավաչափ է համարել նոր (նոր երևան եկած) հանգամանքի հիմքով հարուցված վարույթով բողոքարկվող դատական ակտի եզրափակիչ մասն անփոփոխ թողնելու օրենսդրական հնարավորությունը՝ պայմանով, որ ներկայացվեն ծանրակշիռ փաստարկներ այն մասին, որ համապատասխան հանգամանքը չի ազդում գործի ելքի վրա: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ նոր հանգամանքն ըստ էության կասկածի տակ չի կարող դնել գործի ելքը, ուստի դրա հիման վրա գործի կրկին քննությունը չի կարող ծառայել իր «*restitutio in integrum*» հնարավորինս ապահովելու նպատակին՝ այդպիսին կատարելը կդառնա ինքնանպատակ, ավելին, կհակասի իրավական որոշակիության սկզբունքին:

24. Դատական ակտի վերաբացումը կամ գործի նոր քննությունը՝ որպես մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհատական միջոց, նախատեսված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին 2000 թվականի հունվարի 19-ի հանձնարարականում, որին ՀՀ սահմանադրական դատարանը 2013 թվականի մայիսի 31-ի ՄԴՌ-1099 որոշման մեջ ևս հղում է կատարել:

Վերոնշյալ հանձնարարականի համաձայն՝ անհատական միջոցառումների ձեռնարկումն անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների պարտադիր առկայության պարագայում, այն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ և դիմումատուն պետք է շարունակի կրել

¹²¹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Selcuk and Asker v. Turkey* գործով 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125:

խնդրո առարկա ներպետական որոշման բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաբացմամբ:

25. Գործի վերաբացումը Եվրոպական դատարանի կողմից ևս գնահատվում է որպես «*restitutio in integrum*»-ը հնարավորինս ապահովելու միջոց: Ընդ որում, Եվրոպական դատարանը, հղում կատարելով Հանձնարարականին և համարելով, որ վարույթի վերսկսումը կարող է տեղի ունենալ «բացառիկ» հիմքերով, այդպիսիք է համարում հատկապես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման դեպքերը, երբ գործի քննությունն իրականացվել է արդար դատաքննության իրավունքի խախտմամբ: Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում շեշտել է, որ այս դեպքում հատուցման ամենապատշաճ ձևը կլինի վարույթի վերաբացումն ու գործի նոր քննությունը՝ արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ: Եվրոպական դատարանի համար կայուն պրակտիկա է դարձել նաև գործերի վերաբացման վերաբերյալ դրույթներն ընդգրկել վճռի մեջ¹²²:

Այսպիսով, Եվրոպական դատարանի որդեգրած մոտեցման համաձայն՝ համապատասխան անհատական միջոցառումների կիրառումը, մասնավորապես գործի վերաբացումն անհրաժեշտ է և ըստ այդմ, մինչև խախտումը եղած իրավիճակի վերականգնումը՝ հնարավոր, որպես կանոն, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման պարագայում¹²³:

26. «*Խոսան ընդդեմ Միացյալ թագավորության*» և «*Փի. Ջի.-ն և Ջեի. Էյջ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*» գործերով Եվրոպական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշման համաձայն՝ «(...) Դատարանի խնդիրը չէ որոշել սպացույցների որոշակի տեսակների, օրինակ, ներպետական օրենսդրության խախտմամբ ձեռք բերված սպացույցների օգտագործման թույլատրելիությունը, կամ որոշել արդյոք դիմումարուն իրականում մեղավոր է, թե՛ ոչ: Պատասխան ակնկալող հարցն այն է, թե արդյոք քննությունը, որպես ամբողջություն, ներառյալ եղանակը, որի միջոցով ձեռք է բերվել սպացույցը, եղել է արդար: Սա ներառում է վիճարկվող «անօրինականության» ստուգումը և եթե խոսքը գնում է Կոնվենցիայով սահմանված այլ իրավունքի խախտման մասին, վերջինիս բնույթի պարզումը»¹²⁴:

¹²² Տե՛ս Եվրոպական դատարանի, ի թիվս այլոց, *Gencel v. Turkey* գործով 2003 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 53431/99, *Ceylan v. Turkey* գործով 2005 հոկտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 46454/99, *Bracci v. Italy* գործով 2005 թվականի հոկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 36822/02, *Somogyi v. Italy* գործով 2004 թվականի մայիսի 18-ի վճիռը, գանգատ թիվ 67972/01:

¹²³ Տե՛ս *mutatis mutandis*, Վճարելի դատարանի՝ *Արարատ Մուրադխանյանի և Գրիշա Վիրաբյանի* գործերով վերը հիշատակված որոշումները:

¹²⁴ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Khan v. the United Kingdom* գործով 2000 թվականի մայիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 35394/97, կետ 34, *P.G. and J.H. v. the United Kingdom* գործով 2001 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 44787/98, կետ 76:

Վերոնշյալ գործերով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ գաղտնի ձայնագրող սարքի օգտագործումը եղել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, քանի որ նման միջոցի օգտագործումը չի ունեցել իրավական հիմքեր ներպետական օրենսդրության մեջ, և դիմումատուի՝ անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտությունը նախատեսված չի եղել օրենքով, մինչև ժամանակ այդ գործերի հանգամանքներում նման ճանապարհով ստացված տեղեկատվությունը որպես ապացույց օգտագործելը Եվրոպական դատարանը չի դիտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդարության պահանջներին հակասող¹²⁵: Նշված գործերով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման բացակայության մասին եզրահանգման համար, ի թիվս այլոց, հիմք է ծառայել այն, որ ձայնագրող սարքի օգտագործումը ներպետական օրենսդրության տեսանկյունից եղել է օրինական¹²⁶:

27. «Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի» գործով անդրադառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների ենթադրյալ խախտմանը, Եվրոպական դատարանը, ևս մեկ անգամ վերահաստատելով նախադեպային իրավունքում ձևավորված ընդհանուր սկզբունքները, նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված անձի արդար դատաքննության իրավունքի խախտում արձանագրելիս դատարանը պետք է պարզի, թե.

1. արդյո՞ք վարույթը, ներառյալ՝ եղանակը, որով ձեռք են բերվել ապացույցները, եղել է արդար,

2. արդյո՞ք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, մասնավորապես՝ անձը հնարավորություն ունեցել է վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ¹²⁷:

28. Նախորդ կետում շարադրված վերլուծությունները համադրելով սույն գործում առկա տվյալների հետ, Եվրոպական դատարանը եզրահանգել է. «(...) դիմումատուին գործնականում ապացույցների իսկությունը վիճարկելու և դրանց օգտագործման դեմ առարկելու հնարավորություն է ունեցել: Նա այդպես էլ վարվել է [Առաջին սպյանի] դատարանում վարույթի ժամանակ և իր բողոքներում (...): Պետք է ընդունել, որ [Առաջին սպյանի] դատարանը դիմումատուի փաստարկներին շար թեթևակիորեն է անդրադարձել՝ նշելով միայն, որ դատարավարական խախտումների վերաբերյալ դիմումատուի պնդումները չեն հաստատվել (...): Այնուամենայնիվ, իր որոշման մեջ Վերաքննիչ դատարանն ըստ էության քննել է դիմումատուի փաստարկները և հիմնավորել վիճարկելի ապացույցների մասով [Առաջին սպյանի] դատարանի եզրակացություններն անհույս թողնելու իր որոշումը (...): Այսպիսով, փաստը, որ վիճարկելի տեսաձայնագրություններն

¹²⁵ Տե՛ս Khan v. the United Kingdom գործով վերը հիշատակված վճիռը, կետեր 25-28, P.G. and J.H. v. the United Kingdom գործով վերը հիշատակված վճիռը, կետեր 37-38:

¹²⁶ Տե՛ս Khan v. the United Kingdom գործով վերը հիշատակված վճիռը, կետ 36, P.G. and J.H. v. the United Kingdom գործով վերը հիշատակված վճիռը, կետ 78:

¹²⁷ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 43478/11, կետեր 74-75:

ապացույցների շարքից հանելու դիմումարտուի փորձերն անհաջող են եղել, էական նշանակություն չունի այն եզրակացության համար, որ դիմումարտուն ունեցել է հնարավորություն վիճարկելու դրանց իսկությունը և առարկելու դրանց օգրագործման դեմ, ինչը նա արել է:

Դատարանն այնուհետև նկատում է, որ վիճարկելի ապացույցները չեն եղել միակ ապացույցը, որի վրա դիմումարտուի մեղադրական դատավճիռը հիմնված է եղել (...): [Առաջին ասյանի] դատարանը դիմումարտուի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելիս հիմնվել է [իրուժող]-ի ցուցմունքի, վկաների ցուցմունքների, իրեղեն ապացույցների, դատափորձագիտական ապացույցների, ինչպես նաև օպերատիվ փյայվների վրա (...)]¹²⁸:

29. Արդյունքում, Եվրոպական դատարանը «Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի» գործով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների խախտում չի արձանագրել:

30. Հիմք ընդունելով սույն որոշման 21-29-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները և վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես նշել է Եվրոպական դատարանը, դիմումատուի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը չի հիմնվել միայն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտմամբ ձեռքբերված տեսաձայնագրությունների վրա: Մասնավորապես, մեղադրական դատավճիռը հիմնվել է նաև գործով ձեռքբերված մի շարք այլ վճռորոշ ապացույցների վրա, որոնք դրվել են Կ.Համբարձումյանի դատապարտման հիմքում¹²⁹: Նման պայմաններում, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտումը լուրջ կասկած չի կարող հարուցել ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ «Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, որով արձանագրվել է Կ.Համբարձումյանի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, սույն գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 9-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2011 թվականի մարտի 1-ի որոշումը բեկանելու հիմք չէ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանի 2011 թվականի ապրիլի 28-ի որոշման վերանայման արդյունքում Կարինե Համբարձումյանի պաշտպան Լ.Սիմոնյանի բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության

¹²⁸ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 43478/11, կետեր 78-79:

¹²⁹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 415.1-րդ, 418-րդ 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարինե Հակոբի Համբարձումյանի պաշտպան Լիպարիտ Սիմոնյանի բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի ապրիլի 28-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2011 թվականի օգոստոսի 23-ի որոշումների՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման արդյունքում վճռաբեկ բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *արտրագրություն*

Դատավորներ՝ *արտրագրություններ*

9.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ2/0062/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 12-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հրաչ Առաքելի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ի որոշման դեմ պաշտպան Շ.Շահինյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով 2018 թվականի հուլիսի 25-ին հարուցվել է թիվ 19159418 քրեական գործը:

2018 թվականի հուլիսի 25-ին Հրաչ Առաքելի Առաքելյանը բերման է ենթարկվել և հաջորդ օրը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ Հ.Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Նույն օրը մեղադրյալ Հ.Առաքելյանն ազատվել է արգելանքից և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չեռանալու մասին ստորագրությունը:

1.1. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով 2018 թվականի օգոստոսի 10-ին հարուցվել է թիվ 19160318 քրեական գործը:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ նշված քրեական գործերը միացվել են մեկ վարույթում՝ թիվ 19159418 համարի ներքո:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ Հ.Առաքելյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով:

1.3. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ թիվ 19159418 քրեական գործից անջատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցված մասը, որին շնորհվել է 19105218 համարը:

2018 թվականի սեպտեմբերի 4-ին Հրաչ Առաքելյանի վերաբերյալ թիվ 19159418 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 17-ի որոշմամբ ամբաստանյալ Հ.Առաքելյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չեռանալու մասին ստորագրությունը փոխարինվել է կալանավորմամբ և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: 2019 թվականի հունվարի 19-ին Հ.Առաքելյանը հայտնաբերվել է և կալանավորվել:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 15-ի դատավճռով ամբաստանյալ Հ.Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ Հ.Առաքելյանի նկատմամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 3 (երեք) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ Հ.Առաքելյանի արգելանքի տակ գտնվելու 2 (երկու) օրը հաշվակցվել է նրա պատժի ժամկետին և թողնվել է կրելու ազատազրկում՝ 3 (երեք) տարի 2 (երկու) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2019 թվականի հունվարի 19-ից:

3. Ամբաստանյալ Հ.Առաքելյանի պաշտպան Հ.Հովսեփյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 15-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Հ.Առաքելյանի պաշտպան Շ.Շահինյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճարելի դատարանը 2021 թվականի փետրվարի 4-ին որոշում է կայացրել վճարելի բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Հրաչ Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով այն բանի համար, որ նա «2018 թվականի հուլիսի 25-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, նկատելով Վանաձոր քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի 26 հասցեում գործող «Համեղ Պարսո» արագ սննդի կետի դիմաց կայանված, Գարինե Ղուկասյանին պատկանող «BMW-X3» մակնիշի, 03 XX 010 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջևի աջ նստարեղին դրված դրամնպասակը, այն հափշտակելու դիտարկությամբ օգտվելով հիշյալ ավտոմեքենայի դուռը կողպված չլինելու հանգամանքից, բացել է վարորդի դուռը, սպորինի մուրք գործել որպես պահեստարան հանդիսացող հիշյալ ավտոմեքենա, հափշտակել վերը նշված դրամնպասակը և թաքցրել հագուստի տակ: Այդ պահին նրան նկատել է ավտոմեքենային մոտեցած Գարինե Ղուկասյանը, իսկ Հրաչ Առաքելյանը հասկանալով, որ իրեն նկատել են, դիմել է փախուստի բացահայտ հափշտակելով Գարինե Ղուկասյանին պատկանող 3000 ՀՀ դրամ արժողության դրամնպասակը:

(...) Բացի այդ, Հրաչ Առաքելի Առաքելյանը 2018 թվականի հուլիսի 25-ին Վանաձոր քաղաքի Շիրվանզադե փողոցի վրա գրնվող շուկային հարակից տարածքից գնել և իր անդրավարորդի գուրկային մասում սպորինի կրել է ասոր գնեք հանդիսացող կուխազենք, որը նույն օրը՝ ժամը 17:00-ի սահմաններում ուսուցիչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնում նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել և վերցվել է (...)¹³⁰:

6. 2018 թվականի հուլիսի 26-ին Հրաչ Առաքելյանը որպես կասկածյալ ցուցմունք է տվել այն մասին, որ 2018 թվականի հուլիսի 25-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, «Համեղ պատահ» արագ սննդի կետի դիմաց նկատել է կայանված «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենա: Լինելով հարբած վիճակում՝ չի

¹³⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 148-149:

հասկացել, թե ինչու է բացել այդ մեքենայի չկողպված դուռը և նստել վարորդի նստատեղին: Այդ պահին մոտեցել է մի կին և ինքը հասկացել է, որ վերջինս մեքենայի տերն է, քանի որ այդ կինը սկսել է իր վրա գոռգոռալ: Ինքը դուրս է եկել մեքենայից և դիմել փախուստի: Հայտնել է, որ մեքենայից ոչինչ չի հափշտակել, դրա մեջ դրամապանակ չի նկատել¹³¹:

7. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի (այսուհետ նաև՝ Տարոնի բաժին) պետ Վ.Թորոսյանը վարույթն իրականացնող մարմնին ուղղված՝ **2018 թվականի հուլիսի 26-ի** գրությամբ խնդրել է համաձայնություն, որպեսզի ինքը և նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Ա.Հակոբյանը ձերբակալված կասկածյալ Հ.Առաքելյանի հետ ձերբակալվածներին պահելու վայրում օպերատիվ հարցազրույց իրականացնեն¹³²: Նշված գրությանն ի պատասխան՝ քննիչ Վ.Գրիգորյանը նույն օրվա գրությամբ հայտնել է, որ չի առարկում Հ.Առաքելյանի հետ օպերատիվ հարցազրույց իրականացնելու համար ձերբակալվածներին պահելու վայր վերջիններիս մուտք գործելու դեմ¹³³:

8. **2018 թվականի հուլիսի 26-ին** Հրաչ Առաքելյանը որպես կասկածյալ լրացուցիչ ցուցմունքներ է տվել՝ ըստ էության վերահաստատելով 2018 թվականի հուլիսի 26-ի ցուցմունքի ընթացքում նշված՝ հափշտակություն չկատարելու հանգամանքը¹³⁴: Նշվածը նաև պնդել է **2018 թվականի հուլիսի 27-ին** տուժողի հետ առերես հարցաքննության ընթացքում¹³⁵:

9. Տարոնի բաժնի պետ Վ.Թորոսյանը վարույթն իրականացնող մարմնին ուղղված՝ **2018 թվականի հուլիսի 27-ի** գրությամբ խնդրել է, որպեսզի թույլատրեն ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Ղազարյանին, Տարոնի բաժնի պետ Վ.Թորոսյանին և նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Ա.Հակոբյանին ձերբակալվածներին պահելու վայրում հարցազրույց ունենալ ձերբակալված Հ.Առաքելյանի հետ՝ գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ ստանալու, ինչպես նաև Հ.Առաքելյանի կողմից հնարավոր այլ հանցագործություններ կատարած լինելու հանգամանքը պարզելու նպատակով¹³⁶: Նշված գրությանն ի պատասխան՝ քննիչ Վ.Գրիգորյանը նույն օրվա գրությամբ հայտնել է, որ չի առարկում Հ.Առաքելյանի հետ օպերատիվ հարցազրույց իրականացնելու նպատակով ձերբակալվածներին պահելու վայր վերջիններիս մուտք գործելու դեմ¹³⁷:

10. **2018 թվականի հուլիսի 28-ին** Հ.Առաքելյանը դիմում է հասցեագրել վարույթն իրականացնող մարմնին այն մասին, որ 2018 թվականի հուլիսի 25-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում Վանաձոր քաղաքի «Համեղ Պատառ» սննդի

¹³¹ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթեր 38-39:

¹³² Տնն քրեական գործ, հատոր 1, թերթ 42:

¹³³ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթ 47:

¹³⁴ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթեր 48, 52-53:

¹³⁵ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթեր 65-68:

¹³⁶ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթ 72:

¹³⁷ Տնն քրեական գործ, հատոր 1, թերթ 73:

կետի դիմաց կայանված Կ.Ղուկասյանի ավտոմեքենայից նրա դրամապանակը հափշտակել է ինքը, ինչի շուրջ ցանկանում է լրացուցիչ ցուցմունք տալ¹³⁸:

10.1. 2018 թվականի հուլիսի 28-ին Հ.Առաքելյանը որպես կասկածյալ լրացուցիչ հարցաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2018 թվականի հուլիսի 25-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, լինելով ոգելից խմիչք օգտագործած վիճակում, «Համեղ Պատառ» արագ սննդի կետի դիմաց կայանված Կարինե Ղուկասյանի «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայից հափշտակել է վերջինիս դրամապանակը: Հայտնել է, որ ավտոմեքենայի առջևի դռների ապակիները եղել են կիսաբաց վիճակում, որից ներս նայելով՝ նկատել է վարորդի կողքի նստատեղին դրված դրամապանակը: Որոշելով հափշտակել այն՝ բացել է ավտոմեքենայի դուռը, նստել վարորդի նստատեղին և նշված դրամապանակը դրել իր վերնաշապիկի տակ: Այդ պահին ավտոմեքենային է մոտեցել Կ.Ղուկասյանը և ինքը դիմել է փախուստի: Փախչելու ընթացքում վերնաշապիկի տակից հանել է դրամապանակը, բացել այն և տեսնելով, որ նրա մեջ թղթի կտորներ են, նստել է աղբի համար նախատեսված շինության ուղղությամբ: Այն հարցին, թե ինչու նախկինում չի պատմել դա, Հ.Առաքելյանը պատասխանել է, որ Կ.Ղուկասյանի պնդումներից հետո որոշել է պատմել ճշմարտությունը¹³⁹:

11. 2018 թվականի հուլիսի 28-ին Տարոնի բաժնի պետ Վ.Թորոսյանը վարույթն իրականացնող մարմնին ուղղված նույն օրվա գրությամբ խնդրել է, որպեսզի թույլատրեն Տարոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Ա.Հակոբյանին ձերբակալվածներին պահելու վայրում հարցազրույց ունենալ ձերբակալված Հ.Առաքելյանի հետ՝ գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ ստանալու, ինչպես նաև Հ.Առաքելյանի կողմից հնարավոր այլ հանցագործություններ կատարած լինելու հանգամանքը պարզելու նպատակով¹⁴⁰: Նշված գրությանն ի պատասխան՝ քննիչ Վ.Գրիգորյանը նույն օրվա գրությամբ հայտնել է, որ չի առարկում Հ.Առաքելյանի հետ օպերատիվ հարցազրույց իրականացնելու նպատակով ձերբակալվածներին պահելու վայր Ա.Հակոբյանի մուտք գործելու դեմ¹⁴¹:

12. 2018 թվականի հուլիսի 28-ին և դրանից հետո որպես մեղադրյալ հարցաքննությունների ընթացքում մեղադրյալ Հ.Առաքելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով իրեն լիովին մեղավոր է ճանաչել և ցուցմունք տվել այն մասին, որ 2018 թվականի հուլիսի 25-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, «Համեղ Պատառ» սննդի կետի դիմաց կայանված Կարինե Ղուկասյանի «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայից հափշտակել է վերջինիս դրամապանակը և դիմել փախուստի,

¹³⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 76:

¹³⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 77-78:

¹⁴⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 80:

¹⁴¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 81:

ինչի վերաբերյալ նախկինում մանրամասն ցուցմունքներ է տվել, որոնք պնդել է և խնդրել հիմք ընդունել¹⁴²:

12.1. Ամբաստանյալ Հ.Առաքելյանը դատաքննության ընթացքում իրեն մեղավոր է ճանաչել մասնակի՝ միայն ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ տուժողի դրամապանակը չի համիշտակել: Այդ օրը ոգելից խմիչք շատ էր օգտագործել, որի պատճառով չի հասկացել, թե ինչու է նստել տուժողի ավտոմեքենայի մեջ: Հայտնել է նաև, որ ձերբակալվածներին պահելու վայրում գտնվելու ընթացքում իրեն այցելել են ոստիկանության աշխատակիցները, ովքեր հայտնել են, քանի որ դրամապանակի արժեքը չի գերազանցում 5.000 ՀՀ դրամը մեղքն ընդունելու դեպքում գործը «կփակվի» և իրեն բաց կթողնեն¹⁴³:

13. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի ապրիլի 15-ի դատավճռով արձանագրել է հետևյալը. «(...) Դատարանը գնահատելով ամբաստանյալ Հրաչ Առաքելյանի նախաքննական և դատարանում տված ցուցմունքները, արժանահավասար է համարում նրա կողմից քրեական գործի նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, քանի որ դրանք համապատասխանում են դատաքննությանը հետազոտված ապացույցներով հաստատված գործի փաստական փյախներին:

Ամբաստանյալ Հրաչ Առաքելյանի դատարանում հայտնած պարճատարանությունը, թե ինքը տուժողի ավտոմեքենայից նրան պարկանող դրամապանակը կողոպուտի եղանակով չի համիշտակել, անհիմն են, նպարակ են հետապնդում խուսափելու ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քրեական պարտախանարությունից ու պարտից: Ամբաստանյալ Հրաչ Առաքելյանի նախաքննական ցուցմունքներից բացի, նրան առաջադրված մեղադրանքը հիմնավորված է նաև դատաքննությանը հետազոտված [և դատավճռում շարադրված] ապացույցներով.

(...)

Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլարբելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարության փաստակցության, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, գրնում է, որ ամբաստանյալ Հրաչ Առաքելի Առաքելյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրեն մեղադրված հանցավոր արարքները, նրա արարքներին տրվել են քրեաիրավական ճիշտ գնահատականներ, կատարած հանցագործությունների համար նա ենթակա է քրեական պարտախանարության ու պարիժների (...)»¹⁴⁴:

¹⁴² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 91, 141-142, 154:

¹⁴³ Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

¹⁴⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 163-173:

14. Վերաքննիչ դատարանը 2019 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ արձանագրել է, որ. «(...) Առաջին ասրյանի դատարանը (...) բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման է ենթարկել դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատել վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ինչի արդյունքում՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ եկել է իրավաչափ եզրահանգման այն մասին, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարք (...):

Վերաքննիչ դատարանը (...) գնահատելով Առաջին ասրյանի դատարանում հետազոտված ապացույցները, փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանք կատարելու մեջ ամբաստանյալ Հրաչ Առաքելյանի մեղավորությունն Առաջին ասրյանի դատարանը հաստատել է համարել դատաքննությամբ հետազոտված թույլատրելի, հավաստի և քրեական գործին վերաբերող փոխկապակցված ապացույցների այնպիսի համակցությամբ, որը բավարար է հաղթահարելու ամբաստանյալ Հրաչ Առաքելյանի անմեղության կանխավարկածը և բացառելու վերջինիս կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքը չկատարելու ողջամիտ հավանականությունը:

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի հիմնավորումներին, սպա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ դրանք ի գորու չեն չեզոքացնելու Առաջին ասրյանի դատարանի իրավաչափ հետևությունները:

Մասնավորապես Վերաքննիչ դատարանը փաստում է, որ գործում առկա չեն ապացույցներ, որոնք հնարավորություն կրային կասկածի տակ դնել 28.07.2018թ. որպես կասկածյալ հարցաքննվելիս, 28.07.2018թ. և 28.08.2018թ. որպես մեղադրյալ հարցաքննվելիս Հ.Առաքելյանի տված ցուցմունքի ճշմարտացիությունը և ըստ այդմ՝ նաև արժանահավատությունը: Այս առումով Վերաքննիչ դատարանը գրնում է նաև, որ անհիմն են նաև բողոքարկերի այն պնդումները, որ դատարանը հենց այդ ցուցմունքներով է հաստատված համարել Հրաչ Առաքելյանին առաջադրված մեղադրանքը, քանի որ ամբաստանյալ Հ.Առաքելյանին առաջադրված մեղադրանքում նշված փաստական հանգամանքները, բացի Հ.Առաքելյանի վերոնշյալ ցուցմունքից, հիմնավորվել են նաև Առաջին ասրյանի դատարանի կողմից վկայակոչված մյուս ապացույցներով, որոնցով ըստ էության չեն հերքվում Հրաչ Առաքելյանի նախաքննական ցուցմունքներում նկարագրված փաստական հանգամանքները:

Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ Առաջին ասրյանի դատարանի այս առումով հետևությունները ևս պարզաճ պարճատարանված են և բխում են գործով ձեռք բերված նյութերից, ինչպես նաև փաստելով, որ նշված ապացույցների անթույլատրելիության մասին բողոքարկերը վերաքննիչ բողոքում չի նշել այնպիսի արձանագրված փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կրային Վերաքննիչ դատարանին հաստատված համարելու, որ Հ.Առաքելյանը

նախաքննական ցուցմունքները տրվել է հարկադրանքի կամ ապօրինի ազդեցության արդյունքում, գրնում է, որ Հրաչ Առաքելյանի նախաքննական ցուցմունքների արժանահավասար լինելու, իսկ դատարանում հայրնաձ պատճառաբանությունների անհիմն լինելու մասին Առաջին ասրյանի վերոգրյալ հետևություններն իրավաչափ են, որոնց հետ չհամաձայնելու հիմքեր առկա չեն:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ գործում առկա է վերաքերելի և թույլատրելի ապացույցների այնպիսի համակցություն, որը բավարար է հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված համարելու, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին համապատասխանելու և ապացուցված լինելու մասին Առաջին ասրյանի դատարանի հետևությունը հիմնավոր է (...)¹⁴⁵:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

15. Բողոքաբերը նշել է, որ նախաքննության ընթացքում ձեռք բերված և դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով չի հաստատվել Հ.Առաքելյանի կողմից Կ.Ղուկասյանի դրամապանակը հափշտակելու փաստը, այլ միայն հաստատվել է, որ Հ.Առաքելյանը նստել է Կ.Ղուկասյանի ավտոմեքենայի վարորդի նստատեղին և կարճ ժամանակ անց հեռացել: Բողոք բերած անձը նշել է, որ թեև նախաքննության ընթացքում Հ.Առաքելյանն առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել, սակայն դատաքննության ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, և ցուցմունք է տվել, որ Կ.Ղուկասյանի դրամապանակը չի հափշտակել: Ըստ բողոքաբերի՝ դատարանը Հ.Առաքելյանի նախաքննական ցուցմունքների փոխարեն, պետք է արժանահավատ դիտարկեր նրա դատաքննական ցուցմունքները, քանի որ դրանք հաստատվել են նաև քրեական գործում առկա այլ տվյալներով:

15.1. Բացի այդ, բողոք բերած անձն ընդգծել է, որ նախաքննական մարմնի գիտությամբ ու թույլտվությամբ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների կողմից ձերբակալված կասկածյալ Հ.Առաքելյանի հետ ձերբակալվածների պահման վայրում մի քանի անգամ հարցազրույցներ ունենալը կասկածյալի իրավունքների կոպիտ խախտմամբ իրականացված հարցաքննություններ են, որոնց ընթացքը չի արձանագրվել: Դրանց նպատակը եղել է Հ.Առաքելյանից խոստովանական ցուցմունքներ ստանալը, ինչը հաստատվում է նախաքննական մարմնից թույլտվություններ հայցելու վերաբերյալ գրություններով: Այդ հարցազրույցների արդյունքում Հ.Առաքելյանը չկատարած հանցագործության վերաբերյալ խոստովանական

¹⁴⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 1-19:

ցուցմունքներ է տվել, հետևաբար դրանք չպետք է դիտվեն որպես արժանահավատ ու թույլատրելի ապացույցներ: Վերոհիշյալը հաստատում է Հ.Առաքելյանի դատաքննական ցուցմունքներն այն մասին, որ Կ.Ղուկասյանի դրամապանակը հափշտակելու վերաբերյալ նախաքննական ցուցմունքները տվել է ոստիկանության աշխատակիցների ազդեցության արդյունքում: Այդ մասին է վկայում նաև այն, որ խոստովանական ցուցմունքները ստանալուց հետո նախաքննական մարմինը որոշում է կայացրել՝ Հ.Առաքելյանին արգելանքից ազատելու և նրա նկատմամբ որպես խափանման միջոց՝ չհեռանալու մասին ստորագրությունն ընտրելու վերաբերյալ:

15.2. Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանին մեղազարվող արարքին տրվել է սխալ քրեաիրավական որակում, ինչպես նաև նրա նկատմամբ նշանակված պատժին պետք է հաշվակցվեր արգելանքի տակ գտնվելու ոչ թե 2 (երկու), այլ 3 (երեք) օրը:

16. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը և ամբաստանյալ Հ.Առաքելյանին արդարացնել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. Հիմնավորվա՞ծ են արդյոք Հ.Առաքելյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքի վերաբերյալ նախաքննական խոստովանական ցուցմունքները որպես այն հաստատող ապացույցներ օգտագործելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել»*

1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով. (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

2. Հեղաքրնության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, սպացույցները գնահատում են սպացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

19. Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ սպացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը՝ որպես սպացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող սպացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ սպացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Հնդ որում, թեև սպացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով սպացույցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) **դատարանը կրում է առկա սպացույցները բարենիսիզ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով**¹⁴⁶:

19.1. Անդրադառնալով սպացույցների թույլատրելիության և արժանահավատության հատկանիշներին՝ Վճռաբեկ դատարանն *Արարար Ավագյանի և Վահան Մահակյանի* գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) *Սպացույցների թույլատրելիության հարկանիշը վերաբերում է դրանց ձևական կողմին: Դրա էությունը կազմում է սպացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված դատավարական պահանջների պահպանվածությունը և ենթադրում է.*

- *աղբյուրի օրինականություն՝ սպացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մաս),*

- *ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն սպացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով ստաջադրված պահանջները,*

- *դատավարական ձևակերպում՝ սպացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն դատավարական ձևակերպման,*

- *լիազորված սուբյեկտ՝ այն պետք է սրացված լինի սպացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից:*

¹⁴⁶ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԲԴ/0632/01/08, Հմայակ Դավթյանի գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԾԴ/0126/01/12 որոշումները:

Ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմքերը հարակ սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով:

(...)

Ապացույցի արժանահավատության հարկանիշը (...) վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հարկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հարկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հարկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մերասպառելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,

դ) ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հասարարող կամ հերքող հանգամանքների առկայությունը,

ե) նույն տեղեկության արացումն այլ աղբյուրից:

Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների արացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից արացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից արացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել արացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապարասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում դրա պարճատները:

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա: (...)»¹⁴⁷:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- նախաքննության մարմինը Հ.Առաքելյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով¹⁴⁸,

¹⁴⁷ Տե՛ս Վճռարեկ դատարանի՝ Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31.1-րդ և 31.3-րդ կետերը:

¹⁴⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

- Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի ապրիլի 15-ի դատավճռով ամբաստանյալ Հ.Առաքելյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքների կատարման մեջ: Առաջին ատյանի դատարանը, գնահատելով ամբաստանյալ Հ.Առաքելյանի նախաքննական և դատարանում տված ցուցմունքները, արժանահավատ է համարել նրա՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, քանի որ դրանք համապատասխանել են դատաքննությամբ հետազոտված ապացույցներով հաստատված գործի փաստական տվյալներին¹⁴⁹,

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, 2019 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ փաստել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանք կատարելու մեջ Հ.Առաքելյանի մեղավորությունն Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել դատաքննությամբ հետազոտված թույլատրելի, հավաստի և քրեական գործին վերաբերող փոխկապակցված ապացույցների այնպիսի համակցությամբ, որը բավարար է հաղթահարելու Հ.Առաքելյանի անմեղության կանխավարկածը և բացառելու վերջինիս կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքը չկատարելու ողջամիտ հավանականությունը: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ գործում առկա չեն ապացույցներ, որոնք հնարավորություն կտային կասկածի տակ դնելու 2018 թվականի հուլիսի 28-ին որպես կասկածյալ հարցաքննվելիս, 2018 թվականի հուլիսի 28-ին և օգոստոսի 28-ին որպես մեղադրյալ հարցաքննվելիս Հ.Առաքելյանի տված ցուցմունքի ճշմարտացիությունը, հետևաբար՝ նաև արժանահավատությունը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ անհիմն են բողոքաբերի այն պնդումները, որ Առաջին ատյանի դատարանը հենց այդ ցուցմունքներով է հաստատված համարել Հ.Առաքելյանին առաջադրված մեղադրանքը, քանի որ վերջինիս առաջադրված մեղադրանքում նշված փաստական հանգամանքները, բացի Հ.Առաքելյանի վերոնշյալ ցուցմունքից, հիմնավորվել են նաև Առաջին ատյանի դատարանի կողմից վկայակոչված մյուս ապացույցներով, որոնցով ըստ էության չեն հերքվում Հ.Առաքելյանի նախաքննական ցուցմունքներում նկարագրված փաստական հանգամանքները: Վերաքննիչ դատարանը փաստել է, որ նշված ապացույցների անթույլատրելիության մասին բողոքաբերը վերաքննիչ բողոքում չի նշել այնպիսի արձանագրված փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կտային հաստատված համարելու, որ Հ.Առաքելյանը նախաքննական ցուցմունքները տվել է հարկադրանքի կամ ապօրինի ազդեցության արդյունքում¹⁵⁰:

21. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 18-19.1.-րդ կետերում մեջբերված իրավադրույթների

¹⁴⁹ Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

¹⁵⁰ Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

ու արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքի վերաբերյալ Հ.Առաքելյանի նախաքննական խոստովանական ցուցմունքները թույլատրելի, ապա նաև՝ արժանահավատ համարելիս, և մեղադրական դատական ակտերի հիմքում դնելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել առանցքային նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ: Մասնավորապես, սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում Հ.Առաքելյանի նախաքննական խոստովանական ցուցմունքների թույլատրելիությունը և արժանահավատությունը պետք է գնահատվեր այդ ցուցմունքների ձևավորման պայմանների համակողմանի ուսումնասիրման տեսանկյունից, որոնք ողջամտորեն չէին կարող հաշվի չառնվել այդ ցուցմունքների թույլատրելիության, ապա՝ նաև արժանահավատության գնահատման ընթացքում:

Այսպես, թեև Վերաքննիչ դատարանը նշել է, որ բացակայում են փաստական տվյալներ այն մասին, որ Հ.Առաքելյանը նախաքննական ցուցմունքները տվել է հարկադրանքի կամ ապօրինի ազդեցության արդյունքում, սակայն անդրադարձ չի կատարվել հետևյալ հանգամանքներին.

- Հ.Առաքելյանի՝ որպես կասկածյալ՝ սկզբնական, իր մեղավորությունը հերքող նախաքննական ցուցմունքներին հաջորդել են ոստիկանության աշխատակիցների կողմից երեք օր անընդմեջ անցկացված «հարցազրույցները», որոնցից անմիջապես հետո Հ.Առաքելյանը տվել է իր մեղքն ընդունող խոստովանական ցուցմունքներ¹⁵¹: Մասնավորապես, Հ.Առաքելյանի կողմից որպես կասկածյալ հարցաքննվելիս՝ տրված ցուցմունքներում հափշտակության կատարումը հերքելուց անմիջապես հետո՝ երեք օր անընդմեջ (2018 թվականի հուլիսի 26-ին, 27-ին և 28-ին) նրան են այցելել ՀՀ ոստիկանության աշխատակիցներ՝ «հարցազրույցներ» ունենալու համար: Ընդ որում, այցելությունները կատարել են ՀՀ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնատար անձինք՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետը, Տարոնի բաժնի պետը և քրեական հետախուզության բաժանմունքի պետը¹⁵²,

- Հ.Առաքելյանը ոստիկանության աշխատակիցների կողմից երեք օր անընդմեջ անցկացված «հարցազրույցների» ընթացքում եղել է անազատության մեջ՝ գտնվելով ձերբակալվածների պահման վայրում¹⁵³,

- իր մեղքն ընդունող խոստովանական ցուցմունքներ տալու նախաձեռնությամբ հանդես է եկել Հ.Առաքելյանը՝ ձերբակալվածների պահման վայրից հանցանքն իր կողմից կատարելու վերաբերյալ գրավոր դիմում հասցեագրելով վարույթն իրականացնող մարմնին և հայտնելով, որ ցանկանում

¹⁵¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ, 8-րդ, 10.1-րդ, 12-րդ կետերը:

¹⁵² Տե՛ս սույն որոշման 7-րդ, 9-րդ, 11-րդ կետերը:

¹⁵³ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

է դրա շուրջ լրացուցիչ ցուցմունք տալ¹⁵⁴: Ընդ որում, հատկանշական է, որ նշված դիմումի վրա առկա չէ որևէ դրոշմ, կից բացակայում է նաև որևէ ուղեկցական գրություն, որը հնարավորություն կընձեռեր պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես է այն հայտնվել վարույթն իրականացնող քննիչի տրամադրության տակ,

- ՀՀ ոստիկանության աշխատակիցների «հարցազրույցներին» անմիջապես հաջորդել է որպես կասկածյալ, այնուհետև՝ նաև որպես մեղադրյալ՝ Հ.Առաքելյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ամբողջությամբ իր մեղքն ընդունող խոստովանական ցուցմունքներ տալը¹⁵⁵,

- Հ.Առաքելյանի կողմից իրեն մեղավոր ճանաչելուց և խոստովանական ցուցմունք տալուց անմիջապես հետո՝ նախաքննության մարմինը 2018 թվականի հուլիսի 28-ին մեղադրյալ **Հ.Առաքելյանին ազատել է արգելանքից և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել չհեռանալու մասին ստորագրությունը**¹⁵⁶,

- Հ.Առաքելյանը քրեական գործի նախաքննության ընթացքում և ըստ այդմ՝ նաև ՀՀ ոստիկանության աշխատակիցների այցելությունների ընթացքում, **չի ունեցել պաշտպան**: Այս առումով Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում վկայակոչել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ մի շարք գործերով ձևավորված դիրքորոշումն այն մասին, որ փաստաբանի հասանելիության ապահովումը ոստիկանությունում արգելանքի տակ պահվող կասկածյալների խոցելիության կարևոր հակակշիռ է, որը հիմնարար երաշխիք է ընդդեմ ոստիկանության կողմից կասկածյալների նկատմամբ հարկադրանքի կիրառման և անթույլատրելի վերաբերմունքի դրսևորման, և նպաստում է արդարադատության սխալների կանխարգելմանը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակների իրագործմանը, մասնավորապես՝ «զենքերի հավասարությանը» քննությունն իրականացնող կամ քրեական հետապնդման մարմինների և մեղադրյալի միջև¹⁵⁷:

Վերոնշյալ հանգամանքների համակողմանի գնահատման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք ողջամտորեն կասկածի տակ են դնում Հ.Առաքելյանի՝ նախաքննական խոստովանական ցուցմունքների թույլատրելիությունը, ապա նաև արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով տեղի ունեցած վերոնշյալ հանգամանքների ժամանակագրական հաջորդականությունը, անկողմնակալ դիտորդի տեսանկյունից, ստվերում

¹⁵⁴ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

¹⁵⁵ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ, 12-րդ կետերը:

¹⁵⁶ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

¹⁵⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Salduz v. Turkey* գործով 2008 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36391/02, կետեր 53-54, *Ibrahim and others v. The United Kingdom* գործով 2016 թվականի սեպտեմբերի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 50541/08, 50571/08, 50573/08 և 40351/09, կետ 255, *Simeonovi v. Bulgaria* գործով 2017 թվականի մայիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 21980/04, կետ 112:

են Հ.Առաքելյանի՝ նախաքննական խոստովանական ցուցմունքների վստահելիությունն ու ճշգրտությունը: Նման պայմաններում, ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս, մինչ Հ.Առաքելյանի նախաքննական խոստովանական ցուցմունքները՝ որպես վերջինիս մեղքը հիմնավորող փաստական տվյալներ դիտարկելը, պետք է պատշաճ իրավական գնահատականի արժանացնելին դրանք ձեռքբերելուն նախորդող և հաջորդող հանգամանքների համակցությունը, որոնք հնարավորություն կտային պատշաճ երաշխավորելու վարույթի արդարացիությունը և ըստ այդմ՝ նաև ապահովելու Հ.Առաքելյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքը: Այս համատեքստում, ստորադաս դատարանները պետք է ձեռնարկելին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն, այդ թվում՝ համապատասխան այցելությունները կատարած ոստիկաններին, անհրաժեշտության դեպքում՝ նաև ձեռքակալվածների պահման վայրի աշխատակիցներին հարցաքննելու և Հ.Առաքելյանի նախաքննական ցուցմունքների ձեռքբերման պայմանները ստուգելու ուղղությամբ:

22. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը՝ որպես իրավակիրառ պրակտիկայի միասնականությունն ապահովող մարմին, անհրաժեշտ է համարում նաև սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում անդրադառնալ ոստիկանության աշխատակիցների կողմից, քրեական գործով ընթացող նախաքննության պայմաններում, արգելանքի տակ գտնվող անձի հետ «*օպերատիվ հարցազրույց*» և «*հարցազրույց*» իրականացնելու իրավաչափությանը:

Մասնավորապես, սույն գործով ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի պետը երեք անգամ՝ 2018 թվականի հուլիսի 26-ին, 27-ին և 28-ին, դիմել է վարույթն իրականացնող մարմնին՝ իր և ոստիկանության Լոռու մարզային վարչության այլ պաշտոնյաների (Լոռու մարզային վարչության պետ, Տարոնի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ)՝ ձեռքակալվածներին պահելու վայր մուտք գործելու և Հ.Առաքելյանի հետ «*օպերատիվ հարցազրույց*» և «*հարցազրույց*» ունենալու թույլտվություն ստանալու համար¹⁵⁸:

Նշվածի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դրանք անցկացնելու թույլտվություն է հայցվել քննիչից, ով նաև չի առարկել, այն դեպքում, երբ «*օպերատիվ հարցազրույց*» և «*հարցազրույց*» նախատեսված չեն որպես օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ կերպ՝ «*օպերատիվ հարցազրույց*» և «*հարցազրույց*» իրականացնելու իրավասության իրավական հիմքեր նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ոստիկանությունը չունի այդպիսի իրավասություն:

Նման պայմաններում, մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարում ձեռքակալված

¹⁵⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ, 9-րդ, 11-րդ կետերը:

անձանց հետ ոստիկանության աշխատակիցների կողմից այդպիսի միջոցառումների իրականացման պրակտիկան՝ հաշվի առնելով նաև այն, որ անձի նկատմամբ վատ վերաբերմունքի և վերջինիս խոցելիությունն ու իրավունքների չապահովման ռիսկն ավելի մեծ է հենց գործի քննության սկզբնական փուլում¹⁵⁹, ինչի մասին նշել են նաև՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն¹⁶⁰ և Միավորված ազգերի կազմակերպության՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն՝ Հայաստանի վերաբերյալ 4-րդ պարբերական գեկույցի եզրափակիչ դիտարկումներում¹⁶¹:

23. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առանց վերոնշյալ հանգամանքներին անդրադառնալով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքի կապակցությամբ Հ.Առաքելյանի՝ նախաքննական խոստովանական ցուցմունքները որպես թույլատրելի, ապա՝ նաև արժանահավատ համարելը, դրանք անվերապահորեն՝ որպես Հ.Առաքելյանի մեղքը հիմնավորող փաստական տվյալներ օգտագործելը, եղել է ոչ իրավաչափ՝ հանգեցնելով վարույթի արդարացիության և ըստ այդմ՝ նաև Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

24. Վերոնշյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Հ.Առաքելյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքի վերաբերյալ նախաքննական խոստովանական ցուցմունքները որպես այն հաստատող ապացույցներ օգտագործելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

25. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք և ելնելով *Միսիթար Էրոյանի և այլոց* գործով արտահայտված դիրքորոշումից առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանները չունեն բացարձակ բնույթ և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այնի, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում¹⁶², անհրաժեշտ է գտնում քննարկման առարկա դարձնել ամբաստանյալ Հ.Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը՝ քրեական

¹⁵⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ալբերտ Հակոբջանյանի և Գագիկ Կարապետյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0172/11/17 որոշման 22-րդ կետը:

¹⁶⁰ Տե՛ս Preventing police torture and other forms of ill-treatment – reflections on good practices and emerging approaches, 28th General Report of the CPT, CPT/Inf(2019)9-part, April 26, 2019, կետ 64:

¹⁶¹ Տե՛ս Committee against Torture, Concluding observations on the fourth periodic report of Armenia, CAT/C/ARM/CO/4, Adopted by the Committee at its fifty-ninth session (7 November-7 December 2016), կետ 17:

¹⁶² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Միսիթար Էրոյանի և այլոց* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0211/01/10 որոշումը:

պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով դադարեցնելու հարցը:

26. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ իրավական հարցը* հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Հրաչ Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

6) *անցել են վաղեմության ժամկետները (...):*

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկարմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիրավորությանը կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (...):*

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հերկյալ ժամկետները.*

1) *երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.*

(...):

2. *Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):*

4. *Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից (...):*

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Ապօրինի կերպով գազային, սառը կամ ներողական զենք կրելը՝*

պարժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապարիկից վեցհարյուրապարիկի չափով, կամ կարանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

28. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հ.Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով մեղազարկված արարքն ավարտվել է **2018 թվականի հուլիսի 25-ին**¹⁶³,

¹⁶³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

- **2019 թվականի հունվարի 17-ին** Հ.Առաքելյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհետանալու մասին ստորագրությունը փոփոխվել է կալանավորմամբ և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում՝ դատաքննությունից թաքնվելու և գտնվելու վայրը հայտնի չլինելու հիմքով և վերջինս **2019 թվականի հունվարի 19-ին** կալանավորվել է¹⁶⁴: Այսինքն՝ Հ.Առաքելյանը սույն գործով վարույթի ընթացքում քննությունից խուսափել է 3 օր ժամկետով,

- ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով որակված՝ Հրաչ Առաքելյանին մեղսագրված արարքը կատարելու մեջ վերջինիս մեղավորությունը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է **2019 թվականի ապրիլի 15-ին**¹⁶⁵, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել **2019 թվականի նոյեմբերի 18-ին**¹⁶⁶: Նշված որոշման դեմ ամբաստանյալ Հրաչ Առաքելյանի պաշտպան Շ.Շահինյանը բերել է վճարել բողոք, որը Վճարելի դատարանի **2020 թվականի հունիսի 1-ի** որոշմամբ ընդունվել է վարույթ¹⁶⁷:

Վերոշարադրյալից բխում է, որ Հրաչ Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով մեղսագրված արարքի՝ որպես ոչ մեծ ծանրության հանցանքի համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկանյա ժամկետը (քննությունից խուսափելու 3-օրյա ժամկետի հաշվառմամբ) լրանալու օրվա՝ 2020 թվականի հուլիսի 28-ի դրությամբ վերջինիս նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել:

29. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 27-րդ կետում վկայակոչված իրավադրույթների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Հ.Առաքելյանի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշման կայացման օրվա՝ **2021 թվականի փետրվարի 12-ի** դրությամբ Հ.Առաքելյանին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն արդեն իսկ անցել է:

Նման պայմաններում, հաշվի առնելով, որ այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը¹⁶⁸, ուստի Վճարելի դատարանը

¹⁶⁴ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը, քրեական գործ, հատոր 2, թերթեր 93-97:

¹⁶⁵ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

¹⁶⁶ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

¹⁶⁷ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

¹⁶⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Վճարելի դատարանի՝ *Ասահիպ Սաղաթելյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԳ5/0022/01/10 որոշումը, *Սիրաժ Զամբարյանի և այլոց* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԳ/0055/01/11 որոշումը, *Հրանյա Մազմանյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԳ/0121/11/14 որոշումը, *Ֆարիդա Ավագիսյանի* գործով 2017

գտնում է, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

30. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար, որի պայմաններում կարող է ապահովվել քրեական գործի լիարժեք ծավալով քննությունը:

Նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի Հ.Առաքելյանի նախաքննական խոստովանական ցուցմունքների ձեռքբերման պայմանները ստուգելու ուղղությամբ և գնահատի դրանց թույլատրելիությունը, ապա՝ նաև արժանահավատությունը և հանգի համապատասխան հետևության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում Հ.Առաքելյանի մեղավորության վերաբերյալ:

Մինևույն ժամանակ, Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով ստորադաս դատարանների դատական ակտերը պետք է բեկանել և վերջինիս նկատմամբ այդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ, սույն որոշմամբ արձանագրված խախտումների պայմաններում Վճարելի դատարանը զրկված է բողոքաբերի՝ սույն որոշման 15.2-րդ կետում նշած փաստարկները քննարկելու և դիրքորոշում արտահայտելու հնարավորությունից:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճարելի դատարանը գտնում է նաև, որ դատավարության տվյալ փուլում չհեռանալու մասին ստորագրությունը կարող է լինել պատշաճ երաշխիք՝ ամբաստանյալ Հ.Առաքելյանի՝ ազատության մեջ գտնվելու դեպքում նրա հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծը չեզոքացնելու համար: Ուստի, Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պետք է փոփոխել չհեռանալու մասին ստորագրությամբ՝ Հ.Առաքելյանին անհապաղ

թվականի ապրիլի 12-ի թիվ ԱԿԴ2/0016/01/14 որոշումը, *Անդրանիկ Գրիգորյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումը:

10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ/0114/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան Է.ԱՂԱԶԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 12-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վահան Ֆյոդորի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2011 թվականի մարտի 23-ին Ռուսաստանի Դաշնության Ներքին գործերի նախարարության Տոմսկի մարզի վարչությունում ՌԴ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասով հարուցվել է թիվ 2011/610 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2011 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ Վահան Սարգսյանը ՌԴ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ և նույն օրվա մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2011 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ Վ.Սարգսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Նախաքննության մարմնի՝ 2011 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ Ռ-Դ քրեական դատավարության օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա քրեական գործի վարույթը կասեցվել է:

2016 թվականի սեպտեմբերի 15-ին Վ.Սարգսյանը հայտնաբերվել է ՀՀ Միսիան քաղաքում, իսկ նույն թվականի նոյեմբերի 15-ին քրեական գործի վարույթը վերսկսվել է:

2017 թվականի հուլիսի 10-ին թիվ 2011/610 քրեական գործը քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ Ռ-Դ-ից ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն, որը հուլիսի 24-ին ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչություն:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ թիվ 2011/610 քրեական գործին շնորհվել է 51102217/2011/610 համարը, և կատարվել է նախաքննություն:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշմամբ Վ.Սարգսյանի կողմից կատարված արարքը՝ նախատեսված Ռ-Դ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասով, համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասին:

2018 թվականի մարտի 14-ին Վ.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մարտի 14-ի որոշմամբ Վ.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով: 2018 թվականի նոյեմբերի 1-ին Վ.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով:

2018 թվականի նոյեմբերի 8-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի դատավճռով՝ դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Վ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 3 (երեք) տարի ժամկետով: Պատիժը կրելու սկիզբը հաշվվել է նրան փաստացի արգելանքի վերցնելու օրվանից:

3. Ամբաստանյալ Վ.Սարգսյանի պաշտպան Ռ.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի մայիսի 31-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի

7-ի դատավճիռը բեկանել և փոփոխել՝ ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով պատիժ նշանակելով ազատազրկում՝ 4 (չորս) տարի 8 (ութ) ամիս ժամկետով՝ զրկելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 3 (երեք) տարի ժամկետով: Կիրառվել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2018 թվականի նոյեմբերի 1-ի օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը, և ամբաստանյալն ազատվել է ազատազրկման ձևով նշանակված՝ 4 (չորս) տարի 8 (ութ) ամիս ժամկետով հիմնական պատժից:

Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

5. Ամբաստանյալ Վ.Սարգսյանի պաշտպան Է.Աղաջանյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան, որով խնդրել է օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ մերժելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը:

Դատավարության այլ մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Վահան Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «2011 թվականի մարտի 12-ին ժամը 19:00-ի սահմաններում, չունենալով տրանսպորտային միջոց շահագործելու իրավունքը հասարակող փաստաթղթեր, քաղաքացիական պարասիսանսարվության պարտադիր սպահովագրության սպահովագրական վկայական, վարելով Սեյրան Գևորգյանին պարկանոց Տոյոտա Պրոբոքս մակնիշի 0 595 HH 70 պերհամարանիշի ավտոմեքենան, Ելիզարովի փողոցով Տունկ քաղաքի Արոյունի փողոցից երթևեկել է Կրասնոսարմեյսկ փողոցի ուղղությամբ: Երթևեկելով իր առաջին շարքով տեսել է իր առջևից համընթաց ուղղությամբ երթևեկող ավտոմեքենա և խախտելով ՌԴ ՃԵԿ 10.1-րդ կետի 1-ին մասի պահանջները՝ այսինքն, գերազանցելով րվյալ ճանապարհահատվածի համար նախատեսված առավելագույն արագությունը, բացի այդ, խախտելով ՌԴ ՃԵԿ-ի 1.3-րդ և 1.5-րդ կետի պահանջները, համընթաց ընթացող «Կամազ» մակնիշի բեռնատարից առաջ անցնելու նպատակով կիրառել է րեղավորելու վրանգավոր մանևր դեպի ձախ, որտեղ է եկել իր երթևեկության երկրորդ շարք, որտեղ բախվել է Կոնստանտին Միխայելի Ֆեդոլովի վարած Նիսան Տեանսս մակնիշի M 549 OX 70 հաշվառման համարանիշի ավտոմեքենային, այնուհետև

չկատավարելով ավտոմեքենան, խախտելով ՌԴ ՃԵԿ-ի 8.1-րդ և 8.4-րդ կետերի պահանջները՝ դուրս է եկել հանդիպակաց երթևեկելի գոյրի և ուղեմասի իր երթևեկության ընթացքով ձախ եզրից 4.5 մետր հանդիպակաց երթևեկության գոյրու և Տոմսկ քաղաքի Ելիզարովիխի փողոցի 4-րդ շենքի անկյունից 5.6 մետր հեռավորության վրա բախվել է իր երթևեկելի գոյրով երթևեկող Բգոր Անսարովիի Միրոնովի վարած Տոյոտա Կորոնաս մակնիշի K 550 BE 70 պերհամարանիշի ավտոմեքենայի առաջամասին, որի հետևանքով, վերջինիս ուղևորներ 2002 թվականին ծնված Վիկտորիա Եվգենիի Վոլոկիտինայի, 2004 թվականին ծնված Վերոնիկա Ալեքսեյի Վոլոկիտինայի և Սերգեյ Վասիլի Նիկիտինի առողջությանն անզգուշությամբ պարճառել կյանքին վրանգ սպառնացող ծանր վնաս, իսկ նույն ավտոմեքենայի առջևի աջ նստարեղի ուղևորուհի Իրինա Վոլոկիտինային և իր վարած ավտոմեքենայի սեփականատեր, ուղևոր Սեյրան Սերգեյի Գևորգյանին անզգուշությամբ պարճառել մահ»¹⁶⁹:

7. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի փետրվարի 7-ի դատավճռով արձանագրել է. «Հիմնվելով գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների վրա, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վահան Ֆյոդորի Սարգսյանը կատարել է հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով և որակվում է որպես ավտոմեքենա վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտել, որն անզգուշությամբ առաջացրել է երկու մարդու մահ:

Այսինքն, ամբաստանյալի կատարած արարքը նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմնավորված է, մեղսագրվող արարքի նկատմամբ քրեական օրենքի որակումը՝ ճիշտ, որով էլ նա ենթակա է պարասխանատվության և պարժի:

Պարժի րեասկը և չափը որոշվում են հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող րվյալներով, այդ թվում՝ պարասխանատվությունը և պարժի մեղմացող կամ ծանրացող, ինչպես նաև գործի ողջ հանգամանքներով:

Պարժի նպարակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է, եթե հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվում է այնպիսի պարժի, որն անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

Ամբաստանյալի նկատմամբ պարժի սահմանելիս, դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի վերը նշված հոդվածների համապարասխան հաշվի է առնում նրա կատարած հանցանքի հանրության համար վրանգավորության աստիճանը, բնույթը, նրա ինքնությունը և գործի ողջ հանգամանքները:

Ամբաստանյալ Վահան Սարգսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով կատարած արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն դասվում է միջին ծանրության հանցագործությունների

¹⁶⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 120-135:

շարքին ու ընդգրկված է հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գլխում:

Ամբաստանյալի պարասխանատվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Ամբաստանյալի պարասխանատվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքներ են պարիժ նշանակելու պահին նրա ինսամբի փակ մինչև 14 փարեկան երկու երեխայի (Մարիաննա Վահանի Սարգսյան՝ ծնված 06.09.2007 թվականին և Էդիկ Վահանի Սարգսյան՝ ծնված 04.08.2009 թվականին) առկայությունը, կատարած հանցագործության համար իրեն լիովին մեղավոր ճանաչելը»¹⁷⁰:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության այն մասին, որ ամբաստանյալ Վահան Սարգսյանի նկարմամբ պարիժ նշանակելիս Դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 15 հոդվածի պահանջները:

Այսպես ըստ գործի նյութերի, իրեն մեղսագրված արարքը ամբաստանյալը կատարել է ՌԴ-ում: Երան մեղադրանք է առաջադրվել ՌԴ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասով, որի համար նախատեսված է քրեական պարասխանատվություն՝ առավելագույնը 7 փարի ժամկետով ազատազրկում:

Նրա կատարած արարքը հետագայում համապարասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասին, որի համար նախատեսված է քրեական պարասխանատվություն ազատազրկում 4-10 փարի ժամկետով:

Սույն գործով ամբաստանյալի նկարմամբ պարիժ նշանակելիս և գործի արագացված քննության պայմաններում պարժաչափ հաշվարկելիս Դատարանը պետք է ղեկավարվեր ՀՀ քրեական օրենսգրքի 15 հոդվածի իրավակարգավորումներով որպես առավել խիստ պարիժ հիմք ընդունելով ՌԴ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիայով նախատեսված պարժի վերին շեմը՝ այսինքն 7 փարի ժամկետով ազատազրկումը, ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պարժի վերին շեմը՝ 10 փարի ժամկետով ազատազրկումը, քանի որ ՌԴ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիան ավելի բարենպաստ է ամբաստանյալի համար:

Իսկ նման իրավակարգավորումներով ղեկավարվելու պարագայում ամբաստանյալ Վահան Սարգսյանի նկարմամբ ազատազրկման ձևով նշանակված պարիժը չի կարող գերազանցել 4 փարի 8 ամիս ազատազրկումը, որը կազմում է 7 փարվա ազատազրկման 2/3-ը:

Վերաքննիչ դատարանի համար ընդունելի չէ դատախազի փաստարկն այն մասին, թե դատավճիռը բեկանելու հիմք չկա, քանի որ ի վերջո ամբաստանյալի նկարմամբ նշանակված պարիժը չի գերազանցում 7 փարվա ազատազրկման շեմը:

¹⁷⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 118-137:

Վերը նշված դատողությունների լույսի ներքո անդրադառնալով ամբաստանյալի նկարումս՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018թ. նոյեմբերի 1-ի թիվ ՀՕ-414-Ն օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենքի) կիրառման հարցին, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Վահան Սարգսյանը Համաներման մասին օրենքի կիրառման ուժով ենթակա է ազատման ազատագրվման ձևով նշանակված պարժից»¹⁷¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի կարծիքով ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությամբ օրենսդիրը սահմանել է այլ պետությունում հանցանք կատարած անձանց նկատմամբ նշանակվող պատժի առավելագույն չափը՝ սահմանափակելով օտարերկրյա պետությունում տվյալ արարքի համար նախատեսված պատժից ավելի խիստ պատիժ նշանակելու հնարավորությունը: Մինչդեռ դատական քննության արագացված կարգ կիրառելու պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «առավելագույն պատիժը» որպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ հանցագործության համար նախատեսված սանկցիայի վերին շեմ դիտարկելը չի բխում պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից: Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը միայն պահանջ է դնում, որ պատիժը չի կարող գերազանցել օտարերկրյա այն պետության օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը, որի տարածքում կատարվել է հանցանքը, ինչն ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանի կողմից չի խախտվել:

9.1. Բողոքաբերը նշել է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում պատիժ նշանակելու կանոնի կիրառմամբ առավել խիստ պատժի երկու երրորդը հաշվարկելիս այլ պետությունում տվյալ արարքի համար նախատեսված առավելագույն պատժի չափը հիմք ընդունելու դատական պրակտիկան միասնական չէ, որպիսի պայմաններում բարձրագույն դատական ատյանի մեկնաբանությունների կարիքն առավել քան առկա է: Այս առումով պետք է հստակ չափանիշներ սահմանվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կանոնը կիրառելիս որպես պատժաչափի վերին շեմ ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առավելագույն պատիժը հիմք ընդունելու համար:

¹⁷¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 57-80:

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի դատավճիռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ դատական քննության արագացված կարգի կիրառման պայմաններում ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես առավել խիստ պատիժ պետք է հիմք ընդունվի ՌԴ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիայով նախատեսված պատժի վերին շեմը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հայասրանի Հանրապետության և այլ պետությունների փարածքում անձի կողմից հանցանք կատարելու դեպքում նրա պարասիսանարվությունը վրա է հասնում Հայասրանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե անձը քրեական պարասիսանարվության է կանչվել Հայասրանի Հանրապետության փարածքում, և եթե Հայասրանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ»:

ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայասրանի Հանրապետության փարածքից դուրս հանցանք կատարած Հայասրանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայասրանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են քրեական պարասիսանարվության Հայասրանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք չեն դատապարտվել այլ պետությունում: Նշված անձանց դատապարտելիս պարտիժը չի կարող գերազանցել օրարերկրյա այն պետության օրենքով նախատեսված պարտի վերին սահմանը, որի փարածքում կատարվել է հանցանքը»:

13. Մեջբերված քրեաիրավական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Գարեգին Հովսեփյանի* վերաբերյալ գործով որոշման շրջանակներում՝ արձանագրելով, որ տարածության մեջ քրեական օրենքի գործողության կանոնները սահմանող շարադրված նորմերից բխում է, որ օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարած անձինք, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները (Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք) ենթակա են պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանք քրեական պատասխանատվության են կանչվել Հայաստանի Հանրապետության տարածքում (չեն դատապարտվել այլ պետությունում): Այս դեպքում քրեական պատասխանատվության հարցը լուծելիս հաշվի է առնվում նաև այն պետության օրենսդրությունը, որի տարածքում կատարվել է հանցավոր ոտնձգությունը, և նման անձանց

նկատմամբ չի կարող նշանակվել տվյալ օտարերկրյա պետության օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը գերազանցող պատիժ¹⁷²:

14. Վերահաստատելով և զարգացնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տարածության մեջ քրեական օրենքի գործողության քաղաքացիության սկզբունքից բխում է, որ այլ պետության տարածքում հանցանք կատարած անձանց նկատմամբ (Հայաստանի Հանրապետության քաղաքացու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի), ովքեր պատասխանատվության են կանչվել Հայաստանի Հանրապետության տարածքում, ամբողջությամբ կիրառելի են ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումները, իսկ օտարերկրյա պետության քրեական օրենսդրությունը հաշվի է առնվում միայն այն առումով, որ անձի նկատմամբ նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել տվյալ պետության օրենսդրությամբ այդ արարքի համար նախատեսված պատժի վերին սահմանը: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ *«ենթակա են քրեական պարասխանարվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով»* արտահայտությունը ենթադրում է, որ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս, պատիժ նշանակելիս, պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս, ինչպես նաև քրեաիրավական այլ հետևանքները որոշելիս ամբողջովին գործում են ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանված իրավադրոյթները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասում ամենևին խոսք չի գնում անձի համար առավել արտոնյալ կամ բարենպաստ նորմը կիրառելու մասին. ՀՀ քրեական օրենսդրությունը կիրառելու պայմանի միակ բացառությունն օտարերկրյա պետության քրեական օրենսգրքով կոնկրետ հանցավոր արարքի համար սահմանված պատժի առավելագույն չափն է, եթե, իհարկե, այն ավելի մեղմ է, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատժաչափը:

14.1. Վերոշարադրյալի լույսի ներքո անդրադառնալով պատիժ նշանակելու հատուկ կանոնների կիրառման առանձնահատկություններին (օրինակ՝ չավարտված հանցագործությունների, հանցագործությունների ռեցիդիվի կամ արագացված դատաքննության դեպքում)՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորումները, արձանագրում է, որ տվյալ դեպքում որպես ելակետ պետք է դիտարկվեն ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված կոնկրետ պատժատեսակի նվազագույն և առավելագույն չափերը՝ այն պայմանի պահպանմամբ, որ անձի նկատմամբ նշանակվող վերջնական պատիժը չպետք է գերազանցի այն պետության

¹⁷² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գաբրիել Հովսեփյանի* վերաբերյալ գործով 2012 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ ԵԷԴ/0033/15/09 որոշման 19-րդ կետը:

օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը, որի տարածքում կատարվել է հանցանքը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի փետրվարի 7-ի դատավճռով, արագացված կարգի կիրառմամբ, ամբաստանյալ Վ.Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով, և պատիժ է նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 3 (երեք) տարի ժամկետով¹⁷³:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատավճիռը մասնակիորեն՝ պատժի մասով բեկանել և փոփոխել է՝ ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով պատիժ է նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 8 (ութ) ամիս ժամկետով՝ զրկելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 3 (երեք) տարի ժամկետով:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ ընդգծել է, որ ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի պահանջները: Այսպես՝ Առաջին ատյանի դատարանը պետք է որպես առավել խիստ պատիժ հիմք ընդուներ ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պատժի վերին շեմը՝ 10 (տասը) տարի ժամկետով ազատազրկումը, այլ ՌԴ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն չափը՝ 7 (յոթ) տարի ժամկետով ազատազրկումը, քանի որ այն ամբաստանյալի համար ավելի բարենպաստ է: Իսկ նման իրավակարգավորումներով ղեկավարվելու պարագայում ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը չէր կարող գերազանցել 4 (չորս) տարի 8 (ութ) ամիս ժամկետով ազատազրկումը, որը կազմում է 7 (յոթ) տարվա երկու երրորդը¹⁷⁴:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14.1-րդ կետերում շարադրված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասում օրենսդիրը պարտադիր պահանջ է նախատեսել առ այն, որ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած ՀՀ քաղաքացիներին, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելիս պետք է կիրառվի ՀՀ քրեական օրենսգրքը՝ այն միակ բացառությամբ, որ նշված անձանց նկատմամբ նշանակված պատիժը չի

¹⁷³ Տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը:

¹⁷⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

կարող գերազանցել օտարերկրյա այն պետության օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը, որի տարածքում կատարվել է հանցանքը: Օրենքի նշված պահանջն Առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս չի խախտվել, քանի որ նրա նկատմամբ նշանակված պատիժը չի գերազանցել Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պատժի վերին սահմանը:

Մինչդեռ, Վ.Սարգսյանի նկատմամբ արագացված դատական քննության կանոններով պատժաչափը հաշվարկելիս, Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել ՌԴ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն սահմանը՝ պատճառաբանելով, որ ՌԴ քրեական օրենսդրությունն ամբաստանյալի համար նախատեսում է ավելի բարենպաստ նորմ: Այդպիսով, Վերաքննիչ դատարանը տարածական մեկնաբանություն է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածին, արդյունքում արագացված դատական քննության կանոնների կիրառմամբ պատժաչափի հաշվարկման ընթացքում ՀՀ օրենսդրության հետ մեկտեղ, ամբաստանյալի նկատմամբ կիրառել է նաև ՌԴ քրեական օրենսդրությունը՝ որպես ավելի բարենպաստ նորմ պարունակող, որպիսի հնարավորություն ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածը չի ընձեռում: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածը չի նախատեսում երկու օրենսդրություններից անձի համար ավելի բարենպաստ նորմի միաժամանակյա ընտրություն կատարելու հնարավորություն:

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ դատական քննության արագացված կարգի կիրառման պայմաններում ամբաստանյալ Վ.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես առավել խիստ պատիժ պետք է հիմք ընդունվի ՌԴ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիայով նախատեսված պատժի վերին շեմը, հիմնավոր չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածը, թույլ տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, որը հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Մինևս սույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշումը և օրինական ուժ տալ Վ.Սարգսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության

սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Վահան Ֆյոդորի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 31-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 7-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *արտոագրություն*

Դատավորներ *արտոագրություններ*

11.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/1090/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 19-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 3-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի մարտի 14-ին ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերի, 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերի և 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 58153619 քրեական գործը: 2019 թվականի հունիսի 10-ից թիվ 58153619 քրեական գործի քննությունը շարունակվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչությունում:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ Գագիկ Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք

է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 314-րդ հոդվածի 1-ին մասով: Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ մեղադրյալ Գ.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ Գ.Գևորգյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 314-րդ հոդվածի 1-ին մասով:

2019 թվականի դեկտեմբերի 12-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2020 թվականի հունվարի 31-ի դատավճռով Գ.Գևորգյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 314-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ, նշանակված պատիժները լրիվ գումարելով, վերջնական պատիժ է նշանակվել տուգանք՝ 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Գ.Գևորգյանի նկատմամբ կիրառվել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, և նա ազատվել է նշանակված պատժից: Նույն դատավճռով դատապարտվել է նաև Արամ Բարսեղյանը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2020 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ դատախազի կողմից ներկայացված բողոքը մերժվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունվարի 31-ի դատավճիռը թողնվել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը վճռաբեկ բողոք է բերել: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Բարսեղյանի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ ամբաստանյալ Գ.Գևորգյանի վերաբերյալ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի հունվարի 15-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունվարի 31-ի դատավճռով Գագիկ Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 314-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ «նա ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 208 հրամանով զբաղեցնելով Կուրալի մարզի Հրազդան քաղաքում գրվող «Հրազդանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի, իսկ ՀՀ կառավարության՝ 2011 թվականի մարտի 3-ի թիվ 199-Ն որոշմամբ ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վերակազմակերպումից հետո՝ նշված ՊՈԱԿ-ի իրավահաջորդ «Կուրալի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը, հանդիսանալով պաշտոնատար անձ և օժտված լինելով կազմակերպական-տնօրինչական, վարչարարական գործառնություններով, իրավական ակտերի, այդ թվում՝ կազմակերպության կանոնադրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում ունենալով կազմակերպության ընթացիկ գործունեությունը ղեկավարելու, գույքն ու ֆինանսական միջոցները տնօրինելու, աշխատակիցներին աշխատանքի նշանակելու և ազատելու լիազորություններ, օգտագործելով պաշտոնական դիրքը՝ Արամ Բարսեղյանի կողմից աշխատանքի չհաճախելու պայմաններում կազմակերպության ազատ հաստիքում նրան որպես աշխատակից գրանցելու և աշխատավարձ վճարելու, ինչպես նաև՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելու եղանակով կեղծ փաստաթղթեր կազմելու միջոցով 2011-2016թթ. ընթացքում կատարել է պաշտոնական կեղծիք, ինչպես նաև այլ անձանց հետ հանցակցությամբ՝ իրեն վարսահված ուրիշի խոշոր չափերի գումարի վարկում, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալով.

Գագիկ Գևորգյանը, 2011 թվականի ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնն զբաղեցրած Մհեր Ղազարյանի դրդմամբ, պայմանավորվածություն է ձեռք բերել նրա հետ՝ աշխատանքի չհաճախելու և աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում աշխատավարձ վճարելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի վարորդ Արամ Մանուկի Բարսեղյանին հրամանագրելու «Հրազդանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում որպես աշխատակից: Այնուհետև Արամ Բարսեղյանի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա 2011թ. փետրվարի 1-ի թիվ 288 Ա հրամանով նրան հրամանագրել է «Հրազդանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում որպես վարորդ ու կնքել աշխատանքային պայմանագիր: Դրանից հետո հաստատարված տեղեկացված լինելով Արամ Բարսեղյանի կողմից աշխատանքի չհաճախելու և աշխատանքային պարտականությունները չկատարելու մասին՝ այդ հանգամանքները թաքցնելու և վարկման եղանակով հափշտակություն կատարելու անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, Գագիկ Գևորգյանն իր ստորագրությամբ հաստատել է կազմակերպության

կադրերի գծով Կրեմլի Բրիգադի և Ժամանակավորապես նրան փոխարինող Ժաննա Սյրեհանյանի կազմում՝ Արամ Բարսեղյանի կողմից աշխատանքի ներկայանալու և փաստացի աշխատած ժամանակահատվածի վերաբերյալ կեղծ տեղեկություններ պարունակող՝ պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ աշխատաժամանակի հաշվարկի վերաբերյալ տեղեկագրերն ու դրանք ներկայացրել է վճարման: Հիշյալ փաստաթղթերի հիման վրա կազմակերպության զլխավոր հաշվապահ Ազիզ Բայրաբյանի կողմից յուրաքանչյուր ամիս կատարվել է Արամ Բարսեղյանի աշխատավարձի հաշվարկ, որոնք ներառվել են կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի հաշվարկման ցուցակներում և վճարման հանձնարարագրերում: Այնուհետև Գագիկ Գևորգյանը ստորագրել, կնիքել և վճարման է ներկայացրել հիշյալ փաստաթղթերը, որի արդյունքում Արամ Բարսեղյանն, աշխատանքի չներկայանալու և աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում, 2011թ. փետրվար ամսից 2016թ. մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի՝ «Կուրսքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցներից աշխատավարձի և այլ դրամական բավարարման ձևով սրացել է իր անվամբ հաշվարկված, դուրսգրված և «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունում իր քարտային հաշվեհամարներին փոխանցված խոշոր չափերի՝ 2,515,490 ՀՀ դրամ գումար: ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից 2016 թվականի փետրվար ամսին զբաղեցրած պաշտոնից ազատվելուց հետո Արամ Բարսեղյանը Գագիկ Գևորգյանի նախաձեռնությամբ 2016 թվականի մարտի 1-ին թիվ 9-Ա հրամանով ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Արդյունքում Գագիկ Գևորգյանը Միեր Դազարյանի դրամամբ և Ազիզ Բայրաբյանի, ինչպես նաև՝ միջոցներ տրամադրելու և խոչընդոտ վերացնելու՝ այն է՝ փաստաթղթեր ներկայացնելու, ստորագրելու և գումար սրանալու եղանակով Արամ Բարսեղյանի օժանդակությամբ, վարման միջոցով ՀՀ պետական բյուջեի՝ «Կուրսքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցներից 2011թ. փետրվար ամսից 2016թ. մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում հատկապես է խոշոր չափերի 2,515,490 ՀՀ դրամ գումար, իսկ պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելու և կեղծ փաստաթուղթ կազմելու միջոցով կատարել է պաշտոնական կեղծիք (...)¹⁷⁵:

6. Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով և Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելով, արձանագրել է հետևյալը. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի սանկցիան ունի հետևյալ ձևակերպումը. «պարժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապարիկից հինգհարյուրապարիկի չափով, կամ ազատագրվմանը՝ առավելագույնը՝ չորս տարի ժամկետով՝ որոշակի

¹⁷⁵ Տես քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 42-57:

պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք փարի ժամկետով»:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դատարխագի վերաքննիչ բողոքի պահանջը՝ ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Գևորգյանի մասով, քրեաիրավական օրենքի խնամարով անհրազործելի է, հակառակ դեպքում կարող է նշանակվել պարիժ, որը նախատեսված չէ քրեական օրենքով:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի փրամարանությունը գալիս է փաստելու այն, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելը կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պարիժ կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ հիմնական պարիժ նշանակվի ազատագրվումը (սման պարիժի նշանակումը ոչ միայն արդարության և պարասխանարվության անհարականացման սկզբունքի պահպանման րեսանկյունից հիմնավորված չէ, այլև ընդհանրապես դուրս է վերաքննիչ բողոքի հիմնավորումների շրջանակից):

Այդ հետևությունը Վերաքննիչ դատարանը գալիս է ոչ միայն հաշվի առնելով, որ լրացուցիչ պայմանը նախատեսված «կամ» շաղկապից հետո նշված հիմնական պայմանին ածանցված, այլև վկայակոչելով վերը նշված՝ ՀՀ քրեական օրենսգրքի փրամարանությունը, մասնավորապես՝ նույն օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան ունի հետևյալ ձևակերպումը. «պարժվում է րուզանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսարյուրասպարիկից վեցարյուրասպարիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք փարի ժամկետով կամ առանց դրա, կամ ազատագրվմանը՝ առավելագույնը երեք փարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք փարի ժամկետով կամ առանց դրա»: Այսինքն՝ օրենսդիրը մի դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 199-րդ հոդված) լրացուցիչ պարիժը կրկնում է յուրաքանչյուր հիմնական պարիժի մասով առանձին, մեկ այլ դեպքում՝ (ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված) միայն մեկ հիմնական պարիժ՝ ազատագրվման մասով՝ որևէ նշում չկարարելով րուզանքի հետ զուգահեռ լրացուցիչ պարիժ նշանակելու մասին, հետևարար՝ հաշվի առնելով, որ նորմարիվ իրավական սկրում միքքն արարահայրելիս կիրառվել են րարքեր քառեր, րերմիներ, քառակապակցություններ, ուարի խոսքը րարքեր իրավակարգավորումների մասին է:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կարարած անձի նկարմամբ որոշակի պաշտոններ զբաղեցնելը կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պարիժ չի կարող նշանակվել, եթե որպես հիմնական պարիժ է նշանակվել րուզանքը (...)¹⁷⁶:

¹⁷⁶ Տեն քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 57-79:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները, պարտավոր լինելով Գ.Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով որպես պատիժ նշանակված տուգանքի հետ միասին կիրառել պարտադիր լրացուցիչ պատիժը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, չեն կիրառել այն:

Մինչդեռ, ըստ բողոքի հեղինակի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայի ձևակերպումից, ՀՀ քրեական իրավունքի ու քրեական օրենսգրքի տրամաբանությունից բխում է, որ նշված հոդվածի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատիժը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, պարտադիր է կիրառման ինչպես ազատագրկման, այնպես էլ տուգանքի ձևով պատիժ նշանակելիս:

7.1. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի ձևակերպմանը՝ բողոքաբերը նշել է, որ նման ձևակերպում ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի այլ հոդվածի սանկցիայով նախատեսված չէ, ուստի այդ տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում ստացվում է, որ մյուս բոլոր դեպքերում, երբ հոդվածի սանկցիան որպես հիմնական պատիժ նախատեսում է տուգանք և ազատագրկում, իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, ապա որևէ դեպքում տուգանքի հետ միասին չի կարող նշանակվել լրացուցիչ պատիժ, ինչը չի բխում պատիժ նշանակելու սկզբունքներից: Հակառակ դրան, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի այն հոդվածներում, որոնց սանկցիաներով որպես հիմնական պատիժ նախատեսված է տուգանք և ազատագրկում, իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, սանկցիաները ձևակերպված են ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիային համապատասխան:

7.2. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը եզրահանգել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի տրամաբանությունից և պատիժ նշանակելու սկզբունքներից հետևում է, որ այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով որպես հիմնական պատիժ նախատեսված է տուգանք և ազատագրկում, իսկ որպես պարտադիր լրացուցիչ պատիժ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, ապա լրացուցիչ պատժատեսակը վերաբերելի է ինչպես տուգանքին, այնպես էլ ազատագրկմանը: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված տուգանք պատժատեսակի հետ միասին պարտադիր պետք է կիրառվի

նաև լրացուցիչ պատիժը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը:

8. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 3-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու լրացուցիչ պատժատեսակի նշանակման կարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ համանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պատիժ, ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով չի կարող նշանակվել այն դեպքում, երբ որպես հիմնական պատիժ նշանակվել է տուգանք:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. *Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կիրառվում է և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ պատիժ: (...)*

4. *Մեկ հանցագործության համար կարող է նշանակվել միայն մեկ հիմնական պատիժ: Հիմնական պատիժն սույն օրենսգրքով նախատեսված կարգով և դեպքերում կարող է միացվել մեկ կամ մի քանի լրացուցիչ պատիժ:*

5. *Փոյքի բռնագրավումը և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պատիժներ կարող են նշանակվել միայն սույն օրենսգրքի Հայրուկ մասով նախատեսված դեպքերում»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածի համաձայն՝ «1. *Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելը, իսկ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կատարված հանցանքի բնույթի հետ կապված որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելելն է:*

(...)

3. *Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող է նշանակվել այն դեպքում, երբ*

դատարանը, ելնելով հանցավորի պաշտոնավարության կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու ժամանակ նրա կատարած հանցագործության բնույթից, հնարավոր չի գրնում պահպանել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու նրա իրավունքը:

(...)

4. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարգապահական գումարարկում պահելու, կայանքի կամ որոշակի ժամկետով ազատագրվման հետ միասին որպես լրացուցիչ պարիժ նշանակելիս լրացուցիչ պարժի ժամկետը տարածվում է հիմնական պարիժը կրելու ամբողջ ժամանակի վրա, ընդ որում, լրացուցիչ պարժի ժամկետը հաշվարկվում է հիմնական պարիժը կրելուց հետո: Մնացած դեպքերում լրացուցիչ պարժի ժամկետը հաշվարկվում է դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից»:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու լրացուցիչ պատժատեսակին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի վերաբերյալ որոշման շրջանակում՝ արտահայտելով հետևյալ դիրքորոշումը.

«(...) ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ պարիժները դասակարգվում են հիմնական և լրացուցիչ պարիժների, ընդ որում, օրենքը նախատեսում է դեպքեր, երբ կոնկրետ հանցանք կատարած անձի նկատմամբ կարող է կիրառվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարիժ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքը չի մասնավորեցնում և չի տարբերակում հիմնական և լրացուցիչ պարիժ նշանակելու սկզբունքները և նպատակները, որից հետևում է, որ անկախ այն հանգամանքից, թե անձի նկատմամբ նշանակվում է հիմնական, թե հիմնական և լրացուցիչ պարիժ իրար հետ համակցված, դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է առաջնորդվել քրեական օրենսգրքում ամրագրված պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով (օրինականություն, արդարություն, պարժի անհատականացում, մարդասիրություն) և պարժի նպատակներին հասնելու օրենսդրական կարգադրանքով: Այլ կերպ պարժի նշանակման ընդհանուր սկզբունքներն ու նպատակները հավասարապես վերաբերում են ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարիժներին: Օրենքով սահմանված պարժի նպատակներին հասնելու տեսանկյունից դատարանը, հաշվի առնելով հանցագործության բնույթը, արարքի հանրային վրանգավորության աստիճանը և հանցագործի անձը բնութագրող, պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պետք է նշանակի այնպիսի պարիժ (հիմնական կամ հիմնական և լրացուցիչ), որը կբխի վերոթվարկված չափանիշներից և կապահովի պարժի նպատակների լիարժեք իրացվելիությունը:

(...) [Ո]րոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող է կիրառվել որպես հիմնական կամ լրացուցիչ պարիժ կախված կոնկրետ հոդվածով ամրագրված սանկցիայից:

(...) Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու նպատակներից է՝ կանխել Վճռաբեկ դատարանի կանխագործության հետազոտության հետազոտության հավանականությունը, քանի որ այս պարտավորությունը նշանակվում է հարույ կարգավիճակ ունեցող կամ որոշակի գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանի կիրառումը բխում է այն հանցագործությունների կանխման անհրաժեշտությունից, որոնք այս կամ այն առումով կապված են հանցավորի պաշտոնական դիրքի կամ մասնագիտական կամ այլ գործունեության հետ:

Այլ խոսքով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կիրառվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հարույ մասի նորմի սանկցիայով նախատեսված սահմաններում՝ նպատակ հետապնդելով կանխելու զբաղեցրած պաշտոնից կամ որոշակի գործունեությամբ զբաղվելուց բխող համանման հանցագործությունների կատարման հավանականությունը (...)»¹⁷⁷:

11. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը կրկին փաստում է, որ կատարված հանցավոր արարքի համար լրացուցիչ պատիժ նշանակելիս դատարանը պետք է ղեկավարվի պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, մասնավորապես՝ հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի, հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների ամբողջական գնահատման արդյունքում նշանակի այնպիսի լրացուցիչ պատիժ, որը կհամապատասխանի օրինականության, արդարության և պատժի անհատականացման հիմնարար սկզբունքներին: Միևնույն ժամանակ, հիմնական պատժի հետ զուգակցված լրացուցիչ պատիժը պետք է առավելագույնս ապահովի պատժի նպատակների լիարժեք իրացվելիությունը:

Այսպես՝ լրացուցիչ պատժատեսակներից որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը նախևառաջ ուղղված է հանցագործությունների **կանխարգելման նպատակի իրացմանը**: Մասնավորապես, եթե հանցավոր արարքն իր բնույթով կապված է անձի զբաղեցրած պաշտոնի կամ նրա կողմից իրականացվող մասնագիտական կամ այլ գործունեության հետ, ապա վերոնշյալ լրացուցիչ պատժատեսակի նշանակմամբ էականորեն նվազում է հետագայում վերջինիս կողմից նույնաբնույթ հանցանք կատարելու հավանականությունը: Այլ կերպ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն ունի **կանխարգելիչ նշանակություն** և նպատակ է հետապնդում կանխելու զբաղեցրած պաշտոնից կամ որոշակի գործունեությամբ զբաղվելուց բխող համանման հանցագործությունների կատարման հավանականությունը:

¹⁷⁷ Տե՛ս *Լիլիթ Վարդանյանի և Զարինե Ալվազյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԲԴ/0016/01/14 որոշման 13-14.1-րդ կետերը:

12. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ որպես լրացուցիչ պատժատեսակի իրավական կարգավորումներից ակնհայտ է, որ այն *կարող է նշանակվել ինչպես ազապությունից զրկելու հետ կապված, այնպես էլ զրկելու հետ չկապված պարփոմների հետ զուգակցված*: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասը կարգավորում է քննարկվող լրացուցիչ պատժի գործողության ժամանակահատվածը ոչ միայն ազատությունից զրկելու հետ կապված, այլ նաև ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակների հետ նշանակելիս: Մինևույն ժամանակ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատժատեսակ կարող է նշանակվել միայն քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված դեպքերում: Ընդ որում, այն կարող է նախատեսված լինել *կամ որպես պարտադիր, կամ որպես ֆակուլտատիվ լրացուցիչ պարժատեսակ*:

Որպես ֆակուլտատիվ լրացուցիչ պատժ նախատեսված լինելու դեպքում՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը գտնվում է դատարանի հայեցողության շրջանակներում: Մասնավորապես, եթե դատարանը, պահպանելով պատժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, գալիս է եզրահանգման առ այն, որ ամբաստանյալի նկատմամբ միայն հիմնական պատժ նշանակելով հնարավոր չէ հասնել պատժի նպատակների իրագործմանը, ապա հոդվածի սանկցիայով նախատեսված դեպքերում պետք է նշանակի նաև լրացուցիչ պատժ, որը կապահովի պատժի անհատականացման սկզբունքի արդյունավետ իրացումը և ամբաստանյալի կողմից տվյալ բնույթի հանցավոր վարքագիծ դրսևորելու հետագա հնարավոր ռիսկերի չեզոքացումը¹⁷⁸:

Մինչդեռ, որպես պարտադիր լրացուցիչ պատժ նախատեսված լինելու դեպքում օրենսդիրը, հաշվի առնելով կոնկրետ հանցագործության բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, արդեն իսկ օրենսդրորեն ամրագրել է, որ պատժի նպատակներին հասնելու և զբաղեցրած պաշտոնից կամ որոշակի գործունեությամբ զբաղվելուց բխող համանման հանցանքների կատարման հավանականությունը կանխելու համար անհրաժեշտ է պարտադիր կերպով անձին զրկել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից: Այլ կերպ՝ քննարկվող պատժատեսակը որպես պարտադիր լրացուցիչ պատժ դիտարկելով՝ օրենսդիրը հիմք է ընդունել կոնկրետ հանցագործության բնույթը, ինչպես նաև հետագայում տվյալ անձի կողմից նույնաբնույթ հանցավոր արարքների կատարումը բացառելու անհրաժեշտությունը, այլ ոչ թե տվյալ հանցագործության համար նշանակված հիմնական պատժի տեսակը:

¹⁷⁸ Տե՛ս *Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի* վերաբերյալ գործով Վճռարենկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԲԳ/0016/01/14 որոշման 13.1-րդ կետը:

13. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների փառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համարեքարից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կարարումն որի ընդունվել է այդ ակտը, փյվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ փյվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:*

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածների սանկցիաների ընդհանուր ուսումնասիրությունից երևում է, որ երկրնտրելի հիմնական պատժատեսակների առկայության դեպքում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը ճնշող մեծամասնության դեպքում նախատեսված է վերջին հիմնական պատժատեսակից հետո, որն էլ, ըստ էության, տվյալ հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատիժն է: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սանկցիաների նման կառուցվածքը պայմանավորված է օրենսդրական տեխնիկայի առանձնահատկությամբ և յուրաքանչյուր երկրնտրելի հիմնական պատժից հետո նույն լրացուցիչ պատժատեսակը դարձյալ չկրկնելու և օրենսգիրքն ավելորդ չծանրաբեռնելու տրամաբանությամբ:

Հակառակ մեկնաբանությունն առ այն, որ քննարկվող լրացուցիչ պատիժը կարող է նշանակվել միայն հոդվածի սանկցիայով նախատեսված ամենախիստ պատիժը նշանակելու դեպքում, Վճռաբեկ դատարանի համոզմամբ անընդունելի է և չի բխում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու լրացուցիչ պատժատեսակի բուն էությունից, դրան վերաբերող՝ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում առկա դրույթներից, պատիժ նշանակելու հիմնարար սկզբունքներից, ինչպես նաև պատժի նպատակների իրացումն ապահովելու հրամայականից:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասով նախատեսված՝ պատիժ նշանակելուն վերաբերող իրավակարգավորումներից հնարավոր չէ հետևության հանգել, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պատժատեսակ, կարող է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի որևէ հոդվածի սանկցիայով նախատեսված այլընտրանքային հիմնական պատժատեսակներից միայն առավել խիստ պատժի հետ միասին: Ընդհակառակը՝ քննարկվող պատժատեսակի հիմնական նպատակը համանման հանցավոր արարքների հետագա կանխարգելումն է, ինչը որևէ կերպ չի կարող պայմանավորվել դատարանի կողմից անձի նկատմամբ նշանակված պատժի տեսակով: Բացի այդ, վերոնշյալ մտեցումը չի կարող ընդունելի լինել նաև պատժի արդարության սկզբունքի տեսանկյունից,

քանզի նման մեկնաբանության դեպքում թույլատրելի է համարվելու քննարկվող լրացուցիչ պատժատեսակ նշանակելը միայն սանկցիայի առավել խիստ հիմնական պատժի հետ միասին, երբ անձի նկատմամբ քրեաիրավական ներգործությունն արդեն իսկ բավականին խիստ բնույթ է կրում, մինչդեռ ավելի մեղմ հիմնական պատժատեսակի հետ թույլատրելի չի համարվի:

13.1. ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան ձևակերպված է հետևյալ կերպ՝ *«պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:*

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով որպես հիմնական պատիժ նախատեսված է տուգանքը կամ որոշակի ժամկետով ազատազրկումը, իսկ որպես լրացուցիչ պարտադիր պատիժ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Սույն որոշման 10-13-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում նախատեսված լրացուցիչ պարտադիր պատիժը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, կարող է նշանակվել և՛ տուգանք, և՛ որոշակի ժամկետով ազատազրկում հիմնական պատժատեսակների հետ միասին:

Ինչ վերաբերում է քննարկվող հոդվածի սանկցիայում «կամ» շաղկապի առկայությանը, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ այն տարանջատում է հիմնական պատժատեսակները՝ հնարավորություն տալով դատարաններին ընտրություն կատարել դրանց միջև, այն է՝ նշանակել կամ տուգանք, կամ որոշակի ժամկետով ազատազրկում, իսկ որպես պարտադիր լրացուցիչ պատիժ նախատեսված որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը հավասարապես վերաբերելի է երկու հիմնական պատժատեսակներին էլ:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին առյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Գ.Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ է նշանակել տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով¹⁷⁹,

- Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ամբաստանյալ Գ.Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով լրացուցիչ պատիժ նշանակելու հարցին, արձանագրել է, որ դատախազի վերաքննիչ բողոքի այդ պահանջը քրեաիրավական օրենքի

¹⁷⁹ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

իմաստով անիրագործելի է: Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարած անձի նկատմամբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պատիժ չի կարող նշանակվել, եթե որպես հիմնական պատիժ նշանակվել է տուգանքը¹⁸⁰:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը նախ փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումներից և հատուկ մասի կոնկրետ հոդվածների սանկցիաներից ուղղակիորեն հետևում է, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պատիժ, կարող է նշանակվել ոչ միայն ազատագրկման հետ, այլ նաև մնացած դեպքերում ևս (այդ թվում նաև՝ տուգանքի հետ):

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատժի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևություններին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով Գ.Գևորգյանի նկատմամբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պատիժ չնշանակելը ոչ իրավաչափորեն պայմանավորել է վերջինիս նկատմամբ նշանակված հիմնական պատժով՝ տուգանքով: Նման պայմաններում, ստորադաս դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատիժը հավասարապես վերաբերելի է սանկցիայով սահմանված երկընտրելի հիմնական պատիժներից յուրաքանչյուրին, ուստի, այն, նկարագրված լինելով որպես պարտադիր լրացուցիչ պատժատեսակ, ենթակա էր պարտադիր նշանակման՝ անկախ տվյալ հանցագործության համար նշանակված հիմնական պատժի տեսակից:

16. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի փաստարկին առ այն, որ օրենսդիրը մի դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 199-րդ հոդված) լրացուցիչ պատիժը կրկնում է յուրաքանչյուր հիմնական պատժի մասով առանձին, մեկ այլ դեպքում՝ (ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված) միայն մեկ հիմնական պատժի՝ ազատագրկման մասով¹⁸¹, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից քննարկվող հիմնահարցի առնչությամբ տարբեր մոտեցումների միաժամանակյա նախատեսման պարագայում¹⁸² անիրաժեշտ

¹⁸⁰ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

¹⁸¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

¹⁸² Ի թիվս ՀՀ քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի, տե՛ս նաև ՀՀ քրեական օրենսգրքի 315²-րդ հոդվածը:

է ղեկավարվել ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր սկզբունքներով և պատժի նշանակման քրեաիրավական հարաբերությունները կարգավորող հիմնարար սկզբունքներից բխող մոտեցմամբ, որն արդեն իսկ Վճռաբեկ դատարանի կողմից բացահայտվել է սույն որոշման նախորդ կետերում: Այս առումով հատկանշական է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիային համահունչ կարգավորումներ նախատեսված են որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պատիժ նախատեսող հանցակազմերի սանկցիաների ճնշող մեծամասնությամբ (յոթ տասնյակից ավել)¹⁸³:

17. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես լրացուցիչ պատիժ, ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով չի կարող նշանակվել այն դեպքում, երբ որպես հիմնական պատիժ նշանակվել է տուգանքը, իրավաչափ չէ:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ և 314-րդ հոդվածների պահանջների խախտումներ: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, որը հիմք է ամբաստանյալ Գ.Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 3-ի որոշումը՝ լրացուցիչ պատժի մասով, բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը պետք է ամբաստանյալ Գ.Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով լրացուցիչ պատիժ նշանակելու վերաբերյալ մեղադրողի վերաքննիչ բողոքը քննության առնի՝ հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները:

19. Մինևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել ամբաստանյալ Գ.Գևորգյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերն ու պայմանները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ,

¹⁸³ Ի թիվս այլնի, տես, ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասը, 149.1-րդ հոդվածի 1-ին մասը, 188-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 311-րդ հոդվածի 1-ին մասը:

403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 3-ի որոշումը՝ լրացուցիչ պատժի մասով, բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Գագիկ Լիպարիտի Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

12.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0137/01/15

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 25-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Սերվենիկ Սարգսի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 11-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հուլիսի 22-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթունի քննչական բաժնում հարուցվել է թիվ 09122114 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ Կարեն Եղիզարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ Կ.Եղիզարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2014 թվականի նոյեմբերի 28-ից քրեական գործի նախաքննությունը շարունակվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ Կ.Եղիզարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 214-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 27-ի որոշումներով Սերվենիկ Գևորգյանը, Տիգրան Մուշեղյանը և Արթուր Գևորգյանը ներգրավվել են որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նույն օրը վերջիններիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ թիվ 09122114 քրեական գործից անջատվել է Կ.Եղիզարյանի վերաբերյալ մասը, որին շնորհվել է 09122114/1 համարը:

2015 թվականի հուլիսի 31-ին Կ.Եղիզարյանի վերաբերյալ թիվ 09122114/1 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, և դրան շնորհվել է ԵԱՔԴ/0137/01/15 համարը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ թիվ 09122114 քրեական գործով վարույթը կասեցվել է՝ մեղադրյալներ Սերվենիկ Գևորգյանի, Տ.Մուշեղյանի և Արթուր Գևորգյանի՝ քննությունից թաքնվելու հիմքով:

2015 թվականի օգոստոսի 5-ին Սերվենիկ Գևորգյանը հայտնաբերվել և բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժին: Նույն օրը թիվ 09122114 քրեական գործով վարույթը վերսկսվել է, և Սերվենիկ Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ Սերվենիկ Գևորգյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ թիվ 09122114 քրեական գործից անջատվել է Սերվենիկ Գևորգյանի վերաբերյալ մասը, որին շնորհվել է 09120715 համարը:

2015 թվականի հոկտեմբերի 19-ին Սերվենիկ Գևորգյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, և դրան շնորհվել է ԵԱՔԴ/0186/01/15 համարը:

2. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի

հոկտեմբերի 27-ի արձանագրային որոշմամբ Սերվենիկ Գևորգյանի վերաբերյալ թիվ ԵԱԲԴ/0186/01/15 քրեական գործը միացվել է Կ.Եղիգարյանի վերաբերյալ թիվ ԵԱԲԴ/0137/01/15 քրեական գործին:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի որոշմամբ Սերվենիկ Գևորգյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխվել է, և որպես խափանման միջոց է ընտրվել գրավը՝ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի ապրիլի 11-ի դատավճռով Սերվենիկ Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ ազատազրկման ձևով նշանակված պատժին հաշվակցվել է նախնական կալանքի տակ գտնվելու 1 (մեկ) տարի 7 (յոթ) ամիս 15 (տասնհինգ) օրը, և Սերվենիկ Գևորգյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 10 (տասը) ամիս 15 (տասնհինգ) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Նույն դատավճռով ճանաչվել է Կարեն Եղիգարյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նա արդարացվել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Կ.Եղիգարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Կ.Եղիգարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Սերվենիկ Գևորգյանի և վերջինիս պաշտպան Գ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի մարտի 11-ի որոշմամբ բողոքները բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 11-ի դատավճիռը մասնակիորեն՝ Սերվենիկ Գևորգյանի մասով, բեկանել է և քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի հունվարի 26-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Ամբաստանյալ Սերվենիկ Գևորգյանի պաշտպան Գ.Գրիգորյանի կողմից ներկայացվել է վճարել բողոքի պատասխան, որով վերջինս խնդրել է մերժել ՀՀ զլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճարելի բողոքը:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Սերվենիկ Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(..) /Ն/ս, նախնական համաձայնության գալով մի խումբ անձանց՝ Արթուր Գևորգյանի և Տիգրան Մուշեղյանի հետ, 2014թ. մայիս-հունիս ամիսներին «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի Երևան քաղաքի Դրոյի 3 հասցեում գրնվող «Զեյթուն» մասնաճյուղի ոսկերիչ-գնահատող Կարեն Եղիզարյանի օժանդակությամբ, խաբեության եղանակով հիշյալ բանկում փարբեր անձանց միջոցով 340.000 ՀՀ դրամ արժեք ունեցող կեղծ ոսկյա զարդերի գրավադրմամբ, հափշտակել է առանձնապես խոշոր չափերով 48.051.000 ՀՀ դրամ գումար:

Այսպես Սերվենիկ Գևորգյանը, Արթուր Գևորգյանը և Տիգրան Մուշեղյանը 2014թ. մայիս-հունիս ամիսներին, նախնական համաձայնության են եկել խաբեության եղանակով ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու վերաբերյալ: Հանցավոր նպատակին հասնելու համար օգտագործել են իրենց ընկեր կամ բարեկամ հանդիսացող փարբեր անձանց՝ Յուրիկ Բարսեղյանին, Արմեն Գալստյանին, Գևորգ Գևորգյանին, Միշա Բաղդասարյանին, Արշալույս Մինասյանին, Անի Հակոբյանին, Գյուլվարդ Բարսեղյանին, Գևորգ Վարդանյանին, Մոնսա Սրեփանյանին, Գարեգին Սարգսյանին, Հրաչյա Սկրյոշյանին, Մուսանաս Բարանյանին, Մարգարիտա Հակոբյանին և Վեներա Վարդանյանին փարբերասկ պարճառաբանություններով խնդրելով նրանց անուններով «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի Երևան քաղաքի Դրոյի 3 հասցեում գրնվող «Զեյթուն» մասնաճյուղում գրավադրել ոսկյա զարդեր: Այդ անձինք չգիտակցելով, որ հիշյալ հանցավոր խմբի կողմից իրենց փրամադրված զարդերն իրականում պարբասրված չեն ոսկուց, այսինքն գործելով անգգոշությամբ, դրանք ներկայացրել են «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի Երևան քաղաքի Դրոյի 3 հասցեում գրնվող «Զեյթուն» մասնաճյուղ ոսկերիչ-գնահատող Կարեն Եղիզարյանին, ով նախապես վերը նշված հանցավոր խմբին խոսրացել է վերացնել հանցավոր նպատակին հասնելու բոլոր խոչընդոտները: Կատարելով խոսրումը՝ Կ.Եղիզարյանն օժանդակել է Տիգրան Մուշեղյանին, Սերվենիկ Գևորգյանին և Արթուր Գևորգյանին խաբեության եղանակով բանկից առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարել ներկայացված 340.000 ՀՀ դրամ արժողությամբ զարդերը գնահատելով, որպես ոսկյա զարդ, ինչի արդյունքում հիշյալ անձինք վարկ սրանալու միջոցով բանկից հափշտակել են առանձնապես խոշոր չափերով 48.051.000 ՀՀ դրամ գումար»¹⁸⁴:

¹⁸⁴ Տեն քրեական գործ, հատոր 5, թերթեր 237-270:

6. Սերվենիկ Գևորգյանի և Կ.Եղիզարյանի վերաբերյալ թիվ ԵԱԲԴ/0137/01/15 քրեական գործի դատական քննության ընթացքում դատական վիճարանությունների փուլում, 2018 թվականի մարտի 17-ի դատական նիստում ամբաստանյալ Սերվենիկ Գևորգյանի պաշտպան Գ.Գրիգորյանը, նախքան պաշտպանական ճառը հրապարակելը, միջնորդել է սույն քրեական գործին միացնել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում 2017 թվականի նոյեմբերի 29-ին ստացված Տիգրան Մուշեղյանի վերաբերյալ թիվ ԵԱԲԴ/0183/01/17 քրեական գործը: Առաջին ատյանի դատարանի արձանագրային որոշմամբ պաշտպանի միջնորդությունը մերժվել է¹⁸⁵:

6.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 11-ի դատավճռի համաձայն՝ *«Դադարանը գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլարժեքիության վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դեկլարավելով օրենքով, ներքին համոզմամբ, գրնում է, որ ամբաստանյալ Սերվենիկ Սարգսյանի մեղավորությունը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով խարդախություն վարահողությունը չարաշահելու եղանակով գույքի հափշտակություն կատարելու մեջ, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, ապացուցված է: (...)*

Այսպիսով, դադարանի համոզմամբ, Սերվենիկ Գևորգյանի խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, վերոհիշյալ կանխամերածված գործողությունների փուլում նախնական հաջորդականությունը վկայում է այն մասին, որ վերջինիս կողմից «ԲՏՍ քանկ» ՓԲԸ-ից խարդախության եղանակով հափշտակություն կատարելու մարտիրությունը ծագել է ի սկզբանե»¹⁸⁶:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 11-ի որոշման համաձայն՝ *«Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Սերվենիկ Գևորգյանի, Արթուր Գևորգյանի, Տիգրան Մուշեղյանի և Կարեն Եղիզարյանի վերաբերյալ քննվող քրեական գործից, նախաքննության ընթացքում, փարբեր ժամանակներում, անջարվել և իրարից առանձին մեղադրական եզրակացությամբ Առաջին ատյանի դադարան են ուղարկվել Կարեն Եղիզարյանի ու Սերվենիկ Գևորգյանի վերաբերյալ գործի մասերը: Առաջին ատյանի դադարանում դրանք նորից միացվել և քննվել են մեկ վարույթում: Վերջիններիս վերաբերյալ քրեական գործի դադարանության ընթացքում մեղադրական եզրակացությամբ Առաջին ատյանի դադարան է սրացվել նաև ենթադրյալ հանցավոր խմբի նյութ անդամ Տիգրան Մուշեղյանի վերաբերյալ քրեական գործի մասը: Առաջին ատյանի դադարանը, դադարանի նիստում քննության առնելով նշված քրեական գործերը մեկ վարույթում միացնելու Սերվենիկ Գևորգյանի պաշտպանի միջնորդությունը՝*

¹⁸⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 15, թերթեր 190-193:

¹⁸⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 118-137:

արձանագրային որոշմամբ մերժել է այն, պայրճառաբանելով, որ պաշտպանական կողմից հիմնավոր պայրճառաբանություններ չեն ներկայացվել:

Վերաքննիչ դադարանը փաստում է, որ Առաջին արյանի դադարանն անսրբանել է այն հանգամանքը, որ արդար դադարանության իրավունքի ապահովման երաշխավորը հանդիսանում է դադարանը: Հետևաբար՝ նշված իրավունքի ապահովման տեսանկյունից քրեական գործերը մեկ վարույթում միացնելու հարցը որոշելիս, դադարանը չպետք է սահմանափակվի դադարավարության կողմերի միջնորդություններով և հիմնավորումներով: Մինչդեռ, Առաջին արյանի դադարանը քրեական գործերը մեկ վարույթում միացնելու անհրաժեշտության բացակայությունն ըստ էության պայմանավորել է ոչ թե Սերվենիկ Գևորգյանի վերաբերյալ քրեական գործի անջար քննությանը դրա լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննությունն ապահովված լինելու հանգամանքով, այլ պաշտպանի կողմից հիմնավոր միջնորդություն ներկայացված չլինելով:

Վերաքննիչ դադարանը հարկ է համարում նշել, որ Առաջին արյանի դադարանը պետք է գնահատեր, թե արդյոք Սերվենիկ Գևորգյանին առաջադրված մեղադրանքի բնույթը հնարավորություն էր տալիս սրուգելու այդ մեղադրանքի օրինականությունը և հիմնավորվածությունը՝ չանդրադատնալով խմբի մյուս անդամներ Արթուր Գևորգյանի և Տիգրան Մուշեղյանի արարքներին և գնահատելու դրանք: Հնարավոր էր արդյոք դրանց չանդրադատնալով՝ Սերվենիկ Գևորգյանի պարասխանալության հարցը որոշել անհրաժեշտ խորությամբ և ճշգրտությամբ, որպիսին հանդիսանում է ինչպես քրեական օրենքը ճիշդ կիրառելու պարտադիր բաղադրիչը, այնպես էլ դադարանի կողմից օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության և արդար դադարանության ապահովման բաղադրիչը:

Այստեղ պետք է նշել, որ Առաջին արյանի դադարանը վիճարկվող դադարական ակտում կարարել է այնպիսի ձևակերպումներ, որոնցում առկա են դադարողություններ դարի չբոված անձ՝ Տիգրան Մուշեղյանի մեղավորության վերաբերյալ, ինչով խախտվում է նաև դադարական քննությունը միայն ամբաստանյալի նկատմամբ կարարելու քրեադատարարական պահանջը: Նշված հանգամանքն իր հերթին հանգեցնում է նաև վերջինիս իրավունքների, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածի և պաշտպանության իրավունքի խախտման, ինչպես նաև կանխորոշում է վերջինիս վերաբերյալ անջարված մասով գործի ելքը՝ դադարվճոի փաստացի նախատարելիության ուժով, ինչը վրանգում է նաև տվյալ գործը քննող դադարանի անկախությունն ու անկողմնակարությունը:

Վերաքննիչ դադարանի նշված հերկությունը քիտում է Մարդու իրավունքների եվրոպական դադարանի նախատեպային իրավունքից (օրինակ՝ Նավալնին և Օֆիգերովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճիղը (...)):

Վերը շարադրվածից ելնելով Վերաքննիչ դադարանը գրնում է, որ քրեական գործերը մեկ վարույթում միացնելու պաշտպանի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին արյանի դադարանի որոշումը բավարար չափով պայրճառաբանված չէ, այն չի կարող համարվել օրինական ու հիմնավոր և հանգեցնում է գործի արդարացի քննության սկզբունքի խախտման:

13. Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Սերվենիկ Գևորգյանին վերագրվող արարքի փաստական հանգամանքների նկարագրությունում խմբի կողմից հափշտակված գումարների ընդհանուր չափը կազմում է՝ 35.612.240 ՀՀ դրամ: Մինչդեռ՝ նույն խմբին օժանդակություն ցուցաբերած Կարեն Եղիզարյանին վերագրվող արարքի փաստական հանգամանքների նկարագրությունում խմբի կողմից հափշտակված գումարների ընդհանուր չափը կազմում է՝ 48.051.000 ՀՀ դրամ (48.391.000-340.000): Ընդ որում՝ Կարեն Եղիզարյանին վերագրվող արարքի փաստական հանգամանքների նկարագրությունից երևում է, որ հանցավոր խմբին վերագրվող մի շարք վարկային պայմանագրերով կատարված հափշտակությունների դրվագները չեն մեղսագրվել Սերվենիկ Գևորգյանին, սակայն վերջինիս առաջադրված մեղադրանքի ծավալը նույնպես կազմում է՝ 48.051.000 ՀՀ դրամ:

Առաջին արյանի դատարանը չանդրադառնալով նշված հանգամանքներին վիճարկվող դատական ակտում ուղղակի նշել է, որ Սերվենիկ Գևորգյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանք կատարելու մեջ ապացուցված է՝ չնշելով հափշտակված գումարի չափը:

Նշված հանգամանքն առաջացնում է անորոշություն այն առումով, որ հնարավոր չէ հասկանալ, թե Սերվենիկ Գևորգյանը մեղավոր է ճանաչվել իրեն վերագրվող արարքի փաստական հանգամանքների նկարագրությունում նշված դրվագներով՝ 35.612.240 ՀՀ դրամի հափշտակության, թե նաև իրեն չվերագրվող դրվագներով խմբի մյուս անդամների ընդհանուր հափշտակած՝ 48.051.000 ՀՀ դրամի համար:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ այս առումով վիճարկվող դատական ակտը պարզառարանված չէ:

14. Վերաքննիչ դատարանն արձանագրում է նաև, որ վիճարկվող դատական ակտի կայացումից հետո, Դատախազի կողմից, 2018 թվականի հունիսի 12-ին, քրեական գործից անջարկված մասով, ենթադրյալ հանցավոր խմբի մյուս անդամ Արթուր Գևորգյանի նկարումներ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թեև Դատախազի կողմից նշված որոշումը կայացվել է վիճարկվող դատական ակտի կայացումից հետո, այնուամենայնիվ արդարացման հիմքով ենթադրյալ հանցավոր խմբի անդամի նկարումներ քրեական հետապնդման դադարեցման փաստը չի կարող անդադարեցվել սույն գործով վիճարկվող դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը արուգելիս:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ միայն Արթուր Գևորգյանի նկարումներ քրեական հետապնդումն արդարացման հիմքով դադարեցնելու փաստը բավարար է արձանագրելու, որ Սերվենիկ Գևորգյանին առաջադրված մեղադրանքը չի կարող համարվել օրինական և հիմնավոր՝ առնվազն այն նկարագրությամբ որը մեղսագրվում է նրան:

15. Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ասյանի դատարանի կողմից թույլ տրված (...) նշված խախտումները, ինչպես նաև ենթադրյալ հանցավոր խնդրի անդամի նկատմամբ արդարացման հիմքով քրեական հետապնդման դադարեցման փաստը առաջացրել են մի իրավիճակ, որը զրկում է Վերաքննիչ դատարանին վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում արուգելու Սերվենիկ Գևորգյանի մասով վիճարկվող դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը:

16. (...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին ասյանի դատարանի թույլ տրված դատական սխալները առկա իրավիճակում հանգեցրել են նրան, որ հնարավորություն չեն տալիս ներկայացված վերաքննիչ բողոքների հիման վրա վերացնելու արտարդաս դատարանի թույլ տրված խախտումներն ու կայացնելու գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ, ուստի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել մասնակի. Առաջին ասյանի դատարանի՝ բողոքարկված դատական ակտը պետք է մասնակի՝ Սերվենիկ Գևորգյանի մասով բեկանել և վերջինիս մասով քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ժամկետ»¹⁸⁷:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի համոզմամբ՝ ստորադաս դատարանը, միակողմանի բացահայտելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը, հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ փաստական հանգամանքներով էականորեն տարբերվող, սույն գործին ոչ վերաբերելի դիրքորոշման վրա, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և Վճռաբեկ դատարանի որոշումներով սահմանված պահանջները, հանգել է ոչ ճիշտ հետևությունների և թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, որն արտահայտվել է գործի արդարացի քննության սկզբունքի անտեսմամբ:

8.1. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, մասնավորապես *Նավայնին և Օֆիգերովն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռից մի շարք դիրքորոշումներ մեջբերելով, հանգել է հետևության, որ Առաջին ասյանի դատարանը վիճարկվող դատական ակտում կատարել է այնպիսի ձևակերպումներ, որոնցում առկա են դատողություններ դատի չտրված անձ՝ Տ.Մուշեղյանի մեղավորության վերաբերյալ, ինչով խախտվում է նաև դատական քննությունը միայն ամբաստանյալի նկատմամբ կատարելու

¹⁸⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 8, թերթեր 57-80:

քրեադատավարական պահանջը: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ այդ հանգամանքն իր հերթին հանգեցնում է նաև վերջինիս իրավունքների, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածի և պաշտպանության իրավունքի խախտման, ինչպես նաև կանխորոշում է վերջինիս վերաբերյալ անջատված մատվ գործի ելքը՝ դատավճռի փաստացի նախադատելիության ուժով, ինչը վտանգում է նաև տվյալ գործը քննող դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը: Բողոքաբերի պնդմամբ՝ Նավալնիի և Օֆիցերովի գործով հանգամանքներն էականորեն տարբերվում են սույն գործի փաստական հանգամանքներից: Մասնավորապես, Սերվենիկ Գևորգյանի վերաբերյալ վարույթի առանձնացումը պայմանավորված է եղել մյուս մեղադրյալների՝ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքով, և վարույթն իրականացնող մարմինը ողջամտորեն չէր կարող ենթադրել, թե երբ նրանք կհայտնաբերվեն: Բացի այդ, բողոքաբերը փաստել է, որ Սերվենիկ Գևորգյանը «վկայի» որպես այլ գործով ամբաստանյալի կարգավիճակով ներգրավված է նաև Տ.Մուշեղյանի վերաբերյալ քննվող թիվ ԵԱԲԴ/0183/01/17 քրեական գործով, ինչի արդյունքում երաշխավորվում է նրա պաշտպանության իրավունքը:

8.2. Ըստ բողոքաբերի՝ անհիմն է նաև Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ դատավճռից հնարավոր չէ հասկանալ, թե Սերվենիկ Գևորգյանը մեղավոր է ճանաչվել իրեն վերագրվող արարքի փաստական հանգամանքների նկարագրությունում նշված դրվագներով 35.612.240 ՀՀ դրամի, թե նաև իրեն չվերագրվող դրվագներով խմբի մյուս անդամների կողմից ընդհանուր՝ 48.051.000 ՀՀ դրամի հափշտակության համար: Բողոքի հեղինակի կարծիքով, ակնհայտ է, որ հանցակիցների կողմից միասնական դիտավորությամբ կատարված հանցանքի պայմաններում նրանցից յուրաքանչյուրի գործողության արդյունքում պատճառված վնասը կարող է տարբեր լինել, իսկ միասնական դիտավորության մեջ ընդգրկված վերջնական վնասը՝ նույնական, ինչը քննարկվող պարագայում 48.051.000 ՀՀ դրամն է:

9. Բողոքաբերը նշել է, որ Արթուր Գևորգյանի նկատմամբ կայացված քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը Սերվենիկ Գևորգյանին առաջադրված մեղադրանքում խմբի հատկանիշի առկայությունը որևէ կերպ չի չեզոքացնում, քանզի խմբի մեջ է մտնում նաև Տ.Մուշեղյանը, ինչը նշանակում է, որ նախնական համաձայնությամբ խումբը, մինևնույն է, առկա է:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Սերվենիկ Գևորգյանի մատվ բեկանել թիվ ԵԱԲԴ/0137/01/15 քրեական գործով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 11-ի դատավճռին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու ու գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

12. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անսառ դադարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկախ ու անսառ դադարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դադարանության իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դադարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դադարանը՝

(...)

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դադարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մերժում է օրինական ուժի մեջ:

(...)

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է ստորադաս դադարանի ակտը, եթե ստորադաս դադարանի հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից (...):»:

13. Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերի վերլուծությունից բխում է, որ համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է ոչ միայն բեկանել դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության, այլև կայացնել նոր դատական ակտ: Նշված լիազորության օրենսդրական ամրագրումը պայմանավորված է նրանով, որ վերաքննիչ դատարանում ապացույցներ, այդ թվում՝ լրացուցիչ ներկայացված, հետազոտելու և ըստ այդմ գործի փաստական կողմը վերանայելու իրավասությունը, թույլ տրված դատական սխալը ուղղելու և նոր դատական ակտ կայացնելու հնարավորություն է տալիս: Դեռ ավելին, ինչպես բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի կարգավորումներից՝ վերաքննիչ վերանայման նշված առանձնահատկություններով պայմանավորված՝ օրենսդիրն ուղղակիորեն նախատեսել է նաև վերաքննիչ դատարանի կողմից անձին առաջադրված մեղադրանքի շրջանակում արարքի իրավական գնահատականը՝ թե՛ մեղմացնելու և թե՛ խստացնելու առումով

փոխելու իրավական հնարավորություն՝ դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիությունն ապահովելու պայմանով:

Բացի այդ, հարկ է նկատել, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր դատական ակտ կայացնելու լիազորության նախատեսումը կոչված է նաև բացառելու դատական շրջապտույտը, այն բխում է դատավարական խնայողության և արդարադատության արդյունավետության շահից՝ այնքանով, որքանով երաշխավորում է արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերից մեկը՝ ողջամիտ ժամկետում գործի քննության հիմնարար պահանջի իրացումը¹⁸⁸:

14. Անդրադառնալով բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու վերաքննիչ դատարանի լիազորությանը՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է բեկանել բողոքարկված դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը՝ նպատակ ունենալով.

ա) լրացնել վերաքննության փուլում գործն ամբողջ ծավալով քննելու իրավազորության բացակայությունը,

բ) կանխել վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին ատյանի դատարան հանդես գալու հնարավորությունը,

գ) ապահովել դատական ատյանների միջև գործառության կապերի տրամաբանական բնույթը,

դ) երաշխավորել ամբաստանյալի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ նոր քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի հետ անհամաձայնության դեպքում վերաքննության կարգով բողոք ներկայացնելու տեսանկյունից¹⁸⁹:

14.1. Վերահաստատելով վկայակոչված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերաքննիչ դատարանի կողմից տվյալ լիազորությունը ենթակա է իրացման այն դեպքերում, երբ վերաքննության գործառության առանձնահատկություններով պայմանավորված՝ վերաքննիչ վերանայման գործիքակազմը բավարար չէ արձանագրված նյութական կամ դատավարական իրավունքի խախտումները վերացնելու համար, և առաջին ատյանի դատարանում գործի նոր քննությունն անհրաժեշտ է կայացվելիք դատական ակտի արդարացիությունը և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն ապահովելու առումով:

14.2. Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, բողոքարկված դատական ակտը բեկանելուց հետո նոր դատական ակտ կայացնելու կամ գործը նոր քննության ուղարկելու մասին որոշում կայացնելիս, վերաքննիչ դատարանը պետք է գնահատի,

¹⁸⁸ Տե՛ս *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ ՍԴՈ-720, 2009 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ՍԴՈ-832 որոշումները, Վճռաբեկ դատարանի՝ *Լիլիթ Վարդանյանի և Զարինե Արվագյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0016/01/14 որոշումը:

¹⁸⁹ Տե՛ս *Հրայր Մսիկարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴՅ/0019/01/11 որոշման 19-րդ կետը:

թե որքանով է վերաքննիչ վերանայման գործիքակազմը բավարար գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննությունն ապահովելու և արձանագրված դատական սխալները վերացնելու համար: Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ վերաքննության գործառնության առանձնահատկությունները թույլ են տալիս լուծել նշված խնդիրները, վերաքննիչ դատարանի որոշումը, որպես կանոն, պետք է լինի նոր դատական ակտի կայացումը՝ ելնելով դատավարական ինստրուկցիայի և արդարադատության արդյունավետության շահից:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը կամ մի անձի կողմից կատարված մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործերը, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործեր, եթե, դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված, սակայն է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու անհրաժեշտություն»:*

Քրեական գործերը միացնելու դատավարական ինստիտուտի հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Պետրոս Նազարյանի* գործով՝ արձանագրելով, որ *«այն ամրագրում է կազմակերպական-լեռնակազմային բնույթի դատավարական լիազորություն, որի միջոցով ապահովվում է քրեական գործերի քննության արդյունավետությունը: Մասնավորապես, նշված դատավարական լիազորությամբ քրեական գործի քննության սահմանների ընդարձակումը նպաստում է հետապնդումն ապահովել դատավարական ռեսուրսների ինստրուկցիային, երաշխավորել որջամիջոց ժամկետում գործի քննությունը, ինչպես նաև նպաստել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը: Այսինքն քրեական գործերի միացման դատավարական լիազորության կենսագործումը պայմանավորվում է քրեական գործերի քննության արդյունավետության ապահովման օբյեկտիվ չափանիշով:*

Ընդ որում (...) նշված չափանիշի սովորական գնահատմանը քրեական գործերի միացման քրեական վարույթն իրականացնող մարմնի լիազորությունը կրում է դիսպոզիտիվ բնույթ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասում օգրագործվող *«մեկ վարույթում կարող են միացվել»* օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմնի քրեական գործերը միացնելու լիազորությունը հայեցողական է: Այսինքն քրեական գործերի միացման հայեցողական լիազորությունն իրականացնելու յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, անհրաժեշտ է հաշվի առնել միացվող քրեական գործերի միջև գոյություն ունեցող կապը, և թե այդ միացումը որքանով կնպաստի քրեական գործերի քննության արդյունավետության բարձրացմանը»¹⁹⁰:

16. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ քրեական գործերի միացման՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի լիազորությունը, բացի նրանից,

¹⁹⁰ Տե՛ս *Պետրոս Նազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ՇԴ3/0056/01/16 որոշման 16-րդ կետը:

որ ունի հայեցողական բնույթ, պետք է նաև բավարարի քրեական գործերի միացման օբյեկտիվ հնարավորության չափանիշին: Այլ կերպ՝ հանցակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերի միացման կամ անջատման օրինականությունն ու հիմնավորվածությունը կախված է ոչ միայն հանցակցության կոնկրետ ձևից, հանցակիցների մեղադրանքների փոխկապակցվածության բնույթից և դրանցով պայմանավորված՝ հանցակիցների վերաբերյալ քրեական գործերով մեղադրանքների փաստական հանգամանքների միջև կապի աստիճանից, այլ նաև քրեական գործերի հետագա համատեղ քննության օբյեկտիվ հնարավորությունից: Մասնավորապես, այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցակիցներից մեկի՝ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ մյուս հանցակիցների վերաբերյալ քրեական գործերն անջատվում և մեղադրական եզրակացությամբ ուղարկվում են դատարան, ապա նման անջատումն ինքնին կրում է օբյեկտիվ բնույթ:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Սերվենիկ Գևորգյանի, Արթուր Գևորգյանի, Տ.Մուշեղյանի և Կ.Եղիզարյանի վերաբերյալ քննվող թիվ 09122114 քրեական գործից նախաքննության ընթացքում՝ 2015 թվականի հուլիսի 27-ին Կ.Եղիզարյանի մասն անջատվել և մեղադրական եզրակացությամբ Առաջին ատյանի դատարան է ուղարկվել, քանի որ գործով մյուս մեղադրյալները թաքնվել են քննությունից և այդ հիմքով գտնվել են հետախուզման մեջ¹⁹¹: Որոշ ժամանակ անց, հետախուզման արդյունքում հայտնաբերվելուց հետո՝ 2015 թվականի հոկտեմբերի 19-ին, մեղադրական եզրակացությամբ Առաջին ատյանի դատարան է ուղարկվել Սերվենիկ Գևորգյանի վերաբերյալ գործը, որը 2015 թվականի հոկտեմբերի 27-ին արձանագրային որոշմամբ միացվել է Կ.Եղիզարյանի վերաբերյալ քրեական գործին¹⁹²: Հետագայում, երբ հայտնաբերվել է Տ.Մուշեղյանը, թիվ 09122114 քրեական գործից նրա վերաբերյալ մաս է անջատվել և 2017 թվականի նոյեմբերի 29-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել Առաջին ատյանի դատարան: Սերվենիկ Գևորգյանի և Կ.Եղիզարյանի վերաբերյալ թիվ ԵԱԲԴ/0137/01/15 քրեական գործով դատաքննությունն ավարտվելուց հետո՝ դատական վիճաբանությունների փուլում՝ 2018 թվականի մարտի 17-ի դատական նիստում, ամբաստանյալ Սերվենիկ Գևորգյանի պաշտպան Գ.Գրիգորյանը նախքան պաշտպանական ճառը հրապարակելը միջնորդել է սույն քրեական գործին միացնել Տիգրան Մուշեղյանի վերաբերյալ թիվ ԵԱԲԴ/0183/01/17 քրեական գործը, սակայն դատարանի արձանագրային որոշմամբ միջնորդությունը մերժվել է¹⁹³:

18. Սույն փաստական հանգամանքների և վերոշարադրյալ իրավական նորմերի և իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է քրեական գործերի անջատման օբյեկտիվության չափանիշը, ինչպես նաև պատշաճ գնահատման

¹⁹¹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

¹⁹² Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

¹⁹³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

չի ենթարկել դատաքննությունն ավարտված լինելու պայմաններում Սերվենիկ Գևորգյանի և Կ.Եղիզարյանի վերաբերյալ քրեական գործը Տ.Մուշեղյանի վերաբերյալ ստացված ու մեկ այլ դատավորի վարույթում գտնվող գործին միացնելու օբյեկտիվ հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ, ինչպես իրավաչափորեն փաստել է բողոքաբերը¹⁹⁴, սույն գործի փաստական հանգամանքներն էականորեն տարբերվում են Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Նավյանին և Օֆիցերովն ընդդեմ Ռուսաստանի* գործի փաստական հանգամանքներից¹⁹⁵, քանի որ ի տարբերություն նշված գործի՝ վարույթի առանձնացումը սույն դեպքում *a priori* պայմանավորված է եղել գործով մյուս մեղադրյալների՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու ու հետախուզման մեջ գտնվելու հանգամանքով, և վարույթն իրականացնող մարմինը ողջամտորեն չէր կարող ենթադրել, թե նրանք երբ կհայտնաբերվեն: Արդյունքում, վարույթն իրականացնող մարմինը, գնահատելով քրեական գործում առկա ապացույցները, դրանք բավարար է համարել Սերվենիկ Գևորգյանի և Կ.Եղիզարյանի վերաբերյալ գործը դատարան ուղարկելու համար: Հակառակ մեկնաբանության պարագայում անձը կարող է տևական և անորոշ ժամանակով գտնվել քրեական հետապնդման ներքո, ինչն անհամատեղելի կլինի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջի հետ:

18.1. Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ Առաջին ատյանի դատարանը վիճարկվող դատական ակտում տվել է այնպիսի ձևակերպումներ, որոնցում առկա են դատողություններ դատի չտրված անձ՝ Տ.Մուշեղյանի մեղավորության վերաբերյալ, ինչով խախտվում է նաև դատական քննությունը միայն ամբաստանյալի նկատմամբ կատարելու քրեադատավարական պահանջը, Տ.Մուշեղյանի անմեղության կանխավարկածը և պաշտպանության իրավունքը¹⁹⁶: Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Տ.Մուշեղյանի անմեղության կանխավարկածի խախտման վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևության հետ՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանի կողմից Տ.Մուշեղյանի մեղավորության հարց չի քննարկվել, ինչպես նաև վերջինիս կողմից վերաքննիչ վարույթում անմեղության կանխավարկածի խախտման հարց չի բարձրացվել: Ավելին, Առաջին ատյանի դատարանի դատավճռի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կ.Եղիզարյանին և Սերվենիկ Գևորգյանին առաջադրված մեղադրանքները շարադրելուց հետո, Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել Սերվենիկ Գևորգյանի կողմից խմբի կազմում խարդախության միջոցով հափշտակություն կատարելու

¹⁹⁴ Տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը:

¹⁹⁵ Տե՛ս *Նավյանին և Օֆիցերովն ընդդեմ Ռուսաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատներ 46632/13 և 28671/14:

¹⁹⁶ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

փաստը՝ առանց վկայակոչելու խմբի որևէ այլ մասնակցի անուն¹⁹⁷: Բացի այդ, Տ.Մուշեղյանի անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտումն անգամ չէր կարող հիմք ծառայել Սերվենիկ Գևորգյանի իրավունքների խախտում արձանագրելու, առավել ևս վերջինիս վերաբերյալ քրեական գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

18.2. Վերաքննիչ դատարանը նաև փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտից պարզ չէ, թե Սերվենիկ Գևորգյանը մեղավոր է ճանաչվել իրեն վերագրվող արարքի փաստական հանգամանքների նկարագրությունում նշված դրվագներով՝ 35.612.240 ՀՀ դրամի, թե նաև իրեն չվերագրվող դրվագներով խմբի մյուս անդամների կողմից ընդհանուր՝ 48.051.000 ՀՀ դրամի հափշտակության համար: Վերաքննիչ դատարանի կողմից արձանագրված վերոգրյալ ենթադրյալ խախտման առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը զրկված չի եղել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում դատական ակտի վերանայման արդյունքում նշված խախտումը վերացնելու հնարավորությունից:

18.3. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռ կայացնելուց հետո՝ 2018 թվականի հունիսի 12-ին, ենթադրյալ հանցավոր խմբի անդամներից Արթուր Գևորգյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով, սպա Վճռաբեկ դատարանը փաստում է որ նախ, ինչպես նշել է նաև Վերաքննիչ դատարանը, Արթուր Գևորգյանի նկատմամբ հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդումը դադարեցվել է Առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռ կայացնելուց հետո, երկրորդ՝ Արթուր Գևորգյանի նկատմամբ կայացված՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը խմբի առկայությունը բացառող հանգամանք չէ, և, ի վերջո, Վերաքննիչ դատարանը դարձյալ զրկված չի եղել վերոնշյալ հանգամանքը գործի ելքի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից գնահատելու հնարավորությունից:

19. Սույն որոշման 12-16-րդ կետերում ներկայացված իրավական նորմերը և դիրքորոշումները կիրառելով 17-18-րդ կետերում ներկայացված փաստերի և դրանց վերլուծության վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն ունեցել է իրավական հնարավորություն՝ դատական ստուգման ենթարկելու Սերվենիկ Գևորգյանի վերաբերյալ դատավճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ վերաքննիչ բողոքներում բարձրացված՝ ապացույցների գնահատման դատավարական պահանջների պահպանման և նյութական իրավունքի նորմերի կիրառման ճշտության տեսանկյունից: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափորեն որոշում է կայացրել քրեական գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու մասին՝ անտեսելով դատավարական խնայողության և ողջամիտ ժամկետում գործի քննության հիմնարար պահանջը:

¹⁹⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

20. Հետևաբար, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու ու գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ:

21. Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 385-րդ, 394-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք են:

22. Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առարկա դարձնի ներկայացված վերաքննիչ բողոքները դրանց հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգի Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 11-ի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

23. Մինչույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել ամբաստանյալ Սերվենիկ Գևորգյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերն ու պայմանները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Սերվենիկ Սարգսի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Սերվենիկ Սարգսի Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

13.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0253/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ ՀԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները ՍԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 25-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի որոշման դեմ մեղադրյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի ապրիլի 29-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) ստացվել է Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի և մյուսների վերաբերյալ թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը:

2019 թվականի ապրիլի 30-ին քրեական գործն ընդունվել է Առաջին ատյանի դատարանի դատավոր Վ.Գրիգորյանի վարույթ, ում կողմից 2019 թվականի մայիսի 6-ին կայացվել է որոշում՝ ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ:

2019 թվականի մայիսի 7-ին քրեական գործն ընդունվել է Առաջին ատյանի դատարանի դատավոր Դ.Գրիգորյանի վարույթ:

2019 թվականի օգոստոսի 19-ին քրեական գործը վերաբաշխվել է՝ դատավոր Դ.Գրիգորյանի լիազորությունների կասեցված լինելու հիմքով և

2019 թվականի օգոստոսի 20-ին ընդունվել է Առաջին ատյանի դատարանի դատավոր Ա.Դանիբեկյանի վարույթ:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 2-ի «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ, ի թիվս այլնի, որոշվել է Ռ.Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ և առաջին դատական նիստում՝ կողմերի մասնակցությամբ քննության առնել մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ այլ խափանման միջոց կիրառելու վերաբերյալ պաշտպան Հ.Խուդոյանի միջնորդությունները:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 2-ի որոշման դեմ մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի սեպտեմբերի 2-ի՝ «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ անդրադառնալով Ռ.Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցին, արձանագրել է. «(...) [Մ]յն քրեական գործը դատական քննության նախապայարարելու փուլում նշանակված դատական նիստում Ռոբերտ Քոչարյանի և նրա պաշտպանների մասնակցությամբ դատարանը քննության է առել Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ մինչդատական վարույթի ընթացքում որպես խափանման միջոց ընտրված կալանավորման վերացման, փոփոխման կամ պահպանման հարցը և 18.05.2019թ. որոշմամբ փոփոխելով այն որպես խափանման միջոց ընտրել է անձնական երաշխավորությունը: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 25.06.2019թ. որոշմամբ առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանվել է, Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված անձնական երաշխավորությունը վերացվել և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը՝ կալանքի սկիզբը հաշվելով փաստացի արգելանքի վերցնելու պահից:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրական դատարանի 26.06.2018թ. թիվ ՄԴՈ-1421 որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշման համապատասխան, սույն քրեական գործը դատական քննության նախապայարարելու փուլում Ռոբերտ Քոչարյանի կողմից իրացվել է իր անձնական ազատության սահմանափակման

հարցը քննարկելիս դատարանի կողմից լաված լինելու սահմանադրական իրավունքը, որպիսի պայմաններում դատարանի կազմի փոփոխությունը չի ենթադրում դատավարության նույն փուլում խափանման միջոցի հարցը դատական նիստում կրկին քննարկելու անհրաժեշտություն: Հեղափոխություն, նկարի ունենալով, որ Ռոբերտ Բոչարյանի նկարում ընտրված խափանման միջոց կալանավորման վերացման, փոփոխման կամ պահպանման հարցը դատավարության ներկա փուլում արդեն իսկ լուծվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 25.06.2019թ. որոշմամբ, դատարանը գրնում է, որ նշված որոշմամբ կիրառված խափանման միջոցը կալանավորումը, ավստի պահին պետք է թողնել անփոփոխ: Միաժամանակ, անդրադառնալով Ռոբերտ Բոչարյանի պաշտպան Հովհաննես Խոտոյանի կողմից ներկայացված միջնորդություններին «Մեղադրյալի նկարում ազատագրված հետը չկապված խափանման միջոց ընտրելու վերաբերյալ» և «Մեղադրյալի նկարում կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու և նրա նկարում գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին», դատարանը գրնում է, որ նշված միջնորդությունները պետք է առաջնահերթության կարգով քննության առնվեն դատական քննության փուլում առաջին դատական նիստում, կողմերի մասնակցությամբ (...)¹⁹⁸:

6. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) - քրեական գործը դատական քննության նշանակելու փուլում մեղադրյալի նկարում որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշումը ենթակա է անմիջական վերաքննիչ բողոքարկման միայն այն դեպքում, երբ առաջին աստիճանի դատարանը, ի կատարումն ՀՀ սահմանադրական դատարանի 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՄԴՌ-1421 որոշման պահանջների, մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցությամբ քննության է առնում մեղադրյալի նկարում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը,

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սուկա կարգավորումները չեն ենթադրում դատավորի փոխարինման դեպքում նախորդ դատավորի կողմից քրեական գործը դատական քննության նշանակելու փուլում խափանման միջոցների վերաբերյալ կայացված որոշումների, ինչպես նաև դրանց վերաքննիչ բողոքարկման արդյունքում կայացված որոշումների ինքնարտիքային չեղարկում, որպիսի պայմաններում նոր դատավորը պարտավոր չէ վերադառնալ կատարել ՀՀ սահմանադրական դատարանի 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՄԴՌ-1421 որոշման պահանջները (մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցությամբ քննության առնել մեղադրյալի նկարում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը), եթե այն արդեն իսկ կատարվել է նախորդ դատավորի կողմից:

¹⁹⁸ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 1-5:

Վերոգրյալ եզրահանգումների պայմաններում Վերաքննիչ դատարանը գրնում է, որ թիվ ԵԴ/0253/01/19 գործով [մեղադրյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորում] անփոփոխ թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի որոշումն այնպիսի դատական ակտ է, որը ենթակա չէ անմիջական վերաքննիչ բողոքարկման (...)»¹⁹⁹:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը նշել է, որ թույլ է տրվել Ռ.Քոչարյանի իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ վերջինս գրկվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով, 1-ին կետի «գ» ենթակետով, 3-րդ, 4-րդ կետերով և 5-րդ հոդվածի հետ փոխկապակցված՝ 13-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից:

8. Ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանի որոշումն այն մասով, որը վերաբերում է Ռ.Քոչարյանի խափանման միջոցին, գուրկ է կալանավորման հիմքերին ու պայմաններին վերաբերող որևէ պատճառաբանությունից, կայացվել է առանց Ռ.Քոչարյանի և նրա պաշտպանների փաստարկները լսելու, առանց այդ հարցի քննարկմանը նրանց մասնակից դարձնելու:

Բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ փաստացի, անորոշ ժամկետով երկարացվել է Ռ.Քոչարյանին կալանքի տակ պահելու ժամկետը, այդ որոշմամբ լուծում չի տրվել կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ Ռ.Քոչարյանի պաշտպանի՝ 2019 թվականի հունիսի 27-ի և օգոստոսի 14-ի միջնորդություններին, ինչպես նաև այդ որոշումը կայացվել է կալանքն անփոփոխ թողնելու վերաբերյալ մեղադրանքի կողմի միջնորդության բացակայության պայմաններում, ինչն ի սկզբանե բացառել է մրցակցային դատավարության հնարավորությունը:

9. Բացի այդ, բողոքաբերն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ անդրադարձել է Ռ.Քոչարյանի խափանման միջոցի հարցին, թողել է անփոփոխ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը և այդ պահից սկսած Ռ.Քոչարյանի մոտ ծագել է Առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու իրավունքը:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր անհապաղ քննության առնել պաշտպանի վերաքննիչ բողոքը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն այն չի քննել՝ պատճառաբանելով, որ դա պայմանավորված է նրանով, որ ամբաստանյալն Առաջին ատյանի դատարանում խափանման միջոցի քննությանը մասնակից չի եղել և բողոքարկման իրավունք կունենար, եթե մասնակից դարձվեր:

¹⁹⁹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 65-74:

Բողոքաբերը նշել է, որ եթե Վճարակ դատարանը կհամաձայնվի այն պնդման հետ, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը ենթակա է եղել քննության, ապա պետք է հենց ինքն անհապաղ քննի և լուծում տա Ռ.Քոչարյանի խափանման միջոցի հարցին:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ստորադաս դատարանների դատական ակտերը՝ Ռ.Քոչարյանի մասով, բեկանել և փոփոխել, կալանքը որպես խափանման միջոց վերացնել և վերջինիս ազատել կալանքից, հակառակ դեպքում, գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի և որոշում կայացնել՝ Ռ.Քոչարյանին կալանքից գրավով ազատելու մասին՝ սահմանելով գրավի ողջամիտ չափ:

Վճարակ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճարակ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալունյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը՝ Ռ.Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն անմիջական վերաքննիչ բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

12. ՀՀ Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԳՌ-1421 որոշմամբ անդրադառնալով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննության արդյունքում կայացված որոշման բողոքարկման հնարավորությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) ***[Քրեական գործը դատարանի քննության նախապատրաստելու ժամանակ դատարանի կողմից առանց մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և ընտրված կալանքը հիմնավոր համարելու հարցի քննությունը չի սահմանափակում անձին՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունը՝ դատարանի բողոքարկման (արուզման) ձևով դրսևորվելու դեպքում:***

(...) *[Գործը դատարանի քննության նախապատրաստելու փուլում վիճարկվող իրավակարգավորման ուժով մեղադրյալի նկատմամբ անձնական ազատության իրավունքի սահմանափակում նախատեսող խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունվում է որոշում (Օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մաս), որն, ի թիվս այլնի, Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետի, ինչպես նաև Օրենսգրքի 73-րդ հոդվածի 15-րդ կետի ուժով կարող է բողոքարկվել մեղադրյալի, նրա պաշտպանի կողմից (...): Ոստիկան, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը խնդրահարույց չէ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համարադրված այն առումով, որ Օրենսգրքում, մասնավորապես, սուկա են կալանքի՝ որպես խափանման միջոցի*

վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունված որոշման դատական բողոքարկման (սպուզման) օրենսդրական երաշխիքներ (...)²⁰⁰:

13. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը, վերանայելով *Անուշ Ղափալյանի* գործով արտահայտած իրավական դիրքորոշումները²⁰¹, *Գարիկ Սարգսյանի* գործով փաստել է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու (այդ թվում նաև՝ կալանավորումը վերացնելու կամ այլ խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունը մերժելու) մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով²⁰²:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ Առաջին ատյանի դատարանը որոշել է, Ռ.Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ և առաջին դատական նիստում՝ կողմերի մասնակցությամբ քննության առնել մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ այլ խափանման միջոց կիրառելու վերաբերյալ պաշտպան Հ.Խուդոյանի միջնորդությունները²⁰³,

- Վերաքննիչ դատարանը Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ Ռ.Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն անմիջական վերաքննիչ բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ քրեական գործը դատական քննության նշանակելու փուլում մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշումը ենթակա է անմիջական վերաքննիչ բողոքարկման միայն այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանը, ի կատարումն ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՌ-1421 որոշման պահանջների, մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցությամբ քննության է առնում մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը²⁰⁴:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով

²⁰⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՌ-1421 որոշման 4.2-րդ կետը:

²⁰¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Անուշ Ղափալյանի* գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵՔԲԴ/0299/01/08 որոշման 21-րդ կետը:

²⁰² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարիկ Սարգսյանի* գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԵԿԿ/0294/01/17 որոշման 14-րդ կետը:

²⁰³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²⁰⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

բողոքարկվել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ կալանավորումն անփոփոխ թողնելու մասին որոշումը, որը ենթակա է անմիջական վերաքննիչ բողոքարկման: Այս առումով հարկ է նշել, որ քրեական գործը դատական քննության նախապատրաստելու ժամանակ դատարանի կողմից առանց մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելը չի սահմանափակում անձի՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունը՝ դատական բողոքարկման ձևով: Ավելին, հենց առանց կողմերի մասնակցության խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննարկման իրավաչափությունը, ի թիվս այնի, բարձրացվել էր պաշտպանի կողմից և ենթակա էր քննության Վերաքննիչ դատարանում:

16. Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալունյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը՝ Ռ.Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն անմիջական վերաքննիչ բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

17. Անփոփոխվելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալունյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար: Թեև բողոքի հեղինակը նշել է, որ եթե Վճռաբեկ դատարանը կհամաձայնվի այն պնդման հետ, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը ենթակա է եղել քննության, ապա պետք է հենց ինքն անհապաղ քննի և լուծում տա Ռ.Քոչարյանի խափանման միջոցի հարցին, սակայն հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* վերաբերյալ գործով արտահայտված իրավական դիրքորոշումները²⁰⁵, այդ թվում՝ դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշմամբ արձանագրված խախտումների պայմաններում զրկված է բողոքաբերի մյուս փաստարկների կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու հնարավորությունից, քանի որ դրանք կարող են քննարկման առարկա դարձվել սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Հետևաբար, նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, պետք

²⁰⁵ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

է քննարկման առարկա դարձնի Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալունյանի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանի պաշտպան Հ.Ալունյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

14.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0003/01/15

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի փետրվարի 25-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Իսրայել Ռոզլերտի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հունվարի 27-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կենտրոնականի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13109214 քրեական գործը:

2014 թվականի փետրվարի 3-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 59100114 քրեական գործը:

2014 թվականի փետրվարի 3-ին Իսրայել Ռոզվերտի Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու կասկածանքով ձերբակալվել է:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի ավագ քննիչ Հ.Պողոսյանի՝ 2014 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ թիվ 59100114 և 13109214 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում՝ 13109214 համարի ներքո:

2. 2014 թվականի փետրվարի 6-ին Իսրայել Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ Ի.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2014 թվականի փետրվարի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 59100314 քրեական գործը, որը ևս միացվել է թիվ 13109214 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ Ի.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի ապրիլի 16-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից թիվ 13109214 քրեական գործը հանձնվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությանը՝ հետագա նախաքննությունը կատարելու համար:

2014 թվականի դեկտեմբերի 23-ին Ի.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի հունվարի 20-ին թիվ 13109214 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռով Ի.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով՝ ազատազրկում՝ 16 (տասնվեց) տարի ժամկետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով՝ ազատազրկում՝ 17 (տասնյոթ) տարի ժամկետով,

235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատագրելու՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ի.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատագրելու՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով, որի սկիզբը հաշվվել է 2014 թվականի փետրվարի 3-ից, իսկ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ ամբաստանյալ Ի.Սարգսյանի պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է, այն է՝ ամբաստանյալ Ի.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատագրելու՝ 11 (տասնմեկ) տարի ժամկետով, որը մասնակիորեն գումարվել է հիշյալ դատավճռով նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով նշանակված՝ 17 (տասնյոթ) տարի ժամկետով ազատագրվմանը, և վերջնական պատիժ է սահմանվել ազատագրելու՝ 19 (տասնինը) տարի ժամկետով: Առաջին ատյանի դատարանի դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Նախաքննության մարմնի կողմից Իսրայել Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) *Մտախաբելու և օժանդակել է Մովսես Ռուբենի Ներսիսյանի կողմից Արթուր Գուրգենի Սաֆարյանի սպանության կատարմանը, սպա այդ հանցանքը թաքցնելու նպատակով սպորինաբար, դիտավորությամբ գրկել է կյանքից Մովսես Ներսիսյանին,*

բացի այդ, ապօրինի ձեռք է բերել և կրել է հրազեն հանդիսացող՝ «ՏԿ» մոդելի արբճանակ և ռազմամթերք հանդիսացող՝ 3 հայր 5,6 մմ փրամաչափի փամփուշներ, ինչպես նաև ապօրինի ձեռք է բերել ու իր փաստացի բնակության վայրի՝ ք.Երևան, Կոմիտասի պողոտա 27/1 շենք, բն. 7 հասցեին հարող փարածքում գրնվող ավերուրնակում առկա երկաթյա պահարանում պահել ռազմամթերք հանդիսացող նպատակային օգրագործման համար պիրանի, գործարանային արտադրության «ԷԴՊ» տեսակի էլեկտրական թվով 4 հայր ճայթիչներ և ներդրական պայթուցիկ նյութերի շարքին դասվող՝ գործարանային արտադրության դեղնաշագանակագույն և շագանակագույն զանաձև արկային վառողի թվով 15 հայր հայրիկներ.

Այսպես.

Իսրայել Սարգսյանը, ծանոթ լինելով եղբայրներ Թևոս և Արթուր Գուրգենի Սաֆարյաններին, նրանց հետ կապը հիմնականում պաշտպանել և շփոմներ է ունեցել ընկերոջ՝ Տիգրան Վարդանի Ասատրյանի միջոցով, ով հանդիսացել է Արթուր Սաֆարյանի երեխայի կնքահայրը:

Իսրայել Սարգսյանը, սրանստով պարվեր՝ իրականացնել Արթուր Գուրգենի Սաֆարյանի սպանությունը՝ վերջինիս եղբոր՝ Թևոս Սաֆարյանի դիրքերը և նրա ազդեցությունը միջավայրում թուլացնելու նպատակով, 2013 թվականի հոկտեմբեր ամսին սպանության կատարումը պարվիրել է Մովսես Ռուբենի Ներսիսյանին: Սրանստով վերջինիս համաձայնությունը պայմանավորվել է, որ անձամբ կցուցաբերի նրան անհրաժեշտ օժանդակություն սպանությունը կատարելիս: (...)»²⁰⁶:

7. Առաջին առյանի դատարանն իր՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռում արձանագրել է հետևյալը. «(...) [Այսպես] վերլուծելու, համադրելու և գնահատելու արդյունքում Գաբարյանը գալիս է այն եզրահանգման, որ Իսրայել Սարգսյանը օժանդակել է Մովսես Ռուբենի Ներսիսյանի կողմից Արթուր Գուրգենի Սաֆարյանի սպանության կատարմանը, ապա այդ հանցանքը թարցնելու նպատակով ապօրինաբար, դիրավորությամբ զրկել է կյանքից Մովսես Ներսիսյանին, բացի այդ, ապօրինի ձեռք է բերել և կրել է հրազեն հանդիսացող՝ «ՏԿ» մոդելի արբճանակ և ռազմամթերք հանդիսացող՝ 3 հայր 5,6 մմ փրամաչափի փամփուշներ, ինչպես նաև ապօրինի ձեռք է բերել ու իր փաստացի բնակության վայրի՝ ք.Երևան, Կոմիտասի պողոտա 27/1 շենք, բն. 7 հասցեին հարող փարածքում գրնվող ավերուրնակում առկա երկաթյա պահարանում պահել է ռազմամթերք հանդիսացող նպատակային օգրագործման համար պիրանի, գործարանային արտադրության «ԷԴՊ» տեսակի էլեկտրական թվով 4 հայր ճայթիչներ և ներդրական պայթուցիկ նյութերի շարքին դասվող՝ գործարանային արտադրության դեղնաշագանակագույն և շագանակագույն զանաձև արկային վառողի թվով 15 հայր հայրիկներ:

(...)

²⁰⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 27-րդ, թերթեր 116-120:

Դատարանը, ուսումնասիրելով Իսրայել Սարգսյանին առաջադրված մեղադրանքը, արձանագրում է, որ Մովսես Ներսիսյանի կողմից Արթուր Սաֆարյանի սպանության կատարումը կազմակերպելը մեղադրանքի կողմի հետևությունը հիմնված է բացառապես Տիգրան Ասատրյանի փանից խուզարկությանը հայտնաբերված էլեկտրոնային կրիչում առկա խոսակցության ձայնագրությունով և Տիգրան Ասատրյանի ցուցմունքով և փարբեր անձանց անուններով հեռախոսաքարտերով կատարված զանգերով: Այս առումով Դատարանը հարկ է համարում նշել, որ գաղտնի հեռախոսահամարներով կապ պահպանելը ինքնին չի կարող անվերապահորեն վկայել Իսրայել Սարգսյանի կողմից Արթուր Սաֆարյանի սպանության կազմակերպումը, ավելին սույն քրեական գործի նյութերում բացակայում է որևէ ապացույց և հիմնավորում, որ ինչպես նշված է Իսրայել Սարգսյանին առաջադրված մեղադրանքում, որ նա ստացել է պատվեր իրականացնելու Արթուր Սաֆարյանի սպանությունը: Ինչպես նաև Տիգրան Ասատրյանի քնակարանում կատարված խուզարկության ժամանակ հայտնաբերված և փորձաքննության ներկայացված կրիչում առկա Իսրայել Սարգսյանի և Տիգրան Ասատրյանի միջև առկա խոսակցության մեջ Իսրայել Սարգսյանը չի հայտնում, որ ինքը ստացել է պատվեր, որպեսզի կազմակերպի Արթուր Սաֆարյանի սպանությունը, ավելին նա ամբողջ խոսակցության ընթացքում չի հայտնում, որ ինքն է կազմակերպել Արթուր Սաֆարյանի սպանության կազմակերպման մասին հայտնում է միայն Տիգրան Ասատրյանը իր ցուցմունքով, սակայն նրա փանից հայտնաբերված ձայնագրության մեջ նման բան առկա չէ: Հետևաբար Դատարանը գտնում է, որ փվյալ դեպքում այլ անձանց անուններով գրանցված գաղտնի հեռախոսահամարներով միմյանց հետ կապ պաշտպանելու ընթացքում Իսրայել Սարգսյանը օժանդակել է Մովսես Ներսիսյանին Արթուր Սաֆարյանի սպանության կատարման համար:

Դատարանը, հիմնվելով դատաքննության ժամանակ հետազոտված հավասարի ապացույցների վրա, գնահատելով դրանք համակցության մեջ, գտնում է, որ ապացուցված չէ Իսրայել Սարգսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հանցագործության այն մասը, որ նա կազմակերպել է Արթուր Սաֆարյանի սպանության կատարումը: (...)

Դատարանը սույն քրեական գործով Իսրայել Սարգսյանին առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետից ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը փոփոխելը հնարավոր է համարում, քանի որ մեղադրանքի նման փոփոխությունով ամբաստանյալի վիճակը չի վարթարանում:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Իսրայել Սարգսյանին վերագրվող արարքի իրավաբանական որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետից պետք է

վերատրակել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով: (...)»²⁰⁷:

7.1. Սույն քրեական գործից անջատված թիվ 58218014 քրեական գործով մեղադրյալ Տիգրան Վարդանի Ասատրյանը հրաժարվել է դատարանում ցուցմունքներ տալուց, սակայն միաժամանակ պնդել է իր նախաքննական ցուցմունքները: Նախաքննության ընթացքում Տ.Ասատրյանը, ի թիվս այլի, հայտնել է, որ Արթուր Սաֆարյանին ճանաչում է շուրջ 10 տարի, նրա հետ ծանոթացել է վերջինիս եղբոր՝ Թևոսի միջոցով, հանդիսանում է Արթուրի դստեր կնքահայրը: Նրա հետ գտնվել է ջերմ, ընկերական փոխհարաբերությունների մեջ: 2014 թվականի հունվարի 27-ին՝ ժամը 00:20-ին, իրեն զանգահարել են Արթուրի հեռախոսահամարից և վերջինիս կինը՝ Նառան, ասել է, որ Արթուրին խփել են, տանում են Պոռչյանի հիվանդանոց: Ինքն ու կինն անմիջապես մեկնել են հիվանդանոց, որտեղ իմացել է՝ Արթուրն արդեն մահացել է: Այնտեղից գնացել են Արթուրենց տուն, որտեղ մինչև լուսաբաց ինքը մնացել է բակում՝ իր ծանոթ ոստիկանների հետ: Հիվանդանոց գնալու ճանապարհին զանգահարել է իր ընկեր Իսրայել Սարգսյանին (Իսոյին) և հարցրել է, թե որտեղ է նա, վերջինս պատասխանել է, որ փողոցում ման է գալիս: Հարցնելով, թե ինչ է պատահել և տեղեկանալով կատարվածի մասին՝ Իսոն նույնպես եկել է հիվանդանոց: Հիվանդանոցի բակում ինքը տեսել է Իսոյին և նրա ընկեր Տիգրանին, որոնք հետո եկել են Արթուրենց բակ ու մնացել շուրջ 1 ժամ, իսկ այնուհետև գնացել են:

Իր տանից հայտնաբերված կրիչի (ֆլեշկայի) վերաբերյալ հայտնել է, որ դրանում առկա ձայնագրությունն ինքն է կատարել զուտ իր անվտանգության և ապահովության համար՝ 2014 թվականի փետրվարի 3-ին՝ ժամը 12-ի սահմաններում, իր տանը՝ սպորտ-սրահում: Այն կատարելու նպատակը կայանում էր նրանում, որ Արթուրի սպանությունից հետո իր և Իսրայել Սարգսյանի միջև բացվել է տարօրինակ խոսակցություն, որն իրեն մտածելու մեծ առիթ է տվել, և ինքը որոշել է գնալ այդ քայլին: 2014 թվականի հունվարի 28-ի գիշերը՝ ժամը 00-ի սահմաններում, ինքը հանդիպել է ոստիկան Գրիգորին, մոտ մեկ ժամ զրուցել են այդ թեմաներից: Գրիգորն իրեն ասել է, որ «Մերսեդես 124 E» մոդելի ինչ-որ մեքենա կա իրենց տեսադաշտում, այն գնում է դեպի Նոր Նորքի 3-րդ զանգված և այնտեղից անհետանում է: Նաև ասել է, որ տեսախցիկից հանված վերծանման մեջ ինչ-որ մարդու ուրվագիծ է երևում, հնարավոր է՝ բարձր տեխնոլոգիաների միջոցով հնարավոր լինի տեսնել, թե ով է դա: Իսկ նշված «Մերսեդեսի» համարանիշը, հնարավոր է, մոտ ժամանակահատվածում ճշտվի: Հաջորդ օրը՝ Արթուրի թաղումից հետո, երեկոյան իրենց բակ է եկել Իսոն, կրկին զրուցել են Արթուրի թեմաներով: Ինքը Իսոյին ասել է, որ գործը, բարեբախտաբար, շուտով կբացվի, քանի-որ կոնկրետ տվյալներ կան, ոստիկանությունը դուրս է եկել ինչ-որ «E» մոդելի մեքենայի վրա, որը Պրոսպեկտից գնում է 3-րդ մասիվ և այնտեղ անհետանում

²⁰⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 37-րդ, թերթեր 53-202:

է: Իսոն իրեն արագ հարցրել է՝ «բա համարը»: Ինքը պատասխանել է, որ համարը ճշտվում է, մոտ օրերս պարզ կլինի նաև տեսախցիկի վերծանումը, թե ով է եղել: Իսոն իր ասածից ինչ-որ ձևով այլայլվել է և քիչ դադար տալուց հետո ասել է, որ լավ չի լինի: Նրա ասածը իրեն հանկարծակի է բերել, և ինքը նրան հարցրել է, թե ինչը լավ չի լինի: Իսոն քիչ լռելուց հետո ասել է, որ գիտի, թե ով է կատարել սպանությունը: Ինքը զարմացել ու հարցրել է, թե երբվանից գիտի և ով է դա կատարել: Իսոն պատասխանել է, որ ի սկզբանե էլ իմացել է, դա կատարել է Մոսոն: Ինքը նրան հարցրել է, թե ինչ պայմաններում է նա իմացել և ինչու չի խափանել այդ դեպքը, չէ որ գիտեր՝ Արթուրն իր ընկերն է և իրենց տան քավորը, նշանակում է այդ քայլով իր վրա էլ է ոտնձգություն կատարվել: Իսոն ասել է, որ գործ ունի և պետք է գնա: Նա կրկին եկել է ժամը 2-ի սահմաններում: Ինքը Իսոյին խնդրել է ճիշտ պատասխանել իր հարցին՝ արդյոք նրա «մատը խառն է» Արթուրի սպանության գործին, թե ոչ: Վերջինս երդվել է, որ Արթուրի սպանության հետ կապ չունի, ընդամենը իմացել է այդ մասին: Իր հաջորդ հարցին, որ եթե կապ չունի, ինչու է Մոսոն նրան ի սկզբանե ասել և ինչու նա որևէ քայլ չի ձեռնարկել, Իսոն ասել է, որ այդ հարցին կպատասխանի հետո: Ինքը Իսոյին հարցրել է, թե արդյոք Մոսոն նրան պատմել է, թե ինչպես և ինչ պայմաններում է Արթուրին սպանել: Իսոն պատասխանել է, որ Մոսոն պատմել է այդ մասին և ներկայացրել է որոշ մանրամասներ: Ինքն Իսոյին խնդրել է, որ Մոսոյին ամեն կերպ աշխատի բերել իր մոտ, կամ կազմակերպի մեկ այլ վայրում հանդիպելը, քանի որ ինքը նրա հետ շատ խոսելու բաներ ունի: Իսոն, լսելով իրեն, մի քիչ մտածելուց հետո ասել է, որ անպայման կաշխատի այս մտակա օրերին այդ հանդիպումը կազմակերպել:

2014 թվականի հունվարի 30-ին՝ երեկոյան իր տուն են այցելել Արայիկը և Գրիգորը, իսկ քիչ ավելի ուշ նաև Իսոն: Բնականաբար խոսակցությունը կրկին եղել է Արթուրի հետ կապված թեմաներով, և Գրիգորն ասել է, որ նա այլևս չի զբաղվում այդ գործի հետաքննությամբ: Իսոն, գտնվելով բարձր տրամադրության մեջ, մի պահ առանձնացել է իր հետ և մոտ 5 րոպե առանձնազրույց են ունեցել: Ինքը նախ Իսոյին հարցրել է, թե արդյոք նա տեսել է Մոսոյին և պայմանավորվել է հանդիպման համար, թե ոչ, ինչին Իսոն պատասխանել է, որ Մոսոն չի գա, և իրեն էլ դուր չի գալիս հանդիպման միտքը: Ինքը խնդրել է հանդիպումը թեկուզ սրճարանում կազմակերպել, սակայն այդ միտքը ևս Իսոյին դուր չի եկել: Իսոն իրեն ասել է, որ հանգիստ լինի, այդ հարցով այլևս չանհանգստանա, ամեն ինչ նորմալ է: Զարմանալով Իսոյի այդ պատասխանից՝ հարցրել է, թե այսքանից հետո ինչպես կարող է հանգիստ լինել, իսկ վերջինս պատասխանել է՝ մի բան գիտի, որ ասում է: Բացի այդ, Իսոն հարցրել է, թե ինչու է ինքն այդքան «բզբզում» այդ գործը, և խորհուրդ է տվել իրեն հեռու մնալ, քանի-որ կարող է պորբլեմների մեջ ինքն ընկել, իր մասով արդեն ինչ-որ շրջանակներում խոսակցություն է գնում:

Դրանից հետո ինքը Իսոյին չի տեսել մի քանի օր: Եղածն իրեն մտածելու տեղիք է տվել, և ինքը որոշել է մի հնար գտնել՝ հարցի լուծումը ստանալու

համար: Իր համար անհասկանալի է եղել արարքի պատճառը, քանի որ իր իմանալով՝ Իսոն Արթուրի հետ շատ լավ փոխհարաբերությունների մեջ է գտնվել, և խնդիրներ չեն ունեցել: Այդ ամենի մեջ ինքը վտանգ է տեսել ու ներքուստ եղել է անհանգիստ նախ այն պատճառով, որ իր մտածելով և հասկանալով հնարավոր էր, որ գործը շուտով բացահայտվեր, որի դեպքում ինքն ինչպես պետք է նայեր Արթուրի ընտանիքի, երեխաների աչքերին, չէ որ բոլորը գիտեին, որ Իսոն իր մտերիմ ընկերն էր, ինքն էր նրան Արթուրի հետ ծանոթացրել, բացի այդ ինքն ինչ պատասխան կարող էր տալ Թևոսի հարցերին, որ ինչպես է եղել, որ ինքն այդ ամենից տեղյակ չի եղել, ու ինչն է եղել պատճառը: Ինքը հասկացել է նաև, որ մարդիկ դրան կարող էին չհավատալ, ինչն էլ իր հետևանքները կթողներ: Հաջորդ մտահոգության պատճառը կայացել է նրանում, թե ինչ պատասխան իրենից կապասեին իրավապահ մարմինները, բացի այդ՝ այլ վտանգ նույնպես կար, մասնավորապես այն, որ ինքն արդեն իմացել էր այդ ամենի մասին, ու իր պահվածքն Իսոյի ու Մոսոյի հանդեպ կարող էր իր անձին վտանգ ներկայացնել: Մտածել է, որ եթե իրոք Մոսոն և Իսոն իր մեջքի ետևից գնացել են այդ քայլին, նշանակում է առաջին հերթին Իսոն ոտնակոխ է արել և՛ իրեն, և՛ իր ընտանիքին, ապա ինչու արդեն հնարավոր չէր իր նկատմամբ էլ նմանատիպ քայլ անել, մասնավորապես որ Իսոն իրեն զգուշացրել էր, որ շատ է ինքը «բզբզում», խորհուրդ էր տվել իրեն հեռու մնալ, քանի որ կարող է պրոբլեմների մեջ ինքն ընկնել: Այդ մտավախությունն իրեն ստիպել է քայլեր ձեռնարկել իր ինքնասիրությունը, ազնվությունը և անվտանգությունն ապահովելու համար:

Փետրվարի 3-ին զանգահարել է Իսոյին և հրավիրել իր տուն՝ մտադրվելով նրան ձայնագրել: Պայմանավորված ժամին գալով և նստելով տան հյուրասենյակում՝ Իսոն, քննադատաբար տալով, ասել է, որ հանգիստ լինի, Մոսոն այլևս չկա՝ ինքը Մոսոյին վերջինիս մեքենայով տարել և հարցերը լուծել է, իսկ մեքենան թողել է օդանավակայանում: Նաև ասել է, որ դա եղել է ամսի 1-ին: Ինքն Իսոյից հարցրել է, թե ինչ է նշանակում՝ հարցերը լուծել է, իսկ Իսոն պատասխանել է, որ սատկացրել է Մոսոյին: Ամեն դեպքում իր ապահովության և անվտանգության, ինչպես նաև իր ճշմարտության համար որոշել է Իսոյին ձայնագրել և այդ ձայնագրությունը պահել իր մոտ, մինչև կորոշեր ինչ անել: Այդ պատճառով Իսոյին խնդրել է կամաց խոսել՝ պատճառաբանելով, որ իր աղջիկն ու տան աշխատողը վերևի հարկում են, և ասել է, որ ավելի լավ կլինի գնան տան սպորտ-սրահում խոսեն: Մինչ այդ ինքը բարձրացել է 2-րդ հարկ՝ վերևում իրավիճակը տեսնելու պատրվակով, սակայն իրականում վերցրել է ձայնագրիչը, արագ իջել է սպորտ-սրահ և միացնելով այն՝ դրել է բազմոցի կողքը դրված երեխաների խաղալիքների պայուսակի մեջ: Այնուհետև Իսոյին առաջարկել է հեռախոսները թողնել հյուրասենյակում, նստել սպորտ-սրահում, լուրջ խոսել այդ ամենի մասին և վերջակետ դնել: Այդպես էլ արել են, և իրենք մոտ 40 րոպե խոսել են ինչպես այդ թեմայից, այնպես էլ իրենց վերաբերվող ուրիշ այլ թեմաներից:

Ինքն այնպես է գրույցը տարել, որ Իսոն ոչինչ չկասկածի: Չայնագրված խոսակցությունում Իսոն ասել է, որ նա պատերազմ է հայտարարել Թևոսին: Ինքն իրականում չգիտի՝ Թևոսի և Իսոյի մեջ ինչ թշնամություն կարող է լինել: Իսոյի և Թևոսի հարաբերությունները թշնամական չէին և ոչ մի դրդապատճառ ինքը չի տեսել, որ նրանք իրար հետ թշնամանային: Իրար տեսնելուց նորմալ փոխհարաբերվել են, նույնիսկ Իսոն անհանգստություն է ցուցաբերել, որ Թևոսին կալանավորել էին: Ինքը չգիտի՝ Իսոն ինչու է Մոսոյին առաջարկել սպանել Արթուրին, կամ թե Մոսոն է առաջարկել, կամ այդպիսի խոսակցություն ընդհանրապես եղել է, թե ոչ: Ինքն այդ մասին չգիտի և շատ-շատ կուզենար իմանալ: Իր համար դա մութ դաշտ է, ցանկանում է, որ Արթուրի սպանության դրդապատճառը պարզվի: Ինքը որևէ տվյալ չի ունեցել, որ Մոսոն Արթուրի սպանության համար գումար է վերցրել, ուղղակի նման ձևով փորձել է Իսոյից պարզել, թե Մոսոն փողի համար է գնացել այդ քայլին, թե ոչ, բացի այդ փորձել է Իսոյի ռեակցիան ստուգել: Չայնագրության որոշ հատվածներ ինքը ջնջել է, որոնք բոլորովին կապ չեն ունեցել այդ թեմայի հետ, անձնական և հին ու նոր խոսակցություններ են եղել, որը խոսացվել է իր նախաձեռնությամբ՝ Իսոյին կասկածից դուրս պահելու համար, որ այդ խոսակցությունը կարող է ձայնագրվել: Այդ խոսակցության ընթացքում նաև եղել են լուռ պահեր, որոնք իմաստ չունեն պահել: Չայնագրությունից ինքն ինչը որ անհրաժեշտ է համարել՝ անցկացրել է ֆելեչկայի վրա ու պահել տանը²⁰⁸:

7.2. Տեսաձայնագրային փորձաքննության թիվ 07351406 եզրակացության համաձայն՝ Տ.Ասատրյանի բնակության վայրում խուզարկությամբ հայտնաբերված էլեկտրոնային կրիչում առկա են, մասնավորապես, հետևյալ խոսակցությունները.

«Տ. Ա. (Տիգրան Ասատրյան)– Ախպեր, չեմ հավսարում, որ դու իրան խիտե-
րցել ես, Իսո ջան:

Ի. Ա. (Իսրայել Սարգսյան) – Դե հե՛սա որ (տրոսպը գտնեն):

(...)

Տ. Ա. – Իսո ջան, խի՞, խի՞ ախպեր, դու իմ մեջքի հետևից գնացիր, թաքուն
ախպեր փվիր իմ ընգերոչը, իմ սանիկին ...

Ի. Ա. – Ապեր, էրի քո ընգերն էր՞:

Տ. Ա. – Հա, իմ ընգերն էր:

Ի. Ա. – Արա լավ է:

(...)

Տ. Ա. – (...) Աուրուրի՞ն ինչի համար, ախպեր: Աուրուրն ի՞նչ էր արե:

Ի. Ա. – Ապե, ես Թը-Թևոսին պարերազմ եմ հայարարել:

Տ. Ա. – Հայարարել ես Աուրուրով, ապե, Աուրուրն ի՞նչ էր արե:

Ի. Ա. – Հա, Աուրուրը, որդև թուլացավ ինքը (կանկրեպնի):

²⁰⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 37-րդ, թերթեր 100-117:

Տ. Ա. – Չէ՛ ի՞նչ ա արե, Ադրուրը իմ սանիկն էր, արա, իմ ընտանիքի մարդն էր, Բսո ջան:

(...)

Բ. Ս. – Արա, ես քեզի չեմ խիտե մեշքի հետևից, Տիկո: Տիկո, ես էս անելով իմ կյանքն եմ փրգե, (ու) մեզ-քո կյանքն եմ փրգե: Ես էլ տենց եմ մտածում, ապե: Դու վաղը մյուս օր ընգնելու էիր Թևուսի բազանների մեջ, քեզ էլ էին հարցնելու, իսկ քո վրա մուշկա յա ֆոռում: Էր էլ ասեմ իմանաա: Մենակ Թևուսի ու Ադրուրի վրա մուշկա չի ֆոռում, քո վրա էլ ահագին խոսակցություն կա:

Տ. Ա. – Ի՞նչ խոսակցություն:

Բ. Ս. – Որ քեզ էլ պղի վարի տան:

Տ. Ա. – Ո՞վ ա: Ո՞վ:

Բ. Ս. – Իրա թշնամիները, ախպեր:

Տ. Ա. – Ու՞մ թշնամիները:

Բ. Ս. – Թևուսի:

Տ. Ա. – Ինչի՞:

Բ. Ս. – Դե տենց են մտածում, որովհետև դու ակտիվ ես իրանց համար բեասմթ: Ես, ես որո՞տո մաք ոչ մի բան չեմ անում, Տիկո:

Տ. Ա. – Թևուսի թշնամիներից մեկը դու ես:

Բ. Ս. – Չէ: Դու, Ադրուրը, Թե-Թևուսը, Ադրուրը, երրորդ համարի տակ դու ես կանգնած, ախպեր:

Տ. Ա. – Ապեր, էրի ես հասկանում եմ, դու ինչի էս հիմա ինձ ասում:

Բ. Ս. – Մարդիկ կան Ապերի կողմից բռնած, մարդիկ կան, ապե ջան, կոնկրետ քո վրա մուշկա են ֆոռոցում: Ես քեզ բան եմ ասում:

Տ. Ա. – Խի՞ ախպեր, ես ի՞նչ եմ արել:

Բ. Ս. – Որովհետև դու իրանց հետ ես, դու իրանց ախպերն ես, ախպեր ջան, տենց են իրանք իմանում (...):

Տ. Ա. – Թող մուշկա ֆոռոցեն, (...):

Բ. Ս. – (...) խի՞ ախպեր:

Տ. Ա. – Բա հենց ըրենց:

Բ. Ս. – Խի... խի՞ քո վրա, արա, մուշկա ֆոռոցեն:

(...)

Տ. Ա. – Իմ վրա մուշկա յա ֆոռում:

Բ. Ս. – Հա, թշնամիների կողմից քո վրա մուշկա յա ֆոռում, ախպեր, չասե՛մ: Եթե դու մտածում ես տենց բան չկա, սխալվում ես, ախպեր, մարդիկ конкретно ու էրի շուրջանից կա, ասեմ քեզի: Իրանց կլանի մեջ, ախպեր ջան, Թևուսից, Ադրուրից հետք քեզ են երրորդ մարդ տեսե:

Տ. Ա. – Ապեր, իրանց ըրենց բան հնարավոր չի, արի էրի մի հասր թողնենք մի կոմ, եթե ինձ են տեսե, քեզ էլ են տեսե, դու իմ հետի մարդկանցից ես:

Բ. Ս. – Հա, ես էլ եմ քո հետ գալի, բա ես քեզ էր եմ ասում, ասում եմ իմ կյանքն ու քո կյանքն եմ փրգե, ախպեր, ես էր անելով, ախպեր, հեռու մաս տրանցից, ապե:

(...)

Ի. Ս. – Ընենց չի էղև, խոսքի ասենք *дественница* չեմ ես, տենց բաների մեջ առաջի անգամ չեմ: (...) Պոսուրը ինչ-որ մի 15 փարվա ինտերվյալով, 15 փարվա ինտերվյալով հանգիստ ապրեցի:

Տ. Ա. – Հանգիստ ապրիր ապե, որտե ես կողքդ եմ էղև, քեզ շար հարցերում հեպ եմ պահե շար բաներից:

Ի. Ս. – Հա, բան չասի:

(...)

Ի. Ս. – Տիկո ջան, (...) ինքը ինձի պարմել ա, եթե ինքը ինձի տենց բան ա պարմել, ինքը կարա էս թեմայով էլ ուրիշ տեղ հեպո խոսար, հասկանում ես: Մասկվայից զակագ ա վեկայե էս (...): Մի հար հիշ գիղև ում...

Տ. Ա. – Ապե, ըստեղ դրսից փող ա վեկայվե, Իսո: Եթե:

Ի. Ս. – Ի՞նչ փող:

Տ. Ա. – Այ էս Աուրուրի գործով:

Ի. Ս. – Մոտոն փող վեկայած ըլիս, ասում ես:

Տ. Ա. – Հա ապե:

Ի. Ս. – ... փողը:

Տ. Ա. – Էսի փող ա վեգայվե, ապե:

Ի. Ս. – Հասարար բան ա՞ էրի բայց:

Տ. Ա. – Ես տենց մրածում եմ՝ փարբեր բաներից էլնելով, փարբեր խոսակցություններից, թեմաներից:

Ի. Ս. – Ապե, ես չեմ իմանում, ես Մոսոյին, ես Մոսոյի հեպ իմ փայ, իմ փայ ասել եմ՝ ախպեր արի անենք, ես քեզի ախպեր փող կրամ, բայց ես իրան թիվ չեմ ասե: Ինձ էլ ասել ա՝ «ախպեր, ջան, փող պեպ չի, Իսո ջան, քո համար ա՞ էրի պեպք, ախպեր քո ինքնասիրության համար, ասել եմ՝ հա»: Ասել ա՝ «փող պեպ չի, ապե, դու պոսուրը մենակ կարող ա ինձի ֆինանսավորես՝ էր բենզին ա, բան ա ման, էս մնացած բաներ ա, ախպեր ջան, էրի անում եմ, դու գործ չունես»: Մեր վերջին խոսակցությունը էր ա եղև: (...)»²⁰⁹:

8. Վերաքննիչ դատարանն իր՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Ինչպես հեղինակում է սույն գործի նյութերից, ամբաստանյալ Իսրայել Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով վերագրվող հանցանքի ավարտման օրը հանդիսանում է 2014 թվականի փետրվարի 3-ը, նրա մեղքը հասարարող մեղադրական դատավճիռն Առաջին ասրյանի դատարանը կայացրել է 2017 թվականի դեկտեմբերի 20-ին, այդ դատավճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով, և 2019 թվականի փետրվարի 3-ի դրությամբ օրինական ուժի մեջ մրած չի եղել, վաղեմության ժամկետի ընթացքը չի ընդհարվել կամ չի կասեցվել: Հեղինակում ամբաստանյալ Իսրայել Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պարասխանավորության ենթարկելով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցել է:

²⁰⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 14-րդ, թերթեր 127-131:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Առաջին արյանի դատարանի հաստատված փաստական հանգամանքներն ու հետևությունն առ այն, որ ամբաստանյալ Բ.Սարգսյանն օժանդակել է Մ.Ներսիսյանի կողմից Ա.Սաֆարյանի սպանության կատարմանը, ապա այդ հանցանքը թաքցնելու նպատակով դիրավորությամբ ապօրինաբար կյանքից զրկել է Մ.Ներսիսյանին, հիմնավորված են, բխում են դատաքննությամբ հետազոտված փաստական փյույաների ամբողջական, բազմակողմանի ու փրամաբանված վերլուծությունից, և դրանց հետ չհամաձայնելու իրավաչափ հիմքեր չկան:

(...)

Սույն գործով մեղադրանքի կողմն Առաջին արյանի դատարանի հաստատված փաստական հանգամանքները չի վիճարկել, իսկ պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների աստիճաններում չի կարող վերադաս դատարանի կողմից հաստատվել ամբաստանյալի համար առավել անբարենպաստ փաստական հանգամանքներ, քան արորադաս դատարանի կողմից հաստատվածը:

Ավելին, սույն գործով Առաջին արյանի դատարանի դատաքննությամբ հետազոտված ապացույցների համակցությունը ևս հիմք չի տալիս այդօրինակ դատողություն անելու համար: Իսկ ինչպես հետևում է վերը մեջբերվածից, Ա.Սաֆարյանի սպանության դրվագով ամբաստանյալ Բ.Սարգսյանի Առաջին արյանի դատարանի հաստատված հանցակցությունը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով, այլ ոչ թե նույն օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Ընդ որում, հատկանշական է նաև այն, որ Առաջին արյանի դատարանը թեև դատողություն է արել առ այն, որ նշված դրվագով ամբաստանյալ Բ.Սարգսյանի արարքին մինչդարակյան վարույթի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով տրված քրեաիրավական գնահատականը պետք է փոխվի, և որ դրանով ամբաստանյալի վիճակը չի վարթարանա, սակայն անհասկանալի հետևություն է արել այն մասին, որ. «[Բ.] Սարգսյանին վերագրվող արարքի իրավաբանական որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետից պետք է վերադասվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով» (...):

Արդյունքում Ա.Սաֆարյանի սպանության դրվագով ամբաստանյալ Բ.Սարգսյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով որակելով Առաջին արյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշդ կիրառում, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի համաձայն, հիմք է հանդիսանում բողոքարկված դատական ակտն այդ մասով բեկանելու համար:

Դրա հետ մեկտեղ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին արյանի դատարանի հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս Ա.Սաֆարյանի սպանության դրվագով

ամբաստանյալ Ի.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելու և նրա նկատմամբ համապատասխան պատիժ նշանակելու, ինչը բխում է նաև արդարադատության արդյունավետության շահից (...)»²¹⁰:

Վճռարենկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարենկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերի կարծիքով, Ի.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելու դրվագով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշումն օրինական և հիմնավորված չէ:

Մասնավորապես, Տ.Ասատրյանի ցուցմունքների և վերջինիս բնակարանում հայտնաբերված կրիչի վրա առկա ձայնագրության բովանդակության վերլուծության արդյունքում բողոքի հեղինակն ընդգծել է, որ Ի.Սարգսյանը տեղեկացված է եղել Թևոս և Արթուր Մաֆարյանների կողմից որոշակի շրջանակի անձանց հետ ունեցած խնդիրների, այդ խնդիրները Մաֆարյաններին և նրանց մերձավոր շրջապատի անձանց սպանելու միջոցով լուծելու մտադրության մասին, ինչով Ի.Սարգսյանը հաստատել է նաև իր կապը նշված շրջանակի անձանց հետ: **«Մոսկվայից գալիս ա վեկալե»** արտահայտությամբ Ի.Սարգսյանն ըստ էության Տ.Ասատրյանին ակնարկել է սպանության պատվիրատուի առկայության մասին, սակայն չցանկանալով բացահայտել պատվիրատուին և նրա մասին իր տեղեկացվածությունը՝ միևնույն ժամանակ նշել է, որ **«իր փայով»**, այսինքն՝ **«Մոսկվայից վեկալած գալիսից»** գատ, ինքը Մ.Ներսիսյանին առաջարկել է կատարել սպանությունը՝ խոստանալով դրա դիմաց փող տալ, ինչին Մ.Ներսիսյանը պատասխանել է, որ փող պետք չէ, միայն կարող է ֆինանսավորել բենզինի և նման բաների համար:

Բողոքաբերը նշել է նաև, որ քրեական գործի քննության ընթացքում ձեռնարկվել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման ապահովմանն ուղղված անհրաժեշտ միջոցները, սակայն Ի.Սարգսյանի կողմից հանցանքը կատարելու որևէ այլ շարժառիթի վերաբերյալ տվյալներ ձեռք չեն բերվել:

10. Վերոշարադրյալի վերլուծության արդյունքում բողոքի հեղինակն ընդգծել է, որ Թևոս և Արթուր Մաֆարյանները որոշակի խնդիրներ են ունեցել «հանցավոր աշխարհի» որոշ ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում Ի.Սարգսյանը ստացել է Ա.Մաֆարյանին սպանելու պատվեր, որը փոխանցել է Մ.Ներսիսյանին, ապա անձամբ օժանդակել վերջինիս նշված սպանությունը կատարելու հարցում՝ տրամադրելով միջոցներ և

²¹⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 40-րդ, թերթեր 92-231:

տեղեկատվություն: Ընդ որում, Առաջին ատյանի դատարանը ևս նման կերպով է գնահատել գործով ապացույցները և Ա.Սաֆարյանի դրվագով Ի.Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը քննարկվող հարցի կապակցությամբ ճիշտ չի գնահատել գործով ապացույցները և սխալ եզրահանգման է եկել, արդյունքում Ա.Սաֆարյանի սպանության դրվագով Ի.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերաորակել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով:

11. Վերոնշյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշումը մասնակիորեն բեկանել և ամբաստանյալ Ի.Սարգսյանին, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով առաջադրված մեղադրանքից բացի, մեղավոր ճանաչել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով ու նրա նկատմամբ նշանակել արդարացի պատիժ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատվերով սպանության քրեաիրավական հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ համանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞՞ծ է արդյոք ամբաստանյալ Ի.Սարգսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը պատասխանատվություն է սահմանում *շահադիտական դրդումներով, պարվերով, ինչպես նաև շորթմամբ, ավազակությամբ կամ բանդիտիզմով գուցորդված սպանության համար:*

Սպանության վերոնշյալ որակյալ տեսակների համար ընդհանուր է այն, որ դրանք, որպես կանոն, կատարվում են շահադիտական դրդումներով և, ըստ էության, շահադիտական դրդումներով սպանության մասնավոր դրսևորումներ են: Մինևույն ժամանակ, դրանցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ առանձնահատուկ հատկանիշները, ուստի օրենսդրորեն սպանության քննարկվող տեսակների առանձնացումն արդարացված է:

13. Անդրադառնալով պատվերով սպանության քրեաիրավական հատկանիշներին՝ հարկ է նկատել, որ ի տարբերություն սպանության այլ տեսակների, որոնց դեպքում հանցավորը առավել հաճախ գործում

է միայնակ, պատվերով սպանության դեպքում հանցանքի կատարմանը մասնակցում են առնվազն երկու անձ՝ պատվիրատուն և կատարողը: Սուբյեկտիվ կողմից պատվերով սպանությունը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ, իսկ հանցագործության շարժառիթը կամ նպատակը սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ չեն, ուստի արարքի որակման վրա չեն ազդում: Մինևույն ժամանակ, պատվերով սպանությունները հիմնականում կատարվում են շահադիտական դրդումներով, թեպետ որոշ դեպքերում կարող են միանգամայն այլ շարժառիթներ հետապնդել: Ուստի, կարելի է տարանջատել պատվերով սպանությունների երկու խումբ՝ շահադիտական դրդումներով կատարվող (վարձու սպանություններ) և այլ շարժառիթով կատարվող պատվերով սպանություններ:

13.1. Վարձու սպանությունը շահադիտական դրդումներով կատարվող սպանության հատուկ տեսակ է, քանի որ հանցավորը կատարում է սպանությունը՝ պատվիրատուից ակնկալելով նյութական կամ այլ վարձատրություն (դրամ, այլ գույք, գույքային իրավունքներ, նյութական ծախսերից և պարտականություններից ազատում, աշխատանքի տեղավորում, աշխատանքում առաջխաղացման ապահովում, պաշտոնի բարձրացում և այլն): Այլ կերպ՝ այս դեպքում սպանության պատվերն ամրապնդվում է հանցավորին նյութապես շահագրգռելով, իսկ կատարողն էլ գործում է պատվիրատուից նյութական շահ ստանալու ներքին մղումով:

Մինևույն ժամանակ, վարձու սպանություններն ունեն որոշ առանձնահատկություններ, որոնցով տարբերվում են շահադիտական դրդումներով սպանություններից: Այսպես՝ շահադիտական դրդումներով կատարվող սպանության դեպքում հանցավորը, որպես կանոն, նյութական ակնկալիքներ ունի անմիջականորեն տուժողից և գործում է սեփական նախաձեռնությամբ, մինչդեռ պատվերով սպանության դեպքում հանցանքը կատարողը տուժողին կյանքից զրկելու հարցում չունի անձնական շահագրգռվածություն, հանցագործությունը կատարվում է պատվիրատուի նախաձեռնությամբ՝ նրանից հատուցում ստանալու պայմանով: Ընդ որում, եթե վարձու սպանության դեպքում կատարողը գործում է նյութական շահ ստանալու դրդումներով, ապա պատվիրատուն կարող է նաև լրիվ այլ շարժառիթներ հետապնդել: Այսպիսով, վարձու սպանությունը՝ որպես պատվերով սպանության տարատեսակ, ենթադրում է հանցանքի կատարումը նյութական հատուցման դիմաց և այլ անձի կամ անձանց շահերից ելնելով:

Միաժամանակ, ինչպես նշվեց, պատվերով սպանությունները կարող են կատարվել նաև այլ ոչ շահադիտական դրդումներով, առանց նյութական օգուտ կամ այլ վարձատրություն ստանալու ակնկալիքի (օրինակ, երբ անձն առանց վարձատրության, պարտքի զգացումից ելնելով, կատարում է տուժողին կյանքից զրկելու վերաբերյալ ղեկավարի կամ իր համար հեղինակություն վայելող անձի կամ անձանց առաջադրանքը և այլն):

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածը սահմանում է. «1. *Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը սպացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ: (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ «*Գործով հավաքված սպացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ արուզման՝ ձեռք բերված սպացույցի վերլուծության, այն այլ սպացույցների հետ համադրելու, նոր սպացույցներ հավաքելու, սպացույցների ձեռքբերման աղբյուրներն արուզելու միջոցով»:*

Նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1. *Յուրաքանչյուր սպացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ սպացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

2. *Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, սպացույցները գնահատում են սպացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:*

Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ սպացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը որպես սպացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող սպացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ սպացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև սպացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով սպացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա սպացույցները բարեխիղճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով²¹¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ի.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա կազմակերպել է Մ.Ներսիսյանի կողմից Ա.Սաֆարյանի սպանությունը և

²¹¹ Տե՛ս *mutatis mutandis*, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԲԲԴ/0632/01/08, Հմայակ Դավթյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԴ/0126/01/12 որոշումները:

օժանդակել դրա կատարմանը, այն է՝ ստանալով պատվեր՝ իրականացնելու Ա.Սաֆարյանի սպանությունը՝ վերջինիս եղբոր՝ Թ.Սաֆարյանի դիրքերը և նրա ազդեցությունը միջավայրում թուլացնելու նպատակով, 2013 թվականի հոկտեմբեր ամսին սպանության կատարումը պատվիրել է Մ.Ներսիսյանին: Ստանալով վերջինիս համաձայնությունը՝ պայմանավորվել է, որ անձամբ կցուցաբերի նրան անհրաժեշտ օժանդակություն՝ սպանությունը կատարելու համար²¹²:

Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ Ա.Սաֆարյանի սպանության կատարումն Ի.Սարգսյանի կողմից կազմակերպված լինելու վերաբերյալ մեղադրանքի կողմի հետևությունը պայմանավորված է բացառապես Տ.Ասատրյանի տնից խուզարկությամբ հայտնաբերված էլեկտրոնային կրիչում առկա խոսակցության ձայնագրությունով, Տ.Ասատրյանի ցուցմունքով և տարբեր անձանց անուններով հեռախոսաքարտերով կատարված զանգերով: Մինչդեռ, գաղտնի հեռախոսահամարներով կապ պահպանելն ինքնին չի կարող անվերապահորեն վկայել Ա.Սաֆարյանի սպանությունն Ի.Սարգսյանի կողմից կազմակերպված լինելու մասին, ավելին՝ սույն քրեական գործի նյութերում բացակայում է որևէ ապացույց և հիմնավորում, որ, ինչպես նշված է Ի.Սարգսյանին առաջադրված մեղադրանքում, նա ստացել է Ա.Սաֆարյանի սպանությունը իրականացնելու պատվեր: Մասնավորապես, Տ.Ասատրյանի բնակարանում կատարված խուզարկության ժամանակ հայտնաբերված և փորձաքննության ներկայացված կրիչում առկա՝ Ի.Սարգսյանի և Տ.Ասատրյանի միջև կայացած խոսակցության ժամանակ Ի.Սարգսյանը չի հայտնում, որ ինքը ստացել է պատվեր, որպեսզի կազմակերպի Ա.Սաֆարյանի սպանությունը, ավելին՝ նա ամբողջ խոսակցության ընթացքում չի հայտնում, որ ինքն է կազմակերպել Ա.Սաֆարյանի սպանությունը: Ի.Սարգսյանի կողմից Ա.Սաֆարյանի սպանության կազմակերպման մասին հայտնում է միայն Տ.Ասատրյանն իր ցուցմունքով, սակայն ձայնագրության մեջ նման բան առկա չէ:

Արդյունքում Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ Ի.Սարգսյանն օժանդակել է Մ.Ներսիսյանի կողմից Ա.Սաֆարյանի սպանության կատարմանը, իսկ ամբաստանյալին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված մեղադրանքի այն մասը, որ նա կազմակերպել է Ա.Սաֆարյանի սպանությունը, **ապացուցված չէ՝** Ի.Սարգսյանին վերագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետից վերադրակելով ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով²¹³:

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքներն

²¹² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

²¹³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ու հետևություններն առ այն, որ ամբաստանյալ Ի.Սարգսյանն օժանդակել է Մ.Ներսիսյանի կողմից Ա.Սաֆարյանի սպանության կատարմանը, ապա այդ հանցանքը թաքցնելու նպատակով դիտավորությամբ ապօրինաբար կյանքից զրկել է Մ.Ներսիսյանին, հիմնավորված են, բխում են դատաքննությամբ հետազոտված փաստական տվյալների ամբողջական, բազմակողմանի ու տրամաբանված վերլուծությունից:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով հաստատված արարքը համապատասխանում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, այլ նույն օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Այսպես՝ սույն գործով մեղադրանքի կողմն Առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները չի վիճարկել, իսկ պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերադաս դատարանը չի կարող հաստատված համարել ամբաստանյալի համար առավել անբարենպաստ փաստական հանգամանքներ, քան ստորադաս դատարանի կողմից հաստատվածը: Ավելին, ըստ Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանի դատաքննությամբ հետազոտված ապացույցների համակցությունը հիմք չի տալիս այդօրինակ դատողություն անելու:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ա.Սաֆարյանի սպանության դրվագով ամբաստանյալ Ի.Սարգսյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով որակելով՝ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս Ա.Սաֆարյանի սպանության դրվագով ամբաստանյալ Ի.Սարգսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով²¹⁴:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Ի.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելով, պատշաճ վերլուծության և գնահատման չի ենթարկել սույն գործում առկա ապացույցների համակցությունը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ իրավական գնահատականի չի արժանացվել Տ.Ասատրյանի բնակարանում խուզարկությամբ հայտնաբերված էլեկտրոնային կրիչի վրա առկա

²¹⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

խոսակցության ձայնագրությունը, այն չի համադրվել գործում առկա այլ ապացույցների հետ, որոնց ամբողջական վերլուծությունը ցույց է տալիս, որ Ի.Սարգսյանը հանցակցել է Մ.Ներսիսյանի կողմից պատվերով սպանության կատարմանը:

16.1. Այսպես՝ Տ.Ասատրյանի բնակարանում հայտնաբերված կրիչի վրա առկա ձայնագրության բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ Ի.Սարգսյանը տեղեկացված է եղել որոշ անձանց հետ Թ.Սաֆարյանի ունեցած թշնամական հարաբերությունների, առկա խնդիրները վերջինիս և նրա շրջապատի անձանց սպանելու միջոցով լուծելու մտադրության մասին: Մասնավորապես, Ի.Սարգսյանն ընդգծել է, որ *Տ.Ասատրյանի վրա նույնպես խոսակցություններ են պարզվում, որ նրան ևս պետք է «վարի փան»*, քանի որ վերջինս Թ.Սաֆարյանի շրջապատից է, և *Թևոսից, Արթուրից հետո՝ որպես երրորդ մարդ, նրան են «տեսել»*, ուստի *ինքը, դա անելով, փրկել է իր և Տ.Ասատրյանի կյանքը*:

Այնուհետև, խոսակցության ընթացքում Ի.Սարգսյանն ավելի հստակ է ակնարկում սպանության պատվիրատուի առկայության մասին՝ նշելով, որ Մ.Ներսիսյանը *«Մոսկվայից զակազ ա վեկայե»*, միևնույն ժամանակ, ինքն էլ իր հերթին, *Մոսկվայից սրացած պարվերից զար, առաջարկել է Մ.Ներսիսյանին կարարել սպանությունը՝ խոսարանապով դրա դիմաց վճարել*, ինչին ի պատասխան՝ Մ.Ներսիսյանն ասել է, որ փող պետք չէ, միայն կարող է ֆինանսապես աջակցել բենզինի և նման այլ բաների համար²¹⁵:

16.2. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ կրիչի վրա առկա ձայնագրության բովանդակությունը հաստատվում է նաև Տ.Ասատրյանի՝ դատաքննության ընթացքում հրապարակված, նախաքննության ընթացքում որպես մեղադրյալ տված ցուցմունքներով: Մասնավորապես, Տ.Ասատրյանը 2014 թվականի հունիսի 20-ին որպես մեղադրյալ լրացուցիչ տված ցուցմունքով, ի թիվս այլնի, հայտնել է, որ Ի.Սարգսյանը կարծիք է արտահայտել առ այն, որ *«Արթուրը այնքան թեմանների մեջ է եղել և ախարո հեպ այնքան թշնամիներ ունեն, որ չեն էլ իմանա, թե այդ հարվածը որտեղից է եկել»*: 2014 թվականի հուլիսի 18-ին որպես մեղադրյալ լրացուցիչ տված ցուցմունքով Տ.Ասատրյանը նշել է, որ Ի.Սարգսյանն իրեն ասել է, որ *«իբր իր վրա «մուշկա» է ֆոռում, և հաջորդը ինքն է լինելու»*: 2014 թվականի հուլիսի 19-ին որպես մեղադրյալ լրացուցիչ տված ցուցմունքով Տ.Ասատրյանն ընդգծել է, որ *Ի.Սարգսյանը նրան զգուշացրել է, որ հեռու մաս, քանի որ կարող է խնդիրների մեջ ընկնել, և իր մասով արդեն ինչ-որ շրջանակներում խոսակցություն է գնում*: Ինքը մտածել է, որ *«եթե իրոք Մոսն և Իսոն իր մեջքի հետրից, չգիրեն ինչու, գնացել են այդ սարսափելի քայլին, նշանակում է առաջին հերթին Իսոն ուրանակոխ է արել և՛ իրեն, և՛ իր ընտանիքին*: Հնարավոր է, որ իր նկարմանք էլ նման քայլ անեն: Այն էլ, որ Իսոն իրեն զգուշացրել էր,

²¹⁵ Տե՛ս սույն որոշման 7.2-րդ կետը:

որ շար է ինքը «բզրզում» և մնարդկանց շրջանակներում իր «վրով» արդեն ինչ-որ խոսակցություններ է գնում»²¹⁶:

17. Ընդհանրացնելով սույն որոշման 16-16.2-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ի.Սարգսյանը տեղեկացված է եղել որոշակի շրջանակի անձանց հետ Թևոս և Արթուր Սաֆարյանների ունեցած խնդիրների, այդ խնդիրները Սաֆարյաններին և նրանց շրջապատի անձանց սպանելու միջոցով լուծելու մտադրության, Տ.Ասատրյանի վերաբերյալ որոշ շրջանակներում առկա խոսակցությունների, ինչպես նաև Մ.Ներսիսյանի կողմից Ա.Սաֆարյանին սպանելու վերաբերյալ Մոսկվայից ստացված պատվերի մասին:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործում առկա վերոնշյալ փաստական տվյալների համակցությունից ակնհայտորեն բխում է, որ *ամբաստանյալ Ի.Սարգսյանն առնվազն տեղյակ է եղել, որ Ա.Սաֆարյանի սպանությունը պարվիրված է, այն է՝ Մ.Ներսիսյանը Մոսկվայից սպանության պատվեր է սրացել, իսկ ինքն էլ անձամբ օժանդակել է նշված հանցագործության կատարմանը՝ տրամադրելով անհրաժեշտ միջոցներ և տեղեկատվություն:* Այլ կերպ՝ Ի.Սարգսյանը գիտակցել է, որ հանցակցում է պատվերով սպանության կատարմանը, հետևաբար Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշումը, որ Ի.Սարգսյանին մեղսագրվող արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի հատկանիշներին, իրավաչափ է, բխում է սույն գործում առկա ապացույցների համակցությունից: Այսպես՝ Առաջին ատյանի դատարանը թեև արձանագրել է, որ սույն քրեական գործի նյութերում բացակայում է որևէ ապացույց և հիմնավորում առ այն, որ Ի.Սարգսյանը պատվեր է ստացել և ինքն էլ անձամբ կազմակերպել է Ա.Սաֆարյանի սպանությունը, այնուամենայնիվ Ի.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով մեղսագրվող արարքի որակումը թողել է անփոփոխ՝ արդյունքում հաստատված համարելով Ի.Սարգսյանի կողմից պատվերով սպանությանն օժանդակելու դրվագը:

Վերոգրյալի համատեքստում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները մեղադրանքի կողմից չվիճարկվելու պայմաններում վերադաս դատարանը չի կարող հաստատված համարել ամբաստանյալի համար առավել անբարենպաստ փաստական հանգամանքներ, քան ստորադաս դատարանի կողմից հաստատվածը, վերոնշյալ հիմնավորումների պայմաններում առարկայագուրկ է և չի բխում սույն գործի փաստական տվյալների համակցությունից:

18. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ Առաջին

²¹⁶ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին և արդյունքում Ի.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով մեղաազարկող արարքն այդ մասով վերադրակելով, պատշաճ վերլուծության չի ենթարկել գործում առկա ապացույցների ամբողջությունը, մասնավորապես՝ որևէ գնահատականի չի արժանացրել էլեկտրոնային կրիչի վրա առկա ձայնագրության բովանդակությունը, այն չի դիտարկել այլ ապացույցների համակցության համատեքստում:

Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով իր նախադեպային իրավունքում արտահայտված իրավական դիրքորոշումը, ընդգծում է, որ ապացույցի առանձին տեսակներ, պայմանավորված ապացուցողական տեղեկատվության ձեռք բերման միջոցներով և դրանց արդյունքների՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ ամրագրված լինելու հանգամանքով (օրինակ՝ տեսանկարահանումների, լուսանկարահանումների, հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքները և այլն), օժտված են բարձր արժանահավատություն ունեցող ապացույց համարվելու համար անհրաժեշտ չափանիշներով և կարող են այս կամ այն փաստական հանգամանքի հաստատման կամ հերքման առումով անփոխարինելի նշանակություն ունենալ, ուստի դրանցով հաստատվող փաստական տվյալները կարող են հերքվել ոչ այլ կերպ, քան այդ ապացույցներին արժանահավատությամբ չգիջող ապացույցով կամ ապացույցների համակցությամբ²¹⁷:

Ուստի, հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ի.Սարգսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

19. Հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն Ա.Սաֆարյանի սպանության դրվագով ամբաստանյալ Ի.Սարգսյանի արարքի քրեաիրավական որակման հարցում հանգել է սխալ եզրահանգման, պատշաճ վերլուծության և գնահատման չի ենթարկել գործում առկա փաստական տվյալների ամբողջությունը՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ և 127-րդ հոդվածների պահանջների խախտումներ: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու համար: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է,

²¹⁷ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արամայիս Հակոբյանի* վերաբերյալ գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշումը:

որ Ա.Սաֆարյանի սպանության դրվագով Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է այդ մասով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռին: Մնացած մասով, այն է՝ Ի.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է թողնել անփոփոխ:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված՝ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնների կիրառմամբ ամբաստանյալ Ի.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելիս Առաջին ատյանի դատարանը չի հստակեցրել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատժից մասնակի գումարման ենթակա պատժաչափը, և այդ հանգամանքը հոգուտ ամբաստանյալի մեկնաբանելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ի.Սարգսյանի նկատմամբ նշանակված 25 (քսանհինգ) տարի ժամկետով ազատազրկումից պետք է հանել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատժից մասնակիորեն գումարված հնարավոր առավելագույն չափը՝ 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս ժամկետով ազատազրկումը, և վերջնական թողնել կրելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով՝ հանցանքների համակցության կանոններով նշանակված՝ 23 (քսաներեք) տարի 1 (մեկ) ամիս ժամկետով ազատազրկումը²¹⁸:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Իսրայել Ռոզդերտի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի

²¹⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Զարե Իրրսահիմյանի* վերաբերյալ գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0099/01/10 որոշումը:

ապրիլի 26-ի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով, բեկանել և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով 2017 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռին:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշումը՝ Իսրայել Ռոզլերտի Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, թողնել անփոփոխ:

3. Ամբաստանյալ Իսրայել Ռոզլերտի Սարգսյանի նկատմամբ նշանակված 25 (քսանհինգ) տարի ժամկետով ազատազրկումից հանել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված և մասնակիորեն գումարված 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս ժամկետով ազատազրկումը և վերջնական թողնել կրելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով՝ հանցանքների համակցության կանոններով նշանակված՝ 23 (քսաներեք) տարի 1 (մեկ) ամիս ժամկետով ազատազրկումը: Պատժի կրման սկիզբը հաշվել 2014 թվականի փետրվարի 3-ից:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

15.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ/0041/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏԻՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2021 թվականի մարտի 9-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ Նարեկ Խաչիկի Ստեփանյանի և նրա պաշտպան Գ.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի ապրիլի 4-ին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնում հարուցվել է թիվ 38155318 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ Նարեկ Խաչիկի Ստեփանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

2019 թվականի ապրիլի 17-ին թիվ 38155318 քրեական գործից Ն.Ստեփանյանի վերաբերյալ մասը անջատվել է առանձնացվել է առանձին վարույթում, և դրան շնորհվել է 38155318/1 համարը:

2019 թվականի մայիսի 8-ին թիվ 38155318/1 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 21-ի դատավճռով ամբաստանյալ Ն.Ստեփանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով մեղսագրված արարքը վերատրակվել է, նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, և դատապարտվել տուգանքի՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով: «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ՝ Ն.Ստեփանյանն ազատվել է նշանակված պատժից: Ամբաստանյալ Ն.Ստեփանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը չհեռանալու մասին ստորագրությունը, վերացվել է:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի նոյեմբերի 14-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 21-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու մասին: Ամբաստանյալ Ն.Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատժին գումարվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 3-ի դատավճռով նշանակված՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով տուգանքը, և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ու տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Ամբաստանյալ Ն.Ստեփանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Ն.Ստեփանյանը և նրա պաշտպան Գ.Դավթյանը բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը Նարեկ Ստեփանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղավոր է ճանաչել

այն բանի համար, որ նա 2018 թվականի մարտի 25-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում դռան ապակին քարով ջարդելու միջոցով ապօրինի մուտք է գործել անհատ ձեռնարկատեր, Տավուշի մարզի Ակնաղբյուր գյուղի բնակչուհի Վ.Մարկոսյանի կողմից շահագործվող, Իջևան քաղաքի Գանինի փողոցում գտնվող, պահեստարան հանդիսացող խանութ-կրպակ և այնտեղից գաղտնի հափշտակել ընդհանուր 309.000 ՀՀ դրամ արժողությամբ հայկական արտադրության տարբեր տեսակի ծխախոտ և 4.000 ՀՀ դրամ արժողությամբ 2 լիտր թորած օղի՝ Վ.Մարկոսյանին պատճառելով ընդհանուր 313.000 ՀՀ դրամի գույքային վնաս²¹⁹:

5.1. Առաջին ատյանի դատարանն անդրադառնալով Ն.Ստեփանյանի նկատմամբ պատիժ նշանակելու հարցին՝ փաստել է, որ. «(...) Ամբաստանյալի նկատմամբ պարիժ նշանակելիս [Առաջին ատյանի] դատարանը հաշվի է առնում ոչ միայն կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, այլև նրա անձը բնութագրող փոխաները՝ այն, որ երիտասարդ է, բնութագրվում է դրականորեն:

Գործով ամբաստանյալի պարասխանավորությունն և պարիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներ ձեռք չեն բերվել:

(...) Անդրադառնալով դատախազի այն միջնորդությանը, որ ամբաստանյալի նկատմամբ պետք է պարիժ նշանակել դատավճիռների համակցությամբ (...) [Առաջին ատյանի] դատարանն արձանագրում է, որ սույն գործով հասարակված արարքը կատարելիս ամբաստանյալը չի գրնվել րուզանքի ձևով պարիժը կատարելու ընթացքի մեջ: (...) [Առաջին ատյանի] դատարանը գրնում է, որ դատապարտյալը գրնվում է րուզանքի ձևով պարիժը կրելու ընթացքի մեջ մինչև պրորաբցիայի ծառայության կողմից րուզանքը հանրային աշխարանքներով փոխարինելու մասին միջնորդություն ներկայացնելը: Ընդ որում, կարևոր չէ, դատարանն այն բավարարում է, թե ոչ: Կարևորը միջնորդությունը ներկայացնելու փաստն է, քանի որ ըստ գործող իրավական կարգավորմանն այդպիսի միջնորդություն ներկայացնելը րուզանքի գումարը չվճարելու կամ րուզանք պարժարեսակի կատարումն սպառնալով գործընթացի հեղանակն է կամ ավարտը: Հեղանակը, նկարի ունենալով, որ [Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 3-ի դատավճռով] նշանակված րուզանքը հանրային աշխարանքներով փոխարինելու միջնորդությունը 20.05.2017թ. դատարանի որոշմամբ մերժվել է, իսկ սույն գործով հասարակված արարքը կատարվել է 25.03.2018 թվականին, [Առաջին ատյանի] դատարանը գրնում է, որ դատավճիռների համակցությամբ պարիժ նշանակելու հիմքեր չկան: Անդրադառնալով ամբաստանյալի հնարավոր դարվածություն ունենալու հանգամանքին [Առաջին ատյանի] դատարանը գրնում է, որ դարվածության առկայությունը հասարակագրելի է, եթե հնարավոր է պարասխանել այն հարցին, թե երբ է մարվելու այդ դարվածությունը, իսկ դարվածության մարման ժամկետը հաշվվում է պարիժի փաստական կրոմն ավարտելու պահից, մինչդեռ,

²¹⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 72-75:

ամբաստանյալը [Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 3-ի դատավճռով] նշանակված պարիժը չի կրել և այդ հարցի պարասիանը չկա, ուստի, իրավական անորոշությունից զերծ մնալու համար [Առաջին աստիճանի] դատարանը գրնում է, որ ամբաստանյալը թեպետ նախկինում [դատապարտվել] է, բայց դատվածություն չունի, այսինքն, բացակայում են հանցագործությունների ռեցիդիվի տարրերը»²²⁰:

6. Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը, փաստել է, որ. «(...) Վերաքննիչ դատարանը համաձայն չէ Առաջին աստիճանի դատարանի այն հետևությունը, որ սույն գործով հաստատված արարքը կարարելիս ամբաստանյալը չի գրնվել տուգանքի ձևով պարիժը կարարելու ընթացքի մեջ, որ դատավճիռների համակցությամբ պարիժ նշանակելու հիմքեր չկան և բացակայում են հանցագործությունների ռեցիդիվի տարրերը՝ հետևյալ պարճատարանությամբ.

(...) Տուգանքը հանրային աշխարանքներով փոխարինելու միջնորդությունը մերժելու դեպքում դատապարտյալը շարունակում է գրնվել տուգանք պարճարեաակը կրելու ընթացքի մեջ, քանի դեռ ամբողջությամբ չի վճարել տուգանքը:

(...) Վերաքննիչ դատարանը հաշվի առնելով, որ ամբաստանյալ Նարեկ Սրեփանյանի մոտ առկա է հանցանքը կարարելու ռեցիդիվը, գրնում է, որ վերջինիս նկարմամբ որպես պարճարեաակ տուգանքը չի կարող նշանակվել, (...):

(...) [Սույն գործով ամբաստանյալի նկարմամբ պարիժ կարող է նշանակվել միայն ազարագրկման ձևով, քանի որ սանկցիայով նախարեաակված մյուս պարճարեաակի՝ տուգանքի համեմար ազարագրկումն է հանդիսանում «առավելագույն պարիժ», որի չափն էլ չի կարող պակաս լինել սանկցիայով տվյալ պարճարեաակի համար նախարեաակված առավելագույն չափի կեսից (այս պարճայում 2,5 տարուց ոչ պակաս)»²²¹:

6.1. Վերաքննիչ դատարանի դատական ակտի ուսումնասիրությունից երևում է, որ Ն.Ստեփանյանի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակելով Վերաքննիչ դատարանը քննարկման առարկա չի դարճրել այն կրելու նպատակահարմարության հարցը²²²:

Վճռարենկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարենկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակների կարծիքով՝ Վերաքննիչ դատարանն առերևույթ թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական և նյութական իրավունքի հիմնարար խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

²²⁰ Տն քրեական գործ, հատոր 2, թերթեր 72-75:

²²¹ Տն քրեական գործ, հատոր 3, թերթեր 52-66:

²²² Տն նույն տեղում:

7.1. Բողոքաբերների պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել դատվածության ինստիտուտը կարգավորող իրավադրույթները, ինչն էլ հանգեցրել է Ն.Ստեփանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ և 67.1-րդ հոդվածների կիրառմամբ պատիժ նշանակելուն:

Ի հիմնավորումն վերոգրյալի՝ բողոքի հեղինակները փաստել են, որ հիմնավոր են Առաջին աստիճանի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներն այն մասին, որ սույն գործով բացակայում են Ն.Ստեփանյանի արարքում հանցագործությունների ռեցիդիվի տարրերը և դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու հիմքերը:

7.2. Բացի այդ, բողոքաբերների պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Ն.Ստեփանյանի նկատմամբ պատիժը նշանակելիս պետք է ղեկավարվել ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ և 67.1-րդ հոդվածների կանոններով և նշանակվող պատիժը պետք է լինի ազատագրկման ձևով, պետք է պատժի մասով բեկաներ դատական ակտը և գործն ուղարկեր նոր քննության՝ քննարկման առարկա դարձնելու համար նաև նշանակված պատիժը կրելու հարցը կամ Վերաքննիչ դատարանն ինքը պետք է անդրադառնար այդ հարցին, ինչը չի արել: Նշվածի համատեքստում բողոքաբերները գտել են, որ Վերաքննիչ դատարանը, պատշաճ վերլուծության և գնահատման ենթարկելով Ն.Ստեփանյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը, մասնավորապես՝ դրական բնույթագրվելը, ամուսնացած լինելը, մշտական բնակության վայր ունենալը, ինքնախոստովանական ցուցմունք տալը, հանցագործության ղեկավար բացահայտելուն աջակցելը, գործի քննության ընթացքում դրական վարքագիծ դրսևորելը, կեզրահանգեր, որ Ն.Ստեփանյանի նկատմամբ կիրառելի են ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթները:

8. Վերոգրյալի հիման վրա ամբաստանյալ Ն.Ստեփանյանը և նրա պաշտպան Գ.Դավթյանը խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 21-ի դատավճիռին կամ պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը և Ն.Ստեփանյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ և 67.1-րդ հոդվածների կանոնների կիրառմամբ ամբաստանյալ Ն.Ստեփանյանի նկատմամբ պատիժ նշանակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

10. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման

և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործությունների ռեցիդիվի և դատավճիռների համակցությամբ ամբաստանյալ Ն.Ստեփանյանի նկատմամբ պատիժ նշանակելու հիմքերի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանը հանգել է ճիշտ հետևության:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը, կրկնելով նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ տուգանքի ձևով նշանակված պատժի կրման ընթացքը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից և նշված պատժատեսակի կրումից անձն ազատվում է գումարն ամբողջությամբ վճարելուց հետո, իսկ քանիդեռ այնչի վճարվել ամբողջությամբ, դատապարտյալը շարունակում է գտնվել պատժի կրման ընթացքում²²³, արձանագրում է, որ տուգանքի ձևով նշանակված պատժը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից մերժելու դեպքում տուգանքի ձևով նշանակված պատժի կրման ընթացքը չի ավարտվում և դատապարտյալը շարունակում է գտնվել պատժի կրման ընթացքում, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի իմաստով գտնվում է նաև դատվածության ինստիտուտի իրավական գործողության ներքո: Ուստի, հիմնավոր է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ սույն գործով հաստատված արարքը կատարելիս Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 3-ի դատավճռով նշանակված տուգանքը վճարված չի եղել, հետևաբար Ն.Ստեփանյանը արարքը կատարելիս գտնվել է վերոգրյալ դատավճռով նշանակված պատժի կրման ընթացքում, այսինքն՝ առկա են հանցագործությունների ռեցիդիվի և դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու հիմքերը²²⁴:

11. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ և 67.1-րդ հոդվածների կանոնների կիրառմամբ ամբաստանյալ Ն.Ստեփանյանի նկատմամբ պատիժ նշանակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավաչափ է:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է, ամբաստանյալ Ն.Ստեփանյանի վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը պահպանել է արդյո՞ք դատական ակտին ներկայացվող պահանջները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

2. *Դատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների*

²²³ Մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արիզ Տիգրանյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0501/01/18 որոշումը:

²²⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են Կրիմիա քրեական գործը լուծելիս:

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարճառաբանված: Պարճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Նույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով (...):»:

14. Դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից:

Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է²²⁵:

14.1. Վճռաբեկ դատարանը *Է.Մարգարյանի* գործով արձանագրել է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը վերաբերելի է նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության, և որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն կրկնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերոնշյալ պահանջների պահպանման պարագայում միայն վճռաբեկ դատարանը հնարավորություն կունենա ստուգել կայացված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը²²⁶:

²²⁵ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ֆրոնցիկ Գալստյանի* գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, *Գևորգ Խոստայանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0030/01/12, *Արսեն Մակարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, *Արամայիս Հակոբյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14, *Մարտին Հակոբյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՐԴ/0005/11/16, *Արարապ Մարգարյանի* գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԵԱԴԴ/0005/01/17 որոշումները:

²²⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էրիկ Մարգարյանի* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԱԴԳ/0045/01/13 որոշման 13-րդ կետը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

1) սպացուցված է արդյոք արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը.

2) այդ արարքը համապատասխանում է արդյոք քրեական օրենսգրքի հայտնի մասի նորմերի հարկանիշներին.

3) սպացուցված է արդյոք ամբաստանյալի կողմից այդ արարքը կատարելը.

4) սպացուցված է արդյոք ամբաստանյալի մեղավորությունը րվյալ հանցանքը կատարելու մեջ և, եթե այո, սպա քրեական օրենսգրքի որ հոդվածով, մասով, կետով է նախատեսված այն.

5) սպացուցված է արդյոք ամբաստանյալի պարասխանարվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայությունը.

6) ենթակա է արդյոք պարժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար.

7) ինչ պարիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ.

8) ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պարիժը.

(...)»:

Դատական ակտի պատճառաբանվածության չափանիշների տեսանկյունից վերլուծելով մեջբերված նորմը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական օրենսգրքով նախատեսված արարքի և դրա կատարման մեջ ամբաստանյալի մեղքի ապացուցվածությանն առնչվող հարցերին հաստատական պատասխան տալուց հետո օրենսդիրը սահմանել է պատժին առնչվող այն հարցերի շրջանակը, որոնք պետք է հաջորդաբար քննարկման առարկա դարձվեն դատական վարույթի շրջանակում, և որոնց կապակցությամբ դատարանի եզրահանգումները պետք է արտացոլվեն վարույթը եզրափակող դատական ակտում:

Այսպես, պատժի ենթակա լինելը, կոնկրետ պատժաչափով կոնկրետ պատժատեսակի նշանակումը և արդեն իսկ նշանակված պատժը կրելու անհրաժեշտության հարցի լուծումն իրենցից ներկայացնում են պատժի հարցերի դատական լուծման գործընթացի ինքնուրույն և հաջորդական փուլեր: Այսինքն՝ դատարանը նախ և առաջ որոշում է ամբաստանյալի պատժի ենթակա լինելու հարցը, այնուհետև՝ դրա տեսակը և չափը, որից հետո որոշում՝ ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատժը, թե ոչ: Նշված հարցերի լուծման ընթացքում դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի մի շարք դրույթներով²²⁷:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ն.Ստեփանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ նա 2018 թվականի մարտի 25-ին՝ ժամը 00:30-ի

²²⁷ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Ռուբեն Հովակիմյանի գործով 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ԱԲԴ/0117/01/08 որոշումը:

սահմաններում, ապօրինի մուտք գործելով պահեստաբան հանդիսացող խանութ-կրպակ, գաղտնի հափշտակել է ընդհանուր՝ 313.000 ՀՀ դրամ արժողությամբ գույք²²⁸:

Առաջին ատյանի դատարանը, ուսումնասիրելով գործում առկա նյութերը և հաշվի առնելով Ն.Ստեփանյանի կատարած հանցագործության բնույթը, հանրության համար վտանգավորության աստիճանը, վերջինիս անձը բնութագրող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների, ինչպես նաև դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու հիմքերի բացակայությունը, Ն.Ստեփանյանին դատապարտել է տուգանքի ու «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ ազատել պատժից²²⁹:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը նշանակված պատժի մասով փոփոխել է դատավճիռը՝ արձանագրելով, որ Ն.Ստեփանյանի արարքում հանցագործությունների ռեցիդիվի և դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու հիմքերի բացակայության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունն իրավաչափ չէ՝ նկատի ունենալով, որ սույն գործով հաստատված արարքը վերջինս կատարել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 3-ի դատավճռով՝ տուգանքի ձևով նշանակված պատժի կրման ընթացքում: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի կանոններով, Ն.Ստեփանյանին դատապարտել է ազատազրկման և նույն օրենսգրքի 67-րդ հոդվածի կարգով վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում և տուգանք՝ անդրադարձ չկատարելով ազատազրկման ձևով նշանակված պատիժն ամբաստանյալի կողմից կրելու նպատակահարմարության հարցին²³⁰:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը նշանակված պատժի մասով փոփոխելիս Վերաքննիչ դատարանը դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի իմաստով, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարցերի հաջորդականության, պարտավոր էր նախ որոշել պատժի տեսակը և չափը, որից հետո անդրադառնալ այն հարցին, թե Ն.Ստեփանյանն արդյո՞ք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, թե ոչ, ու արդյունքում

²²⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²²⁹ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

²³⁰ Տե՛ս սույն որոշման 6-րդ և 6.1.-րդ կետերը:

պատճառաբանված որոշում կայացնել այն մասին, թե ինչ հանգամանքների հիման վրա է եկել այս կամ այն հետևության:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ հիմնավորված չէ Ն.Ստեփանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժատեսակի դատապարտելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը, բեկանել և փոփոխել է դատական ակտը ու ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ և 67.1-րդ հոդվածների կարգով վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում և տուգանք՝ քննարկման առարկա չդարձնելով նրա կողմից ազատազրկման ձևով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը:

18. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ն.Ստեփանյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին որոշում կայացնելիս՝ Վերաքննիչ դատարանը չի պահպանել դատական ակտին ներկայացվող պահանջները:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 360-րդ և 393-րդ հոդվածների խախտում, ինչն իր բնույթով էական է, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի Ն.Ստեփանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը՝ գնահատման ենթարկելով նաև բողոք բերած անձանց՝ սույն որոշման 7.2-րդ կետում ներկայացված փաստարկները:

20. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ամբաստանյալ Ն.Ստեփանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

16.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0253/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի մարտի 17-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշման դեմ մեղադրյալ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանի պաշտպան Հովհաննես Խուրոյանի և մեղադրյալ Մելրան Մուշեղի Օհանյանի պաշտպան Կարեն Մեծլումյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի ապրիլի 29-ին թիվ 62202919 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Մելրան Մուշեղի Օհանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, Յուրի Գրիգորիի Խաչատուրովի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, և Արմեն Անդրանիկի Գևորգյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-րդ հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, մեղադրական

եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի մայիսի 20-ի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան և կասեցրել քրեական գործի վարույթը՝ մինչև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից համապատասխան որոշման կայացումը:

3. Դատախազ Պ.Պետրոսյանի և տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Վ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ բավարարել է բողոքները, Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Խուդոյանը և մեղադրյալ Ս.Օհանյանի պաշտպան Կ.Մեծլույսյանը բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ ընդունվել են վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի մարտի 10-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի մայիսի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Գործի նյութերի հետազոտման արդյունքներով, հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Խուդոյանի և Ա.Օրբելյանի ներկայացրած փաստարկները, ելնելով քրեական գործը ողջամիտ ժամկետներում քննելու և լուծելու քրեադատավարական օրենքի պահանջից, հաշվի առնելով, որ առկա են հիմնավոր կասկածներ կիրառման ենթակա իրավական ակտերի սահմանադրականության և ՀՀ Սահմանադրության նորմերի իրավական բովանդակության բացահայտման (մեկնաբանման) առնչությամբ Դատարանը փաստում է, որ կիրառման ենթակա և գործի լուծման համար անհրաժեշտ նորմարիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցը պարզելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ Սահմանադրական դատարան և քրեական գործի վարույթը կասեցնել, որպիսի հետևության դատարանը հանգում է հետևյալ փաստարկներով և հիմնավորումներով.

(...) Դատարանը փաստում է, որ գործը դատական քննության նախապարասրելիս համապարասխան որոշում կայացնելու համար անհրաժեշտ, կիրառման ենթակա ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2009թ. մարտի 20-ին ընդունված ՀՕ-53-Ն օրենքի ուժի մեջ գրնվելը գործող խմբագրությամբ, այլ կերպ՝ Հին օրենք) և դրա հետ

փոխկապակցված ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասի (Նոր օրենք) ՀՀ Սահմանադրության 72-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանելու վերաբերյալ առկա են հիմնավոր կասկածներ, որպիսի հետևության հանգում եմ հետևյալ իրավական վերլուծությունների և դատողությունների արդյունքներով:

(...) Հաշվի առնելով, որ դատարանի մոտ հիմնավոր կասկածներ կան առ այն, որ գործով 4 մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդման մարմինների կիրառված ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը, դրա հետ փոխկապակցված ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածը ենթադրաբար հակասում են ՀՀ Սահմանադրության 72-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածներին, Սահմանադրական դատարանի որոշմամբ փաստվելու պարագայում նրանցից Սեյրան Օհանյանի և Յուրի Խաչատրյանի նկատմամբ բացառապես տվյալ հոդվածով հարուցված քրեական հետապնդումները կարող են ընդհուպ դադարեցվել (այսինքն՝ մինչև գործը դատական քննության նշանակելը կարող է ի հայտ գալ նրանց նկատմամբ քրեական հետապնդումը և վարույթը բացառող հանգամանք), իսկ մեղադրյալ Ռ.Քոչարյանի կամ բոլորի մասով՝ նաև կասեցվել՝ Դատարանը փաստում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտերի կիրառման խնդիրն առկա է դատական քննության հարկապես տվյալ փուլում, ուստի դրանց սահմանադրականության հարցով ՀՀ Սահմանադրական դատարան է դիմում՝ օգրվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումից:

(...) [Միաժամանակ,] հաշվի առնելով ՀՀ նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի «կարգավիճակից բխող գործողություններ» և «կարգավիճակի հետ չկապված գործողություններ» եզրույթների վերաբերյալ ծագած հիմնավոր կասկածները, այդ ինստիտուտի նորմերի ճիշտ կիրառմամբ մեղադրյալ Ռ.Քոչարյանի մասով քրեական վարույթը շարունակելու և գործը ճիշտ լուծելու անհրաժեշտությունը, Սահմանադրությունը պաշտոնապես և վերջնականապես մեկնաբանելու Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը, այդ մեկնաբանության համապարտադիր բնույթը դիմում եմ ՀՀ Սահմանադրական դատարանին խնդրելով համաչափության և որոշակիության սահմանադրական սկզբունքների տեսանկյունով մեկնաբանել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 56.1 և 57-րդ հոդվածները (համապատասխանում է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 140-րդ և 141-րդ հոդվածներին) (...)»²³¹:

6. Հղում կատարելով *Ռոբերտ Քոչարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԴ/0743/06/18 որոշմանը, ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածին, Վերաքննիչ դատարանը 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ

²³¹ Տե՛ս քրեական գործի հավելված, հատոր 9, թերթեր 117-156:

արձանագրել է հետևյալը. «(...) [Վ]կայակոչված իրավադրույթների և դրանցից բխող իրավակարգավորումների լույսի ներքո, վերլուծության ենթարկելով խնդրո առարկային առնչվող փաստական հանգամանքները, պարզ է դառնում, որ սույն գործով վիճարկվող դատական ակտը կայացվել է վերը նշված իրավադրույթներով ամրագրված պահանջների խախտմամբ:

Ընդ որում, վիճարկվող որոշմամբ դադարանը թեև նշել է, որ հետագուրել է հիշյալ քրեական գործի նյութերը, մինչդեռ, քննարկվող հարցի առնչությամբ և կողմերի մասնակցությամբ ըստ էության դատական նիստ չի հրավիրվել:

Վիճարկվող դատական ակտի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ (կոնկրետ դեպքում) այն կայացվել է դադարանի կողմից ՀՀ սահմանադրական դադարան դիմելու համար անհրաժեշտ և բավարար պայմանների բացակայությամբ, դրա կայացմամբ դադարանը թույլ է տվել դատական սխալ քրեադատավարական իրավունքի էական խախտում, որն արդահայտվել է վերը մեջ բերված իրավադրույթների խախտմամբ, ինչն էլ կարող էր ազդել այդ առնչությամբ գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Այլ կերպ ասած, առանց սույն գործով դատական քննության փուլ թևակոխելու և խնդրո առարկա հարցերին առնչվող փաստակազմների հետազոտության առումով անհրաժեշտ և բավարար ծավալը սպառելու, ինքնին հնարավոր չէր հանգելու հիմնավոր հետևության՝ առկա պայմաններում, գործով կիրառման ենթակա նորմարիվ իրավական ակտի սահմանադրականության հարցում (գործի քննության ներկա փուլում) հիմնավոր կասկածների առկայության, կամ բացակայության և գործի լուծման հնարավորությունը դրանով պայմանավորելու վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վերաքննիչ դադարանը գտնում է, որ այդ առնչությամբ վիճարկվող դատական ակտում տեղ գրած դադարանի հետևությունները, (կոնկրետ դեպքում) ներկայումս բավարար չափով փաստարկված չեն:

Ինչն ինքնին չի բացառում սույն գործով դատական քննության փուլ թևակոխելու և խնդրո առարկա հարցերին առնչվող փաստակազմների առումով անհրաժեշտ և բավարար ծավալը սպառելուց հետո նոր միայն, սույն գործով վիճարկվող որոշմամբ արծարծված հարցերին վերաբերող անդադառնալու հնարավորությունը:

(...) Ինչը (կոնկրետ դեպքում) չի արվել, և ինչը հանգեցրել է քրեադատավարական իրավունքի այնպիսի էական խախտման, որը կարող էր ազդել սույն գործով (սահմանադրական դադարան դիմելու և քրեական գործի վարույթը կասեցնելու առնչությամբ) ներկայումս ճիշտ որոշում կայացնելու վրա:

Բացի այդ, (...) դադարանի կողմից հիմնավոր կասկածի գնահատման արհրություն արդեն իսկ 2019 թվականի մայիսի 18-ին կայացված թիվ ԵՂ/0253/01/19 մեկ այլ որոշմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասին անդադարձ կատարվել է:

Մինչդեռ, դադարանն ըստ էության հակասելով իրեն, գործի քննության նույն փուլում վիճարկվող որոշմամբ բարձրացրել է այդ նույն նորմի՝ որպես

կիրառման ենթակա իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի շուրջ կասկածներ, ինչն առկա պայմաններում, բավարար չափով փաստարկված դիմարկվել չի կարող:

(...) Բացի այդ, դալարանը չի պահպանել նաև «Սահմանադրական դալարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածով սահմանված պահանջն առ այն, որ Սահմանադրական դալարանն դիմելուց առաջ դալարանները պետք է որոշում կայացնեն գործի վարույթը կասեցնելու մասին, այնուհետև ետոյա ժամկետում համապատասխան դալարանի որոշմամբ դիմում ներկայացնեն Սահմանադրական դալարան, մինչդեռ րվյալ դեպքում Դալարանը կայացրել է միանակարան որոշում:

(...) Հիմք ընդունելով վերոգրյալը, Վերաքննիչ դալարանը գտնում է, որ Դալարանը (ՀՀ սահմանադրական դալարանն դիմելու և քրեական գործի վարույթը կասեցնելու առնչությամբ) որոշում կայացնելիս, թույլ է տվել քրեադալարական իրավունքի այնպիսի էական խախտում, որը կարող էր ազդել ներկայումս սույն գործով այդ առնչությամբ ճիշտ որոշում կայացնելու վրա:

(...) Վերաքննիչ դալարանը հարկ է համարում անդրադառնալ նաև սույն գործով դալարական նիստի ընթացքում պաշտպանության կողմի, մասնավորապես մեղադրյալ Ռոբերտ Քոչարյանի շահերի պաշտպանների դրսևորած վարքագծին և դրան անմիջականորեն առնչվող հանգամանքների վերլուծությանը:

(...) [Մ]եղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններից Հ.Խոտոյանը պաշտպանության կողմից պատասխանելույթի փոխարեն ներկայացրել է իր իսկ կողմից ստորագրված 19.06.2019թ. թվագրմամբ միջնորդություն ՀՀ սահմանադրական դալարանն դիմելու և քրեական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ:

(...) Պաշտպանության կողմը ըստ էության չի ցանկացել առկա փուլում պատասխանելույթով հանդես գալ, փոխարենն ըստ էության ցանկացել է, պահանջ է ներկայացրել իր իսկ կողմից ներկայացված միջնորդությունը քննարկելու վերաբերյալ:

(...) Վերաքննիչ դալարանի դիմարկմամբ, պաշտպանության կողմն ըստ էության հրաժարվել է պատասխանելույթի առնչությամբ առկա փուլում իր իրավունքներն ըստ էության իրացնելուց, փոխարենն փորձել է Վերաքննիչ դալարանին թելադրել (ուղղորդել) իր սեփական օրակարգը, ինչն անընդունելի է:

Որպիսի պայմաններում, սրեղծված իրավիճակում պաշտպանության կողմն ըստ էության չարաշահել է իր դալարական իրավունքները, ինչի արդյունքում ինքն իրեն զրկել է իր իրավունքներն իրացնելու հնարավորությունից:

(...) [Պ]աշտպանության կողմից առկա պայմաններում, նման միջնորդություն ներկայացնելն ուղղված էր գործի հնարավոր անհարկի ձգձգելուն, ինչը ևս

վկայում է պաշտպանության կողմից իր իրավունքներից ոչ բարեխիղճ օգտվելու, իր դատավարական իրավունքներն ըստ էության չարաշահելու մասին: (...)»²³²:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Խուդոյանը գտել է, որ բողոքարկվող դատական ակտը պատճառաբանված չէ, խախտում է մեղադրյալի՝ միջազգային և ներքին իրավական ակտերով հռչակված իրավունքները, կայացվել է մրցակցային դատավարության սկզբունքի կոպիտ խախտումով, հակասում է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներում առկա մեկնաբանություններին:

14.1. Բողոքաբեր Հ.Խուդոյանը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը գործը քննել է քրեական դատավարության մրցակցության սկզբունքի կոպիտ խախտմամբ, Ռոբերտ Քոչարյանին և պաշտպաններին զրկել է ներկայացված բողոքների կապակցությամբ դիրքորոշում ներկայացնելու հնարավորությունից: Բողոքի հեղինակը նշել է, որ պաշտպանական կողմը 2019 թվականի հունիսի 19-ին ՀՀ Վերաքննիչ դատարան է ներկայացրել միջնորդություն՝ Սահմանադրական դատարան դիմելու մասին, որը քննության առնելու խնդրանքով Վերաքննիչ դատարանին են դիմել հաջորդ օրը, դատական նիստի ընթացքում, այն բանից հետո, երբ մեղադրողները ավարտել են իրենց բողոքների ներկայացումը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, ներկայացված միջնորդությունը քննության առնելու, կամ քննությունը հետաձգելու, կամ քննությունը մերժելու փոխարեն մեկնաբանել է այն որպես բողոքների պատասխան ելույթներից հրաժարում, պաշտպանների գործողությունները մեկնաբանել է որպես իրավունքների չարաշահում և հեռացել է խորհրդակցական սենյակ՝ ավարտելով դատական ստուգումը:

14.2. Բողոքաբեր Հ.Խուդոյանը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը քննության է առել բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ, դրա վերաբերյալ կայացրել իր լիազորությունից չբխող դատական ակտ:

Բողոքաբերը նշել է, որ Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշումը բողոքարկելի չէ և չէր կարող քննվել Վերաքննիչ դատարանի կողմից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածը սահմանում է առաջին ատյանի դատարանի կողմից ընդունված այն դատական ակտերի շրջանակը, որոնք ենթակա են վերաքննության կարգով բողոքարկման, իսկ այդ հոդվածում չնախատեսված ակտերը չեն կարող բողոքարկվել վերաքննության կարգով: Եվ քանի որ նշված հոդվածում Սահմանադրական դատարան դիմելու որոշումը որպես բողոքարկելի

²³² Տե՛ս քրեական գործ, հատոր 95, թերթեր 89-163:

դատական ակտ նշված չէ, բողոքարկների պնդմամբ նշված որոշումը ենթակա չէ բողոքարկման:

14.3. Պաշտպան Հ.Խուդոյանը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը չունի իրավասություն այս վարույթի շրջանակներում անդրադառնալու նորմերի՝ Սահմանադրության համապատասխանությանը կամ անհամապատասխանության հարցին: Եթե ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում սահմանադրական դատարան դիմելը յուրաքանչյուր դատարանի պարտականությունն է, և եթե դատարանը ենթարկվում է միայն Սահմանադրությանն ու օրենքին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 3-րդ կետը քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ բոլոր որոշումների վրա տարածելու պարագայում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ վերադասատյանը ստորադասատյանին արգելի կատարել իր սահմանադրական պարտականությունը: Բողոքաբերը նշել է, որ ՀՀ օրենսդրության վերլուծությունից պարզ է դառնում, որ նորմի համապատասխանությունը Սահմանադրությանը կարող է քննարկել միայն գործը քննող դատարանը, որը պետք է կիրառի համապատասխան նորմը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանը: Որևէ այլ մարմին, ներառյալ վերաքննիչ դատարանը, սույն վարույթի շրջանակներում, ըստ բողոքարկների, իրավասու չէ անդրադառնալու օրենսդրական նորմի սահմանադրականությանը, եթե չի կիրառելու նշված նորմը: Բողոքաբերն ընդգծել է, որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ նման որոշում կարող է կայացվել դատարանի նախաձեռնությամբ, ինչը նշանակում է, որ եթե դատարանը գտնում է, որ կիրառման ենթակա նորմը հակասահմանադրական է, ապա վերաքննիչատյանը չի կարող իր դատական ակտով դատարանին պարտավորեցնել գալ այլ համոզման ու գործը քննել այն կանխավարկածով, որ կիրառման ենթակա օրենքը հակասահմանադրական չէ, քանի որ նման պայմաններում ստացվում է, որ վերադասատյանն իրականացնում է սահմանադրական արդարադատություն:

15. Վերոշարադրյալի հիման վրա, մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Խուդոյանը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջինատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշմանը:

16. **Մեղադրյալ Ս.Օհանյանի պաշտպան Կ.Մեծլումյանը** գտել է, որ բողոքարկվող դատական ակտով Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով, 63-րդ հոդվածի 1-ին մասով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ մեղադրյալ Ս.Օհանյանի իրավունքները:

16.1. Ըստ բողոքարկների՝ Վերաքննիչ դատարանը կողմնասպառնություն է դրսևորել հօգուտ մեղադրանքի կողմի, այն է՝ պաշտպանության կողմին զրկել է մեղադրանքի կողմի բողոքների վերաբերյալ դիրքորոշում

հայտնելուց, ինչպես նաև միջնորդություններ ներկայացնելուց, իսկ ում էլ չի գրկել դիրքորոշում հայտնելու հնարավորությունից՝ դատական ակտում արձանագրել է նրանց կողմից ելույթ ունենալու և դիրքորոշում հայտնելու փաստը:

16.2. Պաշտպան Կ.Մեծլումյանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նաև ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 6-րդ մասերի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի 3-րդ կետի ու 295-րդ հոդվածի խախտումներ: Բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից Սահմանադրական դատարան դիմելու իրավացիությունը հաստատվում է հենց ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 8-ի թիվ ՄԴԱՌ-72 որոշմամբ, որով Առաջին ատյանի դատարանի դիմումն ընդունվել է քննության, ինչպես նաև՝ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 18-ի թիվ ՄԴԱՌ-82 որոշմամբ, որով Սահմանադրական դատարանը որոշել է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան և Վենետիկի հանձնաժողով՝ խորհրդատվական կարծիքներ ստանալու նպատակով:

16.3. Բողոքաբերը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը հանդես չի եկել որպես օրենքի հիման վրա ստեղծված դատարան, քանի որ իրավունք չունենա նման որոշում կայացնելու և Առաջին ատյանի դատարանի փոխարեն որոշելու՝ առկա է արդյոք Սահմանադրական դատարան դիմելու հիմք, թե ոչ:

17. Վերոշարադրյալի հիման վրա, մեղադրյալ Ս.Օհանյանի պաշտպան Կ.Մեծլումյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը և անփոփոխ թողնել Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի դատական ակտը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի դիմելու վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման ընթացակարգի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության, ինչպես նաև իրավունքի զարգացման խնդիր: Այս առումով Վճռաբեկ դատարանի՝ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կարող են ուղղորդող նշանակություն ունենալ համանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Բողոքաբերների բարձրացված փաստարկների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանություններն առավելապես նվիրված են Առաջին ատյանի դատարանի կողմից Սահմանադրական դատարանի դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին որոշման իրավաչափության ստուգմանը: Սակայն, մինչ Վերաքննիչ դատարանի իրավական

դիրքորոշումների հիմնավորվածությանն անդրադառնալը, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Սահմանադրական դատարանի դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման իրավաչափության վերանայման՝ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների լիազորությունների սահմաններին:

1. Սահմանադրական դատարանի դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին որոշման իրավաչափության դատական արուզման սահմանները.

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավասու էր արդյո՞ք Վերաքննիչ դատարանն ամբողջ ծավալով ստուգման ենթարկել Սահմանադրական դատարանի դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշման իրավաչափությունը:

20. ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարաններն իրենց վարույթում գրնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գրնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «[Սահմանադրական դատարանի դիմելու] հիմքով գործի վարույթը կասեցնելու՝ դատավարության մասնակիցների միջնորդությունները բավարարվում կամ մերժվում են դատարանի որոշմամբ, որը կայացման պահից տանտրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերադաս դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝ առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.»:

21. Սահմանադրական դատարանը 2019 թվականի հունվարի 25-ի թիվ ՍԴԱՌ-7 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) Որպես Սահմանադրության գերակայության սպաստումն միջոց՝ Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումն է Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը (...):

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում նույնպես ընդգծել է, որ Սահմանադրության դրույթների վերաբերյալ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս ներկայացնում է վերջնական իրավական դիրքորոշում (օրինակ՝ 2006 թվականի հոկտեմբերի 18-ի ՍԴԱ-652), և որ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կոչված են իրավակիրառ պրակտիկայում սպաստվելու Սահմանադրության առավել ամբողջական և միակերպ ընկալումն ու սահմանադրականությունը, իրավակիրառ պրակտիկան նպատակամղելու նորմատիվ իրավական ակտերն իրենց սահմանադրահրավական

քովանդակությանը համապատասխան ընկալելու և կիրառելու ուղղությամբ (օրինակ՝ 2011 թվականի փետրվարի 25-ի ՄԴՈ-943):

(...) Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, եթե դատարաններն իրենց վարույթում գրավող կոնկրետ գործով հանգում են կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության խնդրի, այսինքն՝ այդ կապակցությամբ առաջանում են հիմնավոր կասկածներ, և եթե տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով, ապա դատարանները **պարտավոր են** դիմել Սահմանադրական դատարան այդ ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով: (...):

22. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), անդրադառնալով ընդհանուր իրավասության դատարանների կողմից Սահմանադրական դատարան դիմելու կառուցակարգին, որպես սահմանադրական արդարադատության անհատական մատչելիության անուղղակի ապահովման դրսևորում՝ նշել է, որ դատարանների դիմումների հիման վրա գործերի քննությունն անհատական մատչելիության ապահովման ամենատարածված ձևերից է: Եթե ընդհանուր իրավասության դատարանն ունի կասկածներ, որ կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ ակտը հակասում է Սահմանադրությանը, դիմում է Սահմանադրական դատարան: Նշված մեխանիզմի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ դատարաններն իրազեկված են և կարող են կազմել հիմնավոր դիմումներ: Որոշ երկրներում, նշված կառուցակարգն անհատական մատչելիության ապահովման միակ եղանակն է: Երկրների մեծ մասում կողմերը, կասկածներ ունենալով օրենքի սահմանադրականության վերաբերյալ, «հակասահմանադրականության բացառման» սկզբունքով իրավասու են ներկայացնելու միջնորդություն՝ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ: Այսպիսի միջնորդությունը դատավորը պարտավոր է քննարկել և մերժելիս պատճառաբանել իր որոշումը: **Թեև դատարանի կողմից կայացվող այդպիսի որոշումը վերջնական է**, սակայն որոշ երկրներում առկա են դատարանի և դատավորի անկախության դատավարական սահմանափակումներ (օրինակ՝ երբ Սահմանադրական դատարան դիմելու համար պահանջվում է «նախնական թույլտվություն» Սահմանադրական դատարանից)²³³:

Միաժամանակ, Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ խախտված հիմնական անհատական իրավունքները պետք է վերականգնվեն հնարավորինս արագ: Այս համատեքստում կարևորվում է ընդհանուր իրավասության դատարանների և Սահմանադրական դատարանի միջև փոխհարաբերությունը. ընդհանուր իրավասության դատարանները գտնվում են կիրառման ենթակա նորմերի «առաջնագծում»: Այդ դատարաններն

²³³ Տե՛ս European Commission For Democracy Through Law (Venice Commission), Study on Individual Access to Constitutional Justice, Strasbourg, 27 January 2011, Study N° 538 / 2009, CDL-AD(2010)039rev, կետեր 56-62:

առաջինն են, որ կարող են հայտնաբերել օրենքի կիրառման խնդիրը՝ սահմանադրականության տեսանկյունից²³⁴:

Ընդ որում, անդրադառնալով կողմի միջնորդության հիման վրա Սահմանադրական դատարան դիմելու հայեցողության միջազգային փորձին, Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, Բելգիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Լյուքսեմբուրգում, Իսպանիայում, Ռումինիայում, Ուկրաինայում, կողմի միջնորդության հիման վրա Սահմանադրական դատարան չդիմելու վերաբերյալ որոշման կայացումն ընդգծում է դատավորի անկախությունը. **որոշումը պետք է լինի պատճառաբանված, սակայն ենթակա չէ բողոքարկման (բացառությամբ պատճառաբանության բացակայության կամ այլ ձևական սխալի դեպքի)**²³⁵:

23. Սույն որոշման 21-22-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կենտրոնացված սահմանադրական վերահսկողության պայմաններում, երբ հանրային իշխանության մարմիններն ունենում են նորմատիվ իրավական ակտի կարգավորման սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածներ, դիմում են Սահմանադրական դատարան, որի բացառիկ իրավասության ներքո է գտնվում ակտերի սահմանադրականության ստուգումը և այդ կասկացությամբ վերջնական իրավական գնահատականի ձևավորումը: Վենետիկի հանձնաժողովի կողմից առաջ քաշված՝ «հակասահմանադրականության բացառման» սկզբունքի լույսի ներքո հանրային իշխանության մարմիններն իրավական ակտի կարգավորման սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալու դեպքում, պետք է իրացնեն Սահմանադրությամբ իրենց վերապահված լիազորությունը և բարձրացնեն այդ ակտի սահմանադրականության հարցը ՀՀ Սահմանադրական դատարանում: Հանրային իշխանության մարմինները, մասնավորապես՝ դատարանները, օժտված լինելով իրավական ակտերի կարգավորումների անմիջական կիրառման իրավասությամբ, ներքին հանգումնաբեր ունենալով դրանց հնարավոր հակասահմանադրականության վերաբերյալ, չեն կարող անմիջականորեն կիրառել դրանք՝ առանց այդ կարգավորումները կոնկրետ սահմանադրական վերահսկողության առարկա դարձնելու: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակասահմանադրականության բացառմանն ուղղված սահմանադրաիրավական վեճը, որը բարձրացվում է որևէ դատական ատյանի կողմից, չի կարող դատական ստուգման ենթարկվել վերադաս դատարանի կողմից: Այսինքն՝ բարձրացված սահմանադրաիրավական վեճն իր հանրային-իրավական բնույթից ելնելով, ենթակա է հաղթահարման բացառապես Սահմանադրական դատարանի կողմից, որը ներկայացված

²³⁴ Տե՛ս նույն տեղում, կետ 207:

²³⁵ Տե՛ս նույն տեղում, կետ 217:

դիմումը վարույթ ընդունելու և քննելու արդյունքում կրում է այդ սահմանադրաիրավական վեճը հաղթահարելու բացառիկ իրավասությունը: Ուստի, այդ վեճի նախաձեռնման իրավաչափության հարցը բովանդակային առումով չի կարող վիճարկվել վերադաս դատական ատյաններում: Այլ կերպ, սահմանադրաիրավական վեճի նախաձեռնման դեպքում, վերադաս դատական ատյանը չի կարող կասկածի տակ դնել սահմանադրաիրավական վեճի իրավաչափությունը՝ ստանձնելով Սահմանադրական դատարանի դերին բնորոշ գործառույթներ, և ստուգման ենթարկել ստորադաս դատական ատյանի՝ իրավական ակտի կարգավորման հակասահմանադրականության վերաբերյալ կասկածների հիմնավորվածությունը՝ այդ կերպ հանգեցնելով «գործառույթ-ինստիտուտ-իրավասություն» եռամիասնության շղթայի ներդաշնակության խախտման:

Միաժամանակ, սույն որոշման 22-րդ կետում մեջբերված՝ Վենետիկի հանձնաժողովի իրավական դիրքորոշումների հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալը չի բացառում վերադաս դատական ատյանի կողմից Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման իրավաչափության ստուգումը բացառապես ընթացակարգային բնույթի պահանջների պահպանման տեսանկյունից: Մասնավորապես, հենց այդ նպատակին է ծառայում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասը, որն ամրագրում է Սահմանադրական դատարան դիմելու և միաժամանակ գործի վարույթը կասեցնելու դեպքում՝ կայացված որոշման իրավաչափության վիճարկման հնարավորությունը վերադաս դատական ատյանում: Այսինքն՝ նշված հոդվածը, սահմանելով գործի վարույթը կասեցնելու ընթացակարգային հիմքերը, նախատեսում է նաև Սահմանադրական դատարան դիմելու դեպքում գործի վարույթի կասեցման հնարավորությունը և այդ առումով ամրագրում է կայացված որոշման իրավաչափության վիճարկման կարգը վերադաս դատական ատյանում, ինչի մասին է վկայում նաև բողոքարկման իրավական հիմք հանդիսացող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ուստի, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու միասնական որոշման իրավաչափության ստուգման դեպքում, դատական վերանայման ծավալը սահմանափակվում է բացառապես ընթացակարգային բնույթի պահանջների պահպանվածության գնահատմամբ:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի մայիսի 20-ի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան և կասեցրել քրեական գործի վարույթը՝ մինչև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից համապատասխան որոշման կայացումը: Դատարանը փաստել է, որ գործը դատական քննության նախապատրաստելիս համապատասխան որոշում կայացնելու համար անհրաժեշտ, կիրառման ենթակա ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2009 թ. մարտի 20-ին ընդունված ՀՕ-53-Ն օրենքի

ուժի մեջ մտնելը գործող խմբագրությանը, այլ կերպ՝ Հին օրենք) և դրա հետ փոխկապակցված ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասի (Նոր օրենք) ՀՀ Սահմանադրության 72-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանելու վերաբերյալ առկա են հիմնավոր կասկածներ²³⁶,

- Դատախազ Պ.Պետրոսյանի և տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Վ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանը, 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ բավարարել է բողոքները, Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վերաքննիչ դատարանը, ի թիվս այլնի, *նշել է, որ առանց սույն գործով դատարանական քննության փուլ թևակոխելու և խնդրո առարկա հարցերին առնչվող փաստակազմերի հետազոտության առումով անհրաժեշտ և բավարար ծավալը սպասելու, ինքնին հնարավոր չէր հանգել հիմնավոր հետևության՝ գործով կիրառման ենթակա նորմարիվ իրավական ակտի սահմանադրականության հարցում հիմնավոր կասկածների առկայության, կամ բացակայության և գործի լուծման հնարավորությունը դրանով պայմանավորելու վերաբերյալ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ առնչությամբ վիճարկվող դատական ակտում տեղ գտած դատարանի հետևությունները բավարար չափով փաստարկված չեն: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից հիմնավոր կասկածի գնահատման տիրույթում արդեն իսկ 2019 թվականի մայիսի 18-ին կայացված մեկ այլ որոշմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասին անդրադարձ կատարվել է: Մինչդեռ, ըստ Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանն ըստ էության հակասելով իրեն, գործի քննության նույն փուլում վիճարկվող որոշմամբ բարձրացրել է այդ նույն նորմի՝ որպես կիրառման ենթակա իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի շուրջ կասկածներ, ինչն առկա պայմաններում, բավարար չափով փաստարկված դիտարկվել չի կարող²³⁷:*

25. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-23-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի՝ «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» 2019 թվականի մայիսի 20-ի որոշման իրավաչափությունը, իր դիրքորոշումներով գնահատման է ենթարկել ոչ միայն այդ որոշման կայացման ընթացակարգային բնույթի պահանջների պահպանվածությունը, այլ նաև անդրադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ

²³⁶ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²³⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Առաջին ատյանի դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը: Մինչդեռ, սույն որոշման 23-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Առաջին ատյանի դատարանի կողմից բարձրացված սահմանադրաիրավական վեճը, իր հանրային-իրավական բնույթից ելնելով, ենթակա էր հաղթահարման բացառապես Սահմանադրական դատարանի կողմից և դրա նախաձեռնման իրավաչափության հարցը, այդ թվում՝ անմիջականորեն կիրառման ենթակա իրավական կարգավորման սահմանադրականության կասկածների հիմնավորվածությունը, բովանդակային առումով չէր կարող գնահատվել Վերաքննիչ դատարանի կողմից: Հետևաբար, այս առումով Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերների կողմից բարձրացված փաստարկներին:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր ամբողջ ծավալով ստուգման ենթարկել Առաջին ատյանի դատարանի՝ «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» 2019 թվականի մայիսի 20-ի որոշման իրավաչափությունը: Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի որոշումը կարող էր վերանայվել բացառապես ընթացակարգային բնույթի պահանջների պահպանվածության տեսանկյունից:

II. Դատարանի կողմից Սահմանադրական դատարան դիմելիս ընթացակարգային բնույթի պահանջների պահպանումը.

26. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ արդյո՞ք պահպանվել են ընթացակարգային բնույթի պահանջները:

27. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

27.1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարանները (...) վարույթը կասեցնելու դեպքում սույն հոդվածով նախատեսված դիմումները կարող են ներկայացնել վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Սահմանադրական դատարան դիմելը ձևակերպվում է համապատասխան դատարանի (...) որոշմամբ»:

27.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական գործով վարույթը դատարանի նախաձեռնությամբ կամ

դատավարության մասնակիցների միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ կարող է կասեցվել, եթե դատարանը գտնում է, որ կիրառման ենթակա օրենքը կամ այլ իրավական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այս դեպքում դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը և դիմել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան»:

28. Վենետիկի հանձնաժողովն անդրադառնալով ընդհանուր իրավասության դատարանների կողմից Սահմանադրական դատարան դիմելիս գործի վարույթի կասեցման հարցին՝ նշել է, որ աշխարհի մի շարք երկրներում, այդ թվում՝ Բելառուսում, Լատվիայում, Լիտվայում, Ուկրաինայում, Լյուքսեմբուրգում, Ֆրանսիայում, ինչպես նաև Հայաստանում (2006 թվականի հունիսի 1-ին ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի կարգավորումների գործողության պայմաններում), Սահմանադրական դատարան դիմում ներկայացնող դատարանը բոլոր դեպքերում կասեցնում է գործի վարույթը: Միաժամանակ, մի շարք այլ երկրներում, այդ թվում՝ Իսպանիայում, Անդորրայում, Սահմանադրական դատարան դիմելիս գործի վարույթի կասեցումը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք անհնար է գործի ըստ էության լիարժեք քննության ապահովումը: Ընդհանուր իրավասության դատարանը կարող է դիմել Սահմանադրական դատարան սովորաբար գործի քննության ավարտից հետո՝ մինչև որոշում կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալը: Ամեն դեպքում, եթե անգամ գործի քննությունը շարունակվում է, որոշման կայացման հնարավորությունը սահմանափակված է, քանի որ կիրառման ենթակա նորմի կապակցությամբ պահանջվում է Սահմանադրական դատարանի որոշում²³⁸:

Միջազգային փորձի հաշվառմամբ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ Սահմանադրական դատարան դիմելիս, կոնկրետ գործով իրականացվող դատավարությունը պետք է կասեցվի: Այն կարող է իրականացվել ինչպես *ipso jure*, այնպես էլ դատարանի համապատասխան որոշմամբ: Բոլոր դեպքերում, դատարանը չպետք է պարտավոր լինի կիրառել այն օրենքը, որն իր համոզմամբ հակասահմանադրական է, և որի սահմանադրականության վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի Սահմանադրական դատարանի կողմից կոնկրետ գործով²³⁹:

29. Սույն որոշման 27.1-28-րդ կետերում վկայակոչված դրույթների և իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռարեկ դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարան դիմելիս ընթացակարգային բնույթի պահանջներից է նաև գործի վարույթի կասեցման հարցը, որը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ առանցքային հանգամանքները.

²³⁸ Տե՛ս European Commission For Democracy Through Law (Venice Commission), Study on Individual Access to Constitutional Justice, Strasbourg, 27 January 2011, Study N° 538 / 2009, CDL-AD(2010)039rev, կետ 141:

²³⁹ Տե՛ս նույն տեղում, կետ 142:

Նախևառաջ, գործի վարույթի կասեցումը՝ գործի վարույթի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված այն ժամանակավոր ընդհատումն է, որի ընթացքում դատավարական որևէ գործողություն իրականացվել չի կարող: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմելու և միաժամանակ վարույթը կասեցնելու դեպքում, քրեական գործի հետագա քննությունը ժամանակավորապես դադարում է: Մյուս պայմաններում, առկա է իրական վտանգ, որ Սահմանադրական դատարան դիմելիս միաժամանակ քրեական գործի վարույթի կասեցումը կարող է հանգեցնել դատավարության մասնակիցների հիմնարար իրավունքների ու ազատությունների խախտման: Մասնավորապես, նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանում գործի քննության համար կարող է պահանջվել տևական ժամանակ, այդ ընթացքում կարող են վտանգվել անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները (օրինակ՝ հնարավոր չի լինի ապահովել կալանքի տակ գտնվող անձի՝ ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության պարբերական ստուգում կամ վերանայել գույքը կալանքի տակ պահելու շարունակական անհրաժեշտությունը և այլն):

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ միշտ էլ, որ Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումով սահմանադրաիրավական վեճի առարկա կարգավորումը ենթակա է անմիջապես կիրառման դատարանի կողմից, առանց որի հնարավոր չի լինի ապահովել գործի հետագա քննությունը: Մասնավորապես, գործի քննությունը մի շարք դեպքերում կարող է ամբողջությամբ չսահմանափակվել միայն սահմանադրաիրավական վեճի առարկա կարգավորման կիրառմամբ, որպիսի դեպքերում գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունն օբյեկտիվորեն կարող է բացակայել (օրինակ՝ դատաքննության ընթացքում դատավարական որևէ գործողության կատարման առնչությամբ կիրառման ենթակա նորմի սահմանադրականության ստուգումն ինքնին չի կարող բացառել քրեական գործի հետագա քննությունն այն դեպքում, երբ դատավարության մասնակիցների հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորմամբ կարելի է շարունակել քրեական գործի քննությունը՝ հետաձգելով ապացուցողական համապատասխան գործողության կատարումը՝ մինչև կիրառման ենթակա նորմի սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման կայացումը): Այս առումով Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ քրեական գործի վարույթի կասեցումը պետք է լինի որպես վերջին միջոց (*last resort*), երբ սպառված կլինեն կատարման ենթակա դատավարական գործողությունները և դատարանի կողմից գործի քննության ավարտը պայմանավորված կլինի սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող կարգավորման անմիջական կիրառմամբ:

Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ վերոնշյալ մոտեցման իրավական հիմքերն ամրագրված են նաև ՀՀ օրենսդրությամբ: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի

ինչպես 1-ին մասում թվարկված ընդհանուր հիմքերի, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասում նշված՝ Սահմանադրական դատարան դիմելիս գործի վարույթի կասեցման հիմքի դեպքում, օրենսդիրն օգտագործել է «կարող է կասեցվել» ձևակերպումը՝ այդ կերպ հայեցողական բնույթ հաղորդելով այդ դատավարական լիազորությանը: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերի, այդ թվում՝ Սահմանադրական դատարան դիմելու հիմքի առկայության դեպքում, քրեական վարույթն իրականացնող մարմինը, օգտվելով իր դիսպոզիտիվ բնույթի լիազորությունից, կարող է նաև չկասեցնել քրեական գործի վարույթը՝ շարունակելով գործի քննությունը՝ մինչև հետագայում անմիջականորեն կիրառման ենթակա նորմի համապատասխանության վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման կայացումը: Ընդ որում, հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ եթե 2006 թվականի հունիսի 1-ին ընդունված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանները Սահմանադրական դատարան դիմելուց առաջ պարտավոր էին կասեցնել կոնկրետ գործի վարույթը՝ մինչև Սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշումն ուժի մեջ մտնելը, ապա 2018 թվականի հունվարի 17-ին ընդունված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածը Սահմանադրական դատարան դիմելու դեպքում դատարանների վրա այդպիսի պարտականություն չի դնում՝ ըստ էության չբացառելով նաև Սահմանադրական դատարան դիմելիս գործի վարույթը չկասեցնելու հնարավորությունը: Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ այսպիսի մոտեցումը համապատասխանում է նաև միջազգային դատարաններ դիմելիս գործի վարույթի կասեցման հնարավորության վերաբերյալ ամրագրված կանոններին: Այսպես, օրինակ՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրությամբ ներդրված՝ խորհրդատվական կարծիք տրամադրելու ընթացակարգի իրականացման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 18-ին հաստատված ուղեցույցի համաձայն՝ խորհրդատվական կարծիք ստանալու համար Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելիս դիմող դատարանը կամ տրիբունալն է որոշում, թե արդյոք ներպետական վարույթը պետք է կասեցվի մինչև դատարանի խորհրդատվական կարծիքի տրամադրումը, թե ոչ²⁴⁰: Այսինքն՝ նույնիսկ կիրառման ենթակա կոնվենցիոն կարգավորման վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու համար

²⁴⁰ Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրությամբ ներդրված՝ խորհրդատվական կարծիք տրամադրելու ընթացակարգի իրականացման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 18-ին հաստատված ուղեցույցի 21-րդ կետը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելուն զուգահեռ գործի քննությունը կարող է շարունակվել՝ առանց կասեցնելու դրա ընթացքը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սահմանադրական դատարան դիմելու հանգամանքն անվերապահ պայման չէ քրեական գործի վարույթն ինքնաբերաբար կասեցնելու համար: Քրեական գործի վարույթի կասեցումը պետք է լինի որպես վերջին միջոց (*last resort*) և յուրաքանչյուր դեպքում վարույթը կասեցնելիս, գործի փաստական հանգամանքների (*in concreto*) համակողմանի գնահատման արդյունքում, դատարանը պետք է որոշի, թե՛

- արդյո՞ք ամբողջ ծավալով սպառվել են կատարման ենթակա գործողությունները,

- բացակայում է արդյո՞ք անձանց հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման ուղղությամբ հնարավոր միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը,

- արդյո՞ք գործի հետագա քննության ծավալը սահմանափակված է այն իրավակարգավորման անմիջական կիրառմամբ, որի սահմանադրականության առումով ամկա են հիմնավոր կասկածներ:

Նշվածն իր հերթին կարող է արդյունավետ երաշխիք լինել նաև արդար դատաքննության իրավունքի՝ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջն ապահովելու համար²⁴¹:

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- 2019 թվականի ապրիլի 29-ին թիվ 62202919 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Ռոբերտ Մեդրակի Քոչարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Մեյրան Մուշեղի Օհանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, Յուրի Գրիգորիի Խաչատուրովի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, և Արմեն Անդրանիկի Գևորգյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-րդ հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան²⁴²,

- Առաջին ատյանի դատարանը, գործը դատական քննության նախապատրաստելու փուլում, 2019 թվականի մայիսի 20-ի որոշմամբ ունենալով հիմնավոր կասկածներ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վերաբերյալ, դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան և կասեցրել քրեական գործի վարույթը՝ մինչև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից համապատասխան որոշման կայացումը: Առաջին ատյանի դատարանը նշել է, որ գործի նյութերի հետազոտման արդյունքներով, հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ մեղադրյալ

²⁴¹ Տե՛ս *mutatis mutandis*, Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0016/01/14 որոշումը:

²⁴² Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Խուդոյանի և Ա.Օրբելյանի ներկայացրած փաստարկները, ելնելով քրեական գործը ողջամիտ ժամկետներում քննելու և լուծելու քրեադատավարական օրենքի պահանջից, հաշվի առնելով, որ առկա են հիմնավոր կասկածներ՝ կիրառման ենթակա նորմերի սահմանադրականության և ՀՀ Սահմանադրության նորմերի իրավական բովանդակության բացահայտման (մեկնաբանման) առնչությամբ՝ գտնելով, որ կիրառման ենթակա և գործի լուծման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցը պարզելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ Սահմանադրական դատարան և քրեական գործի վարույթը կասեցնել²⁴³,

- Վերաքննիչ դատարանը, 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ բեկանելով Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը և գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության, նշել է, որ դատական ակտը կայացվել է օրենսդրությամբ ամրագրված պահանջների խախտմամբ: Վերաքննիչ դատարանը փաստել է, որ վիճարկվող որոշմամբ Առաջին ատյանի դատարանը թեև նշել է, որ հետազոտել է հիշյալ քրեական գործի նյութերը, սակայն, քննարկվող հարցի առնչությամբ և կողմերի մասնակցությամբ ըստ էության դատական նիստ չի հրավիրվել: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանը չի պահպանել նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածով սահմանված պահանջն առ այն, որ Սահմանադրական դատարան դիմելուց առաջ դատարանները պետք է որոշում կայացնեն գործի վարույթը կասեցնելու մասին, այնուհետև եռօրյա ժամկետում համապատասխան դատարանի որոշմամբ դիմում ներկայացնեն Սահմանադրական դատարան, մինչդեռ տվյալ դեպքում դատարանը կայացրել է միասնական որոշում: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տուժողների իրավահաջորդներին, վերջիններիս ներկայացուցչին դատարանի կողմից հնարավորություն չի ընձեռվել՝ ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրենց իրավունքներն արդյունավետ իրականացնելու համար: Վերաքննիչ դատարանի համոզմամբ, Առաջին ատյանի դատարանն ըստ էության, անհրաժեշտ և բավարարչանապիրություն չի ցուցաբերել՝ դատական նիստում, կողմերի մասնակցությամբ, սույն գործով վիճարկվող որոշմամբ արձարծվող հարցերը քննարկելու ուղղությամբ: Արդյունքում, խախտվել է տուժողների իրավահաջորդների և վերջինիս ներկայացուցչի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված՝ արդար դատական քննության իրավունքը²⁴⁴:

²⁴³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²⁴⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

31. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 27-29-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Վերաքննիչ դատարանի այն պնդմանը, որ «Առաջին ապրյանի դատարանը դատական ակտը կայացնելիս չի պահպանել նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածով սահմանված պահանջն առ այն, որ Սահմանադրական դատարանն ղիմելուց առաջ դատարանները պետք է որոշում կայացնեն գործի վարույթը կասեցնելու մասին, այնուհետև եռօրյա ժամկետում համապատասխան դատարանի որոշմամբ ղիմում ներկայացնեն Սահմանադրական դատարան, մինչդեռ փվյալ դեպքում դատարանը կայացրել է միասնական որոշում»: Սույն որոշման 29-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ Սահմանադրական դատարանն ղիմելիս գործի վարույթի կասեցման իմպերատիվ պահանջ նախատեսված չէ ո՛չ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով, ո՛չ էլ դատավարական բնույթի իրավահարաբերությունները կարգավորող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Սահմանադրական դատարանն ղիմելու հանգամանքը չի կարող լինել անվերապահ պայման՝ քրեական գործի վարույթն ինքնաբերաբար կասեցնելու համար: Ընդհակառակը, օրենսդիրը գործի վարույթի կասեցման դատավարական լիազորությանը հաղորդելով հայեցողական բնույթ՝ նպատակ է հետապնդել ապահովել դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների արդյունավետ երաշխավորումը:

Ավելին, հարկ է ընդգծել, որ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ Սահմանադրական դատարանն ղիմելու մասին որոշում կայացնելիս, դատարանի կողմից կատարման ենթակա հնարավոր դատավարական գործողությունների ծավալն ամբողջությամբ սպառված չի եղել: Նախնառաջ պետք է ընդգծել, որ դատարանն ուղարկված քրեական գործով մեղադրյալներին մեղսագրվել է ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, այլ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքներ: Բացի այդ, մեղադրյալների գույքը գտնվել է կալանքի տակ, մեղադրյալներ Ս.Օհանյանի, Յ.Խաչատուրովի և Ա.Գևորգյանի նկատմամբ կիրառված են եղել խափանման միջոցներ, իսկ Ռ.Քոչարյանի նկատմամբ՝ ազատությունից զրկելու հետ կապված՝ կալանավորում խափանման միջոցը²⁴⁵: Մինչդեռ, գործի վարույթի կասեցման արդյունքում ոչ միայն հնարավոր չի եղել ապահովել այդ իրավունքների սահմանափակման իրավաչափության

²⁴⁵ Տե՛ս www.datalex.am դատական տեղեկատվական համակարգը, թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը:

հետագա դատական ստուգումը, այլ նաև՝ շարունակել քրեական գործի քննությունն այլ հոդվածներով առաջադրված մեղադրանքների մասով: Այսինքն՝ թեև Առաջին ատյանի դատարանը Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու որոշման պատճառաբանությունների հիմքում դրել է նաև քրեական գործը ողջամիտ ժամկետում քննելու և լուծելու քրեադատավարական օրենքի պահանջի ապահովման անհրաժեշտությունը, սակայն քրեական գործի վարույթը կասեցնելով վտանգել է այդ պահանջի պահպանման երաշխիքը: Նման պայմաններում, քրեական գործի վարույթի կասեցումը չի եղել որպես վերջին միջոց (*last resort*), քանի որ կատարման ենթակա հնարավոր գործողությունների ծավալը սպառված չի եղել, չի վերացել անձանց հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, իսկ գործի հետագա քննության սահմանները սահմանափակված չեն եղել բացառապես ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի անմիջական կիրառմամբ, որի սահմանադրականության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի մոտ առկա են եղել հիմնավոր կասկածներ:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ ընթացակարգային բնույթի պահանջները չեն պահպանվել:

32. Անդրադառնալով բողոքաբերների այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանում հնարավորություն չի տրվել լիարժեք իրացնելու պաշտպանության իրենց իրավունքը, գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանում նիստը նախագահողի կողմից պաշտպանության կողմի ներկայացուցիչներին ընձեռվել է վերաքննիչ բողոքների կապակցությամբ իրենց դիրքորոշումը ներկայացնելու հնարավորություն: Հետևաբար, պաշտպանության իրավունքի խախտման մասին բողոքաբերների փաստարկը Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում:

33. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս, Վերաքննիչ դատարանն ամբողջ ծավալով ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի՝ «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» 2019 թվականի մայիսի 20-ի՝ որոշման իրավաչափությունը, 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի և 376.1-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումներ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի հետ փոխկապակցված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ԵԴ/0253/01/19

Դատավոր Սերժիկ Ավետիսյան

2021 թվականի մարտի 17-ին

ք.Երևանում

Մեղադրյալ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանի պաշտպան Հովհաննես Խոզդոյանի և մեղադրյալ Մեյրան Մուշեղի Օհանյանի պաշտպան Կարեն Մեծլույանի վճռաբեկ բողոքները մասնակիորեն բավարարելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ նաև Վճռաբեկ դատարան) 2021 թվականի մարտի 17-ի որոշման պատճառաբանական առանձին դրույթների և եզրափակիչ մասի վերաբերյալ.

Գործի դատավարական նախապատմությունը այնքանով, որքանով էական նշանակություն ունի վճռաբեկ բողոքների քննության համար.

1. 2019 թվականի ապրիլի 29-ին թիվ 62202919 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Մեյրան Մուշեղի Օհանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, Յուրի Գրիգորիի Խաչատուրովի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, և Արմեն Անդրանիկի Գևորգյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-րդ հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի մայիսի 20-ի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան և կասեցրել քրեական գործի վարույթը՝ մինչև ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից համապատասխան որոշման կայացումը:

Դատարանը խնդրել է՝

ա) քննարկել և պարզել կիրառման ենթարկա ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի և դրա հետ փոխկապակցված ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2009 թվականի մարտի 20-ին ընդունված ՀՕ-53-Ն օրենքի ուժի մեջ գտնվելը գործող խմբագրությամբ) համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 72-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածների պահանջներին,

բ) մեկնաբանել ՀՀ Սահմանադրության 56.1-րդ և 57-րդ հոդվածները (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 140-րդ և 141-րդ հոդվածները) ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածների համատեքստում:

3. Դատախազ Պ.Պետրոսյանի և տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Վ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ բավարարել է բողոքները, Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

4. ՀՀ Սահմանադրական դատարանը, քննության առնելով Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը և Ռոբերտ Քոչարյանի դիմումը 2019 թվականի հուլիսի 18-ին որոշումներ է կայացրել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 16-րդ արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա՝ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով, դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարանին և Վենետիկի հանձնաժողովին առաջադրելով համապատասխան հարցեր:

5. ՀՀ Սահմանադրական դատարանի նիստերի ժամանակացույցի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանի որոշման և Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը քննության է առնվելու 2021 թվականի մարտի 23-ին:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Խուրդյանը և մեղադրյալ Ս.Օհանյանի պաշտպան Կ.Մեծլույսանը բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ ընդունվել են վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի մարտի 10-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

7. Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 17-ի որոշմամբ վճռաբեկ բողոքները բավարարվել են մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը բեկանել ամբողջությամբ, իսկ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը բեկանել մասնակիորեն՝ քրեական գործի վարույթը կասեցնելու մասով:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի մայիսի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Գործի նյութերի հետազոտման արդյունքներով, հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Խուրդյանի և Ա.Օրբելյանի ներկայացրած փաստարկները, ելնելով քրեական գործը ողջամիտ ժամկետներում քննելու և լուծելու քրեադատարարական օրենքի պահանջից, հաշվի առնելով,

որ առկա են հիմնավոր կասկածներ կիրառման ենթակա իրավական ակտերի սահմանադրականության և ՀՀ Սահմանադրության նորմերի իրավական բովանդակության բացահայտման (մեկնաբանման) առնչությամբ՝ Դատարանը փաստում է, որ կիրառման ենթակա և գործի լուծման համար անհրաժեշտ նորմարիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցը պարզելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ Սահմանադրական դատարան և քրեական գործի վարույթը կասեցնել, որպիսի հետևության դադարանը հանգում է հետևյալ փաստարկներով և հիմնավորումներով.

(...) Դատարանը փաստում է, որ գործը դատական քննության նախապարտաբերելիս համապարասիան որոշում կայացնելու համար անհրաժեշտ, կիրառման ենթակա ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2009թ. մարտի 20-ին ընդունված ՀՕ-53-Ն օրենքի ուժի մեջ գրնվելը գործող խմբագրությամբ, այլ կերպ Հին օրենք) և դրա հետ փոխկապակցված ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասի (Նոր օրենքի) ՀՀ սահմանադրության 72-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածներին համապարասիանելու վերաբերյալ առկա են հիմնավոր կասկածներ, որպիսի հետևության հանգում եմ հետևյալ իրավական վերլուծությունների և դատողությունների արդյունքներով:

(...) Հաշվի առնելով, որ դադարանի մոտ հիմնավոր կասկածներ կան առ այն, որ գործով 4 մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդման մարմինների կիրառված ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը, դրա հետ փոխկապակցված ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածը ենթադրաբար հակասում են ՀՀ Սահմանադրության 72-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածներին, Սահմանադրական դադարանի որոշմամբ փաստվելու պարագայում նրանցից Սեյրան Օհանյանի և Յուրի Խաչատրյանի նկատմամբ բացառապես րվյալ հոդվածով հարուցված քրեական հետապնդումները կարող են ընդհուպ դադարեցվել (այսինքն՝ մինչև գործը դատական քննության նշանակելը կարող է ի հայտ գալ նրանց նկատմամբ քրեական հետապնդումը և վարույթը բացառող հանգամանք), իսկ մեղադրյալ Ռ.Քոչարյանի կամ բոլորի մասով նաև կասեցվել՝ Դատարանը փաստում է, որ վիճարկվող նորմարիվ իրավական ակտերի կիրառման խնդիրն առկա է դատական քննության հարկապես րվյալ փուլում, ուստի դրանց սահմանադրականության հարցով ՀՀ Սահմանադրական դատարան է դիմում՝ օգրվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումից:

(...) [Միաժամանակ] հաշվի առնելով ՀՀ նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի «կարգավիճակից բխող գործողություններ» և «կարգավիճակի հետ չկապված գործողություններ» եզրույթների վերաբերյալ ծագած հիմնավոր կասկածները, այդ ինստիտուտի նորմերի ճիշտ կիրառմամբ մեղադրյալ Ռ.Քոչարյանի մասով քրեական վարույթը շարունակելու և գործը ճիշտ լուծելու անհրաժեշտությունը, Սահմանադրությունը պաշտոնապես և վերջնականապես մեկնաբանելու Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը, այդ մեկնաբանության համապարտադիր բնույթը՝ դիմում եմ ՀՀ Սահմանադրական դատարանին խնդրելով համաշահության և որոշակիության սահմանադրական

ակզբունքների տեսանկյունով մեկնաբանել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ սահմանադրության 56.1 և 57-րդ հոդվածները (համապատասխանում է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 140-րդ և 141-րդ հոդվածներին) (...)»²⁴⁶:

9. Հղում կատարելով *Ռոբերտ Զոչարյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԴ/0743/06/18 որոշմանը, ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածին, Վերաքննիչ դատարանը 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) [Վ]կայացված իրավադրոյթների և դրանցից բխող իրավակարգավորումների լույսի ներքո, վերլուծության ենթարկելով ինդրոտ առարկային առնչվող փաստական հանգամանքները, պարզ է դառնում, որ սույն գործով վիճարկվող դատական ակտը կայացվել է վերը նշված իրավադրոյթներով ամրագրված պահանջների խախտմամբ:

Ընդ որում, վիճարկվող որոշմամբ դատարանը թեև նշել է, որ հետազոտել է հիշյալ քրեական գործի նյութերը, մինչդեռ, քննարկվող հարցի առնչությամբ և կողմերի մասնակցությամբ ըստ էության դատական նիստ չի հրավիրվել:

Վիճարկվող դատական ակտի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ (կոնկրետ դեպքում) այն կայացվել է դատարանի կողմից ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար անհրաժեշտ և բավարար պայմանների բացակայությամբ, դրա կայացմամբ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական իրավունքի էական խախտում, որն արտահայտվել է վերը մեջ բերված իրավադրոյթների խախտմամբ, ինչն էլ կարող էր ազդել այդ առնչությամբ գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Այլ կերպ ասած, առանց սույն գործով դատական քննության փուլ թևակոխելու և ինդրոտ առարկա հարցերին առնչվող փաստակազմերի հետազոտության առումով անհրաժեշտ և բավարար ծավալը սպառելու, ինքնին հնարավոր չէր հանգելու հիմնավոր հետևությանն առկա պայմաններում, գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցում (գործի քննության ներկա փուլում) հիմնավոր կասկածների առկայության, կամ բացակայության և գործի լուծման հնարավորությունը դրանով պայմանավորելու վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ այդ առնչությամբ վիճարկվող դատական ակտում տեղ գրած դատարանի հետևությունները, (կոնկրետ դեպքում) ներկայումս բավարար չափով փաստարկված չեն:

Ինչն ինքնին չի բացառում սույն գործով դատական քննության փուլ թևակոխելու և ինդրոտ առարկա հարցերին առնչվող փաստակազմերի առումով անհրաժեշտ

²⁴⁶ Տե՛ս քրեական գործի հավելված, հատոր 9, թերթեր 117-156:

և բավարար ծավալը սպառելուց հետո նոր միայն, սույն գործով վիճարկվող որոշմանը արծարծված հարցերին վերադառնալու հնարավորությունը:

(...) Ինչը (կոնկրետ դեպքում) չի արվել, և ինչը հանգեցրել է քրեադատարարական իրավունքի այնպիսի էական խախտման, որը կարող էր ազդել սույն գործով (սահմանադրական դադարան դիմելու և քրեական գործի վարույթը կասեցնելու առնչությամբ) ներկայումս ճիշտ որոշում կայացնելու վրա:

Բացի այդ, (...) դադարանի կողմից հիմնավոր կասկածի գնահատման արհրություն արդեն իսկ 2019 թվականի մայիսի 18-ին կայացված թիվ ԵԴ/0253/01/19 մեկ այլ որոշմանը ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասին անդրադարձ կատարվել է:

Մինչդեռ, դադարանն ըստ էության հակասելով իրեն, գործի քննության նույն փուլում վիճարկվող որոշմանը բարձրացրել է այդ նույն նորմի՝ որպես կիրառման ենթակա իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի շուրջ կասկածներ, ինչն առկա պայմաններում, բավարար չափով փաստարկված դիմարկվել չի կարող:

(...) Բացի այդ, դադարանը չի պահպանել նաև «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածով սահմանված պահանջն առ այն, որ Սահմանադրական դադարան դիմելուց առաջ դադարանները պետք է որոշում կայացնեն գործի վարույթը կասեցնելու մասին, այնուհետև ետոյա ժամկետում համապատասխան դադարանի որոշմանը դիմում ներկայացնեն Սահմանադրական դադարան, մինչդեռ րվյալ դեպքում Դատարանը կայացրել է միասնական որոշում:

(...) Հիմք ընդունելով վերագրյալը, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Դատարանը (ՀՀ սահմանադրական դադարան դիմելու և քրեական գործի վարույթը կասեցնելու առնչությամբ) որոշում կայացնելիս, թույլ է տվել քրեադատարարական իրավունքի այնպիսի էական խախտում, որը կարող էր ազդել ներկայումս սույն գործով այդ առնչությամբ ճիշտ որոշում կայացնելու վրա:

(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև սույն գործով դատական նիստի ընթացքում պաշտպանության կողմի, մասնավորապես մեղադրյալ Ռոբերտ Քոչարյանի շահերի պաշտպանների դրսևորած վարքագծին և դրան անմիջականորեն առնչվող հանգամանքների վերլուծությանը:

(...) Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններից Հ.Խոտրյանը պաշտպանության կողմից պատասխան ելույթի փոխարեն ներկայացրել է իր իսկ կողմից արտոագրված 19.06.2019թ. թվագրմանը միջնորդություն ՀՀ սահմանադրական դադարան դիմելու և քրեական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ:

(...) Պաշտպանության կողմը ըստ էության չի ցանկացել առկա փուլում պատասխան ելույթով հանդես գալ, փոխարենն ըստ էության ցանկացել է, պահանջ է ներկայացրել իր իսկ կողմից ներկայացված միջնորդությունը քննարկելու վերաբերյալ:

(...) Վերաքննիչ դատարանի դիմարկմանը, պաշտպանության կողմն ըստ էության հրաժարվել է պատասխան ելույթի առնչությամբ առկա փուլում իր

իրավունքներն ըստ էության իրացնելուց, փոխարենը փորձել է Վերաքննիչ դատարանին թելադրել (նողորդել) իր սեփական օրակարգն ինչն անընդունելի է:

Որպիսի պայմաններում, արեղծված իրավիճակում պաշտպանության կողմն ըստ էության չարաշահել է իր դատավարական իրավունքները, ինչի արդյունքում ինքն իրեն զրկել է իր իրավունքներն իրացնելու հնարավորությունից:

(...) [Պ]աշտպանության կողմից առկա պայմաններում, նման միջնորդություն ներկայացնելն ուղղված էր գործի հնարավոր անհարկի ձգձգելուն, ինչը ևս վկայում է պաշտպանության կողմից իր իրավունքներից ոչ բարեխիղճ օգտվելու, իր դատավարական իրավունքներն ըստ էության չարաշահելու մասին: (...)»²⁴⁷:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Խուդոյանը գտել է, որ բողոքարկվող դատական ակտը պատճառաբանված չէ, խախտում է մեղադրյալի՝ միջազգային և ներքին իրավական ակտերով հռչակված իրավունքները, կայացվել է մրցակցային դատավարության սկզբունքի կոպիտ խախտումով, հակասում է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներում առկա մեկնաբանություններին:

10.1. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, վերաքննիչ բողոքների մակագրության կարգը խախտվել է, արդյունքում բողոքարկվող դատական ակտը կայացվել է ոչ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից:

10.2. Բողոքաբեր Հ.Խուդոյանը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը գործը քննել է քրեական դատավարության մրցակցության սկզբունքի կոպիտ խախտմամբ, Ռոբերտ Քոչարյանին և պաշտպաններին զրկել է ներկայացված բողոքների կապակցությամբ դիրքորոշում ներկայացնելու հնարավորությունից: Բողոքի հեղինակը նշել է, որ պաշտպանական կողմը 2019 թվականի հունիսի 19-ին ՀՀ Վերաքննիչ դատարան է ներկայացրել միջնորդություն՝ Սահմանադրական դատարան դիմելու մասին, որը քննության առնելու խնդրանքով Վերաքննիչ դատարանին են դիմել հաջորդ օրը, դատական նիստի ընթացքում, այն բանից հետո, երբ մեղադրողները ավարտել են իրենց բողոքների ներկայացումը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, ներկայացված միջնորդությունը քննության առնելու, կամ քննությունը հետաձգելու, կամ քննությունը մերժելու փոխարեն մեկնաբանել է այն որպես բողոքների պատասխան ելույթներից հրաժարում, պաշտպանների գործողությունները մեկնաբանել է որպես իրավունքների չարաշահում և հետացել է խորհրդակցական սենյակ՝ ավարտելով դատական ստուգումը:

²⁴⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 95, թերթեր 89-163:

10.3. Բողոքաբեր Հ.Խուդոյանը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը քննության է առել բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ, դրա վերաբերյալ կայացրել իր լիազորությունից չբխող դատական ակտ:

Բողոքաբերը նշել է, որ Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշումը բողոքարկելի չէ և չէր կարող քննվել Վերաքննիչ դատարանի կողմից: Բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածը սահմանում է Առաջին ատյանի դատարանի կողմից ընդունված այն դատական ակտերի շրջանակը, որոնք ենթակա են վերաքննության կարգով բողոքարկման, իսկ այդ հոդվածում չնախատեսված ակտերը չեն կարող բողոքարկվել վերաքննության կարգով: Եվ քանի որ նշված հոդվածում որևէ կերպ նշված չէ Սահմանադրական դատարան դիմելու որոշումը որպես բողոքարկելի դատական ակտ, դրանից բխում է, որ նշված որոշումը ենթակա չէ բողոքարկման:

10.4. Պաշտպան Հ.Խուդոյանը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը չունի իրավասություն այս վարույթի շրջանակներում անդրադառնալու նորմերի սահմանադրության համապատասխանության կամ անհամապատասխանության հարցին: Եթե ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում սահմանադրական դատարան դիմելը յուրաքանչյուր դատարանի պարտականությունն է, և եթե դատարանը ենթարկվում է միայն Սահմանադրությանն ու օրենքին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 3-րդ կետը քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ բոլոր որոշումների վրա տարածելու պարագայում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ վերադաս ատյանը ստորադաս ատյանին արգելի կատարել իր սահմանադրական պարտականությունը: Բողոքաբերը նշել է, որ ՀՀ օրենսդրության վերլուծությունից պարզ է դառնում, որ նորմի համապատասխանությունը Սահմանադրությանը կարող են քննարկել միայն գործը քննող դատարանը, որը պետք է կիրառի համապատասխան նորմը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանը: Որևէ այլ մարմին, ներառյալ Վերաքննիչ դատարանը, սույն վարույթի շրջանակներում, ըստ բողոքաբերի, իրավասու չէ անդրադառնալու օրենսդրական նորմի սահմանադրականությանը, եթե այն չի կիրառելու նշված նորմը: Բողոքաբերն ընդգծել է, որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ նման որոշում կարող է կայացվել դատարանի նախաձեռնությամբ, ինչը նշանակում է, որ եթե դատարանը գտնում է, որ կիրառման ենթակա նորմը հակասահմանադրական է, ապա վերաքննիչ ատյանը չի կարող իր դատական ակտով դատարանին պարտավորեցնել գալ այլ համոզման ու գործը քննել այն կանխավարկածով, որ կիրառման ենթակա օրենքը հակասահմանադրական չէ, քանի որ նման պայմաններում ստացվում է, որ վերադաս ատյանն իրականացնում է սահմանադրական արդարադատություն:

Բողոքաբերը նշել է նաև, որ բողոքարկման ենթակա չէ նաև Սահմանադրական դատարան դիմելիս գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը:

11. Վերոշարադրյալի հիման վրա, մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Խոտոյանը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշմանը:

12. **Մեղադրյալ Ա.Օհանյանի պաշտպան Կ.Մեծլումյանը** գտել է, որ բողոքարկվող դատական ակտով Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով, 63-րդ հոդվածի 1-ին մասով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ մեղադրյալ Ա.Օհանյանի իրավունքները:

12.1. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը բացահայտ կողմնապահություն է դրսևորել հոգուտ մեղադրանքի կողմի, այն է՝ պաշտպանության կողմին զրկել է մեղադրանքի կողմի բողոքների վերաբերյալ դիրքորոշում հայտնելուց, ինչպես նաև միջնորդություններ ներկայացնելուց, իսկ ում էլ չի զրկել դիրքորոշում հայտնելու հնարավորությունից՝ դատական ակտում արձանագրել է նրանց կողմից ելույթ ունենալու և դիրքորոշում հայտնելու փաստը, մինչդեռ վերաքննիչ բողոքներին Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ մանրամասն անդրադարձել է:

12.2. Պաշտպան Կ.Մեծլումյանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նաև ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 6-րդ մասերի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի 3-րդ կետի ու 295-րդ հոդվածի ակնհայտ և կոպիտ խախտումներ: Բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից Սահմանադրական դատարան դիմելու իրավացիությունը հաստատվում է հենց ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 8-ի թիվ ՍԴԱՌ-72 որոշմամբ, որով Առաջին ատյանի դատարանի դիմումն ընդունվել է քննության, ինչպես նաև՝ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 18-ի թիվ ՍԴԱՌ-81 և ՍԴԱՌ-82 որոշումներով, որոնցով Սահմանադրական դատարանը որոշել է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան և Վենետիկի հանձնաժողովին՝ խորհրդատվական կարծիքներ ստանալու նպատակով:

12.3. Բողոքաբերը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը հանդես չի եկել որպես օրենքի հիման վրա ստեղծված դատարան, քանի որ իրավունք չունեն նման որոշում կայացնելու և Առաջին ատյանի դատարանի փոխարեն որոշելու՝ առկա՝ է արդյոք Սահմանադրական դատարան դիմելու հիմք, թե ոչ:

13. Վերոշարադրյալի հիման վրա, մեղադրյալ Ա.Օհանյանի պաշտպան Կ.Մեծլումյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը և անփոփոխ թողնել Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի դատական ակտը:

Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումը և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանը, կարևորելով ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու որոշման բողոքարկման ընթացակարգի առանձնահատկությունները, անհրաժեշտ համարելով քննարկել Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու որոշման իրավաչափության վերանայման՝ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների լիազորությունների սահմանները, ընդհանուր առմամբ հանգել է հետևյալ եզրահանգումների:

14.1. Հակասահմանադրականության բացառմանն ուղղված սահմանադրաիրավական վեճը, որը բարձրացվում է որևէ դատական ատյանի կողմից, չի կարող դատական ստուգման ենթարկվել վերադաս դատարանի կողմից: Այսինքն՝ բարձրացված սահմանադրաիրավական վեճն իր հանրային իրավական բնույթից ելնելով ենթակա է հաղթահարման բացառապես Սահմանադրական դատարանի կողմից:

Վեներտիկի հանձնաժողովի իրավական դիրքորոշումների հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վերոնշյալը չի բացառում վերադաս դատական ատյանի կողմից Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման իրավաչափության ստուգումը բացառապես ընթացակարգային բնույթի պահանջների պահպանման տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանն իրավասու չէր ամբողջ ծավալով ստուգման ենթարկել Առաջին ատյանի դատարանի՝ «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» 2019 թվականի մայիսի 20-ի մեկ միասնական որոշման իրավաչափությունը: Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի որոշումը կարող էր վերանայվել բացառապես ընթացակարգային բնույթի պահանջների պահպանվածության տեսանկյունից:

14.2. Սահմանադրական դատարան դիմելիս ընթացակարգային բնույթի պահանջներից է նաև գործի վարույթի կասեցման հարցը, որը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ առանցքային հանգամանքները:

Սահմանադրական դատարան դիմելիս միաժամանակ քրեական գործի վարույթի կասեցումը կարող է հանգեցնել դատավարության մասնակիցների համար իրավունքների և ազատությունների խախտման: Քրեական գործի վարույթի կասեցումը պետք է լինի որպես վերջին միջոց, երբ սպառված կլինեն կատարման ենթակա դատավարական գործողությունները և դատարանի կողմից գործի քննության ավարտը պայմանավորված կլինի սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող կարգավորման անմիջական կիրառմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ընդհանուր հիմքերի, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասում նշված՝ Սահմանադրական դատարան դիմելիս գործի վարույթի կասեցման հիմքի դեպքում, օրենսդիրն օգտագործել է <<կարող է կասեցվել>> ձևակերպումը, այլ կերպ՝ հայեցողության բնույթ հաղորդելով այդ դատավարական լիազորությանը: Բացի այդ, 2018 թվականի հունվարի 17-ին

ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածը, ի տարբերություն, 2006 թվականի հունիսի 1-ին ընդունված օրենքի, Սահմանադրական դատարան դիմող դատարանների վրա վարույթը կասեցնելու պարտականություն չի դնում:

14.3. Առաջին ատյանի դատարանի կողմից 2019 թվականի մայիսի 20-ի «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու» որոշմամբ ընթացակարգային բնույթի պահանջները չեն պահպանվել: Վարույթի կասեցման ընթացքում հնարավոր չի եղել ապահովել մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման և այլընտրանքային խափանման միջոցների, ինչպես նաև նրանց գույքի վրա դրված կալանքի իրավաչափության ստուգումը, և բացի այդ շարունակել գործի քննությունը ՀՀ քրեական օրենսգրքի մյուս հոդվածների մասով:

14.4. Անդրադառնալով բողոքաբերների այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանում նրանց հնարավորություն չի տրվել լիարժեք իրացնելու պաշտպանության իրենց իրավունքը, գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական նիստը նախագահողի կողմից վարվել է սահմանված ընթացակարգով և պաշտպանության կողմի մասնակիցներն ունեցել են իրենց դիրքորոշումը ներկայացնելու և պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորություն: Հետևաբար, պաշտպանության իրավունքի խախտման մասին բողոքաբերների փաստարկը Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարել:

Բողոքների քննության արդյունքում, Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը բեկանել է ամբողջությամբ, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը՝ մասնակիորեն՝ քրեական գործի վարույթը կասեցնելու մասով:

Գատավոր Ս.Ավետիսյանի իրավական դիրքորոշումները և եզրահանգումները

15. Ուսումնասիրելով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը, դրա դեմ բերված պաշտպանների վճռաբեկ բողոքների հիմքերն ու հիմնավորումները, ծանոթանալով վարույթում առկա նյութերին, ինչպես նաև բողոքները մասնակիորեն բավարարելու մասին Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 17-ի որոշմանը, համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական առանձին դրույթների և եզրափակիչ մասի հետ, մնում եմ Հատուկ կարծիքի՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով:

15.1. Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ներպետական օրենսդրությունը և հաշվի առնելով միջազգային փորձը, հանգել է ճիշտ եզրահանգման, որ սահմանադրականության հարցով ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին դատարանների որոշումները չեն կարող դատական ստուգման (վերանայման) առարկա լինել, քանի որ վերադաս դատական ատյանը չի կարող կասկածի տակ դնել սահմանադրաիրավական

վեճի իրավաչափությունը՝ ստանձնելով ՀՀ Սահմանադրական դատարանի դերին բնորոշ գործառնություններ:

Սակայն վիճելի եմ համարում ՀՀ Սահմանադրական դատարանի դիմելիս գործի վարույթը կասեցնելու դատարանների իրավասության և կասեցման ընթացակարգի վերաբերյալ դատավորների մեծամասնության դիրքորոշումը:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Դատարանները (...) վարույթը կասեցնելու դեպքում սույն հոդվածով նախատեսված դիմումները կարող են ներկայացնել վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Սահմանադրական դատարանի դիմելը ձևակերպվում է համապատասխան դատարանի (...) որոշմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քրեական գործով վարույթը դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ կարող է կասեցվել, եթե դատարանը գտնում է, որ կիրառման ենթակա օրենքը կամ այլ իրավական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այս դեպքում դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը և դիմել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Այս հիմքով գործի վարույթը կասեցնելու դատավարության մասնակիցների միջնորդությունները բավարարվում կամ մերժվում են դատարանի որոշմամբ, որը կայացման պահից տասնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերադաս դատարան»:

Վճռաբեկ դատարանը, մեջբերելով միջազգային փորձը, ըստ որի ՀՀ Սահմանադրական դատարանի դիմելիս կոնկրետ գործով իրականացվող դատավարությունը պետք է կասեցվի այն հաշվառմամբ, որ դատարանը պարտավոր չէ կիրառել այն օրենքը, որն իր համոզմամբ հակասահմանադրական է և որի սահմանադրականության վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից կոնկրետ գործով, այնուամենայնիվ գտել է, որ գործով վարույթի կասեցման հարցը ընթացակարգային բնույթի է, հետևապես ՀՀ Սահմանադրական դատարանի դիմելու հանգամանքն ինքնին անվերապահ պայման չէ քրեական գործի վարույթը կասեցնելու համար: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ այդ հետևությունը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասից, որում օրենսդիրը օգտագործել է «կարող է կասեցնել» ձևակերպումը և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածից:

Գտնում եմ, որ ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է, որ Սահմանադրական դատարանի դիմելիս դատարանը պարտավոր է վարույթը կասեցնել, կայացնելով պատճառաբանված որոշում:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասում «կարող է կասեցվել» առկա եզրույթը ոչ թե հայեցողության բնույթ է հաղորդում այդ դատավարական լիազորությանը, այլ իմ կարծիքով, վկայում է Սահմանադրական դատարան դիմելու հիմքի առկայության դեպքում վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը: Այլ կերպ՝ «**ՀՀ Սահմանադրական դատարան դիմելը**» ձևակերպումը ենթադրում է ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու և վարույթը կասեցնելու մասին միասնական որոշման կայացում, ինչի մասին է վկայում նաև ՀՀ դատարանների պրակտիկան:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը պարտավոր է վարույթը կասեցնելու մասին որոշում կայացնել ոչ միայն նույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին, այլ նաև 2-րդ մասով նախատեսված հիմքով:

Տվյալ հետևությունը բխում է նաև 2018 թվականի մարտի 21-ին ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածից, որի համաձայն՝ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից և ամբողջ հոդվածի կարգավորման համատեքստից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքով կասեցված գործով վարույթը վերսկսվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից որոշում կայացվելուց հետո»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 257-րդ, 295-րդ և 310-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ վարույթի կասեցման հիմքի առկայությունը քրեական վարույթն իրականացնող մարմինները կարող են արձանագրել միայն վարույթը կասեցնելու մասին որոշմամբ, որը կարող է բողոքարկվել: Դատարանը չի կարող առանձին որոշումներ կայացնել կասեցնելու, ապա միայն Սահմանադրական դատարան դիմելու մասին:

15.2. Պարզելու համար, արդյո՞ք դատարանի գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը օրինական է և հիմնավորված, անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է քրեական գործով վարույթը կասեցնելու հիմքերի երկու ինքնուրույն խմբեր.

- առաջին խումբը ներառում է մի քանի հիմքեր, որոնք նախատեսված են օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասում,

- երկրորդ խումբը՝ նույն օրենսգրքի 2-րդ մասում ամրագրված միայն մեկ հիմք, այն է՝ դատարանը դիմում է ՀՀ Սահմանադրական դատարան:

Ընդ որում, հատկանշական է, որ եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինները օժտված են հայեցողությամբ, այսինքն՝ այդ հիմքերի առկայության պայմաններում կարող են նաև չկասեցնել քրեական գործով վարույթը, ապա դատարանը ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ Սահմանադրական

դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի ՍԴՈ-1459 որոշման և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի ուժով այդ հարցում որևէ հայեցողությամբ օժտված չէ:

Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերի որևէ մեկի առկայության դեպքում քրեական գործի վարույթը կարող է կասեցվել ինչպես **ամբողջությամբ, այնպես էլ համապատասխան մասով**, սակայն օրենսդիրը նման հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով քրեական գործով վարույթը կասեցնելու համար չի նախատեսում, այլ կերպ՝ ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու հիմքով գործով վարույթը չի կարող միայն համապատասխան մասով կասեցվել, այն ենթակա է կասեցման ամբողջությամբ (տեսականորեն վարույթի մասնակի կասեցումը հնարավոր է, օրինակ, այն դեպքում, երբ Սահմանադրական դատարան դիմելու հիմքն առնչություն չունենա գործով անցնող այլ մեղադրյալների կամ ամբաստանյալների հետ: Այդ դեպքում, իմ կարծիքով, դատարանը կարող է որոշում կայացնել այդ անձանց մասով անջատ քննություն իրականացնելու համար, պայմանով, որ դա չի դժվարացնի ամբողջ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը):

Վարույթի կասեցման պարտադիր լինելը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ սահմանադրականության հարցով ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու հիմնավոր կասկածի առկայությունից բացի, դատարանը **սովյալ գործի լուծումը** հնարավոր է համարում այդ նորմատիվ իրավական հարցի կիրառման միջոցով, իսկ գործի լուծումը, գործով վերջնական դատական ակտ կայացնելը հնարավոր է դատավարության բոլոր, այդ թվում՝ դատական քննության նախապատրաստական փուլում (օրինակ, երբ այդ փուլում ի հայտ են եկել քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը):

Հատկանշական է, որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու հիմքի առկայության դեպքում վարույթի կասեցումը պարտադիր է (նույնանման մոտեցում ամրագրված է նաև մի շարք երկրների օրենսդրություններով, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդված):

15.3. Անհամաձայնությունն հայտնելով Վճռաբեկ դատարանի այն պատճառաբանություններին, որ Սահմանադրական դատարան դիմելու և միաժամանակ վարույթը կասեցնելու դեպքում քրեական գործի հետագա քննությունը ժամանակավորապես դադարում է, որի ընթացքում դատավարական գործողություններ իրականացվել չի կարող, հարկ եմ համարում նշել հետևյալը:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վարույթի կասեցումը կարող է հանգեցնել դատավարության մասնակիցների հիմնարար իրավունքների և ազատությունների խախտման, մասնավորապես, նկատի ունենալով,

որ Սահմանադրական դատարանում գործի քննության համար կարող է պահանջվել տևական ժամանակ և այդ ընթացքում կարող են վտանգվել անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները:

Գտնում եմ, որ վարույթը կասեցնելու դեպքում դատարանը իր նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ կարող է իրականացնել առանձին դատավարական կամ դատարանի լիազորություններից բխող այնպիսի գործողություններ, որոնք ուղղակիորեն կապված չեն կիրառման ենթակա օրենքի կամ իրավական նորմի սահմանադրականության հետ: Մասնավորապես, դատարանը կարող է (նույնիսկ պարտավոր է) վարույթը կասեցնելիս անդրադառնալ մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման, այլ խափանման միջոցները վերացնելու կամ փոփոխելու, գույքի վրա դրված կալանքի իրավաչափության հարցերին, կամ կատարել այլ գործողություններ (օրինակ, դատավարությանը ներգրավել այլ մասնակիցների, ծանոթանալու համար տրամադրել գործի նյութեր, հիվանդության կամ այլ հարգելի պատճառով Հայաստանից բացակայելու թույլտվություն տալու վերաբերյալ միջնորդություն քննարկել և այլն):

Պատահական չէ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը, ինչպես գործը քննող քննիչին, այնպես էլ դատարանին լիազորել է գործով վարույթը կասեցնելուց հետո իրականացնել բազմաթիվ քննչական, դատավարական և այլ անհրաժեշտ գործողություններ (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ, 295-րդ և 310-րդ հոդվածները), ինչը չի բացառվում նաև վարույթը կասեցնելիս Սահմանադրական դատարան դիմելիս:

Գտնում եմ, որ սահմանադրականության հարցով վարույթի կասեցումը չի կարող խոչընդոտ հանդիսանալ առանձին գործողություններ կատարելու և որոշումներ կայացնելու համար:

Հետևապես, Վճռաբեկ դատարանի պնդումն այն մասին, որ վարույթը կասեցնելու դեպքում կարող են խախտվել դատավարության մասնակիցների հիմնարար իրավունքներն ու ազատությունները, վերոշարադրյալի հաշվառմամբ համոզիչ չեն: Հակառակ մեկնաբանման պարագայում, դատարանները Սահմանադրական դատարան դիմելիս կաշկանդված են լինելու վարույթը կասեցնելու հարցում, ինչը կարող է ոչ իրավաչափ սահմանափակել դատարանների լիազորությունները: Գտնում եմ, որ Սահմանադրական դատարան դիմելու նպատակով վարույթը կասեցնելու մասին որոշում կայացնելու դատավորի համոզմունքը չի կարող կախվածության մեջ դրվել նաև գործը ողջամիտ ժամկետում քննելու և լուծելու քրեադատավարական օրենքի պահանջի ապահովման անհրաժեշտությամբ: Հակառակ տրամաբանությունը կարող է վտանգել դատարանի ազատ հայեցողությունն, այդ թվում այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարան դիմելու որոշման հիմքում դրված լինի այնպիսի դատական ակտի կամ նորմի սահմանադրականության

հարցը, որից կախված է անձի մեղադրանքի իրավաչափությունը և դրանով պայմանավորված այլ իրավական հետևանքները:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի պահանջում Սահմանադրական դատարան դիմելու համար <<նախնական թույլտվություն>> Սահմանադրական դատարանից, ինչպես դա նախատեսված է տարբեր երկրներում:

15.4. Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը վարույթը կասեցնելով ընթացակարգային բնույթի պահանջները չի պահպանել, այն է՝ վարույթի կասեցումը չի եղել վերջին միջոց, քանի որ կատարման ենթակա գործողությունները սպառված չեն եղել, չի վերացել անձանց հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, իսկ գործի հետագա քննության ծավալը սահմանափակված չի եղել բացառապես ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի անմիջական կիրառմամբ, որի սահմանադրականության առումով առկա են եղել հիմնավոր կասկածներ:

Գտնում են, որ գործի վարույթը կասեցնելով Առաջին ատյանի դատարանը չի վտանգել դատավարության մասնակիցների օրենսդրությամբ երաշխավորված իրավունքներն ու ազատությունները: Դատարանը, ելնելով կիրառման ենթակա օրենքի սահմանադրականության հարցի էությունից ինքնուրույն է որոշում, թե դատավարության որ փուլում է նպատակահարմար Սահմանադրական դատարան դիմելու ու վարույթը կասեցնելու մասին որոշման կայացումը: Կարևորն այն է, որ որոշումը լինի պատճառաբանված: Հետևապես, դատական ակտը չի կարող բեկանվել այն պատճառաբանությամբ, որ Սահմանադրական դատարան դիմելիս գործի վարույթն ամբողջությամբ կասեցվել է:

15.5. Վճռաբեկ դատարանի որոշումից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը կարող էր Ռոբերտ Քոչարյանի և Արմեն Գևորգյանի մասով ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով (վերջինիս վերաբերյալ նաև 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով) վարույթը չկասեցնել և գործի քննությունը շարունակել: Գտնում են, որ դա ճիշտ մոտեցում չէ, այն կարող էր հանգեցնել մի իրավիճակի, երբ նշված հոդվածներով դատաքննությունն ավարտված լինել, սակայն դատարանը զրկված կլիներ վերջնական դատական ակտ կայացնելու հնարավորությունից, քանի դեռ չի վերացել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով վարույթը կասեցումից հանելու հիմքը: Ողջամիտ չեն համարում, որ այս դեպքում վարույթը վերսկսելուց հետո դատարանը բոլոր մեղադրյալների մասով կրկին պետք է դատաքննություն իրականացնի ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով:

Վերջին հաշվով, գործը քննող դատարանն է որոշում, թե դատավարության որ փուլում է նպատակահարմար վարույթը կասեցնել՝ դիմելով Սահմանադրական դատարան: Գտնում են, որ այդ հանգամանքը չի կարող դատարանի որոշման վերանայման առարկա լինել: Ուստի, պարտադիր չէ, որ Սահմանադրական դատարան դիմելիս ամբողջ ծավալով սպառված լինեն կատարման ենթակա

գործողությունները: Այդ հարցը գտնվում է բացառապես տվյալ դատարանի հայեցողության տիրույթում:

Վերոշարադրյալի հաշվառմամբ, գտնում եմ, որ սույն քրեական գործի քննության ծավալը սահմանափակված է այն իրավակարգավորման անմիջական կիրառմամբ, որի սահմանադրականության առումով առկա են հիմնավոր կասկածներ:

15.6. Ինչ վերաբերվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի կարգով վարույթը կասեցնելու մասին որոշման բողոքարկման հնարավորությանը, հարկ եմ համարում ընդգծել, որ դատական պրակտիկայում տվյալ իրավակարգավորումը միատեսակ չի ընկալվում և դատարանները իրարամերժ դիրքորոշումներ են արտահայտում: Այսպես, *Իշխան Բարսեղյանի* վերաբերյալ թիվ ԵՇԴ/0165/01/16 քրեական գործով, Վերաքննիչ դատարանը, քննության առնելով Սահմանադրական դատարան դիմելու և վարույթը կասեցնելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու մասին որոշումը, 2017 թվականի մարտի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության, նշելով, որ տվյալ որոշումը բողոքարկման ենթակա չէ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով կասեցման որոշումը ենթակա է բողոքարկման միայն Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում կայացնելուց հետո քրեական գործով վարույթը կասեցնելուն կամ չկասեցնելուն:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 14-ի որոշմամբ մերժվել է պաշտպանների վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը, այն պատճառաբանությամբ, որ դատական սխալ տեղի չի ունեցել և իրավունքի զարգացման խնդիր չկա:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը որոշելու համար Վերաքննիչ դատարանը մեկ այլ թիվ ԵԴ/0496/01/20 քրեական գործով 2021 թվականի փետրվարի 3-ին դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան և գործի վարույթը կասեցրել է՝ պարզելու այդ նորմի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 164-րդ, 168-րդ և 169-րդ հոդվածների պահանջներին: ՀՀ Սահմանադրական դատարանի նիստերի ժամանակացույցի համաձայն՝ այդ գործի քննությունը նշանակված է 2021 թվականի մայիսի 4-ին:

15.7. Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գտնում եմ, որ ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու և քրեական գործի վարույթը կասեցնելու մասին Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ին կայացված միաժամանակյա որոշումը չի հանգեցրել դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների խախտմանը կամ արդյունավետ երաշխավորմանը: Այսպես, Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 18-ի որոշմամբ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է և որպես խափանման միջոց ընտրվել է անձնական երաշխավորությունը: Դատավարության այլ

մասնակիցների նկատմամբ ընտրված խափանման միջոցները, գույքի վրա դրված կալանքը, մեղադրյալների ազատ տեղաշարժման և այլ հարցերի վերաբերյալ դատավարության մասնակիցների միջնորդությունները պարբերաբար քննության են առնվել և գործի վարույթը կասեցված լինելու հանգամանքը կողմերին չի խոչընդոտել իրացնել իրենց իրավունքները:

15.8. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով բողոքաբերների այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանում նրանց հնարավորություն չի տրվել լիարժեք իրացնելու պաշտպանության իրենց իրավունքը, արձանագրել է, որ բողոքաբերների փաստարկը հիմնավոր չէ:

Մինչդեռ, նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ պաշտպանության կողմը լիարժեք հնարավորություն չի ունեցել վերաքննիչ բողոքների վերաբերյալ պատասխաններ ներկայացնելու համար: Դատարանը հաշվի չի առել կողմերի միջնորդությունները քննության առնելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված պարտադիր կարգը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները²⁴⁸:

15.9. Բողոքաբերները փաստարկել են նաև, որ Վերաքննիչ դատարանում խախտվել է բողոքները մակագրելու կարգը և որոշումը կայացվել է ոչ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանն այդ փաստարկին չի անդրադարձել, ուստի որևէ պատճառաբանություն չեն ներկայացնում:

16. Ամփոփելով վերոշարադրյալը գտնում եմ, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 376.1-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումներ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը թույլ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու համար:

Միևնույն ժամանակ, գտնում եմ, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը օրինական է, հիմնավորված և պատճառաբանված: Դատարանը թույլ չի տվել այնպիսի նյութական կամ դատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և հիմք են դատարանի որոշումը բեկանելու համար:

²⁴⁸ Տե՛ս Արմեն Բարսայանի և Սուրեն Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 13-րդ կետը:

Տիգրան Առաքելյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0225/01/11 որոշման 23-րդ կետը:

Հ.Սարգսիսյանի և Ա.Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0184/11/14 որոշման 15-16-րդ կետերը:

Այսպիսով, գտնում եմ, որ վճռաբեկ բողոքների քննության արդյունքում, Վճռաբեկ դատարանը պետք է ամբողջությամբ բեկաներ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը և օրինական ուժի մեջ թողներ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը:

17. Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 6-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ, 29-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-42-րդ, 361.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝

առաջարկում եմ

1. Վճռաբեկ բողոքները բավարարել:

2. Մեղադրյալներ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանի, Սեյրան Մուշեղի Օհանյանի, Յուրի Գրիգորիի Խաչատուրովի և Արմեն Անդրանիկի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը բեկանել ամբողջությամբ, իսկ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Դատավոր՝

ստորագրություն

17.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԳ/1076/01/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2021 թվականի ապրիլի 12-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Նարեկ Ալեքսանդրի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հունիսի 26-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 52813018 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունիսի 28-ի որոշմամբ Նարեկ Ալեքսանդրի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Նույն օրը վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը և հայտարարվել է հետախուզում:

2018 թվականի հուլիսի 19-ին ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում ստացվել է 2018 թվականի հունիսի 16-ին հարուցված թիվ 61207718 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 7-րդ կետերի հատկանիշներով: Նույն օրվա որոշմամբ թիվ 61207718 քրեական գործն ընդունվել է վարույթ և միացվել թիվ 58213018 քրեական գործին:

2019 թվականի դեկտեմբերի 21-ին Նարեկ Սարգսյանը արտահանվել է Հայաստանի Հանրապետություն և նույն օրը՝ ժամը 06:35-ին «Ջվարթնոց» օդանավակայանից բերման է ենթարկվել և տեղափոխվել ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ Ն.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերահաստատվել է:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ Ն.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ թիվ 58213018 քրեական գործից անջատվել են Ն.Սարգսյանի վերաբերյալ գործի նյութերը, կազմվել է թիվ 58227020 քրեական գործը:

2020 թվականի հոկտեմբերի 9-ին թիվ 58227020 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ մեղադրյալ Ն.Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ: Նույն որոշմամբ մերժվել է Ն.Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ նրա պաշտպան Կ.Մեծլումյանի միջնորդությունը:

3. Ն.Սարգսյանի պաշտպաններ Ա.Պիվազյանի և Կ.Մեծլումյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել է, Ն.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը փոփոխել է և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել գրավը՝ 25.000.000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամի չափով:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 9-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Վճարելի դատարանի՝ 2021 թվականի մարտի 18-ի որոշմամբ սահմանվել է վճարելի բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Նարեկ Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «/Ն/ս, գործով չպարզված հանգամանքներում և ժամանակահատվածում, անհայտ անձից սպորինի կերպով ձեռք է բերել և Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի 14-րդ բնակարանում պահել է հրազեն հանդիսացող «Star B.S.A.» մոդելի 9 մմ փրամնաչափի ակոսափող արբանակ, «GLOCK 25» մոդելի «PSP 701» գործարանային համարով 380 Auto փրամնաչափի ակոսափող արբանակ, «TT» տեսակի 7,62 մմ փրամնաչափի առանց գործարանային համարի ակոսափող արբանակ, «TT» մոդելի «BC 792» գործարանային համարով 7,62 մմ փրամնաչափի ակոսափող արբանակ և ռազմամթերք հանդիսացող 168 հատ փարբեր փրամնաչափի ակոսափող հրազենի փամփուշներ, այնուհետև դրանք, թաքցնելով պայուսակների մեջ՝ սպորինի կերպով այլ վայրում պահելու համար խնդրել է առանց մեղքի գործող, Նարեկ Սարգսյանի հանցավոր մտադրություններից անբեղյակ Արլեն Հայրապետի Պետրոսյանին պայուսակները փոխադրել և պահել իր կողմից նախապես վարձակալած՝ Երևան քաղաքի Արամի փողոցի 82-84 շենքի 68-րդ բնակարանում, որոնք 25.06.2018թ., Արլեն Պետրոսյանի միջոցով Նարեկ Սարգսյանից սրացած ցուցումով, Վլադիմիր Շահինյանցի և Սերոբ Սահակյանի կողմից այլ տարածքում պահելու նպատակով Երևան քաղաքի Արամի փողոցի 82-84 շենքի 68-րդ բնակարանից փոխադրելու ընթացքում հայտնաբերվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

Նույն ժամանակահատվածում, Նարեկ Սարգսյանը գործով չպարզված հանգամանքներում առանց իրացնելու նպատակի, անհայտ անձից սպորինի ձեռք է բերել և իրեն պատկանող Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի 14-րդ բնակարանում սպորինի պահել է 0,1 գրամ խոշոր չափի տետրաֆերամին (ՄԴԱ), 0,61 գրամ խոշոր չափի ՄԴՄԱ, 0,7 գրամ խոշոր չափի մետաֆերամին, 0,12 գրամ խոշոր չափի կոկաին և 0,1 գրամ զգալի չափի α -PVP տեսակի թմրամիջոցներ, այնուհետև դրանք առանց իրացնելու նպատակի, սպորինի կերպով այլ վայրում պահելու համար խնդրել է առանց մեղքի գործող, Նարեկ Սարգսյանի հանցավոր մտադրություններից անբեղյակ Արլեն Հայրապետի Պետրոսյանին, որպեսզի պայուսակում թաքցված վերը նշված թմրամիջոցները փոխադրի և պահի իր կողմից նախապես վարձակալած՝ Երևան քաղաքի Արամի փողոցի 82-84 շենքի

68-րդ քննարանում, որոնք 25.06.2018թ. Արյուն Պետրոսյանի միջոցով սրացած՝ Նարեկ Սարգսյանի ցուցումով, Վլադիմիր Շահինյանցի և Սերոբ Սահակյանի կողմից այլ տարածքում պահելու նպատակով Երևան քաղաքի Արամի փողոցի 82-84 շենքի 68-րդ քննարանից փոխադրելու ընթացքում հայտնաբերվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

Ինչպես նաև Նարեկ Սարգսյանը, գործով չպարզված հանգամանքներում առանց իրացնելու նպատակի, անհայտ անձից սպորինի ձեռք է բերել և Երևան քաղաքի Արարատյան խճուղի 67/1 հասցեի գրնվող իր աշխատանքակի «SAFEWELL» գրառմանը չիրկիզվող պահարանում առկա դարչնավուն երանգի, թղթյա փաթեթի մեջ գրնվող, կաշվե պայրյանին նմանվող առարկայի մեջ առկա սև գույնի կախարիչով, դարչնավուն երանգի, թափանցիկ, սպակյա տարայի մեջ սպորինի պահել է խոշոր չափերով 0,031 գրամ մաքուր քաշով կոկաին տեսակի թմրամիջոց, (ընդհանուր առանձնապես խոշոր չափերով՝ 0,151 քաշով կոկաին տեսակի թմրամիջոց) կոկաին տեսակի թմրամիջոցի հետքերով մետրաղական կառուցվածքի, գրանաձև առարկա, ինչպես նաև կոկաին տեսակի թմրամիջոցի հետքերով մետրաղական կառուցվածքի, ուղղանկյունաձև առարկա, որոնք 04.07.2018թ. կատարված խուզարկությանը հայտնաբերվել [են] ՀՀ ԱԱԾ՝ աշխատակիցների կողմից:

Բացի այդ, նա, նախնական համաձայնությամբ գործող մի խումբ անձանց ներգրավմամբ, շահադիտական դրոշմներով կազմակերպել և ղեկավարել է կյանքի ու առողջության համար վրանգավոր բռնություն գործադրելով և դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ զուգորդված անձի առևանգումը, որպիսի գործողությունները դրսևորվել են հետևյալում:

Նարեկ Սարգսյանը, միտում ունենալով առավել շահույթ սրանալու նպատակով Երևան քաղաքում մենաշնորհային կարգով վերահսկելու «իրանական» ժամանցային ակումբների գործունեությունը, այդ իսկ կապակցությամբ Արամ Կարապետյանի կողմից ձեռնարկարհրական գործունեությամբ զբաղվելու համար «Օպերա» ժամանցային ակումբը վարձակալելուց հրաժարվելու նպատակով, իր անվտանգությունն սպառնալիքով անձանց ներգրավմամբ, շահադիտական նպատակով, կազմակերպել և ղեկավարել է Արամ Կարապետյանի առևանգումը:

Այսպես.

2017թ. օգոստոսի 15-ին Հարություն Աբրահամյանը, Հովհաննես Դավթյանը և Սամվել Սոսյանը գործելով Նարեկ Սարգսյանի ղեկավարմամբ, ձեռնառնուի են եղել նախանշված հանցավոր գործունեության իրականացմանը:

Այդ կապակցությամբ, Հարություն Աբրահամյանը, Հովհաննես Դավթյանի, ինչպես նաև Արյուն Պետրոսյանի հետ, 2017 թվականի օգոստոսի 15-ին, ժամը 15:00-ի սահմաններում մուրեցել են Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 98/9 հասցեում գործող «Կոֆիթորի» սրճարանի առջևի հարվածին, որտեղ, իմրի կազմում գործող Հարություն Աբրահամյանն ու Հովհաննես Դավթյանը, Արամ Կարապետյանի կամքին հակառակ, նրա դիմադրությունը ձեռնելու նպատակով վերջինիս նկատմամբ բռնության գործադրմամբ, բացահայտ առևանգելով

տեղափոխել և ժամանակավորապես պահել են նույն սրճարանի հարևանությամբ տեղակայված, Նարեկ Սարգսյանին պատկանող՝ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի առաջին հարկում գրնվող նկուղում, որտեղ, ըստ նախապես ձեռք բերված պայմանավորվածության, գրնվել է հանցակից Սամվել Սոսյանը, ով փոժողին ներս բերելուն պես, վերջինիս վախեցնելու և հնարավոր դիմադրությունը ճնշելու նպատակով, իր մոտ գրնվող սարճանակը ցուցադրաբար բերել է մարտական վիճակի և սպառնացել Նարեկ Սարգսյանի գայրց հետո նրա հետ իրականացվելիք բռնի գործողություններով:

Կարճ ժամանակ անց, նշված վայր է եկել նաև հանցագործության կազմակերպիչը՝ Նարեկ Սարգսյանը, որից հետո, Սամվել Սոսյանն ու Հովհաննես Դավթյանը ծեծի են ենթարկել Արամ Կարապետյանին: Դրանից հետո, Նարեկ Սարգսյանն իր մոտ գրնվող սարճանակը պահել է Արամ Կարապետյանի ոտքերի ուղղությամբ և պահանջել հրաժարվել ակումբային գործունեությամբ զբաղվելուց ու այդ նպատակով Երևան քաղաքում գրնվող «Օպերա» ակումբը վարձակալելու մրատրությունից, հակառակ դեպքում, սպառնալով հրազենով կրակել նրա ուղղությամբ: Հասկանալով, որ Արամ Կարապետյանը չի ենթարկվում ներկայացրած պահանջին, Հովհաննես Դավթյանը և Սամվել Սոսյանը բռնել են առևանգված անձի ձեռքերը, ինչի արդյունքում Նարեկ Սարգսյանն առանց որևէ խոչընդոտի գազայրիչի բաց կրակով այրել է Արամ Կարապետյանի աջ բազկի, արմնկահողի և սրունքի շրջանները՝ վերջինիս ստողծությանը պատճառելով թեթև վնաս ստողծության կարճարև քայքայումով:

Այնուհետև, Արամ Կարապետյանի նկատմամբ իրենց հանցավոր գործողություններն առավել անկաշկանդ իրականացնելու նպատակով, Նարեկ Սարգսյանի ցուցումով Հովհաննես Դավթյանը, Հարություն Աբրահամյանն ու Սամվել Սոսյանը, շարունակելով նախանշված հանցագործությունը, բռնության գործադրմամբ Արամ Կարապետյանին, հակառակ իր կամքի, տեղափոխել են այլ տեղանք, մասնավորապես՝ Հարություն Աբրահամյանն ու Հովհաննես Դավթյանը բռնել են Արամ Կարապետյանի թևերից, Սամվել Սոսյանը բացել է նույն շենքի բակում կայանված իրենց կողմից շահագործվող «Տոյուս պրատ» մակնիշի ավտոմեքենայի հեղնամասի դուռը, ապա Արամ Կարապետյանին նստեցրել են նշված մեքենան և վերջինիս կամքին հակառակ տեղափոխել են Երևան քաղաքի Արտաշատի խճուղու 67/1 հասցեում գրնվող՝ Նարեկ Սարգսյանի ընտանիքին պատկանող «Սկանյա» բեռնատար ավտոմեքենաների սպասարկման սրահի վարչական շենքում գրնվող սենյակ: Այդ ընթացքում, Սամվել Սոսյանը վարել է նշված մեքենան, իսկ Հարություն Աբրահամյանն ու Հովհաննես Դավթյանը, նստելով ավտոմեքենայի հեղնամասում, հսկել են իրենց մեջբերողի նստավայրում գրնվող Արամ Կարապետյանին: Հասնելով նշված տեղանք, Արամ Կարապետյանի կամքին հակառակ, զրկելով նրան ազատ տեղաշարժվելու իրավունքից, հանցակիցները 2-3 ժամ փակուղությամբ ապօրինի պահել և ծեծի են ենթարկել նրան, որի արդյունքում Նարեկ Սարգսյանը կրկին պահանջել է հրաժարվել ակումբային գործունեությամբ զբաղվելուց և այդ նպատակով «Օպերա» ժամանցային ակումբը վարձակալելուց, որից

հետո, սրանալով ցանկալի երաշխիքը, Նարեկ Սարգսյանը հրահանգել է հանցակիցներին ազատ արձակել Արամ Կարապետյանին»²⁴⁹:

6. Առաջին ատյանի դատարանը, անփոփոխ թողնելով Ն.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը, փաստել է. «(...) 14.08.2020թ. Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանը մեղադրյալ Նարեկ Սարգսյանի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...)

- մեղադրյալը քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվել է և հետախուզման մեջ է գրնվել, մասնավորապես՝ ըստ Ն.Սարգսյանի սահմանահատումների պարմության՝ Ն.Սարգսյանը 2018թ. հունիսի 22-ին դուրս է եկել ՀՀ-ից, ըստ միջնորդությանը կից նյութերի՝ մեկնել է ՌԴ, սակայն հայրնաբերվել է Չեխիայի Հանրապետությունում՝ ներկայացնելով Գվարեմալայի քաղաքացու կեղծ անձնագիր՝ տրված Ֆրանկլին Գոնզալեսի անվամբ (տե՛ս ՀՀ ոստիկանության Բնտերպոլ ազգային կենտրոնական բյուրոյի պետի տեղակալի 2018թ. դեկտեմբերի 7-ի թիվ 4599 գրությունը),

- Ն.Սարգսյանին վերագրվում են անձի ազատության, սեփականության, հասարակական անվտանգության, քնակչության առողջության դեմ ուղղված ծանր հանցագործություններ, որոնք ենթադրաբար կատարվել են մի խումբ անձանց կողմից,

- վկա Ղազարոս Սարյանի կողմից, 2019թ. փետրվարի 14-ի լրացուցիչ հարցաքննության ժամանակ ներկայացված, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր անհատական էջից արտատարված՝ իր և Նարեկ Սարգսյանի նամակագրության լուսապարձնով, որի բովանդակությունից հետևում է, որ Ն.Սարգսյանը սպառնալիքներ է տալիս Ղ.Սարյանին՝ վերջինիս կողմից իրավապահ մարմիններին տեղեկություններ հայտնելու համար,

- Ն.Սարգսյանին վերագրվող բազմադրվագ, դրանց առնչվող անձանց լայն շրջանակ ենթադրող հանցագործությունների քննության ուղղությամբ դեռևս իրականացվում են լայնածավալ քննչական և այլ դատավարական գործողություններ,

Դատարանը գտնում է, որ մեղադրյալ Նարեկ Սարգսյանի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու եղանակներով գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը շարունակում է մնալ բարձր, ուստի քննիչի միջնորդությունն այդ մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման: (...)»:

Ելնելով վերոգրյալից, լսելով մասնակիցների կարծիքները, ուսումնասիրելով քրեական գործի նյութերը՝ դատարանը հանգում է հետևության, որ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին վերը նշված որոշումից հետո

²⁴⁹ Տե՛ս քրեական գործի հավելված, թերթեր 37-40:

մինչ այս պահը գործով ձեռք չեն բերվել այնպիսի փաստական փյուռիկներ, որոնք նվազեցնում կամ չեզոքացնում են դատարանի կողմից արձանագրված Նարեկ Սարգսյանին շարունակական կալանքի փակ պահելու՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու հիմքերը: Հետևաբար՝ դատարանը գտնում է, որ կալանավորում խախտման միջոցը վերացնելու կամ փոփոխելու փաստական հիմքեր չկան (...)»²⁵⁰:

7. Վերաքննիչ դատարանը 2020 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ քեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ արձանագրել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանի համար ընդունելի է [Արաջին արյանի դատարանի այն եզրահանգումը, համաձայն որի Նարեկ Սարգսյանն ազատության մեջ գրնվելով կարող է դրսևորել ոչ իրավաչափ վարքագիծ՝ խոչընդորդել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով և թաքնվել վարույթն իրականացնող մարմնից:

Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է գալիս՝ հաշվի առնելով ամբաստանյալին վերագրվող արարքների բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, ինչպես նաև ակնկալվող պարզի խարտությունը, որն էական նշանակություն ունի ամբաստանյալի հետագա՝ ոչ իրավաչափ վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առկա են Նարեկ Սարգսյանին շարունակական կերպով կալանքի փակ պահելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը և դրանց անդադարձել է [Արաջին արյանի դատարանն իր որոշմամբ:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Նարեկ Սարգսյանի պարզաձ վարքագիծը հնարավոր է սպառնալիկ այլ խախտման միջոցի գրավի, կիրառմանը՝ հետևյալ պարճառարանությամբ.

(...)

Վերաքննիչ դատարանը, գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները, արձանագրում է, որ մեղադրյալ Նարեկ Սարգսյանը նախկինում դատասարտված չի եղել, ունի մշտական բնակության վայր, բարձրագույն կրթությամբ է, «Ձինճատայողների կյանքին կամ առողջությանը պարճառված վնասների հարուցման» հիմնադրամին փոխանցել է 492.400.000.00 դրամ գումար:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռության րեսանկյունից, որը պերք է բիի անճի ազատությունից, սույն գործում առկա նյութերի ուսումնասիրությունը թույլ է րալիս գալ հետևության, որ սույն որոշումը կայացնելու պահին բացակայում են կալանավորումը գրավով փոխարինելն անթույլարելի ճանաչելու հիմքերը, և գրավը, կարող է գործուն երաշխիք

²⁵⁰ Տեն քրեական գործի հավելված, թերթեր 66-67:

հանդիսանալ ամբաստանյալ Նարեկ Սարգսյանի պարզաձև վարքագիծն ապահովելու համար, այն համաչափ է հասարակության ընդհանուր շահի և ամբաստանյալ Նարեկ Սարգսյանի ազատության ու անձնական անձեռնմխելիության իրավունքի հավասարակշռման տեսանկյունից:

(...)

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Նարեկ Սարգսյանի պարզաձև վարքագիծը հնարավոր է ապահովել կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի 25.000.000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ գրավի կիրառմամբ, որը, որպես բավարար և ողջամիտ միջոց, կարող է հաղթահարել նրա կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, ինչպես նաև դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու մրավախտությունը (...)²⁵¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում: Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է անձի նկատմամբ գրավը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 137-րդ և 143-րդ հոդվածների կապակցությամբ Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Այսպես, հաշվի առնելով սույն գործով որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու և շարունակական կալանքի տակ պահելու հիմքերն ու հիմնավորումները, այն, որ ըստ քրեական գործի նյութերի, մեղադրյալը ճանաչում է դատավարության մասնակիցներին, նախաքննության ընթացքում թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից և հետախուզման մեջ է գտնվել, բողոքաբերը նշել է, որ ներկա պահին ևս առկա է ողջամիտ հավանականություն առ այն, որ մեղադրյալ Ն.Սարգսյանն ազատության մեջ գտնվելով կարող է դրսևորել ոչ իրավաչափ վարքագիծ՝ խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով և վարույթն իրականացնող մարմնից թաքնվելով: Նման պայմաններում, բողոքաբերի պնդմամբ, կալանավորումից բացի այլ խափանման միջոց չի կարող ապահովել ամբաստանյալի պատշաճ վարքագիծը:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 12-ի որոշումն ու Ն.Սարգսյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել անթույլատրելի՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

²⁵¹ Տե՛ս քրեական գործի հավելված, թերթեր 126, 129:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ տվյալ գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ միջոց՝ զսպելու համար ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Նարեկ Սարգսյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

11. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում՝ և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ սուկս է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնախնայության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի սուկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...):»:

12.1 Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային պրակտիկայում ձևավորել է մոտեցում առ այն, որ փախուստի վտանգը չի կարող հիմնվել բացառապես հնարավոր պատժի ծանրության վրա: Այն պետք է գնահատվի մի շարք այլ վերաբերելի ապացույցների վրա հիմնվելով, որոնք կամ կհաստատեն այդ վտանգի առկայությունը, կամ կհաստատեն, որ վտանգն այնքան փոքր է, որ արդյունքում դրանով անհնար է հիմնավորել նախնական կալանքը²⁵²:

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ փախուստի վտանգը պետք է գնահատել հաշվի առնելով մի շարք գործոններ, որոնք կվերաբերեն տվյալ անձի կերպարին, բարոյականությանը, մշտական բնակության վայրին, մասնագիտությանը, ունեցվածքին, ընտանեկան և

²⁵² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Panchenko v. Russia* գործով 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 45100/98, կետ 106:

տարատեսակ այլ կապերին այն երկրի հետ, որում նա ենթարկվում է քրեական հետապնդման²⁵³:

Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով վարույթը խոչընդոտելու հիմքին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ կազմակերպված հանցավոր գործունեությանը կամ հանցյալներիին առնչվող գործերով կալանավորված անձին ազատ արձակելու դեպքում նրա կողմից գործով վկաների կամ գործով անցնող այլ կասկածյալների վրա ճնշում գործադրելու կամ վարույթն այլ կերպ խոչընդոտելու ռիսկը հաճախ հատկապես բարձր է²⁵⁴:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1.Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անսազարության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: (...):»

Նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խափանման միջոց կարող է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդորդել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդորդել դատարանի դատավճռի կատարմանը»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության ստրիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը. (...):»

13.1. Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը

²⁵³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Becciev v. Moldova* գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 9190/09, կետ 58:

²⁵⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Stvrtecky v. Slovakia* գործով 2018 թվականի հունիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 55844/12, կետ 61:

բացատրելու ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, հարուցված քրեական գործի, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով²⁵⁵:

13.2. Ընդ որում, Վճռաբեկ դատարանն *Արամ Ճուղորյանի* վերաբերյալ գործով որոշմամբ փաստել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պարզաձ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական փոխվանդակներ»²⁵⁶:

13.3. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում անդրադառնալով անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս նրան վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը հաշվի առնելու կարևորությունը, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ թեև մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Մեղազգրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու

²⁵⁵ Տե՛ս մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱԿԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 և այլ գործերով կայացված որոշումները:

²⁵⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Ճուղորյանի* վերաբերյալ գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը:

կարևոր տարրեր և գործի նյութերից բխող նյութ հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին²⁵⁷:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նարեկ Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել՝ (ա) ապօրինի կերպով հրազեն հանդիսացող՝ 4 ատրճանակ, ռազմամթերք հանդիսացող՝ 168 ակոսափող հրազենի փամփուշտներ ձեռք բերելու և պահելու համար, (բ) առանց իրացնելու նպատակի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերով տարբեր տեսակի թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու և պահելու համար, (գ) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով ու դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ զուգորդված շահադիտական դրդումներով մարդու առևանգումը կազմակերպելու և ղեկավարելու համար²⁵⁸,

- Առաջին ատյանի դատարանը 2020 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ գտել է, որ Ն.Սարգսյանի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու եղանակներով գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը շարունակում է մնալ բարձր: Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ գործով ձեռք չեն բերվել այնպիսի փաստական տվյալներ, որոնք նվազեցնում կամ չեզոքացնում են դատարանի կողմից արձանագրված՝ Ն.Սարգսյանին շարունակական կալանքի տակ պահելու՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու հիմքերը: Հետևաբար, կալանավորում խափանման միջոցը վերացնելու կամ փոփոխելու փաստական հիմքեր չկան²⁵⁹,

- Վերաքննիչ դատարանը 2020 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ արձանագրել է, որ ընդունելի է համարում Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգումը, համաձայն որի՝ Ն.Սարգսյանն ազատության մեջ գտնվելով կարող է դրևորել ոչ իրավաչափ վարքագիծ՝ խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու և վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու եղանակով: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ առկա են Ն.Սարգսյանին շարունակական կալանքի տակ պահելու համար ՀՀ քրեական

²⁵⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վահագն Պողոսյանի վերաբերյալ գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ-1/0062/06/12 որոշումը:

²⁵⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²⁵⁹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը և դրանց անդրադարձել է Առաջին աստիճանի դատարանն իր որոշմամբ:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ն.Սարգսյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել այլ խափանման միջոցի՝ գրավի կիրառմամբ: Գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Ն.Սարգսյանը նախկինում դատապարտված չի եղել, ունի մշտական բնակության վայր, բարձրագույն կրթություն, «Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամին է փոխանցել 492.400.000.00 դրամ գումար: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ն.Սարգսյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ 25.000.000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ գրավի կիրառմամբ, որը, որպես բավարար և ողջամիտ միջոց՝ կարող է հաղթահարել նրա կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, ինչպես նաև դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու մտավախությունը²⁶⁰:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13.3-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ն.Սարգսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց անփոփոխ թողնելու մասին Առաջին աստիճանի դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել մի շարք հանգամանքներ:

Նախևառաջ, Վերաքննիչ դատարանը գնահատման չի ենթարկել այն, որ Ն.Սարգսյանը տևական ժամանակ գտնվել է հետախուզման մեջ և գործուն ջանքեր է գործադրել քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու ուղղությամբ: Մասնավորապես, ըստ գործի նյութերի՝ Ն.Սարգսյանը 2018 թվականի հունիսի 22-ին հեռացել է Հայաստանի Հանրապետությունից և մեկնել Ռուսաստանի Դաշնություն: Նա հայտնաբերվել է Չեխիայի Հանրապետությունում՝ ներկայացնելով Գվատեմալայի քաղաքացու կեղծ անձնագիր՝ տրված Ֆրանկլին Գոնզալեսի անվամբ, որից հետո՝ 2019 թվականի դեկտեմբերի 21-ին արտահանվել է Հայաստանի Հանրապետություն: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում, նշվածն ունեւր առանցքային նշանակություն՝ ազատության մեջ գտնվելու դեպքում Ն.Սարգսյանի կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը գնահատելիս:

Բացի այդ, թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ մեղսագրվող արարքների՝ ծանր հանցագործություններ հանդիսանալն ինքնին բավարար չէ անձի ազատության կանխավարկածը

²⁶⁰ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

հաղթահարելու համար, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել գործի փաստական հանգամանքների համատեքստում՝ պատշաճ գնահատման ենթարկելով մեղսագրվող ենթադրյալ արարքների կատարման եղանակը, դրանց դրսևորման ձևը՝ ուշադրություն դարձնելով մեղադրյալի դերակատարմանը, ինչպես նաև նրա անձին²⁶¹: Նշվածի համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ն.Սարգսյանին մեղսագրվել է մի շարք ծանր հանցագործությունների կատարում, որոնք ենթադրաբար դրսևորվել են՝ առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու և պահելու, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով ու դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ զուգորդված շահադիտական դրդումներով մարդու առևանգումը կազմակերպելու և ղեկավարելու ձևով: Նշված հանգամանքները, գործի նյութերից բխող մյուս հանգամանքների համատեքստում, հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր: Ընդ որում, անհրաժեշտ է նկատել, որ Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրյալի խափանման միջոցի հարցը լուծելիս սույն գործով դատաքննությունը դեռևս չէր սկսվել, որևէ ապացույց դատաքննությամբ չէր հետազոտվել, իսկ Ն.Սարգսյանին մեղսագրվում են մի շարք հանցավոր արարքներ, որոնք ենթադրաբար կատարվել են խմբի կազմում: Հետևաբար Առաջին ատյանի դատարանը, գնահատելով գործի փաստական հանգամանքները, բավարար հիմքեր է ունեցել ենթադրելու, որ Ն.Սարգսյանը, մնալով ազատության մեջ, կարող էր անօրինական ազդեցություն ունենալ դատավարության մյուս մասնակիցների վրա:

Ոստի, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, Առաջին ատյանի դատարանը, հանդես գալով որպես գործով վարույթն իրականացնող մարմին, Ն.Սարգսյանի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցը լուծելիս համակողմանի գնահատման է ենթարկել մեղադրյալի կողմից գործի քննության ընթացքում ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, այն է՝ դատավարության մասնակիցների վրա ճնշում գործադրելու և վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու ռիսկերը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ որպես վարույթն իրականացնող մարմին հանդես եկող Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելիս Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը պետք է հիմնված լիներ ծանրակշիռ փաստական հանգամանքների վրա և ունենար պատճառաբանվածության առավել բարձր աստիճան: Հակառակ մոտեցումը, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, կարող է իր բացասական ազդեցությունը թողնել առաջին ատյանի դատարանում քրեական գործի

²⁶¹ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Դավիթ Համբարձումյանի գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0700/06/18 որոշումը, կետ 16:

քննության բնականոն ընթացքի վրա՝ դրանով իսկ սահմանափակելով առաջին ատյանի դատարանի ներքին անկախությունը: Մինչդեռ, տվյալ դեպքում, որպես վարույթն իրականացնող մարմին հանդես եկող Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելիս՝ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը չի համապատասխանել վերոնշյալ չափանիշին²⁶²:

Միաժամանակ, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ որոշում կայացնելիս հաշվի է առնում նաև մեղադրյալի անձը, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը շարադրել է միայն Նարեկ Սարգսյանի անձը բնութագրող տվյալներ (նախկինում դատապարտված չլինելը, մշտական բնակության վայր և բարձրագույն կրթություն ունենալը), որոնք, սույն որոշմամբ արձանագրված փաստական տվյալների պայմաններում, ողջամտորեն չեն կարող դիտարկվել որպես բավարար հակակշռող գործոններ՝ Ն.Սարգսյանի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկերը չեզոքացնելու համար: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը հաշվի է առել նաև Նարեկ Սարգսյանի կողմից «Զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամին 492.400.000.00 դրամ գումար փոխանցելու հանգամանքը, որը, նրան մեղսագրվող հանցանքների փաստական հանգամանքների համատեքստում, խափանման միջոցի հարցը լուծելիս որևէ նշանակություն ունենալ չէր կարող:

16. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և վերացնելով Ն.Սարգսյանի նկատմամբ անփոփոխ թողնված խափանման միջոց կալանավորումը, պատշաճ վերլուծության չի ենթարկել նրան մեղսագրվող արարքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, վերջինիս անձը, որոնք գործի նյութերից բխող տվյալների համատեքստում ողջամտորեն կարող էին վկայել Ն.Սարգսյանի վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու բարձր հավանականության մասին, ինչը չէր կարող չեզոքացվել այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ:

Հետևաբար, վերոնշյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ միջոց՝ զսպելու համար ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Նարեկ Սարգսյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը, հիմնավոր չէ:

17. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջների

²⁶² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Արման և Արքա Մադայանյանների վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 26-ի թիվ ԱԲԴ/0152/01/19 որոշումը:

խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նարեկ Սարգսյանի նկատմամբ կալանավորումն անփոփոխ թողնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, վերջինիս նկատմամբ խափանման միջոցի հարցը քննելիս Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման և վերլուծության է ենթարկել գործի փաստական հանգամանքների ամբողջությունը, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմանը²⁶³՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Նարեկ Ալեքսանդրի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահողի արտրագրություն

Դատավորների արտրագրություններ

²⁶³ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

18.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0161/11/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2021 թվականի ապրիլի 13-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի ավագ հետաքննիչ Ա.Մ՛նացականյանի՝ (այսուհետ՝ նաև Հետաքննիչ) 2017 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ Արփիինե Սուքիասյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Երևան քաղաքի դատախազ Բ.Ասլանյանի՝ 2018 թվականի մարտի 23-ի որոշմամբ Ա.Սուքիասյանի բողոքը մերժվել է, և հաստատվել է քրեական գործի հարուցումը մերժելու օրինականությունը:

2. Դիմող Ա.Սուքիասյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել Հետաքննիչի՝ 2017 թվականի օգոստոսի 4-ի որոշումը և իր իրավունքների ու ազատությունների խախտումը:

Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ դիմող Ա.Սուքիասյանի բողոքը բավարարել է և վերացրել Հետաքննիչի՝ 2017 թվականի օգոստոսի 4-ի որոշումը:

3. Դատախազ Ա.Մովսիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հունվարի 21-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 21-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Սուքիասյանի հաղորդման համաձայն՝ 2013 թվականին մորաքրոջ որդու՝ Ռուբեն Խաչատրյանի խնդրանքով, վերջինիս ընկերոջը՝ Արթուր Սարուխանյանին, պատկանող ոսկյա զարդերը գրավադրվել են «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունում, որի վերաբերյալ իր անվամբ կնքվել է գրավով վարկային պայմանագիր, որի դիմաց տրված գումարը փոխանցել է Ա.Սարուխանյանին, իսկ վերջինս պարտավորվել է պատշաճ կերպով կատարել ամսական վճարումները, սակայն հետագայում խոստացված պարտավորությունը չի կատարել, ինչի արդյունքում բանկը քաղաքացիական հայցով դիմել է դատարան՝ իրենից գումար բռնագանձելու հայցապահանջով²⁶⁴:

6. 2017 թվականի օգոստոսի 3-ին՝ ժամը 19:00-ին, Հետաքննիչն այցելել է Ներքին Շենգավիթ, 15-րդ փողոցի 11բ տուն՝ նպատակ ունենալով նշված տան բնակիչ Արթուր Սարուխանյանից բացատրություն վերցնել, սակայն նշված տանը որևէ անձ չի եղել²⁶⁵:

7. Ա.Սուքիասյանի՝ 2017 թվականի օգոստոսի 4-ի լրացուցիչ բացատրության համաձայն, բանկի հետ վարկային պայմանագիրը ստորագրել և իր անվամբ ոսկյա զարդերը գրավ դնել իրեն ոչ ոք չի ստիպել և չի սպառնացել, դա արել է իր ցանկությամբ և կամքով, գիտակցել է, որ պայմանագրի խախտման դեպքում պատասխանատվություն կրելու է ինքը: Նշել է նաև, որ պայմանագիրը ստորագրելուց առաջ բանկի աշխատակցի կողմից իրեն առաջարկվել է ծանոթանալ վարկային պայմանագրի պայմաններին, սակայն ինքը չի կարդացել պայմանները և ստորագրել է այն: Բացի այդ, վերջինս հայտնել է

²⁶⁴ Տե՛ս նախապատրաստված նյութեր, թերթեր 7-8:

²⁶⁵ Տե՛ս նախապատրաստված նյութեր, թերթ 22:

նակ, որ Ա.Սարուխանյանը երբևէ չի հրաժարվել իր պարտավորությունները կատարելուց, պարզապես ինչ-ինչ պատճառներով չի կարողացել դրանք կատարել²⁶⁶:

8. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2017 թվականի օգոստոսի 4-ի որոշման մեջ Հետաքննիչը նշել է հետևյալը. «(...) Նյութերի նախապարտադրաման ընթացքում պարզվել է, որ (...) Արիֆինե Մելիկի Սուքիասյանը, (...) վարահետով Ռ.Խաչատրյանին և ճանաչելով Ա.Սարուխանյանին, համաձայնել է նրա առաջարկի հետևել և թվով 6 հար 9 գրամ քաշով 958 հարգի ոսկյա զարդերը գրավադրել է Երևան քաղաքի Սվածյան 32 հասցեում գործող «ՎՏԲ-Հայաստան բանկի» մասնաճյուղում և դրա դիմաց սրացած մոտ 1.000.000 ՀՀ դրամը հանձնել է Ա.Սարուխանյանին: Վերջինս (...) գումարը սրանալու պահին վճարել է 3 ամսվա փոկոսադրույքը: Դրանից հետո Ա.Սարուխանյանը դադարել է վճարել փոկոսադրույքները (...):

(...) Այսպիսով նյութերի նախապարտադրամանը հիմնավորվել է, որ Ա.Սարուխանյանը որևէ դիտարկություն չի ունեցել խաբեությանը Ա.Սուքիասյանին գույքային վնաս պարճառելու, ոստի վերջինիս արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի հանցակազմը, իսկ Ա.Սուքիասյանի և Ա.Սարուխանյանի միջև առկա հարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, որոնք ենթակա են լուծման դատական կարգով»²⁶⁷:

9. Երևան քաղաքի դատախազ Բ.Ավանյանի՝ 2018 թվականի մարտի 23-ի որոշմամբ արձանագրվել է, որ «(...) [Այդպես չէ բավարար սպացույցների համակցություն առ այն, որ Ա.Սարուխանյանը, չկարարելով ոսկյա զարդերի գրավադրմամբ սրացված վարկի մարումները, Ա.Սուքիասյանին գույքային վնաս պարճառելու դիտարկություն է ունեցել: Ավելին, ըստ նյութերում առկա տեղեկությունների՝ Ա.Սարուխանյանը վարկ վերցնելուց անմիջապես հետո կարարել է երեքից չորս ամիսների մարումները:

(...) [Այնպիսով է, որ Ա.Սուքիասյանի և Ա.Սարուխանյանի միջև առկա է քաղաքացիաիրավական բնույթի վեճ՝ Ա.Սարուխանյանի կողմից վարկային պարտավորությունները կարարելու հարցի շուրջ, ոստի վերջիններիս միջև առկա վեճը ենթակա է լուծման քաղաքացիական իրավունքի նորմերին համապատասխան և քաղաքացիական դատավարության կարգով:

(...) Այսպիսով, նյութերի նախապարտադրաման ընթացքում Ա.Սարուխանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքով, այդ թվում՝ 184-րդ հոդվածով նախատեսված որևէ արարք կարարելու փաստի վերաբերյալ տվյալներ ձեռք չեն բերվել, այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել (...):»²⁶⁸:

10. Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ փաստել է հետևյալը. «(...) Դատարանն արձանագրում է, որ քրեական հետախուզման մարմնի կողմից չի

²⁶⁶ Տե՛ս նախապատրաստված նյութեր, թերթ 24:

²⁶⁷ Տե՛ս նախապատրաստված նյութեր, թերթ 26:

²⁶⁸ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 19-20:

դրստորվել պատշաճ ջանասիրություն Արիինե Սուքիասյանի կողմից նշված հանգամանքները պարզելու համար:

Այսպես, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի ավագ հետաքննիչ Ա.Մնացականյանը՝ 31.07.2017 թվականին ստանալով Արիինե Սուքիասյանի հաղորդման հիման վրա նախապարաստված նյութերը (...), կայարել է հետևյալ գործողությունները՝ 03.08.2017 թվականին՝ ժամը 19:00-ին այցելել է Արթուր Սարուխանյանի բնակության վայրը և արձանագրել, որ տանը անձ չի եղել, ինչպես նաև 04.08.2017 թվականին լրացուցիչ բացատրություն վերցրել Արիինե Սուքիասյանից և նույն օրը որոշում կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Այսպիսով, հետաքննության մարմինը ողջամիտ և բավարար միջոցներ չի ձեռնարկել Արթուր Սարուխանյանից բացատրություն վերցնելու համար՝ սահմանափակելով դրանց շրջանակը վերջինիս՝ 2017 թվականի օգոստոսի 03-ին՝ ժամը 19:00-ին, տանից բացակայելու հանգամանքն արձանագրելով:

Նախապարաստված նյութերում առկա է նաև 07.08.2017թ. թվագրված, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, տնօրինության նախագահ Յու. Գուսնին հասցեագրված գրության պատճենը, որով խնդրվում է տրամադրել Արիինե Մելսիկի Սուքիասյանի կողմից Սվաճյան 32-րդ հասցեում գործող «ՎՏԲ-Հայաստան բանկի» մասնաճյուղում ոսկյա զարդերի գրավի դիմաց սրացված վարկի վարկային պայմանագիրը, ինչպես նաև սեղմ ժամկետում ոստիկանության Մալաթիայի բաժնի ապահովել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից լիազորված անձի՝ ոստիկանությունում հանդես գալու նպատակով: Գրության պատճենի վրա նշված ամսաթիվը (07.08.2017) ուղղված է, մասնավորապես, «07»-ը փոխված է «04»-ով, ինչն՝ ըստ դատախազ Ա.Սովիսյանի բացատրության, հանդիսանում է տեխնիկական վրիպակի ուղղում: Մինչդեռ, եթե անգամ նշված գրությունը ուղարկվել է հասցեատիրոջը ոչ թե 07.08.2017 թվականին, այսինքն՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացնելուց հետո, այլ 04.08.2017 թվականին՝ նշված որոշումը կայացնելու օրը, ակնհայտ է, որ վարույթն իրականացնող մարմինը չէր ակնկալում ստանալ դրա պատասխանը (ընդ որում, պատասխանը նախապարաստված նյութերում առկա չէ): Հետևաբար, հարցումը կրել է ձևական բնույթ և ուղղված էր ոչ թե համապատասխան հանգամանքները պարզելուն, այլ վարույթն իրականացնող մարմնի ջանասիրության պարաստք արեղծելուն:

Այսպիսով, վարույթն իրականացնող մարմինը չի ձեռնարկել ողջամիտ և բավարար միջոցներ Արիինե Սուքիասյանի հայրնած տեղեկությունները ստուգելու համար, և առանց վերջինիս կողմից վկայակոչված հանգամանքները պարզելու հետևության է հանգել այն մասին, որ «Ա.Սարուխանյանը որևէ դիրավորություն չի ունեցել խաբեությանը Ա.Սուքիասյանին գույքային վնաս պատճառելու, ուարի վերջինիս արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի հանցակազմը, իսկ Ա.Սուքիասյանի և Ա.Սարուխանյանի միջև առկա հարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, որոնք ենթակա են լուծման դատական կարգով»: Դատարանը գտնում է, որ բողոքարկվող որոշման

վերը նշված հետևությունը չի բխում Արփինե Սուքիասյանի հաղորդման հիման վրա նախապարտադրված նյութերում առկա փաստական փյույթներից, քանի որ դրանց համակցությունը բավարար չէ քրեական գործի հարուցումը մերժելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությունը հավաստելու համար: Գաղափարն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ չի կատարվել գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, ձեռք չի բերվել փաստական փյույթների բավարար համակցություն, որի հիման վրա հնարավոր կլիներ իրավական գնահատական տալ Արթուր Սարուխանյանի գործողություններին, ինչը հանգեցրել է Արփինե Սուքիասյանի իր շահերին առնչվող գործի արդարացի քննության իրավունքի խախտմանը (...)²⁶⁹:

11. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ստյանի դատարանի որոշումը, արձանագրել է, որ. «(...) Առաջին արյանի դատարանի հետևությունն այն մասին, որ դիմող Ա.Սուքիասյանի հաղորդմանը նշված հանգամանքները պարզելու ուղղությամբ քրեական հետապնդման մարմնի կողմից չի դրսևորվել պարզաձև ջանասիրություն, հիմնավոր է:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ (...) Առաջին արյանի դատարանի հետևությունն այն մասին, որ Ա.Սուքիասյանի հաղորդման հիման վրա նյութերի նախապարտադրման ընթացքում վարույթն իրականացնող մարմինը չի ձեռնարկել ողջամիտ և բավարար միջոցներ Արփինե Սուքիասյանի հայրնած Կրեդենցիությունները ստուգելու համար, չի կատարել գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, ձեռք չի բերել փաստական փյույթների բավարար համակցություն, որի հիման վրա հնարավոր կլիներ իրավական գնահատական տալ Արթուր Սարուխանյանի գործողություններին, իրավաչափ է և ընդունելի նաև Վերաքննիչ դատարանի համար:

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքում նշված այն փաստարկին, որ վարույթն իրականացնող մարմինը բավարար միջոցներ է ձեռնարկել Ա.Սարուխանյանից բացառություն վերցնելու համար, սակայն պարզվել է, որ նա բացակայում է բնակության վայրից, սպա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ հետաքննիչի կազմած արձանագրությունը՝ Ա.Սարուխանյանի բնակարան այցելելու և փանն անձ չլինելու մասին, որը որևէ այլ փաստական հանգամանքով կամ սպացույցով չի հաստատվել, բավարար չէ փաստելու, որ այս ուղղությամբ հետաքննիչը ձեռնարկել է բավարար միջոցներ և որ Ա.Սարուխանյանը բացակայել է բնակության վայրից, այլ ոչ թե այդ պահին փանը չի գրնվել, ինչը բացառել է նրանից բացառություն վերցնելու հնարավորությունը: Իսկ ինչ վերաբերում է այն փաստարկին, որ բացառություն տալուց հրաժարվելու դեպքում որևէ հարկադրանք կիրառելու հնարավորություն օրենքով նախատեսված չէ, սպա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ, քանի դեռ անձը չի հայրնաբերվել և փաստացի չի հրաժարվել բացառություն տալուց, այդ մասին ենթադրություններ

²⁶⁹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 19-20:

անելը առարկայագուրկ է, քանի որ հնարավոր չէ հաստատարապես պնդել, որ Ա.Սարուխանյանը կիրառարվեր բացարժեքություն փոխ: Ինչ վերաբերում է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին ուղարկված գրության անկարևորությանը, քանի որ հասարակվել էր հարաբերությունների քաղաքացիաիրավական բնույթը, սպա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ այդ պարագայում, եթե արդեն իսկ քրեական հետապնդում իրականացնող մարմինը համոզմունք էր ձևավորել քաղաքացիաիրավական բնույթի հարաբերությունների առկայության մասին, անհասկանալի է, թե ինչ նպատակով է ուղարկվել գրությունը, եթե պարտասխանը որոշում կայացնելու համար որևէ նշանակություն չէր կարող ունենալ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ Ա.Սուքիասյանն ընդունել է, որ պայմանագիրը ստորագրել է կամավոր, գիտակցել է հետևանքները, սպա Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով Ե.Կիլանյանի գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով նախատեսված գույքային վնաս պարճատելը սուբյեկտիվ կողմից դրսևորվում է ուղղակի դիտարկությամբ, իսկ օբյեկտիվ կողմը՝ խաբեության կամ վարահությունը չարաշահելու եղանակով, որի դեպքում բացակայում են համաշխարհային հարկանիշները: Ընդ որում, այս դեպքում վնասը կարող է դրսևորվել հանցավորի գործողությունների հետևանքով սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի համար առաջացած օրինական պարտավորությունների կարարման հետևանքով, գրնում է, որ այս պայմաններում միայն Ա.Սուքիասյանի բացարժեքությունը բավարար չէր գալու հետևության, որ Ա.Սարուխանյանը վերջինիս խաբեությամբ կամ վարահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պարճատելու որևէ դիտարկություն չի ունեցել:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Ա.Սուքիասյանի հաղորդման հիման վրա նախապարտարված նյութերով ձեռք չեն բերվել ողջամրորեն անհրաժեշտ և բավարար տվյալներ քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար, որն իր հերթին հանգեցրել է Արիինե Սուքիասյանի՝ իր շահերին առնչվող գործի արդարացի քննության իրավունքի խախարմանը²⁷⁰:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ սերքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառարանություններից չի երևում, թե արդյո՞ք նյութերի նախապարտարստման ընթացքում ձեռք է բերվել փաստական տվյալների այնպիսի համակցություն, որն օբյեկտիվ դիտորդին հնարավորություն կտար ենթադրություն կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով նախատեսված հանցագործության արտաքին հատկանիշների հավանական

²⁷⁰ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 51-53:

առկայության վերաբերյալ: Բացի այդ, դրանում իրավական վերլուծություն չի կատարվել հանցագործության առիթի, հիմքի և ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի շուրջ, և ստորադաս դատարանը բավարարվել է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների վկայակոչմամբ՝ առանց պարզելու խնդրո առարկա հանդիսացող հարցի էությունը:

Բողոքի հեղինակը նշել է, որ գործի նյութերով առկա չէ բավարար ապացույցների համակցություն այն մասին, որ Ա.Սարուխանյանը, չկատարելով ոսկյա գարդերի գրավադրմամբ ստացված վարկի մարումները, Ա.Սուքիասյանին գույքային վնաս պատճառելու դիտավորություն է ունեցել, ավելին՝ ըստ գործի նյութերի՝ Ա.Սարուխանյանը վարկ վերցնելուց անմիջապես հետո կատարել է 3-4 ամիսների մարումները: Բացի այդ, Ա.Սուքիասյանն իր բացատրությամբ հայտնել է, որ նախապես ծանոթանալով պայմանագրի պայմաններին՝ իր ցանկությամբ է ստորագրել այն՝ գիտակցելով, որ պայմանագրի խախտման դեպքում նախատեսված պատասխանատվությունն անձամբ է կրելու:

Բողոքի հեղինակը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, նշել է, որ ստորադաս դատարանը քաղաքացիաիրավական հարաբերությունների առարկան կազմող հանգամանքները դիտարկել է որպես քրեական դատավարության կարգով պարզման ենթակա հանգամանքներ:

Ըստ բողոքաբերի՝ սույն գործով բացակայում են հանցագործության հատկանիշները, վեճը վկայում է քաղաքացիական իրավահարաբերություններից բխող գործողությունների առկայության մասին: Ա.Սարուխանյանի կողմից ոսկու գրավադրման դիմաց վարկային պարտավորությունները պատշաճ կերպով չկատարելու հանգամանքները, դրա պատճառները ենթակա են պարզման քաղաքացիական դատավարության կարգով, բացառապես մասնավոր տիրույթում, որպիսի պայմաններում իրավաչափ չէ դատարանի կողմից քրեական հետապնդման մարմնի վրա քաղաքացիաիրավական վեճը քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ լուծելու պարտականություն դնելը: Հետևաբար, դատական ակտերում վկայակոչված հանգամանքները, մասնավորապես՝ Արթուր Սարուխանյանից բացատրություն չվերցնելը կամ վարկային փաստաթղթերը բանկից չստանալը, դեռևս այդ վեճը հանրային տիրույթում քննելու և լուծելու բավարար ու հիմնավոր փաստարկներ չեն:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ վարույթն իրականացնող մարմինը բավարար միջոցներ է ձեռնարկել Ա.Սարուխանյանից բացատրություն վերցնելու համար, սակայն պարզվել է, որ նա բացակայում է բնակության վայրից:

13. Վերոգրյալի հիման վրա, եզրահանգելով, որ նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով նախատեսված որևէ արարք կատարելու մասին փաստական տվյալներ ձեռք չեն բերվել, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով Արփինե Սուքիասյանի բողոքը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ են արդյոք վարույթն իրականացնող մարմնի կողմից Արվիհնե Սուքիասյանի հաղորդման առթիվ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ թննություն իրականացրած չլինելու և վերջինիս իրավունքների խախտում թույլ տալու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:(...)»*

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: *Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը:»*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:*

Վճռաբեկ դատարանը Մանվել և Լիդա Հովհաննիսյանների գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«(...) [Դ]ատարանը մինչդարձական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու շրջանակներում ներկայացված բողոքը հիմնավորված ճանաչելու դեպքում իր դատական ակտում պետք է հստակ պարձառարանի՝*

ա) վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության որ սահմանն է խախտվել և ինչում է այն դրսևորվել,

բ) դրա հետևանքով անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել»²⁷¹:

16. Քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտման դեպքերում քրեադատավարական կառուցակարգերի գործադրմամբ իրավական պաշտպանություն հայցելու հնարավորության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ քրեադատավարական ռեսուրսները չեն կարող օգտագործվել քաղաքացիական բնույթի իրավահարաբերությունները (վեճը) պարզելու և այդպիսի վեճի առարկան կազմող իրավաբանական փաստերը հաստատելու ուղղությամբ:

²⁷¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մանվել և Լիդա Հովհաննիսյանների գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱԴԱԴ/0001/11/14 որոշման 18-րդ կետը:

Վերջինս պայմանավորված է համապատասխան փաստերը հաստատելու քաղաքացիադատավարական կանոնների՝ քրեադատավարական կանոններից սկզբունքային տարբերությամբ և դրանք մեկը մյուսով փոխարինելու անթույլատրելիությամբ: Այսպես, եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես՝ քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Ուստի, ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ: Հակառակ պարագայում, կարող է առաջանալ իրավիճակ, երբ նույն փաստի վերաբերյալ առկա լինեն քաղաքացիական դատավարության կարգով և քրեական դատավարության կարգով կայացված օրինական ուժի մեջ մտած իրար հակասող դատական ակտեր, ինչն անթույլատրելի է, քանի որ իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի²⁷²:

16.1. Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ *Տալլինսա Բելյավցևայի* և *Շահեն Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քրեադատավարական իրավահարաբերություններում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները, չեն կարող օգտագործվել այն դեպքերում, երբ պաշտպանության առարկան կազմող իրավահարաբերություններն իրենց բնույթով ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավանորմների գործադրման արդյունքում: Այլ կերպ՝ քրեադատավարական կառուցակարգերը, այդ թվում՝ վերջնական որոշումների օրինականության նկատմամբ հետագա դատական վերահսկողությունը, չեն կարող կիրառվել քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ²⁷³:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հետաքննիչը, դիմող Ա.Սուքիասյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով 2017 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժել է՝ այն պատճառաբանությամբ, որ Ա.Սարուխանյանը որևէ դիտավորություն չի ունեցել խաբեությամբ Ա.Սուքիասյանին գույքային վնաս պատճառելու, ուստի վերջինիս արարքում

²⁷² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լիա Ավերիսյանի* գործով 2011 թվականի փետրվարի 29-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 30-րդ կետը, *Վարդան Մաթևոսյանի* գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը, *Ռոդիկ Բալասանյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԿԴ/0199/01/13 որոշման 17-րդ կետը:

²⁷³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տալլինսա Բելյավցևայի* և *Շահեն Գևորգյանի* գործով 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԼՆԴ/0025/11/16 որոշման 12.1-րդ կետը:

բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի հանցակազմը, իսկ Ա.Սուքիասյանի և Ա.Սարուխանյանի միջև առկա հարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, որոնք ենթակա են լուծման դատական կարգով²⁷⁴,

- Հետաքննիչի նշված որոշման դեմ Ա.Սուքիասյանի բողոքը Երևան քաղաքի դատախազ Բ.Ասլանյանի որոշմամբ մերժվել է՝ փաստելով, որ նյութերի նախապատրաստման ընթացքում Ա.Սարուխանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքով, այդ թվում՝ 184-րդ հոդվածով նախատեսված որևէ արարք կատարելու փաստի վերաբերյալ տվյալներ ձեռք չեն բերվել, այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել²⁷⁵,

- Առաջին ատյանի դատարանը դիմող Ա.Սուքիասյանի բողոքը բավարարել է՝ փաստելով, որ վարույթն իրականացնող մարմինը չի ձեռնարկել ողջամիտ և բավարար միջոցներ՝ Ա.Սուքիասյանի հայտնած տեղեկությունները ստուգելու համար: Դատարանն արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, չի կատարվել գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, ձեռք չի բերվել փաստական տվյալների բավարար համակցություն, որի հիման վրա հնարավոր կլիներ իրավական գնահատական տալ Ա.Սարուխանյանի գործողություններին, ինչը հանգեցրել է Ա.Սուքիասյանի՝ իր շահերին առնչվող գործի արդարացի քննության իրավունքի խախտմանը²⁷⁶,

- Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունն այն մասին, որ Ա.Սուքիասյանի հաղորդման հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում վարույթն իրականացնող մարմինը չի ձեռնարկել ողջամիտ և բավարար միջոցներ Արփինե Սուքիասյանի հայտնած տեղեկությունները ստուգելու համար, չի կատարել գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, ձեռք չի բերվել փաստական տվյալների բավարար համակցություն, որի հիման վրա հնարավոր կլիներ իրավական գնահատական տալ Արթուր Սարուխանյանի գործողություններին, իրավաչափ է և ընդունելի նաև Վերաքննիչ դատարանի համար: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ա.Սուքիասյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ձեռք չեն բերվել ողջամտորեն անհրաժեշտ և բավարար տվյալներ քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար, որն իր հերթին հանգեցրել է Արփինե Սուքիասյանի՝ իր շահերին առնչվող գործի արդարացի քննության իրավունքի խախտմանը²⁷⁷:

²⁷⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

²⁷⁵ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

²⁷⁶ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

²⁷⁷ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 15-16.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների համակցությամբ պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել այն, որ վիճարկվող որոշման դեմ ներկայացված բողոքով հայցվող իրավական պաշտպանության առարկան քաղաքացիական իրավանորմների գործադրմամբ լուծման ենթակա հարցեր են և ստորադաս դատարանների կողմից նշված փաստական տվյալների ամբողջությունը նշանակություն չէր կարող ունենալ հանցագործության հատկանիշների առկայության կամ բացակայության փաստը պարզելու համար, քանի որ դրանք վերաբերել են Ա.Սուքիասյանի և Ա.Սարուխանյանի միջև առկա քաղաքացիաիրավական հարաբերություններին:

18.1. Ինչ վերաբերում է Ա.Սուքիասյանի հաղորդման հիման վրա քրեական հետապնդման մարմնի կողմից ոչ պատշաճ ջանասիրություն ցուցաբերելու վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգմանը, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկված գործողությունները բավարար են եղել կողմերի միջև քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման տիրույթում գտնվող վեճի առկայությունը և ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայությունը փաստելու համար:

18.2. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ստորադաս դատարանների դատական ակտերում վկայակոչված հանգամանքների (Ա.Սարուխանյանից բացատրություն չվերցնելը, վարկային փաստաթղթերը բանկից չստանալը) պարզումը՝ իրավահարաբերության քաղաքացիաիրավական բնույթի պայմաններում, գործի համար էական նշանակություն ունենալ չէին կարող:

Ավելին, հատկանշական է, որ դիմող Ա.Սուքիասյանն իր լրացուցիչ բացատրությամբ չի մատնանշել որևէ այնպիսի փաստական տվյալ, որը կարող էր հանցագործության հատկանիշների հնարավոր առկայության մասին ողջամիտ ենթադրություն անելու հնարավորություն տալ, որևէ կերպ չի վիճարկել բանկի հետ կնքված պայմանագրի պատշաճությունը, իր կողմից սեփական կամահայտնությամբ այն ստորագրելը և իր անվամբ ոսկյա զարդեր գրավադրելը: Ա.Սուքիասյանը հայտնել է նաև, որ գիտակցել է պայմանագրի խախտման դեպքում պատասխանատվություն կրելու ռիսկերը՝ նշելով, որ պայմանագիրը ստորագրելուց առաջ բանկի աշխատակցի կողմից իրեն առաջարկվել է ծանոթանալ վարկային պայմանագրի պայմաններին, սակայն ինքը չի կարդացել դրանք և ստորագրել է այն: Նույն բացատրությամբ Ա.Սուքիասյանը նշել է նաև, որ Ա.Սարուխանյանը երբևէ չի հրաժարվել իր պարտավորությունները կատարելուց, պարզապես ինչ-ինչ պատճառներով չի կարողացել դրանք կատարել²⁷⁸:

²⁷⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

19. Վերոնշյալ հանգամանքների համակցությունը հիմք է տալիս Վճռաբեկ դատարանին հիմնավորված համարելու վարույթն իրականացնող մարմնի այն հետևությունը, որ Ա.Սուքիասյանի և Ա.Սարուխանյանի միջև ձևավորված իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից Արփինե Սուքիասյանի հաղորդման առթիվ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացրած չլինելու և վերջինիս իրավունքների խախտում թույլ տալու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

20. Ամփոփելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները բեկանելու համար: Մինևույն ժամանակ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Ա.Սուքիասյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Արփինե Մելսիկի Սուքիասյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի որոշումը բեկանել ու փոփոխել: Դիմող Արփինե Սուքիասյանի բողոքը՝ մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *արորագրություն*

Դատավորներ *արորագրություններ*

19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0054/01/15

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2021 թվականի ապրիլի 14-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Աշոտ Արշիկի Սուքիասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի և տուժող Փայլակ Հայրապետյանի ու նրա ներկայացուցիչ Ա.Գևորգյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի օգոստոսի 6-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ավագ քննիչ Է.Շահինյանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 69106812 քրեական գործը:

2012 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ռ.Աղիլխանյանի որոշմամբ թիվ 69106812 քրեական գործն ընդունվել է վարույթ:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի մարտի 29-ի որոշմամբ թիվ 69106812 քրեական գործի վարույթը կասեցվել է՝ գործող անհաղթահարելի

ուժի հիմքով՝ մինչև Սիերա Լեոնեի և Կիպրոսի իրավապահ մարմիններին ուղարկված քննչական պահանջների պատասխանների ստացումը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի մայիսի 2-ի որոշմամբ թիվ 69106812 քրեական գործով վարույթը վերսկսվել է:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի հունիսի 17-ի որոշումներով Աշոտ Արշիկի Սուքիասյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2014 թվականի հունվարի 31-ին հետախուզվող մեղադրյալ Աշոտ Սուքիասյանը հայտնաբերվել է Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում, այնուհետև՝ 2014 թվականի հունիսի 19-ին, արտահանձնվել է Հայաստանի Հանրապետություն:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ Աշոտ Սուքիասյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 69103515 քրեական գործը, որը նույն որոշմամբ միացվել է թիվ 69106812 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 69106812 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մայիսի 4-ի որոշմամբ թիվ 69106812 քրեական գործից անջատվել է Աշոտ Սուքիասյանի վերաբերյալ մասը, որին շնորհվել է 69103715 համարը:

2015 թվականի հունիսի 1-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 2-ի դատավճռով Աշոտ Սուքիասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքներում: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի քան հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը: ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի քան հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը: ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով՝ գույքի

բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի քան հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Աշոտ Սուքիասյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 16 (տասնվեց) տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի քան հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը:

Ա.Սուքիասյանից հոգուտ տուժող Փայլակ Հայրապետյանի բռնագանձվել է 8.519.412.692 (ութ միլիարդ հինգ հարյուր տասնինը միլիոն չորս հարյուր տասներկու հազար վեց հարյուր ինսուներկու) ՀՀ դրամ, հոգուտ տուժող Վարդան Հայրապետյանի՝ 623.403.360 (վեց հարյուր քսաներեք միլիոն չորս հարյուր երեք հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, հոգուտ տուժող Գագիկ Ղարիբյանի՝ 2.763.897.948 (երկու միլիարդ յոթ հարյուր վաթսուներեք միլիոն ութ հարյուր ինսուներկու հազար ինը հարյուր քառասունութ) ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով վերջիններիս պատճառված գույքային վնասի հատուցում:

Նույն դատավճռով Ա.Սուքիասյանից հոգուտ պետական բյուջեի բռնագանձվել է 82.447.445 (ութսուներկու միլիոն չորս հարյուր քառասունութ հազարչորսհարյուրքառասունհինգ) ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պետությանը պատճառված գույքային վնասի հատուցում:

3. Ամբաստանյալ Ա.Սուքիասյանի պաշտպաններ Յուրիկ Խաչատրյանի և Կարեն Հակոբյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հունիսի 24-ի որոշմամբ վերջիններիս բողոքները բավարարել է մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 2-ի դատավճիռը մասնակիորեն րեկանվել և փոփոխվել է:

Ա.Սուքիասյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքներում ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

Ա.Սուքիասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով՝ 40.000.000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամի չափով գույքի բռնագրավմամբ:

Տուժողներ Փայլակ Հայրապետյանի, Վարդան Հայրապետյանի և Գագիկ Ղարիբյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցերը՝ Ա.Սուքիասյանից հոգուտ իրենց՝ որպես հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնասի հատուցում գումար բռնագանձելու պահանջի մասին, մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 2-ի դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը և տուժող Փ.Հայրապետյանն ու նրա

ներկայացուցիչ Ա.Գևորգյանը վճարելի բողոքներ են բերել, որոնք Վճարելի դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

2020 թվականի հունվարի 15-ին ամբաստանյալ Ա.Սուքիասյանի պաշտպան Կ.Հակոբյանի կողմից ներկայացվել է վճարելի բողոքների պատասխան, որով վերջինս խնդրել է մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի և տուժող Փ.Հայրապետյանի ու նրա ներկայացուցիչ Ա.Գևորգյանի վճարելի բողոքները:

Վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Աշոտ Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «/Ն/ա խարդախությամբ ուրիշի առանձնապես խոշոր չափերով գույքի նկատմամբ իրավունք է ձեռք բերել, օրինականացրել հանցավոր ճանապարհով սրացված առանձնապես խոշոր չափերով եկամուտներ, ինչպես նաև չարամորթներն իրաւասիւի է առանձնապես խոշոր չափերով հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարումներ կատարելուց:

Այսպես.

«Զորագյուղ» արտադրական կոուպերատիվի հիմնադիր տնօրեն Աշոտ Սուքիասյանը, խարդախությամբ ուրիշի առանձնապես խոշոր չափերով գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու արդյունքում եկամուտներ ստանալու դիտարկությամբ, ՀՀ գործարար շրջանակներում ներկայանալով ադամանդագործության ոլորտում գործունեություն իրականացնող հաջողված գործարար, 2009 թվականի աշնանը ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում ոլորտի առաջարար ընկերությունների ներկայացուցիչների, այդ թվում՝ նաև գործարար Փայլակ Հայրոյի Հայրապետյանի մասնակցությամբ տեղի ունեցած ակնագործության և ոսկեգործության խնդիրներին նվիրված աշխատանքային քննարկման ժամանակ առաջարկել է ՌԴ-ից ներմուծվող ադամանդե հումքի արժեքից զգալիորեն էժան գնով բարձրորակ հումքով ասպահովել Հայաստանում ադամանդագործությամբ զբաղվող ընկերություններին: Իր հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով, հիշարակված քննարկումից մտք մեկ ամիս անց, իր առաջարկով հետաքրքրված Փայլակ Հայրապետյանին և այլ գործարարներին ներկայացրել է աֆրիկյան Միերա Լեոնե Հանրապետությունում այլ անձանց պարկանող հանքերից գնված շուրջ 300.000 ԱՄԵ դոլար արժողության բարձր որակի ադամանդի հումք, ներկայացնելով այն որպես Միերա Լեոնե Հանրապետությունում գրնվող իբրև իրեն պարկանող ադամանդի հանքերից արդյունահանված հումք: Ապա՝ հավաստիացրել է, որ եթե իրեն պարկանող հանքավայրերում հանքարդյունահանող սարքավորումներ գնելու համար 12.000.000 ԱՄԵ դոլար գումարի չափով ներդրում իրականացվի, սպա դրա արդյունքում կբարձրանա հանքերի արտադրողականությունը, հանքերում արդյունահանված ադամանդի հումքը կուղարկի Հայաստանի

Հանրապետություն, այն կվերամշակվի իրենց և այլ մասնագիտացված ընկերությունների արտադրամասերում ու գործարաններում և կվաճառվի: Փայլակ Հայրապետյանը՝ Աշոտ Սուքիասյանի հետ համագործակցությունից շահույթ ստանալու սկսկալիքով, վարահեղով վերջինիս և հավաքալով նրա ներկայացրած ծրագրին, պատրաստակամություն է հայտնել Աշոտ Սուքիասյանի անվամբ ՀՀ առևտրային բանկերում գրավադնել իրեն պատկանող անշարժ գույքը, իսկ այն 12.000.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ ստանալու համար բավարար չլինելու դեպքում գրավադնել նաև «Ծովագարդի «Հայրապետ» հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերությունը, որդուն Վարդան Փայլակի Հայրապետյանին և ինսամի Գագիկ Խորենի Լարիքյանին սեփականության իրավունքով պատկանող գույքը: Աշոտ Սուքիասյանը գույքը բանկերում գրավադնելու և գրավի դիմաց սրացված վարկային միջոցներն իբրև Սիերա Լեոնեի Հանրապետությունում իր ունեցած ադամանդի հանքավայրերի համար հանքարդյունահանող սարքավորումներ գնելու և համարեղ առևտրային գործունեություն իրականացնելու պատրվակով, չարաշահելով Փայլակ Հայրապետյանի վարահողությունը, խաբեության վերջինիցս և նրա միջոցով «Ծովագարդի «Հայրապետ» հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերությունից, Վարդան Հայրապետյանից և Գագիկ Լարիքյանից 2010 թվականի հունիսից սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում լիազորագրերով ձեռք է բերել նրանց սեփականության իրավունքով պատկանող, առանձնապես խոշոր չափերի 11.442.068.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ Երևան քաղաքի Գաջեգործների 1-ին փողոցի թիվ 1 հասցեում գրնվող 1.683 քմ ընդհանուր մակերեսով վարչական շենքը, 2,94137 հա մակերեսով հողամասը և 22.125 քմ ընդհանուր մակերեսով արտադրամասերը, պահեստները և օժանդակ շինությունները, Հրաչյա Քոչարի թիվ 2-րդ հասցեում գրնվող 3.774,6 քմ ընդհանուր մակերեսով շինությունը և 0,1605 հա ընդհանուր մակերեսով հողամասը, նույն փողոցի թիվ 4-րդ շենքի թիվ 4/9 հասցեում գրնվող 3.452,6 քմ շենքը, 0,134566 հա և 0,04524 հա հողամասերը, Այգետյան 11-րդ փողոցի թիվ 77-րդ հասցեում գրնվող 1.296,4 քմ ընդհանուր մակերեսով անշարժ գույքը և 0,1605 հա ընդհանուր մակերեսով հողամասը, Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի թիվ 9/3 հասցեում գրնվող 0,88 հա մակերեսով հողամասը և 7.143,7 քմ մակերեսով մարզաձակությանի համալիրը, Գեղարքունիքի մարզի Ծովագարդ համայնքում գրնվող Հաղթանակ փողոցի 10-րդ հասցեում գրնվող 18,42 հա մակերեսով հողամասը, 17.646,2/15.043,5 քմ մակերեսով հյուրանոցային համալիրը, 26,5/16,1 քառ. մ. մակերեսով պահակարանը, 405,5/338,9 քմ մակերեսով ճաշարանը, 109,9/90,0 քմ մակերեսով մղման կայանը, 968,8/839,0 քմ մակերեսով քարի արտադրամասը և 129,0 քմ մակերեսով պարիսպը, նույն համայնքի Մարշալ Բաղդասյան փողոցի թիվ 12 հասցեում գրնվող 6,1949 հա մակերեսով հողամասը, 2.396,8/1.816,8 քմ մակերեսով բնակելի տները, 808,5/777,9 քմ մակերեսով կաթսայարանը, 182,0/144,0 քմ մակերեսով օժանդակ շինությունը, 115,2/94,4 քմ մակերեսով հիմքը, նույն համայնքի Աղմիրալ Բակույի փողոցի թիվ 10 հասցեում գրնվող 0,7518 հա մակերեսով հողամասը, 1.309,0/991,5 քմ մակերեսով բնակելի տունը տնօրինելու գրավ դնելու իրավունք: Վերոհիշյալ անշարժ գույքը գրավի

թվով 8 պայմանագրերով գրավադնելով «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում իր ղեկավարած «Չորագյուղ» Ա/Կ-ի և «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության միջև 2010 թվականի հունիսի 25-ին կնքված 12.000.000 ԱՄՆ դոլար վարկ պրամնադրելու վերաբերյալ թիվ 002506 վարկային հիմնական պայմանագրի հիման վրա կնքված թվով 10 լրացուցիչ համաձայնագրերով 2010 թվականի հունիսի 28-ից մինչև 2011 թվականի հունիսի 27-ն ընկած ժամանակահատվածում սրացել է 3.664.175.000 ՀՀ դրամին համարժեք 9.700.000 ԱՄՆ դոլար և 361.500.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ նպարտակ չունենալով հետագայում վերադարձնել սրացած վարկային միջոցները: Դրա հետ մեկտեղ, Աշոտ Սուքիասյանը, պարզաձև վարկառուի տրավորություն սրեղծելու, դրանով իսկ վարկային հիմնական պայմանագրով նախատեսված և փոխելով տրամադրվող 12.000.000 ԱՄՆ դոլարի չափով վարկային միջոցներն ամբողջությամբ սրանալու և անարգել փոփոխելու, այդ ժամանակահատվածում Փայլակ Հայրասպետյանին իր իրական մտադրությունների մասին մոլորության մեջ գցելու նպատակով 2010-2011 թվականների ընթացքում սրացված վարկային միջոցներից կատարել է ընդհանուր 1.372.462 ԱՄՆ դոլարին համարժեք 503.749.567 ՀՀ դրամի չափով վարկի և ընթացիկ տոկոսների մարումներ, ինչպես նաև կատարել վարկի սպասարկման հետ կապված այլ ծախսեր վճարումները դադարեցնելով այն ժամանակ, երբ բանկը հրաժարվել է վճարել վարկի գումարի մնացած 1.300.000 ԱՄՆ դոլարի չափով մասնաբաժինը:

Հանցավոր ճանապարհով խաբեությամբ գույքային իրավունքներ ձեռք բերելու արդյունքում սրացված առանձնապես խոշոր չափերի 3.424.969.470 ՀՀ դրամին համարժեք 9.327.538 ԱՄՆ դոլարի չափով անուղղակի եկամուտներն օրինականացնելու դրանց ծագման աղբյուրը, տեղաշարժն ու պատկանելիությունը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով, Աշոտ Սուքիասյանը կատարել է բանկային և առևտրային գործարքներն փոխանցում, փոխարկում, թանկարժեք մեքանիզմների ձեռքբերում:

Մասնավորապես, Աշոտ Սուքիասյանը, հանցավոր ճանապարհով սրացված 3.424.969.470 ՀՀ դրամին համարժեք 9.327.538 ԱՄՆ դոլար եկամուտներով, հանրահորերի գծով շահագործման գործարքի անվան տակ, «Չորագյուղ» Ա/Կ-ի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված դոլարային հաշվից Կիպրոսի Հանրապետության «HELLENIC BANK PUBLIC COMPANY LTD» բանկում բացված ոչ ռեզիդենտ «STR EMERALD LIMITED» և նույն պետությունում իր մասնակցությամբ հիմնադրված և իր կողմից ֆինանսական շարժ իրականացվող «WLISPERA HOLDINGS LIMITED» և «ABS GLOBAL LIMITED» ընկերությունների հաշվեհամարներին կատարել է փոխանցումներ, սպա նույն գումարներից նշված կիպրոսյան ընկերությունների միջև փոխադարձ փոխանցումներ իրականացնելուց հետո՝ «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների հաշիվներից հանքի շահագործման գործարքի անվան տակ Հայաստանի Հանրապետության «Պրոմեթեյ» ՍՊ ընկերության, «Ամերիաբանկ», «Անելիք» և «Արդշինիվաթարանկ» ՓԲ ընկերությունների կողմից սպասարկվող «Չորագյուղ» Ա/Կ-ի բանկային հաշիվներին հետ է փոխանցել, սպա նույն

գումարներից կրկին «ABS GLOBAL LIMITED» ընկերության բանկային հաշվին փոխանցումներ կատարել: Կատարվածի արդյունքում «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների հաշվեհամարներին 2010 թվականի հունիսի 28-ից մինչև 2011 թվականի հունիսի 27-ն ընկած ժամանակահատվածում թվով 29 վճարման հանձնարարականներով, ընդհանուր փոխանցված 3.328.229.945 ՀՀ դրամին համարժեք 9.070.950 ԱՄՆ դոլարից Հայաստանի Հանրապետությունում «Ձորագյուղ» ԱԿ-ի բանկային հաշիվներին հետ է փոխանցել ընդհանուր 1.850.653.193 ՀՀ դրամին համարժեք 5.040.317 ԱՄՆ դոլար գումար: Հայաստանի Հանրապետությունում «Ձորագյուղ» ԱԿ-ի բանկային հաշիվներին գրավող 1.945.042.319 ՀՀ դրամին համարժեք 5.297.389 ԱՄՆ դոլար գումար վարկային միջոցներով 2010-2011 թվականների ընթացքում ՀՀ տարածքում 1.020.090.787 ՀՀ դրամին համարժեք 2.778.252 ԱՄՆ դոլարով ձեռք է բերել ոսկու ձուլակտորներ, ինչպես նաև Հարկաստանից, Միացյալ Արաբական Էմիրություններից, Սիերա Լեոնե Հանրապետությունից, Թուրքիայից և Հունդնզից ձեռք է բերել ընդհանուր 144.023.901 ՀՀ դրամին համարժեք 392.254 ԱՄՆ դոլարի մշակված ադամանդ, չմշակված ադամանդի հունք և ոսկյա օղակաձև ձուլվածքներ: Հանցավոր ճանապարհով սրացված եկամուրների մնացած մասով կանխիկացումներ և փոխարկումներ կատարելով համալրել է «Ձորագյուղ» ԱԿ-ի Հայաստանի Հանրապետությունում այլ առևտրային բանկերում ունեցած բանկային հաշիվները, դրանք այդ հաշիվներում առկա միջոցներին միացնելու և համարելի օգրագործելու միջոցով, դրանով իսկ խեղաթյուրել և թաքցրել այդ միջոցների ծագման աղբյուրը: Իսկ Կիպրոսի Հանրապետությունում մնացած 1.479.927.519 ՀՀ դրամին համարժեք 4.030.633 ԱՄՆ դոլար գումարն օգրագործել և ծախսել իր հայեցողությանը հանքարդյունահանող սարքավորումներ ձեռք բերելու հետ առնչություն չունեցող ուղղություններով այդպիսով օրինականացնելով վերը նշված գումարները:

Բացի այդ, Աշոտ Սուքիասյանը, հանդիսանալով ՀՀ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչությունում հաշվառված «Ձորագյուղ» ԱԿ-ի հիմնադիր-ընտանիքի, 2010-2012 թվականների ընթացքում իրականացրած տնտեսական գործունեության արդյունքում առաջացած հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ (...) չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի 82.447.445 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց, այդ թվում, շահութահարկ 81.686.153 ՀՀ դրամ, ԱԱՀ 761.292 ՀՀ դրամ:

Բացի այդ, [Աշոտ Սուքիասյանը] չարամտորեն խուսափել է պետական բյուջե վճարել ընդամենը 883.550 ՀՀ դրամ հարկեր, այդ թվում՝ ԱԱՀ 761.292 ՀՀ դրամ, շահութահարկ 122.258 ՀՀ դրամ»²⁷⁹:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռում նշվել է հետևյալը. «Տուժող Փայլակ Հայրոյի Հայրապետյանը դադարանին հայտնեց, որ 2009թ. լսել է ՀՀ Նախագահի ուղերձն այն մասին, որ ադամանդագործության ոլորտում Ռուսաստանի Դաշնության կողմից լինելու է շուրջ 500 միլիոն ԱՄՆ դոլարի

²⁷⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթեր 79-83:

պետական ներդրում, որից շուրջ 100 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումը լինելու է ադամանդի հումքի փեսքով: Ինքը նշվածը լսելուց հետո սկսել է ոսկերչության և ադամանդի վերամշակման գործունեություն ծավալել, կարարել է շուրջ 5.000.000 ԱՄՆ դոլար գումարի ներդրում, այն է՝ կառուցել է համապարասիան շենք-շինություններ, ձեռք բերել սարքավորումներ և այլն: (...) Իրեն է զանգահարել նախարարության աշխատակից Գագիկ Քոչարյանը և հրավիրել մասնակցելու ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված ոսկերչության և ադամանդի վերամշակման բնագավառի գործարարների համոթիպմանը: Քանի որ ցանկացել է գործունեություն ծավալել նշված բնագավառում, ուստի ընդունել է առաջարկը և գնացել: Այստեղ են գրնվել (...), ամբաստանյալ Աշոտ Սուքիասյանը և փվյալ բնագավառի այլ գործարարներ:

Ամբաստանյալ Ա.Սուքիասյանը, ներկայանալով որպես այդ բնագավառում բազմամյա փորձ ունեցող և Աֆրիկայում ադամանդի հանքեր ունեցող գործարար, հայրարարել է, որ կարող է Հայաստան ներմուծել ՌԴ-ից պրացվող հումքի արժեքից 30 փոկոս էժան գնով ադամանդի չմշակված հումք, ինչի համար անհրաժեշտ է 12 մլն ԱՄՆ դոլարի ներդրում: Նշված առաջարկն իրեն ու այլ գործարարներին հետաքրքրել է, որից հետո սկսել են քննարկել դրա պայմանները: (...) Դրանից շուրջ 20 օր անց, Ա.Սուքիասյանն իր գրասենյակում ցուցադրել է շուրջ 370 կարար չմշակված ադամանդի հումք ասելով, որ այն ինքը Հայաստան է ներմուծել Սիերա Լեոնե Հանրապետությունում գրնվող իր ադամանդի հանքերից: (...)

(...) Հավարալով ամբաստանյալ Ա.Սուքիասյանին, նրա անվամբ իրեն, որդուն՝ Վարդան Հայրապետյանին և ինամուն Գագիկ Դարիբյանին և «Ծովագարդի «Հայրապետ» հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պարկանող [գույքը] գրավ դնելու միջոցով փնթիները, վարձակալության հանձնելու վերաբերյալ լիազորագրեր են փվել: Ընդ որում՝ Ջերմուկ քաղաքի Ծահունյան 9 հասցեում գրնվող համալիրի համար փրված լիազորագրում, բացի գրավ դնելու իրավունքից նշվել է նաև, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը կարող է այդ գույքը վաճառել: (...) Գրավադնելուց հետո քանկն ամբաստանյալ Ա.Սուքիասյանին սկսել է փրամադրել վարկի գումարները՝ մաս-մաս, սակայն թե դրանք ինչ նպատակով էին ծախսվում, ինքը չի իմացել, քանի որ վարկային միջոցները «Ձորագյուղ» Ա/Կ-ի միջոցով փնթիներվել են ամբաստանյալ Ա.Սուքիասյանի կողմից: (...)

(...) Հերագայում ծանոթանալով քանկում առկա բիզնես ծրագրին և գումարների ծախսման նպատակներին՝ իրեն հասկանալի է դարձել, որ քանկից սրացված գումարները նպատակային չեն ծախսվել և իրեն ներկայումս պարզ է, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանն ի սկզբանե ցանկացել է փրամադրել իր ունեցվածքին, որը կրել է կազմակերպված և հերոնողական բնույթ: (...):

Վկա Գագիկ Կառլենի Քոչարյանը դադարանին հայրնեց, որ (...) 2009 թվականի աշնանը Աշոտ Սուքիասյանն առաջարկություն է ներկայացրել առ այն, որ Աֆրիկայի Սիերա Լեոնե Հանրապետությունում ունի ադամանդի հանքեր, որտեղից կարող է Հայաստան ներկրել ադամանդի հումք ոռուսական «Արոսա» ընկերության կողմից առաջարկվող հումքի գնից ավելի ցածր գներով: Որոշ

ժամանակ անց, նա իր ընկերության գրասենյակում ներկայացրել է իբրև իր հանքից արդյունաբերած ադամանդի հումք, որի արժեքի վերաբերյալ ընկերությունների փոփոխությունների կողմից կարծիքը բացասական լինելուց հետո, փյույվալ հարցն այլևս չի բարձրացվել և չի քննարկվել: Ի հավասարումն այն բանի, որ նա Աֆրիկայում ունի հանքեր, Ա.Սուքիասյանն իր գրասենյակում ներկայացրել է փաստերից և հանքի քարտեզ-հատրակագիծ: Տեսաներիզը դիտվել է շատ մակերեսորեն: Այն վերաբերել է հանքի տարածքում նրա գրնվելու ինչ-որ ժամանակահատվածի, ցուցադրվել են նաև ինչ-որ շինություններ և ձեռքերով հումքի մաղի գործընթաց: Այլ փյույվալներ, այդ թվում նաև փաստաթղթային, առ այն, որ հանքերն իրեն են պատրկանում, ամբաստանյալ Ա.Սուքիասյանը չի ներկայացրել: Ես ասել է նաև, որ մեծ քանակով հումքի ներմուծում իրականացնելու համար կպահանջվեն համապատասխան ներդրումներ: (...):

Վկա Ղուկաս Արամյանի Ղուկասյանը դադարանին հայրնեց, (...) [որ] իր, Փ.Հայրապետյանի և ամբաստանյալ Ա.Սուքիասյանի հետ ձեռք բերված նախնական համաձայնության հիման վրա, [հորատող մեքենա-հասարոցի] վրա աշխատելու համար 2011 թվականի հուլիսի 24-ին մեկնել է Սիերա Լեոնե Հանրապետություն: Այնտեղ իրեն դիմավորել է Սերգեյ Տրիկոլյուկի «Գլոբալ Կարար» ընկերության աշխատակից Աւժեն, ով իրեն տեղավորել է արդեն կազմակերպված ճամբարում և ինքը սկսել է տարբեր աշխատանքներ կատարել, այդ թվում աշխատել է գնված հորատող մեքենայով: Աշխատանքի ընդունվելու հետ կապված, ամբաստանյալ Ա.Սուքիասյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ, վերջինս առաջարկել է աշխատել Սիերա Լեոնե Հանրապետությունում իրեն պատրկանող «Ջի Էմ Սի Գլոբալ» ընկերության հանքերում ամսական 2.000 ԱՄՆ դոլար աշխատավարձով: Աֆրիկայում ընդհանուր աշխատել է շուրջ 22 ամիս, աշխատած ժամանակահատվածի դիմաց Ա.Սուքիասյանն իրեն պարտք է մնացել 38.000 ԱՄՆ դոլար աշխատավարձի գումար, որը մինչ օրս չի վճարվել: (...) Սիերա Լեոնե Հանրապետություն իր մեկնելը պայմանավորված է եղել Աշոտ Սուքիասյանի հետ ձեռք բերված պայմանավորվածությամբ: Ա.Սուքիասյանի բաժնետեր լինելու մասին ինքը տեղեկացել է այնտեղի իրենց խմբավար Վահանից, որն Ա.Սուքիասյանի ինսամին է եղել: Այնտեղ իրենց կողմից կառուցված ֆաբրիկան սկզբնական շրջանում սկսել է լավ աշխատել, սակայն անհասկանալիորեն դրա աշխատանքը դադարեցվել է: (...):

Վկա Հրանտ Մուկոյի Մուրադյանը դադարանին հայրնեց, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանի հետ ծանոթացել է 2011 թվականի սեպտեմբեր ամսին, (...) Ա.Սուքիասյանի հետ ծանոթանալուց հետո, վերջինս իրեն ցուցադրել է Աֆրիկայում գրնվող ինչ-որ հանքերի վերաբերյալ սիրողական նկարահանած ֆիլմ, ասելով, որ այնտեղ տեսանկարահանված հանքերն իրեն են պատրկանում, այնտեղից արդյունահանում է ոսկի և ադամանդ: Միաժամանակ Ա.Սուքիասյանը հայրնեց է, որ Հայաստանից տարբեր մասնագիտության մարդիկ է գործուղում այնտեղ աշխատելու և հավելել, որ այնտեղ մեկ բժիշկ մասնագետի կարիք կա: (...) Աֆրիկայում գրնվելու ընթացքում Աշոտ Սուքիասյանին այնտեղ չի տեսել: (...) Ըստ իր ունեցած տեղեկությունների և հենց հանքավայրի աշխատողների

խոսակցություններից հասկացել է, որ հանքավայրը Ա.Սուքիասյանին չի պարկանել, որ վերջինս կարող էր դառնալ այնտեղ փայտեր, եթե կարարեր որոշակի ներդրումներ: (...):

Վկա Արիի Գրիգորի Բայանը դադարանին հայրնեց, որ 2010 թվականին ընդհանուր ծանոթի միջոցով ծանոթացել է ամբաստանյալ Ա.Սուքիասյանի հետ, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: (...) Այդ ժամանակ Ա.Սուքիասյանն իրեն ցույց է տվել լազերային սկավառակով մի տեսադրամակ, որտեղ ցուցադրվել են հանքեր և այնտեղ աշխատող աշխատուժ: Ա.Սուքիասյանը հայրնեց է, որ ցուցադրված հանքավայրերն իրեն են պատկանում և այդ հանքերի համար են պահանջվում ներդրումներ:

(...) Ծրագրի կազմման համար բոլոր ելակետային տվյալներն իրեն բացատրապես տրամադրել է Ա.Սուքիասյանը, ում հետ մշտապես համաձայնեցվել են բիզնես ծրագրում նախանշվող վարկային միջոցների օգտագործման ուղղությունները, ժամկետները, Աֆրիկյան բիզնեսի հետ կապված բոլոր տվյալները և ընկերությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Ավելի ճիշտ Ա.Սուքիասյանն ուղղագծել է ուղղականները, ուղղվածությունը, ինքն էլ դրանք զերեղել է ծրագրում, որից հետո լրացուցիչ ներկայացրել է Ա.Սուքիասյանին, որն ուսումնասիրելով տվել է իր հավանությունը և համաձայնությունը: (...):

(...) 2010 թվականի հուլիսի 8-ին Ա.Սուքիասյանի հետ մեկնել են Կիպրոսի Հանրապետություն, որպեսզի գրանցեն օֆշորային ընկերություններ և միաժամանակ Ա.Սուքիասյանը հանդիպեր իր գործընկերներ Սերգեյ Տրիկազյուկին և Սաշային, որի ազգանունը չի հիշել: (...) Ա.Սուքիասյանն իրեն ասել է, որ 12 միլիոն ԱՄՆ դոլարի վարկը պետք է սրանսար հենց Փ.Հայրապետյանի գույքերի գրավադրմամբ, ով իրեն այնքան է վարսահում, ինչքան չի վարսահում սեփական որդիներին: Այդ խոսքերն Ա.Սուքիասյանն իրեն ասել է այն բանից հետո, երբ մինչ Կիպրոսի Հանրապետություն մեկնելը զարմացել էր, թե ինչպես է, որ այդ անձը լիազորել է իրեն անօրինելու իր ունեցած ողջ անշարժ գույքը: Ինքը պնդում է նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, քանի որ տևական ժամանակ է անցել և ներկայումս շարք մանրամասնություններ չի հիշում, իսկ այն ժամանակ հիշողություններն ավելի թարմ են եղել (...):

Չարարանի կողմից հետազոտվեց ամբաստանյալ Ա.Սուքիասյանի և պաշտպան Յու.Խաչատրյանի կողմից նախաքննական մարմնին փաստաթղթերի, լուսանկարների և DVD սկավառակների պարունակությունը գնության ենթարկելու մասին նախաքննական մարմնի 29.09.2014թ. արձանագրությունն այն մասին, որ հետազոտվել է նաև Ա.Սուքիասյանի ցուցմունքներում վկայակոչված վարկային միջոցների նպատակային օգտագործման մասին վկայող համարվող ձեռնարկության վերաբերյալ 2010 թվականի փետրվարի 10-ի ամսաթվով թվագրված պայմանագրի պարձենը, կնքված Ա.Սուքիասյանի, Սերգեյ Տրիկազյուկի, Ալեքսանդր Վալենտյուկու և Ռուբեն Մկրտչյանի միջև: Բովանդակային առումով հետազոտվել է նաև պայմանագրի հայերեն թարգմանությունը: Նշված փաստաթղթի հետ կապված հարկանշական է այն, որ պայմանագրում հիշատակված «WLISPERA HOLDINGS LIMITED LTD» և

«ABS GLOBAL» ընկերությունները հիմնադրվել են, համապարասխանաբար 2010 թվականի մայիսի 6-ին և 2010 թվականի հուլիսի 13-ին, այսինքն՝ վերը նշված պայմանագրի կազմման ամսաթվից ամիսներ հետո: Հետևաբար, 2010 թվականի փետրվար ամսին չէին կարող հայտնի լինել դրանից ամիսներ անց պետական գրանցում սրացած ընկերությունների անվանումները: Ավելին, պայմանագրում հիշարարվում է արված այդ ընկերություններին գումարներ փոխանցելու մասին, ինչը նույնպես 2010 թվականի փետրվար ամսվա դրությամբ չէր կարող իրական լինել: Կարարված փոխանցումները, արույզ գումարային արտահայտմամբ, այն վարկային միջոցներն են, որոնք 2010 թվականի հունիս ամսից հետո սրացվել են «Ձորագյուղ» ԱԿ-ի կողմից ՓՀայրասպետյանի և նրա հարազատների գույքի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում գրավադրման արդյունքում (...):

Կարարանի կողմից հետագործվեց ֆինանսարևտեսագիտական և դարասահշվասպահական համալիր փորձաքննության 06.03.2015թ. թիվ 14–2710 եզրակացությունն այն մասին, որ «Ձորագյուղ» ԱԿ-ի և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև 25.06.2010 թվականին կնքվել է թիվ 002506 հիմնական պայմանագիրը «Ձորագյուղ» ԱԿ-ին վարկ փրամադրելու համար կազմված բիզնես ծրագրում և թե «Համարեղ ձեռնարկության վերաբերյալ» կնքված պայմանագրում (ներդրումային ծրագիր) նշված նպատակները: Միաժամանակ, վարկային հիմնական պայմանագրում և դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերում բացակայում է բիզնես և ներդրումային ծրագրերում տեղ գրած միջոցների օգրագործման նպատակների վերաբերյալ տեղեկատվություն: Իսկ ներդրումային և բիզնես ծրագրերի միջև առկա են հետևյալ էական անհամապարասխանությունները: (...) [Համարեղ ձեռնարկության վերաբերյալ կնքված պայմանագիրը (ներդրումային ծրագիր) ուղղակի կապ և ընդհանրություն չունի Բիզնես ծրագրի հետ: (...) Փորձաքննությանը փրամադրված «Ձորագյուղ» ԱԿ-ի բանկային հաշիվների քաղվածքներում և հաշվապահական հաշվառման փաստաթղթերում արտացոլված Աշուր Սուքիասյանի («Ձորագյուղ» ԱԿ-ի) կողմից կարարած փաստացի ծախսերը ձևական առումով կարարվել են վարկային հիմնական պայմանագրում և դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերում նշված «Հիմնական և շրջանառու միջոցների ձեռք բերման, կրեդիտորական պարտքերի մարման և ընթացիկ գործունեության կազմակերպման» նպատակներով, սակայն դրանք փաստացի չեն համապարասխանել բիզնես ծրագրով նախատեսված ուղղություններին, իսկ «Համարեղ ձեռնարկության վերաբերյալ» կնքված պայմանագիրը - (ներդրումային ծրագիր), փորձաքննությամբ, զուտ փոխանցագիտական տեսանկյունից չի դիպվել որպես վարկային միջոցների օգրագործման հետ ուղղակիորեն կապ ունեցող փաստաթուղթ»²⁸⁰:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը պաշտպանության կողմի միջնորդությամբ որոշել է դատարան հրավիրել և հարցաքննել վկա Վահան Հարությունյանին՝ նկատի ունենալով, որ Առաջին

²⁸⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 45-րդ, թերթեր 57-89:

ապրանի դատարանի կողմից անհիմն մերժվել է վկա Վահան Հարությունյանին դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը:

Վկա Վահան Հարությունյանը Վերաքննիչ դատարանի դատական քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ Աշոտ Սուքիասյանը հանդիսանում է իր որդու կնոջ հայրը: 2011 թվականի մայիսին Աշոտ Սուքիասյանի առաջարկով վերադարձել է Ամերիկայի Միացյալ Նահանգներից (որտեղ ապրել է շուրջ 18 տարի) և մեկնել Սիերա Լեոնեի Հանրապետություն, որտեղ շուրջ 1 տարի 2 ամիս աշխատել է աղամանդի հանքերում: Այնտեղ աշխատել են նաև Հայաստանից ժամանած այլ անձինք, որոնց մի մասին Աֆրիկա էր ուղարկել Փայլակ Հայրապետյանը: Փայլակ Հայրապետյանը տեղյակ եղել է հանքերում տեղի ունեցող իրադարձությունների մասին, քանի որ նրա ուղարկած մարդիկ հեռախոսազանգերի միջոցով նրան տեղեկացրել են ամեն ինչի մասին: Աղամանդի հանքերում աշխատել են նաև սևամորթ անձինք, ինչպես նաև սոկա են եղել տարբեր տեխնիկաներ: Աշոտ Սուքիասյանի գործընկերներ Սերգեյ Տրիկագյուկը, Ռուբեն Մկրտչյանը և Ալիսյա Կարապետյանը իրադարձություններ և կեղծիքներ են կատարել Աշոտ Սուքիասյանի հանդեպ, Սիերա Լեոնեի Հանրապետությունում նրանց միջև նաև դատական գործընթացներ են տեղի ունեցել, և արդյունքում աղամանդի արդյունահանման պլանավորված գործընթացը ձախողվել է (...):

(...) [Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Աշոտ Սուքիասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքներով մեղադրական դատավճիռ կայացնելու համար Առաջին աստիճանի դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պարզաձև իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավասարի սպացուցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չհարստավոր բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, ի թիվս այլոց, պետք է հաստատված համարեր, որ.

ա) մինչև գույքային իրավունքներ ձեռք բերելը և դրանց գրավադրման արդյունքում վարկային միջոցներ արանսայն Աշոտ Սուքիասյանը նպատակ է ունեցել համաշխարհային որևէ գույք, չվերադարձնել վարկային միջոցները, չկատարել խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները,

բ) փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը (նախորդող հանցագործության դեպքը), ինչպես նաև Աշոտ Սուքիասյանի նպատակը քողարկելու, թաքցնելու հանցավոր ճանապարհով սրացված միջոցների իրական աղբյուրները և այդ միջոցները ներգրավել օրինական շրջանառության մեջ:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վերը նշված «ա» և «բ» կետերում թվարկված հանգամանքների սպացուցվածության հարցին.

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ի պաշտպանություն իրենն ամբաստանյալ Աշոտ Սուքիասյանը նշել է, որ մինչև

գույքային իրավունքներ ձեռք բերելը և դրանց գրավադրման արդյունքում վարկային միջոցներ սրանապի ինքը նպատակ չի ունեցել հասիչարակել որևէ գույք, չվերադարձնել վարկային միջոցները, չկատարել խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները, իր և Փայլակ Հայրապետյանի միջև եղել են քաղաքացիաիրավական հարաբերություններ, որոնք իրենց մեջ ռիսկային գործոն են պարունակել: Վերաքննիչ դադարանը գտնում է, որ ամբաստանյալին ի պաշտպանություն բերված նշված փաստարկները մեղադրանքի կողմը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում չի հերքել:(...)

(...) Առաջին արյանի դադարանի դադարվճողի հիմքում դրված որևէ սպացույց կամ փաստական փոխյալ ուղղակի փեղեկություն չի պարունակում առ այն, որ մինչև անշարժ գույքերի նկատմամբ գույքային իրավունքներ ձեռք բերելը և դրանց գրավադրման արդյունքում վարկային միջոցներ սրանապի Աշուր Սուքիասյանը նպատակ է ունեցել հասիչարակել որևէ գույք, չվերադարձնել վարկային միջոցները, չկատարել խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները,

Մասնավորապես.

(...) «Ձորագյուղ» ԱԿ-ի և «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության միջև կնքված պայմանագրի շրջանակներում վարկ տրամադրելու մասին կնքված լրացուցիչ համաձայնագրերի հիման վրա պայմանագրի գործունեության կազմակերպման նպատակով 25.06.2010-15.06.2011 թվականներին «Ձորագյուղ» ԱԿ-ին տրամադրվել են 9.700.000 ԱՄՆ դոլար և 361.500.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկեր (...),

(...) 2010-2011 թվականների ընթացքում Աշուր Սուքիասյանը կատարել է ընդհանուր 1.372.462 ԱՄՆ դոլարին համարժեք 503.749.567 ՀՀ դրամի չափով վարկի և ընթացիկ տոկոսների մարումներ, ինչպես նաև կատարել վարկի սպասարկման հետ կապված այլ ծախսեր, իսկ վճարումները դադարեցրել է այն ժամանակ, երբ բանկը հրաժարվել է վճարել վարկի գումարի մասացած 1.300.000 ԱՄՆ դոլարի չափով մասնաբաժինը (...),

(...) «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված «Ձորագյուղ» ԱԿ-ի դոլարային հաշվից Կիպրոսի Հանրապետության «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկի կողմից սպասարկվող «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերություններին 26.06.2010-27.06.2011 թվականներին փոխանցվել է ընդհանուր 9.070.950 ԱՄՆ դոլար («ABS GLOBAL LIMITED» 6.720.950+«STR EMERALD LIMITED» 2.000.000+«WLISPERA HOLDINGS LIMITED» 350.000) ԱՄՆ դոլար: Վճարման հանձնարարագրերում որպես վճարման նպատակ վկայակոչվել է «Հանրահորերի գծով շահագործման համար» պայմանագիր, սակայն թե աշխատանքների կատարման համար կնքված պայմանագրեր և թե աշխատանքները կատարված լինելու վերաբերյալ փաստաթղթերը բացակայել են (...):

(...) «ABS GLOBAL LIMITED» ընկերության հաշվից, ի թիվս այլոց, առկա են ելքերի «Հանքահանման պայմանագիր» նպատակով 5.496.000+484.800 ԱՄՆ դոլար, «Երկրաբանական հետազոտություններ» նպատակով 15.000 ԱՄՆ դոլար, առանց նպատակի նշման 400.000+496.000+100+2.000+1.380.180 ԱՄՆ դոլար:

Այսինքն «ABS GLOBAL LIMITED» ընկերության հաշվից, ի թիվս այլոց, առկա են, ընդհանուր առմամբ 8.274.020 ԱՄՆ դոլարի էլքեր՝ «Հանքահանման պայմանագիր» և «Երկրաբանական հետազոտություններ» նպատակներով, ինչպես նաև առանց նպատակի նշման: Ընդ որում, նշված 8.274.020 ԱՄՆ դոլարի չափով էլքերը չեն վերաբերում «Ձորագյուղ» Ա/Կ-ին կադարված փոխանցումներին (...),

(...) «STR EMERALD LIMITED» ընկերության հաշվից, ի թիվս այլոց, առկա են էլքեր՝ «Հանքահանման պայմանագիր» նպատակով 3.333.500+80.000 ԱՄՆ դոլար, «Երկրաբանական հետազոտություններ» նպատակով 301.546 ԱՄՆ դոլար, առանց նպատակի նշման 1.258.216 ԱՄՆ դոլար: Այսինքն «STR EMERALD LIMITED» ընկերության հաշվից, ի թիվս այլոց, առկա են ընդհանուր առմամբ 4.973.262 ԱՄՆ դոլարի էլքեր՝ «Հանքահանման պայմանագիր» և «Երկրաբանական հետազոտություններ» նպատակներով, ինչպես նաև առանց նպատակի նշման: Ընդ որում՝ նշված 4.973.262 ԱՄՆ դոլարի չափով էլքերից «Ձորագյուղ» Ա/Կ-ին կադարված փոխանցումները կազմում են 3.333.500 ԱՄՆ դոլար: Նշվածից հետևում է, որ առանց «Ձորագյուղ» Ա/Կ-ին կադարված փոխանցումների, «STR EMERALD LIMITED» ընկերության հաշվից «Հանքահանման պայմանագիր» և «Երկրաբանական հետազոտություններ» նպատակներով, ինչպես նաև առանց նպատակի նշման կադարվել են 1.639.762 ԱՄՆ դոլարի էլքեր (4.973.262-3.333.500) (...),

(...) «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերության հաշվից, ի թիվս այլոց, առկա են էլքեր՝ «Հանքահանման պայմանագիր» նպատակով 1.607.888 ԱՄՆ դոլար, առանց նպատակի նշման 619.251 ԱՄՆ դոլար: Այսինքն «STR EMERALD LIMITED» ընկերության հաշվից, ի թիվս այլոց, առկա են, ընդհանուր առմամբ 2.227.139 ԱՄՆ դոլարի էլքեր՝ «Հանքահանման պայմանագիր» նպատակով, ինչպես նաև առանց նպատակի նշման: Ընդ որում՝ նշված 2.227.139 ԱՄՆ դոլարի չափով էլքերից «Ձորագյուղ» Ա/Կ-ին կադարված փոխանցումները կազմում են 1.707.714 ԱՄՆ դոլար, որից 1.607.888 ԱՄՆ դոլարը՝ «Հանքահանման պայմանագիր» նպատակով, իսկ 99.825 ԱՄՆ դոլարը՝ առանց նպատակի նշման: Նշվածից հետևում է, որ առանց «Ձորագյուղ» Ա/Կ-ին կադարված փոխանցումների, «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերության հաշվից առանց նպատակի նշման կադարվել են 519.426 ԱՄՆ դոլարի էլքեր (619.251-99.825) (...)

(...) «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների հաշիվներից, ի թիվս այլոց, առկա են էլքեր, նաև «Բանկային ծախս», «Գրասենյակային ծախս», «Տոմսեր», «Բեռնափոխադրում», նպատակներով (...),

(...) Վկաներ Ղուկաս Ղուկասյանի, Հրանտ Մուրադյանի, ինչպես նաև Վերաքննիչ դադարանում հարցաքննված վկա Վահան Հարությունյանի ցուցմունքներում առկա են տվյալներ այն մասին, որ Աշոտ Սուքիասյանի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ նրանք 2011-2013 թվականների ընթացքում որոշակի փրակական ժամանակ Սիերա Լեոնեի Հանրապետությունում աշխարել են ադամանդի հանքերում, մասնավորապես՝

Ղուկաս Ղուկասյանը շուրջ 22 ամիս, Հրանսր Մուրադյանը շուրջ 10 ամիս, Վահան Հարությունյանը շուրջ 14 ամիս:

(...) [Պաշտպանության կողմն Առաջին սայրանի դադարանին, իսկ հետագայում նաև Վերաքննիչ դադարանին ներկայացրել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությանը հասցեագրված 2 փաստաթղթեր հայտնելով, որ Աշոտ Սուքիասյանի աֆրիկացի փաստաբանը դիմել է Սիերա Լեոնեի Հանրապետության կառավարական մարմիններին և խնդրել, որպեսզի այդ գրությունների բնօրինակներն ուղարկվեն պաշտպան Յուրիկ Խաչատրյանի հասցեով, իսկ հետագայում պաշտպան Յուրիկ Խաչատրյանը դրանք սրացել է սուրհանդակային ծառայության միջոցով (...):

Պաշտպանության կողմի ներկայացրած հիշյալ փաստաթղթերից առաջինի վերին մասի մեջբերելով առկա է «ՊԱՐՈՆ ԲԱԿԱՐՐ ՈԱՄԿԻՆ ԿԱԲԱՍ ԷՍԿ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» գրառումը, իսկ փաստաթուղթն ունի հետևյալ բովանդակությունը.

«Սույնով հաստատում եմ, որ պարոն Աշոտ Արշիլի Սուքիասյանը (WALISPERA HOLDINGS LIMITED) ՎՈՒԻՍՊԵՐԱ ՀՈՒԴԻՆԳՍ ԼԻՄԻԹԵԴ-ի՝ գրանցված Կիպրոս 2010 թվականից բաժնետեր է, ով իր հերթին, ABS GLOBAL LTD ԱՐՍ ԳԼՈԲԱԼ ԼԻՄԻԹԵԴ-ի՝ գրանցված Կիպրոս 2010 թվականից [66] %-ի բաժնետերերը և փնտրեմ է:

Ես Հայաստանի Ձորագյուղ արդյունաբերական կոոպերատիվից, որի բաժնետերերը և փնտրեմը հենց ինքն է, կարարել է փարքեր փոխանցումներ Կիպրոսի (STR. EMERALD) ՍՏՆ ԷՄԵՐԱԼԴ ընկերության հաշվին, որը (GMC GLOBAL LIMITED) ԶԻՄՍ ԳԼՈԲԱԼ ԼԻՄԻԹԵԴ ընկերության՝ գրանցված Աֆրիկայի Սիերա Լեոնեում, համագործակալը և շահառուն է, ինչպես նաև, փոխանցել է փարքեր գումարներ Կիպրոսից, որը կազմում է 6.01986.106,78 ԱՄՆ դոլար, նաև փարքեր քաղաքներից, ինչպես նաև Հայաստանից նաև ուղարկել է հող փորիչ մեքենաներ, լվացող տեխնիկաներ, լեռնահանքային մեքենաներ, նյութեր, որոնք կազմել են 6.700.800 ԱՄՆ դոլար, ինչպես նաև 2.200.000 ԱՄՆ դոլար փարվող աշխատանքների և հանքարդյունաբերության փարածքում երկրաբանական երկու խմբերի գործունեության համար, ընդհանուր 15.886.906,78 ԱՄՆ դոլար: (...):

(...):

Պաշտպանության կողմի ներկայացրած հիշյալ փաստաթղթերից երկրորդի վերին մասի մեջբերելով առկա է «ՄԻԵՐԱԼԵՆՆԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՎԱՂՈՒԹՅՈՒՆ (ԱՀԳ)» գրառումը, իսկ փաստաթուղթն ունի հետևյալ բովանդակությունը.

«Ես սույնով հաստատում եմ, որ պարոն Աշոտ Արշիլի Սուքիասյանը (WALISPERA HOLDINGS LIMITED) ՎՈՒԻՍՊԵՐԱ ՀՈՒԴԻՆԳՍ ԼԻՄԻԹԵԴ-ի՝ գրանցված Կիպրոս 2010 թվականից բաժնետեր է, ով իր հերթին, ABS GLOBAL LTD ԱՐՍ ԳԼՈԲԱԼ ԼԻՄԻԹԵԴ-ի՝ գրանցված Կիպրոս 2010 թվականից [66] %-ի բաժնետերերը և փնտրեմ է:

(...)

Վերը նշվածը հաշվի առնելով Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Աշոտ Սուքիասյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմը:

Աշոտ Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի բացակայության պայմաններում Վերաքննիչ դատարանը գրնում է, որ քրեական գործով ապացուցված չի կարող համարվել նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը:

Ավելին Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ Կիպրոսի Հանրապետության «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկի կողմից սպասարկվող «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների հաշվին եղել են նաև այլ դրամական միջոցներ, որոնք չեն փոխանցվել «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից (...), իսկ քրեական գործով ձեռք բերված տվյալներով հնարավոր չի եղել տարանջատել, թե այդ «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերություններից «Ձորագյուղ» Ա/Կ-ին փոխանցված դրամական միջոցները եղել են «Ձորագյուղ» Ա/Կ-ից «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերություններին նախկինում փոխանցված դրամական միջոցները, թե նշված երեք ընկերությունների հաշվին եղած այլ դրամական միջոցները (...):

Վերը նշվածը հաշվի առնելով Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Աշոտ Սուքիասյանի արարքում բացակայում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմը: (...)»²⁸¹:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը ներկայացված վճռաբեկ բողոքով նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված փաստարկները, որոնք հիմք են հանդիսացել Ա.Սուքիասյանի գործողություններում խարդախության հանցակազմի բացակայությունը փաստելու և նշված իրավահարաբերությունները քաղաքացիաիրավական դիտելու համար, արդեն իսկ Ա.Սուքիասյանի կողմից խարդախության եղանակով Փ.Հայրապետյանի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելուց և գրավադնելուց հետո ստացած վարկի միջոցներն օրինականացնելուն ուղղված գործողություններ են, որոնք իրենց հերթին նույնպես վկայում են Ա.Սուքիասյանի կողմից ի սկզբանե խարդախություն կատարելու դիտավորության մասին: Մինչդեռ դատարանը բացարձակ գնահատականի չի արժանացրել այն հանգամանքը, որ Փ.Հայրապետյանի կողմից գույքի նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային բնույթը տուժողի գիտակցության և կամքի վրա Ա.Սուքիասյանի ունեցած ներգործության հետևանքն է:

²⁸¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 49-րդ, թերթեր 74-109:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով հաստատվել է, որ 2009 թվականի աշնանը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում անցկացված՝ ակնագործության և ոսկեգործության խնդիրներին նվիրված քննարկումների ժամանակ Ա.Սուքիասյանը հայտարարել է ոչ թե Ռուսաստանի Դաշնության կողմից առաջարկվող ադամանդի հումքից Սիերա Լեոնեից էապես էժան գներով Հայաստանի Հանրապետություն հումք ներկրելու հնարավորության մասին, ինչպես պնդել է Ա.Սուքիասյանը, այլ հայտնել է, որ Սիերա Լեոնեի Հանրապետությունում ունի սեփական ադամանդի հումքի և ոսկու արդյունահանման հանքեր, որտեղից կարող է ՀՀ ներկրել Ռուսաստանի Դաշնության «Ալոոսա» ընկերության կողմից այդ ժամանակահատվածում մատակարարվող հումքից մինչև 50 տոկոս էժան գնով: Մինչդեռ գործով հաստատվել է, որ նույն ժամանակահատվածում Ա.Սուքիասյանը Սիերա Լեոնեի Հանրապետությունում սեփական ադամանդի հումքի և ոսկու արդյունահանման հանքեր չի ունեցել, իսկ բիզնես ծրագրում նշված «GLOBAL CARAT LTD» կազմակերպությունը որևէ իրավաբանական կապ չի ունեցել ոչ Աշոտ Սուքիասյան ֆիզիկական անձի, ոչ էլ վերջինիս հետ առնչություն ունեցող «Ձորագյուղ» Ա/Կ-ի հետ, դեռ ավելին «GLOBAL CARAT LTD» հանդիսացել է այլ անձանց, այդ թվում նաև Սերգեյ Տրիկազյուկի սեփականությունը:

Բացի այդ, գործով հաստատվել է, որ Ա.Սուքիասյանը դեպքին վերաբերելի ժամանակահատվածում, ի հավաստումն իր խոսքերի, Սիերա Լեոնեի Հանրապետությունից՝ տարբեր աղբյուրներից, ձեռք է բերել շուրջ 300.000 ԱՄՆ դոլար արժողության ադամանդի հումք, որը ներկայացրել է Փ.Հայրապետյանին և հետաքրքրված այլ գործարարներին՝ իբրև իր հանքերից արդյունահանված ադամանդի հումք:

Բողոքի հեղինակը, մատնանշելով Վերաքննիչ դատարանի եզրահանգման համար հիմք հանդիսացած՝ Սիերա Լեոնեի Հանրապետությունից ստացված «*ՊԱՐՈՆ ԲԱԿԱՐՐ ՌԱՄԿԻՆ ԿԱԲԱԸ ԷՍԿ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ*» և «*ՄԻԵՐԱ ԼԵՈՆԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՍԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԱՀԳ)*» գրառումներով, ըստ էություն նույն բովանդակությունը կազմող փաստաթղթերը, դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ դրանք նախ չեն կարող որևէ ապացուցողական նշանակություն ունենալ, քանի որ ձեռք են բերվել անհայտ աղբյուրից, իրականության հետ ոչ մի աղերս չունեն և, բացի այդ, հակասում են քրեական գործով հաստատված այն հանգամանքին, որ վարկային միջոցները չեն ծախսվել նպատակային, ինչը չի հերքել նաև Ա.Սուքիասյանը:

Բացի այդ, պաշտպանության կողմից դատարան ներկայացված վերը նշված փաստաթղթերի վերաբերյալ բողոքաբերը նշել է, որ դրանք չեն կարող հանդիսանալ իրավական օգնության մասին վարույթն իրականացնող մարմնի կողմից Սիերա Լեոնեի Հանրապետություն հասցեագրված պահանջի պատասխան, քանի որ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու

հարցով հաղորդակցությունն իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 475-րդ հոդվածով սահմանված կարգով, և դրանք չէին կարող հասցեագրված լինել պաշտպանության կողմին:

Բողոք բերած անձի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանը գործով ձեռք բերված ապացույցները գնահատելիս չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներով մեկնաբանված ու հստակեցված՝ ապացույցների գնահատման չափանիշները և Ա.Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ և 190-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի առկայության պայմաններում՝ նրան վերոնշյալ հոդվածներով առաջադրված մեղադրանքներով արդարացրել է:

8.1. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ստյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 2-ի դատավճռին:

9. Ըստ տուժող Փ.Հայրապետյանի և նրա ներկայացուցիչ Ա.Գևորգյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշման արդյունքում խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածով սահմանված ապացույցների ազատ գնահատման սկզբունքի պահանջը:

Մասնավորապես, բողոքաբերները համոզմունք են հայտնել այն մասին, որ Վերաքննիչ դատարանի որոշման հիմքերում դրված՝ վկա Վահան Հարությունյանի ցուցմունքը չի կարող համարվել արժանահավատ, քանզի վերջինս ամբաստանյալի որդու կնոջ հայրն է և հանդիսանում է գործի ելքով շահագրգռված անձ, ինչպես նաև ներառված չի եղել քրեական գործով դատակոչի ենթակա անձանց շարքում:

Բողոքի հեղինակները փաստարկել են, որ քրեական գործում առկա ապացույցներով «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշով ապացուցված է, որ Ա.Սուքիասյանը, մինչև անշարժ գույքերի նկատմամբ գույքային իրավունքներ ձեռք բերելը և դրանց գրավադրման արդյունքում վարկային միջոցներ ստանալը, նպատակ է ունեցել հափշտակել, չվերադարձնել վարկային միջոցները, չկատարել վարկային պայմանագրերով նախատեսված պարտավորությունները:

Բողոք բերած անձինք նշել են, որ Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրված՝ պաշտպանության կողմից դատարան ներկայացված՝ ՀՀ ռստիկանության քննչական գլխավոր վարչությանը հասցեագրված երկու փաթեթները՝ կից փաստաթղթերով, որոնց բնօրինակները սուրհանդակային ծառայության միջոցով ստացել է Ա.Սուքիասյանի շահերի պաշտպան Յ.Խաչատրյանը, Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածով սահմանված կարգով ստուգման չեն ենթարկվել՝ դրանց ձեռքբերման աղբյուրների տեսանկյունից: Մինևույն ժամանակ, անգամ տվյալ ապացույցները թույլատրելի համարվելու դեպքում, դրանք գործի համար

ապացուցողական նշանակություն չեն կարող ունենալ, քանզի Ա.Սուքիասյանի՝ նշված կազմակերպության սեփականատեր լինելու դեպքում էլ վերջինս ի սկզբանե նպատակ է ունեցել Փ.Հայրապետյանին մոլորության մեջ գցելով, խաբեության եղանակով տիրանալու ու իր հայեցողությամբ տնօրինելու ստացված գումարները, իսկ դրանք, փոխակերպելով, փոխանցումներ կատարելով, նպատակ է ունեցել թաքցնել, խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը, իրական բնույթը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը:

Բողոքի հեղինակներն ընդգծել են, որ Ա.Սուքիասյանի կողմից վարկի և ընթացիկ տոկոսների մարումը նպատակ է հետապնդել ապահովելու վարկի հաջորդ փուլի ստացումը՝ առավել խոշոր գումարներ բանկից ստանալու և հափշտակելու համար, իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշմամբ արձանագրված գումարների փոխանցումների նպատակին՝ իբր «հանքահորերի գծով շահագործման համար», «հանքահանման պայմանագիր», «երկրաբանական հետազոտություններ» և այլն, ապա գործի տվյալներով, այդ թվում հենց իր՝ Ա.Սուքիասյանի ցուցմունքներով հիմնավորվել է, որ այդ նշումները կատարվել են ձևական, մտացածին և ոչ մի գումար այդ նշված նպատակներով չի ծախսվել:

9.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 2-ի դատավճռին, կամ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշումը, բեկանված մասով գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ՝ մնացած մասով դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. Խարդախության հանցակազմը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք Ա.Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը:

Վճռաբեկ դատարանը խարդախության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների վերաբերյալ մշտապես ընդգծել է, որ խարդախությունն օբյեկտիվ կողմից դրսևորվում է ուրիշի գույքը *հափշտակելով, այսինքն՝ այն վերցնելով, հանցավորինք կամ այլ անձինք դարձնելով*, տուժողի կամքի կամ գիտակցության վրա ներգործելու եղանակով, այն է՝ *խաբեության կամ վարահույությունը չարաշահելու* միջոցով: Սուբյեկտիվ կողմից խարդախությունը

քննությանը և *ուղղակի դիտարկությանը* և շահադիտական դրոշմներով: Ընդ որում, խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է **նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը**:

բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դիտարկությունը ծագում է **նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը**²⁸²:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, տուժող Փ.Հայրապետյանին մոլորության մեջ գցելով, խաբեության եղանակով հափշտակել է վերջինիս՝ առանձնապես խոշոր չափերի անշարժ գույքի գրավադրման արդյունքում ստացված գումարը²⁸³, ինչն էլ հաստատված և ապացուցված է համարվել Առաջին ատյանի դատարանի դատավճռով²⁸⁴:

12.1. Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմքում դրված որևէ ապացույց կամ փաստական տվյալ ուղղակի տեղեկություն չի պարունակում առ այն, որ մինչև անշարժ գույքերի նկատմամբ գույքային իրավունքներ ձեռք բերելը և դրանց գրավադրման արդյունքում վարկային միջոցներ ստանալը, Ա.Սուքիասյանը նպատակ է ունեցել հափշտակել որևէ գույք, չվերադարձնել վարկային միջոցները, չկատարել խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները, և Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչել է անմեղ ու արդարացրել:

Վերաքննիչ դատարանի վերը նշված եզրահանգումները հիմնվել են, մասնավորապես, «Ձորագյուղ» արտադրական կոդպերատիվին տրամադրված վարկային միջոցներից՝ Ա.Սուքիասյանի կողմից կատարված ծախսերի, ինչպես նաև դրամական փոխանցումների, դրանցում նշված նպատակների վերաբերյալ տվյալների, վկաներ Դ.Ղուկասյանի, Հ.Մուրադյանի, Վերաքննիչ դատարանում հարցաքննված վկա Վ.Հարությունյանի ցուցմունքների, պաշտպանության կողմի՝ Առաջին ատյանի դատարան, իսկ հետագայում նաև Վերաքննիչ դատարան ներկայացրած՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությանը հասցեագրված երկու փաստաթղթերի վրա²⁸⁵:

²⁸² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Լիա Ավերիսյանի* գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09, Վարդան Մաթևոսյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11, Նելլի Ափոյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0009/01/13 որոշումները:

²⁸³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²⁸⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

²⁸⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

13. Սույն որոշման 12-12.1-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 11-րդ կետում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրվող արարքում արդարացնելով, պատշաճ վերլուծության և գնահատման չի ենթարկել սույն քրեական գործում առկա փաստական տվյալների համակցությունը, որը վկայում է Ա.Սուքիասյանի կողմից, նախքան Փ.Հայրապետյանի գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը, իր ստանձնած պարտավորությունները չկատարելու նախնական դիտավորություն ունենալու մասին: Այսպես՝

ա) **2009 թվականի աշնանը** ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում հրավիրված՝ ադամանդագործության ոլորտի զարգացման հետ կապված ծրագրի քննարկման ժամանակ Ա.Սուքիասյանը հայտնել է, որ Աֆրիկայի Սիերա Լեոնե Հանրապետությունում ունի ադամանդի հանքեր, որտեղից կարող է ռուսական «Ալոուս» ընկերության կողմից առաջարկվող ադամանդի հումքի գնից էապես ցածր գներով հումք ներկրել Հայաստան: Այնուհետև, ամբաստանյալ Ա.Սուքիասյանը որոշ ժամանակահատված անց, իր գրասենյակում, ի հավաստումն այն բանի, որ Աֆրիկայում հանքեր ունի, ցուցադրել է տեսաներիզ և հանքի քարտեզ-հատակագիծ, ինչպես նաև տուժող Փ.Հայրապետյանին և հետաքրքրված այլ գործարարներին է տրամադրել Սիերա Լեոնեի Հանրապետությունից՝ տարբեր աղբյուրներից ձեռքբերված շուրջ 300.000 ԱՄՆ դոլար արժողության ադամանդի հումք՝ ներկայացնելով իբրև իր հանքերից արդյունահանված հումք: Մինչդեռ, գործով հաստատվել է, որ տվյալ ժամանակահատվածում **Ա.Սուքիասյանը Սիերա Լեոնեի Հանրապետությունում ադամանդի հումքի արդյունահանման սեփական հանքեր չի ունեցել**, իսկ «GLOBAL CARAT LTD» կազմակերպությունը որևէ իրավաբանական կապ չի ունեցել ոչ Ա.Սուքիասյանի, ոչ էլ վերջինիս հետ առնչություն ունեցող՝ «Չորագյուղ» արտադրական կոոպերատիվի հետ: Ընդ որում, Ա.Սուքիասյանն իր ցուցմունքներով ևս փաստել է, որ 2009 թվականի աշնանն ինքը չէր կարող հայտարարել, որ Սիերա Լեոնեի Հանրապետությունում ադամանդի հանքեր ունի, քանի որ այդ տեղեկատվությունն իրականությանը չէր համապատասխանում: Մինևույն ժամանակ, ամբաստանյալի կողմից 2009 թվականի աշնանը նման հայտարարություն կատարելու փաստը հաստատվել է գործով ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ, մասնավորապես՝ որպես վկա հարցաքննված՝ Գագիկ Քոչարյանի, Նելլի Հարությունյանի, Սասուն Նազարյանի, ինչպես նաև տուժող Փայլակ Հայրապետյանի ցուցմունքներով²⁸⁶:

Այսպիսով, ստացվում է, որ ամբաստանյալը տուժող Փ.Հայրապետյանի մոտ թյուր տպավորություն է ստեղծել, թե ներդրումներն անհրաժեշտ է

²⁸⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 45-րդ, թերթեր 57-89:

կատարել սեփականության իրավունքով իրեն պատկանող հանքավայրերում սարքավորումներ ձեռք բերելու և այդ հանքերը շահագործելու նպատակով, ինչն առավել համոզիչ դարձնելու համար ներկայացրել է մոտ 300.000 ԱՄՆ դոլար արժողության բարձր որակի ադամանդի հումք՝ իբրև սեփական հանքից արդյունահանած, մինչդեռ վերոնշյալ հանգամանքը Վերաքննիչ դատարանի կողմից որևէ գնահատականի չի արժանացվել:

բ) Տուժող Փ.Հայրապետյանն իր ցուցմունքներում նշել է, որ ինքը, անհանգստանալով իր գույքի գրավադրմամբ ստացված միջոցների տնօրինման հանգամանքով, առանց Ա.Սուքիասյանին տեղեկացնելու, մեկնել է Սիերա Լեոնե Հանրապետություն՝ տեղում հասկանալու, թե ինչ է կատարվում: Այստեղ հանքեր շահագործող «GMC GLOBAL LIMITED» ընկերության տնօրեն Ռուբեն Մկրտչյանը փոխանցել է իրեն, որ **Ա.Սուքիասյանն իրականում իրենց ընկերությունում սեփականատեր չի հանդիսանում, իսկ «ABS GLOBAL LIMITED» ընկերությունը նույնպես իրենց ընկերության սեփականությունն է, իսկ վերջինս համասեփականատեր չէ:** Սիերա Լեոնե Հանրապետությունում տեղեկացել է նաև, որ «GMC GLOBAL LIMITED» ընկերությունը **վերջին 2 տարվա ընթացքում որևէ նոր մեքենաներ ու սարքավորումներ ձեռք չի բերել:** Տուժողն ընդգծել է, որ Ա.Սուքիասյանն իր գույքը տնօրինելու վերաբերյալ լիազորագրերը ձեռք է բերել խաբեությամբ՝ նախապես իմանալով, որ չի կատարելու և հնարավորություն էլ չունի կատարել իր կողմից խոստացված բիզնես ծրագրերը, քանի որ ինչպես պարզ է դարձել հետագայում, **նա չի ունեցել որևէ սեփական բիզնես Աֆրիկայում և, հետևաբար, այդ բիզնեսի համար ոչ մի սարքավորում ձեռք չի բերել և չէր էլ կարող ձեռք բերել:**²⁸⁷:

գ) Պատշաճ վերլուծության չի արժանացվել նաև այն հանգամանքը, որ վարկային միջոցները ստանալուց հետո, բիզնես կամ ներդրումային ծրագրերով նախատեսված գործողությունները կատարելու փոխարեն, Ա.Սուքիասյանը կատարել է ծախսեր, որոնց զգալի մասը չի համապատասխանել բիզնես ծրագրով նախանշած ուղղություններին: Հատկանշական է, որ մոտ **1.694.702 ԱՄՆ դոլար գումարն Ա.Սուքիասյանն ուղղել է «Պրոմեթեյ Բանկ» ՍՊ ընկերությունում իր ունեցած վարկային պարտավորությունների, այդ թվում նաև՝ վարկի գումարի մարմանը**²⁸⁸: Բացի այդ, Ա.Սուքիասյանը Հայաստանի Հանրապետությունում «Ձորագյուղ» արտադրական կոդպերատիվի բանկային հաշիվներին գտնվող 1.945.042.319 ՀՀ դրամին համարժեք՝ 5.297.389 ԱՄՆ դոլար գումար վարկային միջոցներով, 2010-2011 թվականների ընթացքում, ՀՀ տարածքում 1.020.090.787 ՀՀ դրամին համարժեք՝ 2.778.252 ԱՄՆ դոլարով **ձեռք է բերել ոսկու ձուլակտորներ**, ինչպես նաև Հնդկաստանից, Միացյալ Արաբական Էմիրություններից, Սիերա Լեոնե Հանրապետությունից, Թուրքիայից և Հունկոնգից ձեռք է բերել ընդհանուրը՝ 144.023.901 ՀՀ դրամին

²⁸⁷ Տե՛ս նույն տեղում:

²⁸⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 45-րդ, թերթ 67:

համարժեք՝ 392.254 ԱՄՆ դոլարի **մշակված ադամանդ, չմշակված ադամանդի հումք և ոսկյա օղակաձև ձուլվածքներ**²⁸⁹:

Ընդհանուր առմամբ, «Ձորագյուղ» արտադրական կոոպերատիվի՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված դոլարային հաշվին վարկային միջոցների մուտքագրումները, այդ հաշվից ելքագրումների հիմնական ուղղությունները, վարկային միջոցների Կիպրոսի Հանրապետության «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկի կողմից սպասարկվող՝ «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերություններից յուրաքանչյուրի հաշվեհամարին կատարված փոխանցումները, այդ ընկերությունների կողմից «Ձորագյուղ» արտադրական կոոպերատիվի բանկային հաշիվներին կատարված փոխանցումները մանրամասն ուսումնասիրվել են ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննության շրջանակներում, որի՝ 2015 թվականի մարտի 6-ի թիվ 14-2710 եզրակացության համաձայն՝ անշարժ գույքերի գրավադրմամբ ստացված վարկային միջոցները նպատակային չեն օգտագործվել:

Այդ կապակցությամբ, մասնավորապես, նշվել է, որ փորձաքննությանը տրամադրված՝ «Ձորագյուղ» արտադրական կոոպերատիվի բանկային հաշիվների քաղվածքներում և հաշվապահական հաշվառման փաստաթղթերում արտացոլված՝ Աշոտ Սուքիասյանի («Ձորագյուղ» արտադրական կոոպերատիվի) կողմից կատարած փաստացի ծախսերը **ձևական առումով կատարվել են** վարկային հիմնական պայմանագրում և դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերում նշված՝ «Հիմնական և շրջանառու միջոցների ձեռք բերման, կրեդիտորական պարտքերի մարման և ընթացիկ գործունեության կազմակերպման» նպատակներով, սակայն **դրանք փաստացի չեն համապատասխանել բիզնես ծրագրով նախատեսված ուղղություններին**, իսկ «Համատեղ ձեռնարկության վերաբերյալ» կնքված պայմանագիրը (ներդրումային ծրագիր)՝ փորձաքննությամբ, զուտ տնտեսագիտական տեսանկյունից, չի դիտվել որպես վարկային միջոցների օգտագործման հետ ուղղակիորեն կապ ունեցող փաստաթուղթ²⁹⁰:

Այսպես՝ Առաջին ստյանի դատարանի կողմից հետազոտված՝ «Ձորագյուղ» արտադրական կոոպերատիվի կողմից վարկ ստանալու համար կազմված բիզնես ծրագրի (անգլերեն տարբերակի հայերենով թարգմանության) զննության մասին նախաքննական մարմնի՝ 2013 թվականի հոկտեմբերի 2-ի արձանագրության համաձայն՝ բիզնես ծրագրի՝ «Կազմակերպչական աշխատանքների նախագծում» բաժնում նշված է, որ «Գլոբալ Կարատ» ընկերությունը, որը Սիերա Լեոնեում հիմնված հանք է, ունի լիցենզիա շահագործելու ադամանդի և ոսկու հանքեր Սիերա Լեոնեի արևելյան մասի երեք տարբեր հատվածներում, **պետք է ձեռք բերի հանքանյութը լվանալու երկու**

²⁸⁹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

²⁹⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 45-րդ, թերթեր 57-89:

շաղափ, որը ներառում է խոզանակի և լվացման բաղադրիչներ՝ մեկը՝ ոսկու և մյուսը՝ ադամանդի մշակման համար: Այդ շաղափները բերվելու են Հարավային Ամերիկայից, որոնցից յուրաքանչյուրն արժե **մոտ 2 միլիոն դոլար**: Բացի դրանից, ևս մեկ լրացուցիչ հանքում գործողություններ իրականացնելու համար սարքավորումների անհրաժեշտ համախումբ կապավիրվի «Կոմաթսուից», որը **գնահատվում է 5 միլիոն դոլար** և իր մեջ ներառում է **էքսկավատոր, բուլդոզեր, բարձիչներ, բեռնատարներ, հզոր գններատորներ և ջրի պոմպեր**: Արդյունքում, անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու համար պահանջվող **ներդրումը կազմում է 9 միլիոն դոլար**: Այնուհետև նշված է, որ **«ընկերության ներդրման ռազմավարությունը ներառում է վերելում նշված սարքավորումների ձեռքբերումը նախագծի առաջին իսկ ժամկետներում»**²⁹¹:

Վերոնշյալի կապակցությամբ ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննության՝ 2015 թվականի մարտի 6-ի թիվ 14-2710 եզրակացությամբ արձանագրվել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե «Ձորագյուղ» արտադրական կոդպերատիվի կողմից և թե վարկային միջոցները ստացած՝ Կիպրոսի Հանրապետությունում գրանցված ընկերությունների կողմից բիզնես ծրագրում նշված՝ 2010-2011 թվականների ընթացքում ընդհանուր 9.000.000 ԱՄՆ դոլար արժողության հանքանյութ լվանալու երկու շաղափ և մեկ լրացուցիչ հանքում գործողություններ իրականացնելու համար սարքավորումների անհրաժեշտ համախումբ «Կոմաթսու» ընկերությունից ձեռք չեն բերվել, **ուստի փորձաքննությամբ դիտվում է, որ վարկային միջոցները փաստացի չեն օգտագործվել բիզնես ծրագրով նախատեսված նպատակներին համապատասխան**²⁹²:

դ) Առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված՝ նախաքննության մարմնի՝ 2014 թվականի սեպտեմբերի 29-ի արձանագրությունից երևում է, որ **2010 թվականի փետրվարի 10-ին** Ա.Սուքիասյանի, Սերգեյ Տրիկազյուկի, Ալեքսանդր Վալենկովսկու և Ռուբեն Մկրտչյանի միջև կնքվել է վարկային միջոցների նպատակային օգտագործման մասին համատեղ ձեռնարկության վերաբերյալ պայմանագիր: Վերոնշյալի հետ կապված հատկանշական է այն, որ պայմանագրում հիշատակվել են «WLISPERA HOLDINGS LIMITED LTD» և «ABS GLOBAL» ընկերությունները, որոնք հիմնադրվել են համապատասխանաբար՝ **2010 թվականի մայիսի 6-ին և 2010 թվականի հուլիսի 13-ին**, այսինքն՝ վերը նշված պայմանագրի կազմման ամսաթվից ամիսներ հետո²⁹³:

ե) Առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված՝ ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննության 2015 թվականի մարտի 6-ի թիվ 14-2710 եզրակացությամբ հաստատվել են ներդրումային և բիզնես ծրագրի միջև առկա անհամապատասխանություններ, ինչի վերաբերյալ նշել է նաև տուժող Փ.Հայրապետյանն իր ցուցմունքում: Այսպես՝

²⁹¹ Տե՛ս նույն տեղում:

²⁹² Տե՛ս նույն տեղում:

²⁹³ Տե՛ս նույն տեղում:

- եթե «Ձորագյուղ» արտադրական կոդպերատիվին վարկ տրամադրելու վերաբերյալ կազմված բիզնես ծրագրի սկզբնական փուլում նախատեսվել է ձեռք բերել հանքարդյունահանման տեխնիկա՝ ընդհանուր 9.000.000 ԱՄՆ դոլարի չափով, ապա ներդրումային ծրագրով նախատեսվել է ընդամենը ներդրում կատարել «ABS GLOBAL» ընկերության գործունեության մեջ՝ «Գործարար շահեր ձեռք բերելու և համատեղ պահելու» նպատակով՝ առանց նշելու, թե ուր պետք է ուղղվեն այդ միջոցները և ինչ կոնկրետ նպատակի պետք է ծառայեն կատարված կամ կատարվելիք ներդրումները,

- ներդրումային և բիզնես ծրագրերը միմյանց չեն համապատասխանում նաև միջոցների օգտագործման գումարային առումով: Այսպես, եթե ներդրումային ծրագրով գործունեություն իրականացնելու համար սկզբնական փուլում նախատեսվել է ստանալ ընդամենը 5.750.000 ԱՄՆ դոլար գումար, որից 250.000 ԱՄՆ դոլարը ծախսվել է մինչև «Ձորագյուղ» արտադրական կոդպերատիվի կողմից «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունից վարկ ստանալը, ապա բիզնես ծրագրով նախատեսվել է սկզբնական փուլում սարքավորումների ձեռք բերման նպատակով ծախսել 9.000.000 ԱՄՆ դոլար,

- բիզնես ծրագրում որևէ հիշատակում չի արվել, որ վարկային միջոցների գզալի մաս կազմող՝ 5.500.000 ԱՄՆ դոլար վարկային միջոցները պետք է ուղղվեն և օգտագործվեն Կիպրոսի Հանրապետությունում հիմնադրված որևէ ընկերության գործունեության կազմակերպման համար: Հիշատակում չկա նաև, որ վարկային միջոցները պետք է օգտագործվեն այդ պետությունում գրանցված ընկերությունների միջոցով,

- Բիզնես ծրագրում խոսք է գնում միայն Սիեռա Լեոնեի Հանրապետությունում գործող՝ «GLOBAL KARAT» ընկերության մասին, մինչդեռ ներդրումային ծրագրում հիշատակվում է նաև Սիեռա Լեոնեի Հանրապետությունում գործող մեկ այլ՝ «GMC GLOBAL» ընկերությունը²⁹⁴:

14. Միաժամանակ, հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով արդարացման դատական ակտ կայացնելիս, ի թիվս այլնի, հիմնվել է վկաներ Ղուկաս Ղուկասյանի, Հրանտ Մուրադյանի, Վերաքննիչ դատարանում հարցաքննված վկա Վահան Հարությունյանի կողմից տրված ցուցմունքների, ինչպես նաև պաշտպանության կողմից Վերաքննիչ դատարան ներկայացված՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությանը հասցեագրված 2 փաստաթղթերի վրա, համապատասխանաբար՝ *«ՊԱՐՈՆ ԲԱԿԱՐԲ ՌԱՄԿԻՆ ԿԱՐՔԱ ԷՍԿ. ԽՆՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՐԿԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ»* և *«ՄԻԵՐԱ ԼԵՈՆԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՄԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԱՀԳ)»* գրառումներով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ վերլուծության չի ենթարկել վկա Հ.Մուրադյանի ցուցմունքներում առկա տվյալներն առ այն, որ իր ունեցած տեղեկություններով, ինչպես նաև հանքավայրի աշխատողների խոսակցություններից հասկացել է, որ

²⁹⁴ Տե՛ս նույն տեղում:

հանքավայրը Ա.Սուքիասյանին չի պատկանել, և որ վերջինս կարող էր դառնալ այնտեղ փայտեր, եթե կատարեր որոշակի ներդրումներ, իսկ վկա Ղ.Ղուկասյանը հայտնել է, որ Ա.Սուքիասյանի՝ ադամանդի հանքերում մասնաբաժին ունենալու մասին իմացել է անուղղակի կերպով՝ իրենց խմբավար Վահան Հարությունյանից, ով Ա.Սուքիասյանի խնամին է²⁹⁵:

Ինչ վերաբերում է Վ.Հարությունյանի կողմից հայտնած տվյալներին, այդ թվում՝ նաև տուժող Փ.Հայրապետյանի կողմից հանքերում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ իրազեկված լինելու մասին²⁹⁶, ապա դրանք չեն հաստատվում գործով ձեռք բերված փաստական տվյալներով: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ վերջինս կարող է ողջամտորեն շահագրգռված լինել գործի ելքով, քանի որ Ա.Սուքիասյանի խնամին է:

14.1. Անդրադառնալով ՀՀ ռատիկանության քննչական գլխավոր վարչությանը հասցեագրված՝ համապատասխանաբար՝ «ՊԱՐՈՆ ԲԱԿԱՐՐ ՌԱՄԿԻՆ ԿԱԲԱՒԱԷՄԿ. ԽՆՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» և «ՄԻԵՐԱ ԼԵՈՆԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՀԳ)» գրառումներով երկու փաստաթղթերին, որոնք Վերաքննիչ դատարանը դրել է Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելու հիմքում, Վճռաբեկ դատարանը նախևառաջ ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը դրանք **թույլատրելիության ու արժանահավատության տեսանկյունից որևէ գնահատման չի ենթարկել, որևէ գործողություն չի կատարել՝ տվյալ փաստաթղթերի ստացման աղբյուրի օրինականությունը՝ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով պարզելու ուղղությամբ:** Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանը, վերոնշյալ փաստաթղթերը գործով ապացուցողական զանգվածում ներառելով, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ և 127-րդ հոդվածների պահանջները:

Այս առումով հատկանշական է, որ սույն քրեական գործով նախաքննական մարմինը դեռևս 2012 թվականի սեպտեմբերի 7-ին իրավական օգնություն ստանալու խնդրանքով դիմել է Միերա Լեոնեի Հանրապետության իրավասու մարմիններին, այնուհետև բազմիցս հիշեցումներ է ուղարկել միջնորդության կատարումն արագացնելու խնդրանքով, սակայն այդպես էլ որևէ արձագանք չի ստացվել²⁹⁷:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերոնշյալ փաստաթղթերը նույնիսկ թույլատրելի ապացույց դիտարկվելու պայմաններում, չեն կարող բավարար հիմք լինել Ա.Սուքիասյանի արարքում խարդախության հանցակազմի առկայությունը բացատրելու համար, քանի որ գործով ձեռք է բերվել թույլատրելի և վերաբերելի ապացույցների բավարար համակցություն առ այն, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանն ի սկզբանե

²⁹⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁹⁶ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

²⁹⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 26-րդ, թերթեր 84-85:

նպատակ է ունեցել մոլորության մեջ գցել տուժող Փ.Հայրապետյանին և խաբեության եղանակով հափշտակել վերջինիս՝ առանձնապես խոշոր չափերի անշարժ գույքի գրավադրման արդյունքում ստացված գումարը: Այսպես՝ վերոնշյալ փաստաթղթերում նշվում է, որ Ա.Սուքիասյանը «(WALISPERA HOLDINGS LIMITED) ՎՈԼԻՍՊԵՐԱ ՀՈԼԴԻՆԳՍ ԼԻՄԻԹԵԴ-ի` գրանցված Կիպրոս 2010 թվականից բաժնետեր է, ով իր հերթին, ABS GLOBAL LTD ԱԲՍ ԳԼՈԲԱԼ ԼԻՄԻԹԵԴ-ի` գրանցված Կիպրոս 2010 թվականից [66]%-ի բաժնետերը և Կնոսինն է»²⁹⁸, մինչդեռ, ինչպես արդեն իսկ նշվել է սույն որոշման շրջանակներում, Ա.Սուքիասյանը դեռևս **2009 թվականի աշնանը** ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում հրավիրված՝ ադամանդագործության ոլորտի զարգացման հետ կապված ծրագրի քննարկման ժամանակ հայտնել է, որ Աֆրիկայի Սիերա Լեոնե Հանրապետությունում ունի **ադամանդի հանքեր**, այնուհետև տուժող Փ.Հայրապետյանին և հետաքրքրված այլ գործարարներին է տրամադրել Սիերա Լեոնեի Հանրապետությունից՝ տարբեր աղբյուրներից ձեռքբերված շուրջ 300.000 ԱՄՆ դոլար արժողության ադամանդի հումք՝ **ներկայացնելով իբրև իր հանքերից արդյունահանված հումք:**

Ավելին՝ վերոնշյալ փաստաթղթերում պարունակվող տեղեկություններն առ այն, որ Ա.Սուքիասյանը տարբեր քաղաքներից, ինչպես նաև Հայաստանից ուղարկել է հող փորիչ մեքենաներ, լվացող տեխնիկա, լեռնահանքային մեքենաներ, նյութեր, որոնք կազմել են 6.700.800 ԱՄՆ դոլար, ինչպես նաև 2.200.000 ԱՄՆ դոլար տարվող աշխատանքների և հանքարդյունաբերության տարածքում երկրաբանական երկու խմբերի գործունեության համար, ընդհանուր 15.886.906.78 ԱՄՆ դոլար²⁹⁹, հակասում է սույն գործով հաստատված փաստական այն հանգամանքին, որ անշարժ գույքի գրավադրմամբ ստացված վարկային միջոցները չեն օգտագործվել նպատակային նշանակությամբ, այն է՝ հանքերի շահագործման համար անհրաժեշտ սարքավորումներ և տեխնիկա ձեռք բերելու նպատակով, ինչը, ըստ էության, իր ցուցմունքներում չի հերքել նաև Ա.Սուքիասյանը:

15. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշման 13-14.1-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրվող արարքում արդարացնելով հանգել է սխալ եզրահանգման: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պատշաճ վերլուծության և գնահատման չի ենթարկել սույն գործում առկա ապացույցների ամբողջությունը, մինչդեռ դրանց՝ համակցության մեջ վերլուծությունը վկայում է, որ մինչև տուժող Փ.Հայրապետյանին պատկանող անշարժ գույքերի նկատմամբ գույքային իրավունքներ ձեռք բերելը և դրանց գրավադրման արդյունքում վարկային միջոցներ ստանալը, Ա.Սուքիասյանն ի սկզբանե նպատակ է ունեցել մոլորության մեջ գցել տուժողին, հափշտակել

²⁹⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

²⁹⁹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

վերջինիս գույքը, չվերադարձնել վարկային միջոցները և չկատարել ստանձնած պայմանագրային պարտավորությունները:

Ոստի, ընդհանրացնելով վերոնշյալ վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ա.Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

II. Փողերի վաճառման հանցակազմի որակման ստանձնահարկությունները.

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փողերի լվացման հանցակազմի առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելու հատկանիշի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ոստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ Ա.Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի բացակայության պայմաններում ապացուցված չի կարող համարվել նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցավոր ճանապարհով սրացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայրնի է, որ այդ գույքը սրացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գրավելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայրնի է, որ այդ գույքը սրացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի սրացման պահին հայրնի էր, որ այն սրացվել է հանցավոր գործունեության արդյունքում)»*

(...)

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) ստանձնասպես խոշոր չափերով,

(...)

5. Սույն հոդվածի իմաստով հանցավոր ճանապարհով սրացված գույք է համարվում սույն օրենսգրքի 103.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված գույքը, որն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ սրացվել է սույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում»:

19. Փողերի լվացման հանցակազմի մեկնաբանությանը Վճարելի դատարանն անդրադարձել է Արսեն Սարգսյանի գործով որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. «(...) Նախորդող հանցագործության բացակայությունը բացառում է հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման հանցակազմի գոյությունը, ուստի նմանատիպ գործերով մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նախ պետք է հաստատված համարի նախորդող հանցագործության դեպքը, ինչպես նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը:

Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ լրվյալ դեպքում պարտադիր չէ նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մնած դատավճիռի առկայությունը, ինչպես նաև պարտադիր չէ, որ հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման մեջ մեղադրվող անձը որևէ առնչություն ունենա նախորդող հանցագործության հետ: Հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս պետք է ապացուցվի, որ գույքը սրացվել է հանցավոր ճանապարհով և որ անձը գիտակցել ու նախատեսել է դրա՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը: (...)»³⁰⁰:

19.1. Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը Հովհաննես Գևորգյանի և Հրաչյա Չանախյանի վերաբերյալ որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման հանցակազմի հատկանիշների մեկնաբանության արդյունքում Վճարելի դատարանը փաստում է, որ նշված հանցագործության կատարմամբ հանցավորն օրինական գործունեության շարժի ներքո նպատակ է հետապնդում լեգիտիմացնել սրացված անօրինական գույքն ու եկամուտները, քողարկելու և թաքցնելու դրանց ծագման հանցավոր աղբյուրը, վերացնելու դրանց հանցավոր հետքերը: Այլ կերպ, այս հանցագործությունն արտահայտվում է անօրինական ճանապարհով սրացված «կեղդուր» փողերի օրինականացմամբ, որով էական վնաս է պարձառվում պետության փողային հարստությանը: Այսինքն՝ լրվյալ հանցագործության կատարմամբ՝ փողերի լվացմանն ուղղված գործողություններ կատարելու, անօրինական գույքն ու եկամուտները օրինական քաղաքացիական շրջանառության մեջ ներդնելու միջոցով հանցավորի դիտարկությունն ուղղված է լինում դրանց օրինական տեսք հաղորդելուն և քրեական պատասխանատվությունից ազատվելուն: Հեղուսբար, անձի արարքը որպես հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացում որակելիս՝ պետք է համակողմանի ուշադրության արժանացնել այն գործողությունների շղթան, անօրինական գույքի և եկամուտների քաղաքացիական շրջանառությունը՝ իր շրջափուլերով հանդերձ,

³⁰⁰ Տե՛ս Վճարելի դատարանի՝ Արսեն Սարգսյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0090/01/09 որոշման 11-րդ կետը:

որոնք ընդհանուր առմամբ կարող են վկայել հանցավորի փողերի լվացմանն ուղղված դիտարկության առկայության մասին:

Այսպես, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման հանցակազմի հարկանիշների առկայությունը և փողերի լվացմանն ուղղված անձի դիտարկությունը որոշելիս անհրաժեշտ է գործի փաստական հանգամանքների պարզաձև իրավական գնահատմամբ պարզել սրացված անօրինական գույքի և եկամուտների ծագման աղբյուրը, նշված գույքն ու եկամուտներն օրինական շրջանառության մեջ ներդնելուն ուղղված գործողությունների ամբողջությունը, այդ նյութական միջոցների շարժընթացն ու շրջապարույրն օրինական քաղաքացիական շրջանառության մեջ, ձեռնարկված գործողությունների շղթան, որի վերջնարդյունքում այդ գույքն ու եկամուտները սրացել են օրինական տեսք: Ընդ որում, վերջին դեպքում հարկապես պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե կոնկրետ, որ օրինական քաղաքացիաիրավական գործարքի կատարման արդյունքում են օրինական տեսք սրացել ձեռքբերված նյութական միջոցները: Պայմանավորված Կոդեքսի հանցագործության լարենտային բնույթով հանցավոր գույքի ու եկամուտների օրինականացումը կարող է ունենալ բազմապիսի դրսևորում: Սակայն, բոլոր դեպքերում այն պետք է սերտորեն փոխկապակցված լինի ենթադրյալ հանցանքը կատարած անձի՝ «փողերի լվացման» դիտարկության հետ՝ հիմնավորելով վերջինիս առկայությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հանգամանքների համակողմանի գնահատման արդյունքում է հնարավոր հաստատարապես որոշել անձի արարքում հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման հանցակազմի հարկանիշների առկայությունը: (...)³⁰¹:

20. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2005 թվականի մայիսի 16-ի Վարչապալայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վարչապալայի կոնվենցիա)³⁰² 9-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ «Կողմերից յուրաքանչյուրը պետք է հավաստիացնի, որ նախորդող հանցանքի համար նախկին կամ ներկա դարվածությունը նախապայման չէ փողերի լվացման համար դատապարտելու համար:

(...) Կողմերից յուրաքանչյուրը պետք է հավաստիացնի, որ, սույն հոդվածի համաձայն, փողերի լվացման համար դատապարտումը հնարավոր է այն դեպքում, երբ սպացուցված է, որ սույն հոդվածի 1-ին կետի «ա» կամ «բ» ենթակետերում նշված գույքն ի հայտ է եկել նախորդող հանցանքի արդյունքում առանց հանցանքը ճշգրիտ նշելու անհրաժեշտության»:

³⁰¹ Տե՛ս Հովհաննես Գևորգյանի և Հրաչյա Չանախչյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշման 16-16.2-րդ կետերը:

³⁰² Վարչապալայի կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2008 թվականի հունիսի 2-ին:

Վարչավայի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասի (գ) կետի համաձայն՝ «Սույն պարբերությամբ սահմանված հանցանքի համար իբրև պարտադիր պայման հանդիսացող իմացության, դիտարկության կամ նպատակի վերաբերյալ եզրակացությունը կարող է արվել օբյեկտիվ, փաստացի հանգամանքներից ելնելով»:

Վարչավայի կոնվենցիայի բացատրական զեկույցում նշվում է. «5-րդ մասն անդրադառնում է փողերի լվացման գործերով քրեական հետապնդման մեկ այլ էական գործնական խնդրի, որը հայրնաբերվել է Կարբեր երկրներում գնահատումների արդյունքում, այն է՝ ընկալումը, որ հինք հանդիսացող նախորդ հանցանքի համար դադարադարձումն անհրաժեշտ է՝ որպես փողերի լվացման գործերով քրեական հետապնդման հինք: Սույն Կոնվենցիան այժմ Կողմերից պահանջում է սպառնվել, որ նախնական կամ միաժամանակյա դադարադարձումը նախորդող հանցագործության համար նախադրյալ չլինի փողերի լվացման գործերով դադարադարձման համար: Սույն Կոնվենցիան մշակողները կարծում էին, որ 5-րդ մասում նշվածը պարզաբանելուց հետո պետք է փողերի լվացման գործերով հնարավոր լինի նախորդող հանցագործությունը (լինի դա ներպերական, թե օտարերկրյա) հասարարելի հիմնվելով անտղղակի կամ այլ սպացույցների վրա: Մշակողների կողմից սա կարևորվել էր, քանզի այդպիսի դադարադարձման ընկալվող անհրաժեշտությունը հաճախ խանգարում էր փողերի լվացման, որպես ինքնավար հանցագործության համար հետապնդման իրականացմանը, հարկապես՝ երրորդ անձանց կողմից ուրիշների օգրին իրականացվող փողերի լվացման դեպքում:

6-րդ մասը վերաբերում է նախորդող հանցագործության սպացուցման հարցին փողերի լվացման գործերով հետապնդման դեպքում: Հետապնդմանն օժանդակելու համար սույն Կոնվենցիայի մշակողները մարնանշեցին փողերի լվացման գործերով դադարադարձների՝ հարակ մասնավորեցված նախորդող հանցանքի բոլոր փաստական արարերի սպացուցման պարտականություն չկրելու կարևորությունը, եթե գուքի սպորինի ծագում ունենալը կարող է սպացուցվել ցանկացած այլ հանգամանքներով:

Նշելով, որ սույն մասը վերաբերում է այս հոդվածի համաձայն փողերի լվացման համար դադարադարձումներին, սույն Կոնվենցիայի մշակողները ցանկանում են նշել, որ դրույթը պետք է դիտարկել փողերի լվացման սահմանման համարաբարում, ինչպես նշված է 9-րդ հոդվածում և մասնավորապես դրա 1-ին մասում, որը վերաբերում է դիտարկության վարքագծին: Հերևարար, Կողմերը կարող են իրականացնել 9.6 հոդվածի ինկլեննարացում՝ պահանջելով, որ փողերի լվացման հանցագործության կարարողը իմանա, որ սկրիվները առաջացել են նախորդող հանցագործության արդյունքում, առանց պահանջելու, որ սպացուցվի, թե հարակ որ նախորդող հանցագործություն է կիրառելի»³⁰³:

³⁰³ Տե՛ս «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, աղբրավման ու բռնագրավման և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Վարչավայի կոնվենցիայի՝ 2005 թվականի մայիսի 16-ի բացատրական զեկույցը, կետեր 100-101, հասանելի է հետևյալ հղմամբ՝ www.rm.coe.int/16800d3813:

Եվրոպական միության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 23-ին ընդունված թիվ 2018/1673 հրահանգի 3-րդ հոդվածի 3-րդ մասն անդամ պետություններին պարտավորեցնում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ՝

«(ա) նախորդող կամ միաժամանակյա դատապարտումը հանցավոր գործունեության համար, որից արացվել է գույքը, [փողերի լվացման հանցակազմով] դատապարտման համար նախապայման չէ.

(բ) [փողերի լվացման հանցակազմով] դատապարտումը հնարավոր է, եթե հասարակի, որ գույքը բխում է հանցավոր գործունեությունից, առանց պահանջելու, որ հասարակվեն այդ հանցավոր գործունեությանն առնչվող բոլոր փաստական փաստերը կամ բոլոր հանգամանքները, ներառյալ հանցագործի ինքնությունը. (...)»:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Եվրոպական միության անդամ պետությունների միասնական մոտեցումը համահունչ է Վարշավայի կոնվենցիայով սահմանված չափանիշներին:

20.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) *Յշուշենն ընդդեմ Բելգիայի* գործով որոշման շրջանակներում ընդգծել է, որ փողերի լվացման հանցակազմի ապացուցման առնչությամբ Վարշավայի կոնվենցիայով որդեգրված մոտեցումն ինքնին չի կարող դիտարկվել որպես արդար դատաքննության իրավունքի խախտում: Եվրոպական դատարանը, անդրադառնալով դիմումատուի վրա իր գույքային վիճակի վերաբերյալ հավաստի բացատրություն տալու պարտականություն դնելուն, փաստել է, որ այն ինքնին չի հանդիսանում լռելու իրավունքի խախտում՝ ընդգծելով, որ Կոնվենցիան չի արգելում հաշվի առնել մեղադրյալի լուրջությունը՝ իր մեղավորությունը պարզելու համար, բացառությամբ, եթե նրա դատապարտումը հիմնված է բացառապես կամ հիմնականում նրա լուրջության վրա³⁰⁴:

Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքի շրջանակներում իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ՝

- **գույքի հանցավոր ծագումը կարող է հաստատվել անուղղակի ապացույցների հիման վրա**, այդ թվում՝ եզրահանգումներ անելով այն հանգամանքից, որ մեղադրյալը հրաժարվում է ներկայացնել բացատրություններ գույքի ծագման առնչությամբ³⁰⁵,

- **քրեական գործերով արդար դատաքննության հայեցակարգի հետ համատեղելի է դիմումատուի վրա իր գույքային իրավիճակի վերաբերյալ հավաստի բացատրություններ տալու պարտականություն դնելը**³⁰⁶:

³⁰⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Zschüschen v. Belgium* գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգատ 23572/07, կետեր 27-30:

³⁰⁵ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Zschüschen v. Belgium* գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը

³⁰⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Grayson and Barnham v. United Kingdom*

21. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված՝ փողերի վացման վերաբերյալ առկա միջազգային-իրավական փաստաթղթերի, ինչպես նաև միջազգային փորձի վերլուծությունը վկայում է, որ անդրազգային կազմակերպված հանցավոր գործունեության դեմ պայքարին նվիրված միջազգային չափանիշները զարգանում են այն ուղղությամբ, ըստ որի փողերի վացումն անհրաժեշտ է դիտարկել որպես *ինքնավար բնույթ* ունեցող հանցավոր արարք, որի համար պատասխանատվությունը որևէ կերպ չի կարող պայմանավորված լինել նախորդող հանցագործության համար նախկին կամ միաժամանակյա դատապարտմամբ, նախորդող հանցագործությունն ապացուցված և դրա քրեաիրավական հատկանիշներն ամբողջությամբ բացահայտված լինելու հանգամանքով: Ավելին՝ փողերի վացման հանցակազմի ինքնավար բնույթը ենթադրում է, որ նախորդող հանցագործության քննությունը, որպես այդպիսին, փողերի վացման ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքների քննության նպատակը չէ, իսկ այն մոտեցումը, ըստ որի՝ փողերի վացումը քննվում է միայն որպես նախորդող հանցագործության գործերով իրականացվող քննության մաս, այլևս կենսունակ չէ՝ հաշվի առնելով այս ոլորտում տեղի ունեցող զարգացումները, ինչպես նաև խնդրո առարկա հանցագործության բացահայտման գործընթացում առաջացող լուրջ խոչընդոտները:

Միևնույն ժամանակ, սույն դեպքում չի կարող վտանգվել նաև անմեղության կանխավարկածը, քանի որ անձը պատասխանատվության է ենթարկվում ոչ թե նախորդող հանցավոր գործունեության, այլ հենց փողերի վացման հանցագործության համար: Այսպես՝ Եվրոպական Դատարանը վերոնշյալի կապակցությամբ ընդգծել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետը չի նախատեսում մեղադրանքում նախորդող հանցանքը հստակ նկարագրելու պարտականություն: Ի վերջո, նախորդող հանցանքը, որի միջոցով փողը ձեռք է բերվել, չի կազմում փողերի վացման գործով մեղադրանքի հիմքը³⁰⁷:

21.1. Այսպիսով, փողերի վացման համար անձին պատասխանատվության ենթարկելու և մեղադրական դատավճիռ կայացնելու համար անհրաժեշտ է ընդամենը փաստել, որ գույքը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, ինչը ամենևին չի ենթադրում այդ հանցագործության քրեաիրավական հատկանիշների ճշգրիտ նկարագրություն. տվյալ դեպքում բավարար է որոշակի ապացուցողական զանգվածով, այդ թվում՝ նաև անուղղակի ապացույցների համակցությամբ, հաստատված համարել, որ գույքը ձեռք է բերվել հանցավոր գործունեության արդյունքում: Ավելին, միջազգային

գործով 2008 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը, գանգառներ 1995/05 և 15085/06, կետեր 49, 23: Տե՛ս նաև, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Zschüschen v. Belgium* գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգառ 23572/07, կետ 30: ³⁰⁷ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Zschüschen v. Belgium* գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգառ 23572/07, *Timmermans v. Belgium* գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգառ 12162/07:

հանրությունն այս ուղղությամբ որդեգրել է հենց անուղղակի ապացուցման մեթոդը, մասնավորապես, եթե բացակայում են նախորդող հանցագործության վերաբերյալ ուղղակի ապացույցներ, ապա գույքի հանցավոր ծագումը կարելի է հաստատված համարել անուղղակի ապացույցների համակցության համադրման և վերլուծության արդյունքում:

22. Հիմք ընդունելով սույն որոշման 20-21.1-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված՝ փողերի վլացման հանցակազմն ունի ինքնավար բնույթ, և դրա համար պատասխանատվությունը չի կարող պայմանավորված լինել նախորդող հանցագործության համար դատապարտմամբ, ինչպես նաև նախորդող հանցագործության դեպքն ապացուցված, դրա քրեախրավական հատկանիշներն ամբողջությամբ բացահայտված լինելու հանգամանքով: Այլ կերպ՝ անհրաժեշտ է ոչ թե քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ հանցակազմի բոլոր հատկանիշների, այլ միայն նախորդող հանցագործության օբյեկտիվ կողմի դրսևորման մասին վկայող հատկանիշների առկայության հավաստում: Մինևույն ժամանակ պարտադիր չէ, որ հանցավորը գիտակցի նախորդող հանցագործության բոլոր հատկանիշները: Մասնավորապես, չի պահանջվում, որ անձը գիտակցի՝ կոնկրետ որ հանցանքի կատարմամբ է ձեռք բերվել վացվող գույքը, այլ բավարար է միայն գիտակցել, որ գույքն ունի հանցավոր ծագում:

Ուստի, զարգացնելով փողերի վլացման գործերով՝ նախորդող հանցագործության առնչությամբ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փողերի վլացման առարկա հանդիսացող գույքի հանցավոր ծագումը հաստատելու համար անհրաժեշտ չէ ոչ միայն նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայություն, այլև տվյալ գույքի հանցավոր ծագման փաստը կարող է հաստատվել՝ անկախ նախորդող հանցագործության՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված լինելու պայմանից:

Տվյալ դեպքում բավարար է գործի փաստերից բխող որոշակի տվյալների, այդ թվում՝ անուղղակի ապացույցների համադրման արդյունքում գալու ողջամիտ եզրահանգման առ այն, որ խնդրո առարկա գույքն ունի հանցավոր ծագում: Այլ կերպ՝ պահանջվում է միայն այնպիսի փաստական տվյալների ներկայացում, որոնք ողջամտորեն կվկայեն փողերի վլացմանը նախորդող արարքի հանցավոր լինելու մասին: Մասնավորապես, քննության օբյեկտ հանդիսացող գույքի վերաբերյալ անուղղակի, սակայն իրենց ամբողջության մեջ դրա՝ հանցավոր ճանապարհով ծագած լինելու մասին ողջամտորեն վկայող հանգամանքներ կարող են հանդիսանալ տվյալ անձի եկամուտների կամ այլ նյութական միջոցների ու ակտիվների հարաբերակցությամբ քննության առարկա հանդիսացող գույքի անհամաչափ բարձր արժեքը, տվյալ գույքը հանցավոր ճանապարհով ստացված լինելու մասին վկայող որոշակի

տվյալների առկայությունը, ինչպես նաև գործի լուծման տեսանկյունից էական նշանակություն ունեցող հանգամանքներ:

Ընդ որում, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր չէ ճշգրիտ կերպով վկայակոչել և նկարագրել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այն կոնկրետ հանցակազմը, որի արդյունքում ստացվել է ապօրինի գույքը, այլ բավարար է տալ միայն որևէ հանցավոր արարքի ընդհանրական նկարագրությունը (օրինակ՝ գույքը ստացվել է հափշտակությունների, թրաֆիքինգի, թմրամիջոցների կամ զենքի ապօրինի շրջանառության, կազմակերպված հանցավորության այս կամ այն դրսևորման կամ այլ հանցագործության արդյունքում):

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ փողերի լվացման հանցակազմի մասին չի կարող խոսք գնալ այն դեպքում, երբ գործում առկա փաստական տվյալներով հաստատվում է, որ գույքը ձեռք է բերվել օրինական ճանապարհով, իսկ դրա հանցավոր ծագումը բացառվում է:

23. Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող նպատակի, ինչպես նաև փողերի լվացմանն ուղղված անձի դիտավորության առկայությունը հաստատված համարելուն, ապա Վճռաբեկ դատարանը կրկնում է նախկինում իր կողմից արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ *հանցավոր ճանապարհով արացված եկամուտների օրինականացման հանցակազմի հատկանիշների առկայությունը և փողերի լվացմանն ուղղված անձի դիտավորությունը որոշելիս անհրաժեշտ է գործի փաստական հանգամանքների պարզաձև իրավական գնահատմամբ պարզել արացված անօրինական գույքի և եկամուտների ծագման աղբյուրը, նշված գույքն ու եկամուտներն օրինական շրջանառության մեջ ներդնելուն ուղղված գործողությունների ամբողջությունը, այդ նյութական միջոցների շարժնությանն ու շրջապարույրն օրինական քաղաքացիական շրջանառության մեջ, ձեռնարկված գործողությունների շղթան, որի վերջնարդյունքում այդ գույքն ու եկամուտները արացել են օրինական տեսակով*³⁰⁸:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Սուրբիայանին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանցավոր ճանապարհով՝ խաբեությամբ գույքային իրավունքներ ձեռք բերելու արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերի՝ 3.424.969.470 ՀՀ դրամին համարժեք 9.327.538 ԱՄՆ դոլարի չափով անուղղակի եկամուտներն օրինականացնելու, դրանց ծագման աղբյուրը, տեղաշարժն ու պատկանելիությունը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով, կատարել է մի շարք բանկային և առևտրային գործարքներ, փոխանցումներ, փոխարկումներ, թանկարժեք մետաղների ձեռք բերում³⁰⁹, որպիսի հանգամանքներն էլ Առաջին ատյանի դատարանը համարել

³⁰⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հովհաննես Գևորգյանի և Հրաչյա Չանախչյանի գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշումը:

³⁰⁹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

է հաստատված և Ա.Սուքիասյանին մեղավոր ճանաչել նշված հոդվածով նախատեսված արարքի կատարման մեջ³¹⁰:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելով՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով, նշել է, որ Ա.Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի բացակայության պայմաններում ապացուցված չի կարող համարվել նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը:

25. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 18-23-րդ կետերում շարադրված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ Ա.Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի բացակայության պայմաններում ապացուցված չի կարող համարվել նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը, չի բխում փողերի լվացման հանցակազմի ինքնավար բնույթից: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն Ա.Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի բացակայությունը մեխանիկորեն պայմանավորել է նախորդող հանցագործությունը, այն է՝ խարդախության հանցակազմն ապացուցված չլինելու հանգամանքով, մինչդեռ, ինչպես նշվել է սույն որոշման շրջանակներում, փողերի լվացման հանցակազմն ունի ինքնավար բնույթ, և դրա համար դատապարտումը չի կարող պայմանավորվել նախորդող հանցագործությունն ապացուցված, դրա քրեաիրավական բոլոր հատկանիշներն ամբողջությամբ բացահայտված լինելու հանգամանքով:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ *դրամական փոխանցումներից հնարավոր չի եղել տարանջատել, թե «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերություններից «Ձորագյուղ» արտադրական կոուլերատիվին փոխանցված դրամական միջոցները եղել են «Ձորագյուղ» արտադրական կոուլերատիվից «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերություններին նախկինում փոխանցված դրամական միջոցները, թե նշված երեք ընկերությունների հաշիվն եղած այլ դրամական միջոցները*³¹¹, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դա ևս բավարար գործոն չի կարող լինել՝ Ա.Սուքիասյանի արարքում փողերի լվացման հանցակազմի բացակայությունը հավաստելու համար: Այսպես՝ սույն գործով հաստատվել է, որ «Ձորագյուղ» արտադրական կոուլերատիվից «ABS GLOBAL LIMITED», «STR

³¹⁰ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³¹¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերություններին փոխանցվող գումարները ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով, այն է՝ խարդախության արդյունքում, իսկ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը, վերոնշյալ դրամական միջոցները տարատեսակ փոխանցումների արդյունքում միացնելով իր ունեցած դրամական միջոցներին, այնուհետև կրկին հետ փոխանցելով «Ձորագյուղ» արտադրական կոդաբերատիվին, փորձել է խեղաթյուրել, թաքցնել տվյալ գույքի հանցավոր ծագումը և օրինական տեսք տալ դրանց, որպիսի հանգամանքն առավել քան բավարար է հաստատված համարելու Ա.Սուքիասյանի նպատակը՝ քողարկելու, թաքցնելու հանցավոր ճանապարհով ստացված միջոցների իրական աղբյուրները և այդ միջոցները ներգրավելու օրինական շրջանառության մեջ:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ Ա.Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի բացակայության պայմաններում ապացուցված չի կարող համարվել նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը, հիմնավոր չէ:

26. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրվող արարքներում արդարացնելով, պատշաճ վերլուծության չի ենթարկել գործում առկա ապացույցների ամբողջությունը:

Ուստի, հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ և 190-րդ հոդվածներով մեղսագրվող արարքներում արդարացնելու հարցում եկել է սխալ եզրահանգման, պատշաճ վերլուծության և գնահատման չի ենթարկել գործում առկա փաստական տվյալների ամբողջությունը՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ և 127-րդ հոդվածների պահանջների խախտումներ: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածներով նախատեսված՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու համար: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ և 190-րդ հոդվածներով մեղավոր ճանաչելու հարցում եկել է ճիշտ եզրահանգման, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է այդ մասով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 2-ի դատավճիռին: Մնացած, այն է՝ Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

հանցավոր արարքում մեղավոր ճանաչելու, այդ թվում նաև՝ որպես լրացուցիչ պատիժ նշանակված՝ 40.000.000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամի չափով գույքը բռնագրավելու մասով, Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշումը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Աշոտ Արշիկի Սուքիասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով արդարացնելու մասով, բեկանել և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 2-ի դատավճռին:

2. Աշոտ Արշիկի Սուքիասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշումը ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով թողնել անփոփոխ:

3. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից հանցանքների համակցության կանոններով ամբաստանյալ Աշոտ Արշիկի Սուքիասյանի նկատմամբ նշանակված 16 (տասնվեց) տարի ժամկետով ազատազրկմանը հաշվակցել 2014 թվականի հունվարի 31-ից մինչև 2020 թվականի հունվարի 31-ն Աշոտ Սուքիասյանի անազատության մեջ գտնվելու ժամկետը, և վերջնական թողնել կրելու 10 (տասը) տարի ժամկետով ազատազրկում՝ գույքի բռնագրավմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ոչ ավելի, քան հանցագործությամբ պատճառված վնասի չափը, ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 40.000.000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամի չափով: Պատժի կրման սկիզբը հաշվել Աշոտ Արշիկի Սուքիասյանին արգելանքի վերցնելու օրվանից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

20.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/1256/06/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի ապրիլի 30-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Վաղարշակ Յուրիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հունվարի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2020 թվականի հուլիսի 17-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 16868420 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի քննչական բաժին:

2. Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ Վաղարշակ Յուրիկի Հարությունյանը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ և 2020 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2020 թվականի

դեկտեմբերի 19-ի որոշմամբ մեղադրյալ Վ.Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է և վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

4. 2020 թվականի դեկտեմբերի 22-ին Վ.Հարությունյանը հայտնաբերվել է և նույն թվականի դեկտեմբերի 23-ին վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով:

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ մեղադրյալ Վ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

6. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ Վ.Պետրոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի հունվարի 29-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

7. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 26-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Վաղարշակ Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) Արմեն Միխայելի Միմոնյանը Կրեմլիանալով, որ իր ծանոթ Վաղարշակ Յուրիկի Հարությունյանը գրադվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ իր անձնական օգուսգործման համար, առանց իրացնելու նպատակի ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու և պահելու ուղղակի դիտարկողությամբ, 2020 թվականի հուլիսի 16-ին ժամը 16:00-ի սահմաններում, նախնական համաձայնության գալով վերջինիս հետ, Երևան քաղաքի Անդրանիկի փողոցում գործող «Կայգեր» սուպերմարկետի մուտակայքում հանդիպել է Վ.Հարությունյանին, որի ընթացքում վերջինս, հյուրասիրելու եղանակով, Ա.Միմոնյանին իրացրել է զգալի չափերով՝ 0.067 գրամ քաշով «Հերոին» արեսակի թմրամիջոց (...)»³¹²:

³¹² Տե՛ս նյութեր, թերթ 10:

9. Դեպքի վայրի գննության մասին՝ 2020 թվականի հուլիսի 16-ի արձանագրության համաձայն՝ գննության մասնակից Ա.Սիմոնյանը 36 QX 135 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի գննության ընթացքում վարորդի նստատեղի դիմացի՝ դեկի ներքևի հատվածի դարակից ինքնակամ ներկայացրել է երկու ներարկիչներ, մեկ հատ փայլաթիթեղի փաթեթ և հայտարարել, որ դրա մեջ Վաղոյից ձեռք բերված հերոին տեսակի թմրամիջոցի կեսն է³¹³:

10. Արմեն Սիմոնյանը կասկածյալի դատավարական կարգավիճակում տված իր ցուցմունքում հայտնել է. «(...) 2020 թվականի հուլիսի 16-ին ժամը 16:00-ի սահմաններում ես գրնվում էի Լաֆֆու փողոցում, որտեղ ինձ բռնեցին ոստիկաններ և բերման ենթարկեցին ոստիկանության Մայաթիայի բաժին: Անձնական խուզարկությանը իմ մոտից հայրնաբերեցին «Հերոին» տեսակի թմրամիջոց: Եշեմ, որ այն ձեռք էի բերել ինձ բռնելուց մոտ 15 րոպե առաջ ՀԱ թաղամասում գրնվող Կայգեր սուպերմարկետի մոտից իմ ծանոթ Վաղոյի մոտից, ինչի դիմաց չեմ վճարել գումար: Եշեմ, որ Վաղոյին ես զանգահարել եմ այսօր, իմ՝ 094-48-24-74 հեռախոսահամարից նրա՝ 098-92-11-82 հեռախոսահամարին: Զանգահարել եմ թմրանյութը նրանից վերցնելուց մոտ 10-15 րոպե առաջ և տեղեկանալով, որ նա «Կայգեր» սուպերմարկետի մոտ է և հարցնելով տեղեկացա, որ նրա մոտ թմրամիջոց կա ու ինձ կրա, գնացի այնտեղ, որտեղ էլ վերցրել եմ թմրամիջոցը՝ իմ անձնական օգրագործման համար:

(...)

Իմ իմացած տվյալներով Վաղոն բնակվում է ՀԱ Բ-2 թաղամասում «Նեպրոն» համայնքի մոտակայքում, կոնկրետ տեղը չգիտեմ: Վաղոն մոտ 35-40 տարեկան է, ցածրահասակ, սև մաշկով, ճաղատ: Այսօր կիսատարաբարով էր, հողաթափերով, նրան տեսնելու դեպքում միանշանակ կճանաչեմ:

(...)

Ինձ պարկանող, սակայն կոշտ անվամբ հաշվառված Օսյել Աստրա մակնիշի 36 QX 135 հ/հ ավտոմեքենայում գրնվող և իմ կողմից ներկայացված ներարկիչներն ու հերոին տեսակի թմրամիջոցը ձեռք եմ բերել իմ մոտից անձնական խուզարկությանը հայրնաբերված թմրամիջոցի հետ միասին՝ նույն ժամանակահատվածում, նույն անձից, ուղղակի մի մասը դրեցի ավտոմեքենայի դարակում, իսկ մի մասը պահեցի գրպանում՝ իմ անձնական օգրագործման համար (...)»³¹⁴:

11. Փորձագետի թիվ 467Բ-20 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված՝ ընդհանուր 0.067 գրամ քաշով զանգվածը հանդիսանում է «հերոին» տեսակի թմրամիջոց³¹⁵:

12. Անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին 2020 թվականի սեպտեմբերի 30-ի արձանագրությամբ մեղադրյալ Ա.Սիմոնյանը նշել է. «(...) Ինձ ճանաչման ներկայացված լուսանկարներից ես ճանաչեցի ձախից աջ հերթականությամբ 2-րդ տեղում փակցված լուսանկարում պարկերված անձին:

³¹³ Տես նյութեր, թերթեր 47-50:

³¹⁴ Տես նյութեր, թերթեր 24-26:

³¹⁵ Տես նյութեր, թերթ 55:

Դա Վաղոն է, ում ճանաչում եմ Բանագրադեշից. ժամանակին տաքսի էր վարում և այդպեղ էլ ծանոթացել ենք: 2020 թվականի հուլիսի 16-ին ժամը 16:00-ի սահմաններում նախապես պայմանավորվածության համաձայն ես և Վաղոն Երևան քաղաքի Աղբյուրակի փողոցում գրնավող «Վայզեր» սուպերմարկետի մոտ հանդիպեցինք և իմ ինտրանքով Վաղոն ինձ առանց որևէ գումար, հյուրասիրեց իր մոտ եղած թմրամիջոցը, որը «Հերոին» տեսակի էր և ես այն պահեցի իմ մեքենայի սրահում՝ իմ հետագա օգրագործման համար, ինչն էլ նույն օրը հայրնասրերվեց Մայրթայի ոստիկանության բաժնում՝ մեքենայի գնության ժամանակ: Հաստատապես պնդում եմ, որ լուսանկարում եղած անձը Վաղոն է (...)³¹⁶:

13. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) Նախաքննական մարմնի կողմից չեն ներկայացվել բավարար փաստական փյախներ, որոնք ուղղակիորեն կմատչանան Վաղարշակ Հարությունյանի առնչությունն իրեն վերագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքին: Ի հիմնավորումն Վաղարշակ Հարությունյանի առնչությանը իրեն մեղաագրվող ենթադրյալ հանցավոր արարքին, նախաքննական մարմինը վկայակոչել է Արմեն Սիմոնյանի ցուցմունքը, անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունը, դեպքի վայրի գնության արձանագրությունը, համաձայն որի Ա.Սիմոնյանի ավտոմեքենայի սրահից հայրնասրերվել է «Հերոին» տեսակի թմրամիջոցը, ինչպես նաև փորձագետի թիվ 467Բ-20 եզրակացությունը: Ապացուցները, որոնք դրվել են Վաղարշակ Հարությունյանի մեղադրանքի հիմքում, չեն կարող դիմել որպես բավարար փաստական փյախ Վաղարշակ Հարությունյանին մեղաագրված ենթադրյալ հանցանքում հիմնավոր կասկածի շեղը հաղթահարված հանարելու համար, առավել ևս այն պարագայում, երբ վարույթն իրականացնող մարմինը ենթադրյալ հանցանքը Վաղարշակ Հարությունյանի կողմից կատարած լինելու մասին վկայող որևէ այլ ապացուցողական նշանակություն ունեցող փյախ դատարան չի ներկայացրել: Ինչ վերաբերում է դեպքի վայրի գնության արձանագրությանը, համաձայն որի Ա.Սիմոնյանի ավտոմեքենայի սրահից հայրնասրերվել է «Հերոին» տեսակի թմրամիջոցը, սպա այդպիսիք Վաղարշակ Հարությունյանի կողմից ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու մեջ հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու փաստական փյախ ևս չի պարունակում: Դատարանն արձանագրում է, որ Վաղարշակ Հարությունյանին մեղաագրված արարքի փաստական նկարագրությունն ակնհայտորեն չի վկայում վերջինիս արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը:

(...)

Վերոգրյալի հիման վրա, դատարանը՝ հիմնավոր կասկածի առկայությունը արուգելիս, չկանխորոշելով մեղքի հարցը, իրավական գնահատական չտալով

³¹⁶ Տե՛ս նյութեր, թերթեր 22-23:

Վաղարշակ Հարությունյանի մեղավորությունը կամ անմեղությունը, չփաստելով վերջինիս մեղասագրվող արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը, գրնում է, որ նախաքննական մարմնի կողմից ներկայացված փաստական փյույաների համակցությունը, ողջամորթեն բավարար չէ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ արարքին մեղադրյալի առնչությունը հիմնավորելու համար: Այսպիսով, նկատի ունենալով կալանավորման պայմանի՝ ենթադրյալ հանցավոր արարքին Վաղարշակ Հարությունյանի առնչությունը վկայող փաստական փյույաների բացակայությունը, դատարանը չի անդրադարձնում կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկմանը (...)³¹⁷:

14. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) Վարույթն իրականացնող մարմինն առաջին արյանի դատարանն չի ներկայացրել մեղադրյալ Վաղարշակ Հարությունյանի կարարած վերը նշված ենթադրյալ գործողության վերաբերյալ տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կամ գոնե անուղղակիորեն կմարնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը: Փոխարենը վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվել է Արմեն Միմոնյանի ցուցմունքը, անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունը, դեպքի վայրի զննության արձանագրությունը, համաձայն որի Ա.Միմոնյանի ավտոմեքենայի արահից հայտնաբերվել է «Հերոին» տեսակի թմրամիջոցը, ինչպես նաև փորձագետի թիվ 467Բ-20 եզրակացությունը, որոնցից վերջինների կապակցությամբ առաջին արյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման, որ այդպիսիք Վաղարշակ Հարությունյանի կողմից ենթադրյալ հանցավոր արարքը կարարելու մեջ հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու փաստական փյույան չեն պարունակում: Ինչ վերաբերում է Արմեն Միմոնյանի ցուցմունքի, ինչպես նաև անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին արձանագրության բովանդակությանը, ապա վերաքննիչ դատարանը գրնում է, որ դրանք միանշանակ և բավարար չեն հիմնավորելու այն կասկածը, որ մեղադրյալ Վաղարշակ Հարությունյանը կարարել է իրավախախտում և առնչություն ունի դեպքին: Այսպիսով, վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելիս Առաջին արյանի դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ ներկայացված նյութերում բացակայում է գեթ մեկ փաստական փյույան վերագրվող հանցագործությանը մեղադրյալ Վաղարշակ Հարությունյանի առնչության վերաբերյալ: Վերաքննիչ դատարանն արձանագրում է նաև, որ առաջին արյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման, որ մեղադրյալ Վաղարշակ Հարությունյանի կողմից հանցագործություն կարարած լինելու հիմնավոր կասկածի բացակայության պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է, և Վաղարշակ Հարությունյանի նկատմամբ կալանքը որպես

³¹⁷ Տե՛ս նյութեր, թերթ 77:

խախտանման միջոց չի կարող կիրառվել: Միաժամանակ, վերաքննիչ դատարանը փաստում է, որ մեղադրյալ Վաղարշակ Հարությունյանի նկատմամբ որպես խախտանման միջոց կալանավորման հարցը կրկնակի քննության առնելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելիս Առաջին աստիճանի դատարանի կողմից քրեադատավարական նորմերի խախտումներ, որոնք ազդել կամ կարող էին ազդել ճիշտ դատական ակտ կայացնելու վրա, թույլ չեն տրվել (...)»³¹⁸:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

15. Բողոքաբերը նշել է, որ դատական ակտ կայացնելիս ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, այսինքն՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Բողոք բերած անձի կարծիքով, ստորադաս դատարանները հանգելով հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված փաստական հանգամանքները և ապացույցները չեն կարող հիմք հանդիսանալ հաստատված համարելու Վ.Հարությունյանի առնչությունն իրեն մեղաագրվող արարքին, կատարել են սխալ եզրահանգում՝ չգնահատելով վերջինիս առնչակցությունը հավաստող այնպիսի ապացույցներ, ինչպիսիք են՝ Արմեն Միխայելի Միմոնյանին անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրությունը, դեպքի վայրի գննություն կատարելու մասին արձանագրությունը և դատաքիմիական փորձաքննության թիվ 467 Ք-20 եզրակացությունը:

Գործի փաստական հանգամանքները, ապացույցները համադրելով Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների հետ, բողոքաբերը հանգել է այն եզրահանգման, որ վարույթն իրականացնող մարմինը ներկայացրել է բավարար ապացույցներ և փաստական տվյալներ, որոնք անհրաժեշտ են հիմնավոր կասկածի, այն է՝ մեղադրյալի առնչությունը կատարված դեպքին հաստատված համարելու համար: Բողոքաբերի կարծիքով ստորադաս դատարանների կողմից անտեսվել և պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացել, այն փաստական հանգամանքները, որ՝

- դեպքի վայրի գննության մասին արձանագրությամբ Արմեն Միմոնյանը բացահայտել է թմրամիջոցի ձեռք բերման աղբյուրը՝ հայտարարելով, որ այն «Վաղոյից» ձեռք բերած թմրամիջոցի մի մասն է,

- նախաքննության ընթացքում Արմեն Միմոնյանը կասկածյալի դատավարական կարգավիճակում պնդել է, որ թմրամիջոցը ձեռք է բերել

³¹⁸ Տե՛ս նյութեր, թերթ 147-148:

Վաղինակից, միաժամանակ, հայտնելով նրան անհատականացնող տվյալներ, այդ թվում՝ տալով նրա արտաքին տեսքի նկարագրությունը,

- անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրությամբ Արմեն Սիմոնյանը մատնացույց է արել Վաղինակ Հարությունյանի լուսանկարը՝ հայտնելով որ հենց նշված անձն է իրեն հյուրասիրել «հերոին» տեսակի թմրամիջոցը:

Անփոփելով բողոքում բերված դատողությունները, բողոքաբերը նշել է, որ դատարանների կողմից սխալ է մեկնաբանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը, որն ազդել է գործի ելքի վրա, այն է՝ կայացվել են չհիմնավորված դատական ակտեր, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքը, նույն օրենսգրքի 135-137-րդ հոդվածներով նախատեսված պահանջները, ինչի արդյունքում Վ.Հարությունյանի նկատմամբ անհիմն կերպով չի կիրառվել խափանման միջոց կալանավորումը:

15.1. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ու փոփոխել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2021 թվականի հունվարի 29-ի որոշումը՝ բավարարելով մեղադրյալ Վաղարշակ Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կրկնակի քննության առնելու մասին քննիչի միջնորդությունը և մեղադրյալ Վաղարշակ Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը՝ երկու ամիս ժամանակով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ներկայացված նյութերը բավարար չեն Վաղարշակ Հարությունյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար:

17. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...):»

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր*

որ նույն ազատության և անձնական անձեռնախնայության իրավունք: Ոչ որի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...):

18. Կալանավորման պայմաններից մեկի՝ «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» առկայությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է, ի թիվս այլնի, հետևյալ դիրքորոշումները՝

- հանցանք կատարած լինելու կասկածի՝ ողջամտորեն հիմնավորված լինելու պահանջը կամայական ձերբակալման և կալանավորման դեմ երաշխիքի կարևոր մասն է կազմում³¹⁹,

- «հիմնավոր կասկած» եզրույթը ենթադրում է փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք հնարավորություն կտան անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինե՞ր հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում³²⁰,

- կալանքի հիմնավորվածության կարևոր տարրերից են կասկածի արժանահավատությունն ու բարեխղճությունը³²¹: Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանը փաստել է, որ միայն բարեխղճության վրա հիմնված կասկածը չի կարող բավարար համարվել³²²:

19. Հիմք ընդունելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած վերոգրյալ առանձին դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» կապակցությամբ *Վահրամ Գևորգյանի* գործով փաստել է. «(...) Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը (...):

³¹⁹ Տե՛ս *Gusinskiy v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2004 թվականի մայիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 70276/01, կետ 53:

³²⁰ Տե՛ս *K. F. v. Germany* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 144/1996/765/962, կետ 57:

³²¹ Տե՛ս *Murray v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 14310/88, կետ 61:

³²² Տե՛ս *Gusinskiy v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2004 թվականի մայիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 70276/01, կետ 53:

(...) [Յ]ուրաքանչյուր դեպքում [հանցանք կատարած լինելու կասկածը] պետք է լինի ողջամիտ:

(...) «[Հ]անցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար սպացույցներ, ինչն ավելի բարձր սպացուցողական չափանիշ է: (...) [Վ]ասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կասր հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կայանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնաւար անձը քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ սպացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա սունչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:

(...) [Այսպիսով] Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար սպացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, (...): Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պարձառարանված»³²³:

Ջարգացնելով վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Հարություն Խաչատրյանի գործով որոշման շրջանակներում ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Հ]իմնավոր կասկածը պետք է սպահովի անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի հիմնավորված և օրինաչափ սահմանափակումը, իսկ դատական վերահսկողությունը լինի երաշխիք այդ իրավունքի անհիմն սահմանափակումները կանխելու համար:

Այսինքն՝ մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համասպարասիան որոշում

³²³ Տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշումը, կետեր 19-23:

կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանում են արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր: Եթե մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնա այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբերյալ, ապա կհասիրվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառնությունների փարանջատման սկզբունքը, իսկ մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի: Այլ կերպ՝ մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան:

(...) Վճռաբեկ դատարանը գրնում է, որ հիմնավոր կասկածի հարցը քննարկելիս դատարանը, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտավորությունից, պետք է քննարկման առարկա դարձնի երկու հիմնական փոխկապված հարցեր: Առաջինն առկա՞ են արդյոք կասկածը հիմնավորող տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կնստանան շեն անձի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, երկրորդ՝ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, առերևույթ համընկնում է քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմի հարկանիշներին»³²⁴:

Վերահաստատելով և զարգացնելով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն *Էդգար Եղիազարյանի* գործով որոշմամբ արձանագրել է, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի անձի ազատության իրավունքի սահմանափակման աներկբա անհրաժեշտությունը՝ ավելի բարձր նշանակության բարիքի, այն է՝ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից՝ ապահովելով հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը, անձի ազատության սահմանափակման հիմնավորվածությունը: Մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար հիմնավոր կասկածի առկայությունն ունի հիմնարար նշանակություն, քանզի դրա բացակայության պայմաններում անձի ազատության ցանկացած սահմանափակում կհամարվի ի սկզբանե ապօրինի: Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա

³²⁴ Տե՛ս *Հարություն Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԳՎ2/0009/06/11 որոշումը, կետեր 13 և 15:

վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ³²⁵:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, ընդգծել է հետևյալ հանգամանքները՝

- հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումն այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում) է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից³²⁶, ուստի հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ, դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին՝ այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման

³²⁵ Տե՛ս *Էդգար Եղիազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը, կետ 14:

³²⁶ Տե՛ս *mutatis mutandis*, *Ներսես Միսակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴԴ/0003/11/08 որոշումը:

մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել³²⁷, կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն³²⁸:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմնի կողմից Վաղարշակ Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով³²⁹,

- 36 QX 135 հաշվառման համարանիշի «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայի գննության մասնակից Ա.Սիմոնյանն ինքնակամ ներկայացրել է փայլաթիթեղի փաթեթ և հայտարարել, որ դրա մեջ առկա է «հերոին» տեսակի թմրամիջոց և այն ձեռք է բերել «Վաղոյից»³³⁰,

- Ա.Սիմոնյանը կասկածյալի դատավարական կարգավիճակում ցուցմունք է տվել այն մասին, որ 2020 թվականի հուլիսի 16-ին ժամը 16:00-ի սահմաններում, Բաֆֆու փողոցից ոստիկաններն իրեն բերման են ենթարկել ոստիկանության Մալաթիայի բաժին և անձնական խուզարկությամբ իր մոտից հայտնաբերել են «հերոին» տեսակի թմրամիջոց, որը ձեռք էր բերել բերման ենթարկվելուց մոտ 15 րոպե առաջ ՀԱ թաղամասում գտնվող «Կայգեր» սուպերմարկետի մոտից՝ իր ծանոթ Վաղոյից, ինչի դիմաց գումար չի վճարել: Ինքը Վաղոյին զանգահարել է նույն օրը, իր՝ 094-48-24-74 հեռախոսահամարից վերջինիս՝ 098-92-11-82 հեռախոսահամարին: Ջանգահարել է թմրամիջոցը նրանից վերցնելուց մոտ 10-15 րոպե առաջ և տեղեկանալով, որ նա «Կայգեր» սուպերմարկետի մոտ է, մտքը թմրամիջոց կա ու իրեն կտա, զնացել է այնտեղ և վերցրել թմրամիջոցը՝ իր անձնական օգտագործման համար:

Ա.Սիմոնյանն իր ցուցմունքում հայտնել է նաև, որ «Օպել Աստրա» մակնիշի 36 QX 135 հաշվառման համարանիշով ավտոմեքենայում գտնվող և իր կողմից ինքնակամ ներկայացված «հերոին» տեսակի թմրամիջոցը նույնպես ձեռք է բերել Վաղոյից: Իր իմացած տվյալներով Վաղոն բնակվում է ՀԱ Բ-2 թաղամասում «Նեպտուն» համալիրի մոտակայքում: Վերջինս մոտ 35-40 տարեկան է, ցածրահասակ, սև մաշկով և ճաղատ: Նրան տեսնելու դեպքում միանշանակ կճանաչի³³¹,

- Փորձագետի թիվ 467Բ-20 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված՝ ընդհանուր 0.067 գրամ քաշով զանգվածը հանդիսանում է «հերոին» տեսակի թմրամիջոց³³²,

³²⁷ Այդ առումով մանրամասն տե՛ս, օրինակ, *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, զանգատ թիվ 23978/06:

³²⁸ Տե՛ս *Էդգար Եղիազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը, կետ 15:

³²⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

³³⁰ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

³³¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

³³² Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

- Անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին արձանագրության համաձայն՝ մեղադրյալ Ա.Սիմոնյանը հայտնել է, որ ճանաչում է ձախից այց հերթականությամբ 2-րդ տեղում փակցված լուսանկարում պատկերված անձին, որը Վաղոն է, ում ճանաչում է Բանգլադեշից: 2020 թվականի հուլիսի 16-ին ժամը 16:00-ի սահմաններում, նախապես պայմանավորվածության համաձայն, ինքը և Վաղոն Երևան քաղաքի Անդրանիկի փողոցում գտնվող «Կայգեր» սուպերմարկետի մոտ հանդիպել են և իր խնդրանքով Վաղոն առանց որևէ գումարի, իրեն հյուրասիրել է իր մոտ եղած թմրամիջոցը, որը «հերոին» տեսակի էր և ինքն այն պահել է իր մեքենայի սրահում՝ հետագա օգտագործման համար, ինչն էլ նույն օրը հայտնաբերվել է Մալաթիայի ոստիկանության բաժնում՝ մեքենայի զննության ժամանակ³³³,

- Առաջին ատյանի դատարանը գտել է, որ նախաքննական մարմնի կողմից չեն ներկայացվել բավարար փաստական տվյալներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն Վ.Հարությունյանի առնչությունն իրեն վերագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքին: Անդրադառնալով նախաքննության մարմնի՝ կալանավորման միջնորդությունը հիմնավորող փաստաթղթերին՝ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ Վ.Հարությունյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցները չեն կարող դիտվել որպես բավարար փաստական տվյալ վերջինիս մեղսագրված ենթադրյալ հանցանքում հիմնավոր կասկածի շեմը հաղթահարված համարելու համար: Անդրադարձ կատարելով դեպքի վայրի զննության արձանագրությանը, համաձայն որի Ա.Սիմոնյանի ավտոմեքենայի սրահից հայտնաբերվել է «հերոին» տեսակի թմրամիջոցը, Առաջին ատյանի դատարանը նշել է, որ դրանում Վաղարշակ Հարությունյանի կողմից ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու մեջ հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու փաստական տվյալ ևս չի պարունակվում³³⁴,

- Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմինն առաջին ատյանի դատարան չի ներկայացրել մեղադրյալ Վաղարշակ Հարությունյանի կատարած ենթադրյալ գործողության վերաբերյալ տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կամ գոնե անուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելիս Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ ներկայացված նյութերում բացակայում է գեթ մեկ փաստական տվյալ՝ վերագրվող հանցագործությանը մեղադրյալ Վ.Հարությունյանի առնչության վերաբերյալ և նշել, որ մեղադրյալ Վաղարշակ Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորման հարցը կրկնակի քննության առնելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության

³³³ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

³³⁴ Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

առնելիս Առաջին ատյանի դատարանի կողմից քրեադատավարական նորմերի խախտումներ, որոնք ազդել կամ կարող էին ազդել ճիշտ դատական ակտ կայացնելու վրա, թույլ չեն տրվել³³⁵:

21. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 17-19-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը՝ Վ.Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելիս, այնպես էլ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս, պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել մի շարք առանցքային հանգամանքներ:

Նախևառաջ, հարկ է նկատել, որ Առաջին ատյանի դատարանը գտնելով, որ նախաքննական մարմնի կողմից չեն ներկայացվել բավարար փաստական տվյալներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն Վ.Հարությունյանի առնչությունն իրեն վերագրվող արարքի կատարմանը, իսկ Վերաքննիչ դատարանի դիտարկմամբ՝ տվյալներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, անտեսել են գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարանին ներկայացված տվյալները: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանն ու Վերաքննիչ դատարանը, դատական ակտեր կայացնելիս և Վ.Հարությունյանի առնչությունն իրեն վերագրվող արարքի կատարմանը գնահատելիս, առհասարակ ուշադրության չեն արժանացրել այն հանգամանքը, որ միջնորդությանը կից քննիչի կողմից ներկայացվել են՝ Ա.Սիմոնյանի՝ որպես կասկածյալ տված ցուցմունքը, դեպքի վայրի գննության և անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունները, որտեղ Ա.Սիմոնյանը նկարագրելով Վ.Հարությունյանին՝ ուղղակիորեն մատնանշել է վերջինիս՝ որպես ենթադրյալ հանցանքը կատարողին³³⁶: Ա.Սիմոնյանը հայտնել է, որ իր ծանոթ Վ.Հարությունյանից ձեռք է բերել «հերոին» տեսակի թմրամիջոց, որպիսի հանգամանքը ևս հաստատվել է քննիչի կողմից միջնորդությանը կից ներկայացված՝ փորձագետի՝ թիվ 467Բ-20 եզրակացությամբ³³⁷:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի համաձայնությունն Առաջին ատյանի դատարանի այն դատողության հետ, որ ներկայացված նյութերում բացակայում է գեթ մեկ փաստական տվյալ՝ վերագրվող հանցագործությանը մեղադրյալ Վ.Հարությունյանի առնչության վերաբերյալ, անհիմն է և չի բխում միջնորդությանը կից ներկայացված տվյալների գնահատումից: Ավելին, հարկ է ընդգծել, որ սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում ստորադաս դատարանների կողմից տրված մեկնաբանությունները հակասում են սույն որոշման 18-19-րդ կետերում մեջբերված՝ ենթադրյալ հանցանքի

³³⁵ Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

³³⁶ Տե՛ս սույն որոշման 9-րդ, 10-րդ և 12-րդ կետերը:

³³⁷ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

կատարման «հիմնավոր կասկածի» գնահատման չափանիշին՝ դուրս գտնվելով այդ չափանիշի հաղթահարման ողջամիտ հնարավորության ընդհանուր տրամաբանությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննիչի կողմից միջնորդությանը կից ներկայացված տվյալների համակցությունը ողջամտորեն բավարար է գալու այն եզրահանգման, որ մեղադրյալ Վ.Հարությունյանն ուղղակիորեն առնչություն ունի իրեն մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի կատարմանը: Այլ կերպ՝ պետք է փաստել, որ առկա է մեղադրյալ Վ.Հարությունյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք կատարելու մասին հիմնավոր կասկածը:

22. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ներկայացված նյութերը բավարար չեն Վաղարշակ Հարությունյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար, հիմնավոր չեն:

23. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ և 135-րդ հոդվածների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 29-ի որոշումը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանը, մի կողմից՝ սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով, մյուս կողմից՝ ապահովելով անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները, դատական վերանայման սահմանների վերընթաց նվազման սկզբունքի հաշվառմամբ գտնում է, որ գործը պետք է ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ կալանավորման հիմքերի մասով նոր քննության³³⁸:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ,

³³⁸ Տե՛ս Հրայր Հովսեփյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը, կետ 29:

403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Վաղարշակ Յուրիկի Հարությունյանի վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հունվարի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան՝ կալանավորման հիմքերի մասով նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

21.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0743/06/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի մայիսի 14-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանի՝ նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Միաժամանակ մերժվել է կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպանների միջնորդությունը:

Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի, Հ.Խուդոյանի և Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշումը բեկանել է, մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը վերացրել է և նրան ազատ արձակել:

Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալումյանը, Ռ.Սահակյանը, Ա.Օրբելյանը և Հ.Խուդոյանը, ինչպես նաև տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Վ.Գրիգորյանը:

2. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումներով ՀՀ գլխավոր դատախազի և պաշտպանների վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ, իսկ տուժողների իրավահաջորդների ներկայացուցչի բողոքը թողնվել է առանց քննության:

3. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն, իսկ պաշտպաններ Հ.Ալումյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի վճռաբեկ բողոքը՝ մերժվել: Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ պաշտպաններ Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի, Հ.Խուդոյանի և Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքները մերժել է, մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշումը՝ թողել անփոփոխ, Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված կալանավորման 2 (երկու) ամիս ժամկետին հաշվակցելով արգելանքի տակ գտնվելու ժամկետը:

4. Վերոնշյալ որոշման դեմ պաշտպաններ Ռ.Սահակյանի, Հ.Ալումյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 22-ի որոշմամբ մերժվել է:

5. Ռ.Քոչարյանի դիմումի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՌ-1459 որոշմամբ քննության է առել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

6. Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանի՝ նոր հանգամանքի հիմքով բերված բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ հարուցել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ, և վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի մարտի 22-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

7. Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

8. Վճռաբեկ դատարանը 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ արձանագրել է. «Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ և 358-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիմք են ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ նկատի ունենալով, որ կայանաավորման պայմանների (բացառությամբ անձեռնախցիկիության հարցի) ու հիմքերի մասով Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը Վերաքննիչ դատարանի կողմից դատական ստուգման չի ենթարկվել՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ստորադաս դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վերոգրյալի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Ռ.Քոչարյանի պաշտպանների՝ նշված որոշման 10.1-10.3-րդ կետերում բարձրացրած փաստարկներին տվյալ դեպքում հնարավոր չէ անդրադառնալ մինչև սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով նշված որոշմամբ արձանագրված խախտումները, պետք է գնահատման ենթարկի ՀՀ պաշտոնաթող նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն առերևույթ կատարված լինելու հիմնավոր կասկածը, և դրա առկայությունը հավաստելու պարագայում միայն սույն որոշման 13-19.1-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնա Ռ.Քոչարյանի անձեռնախցիկիության հարցին»³³⁹:

9. Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշմամբ արձանագրել է. «1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասը համապարասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելու լիազորությունը տվյալ հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելն է:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ՝ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական

³³⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ռոբերտ Քոչարյանի գործով 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշման 25-26-րդ կետերը:

սկզբը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով»:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

10. Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալունյանը որպես նոր հանգամանք վկայակոչելով Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՈ-1459 որոշումը՝ խնդրել է նոր հանգամանքի հիմքով հարուցել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի և 2018 թվականի դեկտեմբերի 7-ի, Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի և 2019 թվականի մարտի 22-ի որոշումների վերանայման վարույթ ու վերանայել նշված դատական ակտերը: Բողոքի հեղինակը խնդրել է վերանայման արդյունքում Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքը մերժել, իսկ պաշտպանների վճռաբեկ բողոքը բավարարել, որոշումը լրացուցիչ պատճառաբանել՝ անդրադառնալով պաշտպանների վճռաբեկ բողոքի հիմքերին ու հիմնավորումներին՝ որոշման եզրափակիչ մասը թողնելով անփոփոխ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՈ-1459 որոշումը նոր հանգամանք է մեղադրյալ Ռ.Քոչարյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի դատական ակտը վերանայելու համար:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածի համաձայն՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական սկզբը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեն

(...)

2) այն անձինք, ովքեր օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են այդ իրավունքը «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն կամ նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կամ 4-րդ կետերի ուժով գրկված են եղել Սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «1. Նոր հանգամանքների հետևանքով դատական սկզբերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը փվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է

Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրափրավական բովանդակությունը գրել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չհուփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատրանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա: (...)»:

13. Սահմանադրական դատարանը, 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշման շրջանակներում անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանի լիազորություններին, արձանագրել է. «(...) [Տարանջատելով Վճռաբեկ դատարանի լիազորությունները գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքերում, ինչպես նաև սահմանափակելով Վճռաբեկ դատարանի լիազորությունները գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում **նոր դատական ակտեր ընդունելու պահանջով**, օրենսդիրը հեղափոխել է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ **դատավարական շրջապարույրը կանխելու, ընդամենը՝ այդ հարցերով վճռաբեկ արյանում վերջնական իրավական դիրքորոշում ձևավորելու** և այն ամրագրելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ապահովելու նպատակներ:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ այս կարգավորումն ունի կանխարգելիչ բնույթ և ուղղված է **վերընթաց վերանայման սահմանափակման ակտերի** րեասանկյունից գործով ըստ էության վերջնական որոշում կայացնելու հիմնական գործառնության երաշխավորված ապահովմանը, ինչը հնարավոր չի լինի իրականացնել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի անվերջ վերանայման դեպքում:

Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի անվերջ վերանայման իրավական հնարավորությունը, որը կարող էր առկա լինել Վճռաբեկ դատարանի առավել ընդգրկուն լիազորությունների օրենսդրական ամրագրման դեպքում, կարող էր էականորեն ազդել ինչպես արտրադաս դատարաններում, այնպես էլ նույն վճռաբեկ արյանում փյայլ գործի ըստ էության քննության վրա՝ խաթարելով դրա արդյունավետությունը: Ավելին՝ Սահմանադրական դատարանը գրնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերն անսահմանափակ վերանայելու հնարավորությունն օրենսդրորեն չկանխելը կարող էր վրանագել արդարադատության բուն գործառնությունը, քանի որ անհնարին կլինեք կանխատեսել միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումների

իրական կամ հնարավոր ազդեցությունը գործի ըստ էության լուծման վրա, ուստի՝ վերջնաորոշումը կան դատաքննության րևողությունը պետք է անհարկի երկարաձգվեր, կան դատարանները միջանկյալ դատական ակտերի քննությանը պետք է հարկադրված լինեին անդրադառնալ գործով ըստ էության որոշում կայացնելուց հետո, ինչն անթույլատրելի կլիներ»³⁴⁰:

Մինևույն ժամանակ, նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է. «(...) [Օ]րենսդիրը րարանջարել է կարանքի ձևով անձնական ազատությունից զրկելու առնչությամբ մինչդատարանական վարույթի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգերը րարբեր դատական արյաններում: Եթե առաջին արյանի դատարանն ամբողջ ծավալով պետք է նախապես վերահսկի կարանավորման իրավաչափությունը՝ այդ հարցով կայացնելով սկզբնական որոշում, ապա վերաքննիչ և վճռաբեկ արյանների դատարանները պետք է հերազայում որոշեն արդեն դատական ակտի իրավաչափության հարցը՝ համապարասիան բողոքի առկայության դեպքում և այդ բողոքի առարկայի շրջանակներում»³⁴¹:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառոյթներին՝ Սահմանադրական դատարանը շեշտել է. «Որև դատարանի կողմից իրավունքի խախտումը փաստելը՝ առանց այն վերացնելու, նշանակում է չիրականացնել արդարադատություն, մինչդեռ, եթե դատարանը կոչված է վերանայելու արդարադատության դատարանների դատական ակտերը (իսկ Վճռաբեկ դատարանի համար այդ պահանջն ուղղակիորեն սահմանված է Սահմանադրության 171-րդ հողվածի 2-րդ մասում), ապա չի կարող չիրականացնել արդարադատություն, այսինքն, նաև չվերացնել հիմնական կամ այլ իրավունքների և ազատությունների խախտումները, հարկապես եթե արձանագրում է դրանք: Ակնհայտ է, որ որևէ նման օրենսդրական կառուցակարգ կամ դատական պրակտիկա հակասության մեջ կմրնեն Սահմանադրության 61-րդ հողվածի 1-ին մասի հետ, ընդ որում, նման դեպքերում երաշխավորված չեն լինի նաև արդար դատաքննության երաշխիքները»³⁴²:

14. Նախորդ կետում մեջբերված Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ նկատի ունենալով, որ Վճռաբեկ դատարանը 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի գործն ըստ էության չլուծող դատական ակտը բեկանել և գործն ուղարկել է նոր քննության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշումը նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշումը վերանայելու համար: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ենթակա է վերանայման

³⁴⁰ Տեն Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշման 4.1-րդ կետը:

³⁴¹ Տեն նույն որոշման 4.2-րդ կետը:

³⁴² Տեն նույն որոշման 4.4-րդ կետը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլխով սահմանված՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման կանոններով:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի իրավադրույթի կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ. «(...) *Իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ տարբերակիլ հայեցողություն դատական ակտն անսխալ թողնելու համար, այլ նորմարիվ պարտադրանք նման հնարավոր դեպքերում ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ: Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պարզաձև մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հարակետում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ սրտեղծելու խնդիրն է: (...) Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անսխալ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար սրժեքներին»³⁴³:*

16. Հաշվի առնելով, մի կողմից այն, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայելիս, անձի իրավունքի խախտումը փաստելով, որոշ դեպքերում այն կարող է արդար դատաքննության երաշխիքներին համահունչ վերականգնվել ոչ այլ կերպ, քան գործը նոր քննության ուղարկելու միջոցով, մյուս կողմից՝ անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառնության կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործման ապահովումը, Վճռաբեկ դատարանը Հրայր Հովսեփյանի գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ դիմել էր Սահմանադրական դատարան՝ նշելով, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտի իրավաչափությունը բացառապես վճռաբեկ բողոքի առարկայի և սահմանների շրջանակում ստուգելիս Վճռաբեկ դատարանը, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշմամբ վերոնշյալ քրեադատավարական նորմերի հետ անմիջականորեն փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության պայմաններում, առանց գործը նոր քննության ուղարկելու իրավասության, զրկված է վերջնական որոշում կայացնելու և իրավունքի խախտումը փաստելով այն վերացնելու հնարավորությունից:

Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՍԴԱՌ-110 որոշմամբ «Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական

³⁴³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴՌ-1099 որոշման 6-րդ կետը:

դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի և 415-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը» ընդունվել էր քննության, սակայն Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի թիվ ՍԴԱՈ-66 որոշմամբ՝ կարճվել:

16.1. Վճռաբեկ դատարանը, օրենքի կիրառման դատական պրակտիկայի միասնականության ապահովման սահմանադրական գործառույթի իրացման համատեքստում, *Հրայր Հովսեփյանի* գործով որոշմամբ փաստել է, որ թեև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը, որպես կանոն, պետք է ավարտվի Վճռաբեկ դատարանում՝ վերջնական որոշում կայացնելու միջոցով, սակայն որոշ դեպքերում, անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, ինչպես նաև Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող է ապահովվել միայն Վճռաբեկ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու արդյունքում: Այլ կերպ, այդ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից բացառապես գործը նոր քննության ուղարկելը կարող է լինել արդյունավետ միջոց՝ հետևողականորեն երաշխավորելու վերադասության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի անխախտելիությունը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որոշ դեպքերում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերով գործը նոր քննության ուղարկելու իրավասությունը կարող է լինել դատական վերանայման իրավունքի իրացման նախապայման և արդար դատաքննության իրավունքի (դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման) երաշխիք: Նման դեպքում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի իրավաչափությունը ստուգելիս, նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, պետք է կիրառելի լինեն գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերանայելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները³⁴⁴:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Վճռաբեկ դատարանը 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն, իսկ պաշտպաններ Հ.Ալումյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խոդոյանի վճռաբեկ բողոքը՝ մերժել: Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել

³⁴⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշման 27-րդ կետը, *mutatis mutandis* տե՛ս նաև Վճռաբեկ դատարանի՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշման 11-րդ կետը:

նույն դատարան՝ նոր քննության: Գործը նոր քննության ուղարկելու հիմքում դրվել է այն պատճառաբանությունը, որ Վերաքննիչ դատարանը, Հանրապետության նախկին նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը գնահատման չի ենթարկել, այլ քննարկման առարկա է դարձրել միայն Ռ.Քոչարյանի անձեռնմխելիության հարցը: Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ կալանավորման պայմանների (բացառությամբ անձեռնմխելիության հարցի) ու հիմքերի մասով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը Վերաքննիչ դատարանի կողմից դատական ստուգման չի ենթարկվել, գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության, քանի որ փաստացի գրկված է եղել այդ հարցի կապակցությամբ հիմնավորված հետևության հանգելու հնարավորությունից³⁴⁵,

- Վերաքննիչ դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ պաշտպաններ Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի, Հ.Խոսրոյանի և Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքները մերժել է, մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշումը՝ թողել անփոփոխ, Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված կալանավորման 2 (երկու) ամիս ժամկետին հաշվակցելով արգելանքի տակ գտնվելու ժամկետը³⁴⁶,

- Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 22-ի որոշմամբ վերոնշյալ որոշման դեմ պաշտպաններ Ռ.Սահակյանի, Հ.Ալումյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խոսրոյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է³⁴⁷:

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-16.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, ինչպես նաև Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող էր ապահովվել միայն Վճռաբեկ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու արդյունքում:

Հետևաբար մեղադրյալ Ռ.Քոչարյանի վերաբերյալ գործն ըստ էության չլուծող դատական ակտի իրավաչափությունը ստուգելիս, Վճռաբեկ դատարանը, սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով, չէր կարող կայացնել վերջնական որոշում և իրավունքի խախտումը փաստելով վերացնել այն՝ առանց գործը նոր քննության ուղարկելու:

³⁴⁵ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

³⁴⁶ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

³⁴⁷ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

19. Վերոշարադրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առկա են այնպիսի փաստեր, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով օրյեկտիվորեն անհնարին են դարձնում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի փոփոխումը: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշման՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման արդյունքում մեղադրյալ Ռոբերտ Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի կողմից նշված մյուս դատական ակտերի վերանայման հարցին:

20. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426¹-426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշման՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման արդյունքում մեղադրյալ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանի վճռաբեկ բողոքը մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *արտրագրություն*

Դատավորներ *արտրագրություններ*

Հարուկ կարծիք հայտնած դատավոր *Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ԵԴ/0743/06/18

Դատավոր Սերժիկ Ավետիսյան

2021 թվականի մայիսի 14-ին

ք.Երևանում

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշման նոր հանգամանքի հիմքով վերանայման արդյունքում մեղադրյալ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանի պաշտպան Հայկ Ալումյանի վճռաբեկ բողոքը մերժելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ նաև Վճռաբեկ դատարան) 2021 թվականի մայիսի 14-ի որոշման պատճառաբանական առանձին դրույթների և եզրակացության մասի վերաբերյալ.

Գործի դատավարական նախապատմությունը և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Միաժամանակ մերժվել է կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպանների միջնորդությունը:

2. Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Ռ.Մահակյանի, Ա.Օրբելյանի, Հ.Խուդոյանի և Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշումը բեկանել է, մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը վերացրել է և նրան ազատ արձակել:

Վերաքննիչ դատարանը 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ *արձանագրել է՝*

Դատարաններն իրավասու չեն և չեն կարող քննարկել կարգավիճակից բխող արարքների համար Նախագահին, այդ թվում՝ պաշտոնաթող, կալանավորելու հարցը, քանի դեռ նա սահմանված ընթացակարգերի պահպանմամբ գրկված չէ անձեռնմխելիությունից:

Պարտադիր չէ, որպեսզի Նախագահը գործի հստակ իր լիազորությունների շրջանակներում և դրանցից դուրս չգա, կարևորն այն է, որ վերջինի կատարած այդպիսի արարքը բխի իր՝ որպես Նախագահի կարգավիճակից և պայմանավորված լինի Նախագահին վերապահված լիազորությունների իրականացմամբ:

Նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելու օրենքով սահմանված հատուկ ընթացակարգի պահպանմամբ Ռոբերտ Քոչարյանը չի զրկվել անձեռնմխելիությունից, ուստի չի անդրադառնում կալանավորման պայմանների և հիմքերի առկայության կամ բացակայության հարցին և գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2018թ. հուլիսի 27-ի որոշումը պետք է բեկանել և Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնել:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալունյանը, Ռ.Սահակյանը, Ա.Օրբելյանը և Հ.Խուդոյանը, ինչպես նաև տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Վ.Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումներով ՀՀ գլխավոր դատախազի և պաշտպանների վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ, իսկ տուժողների իրավահաջորդների ներկայացուցչի բողոքը թողնվել է առանց քննության:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն, իսկ պաշտպաններ Հ.Ալունյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի վճռաբեկ բողոքը՝ մերժվել: Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանն *արձանագրել է*, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ նախկին նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը չի գնահատել, այլ քննարկման առարկա է դարձրել միայն նրա անձեռնմխելիության հարցը:

Նկատի ունենալով, որ կալանավորման պայմանների (բացառությամբ անձեռնմխելիության հարցի) ու հիմքերի մասով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը Վերաքննիչ դատարանի կողմից դատական ստուգման չի ենթարկվել՝ Վճռաբեկ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության, քանի որ փաստացի զրկված է եղել այդ հարցի կապակցությամբ հիմնավորված հետևության հանգեղու հնարավորությունից:

5. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշման պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի վերաբերյալ դատավոր Ս.Ավետիսյանը մնացել է *Հայրուկ կարծիքի*,

առաջարկելով ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի, մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալումյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի բողոքների վերաբերյալ վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համապատասխանությունը 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 56.1-րդ հոդվածի 2-րդ մասին և 57-րդ հոդվածին (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 140-րդ հոդվածի 2-րդ մասին և 141-րդ, ինչպես նաև 78-րդ, 79-րդ հոդվածներին):

6. Վերաքննիչ դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ պաշտպաններ Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի, Հ.Խուդոյանի և Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքները մերժել է, մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշումը՝ թողել անփոփոխ, Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված կալանավորման 2 (երկու) ամիս ժամկետին հաշվակցելով արգելանքի տակ գտնվելու ժամկետը:

7. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպաններ Ռ.Սահակյանի, Հ.Ալումյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 22-ի որոշմամբ մերժվել է:

Վճռաբեկ դատարանն *արձանագրել է*, որ գործի քննության այս փուլում՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորման հարցը քննելիս, բողոք բերած անձանց կողմից բարձրացված հարցերը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործի հարուցման իրավաչափության, այդ հոդվածով և նախկինում գործող ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի հատկանիշների նույնականության, ինչպես նաև այդ նորմերի՝ իրավական որոշակիության պահանջներին համապատասխանության վերաբերյալ, դուրս են դատական վերահսկողության սահմաններից: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից, ուստիև հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Հետևաբար, այս փուլում ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ և նույն օրենսգրքի նախկին խմբագրությամբ 300-րդ հոդվածների սահմանադրականության հարցով ՀՀ սահմանադրական

դատարանն դիմելու անհրաժեշտության վերաբերյալ բողոքաբերների փաստաթղթերը հիմնավոր չեն:

8. Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 22-ի որոշման պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի վերաբերյալ դատավոր Ս.Ավետիսյանը մնացել է *Հայրուկ կարծիքի*, առաջարկելով Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալունյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ՝ օրենքով սահմանված համապատասխան որոշում կայացնելու, այդ թվում՝ վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) դիմելու նպատակով:

9. Ռ.Քոչարյանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշմամբ քննության է առել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՌ-1459 որոշմամբ արձանագրվել է. *«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասը համապարասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում՝ նոր դատական ակտ կայացնելու լիազորությունը տվյալ հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելն է:*

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող դրույթը դիմողի նկարմամբ կիրառվել է այլ՝ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի՝ դիմողի նկարմամբ կայացված վերջնական դատական ակտը՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով»:

10. Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալունյանի՝ նոր հանգամանքի հիմքով բերված բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ հարուցել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ, և վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի մարտի 22-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

11. Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի մարտի 26-ի ՍԴՌ-1586 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը ճանաչվել է Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

12. Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 14-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշման նոր հանգամանքի հիմքով վերանայման արդյունքում, մեղադրյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի պաշտպան Հ.Ալունյանի վճռաբեկ բողոքը մերժվել է՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

13. Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 14-ի որոշման պատճառաբանական առանձին դրույթների և եզրակակիչ մասի վերաբերյալ մնացել են Հայրուկ կարծիքի:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

14. Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանը որպես նոր հանգամանք վկայակոչելով Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՈ-1459 որոշումը՝ խնդրել է նոր հանգամանքի հիմքով հարուցել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի և 2018 թվականի դեկտեմբերի 7-ի, Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի և 2019 թվականի մարտի 22-ի որոշումների վերանայման վարույթ ու վերանայել նշված դատական ակտերը:

Բողոքաբերը փաստարկել է, որ Վճռաբեկ դատարանը որոշում ընդունելիս պետք է ղեկավարվի նաև Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 16-ի ՄԴՈ-1453 որոշումով և անդրադառնա պաշտոնաթող նախագահի անձեռնմխելիության, կալանք ընտրելու անհրաժեշտությունը հիմնավորող վերաբերելի և բավարար փաստարկների, ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ և 2008 թվականին գործող 300-րդ հոդվածների հարաբերակցության հարցերին:

Բողոքի հեղինակը խնդրել է վերանայման արդյունքում կայացնել վերջնական որոշում՝ նոր դատական ակտ, Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքը մերժել, իսկ պաշտպանների վճռաբեկ բողոքը բավարարել, որոշումը լրացուցիչ պատճառաբանել՝ անդրադառնալով պաշտպանների վճռաբեկ բողոքի հիմքերին ու հիմնավորումներին՝ որոշման եզրակակիչ մասը թողնելով անփոփոխ:

Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումը և եզրահանգումը.

15. Վճռաբեկ դատարանը գտել է, որ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՈ-1459 որոշումը նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշումը վերանայելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նշված որոշման նոր հանգամանքի հիմքով վերանայման արդյունքում, Ռոբերտ Քոչարյանի պաշտպան Հայկ Ալումյանի վճռաբեկ բողոքը մերժել է՝ հիմք ընդունելով հետևյալ իրավական դիրքորոշումները:

15.1. Վճռաբեկ դատարանը Հրայր Հովսեփյանի գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ դիմել էր Սահմանադրական դատարան՝ նշելով, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտի իրավաչափությունը բացառապես վճռաբեկ բողոքի առարկայի և սահմանների շրջանակում ստուգելիս Վճռաբեկ դատարանը, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի

թիվ ՍԴՈ-1459 որոշմամբ վերոնշյալ քրեադատավարական նորմերի հետ անմիջականորեն փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության պայմաններում, առանց գործը նոր քննության ուղարկելու իրավասության, գրված է վերջնական որոշում կայացնելու և իրավունքի խախտումը փաստելով այն վերացնելու հնարավորությունից:

Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՍԴԱՈ-110 որոշմամբ «Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի և 415-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը» ընդունվել էր քննության, սակայն Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի թիվ ՍԴԱՈ-66 որոշմամբ՝ կարճվել:

15.2. Վճռաբեկ դատարանը *Հրայր Հովսեփյանի* գործով որոշմամբ փաստել է նաև, որ Վճռաբեկ դատարանի կողմից բացառապես գործը նոր քննության ուղարկելը կարող է լինել արդյունավետ միջոց՝ հետևողականորեն երաշխավորելու վերադատության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի անխախտելիությունը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որոշ դեպքերում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերով գործը նոր քննության ուղարկելու իրավասությունը կարող է լինել դատական վերանայման իրավունքի իրացման նախապայման և արդար դատաքննության իրավունքի (դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման) երաշխիք: Նման դեպքում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի իրավաչափությունը ստուգելիս, նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, պետք է կիրառելի լինեն գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերանայելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները³⁴⁸:

Սույն դեպքում անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, ինչպես նաև Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառության լայն և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող էր ապահովվել միայն Վճռաբեկ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու արդյունքում:

Հետևաբար մեղադրյալ Ռ.Քոչարյանի վերաբերյալ գործն ըստ էության չլուծող դատական ակտի իրավաչափությունը ստուգելիս, Վճռաբեկ դատարանը,

³⁴⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշման 27-րդ կետը, mutatis mutandis տե՛ս նաև Վճռաբեկ դատարանի՝ «Արցախյան» ՓԲԸ-ի գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշման 11-րդ կետը:

սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով, չէր կարող կայացնել վերջնական որոշում և իրավունքի խախտումը փաստելով վերացնել այն՝ առանց գործը նոր քննության ուղարկելու:

15.3. Վերոշարադրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով առկա են այնպիսի փաստեր, որոնք անհնարին են դարձնում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի փոփոխումը: Ուստի Վճռաբեկ դատարանը գտել է, որ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշման նոր հանգամանքի հիմքով վերանայման արդյունքում մեղադրյալ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել բողոքաբերի կողմից նշված մյուս դատական ակտերի վերանայման հարցին:

Դատավոր Ս.Ավետիսյանի իրավական դիրքորոշումները և եզրահանգումները.

16. Ուսումնասիրելով պաշտպան Հ.Ալումյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումներն ու պահանջը, ծանոթանալով վարույթում առկա նյութերին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 14-ի որոշմանը, համաձայն չլինելով որոշման պատճառաբանական առանձին դրույթների և եզրափակիչ մասի հետ, հայտնում եմ Հատուկ կարծիք՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով:

16.1. Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի և 2019 թվականի մարտի 22-ի որոշումների պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ չհամաձայնվելով, ներկայացրել եմ *Հարուկ կարծիքներ*, որոնցում անդրադառնալով պաշտոնաթող Նախագահի անձեռնմխելիության հատկանիշի և կալանավորման մյուս պայմանի՝ հիմնավոր կասկածի հարաբերակցության, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի սահմանադրականության հարցերին, հանգել եմ հետևյալ եզրահանգումներին և առաջարկություններին՝

1) Ռոբերտ Քոչարյանին մեղսագրված արարքի նկարագրությունից ակնհայտորեն հետևում է, որ այդ արարքը վերաբերում է որպես Նախագահ՝ իր կարգավիճակին, այլ ոչ թե որպես մասնավոր անձ կատարած գործողություններին: Հետևաբար, սույն դեպքում, Ռ.Քոչարյանը օգտվում է պաշտոնաթող Նախագահի համար ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված գործառույթային անձեռնմխելիության երաշխիքից:

2) Անձեռնմխելիությունը լինելով անձին պատասխանատվությունից զրկելու նախապայման՝ այն առանցքային երաշխիք է կամայականորեն ազատությունից զրկվելուց պաշտպանվելու համար:

3) Անձեռնմխելիության պայմանի հաղթահարումը պետք է նախորդի հիմնավոր կասկածի առկայության ստուգմանն ու գնահատմանը: Այլ խոսքով, եթե անձեռնմխելիության պայմանը հաղթահարված չէ, քրեական

հետապնդման և կալանավորման գործընթացը իմաստագրվելու են: Ուստի անձեռնմխելիության պայմանի հաղթահարումից հետո է միայն հնարավոր անդրադառնալ առերևույթ հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի հավաստմանը:

4) Պաշտոնաթող Նախագահին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի բացակայությունը բացառում է քրեական հետապնդման հարուցումը (մեղադրանք առաջադրելը), ուստի նաև խափանման միջոցի՝ կալանքի հարցի քննարկումը:

Կալանավորման պայմանն առկա չէ, եթե անձեռնմխելիության հատկանիշը կրող սուբյեկտը շարունակում է այն պահպանել:

5) ՀՀ Սահմանադրությունը և օրենսդրությունը պաշտոնաթող Նախագահին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգ չի սահմանել, առկա է սահմանադրաիրավական բաց, որը հնարավոր չէ հաղթահարել իրավակիրառ պրակտիկայում:

6) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված այն դրույթը, ըստ որի *«Քրեական պարասխանաբլիզայի անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկարումն և կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի առկայության դեպքում դատարանը համաձայնություն սրանապու միջնորդությանը դիմում է համապարասխան մարմիններին»* իրագործելի չէ, քանի որ ՀՀ օրենսդրությունը պաշտոնաթող Նախագահի համար այդպիսի մարմին չի նախատեսել:

Մինչդեռ, անձեռնմխելիության հատկանիշով օժտված առանձին կատեգորիայի հատուկ սուբյեկտների վերաբերյալ (ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ, Սահմանադրական դատարանի անդամներ, դատավորներ) ՀՀ Սահմանադրությունը և համապատասխան սահմանադրական օրենքները նախատեսել են տվյալ անձանց անձեռնմխելիությունը հաղթահարելու կառուցակարգ:

7) Պաշտոնաթող Նախագահին անձեռնմխելիությունից զրկելու վերաբերյալ օրենսդրական կարգավորման բացակայությունը հակասում է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներում ամրագրված համաչափության և որոշակիության սկզբունքներին:

Արդյունքում եզրահանգել եմ, որ

– պաշտոնաթող Նախագահի անձեռնմխելիությունը բովանդակող Սահմանադրական նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ ձևավորած դատողությունները համոզիչ չեն և չեն բխում գործառույթային անձեռնմխելիության գաղափարախոսությունից,

– Վճռաբեկ դատարանը հանգել է սխալ հետևության, որ սկզբում պետք է ստուգել հիմնավոր կասկածի առկայությունը, որից հետո անդրադառնալ անձեռնմխելիության հաղթահարման հարցին: Վճռաբեկ դատարանի տվյալ եզրահանգումը չի բխում հիմնավոր կասկածի վերաբերյալ Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի ձևավորված կայուն նախադեպային

որոշումների, ինչպես նաև անձեռնմխելիության ինստիտուտի օրենսդրական կարգավորումների տրամաբանությունից:

Վերագրյալներից ելնելով առաջարկել են ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի, մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալումյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի բողոքների վերաբերյալ վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համապատասխանությունը Սահմանադրության նորմերին:

16.2. Վկայակոչելով Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված կալանավորման պայմաններից «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած» եզրույթի էությունը, մասնավորապես, որոշակի խումբ անձանց համար անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը³⁴⁹, քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը³⁵⁰, նշել են, որ այն դեպքերում, երբ հանցակազմը ՀՀ քրեական օրենսգրքով բնութագրվում է բլանկետային դիսպոզիցիայի միջոցով, սպա համապատասխան օրենքում և (կամ) ենթաօրենսդրական ակտում կատարված բովանդակային փոփոխություններն ազդում են քրեաիրավական նորմի բովանդակության և դրանով արգելված արարքների ծավալի ու շրջանակի վրա: Հետևաբար, արարքի լրիվ կամ մասնակի քրեականացման (սպաքրեականացման), կամ բլանկետային դիսպոզիցիայի նորմում փոփոխության դեպքում հարցի քննարկումը պետք է իրականացվի նաև համապատասխան օրենքում և (կամ) ենթաօրենսդրական ակտում կատարված փոփոխությունների համատեքստում (տվյալ դեպքում *հիմնավոր կասկածի* շրջանակներում):

Արդյունքում, 2019 թվականի մարտի 22-ի *Հարուկ կարծիքում* միջնորդել են պաշտպաններ Հ.Ալումյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ՝ օրենքով սահմանված կարգով համապատասխան որոշում կայացնելու նպատակով:

Մասնավորապես, հիմնավորել են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի սահմանադրականության առումով (հիմնավոր կասկածի շրջանակում) կան ողջամիտ կասկածներ և համապատասխան հիմքեր՝ Սահմանադրական դատարան դիմելու համար՝ հաշվի առնելով տվյալ նորմի վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

16.3. Վերահաստատելով և զարգացնելով արտահայտած իրավական դիրքորոշումները և նկատի ունենալով վճռաբեկ բողոքներում բերված հիմնավորումները, փաստել են, որ դրանք բխում են նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներից: Այսպես՝ նյութական և դատավարական օրենքների վերոնշյալ հոդվածների սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ նկատառումները բխում են *Ռոբերտ Բոչարյանի*

³⁴⁹ Տե՛ս *Վահրամ Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19, 21 կետերը:

³⁵⁰ Տե՛ս *Արամ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 23-րդ կետը:

դիմումի հիման վրա կայացված ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 25-ի ՍԳՌ-7 որոշումից³⁵¹:

Վաչագան Դազարյանի վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանը 2019 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ³⁵², ի թիվս այլնի, արձանագրել է հետևյալը՝

Հանցանք կատարած լինելու <<հիմնավոր կասկած>> սահմանադրական և քրեադատավարական եզրույթը բացահայտելիս քրեական հետապնդումը բացառող հանգամանքների պարզումը, արարքի լրիվ կամ մասնակի ապաքրեականացումը, բլանկետային դիսպոզիցիայով նորմերի փոփոխությունը, առանձին սուբյեկտային կազմի անձեռնմխելիության հաղթահարումը պարտադիր նախապայման է, քանի որ դրանց առկայությունը իրավունքի ուժով կարող է բացառել գործի հարուցումը կամ քրեական հետապնդումը, այլապես Սահմանադրությամբ և միջազգային չափանիշներին համապատասխան չի ապահովվի անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման նախապայմանը:

Այլ կերպ՝ հանցանք կատարած լինելու <<հիմնավոր կասկած>> եզրույթը բացահայտելիս քրեական հետապնդումը բացառող հանգամանքների անտեսումը կհանգեցնի Սահմանադրության 27-րդ, 61-րդ, 79-րդ, Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածների խախտման:

Այն դեպքերում, երբ օրենսդիրը քրեական օրենքը շարադրելիս հղում է կատարում այլ օրենքների նորմերին, ապա դրանք որոշակիորեն վերաձվում են քրեական իրավունքի աղբյուրի: Նորմատիվ իրավական ակտերը, որոնց վրա կատարվում կամ ենթադրվում է հղում քրեաիրավական բլանկետային նորմով, էապես ազդում է հանցանքի իրավական բովանդակության և այդ հանցանքի համար քրեական պատասխանատվության կիրառման սահմանների վրա: Այսպիսով, **յուրաքանչյուր փոփոխություն այն օրենքներում, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմում, կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության ընդլայնման, նեղացման կամ վերացման:** Ամեն պարագայում, թեև միայն քրեական օրենքն է, որ, միացնելով հանցակազմի բոլոր տարրերը, սահմանում է արարքի հանցավորությունը, այնուամենայնիվ, քրեական օրենքը պետք է դիտարկել բլանկետային նորմերի հետ միասնության մեջ: **Հետևաբար՝ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժ ունենալու կանոնը վերաբերում է նաև այն օրենքներին, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմով:**

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանաված կարգով:

³⁵¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 25-ի թիվ ՍԳՌ-7 որոշման 4.2., 4.3., 4.6., 4.10. կետերը:

³⁵² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 16-ի թիվ ՍԳՌ-1453 որոշումը:

Վաչագան Ղազարյանի վերաբերյալ գործով³⁵³ Հայրուկ կարծիքում նշել են, որ բլանկետային նորմերով առաջադրված մեղադրանքի օրինականությունը և հիմնավորվածությունը հիմնավոր կասկածի լույսի ներքո վիճահարույց է:

16.4. Հաշվի առնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նյութական և քրեադատավարական նորմերին տրված մեկնաբանությունները և ելնելով դատական պաշտպանության ու անձնական ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունն ապահովելու անհրաժեշտությունից, հանգել են այն եզրահանգման, որ

1) Ռ.Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով առաջադրված *մեղադրանքի օրինականությունը* պատշաճ կարգով ստուգված չէ, հետևյալ նկատառումներով.

ա) Դատարաններն անտեսել են, որ մեղադրանքի օրինականությունը որպես կալանավորման պայման իր մեջ տվյալ դեպքում ներառում է Ռ.Քոչարյանի՝ անձեռնմխելիության հաղթահարումը, որը լուծված չէ:

բ) Բլանկետային դիսպոզիցիայի նորմով մեղադրանքի առաջադրումը, որի սահմանադրաիրավական և դրա հիման վրա քրեաիրավական բովանդակությունը հիմնավոր կասկածի մակարդակով հաղթահարված չէ:

գ) Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատարանները պատշաճ չեն ստուգվել նաև 2009 թվականի մարտի 20-ին քրեականացված ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի՝ օրենքի հետադարձ ուժ չունենալու սկզբունքի տեսանկյունից:

դ) Վերոնշյալ հանգամանքների պարզումը ուղղված է ոչ թե Ռ.Քոչարյանին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության ու ապացուցվածության, նրա մեղքի, մեղավորության կամ անմեղության ստուգմանն ու գնահատմանը, այլ հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության պարզմանը՝ որպես կալանքի պարտադիր պայմանի և անձնական ազատությունից սահմանափակելու իրավաչափության երաշխիքի:

2) Մեջբերված քրեաիրավական նորմից հետևում է, որ այն կառուցված է բլանկետային դիսպոզիցիայի միջոցով, այսինքն՝ այդ հանցակազմի որոշ տարրեր, այդ թվում՝ օբյեկտիվ կողմը (հանրորեն վտանգավոր արարքը, որը դրսևորվում է սահմանադրական կարգը տապալելու մեջ), ինչպես նաև սուբյեկտիվ կողմի հատկանիշները կարող են որոշվել ՀՀ Սահմանադրության

³⁵³ Տե՛ս Վաչագան Ղազարյանի գործով 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԳ/0676/06/18 Հայրուկ կարծիքը:

Ծանոթություն՝ ՀՀ հայրուկ քննչական ծառայության խոշորագումների և մարդու ղեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ.Ավետիսյանի 2020 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ Վաչագան Ալեքսանդրի Ղազարյանի և Ռուզաննա Հրաչիկի Բեգլարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասով և 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է և թիվ 59103718 քրեական գործով վարույթը կարճվել է՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

համապատասխան դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման միջոցով:

Մասնավորապես, նշել եմ, որ իրավական որոշակիության տեսանկյունից, պարզաբանման կարիք ունեն *«սահմանադրական կարգ տասպալելը»*, *«Սահմանադրության որևէ նորմի փաստացի վերացնելը»*, *«իրավական համակարգում այդ նորմի գործողության դադարեցում»* և այլ եզրույթները:

Ուստի, գտել եմ, որ վիճարկվող քրեաիրավական դրույթի սահմանադրականությանը՝ դրան իրավակիրատ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ կալանքի հիմքում դրված մեղադրանքի իրավաչափությանն առնչվող հարցի շրջանակներում կարող է անդրադառնալ միայն Սահմանադրական դատարանը:

16.5. Վերոնշյալի հաշվառմամբ գտել եմ, որ Ռ.Քոչարյանի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը (մեղադրանք առաջադրելը), ինչպես նաև նրա կալանավորումը և կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը եղել է խնդրահարույց:

Ուստի, դատարանների հետևությունն առ այս, որ տվյալ հարցերի պարզումը դուրս է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներից և նախաքննության փուլում դատարանների առջև դրված խնդիրների շրջանակից, անհիմն է և չի բխում, ինչպես Եվրոպական դատարանի որոշումներից, այնպես էլ Վճռաբեկ դատարանի կայուն նախադեպային իրավունքից և Սահմանադրական դատարանի որոշումներից:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի իրավադրույթի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այս, որ. *«(...) [Ի]րավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անսխալաբար թողնելու համար, այլ նորմարիվ պարտադրանք նման հնարավոր դեպքերում ծանրակշիռ փաստարկներով հիմնավորումներ կայացնելու վերաբերյալ: Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատրշած մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատրանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հարակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ արեղծելու խնդիրն է: (...) Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անսխալաբար թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին»³⁵⁴:*

17.1. Նախ, հարկ եմ համարում արձանագրել, որ վերահաստատում եմ Հրայր Հովսեփյանի գործով Սահմանադրական դատարան դիմելու Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ

³⁵⁴ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴՌ-1099 որոշման 6-րդ կետը:

արձանագրված իրավական դիրքորոշումներն առ այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության պայմաններում, առանց գործը նոր քննության ուղարկելու իրավասության, Վճռաբեկ դատարանը որոշ դեպքերում գրկված է վերջնական որոշում կայացնելու և իրավունքի խախտում փաստելով այն վերացնելու հնարավորությունից: Միաժամանակ, գտնում են, որ դրանք սույն դեպքում կիրառելի չեն, հետևյալ նկատառումներով:

17.2. Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում գտնում են, որ Վճռաբեկ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ գործն ըստ էության չլուծող դատական ակտի իրավաչափությունը ստուգելիս, Վճռաբեկ դատարանը սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով չի կարող կայացնել վերջնական որոշում և իրավունքի խախտումը փաստելով վերացնել այն՝ առանց գործը նոր քննության ուղարկելու, բավարար չափով հիմնավորված չէ:

Իմ համոզմամբ, սույն դեպքում առկա են ծանրակշիռ փաստարկներ գալու հետևության, որ Վճռաբեկ դատարանը 2018 թվականի նոյեմբերի 15-ի դատական ակտի վերանայման արդյունքում կարող էր դրա եզրափակիչ մասը քեկանել:

Նման եզրահանգման հանգելիս հաշվի են առնում սույն գործի դատավարական նախապատմությունը և պաշտպանի վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները (տե՛ս սույն Հատուկ կարծիքի 1-12-րդ կետերը): Մասնավորապես այն, որ պաշտոնաթող նախագահի գործառույթային անձեռնմխելիության հաղթահարման ընթացակարգի՝ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չլինելը, ինչպես նաև իրավական որոշակիության տեսանկյունից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի սահմանադրությանը հակասող լինելու վերաբերյալ հիմնավորումները բավարար հիմք էին վճռաբեկ բողոքների հիման վրա 2018 թվականի նոյեմբերի 15-ին և 2019 թվականի մարտի 22-ին սույն քրեական գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու համար, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով հետագայում հնարավորություն կընձեռեր նոր դատական ակտ կայացնելու համար:

Գտնում են, որ նման լուծումը կարող էր ապահովել Ռոբերտ Քոչարյանի և մյուս մեղադրյալների՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը: Այլ կերպ, վերոշարադրյալի համատեքստում Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող էր ապահովվել Վճռաբեկ դատարանի կողմից գործը նոր քննության չուղարկելու, այսինքն՝ նոր դատական ակտ կայացնելու միջոցով:

17.3. Հարկ է արձանագրել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի մարտի 26-ի ՍԴՌ-1586 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը ճանաչվել է Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր: Արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի և մյուսների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել և քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում են, որ սույն գործով առկա փաստարկներն իրենց բնույթով ծանրակշիռ են, որոնք հիմք են վերանայված դատական ակտի՝ Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշման եզրափակիչ մասը բեկանելու համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պաշտպան Հ.Ալումյանի՝ վճռաբեկ բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցել է Վճռաբեկ դատարանի միայն 2018 թվականի նոյեմբերի 15-ի դատական ակտի վերանայման վարույթ, ուստի բողոքաբերի կողմից նշված մյուս դատական ակտերի վերանայման խնդրին չեն անդրադառնում:

18. Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 6-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ, 29-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-42-րդ, 361.1-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ և 426.9-րդ հոդվածներով՝

առաջարկում են՝

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշման՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման արդյունքում մեղադրյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի պաշտպան Հայկ Ալումյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն՝ որոշման եզրափակիչ մասը բեկանել:

Դատավոր՝

արորագրություն

22.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ/0024/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորները

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի մայիսի 14-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով Գրիշա Էդգարի Նավասարդյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մարտի 10-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի մարտի 31-ին ՀՀ ռադիկալության Տավուշի մարզային վարչության Տավուշի բաժնում հարուցվել է թիվ 56154018 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 6-ի որոշմամբ Գրիշա Նավասարդյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել հսկողության հանձնելը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 10-ի որոշմամբ Գ.Նավասարդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

2018 թվականի հուլիսի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

1.1. 2018 թվականի հոկտեմբերի 9-ին Առաջին ատյանի դատարանը Գ.Նավասարդյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ հսկողության հանձնելը, փոխել է, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել չեռանալու մասին ստորագրությունը:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 3-ի դատավճռով Գ.Նավասարդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԳ1/0051/01/16 դատավճռով նշանակված պատժի չկրած մասը, և Գ.Նավասարդյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Գ.Նավասարդյանի նկատմամբ կիրառվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը, և նա ազատվել է պատժից:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Գևորգ Խաչատրյանը և Գարիկ Մարտիրոսյանը:

3. Մեղադրող Ն.Զիլինգարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի մարտի 10-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 3-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Գրիշա Նավասարդյանը ծնվել է 2000 թվականի ապրիլի 28-ին³⁵⁵:

6. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 18-ի դատավճռով Գրիշա Նավասարդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված՝ մեկ, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված՝ հինգ հանցագործություններ կատարելու մեջ և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ, 69-րդ հոդվածների կանոնների կիրառմամբ վերջնական դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի 8 (ութ) ամիս 17 (տասնյոթ) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 5 (հինգ) տարի ժամկետով³⁵⁶:

7. Նախաքննության մարմնի կողմից Գրիշա Նավասարդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) *Ենա ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն կատարելու դիրավորությամբ 2018 թվականի մարտի 22-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքի քնակիչներ՝ 04.03.2000 թվականին ծնված Գևորգ Մարտիրոսի Խաչատրյանի, 07.06.1992 թվականին ծնված Արթուր Արամայիսի Մելքոնյանի և 30.12.1996թ. ծնված Գարիկ Մարտիրոսի Մարտիրոսյանի հետ նսինական համաձայնությամբ, մուտքի դուռը հրելու միջոցով բացելով սպորինի կերպով մուտք են գործել Բերդ քաղաքի Մաշտոցի 82 հասցեում գրնվող ՀՕՖ-ի գրասենյակին կից «Մարդիգյան» երեխաների պաշտպանության կենտրոն և գողացել փարբեր փեսակի կենցաղային իրեր և փեխնիկական սարքավորումներ, կենտրոնին պատճառելով ընդհանուր զգալի չափերով՝ 304.000 ՀՀ դրամի գույքային վնաս»³⁵⁷:*

8. Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով ամբաստանյալ Գ.Նավասարդյանի նկատմամբ Համաներման մասին օրենքը կիրառելու հարցին, փաստել է. «(...) Ամբաստանյալ Գրիշա Նավասարդյանը մեղադրվում է 2018թ. մարտի 22-ին կատարած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (...) նախատեսված հանցագործության կատարման մեջ: Գրիշա Նավասարդյանը անչափահաս փարիքում, կատարել է դիրավորյալ հանցագործություն, որի համար ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՏԳՆ/0051/01/16 դատավճռով դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) փարի 8 (ութ) ամիս 17 (փասնյոթ) օր ժամկետով, «ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված փարիժը պայմանականորեն չի

³⁵⁵ Տնն քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 240:

³⁵⁶ Տնն www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ, Գրիշա Նավասարդյանի վերաբերյալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԳՆ/0051/01/16 դատավճիռը:

³⁵⁷ Տնն քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 230:

կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Նա հանցագործությունը կատարել է մինչև 18 տարին լրանալը և նախկինում դիրավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պարիժ չի կրել: (...) Բացի այդ [նրա նկարումներ վերջին տասնը] տարիների ընթացքում ՀՀ ԱԾ համաներման սկզբ կամ ՀՀ նախագահի ներման հրամանագիր չի կիրառվել, և [նրա նկարումներ համաներում հայտարարելու մասին ՀՀ օրենքը կիրառելու արգելքներ չկան:

Շինք ընդունելով վերը շարադրվածը և նկարի ունենալով, որ (...) գործի նյութերում համաներման մասին օրենքի կիրառման սահմանափակումներ չկան, դատարանը գրավ, որ Գրիշա Նավասարդյանին պետք է պարժից ազատել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի՝ 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի կիրառմամբ (...)»³⁵⁸:

9. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 3-ի դատավճիռը, արձանագրել է հետևյալը. «(...) [Ե]թե անձն իրեն վերագրվող հանցանքը կատարել է այն ժամանակ, երբ դիրավորյալ հանցանքի կատարման համար պարիժ կրելիս է եղել, ապա նրա նկարումներ համաներում չի կարող կիրառվել: Այս կանոնից բացառություն են կազմում մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անձինք, որոնց պարագայում օրենսդիրը հարուկ կանոն է սահմանել առ այն, որ այդ անձինք կարող են ազատվել պարժից, եթե դիրավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պարիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դարվածություն:

Գրիշա Նավասարդյանը անչափահաս տարիքում, կատարել է դիրավորյալ հանցագործություն, որի համար ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ-1/0051/01/16 դատավճիռով դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի 8 (ոչ) ամիս 17 (տասնյոթ) օր ժամկետով, որը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջանի՝ 5 (հինգ) տարի ժամկետով, իսկ սույն գործով արարքը կատարել է փորձաշրջանի ընթացքում:

Վերոգրյալ փաստական հանգամանքների նկարումներ կիրառելով Համաներման մասին օրենքի մեջբերված և վերլուծած նորմերը՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Գ.Նավասարդյանի նկարումներ համաներում կիրառելով պարժից ազատելու մասին որոշում կայացնելիս Առաջին ատյանի դատարանը խախտում թույլ չի տվել, քանի որ Գ.Նավասարդյանը սույն գործով հանցանքը կատարել է այն ժամանակ, երբ իր նկարումներ նշանակված ազատազրկման ձևով պարիժ չի կրել՝ ինչպես պահանջում է Համաներման մասին օրենքի 2-րդ [հ]ոդվածի 6-րդ կետը:

³⁵⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 91:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ «Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 9-րդ կետով սահմանված է, որ համաներում չկիրառել այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ պարտիժը պայմանականորեն չի կիրառվել, և որոնք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: Մինչդեռ Գ.Նավասարդյանը, գրնվելով փորձաշրջանում, կատարել է դիտավորյալ հանցագործություն, որը Դատարանը հաստատել է համարել, ուստի նրա նկատմամբ համաներումը կիրառելի չէ», սպա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ այն սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ, ինչպես նշվեց, այն վերաբերելի չէ մինչև 18 տարեկանը հանցանք կատարած անձանց նկատմամբ»³⁵⁹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի կարծիքով՝ ստորադաս դատարանները, խախտելով Համաներման մասին օրենքի դրույթների պահանջները, թույլ են տվել դատական պիսա՝ նյութական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ անտեսվել է այն հանգամանքը, որ սույն գործով ամբաստանյալին մեղսագրվող հանցանքը վերջինս կատարել է նախկինում կատարած հանցանքի համար նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու արդյունքում սահմանված փորձաշրջանի ընթացքում, ինչը Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ անձի նկատմամբ համաներման կիրառումը բացառող հանգամանք է:

11. Հիմք ընդունելով վերոշարադրյալը, բողոքաբերը խնդրել է մասնակի՝ ամբաստանյալ Գ.Նավասարդյանին պատժից ազատելու մասով բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մարտի 10-ի որոշումը, վերացնել Գ.Նավասարդյանի նկատմամբ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառումը, և նրան պատժից ազատելը ճանաչել անթույլատրելի:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Գ.Նավասարդյանին Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ

³⁵⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 128-129:

մասի 6-րդ կետի հիման վրա պատժից ազատելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պարտասխանատվությունից, իսկ դատարարայալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարժից, կամ պարժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պարժարեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:*

14. Համաներման ինստիտուտի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ համաներմուն իրենից ներկայացնում է ինքնուրույն գործող իրավական ինստիտուտ, որի կիրառելիության հիմքում դրված են մի կողմից՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները, իսկ մյուս կողմից՝ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունվող մարդասիրական բնույթ ունեցող պետսիրավական նորմատիվ ակտը, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից, կամ կարող է մեղմացվել պատժը, կամ վերացվել դատվածությունը: Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսվում են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներմունը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներմունից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության³⁶⁰:

15. Համաներման մասին օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Համաներմուն հայտարարելով՝ պարժից ազատել՝ առավելագույնը չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պարժի դատարարված անձանց»:*

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ *«Համաներմուն հայտարարելով պարժից ազատել առավելագույնը վեց տարի ժամկետով ազատագրկման դատարարված՝ հանցագործությունը մինչև 18 տարին լրանալը*

³⁶⁰ Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Ավերիսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՄԴ3/0013/01/11, Գարիկ Ղազարյանի գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ՏԴ/0088/01/11, Լևոն Խոսրոկյանի և Արտյոմ Ալեքսանյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԿԴ/0046/01/14, Արիզ Տիգրանյանի գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0501/01/18 որոշումները:

կատարած այն անձանց, որոնք նախկինում դիտարկորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն»:

Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ «Համաներումը չկիրառել (բացառությամբ սույն հոդվածի 9-րդ և 11-րդ մասերով նախատեսված դեպքերի)՝ այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և որոնք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտարկորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտարկորյալ հանցագործություն կատարելու համար»:

Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-5-րդ և 7-րդ մասերը կիրառվում են անձի նկատմամբ, եթե սույն հոդվածի 8-րդ և 10-րդ մասերով այլ բան նախատեսված չէ»:

15.1. Սույն որոշման 13-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ վերլուծելով Համաներման մասին օրենքի վերը մեջբերված կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համաներման կիրառելիության համար օրենսդիրը նախ և առաջ սահմանել է համաներում հայտարարելով պատժից և քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը, պայմանները և ըստ այդ պայմանների՝ համաներումից օգտվելու սահմանները: Ընդ որում՝ այդ հարցում օրենսդիրը ցուցաբերել է տարբերակված մոտեցում՝ մարդասիրության սկզբունքի համատեքստում էական նշանակություն ունեցող առանձին հանգամանքների (պայմանների) առկայության դեպքում նախատեսելով պատասխանատվությունից և պատժից ազատելու ավելի մեծ հնարավորություններ: Այսպես՝ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասից երևում է, որ օրենսդիրն առանձնացրել է սոցիալական որոշակի խումբ, որի կազմում ընդգրկված անձինք կարող են պատժից ազատվել նաև այն դեպքում, երբ դատապարտվել են ոչ թե չորս, ինչպես Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի պայմանն է, այլ վեց տարի ժամկետով ազատազրկման: Մինևսույն ժամանակ օրենսդիրն առանձին դեպքերում այդ խմբի կազմում ներառված անձանց համար սահմանել է հավելյալ պայմաններ, որոնց առկայության դեպքում միայն անձը կարող է Համաներման մասին օրենքի վերը հիշատակված դրույթի կիրառմամբ ազատվել պատժից: Մասնավորապես, նման հավելյալ պայման է սահմանված Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում, ըստ որի՝ առավելագույնը վեց տարի ժամկետով ազատազրկման դատապարտված հանցագործությունը մինչև 18 տարին լրանալը կատարած անձինք ազատվում են պատժից, եթե նախկինում դիտարկորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն: Այլ կերպ, օրենսդիրը, մարդասիրական բնույթ ունեցող համաներման ակտի գործողության տակ ընկնելու ավելի մեծ հնարավորություն է նախատեսել մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անձանց համար՝ միաժամանակ այդ հնարավորությունը պայմանավորելով լրացուցիչ պայմանի

անկայությամբ, այն է՝ եթե նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն: Ընդ որում, նման լրացուցիչ պայմանը չի կարող դիտարկվել որպես մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անձանց նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման սահմանափակում: Համաներման կիրառելիության սահմանափակումները նախատեսված են Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասով, դրանք ինքնավար են, այլ պայմանների հետ չեն համադրվում և պետք է պահպանվեն անվերապահորեն: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում անձի նկատմամբ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի կիրառելիության հարցը լուծելիս անհրաժեշտ է պարզել, թե անկա չեն արդյոք Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված սահմանափակումները, որոնք կարող են արգելք լինել անձի նկատմամբ վերոնշյալ օրենքը կիրառելու համար:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ մոտեցումը բխում է ինչպես Համաներման մասին օրենքի ընդհանուր համակարգային վերլուծությունից և տրամաբանությունից, այնպես էլ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 12-րդ մասի այն կարգավորումից, ըստ որի՝ նույն հոդվածի 1-5-րդ և 7-րդ մասերը կիրառվում են անձի նկատմամբ, եթե նշված հոդվածի 8-րդ և 10-րդ մասերով այլ բան նախատեսված չէ:

15.2. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված կարգավորումը կիրառելի է միայն այն անձանց նկատմամբ, ովքեր միաժամանակ բավարարում են հետևյալ պայմաններին՝ դատապարտվել են առավելագույնը վեց տարի ժամկետով ազատազրկման, հանցագործությունը կատարել են մինչև 18 տարին լրանալը, նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն, և բացակայում են Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված՝ նրանց նկատմամբ համաներման ակտի կիրառումը բացառող հանգամանքները:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

- Գ.Նավասարդյանը նախկինում՝ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 18-ի դատավճռով դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի 8 (ութ) ամիս 17 (տասնյոթ) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 5 (հինգ) տարի ժամկետով³⁶¹:

- Գ.Նավասարդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար,

³⁶¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

որ նա ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի համիշտակություն կատարելու դիտավորությամբ, 2018 թվականի մարտի 22-ին՝ ժամը 20-ի սահմաններում, այլ անձանց հետ, նախնական համաձայնությամբ, ապօրինի մուտք է գործել «Մարդիգյան» երեխաների պաշտպանության կենտրոն, գողացել տարբեր տեսակի կենցաղային իրեր և տեխնիկական սարքավորումներ՝ կենտրոնին պատճառելով ընդհանուրը զգալի չափերով՝ 304.000 ՀՀ դրամի գույքային վնաս³⁶²:

- Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ փաստել է, որ Գ.Նավասարդյանը հանցագործությունը կատարել է մինչև 18 տարին լրանալը և նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չի կրել: Բացի այդ, նրա նկատմամբ վերջին տասը տարիների ընթացքում ՀՀ Ազգային ժողովի համաներման ակտ կամ ՀՀ Նախագահի ներման հրամանագիր չի կիրառվել, և Համաներում հայտարարելու մասին ՀՀ օրենքը նրա նկատմամբ կիրառելու արգելքներ չկան: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը հանգել է հետևության, որ Գ.Նավասարդյանին պետք է պատժից ազատել՝ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի կիրառմամբ³⁶³:

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է, որ Գ.Նավասարդյանի նկատմամբ համաներում կիրառելով պատժից ազատելու մասին որոշում կայացնելիս Առաջին ատյանի դատարանը խախտում թույլ չի տվել, քանի որ Գ.Նավասարդյանը սույն գործով հանցանքը կատարել է այն ժամանակ, երբ իր նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը չի կրել, ինչպես պահանջում է Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը: Իսկ ինչ վերաբերում է Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 9-րդ կետով սահմանված արգելքին, ապա այն վերաբերելի չէ մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անձանց նկատմամբ³⁶⁴:

17. Նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-15.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Գ.Նավասարդյանին Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հիման վրա պատժից ազատելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն: Այսպես՝ ըստ գործի փաստական տվյալների՝ Գ.Նավասարդյանի նկատմամբ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 18-ի դատավճռով սահմանվել է 5 (հինգ) տարի ժամկետով փորձաշրջան: Սույն գործով Գ.Նավասարդյանն իրեն մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցանքը

³⁶² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³⁶³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

³⁶⁴ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

կատարել է իր նկատմամբ սահմանված փորձաշրջանի ընթացքում՝ 2018 թվականի մարտի 22-ին: Ուստի, վերոշարադրյալից բխում է, որ տվյալ դեպքում առկա է Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 9-րդ կետով նախատեսված՝ համաներման ակտի կիրառումը բացառող հանգամանք: Մինչդեռ, ստորադաս դատարաններն ամբաստանյալի նկատմամբ կիրառել են Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի դրույթը և ազատել պատժից՝ պատշաճ իրավական գնահատականի չարժանացնելով գործում առկա և սույն որոշմամբ մեջբերված փաստական տվյալների համակցությունը: Արդյունքում, ստորադաս դատարանները պիսալ եզրահանգման են եկել ամբաստանյալ Գ.Նավասարդյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառելիության հարցում՝ թույլ տալով նյութական իրավունքի խախտում:

18. Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք և կրկնելով նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանները չունեն բացարձակ բնույթ, և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլնի, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում³⁶⁵՝ փաստում է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ամբաստանյալ Գ.Նավասարդյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով քրեական հետապնդումը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով դադարեցնելու հարցը:

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Գ.Նավասարդյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝
«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները,

(...)

5. Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը (...):»:

³⁶⁵ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Միփթաթ Էլոյանի և այլոց գործով 2011 թվականի հունիսի 13-ի թիվ ԵԿԳ/0211/01/10 որոշումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

(...)

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):

ՀՀ քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածի համաձայն՝ «Մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից կամ պարժից ազատելիս սույն օրենսգրքի 75-րդ և 81-րդ հոդվածներով նախատեսված վաղեմության ժամկետները համապատասխանաբար կրճատվում են կիսով չափ»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 3. Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիրավորությանը կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատագրումը (...):

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Այդ հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արամ Սարգսյանի* գործով որոշմամբ, արձանագրելով՝ «(...) [Թ]եև [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, սպա գործի վարույթը ենթակա է կարճման»³⁶⁶:

23. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել,

³⁶⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Սարգսյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը:

իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները: Միևնույն ժամանակ, քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության փուլում վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում³⁶⁷: Մասնավորապես, դատարանը պետք է պարզի, թե արդյո՞ք ամբաստանյալը համաձայն է, որ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Անձի համաձայնությունը ստանալու դեպքում՝ դատարանը պարտավոր է դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ պետք է դատական քննությունը շարունակի ընդհանուր կարգով, սակայն դատավճիռ կայացնելիս՝ դադարեցնի անձի նկատմամբ քրեական հետապնդումը: Ընդ որում, երբ անձն արդեն հնարավորություն է ունեցել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը, ապա քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս նրա դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայում է³⁶⁸:

24. Վերոգրյալի հիման վրա, անդրադառնալով վաղեմության ժամկետն անցնելու հիմքով ամբաստանյալ Գ.Նավասարդյանին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գողությունը, որը կարարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

³⁶⁷ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Մասիկյ Մաղաթեյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԳ5/0022/01/10 որոշումը, Միրաժ Ղամբարյանի և այլոց գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԳ/0055/01/11 որոշումը, Հրասար Մազմանյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԳ/0121/11/14 որոշումը, Ֆարիդա Ավագիսյանի գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱԿԳ2/0016/01/14 որոշումը, Անդրանիկ Գրիգորյանի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԳ/0180/01/15 որոշումը:

³⁶⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Միրաժ Ղամբարյանի և այլոց գործով վերը հիշատակված որոշման 25-րդ կետը:

(...)

3) պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով պարտվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապարիկից հազարապարիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված արարքը դիտավորյալ հանցագործություն է, իսկ դրա համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում հինգ տարին, ուստի այն դասվում է միջին ծանրության հանցագործությունների շարքին: Հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանցավոր արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարվելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է հինգ տարի:

Մինչև ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածը սահմանում է, որ մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները կրճատվում են կիսով չափ:

Վերոնշյալից հետևում է, որ մինչև տասնութ տարին լրանալը անձի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանք կատարելու դեպքում, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հինգ տարի վաղեմության ժամկետը ՀՀ քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածի ուժով կրճատվում է կիսով չափ՝ կազմելով երկուսուկես տարի:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Գ.Նավասարդյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործությունը կատարել է 2018 թվականի մարտի 22-ին³⁶⁹: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով որակված՝ Գ.Նավասարդյանին մեղազրկված արարքը կատարելու մեջ վերջինիս մեղավորությունը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է 2019 թվականի մայիսի 3-ին³⁷⁰, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2020 թվականի մարտի 10-ին³⁷¹: Նշված որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ³⁷²:

26. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-24-րդ կետերում շարադրված իրավական

³⁶⁹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³⁷⁰ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

³⁷¹ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

³⁷² Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

նորմերի և արտահայտված դիրքորոշումների վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Նավասարդյանին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործությունն ավարտվել է 2018 թվականի մարտի 22-ին, երբ նրա 18 տարին լրացած չի եղել³⁷³:

Հետևաբար, Գ.Նավասարդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ և 95-րդ հոդվածների կանոններով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության երկուսուկես տարի ժամկետը լրացել է 2020 թվականի սեպտեմբերի 22-ին: Մինչդեռ, այդ օրվա դրությամբ Գ.Նավասարդյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել:

27. Նման պայմաններում, Գրիշա Նավասարդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցել է:

28. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Նավասարդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի մայիսի 3-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մարտի 10-ի որոշումը պետք է բեկանել, Գ.Նավասարդյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ Գ.Նավասարդյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չեռանալու մասին ստորագրությունը պետք է վերացնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գրիշա Էդգարի Նավասարդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր

³⁷³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

իրավասության դատարանի՝ 2019 թվականի մայիսի 3-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մարտի 10-ի որոշումը բեկանել: Գրիշա Էդգարի Նավասարդյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ, և նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճել:

2. Ամբաստանյալ Գրիշա Էդգարի Նավասարդյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

23.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0635/11/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի մայիսի 14-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մարտի 10-ի որոշման դեմ դիմող Տիգրան Գրիշայի Գալստյանի ներկայացուցիչ Ս.Սուքիասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի հունիսի 6-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է դիմող Տիգրան Գրիշայի Գալստյանի՝ թիվ 14131212 քրեական գործով Վ.Հայրապետյանի կողմից սուտ մատնություն կատարելու մասին դիմումը, որը նույն թվականի հունիսի 12-ին քննարկման է ուղարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժին:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Օ.Շախկույանի՝ 2019 թվականի հունիսի 27-ի եզրակացությամբ դիմող Տ.Գալստյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերը կցվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի քարտուղարության կարգազրին:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի պետ Ա.Վալայանի՝ 2019 թվականի հունիսի 27-ի թիվ 29/8-7290 գրությամբ դիմող Տ.Գալստյանին տրվել է գրավոր պատասխան այն մասին, որ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված վերջինիս դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերը թողնվել են անհետևանք և եզրակացությամբ կցվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի քարտուղարության կարգագրին:

Վերոնշյալ գրության դեմ դիմող Տ.Գալստյանի բողոքը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալ Կ.Մելքոնյանի՝ 2019 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ մերժվել է:

2. Դիմող Տ.Գալստյանի բողոքի քննության արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2019 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ այն մերժել է:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի մարտի 10-ի որոշմամբ դիմող Տ.Գալստյանի բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դիմող Տ.Գալստյանի ներկայացուցիչ Ս.Սուքիասյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Օ.Շախկուլյանը Տ.Գալստյանի դիմումի կապակցությամբ բացատրություն է վերցրել վերջինից³⁷⁴, պահանջել և ստացել է թիվ 14131212 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման³⁷⁵, թիվ ԵԱՔԴ/1426/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման պատճենները³⁷⁶:

6. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Օ.Շախկուլյանի՝ 2019 թվականի հունիսի 27-ի եզրակացության՝ նկարագրական-պատճառաբանական հատվածի համաձայն՝ *«(...) Կարարված արուգմամբ պարզվել է, որ [Վարուժան Հայրսպետյանի] հաղորդման հիման վրա [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի*

³⁷⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 14:

³⁷⁵ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 8-11:

³⁷⁶ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 15-28:

վարչության] Արաբկիրի քննչական բաժնում 10.10.2012 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հասկանիչներով հարուցվել է թիվ 14131212 քրեական գործը և կատարվել նախաքննություն: 10.12.2012 թվականին կայացվել է որոշում քրեական հետապնդումը դադարեցնելու և գործով վարույթը կարճելու վերաբերյալ՝ Տ.Գալստյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի բացակայության պարճառաբանությամբ, ինչպես նաև Վ.Հայրապետյանին իրավունք է վերապահվել Տ.Գալստյանի հետ ունեցած գումարային պարտք ու պահանջի հարցերը լուծել քաղաքացիական դատավարության կարգով: (...) Վ.Հայրապետյանի և Տ.Գալստյանի միջև հարաբերությունները կրում են քաղաքացիական բնույթ, իսկ տվյալ դրույրում սուր մարտություն կատարելու համար քրեական պարասխանատվություն նախատեսված չէ (...)»³⁷⁷: Նույն եզրակացության՝ եզրակացվելից հատվածի համաձայն՝ «Տ.Գալստյանի դիմումի կապակցությամբ նախապարտադրված նյութերը եզրակացությամբ կցել [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության] Արաբկիրի բաժնի քարտուղարության կարգադրին: (...)»³⁷⁸:

7. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի պետ Ա.Վաթյանի՝ 2019 թվականի հունիսի 27-ի թիվ 29/8-7290 գրության համաձայն՝ «ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված [Տ.Գալստյանի] դիմումը արացվել և քննարկվել է [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի] բաժնում: Կատարված արուզմամբ պարզվել է, որ դիմումում նշված հանգամանքները հանցագործության կամ զանցանքի հարկանիչներ չեն պարունակում, ուստի [Տ.Գալստյանի] դիմումի վերաբերյալ կազմված արուզման նյութերը թողնվել են անհետևանք և եզրակացությամբ կցվել քարտուղարության կարգադրին»³⁷⁹:

8. Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքով դիմող Տ.Գալստյանը խնդրել է պարտավորեցնել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի պետ Ա.Վաթյանին կատարելու «դիմում» վերտառությամբ հանցագործության մասին հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունների նախնական ստուգում կամ կայացնելու համապատասխան որոշում³⁸⁰:

9. Առաջին ատյանի դատարանը, մեջբերելով *Էմինա Կարապետյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշմամբ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ հանցագործության մասին հաղորդումները պետք է բովանդակեն տեղեկություն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին, գտել է, որ. «(...) ՀՀ գլխավոր դատախազությանը հասցեագրված Տ.Գալստյանի դիմումում և կից փաստաթղթերում [Առաջին ատյանի] դատարանի համոզմամբ կոնկրետ հանցագործության հարկանիչներ պարունակող նախապարտադրող,

³⁷⁷ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 29:

³⁷⁸ Տե՛ս նույն տեղում:

³⁷⁹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 30:

³⁸⁰ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 2-9:

կատարվող կամ արդեն կատարված հանցագործության մասին տեղեկատվություն առկա չէ, որն անհրաժեշտ պայմանն է, որպեսզի ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումը համարվի հանցագործության մասին հաղորդում:

Մասնավորապես, դիմողի կողմից մատրանշված փաստական հանգամանքները չեն պարունակում այնպիսի փաստական տվյալներ, որոնք քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ողջամրորեն կհիմնավորեն ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված սուր մատրանշության կատարման մասին:

Հերևարար դիմողի կողմից վկայակոչված դիմումում առկա դիտարկումներն [Առաջին արյանի] դատարանի համոզմամբ ողջամիր կասկած չեն առաջացնում սուր մատրանշության կատարման մասին: Հերևարար, քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր չէ հանրային ռեսուրսները ծախսել վերացական բնույթի տեղեկատվության քննարկման վրա, որի արդյունքում կաշկանդված կլինեք կայացնել քրեադատավարական բնույթի համապատասխան որոշում»³⁸¹:

10. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Բ]ողոքաբերի կողմից ներկայացված բողոքում բարձրացված հարցադրումներն ըստ էության պարունակում են վերջինիս գնահատականները դրանում նշված իրադարձությունների վերաբերյալ և հանցագործության հարկանիշներ մատրանշող տվյալների առկայության մասին տեղեկությունների առումով ինքնին բավարար դիտարկվել չեն կարող:

Ինչն անհրաժեշտ պայմանն է, որպեսզի ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումը համարվի հանցագործության մասին հաղորդում:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (կոնկրետ դեպքում) ներկայացված վերաքննիչ բողոքի պարճատարանությունների հետ համաձայնվելու իրավաչափ հիմքեր չկան:

Վերը բերված հիմնավորումներով, ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ [Առաջին արյանի դատարանը] սույն գործով դատական ակր կայացնելիս (բողոքը մերժելու առնչությամբ), նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ չի տվել, որոնք կարող են ազդել սույն գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»³⁸²:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ:

³⁸¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 34-37:

³⁸² Տե՛ս նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 53-62:

Ըստ բողոք բերած անձի՝ ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված դիմումը բովանդակում է տեղեկություններ հանցագործության հատկանիշներ մատնանշող տվյալների առկայության մասին, դրանում ներկայացված են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք առերևույթ համընկնում են քրեորեն պատժելի արարքի հատկանիշներին: Հետևաբար, բողոքաբերի պնդմամբ՝ Տ.Գալստյանի դիմումը հանցագործության մասին հաղորդում է և քրեական գործ հարուցելու առիթ, որի կապակցությամբ պետք է կայացվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ դիմումի վերաբերյալ քրեադատավարական օրենքով նախատեսված որոշում չկայացնելով՝ վարույթն իրականացնող մարմինը թույլ է տվել անգործություն, որը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել ստորադաս դատարանի կողմից, և որի արդյունքում խախտվել են դիմող Տ.Գալստյանի՝ օրենքով երաշխավորված իրավունքները:

12. Վերոշարադրյալի հիման վրա դիմող Տ.Գալստյանի ներկայացուցիչ Ս.Սուքիասյանը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մարտի 10-ի որոշումը՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնելու դիմող Տ.Գալստյանի իրավունքների և օրինական շահերի խախտումը, այն է՝ վերացնել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի պետ Ա.Վաթյանի՝ 2019 թվականի հունիսի 27-ի թիվ 29/8-7290 գրությունը կամ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մարտի 10-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Տ.Գալստյանի դիմումի կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշում կայացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց սրացման պահից 10 օրվա ընթացքում:*

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացարրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն: (...):»:

Նույն օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) քրեական գործ հարուցելու մասին.
- 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.
- 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին»:

14.1. Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Հրայր Մանուկյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշումն ակնարկելով այն մասին, որ. «Հանցագործության մասին հաղորդումն իրավաբանական փաստ է, որն առաջացնում է այն ստուգելուն և լուծելուն ուղղված դատավարական իրավահարաբերություններ: Հաղորդումը որպես քրեական գործ հարուցելու առիթ, պետք է համապատասխանի որոշակիության բովանդակային չափանիշին, մասնավորապես՝ բովանդակի տեղեկություն կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Նշվածը, սակայն, չի ենթադրում, որ քննարկման և լուծման ենթակա է միայն այն հաղորդումը, որը պարունակում է քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները կարող են բավարար լինել այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներ) գործողության մեջ դնելու համար, եթե որջամիտ հավանականություն կա, որ դրանց ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել, այլ ոչ թե հաստատապես հայտնաբերվելու են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննարկված չափանիշին համապատասխանող յուրաքանչյուր հաղորդում առաջացնում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը»³⁸³:

14.2. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումը, արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներն իրենցից ներկայացնում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված՝ սահմանափակ քրեադատավարական գործիքակազմի գործադրմամբ հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունների նախնական քննարկումը և ստուգումը եզրափակող որոշում: Այսինքն, այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը ներկայացված հաղորդման կապակցությամբ ձեռնարկել է դատավարական և (կամ) այլ գործողություններ, որոնցից հետևում է, որ դրանք ուղղված են հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները քննարկելուն և ստուգելուն, պարտավոր է կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը: Այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով

³⁸³ Տես Հրայր Մանուկյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0154/11/14 որոշման 14-րդ կետը:

նախատեսված որոշումներից մեկը կայացնելու պահանջը վերաբերում է այն հաղորդումներին, որոնցում պարունակվող տեղեկությունները իրավասու մարմնի կողմից գնահատվել են բավարար այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները գործադրելու համար:

15. Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների (անգործության) դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները (անգործությունը) ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների (անգործության) օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին³⁸⁴:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմող Տ.Գալստյանը ՀՀ գլխավոր դատախազություն դիմում է ներկայացրել Վ.Հայրապետյանի կողմից սուտ մատնություն կատարելու վերաբերյալ, որը քննարկման համար ուղարկվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժին³⁸⁵:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Օ.Շախկույանը միջոցներ է ձեռնարկել դիմումում պարունակվող տեղեկությունների նախնական քննարկման և ստուգման նպատակով՝ պահանջելով լրացուցիչ փաստաթղթեր ու բացատրություն վերցնելով դիմող Տ.Գալստյանից³⁸⁶:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Օ.Շախկույանը, եզրահանգելով, որ «Վ.Հայրապետյանի և Տ.Գալստյանի միջև հարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, իսկ չովյալ ոլորտում սուր մարտնչություն կատարելու համար քրեական պարտախանսավություն նախատեսված չէ», եզրակացություն է կազմել դիմող Տ.Գալստյանի դիմումի կապակցությամբ նախապատրաստված նյութերը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի քարտուղարության կարգազգրին կցելու վերաբերյալ³⁸⁷: ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի

³⁸⁴ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ներսես Միսակյանի* գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08, Վլադիմիր Բաղդասարյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԴ-4/0002/01/11, Արսեն Սակարյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, Հեղինե Պևրոյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԵԿԴ/0043/11/14 որոշումները:

³⁸⁵ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

³⁸⁶ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³⁸⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

բաժնի պետի գրությամբ դիմող Տ.Գալստյանին տրվել է գրավոր պատասխան՝ դիմումի վերաբերյալ նախապատրաստված նյութերն անհետևանք թողնելու և եզրակացությամբ նույն բաժնի քարտուղարության կարգագրին կցելու վերաբերյալ³⁸⁸:

Առաջին ատյանի դատարանը, հղում կատարելով *Լւմնա Կարասպետյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշմանը, գտել է, որ դիմող Տ.Գալստյանի դիմումը չի համապատասխանում հանցագործության մասին հաղորդման բովանդակային չափանիշին, հետևաբար վարույթն իրականացնող մարմինը պարտավոր չէ դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը³⁸⁹:

Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտը թողել է անփոփոխ՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունները բխում են գործի նյութերից, իսկ կայացված դատական ակտն օրինական է և հիմնավոր³⁹⁰:

17. Մեջբերված փաստական տվյալների ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Օ.Շախկուլյանը, ստանալով դիմող Տ.Գալստյանի դիմումը, ձեռնարկել է որոշակի դատավարական գործողություններ, որոնք ուղղված են եղել դիմումի մեջ պարունակվող տեղեկությունները քննարկելուն, ստուգելուն և լուծելուն: Այլ կերպ՝ դիմումում պարունակվող տեղեկությունների կապակցությամբ նախապատրաստվել են նյութեր, որի ընթացքում Տ.Գալստյանի հայտնած՝ սուտ մատնություն կատարելու հանգամանքը դարձվել է քննարկման առարկա, ինչի արդյունքում էլ, ըստ էության, իրավական գնահատական է տրվել Վ.Հայրապետյանի արարքին: Վերոշարադրյալից բխում է, որ Տ.Գալստյանի ներկայացրած հաղորդման առնչությամբ կիրառվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի կարգավորումները, ինչն էլ առաջացրել է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

18. Ուստի, սույն որոշման 16-17-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները և դրանց վերլուծությունը գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, հաստատելով դիմող Տ.Գալստյանի իրավունքների և օրինական շահերի խախտման բացակայության փաստը, պատշաճ իրավական գնահատականիչն արժանացրել այն, որ դիմումով հայտնած՝ սուտ մատնություն կատարելու մասին տեղեկությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

³⁸⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³⁸⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

³⁹⁰ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

180-րդ հոդվածով նախատեսված գործիքակազմի գործադրմամբ քննարկելու և ստուգելու արդյունքում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Օ.Շախկուլյանը սույն օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը կայացնելու փոխարեն կատարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով չնախատեսված գործողություններ՝ դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով կազմել է «եզրակացություն» և այն «կցել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի քարտուղարության կարգազրին», որի արդյունքում խախտվել են դիմող Տ.Գալստյանի՝ օրենքով երաշխավորված իրավունքները:

19. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Տ.Գալստյանի դիմումի կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշում կայացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից դատական ակտ կայացնելիս թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ, 181-րդ, 290-րդ և 358-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար:

Մինևույն ժամանակ, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Տ.Գալստյանի բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու սույն որոշմամբ արձանագրված՝ դիմողի իրավունքների խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Տիգրան Գրիշայի Գալստյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը և այն

օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մարտի 10-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Դիմող Տիգրան Գրիշայի Գալստյանի բողոքը բավարարել մասնակիորեն՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու սույն որոշմամբ արձանագրված՝ դիմողի իրավունքների խախտումը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արորագրություն

Դատավորներ

արորագրություններ

24.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴՆ/0072/01/17

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի մայիսի 21-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Էմիլ Հովհաննեսի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի մարտի 7-ին ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 57106916 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մարտի 17-ի որոշումներով Էմիլ Հովհաննեսի Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Նույն օրն Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ Է.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 28-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կասեցվել է՝ մեղադրյալ Է.Հովհաննիսյանի գտնվելու վայրը հայտնի չլինելու հիմքով:

2017 թվականի հունիսի 9-ին Է.Հովհաննիսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 9-ի որոշմամբ քրեական գործով վարույթը վերսկսվել է:

Նույն օրն Է.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 10-ի որոշմամբ Է.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորումը վերահաստատվել է՝ կալանավորման ժամկետի սկիզբը հաշվելով 2017 թվականի հունիսի 9-ից:

2017 թվականի նոյեմբերի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մարտի 15-ի դատավճռով ամբաստանյալ Է.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքը վերադրակվել է, վերջինս մեղավոր է ճանաչվել նույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ՝ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանն ազատվել է ազատազրկման ձևով նշանակված պատժից: Ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ կալանավորումը, վերացվել է և վերջինս ազատվել է կալանքից դատական նիստերի դահլիճում:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մարտի 15-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ դատարանը 2021 թվականի մարտի 17-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Էմիլ Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա. «(...) 2016 թվականի մարտի 7-ին ժամը 16:03-ին, Արմավիրի մարզի Փարաքար գյուղի «Կամրջի փակ» հասցեում գործող «Սուսաննա Քեյան» ԱԶ-ին պարկանող մթերային խանութի դիմաց իր ընկեր Սուրեն Աղասու Աթաբեկյանի կողմից խուլիգանություն կատարելու պարճառով նշված գյուղի բնակիչներ, հայր և որդի Արմեն Վարդանի Պետրոսյանի և Վարդան Արմենի Պետրոսյանի հետ առաջացած վիճաբանության ժամանակ միջամտել է կռվին, որի ընթացքում իր մոտ գտնվող կրթող-ծակող գործիքով մարմնական վնասվածք պարճատելու դիրավորությանը մեկական հարվածներ հասցրել Վ.Պետրոսյանի և Ա.Պետրոսյանի կրծքավանդակների ձախ կեսի կողմնային հարվածներին պարճատելով վերջիններիս առողջությանը ծանր վնաս կյանքին վրանագ սպառնացող»³⁹¹:

6. Տուժող Վարդան Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ շարժական հեռախոսակապի հաշիվը վերալիցքավորելու նպատակով բնակության վայրի հարևանությամբ գտնվող խանութ գնալու ճանապարհին նկատել է միմյանց հետ վիճաբանող երեք անձանց, բայց քանի որ վերջիններս անձանոթ էին, շարունակել է ճանապարհը: Հաշիվը վերալիցքավորելուց հետո դուրս է եկել խանութից՝ շարժվելով դեպի բնակության վայր: Ճանապարհին կարճ խոսակցություն է ունեցել այդ անձանց հետ, որից հետո կրկին շարունակել է իր ճանապարհը, սակայն քիչ անց նրանցից մեկը մոտեցել է իրեն, խոսակցության ընթացքում սկսել են քաշքշել միմյանց, այնուհետև մոտեցել են ևս երկուսը, ու սկսվել է ծեծկոտուք, խառնաշփոթ, մարդիկ են հավաքվել: Ծեծկոտուքի ընթացքում նկատել է, որ ճանապարհի հակառակ կողմից վազելով իրենց է մոտենում մի տղա՝ ձեռքում ինչ-որ առարկա պահած, որով հարվածել է իր մարմնի ձախ կողմնային մասին: Դրանից հետո տեսել է, որ հայրը Ա.Պետրոսյանը, նույնպես վնասվածք է ստացել, իսկ այդ երիտասարդը վազելով անցել է փողոցը: Դեպքի վայրի գնությունը առգրավված տեսանյութը դիտելուց հետո հայտնել է, որ իրեն և Ա.Պետրոսյանին մարմնական վնասվածք պատճառողն իրենց հետ վիճաբանող երեք անձանցից չէր, այլ դիմացի մայթից դեպի իրենց վազող տղամարդը³⁹²:

³⁹¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 373-381:

³⁹² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 76-78, հատոր 2, թերթեր 49-50, 58-59:

7. Տուժող Արմեն Պետրոսյանը, ըստ էության, ցուցմունք է տվել այն մասին, որ որդու՝ Վ.Պետրոսյանի տնից դուրս գալուց քիչ անց վիճաբանության ձայներ է լսել, անմիջապես դուրս է եկել տնից և տեսել, որ երեք երիտասարդ վիճաբանում են Վ.Պետրոսյանի հետ, մոտեցել է նրանց, որպեսզի դադարեցնի վիճաբանությունը: Այդ ընթացքում սկսվել է խառնաշփոթ, մարդիկ են հավաքվել, երթևեկությունը կաթվածահար է եղել: Վիճաբանությունը դադարեցնելուն ուղղված իր գործողությունների ընթացքում նկատել է, որ կրծքավանդակի ձախ հատվածից արյուն է հոսում, այնուհետև տեսել է Վ.Պետրոսյանին՝ ձախ կողքը բռնած վիճակում, մոտեցել և բարձրացրել է նրան: Իրողությունը գնահատելով՝ հասկացել է, որ վիճաբանության ընթացքում իրենց դանակահարել են: Դեպքի վայրի զննությամբ առգրավված տեսանյութը դիտելուց հետո հայտնել է, որ իրեն և Վ.Պետրոսյանին մարմնական վնասվածքներ պատճառողը բուն վիճաբանության մասնակիցներից չէ, այլ դիմացի մայթից վազելով մոտեցող երիտասարդը³⁹³:

8. Դեպքի վայրի զննությամբ առգրավված տեսագրության և այն զննելու մասին արձանագրության համաձայն՝ «(...) /Տեսագրության՝ ժամը 16:01-ին երևում է խանութից քիչ հեռու հավաքված մի քանի երիտասարդներ, ովքեր աստիճանաբար մոտենում են խանութին և վիճաբանում միմյանց հետ, իսկ նրանցից երկուսը հեռվանում են և չեն երևում կադրում: Խանութի դիմացի հարվածից քայլելով՝ վիճաբանող տղաներին է մոտենում մի երիտասարդ և կանգնում նրանց մոտ, իսկ ժամը 16:03-ին այդ երկու երիտասարդները հետ են վերադառնում, իսկ նրանցից սև բաճկոնով երիտասարդն արագ քայլելով է մոտենում՝ ագրեսիվ պահվածքով, և մոտենալուն պես հրում և քաշքշում է այդ հավաքված տղաներից մեկին: Դրանից հետո մոտենում են այլ անձինք, և շուրջ 9 անձ քաշքշում և հարվածում են միմյանց, իսկ ժամը 16:03:46 վայրկյանին ճանապարհի մյուս մայթից մի բարձրահասակ, նիհարավուն կազմվածքով երիտասարդ վազքով մոտենում է վիճաբանող անձանց և ձեռքով հարվածում է նրանցից մեկին, իսկ հետո հարվածում է երկրորդ անձի կողային հարվածին, ով քաշում է նրա թևերից, հետո նրանցից մեկը փորձում է ուրքով հարվածել փողոցը անցած երիտասարդին, ով հետ-հետ գնալուց հետո փորձում է բարձրացնել գեյրնին ընկած երիտասարդին, իսկ հետո կրկին անցնում է փողոցը: (...)»³⁹⁴:

9. Դատաբժշկական փորձաքննության թիվ 48/հ եզրակացության համաձայն՝ «(...) Ա.Պետրոսյանի սրացած մարմնական վնասվածքները՝ կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսի միջին անութաստապին գծով 7-8-րդ միջկողային տարածության, ըստ բժշկական փաստաթղթերի տվյալների, կտրած-ծակած թափանցող վերքի, ձախ թոքի սրորին բլթի վնասման հետնայնամոթորաքսի ձևով, պարճատվել է կտրող-ծակող գործիքով, ինչպիսին կարող է լինել և դանակը,

³⁹³ Տես քրեական գործ, հատոր 1, թերթեր 82-83, հատոր 2, թերթեր 47-48, 57:

³⁹⁴ Տես քրեական գործ, հատոր 2, թերթեր 317-318, հատոր 5, դեպքի վայրի զննությամբ առգրավված տեսագրությունը պարունակող լազերային կրիչը, թերթ 72:

հնարավոր է նշված ժամկետում և պատճառվել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող»³⁹⁵:

9.1. Դատաբժշկական փորձաքննության թիվ 49/հ եզրակացության համաձայն՝ «(...) Վ.Պետրոսյանի սրացած մարմնական վնասվածքը՝ կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսի միջին անտոֆաիտոսային գծով 10-րդ կողի մակարդակի ըստ բժշկական փաստաթղթերի տվյալների կոմքիսացված կրծքավանդակի և որովայնի խոռոչներ թափանցող կրքած-ծակած վերքի, ձախ թոքի արորին բլթի սրածանու և փայծաղի վնասման ներքին արյունահոսության ձևով, պատճառվել է կրորդ-ծակող գործիքով, ինչպիսին կարող է լինել և դանակը, հնարավոր է նշված ժամկետում և պատճառվել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող»³⁹⁶:

10. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Պատշաճ իրավական ընթացակարգի պահպանմամբ, գնահատելով քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված և դատական քննությամբ հետազոտված ապացույցները, այդպիսիք համադրելով միմյանց հետ, դիտարկելով վերաբերելիության և թույլատրելիության տեսանկյունից, [Առաջին ատյանի] դատարանը գրնում է, որ Է.Հովհաննիսյանին մեղսագրված արարքը ենթակա է որակման ՀՀ Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Գործի քննությամբ ապացուցված է այն, որ Է.Հովհաննիսյանը նպատակ և դիտարկորոշումն չի ունեցել ծանր մարմնական վնասվածքներ հասցնել որևէ անձի, տվյալ դեպքում հայր և որդի Պետրոսյաններին: (...) Իրական և առարկայական է այն, որ դեպքի օրը Է.Հովհաննիսյանը դանակով հարվածել և վնասվածք է պատճառել մեկ անձի, այլ ոչ՝ երկու անձանց: Եշված հանգամանքն ընդունում և հաստատում է ամբաստանյալը: Մեկից ավելի անձանց դիտարկորոշությամբ դանակի գործադրմամբ ծանր մարմնական վնասվածք հասցնելու Է.Հովհաննիսյանի դիտարկորոշումն ապացուցված չէ (...)»³⁹⁷:

11. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ձեռք բերված թույլատրելի և վերաբերելի ապացույցների հետազոտությունը թույլ է տալիս համաձայնելու Առաջին ատյանի դատարանի եզրահանգմանն առ այն, որ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի գործողությունները պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հարկանիշներ, միևնույն երկու կամ ավելի անձանց առողջությանը դիտարկորոշությամբ ծանր վնաս պատճառելու հանցակազմի առկայության վերաբերյալ բավարար ապացույցներ, ըստ էության, ձեռք չեն բերվել:

Վերաքննիչ դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ սույն գործով առկա փաստական տվյալներից բխում է հետևյալը.

³⁹⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 229-230:

³⁹⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 231-232:

³⁹⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 125-132:

- Է.Հովհաննիսյանի կողմից վիճաբանությանը միջամտելու և տուժողներից մեկին հարվածելու վերաբերյալ տվյալներ, ըստ էության, առկա են հենց ամբաստանյալի ինքնախոստովանական ցուցմունքներում, որոնցով վերջինը նշել է, որ Ս.Աթաբեկյանին օգնելու նպատակով միջամտել է ընկերների մասնակցությանը կատարվող վիճաբանությանը և դասակարգել մեկ անգամ հարվածել վիճաբանությանը մասնակցած անձանցից մեկին, ում չի ճանաչել:

- Համեմատյալ վկա Ա.Գասպարյանի ցուցմունքների ամբաստանյալ Է.Հովհաննիսյանը մեքենայում գտնվելու ընթացքում նշել է «էն մեկին խիեցի, րեանես ինչ եղավ»:

- Տուժողների կողմից չի մատչանշվել վիճաբանության ընթացքում իրենց մարմնական վնասվածք պարճատող անձի վերաբերյալ որևէ տվյալ: Մասնավորապես տուժող Վ.Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ նկատել է, որ ճանապարհի հակառակ կողմից մի տղա վազքով մտրեցել է իրենց, այնուհետև չի հիշել, թե որ ձեռքով ինչ-որ բան պահած հարվածել է իր ձախ կողային մասին: Առաջին արյանի դադարան ուղարկված դիմումով նշել է, որ չգիտի, թե ով է իրեն մարմնական վնասվածք պարճատել և որևէ անձի չի կարող մատչանշել: Տուժող Ա.Պետրոսյանը հայտնել է, որ չի տեսել իրեն դասակահարած անձին, ինչպես նաև Առաջին արյանի դադարան է ուղարկել նույնաբովանդակ դիմում առ այն, որ չի կարող մատչանշել հիշյալ անձին:

- Գործով ձեռք բերված այլ ապացույցներով, այդ թվում նաև վկաներ Հ.Արվազյանի, Ս.Հակոբյանի և Գ.Էտջոյանի ցուցմունքներով հիմնավորվում է միայն ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի կողմից փողոցն անցնելու և վիճաբանությանը միջամտելու հանգամանքը:

- Դեպքի վայրի զննությանը ազդարարված րեասնկարահանող սարքի զննության արձանագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի երիտասարդ անցնում է փողոցը, մտրենում է վիճաբանող և կոխվ անող երիտասարդներին, հարվածում է նրանցից մեկին և կրկին անցնում փողոցը, մինչդեռ այլ անձի դասակարգել հարվածելու վերաբերյալ տվյալներ առկա չեն:

Վերաքննիչ դադարանը փաստում է, որ վերը նշված ապացույցների համակցությունը թույլ է տալիս հիմնավորված համարել ամբաստանյալ Էմիլ Հովհաննիսյանի վիճաբանության ընթացքում փողոցը հարած երիտասարդը լինելու և տուժողներից մեկին դասակարգել հարվածելու հանգամանքը: Վերաքննիչ դադարանը փաստում է, որ թեև Առաջին արյանի դադարանի կողմից իրավացիորեն նշվել է, որ ամբաստանյալ Էմիլ Հովհաննիսյանի արարքը ենթակա է վերատրակման ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, սակայն չի նշվել, թե ամբաստանյալի կողմից ըստ էության ում առողջությանն է դիրավորությանը պարճատվել կյանքին վրանգ սպառնացող ծանր վնաս: Վերաքննիչ դադարանն այս հարցի կապակցությանը հարկ է համարում նշել, որ առկա ապացույցների, մասնավորապես, տուժող Վարդան Պետրոսյանի և դեպքի վայրի զննությանը ազդարարված րեասնկարահանող սարքի զննության արձանագրության համախոր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի կողմից դասակարգել հարվածն ուղղված է եղել

Վ.Պետրոսյանին, որի արդյունքում էլ վերջինի առողջությանը դիտարկությանը պարճատվել է կյանքին վրանգ սպառնացող ծանր վնաս (դատաբժշկական փորձաքննության թիվ 49/հ եզրակացություն): Ամբաստանյալի գործողությունները եղել են նպատակամղված և կոնկրետ, այսինքն՝ սույն դեպքում ամբաստանյալը գիտակցել է իր գործողությունների հանրության համար վրանգավոր բնույթը, նախատեսել վրանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և ցանկացել դրանք, որպիսի հանգամանքը հաստատվում է նաև վերջինիս ցուցմունքներով:

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի կողմից մյուս Կոմիտեիին Ա.Պետրոսյանին դանակով հարվածելու վերաբերյալ փյախներ քրեական գործով ձեռք չեն բերվել, ուստի ամբաստանյալին այդ մասով առաջադրված մեղադրանքը որպես հանցակազմի հատկանիշների դատարկարական արտահայտություն, սույն դեպքում հիմնավորված չէ:

Այս առումով Վերաքննիչ դատարանը հարկ է համարում ուշադրություն դարձնել նաև վկա Ս.Աթաբեկյանի ցուցմունքներին այն մասին, որ ամբաստանյալն է իրեն բարձրացրել գեղնից, ինչպես նաև ինչ-որ մեկի մոտ նկատել է դանակ, որի մասին զգուշացրել է նաև ամբաստանյալին, այսինքն Վերաքննիչ դատարանը փաստում է, որ վկայի ցուցմունքներով հիմնավորվում է վիճաբանությանը մասնակցող որևէ անձի երկրորդ դանակի առկայությունը: Հիշյալի կապակցությամբ նույնաբովանդակ ցուցմունք է փյախել նաև ամբաստանյալ Է.Հովհաննիսյանը: Բացի այդ, Ս.Աթաբեկյանի բաձկնի թևի մասում առկա է եղել պատրվածք, որը, ըստ դատափորձարանական փորձաքննության թիվ 16-0621 եզրակացության, առաջացել է արտացցված եզր ունեցող առարկայի հետ փոխազդեցության մեջ մրնելու հետևանքով, ինչը ևս վկայում է վկայի ցուցմունքների արժանահավասար լինելու մասին: Վերը նշված պարճատարանություններով Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում մեղադրողի վերաքննիչ բողոքի պարճատարանություններն այն մասին, որ վկայի ցուցմունքները պայմանավորված են ամբաստանյալին օգնելու ցանկությամբ և արճանահավասար չեն կարող համարվել»³⁹⁸:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալ Է.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելով, թույլ են տվել դատական սխալ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

³⁹⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 84-112:

12.1. Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարաններն անտեսել են գործում առկա դեպքի վայրի գննությամբ ազդարկված տեսագրությունը և դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը: Մասնավորապես, ըստ բողոքի հեղինակի՝ դեպքի վայրի գննության ժամանակ ազդարկված տեսագրության գննությամբ հստակ երևում է, որ 2016 թվականի մարտի 7-ին՝ ժամը 16:03:47 վայրկյանին, ամբաստանյալ Է.Հովհաննիսյանը, փողոցն անցնելով, վազելով մոտենում է Ս.Աթաբեկյանին հարվածող տուժող Վ.Պետրոսյանին և այժմ ձեռքով շարժում անում դեպի վերջինս, ապա անմիջապես հաջորդ ակնթարթում՝ 16:03:48-րդ վայրկյանին, պտտվելով կրկին այժմ ձեռքով հարվածանման շարժում է կատարում անմիջապես իր կողքը գտնվող մյուս տուժող Ա.Պետրոսյանի կրծքավանդակի ձախ կեսի կողմնային հատվածի ուղղությամբ: Նույն տեսանյութից ակնհայտ է, որ տուժող Ա.Պետրոսյանը տեղի ունեցած վիճաբանությանը որևէ մասնակցություն չի ունեցել, մինչև Է.Հովհաննիսյանի մոտենալն Ա.Պետրոսյանին որևէ մեկը չի հարվածել:

12.2. Բացի այդ, ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ դատաբժշկական փորձաքննության թիվ 48/հ եզրակացությամբ արձանագրված՝ տուժող Ա.Պետրոսյանի մարմնական վնասվածքի տեղակայումը համընկնում է տեսանյութում արտացոլված պատկերի հետ:

12.3. Միևնույն ժամանակ, բողոքի հեղինակն ընդգծել է, որ ստորադաս դատարանները տեսանյութում ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի կողմից տուժող Ա.Պետրոսյանին հարվածելու պահն ավելի ակնհայտ երևալու պայմաններում հաստատված են համարել միայն տուժող Վ.Պետրոսյանին հարվածելու հանգամանքը:

12.4. Բողոքի հեղինակը նաև փաստել է, որ ստորադաս դատարաններն իրենց դատողությունները կառուցել են միմյանց հակասող ցուցմունքների վրա: Մասնավորապես, ըստ բողոքի հեղինակի՝ վկա Ս.Աթաբեկյանի՝ վիճաբանությանը մասնակցող ինչ-որ անձի մոտ դանակ տեսնելու վերաբերյալ ցուցմունքի արժանահավատության հարցում ստորադաս դատարանները հանգել են սխալ եզրահանգման: Որպես հիմնավորում՝ բողոքաբերը նշել է, որ վկա Ս.Աթաբեկյանը և ամբաստանյալ Է.Հովհաննիսյանն ընկերներ են, վիճաբանությունն առաջացել է Ս.Աթաբեկյանի պատճառով, հետևաբար, դեպքից շուրջ երկու տարի անց ամբաստանյալ Է.Հովհաննիսյանին հայտնաբերելուց հետո վերջինիս հետ առերեսվելու ժամանակ վիճաբանությանը մասնակցող ինչ-որ անձի մոտ դանակ տեսնելու հանգամանքի մասին նրա կողմից հայտնելը ընկերոջը՝ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանին ամեն գնով օգնելու նպատակ է հետապնդում, և որևէ այլ ապացույցով չի հաստատվում:

12.5. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանների կողմից անտեսվել և պատշաճ գնահատականի չի արժանացել տուժողների կողմից որպես իրենց մարմնական վնասվածքներ պատճառած անձ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանին մատնանշելու հանգամանքը:

Արդյունքում բողոքի հեղինակը եզրահանգել է, որ քրեական գործում առկա դեպքի վայրի գննությանը առգրավված տեսագրությունը և դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև տուժողների ցուցմունքները միմյանց հետ համադրելու, վերլուծելու և գնահատելու արդյունքում ապացուցվում է ամբաստանյալ Է.Հովհաննիսյանին մեղաազրված հանցանքը:

13. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված է արդյոք ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածը սահմանում է. *«1.Գարավորը, ինչպես նաև հեղաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ: (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ արուզման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն արուզելու միջոցով»:*

Նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության րեսանկյունից»:*

2. Հեղաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

15.1. Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից:

Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա ապացույցները բարեխիղճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով³⁹⁹:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

16.1. Դատական ակտի պատճառաբանված լինելու հատկանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կանայականություններից:

Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը ելել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է դեկլարվել նման որոշում կայացնելիս, և մինևույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: Ընդ որում, դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստի և դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին⁴⁰⁰:

³⁹⁹ Տե՛ս *mutatis mutandis*, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԲԲԴ/0632/01/08, Հմայակ Դավթյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԴ/0126/01/12 որոշումները:

⁴⁰⁰ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ֆրունզիկ Գալստյանի* գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, *Գևորգ Խնուսյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12, *Արսեն Մակարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, *Արամայիս Հակոբյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14, *Մարտուն Հակոբյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՐԴ/0005/11/16 և *Արարատ*

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2016 թվականի մարտի 7-ին միջամտելով Արմավիրի մարզի Փարաքար գյուղի «Կամրջի տակ» հասցեում գործող մթերային խանութի դիմաց իր ընկերոջ և Ա.Պետրոսյանի ու Վ.Պետրոսյանի միջև տեղի ունեցած վիճաբանությանը, իր մոտ գտնվող կտրոդ-ծակոդ գործիքով մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ մեկական հարվածներ է հասցրել Վ.Պետրոսյանի և Ա.Պետրոսյանի կրծքավանդակների ձախ կեսի կողմնային հատվածներին՝ վերջիններիս առողջությանը պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող⁴⁰¹:

Առաջին ատյանի դատարանը, գնահատելով գործում առկա ապացույցները, եզրահանգել է, որ գործով ձեռք չի բերվել վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հաստատված համարել ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի կողմից երկու անձանց առողջությանը դիտավորությամբ կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս պատճառելու հանգամանքը: Միաժամանակ, Առաջին ատյանի դատարանն ապացուցված է համարել ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի կողմից դանակի գործադրմամբ անձի առողջությանը դիտավորությամբ ծանր մարմնական վնաս պատճառելը՝ չկոնկրետացնելով, թե ում առողջությանն է դիտավորությամբ պատճառվել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս: Արդյունքում Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Է.Հովհաննիսյանին մեղսագրված արարքը վերադրակել և նրան մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով⁴⁰²:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, արձանագրել է, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը թույլ է տալիս հիմնավորված համարել ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի՝ վիճաբանության ընթացքում փողոցը հատած երիտասարդը լինելու և տուժող Վ.Պետրոսյանին դանակով հարվածելու հանգամանքը, և որ քրեական գործում առկա չէ որևէ ապացույց, այդ թվում՝ նաև դեպքի վայրի զննությամբ առգրավված տեսանկարահանող սարքի զննության արձանագրությունը, որը կհիմնավորեր ամբաստանյալի կողմից նաև տուժող Ա.Պետրոսյանին դանակով հարվածելու հանգամանքը: Վերաքննիչ դատարանը կարևորել է նաև այն, որ վկա Ս.Աթաբեկյանի ցուցմունքներով հիմնավորվում է վիճաբանությանը մասնակցող անձանցից մեկի մոտ երկրորդ դանակի առկայությունը: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ հիշյալ փաստական հանգամանքի արժանահավատության մասին են վկայում ինչպես դատահետքաբանական փորձաքննության

Մարգարյանի գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԵԱԴԿ/0005/01/17 որոշումները:

⁴⁰¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁴⁰² Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

եզրակացությունը, համաձայն որի՝ Ս.Աթաբեկյանի բաճկոնի թևի մասում առկա պատռվածքն առաջացել է արտացցված եզր ունեցող առարկայի հետ փոխազդեցության մեջ գտնվելու հետևանքով, այնպես էլ՝ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի ցուցմունքը⁴⁰³:

18. Վճռաբեկ դատարանը, նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատման ենթարկելով սույն որոշման 15-16.1-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ վերլուծության չի ենթարկել սույն գործում առկա ապացույցների համակցությունը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել դեպքի վայրի զննությամբ առգրավված տեսագրությունն ու դրա զննության արձանագրությունը, դրանցում առկա տեղեկությունները չեն գնահատվել գործում առկա այլ ապացույցների հետ համակցության մեջ:

18.1. Այսպես, Վերաքննիչ դատարանը, դեպքի վայրի զննությամբ առգրավված տեսագրությունը զննելու մասին արձանագրության հետազոտման արդյունքում գալով այն հետևությանը, որ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի կողմից երկու անձի դանակով հարվածելու վերաբերյալ տվյալներ դրանում առկա չեն, ըստ էության պատշաճ վերլուծության չի ենթարկել նշված տեսագրության և այն զննելու մասին արձանագրության մեջ առկա այն տվյալները, ըստ որոնց ճանապարհի մյուս մայթից մի բարձրահասակ, սիհարավուն կազմվածքով երիտասարդ վազքով մոտենում է վիճաբանող անձանց և աջ ձեռքը շարժում տուժող Վ.Պետրոսյանի ուղղությամբ, ապա անմիջապես, տեղում կանգնած վիճակում պտտվելով, աջ ձեռքով շարժում կատարում անմիջապես իր առջևում գտնվող տուժող Ա.Պետրոսյանի մարմնի ձախ կեսի կողմնային հատվածին⁴⁰⁴: Վերոնշյալ փաստական տվյալները Վերաքննիչ դատարանը պատշաճ վերլուծության չի ենթարկել և չի համադրել գործում առկա այլ ապացույցների, այդ թվում՝ տուժողների ցուցմունքների հետ, առ այն, որ իրենց մարմնական վնասվածքը պատճառողն իրենց հետ վիճաբանող անձանցից չէր, այլ դիմացի մայթից դեպի իրենց վազող տղամարդն էր⁴⁰⁵, ինչպես նաև Ա.Պետրոսյանի մարմնական վնասվածքի տեղակայման վերաբերյալ դատաբժշկական փորձաքննության թիվ 48/հ եզրակացության համատեքստում⁴⁰⁶, ինչը կարևոր նշանակություն կարող էր ունենալ տուժող Ա.Պետրոսյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու հանգամանքները պարզելու, հետևապես նաև ամբաստանյալ Է.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածությունը գնահատելու հարցում: Փոխարենը, Վերաքննիչ դատարանը փաստել է,

⁴⁰³ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

⁴⁰⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը և քրեական գործ, հատոր 5, դեպքի վայրի զննությամբ առգրավված տեսագրությունը պարունակող լազերային կրիչը, թերթ 72:

⁴⁰⁵ Տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը:

⁴⁰⁶ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

որ սույն քրեական գործում առկա ապացույցների համակցությունը թույլ է տալիս հաստատելու ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի կողմից միայն տուժող Վ.Պետրոսյանին դանակով հարվածելու հանգամանքը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել, որ Վերաքննիչ դատարանի վերագրյալ հետևությունը չի բխում նաև դեպքի վայրի զննությամբ առգրավված տեսագրությունից⁴⁰⁷:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի հիմքում դրել է նաև այն եզրահանգումը, որ գործում առկա դատահետքաբանական փորձաքննության եզրակացությունը և ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի ցուցմունքը հիմք են տալիս արժանահավատ գնահատելու վիճաբանությանը մասնակցող՝ մեկ այլ անձի մոտ երկրորդ դանակի առկայության վերաբերյալ վկա Ս.Աթաբեկյանի ցուցմունքը: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ նշված հանգամանքի վերաբերյալ վկա Ս.Աթաբեկյանի ցուցմունքի արժանահավատությունը Վերաքննիչ դատարանի կողմից պետք է գնահատվեր գործում առկա այն տվյալների համատեքստում, համաձայն որոնց՝ վկան ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի ընկերն է, վիճաբանությունն առաջացել է վկա Ս.Աթաբեկյանի պատճառով, այլ անձի մոտ դանակ տեսնելու մասին վկան հայտնել է դեպքից շուրջ երկու տարի անց՝ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի հետ առերես հարցաքննության ժամանակ⁴⁰⁸, տուժողները դեպքի վայրի զննությամբ առգրավված տեսագրությունը դիտելուց հետո հերքել են վիճաբանության անմիջական մասնակիցների կողմից իրենց դանակի գործադրմամբ հարվածներ հասցնելու հանգամանքը⁴⁰⁹:

Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով իր նախադեպային իրավունքում արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ պայմանավորված ապացուցողական տեղեկատվության ձեռք բերման միջոցներով և դրանց արդյունքների՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ ամրագրված լինելու հանգամանքով, տեսանկարահանումներն օժտված են բարձր արժանահավատություն ունեցող ապացույց համարվելու համար անհրաժեշտ չափանիշներով և կարող են այս կամ այն փաստական հանգամանքի հաստատման կամ հերքման առումով անփոխարինելի նշանակություն ունենալ⁴¹⁰, արձանագրում է, որ դեպքի վայրի զննությամբ առգրավված տեսագրության բովանդակությունը կարող է հերքվել ոչ այլ կերպ, քան այդ ապացույցին արժանահավատությամբ չզիջող ապացույցով կամ ապացույցների համակցությամբ:

19. Վերոշարադրյալի արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Է.Հովհաննիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի

⁴⁰⁷ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁴⁰⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 333-335:

⁴⁰⁹ Տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը:

⁴¹⁰ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արամայիս Հակոբյանի* վերաբերյալ գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշումը:

112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված և պատճառաբանված չէ:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջների խախտումներ, կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, արարքի քրեաիրավական որակման հարցում պետք է հանգի համապատասխան հետևության:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ առկա են Է.Հովհաննիսյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերն ու պայմանները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց պետք է ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Էմիլ Հովհաննեսի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մարտի 15-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

25.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0010/14/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏԻՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2021 թվականի մայիսի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Աստղիկ Ռազմիկի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի որոշման դեմ պաշտպան Ա.Թումայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 28-ի թիվ ԵԿԴ/0064/01/15 որոշմամբ Աստղիկ Խաչատրյանն ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված քրեական պատասխանատվությունից ու պատժից, և նրա նկատմամբ նշանակվել է հարկադիր բուժում՝ հոգեբուժական հիվանդանոցի ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում:

1.1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ Ա.Խաչատրյանի նկատմամբ հոգեբուժական հիվանդանոցի ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը փոխարինվել է արտահիվանդանոցային հարկադիր բուժմամբ և տեղամասային հոգեբույժի մոտ հսկողությամբ:

1.2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Հակոբյանի՝ 2019 թվականի փետրվարի 21-ի միջնորդությունը բավարարվել է, և Ա.Խաչատրյանի նկատմամբ կիրառվող հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը փոխարինվել է հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժմամբ:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 18-ի որոշման դեմ Ա.Խաչատրյանի պաշտպան Ա.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճարել բողոք է ներկայացրել Ա.Խաչատրյանի պաշտպան Ա.Թումասյանը, որը Վճարելի դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճարելի դատարանը 2021 թվականի մայիսի 17-ին որոշում է կայացրել վճարել բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Ա.Հակոբյանը 2019 թվականի փետրվարի 21-ի միջնորդությանը կցել է բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման հանձնաժողովի թիվ 01/19 եզրակացությունը, որի համաձայն՝ «(...) Ա.Խաչատրյանը 2015 թվականին երկու անգամ անցել է արացիոնար ԴՀՓ, որի թիվ 54 և 114 եզրակացությունների համաձայն, Աստղիկ Ռազմիկի Խաչատրյանը տառապել է և տառապում է «Անձի պարանոխի խանգարում» հոգեկան հիվանդությամբ և ճանաչվել է անմեղսունակ: (...) 2018 թվականի փետրվարի 20-ին Ա.Խաչատրյանը «Ավան» հոգեկան առողջության կենտրոն ՓԲ ընկերությունում զննվել է արտահիվանդանոցային հարկադիր հիվանդների վերանայման հանձնաժողովի կողմից, [և] հիմք ընդունելով Ա.Խաչատրյանի հոգեկան վիճակը՝ եզրակացվել է շարունակելու արտահիվանդանոցային հարկադիր բուժումը և հսկողությունը: (...) [Վերջին զննումից հետո Ա.Խաչատրյանը տեղամասային հոգեբույժի մոտ

չի ներկայացել (...): 2019 թվականի փետրվարի 15-ին տեղամասային հոգեբույժ Ա.Պողոսյանը ներկայացրել է միջնորդություն արտահիվանդանոցային հարկադիր հիվանդների վերանայման հանձնաժողովի նախագահին՝ Ա.Խաչատրյանի հարկադրանքի միջոցը փոխելու նպատակով: Հանձնաժողովը վերլուծելով վերոշարադրյալը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի «արտահիվանդանոցային և հիվանդանոցային հոգեբուժական բժշկական օգնության փրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 350 որոշման 23-րդ կետով, միջնորդություն է ներկայացնում Աստղիկ Ռազմիկի Խաչատրյանի նկատմամբ կիրառվող արտահիվանդանոցային հարկադիր բուժումը և հսկողությունը փոխարինել հիվանդանոցային հարկադիր բուժմամբ ընդհանուր փրայի հոգեբուժական բաժանմունքում տեղավորելու մասին (...):»⁴¹¹:

5. Առաջին ատյանի դատարանը, քննարկելով միջնորդությունը, 2019 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Դատարանը, հաշվի առնելով, որ Ա.Խաչատրյանը չի հաճախում տեղամասային հոգեբույժի մոտ և չի սրանում դեղորայք, իրեն հիվանդ չի համարում և հայտարարում է, որ կամովին չի շարունակի բուժումը, նկատի ունենալով, որ (...) 2018 թվականի փետրվարի 20-ի եզրակացության համաձայն՝ Ա.Խաչատրյանը արտահիվանդանոցային հարկադիր բուժումը և հսկողությունը շարունակելու կարիք ունի, գրնում է, որ նրա նկատմամբ կիրառվող հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը պետք է փոխարինել հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժմամբ (...):»⁴¹²:

6. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Ա.Խաչատրյանը (...) տեղեկացված լինելով իր (...) պարտականությունների մասին՝ չի կարարել դրանք, մասնավորապես (...) տեղամասային հոգեբույժի մոտ չի ներկայացել, հերևասպես չի սրացել ու չի ընդունել նշանակված դեղահատերը, հայտարարել է, որ հիվանդ չի և կամովին չի շարունակի բուժումը: Ելվածը կհանգեցնի նրա հոգեկան առողջության վիճակի վարթարացման՝ դրանից բխող բոլոր հնարավոր հերևանքներով (...):»⁴¹³:

Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական սորմերի էական խախտումներ, որի արդյունքում կայացրել են չհիմնավորված և չպատճառաբանված որոշումներ:

Մասնավորապես, ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը, ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, բացի այդ ստորադաս դատարանների որոշումները

⁴¹¹ Տեն նյութեր, հատոր 1, թերթեր 3-4:

⁴¹² Տեն նյութեր, հատոր 1, թերթեր 90-92:

⁴¹³ Տեն նյութեր, հատոր 2, թերթեր 46-52:

հակասում են Վճռաբեկ դատարանի՝ Արտավազ Ծարությունի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0045/14/13 և Գրիգոր Գրիգորյանի գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0011/14/15 որոշումներով արտահայտված դիրքորոշումներին:

Բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանները իրավասու չէին քննել և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխել ավելի ծանր հարկադրանքի միջոցով՝ բժշկական հաստատության եզրակացության բացակայության պայմաններում:

Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ դատարանը չէր կարող բժշկական հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու որոշում կայացնել հիմք ընդունելով անձի կողմից տեղամասային հոգեբույժի մոտ չհաճախելը, դեղորայքչատանալը և իրեն առողջ համարելու հանգամանքը՝ առանց քննարկման առարկա դարձնելու օրենքով չթույլատրված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, այն կատարած սուբյեկտի անձը, նրա հոգեկան վիճակն ու վարքագիծը, ինչպես նաև իրականացվող բուժման տևողությունն ու պայմանները:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանել և Ա.Խաչատրյանի նկատմամբ կիրառվող արտահիվանդանոցային հարկադիր բուժումը և տեղամասային հոգեբույժի մոտ հսկողությունն ընդհանուր տիպի հոգեբուժական բաժանմունքում հիվանդանոցային հարկադիր բուժմամբ փոխարինելու մասին «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի՝ 2019 թվականի փետրվարի 21-ի միջնորդությունը՝ մերժել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ազատությունից զրկելու հետ կապված բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու կարգի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Ա.Խաչատրյանի արտահիվանդանոցային հարկադիր բուժումը և տեղամասային հոգեբույժի մոտ հսկողությունն ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժմամբ փոխարինելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր որ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

(...):»:

11.1. Վերոնշյալ կարգավորումը մեկնաբանելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ անձը չի կարող ազատությունից զրկվել «հոգեկան հիվանդ» լինելու հիմքով, եթե բավարարված չեն հետևյալ երեք նվազագույն պայմանները.

- պետք է օբյեկտիվ բժշկական փորձաքննություններով հիմնավորված լինի, որ անձն ունի հոգեկան հիվանդություն, բացառությամբ երբ պահանջվում է անձին կալանավորել հրատապ կարգով,

- **անձի հոգեկան խանգարումը պետք է այն տեսակի խանգարում լինի, որի դեպքում հարկադիր պահումն արդարացված է: Պետք է ապացուցված լինի, որ տվյալ հանգամանքներում անհրաժեշտ է անձին զրկել ազատությունից,**

- հոգեկան խանգարումը՝ հաստատված օբյեկտիվ բժշկական ապացույցներով, պետք է առկա լինի ազատագրկման ողջ ժամանակահատվածի ընթացքում⁴⁴⁴:

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ հոգեկան հիվանդ համարվող անձին ազատությունից զրկելը չի կարող համարվել Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի (ե) կետին համապատասխանող, եթե **ազատությունից զրկելու մասին որոշումը կայացվել է՝ չստանալով բժշկական փորձագետի եզրակացությունը**⁴⁴⁵: Եթե չկա որևէ այլ հնարավորություն, օրինակ՝ երբ տվյալ անձը հրաժարվում է ներկայանալ գնության, ապա պետք է փորձել առնվազն բժշկական փորձագետի գնահատում կազմակերպել տվյալ անձի հոգեկան առողջության փաստացի վիճակի առնչությամբ գրավոր նյութերի հիման վրա, ինչը չանելու դեպքում հնարավոր չի լինի պնդել, թե բավարար չափով հիմնավորվել է անձի հոգեկան հիվանդություն ունենալը⁴⁴⁶:

⁴⁴⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Inseher v. Germany [GC]* գործով 2018 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատներ թիվ 10211/12 և 27505/14, կետ 127, *Stanev v. Bulgaria [GC]* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, կետ 145, *Shitkaturov v. Russia* գործով 2008 թվականի մարտի 27-ի վճիռը, գանգատ թիվ 44009/05, կետ 114, *Varbanov v. Bulgaria* գործով 2000 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 31365/96, կետ 45:

⁴⁴⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ruiz Rivera v. Switzerland* գործով 2014 թվականի փետրվարի 18-ի վճիռը, գանգատ թիվ 8300/06, կետ 59, *S.R. v. the Netherlands* գործով 2012 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը, գանգատ թիվ 13837/07, կետ 31:

⁴⁴⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Constancia v. the Netherlands* գործով 2015 թվականի մարտի 3-ի որոշումը, գանգատ թիվ 73560/12, կետ 26, երբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը թույլատրելի համարեց գանգատարների հոգեկան վիճակի բժշկական գնության փոխարեն առկա այլ տեղեկությունները որպես հիմք ընդունելը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝ «1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ դատարանը կարող է նշանակել այն անձի նկատմամբ՝

1) ով սույն օրենսգրքի Հարույկ մասի հոդվածով նախատեսված արարքը կատարել է անմեղսունակության վիճակում.

(...):

2. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց նկատմամբ նշանակվում են միայն այն դեպքերում, երբ հոգեկան խանգարումները կասկած են այդ անձանց կողմից այլ էական վնաս պարձատելու հնարավորության կամ իր կամ այլ անձանց համար վրանգավորության հետ: (...):»

ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ «1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ են՝

1) հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը.

2) հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը.

3) հոգեբուժական հիվանդանոցի հարույկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը: (...):»

ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ «1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դատարանը հաշվի է առնում անձի հոգեկան հիվանդությունը, նրա կարարած արարքի բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը:

2. Անձի առողջանալու կամ նրա հիվանդության բնույթի այնպիսի փոփոխության դեպքում, երբ վերանում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու անհրաժեշտությունը, դատարանը բժշկական հասարակության եզրակացության հիման վրա որոշում է կայացնում դրանց կիրառումը դադարեցնելու մասին:

3. Բժշկական հասարակության եզրակացության հիման վրա դատարանը կարող է որոշում կայացնել նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին»:

12.1. ՀՀ Կառավարության՝ 2010 թվականի ապրիլի 1-ի «Արտահիվանդանոցային և հիվանդանոցային հոգեբուժական բժշկական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 350 որոշման 23-րդ կետի համաձայն՝ «Արտահիվանդանոցային հարկադիր հսկողության ու բուժման մեջ գրնվող անձի կողմից պարտականությունների չկատարման դեպքում՝ հարկադիր բուժումն իրականացնող բժշկական կազմակերպության փոփոխությունը հայրնում է հարկադիր բուժումը նշանակած դատարանին, հիվանդի բնակավայրի՝ ուրիկանության տարածքային բաժին, իսկ հոգեբույժը գրավոր դիմում է բժշկական հանձնաժողովի նախագահին՝ հարկադրանքի տեսակը փոխելու նպատակով»:

13. Անդրադառնալով բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելիս դատարանի կողմից քննության առարկա դարձվող հարցերի

շրջանակին՝ Վճռաբեկ դատարանն Արդավազդ Ծայրուրյանի գործով որոշման շրջանակներում արձանագրել է, որ՝ «(...) Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու վերաբերյալ միջնորդություն քննելիս դատարանը կաշկանդված չէ բժշկական հասարակության եզրակացությամբ:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու վերաբերյալ միջնորդության քննարկման յուրաքանչյուր դեպքում դատարանը բժշկական հասարակության կողմից տրված համապատասխան եզրակացության հետ մեկտեղ պետք է քննարկման առարկա դարձնի և հաշի առնի նաև անձի կարարած արարքի բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը: Մասնավորապես, դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի այն հարցը, թե ինչ օբյեկտի, ինչպիսի հասարակական հարաբերությունների դեմ է ուղղված եղել անձի ուրնագությունը: Օրինակ՝ մարդու կյանքի և առողջության դեմ կարարված հանրորեն վրանգավոր արարքը կարող է վկայել այն կարարած անձի ավելի բարձր վրանգավորության մասին:

Դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի նաև հանրորեն վրանգավոր արարք կարարած սուբյեկտի անձը: Մասնավորապես՝ դատարանը պետք է քննարկի նրա նկարմամբ իրականացվող բուժման տևողությունը, պայմանները, նրա ներկա հոգեկան վիճակը, վարքագիծը: Դատարանը պետք է ուշադրություն դարձնի նաև այն հանգամանքների վրա, թե արդյոք տվյալ անձը նախկինում հանրորեն վրանգավոր արարք կարարել և համապատասխան բուժում արացել է, թե ոչ: Այս հանգամանքների պարզումը ևս կարող է էական նշանակություն ունենալ անձի իր կամ շրջապատի համար վրանգավորության աստիճանը պարզելու հարցում:

[Մշված հանգամանքների համարեղ գնահատմամբ միայն դատարանը կարող է հիմնավորված որոշում կայացնել անձի նկարմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու կամ անփոփոխ թողնելու մասին»⁴¹⁷:

Զարգացնելով Արդավազդ Ծայրուրյանի գործով արտահայտած դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանը Գրիգոր Գրիգորյանի գործով արձանագրել է. «(...) Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի ենթարկվող անձի նկարմամբ, նրա վիճակի էական բարելավման դեպքում, մարդասիրության սկզբունքից ելնելով, կարող է փոփոխվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը՝ նշանակելով օրենքով նախատեսված ավելի մեղմ ուժով ունեցող հարկադրանքի միջոց: Միևնույն ժամանակ անձի վիճակի համապատասխան վարթարացման դեպքում նրա նկարմամբ կիրառվող բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը կարող է փոփոխվել ավելի խիստ ուժով ունեցող միջոցով: Անձի վիճակի բարելավման կամ վարթարացման հանգամանքը գնահատելիս դատարանը բժշկական հասարակության կողմից տրված համապատասխան եզրակացության հետ մեկտեղ քննության առարկա պետք է դարձնի հանրորեն

⁴¹⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արդավազդ Ծայրուրյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԿ/0045/14/13 որոշման 15-րդ կետը:

վրանգավոր արարք կատարած սուբյեկտի անձը, ինչպես նաև նրա կատարած արարքի բնույթը և հանրության համար վրանգավորության աստիճանը: Մասնավորապես հանրորեն վրանգավոր արարք կատարած սուբյեկտի անձը գնահատելիս դատարանը պետք է քննարկի նրա նկարումը իրականացվող բուժման տևողությունը, պայմանները, նրա ներկա հոգեկան վիճակը, վարքագիծը, ուշադրություն դարձնի նաև այն հանգամանքների վրա, թե արդյոք տվյալ անձը նախկինում հանրորեն վրանգավոր արարք կատարել և համապատասխան բուժում սրացել է, թե ոչ(...):

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելիս դատարանը պետք է քննության առարկա դարձնի նաև այն, թե դատարանի կողմից նախորդ անգամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելուց հետո ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել հանրորեն վրանգավոր արարք կատարած սուբյեկտի անձը (նրա ներկա հոգեկան վիճակը, վարքագիծը), ինչպես նաև նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը»⁴¹⁸:

14. Սույն որոշման 11.1-րդ կետում մեջբերված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու հետ կապված բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելիս անհրաժեշտ է համապատասխան բժշկական եզրակացություն, որը կպարունակի բժշկական հիմնավորումներ դրա կիրառման անհրաժեշտության վերաբերյալ: Այլ կերպ, անձի ազատության հիմնարար իրավունքի սահմանափակման համատեքստում պետք է քննարկման առարկա դարձվի ազատությունից զրկելու հետ կապված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառման **համապատասխան բժշկական ցուցումի առկայության հանգամանքը**՝ գնահատման ենթարկելով անձի հոգեֆիզիոլոգիական հատկանիշների, հոգեկան վիճակի հնարավոր փոփոխությունները, իր կամ այլ անձանց համար վտանգ ներկայացնելու ռիսկայնության, անձի վարքագծի փոփոխության հարցերը:

Անփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանն անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցի տեսակը փոխելիս և ազատությունից զրկելու հետ կապված բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելիս պետք է հիմնվի բժշկական եզրակացության մեջ առկա՝ անձի հոգեկան առողջության վիճակի բարելավման կամ վատթարացման վերաբերյալ տեղեկությունների, նրա վարքագծի, բուժման տևողության, պայմանների վրա՝ միաժամանակ համակցության մեջ գնահատելով նաև անձի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչի մասին նշվել է *Արտավագր Ծափույանի* գործով որոշման շրջանակներում:

⁴¹⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գրիգոր Գրիգորյանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0011/14/15 որոշման 17-18-րդ կետերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հանգամանքների **համատեղ գնահատմամբ** և դրանց վերաբերյալ կազմված բժշկական եզրակացության հիման վրա միայն դատարանը կարող է հիմնավորված որոշում կայացնել անձի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու կամ անփոփոխ թողնելու մասին:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- 2019 թվականի փետրվարի 21-ին «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Ա. Հակոբյանը, հիմք ընդունելով միայն Աստղիկ Խաչատրյանի կողմից **իր պարտականությունները պատշաճ չկատարելու հանգամանքը**, և ղեկավարվելով ՀՀ Կառավարության՝ 2010 թվականի ապրիլի 1-ի թիվ 350 որոշմամբ, դատարան է ներկայացրել միջնորդություն՝ Ա. Խաչատրյանի նկատմամբ կիրառվող արտահիվանդանոցային հարկադիր բուժումը և տեղամասային հոգեբույժի մոտ հսկողությունն ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հիվանդանոցային հարկադիր բուժմամբ փոխարինելու մասին⁴¹⁹,

- Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ արձանագրելով, որ Ա. Խաչատրյանը տեղամասային հոգեբույժի մոտ չի հաճախում, չի ստանում նշանակված դեղորայքը, իրեն հիվանդ չի համարում և կամովին չի շարունակի բուժումը, բավարարել է «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի միջնորդությունը, Ա. Խաչատրյանի նկատմամբ կիրառվող հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը փոխարինել հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժմամբ⁴²⁰,

- Վերաքննիչ դատարանը, համաձայնվելով Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ արտահայտված դիրքորոշումների հետ, այն թողել է օրինական ուժի մեջ⁴²¹:

16. Սույն որոշման 11-14-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Ա. Խաչատրյանի նկատմամբ նշանակված արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժմամբ փոխարինելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման չեն արժանացրել սույն գործով առանցքային նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:

Այսպես, ստորադաս դատարանները Ա. Խաչատրյանի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու հիմքում դրել են միայն նրա կողմից իր պարտականությունները չկատարելը,

⁴¹⁹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

⁴²⁰ Տե՛ս սույն որոշման 1.2-րդ և 5-րդ կետերը:

⁴²¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

այն է՝ տեղամասային հոգեբույժի մոտ չհաճախելը, դեղորայք չստանալը և իրեն առողջ համարելը: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակի փոփոխության պայմանները չեն կարող որևէ կերպ նույնացվել անձի նկատմամբ խափանման միջոցի տեսակի փոփոխության պայմանների հետ: Այլ կերպ, զուտ անձի կողմից իր պարտականությունները չկատարելը չի կարող դիտարկվել որպես անձի նկատմամբ կիրառված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակի փոփոխման բավարար պայման՝ այդ պարտականությունների կատարումն ապահովելու համար: Հարկ է ընդգծել, որ ի տարբերություն խափանման միջոցի, որի կիրառման նպատակն անձի հնարավոր ոչ պատշաճ վարքագիծը կանխելն է, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառումը նպատակաուղղված է անձի բուժման ապահովմամբ նրա հոգեկան հիվանդությունից բխող իր կամ հասարակությանը ներկայացվող վտանգը կանխելուն: Հետևաբար, ստորադաս դատարաններն Ա.Խաչատրյանի նկատմամբ նշանակված արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժմամբ փոխարինելիս չէին կարող սահմանափակվել բացառապես նրա կողմից իր վրա դրված պարտականությունների չկատարման փաստով, այլ պետք է պարզելին այդպիսի փոփոխության անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան բժշկական ցուցումի առկայության հանգամանքը:

Սույն գործով թեև ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Ա.Հակոբյանը 2019 թվականի փետրվարի 21-ի միջնորդությանը կցել է բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման հանձնաժողովի թիվ 01/19 եզրակացությունը, սակայն այն չի պարունակում Ա.Խաչատրյանի նկատմամբ նշանակված արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժմամբ փոխարինելու անհրաժեշտությունը հիմնավորող բժշկական ցուցում: Մասնավորապես, նշված եզրակացության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն պարունակում է տեղեկություններ գործի դատավարական նախապատմության և փաստական հանգամանքների մասին, այլ ոչ թե Ա.Խաչատրյանի հոգեկան առողջության վիճակի և նրա նկատմամբ կիրառված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխարինելու անհրաժեշտության մասին⁴²²: Նման պայմաններում, ստորադաս դատարանները չէին կարող թիվ 01/19 եզրակացությունը բավարար գնահատել՝ Ա.Խաչատրյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու համար: Այլ կերպ, թեև «Արտահիվանդանոցային և հիվանդանոցային հոգեբուժական բժշկական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի թիվ 350 որոշման

⁴²² Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

23-րդ կետը, որին հղում էր կատարել միջնորդության մեջ նաև իրավասու մարմինը, թույլ է տալիս արտահիվանդանոցային հարկադիր հսկողության ու բուժման մեջ գտնվող անձի կողմից պարտականությունների չկատարման դեպքում սկսել հարկադրանքի տեսակը փոխելու գործընթաց, սակայն համապատասխան բժշկական ցուցումի բացակայության պայմաններում այդ գործընթացն իրականացվել չի կարող:

Հետևաբար, Ա.Խաչատրյանի կողմից միայն տեղամասային հոգեբույժի մոտ չհաճախելու, դեղորայք չստանալու և իրեն առողջ համարելու հանգամանքի հիման վրա, **բժշկական եզրակացության մեջ նրա հոգեկան վիճակի վերաբերյալ տեղեկությունների բացակայության պայմաններում**, Ա.Խաչատրյանի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխվել չէր կարող:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ա.Խաչատրյանի արտահիվանդանոցային հարկադիր բուժումը և տեղամասային հոգեբույժի մոտ հսկողությունն ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժմամբ փոխարինելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի սխալ կիրառում, ինչն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք է: Ուստի վճռաբեկ բողոքը պետք է բավարարել, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի որոշումը բեկանել և փոփոխել, իսկ ՀՀ առողջապահության նախարարության «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Ա.Հակոբյանի միջնորդությունը՝ մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 418-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Աստղիկ Ռազմիկի Խաչատրյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 28-ի որոշումը բեկանել և փոփոխել: ՀՀ առողջապահության

Նախարարության «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Ա.Հակոբյանի միջնորդությունը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

26.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0359/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍՏՏԻՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2021 թվականի հունիսի 4-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 4-ի որոշման դեմ ամբաստանյալ Դավիթ Զոհրաբի Դեղոյանի և նրա պաշտպան Ս.Ոսկանյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում հարուցվել է թիվ 16109517 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ Կարեն Միսայանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով, և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ Դավիթ Զոհրաբի Դեղոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ Դ.Դեղոյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2018 թվականի մայիսի 16-ին Դ.Դեղոյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 17-ի որոշմամբ թիվ 16109517 քրեական գործից անջատվել են Դ.Դեղոյանի վերաբերյալ թիվ 16109517/1 քրեական գործի նյութերը և նույն թվականի մայիսի 23-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 29-ի դատավճռով Դ.Դեղոյանին մեղսագրված արարքը վերաորակվել է, նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ Դ.Դեղոյանն ազատվել է նշանակված պատժից:

3. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Է.Աղաջանյանի և մեղադրող Ա.Մելիքյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 29-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է՝ ամբաստանյալ Դ.Դեղոյանը մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ նշանակելով ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է Դ.Դեղոյանի կալանքի տակ գտնվելու 1 (մեկ) տարի 1 (մեկ) ամիս 23 (քսաներեք) օր ժամկետը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 10 (տասը) ամիս 7 (յոթ) օր ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Դ.Դեղոյանը և նրա պաշտպան Ս.Ոսկանյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 23-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 17-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքների պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Դավիթ Դեղոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Նա] իր գործողություններով, նաև նախապես խուսափած լինելով խոչընդոտները վերացնել, հանցագործության միջոցները և գործիքները, հանցագործության հետքերը, ինչպես նաև հանցագործին թաքցնել, օժանդակել է Կարեն Ռաֆսելի Մինասյանին՝ վերջինիս կողմից սպորինի կերպով ձեռք բերած և սպորինի կերպով պահած հրազեն հանդիսացող 475271 գործարանային համարի ինքնաձիգով 2017թ. դեկտեմբերի 5-ին՝ ժամը 23:52-ի սահմաններում, Երևան քաղաքի Բարսազանյան փողոցում Արշակ Էդիկի Գալստյանին սպանությանը՝ դիտավորությանը սպորինաբար նրան կյանքից զրկելուն:

Այսպես.

Կարեն Ռաֆսելի Մինասյանը իր հորաքրոջ որդու՝ Արշակ Էդիկի Գալստյանի հետ տարիներ առաջ համարել էր բիզնես գործունեություն է ծավալել, ինչի ընթացքում Կարեն Մինասյանը Արշակ Գալստյանից պարտքով խնդրել է 25.000 ԱՄՆ դոլար գումար, այն հերազայում վերադարձնելու պայմանով:

Տարիների ընթացքում Արշակ Գալստյանը Կարեն Մինասյանից բազմիցս պահանջել է նրան պարտքով փյված գումարը, որի շուրջ էլ կողմերի միջև առաջացել են անհաշտություններ, որն ուղեկցվել է փոխադարձ վիրավորանքներով և ազգակցական փոխհարաբերությունների վարթարացմամբ:

(...)

Դավիթ Դեղոյանը, տեղյակ լինելով Կարեն Մինասյանի և Արշակ Գալստյանի միջև գումարային հարցերի շուրջ առկա անհաշտությունների պարճատով եղած անձնական թշնամանքի մասին, Կարեն Մինասյանի կողմից սպորինի ձեռք բերած և «Նիսան [Տիդա]» մակնիշի [34 RQ 834] հաշվառման համարանիշի ավերումը նախապես սպորինի կերպով պահված, հրազեն հանդիսացող 475271 գործարանային համարի ինքնաձիգի և ռազմավթերք հանդիսացող փամփուշների առկայության, ինչպես նաև Կարեն Մինասյանի կողմից Արշակ Գալստյանին սպանելու նպատակի մասին, 2017թ. դեկտեմբերի 5-ին՝ ժամը 23:45-ի սահմաններում, իր վարած «Նիսան Տիդա» մակնիշի 34 RQ 834 հաշվառման համարանիշի ավերումը նախապես Կարեն Մինասյանի հետ շրջազայել է Երևան քաղաքի Բարսազանյան փողոցով, որտեղ Կարեն Մինասյանը, տեսնելով ճանապարհի երթևեկելի մասից դուրս կայանված Արշակ Գալստյանին պարկանող «Նիսան» մակնիշի 34 DA 732 հաշվառման համարանիշի ավերումը նախապես, Դավիթ Դեղոյանին առաջարկել է մեքենան վարել և կայանել Արշակ Գալստյանին պարկանող ավերումը նախապես մոտ:

Դավիթ Դեղոյանը մեքենան վարել և կայանել է Արշակ Գալստյանին պարկանող ավերումը նախապես մոտ, որից հետո Կարեն Մինասյանը Արշակ

Գալստյանից հեղափոխվել է նշված վայրում կայանած լինելու պարճառը, սակայն Արշակ Գալստյանը հայտնաբերվել է պարասիսանել վերջինիս, որից հետո, Կարեն Մինասյանը Արշակ Գալստյանին սպանությանը, ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտարկությանը, իր կողմից դեռևս չպարզված հանգամանքներում ապօրինի ձեռք բերած և ապօրինի կերպով պահած հրազեն հանդիսացող 475271 գործարանային համարի ինքնաձիգով նույն օրը ժամը 23:52-ի սահմաններում կրակոցներ է արձակել Արշակ Գալստյանի ուղղությանը և սպանել նրան:

Կատարված հանցագործությունը Կարեն Մինասյանի կողմից կատարելու փաստը թաքցնելու, վերջինիս ինքնությունը չբացահայտվելու, փախուստը կազմակերպելու, ինչպես նաև հանցագործության գործիքը ու միջոցները թաքցնելու նպատակով, Դավիթ Դեղոյանը իր վարած «Նիսան Տիդա» մակնիշի 34 RQ 834 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով Կարեն Մինասյանին դեպից անմիջապես հետո տեղափոխել է «Զվարթնոց» օդանավակայան, որտեղ Կարեն Մինասյանի փախուստը հեշտացնելու նպատակով, Դավիթ Դեղոյանը օդանավակայանի տարածքում հանդիպել է Կարեն Մինասյանի կողմից մատրանշված, նրա ծանոթ Համբարձում Հովհաննեսի Գևորգյանին, նրանից գումար վերցրել, այն փոխանցել Կարեն Մինասյանին, ով օդանավակայանի տարածքից գնել է Երևան-Մոսկվա չվերթի տոմս և մեկնել ՀՀ-ից:

Այնուհետև, Կարեն Մինասյանի փախուստը բարեհաջող կազմակերպելուց հետո, Դավիթ Դեղոյանը ձեռնամուխ է եղել հանցագործության միջոց հանդիսացող ավտոմեքենայի և դրա մեջ առկա հանցագործության գործիք հանդիսացող ինքնաձիգը պարտակելու՝ այն թաքցնելու հարցերին, որի ընթացքում իր անձի ինքնությունը չբացահայտելու և հնարավոր բռնվելու հանգամանքը բացառելու նպատակով, պարահասկան տարածքի ավտոմեքենայով վերադարձել է Երևան քաղաքի Հաղթանակ թաղամաս, զանգահարել և հանդիպել է Կարեն Մինասյանի կնոջ եղբորը՝ Գևորգ Խաչատրյանին, վերջինիս փոխանցել «Նիսան Տիդա» մակնիշի 34 RQ 834 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի բանալիները և հայրնել ավտոմեքենայի կայանման վայրը, որից հետո Գևորգ Խաչատրյանը մեկնել է օդանավակայան և ավտոմեքենան տեղափոխել Հաղթանակ թաղամաս»⁴²³:

6. Առաջին առյուծի դատարանն իր՝ 2019 թվականի հունվարի 29-ի դատավճռում արձանագրել է հետևյալը. «(...) Վերլուծելով ամբաստանյալ Դավիթ Դեղոյանին առաջադրված մեղադրանքը, նրա, վկաների ցուցմունքները և գործով ձեռք բերված մյուս ապացույցները, համադրելով դրանք քրեական գործի դատական քննությանը ձեռք բերված և հեղափոխված ապացույցների հետ, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությանը՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմանը, ամբաստանյալի մեղավորության մասին չփարսավող բոլոր կասկածները նրա օգրին մեկնարանելով՝ Դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Դավիթ Դեղոյանի

⁴²³ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 205-207:

կողմից սպանությանը օժանդակելու մասին առաջադրված մեղադրանքը չի համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված [հանցագործության] հատկանիշներին: Մինևույն ժամանակ, Դատարանը գտնում է, որ սպացուցված է ամբաստանյալ Դավիթ Դեղոյանի կողմից առանձնապես ծանր հանցագործությունը պարտակելը, ուստի նրա արարքը ենթակա է վերադրական ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով (...):

(...) Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Դավիթ Դեղոյանին մեղադրանք է առաջադրվել սպանության օժանդակության համար, ըստ որի՝ նա նախապես խուսափել է օժանդակել սպանության կատարմանը՝ խոչընդոտները վերացնելու, հանցագործության միջոցները և գործիքները, հանցագործության հետքերը, ինչպես նաև հանցագործին թաքցնելու եղանակով:

Մինչդեռ սույն քրեական գործով հետազոտված սպացուցների համադրված վերլուծությունը վկայում է, որ ձեռք բերված սպացուցներով չի հիմնավորվում այն հանգամանքը, որ Կարեն Մինասյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հանցագործության օբյեկտիվ կողմը սկսելուց մինչև ավարտին հասցնելը Դավիթ Դեղոյանը նախապես խուսափել է նրան ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով օժանդակել:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ Կարեն Մինասյանը մինչ դեպքը նսարել է Դավիթ Դեղոյանի վարած մեքենայի հերմանալում, սպա Դատարանը գտնում է, որ դա չի կարող բավարար համարվել հասարակած համարելու այն, որ Դավիթ Դեղոյանը նախապես րեղեկացված է եղել Կարեն Մինասյանի մրադրությունների մասին, ավելին՝ մինչ հանցագործության օբյեկտիվ կողմը սկսվելը կամ դա կարարելու ընթացքում կամ ավարտին հասցնելու ժամանակ խուսափել է վերջինիս օժանդակել:

Դատարանին չի ներկայացվել նաև սպացույց այն մասին, թե ինքնաձիգը երբվանից կամ որքան ժամանակ է գրնվել Դավիթ Դեղոյանի վարած մեքենայի մեջ: (...)

Անդրադառնալով Կարեն Մինասյանի կողմից օգրագործված (...) քջային հեռախոսահամարից ժամը 23.41.15-ին 2.06 վայրկյան րևողությանը և ժամը 23.44.45-ին 0.07 վայրկյան րևողությանը գործով րուժող Արշակ Գալարյանի կողմից օգրագործված (...) հեռախոսահամարին կարարված ելքային հեռախոսազանգերի հանգամանքին՝ Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործով առկա չէ որևէ սպացույց այդ հեռախոսազանգերի բովանդակության վերարերյալ, բացի այդ, գործի նյութերով չի սպացուցվում, թե այդ հեռախոսազանգերը արդյոք կարարվել են Դավիթ Դեղոյանի ներկայությանը կամ արդյոք վերջինս լսել է այդ խոսակցությունը: Այնինքն՝ Դատարանին չներկայացվեց բավարար սպացույց այն մասին, որ Կարեն Մինասյանը նախապես է պայմանավորվել հանդիպել Արշակ Գալարյանին, ինչի մասին րեղյակ է եղել նաև Դավիթ Դեղոյանը:

(...) [Առաջադրված մեղադրանքից նույնպես չի հեղրում, որ Կարեն Մինասյանը նախապես պայմանավորվածություն է ունեցել հանդիպել Արշակ Գալարյանին:

(...) Դադարանը եզրահանգում է, որ առաջադրված մեղադրանքով չի երևում այն հանգամանքը, թե Կարեն Մինասյանը Արշակ Գալստյանին ինչ նպատակով է սպանել՝ հայոցյանքի, թե նրանց միջև առկա գոմարային հարցերի շուրջ փարսձայնությունների: Այսինքն՝ չի երևում, թե որ պահից է առաջացել Կարեն Մինասյանի մոտ հանցագործության կատարման սուբյեկտիվ կողմը, ինչի մասին էլ կարող էր տեղյակ լինել Դավիթ Դեղոյանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմնավերով դադարանությանը հետազոտված ապացույցների վրա՝ Դադարանը հանգում է այն հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չէ, այն դադարանությանը չապացուցվեց, այդ մեղադրանքի հիմնավորվածության վերաբերյալ վերաբերելի բավարար ապացույցներ դադարանին չներկայացվեցին:

Դադարավճռով մեջբերված փաստական հանգամանքները համադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցայի համապետարում՝ Դադարանը գտնում է, որ Դավիթ Դեղոյանի կողմից կատարված արարքը համապատասխանում է վկայակոչված հոդվածի հարկանիշներին: (...)»⁴²⁴:

6.1. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռի հիմքում, ի թիվս այլոց, դրել է նաև հետևյալ ապացույցները.

- Ամբաստանյալ Դավիթ Դեղոյանի ցուցմունքներն այն մասին, որ «(...) Կարեն Մինասյանն իր հորաքրոջ տղան է, իսկ Արշակ Գալստյանը վերջինիս հորաքրոջ տղան է: Դեպքի օրը Կարեն Մինասյանը գանգահարել է իրեն, որ գնա նրա հետ մի քանի տեղ, ինքն ասել է, որ գործեր ունի: Այդ օրը մի քանի անգամ խոսել է Կարեն Մինասյանի հետ, հետո ժամը 16:00-ի սահմաններում գործերը վերջացրել է ու գնացել տուն (...): 20:00-ի սահմաններում Կարեն Մինասյանը եկել է իրենց բակ և ասել, որ այլոհող է օգրագործել ու չի ցանկանում մեքենան վարել, խնդրել է, որ ինքը վարի Կարեն Մինասյանի մեքենան: Գնացել են Նորք, որտեղ Կարեն Մինասյանը հանդիպել է իր ընկեր Էդգարին: Ինքը Էդգարին ու Կարեն Մինասյանին թողել, գնացել է տուն: Գիշերը 22:30-23:00-ի սահմաններում, ժամը կոնկրետ չի հիշել, Կարեն Մինասյանի պահանջով գնացել է Նեպոլի մոտ, Կարեն Մինասյանը մտրեցել է մեքենային ու նստել իր հետնամասում, քանի որ մեքենան աջ դեղ էր: Այնուհետև իրեն Կարեն Մինասյանը առաջարկել է տուն գնալ, հանկարծ ճանապարհին նկատել է Արշակ Գալստյանի կանգնած մեքենան և ասել է «բշի»: Քշել է մեքենայի մոտ, ցանկացել է կանգնել, բայց արդեն Կարեն Մինասյանն ու Արշակ Գալստյանը մեքենայի միջից իրար հետ լավ չէին խոսում: (...) Կարեն Մինասյանն ասել է. «հետ տուն մեքենան, մի հար դեմքը տենամ»: Հետ տալու ժամանակ շիկոց է լսել, հետ է նայել, ու այդ ժամանակ Կարեն Մինասյանը կրակել է: Ինքը գլուխը բռնել է, քանի որ իր աչքի առաջ հորաքրոջ տղան իր հորաքրոջ տղային է սպանել: Կրակոցները դադարելուց հետո Կարեն Մինասյանն ասել է, որ քշի, և ինքը վեր է թռել: Կարեն Մինասյանն իրեն ասել է,

⁴²⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 121-125:

որ գնա օդանավակայան, հետո օդանավակայանում սսել է, որ իջնի մուտքի մուր, փող կրան, որ բերի Կարեն Մինասյանին: (...) Գումարը վերցրել է, փվել Կարեն Մինասյանին ու տարսիով գնացել է, մեքենայի բանայինները փվել է Գևորհն ու գնացել փուն (...):»:

Պաշտպանի հարցերին պատասխանելիս Դ.Դեղոյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ «(...) [Ի]նքը մերթիմ հարաբերությունների մեջ է եղել երկուսի հետ էլ: (...) Ջենքի մասին տեղեկություն չի ունեցել մեքենայի մեջ եղել է, թե ոչ, բայց իր կարծիքով, նախասկս դրված է եղել: Այդ օրը, երբ միասին էին, զենքի մասին խոսակցություն չի լսել և չի եղել: Իր հետ եղած ժամանակ զենք չի դրվել մեքենայի մեջ (...):»:

Մեղադրողի հարցերին պատասխանելիս ամբաստանյալը նշել է, որ «(...) Կարեն Մինասյանն ու Արշակ Գալստյանը երկար ժամանակ իրար հետ չէին խոսում (...) [Վ]երջին 7-8 փարին նրանք լարված էին, բայց ինքը կսայ չուներ իրենց լարվածության հետ (...): (...) [Ի]ր մուր սպառնալիքներ չեն եղել Արշակ Գալստյանի հասցեին: (...) 2-րդ անգամ Կարեն Մինասյանը զանգել է 22:30-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածում, ինքը գնացել է, Կարեն Մինասյանը եկել է իր կողմ, նսրել իր հետնամասում, նրան հարց չի փվել, թե ինչու է նսրել մեքենայի հետևում, քանի որ նախկինում էլ են եղել դեպքեր, որ Կարեն Մինասյանը նսրել է մեքենայի հետևում: (...) Երբ ճանապարհին էր, չի լսել ու չի նկատել, որ Կարեն Մինասյանը Արշակ Գալստյանի հետ խոսեր, իրենք այդ հարաբերությունների մեջ չէին, որ իրար հետ խոսեին: Երբ Կարեն Մինասյանը Արշակ Գալստյանի մեքենան փեսել է, սսել, որ ինքը քշի գնա մեքենայի մուր: Ինքը միտում չի ունեցել մեքենան փակելու, ցանկանում էր փողոցը չփակել, կանգնել է, որ Կարեն Մինասյանը իջնի, սակայն չի իջել և սսել է, որ մեքենան հետ փա, որ դեմքը փեսնի ու այդ ընթացքում իրար հետ խոսում էին: Հետ փալու ժամանակ շիկոց է լսել, նսրել է հետ ու արդեն կրակել է Կարեն Մինասյանը: (...):»:

Մեղադրողի այն հարցին, թե ավտոմեքենան տեղաշարժվելու ընթացքում, երբ գնում էին 4-րդ գյուղ, այդ ընթացքում Կարեն Մինասյանին զանգ եղել է, կամ ինքը որևէ մեկին զանգել է, մասնավորապես Արշակ Գալստյանի հետ խոսել է, թե ոչ, Դավիթ Դեղոյանը պատասխանել է, որ «(...) Կարեն Մինասյանը միշտ հեռախոսով «գրգռում է» շուր-շուր խոսում, ուշադրություն չի դարձրել խոսացել է, թե ոչ: (...) [Ա]յդպիսի բան չի նկատել, որ խոսացած լիներ, և ինքը կյանքում չէր պատկերացնի, որ նրանք ինչ որ երկուսով իրար հետ հեռախոսով խոսային, նրանք այդ հարաբերությունների մեջ չէին: (...):»:

Դատարանի հարցերին պատասխանելիս ամբաստանյալը հայտնել է, որ «(...) Երբ ինքը մուրեցել է Արշակ Գալստյանի մեքենային, պատրուհանը իջեցրած խոսում էին, Կարեն Մինասյանը Արշակ Գալստյանին հարցրել է, թե ինչ կա: Արշակ Գալստյանը հայիոյել է, մեքենան հետ էր փալիս, հայիոյանքի հետ շիկոցը լսեց ու եղավ մնացածը: (...) Քիչ են եղել դեպքերը, որ Կարեն Մինասյանը նսրեր մեքենայի հետնամասում, բայց եղել են: Երբեմն, երբ քաղաքից դուրս են գնացել, ինքն է վսրել Նիսան Տիդան, Կարենը այլ մեքենա ուներ, այդ Նիսան Տիդան Կարենի կնոցն էր: (...) [Մ]ինչև այդ դեպքը

ոչ Կարեն Մինասյանի, ոչ էլ նրա կնոջ մեքենայում չի տեսել փամփուշներ, փամփուշակալներ կամ գնեք»:

- Վկա Գևորգ Խաչատրյանի ցուցմունքներն այն մասին, որ «(...) Գիշերը՝ 1:00-1:30-ի ժամանակահատվածում, Կարեն Մինասյանը՝ կնոջ եղբայրը, զանգել ասել է, որ մեքենան օդանավակայանում է, շրապ գնա և վերցնի: (...) Ինքը գնացել, մեքենան բերել է բակ (...)»:

- Վկա Համբարձում Գևորգյանի ցուցմունքներն այն մասին, որ «(...) [Կարեն Մինասյանը] օդանավակայանից գիշերն է զանգել 22:00-00:00-ի սահմաններում, ասել, որ եթե կարող է 100.000 դրամ փանի, գնում է Ռուսաստան, ոչինչ չհարցնի: Ինքը գնացել է, ճանապարհին ինքը զանգել ասել է, որ օդանավակայանում է, Դավիթը եկել, գումարը վերցրել է (...)»:

- Վկա Անի Խաչատրյանի ցուցմունքներն այն մասին, որ «(...) Գիրի, որ մեքենայի մեջ Դավիթը եղել է, համոզված է, որ նա գիրտեր ուր է գնում, ինչ է անում, որովհետև Դավիթը միշտ Կարենի կողքին է եղել, նրանց փան անդամն է եղել: Ինքը տեղյակ է եղել, որ Կարենն ու Արշակը իրար հետ խնդիրներ են ունեցել: (...) Դավիթը, տեղյակ լինելով, որ նրանք լարված են, այդ ընթացքում ինքն էլ լավ հարաբերություններ չունեք Արշակի հետ: Հարևանի տղայի բանակի քեֆին լարված նայում էր Արշակին: (...) Դավիթն ու Կարենը շատ լավ հարաբերությունների մեջ են եղել: Զանգել է Դավիթին, ասել է մոտեցի իմ մեքենայով, տեսանյութի մեջ էլ, երևում է ոնց է մոտեցել մեքենային, ոնց է կրակել, ոնց է ճանապարհել: Ամեն ինչ պարզ երևում է: Կարող է ճանապարհին է իմացել, որ գնում են այդպիսի բան անելու, որովհետև գնեքը մեքենայի մեջ է եղել: Իր ենթադրությունը եղել է նրա հիման վրա, որ եթե մարդը տեղյակ չլինի ինչ է անում, ոնց կարող է հանգիստ քշել փանել օդանավակայան, շոկի չենթարկվել: Չի տեսել, որ երևել երեքով իրար հետ վիճեն: Դավիթի կողմից սպառնալիքներ չի տեսել, բայց Կարենի կողմից տեսել է: Հերկում էր Արշակին ու խոսակցության մեջ ասել է, որ խելելու եմ (...)»:

- Տուժողի իրավահաջորդ Էդիկ Գալստյանի ցուցմունքներն այն մասին, որ «(...) [Դավիթ] Դեղոյանին չի ճանաչում, բայց իմացել է ում տղան է: «Հիմար խելքի» պարճատով գնացել ընկել է փորձանքի մեջ: (...) Չի կարող ասել Դ.Դեղոյանն այդ ամենի մասին իմացել է, մասնակցել է, թե ոչ: Դեպքի ժամանակ տեսագրությունը տեսել է, որ Դավիթն է տարել բերել, գիրի, որ մասնակցից և օժանդակող մարդ է եղել: (...) [Ո]չ մի փաստ չունի, որ Դավիթը իմացել է, որ կրակոց է լինելու: Ուղղակի եզրակացնում է, որ կարող էր և միակ մարդն էր, որ կարող էր կանխել այդ դեպքը, մի բան անել, քշել, փախնել, ինքը լսել էր, որ իրար հետ վիճում են, հայոյում են (...)»:

- Առգրավում կատարելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ «(...) Գևորգ Խաչատրյանից առգրավվել է հանցագործության գործիք հանդիսացող 475271 գործարանային համարի ինքնաձիգը (...) Վերջինս հայտարարել է, որ իր կողմից ներկայացված ինքնաձիգը ինքը հայտնաբերել է Կարեն Մինասյանին պարկանոց ավտոմեքենայի միջից»:

- Խուզարկություն կատարելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ «(...) [Խուզարկության է ենթարկվել (...) «Նիսան Տիդա» մակնիշի 34 RQ 834

հաշվառման համարանիշի ավտոմեքենան, որի բեռնախցիկում հայտնաբերվել և առգրավվել են կրորի մեջ փաթաթված ինքնաձիգի 3 պահոնակներ, որոնցից մեկի մեջ առկա է եղել 1 փամփուշ, իսկ երկուսի մեջ՝ 30-ական փամփուշներ (...):

- Տրանսպորտային միջոցը զննելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ «(...) ԽՋննության է ենթարկվել «Նիսան Տիբա» մակնիշի 34 RQ 834 հաշվառման համարանիշի ավտոմեքենան և պարզվել է, որ ավտոմեքենայի բեռնախցիկում՝ հարակին ընկած է տարանջարիչ առարկա (պոլկա): Այն զննության ժամանակ տեղադրվել է իր տեղում՝ հետևի նստարեղերի և բեռնախցիկի արանքում և ձեռքով վեր բարձրացնելու դեպքում հեշտությանը դուրս է եկել իր տեղից և ընկել է բեռնախցիկի մեջ: (...) Զննության արդյունքում պարզվել է, որ ավտոմեքենայի հետևի նստարեղերին նստած անձը հեշտությանը կարող է տարանջարիչ առարկան (պոլկա) վեր բարձրացնել, բեռնախցիկում դնել կամ այնտեղից վերցնել իրեր և առարկաներ»:

- Բջջային հեռախոսահամարների վերծանումները զննելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ «(...) ԽՋննության են ենթարկվել մեղադրյալ Կարեն Ռաֆայելի Մինասյանի, (...) մյուս մեղադրյալ Դավիթ Զոհրաբի Դեղոյանի, (...) հանգուցյալ Արշակ Էդիկի Գալստյանի կողմից դեպքի կատարման ժամանակ օգրագործված (...) բջջային հեռախոսահամարների վերծանումները: Զննությանը պարզվել է, որ (...) մեղադրյալ Կարեն Մինասյանի կողմից օգրագործված (...) բջջային հեռախոսահամարից ժամը 23.41.15-ին առկա է 2.06 վայրկյան տևողությամբ ելքային հեռախոսազանգ գործով փուժող Արշակ Գալստյանի կողմից օգրագործված (...) հեռախոսահամարին: (...)

Մեղադրյալ Կարեն Մինասյանի կողմից օգրագործված (...) բջջային հեռախոսահամարից ժամը 23.44.45-ին առկա է 0.07 վայրկյան տևողությամբ ելքային հեռախոսազանգ գործով փուժող Արշակ Գալստյանի կողմից օգրագործված (...) հեռախոսահամարին:

(...)

Զննությանը պարզվել է, որ մեղադրյալ Դավիթ Դեղոյանի կողմից օգրագործված (...) բջջային հեռախոսահամարից փուժող Արշակ Գալստյանի կողմից օգրագործված (...) հեռախոսահամարին մուքթային և ելքային հեռախոսազանգեր չեն կատարվել»:

- «Զվարթնոց» օդանավակայանում տեղադրված տեսանկարահանող սարքերի կողմից դեպքի վերաբերյալ կատարված տեսագրությունները զննելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ «(...) CAM 190 ախվլամբ (...) տեսագրության 06:30 վայրկյանին վաճառակետի աջակողմյան հատվածից, առաջ քայլելով, Կարեն Մինասյանին է մոտենում Դավիթ Դեղոյանը և, ձախ ձեռքը փաթարի գրպանից հանելով, Կարեն Մինասյանին է փայխ ինչ-որ բան՝ քրեական գործով ձեռք բերված փլյախների համաձայն՝ գումար և Կարեն Մինասյանը, գումար փոխանցելով վաճառակետում գրավող աղջկան, վերցնում է անձնագիրը և ինքնաթիռի տունը, շարժվելով վաճառակետի աջակողմյան հատված, տեսադաշտից հեռանում է, իսկ Դավիթ Դեղոյանը, մի

քանի վայրկյան սպասելով վաճառակերպի դիմաց, այնպեղի աշխատակցից ինչ-որ բան վերցնելուց հետո քայլում է վաճառակերպի աջակողմյան հասրված և րեատադաշրից հեռանում է:

(...)

CAM 54 անվամբ րեատագրությունում պարկերված է երկրորդ հարկի մուրքը, որի վերևում հայերեն գրված է «մեկնում»: Տեսագրության 00:50 վայրկյանին միասին դուրս են գալիս Կարեն Մինասյանը և Դավիթ Դեղոյանը: Կանգնում են մուրքի դիմաց մի քանի վայրկյան հետո գրկախատնվում են, որից հետո Կարեն Մինասյանը գնում է ներս, իսկ Դավիթ Դեղոյանը առաջ քայլելով մտրենում է էկրանի սրորին մասին և րեատադաշրից հեռանում է: (...):»

- Դեպքի վայրին հարակից շենք-շինությունների վրա տեղադրված տեսանկարահանող սարքերի կողմից դեպքի վերաբերյալ կատարված տեսագրությունը գննելու մասին 2018 թվականի մայիսի 14-ին կազմված արձանագրությունը, համաձայն որի՝ «(...) Ճանապարհի դիմացի ուղեմասի երթնելելի գուրուց դուրս կայանված է բաց գույնի ավրումեքենա, որի մակնիշը և համարանիշերը հնարավոր չէ րարբերակել: Այդ ավրումեքենայի հարևանությանը՝ առաջնամասի մուր, կանգնած է մի բաց գույնի ավրումեքենա, որի մակնիշը և համարանիշերը նույնպես հնարավոր չէ րարբերակել: Այդ ավրումեքենան հերընթաց է կատարում, հավասարվում է կայանված ավրումեքենային, այնուհետև մի քանի մետր կրկին առաջ է ընթանում և 2-ից 3 վայրկյան կանգնելուց հետո, առաջ ընթանալով արագացնում է ընթացքը և րեատադաշրից դուրս գալիս»⁴²⁵:

7. Վերաքննիչ դատարանն իր՝ 2019 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Կարեն Մինասյանի հանցագործության օժանդակությունը Դավիթ Դեղոյանի կողմից եղել է նախապես խուսրացված, հերևարար Առաջին արյանի դադարանի հերևություններն այն մասին, որ ամրասրանյալի հանցանքի օժանդակությունը եղել է նախապես չխուսրացված, հիմնագրակ են և չեն թիում գործի փաստական հանգամանքներից:

Առաջին արյանի դադարանը գնահարել է միայն Դ.Դեղոյանի գործողությունները հանցանքի կատարումից հետո, այնինչ, վերջինիս գործողությունները մինչ հանցանքի կատարումը գնահարելու պարագայում ակնհար է, որ Դ.Դեղոյանը րեղյակ է եղել Կ.Մինասյանի կողմից պլանավորվող հանցանքի կատարման մասին:

(...)

Մասնավորապես՝ (...) [Դավիթ Դեղոյանի] ցուցմնից ակնհար է, որ դեպքի օրը երկար ժամանակ ավրումեքենան գրնվել է Դավիթ Դեղոյանի մուր: Դավիթ Դեղոյանը ավրումեքենայում եղել է մենակ, սակայն Կ.Մինասյանը մտրենալով ավրումեքենային նարել է հերևի նարարեղին, այնինչ առջևի նարարեղին ոչ մեկ նարած չի եղել: (...) Կ.Մինասյանը նարել է հերևի նարարեղին, քանի որ բավական դժվար կլիներ աջակողմյան ղեկ ոնեցող մեքենայի վարորդի կողքի նարարեղից Ա.Գալպոյանին կրակելը:

⁴²⁵ Տեն քրեական գործ, հատոր 7, թերթեր 103-120:

Դավիթ Դեղոյանը նշել է, որ Նիսան Տիդան Կարենի կնոջն էր, մինչև այդ դեպքը ոչ Կարեն Մինասյանի ոչ էլ կնոջ մեքենայում չի տեսել փամփուշներ, փամփուշակալներ կամ զենք: Այսինքն, ակնհայտ է, որ կնոջ մեքենայում նախապես զենք չի եղել, զենքը ավերումեքենայում է եղել առնվազն դեպքի օրը:

Այն, որ Դ.Դեղոյանը տեղյակ է եղել Կարեն Մինասյանի և Արշակ Գալստյանի հանդիպման մասին, սպացուցվում է այն հանգամանքով, որ բջջային հեռախոսահամարների վերձանումները գննելու մասին (...) արձանագրության համաձայն՝ Կարեն Մինասյանի կողմից օգրագործված (...) բջջային հեռախոսահամարից ժամը 23.41.15-ին առկա է 2.06 վայրկյան տևողությամբ, իսկ ժամը 23.44.45-ին՝ 0.07 վայրկյան տևողությամբ ելքային հեռախոսազանգեր գործով փուժող Արշակ Գալստյանին: Այսինքն, այդ ժամանակահատվածում Դավիթ Դեղոյանը և Կարեն Մինասյանը միասին գրնվել են մեքենայի մեջ: Հետևաբար, Դավիթ Դեղոյանը չէր կարող չլսել Կ.Մինասյանի հեռախոսագրույցը: Այս հեռախոսագրույցներից Դավիթ Դեղոյանը արդեն իսկ տեղյակ է եղել, որ Կարեն Մինասյանը և Արշակ Գալստյանը հանդիպելու են:

Դավիթ Դեղոյանը նշել է, որ երբ Կարեն Մինասյանը Արշակ Գալստյանի մեքենան տեսել է, ասել, որ ինքը քշի գնա մեքենայի մոտ: Ինքը միտում չի ունեցել մեքենան փակելու, ցանկանում էր փողոցը չփակել, կանգնել է, որ Կարեն Մինասյանը իջնի, ասկայն չի իջել և ասել է, որ մեքենան հեպ տա, որ դեմքը տեսնի ու այդ ընթացքում իրար հետ խոսում էին: Հետ փալու ժամանակ շիկոց է լսել, նայել է հետ ու արդեն կրակել է Կարեն Մինասյանը: Մի դեպքում էլ ասել է, որ երբ ինքը մտրեցել է Արշակ Գալստյանի մեքենային, պատրուհանը իջեցրած խոսում էին, Կարեն Մինասյանը Արշակ Գալստյանին հարցրել է, թե ինչ կա: Այսինքն, ըստ Դավիթ Դեղոյանի՝ նա մեքենան հետ է տվել, որ Կարեն Մինասյանը խոսի Արշակ Գալստյանի հետ: Սակայն, մեկ այլ դեպքում էլ նշել է, որ հայտնաբերի հետ շիկոցը լսեց ու եղավ մնացածը, այսինքն հայտնաբերը և կրակոցը լսել է միաժամանակ, ինչից էլ պարզ է դառնում, որ վերջիններս չեն խոսել իրար հետ, ավելին, Կարեն Մինասյանը խոսելու մտադրություն չի ունեցել [Արշակ Գալստյանի] հետ:

Դավիթ Դեղոյանի պնդումն այն մասին, որ կրակոցի ժամանակ ինքը գլուխը բռնել է, քանի որ իր աչքի առաջ հորաբրոջ տղան իր հորաբրոջ տղային է սպանել: Կրակոցները դադարելուց հետո Կարեն Մինասյանն ասել է, որ քշի և ինքը վեր է թռել, հերքվում է տեսաձայնագրությամբ, համաձայն որի՝ Կարեն Մինասյանի կողմից կրակոցներ արձակելուց անմիջապես հետո՝ 2-3 վայրկյան հետո, մեքենան արընթաց շարժվում է դեպի առաջ:

Ինչպես վկա Անի Խաչատրյանը, այնպես էլ գործով այլ վկաներ իրենց ցուցմունքներում նշել են, որ Դավիթ Դեղոյանը մշտապես գրնվել է Կարեն Մինասյանի կողքին: Տեղյակ է եղել իրենց լարված հարաբերությունների մասին: Դավիթը, տեղյակ լինելով, որ նրանք լարված են, այդ ընթացքում ինքն էլ լավ հարաբերություններ չունեի Արշակի հետ: Գործով փուժող Արշակ Գալստյանի հայրն իր ցուցմունքում նշել է, որ չորս օր շարունակ որդուն հետևում էին և մերձում էին, որ Կարենն է: Այս հանգամանքը ևս վկայում է այն մասին, որ Դավիթ Դեղոյանը տեղյակ էր նախասպարաարվող սպանության մասին:

(...)

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ ամբաստանյալ Դավիթ Դեղոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով վերատրասկելու վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի հետևությունները (...):

Սույն գործով հաստատված է այն հանգամանքը, որ ամբաստանյալ Դավիթ Դեղոյանը նախապես խոստացած լինելով խոչընդոտները վերացնել, հանցագործության միջոցները և գործիքները, հանցագործության հետքերը, ինչպես նաև հանցագործին թաքցնել, օժանդակել է Կարեն Մինասյանին՝ Արշակ Գալստյանին սպանությանը՝ դիտարկությունները սպորինսարար կյանքից զրկելուն⁴²⁶»:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքների հեղինակների կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոքաբերները նշել են, որ սույն քրեական գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվում այն հանգամանքը, որ Դավիթ Դեղոյանն իմացել է Արշակ Գալստյանին սպանելու Կարեն Մինասյանի մտադրության մասին և հանցագործության օբյեկտիվ կողմի իրագործումը սկսելուց մինչև ավարտին հասցնելը նախապես խոստացել է օժանդակել նրան: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, խախտելով ապացույցների գնահատման կանոնները և չափանիշները, չհարատված կասկածները մեկնաբանելով հոգուտ մեղադրանքի և ի վնաս ամբաստանյալի, բացառապես հիմնվելով սուբյեկտիվ կարծիքների և ենթադրությունների վրա, գտել է, որ Դավիթ Դեղոյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված հանցակազմի տարրեր, և վերջինիս կատարած արարքին իրավական գնահատական պետք է տրվի ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածի հատկանիշներով:

Բողոքների հեղինակները նաև փաստել են, որ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 127-րդ, 358-րդ հոդվածների, ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ, 104-րդ հոդվածների մեկնաբանությունները հակասում են հիշյալ նորմերին Վճռաբեկ դատարանի որոշումներում տրված մեկնաբանություններին:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերները խնդրել են ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումը և

⁴²⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթեր 67-70:

օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 29-ի դատավճռին կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյո՞ք ամբաստանյալ Դ.Դեղոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով վերադրակելու մասին Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սպանությունը՝ սպօրհիսարար մեկ ուրիշին դիտարկությունը կյանքից զրկելը (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտներ վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խուսարացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խուսարացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերաբերյալ Վճարելի դատարանն Անդրանիկ Ալանյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «[Օ]ժանդակողը կատարողից տարբերվում է նրանով, որ նա հանցագործության օբյեկտիվ կողմն անմիջականորեն չի կատարում, այլ կամ հանցագործությունը նախապատրաստելու ընթացքում կամ դրա ավարտման փուլում աջակցություն է ցույց տալիս կատարողին արեղծելով հանցագործության ավարտման իրական հնարավորություններ:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում սպառիչ թվարկված են այն եղանակները և միջոցները, որոնցով օժանդակողը, չկատարելով փոխալ հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն, մասնակցում է հանցագործությանը: Օրենքում չնշված այլ եղանակներով օժանդակությունը բացառվում է: Մասնավորապես, օժանդակող է այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է.

ա) Միջոցներ կամ գործիքներ տրամադրելով (ֆիզիկական օժանդակություն): Օժանդակության այս տեսակն արտահայտվում է այնպիսի գործողություններով, որոնք ուղղված են հանցագործության միջոցներ և գործիքներ տրամադրելու, խոչընդոտներ վերացնելու միջոցով կատարողի կողմից հանցակազմի օբյեկտիվ կողմի իրականացումը հեշտացնելուն:

բ) Խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն տրամադրելով (ինտելեկտուալ օժանդակություն): Այն արտահայտվում է արարքի հոգեբանական կողմին վերաբերող գործողություններով, որոնք ուղղված են կատարողի մոտ

հանցագործության կատարման վճռականությունն ամրապնդելուն, առավել արդյունավետ գործողություններ կատարելու ուղիներ գտնելուն և այլն: Անհրաժեշտ է նկատել ունենալ, որ պարտական, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների ձեռք բերման կամ իրացման նախապես խոսարումը ոչ թե ֆիզիկական, այլ ինտելեկտուալ օժանդակություն է: Այլ կերպ արարքն օժանդակություն որակելու համար այս դեպքերում չի պահանջվում խոսարման ռեալ (իրական) կատարում և նույնիսկ այն կատարելու մտադրություն:

զ) Խոչընդոտները վերացնելով (կարող է լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ ինտելեկտուալ):

Սուբյեկտիվ կողմից օժանդակությունը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ ինքը մասնակցում է կատարողի կողմից իրականացվող հանցագործությանը և ցանկանում է մասնակցել: Ինչ վերաբերում է հանցագործության վրանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորվող մեղքի ձևին, ապա դրանց նկատմամբ կարող է դրսևորվել և՛ ուղղակի, և՛ անուղղակի դիտավորություն»⁴²⁷:

11.1. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ օժանդակությունն առկա է միայն այն դեպքում, երբ անձը հանցագործությունն սկսելուց առաջ կամ դրա ընթացքում, սակայն մինչև հանցագործության ավարտը վերոնշյալ եղանակներից որևէ մեկով կամ մի քանիսով նպաստում է կատարողի կողմից հանցագործության կատարմանը կամ դրա ավարտին հասցնելուն: Եթե վերը թվարկված գործողությունները կատարվում են հանցագործության ավարտից հետո, ապա օժանդակությունը բացառվում է:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունը պարտակելը՝ հանցանք կատարած անձի, ինչպես նաև հանցագործության կատարման գործիքների ու միջոցների, հանցագործության հետքերի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների նախապես չխտարացված պարտակումը (...):»

12.1. քննարկվող հանցակազմի հիմնական անմիջական օբյեկտն արդարադատության մարմինների նորմալ գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Հանցագործության նախապես չխոստացված պարտակման հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հանցանք կատարած անձին, հանցագործության միջոցներն ու գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները թաքցնելու մեջ:

Սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածով արգելված արարքը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով նպաստում է բուն հանցագործությունը կամ հանցանք կատարած անձին թաքցնելուն և ցանկանում է դա:

⁴²⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մտորանիկ Ալանյանի* գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԷԴ/0125/01/09 որոշման 24-26-րդ կետերը:

13. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշման 11-12.1-րդ կետերում ներկայացված իրավանորմերը և շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործության օժանդակությունը հանցագործության պարտակումից սահմանազատելու համար առանցքային նշանակություն ունի հանցավորի դիտավորության ուղղվածության բացահայտումը: Մասնավորապես, եթե օժանդակության ժամանակ հանցավորի դիտավորությունն ուղղված է կոնկրետ հանցագործությանը մասնակցելուն, կատարողի կողմից հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացումը հեշտացնելուն կամ կատարողի մոտ հանցանքը կատարելու համար հաստատականություն առաջացնելուն, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելիս անձի (պարտակողի) դիտավորությունն ուղղված է հանցագործությունը կամ հանցանք կատարած անձին թաքցնելուն: քննարկվող դեպքում առանձնահատուկ կարևորություն ունի պարզել նաև հանցանքը կատարողին նախապես խոստում տալու և նախապես խոստացած չլինելու հանգամանքները: Այսպես՝ եթե օժանդակությունը դրսևորվում է միայն հանցագործությունը սկսելուց առաջ կամ դրա ընթացքում, ապա նախապես չխոստացված պարտականան դեպքում բացակայում է պատճառական կապը պարտականան և կատարված հանցանքի միջև, և պարտակողը հանցավորի հետ համաձայնության է գալիս հանցագործության ավարտից հետո միայն:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հեղուկությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավասարի ապացույցների բավարար ամբողջությամբ:*

4. *Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարսավել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գարավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ: (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ արուզման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն արուզելու միջոցով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

2. *Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների*

համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով «սպացույցների բավարարություն» հասկացության վերաբերյալ նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները⁴²⁸, Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով արձանագրել է հետևյալը. «(...) Ավագույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.

- 1) անմեղության կանխավարկածը,
- 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և սպարձառարանվածությունը:

(...) Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: (...) [Դա] ենթադրում է սպացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր սպացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:

(...)

[Հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ սպացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կասկակցությանը դատարանի հեղուկությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական փյույվների վրա: (...) [Մ]եղադրվող հանցագործության և դրա հարկանիշների սպացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարսաված կասկածները պետք է մեկնարանվեն հոգուր մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար սպացույցներ ներկայացնելու պարտականությունը: (...)

(...) [Ք]րեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես սպացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» սպացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» սպացուցողական չափանիշ ստելով պետք է հասկանալ փաստական փյույվների (սպացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (իսկալ գաճ): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր

⁴²⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԲԲԴ/0632/01/08, Յրունգիկ Գալստյանի գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, Սիրակ Սարանյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10, Մարգար Հակոբյանի գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշումները:

փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կրացատի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»⁴²⁹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Դ.Դեղոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր գործողություններով, նաև նախապես խոստացած լինելով խոչընդոտները վերացնել, հանցագործության միջոցները և գործիքները, հանցագործության հետքերը, ինչպես նաև հանցագործին թաքցնել, օժանդակել է Կ.Մինասյանին՝ վերջինիս կողմից ապօրինի կերպով ձեռք բերած և ապօրինի կերպով պահած հրազեն հանդիսացող ինքնաձիգով 2017 թվականի դեկտեմբերի 5-ին՝ ժամը 23:52-ի սահմաններում, Ա.Գալստյանին սպանությամբ՝ դիտավորությամբ ապօրինաբար կյանքից զրկելուն⁴³⁰:

Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ գործով ձեռք բերված ապացույցների ամբողջությունը բավարար չէ հաստատված համարելու այն, որ Դ.Դեղոյանը նախապես տեղյակ է եղել Կ.Մինասյանի մտադրությունների մասին և հանցագործության օբյեկտիվ կողմի իրագործումը սկսելուց մինչև ավարտին հասցնելը խոստացել է օժանդակել նրան: Մինևս ժամանակ, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ապացուցված է ամբաստանյալ Դ.Դեղոյանի կողմից առանձնապես ծանր հանցագործությունը պարտակելը՝ Դ.Դեղոյանին վերագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասից վերադրակելով ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով⁴³¹:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, Դ.Դեղոյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով, հաստատված է համարել, որ նա տեղյակ է եղել Կ.Մինասյանի կողմից պլանավորվող հանցանքի կատարման մասին և նախապես խոստացած լինելով խոչընդոտները վերացնել, հանցագործության միջոցները և գործիքները, հանցագործության հետքերը, ինչպես նաև հանցագործին թաքցնել՝ օժանդակել է նրան⁴³²:

16. Սույն որոշման 5-7-րդ և 15-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 11-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Դ.Դեղոյանի արարքում սպանության օժանդակության հատկանիշների առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվում այն հանգամանքը, որ Դ.Դեղոյանն իմացել է Ա.Գալստյանին

⁴²⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մրարար Սվազյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 30-րդ և 33-րդ կետերը:

⁴³⁰ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁴³¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ և 6.1-րդ կետերը:

⁴³² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

սպանելու Կ.Մինասյանի մտադրության մասին և հանցագործության օբյեկտիվ կողմն սկսելուց մինչև ավարտին հասցնելը նախապես խոստացել է օժանդակել նրան: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով ամբաստանյալ Դ.Դեղոյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու փաստը, հիմնվել է ենթադրական բնույթի դատողությունների վրա և չի մատնանշել գործի նյութերից բխող կոնկրետ փաստական տվյալների այնպիսի համակցություն, որը հիմք կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Դ.Դեղոյանը կատարել է իրեն մեղսագրվող արարքը:

Մինևսյան ժամանակ, սույն քրեական գործով ձեռքբերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով հաստատվել են հետևյալ հանգամանքները՝

- Կ.Մինասյանի և Ա.Գալստյանի միջև գումարային հարցերի շուրջ առկա են եղել տարածայնություններ, որոնց մասին տեղյակ է եղել նաև սույն գործով ամբաստանյալ Դ.Դեղոյանը,

- դեպքի օրը Դ.Դեղոյանը Կ.Մինասյանի խնդրանքով վարել է վերջինիս կնոջը պատկանող «Նիսան Տիդա» մակնիշի 34 RQ 834 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, որում առկա է եղել զենք,

- մինչև դեպքը Կ.Մինասյանը նստել է Դ.Դեղոյանի վարած ավտոմեքենայի հետնամասում,

- դեպքից առաջ՝ ժամը 23.41.15-ին և 23.44.45-ին Կ.Մինասյանի և Ա.Գալստյանի միջև տեղի են ունեցել համապատասխանաբար՝ 2.06 և 0.07 վայրկյան տևողությամբ հեռախոսազրույցներ,

- Երևան քաղաքի Բարաջանյան փողոցով ընթանալիս Կարեն Մինասյանը, տեսնելով ճանապարհի երթևեկելի մասից դուրս կայանված Արշակ Գալստյանին պատկանող «Նիսան» մակնիշի 34 DA 732 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, Դ.Դեղոյանին առաջարկել է մեքենան վարել և կայանել Արշակ Գալստյանին պատկանող ավտոմեքենայի մոտ, որից հետո Դ.Դեղոյանը նախ՝ ավտոմեքենան կայանել է Ա.Գալստյանի ավտոմեքենայի առջևի հատվածում, ապա հետընթաց կատարել և կայանել Ա.Գալստյանի ավտոմեքենայի կողքին, այնուհետև՝ 2-3 վայրկյան կանգնելուց հետո, արագ հեռացել է,

- դրանից հետո Դ.Դեղոյանը Կ.Մինասյանին տեղափոխել է «Զվարթնոց» օդանավակայան, հանդիպել Հ.Գևորգյանին և վերջինիցս վերցրած գումարը փոխանցել Կ.Մինասյանին, ով նշված գումարով օդանավակայանի տարածքից Երևան-Մոսկվա չվերթի տուն է գնել և մեկնել Հայաստանի Հանրապետությունից,

- Դ.Դեղոյանը վերադարձել է Հաղթանակ թաղամաս, Կ.Մինասյանի կնոջ եղբորը՝ Գ.Խաչատրյանին փոխանցել «Նիսան Տիդա» մակնիշի 34 RQ 834 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի բանալիները և գնացել տուն,

- «Նիսան Տիդա» մակնիշի ավտոմեքենայի հետևի նստատեղին նստած անձը կարող էր բեռնախցիկից վերցնել իրեր և առարկաներ:

17. Վերոշարադրյալի հիման վրա, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ Կ.Մինասյանը դեպքի օրը նստել է Դ.Դեղոյանի վարած

մեքենայի հետևի նստատեղին, քանի որ բավական դժվար կլիներ աջակողմյան դեկ ունեցող մեքենայի վարորդի կողքի նստատեղից Ա.Գալստյանին կրակելը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն ենթադրական բնույթի դատողություն է և բավարար չէ հաստատված համարելու, որ Դ.Դեղոյանը նախապես տեղեկացված է եղել Կ.Մինասյանի մտադրությունների մասին: Ավելին՝ Դ.Դեղոյանը դատաքննության ընթացքում մեղադրողի և դատարանի հարցերին պատասխանելիս նշել է, որ նախկինում նույնպես եղել են դեպքեր, երբ Կ.Մինասյանը նստել է մեքենայի հետնամասում:

17.1. Ինչ վերաբերում է Կ.Մինասյանի կնոջ մեքենայում նախապես զենք չլինելու և այն ավտոմեքենայում առնվազն դեպքի օրը դրած լինելու մասին Վերաքննիչ դատարանի դատողությանը, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նախ՝ սույն գործով առկա չէ որևէ ապացույց այն մասին, թե ինչպես է ձեռք բերվել նշված ինքնաձիգը և երբևիցե կամ որքան ժամանակ է գտնվել մեքենայի մեջ, երկրորդ՝ այդ դատողությունը դարձյալ որևէ փաստական տվյալով չհաստատված ենթադրություն է, որը չի կարող հիմք համարվել հաստատելու, որ Դ.Դեղոյանը տեղյակ է եղել մեքենայում զենքի առկայության մասին կամ տեսել է այն:

17.2. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, իրավաչափ չէ նաև ստորադաս դատարանի այն հետևությունը, որ Դ.Դեղոյանը տեղյակ է եղել Կ.Մինասյանի և Ա.Գալստյանի հանդիպման մասին, քանի որ բջջային հեռախոսահամարների վերծանումների մասին արձանագրության համաձայն՝ Կ.Մինասյանի հեռախոսահամարից ժամը 23:41:15-ին և 23:44:45-ին առկա են համապատասխանաբար՝ 2.06 և 0.07 վայրկյան տևողությամբ ելքային հեռախոսազանգեր Ա.Գալստյանին, իսկ այդ ժամանակահատվածում Դ.Դեղոյանը և Կ.Մինասյանը միասին գտնվել են մեքենայի մեջ, ուստի Դ.Դեղոյանը չէր կարող չլսել Կ.Մինասյանի հեռախոսազրույցը: Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն քրեական գործով առկա չէ որևէ ապացույց այդ հեռախոսազանգերի բովանդակության վերաբերյալ, որից Դ.Դեղոյանը կարող էր ենթադրել Կ.Մինասյանի և Ա.Գալստյանի հնարավոր հանդիպման կամ Կ.Մինասյանի հանցավոր մտադրությունների մասին: Իսկ քանի դեռ հայտնի չէ, թե ինչ են խոսել Կ.Մինասյանը և Ա.Գալստյանը, կամ արդյոք Դ.Դեղոյանը լսել է այդ հեռախոսազրույցները թե ոչ, առկա է չփարատված կասկած, որը պետք է մեկնաբանել հօգուտ ամբաստանյալի:

17.3. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, թե Դ.Դեղոյանի պնդումն այն մասին, որ կրակոցի ժամանակ գլուխը բռնել է, քանի որ իր աչքի առաջ հորաքրոջ տղան իր հորաքրոջ տղային է սպանել, իսկ կրակոցները դադարելուց հետո, երբ Կարեն Մինասյանն ասել է՝ քշի, վեր է թռել, հերքվում է տեսաձայնագրությամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոնշյալ եզրահանգումը նույնպես հիմնավոր չէ, քանի որ ողջամտորեն Դ.Դեղոյանը կարող էր նկարագրված գործողությունները

կատարել նաև տեսաձայնագրությամբ արձանագրված 2-3 վայրկյանների ընթացքում:

17.4. Ինչ վերաբերում է վկա Ա.Խաչատրյանի և տուժողի իրավահաջորդ Է.Գալստյանի դատաքննական ցուցմունքներին, որոնցով, ըստ Վերաքննիչ դատարանի գնահատման, հիմնավորվում է, որ Դ.Դեղոյանը տեղյակ էր նախապատրաստվող սպանության մասին, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ ցուցմունքները հիմնված են ենթադրական և սուբյեկտիվ դատողությունների վրա և չեն պարունակում որևէ կոնկրետ փաստական տվյալ այն մասին, որ Դ.Դեղոյանն իմացել է Ա.Գալստյանին սպանելու Կ.Մինասյանի մտադրության մասին և հանցագործության օբյեկտիվ կողմի իրագործումը սկսելուց մինչև ավարտին հասցնելը նախապես խոստացել է օժանդակել նրան:

18. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, Դ.Դեղոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելով, պատշաճ վերլուծության և գնահատման չի արժանացրել սույն գործի փաստական տվյալները՝ նյութաիրավական նորմերի կիրառման հարցում հանգելով սխալ եզրահանգման:

Ուստի, հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Դ.Դեղոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով վերադրակելու մասին Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ և 334-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում և չի պահպանել ապացույցները գործի լուծման համար բավարարության տեսանկյունից գնահատելու օրենսդրական պահանջը՝ խախտելով անմեղության կանխավարկածի և ապացույցները գնահատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 126-րդ և 127-րդ հոդվածների պահանջները: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավաչափորեն հաստատված է համարել, որ Դավիթ Դեղոյանի արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ

հողվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Ամբաստանյալ Դավիթ Զոհրաբի Դեղոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-104-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունվարի 29-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արտագրություն

Դատավորներ

արտագրություններ

27.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0040/01/12

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2021 թվականի հունիսի 11-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով դատապարտյալ Մելիք Ժիրայրի Մեսրոպյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 27-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2012 թվականի հունիսի 14-ի դատավճռով ամբաստանյալ Մելիք Մեսրոպյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 67-րդ հոդվածների կիրառմամբ՝ նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 1-ի դատավճռով նշանակված 9 (ինը) տարի ժամկետով ազատազրկում պատժից չկրած՝ 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկումը, և

վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2012 թվականի հունիսի 14-ից: Պատժի հետ մեկտեղ Մ.Մետրոպոլիտի նկատմամբ նշանակվել է նաև բժշկական բնույթի հարկադիր բուժում «կանաքինոիդային թմրամոլության» դեմ:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Մ.Մովսիսյանը և Ք.Աստոնյանը:

2. Դատապարտյալ Մ.Մետրոպոլիտի կողմից նոր հանգամանքի հիմքով բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 14-ի դատավճիռը բեկանել և փոփոխել: Մ.Մետրոպոլիտը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 67-րդ հոդվածների կիրառմամբ՝ նշանակված պատժին գումարվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 1-ի դատավճռով նշանակված 9 (ինը) տարի ժամկետով ազատազրկում պատժից չկրած՝ 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկումը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2012 թվականի հունիսի 14-ից:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Մելիք Մետրոպոլիտը ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղավոր է ճանաչվել հետևյալ արարքի համար. «Նա ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու համար Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատապարտվել է 9 տարի ժամկետով ազատազրկման և պարիժը ՀՀ ԱԵ «Նուրարաշեն» ՔԿ հիմնարկում կրելու ընթացքում՝ 2011թ. հոկտեմբերի 4-ին գործով չպարզված անձից ցանկացել է առանց իրացնելու նպատակի, իր գործածման համար սպորիսի ձեռք բերել խոշոր չափի՝ 15,62 գրամ «չորացված մարիխուանա» րեսակի թմրամիջոց, որը ՔԿ հիմնարկ առաքելու և իրեն փոխանցելու խնդրանքով դիմել է հոր երկրորդ կնոջը՝ Մարինե Մովսիսյանին, որին վերջինս նախապես խտրացել է օժանդակել: Միաժամանակ Մ.Մետրոպոլիտը խնդրել է իր ընկերուհի Քնարիկ Համլեյրի

Անտրոնյանին անձանոթից վերցնել թմրամիջոցով հանձնուքը ու փոխանցել Մ.Մովսիսյանին, որին Ք.Անտրոնյանն ընդատուցել է:

Քնարիկ Անտրոնյանը, ցանկանալով օժանդակել Մ.Մետրոպոլիտանին խոշոր չափի 15,62 գրամ «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոցն ապօրինի ձեռք բերելու հարցում, նրա ինտրանսով 2011թ. հոկտեմբերի 04-ին ժամը 17:00-ի սահմաններում «Մալաթիա» բժշկական կենտրոնի մուտք հանդիպել է քննությանը չպարզված անձնավորությանը, նրանից վերցրել թմրամիջոցով հանձնուքը և հաջորդ օրը՝ հոկտեմբերի 5-ին ժամը 12:00-ի սահմաններում, «Գումի» շուկայի մուտք այն փոխանցել Մարինե Մովսիսյանին՝ այդպիսով վերացրել թմրանյութը ՔԿ հիմնարկ ապօրինի առաքելու և Մ.Մետրոպոլիտանին հանձնելու խոչընդոտները: Մ.Մովսիսյանը հանձնուքի միջից հանել է հիշյալ թմրամիջոցի պարունակությանը փաթեթը և պահել մուտք՝ հերազայում Մ.Մետրոպոլիտանին հանձնելու համար: 2011թ. հոկտեմբերի 07-ին Մ.Մովսիսյանը նշված թմրամիջոցով փաթեթը դիրավորյալ թաքցրել է իր կրծկալի մեջ և գնացել Մ.Մետրոպոլիտանին տեսակցության՝ այդպիսով վերացրել թմրանյութը ՔԿ հիմնարկ ապօրինի առաքելու և Մ.Մետրոպոլիտանին հանձնելու խոչընդոտները, սակայն նույն օրը ժամը 14:00-ի սահմաններում տեսակցության այցելած անձանց խուզարկության սենյակում «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի աշխատակիցների կողմից Մ.Մովսիսյանի անձնական խուզարկությանը հայտնաբերվել է խոշոր չափի՝ 15,62 գրամ «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոցը, և Մ.Մետրոպոլիտանը հանցագործությունն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով»⁴³³:

5. Վերաքննիչ դատարանը, հղում կատարելով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին, ինչպես նաև վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածը, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածը և ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշումը, եզրահանգել է. «(...) [Կ]արարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատապարտյալ Մելիք Ժիրայրի Մետրոպոլիտանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով կարարված արարքի հանցավորությունը չի վերացվել, քանի որ «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոցի 15,62 գրամը շարունակում է հանդիսանալ խոշոր չափ: Միևնույն ժամանակ (...) նշված տեսակի թմրամիջոցի խոշոր չափի նվազագույն շեմի փոփոխություն է տեղի ունեցել մերմնացման առումով, որպիսի պարագայում 15,62 գրամ չափով «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոցը մուտք է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված նշված տեսակի թմրամիջոցի խոշոր չափի նվազագույն շեմին (12,5 գրամ՝ նախկին 5,0 գրամի փոխարեն): Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ նոր օրենքն այլ կերպ բարելավում է Մելիք Մետրոպոլիտանի վիճակը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բերված բողոքը պետք է բավարարել, [Առաջին

⁴³³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 169-170, հատոր 3, թերթեր 81-84:

ապրյանի դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի՝ դատավճիռը բեկանել և փոփոխել (...)⁴³⁴:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ: Մասնավորապես, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանն առանց համապատասխան իրավական հիմքերի նոր հանգամանքով վերանայել և փոփոխել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը՝ խախտելով դատական ակտերի կայունության սկզբունքը:

Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկի՝ բողոքաբերը, մեջբերելով Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի՝ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավական դիրքորոշումները և դրանց լույսի ներքո գնահատելով սույն քրեական գործում առկա փաստական տվյալները, արձանագրել է, որ ՀՀ Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող (թիվ 1 հավելված) որոշմամբ չի ապաքրեականացվել Մելիք Մեսրոպյանի կատարած հանրորեն վտանգավոր արարքը, չի մեղմացվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սանկցիայով նախատեսված պատիժը կամ այլ կերպ չի բարելավվել վերջինիս վիճակը, հետևաբար առկա չի եղել նոր հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը վերանայելու և նշանակված պատիժը մեղմացնելու քրեադատավարական հիմքը:

7. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը և օրինական ուժի մեջ թողնել Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 14-ի դատավճիռը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության սկզբունքի, ինչպես նաև դրանց վերանայման սահմանների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

⁴³⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 24-28:

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Մելիք Մեսրոպյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 14-ի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելու համար:

10. *«Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը»* վերտառությամբ ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:*

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:*

10.1. ՀՀ Սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան), ՍԴՈ-1348 որոշման շրջանակներում մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածը և անդրադառնալով արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու կառուցակարգին՝ արձանագրել է. *«(...) Ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից և վերջինիս սույն որոշման մեջ բացահայտված բովանդակությամբ կիրառումն ապահովելու համար իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը պատիժ կրող անձանց նկարմանը անհրաժեշտ է իրականացնել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը դիտարկելով որպես դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք (...)*»⁴³⁵:

Արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրել է. *«(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գրնվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ,*

⁴³⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշման 7-րդ կետը:

համաձայն որի ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անախճական գործողությունից արարքի պարզեցիկությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրատ արակրիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով (...)»⁴³⁶:

10.2. Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը 2021 թվականի մարտի 26-ի թիվ ՄԴՈ-1586 որոշմամբ նշել է, որ «Ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության ընդհանուր կանոնը, որով մերժվում է իրավական ակտերի հետադարձ գործողության հնարավորությունը, հետապնդում է իրավաչափ նպատակներ՝ դրանով հնարավոր է լինում երաշխավորել մարդու իրավունքները, ապահովել իրավական որոշակիության, իրավական անվրանգության ակզբունքները, հասարակական հարաբերությունների կայունությունը և այլն:

Համանման իրավական դիրքորոշում Սահմանադրական դատարանն արտահայտել է նաև իր՝ 2011 թվականի նոյեմբերի 29-ի ՄԴՈ-1000 որոշմամբ, մասնավորապես, ամրագրելով, որ «ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-6-րդ մասերի, ինչպես նաև 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Սահմանադրությամբ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն փրամաքանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մտրեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկարմամբ լեգիտիմ ակնակախքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրատ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկարատումներից»:

Ընդ որում, բացառություններն իրենց հերթին փարքեր են. (1) երբ սահմանադիրը բացատում է օրենսդրի կողմից որևէ հայեցողություն դրսևորելու հնարավորությունը՝ սահմանելով հետադարձության ուղիղ պահանջ (արարքի պարզեցիկությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ (Սահմանադրության 72-րդ հոդված), և (2) երբ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու լիազորությունը թողնվում է իրավատու (այդ ակտն ընդունող) մարմնի հայեցողությանը (անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով (Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս դեպքերում ևս Սահմանադրական դատարանը վերահասարարում է ՄԴՈ-1000 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ իրավական ակտի հետադարձությունը թույլատրվում է բացառիկ դեպքերում, և փվյակ ակտն ընդունող մարմնի՝ այդ ակտին հետադարձ ուժ հաղորդելու որոշումը պետք է հիմնվի հասարակության և պետության

⁴³⁶ Տեն նույն որոշման եզրակակիչ մասը:

համար նման որոշման հնարավոր իրավական հետևանքների բազմակողմանի վերլուծության և գնահատականի վրա»⁴³⁷:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագրության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությամբ համապարասիան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը փոխադրության օրենքին և քրեական դատավարությանը համապարասիան, եթե ի հայր են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»

11.1. Դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վերջնական դառնալու, և միայն բացառիկ դեպքերում դրա վերանայման հնարավորության, այսինքն՝ դատական ակտերի կայունության սկզբունքի հետ կապված Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում բազմիցս ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո իրավունքի գերակայությունը պայմանավորվող պետությունների ընդհանուր նվաճումն է, որի հիմնարար կողմերից է իրավական որոշակիության սկզբունքը, ինչը պահանջում է, ի թիվս այլնի, որ եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի⁴³⁸:

Իրավական որոշակիությունը ենթադրում է հարգանք *res judicata*՝ դատական ակտերի կայունության սկզբունքի՝ նկատմամբ: Մասնավորապես, վերոնշյալ սկզբունքից բխում է, որ որևէ կողմ իրավասու չէ պահանջել վերջնական և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայում՝ պարզապես գործը կրկին քննելու և նոր որոշում կայացնելու ակնկալիքով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պնդմամբ՝ վերանայումը չպետք է քողարկված բողոքարկման բնույթ կրի, իսկ գործի վերաբերյալ երկու տարբեր կարծիքի առկայության հնարավորությունը դեռևս չի կարող վերանայման հիմք լինել: Իրավական որոշակիության սկզբունքից շեղումը կարող է արդարացվել միայն պարտադիր հանդիսացող էական և անհաղթահարելի հանգամանքների դեպքում⁴³⁹ կամ եթե լուրջ իրավաչափ

⁴³⁷ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի մարտի 26-ի թիվ ՍԴՈ-1586 որոշման 6.1.-րդ կետը:

⁴³⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Xheraj v. Albania* գործով 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 37959/02, կետեր 51-52:

⁴³⁹ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Brumarescu v. Romania* գործով 2001 թվականի հունվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 28342/95, կետեր 61-62, *Ryabykh v. Russia* գործով 2003 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 52854/99, կետեր 51-52:

նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ⁴⁴⁰: Այսպես՝ իրավական որոշակիության սկզբունքի պահանջը բացարձակ չէ, և դրանից շեղվող ցանկացած որոշում պետք է գնահատվի Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետի լույսի ներքո, որն ուղղակիորեն թույլատրում է պետությանը նոր փաստերի կամ նախորդ վարույթում տեղ գտած՝ գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության հիմքով նորոգել գործի վարույթը⁴⁴¹:

Այդ պատճառով էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանն ընդգծում է քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու հնարավորությունը՝ մինչև վերջնական դատական ակտի կայացումը: Այս առումով հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասը ոչ միայն երաշխավորում է ավելի խիստ քրեական օրենքների հետադարձ ուժի արգելքը, այլ նաև անուղղակիորեն երաշխավորում է ավելի մեղմ քրեական օրենքի հետադարձ ուժ ունենալու սկզբունքը: Վերջինս բխում է այն կանոնից, որի համաձայն՝ հանցանքը կատարելու պահին գործող և հետագայում՝ **նախքան վերջնական դատական ակտի կայացումն ընդունված քրեական օրենքների միջև տարբերությունների առկայության դեպքում դատարանները պարտավոր են կիրառել այն օրենքը, որի նորմերն ավելի բարենպաստ են ամբաստանյալի համար**⁴⁴²:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ փաստված է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»*:

12.1. Վճռաբեկ դատարանը, *Վաղարշակ Գալոյանի* գործով որոշման շրջանակներում անդրադառնալով արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի հետադարձության եղանակներին, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ *«(…) [Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի գործողության փաստումը մինչև դրա ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա կարող է իրականացվել երկու եղանակով՝ պարզ և վերաբուժիչ (ռեհաբիլիտացիոն) կարգով*:

⁴⁴⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Xheraj v. Albania* գործով 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 37959/02, կետեր 51-52:

⁴⁴¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Radchikov v. Russia* գործով 2007 թվականի մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 65582/01, կետ 42:

⁴⁴² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Scoppola v. Italy (№2)* գործով 2009 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 10249/03, կետ 109:

Քրեական օրենքի պարզ հետադարձությունը ենթադրում է, որ փյվյալ գործով դեռևս դատարվածի կամ գործն ըստ էության լուծող այլ վերջնական ակտ չի կայացվել: Այս դեպքում իրավակիրառող մարմինները նոր քրեական օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ղեկավարվում են դրանով և կատարված արարքին իրավական գնահատական են տալիս և պարզի նշանակման հարցը լուծում են նոր, ավելի մեղմ օրենքին համապատասխան:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ անձի վիճակը բարելավող քրեական օրենքը տարածվում է նաև այն անձանց վրա, ովքեր կրում են պարտիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատարվածություն: Այլ խոսքով՝ հնարավոր է իրավիճակ, երբ մեղադրական դատարվածին արդեն իսկ մերել է օրինական ուժի մեջ և գրնվում է կատարման փուլում կամ արդեն իսկ ի կատար է ածվել, սակայն անձի դատարվածությունը դեռևս չի մարվել: Այս դեպքում քրեական օրենքի գործողության տարածումը մինչև դրա ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա կատարվում է վերադարձի (ռեդիմի) եղանակով, և օրինական ուժի մեջ մտնած դատարկ ակտերը վերանայվում են:

Անդրադառնալով քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմաններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր օրենքը համարվում է արարքի հանցավորությունը վերացնող, եթե դրանով արարքը դադարում է հանցագործություն համարվել (յրիվ սպաքրեականացում) կամ հանցակազմն այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է (մասնակի սպաքրեականացում): Ընդ որում, արարքի հանցավորությունը կարող է վերացվել նաև քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթների փոփոխության միջոցով, օրինակ՝ հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքը կարող է փոփոխվել, ինչի արդյունքում անձը կարող է դադարել քրեական պատասխանատվության տարիկար լինելուց:

Նոր օրենքը համարվում է պարտիժը մեղմացնող, եթե հոդվածի սանցիայով նախատեսված ա) պարտի նվազագույն կամ առավելագույն չափերը իջեցվում են, բ) պարտավարեալը փոխարինվում է ավելի մեղմ պարտավարեալով, գ) պարտադիր լրացուցիչ պարտավարեալը վերացվում է կամ վեր է ածվում ֆակուլտատիվի, դ) նախատեսվում է երկրորդի առավել մեղմ պարտավարեալ:

Հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող է համարվում այն օրենքը, որը չի վերացնում արարքի հանցավորությունը և չի մեղմացնում պարտիժը, սակայն քրեական պատասխանատվության և պարտի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պարտից ազատելու հիմքերի և պայմանների հետ կապված՝ առավել նպաստավոր պայմաններ է սրբեղծում հանցանք կատարած անձի համար: Նման իրավիճակները կարող են բազմազան լինել և վերաբերել քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի տարբեր ինստիտուտներին (...)⁴⁴³:

⁴⁴³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վաղարշակ Գալոյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷՊ/0008/15/13 որոշման 18-րդ և 19-րդ կետերը:

13. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության սկզբունքի առանցքային բաղադրատարրերից մեկը **դատական ակտերի կայունության կամ *res judicata* սկզբունքն է, որի ցանկացած խախտում հանգեցնում է իրավական որոշակիության ոտնահարման և ուղղակիորեն ազդում իրավունքի գերակայության սկզբունքի վրա: *Res judicata* սկզբունքի հիմքում ընկած է **իրավական կարգադրագրերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անփոփոխելիության ու վերջնական լինելու, դրանց համընդհանուր պարտադիրության գաղափարը, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև դատարանների հեղինակությունը և վստահությունը դատական իշխանության նկատմամբ:** Հետևաբար, իրավական որոշակիության սկզբունքից շեղումը կարող է արդարացված համարվել միայն օրենքով հստակ սահմանված, պարտադիր հանդիսացող էական և անհաղթահարելի հանգամանքների դեպքում: Նշվածը նաև բխում է Սահմանադրական դատարանի՝ թիվ ՄԴՌ-754 որոշման շրջանակներում ընդգծված՝ միջազգային իրավունքում հայտնի սկզբունքից՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (*res judicata*), որն ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների՝ քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված **վերջնական որոշումը՝ որպես իրավական որոշակիության արդյունք, ենթակա է հարգանքի**⁴⁴⁴: Համանման իրավական դիրքորոշում է հայտնել նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով)՝ նշելով, որ **ներպետական դատարանների վերջնական դատավճիռները չեն կարող դրվել կասկածի տակ**⁴⁴⁵:**

14. Դատական ակտերի կայունության և իրավական որոշակիության սկզբունքների համատեքստում դիտարկելով սույն որոշման 10-13-րդ կետերում մեջբերված իրավադրույթները և արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո ընդունված նոր օրենքը կարող է Սահմանադրական դատարանի՝ վերը վկայակոչված թիվ ՄԴՌ-1348 որոշման իմաստով դիտարկվել այդ դատական ակտը բացառիկ վերանայման ենթարկելու նոր հանգամանք, եթե օրենսդրական փոփոխության արդյունքում լրիվ կամ մասնակիորեն վերանում է արարքի հանցավորությունը, մեղմանում հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը կամ այլ կերպ բարելավվում վերջինիս վիճակը: Ընդ որում, ի տարբերություն օրենքի հետադարձության պարզ կարգի, օրենքի հետադարձության վերստուգիչ (ռեիզիոն) կարգի դեպքում **օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ նոր օրենքի ընդունման հիմքով վերանայելու հնարավորությունը միջազգային սկզբունքների**

⁴⁴⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի մայիսի 27-ի թիվ ՄԴՌ-754 որոշումը:

⁴⁴⁵ Տե՛ս European Commission For Democracy Through Law (Venice Commission), Report on the Rule of Law, Strasbourg, 4 April 2011 Study No. 512 / 2009, կետ 46:

համապատասխան՝ սահմանափակված է դատական ակտերի կայունության և որոշակիության սկզբունքների պահպանման անհրաժեշտությամբ:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր օրենքի ընդունման հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման համար անհրաժեշտ է, որ **ընդունված նոր օրենքը ոչ միայն բարելավի հանցանք կատարած անձի վիճակը, այլև բացառի կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը:** Այլ խոսքով՝ օրենքի հետադարձության կանոնը վերստուգիչ (ռեիզիոն) կարգով կիրառելի է այն պարագայում, երբ օրենսդրական փոփոխության արդյունքում օրինական ուժի մեջ մտած **դատական ակտը հակասում է օրինականության և իրավունքի գերակայության սկզբունքներին**, որպիսի պայմաններում դատարանի համար պարտադիր է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը և նոր օրենքի գործողության տարածումն այն անձանց նկատմամբ, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն: Մասնավորապես, որպես այդպիսին կարող են դիտարկվել օրենսդրական այնպիսի փոփոխությունները, որոնք, ի թիվս այլնի, վերացնում են արարքի հանցավորությունը, փոխում արարքի իրավաբանական որակումը, մեղմացնում անձի նկատմամբ նշանակված պատիժը կամ այն փոխարինում ավելի մեղմ պատժատեսակով կամ որևէ կերպ բարելավում են հանցանք կատարած անձի վիճակը:

14.1. Ընդ որում, կարևոր է ընդգծել, որ պատիժը մեղմացնող կամ անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կարող է դիտարկվել որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելու նոր հանգամանք, եթե այն կոնկրետ իրավիճակում անվերապահորեն մեղմացնում է դատավճռով անձի նկատմամբ նշանակված պատիժը (օրինակ՝ եթե *in concreto* փաստական հանգամանքների գնահատմամբ նշանակված պատիժը գերազանցում է փոփոխված օրենքով նախատեսված պատժի առավելագույն չափը⁴⁴⁶) կամ այլ կերպ բարելավում է անձի վիճակը, որպիսի պայմաններում դատական ակտը չվերանայելը կհանգեցնի օրինականության սկզբունքի ռոտահարման: Այլ կերպ՝ դրանք այն «էական և անհաղթահարելի» հանգամանքներն են, որոնց պարագայում միայն արդարացի կլինի իրավական որոշակիության սկզբունքից շեղումը:

Հակառակ պարագայում, երբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով անձի նկատմամբ նշանակված պատիժը շարունակում է գտնվել նոր ընդունված օրենքով փոփոխված սանկցիայի սահմաններում, ուստի և պատժի մեղմացումը **պայմանավորված է դատարանի հայեցողությամբ ու գնահատողական**

⁴⁴⁶ Օրինակ՝ *Gouarre Patte c. Andorre* գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ դիմումատուի նկատմամբ մասնագիտական գործունեությամբ զբաղվելու ցմահ արգելքի նշանակման պարագայում ընդունված քրեական նոր օրենքը, որը սահմանել է մասնագիտական գործունեությամբ զբաղվելու արգելք ոչ ավելի քան հիմնական պատժի ժամկետը, պետք է դիտարկվի որպես անձի համար առավել բարենպաստ պատիժ սահմանող, տե՛ս *Gouarre Patte c. Andorre* գործով վճիռը, գանգատ թիվ 33427/10, կետ 31:

բնույթ է կրում (*in concreto* կարող է նշանակված պատիժը մեղմացնելու հիմք դիտարկվել, սակայն կարող է նաև որպես այդպիսին չդիտարկվել⁴⁴⁷), ապա այն չի կարող նոր հանգամանք համարվել և արդեն իսկ լուծված գործը նորոգելու հիմք հանդիսանալ: Մասնավորապես, ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանն է փաստել, գործի վերաբերյալ երկու տարբեր կարծիքի առկայության հնարավորությունը դեռևս չի կարող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու հիմք լինել⁴⁴⁸: **Ուստի, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեպքում, ռետրոսպեկտիվ կարգով (անցյալում՝ դատական ակտի կայացման պահին)՝ անձի պատիժը մեղմացնող քրեական նոր օրենքի հնարավոր կիրառելիության ենթադրությունը չի կարող հիմք հանդիսանալ օրինական ուժի մեջ մտած այդ դատական ակտը վերանայելու համար:**

14.2. Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ ի համեմատություն պատիժը մեղմացնող օրենքի, արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ռետրոսպեկտիվ կիրառելիությունը չունի հայեցողական և գնահատողական բնույթ, այդ հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը ոչ թե հիմնված է անձի արարքում հանցանքի հատկանիշների բացակայության ենթադրության, այլ այդպիսի համոզվածության վրա:

14.3. Հարկ է նկատել, որ ելնելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունության, վերջնական լինելու, անփոփոխելիության սկզբունքներից՝ պատիժը մեղմացնող քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու վերաբերյալ վերոնշյալ մոտեցումներն իրենց արտացոլումն են ստացել դեռևս 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգրքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման սահմանները նախատեսող՝ «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքում: Այսպես, նշված օրենքի 3-րդ հոդվածում սահմանվել է, որ «1961 թվականի մարտի 7-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին համապատասխան դատարարով և պարիժ չկրած անձանց նկատմամբ կիրառվող պարժի չափերը համապատասխանեցնել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին այն դեպքերում, երբ դատարարայի նկատմամբ նշանակված պարժն ավելի խիստ է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված պարժի առավելագույն չափից»:

Ավելին, հարկ է նկատել, որ նշված մոտեցումները հստակեցվել և իրենց արտացոլումն են գտել նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի

⁴⁴⁷ Օրինակ՝ քրեական նոր օրենքով ավելի մեղմ պատժատեսակի ավելացումն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ դատական ակտը վերանայելու համար, քանի որ դատական ակտ կայացնելիս այդպիսի պատժատեսակի առկայության դեպքում դրա նշանակման հնարավորությունը հիմնված է ենթադրության վրա, կրում է հայեցողական և գնահատողական բնույթ:

⁴⁴⁸ Տե՛ս սույն որոշման 11.1-րդ կետը:

մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում, որի 12-րդ հոդվածը տարբերակում է քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառելիության սահմանները՝ մինչև եզրափակիչ դատավարական ակտի օրինական ուժի մեջ մտնելն ու դրա ուժի մեջ մտնելուց հետո:

Այսպես, եթե մինչև եզրափակիչ դատավարական ակտի օրինական ուժի մեջ մտնելն արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, ապա եզրափակիչ դատավարական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, **իսկ պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե նշանակված պատիժն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված պատժի առավելագույն ժամկետից**⁴⁴⁹:

15. Վերոնշյալի հիման վրա պետք է փաստել, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման վերաբերյալ սույն որոշմամբ ներկայացված մոտեցումները չեն հակասում ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի այն մեկնաբանությանը⁴⁵⁰ (ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի հաշվառմամբ), որ ռետրոսպեկտիվ կարգով անձի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման սահմանները չեն նույնանում օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի վերանայման սահմանների հետ, ունի լիակատար կարգով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը պետք է համապատասխանի միջազգային-իրավական այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, վերջնական լինելը, անփոփոխելիությունը՝ վտանգի տակ չդնելով հարգանքը *res judicata*-ի արժեքանական նշանակության նկատմամբ:

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման սահմանների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները բխում են նաև այն ողջամիտ սկզբունքից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումն ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն: Ուստի, եթե ցանկացած օրենսդրական փոփոխություն դիտարկվի որպես նոր հանգամանք և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու հիմք՝ անպայմանորեն կհանգեցնի դատական ակտերի կայունության, վերջնական լինելու և անփոփոխելիության հիմնարար գաղափարի արժեզրկմանը՝ վտանգելով նաև իրավական անվտանգության և իրավունքի գերակայության հիմքերը:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի համաձայն՝ «1. Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմեդիկամենտներ»

⁴⁴⁹ Տե՛ս www.arlis.am կայքում:

⁴⁵⁰ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 25-ի թիվ ՍԴԱՈ-7 որոշումը, կետ 4.2:

(հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝

պարժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրվեցնելով՝ առավելագույնը մեկ օրվա ժամկետով:

2.Նույն արարքները, որոնք կատարվել են՝

(...)

2) խոշոր չափերով՝

պարժվում են ազատագրվեցնելով՝ առավելագույնը երեք օրվա ժամկետով (...):»:

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածում «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի համար որպես խոշոր չափ է սահմանված եղել 5.0 գրամից մինչև 500.0 գրամը ներառյալ:

Վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածներն ուժը կորցրած ճանաչելուց հետո ՀՀ Կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի համար որպես խոշոր չափ է սահմանվել 12.5 գրամից մինչև 62.5 գրամը ներառյալ:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Մ.Մեարոյանն Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 14-ի դատավճռով դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ խոշոր չափի՝ 15.62 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք բերելու փորձի համար⁴⁵¹,

- Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով բեկանելու և փոփոխելու արդյունքում Մ.Մեարոյանի նկատմամբ ազատագրվեցնելու նշանակված պատիժը մեղմացնելու տեսանկյունից որպես նոր հանգամանք է դիտարկել այն, որ վերջինս առանց իրացնելու նպատակի ապօրինի փորձել է ձեռք բերել 15.62 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, ինչը, թեև ներկա պահին կրկին համարվում է խոշոր չափերով թմրամիջոց, սակայն, ի տարբերություն Առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռ կայացնելու օրվա, ներկայումս իր քաշով առավել մոտ է ՀՀ Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող թիվ 1 հավելվածի «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի խոշոր չափի նվազագույն շեմին (12.5 գրամ՝ նախկին 5.0 գրամի փոխարեն), որպիսի պայմաններում նոր օրենքը պետք է դիտարկվել որպես անձի վիճակն այլ կերպ բարելավող⁴⁵²:

⁴⁵¹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

⁴⁵² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները չեն բարելավել դատապարտյալ Մ.Մ Եսերոյանի իրավական վիճակը: Մասնավորապես, «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի խոշոր չափի նվազագույն և առավելագույն սահմանների օրենսդրական փոփոխությունների համեմատական ուսումնասիրությունից երևում է, որ դրանց արդյունքում 15.62 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցը **շարունակում է համարվել խոշոր չափ:** Հետևաբար, Մ.Մ Եսերոյանի նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենսդրական փոփոխությունների արդյունքում **չի հակասում օրինականության սկզբունքին:**

Սույն գործով թմրամիջոցների չափերի փոփոխությունը Վերաքննիչ դատարանը դիտարկել է որպես անձի վիճակը բարելավող այն հիմնավորմամբ, որ Մ.Մ Եսերոյանին մեղսագրվող թմրամիջոցի չափն օրենսդրական փոփոխությունների արդյունքում առավել մոտ է դարձել «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի խոշոր չափի նվազագույն շեմին: Մինչդեռ, ինչպես արդեն իսկ նշվել է սույն որոշման շրջանակներում, բոլոր այն դեպքերում, երբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով անձի նկատմամբ նշանակված պատիժը շարունակում է գտնվել նոր ընդունված օրենքով փոփոխված սանկցիայի սահմաններում, ուստի և պատժի մեղմացումը պայմանավորված է դատարանի հայեցողությամբ ու գնահատողական բնույթ է կրում (*in concreto* փաստական հանգամանքների գնահատմամբ կարող է նշանակված պատիժը մեղմացնելու հիմք դիտարկվել, սակայն կարող է նաև որպես այդպիսին չդիտարկվել), ապա այն որևէ կերպ չի կարող նոր հանգամանք համարվել և արդեն իսկ լուծված գործը նորոգելու հիմք հանդիսանալ: Տվյալ դեպքում պատիժը մեղմացնելը դատարանի հայեցողության շրջանակներում է գտնվել, մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, գնահատելով անձին մեղսագրվող թմրամիջոցի չափը, այն դիտարկելով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի խոշոր չափի՝ փոփոխված նվազագույն շեմի համատեքստում, գտել է, որ նշանակված պատիժն անհրաժեշտ է մեղմացնել, ինչը, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, չի բխում դատական ակտերի կայունության և իրավական որոշակիության սկզբունքների պահանջներից:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ի տարբերություն հետադարձության պարզ կարգի, երբ դեռևս չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, և դատարանները հնարավորություն ունեն գործի հանգամանքների ամբողջական գնահատման արդյունքում անձի նկատմամբ նշանակել համապատասխան պատիժ՝ վերջինիս վիճակը բարելավող նոր օրենքի դրույթներին համապատասխան, ապա հետադարձության ռեիզիոն կարգի պայմաններում իրավիճակն այլ է. տվյալ դեպքում գործ ունենք արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հետ, ուստի օրենսդրական ցանկացած փոփոխություն չէ, որ կարող է հիմք լինել այն վերանայելու և բեկանելու համար, այլ միայն

այնպիսիք, որոնք կոնկրետ դեպքում կան վերացնում են կատարված արարքի հանցավորությունը, կան փոխում արարքի իրավաբանական որակումը, կան անպայմանորեն մեղմացնում են հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը, կան անպայմանորեն այլ կերպ բարելավում են վերջինիս վիճակը:

19. Ուստի, վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն ընդունելի է համարում բողոքաբերի պնդումներն այն մասին, որ ընդունված նոր օրենքով չի ապաքրեականացվել դատապարտյալ Մ.Մեսրոպյանի կատարած հանրորեն վտանգավոր արարքը, չի մեղմացվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սանկցիայով սահմանված պատիժը կամ այլ կերպ չի բարելավվել վերջինիս վիճակը: Հետևաբար՝ թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները հիմք չեն Մ.Մեսրոպյանի վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու և փոփոխելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Մելիք Մեսրոպյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 14-ի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելու համար:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելով և փոփոխելով, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 27-ի դատական ակտը բեկանելու համար: Մինչև ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է օրինական ուժի մեջ թողնել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 14-ի դատավճիռը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Մելիք Ժիրայրի Մեսրոպյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը բեկանել՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 14-ի դատավճիռը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

28.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ2/0068/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հունիսի 25-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ Արմեն Գագիկի Հովակիմյանի և նրա պաշտպան Ռ.Կոնիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի օգոստոսի 15-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնում Արթուր Ստեփանյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Լոռու մարզի դատախազի տեղակալ Ա.Շիրոյանի՝ 2018 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ վերը նշված որոշումը վերացվել է, և ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 55200818 քրեական գործը:

2018 թվականի օգոստոսի 29-ին Արմեն Հովակիմյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ Ա.Հովակիմյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Հովակիմյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2018 թվականի սեպտեմբերի 18-ին Ա.Հովակիմյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով:

2018 թվականի սեպտեմբերի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետև՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 20-ի դատավճռով Ա.Հովակիմյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատժի ժամկետին հաշվակցվել է Ա.Հովակիմյանի՝ արգելանքի տակ գտնվելու 2 (երկու) օր ժամկետը, և թողնվել է կրելու ազատազրկում՝ 2 (երկու) տարի 5 (հինգ) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Գևորգ Վրթանեսի Մադոյանը:

3. Ամբաստանյալ Ա.Հովակիմյանի պաշտպան Ռ.Կոնիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետև՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի մայիսի 14-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 20-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Ա.Հովակիմյանը և նրա պաշտպան Ռ.Կոնիսյանը բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 16-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար Էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Ա.Հովակիմյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Մ]ա, 2018 թվականի օգոստոսի 4-ին ժամը 23-ի սահմաններում, ընկերոջը (...)՝ Գևորգ Մադոյանին խնդրել է իրեն փանել Լոռու մարզի Լորուս գյուղի բնակչուհի Արսիհնե Սրտեհանյանի փուն՝ նրան փրկակցելու, այսուհետև վերջինիս փաստացի պատկանող Վագ 21213 մակնիշի

35 QV 841 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով գնացել են վերջինիս Կրստի Գևորգ Մադոյանը սպասել է դրսում, իսկ Արմեն Հովակիմյանը ննջասենյակի պատուհանով մտնելով տուն, Արիհինե Սրեփանյանին առաջարկել է ամուսնանալու նպատակով գնալ իր հետ, սակայն վերջինիս կողմից մերժում արանալով, նրա կամքին հակառակ, բռնություն գործադրելով, այն է՝ բռնելով նրա ձեռքերից, բարձրացրել է նստած տեղից ու գրկելով նրան, Կրստի Գևորգ Մադոյանին ինտրել է վարել այն, այդ կերպ, վերջինիս օժանդակությամբ, Արիհինե Սրեփանյանին բնական միջոցառման միջավայրից դուրս հանելով, նրա մշտական բնակության վայրից տեղափոխել է նախ Վանաձոր քաղաք, այնուհետև Արիհինե Սրեփանյանի հետ տեղափոխելով մեկ այլ իրեն պարկանող «Տորդ-Տրանզիթ» մակնիշի 35 SV 419 հաշվառման համարանիշի ավտոմեքենա, գնացել են Երևան քաղաքի մոտակայքում գտնվող, գործով չպարզված հյուրանոց, այնուհետև տեղեկանալով, որ Արիհինե Սրեփանյանի ծնողները դիմել են ոստիկանություն, նրան հետ է վերադարձրել»⁴⁵³:

6. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2018 թվականի նոյեմբերի 20-ի դատավճռում արձանագրել է հետևյալը. «(...) Ամբաստանյալներ Արմեն Գագիկի Հովակիմյանի և Գևորգ Վրթանեսի Մադոյանի նկատմամբ պարտքերի նշանակելիս դատարանը հաշվի է առնում նրանց կատարած արարքների հանրորեն վրանգավորության աստիճանը և բնույթը, ինչպես նաև նրանց անձը:

(...)

Դատարանը անդրադառնալով ամբաստանյալներ Արմեն Հովակիմյանի և Գևորգ Մադոյանի կողմից կատարված արարքների հանրային վրանգավորությանը, գտնում է, որ նրանցից առավել բարձր վրանգավոր է Արմեն Հովակիմյանի արարքը, որն արտահայտվել է նրանում, որ նա խնամալով, որ տուժողը իր հետ չի ցանկանում նույնիսկ շփվել և համաձայն չէ իր հետ ամուսնանալ, նրան առևանգելու նպատակով նրանց բնակարան է մուտք գործել լուսամուտով և բռնությամբ Արիհինե Սրեփանյանին դուրս բերել բնակարանից, ոտնձգելով նրա իր կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ամուսին ընտրելու իրավունքների դեմ:

Ամբաստանյալ Արմեն Հովակիմյանի պարասխանաարվությունը և պարտիժը մեղմացնող հանգամանքներ չկան, իսկ նրա պարասխանաարվությունը և պարտիժը ծանրացնող հանգամանք է համարվում հանցագործությունների կատարման ռեցիդիվը:

(...)

Անդրադառնալով ամբաստանյալներ Արմեն Հովակիմյանի և Գևորգ Մադոյանի անձի և ընդհանրական վիճակների ուսումնասիրությանը, Դատարանը փաստում է, որ նրանք երիտասարդ են, ամուսնացած չեն, ֆիզիկապես առողջ են, բնութագրվում են դրական (...):

⁴⁵³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 179:

Ամբաստանյալների նկատմամբ պատիժներ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ տուժողը նրանցից բողոք և այլ պահանջներ չի ներկայացրել:

Դատարանը ՀՀ Վճուարելի դատարանի (...) որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո հաշվի առնելով ամբաստանյալներ Արմեն Գագիկի Հովակիմյանի և Գևորգ Վրթանեսի Մատոյանի կատարած հանցագործությունների բնույթը և հանրության համար վրանգավորության աստիճանը, հանցագործությունների կատարման շարժառիթը, եղանակը, նրանց հանցավոր մտադրությունների իրականացման աստիճանը, հանցագործության կատարման մեջ նրանց մեղքի աստիճանը, խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, նրանց անձը բնութագրող փոխախերք, Արմեն Հովակիմյանի պարասիանաարվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքի առկայությունը, գրնում է, որ իրենց կատարած հանցագործությունների համար նրանք ենթակա են պատիժների ազատազրկման ձևով:

(...)

Դատարանը քննարկելով նշանակված պատիժը ամբաստանյալ Արմեն Հովակիմյանի կողմից կրելու հարցը, գրնում է, որ ազատազրկման ձևով պատիժը նրա կողմից ենթակա է կրելու, հաշվի առնելով, որ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայրաբարելու մասին» 01.11.2018 թվականի ՀՀ օրենքը նրա նկատմամբ ենթակա չէ կիրառման, իսկ նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն լցկիրառելու հիմքերը բացակայում են:

(...)

Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Արմեն Հովակիմյանը Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 18.12.2017 թվականի դատալիզով ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է 500.000 ՀՀ դրամ տուգանքի: Պրոբացիայի պետական ծառայության կողմից տրված 004210 տեղեկանքի համաձայն նա պատիժը կրել է ՀՀ ԱՆ սյրոբացիայի պետական ծառայության Լոռու մարզային բաժնում 14.02.2018 թվականից մինչև 24.09.2018 թվականը, իսկ սույն գործով իրեն մեղադրվող հանցավոր արարքը նա կատարել է 2018 թվականի օգոստոսի 04-ին, այսինքն տուգանքի ձևով նշանակված պատիժի կրման ընթացքում:

Դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Արմեն Հովակիմյանի կողմից ազատազրկման ձևով պատիժը կրելու միջոցով միայն հնարավոր կլինի հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատիժի նպատակների իրագործմանը:

(...)»⁴⁵⁴:

⁴⁵⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 93-97:

7. Վերաքննիչ դատարանն իր՝ 2019 թվականի մայիսի 14-ի որոշմամբ արձանագրել է. «(...) ՀՀ Վճարակ դատարանի իրավական վերլուծությունների համալրեքարտով քննության առնելով ամբաստանյալի նկարմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու հարցը, Վերաքննիչ դատարանը բացահայտելով ամբաստանյալի կարարած արարքի վրանգավորության աստիճանը և բնույթը, կարարման եղանակը, օրենքով պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը, հանցավորի անձը, պատասխանատվությունն ու պարիժը խարացնող հանգամանքի առկայությունը՝ գրնում է, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր չէ առանց պարիժը փաստացի կրելու և այդ կերպ հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պարժի նպատակներին:

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ռեցիդիվի առկայությունն ինքին բավարար է փաստելու, որ խոսք լինել չի կարող ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով ամբաստանյալ Արմեն Հովակիմյանի ուղղվելու մասին, ուստի նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

(...)

Անդրադառնալով համաներման մասին օրենքը կիրառելու և պարժից ազատելու մասին բողոքարկի խնդրանքին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, [որ] (...) Արմեն Հովակիմյանը ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 18.12.2017 թվականի դատավճռով դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար փուլանքի ձևով պարժի և մինչև նշանակված փուլանքը վճարելը՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ը, 2018 թվականի օգոստոսի 4-ին կարարել է իրեն մեղաագրված սույն քրեական գործի քննության առարկան կազմող հանցագործությունը, որպիսի հանգամանքը արգելք է համաներման կիրառման համար (ընդհանրապես մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետը), ուստի Առաջին աստիճանի դատարանը ամբաստանյալի նկարմամբ համաներում չկիրառելով թույլ չի տվել նյութական իրավունքի խախտում (...)»⁴⁵⁵:

8. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 18-ի դատավճռով Արմեն Հովակիմյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Տուգանքի վճարումը տարաժամկետել է, և ամբաստանյալ Ա.Հովակիմյանին թույլատրվել է տուգանքը վճարել մաս-մաս՝ 10 ամսվա ընթացքում՝ ամսական 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: Դատավճիռը չի բողոքարկվել և 2018 թվականի հունվարի 18-ին մտել է օրինական ուժի մեջ⁴⁵⁶:

⁴⁵⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 63-64:

⁴⁵⁶ Տե՛ս www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ, Արմեն Հովակիմյանի վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի

9. ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կողմից տրված թիվ 004210 տեղեկանքի համաձայն՝ Ա.Հովակիմյանը պատիժը կրել է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության Լոռու մարզային բաժնում՝ 2018 թվականի փետրվարի 14-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 24-ը⁴⁵⁷:

Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակների կարծիքով՝ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Բողոքաբերները փաստարկել են, որ Ա.Հովակիմյանի նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս ստորադաս դատարաններն օբյեկտիվ վերլուծություն չեն կատարել և հաշվի չեն առել հանցավորի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, արարքի և դրա հետևանքների նկատմամբ դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, մասնավորապես այն, որ նա տվել է խոստովանական ցուցմունքներ, որևէ կերպ չի խոչընդոտել քննություն իրականացնող անձանց գործողություններին, չի խուսափել քրեական պատասխանատվությունից և պատժից, աջակցել է հանցագործության բացահայտմանը, տուժողին ֆիզիկական և հոգեկան բռնության չի ենթարկել, առողջությանը վնաս չի պատճառել, չի սպառնացել: Բացի այդ, ստորադաս դատարանների կողմից պատշաճ վերլուծության չի ենթարկվել տուժողի վարքագիծը, մասնավորապես այն, որ վերջինս երկար ժամանակ շփվել է ամբաստանյալի հետ, ճանապարհին չի պնդել, որ իրեն հետ տանի, նույնիսկ գազալցակայանում, որտեղ բազմաթիվ մարդիկ են հավաքված եղել, իջնելով «Նիվա» մակնիշի ավտոմեքենայից՝ որևէ մեկից օգնություն չի խնդրել, ավելին՝ հանգիստ նստել է Ա.Հովակիմյանի ավտոմեքենան և որևէ գործողություն չի կատարել վերջինիս հետ չմեկնելու համար, իսկ դեպքի հաջորդ օրը Երևանից իրենց գյուղ մեկնելու ճանապարհին Սևանա լճում, շատ բարձր տրամադրությամբ, ամբաստանյալի հետ միասին նկարվել է, նավակ վարել, եկեղեցում մոմ վառել: Հետևաբար, ըստ բողոքաբերների՝ վերոնշյալ արարքի կատարման բնույթը և գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունները թույլ են տալիս, որ կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը համարվի բավականին ցածր և ամբաստանյալի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառվի:

18-ի թիվ ԼԴ2/0076/01/17 դատավճիռը:

⁴⁵⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 52:

10.1. Բողոք բերած անձինք նաև ընդգծել են, որ հանցագործությունների ռեցիդիվը չի բացառում սույն գործով պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը:

10.2. Բացի այդ, բողոքի հեղինակների պնդմամբ՝ Ա.Հովակիմյանի նկատմամբ կիրառելի է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» օրենքը (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք), քանի որ նա նախկին դատավճռով իր նկատմամբ որպես պատիժ նշանակված տուգանքը վճարել է 2018 թվականի սեպտեմբերի 24-ին և Համաներման մասին օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ (2018 թվականի նոյեմբերի 6) և սույն գործով մեղադրվելիս պատիժ կրելիս չի եղել:

11. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 14-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության կամ եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս, ապա բեկանել վերոնշյալ որոշումը և ամբաստանյալի նկատմամբ կիրառել համաներում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու կարգը սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր, ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ ռեցիդիվի առկայությունն ինքնին բացառում է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կայանքի, ազատագրվման կամ կարգապահական գումարարկում պահելու ձևով պարիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատարարչայի ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. *Պարիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պարասխանաբլությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:*

15. Վերոնշյալ իրավադրույթը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու: Դատարանի նման հետևությունը պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա⁴⁵⁸՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն⁴⁵⁹:

15.1. Անդրադառնալով պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնվող հանգամանքներից պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները գնահատման ենթարկելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ դրանք, հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով, բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու

⁴⁵⁸ Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տես Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արմեն Շահրազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարար Ավագյանի* և *Վահան Մահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

⁴⁵⁹ Տես Վճռաբեկ դատարանի՝ *Սամսոն Ամիրխանյանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ/0034/01/12, *Արսեն Մկրտչյանի* գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԴ/0093/01/12, *Վանյա Բեգյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13, *Արամայիս Հովհաննիսյանի* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14 և այլ որոշումները:

նպատակահարմարության հարցը լուծելիս⁴⁶⁰: Այս առումով Վճռաբեկ դատարանը նաև ընդգծել է, որ հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների կոնկրետ համակցությունը կարող է բավարար լինել հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար՝ անկախ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող որևէ հանգամանքի առկայությունից: Այլ կերպ՝ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող որևէ հանգամանքի առկայությունն ինքնին չի կարող բացառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը, եթե դատարանը հանգում է հիմնավոր եզրակացության, որ հանցանք կատարած անձի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու⁴⁶¹:

16. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև անձի արարքում ռեցիդիվի առկայությունն էական նշանակություն ունի հանցավորի անձի հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու, ինչպես նաև առանց պատիժը փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու հնարավորության վերաբերյալ հիմնավոր հետևության գալու հարցում, սակայն դրա առկայությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման բացարձակ արգելք. այդ հանգամանքը ենթակա է գնահատման գործի մյուս փաստական հանգամանքների, այդ թվում՝ մեղսագրվող արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող բոլոր գործոնների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների, հանցավորի անձը բնութագրող տվյալների հետ համակցության մեջ:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն Ա.Հովակիմյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս հաշվի է առել կատարված հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցագործության կատարման շարժառիթը, եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցագործության կատարման մեջ նրա մեղքի աստիճանը, առավել ակտիվ դերը, խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը՝ այն, որ ամբաստանյալը ոտնձգել է անձի՝ իր կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ամուսին ընտրելու իրավունքների դեմ, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների բացակայությունը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքի՝ ռեցիդիվի առկայությունը, դրական

⁴⁶⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ռոբերտ Խարոյանի* գործով 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-55/07 և *Թամարա Տեր-Գրիգորյանի* գործով 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07 որոշումները:

⁴⁶¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սերյոժա Դավթյանի* գործով 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԷԳ/0032/01/10 որոշումը:

բնութագիրը, երիտասարդ լինելը, տուժողի կողմից պահանջ չներկայացնելը: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ Ա.Հովակիմյանը ենթակա է պատժի ազատազրկման ձևով, որի միջոցով հնարավոր կլինի հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին⁴⁶²:

Վերաքննիչ դատարանը, քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցը, գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով Ա.Հովակիմյանի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը, նրա պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքը, վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը ռեալ կիրառելու նպատակահարմարության հարցում թույլ չի տվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ ռեցիդիվի առկայությունն ինքնին բավարար է փաստելու, որ խոսք լինել չի կարող ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով ամբաստանյալ Ա.Հովակիմյանի ուղղվելու, ուստի նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին⁴⁶³:

18. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-16-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ռեցիդիվի առկայությունն ինքնին բացառում է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը, իրավաչափ չէ:

19. Միևնույն ժամանակ, Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Հովակիմյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը որոշելիս ստորադաս դատարանները, համադրված վերլուծության և իրենց ամբողջության մեջ պատշաճ գնահատման ենթարկելով սույն գործի փաստական տվյալները, մեղսագրված արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող գործոնները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքի առկայությունը, ինչպես նաև հանցավորի անձը բնութագրող տվյալները, հանգել են հիմնավորված հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրագործմանը:

19.1. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ կետում բարձրացրած փաստարկներին՝ Վճարելի դատարանը դրանք անհիմն է համարում՝ արձանագրելով, որ դրական բնութագրվելը, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր ճանաչելը, կատարվածի համար

⁴⁶² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁴⁶³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

զղջալը, քրեական պատասխանատվությունից և պատժից չխուսափելը, տուժողին մարմնական վնասվածք չպատճառելը, չհարվածելը, մինչև կատարված հանցանքը մի քանի ամիս միայնաց հետ շփվելը, կատարված հանցագործությունից հետո տուժողի վարքագիծը ստորադաս դատարանների կողմից արձանագրված՝ կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության մասին վկայող փաստական տվյալների առկայության պայմաններում, չեն կարող ողջամտորեն նվազեցնել Ա.Հովակիմյանի կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք հանդիսանալ:

20. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից վճռաբեկ բողոքում բարձրացված՝ Համաներման մասին օրենքն Ա.Հովակիմյանի նկատմամբ կիրառելի լինելու վերաբերյալ պնդումներին⁴⁶⁴, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս առումով ևս բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ համաներման կիրառման սահմանափակումները կապված են ոչ թե դատական ակտի, այլ հանցանքի կատարման օրվա հետ: Ավելին՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետի իմաստով տուգանք պատժատեսակի դեպքում անձի կողմից պատիժը կրելու գործընթացը ոչ թե սահմանափակված է տուգանքի գումարը վճարելու պահով, այլ սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից և ավարտվում այն ժամանակ, երբ դատապարտյալն ամբողջությամբ վճարում է որպես տուգանք նշանակված գումարը⁴⁶⁵: Իսկ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Հովակիմյանի նկատմամբ նախկինում՝ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 18-ի դատավճռով պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Նշված դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 18-ին⁴⁶⁶: Դատապարտյալը դատարանի դատավճռով նշանակված տուգանքն ամբողջությամբ վճարել է 2018 թվականի սեպտեմբերի 24-ին⁴⁶⁷, իսկ սույն գործով մեղսագրվող հանցանքն Ա.Հովակիմյանը կատարել է 2018 թվականի օգոստոսի 4-ին⁴⁶⁸՝ այսինքն՝ տուգանքի ձևով նշանակված պատիժը կրելու ընթացքում: Ուստի, վերոշարադրյալից բխում է, որ տվյալ դեպքում առկա է Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ համաներման ակտի կիրառումը բացառող հանգամանք: Հետևաբար, ստորադաս դատարաններն ամբաստանյալ Ա.Հովակիմյանի նկատմամբ Համաներման մասին օրենքը չկիրառելու հարցում եկել են ճիշտ եզրահանգման:

⁴⁶⁴ Տե՛ս սույն որոշման 10.2-րդ կետը:

⁴⁶⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արիզ Տիգրանյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0501/01/18 որոշումը:

⁴⁶⁶ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁴⁶⁷ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

⁴⁶⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

21. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Ա.Հովակիմյանի սկստմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, ինչպես նաև Համաներման մասին օրենքը չկիրառելով, իսկ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելով, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Ուստի ներկայացված վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

22. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Արմեն Գազիկի Հովակիմյանի վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 20-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

29.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴԴ/0038/01/16

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորները

Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հունիսի 25-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով Թամարա Արտուշի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի հունվարի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 28100216 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2016 թվականի հունիսի 30-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում որոշում է կայացվել թիվ 28100216 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով նոր՝ թիվ 28102516 քրեական գործը հարուցելու և առանձին վարույթում առանձնացնելու մասին:

2016 թվականի հունիսի 30-ին թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2016 թվականի հուլիսի 29-ին թիվ 28102516 քրեական գործով Թամարա Արտուշի Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2016 թվականի սեպտեմբերի 29-ին նախաքննության մարմինը ստացել է դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննության եզրակացությունը՝ Թ.Ավետիսյանի անմեղսունակության վերաբերյալ:

Նախաքննության մարմինը 2016 թվականի նոյեմբերի 18-ին որոշում է կայացրել Թ.Ավետիսյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու վարույթ հարուցելու մասին:

2016 թվականի դեկտեմբերի 26-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքն անմեղսունակության վիճակում ենթադրաբար կատարած Թ.Ավետիսյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց կիրառել հսկողության համար ազգականին՝ դստերը՝ Հայկանուշ Հայկի Դավայանին հանձնելը:

2016 թվականի դեկտեմբերի 28-ին Թ.Ավետիսյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու միջնորդությամբ գործն ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքն անմեղսունակության վիճակում կատարած Թ.Ավետիսյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից և պատժից, նրա նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը, իսկ կիրառված անվտանգության միջոցը՝ հսկողության համար դստերը՝ Հ.Դավայանին հանձնելը, թողնվել է անփոփոխ՝ մինչև որոշման օրինական ուժի մեջ մտնելը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ Թ.Ավետիսյանի պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշումը՝ րեկանվել, Թ.Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործով վարույթը կարճվել, իսկ նրա նկատմամբ կիրառված անվտանգության միջոցը՝ հսկողության հանձնելը, վերացվել է:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 13-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի՝ թիվ 28100216 քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու, առանձին վարույթում առանձնացնելու և վարույթ ընդունելու մասին որոշման համաձայն՝ «(...) Թամարա Ավետիսյանի հաղորդման մեջ նշված՝ Արևիկ Ավետիսյանի կողմից հորը՝ Արտուշ Ավետիսյանի, ամուսնու եղբոր՝ Սմբատ Դավայանի կողմից իր ամուսնու՝ Հայկ Դավայանի, տարի՝ Փամբուխ Դավայանի սպանությունների և մյուս հանցամանքները պարզելու ուղղությամբ Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 28100216 քրեական գործով ՀՀ քրեական դատարանի օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ կատարվել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննություն, որի ընթացքում ձեռք բերված ապացույցներով հերքվել են Թամարա Ավետիսյանի հաղորդման մեջ նշված դեպքերի կատարված լինելու հանգամանքները (...)»⁴⁶⁹:

5.1. Նախաքննության մարմնի՝ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու համար գործը դատարան ուղարկելու մասին որոշման համաձայն՝ «(...) Թամարա Արտուշի Ավետիսյանը գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկարարությունը կեղծ է, հանցագործությունների մասին սուր մատնություն է կատարել, որը զուգորդվել է Շիրակի մարզի Գեղանիսար գյուղի քնակչուհի Արևիկ Սերյոժայի Ավետիսյանին և Արթիկ քաղաքի քնակիչ Սմբատ Ռազմիկի Դավայանին ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների մեջ մեղադրելով:

Այսպես.

Թամարա Արտուշի Ավետիսյանը 2015 թվականի դեկտեմբերի 24-ին Արթիկի քննչական բաժնում նախազգուշացված լինելով սուր մատնություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկարարությունը կեղծ է, գրավոր հաղորդում է րվել այն մասին, որ իբր 1987 թվականի հունիսի 7-ին կամ 17-ին ամուսնու եղբայրը՝ Արթիկ քաղաքի քնակիչ Սմբատ Ռազմիկի Դավայանը, Արթիկ քաղաքի Գայի 13 հասցեում գրավող տանը վիճարանել է իր հետ և ջերմուկի ապակյա տարայով հարվածել է գլխի գազաթային հարվածին, պարճառել մարմնական վնասվածք, որի հետևանքով դարձել է 2-րդ խմբի հաշմանդամ:

Սմբատ Դավայանը 1986 թվականի ապրիլ ամսին Արթիկ քաղաքի Գայի փողոցի 13 հասցեում գրավող նրանց տանը ծեծել է տարին՝ Փամբուխ Վարդաի Դավայանին, ով սրացած մարմնական վնասվածքներից 1986 թվականի մայիսի 5-ին մահացել է: 2001 թվականի ապրիլի 7-ին Սմբատ Դավայանի կամ նրա ազգականներից որևէ մեկի ցուցումով Գյումրու մարզային հիվանդանոցի բուժաշխատողներից մեկը ամուսնուն՝ Հայկ Ռազմիկի Դավայանին, ներարկել

⁴⁶⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 1-2:

է սխալ դեղամիջոցներ, որի հետևանքով վերջինս 2001 թվականի ապրիլի 8-ին մահացել է: Իր եղբոր՝ Արամ Ավետիսյանի կինը՝ Շիրակի մարզի Գեղամիսր գյուղի բնակչուհի Արևիկ Մեղրժայի Ավետիսյանը 2002 թվականի նոյեմբերի 23-ին սպանել է իր հորը՝ նույն գյուղի բնակիչ Արտուշ Եգոռի Ավետիսյանին, 2000 թվականից մինչև օրս իր մորը՝ Հայկանուշ Մովսեսի Ավետիսյանին պահում է գերության մեջ, այսինքն՝ չի թողնում, որ մայրն իր բնակարանում ապրի, բացի այդ բազմիցս ձեռի է ենթարկել հորն ու մորը՝ Արտուշ և Հայկանուշ Ավետիսյաններին, մեղադրյալ կաթասպով հարվածել է մոր գլխին և կուրացրել վերջինիս»⁴⁷⁰:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշման համաձայն՝ «Դադարանը, վերլուծելով և համակցության մեջ գնահատելով գործով ձեռք բերված և դադարաքննությանը հետազոտված ապացույցները, հասարարված է համարում, որ Թամարա Արտուշի Ավետիսյանը կատարել է քրեական օրենքով չթույլատրված արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հարկանիշներին և գրնում է, որ հանրության համար վրանգավոր վերը նշված արարքը կատարելու պահին Թամարա Արտուշի Ավետիսյանը գրնվել է անմեղսունակության վիճակում և ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նա ենթակա չէ քրեական պատասխանատվության ու նույն օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝ նրա նկարմամբ պետք է նշանակվի բժշկական բնույթի հարկադրանքի միջոց:

(...)

Թամարա Արտուշի Ավետիսյանի նկարմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դադարանը հաշվի է առնում նրա հոգեկան հիվանդությունը, նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը և նկարի ունենալով ամբողջաբար դադարահոգեբանական և դադարահոգեբուժական համալիր փորձաքննության եզրակացությունը և ՀՀ քրեական օրենսգրքի 98 և 100 հոդվածներով սահմանված նորմերը, գրնում է, որ նա պետք է ազատվի ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախարեակված քրեական պատասխանատվությունից ու պարժից և նրա նկարմամբ պետք է նշանակվի բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում»⁴⁷¹:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշման համաձայն՝ «(...) Վճարելի դադարանը Ա.Մամաջանյանի վերաբերյալ գործով (...) իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ (...) սուր մնարնության փաստի առթիվ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը արուզելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզի ենթադրյալ սուր մնարնություն պարունակող հաղորդման կապակցությամբ օրենքով սահմանված կարգով վերջնական որոշման առկայությունը:

⁴⁷⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 115-130:

⁴⁷¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթեր 156-162:

(...) Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Թամարա Ավետիսյանը 2015 թվականի դեկտեմբերի 24-ին Շիրակի մարզային քննչական վարչությունում հաղորդում է ներկայացրել փառքեր ժամանակներում, փառքեր անձանց կողմից կատարված վեց ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ (...): Նշված հաղորդման հիման վրա նախապարասարված նյութերով, սպորինսար Արարուշ Ավետիսյանին դիրավորությամբ կյանքից զրկելու փաստի առթիվ հարուցվել է թիվ 28100216 քրեական գործը (...) և նախաքննություն է իրականացվել Թամարա Ավետիսյանի հաղորդման մեջ նշված բոլոր դեպքերով: Նշված քրեական գործի նյութերով, Թամարա Ավետիսյանի կողմից սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ, 2016 թվականի հունիսի 30-ին, հարուցվել է թիվ 28102516 քրեական գործը: Դրանից հետո, նույն օրը, թիվ 28100216 քրեական գործով որոշում է կայացվել վարույթը կարճելու մասին: Նշված որոշման մեջ նախաքննական մարմինը նշել է, որ Թամարա Ավետիսյանի հաղորդման և բացատրության մեջ նշված հանգամանքները իրականությանը չեն համապատասխանում, հերևարար բացակայում է որևէ հանցագործության դեպքը:

(...) [Մ]եջբերված փաստական փյվյալները գնահատելով (...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Թամարա Ավետիսյանի կողմից սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու պատին սուկա չեն եղել քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Մասնավորապես՝ սուկա չի եղել Թամարա Ավետիսյանի հաղորդման կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի վերջնական որոշումը:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ թեև թիվ 28102516 քրեական գործը հարուցվել (սուտ մատնության փաստով), իսկ թիվ 28100216 քրեական գործով վարույթը (Թ.Ավետիսյանի հաղորդման հիման վրա հարուցված) կարճվել է նույն օրը, սակայն դրանց բովանդակություններից ակնհայտ է, որ թիվ 28102516 քրեական գործը հարուցվել է մինչև թիվ 28100216 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը:

(...) ՀՀ վճռաբեկ դատարանը Լ.Պողոսյանի վերաբերյալ քրեական գործով համակարգային վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 175-րդ, 180-րդ և 182-րդ հոդվածների դրույթները իրավական դիրքորոշում է հայրնել այն մասին, որ «(...) քրեական գործի հարուցմամբ սկսվում է քրեադատավարական այն վարույթը, որի շրջանակներում իրավասու մարմինն իրավունք է արանում ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները հանցագործությունը և այն կատարած անձանց բացահայրելու ուղղությամբ: Միայն քրեական գործ հարուցելուց հետո է վարույթն իրականացնող մարմինն օժրվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական և դատավարական գործողություններ կատարելու լայն լիազորություններով և իրավունք արանում միջամրելու անձանց իրավունքներին և օրինական շահերին, անիրաժեշտության դեպքում նրանց նկարմամբ կիրառելու դատավարական հարկադրանքի միջոցներ և այլն: (...)»:

Վերագրյալը վկայում է այն մասին, որ քրեական գործի հարուցման փաստի հետը չկապված և հարուցման դեպքով չանցնող անձանց կողմից կատարված ենթադրյալ հանցագործությունների դեպքերով քրեական գործ չհարուցելու պայմաններում, այդ ենթադրյալ հանցագործությունների դեպքերով նախաքննության իրականացումն անօրինակյան է: Նման դեպքում խախտվում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի պահանջն առ այն, որ նախաքննությունն իրականացվում է միայն հարուցված քրեական գործով: ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածներով նախաքննությունը փաստացի առանց քրեական գործ հարուցելու իրականացնելն անթույլատրելի է դարձնում այդ մասով իրականացված վարույթի ընթացքում ձեռք բերված նյութերը:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Թամարա Ավետիսյանի հաղորդման մեջ նշված հինգ ենթադրյալ հանցագործությունների դեպքերով (սպօրինաբար Արարուշ Ավետիսյանին դիտարկություններ կյանքից զրկելու դեպքի հետը չկապված) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական և դատավարական գործողություններն իրականացվել են պաշտոնական նախաքննության սկիզբն ազդարարող և դրա համար միակ իրավական հիմք հանդիսացող քրեական գործ հարուցելու որոշման բացակայության պայմաններում: Ընդ որում հարկ է նշել, որ նշված հինգ ենթադրյալ հանցագործությունների դեպքերի մասին վարույթն իրականացնող մարմինը տեղյակ է եղել մինչև թիվ 28100216 քրեական գործը հարուցելը: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը որևէ իրավական հնարավորություն չունեւր սպօրինաբար Արարուշ Ավետիսյանին դիտարկություններ կյանքից զրկելու փաստով հարուցված քրեական գործով նախաքննություն իրականացնել նաև Թամարա Ավետիսյանի հաղորդման մեջ նշված մյուս հինգ ենթադրյալ հանցագործությունների դեպքերով: Վերաքննիչ դատարանը հաշվի առնելով քրեադատավարական ընթացակարգը սահմանող հիմնարար դրույթների վերոնշյալ էական խախտումը գրնտում է, որ Թամարա Ավետիսյանի հաղորդման մեջ նշված մյուս հինգ ենթադրյալ հանցագործությունների դեպքերի կապակցությամբ ձեռք բերված սպացույցները թույլատրելի համարվել չեն կարող, և որպես անթույլատրելի սպացույցներ չէին կարող օգտագործվել դրանց առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար: Դրա հետը մեկտեղ Վերաքննիչ դատարանը գրնտում է, որ նշված ենթադրյալ հանցագործությունների դեպքերով քրեական գործ հարուցված չլինելու պայմաններում նախաքննությունն իրականացնող մարմինը թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ իրավասու չէր իրավական գնահատական տրալ դրանց:

(...) Հիմք ընդունելով վերը նշվածը, Վերաքննիչ դատարանը հաստատված չի համարում Թամարա Ավետիսյանի գործողություններում սուտը մատրություն կատարելու առկայությունը, ինչը հիմք է նրա նկարմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու համար»⁴⁷²:

⁴⁷² Տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 87-101:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշումն օրինական և հիմնավորված չէ:

8.1. Ըստ բողոքարեղի՝ քննարկվող դեպքում առկա են եղել ինչպես քրեական գործ հարուցելու առիթը, այնպես էլ քրեական գործ հարուցելու հիմքերը: Մասնավորապես, թիվ 28100216 քրեական գործի շրջանակներում իր լիազորություններն իրականացնելիս, նախաքննության մարմինը ձեռք է բերել այնպիսի տվյալներ (ենթադրյալ ծանր հանցագործության կատարման մասին հաղորդում տալու փաստ, այդ հաղորդման բովանդակությունն իրականությանը չհամապատասխանելու վերաբերյալ այլոց փոխկապակցված ցուցմունքներ), որպիսիք վարույթն իրականացնող մարմինը ողջամտորեն կարող էր բավարար համարել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ենթադրյալ հանցագործության փաստի առկայությունը հաստատված համարելու համար: Բողոքի հեղինակը նաև նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի և 184-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից ակնհայտ է, որ օրենսդիրը հետաքննության մարմնի, քննիչի և դատավագի համար սահմանել է պարտավորություն՝ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում իրենց իրավասության սահմաններում հարուցելու քրեական գործ, ձեռնարկելու օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ հանցագործություն կատարած անձանց և հանցագործությունը, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար: Ընդ որում, հետաքննության մարմինը և քննիչը հանցագործության մասին տեղեկություններ կարող են ձեռք բերել իրենց վարույթում գտնվող քրեական գործի քննության ընթացքում:

8.2. Բողոք բերած անձն ընդգծել է, որ թիվ 28100216 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով նոր՝ թիվ 28102516 քրեական գործը հարուցելու և առանձին վարույթում առանձնացնելու մասին որոշումը կայացնելուց հետո նույն օրը որոշում է կայացվել թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճելու մասին: Ընդ որում, թիվ 28102516 քրեական գործը հարուցելու և թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումներ կայացնելու միջև ընկած սեղմ ժամանակահատվածում որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի կատարվել, ավելին՝ թիվ 28100216 քրեական գործով Թ.Ավետիսյանը մեղադրյալի կամ կասկածյալի դատավարական կարգավիճակ չի ունեցել:

8.3. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ գործնականում հնարավոր է իրավիճակ, երբ նախաքննության ընթացքում մեղադրվող անձը նույն դեպքի կապակցությամբ իր նկատմամբ սուտ մատնություն կատարելու վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում ներկայացնի, իսկ սույն գործով Վերաքննիչ դատարանի արտահայտած դիրքորոշման պարագայում վարույթն իրականացնող մարմինն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունենա քրեական

գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու համար սահմանված տասնօրյա ժամկետում գործով վերջնական որոշում կայացնել: Արդյունքում, բողոքաբերը եզրահանգել է, որ քննվող քրեական գործով վերջնական որոշման բացակայությունը քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում կայացնելու հիմք չէ:

Վերոշարադրյալի հիման վրա, վճռաբեկ բողոքի հեղինակը փաստարկել է, որ թիվ 28100216 քրեական գործի նյութերով սույն քրեական գործը հարուցելով և առանձնացնելով՝ նախաքննության մարմինը թույլ չի տվել քրեադատավարական օրենքի խախտում, որը «թունավոր ծառի պտուղները ևս թունավոր են» սկզբունքի համատեքստում կարող էր հանգեցնել սույն քրեական գործի շրջանակներում կատարված քննչական և այլ դատավարական գործողությունների ու դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցների օգտագործման անթույլատրելիության:

9. Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ստյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Թ.Ավետիսյանի կողմից սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու պահին առկա չեն եղել քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ *«Հերաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հարկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:*

Նույն քրեական գործի նախաքննության ընթացքում նույն անձի կողմից այլ հանցագործություններ կատարելու փաստերի հայտնաբերման դեպքում կարող է նոր քրեական գործ չհարուցվել, եթե արդեն իսկ հարուցված քրեական գործի շրջանակներում հնարավոր է գործի նախաքննությունն իրականացնել ամբողջ ծավալով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հերաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական գործ հարուցելու առիթներն են՝*

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները ուղղված հեղափոխության մարմնին, քննիչին, դատախազին.

2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.

3) հեղափոխության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հեղափոխության հայտնաբերումը՝ իրենց լրագրություններն իրականացնելիս»:

11.1. Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել Միրվարդ Գևորգյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) [Ք]րեական գործի հարուցման փուլի իրավական նշանակությունն այնպիսի դատավարական կարգի ապահովման մեջ է, որի պայմաններում կրացառվի քրեադատավարական գործիքակազմի անհիմն և աննպատակահարմար կիրառումը, հետևաբար նաև՝ ոչ հանցավոր իրադարձությունների կապակցությամբ անձանց իրավունքների ու օրինական շահերի սահմանափակումները և հանրային ռեսուրսների վատնումը: Դրանով պայմանավորված՝ քննարկվող փուլի առաջնային խնդիրներից է քրեական գործ հարուցելու առիթի օրինականության, ինչպես նաև հիմքերի բավարարության պարզումը:

Քրեական գործ հարուցելու առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լրագրում է իրավասու մարմիններին և պաշտոնապար անձանց մերձեղ իրավահարաբերությունների մեջ, կարարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն (...): Առիթն օրենքով սահմանված այն աղբյուրն է, որտեղից իրավասու պաշտոնապար անձը տեղեկություններ է ստանում նախապարտավորող, կարարվող կամ կարարված հանցագործությունների մասին (...): Ընդ որում, քրեական գործ հարուցելու առիթը պետք է բավարարի օրենքով նախատեսված նձական (...), նձանդակային պահանջներին (...):

Քրեական գործ հարուցելու հիմքը հանցագործության հարկանիշների առկայության մասին վկայող տվյալներն են: Ընդ որում, քրեական գործ կարող է հարուցվել միայն հանցագործության հարկանիշների վերաբերյալ տվյալների բավարարության դեպքում: Դրանց բավարարության գնահատման կապակցությամբ Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ է ոչ թե հանցակազմի բոլոր տարրերի, այլ սուկ հանցագործության արտաքին հարկանիշների առկայության հավաստումը: Այս կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հանցագործության հարկանիշների առկայության վերաբերյալ ենթադրությունն օբյեկտիվորեն կրում է հավանական բնույթ, քանի որ դրա վերջնական հաստատումը գործի բնության հեղափոխ փուլերի խնդիրն է: Քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ենթադրում է հանցագործության հարկանիշների վերաբերյալ տվյալների այնպիսի համակցություն, որն օբյեկտիվ դիրքորոշին հնարավորություն կրա ենթադրություն կարարել հանցագործության հավանական առկայության վերաբերյալ: Հանցագործության հարկանիշների առկայության վերաբերյալ

որջամիր կասկածների դեպքում պետք է հարուցվի քրեական գործ (քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում) (...)»⁴⁷³:

11.2. Անդրադառնալով սուտ մատնության դեպքով քրեական գործ հարուցելու առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանն Արթուր Մամաջանյանի գործով որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [Թ]եև սուտ մատնությունն ավարտված է համարվում իրավասու մարմնի կողմից հանցագործության կամ հանցավորի մասին կեղծ տեղեկությունները սրանապու պահից, սակայն այդ կասկակցությանը քրեական գործ հարուցելու հիմքերը ձևավորվում են այն ժամանակ, երբ օրենքով սահմանված կարգով հաստատվում է հանցագործության մասին հաղորդման բովանդակության սուտ լինելը: Հակասակ պարագայում կարելի է այնպիսի իրավիճակ, երբ ենթադրյալ սուտ մատնություն պարունակող հաղորդման առիթով իրականացվող քննությանը զուգահեռ քրեական հետապնդում կիրականացվի դրան ուղղակիորեն հակադրվող, այն բացառող քրեական վարույթի շրջանակներում: Վերջինս ոչ միայն կիմաստագրվի անձի իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիքները, այլ նաև լուրջ սպառնալիք կարելի է քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից իրենց լիազորությունները կանոնակարգող քրեական օրենսդրությանը պատկանող:

(...) [Ս]ուտ մատնության փաստի առթիվ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը արուգելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզի ենթադրյալ սուտ մատնություն պարունակող հաղորդման կասկակցությանը օրենքով սահմանված կարգով վերջնական որոշման առկայությունը»⁴⁷⁴:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- **2016 թվականի հունվարի 8-ին** ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 28100216 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով,

- **2016 թվականի հունիսի 30-ին** ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում որոշում է կայացվել թիվ 28100216 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով նոր՝ թիվ 28102516 քրեական գործը հարուցելու և առանձին վարույթում առանձնացնելու մասին,

- **2016 թվականի հունիսի 30-ին** թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով,

- **2016 թվականի հուլիսի 29-ին** թիվ 28102516 քրեական գործով Թամարա Արտուշի Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,

- **2016 թվականի նոյեմբերի 18-ին** նախաքննության մարմինը որոշում է կայացրել Թ.Ավետիսյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու վարույթ հարուցելու մասին,

⁴⁷³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սիրվարդ Գևորգյանի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԼԴ/0018/11/16 որոշման 12-րդ կետը:

⁴⁷⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Մամաջանյանի գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԼԴ-2/0055/01/15 որոշման 14-15-րդ կետերը:

- Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքն անմեղսունակության վիճակում կատարած Թ.Ավետիսյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից և պատժից, նրա նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց⁴⁷⁵,

- Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ Թ.Ավետիսյանի պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշումը՝ բեկանվել, Թ.Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործով վարույթը կարճվել, իսկ նրա նկատմամբ կիրառված անվտանգության միջոցը՝ հսկողության հանձնելը, վերացվել է: Վերաքննիչ դատարանը, հղում կատարելով Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Մամուշանյանի և Լևիկ Պողոսյանի* գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին, գտել է, որ Թ.Ավետիսյանի կողմից սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու պահին առկա չեն եղել քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Մասնավորապես՝ առկա չի եղել Թ.Ավետիսյանի հաղորդման կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի վերջնական որոշումը: Վերաքննիչ դատարանը նշել է, որ թեև թիվ 28102516 քրեական գործը հարուցվել (սուտ մատնության փաստով), իսկ թիվ 28100216 քրեական գործով վարույթը (Թ.Ավետիսյանի հաղորդման հիման վրա հարուցված) կարճվել է նույն օրը, սակայն դրանց բովանդակություններից ակնհայտ է, որ թիվ 28102516 քրեական գործը հարուցվել է մինչև թիվ 28100216 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ քրեական գործի հարուցման փաստի հետ չկապված և հարուցման դեպքով չանցնող անձանց կողմից կատարված ենթադրյալ հանցագործությունների դեպքերով քրեական գործ չհարուցելու պայմաններում, այդ ենթադրյալ հանցագործությունների դեպքերով նախաքննության իրականացումն անօրինական է:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Թ.Ավետիսյանի հաղորդման մեջ նշված հինգ ենթադրյալ հանցագործությունների դեպքերով (ապօրինաբար Ա.Ավետիսյանին դիտավորությամբ կյանքից զրկելու դեպքի հետ չկապված) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական և դատավարական գործողություններն իրականացվել են պաշտոնական նախաքննության սկիզբն ազդարարող և դրա համար միակ իրավական հիմք հանդիսացող՝ քրեական գործ հարուցելու որոշման բացակայության պայմաններում: Ընդ որում հարկ է փաստել, որ նշված հինգ ենթադրյալ հանցագործությունների դեպքերի մասին վարույթն իրականացնող մարմինը տեղյակ է եղել մինչև թիվ 28100216 քրեական գործը հարուցելը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմինը որևէ իրավական հնարավորություն չուներ Արտուշ Ավետիսյանին ապօրինաբար

⁴⁷⁵ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

դիտավորությամբ կյանքից զրկելու փաստով հարուցված քրեական գործով նախաքննություն իրականացնել նաև Թ.Ավետիսյանի հաղորդման մեջ նշված մյուս հինգ ենթադրյալ հանցագործությունների դեպքերով: Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով քրեադատավարական ընթացակարգը սահմանող հիմնարար դրույթների վերոնշյալ էական խախտումը, գտել է, որ Թ.Ավետիսյանի հաղորդման մեջ նշված մյուս հինգ ենթադրյալ հանցագործությունների դեպքերի կապակցությամբ ձեռք բերված ապացույցները թույլատրելի համարվել չեն կարող, և որպես անթույլատրելի ապացույցներ չէին կարող օգտագործվել դրանց առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար⁴⁷⁶:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-11.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը՝ գտնելով, որ սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու պահին առկա չեն եղել քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր, պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել սույն գործով առանցքային նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:

Նախևառաջ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ սուտ մատնությամբ քրեական գործ հարուցելիս քննիչն այդ որոշման նկարագրական-պատճառաբանական մասում արձանագրել է, որ Թ.Ավետիսյանի հաղորդման հիման վրա հարուցված թիվ 28100216 քրեական գործով ձեռքբերված ապացույցներով հերքվել են Թ.Ավետիսյանի հաղորդման մեջ նշված դեպքերը⁴⁷⁷:

Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ 28100216 քրեական գործի նյութերով նոր սուտ մատնության վերաբերյալ թիվ 28102516 քրեական գործը հարուցելու և առանձին վարույթում առանձնացնելու մասին որոշումը կայացնելուց անմիջապես հետո՝ նույն օրը, որոշում է կայացվել թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճելու մասին: Ընդ որում, ինչպես իրավաչափորեն նշել է բողոք բերած անձը, թիվ 28102516 քրեական գործը հարուցելու և թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումները կայացնելու միջև ընկած սեղմ ժամանակահատվածում որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի կատարվել: Ավելին, թիվ 28100216 քրեական գործով Թ.Ավետիսյանը մեղադրյալի կամ կասկածյալի դատավարական կարգավիճակ չի ունեցել⁴⁷⁸: Ոստի, նման պայմաններում անձի իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիքներն իմաստագրկվելու կամ քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից իրենց լիազորությունները կամայական գործադրելու հնարավորության վերաբերյալ Արթուր Մամաջանյանի վերաբերյալ քրեական գործով Վճռաբեկ դատարանի

⁴⁷⁶ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴⁷⁷ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁴⁷⁸ Տե՛ս սույն որոշման 8.2-րդ կետը:

կողմից արձանագրված մտահոգությունները կոնկրետ դեպքում ողջամտորեն բացակայել են:

Մասնավորապես, ի տարբերություն տվյալ քրեական գործի փաստական հանգամանքների, Արթուր Մամաջանյանի վերաբերյալ քրեական գործով, առանց վերջնական իրավական գնահատական տալու և հերքելու Ա.Մամաջանյանի հաղորդմամբ ներկայացված տեղեկությունները, այդ հաղորդման առնչությամբ քրեական հետապնդում իրականացնելուն զուգահեռ նախաքննության մարմինը որոշում էր կայացրել սուտ մատնության հանցակազմի հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին: Արդյունքում, Ա.Մամաջանյանի նկատմամբ իրարամերժ վարույթներով զուգահեռաբար իրականացվել էր քրեական հետապնդում. Ա.Մամաջանյանն իր կողմից կաշառք տալու վերաբերյալ սուտ մատնություն կատարելու դեպքով հարցաքննվել էր որպես կասկածյալ՝ այն դեպքում, երբ ընթացքի մեջ էր եղել կաշառք տալու փաստով իրականացվող նախաքննությունը, որի շրջանակներում նա ունեցել էր մեղադրյալի դատավարական կարգավիճակ: Ընդ որում, կաշառք տալու փաստի առթիվ իրականացվող վարույթն ավարտվել էր 2015 թվականի դեկտեմբերի 28-ին, որից ընդամենը երկու օր անց՝ 2015 թվականի դեկտեմբերի 30-ին, սուտ մատնության մեղադրանքով քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել էր դատարան:

Մինչդեռ տվյալ դեպքում, սուտ մատնության վերաբերյալ թիվ 28102516 քրեական գործը հարուցելու և առանձին վարույթում առանձնացնելու մասին որոշմամբ Թ.Ավետիսյանի հաղորդման մեջ նշված դեպքերը հերքելուց անմիջապես հետո՝ նույն օրը, որոշում է կայացվել թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճելու մասին: Նման պայմաններում, չափազանց ձևականացված (*excessive formalism*) կարող է լինել Վերաքննիչ դատարանի այն մոտեցումը, որ թեև թիվ 28102516 քրեական գործը հարուցվել (սուտ մատնության փաստով), իսկ թիվ 28100216 քրեական գործով վարույթը (Թ.Ավետիսյանի հաղորդման հիման վրա հարուցված) կարճվել է նույն օրը, սակայն դրանց բովանդակություններից ակնհայտ է, որ թիվ 28102516 քրեական գործը հարուցվել է մինչև թիվ 28100216 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը: Հարկ է ընդգծել, որ թեև թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճելը ժամանակագրական առումով հաջորդել է սուտ մատնության փաստով քրեական գործ հարուցելուն, սակայն դրանց միջև սեղմ ժամանակային խզման պայմաններում իրարամերժ վարույթներով քննություն չի իրականացվել, ինչը կարող էր հանգեցնել բովանդակային առումով Թ.Ավետիսյանի իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման:

Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Թ.Ավետիսյանի կողմից սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու պահին առկա չեն եղել քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր, հիմնավոր չէ:

14. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն իրավաչափ չի համարում նաև Վերաքննիչ դատարանի այն փաստարկները, որ վարույթն իրականացնող մարմինն իրավական հնարավորություն չուներ ապօրինաբար Ա.Ավետիսյանին դիտարկությամբ կյանքից զրկելու փաստով հարուցված քրեական գործով նախաքննություն իրականացնել նաև Թ.Ավետիսյանի հաղորդման մեջ նշված մյուս հինգ ենթադրյալ հանցագործությունների դեպքերով, դրանց կապակցությամբ ձեռք բերված ապացույցները թույլատրելի համարվել չեն կարող, և որպես անթույլատրելի ապացույցներ չէին կարող օգտագործվել դրանց առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար, և որ նշված ենթադրյալ հանցագործությունների դեպքերով քրեական գործ հարուցված չլինելու պայմաններում **նախաքննությունն իրականացնող մարմինը թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ իրավասու չէր իրավական գնահատական տալ դրանց**: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն իր դիրքորոշմամբ տրված գնահատականով քննարկման առարկա է դարձրել թիվ 28100216 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման իրավաչափությունը և ըստ էության փաստացի իրականացրել թիվ 28100216 քրեական գործով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն այն դեպքում, երբ իր իրավասությունը սահմանափակված էր սուտ մատնության մեղադրանքի հիմքում ընկած ապացույցների գնահատմամբ: Ընդ որում, Վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման համատեքստում կարևոր է ընդգծել, որ այդ ապացույցների թույլատրելիությունը գնահատելիս հաշվի չի առնվել նաև այն առանցքային հանգամանքը, որ անկախ բոլոր դրվագներով քրեական գործ հարուցված լինելու հանգամանքից, վերջիվերջո որպես ապացույց՝ առկա է եղել բոլոր այդ դրվագներով Թ.Ավետիսյանի կողմից տրված հաղորդումը, ինչն էլ հետագայում գնահատվել է որպես սուտ մատնության կատարում:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 175-րդ, 176-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշումը բեկանելու հիմք է:

Մինևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Թամարա Արտուշի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

30.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԳ/0756/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հունիսի 30-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 6-ի որոշման դեմ ամբաստանյալ Ռոման Մուրադի Մուրադյանի պաշտպան Դ.Լազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում 2018 թվականի հունիսի 30-ին հարուցվել է թիվ 10187718 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ Ռոման Մուրադի Մուրադյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ Ռ.Մուրադյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2018 թվականի հոկտեմբերի 9-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Դատական քննության արագացված կարգի կիրառմամբ Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ Ռ.Մուրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով քրեական գործի վարույթը կարճել է և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ:

Նույն որոշման համաձայն համաներում է կիրառվել նաև Աշոտ Աբրահամյանի նկատմամբ:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ռ.Մուրադյանի պաշտպան Դ.Ղազարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 18-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Ռոման Մուրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Մյա 2018 թվականի հունիսի 18-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, Աշոտ Անդրանիկի Աբրահամյանի հետ, այցելելով Երևան քաղաքի Լենինգրադյան փողոց և թիվ 18 շենքի մոտ նկարելով Նարեկ Վարդանի Մրասիոնյանին պարկանոտ «Դելյու Եքսպիա» մակնիշի 33 PS 617 հաշվառման համարանիշի ավտոմեքենան՝ ուրիշի գույքի գաղտնի համալսություն կատարելու դիտարկության շուրջ նախնական հանցավոր համաձայնության գալով, նշված ավտոմեքենայից համալսություն էն 18.000 ՀՀ դրամ արժողության 1 հար «DAEWOO NEXIA» մակնիշի ավտոմեքենայի սոցնի թափարգել, ընդհանուրը՝ 16.000 ՀՀ դրամ արժողության 2 հար «DAEWOO NEXIA» մակնիշի

ավերումեքենայի առջևի աջ և ձախ լուսարձակ և թարթիչ լապրերներ, ընդհանուրը 350 ՀՀ դրամ արժողության 3 հասր հասրակի ռեպինե և 1 հասր գործվածքային բեռնասիցիկի գորգեր, ընդհանուր 6000 ՀՀ դրամ արժողության 1 հասր «DAEWOO» մակնիշի ավերումեքենայի պլասարմասե իրանով օդի ֆիլրրի րուսի՝ իր ռեպինե զապանակաձև խողովակով, 1 հասր պլասարմասայե րուսի՝ 17*15սմ առավելագույն չափերի, մուր 23 սմ երկարությամբ պլասարմասայե խողովակաձև ելուսրով, վրան «96143 828» սայրանքանիշ գրառմամբ՝ 1000 ՀՀ դրամ արժողության, 2 հասր ռեպինե խողովակներ 24 սմ և 56սմ երկարությամբ, 3 սմ րրամնչափի, սմրացված՝ օդի գագի պրուրակային կարգավորիչի վրա՝ ձգօսակների միջոցով՝ 800 ՀՀ դրամ արժողության, 11 հասր ավերումեքենայի շարժիչի կայծամներ, որոնք արժեք չեն ներկայացնում, 1 հասր 22*10*30սմ չափերով սև գույնի պայրասակ, 1 հասր 26*17*8սմ չափերով պլասարմասայե կախարիչով րարա, որոնցում առկա են եղել՝ 1 հասր ռադիալորրի մեքադական կախարիչ, 114 սմ երկարությամբ սև մեկուսիչով պրնձյա մարուի, 26 հասր հեղյուններ, 4 հասր մանեկներ, գործիք բանայի՝ 19 համարի գլիկի, 2 հասր ձեռքի արգելակման համակարգ մուր 15.5 սմ երկարությամբ թաթիկներով, մուր 180 գրամ կշռով պրնձյա հաղորդալարի րիաթոյթ, դան սպակու պրուրակային բռնակ, թվով 58 հասր պլասարմասայե սպահովիչներ և կրր մագնիս՝ ընդհանուր 5.000 ՀՀ դրամ արժողության՝ ընդհանուր Եարել Վարդանի Սրասիոնյանին պարձատելով զգալի չափերի՝ 47.150 ՀՀ դրամի գույքային վնաս: (...)»⁴⁷⁹:

6. Առաջին առյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը, հաշվի առնելով, որ արդեն իսկ որոշել է սույն քրեական գործով կիրառել արագացված դատական քննություն, քննարկել է Ռոման Մուրադի Մուրադյանի և Աշուր Անդրանիկի Աբրահամյանի նկարմամբ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայասրանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայրարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 01-ի ՀՀ օրենքի դրույթները կիրառելու հարգը:

Ռոման Մուրադի Մուրադյանը և Աշուր Անդրանիկի Աբրահամյանը դատական նիարում նշել են, որ խորհրդակցել են իրենց պաշրպանի հետ և չեն առարկում, որ իրենց նկարմամբ կիրառվի համաներում:

Պաշրպան Դ.Ղազարյանը, հայրնել է, որ արագացված դատական քննության պայմաններում, երբ արդեն իսկ կանխորոշելի է մեղադրական դատավճռի դեպրում պարժի առավելագույն չափը, ռարի ինքը կարծում է, որ պետք է կիրառվի համաներում և քրեական գործի վարույթը կարձվի:

(...) Մեղադրողը դատական նիարում հայրնել է, որ ինքը ևս առարկություններ չունի ամրասարանյաների նկարմամբ համաներում կիրառելու վերաբերյալ:

(...) Դատարանը գրնում է, որ սույն քրեական գործով Ռոման Մուրադի Մուրադյանի և Աշուր Անդրանիկի Աբրահամյանի նկարմամբ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայասրանի առաջին հանրապետության

⁴⁷⁹ Տեն քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 192-195:

անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայրաբարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 01-ի ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման օրենք) դրույթները կիրառելի են (...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի հիմքով մեղադրական դատավճռի առկայության պայմաններում ազատագրված անձով նշանակվելիք առավելագույն պարիժը չի կարող գերազանցել հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարզի երկու երրորդը: (...) Դատարանը գրնում է, որ փյվյալ դեպքում կիրառելի են նշված նորմի կանոնները: (...) Դատարանը գրնում է, որ ամբաստանյալներ Ռոման Մուրադի Մուրադյանի և Աշոտ Աղդրանիկի Աբրահամյանի նկարումնր արագացված կարգով դատական քննության պայմաններում ազատագրված անձով ենթադրաբար նշանակվելիք պարիժների ժամկետը չի կարող գերազանցել երեք փարի չորս ամիսը: Մինչդեռ, Համաներման օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կերի համաձայն՝ հարուցված քրեական գործը ենթակա է կարճման, ինչպես նաև քրեական հետապնդումը՝ դադարեցման, եթե անձը մեղադրվում է այնպիսի հանցագործություն կատարելու մեջ, որի համար նախատեսված է պարիժ ոչ ավելի, քան չորս փարի ժամկետով ազատագրվում: (...) Դատարանն արձանագրում է, որ փյվյալ դեպքում Համաներման օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված սահմանափակող հանգամանքներ առկա չեն:

Ինչ վերաբերում է Համաներման օրենքով նախատեսված այն արգելքին, որը վերաբերում է դրա կիրառման պահին նախորդած փաստարկների ընթացքում համաներում կիրառված լինելուն, սպա հարկ է նշել, որ համաձայն ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից փրված փեղեկանք ձև 8-ի՝ երկում է, որ 03.07.2008թ. Ռոման Մուրադյանը դատապարտվել է ազատագրված երկու փարի վեց ամիս ժամկետով, 19.06.2009թ. Ռոման Մուրադյանի նկարումնր կիրառվել է համաներում և 03.07.2009թ. վերջինս ազատվել է պարժի կրումից, մինչդեռ սույն դատական ակտը կայացվում է 2019 թվականի նոյեմբերի 1-ին, այսինքն՝ համաներումը կիրառելուց հետո սույն դատական ակտը կայացնելու պահի դրությամբ 10 փարին արդեն իսկ անցել է: Այլ խոսքով՝ Դատարանն արձանագրում է, որ Ռոման Մուրադյանի նկարումնր վերջին փաստարկով ազատագրված համաներում հայրաբարելու մասին որոշում չի կիրառվել, հետևաբար Դատարանը գրնում է, որ փյվյալ պահին արդեն իսկ առկա չէ Համաներման օրենքով նշված սահմանափակումը (...)⁴⁸⁰:

7. Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «(...) Համաձայն գորժի նյութերում առկա ՀՀ ոստիկանության «Ձև 8» փեղեկանքի՝ Ռոման Մուրադյանի վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատական քննության փոլում է գրնվում է մեկ այլ՝ թիվ ԵԴ/0874/01/18 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կերի հարկանիշներով, իսկ (...) առաջին արյանի դատարանը չլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով թիվ ԵԴ/0756/01/18 և թիվ

⁴⁸⁰ Տե՛ս քրեական գորժ, հատոր 3-րդ, թերթեր 26-31:

ԵԴ/0874/01/18 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու հարցը և անարեսելով Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջն առ այն, որ հանցագործությունների համակցության դեպքերում համաներումը կիրառվում է վերջնական պարփի նկարմամբ՝ հանցագործությունների համակցության կանոններով այն սահմանելուց հետո, Համաներման մասին օրենքի անհիմն կիրառմամբ Ռոման Մուրադյանի նկարմամբ դադարեցրել է քրեական հետապնդումը, իսկ քրեական գործի վարույթը կարճել:

Վերոգրյալի համարներսարում վերաքննիչ դալարանը գրնում է, որ Ռոման Մուրադյանի նկարմամբ ստերույթ կարող են կիրառելի լինել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հանցանքների համակցությամբ պարփ Նշանակելու կանոնները, հերևարար նրա նկարմամբ Համաներման մասին օրենքը կարող է կիրառվել թիվ ԵԴ/0756/01/18 և թիվ ԵԴ/0874/01/18 քրեական գործերով հանցագործությունների համակցության կանոններով վերջնական պարփ Նշանակելուց հետո:

Հակառակ մտրեցման դեպքում չի պահպանվի Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ինկերարիվ կանոնը, ինչ էլ իր հերթին կհանգեցնի օրինականության սկզբունքի խախտման:

Վերաքննիչ դալարանը փասարում է նաս, որ եթե Ռոման Մուրադյանի վերաքերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կերով քնվող թիվ ԵԴ/0874/01/18 քրեական գործի քնության արդյունքներով նրա նկարմամբ կիրառելի չլինեն հանցանքների համակցությամբ պարփ Նշանակելու կանոնները (օրինակ նա այդ մեղարդարնրով արդարացի), սպա այդ դեպքում կարող է կրկին քնարկվել սույն թիվ ԵԴ/0756/01/18 քրեական գործով, Ռոման Մուրադյանի նկարմամբ Համաներման մասին օրենքի կիրառման հարցը:

(...)

Վերաքննիչ դալարանը հանգում է այն հերևության, որ (...) առաջին արյանի դալարանի կողմից թույլ են րրվել քրեական իրավունքի նոքմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դալարավարության օրենսգրքի պահանջներին չհամապարասիանող, չիմնավորված որոշման կայացմանը, ինչը ՀՀ քրեական դալարավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, դալարական սկրր բեկանելու հիմք է, ոսրի վերաքննիչ բողոքը պերք է բավարարել՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դալարանի 2018 թվականի դեկերմբերի 3-ի որոշումը Ռոման Մուրադյանի նկարմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կերով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասով, բեկանել և գործն ողարկել նույն դալարանն նոր քնության, որպեսզի լուծվի թիվ ԵԴ/0756/01/18 և թիվ ԵԴ/0874/01/18 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու և հանցագործությունների համակցության կանոններով Ռոման Մուրադյանի նկարմամբ վերջնական պարփ Նշանակելու հարցը (...)⁴⁸¹:

⁴⁸¹ Տեև քրեական գործ, հատող 3-րդ, թերթեր 121-132:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, և արդյունքում կայացվել է չպատճառաբանված դատական ակտ:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանում՝ դատաքննության ընթացքում, երկու քրեական գործերը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի կարգով մեկ վարույթում միացնելու միջնորդությամբ նույնիսկ մեղադրողը հանդես չի ելել, և դա այն պայմաններում, երբ դատաքննության ընթացքում ստացվել է իր պաշտպանյալի վերաբերյալ կազմված ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի «Ձև 8» տեղեկանքը, համաձայն որի՝ վերջինիս վերաբերյալ քննվում է նաև մեկ այլ քրեական գործ:

Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ վերոնշյալ երկու քրեական գործերը միմյանցից տարբերվում են նախ այն հանգամանքով, որ թիվ ԵԴ/0874/01/18 քրեական գործով իր պաշտպանյալին սկզբում մեղադրանք է առաջադրված եղել զանգվածային անկարգություններ, այնուհետև խուլիգանություն կատարելու համար, և տվյալ գործով վերջինս իր մեղավորությունը ենթադրյալ կատարված արարքում չի ընդունել: Իսկ արդեն ԵԴ/0874/01/18 քրեական գործով նա ընդունել է իր մեղքը և միջնորդել, որ Առաջին ատյանի դատարանում գործի քննությունն իրականացվի արագացված դատական քննության կանոնների կիրառմամբ:

Արդյունքում, բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը անտեսել է անմեղության կանխավարկածի սկզբունքը:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 6-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշմանը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք Առաջին ատյանի դատարանի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը բեկանելու և գործը Ռ.Մուրադյանի վերաբերյալ քննվող մեկ այլ քրեական գործին միացնելու համար նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը*

մասնակցելու մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը կամ մի անձի կողմից կատարված մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործերը, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործեր, եթե, դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված, առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն սպասելիելու անհրաժեշտություն»:

12. Մեջբերված նորմը Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել Պետրոս Նազարյանի վերաբերյալ որոշման շրջանակներում՝ փաստելով հետևյալը. «(...) Քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործերի միացման ինստիտուտի դադարավարական նշանակության ուսումնասիրության հիման վրա Վճարելի դադարանն արձանագրում է, որ այն ամրագրում է կազմակերպական-լրտինիկական բնույթի դադարավարական լիազորություն, որի միջոցով ապահովվում է քրեական գործերի քննության արդյունավետությունը: Մասնավորապես, նշված դադարավարական լիազորությամբ քրեական գործի քննության սահմանների ընդարձակումը նպաստում է հեղափոխում ապահովել դադարավարական ռեսուրսների խնայողությունը, երաշխավորել ողջամիտ ժամկետում գործի քննությունը, ինչպես նաև նպաստել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը: Այսինքն քրեական գործերի միացման դադարավարական լիազորության կենսագործումը պայմանավորվում է քրեական գործերի քննության արդյունավետության ապահովման օբյեկտիվ չափանիշով:

Ընդ որում, Վճարելի դադարանը փաստում է, որ նշված չափանիշի առկայության գնահատմամբ քրեական գործերի միացման քրեական վարույթն իրականացնող մարմնի լիազորությունը կրում է դիսպոզիտիվ բնույթ: Մասնավորապես, ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «մեկ վարույթում **կարող են** միացվել» օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական գործերը միացնելու լիազորությունը հայեցողական է: Այսինքն քրեական գործերի միացման հայեցողական լիազորությունն իրականացնելու յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, անհրաժեշտ է հաշվի առնել միացվող քրեական գործերի միջև գոյություն ունեցող կապը, և թե այդ միացումը որքանով կնպաստի քրեական գործերի քննության արդյունավետության բարձրացմանը:

Միևնույն ժամանակ, Վճարելի դադարանը հարկ է համարում ընդգծել, որ քրեական գործերի միացմամբ քննության արդյունավետության բարձրացումը պետք է պայմանավորված լինի քրեադադարավարական օրենքում մատրանշված քրեական գործերի միացման հիմքերի շրջանակով: Այսպես, ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ քննիչի, դադարավարի կամ դադարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել

ա) մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը: Այսինքն րվյալ դեպքում քրեական գործերի միացումը և նույն վարույթի շրջանակներում միաժամանակյա քննությունը պայմանավորվում է ինչպես *in rem* (արարքների), այնպես էլ *in*

personae (անձանց) շրջանակով: Մասնավորապես, նշված հիմքով քրեական գործերի միացումը հնարավոր է՝

- *in personae*-ի բազմակիության դեպքում՝ միևնույն *in rem*-ի նկատմամբ, երբ մեկ հանցագործության կատարման մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը միացվում են քննության արդյունավետությունը բարձրացնելու համար,

- *in personae*-ի և *in rem*-ի բազմակիության դեպքում, երբ մի քանի հանցագործության կատարման մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը միացվում են քննության արդյունավետությունը բարձրացնելու համար,

բ) մի անձի կողմից մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեղադրանքով գործերը: Այսինքն՝ փյույկ դեպքում քրեական գործերի միացումը քննության արդյունավետության բարձրացման համար հնարավոր է միևնույն *in personae*-ի կողմից կատարված *in rem*-ի բազմակիության դեպքում,

գ) ցանկացած այլ քրեական գործեր, եթե դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու անհրաժեշտություն: Այսինքն՝ փյույկ դեպքում քրեական գործերի միացման հիմքն օրենսդիրը պայմանավորում է ոչ թե *in personae*-ի կամ *in rem*-ի քանակական, այլ որակական բաղադրիչով, այն է՝ բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության նկատառումներով գործի հանգամանքների պարզման արդյունավետության ապահովմամբ (...)⁴⁸²:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ Ռ.Մուրադյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճել է և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել՝ հաշվի առնելով, որ դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում Ռ.Մուրադյանի նկատմամբ նշանակվելիք առավելագույն պատիժը չի կարող գերազանցել երեք տարի չորս ամիս ժամկետով ազատազրկումը⁴⁸³,

- Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ փաստելով, որ Ռ.Մուրադյանը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում գտնվող թիվ ԵԴ/0874/01/18 քրեական գործով մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ, ուստի Առաջին ատյանի դատարանը համաներման կիրառելիության հարցը պետք է լուծեր այդ քրեական գործը սույն քրեական գործի հետ մեկ վարույթում միացնելուց և հանցագործությունների համակցության կանոններով պատիժ սահմանելուց հետո⁴⁸⁴:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում մեջբերված իրավադրույթի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ

⁴⁸² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Պետրոս Նազարյանի վերաբերյալ գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ՇԴ3/0056/01/16 որոշման 16-17-րդ կետերը:

⁴⁸³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁴⁸⁴ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի այն պնդումը, թե Առաջին ատյանի դատարանը համաներման կիրառելիության հարցը պետք է լուծեր սույն քրեական գործը Ռ.Մուրադյանի վերաբերյալ քննվող մեկ այլ քրեական գործին միացնելուց և հանցագործությունների համակցության կանոններով պատիժ սահմանելուց հետո, չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական գործերը միացնելու օրենսդրական նպատակից: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ քրեական գործերը միացնելը վարույթն իրականացնող մարմնի հայեցողական լիազորությունն է՝ հիմնված բացառապես քրեական գործի քննության արդյունավետության ապահովման պահանջի վրա, իսկ համաներման կիրառելիության հարցը նշված պահանջից չի բխում:

Ինչ վերաբերում է Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորմանն առ այն, որ հանցագործությունների և դատավճիռների համակցության դեպքերում համաներումը կիրառվում է վերջնական պատժի նկատմամբ՝ հանցագործությունների կամ դատավճիռների համակցության կանոններով այն սահմանելուց հետո, եթե մեղսագրվող արարքների համար նախատեսված առավելագույն պատիժների հանրագումարը չի գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, այն չի կարող մեկնաբանվել որպես նույն անձին մեղսագրվող մի քանի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը մեկ վարույթում միացնելու ինքնուրույն հիմք: Նման մեկնաբանությունը չի համապատասխանում քրեական գործերի միացման ինստիտուտի դատավարական նշանակությանը և տվյալ դեպքում ուղղված չէ քրեական գործերի քննության արդյունավետության ապահովմանը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում, երբ Համաներման մասին օրենքի կիրառելիության հարցը դատաքննության փուլում պայմանավորվում է անձի վերաբերյալ քրեական գործերը մեկ վարույթում միացնելու և հանցագործությունների համակցության կանոններով պատիժ սահմանելու հետ, ողջամտորեն վտանգվում է անձի անմեղության կանխավարկածը: Տարբեր վարույթներով քննվելու դեպքում, հանցագործությունների համակցության կանոնների կիրառման անխուսափելիությունը չի կարող ի սկզբանե կանխորոշվել, քանի որ անձը կարող է ճանաչվել անմեղ և արդարացվել:

15. Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ ըստ էության նախատեսել է Համաներման մասին օրենքի կիրառման նոր սահմանափակում՝ հակասելով *Վարուժան Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ արտահայտված այն դիրքորոշմանը, որ համաներման կիրառման սահմանափակումները նախատեսված են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն, այդ թվում՝ համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ

համաներումը կիրառելի չէ⁴⁸⁵: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտով Համաներման մասին օրենքի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված՝ համաներումը չկիրառելու պայմանների բացակայության դեպքում Ռ.Մուրադյանը ոչ իրավաչափորեն կզրկվի համաներման իրավունքից:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը բեկանելու և գործը Ռ.Մուրադյանի վերաբերյալ քննվող մեկ այլ քրեական գործին միացնելու համար նույն դատարան նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի, 358-րդ հոդվածի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Մինևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, հարկ է համարում արձանագրել, որ կաշկանդված լինելով պաշտպանության կողմի ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, չի անդրադառնում ամբաստանյալ Ռ.Մուրադյանի նկատմամբ Համաներման ակտի կիրառման իրավաչափությանը, և գտնում է, որ անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ռոման Մուրադի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 6-ի

⁴⁸⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Ավետիսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴՅ-0013/01/11 որոշման 16-րդ կետը:

որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

31.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0275/11/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորները</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հուլիսի 1-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Թ.Մաթևոսյանի (այսուհետ նաև՝ Հետաքննության մարմին)՝ 2018 թվականի մայիսի 4-ի որոշմամբ «Hraparak.am» կայքում տեղադրված «Քաղաքացիական հագուստով անձինք մահակով ծեծի են ենթարկել անչափահասների» վերտառությամբ հրապարակման կապակցությամբ նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 12175818 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով և ընդունվել վարույթ:

1.1. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 22-ի որոշմամբ Սարգիս Սարգսի Հակոբյանը, Գագիկ Անդրանիկի Ազարյանը, Սարգիս Վահանի Բաղդասարյանը, Վլադիմիր Մարտինի Մխիթարյանը որպես

մեղադրյալ են ներգրավվել, և նրանց մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Ս.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով: Ս.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա որոշմամբ Ս.Բաղդասարյանին, Վ.Մխիթարյանին, Գ.Ազարյանին առաջադրված մեղադրանքները փոփոխվել և լրացվել են, Ս.Բաղդասարյանին և Վ.Մխիթարյանին 2018 թվականի մայիսի 24-ին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Գ.Ազարյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 5-րդ կետերով: Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

1.2. 2018 թվականի հունիսի 11-ին մեղադրյալներ Ս.Հակոբյանի, Վ.Մխիթարյանի պաշտպան Տ.Աթանեսյանը և մեղադրյալներ Գ.Ազարյանի, Ս.Բաղդասարյանի պաշտպան Է.Ալեքսանյանը միջնորդություն են ներկայացրել Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազություն՝ խնդրելով վերացնել «Քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին» Հետաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 4-ի որոշումը:

2. Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Մ.Մուրադյանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշմամբ պաշտպաններ Տ.Աթանեսյանի և Է.Ալեքսանյանի միջնորդությունը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2018 թվականի հունիսի 13-ին մեղադրյալներ Ս.Հակոբյանի, Վ.Մխիթարյանի պաշտպան Տ.Աթանեսյանը և մեղադրյալներ Գ.Ազարյանի, Ս.Բաղդասարյանի պաշտպան Է.Ալեքսանյանը բողոք են ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով վերացնել «Քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին» Հետաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 4-ի որոշումը:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ պաշտպաններ Տ.Աթանեսյանի և Է.Ալեքսանյանի բողոքը մերժվել է՝ բողոքարկման ենթակա չլինելու հիմքով:

4. Պաշտպան Է.Ալեքսանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, 2018 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը բեկանել է և նյութերն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2019 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ արձանագրելով քրեական գործ հարուցելու մասին 2018 թվականի մայիսի 4-ի որոշմամբ քրեական գործի

մինչդատական վարույթում Սարգիս Հակոբյանի, Վլադիմիր Մխիթարյանի, Գագիկ Ազարյանի և Սարգիս Բաղդասարյանի իրավունքների խախտման փաստը՝ առանց այդ խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու:

6. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Ա.Մուրադյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 25-ի որոշումը:

7. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 22-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Թ.Մաթևոսյանը 2018 թվականի մայիսի 3-ին տեղեկանք է կազմել հետևյալի մասին. «*«Hraparak.am» լրատվական կայքում հրապարակված «Քաղաքացիական հագուստով անձինք մահակով ծեծի են ենթարկել անչափահասների» վերառությամբ հոդվածում նշված դեպքի վերաբերյալ նախապարտաբար նյութերի անհրաժեշտությունից ելնելով, 2018 թվականի մայիսի 3-ին ժամը 16.10-ին, գանգահարել են 077-32-50-33 հեռախոսահամարին Դավիթ Վարուժանի Ավետիսյանի մորը՝ Լուսինեն, ոստիկանության Էրեբունու բաժնի Դավիթ Ավետիսյանին հրավիրելու, բացատրություն, հաղորդում վերցնելու համար, սակայն Լուսինեն հայրենց, որ ինքն իր որդու՝ Դավիթ Ավետիսյանի հետ ցանկություն չունի ներկայանալու և չի ցանկանում նշված հարցով իրենց փունս այցելել, իր փաստաբանը գրավում է գործադրվի մեջ և իրենց նաև հայրնել է, որ չներկայանան, բայց իրենք բողոքը պնդում են և ցանկանում են, որ արարքը կարարած անձինք ենթարկվեն քրեական պարասիսանսարվության»⁴⁸⁶:*

8.1. Հետաքննության մարմնի՝ «Անձին ոստիկանության բաժնի հրավիրելու մասին» 2018 թվականի մայիսի 3-ի ծանուցագրի համաձայն, «Hraparak.am» լրատվական կայքում հրապարակված՝ «Քաղաքացիական հագուստով անձինք մահակով ծեծի են ենթարկել անչափահասների» վերառությամբ հոդվածում նշված դեպքի վերաբերյալ նախապատրաստվող նյութերով բացատրություն և

⁴⁸⁶ Տե՛ս թիվ 12175818 քրեական գործը, հատոր 1-ին, թերթ 18:

հաղորդում տալու համար Դավիթ Ավետիսյանը 2018 թվականի մայիսի 4-ին, ժամը 12.00-ին, հրավիրվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժին⁴⁸⁷:

8.2. Նախաքննության ընթացքում, վկա Դավիթ Ավետիսյանը 2018 թվականի մայիսի 8-ի հարցաքննության ժամանակ քննիչի հարցին, թե արդյո՞ք բողոք ունի կատարված դեպքի առթիվ, հայտնել է, որ բողոք ունի և ցանկանում է, որպեսզի նշված անձինք ենթարկվեն քրեական պատասխանատվության⁴⁸⁸:

8.3. «Հանցագործության մասին հաղորդում ընդունելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի Արուսյանի քննչական բաժնի քննիչ Տ.Միրզոյանի՝ 2018 թվականի մայիսի 8-ի արձանագրության համաձայն՝ Դավիթ Վարուժանի Ավետիսյանը խնդրել է հանցանք կատարած անձանց ենթարկել քրեական պատասխանատվության օրենքի ողջ խստությամբ⁴⁸⁹:

9. 2018 թվականի հունիսի 25-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է մուտքագրվել և 2018 թվականի հունիսի 27-ին ընդունվել վարույթ թիվ ԵԴ/0455/01/18 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Գագիկ Ազարյանի, Սարգիս Բաղդասարյանի, Վլադիմիր Մխիթարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և Սարգիս Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով⁴⁹⁰:

9.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 25-ի դատավճռով Ս.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, և ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ վերջինիս նկատմամբ թողնվել է կրելու ազատագրկում՝ 4 (չորս) տարի 5 (հինգ) ամիս 2 (երկու) օր ժամկետով: Ս.Հակոբյանի նկատմամբ կիրառվել է ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի նոյեմբերի 1-ի՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, և վերջինս ազատվել է պատժից:

Գ.Ազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Գ.Ազարյանի նկատմամբ կիրառվել է Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, և վերջինս ազատվել է պատժից⁴⁹¹:

⁴⁸⁷ Տե՛ս , թիվ 12175818 քրեական գործը, հատոր 1-ին, թերթ 19:

⁴⁸⁸ Տե՛ս , թիվ 12175818 քրեական գործը, հատոր 1-ին, թերթեր 55-57:

⁴⁸⁹ Տե՛ս , թիվ 12175818 քրեական գործը, հատոր 1-ին, թերթ 58:

⁴⁹⁰ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ/0455/01/18 քրեական գործը:

⁴⁹¹ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ/0455/01/18 քրեական գործը:

Երևան քաղաքի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ Ս.Բաղդասարյանի և Վ.Մխիթարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիմքով:

9.2. Պաշտպաններ Տ.Աթանեսյանի և Վ.Մակյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, 2020 թվականի հունիսի 24-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Երևան քաղաքի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 25-ի դատավճիռը թողնելով անփոփոխ⁴⁹²:

9.3. Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունվարի 29-ի որոշմամբ ամբաստանյալներ Ս.Հակոբյանի և Գ.Ազարյանի պաշտպաններ Զ.Հարությունյանի, Վ.Մակյանի և Տ.Աթանեսյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է⁴⁹³:

10. Առաջին աստիանի դատարանն իր 2019 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [Նյութերի նախապարաստման ընթացքում Դավիթ Ավետիսյանը հրաժարվել է բացառություն և հաղորդում փալուց, իսկ նրա հետ եղած երկու անձանց ինքնությունները դեռևս չեն պարզվել, հետաքննության մարմինը, անսրեսելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվող քրեական գործը հանդիսանում է մասնավոր հետապնդման գործ, որի համար նախատեսվում է քննության առանձնահատուկ դատավարական կարգ, չունենալով դիմող(ներ)ի (տուժող(ներ)ի) հարակ կամարտահայտությունը՝ հանցավոր(ներ)ին քրեական պարաստմանարվության ենթարկելու վերաբերյալ, 2018թ. մայիսի 4-ին որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական գործ հարուցելու մասին: (...)

Ինչ վերաբերում է դատախազի այն պարճատարանությանը, որ մինչև քրեական գործ հարուցելը հետաքննիչը հեռախոսագրույց է ունեցել Դավիթ Ավետիսյանի մոր հետը (...), ապա հարկ է նշել, որ հետաքննիչի կողմից կազմված (...) տեղեկանքը չի կարող փոխարինել կամ նույնացվել քրեադատավարական իմաստով դիմողի (տուժողի) հարակ կամահայտությունը պարունակող բողոքի հետ: Ավելին՝ քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապարաստման ընդունված այլ օրենքներով, որը պարտադիր է դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար: (...) Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածով սահմանված են

⁴⁹² Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ/0455/01/18 քրեական գործը:

⁴⁹³ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ/0455/01/18 քրեական գործը:

հետաքննության մարմնի լիազորությունները, որոնցով հետաքննության մարմնին վերապահված չէ դիմողի (տուժողի) բողոքի առկայության կամ բացակայության հարցը հետախուսագրույցով պարզելու և այդ մասին տեղեկանք կազմելու հնարավորություն կամ լիազորություն:

(...) [Դատարանը գտնում է, որ քրեական գործ հարուցելու մասին 2018 թվականի մայիսի 4-ի որոշումը կայացվել է մեջբերված քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտմամբ, ինչի արդյունքում խախտվել է ինչպես օրինականության սկզբունքը, այնպես էլ Գազիկ Ազարյանի, Սարգիս Բաղդասարյանի, Սարգիս Հակոբյանի, Վլադիմիր Մխիթարյանի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված՝ գործի արդարացի քննության իրավունքը:

Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ թիվ 12175818 քրեական գործի նախաքննությունն ավարտվել է, քրեական գործն ըստ մեղադրանքի Գազիկ Ազարյանի, Սարգիս Բաղդասարյանի, Վլադիմիր Մխիթարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Սարգիս Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 2018թ. հունիսի 27-ին ընդունվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթ:

Դատարանը գտնում է, որ թեև նախաքննությունն ավարտված լինելու հանգամանքն արգելք չէ մինչդարակյան վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով քրեական գործ հարուցելու մասին որոշումների դեմ բերված բողոքները քննության առնելու համար, սակայն հետագա դատական վերահսկողության կտրուցակարգն այս դեպքում կարող է սահմանափակվել մինչդարակյան վարույթում անձի իրավունքների հնարավոր խախտման փաստի արձանագրմամբ՝ առանց այդ խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու: (...)

Վերագրյալի հաշվառմամբ դատարանը, նկարի ունենալով, որ առաջին աստիճանի դատարանն իրավասու չէ վերացնելու քրեական գործ հարուցելու մասին որոշումը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը չի նախատեսում մինչդարակյան վարույթն իրականացնող մարմնի որոշումը վերացնելու լիազորություն, գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, անհրաժեշտ է արձանագրել քրեական գործ հարուցելու մասին 2018թ. մայիսի 4-ի որոշման արդյունքում թիվ 12175181 քրեական գործի մինչդարակյան վարույթում Սարգիս Հակոբյանի, Վլադիմիր Մխիթարյանի, Գազիկ Ազարյանի և Սարգիս Բաղդասարյանի իրավունքների խախտման փաստը՝ առանց այդ խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու (...)⁴⁹⁴:

11. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի որոշումը, արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քրեական գործ հարուցելու առիթ կարող է համարվել ֆիզիկական անձի այն քանակոր դիմումը, որը կարարվել է քրեական հետապնդման մարմնին դիմողի

⁴⁹⁴ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 34-42:

անմիջական ներկայությամբ և վերջինիս ինքնությունը ստուգելու պայմաններում: Մնացած դեպքերում (այդ թվում՝ հեռախոսով) ներկայացված բանավոր դիմումները, եթե, մանավանդ, հնարավոր չէ ստուգել դրանք ներկայացնողի ինքնությունը, չեն կարող քրեական գործ հարուցելու առիթ հանդիսանալ:

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի այն պնդմանը, թե «(...) ենթադրյալ քրոժողը չունենալով օբյեկտիվ հնարավորություն վարույթ իրականացնող մարմին ներկայանալու և հանցագործության մասին իր հաղորդումը ներկայացնելու, այն իրացրել է հեռախոսազանգի միջոցով, ինչն իրավացիորեն հետաքննիչի կողմից դիմել է որպես հանցագործության մասին բանավոր հաղորդում», սպաս այն չի բխում դատարան ներկայացված նյութերում առկա տեղեկանքից, որի համաձայն՝ «(...) ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ, ոստիկանության կապիտան՝ Թ.Մաթևոսյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ «Hraparak.am» լրատվական կայքում հրատարակված «Քաղաքացիական հագուստով անձինք մահակով ծեծի են ենթարկել անչափահասների» վերաբերյալ հոդվածում նշված դեպքի վերաբերյալ նախապարտավորող նյութերի անհրաժեշտությունից ելնելով 2018թ. մայիսի 3-ին, ժամը 16:10-ին զանգահարել են 077-32-50-33 հեռախոսահամարին Դավիթ Մերուժանի Ավետիսյանի մորը Լուսինենի ոստիկանության Էրեբունու բաժնի Դավիթ Ավետիսյանին հրավիրելու, բացատրություն և հաղորդում վերցնելու համար, սակայն Լուսինեն հայրնեց, որ ինքն իր որդու Դավիթ Ավետիսյանի հետ ցանկություն չունի ներկայանալու և չի ցանկանում նշված հարցով իրենց տուն այցելել, իր փաստաբանը գրնվում է գործադրվի մեջ և իրենց նաև հայրնել է, որ չներկայանան, բայց իրենք իրենց բողոքը պնդում են և ցանկանում են, որ արարքը կատարած անձինք ենթարկվեն քրեական պարտասխանաբարություն (...)⁴⁹⁵:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

12. Բողոքաբերը, վկայակոչելով 1985 թվականի նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի՝ «Հանցագործությունների և իշխանության չարաչափան գոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագրի», Եվրոպայի նախարարների Կոմիտեի՝ 1985 թվականի N2 R(85) 11 «Տուժողի կարգավիճակը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» հանձնարարականի, *Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշմանը և *Տիգրան Բանայանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման դրույթները, արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, դիմող անձի կողմից հեռախոսազանգի միջոցով կատարված բանավոր հայտարարությունը և դրա արդյունքում կազմված տեղեկանքը ճանաչելով ոչ իրավաչափ՝ անտեսել է տուժողի դերն

⁴⁹⁵ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 78-90:

ու նշանակությունը քրեադատավարական ընթացակարգերում՝ գրկելով վերջինիս *Էմնա Կարասյեպյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշմամբ վերապահած այն իրավունքից, որ հանցագործության մասին հաղորդում կարող է լինել նաև քրեական հետապնդում իրականացնող մարմնին հասցեագրված բանավոր դիմումը:

12.1. Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Հետաքննության մարմինը 2018 թվականի մայիսի 4-ին քրեական գործ հարուցելու ժամանակ ունեցել է անչափահաս տուժող Դ.Ավետիսյանի մոր՝ Լուսինեի՝ քրեական գործ հարուցելու հստակ կամարտահայտությունը, այն է՝ հեռախոսագրույցի ժամանակ վերջինս հայտնել է, որ պնդում են «Hraparak.am» կայքում հրապարակած ենթադրյալ հանցագործության մասին հաղորդումը, ցանկանում են, որ արարքը կատարած անձինք ենթարկվեն քրեական պատասխանատվության: Ավելին, բողոքաբերը փաստել է, որ վերջիններիս կամարտահայտության՝ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունենալու հանգամանքը հաստատվում է նաև տուժողի և նրա օրինական ներկայացուցչի կողմից քրեական գործ հարուցելուց անմիջապես հետո ներկայացված բողոքներով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից վիճարկվող որոշումը կայացնելիս:

12.2. Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է քրեական գործով ձեռք բերված հիշյալ փաստական տվյալները, յուրովի է մեկնաբանել «կամարտահայտություն» եզրույթը՝ արձանագրելով, որ դիմողի բողոքը հեռախոսագանգի միջոցով առիթ չէ քրեական գործ հարուցելու համար:

Արդյունքում, բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է անհիմն, անօրինական որոշում, որով խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ, 33-րդ, 183-րդ, 175-րդ, 180-րդ, 181-րդ հոդվածների պահանջները:

Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 17-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնելով որոշմամբ արձանագրված տուժողի իրավունքի խախտումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք «Քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին» Հետաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 4-ի որոշմամբ քրեական գործի մինչդատական վարույթում Սարգիս Հակոբյանի, Վլադիմիր Մլիխոպոլսկի, Գագիկ Ազարյանի և Սարգիս Բաղդասարյանի իրավունքների խախտման փաստը արձանագրելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածը սահմանում է.

«1. Կարարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով:

2. Մասնավոր հետապնդման գործեր են համարվում սույն օրենսգրքի 183 հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթներն են՝

«1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի [համապարասխան հոդվածներով] (...) նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան Կրոմոլի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման (...):»:

14.1. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ մեջբերված դրույթների համադրված վերլուծությունից երևում է, որ քրեադատավարական օրենսդրությունը, արարքի հանրային նվազ վտանգավորության հանգամանքով պայմանավորված, առանձնացնում և հստակ սահմանում է մասնավոր հետապնդման գործերի շրջանակը, որոնց համար նախատեսում է քննության առանձնահատուկ դատավարական կարգ: Մասնավորապես, մասնավոր հետապնդման գործերը կարող են հարուցվել բացառապես տուժողի բողոքի հիման վրա և կասկածյալի կամ մեղադրյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման⁴⁹⁶:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ և 183-րդ հոդվածների ուժով մասնավոր մեղադրանքով գործ հարուցելու և դրանով քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը լիովին կախված է դիմողի՝ հանցավորին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար քրեական հետապնդման մարմնին դիմելու ցանկությունից և կամարտահայտությունից⁴⁹⁷:

⁴⁹⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Առաքելյանի* գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱԲԳ/0217/01/14 որոշման 14.1-րդ կետը:

⁴⁹⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Աբրահամյանի* գործով 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշման 10-րդ կետը:

14.2. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մասնավոր մեղադրանքով քրեական գործ կարող է հարուցվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում.

ա) առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցագործության վերաբերյալ դեպքը,

բ) առկա է դիմողի, այսինքն՝ այն անձի (անձանց) բողոքը, ում իրավունքները խախտվել են քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրյալ արարքով, ինչպես նաև այն անձանց, ովքեր օրենքի ուժով անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ են, եթե խախտվել են նրանց խնամարկյալների իրավունքները⁴⁹⁸: Ինչ վերաբերում է մասնավոր մեղադրանքի գործով տուժողի (դիմողի) բողոքի առկայությանը՝ որպես քրեական գործ հարուցելու առիթ, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իբրև այդպիսին կարող է լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձի ոչ միայն գրավոր, այլ նաև բանավոր դիմումը քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ կոնկրետ հանցագործության տարրեր պարունակող նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին տեղեկատվությամբ⁴⁹⁹:

14.3. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական օրենքով արգելված արարքի հետևանքով ենթադրաբար տուժած անձի՝ ենթադրյալ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար քրեական հետապնդման մարմնին ուղղված կամարտահայտությունն առաջացնում է իրավասու մարմնի պարտականությունը քրեական գործ հարուցելու հիմքերի առկայության պարագայում հարուցել քրեական գործ՝ իրավական հիմքեր ստեղծելով քրեական հետապնդման կառուցակարգը գործի ղնելու և տուժողի իրավաչափ շահերի պաշտպանությունն իրականացնելու համար:

15. Սույն գործի նյութերից երևում է, որ Հետաքննության մարմնի 2018 թվականի մայիսի 4-ի որոշմամբ «Hraparak.am» կայքում տեղադրված՝ «Քաղաքացիական հագուստով անձինք մահակով ծեծի են ենթարկել անչափահասների» վերտառությամբ հրապարակման կապակցությամբ նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 12175818 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով և ընդունվել վարույթ⁵⁰⁰: Նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ Թ.Մաթևոսյանի՝ 2018 թվականի մայիսի 3-ին կազմած տեղեկանքի համաձայն՝ նա զանգահարել է անչափահաս տուժողի՝ Դ.Ավետիսյանի մորը՝ Լուսինե Գալստյանին՝ վերջինիս որդուն ոստիկանության Էրեբունու բաժնի հրավիրելու,

⁴⁹⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Արրահամյանի* գործով վերը հիշատակված որոշումը:

⁴⁹⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էմմա Կարապետյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշման 4-րդ կետը:

⁵⁰⁰ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

բացատրություն, հաղորդում վերցնելու համար, սակայն Դ.Ավետիսյանի մայրը հայտնել է, որ պնդում են «Hraparak.am» կայքում հրապարակած ենթադրյալ հանցագործության մասին հաղորդումը, ինքն իր որդու հետ ցանկություն չունեն ներկայանալու, սակայն իրենք բողոքը պնդում են և ցանկանում են, որ արարքը կատարած անձինք ենթարկվեն քրեական պատասխանատվության⁵⁰¹:

Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ արձանագրել է Հետաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 4-ի որոշմամբ Գ.Ազարյանի, Ս.Բաղդասարյանի, Ս.Հակոբյանի և Վ.Մխիթարյանի՝ գործի արդարացի քննության իրավունքի խախտման փաստն այն հիմնավորմամբ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվող քրեական գործը մասնավոր հետապնդման գործ է, սակայն չունենալով դիմողների հստակ կամարտահայտությունը՝ հանցավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, Հետաքննության մարմինը 2018 թվականի մայիսի 4-ին որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական գործ հարուցելու մասին: Անդրադառնալով դատախազի այն պատճառաբանությանը, որ մինչև քրեական գործ հարուցելը Հետաքննության մարմինը հեռախոսագրույց է ունեցել Դ.Ավետիսյանի մոր հետ՝ Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ Հետաքննիչի կողմից կազմված՝ հեռախոսային խոսակցության վերաբերյալ տեղեկանքը չի կարող փոխարինել կամ նույնացվել քրեադատավարական իմաստով դիմողի (տուժողի) հստակ կամահայտությունը պարունակող բողոքի հետ⁵⁰²: Վերաքննիչ դատարանը, 2019 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 25-ի որոշումը⁵⁰³:

16. Սույն որոշման 14-14.3-րդ կետերում ներկայացված իրավանդումերը և իրավական դիրքորոշումները կիրառելով սույն որոշման նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել այն հանգամանքը, որ Հետաքննության մարմինը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու ժամանակ ունեցել է ենթադրյալ տուժողի և նրա օրինական ներկայացուցչի՝ իրեն ուղղված՝ քրեական գործ հարուցելու վերաբերյալ հստակ կամարտահայտություն: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հետաքննության մարմինը վերը նշված հաղորդման կապակցությամբ նյութերի նախապատրաստման ընթացքում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ հաղորդման մեջ նշված հանցագործությունը ներառված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածում և դրա վերաբերյալ քրեական գործ կարող է հարուցվել բացառապես տուժողի բողոքի հիման վրա, նշված բողոքի առկայության հանգամանքը պարզել է ենթադրյալ տուժողի օրինական ներկայացուցչի հետ հեռախոսային խոսակցության միջոցով՝

⁵⁰¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁵⁰² Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁵⁰³ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

բանավոր եղանակով, և ենթադրյալ հանցանք կատարած անձանց նկատմամբ բողոք ունենալու վերջինիս բանավոր հստակ դիրքորոշումը դատավարական առումով ձևակերպել է համապատասխան տեղեկանքում: Այլ կերպ, քրեական գործ հարուցելու որոշում կայացնելիս, Հետաքննության մարմինն իր տրամադրության տակ ունեցել է անչափահաս տուժող՝ Դ.Ավետիսյանի և նրա օրինական ներկայացուցչի բանավոր դիմումը, որով հաստատվել է վերջիններիս՝ բողոք ունենալու հանգամանքը: Այս առնչությամբ, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև բողոքաբերի այն փաստարկը, որ տուժողի և նրա օրինական ներկայացուցչի կամարտահայտության՝ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունենալու հանգամանքը հաստատվում է նաև Դավիթ Ավետիսյանի կողմից քրեական գործ հարուցելուց հետո՝ 2018 թվականի մայիսի 8-ի հարցաքննության ժամանակ տրված ցուցմունքով⁵⁰⁴, ինչպես նաև 2018 թվականի մայիսի 8-ին տրված հանցագործության մասին գրավոր հաղորդմամբ՝ այն մասին, որ բողոք ունի և ցանկանում է, որպեսզի նշված անձինք ենթարկվեն քրեական պատասխանատվության՝ օրենքի ողջ խստությամբ⁵⁰⁵:

17. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին» Հետաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 4-ի որոշմամբ քրեական գործի մինչդատական վարույթում Սարգիս Հակոբյանի, Վլադիմիր Մխիթարյանի, Գագիկ Ազարյանի և Սարգիս Բաղդասարյանի իրավունքների խախտման փաստն արձանագրելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 25-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 17-ի որոշումը բեկանելու և փոփոխելու համար:

19. Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալներ Ս.Հակոբյանի, Վ.Մխիթարյանի պաշտպան Տ.Աթանեսյանի և մեղադրյալներ Գ.Ազարյանի, Ս.Բաղդասարյանի պաշտպան Է.Ալեքսանյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության

⁵⁰⁴ Տե՛ս սույն որոշման 8.2.-րդ կետը:

⁵⁰⁵ Տե՛ս սույն որոշման 8.3.րդ կետը:

քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 25-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 17-ի որոշումները բեկանել և փոփոխել: Մեղադրյալներ Սարգիս Հակոբյանի, Վլադիմիր Մխիթարյանի պաշտպան Տ.Աթանեսյանի և մեղադրյալներ Գագիկ Ազարյանի, Սարգիս Բաղդասարյանի պաշտպան Է.Ալեքսանյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *արտրագրություն*

Դատավորներ՝ *արտրագրություններ*

32.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0045/01/09

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏԻՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հուլիսի 2-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով Մյասնիկ Ժորայի Մալխասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ Մ.Մալխասյանի պաշտպան Հ.Արսենյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 235-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը:

2008 թվականի մարտի 2-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով 2008 թվականի փետրվարի 24-ին հարուցված 58200608 քրեական գործը՝ միացվել է թիվ 62202608 քրեական գործին ու նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

2008 թվականի մարտի 2-ին Մյասնիկ Ժորայի Մալխասյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն՝ զանգվածային անկարգություններ կազմակերպելու և ապօրինի կերպով զենք, զինամթերք պահելու կասկածանքով, և նույն օրը ձերբակալվել է:

2008 թվականի մարտի 5-ին Մ.Մալխասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 300-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ Մ.Մալխասյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-316-րդ հոդվածի 2-րդ մասով, 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 300-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ Մ.Մալխասյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործի նյութերն անջատվել են առանձին վարույթ՝ 62215908 համարով և 2008 թվականի դեկտեմբերի 1-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել Երևանի քրեական դատարան:

1.1. 2009 թվականի մարտի 31-ին մեղադրանքի կողմը որոշում է կայացրել Մ.Մալխասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին՝ վերջինիս արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Նույն որոշմամբ Մ.Մալխասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-316-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով և 38-316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009 թվականի ապրիլի 1-ին որոշում է կայացրել ամբաստանյալ Մ.Մալխասյանի և մյուսների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Նույն որոշմամբ Մ.Մալխասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով և 38-316-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործն անջատվել է առանձին վարույթ, և ըստ ընդդատության փոխանցվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

1.2. Գործի դատաքննության ընթացքում մեղադրողը հայտարարել է Մ.Մալխասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-316-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքից հրաժարվելու մասին⁵⁰⁶:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Մ.Մալխասյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 38-316 հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում: Մ.Մալխասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Միաժամանակ, նրա նկատմամբ կիրառվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ 2009 թվականի հունիսի 19-ի՝ «Համաներում հայտարարելու մասին» որոշման 2-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերը և նա ազատվել է պատժի կրումից:

3. Ամբաստանյալ Մ.Մալխասյանի պաշտպաններ Ռ.Գրիգորյանի և Հ.Արսենյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2009 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Ամբաստանյալ Մ.Մալխասյանի, նրա պաշտպաններ Ռ.Գրիգորյանի և Հ.Արսենյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ վերադարձվել է:

5. 2020 թվականի օգոստոսի 25-ին Մ.Մալխասյանի պաշտպան Հ.Արսենյանը հիմնարար խախտման հիմքով վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 16-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Մյանիկ Մալխասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով և 38-316 հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Եյա մի խումբ անձանց հետ կազմակերպել է զանգվածային անկարգություններ, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ կյանքի և ստողջության համար վրանգավոր բռնության գործադրում, որպիսի գործողություններն արտահայտվել են հերկյալում:

Մ.Մալխասյանը, Ալ.Արզումանյանը, Հ.Հակոբյանը, Ս.Միքայելյանը, Շ.Հարությունյանը, Գ.Ոսկերչյանը, Ս.Միրունյանը, Կ.Փաշինյանը, Խ.Սուքիասյանը, Հ.Հովհաննիսյանը, Վ.Մանուկյանը և մյուսները, երկրում ներքաղաքական

⁵⁰⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 8, թերթեր 3-5:

վիճակն սպակայունացնելու և զանգվածային անկարգություններ հրահրելու դիտարկողությամբ կազմակերպել ու անմիջականորեն իրականացրել են հանցավոր մտադրությունն ի կատար ածելուն ուղղված գործողություններ:

Հասարակության լայն շրջաններում դժգոհություն առաջացնելու, մարդկանց նոր զանգվածներ ներգրավելու մղումով, ինչպես նաև որպես պետական իշխանության ներկայացուցիչների նկատմամբ ուժ գործադրելու պատրաստակամության դրսևորում՝ Մ.Մալխասյանը և մյուսները, փարբեր միջոցներով իրենց շրջապարի նկատմամբ անձնական և ծառայողական ազդեցություն գործադրելով, հարկադրելով, խոստումների և որոշակի վարձավրության դիմաց հավաքագրելով մարդկանց հոծ բազմություն, վերջիններին ներգրավել են 2008թ. փետրվարի 20-ից Երևան քաղաքում անցկացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին, որտեղ ամբողջավարակ կրքեր հրահրելու եղանակով բազմությանը տրամադրել, նահապարաստել են անհնազանդության և զանգվածային բռնարարքների:

Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ իրագործելու մտադրությամբ խմբի անդամները ինչպես անձամբ, այնպես էլ իրենց հետ համագործակցող այլ անձանց միջոցով կազմավորել են զանգվածային բռնարարքների կատարմանը պատրաստ անձանց խմբեր և կազմակերպել նրանց շրջանում ապօրինի կերպով ձեռք բերված հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի, ինչպես նաև մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված փարատեսակ առարկաների բաշխում:

Մ.Մալխասյանը, նյութապես շահագրգռելով, Ապարան քաղաքից ու հարակից գյուղերից հավաքագրել է մարդկանց նոր խմբեր և սպառնալի նրանց տեղափոխումն ու մասնակցությունը զանգվածային միջոցառումներին, անմիջականորեն ղեկավարել և առաջնորդել նրանց: Օգրագործելով ԵԿՄ անդամների շրջանում ունեցած իր ազդեցությունը վերջիններին հորդորել է միանալ իրենց, ընդհուպ նաև կոչով փայ իշխանությունների հետ:

Զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով, 2008թ. փետրվարի 26-ին կամ 27-ին, իրեն պարկանող «ԳԱԶ 31-10» մակնիշի ավտոմեքենայով վարորդի Ա.Շահինյանի հետ Ազատության հրապարակ է փոխադրել մետադրյա ձողեր և փայրե մահակներ, որոնք վերջինս նրա հրահանգով թաքցրել է հրապարակում տեղակայված «Ապարան» անվամբ վրանում:

2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան, երբ ոստիկանության աշխատակիցները, իրացնելով Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի, մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված փարատեսակ առարկաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկատվությունը, փորձել են Ազատության հրապարակում հայրնաբերել և առգրավել դրանք՝ Մ.Մալխասյանի և զանգվածային միջոցառման կազմակերպիչների հրահանգով, հրապարակում գրնվող բազմության մի սրվար զանգված հանրավարանգ հիշյալ պարագաների օգրագործմամբ դիմադրություն է ցույց տվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության

աշխատակիցներին, կյանքի և առողջության համար վրանգավոր բռնություն գործադրել վերջիններին նկատմամբ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետք, ընդ որում Մ.Մալխասյանն անձամբ է ղեկավարել ոստիկաններին դիմադրություն ցույց տվող ամբոխի գործողությունները՝ հրահանգելով չընկրկել և թույլ չտալ նրանց մուտք գործել հրասպարակ:

Այնուհետև, զանգվածային միջոցառման մասնակիցները, Մ.Մալխասյանին և վերոնշյալ մյուս հանցակիցների ուղղորդմամբ և հրահանգով տեղափոխվել, Վ.Մանուկյանի և այլոց կազմակերպմամբ հասարակական և մասնավոր տրանսպորտային միջոցները դիտարկությամբ վնասելով, շահագործումից դուրս բերելով և արգելապարնեշներ կառուցելով դիրքավորվել են Մյանմարիկյանի արձանի հարակից տարածքում, որտեղ վերջիններս հրահերել, կազմակերպել, անմիջականորեն ղեկավարել են զանգվածային անկարգությունները, մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված և ձեռնասհաս այլ միջոցներով զինվելու և հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելու, վերջիններին օրինական պահանջներին ակտիվորեն չենթարկվելու հրահանգներ են տվել, իրենց իսկ հավաքագրած անձանց միջոցով ներգրավել են նոր մարդկանց, ամբոխի առավել ագրեսիվ զանգվածին բաժանել զենքեր, մարմնական վնասվածքներ պատճառելու, հրկիզումներ ու ավերումներ առաջացնելու համար հարմարեցված մեքուսիկան ձողեր, մեխակներ, ամրաններից պարրաստված «ոզնի» կոչվող սրածայր մեքուսիկան կոնստրուկցիաներ, բենզինով լցված շշեր՝ «Մոլոտովի կոկորդիլ» և այլ պարագաներ: Մ.Մալխասյանն էլ, մեթոքնդմերթ դիմելով հավաքվածներին, հորդորել է պայքարել, զինվել ձեռքի տակ եղած ցանկացած առարկայով, պայքարել ամեն գնով՝ ընդհուպ շենքերի հրկիզումների միջոցով:

Արդյունքում 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Մյանմարիկյանի արձանի և Երևանի քաղաքապետարանի հարակից տարածքում, Երևանի Գր.Լուսավորիչ, Մ.Մաշտոց, Լեռ և Հ.Պարոնյան փողոցներում հրազեն, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր և սարքեր գործադրելով կատարվել են զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում զինված դիմադրություն է ցույց տրվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին, ՀՀ ոստիկանության զորքերի զինծառայողներին, տարբեր ծանրության աստիճանների մարմնական վնասվածքներ են ստացել 187 ՀՀ Ոստիկանության զորքերի զինծառայող ու ոստիկանության աշխատակից, 32 քաղաքացիական անձ, ջարդերի գույքի դիտարկության ռեզուլտատն, վնասելու և թալանելու հետևանքով ՀՀ ոստիկանությանը պատճառվել է 25.980.093 ՀՀ դրամի վնաս, Երևան քաղաքին և Կենտրոն թաղային համայնքին 69.288.760 ՀՀ դրամի վնաս, իրավաբանական անձանց 339.954.866 ՀՀ դրամի վնաս, հրկիզվել և վնասվել է 92 տրանսպորտային միջոց, որի հետևանքով ՀՀ ոստիկանությանը, քաղաքացիներին և ուղևորափոխադրող ընկերություններին պատճառվել է ընդհանուր առմամբ 70.854.525 ՀՀ դրամի վնաս:

Տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում սրացած մարմնական վնասվածքներից մահացել է 10 անձ:

*Ջինված հարձակումներ և զանգվածային անկարգությունները դադարել են միայն արտակարգ դրություն հայտարարելուց և իրավապահների կողմից դրանք կանխելուց հետո (...)*⁵⁰⁷:

7. Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, պաշտպանության կողմը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկաներ հարցաքննել Ռազմիկ Պետրոսյանին, Գևորգ Գևորգյանին, Հռիփսիմե Ադամյանին, Վահագն Մովսիսյանին, Հրաչ Ալոյանին, Ալեքսան Ավետիսյանին, Մյանսիկ Հովհաննիսյանին, Վահան Կայսերյանին, Սամվել Վարդանյանին⁵⁰⁸, ինչը դատարանի կողմից մերժվել է⁵⁰⁹:

7.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճռով ապացուցված է համարվել, որ Մ.Մալխասյանը կազմակերպել է զանգվածային անկարգություններ, որոնք ուղեկցվել են բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով, վնասելով, հրագն, պայթուցիկ նյութեր և պայթուցիկ սարքեր գործադրելով և իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով⁵¹⁰:

7.2. Առաջին ատյանի դատարանն իր կողմից հաստատված հանգամանքների հիմքում դրել է. վկաներ՝ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության աշխատակիցներ՝ Մելիք Արզումանյանի, Ալբերտ Հարությունյանի, ԵԿՄ վարչության հերթապահներ՝ Արայիկ և Գուրգեն Հարությունյանների, վկաներ՝ Գրիգոր Եղիազարյանի, Վարդգես Թադևոսյանի, Կարեն Համբարձումյանի, Հենրիկ Հարթենյանի, Հմայակ Գալստյանի, Գագիկ Ավդալյանի նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, Մ.Մալխասյանին բերման և անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրությունները, ապացույց ճանաչված և քրեական գործի նյութերին կցված՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգություններից հատվածներ պատկերող լազերային տեսասկավառակները, դրանք վերարտադրելու և զննելու վերաբերյալ կազմված արձանագրությունները, տեսաձայնագրային փորձաքննության թիվ 17250901 եզրակացությունը, դեպքի վայրի զննության արձանագրությունները, դրանց կից լուսանկարչական հավելվածները, սառը զենքի փորձաքննությունների թիվ 633 և 492 եզրակացությունները, դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 07050803 եզրակացությունը, դատահետքաբանական, հրդեհատեխնիկական, ձգաբանական և սպրանքագիտական համալիր փորձաքննությունները, եզրակացությունները, դեպքի վայրից

⁵⁰⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 173-330:

⁵⁰⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 8, թերթեր 305-306:

⁵⁰⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8, դատական նիստի լազերային սկավառակը, դատական նիստի արձանագրությունը, թերթեր 312-314:

⁵¹⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 8, թերթեր 359-362:

անգրավված իրերի գննության արձանագրությունը, նյութագիտական փորձաքննության թիվ 08-0142, սառը զենքի փորձաքննության թիվ 479, դատապայայտումատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 07100803, դատաձգաբանական, դատապայայտումատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 357 եզրակացությունները, պայայտումատեխնիկական փորձաքննության թիվ 12960803 եզրակացությունը, դատաձգաբանական, դատապայայտումատեխնիկական և դատահետքաբանական համալիր փորձաքննությունների եզրակացությունները, դատաձգաբանական, դատահետքաբանական և պայայտումատեխնիկական համալիր փորձաքննությունների եզրակացությունները, դատաձգաբանական, դատապայայտումատեխնիկական և դատահետքաբանական համալիր փորձաքննության թիվ 09220803 և 09320802 եզրակացությունները, դատաձգաբանական և դատահետքաբանական համալիր փորձաքննության թիվ 09310802 եզրակացությունը, դատաձգաբանական, դատահետքաբանական և դատապայայտումատեխնիկական համալիր փորձաքննության թիվ 09410802, 09320802, 09400802 եզրակացությունները, իրեղեն ապացույց՝ պաշտպանիչ միջոցների գննության արձանագրությունները և քրեական գործի այլ նյութերը⁵¹¹:

8. Վերաքննիչ դատարանը, Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը թողնելով անփոփոխ, 2009 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ արձանագրել է, «(...) Վերաքննիչ դատարանը, գործով ձեռք բերված ապացույցները ենթարկելով բազմակողմանի և օբյեկտիվ արուզման՝ յուրաքանչյուր ապացույցի վերլուծության, դրանք այլ ապացույցների հետ համադրելու և ապացույցների ձեռք բերման աղբյուրներն արուզելու միջոցով, հանգում է այն հետևության, որ հանցանք գործելու մեջ Մյասնիկ Մայիսայանի մեղավորությունը հաստատվել է գործին վերաբերվող փոխկապակցված հավասարի ապացույցների բավարար ամբողջությամբ, ձեռք բերված ապացույցներով ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը հիմնավորված է:

(...)

Վերաքննիչ դատարանը, գործում եղած ապացույցներով վերանայելով Մ.Մայիսայանի նկարմամբ առաջին աստիճանի դատարանի դատավճիռը, հանգում է այն հետևության, որ գործով նյութական կամ դատավարական իրավունքի խախտումներ թույլ չեն տրվել, դատարանի կողմից թույլ չի տրվել դատական սխալ, որը հիմք կարող է հանդիսանալ դատավճիռը բեկանելու կամ փոփոխելու համար, հետևաբար պաշտպաններ Ռ.Գրիգորյանի և Հ.Արսենյանի վերաքննիչ բողոքները պետք է մերժել՝ դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ (...)»⁵¹²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

⁵¹¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 362-365:

⁵¹² Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 68-92:

9. Բողոքքեր անձնընդդեմ, որոնք են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Մասնավորապես, թույլ են տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա), ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մի շարք նորմերի խախտումներ: Ըստ բողոքաբերի՝ խախտվել են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածները: Նշված հոդվածների պահանջները խախտվել են ինչպես 2008 թվականի մարտի 1-ին խաղաղ հանրահավաքի հարկադիր դադարեցմամբ, այնպես էլ այն դադարեցնելուց առաջ և հետո դրան մասնակցած անձանց նկատմամբ ապօրինի քրեական հետապնդումներ հարուցելով: Գործի վարույթի կարճման համար հիմքերի առկայության պայմաններում Առաջին ատյանի դատարանը չի կարճել վարույթը, կայացրել է մեղադրական դատավճիռ, իսկ Վերաքննիչ դատարանն այն թողել է օրինական ուժի մեջ:

Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված, ինչպես նաև դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով հիմնավորվել է, որ Մ.Մալխասյանի գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը: Եթե դատարանը նույնիսկ հիմնավորված է համարել այն հանգամանքը, որ 2008 թվականի մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի շրջակա տարածքում հավաքված տասնյակ հազարավոր մարդկանց որոշ մասը մոտակա շինհրապարակից փայտյա, մետաղյա կոնստրուկցիաներ են պոկել, տրանսպորտային միջոցներ են տեղաշարժել, շրջել, դրանցով բարիկադներ կառուցել, միայն այն հանգամանքը, որ հանրահավաքին գտնվողներից ոմանք բռնություն են գործադրել իշխանության ներկայացուցիչների նկատմամբ, դեռևս չի նշանակում, որ կատարվածը մեխանիկորեն կարելի է որակել իբրև զանգվածային անկարգություններ: Մինչդեռ սույն քրեական գործով հետազոտված նյութերով հիմնավորված է հակառակը:

Ըստ բողոքաբերի՝ Մ.Մալխասյանը չէր կարող կազմակերպել զանգվածային անկարգություններ, քանի որ նա չի հանդիսացել անգամ Երևանում օրեր շարունակ տեղի ունեցող հանրահավաքների կազմակերպիչ, նա որևէ գործողություն չի ձեռնարկել անգամ ցուցարարների կողմից ոստիկանների ապօրինի հարձակումներից պաշտպանության կազմակերպման ուղղությամբ: Դատավճռից հստակ չի երևում, մեղսագրված արարքը գնահատվել է որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, թե կազմակերպված խմբի կողմից կատարված, թե յուրաքանչյուր ոք այն առանձին-առանձին է կազմակերպել:

Բողոքաբերը նշել է նաև, որ դատաքննության ընթացքում հարցաքննված վկաների, ինչպես նաև մնացած վկաների նախաքննության ընթացքում տված, դատարանում հրապարակված ցուցմունքների, ինչպես նաև հետազոտված այլ ապացույցների ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Մալխասյանը որևէ մեկի չի խնդրել, չի պարտադրել, հանձնարարել կամ համոզել իրականացնել բռնություններ, ջարդեր, հրկիզումներ կամ այլ գործողություններ, որոնք հնարավոր է գնահատել որպես զանգվածային անկարգություններ: Մ.Մալխասյանը չի կատարել նաև որևէ գործողություն, որը կարող էր նպաստել դրանց կատարմանը: Ըստ բողոքաբերի՝ 2008 թվականի մարտի 1-ին Մ.Մալխասյանը Մյասնիկյանի արձանին հարող տարածք է եղել այն ժամանակ, երբ ցուցարարների կողմից արդեն կառուցված են եղել բարիկաղներ, պաշտպանության նպատակով մոտակա շինհրապարակից պոկված են եղել տարբեր առարկաներ: Այսինքն, Մ.Մալխասյանը որպես «կազմակերպիչ» ներկայացվող անձ անտեղյակ է եղել, թե որտեղ է հավաքվել ժողովուրդը և որտեղ պետք է տեղի ունենա հանրահավաքը:

Բողոքաբերը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի կողմից գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված հետևությունները չեն համապատասխանում հետազոտված ապացույցներին: Մասնավորապես բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը Մ.Մալխասյանի մեղքը՝ զանգվածային անկարգություններ կազմակերպելու մեջ ապացուցված է համարել վկաներ՝ Գրիգոր Եղիազարյանի, Մկրտիչ Արմենակյանի, Վարդգես Թադևոսյանի, Կարեն Համբարձումյանի, Արայիկ և Գուրգեն Հարությունյանների, Մելիք Արզումանյանի և Ալբերտ Հարությունյանի ցուցմունքներով: Սակայն, ըստ բողոքաբերի՝ հիշյալ վկաների ցուցմունքների՝ դատավճռում ներկայացված հատվածների վերլուծությունն անգամ հիմնավորում է, որ անգամ այդ կեղծ ու շինծու ապացույցներով Մ.Մալխասյանը որևէ քրեորեն պատժելի արարք չի կատարել:

Բողոքաբերը փաստել է նաև, որ Առաջին ատյանի դատարանում որպես վկաներ հարցաքննվել են նաև Հենրիկ Հարթենյանը, Հմայակ Գալստյանը և Գագիկ Ավդալյանը, որոնք հրաժարվելով իրենց նախաքննական ցուցմունքներից, դատարանին ներկայացրել են, որ դրանք իրենցից կորզվել են բռնության և ծեծի արդյունքում: Հիշյալ վկաները դատարանում հարցաքննվելով տվել են ճշմարտացի՝ Մ.Մալխասյանին արդարացնող ցուցմունքներ: Սակայն դատարանը, հիշյալ անձանց նախաքննական ցուցմունքների օգտագործումը որպես ապացույց ճանաչելով անթույլատրելի, չի գնահատել նաև նրանց դատաքննական ցուցմունքները:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Մ.Մալխասյանի վերաբերյալ կայացված դատավճռի հիմքում դրվել են մի շարք ապացույցներ, որոնք չէին կարող օգտագործվել որպես այդպիսին և դրվել մեղադրանքի հիմքում: Մասնավորապես, դատաքննությամբ հրապարակված դեպքի վայրի զննության արձանագրությունները կազմված են քրեական դատավարության օրենսգրքի պահանջների և զննության կատարման կարգի կոպիտ և էական

խախտումներով: Դատարանը խախտել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, այն է՝ Առաջին ատյանի դատարանն անհիմն կերպով մերժել է պաշտպանական կողմի միջնորդությունները՝ դատարան հրավիրել և հարցաքննել վկաների, որոնց ցուցմունքները էական նշանակություն կունենային առաջադրված մեղադրանքը հերքելու և Մ.Մալխասյանի անմեղությունը հաստատելու համար:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը, առաջադրված մեղադրանքում Մյանսիկ Մալխասյանին արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե սուկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գրել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կասկածիցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ փյայ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն

կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական սխալները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ⁵¹³:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, «հիմնարար խախտում» հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության Բացատրական զեկույցի 31-րդ կետում ընդգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատապարտված անձի, և դատարանի ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատապարտյալի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախ և առաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «ազդեն գործի ելքի վրա»՝ կամ հոգուտ անձի, կամ հակառակը⁵¹⁴:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող դատապարտության և որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրեքի անձի վիճակի վարթարացում»:

12.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատարանի քննության ընթացքում թույլ են տրվել

⁵¹³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

⁵¹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

նյութական կամ դատարավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

12.3. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Մարգարյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատարավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատարավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատարարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակազրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»⁵¹⁵:

12.4. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՌ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճատահերևանքային կասյի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատասպարելուն, նրա նկարումը արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից բուծած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճատված վնասը հարուցելուն: Այսինքն առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսնմացի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել է դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատասպարարվել է այնպիսի արարքի համար, որը արացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»⁵¹⁶:

13. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիր ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

⁵¹⁵ Տես Վճռաբեկ դատարանի՝ Մկրտիչ Մարգարյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

⁵¹⁶ Տես ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ուր ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...):»

13.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանս ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով⁵¹⁷ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ⁵¹⁸,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»⁵¹⁹,

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում

⁵¹⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelian v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

⁵¹⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետերը, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետերը:

⁵¹⁹ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետերը:

կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին⁵²⁰,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն⁵²¹,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին: Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին⁵²²,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները⁵²³:

⁵²⁰ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետը, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետը, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետը:

⁵²¹ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topic v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետը:

⁵²² Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետը:

⁵²³ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետը, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, 83-րդ կետը, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ

13.2. Միևնույն ժամանակ, անդրադառնալով նկարագրված իրադարձություններին, դրանց հիմքում դրված ապացույցների ամբողջությանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռով արձանագրել է նաև, որ՝

ա) առկա չեն բավարար և համոզիչ ապացույցներ, որոնք թույլ կտան եզրակացնել, որ Ազատության հրապարակում տեղի ունեցած հավաքի կազմակերպիչները և մասնակիցները, բռնի մտադրություններ են ունեցել, և որ տվյալ հավաքը խաղաղ չի եղել⁵²⁴,

բ) առանց բավարար հիմնավորման և ակնհայտորեն առանց ցրելու մասին նախազգուշացման, ինչպես նաև չհիմնավորված և չափից ավելի ուժի օգտագործմամբ Ազատության հրապարակի հավաքը ցրելն անհամաչափ միջոց է եղել, որը իշխանությունների կողմից հավաքների ազատությունը սահմանափակելիս անցել է ողջամտության սահմանները⁵²⁵,

գ) դիմումատուների դատապարտումը կապված է եղել նրանց ընդդիմության կողմից ղեկավարվող բողոքի շարժմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերելու հետ: Հետևաբար, դատարանը ենթադրել է, որ փաստերի ամբողջությունը, որոնց վրա հիմնված էին վերջիններիս քրեական հետապնդումը և դատապարտումը, վիճելի հիմքերով կարող են համարվել որպես իրենց՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի նկատմամբ «միջամտություն»⁵²⁶,

դ) խաղաղ հավաքների ազատությանը վիճարկվող միջամտությունը կարող էր որակվել որպես ակնհայտ կամայական և համապատասխանաբար՝ անօրինական, Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի նպատակների համար⁵²⁷:

14. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Մ.Մալխասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով և 38-316 հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա և մյուսները տարբեր միջոցներով՝ իրենց շրջապատի նկատմամբ անձնական և ծառայողական ազդեցություն գործադրելով, հարկադրելով, խոստումների և որոշակի վարձատրության դիմաց հավաքագրելով մարդկանց հոծ բազմություն, վերջիններիս ներգրավել են 2008 թվականի փետրվարի

թիվ 74568/12, 165-րդ կետը:

⁵²⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelian v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 233:

⁵²⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelian v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 248:

⁵²⁶ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smbat Ayvazyan v. Armenia* գործով 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 49021/08, կետ 129, *Jhangiryan v. Armenia* գործով 2020 թվականի հոկտեմբերի 8-ի վճիռը, գանգատներ 44841/08 և 63701/09, կետ 123, *Mushegh Saghatelian v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, կետ 234:

⁵²⁷ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smbat Ayvazyan v. Armenia* գործով վճիռը, կետ 132, *Jhangiryan v. Armenia* գործով վճիռը, կետ 126, ինչպես նաև *Hakobyan and Others v. Armenia* գործով 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 34320/04, կետ 107:

20-ից Երևան քաղաքում անցկացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին, որտեղ հավաքված բազմությանը տրամադրել, նախապատրաստել են անհնազանդության և զանգվածային բռնարարքների, որոնց արդյունքում, սկզբում՝ 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան, Ազատության հրապարակում, բազմության մի ստվար զանգված, հանրավտանգ պարագաների օգտագործմամբ դիմադրություն է ցույց տվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրել վերջիններիս նկատմամբ, իսկ այնուհետև Մ.Մալխասյանի և այլոց կողմից հավաքագրված այլ անձանց միջոցով ներգրավել են նոր մարդկանց, ամբոխի առավել ագրեսիվ զանգվածին բաժանել զենք, և այլ առարկաներ, և 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Մյասնիկյանի արձանի և Երևանի քաղաքապետարանի հարակից տարածքում ու Երևան քաղաքի տարբեր վայրերում հրագեն, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր և սարքեր գործադրելով կատարվել են զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում զինված դիմադրություն է ցույց տրվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին⁵²⁸,

- Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում պաշտպանության կողմը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկաներ հարցաքննել Ռազմիկ Պետրոսյանին, Գևորգ Գևորգյանին, Հռիփսիմե Ադամյանին, Վահագն Մովսիսյանին, Հրաչ Ալոյանին, Ալեքսան Ավետիսյանին, Մյասնիկ Հովհաննիսյանին, Վահան Կայսերյանին, Սամվել Վարդանյանին, ինչը դատարանի կողմից մերժվել է⁵²⁹: Առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հունիսի 22-ի դատավճռով ապացուցված է համարել, որ Մ.Մալխասյանը կազմակերպել է զանգվածային անկարգություններ, որոնք ուղեկցվել են բռնությամբ, ջարդերով, հրկիզումներով, գույք ոչնչացնելով, վնասելով, հրագեն, պայթուցիկ նյութեր և պայթուցիկ սարքեր գործադրելով և իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով⁵³⁰,

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դատական ակտում նշել է, որ քրեական գործի քննության նախորդ փուլերի ընթացքում նյութական և դատավարական նորմերի էական խախտումներ թույլ չեն տրվել⁵³¹:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռարենկ

⁵²⁸ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁵²⁹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁵³⁰ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

⁵³¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

դատարանը նախնառաջ անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ստորադաս դատարանները, Մ.Մալխասյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվել են ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա: Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ստորադաս դատարանները Մ.Մալխասյանի մեղքը հիմնավորող ապացուցողական գամբյուղում ծանրակշիռ դեր են հատկացրել ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ այն դեպքում, երբ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում: Մասնավորապես, սույն գործով ստորադաս դատարանների կողմից հետազոտված փաստական տվյալների ծավալի՝ ուղղակի և անուղղակի ապացույցների ամբողջության համալիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Մ.Մալխասյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակիցների՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներն են:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Մ.Մալխասյանին մեղազգրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, պաշտպանության կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Այսինքն՝ բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ պաշտպանության կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ, ընդունելի են Վճռաբեկ դատարանի համար, քանի որ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու վկաներ Ռազմիկ Պետրոսյանին, Գևորգ Գևորգյանին, Հռիփսիմե Ադամյանին, Վահագն Մովսիսյանին, Հրաչ Ալոյանին, Ալեքսան Ավետիսյանին, Մյասնիկ Հովհաննիսյանին, Վահան Կայսերյանին, Մամվել Վարդանյանին և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք կարող էին կասկածի տակ դնել ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն ու հիմնավորել դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշած վարկածը:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հանգամանքները, *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, առերևույթ ստվերում են գործով ձեռքբերված ապացուցողական գամբյուղի լիարժեքությունն ու վկայում Մ.Մալխասյանի՝ Եվրոպական

կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքների խախտման մասին:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալի համատեքստում սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի իրավական ռեժիմով վճռաբեկ բողոքը քննության առնելու պայմաններում, չի անդրադառնում 2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ՝ ապացուցողական զամբյուղում ներառված փաստական տվյալների վերաբերյալ արդեն իսկ տրված գնահատականներին:

16. Վերոգրյալի հաշվառմամբ, անդրադառնալով սույն գործով Մ.Մալխասյանին առաջադրված մեղադրանքում նկարագրված իրադարձություններին, դրանց հիմքում դրված ապացույցների ամբողջությանը, սույն որոշման 13.2-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ մի կողմից՝ նկատի ունենալով, որ Մ.Մալխասյանին մեղադրանք է առաջադրված եղել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով՝ այդ թվում՝ 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան Ազատության հրապարակում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների առնչությամբ, որոնց վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել *Մոշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* վճռով, մյուս կողմից՝ հաշվի առնելով այդ մեղադրանքի հաստատման համար սույն գործով ստորադաս դատարանների կողմից հետազոտված փաստական տվյալների ծավալը, այդ թվում՝ անուղղակի ապացույցների ամբողջությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թույլ տրված խախտումները վերացնելու, ապացույցները ողջ ծավալով համակողմանի հետազոտման ենթարկելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

17. Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա Մյասնիկ Ժորայի Մալխասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը բեկանելու և գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական

դատարանի ձևավորած մոտեցումների և սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է գնահատման ենթարկի գործով ձեռքբերված ապացույցների ծավալը, այդ թվում՝ անդրադառնալով նաև դրանց հետ փոխկապակցված՝ սույն որոշման 9-րդ կետում նշված բողոքաբերի փաստարկներին և գործի լուծման համար Մյասնիկ Մալխասյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցների բավարարության հարցում հանգի վերջնական հետևություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ, հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մյասնիկ Ժորայի Մալխասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 22-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 31-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

33.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ/0069/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորները</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հուլիսի 9-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Անտոն Արարատի Օթարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 8-ի և նույն թվականի հունիսի 1-ի որոշումների դեմ փաստաթան Ա.Զաքարյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ Լոռու կայագործի զինվորական դատախազության դատախազ Վ.Եզեկյանի՝ 2019 թվականի մայիսի 16-ի որոշմամբ հարուցվել է թիվ 90405519 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ Անտոն Օթարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով:

2019 թվականի հունիսի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռով Ա.Օթարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) ամիս ժամկետով:

3. Վերոնշյալ դատավճռի դեմ փաստաբան Ա.Զաքարյանը բերել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2020 թվականի հունվարի 8-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունք չունեցող անձի կողմից ներկայացված լինելու պատճառաբանությամբ:

4. 2020 թվականի ապրիլի 13-ին փոստային ծառայությանը հանձնելու միջոցով նույն դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել նաև ամբաստանյալ Ա.Օթարյանը՝ միաժամանակ միջնորդելով հարգելի ճանաչել վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը՝ կից ներկայացնելով Առաջին ատյանի դատարան ներկայացված՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդության օրինակը: Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշմամբ Ա.Օթարյանի միջնորդությունը մերժվել է, իսկ վերաքննիչ բողոքը՝ թողնվել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 8-ի և նույն թվականի հունիսի 1-ի որոշումների դեմ փաստաբան Ա.Զաքարյանը բերել է վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ համապատասխանաբար 2020 թվականի մայիսի 18-ի և նույն թվականի հոկտեմբերի 5-ի որոշումներով վարույթ են ընդունվել: Մինևնույն ժամանակ նկատի ունենալով, որ այդ երկու գործերը վերաբերում են նույն անձին և նույն հանգամանքներին, դատական գործերը 2021 թվականի հունիսի 21-ին միացվել են մեկ վարույթում՝ թիվ ՏԴ/0069/01/19 համարի տակ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 28-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքների կապակցությամբ դատավարության մասնակիցների կողմից պատասխաններ չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռի դեմ փաստաբան Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 8-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ արձանագրելով հետևյալը. «(...) *Թրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Առաջին ատյանի դատարանում ամբաստանյալ Անրոն Արարատի Օթարյանը չի ունեցել պաշտպան:*

Սույն քրեական գործով Դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել Արա Զաքարյանը՝ որպես ամբաստանյալ Անրոն Արարատի Օթարյանի պաշտպան, մինչդեռ քրեական գործի նյութերում, ինչպես նաև վերաքննիչ բողոքին կից առկա

չեն Արա Զաքարյանի որպես ամբաստանյալ Անտոն Արարատի Օթարյանի պաշտպանի իրավավիճակը հասարակող փաստաթղթեր, այդ թվում՝ որպես պաշտպան հանդես գալու՝ ամբաստանյալ Անտոն Արարատի Օթարյանի արորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Արա Զաքարյանն իրավունք չի ունեցել վերաքննիչ բողոք բերել Դատավճի դեմ, որպիսի պայմաններում նրա կողմից բերված վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության: (...)»⁵³²:

7. Ամբաստանյալ Ա.Օթարյանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճի դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը նույն դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ բավարարվել է⁵³³:

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճի դեմ ամբաստանյալ Ա.Օթարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշման համաձայն՝ «(...) [Այն դեպքում, երբ բողոքարկերի կողմից հարակ փաստարկված ու հիմնավորված է, որ դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում իրեն հասանելի չի դարձել դատարանի թերացման արդյունքում, սպա դատական ակտը հասանելի դառնալուն հաջորդող օրվանից մինչև այդ դատական ակտի բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը ներառող ժամանակահատվածում բողոքարկման բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (ex jure) պետք է համարվի հարգելի՝ առանց միջնորդության ձևական պահանջի ու դրա հայեցողական քննարկման: Իսկ այն դեպքում, երբ բաց թողնված ժամկետը գերազանցում է դատական ակտն իրավասու սուբյեկտին հասանելի դառնալուց հետո այդ դատական ակտի բողոքարկման համար օրենքով սահմանված առավելագույն ժամկետը, սպա րվյալ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու համար օրենքով սահմանված ժամկետը վերաքննիչ դատարանը կարող է վերականգնել միայն այն կայացրած արորատյա դատարանի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին իրավասու սուբյեկտի միջնորդությունը մերժելու որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքում:

Տվյալ դեպքում, ամբաստանյալ Անտոն Օթարյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի թիվ ՏԳ/0069/01/19 դատավճիոր գործն ըստ էության լուծող դատական ակտ է, որը վերաքննության կարգով բողոքարկելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Նշված դատական ակտը հրապարակվել է 2019 թվականի նոյեմբերի 11-ին, այն ամբաստանյալ Անտոն Արարատի Օթարյանի հասանելի է դարձել 2019 թվականի նոյեմբերի 21-ին, մինչդեռ վերաքննիչ բողոքը բերվել է (բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել) 2020 թվականի ապրիլի 14-ին: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի դրույթներով սահմանված

⁵³² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 109-111:

⁵³³ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 60-63:

կարգով համապատասխան հաշվարկի սկիզբը դատարանի սկզբը բողոքաբերին հասանելի դառնալուն հաջորդող օրվանից կատարելու պարագայում ևս օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը ամբաստանյալի համար դեռևս 2019 թվականի դեկտեմբերի 22-ի դրությամբ եղել է ավարտված, ուստի վերաքննիչ բողոքը բերվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Անդրոն Արարատի Օթարյանի վերաքննիչ բողոք բերելու ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը ստորագրված չէ, ինչը թեև ֆորմալ առումով հանդիսանում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմք, սակայն այդ ձևական սխալի շրկումը ևս առարկայագուրկ է, քանի որ սույն որոշման 4-րդ կետում արձանագրված պարճատարանությունն ինքնին հիմք չի հանդիսանում դատարանի սկզբի բողոքարկման բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (*ex jure*) վերականգնելու համար: Միևնույն ժամանակ, գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ բողոքի հեղինակը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածով նախատեսված միջնորդությամբ չի դիմել դատարանի սկզբը կայացրած դատարանի բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու համար, և առկա չէ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ վերականգնումը մերժելու մասին որոշում, որի վերաքննության կարգով բողոքարկումը կարող էր հանգեցնել բաց թողնված ժամկետը վերականգնելուն: (...)»⁵³⁴:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Վճռաբեկ բողոքների հեղինակի պնդմամբ Վերաքննիչ դատարանի որոշումները հակասում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ, ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածների պահանջներին:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ պնդումների՝ բողոքաբերը վկայակոչել է ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690, 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՈ-936, 2015 թվականի մարտի 3-ի թիվ ՍԴՈ-1192 և 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ Էդգար Գրիգորյանի գործով 2018 թվականի հունվարի 12-ի թիվ ԵԿԴ/0026/01/17 որոշումները և եզրահանգել, որ Վերաքննիչ դատարանը, կայացնելով բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում, խախտել է իր և ամբաստանյալ Ա.Օթարյանի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

Բողոքներ բերած անձը փաստել է, որ ամբաստանյալ Ա.Օթարյանի պաշտպանը հանդիսանալու վերաբերյալ օրենքով նախատեսված

⁵³⁴ Տե՛ս դատական գործ, հատոր 3-րդ, թերթեր 18-22:

փաստաթղթերը չներկայացնելու հիմքով բողոքն առանց քննության թողնելով, ստորադաս դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, քանզի դրանով անհամաչափորեն զրկել է Ա.Օթաբյանին իր ընտրած պաշտպանի միջոցով իր վերաբերյալ դատավճիռը վերադաս դատական ատյանի կողմից վերանայելու իրավունքից, ինչն իր հերթին հանգեցրել է վերջինիս՝ արդար դատաքննության իրավունքի խախտման, ուստի, Վերաքննիչ դատարանի կողմից գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն, սույն դեպքում, առկա չէ:

Բողոքների հեղինակը նշել է նաև, որ ստորադաս դատարանը ժամկետանց լինելու հիմքով ամբաստանյալի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելով՝ իր տրամադրության տակ չունենալով Առաջին ատյանի դատարանում Ա.Օթաբյանի կողմից նույն դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդության կապակցությամբ նախապատրաստված նյութերը, այդ կերպ թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Բացի այդ, բողոքաբերն ընդգծել է, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում որևէ նորմ, որը դատավարության մասնակցին, Առաջին ատյանի դատարանին պարտավորեցնի ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու միջնորդության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի կայացված որոշումը Վերաքննիչ դատարանին ուղարկելու պարտավորություն, ինչպես նաև առկա չէ որևէ նորմ, որն ուղղակիորեն պարտավորեցնի վերաքննիչ դատարանին Առաջին ատյանի դատարանից պահանջելու համապատասխան որոշում ու նյութեր, ուստի տվյալ հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի հայտնած իրավական դիրքորոշումը կնպաստի իրավունքի զարգացմանը:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոքներ բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 8-ի և նույն թվականի հունիսի 1-ի որոշումները՝ գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորվա՞ծ են արդյոք Վերաքննիչ դատարանի՝ փաստաբան Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ՝ 2020 թվականի հունվարի 8-ի և ամբաստանյալ Ա.Օթաբյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ նույն թվականի հունիսի 1-ի որոշումները:

12. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական արյանի կողմից վերանայման իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությանը սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոչնաստարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»:

Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Նույն կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական արյանի կողմից (...):»:

13. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անձի արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի կապակցությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- «Դատարանի իրավունքը» և մատչելիության իրավունքը բացարձակ չեն: Դրանք կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն դրանով չպետք է սահմանափակվի կամ նվազեցվի անհատին տրամադրված մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը⁵³⁵,

⁵³⁵ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Philis v. Greece* գործով 1991 թվականի օգոստոսի 27-ի վճիռը, գանգատներ թիվ 12750/87, 13780/88, 14003/88, կետ 59, *De Geouffre de la Pradelle v. France* գործով 1992 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 12964/87, կետ 28, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, կետ 229:

- դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրությոթի հիման վրա, որ դատարան դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է Եվրոպական դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումները դատարան դիմելու՝ անձի իրավունքն այն աստիճան չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ դրա արդյունքում խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չհետապնդի, և առկա չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև⁵³⁶:

- կիրառվող սահմանափակումները չպետք է սահմանափակեն կամ նվազեցնեն անհատին տրամադրված մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Ավելին, որևէ սահմանափակում համատեղելի չի լինի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն չի հետապնդում «իրավաչափ նպատակ», և եթե «գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն»⁵³⁷,

14. Դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության՝ կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը՝ որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի՝ վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի,

⁵³⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, կետ 50:

⁵³⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ashindane v. the United Kingdom* գործով 1985 թվականի մայիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 8225/78, կետ 57, *Fayed v. the United Kingdom* գործով 1990 թվականի սեպտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ *I7101/90*, կետ 65, *Markovic and Others v. Italy* գործով 2006 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ *I398/03*, կետ 99:

արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն⁵³⁸:

15. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրել է.

- դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները⁵³⁹,

⁵³⁸ Տե՛ս *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՄԴՌ-690, 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՄԴՌ-936, 2015 թվականի մարտի 3-ի թիվ ՄԴՌ-1192 և 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՄԴՌ-1257 որոշումները:

⁵³⁹ *Արթուր Այվազյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշման 16-րդ կետը:

- անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության կարևորագույն իրավունքների սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է իրավաչափ նպատակ հետապնդի և չպետք է անհամարժեք լինի նշված իրավունքի բուն էությանն ու նշանակությանը: Այլ կերպ՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում պետք է պահպանել կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև արդարացի հավասարակշռություն՝ բացառելով անհամաչափ խիստ միջոցներով հետապնդվող նպատակին հասնելու հնարավորությունը⁵⁴⁰:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

- Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռով Ա.Օթարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) ամիս ժամկետով⁵⁴¹:

- Վերաքննիչ դատարանը 2020 թվականի հունվարի 8-ի որոշմամբ փաստաբան Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ նշելով, որ բողոք է բերել այն անձը, ով չուներ այդ իրավունքը, քանի որ քրեական գործում, ինչպես նաև վերաքննիչ բողոքին կից նյութերում առկա չեն Արա Զաքարյանի՝ որպես ամբաստանյալ Աստոն Օթարյանի պաշտպանի կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, այդ թվում՝ որպես պաշտպան հանդես գալու՝ ամբաստանյալ Ա.Օթարյանի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը⁵⁴²:

- Առաջին ատյանի դատարանը ապրիլի 23-ի որոշմամբ բավարարել է ամբաստանյալ Ա.Օթարյանի կողմից նույն դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը⁵⁴³:

- Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռի դեմ ամբաստանյալ Ա.Օթարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշմամբ արձանագրվել է, որ ամբաստանյալ Ա.Օթարյանի վերաքննիչ բողոք բերելու ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը ստորագրված չէ, իսկ այն վերադարձնելու և ձևական սխալը շտկելու դեպքում անգամ հիմք չի կարող հանդիսանալ դատական ակտի բողոքարկման բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով վերականգնելու համար, բացի այդ՝ բողոքի հեղինակը միջնորդությամբ չի դիմել դատական ակտը կայացրած դատարան՝ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու համար, և առկա չէ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ վերականգնումը

⁵⁴⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Գրիգորյանի* գործով 2018 թվականի հունվարի 12-ի թիվ ԵԿԴ/0026/01/17 որոշման 16-րդ կետը:

⁵⁴¹ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

⁵⁴² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁵⁴³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

մերժելու մասին որոշում, որի վերաքննության կարգով բողոքարկումը կարող էր հանգեցնել բաց թողնված ժամկետը վերականգնելուն⁵⁴⁴:

17. Վերոշարադրյալ փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստաբան Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքը՝ բողոքարկման սուբյեկտ չհանդիսանալու հիմքով առանց քննության թողնելով ստորադաս դատարանը վերջինիս գրկել է ամբաստանյալի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումները վիճարկելու հնարավորությունից, դատական պաշտպանության իրավունքի իրացման սահմանափակումները ձևական բնույթ են կրել, ինչի արդյունքում ստորադաս դատարանում բողոք բերած անձի իրավունքների սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև արդարացի հավասարակշռությունը չի ապահովվել:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը, փաստաբան Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքը 2020 թվականի հունվարի 8-ի որոշմամբ առանց քննության թողնելով, առանց հնարավորություն ընձեռելու վերջինիս ներկայացնելու իր կարգավիճակը հաստատող պատշաճ փաստաթղթերը և բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելով, անհամաչափորեն սահմանափակել է ամբաստանյալի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

18. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստաբան Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, այսինքն՝ ստորադաս դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանի՝ 2020 թվականի հունվարի 8-ի դատական ակտը բեկանելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից փաստաբան Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելով թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

18.1. Մինևույն ժամանակ, անդրադառնալով ժամկետանց լինելու հիմքով՝ ամբաստանյալ Ա.Օթարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշման իրավաչափությանը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ստորադաս դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ ամբաստանյալ Ա.Օթարյանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը նույն դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 23-ի

⁵⁴⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

որոշմամբ բավարարվել է⁵⁴⁵, ուստի իրավական անորոշությունից խուսափելու նպատակով Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշումը նույնպես պետք է բեկանել:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի վերաքննիչ բողոքների հիմքերն ու հիմնավորումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Ամբաստանյալ Անտոն Արարատի Օթարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունվարի 8-ի և նույն թվականի հունիսի 1-ի որոշումները բեկանել ու գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

⁵⁴⁵ Տե՛ս նույն որոշման 7-րդ կետը:

34.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԳ/0065/01/17

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հուլիսի 9-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Հովհաննես Գազիկի Գյաղուկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 11-ի որոշման դեմ պաշտպան Է.Թումասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի փետրվարի 25-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 10-րդ կայագորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 90356016 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մարտի 8-ի որոշմամբ Հովհաննես Գյաղուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 10-րդ կայագորային քննչական բաժնի քննիչ

Վ.Մարգարյանի կողմից Հ.Գյաղուկյանի վերաբերյալ կազմվել է մեղադրական եզրակացություն:

2017 թվականի նոյեմբերի 24-ին Շիրակի կայագործի զինվորական դատախազի տեղակալ Հ.Ավետիսյանի որոշմամբ, կազմված մեղադրական եզրակացությունը չի հաստատվել, և քրեական գործը վերադարձվել է քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու համար:

2017 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 10-րդ կայագործային քննչական բաժնի քննիչ Վ.Մարգարյանի կողմից առարկություն է ներկայացվել քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը չհաստատելու մասին Շիրակի կայագործի զինվորական դատախազի տեղակալ Հ.Ավետիսյանի՝ 2017 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ:

2017 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ Վ.Հարությունյանի որոշմամբ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 10-րդ կայագործային քննչական բաժնի քննիչ Վ.Մարգարյանի առարկությունը ճանաչվել է հիմնավորված և վերացվել է քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը չհաստատելու մասին՝ Շիրակի կայագործի զինվորական դատախազի տեղակալ Հ.Ավետիսյանի՝ 2017 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը:

2017 թվականի դեկտեմբերի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ի դատավճռով Հովհաննես Գյաղուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով: Հ.Գյաղուկյանի նկատմամբ սահմանվել է լրացուցիչ պարտականություն՝ չփոխելու մշտական բնակության վայրը: Հ.Գյաղուկյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Մեղադրող Է.Մանասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի մայիսի 11-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ի դատավճիռը՝ Հ.Գյաղուկյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով բեկանել և փոփոխել է՝ վերացնելով նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ պատժի կրման սկիզբը հաշվելով արգելանքի վերցնելու պահից: Մնացած մասով դատավճիռը թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Է.Թումասյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի հունիսի 29-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Հովհաննես Գագիկի Գյաղուկյանը ծնվել է 1991 թվականի հոկտեմբերի 8-ին⁵⁴⁶:

6. Հ.Գյաղուկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ. «(...) [Նյա, 2015 թվականի ձմեռային զորակոչին ներկայացել է Գյումրիի զինկոմիսարիսար և 2016 թվականի հունվարի 11-ի և 2016 թվականի հունվարի 25-ի ԿԲՀ-ի որոշումներով ճանաչվել է պիտանի զինձառայության սահմանափակումով, սակայն ծառայությունից ազատվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝ խուսափել է ժամկետային զինվորական ծառայության 2015 թվականի ձմեռային զորակոչից:(...)»⁵⁴⁷:

7. 2021 թվականի մայիսի 26-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է պաշտպան Է.Թումասյանի դիմումը, որով վերջինս նշել է, որ «Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից խուսափած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի դրույթների ուժով սույն քրեական գործով վարույթը ենթակա է կարճման, իսկ ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով իրականացվող քրեական հետապնդումը՝ դադարեցման: Հաշվի առնելով, որ լրացել են Հ.Գյաղուկյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները և այդ հիմքով քրեական գործով վարույթը կարճելը և իր պաշտպանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը վերջինիս համար առավել բարենպաստ է, քան համաներման կիրառումը՝ խնդրել է քրեական գործով վարույթը կարճել և Հ.Գյաղուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով⁵⁴⁸:

8. 2021 թվականի հունիսի 8-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի նույնարվանդակ դիմումը, որով վերջինս

⁵⁴⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 4:
⁵⁴⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 47-49:
⁵⁴⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 194-195:

նշել է, որ «Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից խուսափած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի դրույթների ուժով սույն քրեական գործով վարույթը ենթակա է կարճման, իսկ իր նկատմամբ քրեական հետապնդումը՝ դադարեցման՝ միաժամանակ միջնորդելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի և քրեական գործով վարույթը կարճվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով⁵⁴⁹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը Հ.Գյաղուկյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ:

Բողոքի հեղինակը պնդել է, որ ստորադաս դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հիմքում դրել է բացառապես ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, ուշադրության չի արժանացրել վերջինիս առողջական խնդիրների առկայությունը:

Բողոքը բերած անընդհատ արկել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, հետևաբար՝ միայն այն հանգամանքը, թե ինչ հանցագործության կատարման մեջ է մեղադրվում անձը, չի կարող հիմք հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու համար, ինչն էլ սույն դեպքում թույլ է տրվել ստորադաս դատարանի դատական ակտով:

Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ ամբաստանյալը Վերաքննիչ քրեական դատարանի որոշումից հետո հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ: Մասնավորապես, Հ.Գյաղուկյանը 2020 թվականի մայիսի 14-ից հաշվառման մեջ է գտնվում «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունում՝ «Շիզոֆրենիայի փսիխոզ, դեպրեսիվ տիպ, սուր փսիխոմոտոր գրգռվածություն, սուիցիդալ մտքեր» ախտորոշմամբ, ինչն էլ հավանական է դարձնում Հ.Գյաղուկյանին իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված լինելը, ինչի վերաբերյալ էլ հաստատական եզրահանգման կարելի է գալ դատահոգեբուժական փորձաքննության անցկացմամբ, ուստի անհրաժեշտ է նշանակել դատահոգեբուժական

⁵⁴⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 198:

փորձաքննություն՝ հիշյալ հանգամանքը և ամբաստանյալի մեղսունակության հարցը որոշելու համար, հետևաբար անհրաժեշտ է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, որի ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է նշանակի վերը նշված փորձաքննությունը՝ հիշյալ հարցերը պարզելու համար, որից հետո նոր միայն հնարավոր կլինի անդրադառնալ ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելու և այն կրելու հարցերին:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 11-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ի դատավճիռին, կամ գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբերի կողմից ըստ էության բարձրացվել է ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի, կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառելիության հարցը: Սակայն, հիմք ընդունելով ամբաստանյալի համաձայնությունն իր նկատմամբ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական հետապնդումը դադարացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին, ինչպես նաև սույն քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող՝ համաներման ընդունման հիմքի առերևույթ առկայության հանգամանքը, և դատական վերանայման սահմաններով կաշկանդված չլինելու հիմքերի վերաբերյալ *Միսիթար Էլոյանի և այլոց* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները⁵⁵⁰՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է դուրս գալ վճռաբեկ բողոքարկման սահմաններից:

11.1. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝
«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները, (...)

5. Դատարանը, հայրենաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը (...):»:

⁵⁵⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Միսիթար Էլոյանի և մյուսների* վերաբերյալ գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից. (...)

(...) 2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելու, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին արարքը կատարելու պահից:

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիրաւորութայանը կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև անզոչությանը կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը (...):»:*

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Այդ հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արամ Սարգսյանի* գործով որոշմամբ, արձանագրելով՝ *«(...) [Թ]եև [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հերևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, սպա գործի վարույթը ենթակա է կարճման»⁵⁵¹:*

14. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել,

⁵⁵¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Սարգսյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը:

իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում⁵⁵²:

15. Վերոգրյալի հիման վրա, անդրադառնալով վաղեմության ժամկետն անցնելու հիմքով ամբաստանյալ Հ.Գյաղուկյանին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝ պարտվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրվում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքը միջին ծանրության դիտավորյալ հանցագործություն է: Հետևաբար այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարվելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է հինգ տարի:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում զինապարտության վերաբերյալ հարաբերությունները կանոնակարգող՝ *«Զինապարտության մասին»* օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան (բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի) արական սեռի զորակոչիկները և մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պարճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի խաղաղ պայմաններում: (...):»:*

Նույն օրենքի 12-րդ հոդվածով սպառիչ ցանկով նախատեսված են այն օրենսդրական հիմքերը, որոնց ուժով անձն ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

15.1 Վերը շարադրվածի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված

⁵⁵² ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի մանրամասն վերլուծությունը տես, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ասահիկ Մաղաթեյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԳ5/0022/01/10, *Միրսա Ղամբարյանի* և *այլոց* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, *Հրանտ Մազմանյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումներում:

հանցագործությունը համարվում է տևող հանցագործություն և դրա կատարման տևականությունը պայմանավորվում է անձի՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորահավաքային զորակոչից խուսափելով՝ քանի դեռ պիտանի է դրանց համար: Այսինքն՝ ՀՀ զինապարտության մասին օրենքի 12-րդ հոդվածի հիմքերի բացակայության դեպքում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից խուսափելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործության վաղեմության ժամկետները սկսվում են հաշվարկվել անձի 27 տարեկանը լրանալուց հետո, եթե առկա չեն ավելի վաղ ժամանակահատվածում թվարկված ծառայությունների համար ոչ պիտանի դառնալու օրենսդրական հիմքերը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Հ.Գյաղուկյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝ խուսափել է ժամկետային զինվորական ծառայության 2015 թվականի ձմեռային զորակոչից⁵⁵³, ինչն էլ հաստատված է համարվել ստորադաս դատարանների դատական ակտերում⁵⁵⁴:

Մինևսույն ժամանակ, քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Գյաղուկյանը ծնվել է 1991 թվականի հոկտեմբերի 8-ին⁵⁵⁵, և մինչ վերջինիս 27 տարին լրանալը, նա ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որևէ հիմքով ոչ պիտանի չի համարվել ժամկետային զինվորական ծառայության անցնելու համար:

Այսինքն, հարկ է փաստել, որ մինչ 2018 թվականի ամառային զորակոչը ներառյալ վերջինս եղել է զինապարտ, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն ավարտվել, հետևաբար վաղեմության ժամկետի հոսքը սկսվել է 2018 թվականի ամառային զորակոչից հետո⁵⁵⁶:

17. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15.1-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և արտահայտված դիրքորոշումների վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Գյաղուկյանին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված

⁵⁵³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁵⁵⁴ Տե՛ս սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերը:

⁵⁵⁵ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁵⁵⁶ «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2018 թվականի ամառային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» ՀՀ Կառավարության՝ 2018 թվականի մայիսի 3-ի՝ N 536-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ հայտարարվել է 2018 թվականի մայիս-հուլիս ամիսներին շարքային կազմի պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչը: (Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=122436> էլեկտրոնային հասցեով):

հանցագործությունն ավարտվել է 2018 թվականի հուլիսի 31-ին, երբ ավարտվել է վերջինիս մինչև 27 տարեկանը լրանալն անցկացված վերջին գորակոչը⁵⁵⁷:

Հետևաբար, ՀԳյադուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի կանոններով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը կլրանա 2023 թվականի հուլիսի 31-ին, հաշվի առնելով, որ այն միջին ծանրության հանցագործություն է:

18. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հովհաննես Գյադուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած չեն, ուստի վերջինիս և պաշտպանի միջնորդությունները՝ այդ հիմքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ, հիմնավոր չեն:

19. Միննույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պաշտպանության կողմը պնդել է, որ ամբաստանյալի նկատմամբ կիրառելի են «Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից խուսափած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու մասին» օրենքի (այսուհետև՝ նաև Համաներման մասին օրենք) դրույթները, ուստի Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ տվյալ հիմքով սույն քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայության հարցին:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

13) ընդունվել է համաներման մասին օրենք:

(...)

5. Դատարանը, հայրնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը:

6. Սույն հոդվածի առաջին մասի (...) 13-րդ [կետում նշված հիմքով] գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

Համաներման մասին օրենքի⁵⁵⁸ 1-ին հոդվածի համաձայն՝ *«1. Սույն օրենքը կարգավորում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 27 տարին լրացած շարքային և 35 տարին լրացած պահեստագործի սպայական կազմերի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափած և Հայաստանի*

⁵⁵⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁵⁵⁸ Ընդունվել է 2021 թվականի մայիսի 6-ին, ստել ուժի մեջ՝ 2021 թվականի մայիսի 19-ին:

Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով սահմանված՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից խուսափելու հանցանք կատարելու մեջ կասկածվող, մեղադրվող կամ այդ հանցանքը կատարելու համար դատապարտված արական սեռի քաղաքացիների (այսուհետ՝ անձանց) նկատմամբ համաներում հայտարարելու հետ կապված հարաբերությունները (...):»:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Համաներում հայտարարելով՝ քրեական գործի հարուցումը մերժել, հարուցված քրեական գործի վարույթը կարճել, ինչպես նաև չիրականացնել քրեական հետապնդում կամ դադարեցնել քրեական հետապնդումն այն անձանց նկատմամբ, որոնք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով:

2. Սույն հոդվածի 1-ին մասը կիրառվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների պահպանմամբ:

(...):»:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «3) Սույն օրենքի կատարումը վերապահել՝

(...)

3) Վճռաբեկ դատարանին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերով վճռաբեկ բողոքներն ընդունվել են Վճռաբեկ դատարանի վարույթ. (...):»:

21. Համաներման մասին օրենքի ընդունման որպես քրեական հետապնդումը բացառող հանգամանքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը Թադևոս Փերոգյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Հ] ամաններման ակտի ընդունումը քրեական դատավարության ցանկացած փուլում բացառում է քրեական գործի վարույթը: Համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի վերոնշյալ պարտականությունը, սակայն, որոշակի վերապահում ունի, մասնավորապես՝ համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի վարույթը ենթակա է կարճման այն դեպքում, երբ մեղադրյալը դրա դեմ չի առարկում:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, (...) որ համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործ չհարուցելու, քրեական հետապնդում չիրականացնելու և հարուցված քրեական գործը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի լիազորության իրականացման համար անհրաժեշտ իմպերատիվ պահանջ է հանդիսանում անձի համաձայնությունը: Համաներման ակտի կիրառման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու դեպքում անձի համաձայնությունը հանդիսանում է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք և կապված է բացառապես իր նկատմամբ համաներման ակտ կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ անձի ցանկության հետ: Հետևաբար, համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն ենթադրում է, որ վերջինս յուրաքանչյուր դեպքում պարտավոր է քննարկման

առարկա դարձնել համաներման ակտի կիրառման հարցը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ ամբաստանյալը համաձայն չէ համաներման ակտի կիրառման հետ, պարտավոր է բացատրել դրա կիրառումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ իր նկատմամբ համաներման ակտի կիրառման դեպքում անձի համաձայնությունը վերաբերում է բացառապես նշված ակտի կիրառմանը, և դրա բացակայության դեպքում գործի վարույթը շարունակվում է ընդհանուր կանոններով՝ հնարավորություն տալով անձին հասնելու ամբողջական «ռեաբիլիտացիայի»: Հեյրեսարս, Համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի վարույթի կարճման հնարավորության դեպքում որևէ այլ, այդ թվում՝ անձի կողմից հանցանք կատարելն ընդունելու կամ չընդունելու հիմքով համաներման ակտի չկիրառումը հանդիսանում է անձի իրավունքների խախտում (...)⁵⁵⁹:

21.1. Վերահաստատելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ այն դեպքում, երբ համաներման մասին օրենքն ընդունվում է գործը դատական քննության փուլում գտնվելու ժամանակահատվածում, այդ հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելու պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում: Մասնավորապես, այն դեպքում, երբ ամբաստանյալը համաձայն է, որ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի համաներման մասին օրենքի ընդունման հիմքով, և առկա են նաև այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու համար անհրաժեշտ օրենքով նախատեսված վավերապայմանները, ապա դատարանը, կաշկանդված չլինելով բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, պարտավոր է անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել⁵⁶⁰:

22. Սույն որոշման 16-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-21.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ՝

ա) Համաներման մասին օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ամբաստանյալ Հ.Գյադուկյանի 27 տարին եղել է լրացած⁵⁶¹,

բ) ամբաստանյալ Հ.Գյադուկյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն⁵⁶²,

գ) ամբաստանյալ Հ.Գյադուկյանն ու պաշտպան Է.Թումայանը նշել են, որ ամբաստանյալի նկատմամբ կիրառելի է Համաներման մասին օրենքը⁵⁶³,

⁵⁵⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Թաղևու Գևորգյանի գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԼԴ/0203/01/11 որոշման 16-18-րդ կետերը:

⁵⁶⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Գևորգյանի գործով 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ԱՎԴ/0065/01/17 որոշման 12.1-րդ կետերը:

⁵⁶¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁵⁶² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁵⁶³ Տե՛ս սույն որոշման 5-րդ և 13-րդ կետերը:

դ) բացակայում են Համաներման մասին օրենքը Հ.Գյաղուկյանի նկատմամբ կիրառելու սահմանափակումները:

Այսինքն՝ վերը նշված հանգամանքների համակցությունից հետևում է, որ Հ.Գյաղուկյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ, Համաներման մասին օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի 27 տարին եղել է լրացած, ինչպես նաև վերջինս նշել է, որ իր նկատմամբ կիրառելի են Համաներման մասին օրենքի դրույթները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա են ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման անհրաժեշտ վավերապայմանները: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ քրեական գործի նյութերում բացակայում է Համաներման մասին օրենքն ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի նկատմամբ կիրառելուն խոչընդոտող որևէ հանգամանք:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Համաներման մասին օրենքն ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը բացառող հանգամանք է:

23. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը՝ կարճման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիման վրա, այն է՝ Համաներման մասին օրենքի ընդունման հիմքով:

24. Վերոշարադրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 11-ի դատական ակտերը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի ուժով ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Հ.Գյաղուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը ենթակա է վերացման:

25. Նշված պայմաններում Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի՝ սույն որոշման 9-րդ կետում բարձրացված փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ամբաստանյալ Հովհաննես Գագիկի Գյաղուկյանի վերաբերյալ Շիրակի մարզի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 11-ի որոշումը բեկանել:

2. «Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից խուսափած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու մասին» 2021 թվականի մայիսի 6-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա Հովհաննես Գագիկի Գյաղուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել:

3. Հովհաննես Գագիկի Գյաղուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

35.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0253/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ԱՍՏՏԲՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ն.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հուլիսի 30-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Ռոբերտ Մեղրակի Քոչարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի, տուժողներ Ա.Հարությունյանի, Ս.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանի, տուժող Ա.Ավագյանի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի, տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Տ.Եզդրյանի և Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալունյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 2-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի մարտի 24-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և միացվել թիվ 62202608 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 62203909 քրեական գործը և միացվել թիվ 62202608 քրեական գործին:

1.1. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և միացվել թիվ 62202608 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ Ռ.Քոչարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել ու լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով և 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

1.2. 2019 թվականի փետրվարի 14-ին որոշում է կայացվել քրեական գործից մեղադրյալներ Ռ.Քոչարյանի, Յու.Խաչատուրովի, Ա.Գևորգյանի և Ս.Օհանյանի վերաբերյալ թիվ 62202919 քրեական գործն անջատելու մասին:

1.3. 2019 թվականի ապրիլի 29-ին թիվ 62202919 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2. Գործի դատական քննության ընթացքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2020 թվականի մայիսի 13-ի որոշմամբ պաշտպաններ Հ.Ալումյանի և Ա.Վարդևանյանի միջնորդությունները՝ Ռ.Քոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ փոփոխելու, որպես խափանման միջոց անձնական երաշխավորություն ընտրելու, խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ, մերժվել է:

3. Պաշտպաններ Ռ.Սահակյանի և Հ.Խոսրոյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի հունիսի 18-ի որոշմամբ պաշտպան Հ.Խոսրոյանի բողոքները բավարարել է, իսկ պաշտպան Ռ.Սահակյանի բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մայիսի 13-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել է, բավարարել է պաշտպան Ա.Վարդևանյանի միջնորդությունը, վերացրել է ամբաստանյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել գրավը՝ 2.000.000.000 (երկու միլիարդ) ՀՀ դրամի չափով:

4. Վերը նշված որոշման դեմ վճարելի բողոքներ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, տուժողներ Ա.Հարությունյանի, Ս.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանը, տուժող Ա.Ավագյանի ներկայացուցիչ

Ս.Սաֆարյանը, տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Տ.Եգորյանը և Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանը: Վճարելի դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ վճարելի բողոքներն ընդունվել են վարույթ: Վճարելի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ սահմանվել է վճարելի բողոքների քննության գրավոր ընթացակարգ:

4.1. ՀՀ գլխավոր դատախազի վճարելի բողոքի պատասխաններ են ներկայացվել ամբաստանյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալումյանի և Ա.Վարդևանյանի կողմից: Պաշտպանները խնդրել են վճարելի բողոքը մերժել: Պաշտպան Հ.Ալումյանը պատասխան է ներկայացրել նաև տուժողների և տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչներ Ա.Ղարազյոզյանի, Ս.Սաֆարյանի և Տ.Եգորյանի վճարելի բողոքների կապակցությամբ՝ խնդրելով դրանք թողնել առանց քննության՝ նկատի ունենալով, որ վերջիններս իրավասու չեն վճարելիության կարգով բողոքարկելու ամբաստանյալի խափանման միջոցի վերաբերյալ դատական ակտը:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացվել նաև տուժողի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի կողմից: Վերջինս խնդրել է պաշտպան Հ.Ալումյանի վճարելի բողոքը մերժել:

ՀՀ գլխավոր դատախազի վճարելի բողոքի կապակցությամբ պաշտպան Հ.Ալումյանը 2021 թվականի հուլիսի 28-ին կրկին ներկայացրել է գրավոր պատասխան՝ նշելով, որ ՀՀ գլխավոր դատախազը Վերաքննիչ դատարանի դատական ակտը բողոքարկել է մասնակի՝ գրավոր որպես խափանման միջոց կիրառելու մասով, հետևաբար վերջինիս բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանը չի կարող քննության առարկա դարձնել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշումը՝ Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելու մասով:

Մեղադրանքի կողմի վճարելի բողոքների կապակցությամբ պաշտպան Հ.Ալումյանը լրացուցիչ պատասխան է ներկայացրել նաև 2021 թվականի հուլիսի 29-ին:

Վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Ռոբերտ Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով և 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար. «(...) [Ռոբերտ Քոչարյանը], 1998 թվականի ապրիլի 9-ից մինչև 2008 թվականի ապրիլի 9-ը գրադեցնելով ՀՀ Նախագահի պաշտոնը, ՀՀ Սահմանադրության ուժով հանդիսանալով պետության գլուխը և կրելով ՀՀ Սահմանադրությանը հեղինակություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովելու պարտականություններ, ինչպես նաև օժտված լինելով մշտապես կազմակերպչական-փնտրիչական և վարչարարչական գործառնություններ իրականացնող պաշտոնատար անձի լիազորություններով, այլ անձանց հեղինակացությամբ, տապալել է ՀՀ սահմանադրական կարգը,

ինչպես նաև իր պաշտոնական դիրքն օգտագործելով «ԹԻ Էս Էս ՍԻ Արմենիա» ՄՊ ընկերության միակ մասնակից և փոփոխ Սիլվա Համբարձումյանի օգրին գործողություններ կատարելուն նպաստելու, այն է՝ այդ ընկերությանը փրամադրված ընդերքն օգրակար հանածոների շահագործման նպաստով ուսումնասիրության հատուկ լիցենզիաներով ընկերության 100 փոկոս բաժնեմասը ՀՀ-ում ոչ ռեզիդենտ ընկերությանը վաճառելու գործարքին չխոչընդոտելու համար, 2008 թվականի փետրվարին և մայիսին Սամվել Մայրապետյանի օժանդակությամբ նրանից սրացել է առանձնապես խոշոր չափերով՝ 927.000.000 ՀՀ դրամին համարժեք 3.000.000 ԱՄՆ դոլար կաշառք, որոնք արտահայտվել են հետևյալով.

2008 թվականի փետրվարի 19-ին անցկացվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունը, որի նախապարասարումը և անցկացումը մեծ դժգոհություններ են առաջացրել բազմաթիվ քաղաքացիների մոտ: Տարբեր հասարակական կազմակերպություններ, իրավապաշտպան կառույցներ, որոնց թվում՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների հանձնակատարը և բազմահազար քաղաքացիներ ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումները վերագրել են Հայաստանի Հանրապետության այդ ժամանակ գործող Նախագահ Ռոբերտ Բոչայրյանի և նույն ժամանակ գործող վարչապետ, Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի կողմնակիցներին: Ըստ նրանց՝ ընտրությունների ընթացքում տեղի ունեցած սպորինությունները խախտել են Հայաստանի Հանրապետության այդ ժամանակ գործող Սահմանադրության 4-րդ հոդվածում ամրագրված՝ ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները, որի արդյունքում ժողովուրդը զրկվել է ազատ ընտրությունների միջոցով իր իշխանությունն իրականացնելու հնարավորությունից, ինչով պայմանավորված, 2008 թվականի փետրվարի 20-ից սկսած, Երևանի Ազատության հրապարակում կազմակերպվել և անցկացվել են քաղաքացիների՝ այդ ժամանակ գործող ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով երաշխավորված խաղաղ, առանց զենքի հավաքներ:

Հավաքների դուրս եկած բազմահազար քաղաքացիները պահանջել են անվավեր ճանաչել, իրենց կարծիքով՝ կեղծված ընտրությունները, չեղարկել ընտրական փոխանակներից սրացված արդյունքները: Միաժամանակ, ՀՀ գործող իշխանություններից ակնկալել են, որ կպահպանվի սահմանադրական կարգը, այն է՝ կապահովվի մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների իրացման հնարավորությունը և պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք կգործեն ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան:

Հասարակության լայն շրջանակներում աճող դժգոհությունը և խաղաղ հավաքներին մարդկանց նոր զանգվածների ներգրավումը լուրջ անհանգստություն է պարձառել գործող իշխանություններին: Այն բանից հետո, երբ հավաքների թվացյալ ոչ իրավաչափ լինելու մասին ուսրիկանության հայտարարություններով և կոչերով հնարավոր չի եղել խոչընդոտել շուրջօրյա խաղաղ հավաքների անցկացումը, ՀՀ Նախագահ Ռոբերտ Բոչայրյանը ցանկալի իշխանական

համակարգը պահելու համար՝ իշխանությունն իր մերերիմ Սերժ Սարգսյանին ցանկացած եղանակով հանձնելու, ընթացող իրավական, քաղաքական գործընթացների վրա բազմամարդ հավաքների ազդեցության՝ իր համար անցանկալի հետևանքները ցանկացած եղանակով կանխելու, ընտրության արդյունքների վիճարկման իրավական գործընթացներն ապօրինի վերահսկելու նպատակով, ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, Երևանի կայսզորի պետ Յուրի Խաչատրյուրյի, ՀՀ ՊՆ զինված ուժերի գլխավոր շրաքի պետ Սեյրան Օհանյանի և այլ անձանց հետ, ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գևորգյանի օժանդակությամբ իրականացրել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փասպալելուն ուղղված գործողություններ՝ զինված ուժերի, ապօրինի զինված քաղաքացիական անձանց հետընտրական քաղաքական հարցերում հանցավոր ներգրավմամբ, ինչպես նաև ակնհայտորեն իրենց լիազորությունների շրջանակից դուրս դիտարկելով այլ գործողություններով, քաղաքացիների հիմնական իրավունքների անհիմն և ապօրինի խախտմամբ և սահմանափակմամբ երկրում փաստացի վերացրել են սահմանադրական կարգի համապատասխան հիմնադրությունը՝ յուրացնելով իշխանությունը:

Սահմանադրական կարգի փասպալմանն ուղղված գործողությունները հանգեցրել են 2008 թվականին գործող Սահմանադրության 1-ին հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է, 2-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պարկանում է ժողովրդին, 3-րդ հոդվածով նախատեսված՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, 5-րդ հոդվածով նախատեսված՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությամբ և օրենքներին համապատասխան, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով և 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն, նորմերը փաստացի վերացնելով, այդ ժամանակահատվածում իրավական համակարգում դրանց գործողության դադարեցմամբ, որն արտահայտվել է ՀՀ Նախագահի ընտրություններին հաջորդող 2008թ. փետրվարի 23-ից մարտի 20-ն ընկած ժամանակահատվածում ժողովրդավարական և իրավական պետությունում ժողովրդին պարկանող իշխանության իրացման միջոցներ հանդիսացող՝ ՀՀ-ում քաղաքացու՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան երաշխավորված՝ իր կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատության, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու, իրավական և դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները վերը նշված

պաշտոնաարար անձանց կողմից իրենց լիազորությունների սահմանազանցմամբ խախտելով:

Այսպես.

ՀՀ Նախագահ Ռոբերտ Բոչարյանը, ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, Երևանի կայսզորի պետ Յուրի Խաչատրյանի, ՀՀ ՊՆ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանի և այլ անձանց հետ հանցակցությամբ, խախտելով 2008 թվականին գործող ՀՀ Սահմանադրության 8.2-րդ հոդվածն այն մասին, որ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և փարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը, զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և զբնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո», ինչպես նաև Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետն այն մասին, որ Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վրանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում կարող է ՀՀ Նախագահը հայտարարել ուսումնական դրություն և որոշում ընդունել զինված ուժերի օգրագործման մասին, զինված ուժերն օգրագործել է քաղաքական հարցերում՝ խաղաղ հանրահավաքների մասնակից քաղաքացիների դեմ:

Մասնավորապես.

ՀՀ Նախագահ Ռոբերտ Բոչարյանը, մերտրություն ունենալով ցանկացած եղանակով իշխանությունը փոխանցել Սերժ Սարգսյանին, օգրվելով այն հանգամանքից, որ ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է և համակարգում է պաշտպանության բնագավառում պետական մարմինների գործունեությունը, 2008 թվականի փետրվարի 23-ին ՀՀ պաշտպանության նախարարության և Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի բարձրաստիճան պաշտոնաարար անձանց հետ խորհրդակցություն է անցկացրել և, ակնհայտ անցնելով իր լիազորությունները, բանավոր հրահանգել է՝ զորքերը բերել մարտական պայրասրվածության՝ հաջորդ օրը՝ ժամը 00:00-ից, հայտարարելով արտակարգ դրություն սահմանելու մասին: Առաջադրված խնդիրների և տրված ակնհայտ ապօրինի հանձնարարության կատարումն ապահովելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանը նույն օրը արտագրել է հույժ գաղրնի թիվ 0038 ակնհայտ ապօրինի հրամանը: Չուսյած այդ պահին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ընտրության վերջնական արդյունքները դեռևս ամփոփված և հրասարակված չեն եղել, սակայն Միքայել Հարությունյանի արձակած հրամանում խաղաղ ցուցարարները բնորոշվել են որպես «ՀՀ նախագահական ընտրությունների արդյունքները չընդունող, իրավիճակն ապակայունացնող քաղաքական ուժեր»: Նույն հրամանով հանձնարարվել է «երկրի բնականոն զարգացումը» ապահովելու նպատակով ՀՀ զինված ուժերի ողջ անձնակազմը փետրվարի 23-ին՝ ժամը 18:00-ից, տեղափոխել զորանոցային վիճակի, ՀՀ ՊՆ կենտրոնական ապարարի վարչություններում,

առանձին բաժիններում սրեղծել սպայական խմբեր, որոնց զինել փախչելու գնդերով, իսկ Երևանի կայազորի պետ, պաշտպանության նախարարի տեղակալ Յուրի Խաչատրյանի հետագա գործունեության սպառնալուծական նպատակով սրեղծվել է կայազորի պետի վարչակազմ:

Նշված հրամանով ՀՀ պաշտպանության նախարարության և զինված ուժերի գլխավոր շրաքի վարչությունների պետերին, առանձին գործակալների հրամանատարներին հանձնարարվել է սրեղծել բարձր շարժունակությամբ, բարդ իրավիճակներում արդյունավետ գործելու ունակ հավաքական ստորաբաժանումներ, այդ ստորաբաժանումները համալրել առավել պարզապատկեր, հոգեբանորեն կայուն ծառայողներով, նրանց զինել հրաձգային զենքերով: 2008 թվականի փետրվարի 23-ի որոշությամբ ակնհայտ խաղաղ բնույթ կրող հավաքներ անցկացվելու պայմաններում հիշյալ հրամանով հանձնարարվել է նշանակված ստորաբաժանումներին հարկացնել զինամթերք, իսկ անձնակազմը հանդերձավորել ստորաբաժաններով և գրահարձակումներով: Նշված ուժերի և միջոցների՝ Երևանի կայազորի պետի ենթակայության փակ անցնելու ժամկետ է սահմանվել 2008 թվականի փետրվարի 24-ի՝ ժամը 11:00-ն: ՀՀ ՊՆ ուսզմական ուսուցանողության պետին էլ հանձնարարվել է՝ Երևանի կայազորի փախուսումնաբերության տեղակալի յուրաքանչյուր ստորաբաժանումները հարկացնել անհրաժեշտ ուժեր և միջոցներ, սպահովել ժամանող ուժերի և միջոցների ուղեկցումը մինչև նշանակության վայրեր:

Դրանից հետո ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2008 թվականի փետրվարի 24-ին ամերիկե է ընտրության արդյունքները և ընդունել իր թիվ 24-Ա որոշումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության Նախագահ է ընտրվել Սերժ Սարգսյանը:

Երևան քաղաքում խաղաղ հանրահավաքները շարունակվել են, որոնց մասնակիցները պահանջել են քվեարկության արդյունքների վերահսկարկ կարարել:

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանձնարարությամբ և ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի՝ 2008 թվականի փետրվարի 23-ի թիվ 0038 հրամանի համաձայն՝ զինված ուժերի հակասահմանադրական օգրագործման շրջանակներում, այդ հրամանով ձևավորված զինվորական կառավարման սպորինի նոր կառույցի կազմակերպմամբ, փետրվարի 24-ի գիշերն իրականացվել է բանակային ստորաբաժանումների տեղաշարժ զինված ուժերի մի շարք ստորաբաժանումներ, զինված և գրահարձակումներով համալրված, դուրս են բերվել տեղակայման հիմնական վայրերից, այդ թվում՝ սահմանային մարտական հերթափոխ իրականացնող զորամասերից, և տեղափոխվել Երևան քաղաքում կամ մայրաքաղաքի մերձակայքում տեղակայված զորամասեր: Մասնավորապես, ՀՀ ԶՈՒ 2-րդ բանակային կորպուսի համապարասխան զորամասից III պայմանագրային զինծառայողներ, Մուրադ Աբրահամյանի հրամանատարությամբ, դեռևս 2008 թվականի փետրվարի 24-ի գիշերը և փետրվարի 25-ին դուրս են բերվել իրենց մշտական տեղակայման վայրից, տեղափոխվել են Երևանի մերձակայքում տեղակայված հրետանու բրիգադ,

որպես իրականացրել են հանրահավաքները ցրելու գորավարժություններ: Այնուհետև, 2008 թվականի փետրվարի 27-ից 28-ը նշված անձնակազմը տեղափոխվել է Երևան և տեղակայվել Հանրապետության հրապարակում՝ Մելիք-Աղամյան փողոցի երկայնքով: Նույն կերպ իրենց տեղակայման վայրերից դուրս են բերվել և Երևան քաղաք տեղափոխվել ՀՀ ՋՈՒ բանակային մյուս կորպուսների գորամասերից պայմանագրային և սպայական անձնակազմից կազմված հավաքական ստորաբաժանումներ, որոնք տեղակայվել են. 3-րդ բանակային կորպուսի 4 գորամասերից, ընդհանուր՝ շուրջ 100 (յուրաքանչյուր գորամասից 20-25), այդ թվում՝ մարտական հերթապահություն իրականացնող, հանգստացող հերթափոխի մեջ գրնվող սպաները և պայմանագրային զինծառայողները՝ 2008 թվականի փետրվարի 24-ից՝ Աշտարակ-Երևան ավտոճանապարհին գրնվող ՀՀ ՊՇ թիկունքի գորամասում, որպես իրականացրել են հանրահավաքները ցրելու գորավարժություններ, այնուհետև՝ մարտի 1-ին՝ ժամը 12-ից 14-ն ընկած ժամանակահատվածում, տեղափոխվել են Հանրապետության հրապարակ: 1-ին բանակային կորպուսի ստորաբաժանումները՝ ընդհանուր 114 հոգի, և 4-րդ բանակային կորպուսի ստորաբաժանումները՝ ընդհանուր 87 հոգի, 2008 թվականի փետրվարի 24-ի գիշերը տեղափոխվել են ՀՀ ՊՇ 5-րդ բանակային կորպուսի մշտական տեղակայման վայր՝ Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջան, որպես վերջիններս նույնպես իրականացրել են հանրահավաքները ցրելու գորավարժություններ, իսկ մարտի 1-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, տեղափոխվել են Երևանի Հանրապետության հրապարակ: 4-րդ բանակային կորպուսի Արարարի գնդի ստորաբաժանումը՝ շուրջ 70 զինծառայողներով և 6 «ԲՌ-Մ» տեսակի զրահափոխարկիչներով, տեղակայվել են Երևան-Մասիս ավտոճանապարհին, իսկ 5-րդ բանակային կորպուսը՝ Երևան քաղաքի իրենց մշտական տեղակայման վայրերում:

Նույն ժամանակահատվածում Երևան քաղաք է տեղափոխվել Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շուրջ 1000 պայմանագրային զինծառայողներից և սպաներից կազմված համահավաք գումարտակ: Նշված ծառայողների մի մասը տեղակայվել է ՀՀ Կառավարության վարչական շենքի նկուղային տարածքում, իսկ մյուս մասը՝ ՀՀ ՊՇ կենտրոնական հավաքակայանում: Երևան քաղաքում տեղակայվելուց հետո, Արցախի Հանրապետության ՊԲ զինծառայողներին տրամադրվել է ՀՀ ՊՇ համազգեստ, իսկ տրանսպորտային միջոցների «ՊԲ» համարանիշները փոխարինվել են «ՊՇ» համարանիշերով՝ քողարկելով այդ ուժերի սպորտի ներգրավման հանգամանքը:

Բացի այդ, Երևան քաղաք են տեղափոխվել և «Հրազդան» հյուրանոցում տեղակայվել Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության հասրուկ նշանակության ջոկատի շուրջ 20 ծառայողներ:

Երևանի կայազորի ենթակայության տակ ժամանած վերը նշված համահավաք ստորաբաժանումները զինվել են մարտական գործողությունների ժամանակ յուրաքանչյուր զինծառայողին հասանելիք, տարբեր տեսակի հրազեններով և համապարաստիսան սպառազինությամբ մեկ մարտական հաշվարկով:

2008 թվականի փետրվարին, հիշյալ ստորաբաժանումների՝ Երևան քաղաքում և մերձակա բնակավայրերում գրնամի գործառնաւերում րեղակայվելուց հետո, Սեյրան Օհանյանն այցելել է այդ գինձաաայողներին, րեղում սրուղել է հանրահավաքները ցրելու պարապմունքների ընթացքը, միաժամանակ, սրդարացնելով վերջիններիս ներգրավվածությունը ներքաղաքական գործընթացներին՝ անձնակազմների հետ ունեցել է ոգևորիչ և իրախուսող կոչեր պարունակող երույթներ: Մասնավորապես, Սեյրան Օհանյանը նշել է, որ Լևոն Տեր-Պետրոսյանի շուրջն են համահանրել թմրամոլներ, իստնակիչներ ու հանցավոր րարրեր, ուրքեր ցանկանում են երկրում հեղաշրջում կարարել: Գերագույն գլխավոր հրամանատար Բորերր Բոչարյանի հրամանն է՝ պահպանել Հայասրանի պերականությունը, բանակի ինտիրն է՝ մնալ գերագույն գլխավոր հրամանատարի կողքին, թույլ չրալ երկրում իրավիճակի սպակայունացումն և հեղաշրջումը, սպահովել կայունությունը:

ՀՀ պաշտպանության նախարարի րեղակալ-Երևանի կայազորի պեր Յուրի Խաչատրուրովը և թիվ 0038 հրամանով սրեղծված վարչակազմը րեղակայվել են ՀՀ կառավարության շենքում: Նա վարչակազմում ընդգրկված՝ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ զինված ուժերի գլխավոր շրարի կարևորագույն վարչությունների և առանձին բաժինների միջոցով կազմակերպել է կայազորի աշխարանքները, սպահովել զինվորական կարգապահությունը, անհրաժեշտ պայմաններ սրեղծել գորքերի ամենօրյա կենսագործունեության և պարրասարության համար, անցկացրել գորքերի մասնակցությամբ կայազորային միջոցառումներ, ինչպես նաև հսկողություն սահմանել Երևան քաղաք րեղափոխված ուղմական րեինիկայի, կրթական այլ միջոցների պահպանության նկարմամբ: Այդ նպարակով Յուրի Խաչատրուրովը մշակել է ծրագրեր, արձակել կարգադրություններ և հրամաններ, որոնցով իր րրամարդության րակ անցած ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների զինձաաայողներից կազմել է առանձին դասակներ, յուրաքանչյուրը՝ 30 հոգի կազմով, նշանակել հրամանատարներ, որոնք րեղարաշիվել են Երևան քաղաքի կենտրոնական փողոցներում, ինչպես նաև Երևան քաղաք մերնող ճանսպարհներին՝ կոնկրետ ինտիրներ իրականացնելու համար:

Մասնավորապես, Յուրի Խաչատրուրովի հրահանգով ՀՀ ՊՆ 2-րդ և 4-րդ բանակային կորպուսների ստորաբաժանումները, որպես ոսրիկանության գորքերին օգնական ուժեր, մարտի 1-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում րեղափոխվել են Պարոնյան և Լեո փողոցներ, իսկ 1-ին, 3-րդ և 5-րդ բանակային կորպուսների, ինչպես նաև ՊՆ կենտրոնական սպարարի րարրեր վարչություններից կազմավորված ստորաբաժանումները՝ Երևան քաղաքի կենտրոնական փողոցներում և Երևան քաղաք մերնող սվրոճանսպարհներին րեղակայված «Ճանսպարհային ոսրիկանության» ծառայության պահակակերերում իրականացրել են պարեկապահակկերային ծառայություն: Իր գործունեության ընթացքում Յուրի Խաչատրուրովը համագործակցել է ինչպես ՀՀ ոսրիկանության, այնպես էլ այլ պերական մարմինների հետ:

Այդ ընթացքում տեղի ունեցող քաղաքացիների խաղաղ, առանց զենքի հավաքներին զուգահեռ Հանրապետության Նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանը և Լևոն Տեր-Պետրոսյանը, համապարասխանաբար՝ 2008 թվականի փետրվարի 27-ին և 29-ին, ՀՀ Նախագահի ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով դիմումներ են ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 24-Ա որոշումը:

2008 թվականի փետրվարի 29-ին՝ Ռոբերտ Քոչարյանը Երևանի պետական համալսարանի ուսանողների հետ հանդիպման ընթացքում, ընտրության արդյունքներից դժգոհ քաղաքացիների կողմից Երևանի Ազատության հրապարակում անցկացվող խաղաղ ցույցերը որակել է «թալերական բեմադրություն» և որպես այդ ցույցերը դադարեցնելու փորձերակ է նշել ուսրիկանական գործողություններ կիրառելով՝ այդ հրապարակը մաքրել:

Շույն օրը երեկոյան, Ազատության հրապարակում խաղաղ հավաք անցկացնող քաղաքական ուժերի առաջնորդների էլոյթներում անդրադարձ է կատարվել նաև գործող Նախագահի կողմից խաղաղ հավաքը, դրանով իսկ քաղաքացու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրացումը որպես թալերական բեմականացում որակելու հանգամանքին, սպա հայտարարվել, որ 2008 թվականի մարտի 1-ին նախատեսվում է ավելի բազմամարդ հավաքի անցկացում՝ նկատի ունենալով նաև, որ այն ոչ աշխարանքային օր է:

Ընտրությունների արդյունքներից բողոքող անձանց թվի շարունակական աճից վրանգ կանխագաղտվ՝ հավանական բազմամարդ հավաքի անցկացումը խոչընդոտելու, քաղաքական ոչ բռնի իրադարձությունները, ընտրությունների արդյունքները չեղարկելու քաղաքացիների պահանջը վերջնական ճնշելու և ցանկալի իշխանական համակարգը պահելու նպատակով, ՀՀ քաղաքացու՝ սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների (խաղաղ հավաք անցկացնելու, ազատ տեղաշարժման և այլն) իրացումն արգելելու, դրանով իսկ ՀՀ Սահմանադրության՝ այդ իրավունքները նախատեսող նորմերը փաստացի վերացնելու դիտավորությամբ, Ռոբերտ Քոչարյանի գիրությամբ, 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 06:30-ի սահմաններում, ուսրիկանության շուրջ 1200 ծառայողներ, Ազատության հրապարակում նստացույց իրականացնող հարյուրավոր խաղաղ ցուցարարներին բռնությամբ ցրելու նպատակով, ֆիզիկական ուժ և հարուկ միջոցներ ապօրինի գործադրելով, հարկադրաբար հիշյալ հրապարակից դուրս են հանել քաղաքացիներին: Նստացույց անող անձանց Ազատության հրապարակից բռնությամբ փարհանելուց հետո, ուսրիկանական ուժերը շարունակել են բռնության գործադրմանը հետապնդել նրանց քաղաքի կենտրոնական հարվածներում քաղաքացիների կուսակուսմանը՝ հնարավոր ցույցերն ու հավաքները բացառելու համար: Դրա արդյունքում ցուցարարներն արհապագ հանգրվանել են Մյանմայի արձանի հարակից տարածքում՝ որպես դեպանաստիներով շրջապատված անվտանգ տարածք:

Հետագայում, ուսրիկանության կողմից կատարված հիշյալ գործողությունների օրինական լինելու պատրանք սրեղծելու, այդ գործողությունները, իբրև իրավաչափ ներկայացնելու նպատակով, ուսրիկանության մի խումբ ծառայողներ հետին ամսաթվով՝ 2008 թվականի փետրվարի 29-ի թվագրմամբ, կազմել, ստորագրել և շրջանառության մեջ են դրել ակնհայտ կեղծ, իրականությանը չհամապատասխանող բովանդակությամբ պաշտոնական փաստաթղթեր առ այն, իբրև ուսրիկանության տարբեր ստորաբաժանումներում սրացվել են տրեղեկություններ Ազատության հրատարակում նսրացուցի մասնակցող անձանց մուր զենքի, զինամթերքի, պայթուցիկ սարքերի առկայության մասին: Նույն ժամանակահատվածում կազմվել է «տրեղանքի հետագուրում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասին ակնհայտ կեղծ փաստաթուղթ՝ մինչ այդ իրականացված՝ խաղաղ ցուցը ցրելու սպօրինի գործընթացը՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում ներկայացնելու նպատակով:

Նշված գործողություններից հետո խաղաղ ցուցարարների թիվը սկսել է աճել և, արդեն ցերեկը, ՀՀ Նսխազահ և զինված ուժերի զերագույն գլխավոր հրամանսարար Ռորերը Քոչսրյանի գիրությամբ և ի կատարումն 2008 թվականի փետրվարի 23-ին տրեղի ունեցած խորհրդակցության ընթացքում ներկայացված հանձնսրարությունների, ՀՀ պաշտպանության նսխսրարության ստորաբաժանումները, իրենց տրեղնիկայով, ինքնաձիգներով զինված, տրեղակայվել են Հանրսպերության հրատարակում, Տիգրան Մեծ, Մելիք-Արսայն և մսրարսղաքի կենտրոնական այլ փողոցներում:

Մսրարսղաքում տրեղի ունեցող ներքաղաքական խաղաղ գործընթացները ձնշելու նպատակով զինված ուժերի սպօրինի ներգրավման շարունակվող գործողություններին օրինական տեսք տալու նպատակով 2008 թվականի մարտի 1-ին Հայսարանի Հանրսպերության Նսխազահ Ռորերը Քոչսրյանը, հանմաձայն ՀՀ Սսհմանսդրության 56-րդ հողվածի, պսրտավոր լինելով հրատարակել ՀՀ Սսհմանսդրությանը և օրենքներին չհակասող հրամանագրեր, ՀՀ Սսհմանսդրության 55-րդ հողվածի 14-րդ կերի խսխրմամբ՝ սսհմանսդրական կարգին անմիջական վրանձի սպսռնսլիքի բացակայության պայմաններում, ընդունել է «Արտակարգ դրություն հայրարսրելու մասին» ՆՀ-35-Ն հրամանագիրը: Նշված հրամանագրով Երևան քաղաքում 2008 թվականի մարտի 1-ից 20 օրով հայրարսրվել է սրտակարգ դրություն, իսկ սրտակարգ դրության իրավական ռեժիմի սպսհովուըը Հայսարանի Հանրսպերության ոսրիկանությունից բացի, վերսպսիվել է նսն Հայսարանի Հանրսպերության պաշտպանության նսխսրարությանը:

Միսժամանակ, ակնհայտորեն դուրս գալով իր լիսգրություններից, խսխրելով ՀՀ Սսհմանսդրության 44-րդ հողվածով սսհմանված դրույթն առ այն, որ մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներն ու սզատությունները կսրող են ժամանակավորսպես սսհմանսսխակվել միայն օրենքով սսհմանված կսրգով, ոսզմական կսմ սրտակարգ դրության ժամանակ՝ սրտակարգ իրավիճակներում սրտրսսվորություններից շեղվելու

վերաբերյալ պրանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում, արտակարգ դրության իրավական ռեժիմը կարգավորող օրենք Հայաստանի Հանրապետությունում ընդունված չլինելու պայմաններում, Ռոբերտ Քոչարյանն իր վերը նշված հրամանագրով ապօրինի սահմանել է արտակարգ դրության ռեժիմ՝ դրանում ներառելով այսպիսի միջոցառումներ և ժամանակավոր սահմանափակումներ նախատեսող գործողություններ, որպիսիք նախատեսված են եղել 2006 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, հրամանագրի 4-րդ կետով սահմանվել են արտակարգ դրություն հայտարարված փարսածքում հետևյալ ժամանակավոր սահմանափակումները. 1) ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի և այլ զանգվածային միջոցառումների իրականացման արգելում. 2) գործարարների և կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելում. 3) իրավապահ մարմինների կողմից, անհրաժեշտության դեպքում, անձանց, տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակում և զննության իրականացում. 4) զանգվածային լրատվամիջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում. 5) առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության թուղթիկներ և այլ ձևով քաղաքական քարոզչության իրականացման արգելում. 6) արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների և այլ հասարակական կազմակերպությունների գործունեության կասեցում. 7) արտակարգ դրության իրավական ռեժիմը խախտած և փյալ փարսածքում չբնակվող անձանց վերաբերում: Նշված միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները նախատեսված են եղել վերը նշված օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ը», «թ» և «ժբ» կետերով, այսինքն՝ Երևան քաղաքում արեղծվել է ռազմական դրությանը քնտրող ռեժիմ:

Իշխանությունը պահելու, ընթացող քաղաքական գործընթացները ձնելու գործին ներգրավվել են նաև Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի մերձավոր շրջապատի որոշ անձինք, ովքեր 2008 թվականի փետրվարի 29-ից մինչև մարտի 1-ը՝ երեկոյան, իրենց թիկնազորի անդամներից կամ վարսահելի, այդ թվում՝ հանցավոր հեղինակություն ունեցող անձանցից արեղծել են խմբեր, որոնց ապօրինի զինել են փարբեր տեսակի հրազեններով, նրանց ինքնությունը և իրադարձություններին իրական մասնակցության շարժառիթները քողարկելու նպատակով ՀՀ կառավարության շենքի մոտ տրամադրել են ՀՀ ԶՈՒ թիկունքի բազայի իրային պահեստից սրացված զինվորական համազգեստներ՝ հիշյալ անձանցից բաղկացած խմբերին ներգրավելով 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքի փողոցներում իրականացվող քաղաքացիների՝ Մահմանադրությամբ երաշխավորված իրավունքներն ու ազատություններն ակնհայտ խախտող հանցավոր գործողությունների իրականացմանը: Մասնավորապես՝ 2008 թվականի մարտի 1-ին՝ երեկոյան և մարտի 2-ի գիշերը զինված ուժերի և ոստիկանության ստորաբաժանումները, ինչպես

նաև վերը նշված խմբերը, Երևանի կենտրոնական փողոցներում զենքի, պայթուցիկ նյութերի և հարույկ միջոցների գործադրմամբ իրականացրել են գործողություններ՝ խաղաղ հավաքը ցրելու, անզեն ցուցարարներին փողոցներից հեռացնելու, այթորինակ միջոցառումները ժամանակավոր արգելելու ուղղությամբ:

Բացի այդ, զինված ուժերի և ոստիկանության արտաբաժանումները, ինչպես նաև վերը նշված խմբերը, այդ օրերին Երևանի Մաշտոցի պողոտայի և Գրիգոր Լուսավորչի փողոցների խաչմերուկում, սպա Պարոնյանի և Լեոյի փողոցներում բախվելով ցուցարարների առանձին խմբերի հետ, կիրառել են հրազեն, մասնավորապես՝ 2-րդ քանակային կորպուսի համապարաստիան գործանասի զինձառայողներն իրենց ամրակցված ինքնաձիգերից և սպրձանակներից համազարկ ու անկանոն կրակահերթեր են արձակել ցուցարարների, ինչպես նաև հարակից բնակելի և հասարակական նշանակության շենքերի, շինությունների ուղղությամբ: Կրակահերթերի արդյունքում կրակված առանձին գնդակներ ներթափանցել են քաղաքացիների բնակարաններ, բնակելի շենքերի առաջին հարկերում տեղակայված հասարակական նշանակության օբյեկտներ: Նույն օրը ոստիկանության զորքերի հետ ցուցարարների տեղաշարժը կանխելուն ուղղված գործողություններ են իրականացրել Երևանի Լեոյի, սպա Պարոնյան փողոցներում՝ ՀՀ ՋՈՒ 4-րդ քանակային կորպուսի, իսկ Մաշտոցի պողոտայի և Անիրյան փողոցի խաչմերուկում՝ 3-րդ քանակային կորպուսի զինձառայողները: ՀՀ զինված ուժերի մյուս քանակային կորպուսների արտաբաժանումների ծառայողներն արգելափակել են Երևան քաղաքի կենտրոնական փողոցների և քաղաքի մուտքի ավերձանապարհները:

Հերազայում՝ Երևան քաղաքում մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում, այդ իրադարձություններին զինված ուժերի, ինչպես նաև զինված խմբերի մասնակցության ու վերջիններիս կողմից հրազենի ապօրինի գործադրման իրական հանգամանքները թաքցնելու նպատակով դեպքի վայրի՝ Պարոնյանի, Լեոյի փողոցների տարբեր տեղամասերից զննությամբ հայտնաբերված տարբեր տեսակի հրազեններից կրակված, իրեղեն սպացույց հանդիսացող շուրջ 1000 պարկուճները փոխարինվել են ՀՀ ոստիկանության զորքերի սպառազինության մեջ մտնող նույն տրամաչափի այլ հրազեններից կրակված պարկուճներով, իսկ Մաշտոցի պողոտայում հայտնաբերված «Մակարով» տեսակի սպրձանակի առնվազն 32 կրակված պարկուճները՝ ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի սպառազինության մեջ մտնող նույն տեսակի սպրձանակներից կրակված պարկուճներով:

Բացի այդ, մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ ՀՀ ոստիկանության անօրինական գործողությունները քողարկելու, այդ իրադարձություններին զինված ուժերի մասնակցության հանգամանքները թաքցնելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, իսկ 2008 թվականի հուլիսի 2-ից՝ ՀՀ Նախագահի օգնականի պաշտոնին նշանակված Գևորգ Կոստանյանի և ՀՀ

Նախագահի օգնական, իսկ 2008 թվականի հուլիսի 2-ից՝ ՀՀ նախկինության պետի տեղակալի պաշտոնին նշանակված, ներկայումս՝ հանգուցյալ Ջևորգ Մեդերյանի հանձնարարությամբ ՀՀ նախկինության մի խումբ բարձրաստիճանի պաշտոնատար անձինք, այդ թվում՝ ՀՀ նախկինապետ Հայկ Հարությունյանը, վերջինիս տեղակալ Ալեքսանդր Աֆյանը, ինչպես նաև ՀՀ նախկինության քրեական հետախուզության վարչության պետ Հայկ Մոլիստովյանը, վերջինիս տեղակալ Հովհաննես Թամանյանը և նախկինության գործերի մի խումբ ծառայողներ, 2008 թվականի մայիսի 29-ին ՀՀ նախկինության պետ նշանակված Ալիկ Սարգսյանը հերին ամսաթվով ստորագրել են կեղծ պաշտոնական փաստաթղթեր, որոնք տրամադրել են մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձություններն ուսումնասիրող ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովին և Փորձագետների փաստափաթեթ իմքին, վերջիններիս հայրնել են իրականությունը չհամապատասխանող տեղեկություններ, իսկ հիշյալ դեպքի առթիվ հարուցված քրեական գործով վարույթն իրականացնող մարմնին տվել են ներկայացված փաստաթղթերի բովանդակությանը համահունչ սուր ցուցմունքներ:

Հրազնի, ռազմավթերթի, պայթուցիկ նյութերի և հայրուկ միջոցների գործադրման հետևանքով հարյուրավոր մարդիկ սրացել են ծանրության փարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, պետությանը, Երևան համայնքին և քաղաքացիներին պարճառովել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս: Տեղի ունեցած գործողությունների և իրադարձությունների ընթացքում զոհվել է 8 քաղաքացիական անձ և նախկինության գործերի 2 ծառայող: Արդյունքում իրագործվել է իստղաղ հավաքն ամեն կերպ և ցանկացած եղանակով, այդ թվում՝ քաղաքացիների կյանքի իրավունքի իստիարմամբ, ցրելու հանցավոր նպատակը, ինչը, ի թիվս վերը նշված հանրորեն վրանգավոր հետևանքների, հանգեցրել է նաև Հայաստանի Հանրապետության՝ որպես միջազգային իրավունքի սուրյեկտի, Էական հեղինակագրկման:

Իրականացված ակնհայտ հանցավոր գործողություններին ներգրավված ՀՀ զինված ուժերի զինծառայողներին ու սպաներին «վարճահատույց» լինելու նպատակով, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանի հանձնարարությամբ և ՀՀ ԶՈՒ Երևանի կայազորի պետ Յուրի Խաչատրյանի կողմից հատարված ցուցակների համաճայն՝ օրենքի իստիարմամբ, 120 մլն ՀՀ դրամ մասնավոր միջոցներից, նրանցից յուրաքանչյուրը սպորինի վարճատրվել է 50.000 և ավելի ՀՀ դրամի չափով:

Շարունակելով սահմանադրական կարգի տասպալմանն ուղղված գործողությունները, սպորինի կերպով ՀՀ զինված ուժերն օգրագործելով Երևան քաղաքում տեղի ունեցող քաղաքական գործընթացներում՝ ՀՀ ՊԵ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանը, վկայակոչելով Ռոբերտ Քոչարյանի՝ արտակարգ դրություն հայտարարելու մասին սպորինի հրամանագիրը, 2008 թվականի մարտի 2-ին հանրային հեռուստատեսության ուղիղ հեռարճակմամբ դիմել է ՀՀ քաղաքացիներին, ըստ Էության, բռնություն կիրառելու սպառնալիք պարունակող կոչով նախագգուշացրել, որ արտակարգ դրությամբ արգելված

միջոցառումների կազմակերպմանը կամ մասնակցությանը ներգրավվելու ցանկացած փորձ ՀՀ զինված ուժերի կողմից արժանաանապու է համարժեք և խիստ հակազդեցության՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, հորդորել է զերծ մնալ Երևան քաղաքում, թելուզու փոքր խմբերով հավաքվելու փորձերից: Սեյրան Օհանյանը, հանդես գալով ՀՀ զինված ուժերի անունից, սրանձնել է, իր բնորոշմամբ՝ «օրինազանցների» նկարմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով չսահմարեալված պարտականություն:

Հանրապետության Նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը վիճարկելու, այն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումի քննությունը ՀՀ Սահմանադրական դադարանում նշանակվել է 2008 թվականի մարտի 8-ին: Մինչ այդ, ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը, շարունակելով ՀՀ սահմանադրական կարգի տասպալմանն ուղղված գործողությունները, ՀՀ Նախագահի աշխարակազմի ղեկավար, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գևորգյանի ներգրավմամբ, դադարանի անդամների նկարմամբ ճնշում գործադրելով՝ ներազդել է նրանց վրա, որպեսզի վերջիններս քվեարկեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիշյալ որոշման վավերական և օրինական ճանաչվելու օգրին, իսկ Արմեն Գևորգյանը, օգրագործելով իր պաշտոնական դիրքը, արդարադարության իրականացմանը խոչընդոտելու նպատակով միջամտել է դադարանի գործունեությանը՝ դրանով իսկ օժանդակելով սահմանադրական կարգի տասպալմանը:

Այսինքն՝ Ռոբերտ Քոչարյանն այլ անձանց հետ հանցակցությամբ տասպալել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը՝ կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախարեալված հանցավոր արարք:

Միլվա Համբարձումյանը, հանդիսանալով «Թի Էս Էս Սի Արմենիա» ՄՊ ընկերության միակ մասնակիցն ու տնօրենը, 2007 թվականին այդ ընկերության միջոցով սահմանված կարգով ձեռք է բերել ընդերքն օգրակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2007 թվականի հոկտեմբերի 18-ին տրված՝ ոսկի-բազմամետաղի ուսումնասիրության՝ թիվ 54, կապարի, ցինկի, պղնձի ուսումնասիրության թիվ 56 և պղնձի, պղինձ-մոլիբդենիումի ուսումնասիրության թիվ 55 հատուկ լիցենզիաները: Լիցենզիաների ձեռք բերման աճորդներին առանց խոչընդոտների մասնակցելու և հաղթելու համար, Միլվա Համբարձումյանն իր մրերիմ, ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի միջոցով դիմել է ՀՀ նախագահի աշխարակազմի ղեկավար Արմեն Գևորգյանին, իսկ վերջինս հանձնարարել է ՀՀ բնապահպանության նախարարին՝ աջակցել նրան:

«Թի Էս Էս Սի Արմենիա» ՄՊ ընկերության կողմից նշված լիցենզիաները ձեռք բերելուց հետո, 2008 թվականի փետրվարի 3-ին կնքված նախնական, իսկ 2008 թվականի մարտի 25-ին կնքված հիմնական առուվաճառքի պայմանագրերով,

Միլվա Համբարձումյանն իրեն պատրկանող այդ ընկերության 100 տոկոս բաժնետնասերը 12 մլդ 360 մլն ՀՀ դրամին համարժեք 40 մլն ԱՄՆ դոլարով վաճառել է Արարական Միացյալ Էմիրություններում գրանցված «ՌԱԿ ՄԻՆԵՐԱԼ Զ ԸՆՌ ՄԵԹԱԼ Զ ԷՖ ԶԵԹ» ՍՊ ընկերությանը:

Հիշյալ գործարքը կնքելու համաձայնություն ստանալու համար Միլվա Համբարձումյանը 2008 թվականի հունվարի վերջին օրերին Վարդան Օսկանյանի միջոցով նախապես դիմել է ՀՀ բարձրատարիճան պաշտոնյաներին, այդ թվում՝ Ռոբերտ Բոչայրյանին: Երանց համաձայնությունը ստանալու հետք միաժամանակ, Միլվա Համբարձումյանը մերտադրվել է վերջիններիս կաշառք փայ, որպեսզի նրանք իրենց պաշտոնական դիրքն օգտագործելով չհոչքնդուրեն իր բաժնետնասերի օտարման գործարքի կնքմանը և լիազոր մարմնի միջոցով ընկերությանը զրկեն հարուկ լիցենզիաներից: Կաշառք փայու առաջարկը, Միլվա Համբարձումյանը Վարդան Օսկանյանի միջոցով հայտնել է հիշյալ պաշտոնաարար անձանց: Մի քանի օր անց Միլվա Համբարձումյանը, Վարդան Օսկանյանից տեղեկացել է, որ ընկերության բաժնետնասերի առուվաճառքի գործարքը կնքելու համար հիշյալ պաշտոնաարար անձինք ընդունել են նրա՝ կաշառք փայու մասին առաջարկը: Վարդան Օսկանյանը Միլվա Համբարձումյանին հայտնել է նաև, որ կաշառքի գումարը ստանալու համար հիշյալ պաշտոնաարար անձանց անունից ներկայանալու է Արմեն Գևորգյանի մերերիմ, գործարար Սամվել Մայրապետյանը:

Կաշառք ստանալու առաջարկն ընդունած ՀՀ բարձրատարիճան պաշտոնաարար անձինք 2008թ. փետրվարից մայիսն ընկած ժամանակաընթացքում Միլվա Համբարձումյանից մաս-մաս սրացել են կաշառքի իրենց մասնաարածինները:

Մասնավորապես, Ռոբերտ Բոչայրյանը կաշառքի իր մասնաարածինը՝ առանձնապես իոչոր չափերի՝ 927.000.000 ՀՀ դրամին համարժեք 3.000.000 ԱՄՆ դոլար գումարը սրացել է 2008 թվականի փետրվարին և մայիսին՝ Սամվել Մայրապետյանի օժանդակությամբ, ով հանդես գալով Ռոբերտ Բոչայրյանի անունից, վերջինիս մասնաարածինը կազմող 3.000.000 ԱՄՆ դոլար կաշառքից 310.000.000 ՀՀ դրամին համարժեք 1.000.000 ԱՄՆ դոլարը Միլվա Համբարձումյանից վերցրել է կանխիկ՝ 2008 թվականի փետրվարի 14-ին, Երևան քաղաքի Ամիրյան փողոցի նրա բնակարանում, իսկ 310.000.000 ՀՀ դրամին համարժեք 1.000.000 ԱՄՆ դոլարը՝ փետրվարի 15-ին՝ իր Բայրոնի 3 հասցեում տեղակայված գրասենյակում, իսկ 307.000.000 ՀՀ դրամին համարժեք 1.000.000 ԱՄՆ դոլարը Միլվա Համբարձումյանի «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲ ընկերության հաշվեհամարից 2008 թվականի մայիսի 6-ին և 26-ին 500.000-ական ԱՄՆ դոլար մասնաարածիններով իր՝ ԱՄՆ-ում գրանցված «Էլոյալ Դիվելոպերզ» ՍՊ ընկերության «Էյ-Էս-Բի-Մի Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունում սպասարկվող 21700105777151 հաշվեհամարին՝ որպես Միլվա Համբարձումյանի կողմից իրենից վերցված «փոխառության մարում», այն դեպքում, երբ վերջիններիս միջև երկու փոխառության պայմանագիր չի կնքվել և Միլվա Համբարձումյանը փոխառություն չի սրացել: Այնուհետև Սամվել Մայրապետյանն իր կոչ որդու՝ նշված ընկերության հիմնադիր և տնօրեն Լևոն Մուլթանյանի միջոցով ընկերության հիշյալ բանկային

հաշվից 2008 թվականի մայիսի 13-ին, 26-ին և 29-ին կանխիկ սրացել է հիշյալ 1.000.000 ԱՄՆ դոլարը փվել է Ռոբերտ Բոչարյանին:

Նշված գումարները նույն, ինչպես նաև դրան հաջորդող ժամանակահատվածում Ռոբերտ Բոչարյանի որդին՝ Սեդրակ Բոչարյանը, փարբեր մասնաբաժիններով կանխիկ մուրքագրել է ՀՀ սուկրային բանկերում սպասարկվող իր անձնական հաշվեհամարներին:

Այսինքն, Ռոբերտ Բոչարյանը սրացել է ստանձնապես խոշոր չափերով կաշառք՝ կարարել է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցավոր արարք (...)⁵⁶⁴:

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշել է. «(...) [Ախրարատնալով Ռոբերտ Բոչարյանի անձնական ազատությունը սահմանափակելու հիմքերին, [Առաջին արյանի] դադարանը փաստում է, որ [2019 թվականի սեպտեմբերի 20-ի «Բախանման միջոցը փոփոխելու միջնորդությունները քննության առնելու մասին» և 2019 թվականի նոյեմբերի 7-ի «Բախանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու միջնորդությունը քննության առնելու մասին»] որոշումներում արձանագրված գործի քննությանը խոչընդոտելու վրանգը չի վերացել և դադարավորության փուլում փոխվել է շարունակում է առկա լինել, նկատի ունենալով, որ գործում առկա որևէ սպառնույթ չէր հետազոտվել: Նշված պայմաններում դադարանը գրնում է, որ Ռոբերտ Բոչարյանի նկատմամբ խախտման միջոցի կիրառման անհրաժեշտությունը չի վերացել, և խախտման միջոց կիրառված չլինելու պայմաններում հնարավոր չի լինի սպառնույթ վերջինիս պարզաձև վարքագիծը:

քննարկելով այն հարցը, թե հնարավոր է արդյոք չեղարացնել գործի քննությանը խոչընդոտելու վրանգը կալանավորումից նվազ խիստ խախտման միջոցի, մասնավորապես՝ անձնական երաշխավորության կամ գրավի կիրառման պայմաններում, [Առաջին արյանի] դադարանն արձանագրում է, որ թեև դադարավորության ներկա փուլում նշված ռիսկը նվազել է՝ նախնական քննության փուլի համեմատ, երբ իրականացվում էր սպառնույթներ հավաքելու գործընթաց, սակայն վերոգրյալը չի նշանակում, որ այն նվազել է այնքան, որպեսզի վերացած համարվի Ռոբերտ Բոչարյանին կալանքի փակ պահելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, հիմք ընդունելով, որ գործի քննությունը դեռևս չի անցել դադարանության փուլ, և ներկա դրությանը հետազոտված չէ գործով ձեռք բերված որևէ սպառնույթ, դադարանը հիմնավոր չի համարում պաշտպանության կողմի փաստարկները՝ գործի քննությանը խոչընդոտելու վրանգի բացակայության մասին և գրնում է, որ ներկայումս դրա շեմը շարունակում է մնալ բավարար բարձր՝ Ռոբերտ Բոչարյանի անձնական ազատության իրավունքի սահմանափակման անհրաժեշտ լինելու տեսանկյունից: Նշված հետևության հանգեղիս դադարանը հաշվի է առնում նաև Ռոբերտ Բոչարյանի կողմից երկար փարինների ընթացքում բարձր պաշտոններ զբաղեցնելու հանգամանքը և դրանով պայմանավորված կապերն ու ազդեցությունը, ինչպես նաև նրան ստաջադրված մեղադրանքի

⁵⁶⁴ Տե՛ս հավելված, հատոր 1-ին, թերթեր 37-60:

ծանրությունը, ինչը բարձրացնում է դատավարությանը մասնակցող անձանց վրա հնարավոր ներգործության, գործի քննությանը միջամերության ռիսկը:

Վերոգրյալի լույսի ներքո [Առաջին արյանի] դատարանը գտնում է, որ կալանավորումից նվազ խիստ խափանման միջոցները, մասնավորապես՝ գրավը (անգամ ամբաստանյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու դեպքում գրավի գումարը պետության եկամուտ դարձնելու հնարավորությունը նստահարեաող իրավակարգավորման պայմաններում), ինչպես նաև անձնական երաշխավորությունը դատավարության վրյալ փուլում ի գորու չեն լինի արդյունավետ չեզոքացնել վերը նշված վրանգը:

Ինչ վերաբերում է կորոնավիրուսային հիվանդության համավարակով պայմանավորված իրադրության և Ռոբերտ Քոչարյանի խոցելի խմբում ընդգրկված լինելու վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկներին, [Առաջին արյանի] դատարանն արձանագրում է, որ Ռոբերտ Քոչարյանը, գտնվելով «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում, խցում պահվում է միայնակ, ինչը դատական նիստում հաստատվել է վերջինիս կողմից: Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ԵՄ ԽԿԿ-ն պարտադիր է համարել համապարասխան մարմինների կողմից ազարությունից գրկման այլընտրանքային միջոցներ կիրառելու ուղղությամբ ջանքեր գործադրելու մտրեցումը՝ հարկապես մեկուսացման վայրերի գերբնակեցման պայմաններում, որպիսի հանգամանքը վրյալ դեպքում առկա չէ՝ հաշվի առնելով Ռոբերտ Քոչարյանին քրեակարարողական հիմնարկում պահելու պայմանները: Նշված պարագայում առկա չեն հիմքեր արձանագրելու կորոնավիրուսային հիվանդությամբ վարակվելու բարձր ռիսկը, մասնավորապես՝ ավելի բարձր, քան ազարության մեջ գտնվելու պայմաններում, նկարի ունենալով, որ նաև այդ դեպքում՝ անգամ խիստ մեկուսացման պայմաններում հնարավոր չէ խալառ բացատել բոլոր շիումները:

Անդրադատնալով միջնորդությունների փաստարկներին՝ Ռոբերտ Քոչարյանի առողջական վիճակի վարթարացման վերաբերյալ, [Առաջին արյանի] դատարանն արձանագրում է, որ պաշտպանության կողմը չի հիմնավորել, որ Ռոբերտ Քոչարյանին անհրաժեշտ բուժօգնությունը չի կարող պարջաճ կազմակերպվել անազարության մեջ գտնվելու պայմաններում՝ նկարի ունենալով, որ սույն գործի դատական քննության ընթացքում վերջինս անհրաժեշտությունն առաջանալու պես բուժում է արացել «Բզմիրյան» և «Էրեբունի» բժշկական կենտրոններում:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը շարադրվածը, [Առաջին արյանի] դատարանը գտնում է, որ Ռոբերտ Քոչարյանի նկարմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ փոփոխելու հիմքերը ներկա դրությամբ բացակայում են, հերևարար պաշտպանության կողմի միջնորդությունները ենթակա են մերժման (...)⁵⁶⁵:

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ անձի նկարմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմնավորվածության

⁵⁶⁵ Տեն հավելված, հատոր 1-ին, թերթեր 79-81:

վերաբերյալ հետևությունների հանգեյիս, անձի կողմից հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության շեմն առավել ցածր է, քան անձի մեղավորությունն իրեն մեղսագրվող հանցագործության մեջ հասարակելու պարագայում, ուստի դադարանի կողմից դատական քննության փուլում կայանավորման կիրառության վերաբերյալ հիմնավոր կասկածին անդրադարձնալը օբյեկտիվորեն չի հանգեցնում տվյալ անձին մեղսագրվող արարքում վերջինիս մեղավորությունը որևէ կերպ հասարակելուն կամ դրա վերաբերյալ որոշակի կանխակալ վերաբերմունքի ձևավորմանը:

(...)

Ինչ վերաբերում է գործառությանին անձեռնմխելիությունը, սպա այն տվյալ փուլում Վերաքննիչ դադարանի կողմից գնահատման ենթարկվել չի կարող, քանի որ այդ հանգամանքն ինքնին ածանցված է առաջադրված մեղադրանքին բավականաչափ խոր վերլուծությունների արդյունքում տրվելիք գնահատականներից, ինչը գրնվում է մայր քրեական գործի ըստ էության լուծման խնդիրների շրջանակներում և այս փուլում դրանց գնահատումը կարող է ոչ միայն հետազայում կանխորոշիչ դեր ունենալ գործն ըստ էության քննության առնող դադարանի եզրահանգումների համար, այլև հանգեցնել դադարանների գործառությանին և ինստիտուցիոնալ տարանջատման սկզբունքների խախտման, ինչպես նաև վերադաս դատական արյանների կողմից որպես ստորադաս դադարան հանդես գալու ոչ ցանկալի վիճակին:

Անդրադարձնալով վերաքննիչ բողոքներում վկայակոչված հիմքերին և հիմնավորումներին՝ այն մասին, որ սիսլ են Առաջին արյանի դադարանի հետևությունները՝ խախտման միջոցի հիմքի առկայության մասով, սպա Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ դրանք հիմնավոր չեն և իր համաձայնությունն է հայտնում Առաջին արյանի դադարանի հետևություններին այն մասով, որ ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանն ազատության մեջ մնալու պայմաններում կարող է խոչընդորդել դադարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, որպիսի դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքներով, որ ամբաստանյալը նախկինում հանդիսացել է բարձրաստիճանն պաշտոնատար անձ, ՀՀ 2-րդ Նախագահ (շորջ 10 տարի), պետության գլուխ՝ անձ, ով, հետևել է ՀՀ Սահմանադրության պահպանմանը, ապահովել է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը և եղել Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը (այդ կասակցությանը, տեն նաև 2005թ. խմբագրությանը ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածը): Ինքնին այդ հանգամանքը կրրուկ մեծացնում է անձի ազդեցությունը հասարակության յուրաքանչյուր շերտերում և ոլորտներում, ենթադրում է այդ ազդեցության ահռելի մեծ ծավալներ, զգոնության և զսվածության ազրակ, այսինքն՝ անգամ նվազագոյն, աննշան միջամրությունը որևէ անձի իրավունքներին կարող է բավարար լինել ենթադրյալ ցանկալի

նպատակին հասնելու գործում, ուստի այդ հանգամանքի վերաբերյալ Առաջին սայրանի դադարանի հետևություններն ըստ էության հիմնավոր են:

Բացի այդ, Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ մեղսագրվող ենթադրյալ հանցագործությունների բնույթը դրանց վրանգավորության աստիճանը, մասնավորապես այն, որ ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանին մեղսագրվում են առանձնապես ծանր հանցագործություններ, որոնց համար որպես պատիժ նախատեսված են 10-15 և 7-12 տարի ժամկետով ազատազրկում, էական նշանակություն ունեն ամբաստանյալի հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում:

(...)

Այլ կերպ ասած՝ ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի նախկինում զբաղեցրած պաշտոնը ոչ միայն սահմելի ազդեցություն ունենալու իրական լծակ է, այլև զսպված, ինքնաքննադատ և հասարակության, սեփական անձի, ընտանիքի և վարույթն իրականացնող մարմնի առաջ պարտահանարու և հաշվետու վարքագիծ դրսևորելու գրավական: Նման հետևության հանգելու հարցում Վերաքննիչ դադարանի համար առանցքային նշանակություն են ունեցել ոչ միայն վերը նշված հանգամանքները, այլև հենց ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները, ենթադրյալ հանցագործությունից առաջ դատվածություն չունենալը և դրանից (մեղսագրվող արարքներից) հետո դրսևորած հետհանցավոր դրական վարքագիծը, առկա վարույթի ընթացքում դրսևորվող վարքագծի վերաբերյալ անհատական ընկալումը՝ նաև հասարակական մեծ հնչեղություն ունեցող քրեական գործի նկարմամբ հասարակական պատկերացումների համարեքարում: Հենց այդ հանգամանքից ելնելով է նաև Վերաքննիչ դադարանը նշանակալի կարևորություն տալիս իրավիճակի վերաբերյալ ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի իրավական և բարոյական ընկալմանը և գիտակցմանը:

(...)

Այդ կապակցությամբ Վերաքննիչ դադարանը նաև ընդգծում է, որ ներկայացված՝ ՀՀ ԱԾ Սահմանադրական կարգի պահպանության և սահաբեկչության դեմ պայքարի դեպարտամենտի պետի ժամանակավոր պաշտոնակատարի գրության համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում րվյալներ չեն սրացվել քննվող քրեական գործերով տուժողների և վկաների հետ հանդիպումներ կազմակերպելու, ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի օգրին սուր ցուցմունքներ տալու դիմաց կաշառք տալու և այդ նպատակով ցանկացած եղանակով նրան շահագրգռելու այլ դեպքերի վերաբերյալ, այլ րվյալներ են սրացվել միայն, որ կազմակերպվել են հանդիպումներ ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի համախոհների հետ և նրանց ուղղորդվել է մասնակցել դատավարությանը, սրորագրահավաքներին:

Ավելին՝ Վերաքննիչ դադարանը 2020 թվականի մարտի 11-ի թիվ ԵԳ/1296/06/19 գործով որոշմամբ չի հաստատել Արմեն Սերգելի Թավադյանի կողմից ենթադրարար ՀՀ քրեական օրենսգրքի 340-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին

կերով նախատեսված՝ կազմակերպված խմբի կազմում սույր ցուցմունք տալու նպատակով անձին կաշառելու հիմնավոր կասկածը: Մասնավորապես հիմնավոր կասկածի մակարդակով չէր հաստատվել արարքը խմբի կազմում կատարվելու հարկանիշը, որն, ըստ էության, անհամաչափորեն նվազեցնում է ամբաստանյալի ներգրավվածության, մասնակցության հաստատությունը քրեական օրենքով արգելված արարքի կատարմանը:

Հարկ է նշել, որ այս հանգամանքները թեև չեն կարող դիտարկվել որպես ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի հաստատվող վարքագծի համար առաջնային կարևորության հանգամանքներ, սակայն դրանք ևս էական են վերջինիս հաստատվող առկայությունը նմանաբնույթ գործընթացներին կանխատեսելու փաստակցության, իսկ նրա կասկածն այդ ենթադրյալ գործողությունների հետ, ինչպես նշվեց, չի հիմնավորվել: Ընդ որում չի կարող նաև խալառ բացառվել ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի կողմից նշված անձանց արարքներին միջամտելու և դրանք կանխելու հավանականությունը:

(...)

Վերոշարադրյալ հանգամանքների համակցությունն ինքնին ողջամիտ հավասարակշռության մեջ է գտնվում հանրային և մասնավոր շահերի մրցակցության փոփոխում, քանի որ՝ ըստ էության մի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հավանականությունը, մյուս կողմից՝ պարզաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը հավասարակշռվում են, ուստի այդ պայմաններում առաջնայնությունը պետք է տալ անձի անձնական ազատության իրավունքի երաշխավորմանը և անձի ազատության կանխավարկածին:

Վերոգրյալի համարվելու Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ քրեական գործով առկա փաստական հանգամանքները գալիս են փաստելու, որ ժամանակի ընթացքում ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի կողմից հաստատվող ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկերը թեև շարունակում են իրական և առկա լինել, սակայն այդ ռիսկերը՝ նվազման առումով, ենթարկվել են որակական փոփոխությունների, ինչի արդյունքում այդ ռիսկերն արդեն իսկ չեն հաղթահարում փաստական հանգամանքների վրա հիմնված ենթադրությունների այն անհրաժեշտ նշածողը, որը թույլ կտար կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելը հիմնավոր դիտարկել: Բացի այդ, «այն հիմքերը, որոնք ընկած են եղել կալանավորման նախորդ որոշման հիմքում կամ ժամկետի երկարացման հիմքում» քանաձևն անընդունելի է, քանի որ այդ մտրեցումը սկզբունքորեն սխալ է, և հիմնված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասի սխալ մեկնաբանության վրա, մինչև որ դատարանը կալանքի ժամկետի յուրաքանչյուր երկարաձգման ժամանակ պետք է իրականացնի փաստական հանգամանքների գնահատում՝ պարասխանելով այն հարցին, թե այդ պահին ինչ հանգամանքներ են հերքում «ազատության կանխավարկածը»:

Դատարանը պետք է ելնի «ազատության կանխավարկածից» և առաջին հերթին քննի ոչ թե այն հիմքերը, որոնց հիման վրա անձը չի կարող ազատվել, այլ անձի ազատման հաստատվող հիմքերը: Որքան երկար ժամանակ մեղադրյալը մնում է կալանքի տակ, այնքան ավելի շարք հիմնավոր պարճառներ են

անհրաժեշտ դադարանին, որպեսզի վերջինս երկարացնի այս խափանման միջոցի ժամկետը կամ պահպանի այն:

(...)

Վերաքննիչ դադարանը հարկ է համարում ընդգծել, որ խափանման միջոցի փոփոխման հարցը բարձրացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ թե զուտ դադարական քննության ժամանակային տևողությունը, այլ դրա առանձին փուլեր անցնելը, սակայն դա հարցի քննարկման միակ և բացարձակ հիմքը չէ, իսկ խափանման միջոցի հիմքերն ու պայմանները ոչ թե սրատիկ, այլ դիմադիկ կարեգործիներ են և ենթակա են ժամանակի ընթացքում փոփոխման, ուստի սույն դեպքում պետք է հաշվի առնել այն առանցքային հանգամանքը, որ ամբաստանյալի կողմից երկու առանձին ժամանակահատվածներում ազատության մեջ գրնվելու ընթացքում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, որպիսի հանգամանքը Վերաքննիչ դադարանի համոզմամբ անհրաժեշտ կլինե՞ր կալանավորման հիմքերի շարունակական առկայությունը և դրանց դրսևորման ռիսկը նվազած չլինելու հանգամանքը հիմնավորելու համար:

(...)

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դադարանը փաստում է, որ առկա են քրեական դադարավարության օրենքով նախատեսված որևէ խափանման միջոցի կիրառման համար բավարար փաստական հանգամանքներ առ այն, որ ամբաստանյալ Ռոբերտ Մեդրակի Քոչարյանը կարող է խոչընդորդել դադարանում գործի քննությանը՝ քրեական դադարավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, սակայն ոչ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար բավարար աստիճանի, ուստի հիմնավորված չեն ամբաստանյալ Ռոբերտ Մեդրակի Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն անփոփոխ թողնելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դադարանի՝ 2020 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԿ/0253/01/19 քրեական գործով որոշմամբ արտահայտված հետևությունները:

(...)

Միաժամանակ վերլուծելով ամբաստանյալ Ռոբերտ Մեդրակի Քոչարյանի սոցիալ-անձնային հատկանիշները, պետք է նշել, որ դադարանը չունի լիարժեք համոզվածություն առ այն, որ որպես երաշխավոր ներկայացած անձինք կարող են իրական ազդեցություն ունենալ ամբաստանյալի հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծը սահմանափակելու համար: Նման կասկածները հիմնված են ամբաստանյալի անցած ճանապարհի, նրա անձնային հատկանիշների և առանձնահատկությունների վերաբերյալ առկա տեղեկատվության վրա: (...) Ուստի և դադարական քննության ներկա փուլում, գործի քննության ընթացքում պարզա՞ծ վարքագծի ապահովման նպատակի իրացման տեսանկյունից, առավել կիրառելի կարող է համարվել մեկ այլ խափանման միջոց, ինչպիսին գրավն է:

(...) Վերաքննիչ դադարանը գրնում է, որ արձանագրվածը ողջամրորեն հիմք է տալիս հանգելու այն հետևության, որ, թեև որոշակիորեն առկա է ամբաստանյալ Ռոբերտ Մեդրակի Քոչարյանի կողմից գործի քննությանը քրեական

դադարավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով դադարանում խոչընդոտելու հավանականությունը, սակայն գրավի կիրառման միջոցով հնարավոր է նվազեցնել ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հնարավոր ռիսկերը:

(...) Վերաքննիչ դադարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ գրավի ողջամիտ չափ կարող է համարվել 2.000.000.000 (երկու միլիարդ) ՀՀ դրամը, որը վճարված լինելու պայմաններում զգալիորեն նվազում է դադարանում գործի քննությանը քրեական դադարավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով խոչընդոտելու հավանականությունը: Վերաքննիչ դադարանը գտնում է, որ արձանագրվածը ողջամտորեն հիմք է տալիս հանգելու այն հետևության, որ գրավի կիրառման միջոցով կարող են նվազեցվել ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հնարավոր ռիսկերը:

(...)

Միաժամանակ Վերաքննիչ դադարանը փաստում է, որ ԵՄ Խոչընդոտումների և անմարդկային կամ արժանապարտությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պարծի կանխարգելման եվրոպական կոմիտեն 2020 թվականի մարտի 20-ի խորհրդարանական հանձնարարականով սահմանել է անսպասելի մեջ գրավող անձանց նկատմամբ վարվեցողության սկզբունքները՝ կորոնավիրուսային վարակի (COVID-19) պանդեմիայի համարեքսպոնտ, որով նշել է, որ քանի որ սերտ մարդկային կոնտակտը նպաստում է վարակի տարածմանը, ուստի իշխանությունների կողմից պետք է այլընտրանքային միջոցներ ձեռնարկեն, այդ թվում՝ կապված կալանքի, ազատագրկման, պայմանական վաղաժամկետ ազատման և պրոբացիայի ինստիտուտի հետ:

(...) Վերաքննիչ դադարանը վերահաստատում է իր այն եզրահանգումը, որ ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը, լինելով տարեց՝ 65 տարեկան, ունենալով առողջական խնդիրներ, լինելով քրեակատարողական ծառայության աշխատակիցների հետ անմիջական շփման մեջ (ընդ որում պարբերաբար փոխվող անձնակազմի) (...), գտնվում է հիվանդության ազդեցության ռիսկային խմբում, իսկ տվյալ դեպքում պետության պոզիտիվ պարտականությունների երաշխավորման տեսանկյունից առաջնային է ոչ թե ամբաստանյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի հնարավոր պարզաճ բուժումը, այլ հիվանդացումից զերծ պահելը (...)⁵⁶⁶:

Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

1. ՀՀ գլխավոր դատախազի բողոքի փաստարկները.

8. Բողոքաբերը, վկայակոչելով Վճարելի դատարանի՝ Արամ Ճուղոյանի, Հարություն Պետրոսյանի, Տիգրան Պետրոսյանի, Վահագն Պողոսյանի, Սամվել Մարգարյանի և Արթուր Եգանյանի վերաբերյալ որոշումները և Մարդու

⁵⁶⁶ Տե՛ս հավելված, հատոր 8-րդ, թերթեր 25-42:

իրավունքների եվրոպական դատարանի՝ Մխիթարյանն ընդդեմ Ռուսաստանի, Մուսլինն ընդդեմ Ռուսաստանի, Հարությունյանն ընդդեմ Ռուսաստանի վճիռները՝ փաստել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը, առանձին-առանձին և իրենց համակցության մեջ սխալ գնահատելով ամբաստանյալ Ռոբերտ Քոչարյանի կողմից քննությանը խոչընդոտելու ռիսկի գնահատման համար որոշիչ նշանակություն ունեցող՝ նրան մեղսագրվող հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը, դրանց կատարման՝ քննությունը դժվարացնելուն ու հանցագործությունը բացահայտելն անհնարին դարձնելուն ուղղված եղանակն ու դրան ուղեկցող այդօրինակ գործողությունները, Ռ.Քոչարյանի անձը բնութագրող՝ գործին մասնակցող և հատկապես՝ նախկինում իրենից կախվածության մեջ գտնվող անձանց վրա նրա ազդեցությունը հիմնավորող հանգամանքները, անազատության մեջ գտնվելու ընթացքում հոգուտ Ռ.Քոչարյանի կատարված՝ նրա վերաբերյալ գործի քննությանը խոչընդոտելուն ուղղված կազմակերպված գործողությունները, ազատության մեջ գտնվելու ժամանակահատվածում նրա վարքագծի հիմքում ընկած իրական գործոնները, դրանց չտալով համապատասխան նշանակություն ու հանգեղով սխալ հետևության՝ հակասում է Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոնշյալ դատական ակտերով արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, իր որոշման հիմքում դնելով Եվրոպայի խորհրդի խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի՝ նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակի կապակցությամբ 2020 թվականի մարտի 20-ին հրապարակված հայտարարության դրույթները, հաշվի չի առել, որ դրանք չեն կրում բացարձակ բնույթ և ենթակա են գնահատման կալանավորման հիմքերի, մասնավորապես քննությունից թաքնվելու, քննությանը խոչընդոտելու ռիսկերի մասին վկայող և դրանց աստիճանը բնութագրող հանգամանքների համատեքստում: Վերաքննիչ դատարանը չէր կարող կալանավորման այլընտրանքների հնարավորությունը քննարկելիս որոշիչ հիմք ընդունել համավարակի վերաբերյալ տվյալներն ու դրանք գնահատել քննությանը խոչընդոտելու խիստ բարձր ռիսկերի մասին փաստական տվյալներից անջատ:

8.1. Բողոքի հեղինակն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ՝ նաև դրանում վկայակոչված համաչափության սկզբունքի համատեքստում՝ նկատի ունենալով, որ դատարանը Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվող գրավի չափ սահմանելով երկու միլիարդ ՀՀ դրամը՝ հաշվի չի առել գույքի բռնագրավման և բռնագանձման համատեքստում հնարավոր այն նյութական անբարենպաստ հետևանքները, որոնք կարող են նրա համար առաջանալ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքի պայմաններում:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ ազատության մեջ մնալու դեպքում քննությանը խոչընդոտելու ռիսկը ցածր է այնքան, որ այն չի կարող

արդարացնել ամբաստանյալ Ռ.Քոչարյանին շարունակական կալանքի տակ պահելը, սխալ է գնահատել այդ ռիսկի մասին վկայող՝ նրան մեղսագրվող հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը, դրանց կատարման՝ քննությունը դժվարացնելուն ու հանցագործությունը բացահայտելն անհնարին դարձնելուն ուղղված եղանակն ու դրան ուղեկցող այլ գործողությունները, Ռ.Քոչարյանի անձը բնութագրող՝ գործին մասնակցող և հատկապես՝ նախկինում իրենից կախվածության մեջ գտնվող անձանց վրա նրա ազդեցության հնարավորությունը հիմնավորող հանգամանքները, անազատության մեջ գտնվելու ընթացքում հոգուտ Ռ.Քոչարյանի կատարված՝ նրա վերաբերյալ գործի քննությանը խոչընդոտելուն ուղղված կազմակերպված գործողությունները, ազատության մեջ գտնվելու ժամանակահատվածում նրա վարքագծի հիմքում ընկած իրական գործոններն ու հանգել սխալ հետևության:

8.2. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշումը մասնակի՝ ամբաստանյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց գրավ կիրառելու մասով բեկանել, կայացնել նոր դատական ակտ՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի որոշմանը կամ Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը:

II. Ներկայացուցիչ Ա.Նարսիսյանի բողոքի փաստաթղթերը.

9. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 143-րդ, 288-րդ և 358-րդ հոդվածների պահանջների խախտում: Բողոքի հեղինակը, վկայակոչելով Վճռարենկ դատարանի մի շարք որոշումներ, փաստել է, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի գնահատել և սխալ եզրահանգում է կատարել Ռ.Քոչարյանին գրավով ազատելու վերաբերյալ որոշում կայացնելիս և որ որևէ գումար ի գործու չէ կանխելու Ռ.Քոչարյանի ոչ պատշաճ վարքագիծը:

Բողոքի հեղինակը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Միխիթարյանն ընդդեմ Ռուսաստանի* վճիռը, նշել է, որ Եվրոպական դատարանը վերոնշյալ գործով իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ մեղադրյալի զգալի ֆինանսական վիճակը նրան թույլ է տալիս ազդեցություն գործել վկաների և դատավարության մյուս մասնակիցների վրա, եթե նա ազատվում է արգելանքից: Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ այդ հանգամանքներում պատրաստ է ընդունել այն փաստարկը, որ վարույթի մինչդատական փուլերում դատարանները կարող են օրինական կերպով գնահատել այն ռիսկերը, որ ազատ արձակվելու դեպքում մեղադրյալը կարող էր խուսափել արդարադատությունից, խոչընդոտել մինչդատական վարույթում և դատարանում գործի քննությանը: Բացի այդ, բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Մուսինն ընդդեմ Ռուսաստանի* և *Հարությունյանն ընդդեմ Ռուսաստանի* վճիռներով արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Բողոքաբերը փաստել է նաև, որ վերոհիշյալ նախադեպը լիովին կիրառելի է նաև սույն գործի շրջանակներում, քանի որ Ռ.Քոչարյանն ունի սեփականություն և մեծ եկամուտներ և այդ հանգամանքով պայմանավորված մեծանում է հավանականությունը, որ իր գործողություններով կարող է ազդեցություն ունենալ դատավարության մասնակիցների վրա:

9.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Ռ.Քոչարյանի գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասով Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշումը և ամբողջությամբ օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մայիսի 13-ի որոշմանը կամ վերջինիս կալանավորելու վերաբերյալ որոշում կայացնել:

III. Ներկայացուցիչ ՍՍաֆարյանի բողոքի փաստաթղթերը.

10. Բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ, 385-րդ հոդվածների և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 5-րդ հոդվածի դրույթները, ինչը հանգեցրել է նաև Եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածների խախտման:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների, Սահմանադրական դատարանի որոշումների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-137-րդ հոդվածների պահանջները:

Բողոքի հեղինակը նաև փաստել է, որ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում տրամաբանորեն հակառակ գնահատականի է արժանացրել այն հանգամանքը, որ Ռ.Քոչարյանի բարձրաստիճան պաշտոնյա հանդիսանալու փաստը մեծացնում է նրա պատասխանատվությունը: Միայն է գնահատել նաև Ռ.Քոչարյանի կողմից քննությանը ներկայանալու, երկու անգամ համապատասխան տևողությամբ ազատության մեջ գտնվելու հանգամանքները, մասնավորապես՝ արձանագրել է, թե սույն քրեական գործով այլ անձի (ՀՀ ՊՆ նախարար Միքայել Հարությունյանի) նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու մասին տեղեկացված լինելու պայմաններում Ռ.Քոչարյանի կողմից արտերկրից վերադառնալը և վարույթն իրականացնող մարմին ներկայանալը պետք է գնահատվի նրա կողմից քննությանը ներկայանալու, փախուստի և խոչընդոտելու ռիսկը նվազեցնելու տիրույթում:

Տուժողի ներկայացուցիչը գտել է, որ Ռ.Քոչարյանի անձը և վարքագիծը թույլ են տալիս անելու հետևություն, որ նրա մոտ պահպանվել է արդարադատությանը խոչընդոտելու մեծագույն ռիսկը:

10.1. Միաժամանակ բողոքաբերն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածով նախատեսված նորմի խախտում, ինչը զրկել է Վերաքննիչ դատարանին որպես վերաքննություն իրականացնող դատարանի հանդեպ

գալու հնարավորությունից: Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված սահմանազանցումները դրսևորվել են նաև դատական ակտում տեղ գտած մի շարք փաստաթղթեր Առաջին ատյանի դատարանում քննության ժամանակ չներկայացնելու փաստով, և այն հանգամանքով, որ վերադաս դատարանը չի հիմնավորել Առաջին ատյանի դատարանում դրանք ներկայացնելու անհնարինությունը մատնանշող հանգամանքները, ինչը ծանրակշիռ փաստարկ է դատավորի կողմից Ռ.Քոչարյանի նկատմամբ դրսևորած կողմնակալության մասին:

10.2. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ամբաստանյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ խափանման միջոց գրավ կիրառելու մասով Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մայիսի 13-ի որոշմանը կամ վերացնել գրավը և կայացնել կալանավորման վերաբերյալ որոշում:

IV. Ներկայացուցիչ Տ.Եգորյանի բողոքի փաստարկները.

11. Բողոքաբեր՝ տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Տ.Եգորյանը փաստել է, որ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Ռ.Քոչարյանի հանրային գործունեությունն առավելապես հրապարակային է, իսկ նա լինելով ՀՀ նախկին Նախագահ, առավել պատասխանատու վարքագիծ կարող է դրսևորել հենց նույն հասարակության, վարույթն իրականացնող մարմնի՝ իր իսկ կողմից նախկինում ղեկավարած պետության դատական իշխանության կողմից ընդունվող որոշումների, իր ընտանիքի անդամների առաջ, որոնք ևս հանդիսանում են հասարակության մի մասը, և այս կամ այն կերպ շահագրգռված են նաև ամբաստանյալ Ռ.Քոչարյանի պատվի ու բարի համբավի պահպանմամբ: Նշվածի կապակցությամբ բողոքաբերը փաստել է, որ որևէ հիմք չկա Ռ.Քոչարյանի ողջ գործունեությունը հրապարակային գնահատելու համար, սակայն նույնիսկ այդ պարագայում հանրության և զանգվածային լրատվության միջոցների՝ նրա նկատմամբ ունեցած հետաքրքրվածությունը չի կարող գնահատվել որպես քննությանը խոչընդոտելուն ուղղված գործողություններ կատարելու, կամ այդպիսիք պլանավորելու, կազմակերպելու հնարավորությունը բացառող կամ նվազեցնող հանգամանք:

Բողոքի հեղինակը նաև արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանի մնացած դատողությունները վերացական են, մտացածին և կտրված են քննարկվող հարցի հիմքում ընկած ողջ հանգամանքների համակցությունից և կոնտեքստից:

Բացի այդ, բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ մի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հավանականությունը, մյուս կողմից՝ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը հավասարակշռվում են, ուստի այդ պայմաններում առաջնայնությունը պետք է տալ անձի անձնական ազատության իրավունքի երաշխավորմանը և անձի

ազատության կանխավարկածին: Վերաքննիչ դատարանի այս դատողությունը գուրկ է ոչ միայն որևէ հիմքից, այլ նաև հակասում է հենց դատարանի առաջարկած տրամաբանությանն ու սկզբունքներին. մի կողմից դատարանը զնահատում է Ռ.Քոչարյանի կողմից քննությանը խոչընդոտելու ռիսկը մեծ և նրա ազդեցությամբ պայմանավորված՝ արդյունավետ, մյուս կողմից նշում է, որ չի կարող իսպառ բացառվել ամբաստանյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելուն ուղղված արարքներին միջամտելու և դրանք կանխելու հավանականությունը: Բողոքի հեղինակը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, հակադրելով իր իսկ կողմից տարբեր մակարդակի հավանականություններ և ենթադրական դատողություններ, որոշել է, որ դրանք հավասարակշռվում են, ինչը ոչ մի առնչություն չունի պատճառաբանված դատական ակտին ներկայացվող ստանդարտին համապատասխանության հետ:

11.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է մասնակիորեն **(բողոքով վիճարկված մասով) բեկանել** Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ բեկանել ամբաստանյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց գրավով փոխարինելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մայիսի 13-ի որոշումը:

V. Պաշտպան ՀԱյրումյանի բողոքի փաստաթղթերը.

12. Բողոքի հեղինակը, մատնանշելով Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունը՝ կապված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում առկա հետևյալ ձևակերպման հետ. «1. Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է թփարկված են ոչ պատշաճ վարքագծի դրսևորումները»՝ նշել է, որ ըստ Վերաքննիչ դատարանի, այս նորմում «կարող է իրսևորել ոչ պատշաճ վարքագիծ»՝ արտահայտությունը նշանակում է այդպիսի վարքագիծ (տվյալ դեպքում խոսքը գործի քննությանը խոչընդոտելու մասին է) դրսևորելու կարողություն: Մինչդեռ, այս դեպքում օրենքը «կարող է» ասելով նկատի է ունեցել այդ բառի մյուս իմաստը՝ «հավանաբար կանի», «ամենայն հավանականությամբ կանի»: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առներ ոչ միայն գործի քննությանը խոչընդոտելու՝ Ռ.Քոչարյանի ունակությունը, այլ նաև՝ հակված լինելը, որի դեպքում կգտներ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ խափանման միջոց կիրառելու հիմքերն ի սպառ բացակայում են:

12.1. Բացի այդ, մեջբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունը՝ կապված անձնական երաշխավորության ժամանակ կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով

նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը ապահովելու՝ երաշխավորողների պարտականության հետ, պաշտպանը նշել է, որ նման պարտականություն երաշխավորողները չեն կրում:

12.2. Բողոքաբերը գտել է նաև, որ գրավի չափի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները չեն կարող բավարարել «հիմնավորված դատական ակտի» չափանիշին: Վերաքննիչ դատարանը, գրավի չափին անդրադառնալիս, պետք է հաշվի առներ, սակայն հաշվի չի առել, որ Ռ.Քոչարյանի գույքը և դրամական միջոցները, որոնք թվարկված են որոշման մեջ, գտնվում են կալանքի տակ և, հետևաբար, նման մեծ չափի գրավի գումար վճարելը անհամաչափ դժվարությունների առջև է կանգնեցրել Ռ.Քոչարյանին:

12.3. Վերոգրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշումը մասնակիորեն, այն է՝ Առաջին ստյանի դատարանի՝ 2020 թվականի մայիսի 13-ի որոշումն ուժի մեջ թողնելու մասով քեկանել, վերացնել Ռ.Քոչարյանի նկատմամբ բոլոր տեսակի խափանման միջոցները, հակառակ դեպքում՝ փոխել նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ որպես խափանման միջոց ընտրելով Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետներ Վազգեն Մանուկյանի, Խոսրով Հարությունյանի, Կարեն Կարապետյանի, ինչպես նաև՝ Արցախի Հանրապետության նախկին վարչապետ Անուշավան Դանիելյանի անձնական երաշխավորությունը: Վերաքննիչ դատարանի կիրառած խափանման միջոցը՝ գրավը պահպանելու դեպքում, պաշտպանը խնդրել է նվազեցնել գրավի գումարի չափը՝ հաշվի առնելով վճռաբեկ բողոքում ներկայացված հանգամանքները:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ տվյալ գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ միջոց՝ զսպելու համար ազատության մեջ գտնվելու դեպքում ամբաստանյալ Ռ.Քոչարյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

14. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուսարը կանխելու համար. (...):»

15. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) իր նախադեպային պրակտիկայում ձևավորել է մոտեցում առ այն, որ փախուստի վտանգը չի կարող հիմնվել բացառապես հնարավոր պատժի ծանրության վրա: Այն պետք է գնահատվի մի շարք այլ վերաբերելի ապացույցների վրա հիմնվելով, որոնք կամ կհաստատեն այդ վտանգի առկայությունը, կամ կհաստատեն, որ վտանգն այնքան փոքր է, որ արդյունքում դրանով անհնար է հիմնավորել նախնական կալանքը⁵⁶⁷:

Միաժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ փախուստի վտանգը պետք է գնահատել՝ հաշվի առնելով մի շարք գործոններ, որոնք կվերաբերեն տվյալ անձի կերպարին, բարոյականությանը, մշտական բնակության վայրին, մասնագիտությանը, ունեցվածքին, ընտանեկան և տարատեսակ այլ կապերին այն երկրի հետ, որում նա ենթարկվում է քրեական հետապնդման⁵⁶⁸:

Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով վարույթը խոչընդոտելու հիմքին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ կազմակերպված հանցավոր գործունեությանը կամ հանցախմբերին առնչվող գործերով կալանավորված անձին ազատ արձակելու դեպքում նրա կողմից գործով վկաների կամ գործով անցնող այլ կասկածյալների վրա ճնշում գործադրելու կամ վարույթն այլ կերպ խոչընդոտելու ռիսկը հաճախ հատկապես բարձր է⁵⁶⁹:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անսազույրության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: (...):»

Նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խախտանման միջոց կարող է| կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով

⁵⁶⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Panchenko v. Russia* գործով 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 45100/98, կետ 106:

⁵⁶⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Becciev v. Moldova* գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 9190/09, կետ 58:

⁵⁶⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Stvrtecky v. Slovakia* գործով 2018 թվականի հունիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 55844/12, կետ 61:

ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել միջնորդական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճատների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ետպահանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը. (...)»:

16.1. Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, հարուցված քրեական գործի, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով⁵⁷⁰:

16.2. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում անդրադառնալով անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս նրան վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը հաշվի առնելու կարևորությունը, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ թեև մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը

⁵⁷⁰ Տե՛ս մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱԳԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 և այլ գործերով կայացված որոշումները:

հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ, դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող սյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին⁵⁷¹:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով գործի քննությանը խոչընդոտելու վտանգը կալանավորումից նվազ խիստ խափանման միջոցի, մասնավորապես՝ անձնական երաշխավորության կամ գրավի կիրառման պայմաններում չեզոքացնելու հնարավորության հարցին, արձանագրել է, որ թեև դատավարության ներկա փուլում նշված ռիսկը նվազել է՝ նախնական քննության փուլի համեմատ, երբ իրականացվում էր ապացույցներ հավաքելու գործընթաց, սակայն չի նվազել այնքան, որպեսզի վերացված համարվի Ռ.Քոչարյանին կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը:

Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ գործի քննությունը դեռևս չի անցել դատաքննության փուլ, և տվյալ պահին գործով ձեռք բերված որևէ ապացույց հետագոտված չէ, հետևաբար գործի քննությանը խոչընդոտելու վտանգի բացակայության մասին պաշտպանության կողմի փաստարկները հիմնավոր չեն: Նշված հետևության հանգելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել նաև Ռ.Քոչարյանի կողմից երկար տարիների ընթացքում բարձր պաշտոններ զբաղեցնելու հանգամանքը և դրանով պայմանավորված վերջինիս կապերն ու ազդեցությունը, ինչպես նաև նրան առաջադրված մեղադրանքի ծանրությունը, ինչը բարձրացնում է դատավարությանը մասնակցող անձանց վրա հնարավոր ներգործության, գործի քննությանը միջամտության ռիսկը⁵⁷²:

17.1. Վերաքննիչ դատարանը մասնակիորեն բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, ամբաստանյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացրել և վերջինիս նկատմամբ կիրառել է գրավ՝ 2.000.000.000 (երկու միլիարդ) ՀՀ դրամի չափով: Վերաքննիչ դատարանը Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց գրավ կիրառելիս հաշվի է առել հետևյալ հանգամանքները.

- Առաջին ատյանի դատարանի այն հետևությունը, որ ամբաստանյալ Ռ.Քոչարյանն ազատության մեջ մնալու պայմաններում կարող է խոչընդոտել դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով,

⁵⁷¹ Տե՛ս Վճարելի դատարանի՝ *Վահագն Պողոսյանի* վերաբերյալ գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ-1/0062/06/12 որոշումը:

⁵⁷² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

հիմնավոր է: Նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ամբաստանյալը նախկինում *հանդիսացել է բարձրաստիճան պաշտոնատար անձ, Հայաստանի Հանրապետության 2-րդ Նախագահ (շուրջ 10 տարի), պետության գլուխ՝ անձ, ով հերևել է ՀՀ Սահմանադրության պահպանմանը, ապահովել է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը և եղել Հայաստանի Հանրապետության անկախության, Կրթաձեռքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը:* Այդ հանգամանքն ինքնին կարող մեծացնում է անձի ազդեցությունը հասարակության յուրաքանչյուր շերտերում և ոլորտներում, ենթադրում է այդ ազդեցության ահռելի մեծ ծավալներ, սպիներ՝ անգամ նվազագույն, աննշան միջամտությունը որևէ անձի իրավունքներին կարող է բավարար լինել ենթադրյալ ցանկալի նպատակին հասնելու գործում:

- Մեղազգրվող ենթադրյալ հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը, մասնավորապես այն, որ ամբաստանյալ Ռ.Քոչարյանին *մեղազգրվում են ստանձնապես ծանր հանցագործություններ*, որոնց համար որպես պատիժ նախատեսված է 10-15 և 7-12 տարի ժամկետով ազատազրկում, որպիսի հանգամանքն էական նշանակություն ունի ամբաստանյալի հետագա վարքագիծը կանխորոշելու հարցում:

- Միևնույն ժամանակ, Ռ.Քոչարյանը, լինելով Հայաստանի Հանրապետության 2-րդ Նախագահը, բացի ունեցած ահռելի ազդեցությունից և կապերից, նաև հանրային բարձր ճանաչելիություն ունեցող անձ է, արդեն 12 տարի է՝ չի զբաղեցնում որևէ պետական պաշտոն և գտնվում է թե՛ իրավապահ մարմինների, թե՛ հասարակության անդամների ու զանգվածային լրատվության միջոցների ուշադրության կենտրոնում: Այսինքն՝ ամբաստանյալ Ռ.Քոչարյանի հանրային գործունեությունն առավելապես *հրապարակային է, իսկ նա, լինելով ՀՀ նախկին Նախագահ, առավել պարասիանատու վարքագիծ կարող է դրսևորել հենց նույն հասարակության, վարույթն իրականացնող մարմնի՝ իր իսկ կողմից նախկինում ղեկավարված պետության դատական իշխանության կողմից ընդունվող որոշումների, իր ընտանիքի անդամների առաջ:*

Այլ կերպ՝ ամբաստանյալի նախկինում զբաղեցրած պաշտոնը *ոչ միայն ահռելի ազդեցություն ունենալու իրական լծակ է, այլև զսպված, ինքնաքննադատ և հասարակության, սեփական անձի, ընտանիքի և վարույթն իրականացնող մարմնի առաջ պարասիանատու և հաշվելու վարքագիծ դրսևորելու գրավական:*

- Եթե անգամ ամբաստանյալի ընտանիքի անդամները, հարազատները, բարեկամները, ընկերները, համախոհները և/կամ այլք, առանց ամբաստանյալի տեղեկացվածության և գիտության (որպիսի հանգամանքների ապացուցման բեռը չի կարող կրել պաշտպանության կողմը), որևէ կերպ փորձել են միջամտել քրեական գործի քննության բնականոն ընթացքին, ներառել դատավարության մասնակիցների վրա, ապա այդ հանգամանքները չեն կարող գնահատվել որպես ամբաստանյալի կողմից դրսևորվող վարքագծի վերաբերյալ եզրահանգումներ կատարելու համար բավարար հիմք, քանի

դեռ չի հիմնավորվել ամբաստանյալի ենթադրյալ կապն այդ ենթադրյալ գործողությունների հետ:

- Ժամանակի ընթացքում ամբաստանյալ Ռ.Քոչարյանի կողմից հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկերը թեև շարունակում են իրական և առկա լինել, *սակայն այդ ռիսկերը՝ նվազման առումով, ենթարկվել են որակական փոփոխությունների, ինչի արդյունքում չեն հատթահարում փաստական հանգամանքների վրա հիմնված ենթադրությունների այն անհրաժեշտ նշանորդ, որը թույլ կրար կապանավորումը որպես խախտման միջոց կիրառելը հիմնավոր դիարարկել:*

- Ամբաստանյալը երկու տարբեր ժամանակաշրջաններում ու դատավարության տարբեր փուլերում՝ նախնական քննության փուլում՝ 2018 թվականի օգոստոսի 13-ից դեկտեմբերի 7-ը, և դատական քննության փուլում՝ 2019 թվականի մայիսի 18-ից հունիսի 25-ը, 3 ամիս 24 օր և 1 ամիս 7 օր ժամկետներով գտնվել է ազատության մեջ և այդ ընթացքում ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման վերաբերյալ փաստական հանգամանքներ առկա չեն եղել (որպիսի հանգամանքը դատարանում հաստատեցին նաև դատախազները), ինչը ողջամտորեն նվազեցնում է ամբաստանյալի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը՝ հաշվի առնելով ամբաստանյալի կրթությունը և նախկինում զբաղեցրած պաշտոնը, որով ավելի իրական է դառնում նրա կողմից ենթադրյալ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հնարավոր քրեադատավարական հետևանքների գիտակցումը:

- ՀՀ նախկին վարչապետներ Վազգեն Մանուկյանի, Խոսրով Հարությունյանի, Կարեն Կարապետյանի, ինչպես նաև Արցախի Հանրապետության նախկին վարչապետ Անուշավան Դանիելյանի կողմից տրվելիք երաշխավորությունը չի կարող անհրաժեշտ և բավարար սոցիալ-հոգեբանական և զսպիչ գործոն հանդիսանալ՝ Ռ.Քոչարյանի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի սահմանափակման տեսանկյունից, ինչի մասին է վկայում երաշխավորողների հետ ունեցած հարաբերությունների բնույթը: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն ընդգծել է, *որ չունի լիարժեք համոզվածություն առ այն, որ որպես երաշխավոր ներկայացած անձինք կարող են իրական ազդեցություն ունենալ ամբաստանյալի հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծը սահմանափակելու համար:* Նման կասկածները հիմնված են ամբաստանյալի անցած ճանապարհի, նրա անձնային հատկանիշների և առանձնահատկությունների վերաբերյալ առկա տեղեկատվության վրա: Մասնավորապես՝ սույն գործով ամբաստանյալը շուրջ երկու տասնամյակ հանդիսացել է երկու հայկական պետականությունների ղեկավարը՝ զբաղեցնելով կառավարման դեպի լիարժեք նախագահական թեքում ունեցող հանրապետությունների Նախագահի բարձրագույն պաշտոնը, իրեն որպես անհատականություն պատկերացնում է լիդերի, հասարակական հեղինակություն ունեցող, խիստ պատասխանատու և իր խոսքը բարձրագույն արժեք համարող մարդու կարգավիճակում: *Նման հարկանիշների առկայության, դրանց կրողը լինելու պարկերացումների պայմաններում քիչ հավանական է թվում ամբաստանյալի վարքագծի*

համապարասիանեցումը երաշխավորողների կարծիքին՝ դատավարության ընթացքում պարզաձև վարքագծի դրսևորման վերաբերյալ:

- Դատական քննության ներկա փուլում գործի քննության ընթացքում պատշաճ վարքագծի ապահովման նպատակի իրացման տեսանկյունից առավել կիրառելի կարող է համարվել այնպիսի խափանման միջոց, ինչպիսին գրավն է: Թեև որոշակիորեն առկա է ամբաստանյալ Ռ.Քոչարյանի կողմից գործի քննությանը քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով դատարանում խոչընդոտելու հավանականությունը, սակայն գրավի կիրառման միջոցով հնարավոր է նվազեցնել նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հնարավոր ռիսկերը: Ամբաստանյալի նկատմամբ գրավի ողջամիտ չափ կարող է համարվել 2.000.000.000 (երկու միլիարդ) ՀՀ դրամը, որը վճարված լինելու պայմաններում զգալիորեն նվազում է դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, խոչընդոտելու հավանականությունը⁵⁷³:

18. Նախորդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-16.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց անփոփոխ թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել սույն գործում առկա մի շարք հանգամանքներ:

Այսպես՝ թեև Վճռաբեկ դատարանը բազմիցս նշել է, որ անձին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր: Մասնավորապես, սույն գործով Վերաքննիչ դատարանը թեպետ նշել է, որ Ռ.Քոչարյանին մեղսագրվում է առանձնապես ծանր երկու հանցագործություն, այնուամենայնիվ պատշաճ վերլուծության և գնահատականի չի արժանացրել դրանց բնույթը և կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, ինչպես նաև հանցակցությամբ կատարված ենթադրյալ հանցագործությունների մեխանիզմում ամբաստանյալի ունեցած դերակատարությունը, հանցագործությանը նրա մասնակցության բնույթն ու աստիճանը: Մինչդեռ, սույն գործում առկա մի շարք փաստական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ քննության տվյալ փուլում, երբ որևէ ապացույց դեռևս չէր հետազոտվել և գործը չէր անցել դատաքննության փուլ, գործի քննությանը

⁵⁷³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

խոչընդոտելու և դատավարության մասնակիցների նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու հավանականության ռիսկը շարունակում էր բավականին բարձր լինել: Մասնավորապես, վերոնշյալի մասին էին վկայում հետևյալ հանգամանքները.

- ամբաստանյալին գործի քննության տվյալ պահին մեղսագրվում էր *առանձնապես ծանր երկու ենթադրյալ հանցագործությունն՝* սահմանադրական կարգը տապալելը և առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալը, որոնք ոտնձգում են այնպիսի կարևոր արժեքների դեմ, ինչպիսիք են *սահմանադրական կարգի հիմունքներն ու պետության անվրանգությունը, պետական ծառայության սահմանված կարգը:*

- Ռ.Քոչարյանն իրեն մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքը ենթադրաբար կատարել էր *մի շարք հանցակիցների ներգրավմամբ, հանցավոր վարքագծի մեխանիզմում ունեցել էր առանցքային դերակատարություն:* Այսպես՝ մեղադրանքի բովանդակությունից ակնհայտ է, որ ենթադրյալ հանցագործությունը կատարվել էր կազմակերպված, հստակ դերաբաշխմամբ խմբի կողմից, պետական մի շարք կառույցներում առանցքային պաշտոններ զբաղեցնող անձանց ներգրավմամբ, իսկ հավանական հանցակիցները ծառայողական կախվածության մեջ էին գտնվել ամբաստանյալից:

- *Սույն քրեական գործի առանձնակի բարդությունն ու ծավալները, ինչպես նաև ենթադրյալ հանցավոր արարքներից հետո անցած բավականին տևական ժամանակահատվածը:* Այսպես՝ դեպքից հետո անցել էր շուրջ 10 տարուց ավել ժամանակ, ինչն ինքնին օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դժվարացնում է գործի քննության գործընթացը, սույն գործով անցնում էին 4 ամբաստանյալներ, 10 տուժողի իրավահաջորդներ, 106 տուժողներ և 872 վկաներ:

18.1. Այսպիսով, ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում իրականացված փաստերի վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ռ.Քոչարյանին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, ակնկալվող պատժի խստությունը, ենթադրյալ հանցավոր արարքները հանցակիցների ներգրավմամբ կատարելը, ովքեր զբաղեցնում էին պետական բարձր պաշտոններ և ամբաստանյալից գտնվում էին ծառայողական կախվածության մեջ, գործի բարդությունն ու ծավալները, դատավարության մասնակիցների աննախադեպ մեծ քանակը, ինչպես նաև ի սկզբանե ենթադրյալ հանցավոր արարքները դրանք թաքցնելուն ուղղված գործողություններով զուգակցելը և *գործի բուն քննության ընթացքում նույնպես դատավարության մասնակիցների նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու մասին վկայող փյալների սուկայությունն* առանցքային նշանակություն ունեն ամբաստանյալի կողմից գործի քննությանը միջամտելու ռիսկի չափերի և աստիճանի գնահատման տեսանկյունից, մասնավորապես, հանդիսանում են այնպիսի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնք էականորեն բարձրացնում են գործի քննությանը խոչընդոտելու հավանականության ռիսկը՝ հատկապես դատավարության

տվյալ պահին, երբ գործը դատաքննության փուլ դեռևս չէր անցել և որևէ ապացույց դեռևս չէր հետազոտվել, ինչի մասին իրավաչափորեն նշել էր նաև Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում:

Վերոնշյալի պայմաններում, Վճռաբեկ դատարանի համար անընդունելի է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ ժամանակի ընթացքում ամբաստանյալ Ռ.Քոչարյանի կողմից հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկերը թեև շարունակում են իրական և առկա լինել, **սակայն այդ ռիսկերը՝ նվազման ատուտով, ենթարկվել են որակական փոփոխությունների**, ինչի արդյունքում չեն հաղթահարում փաստական հանգամանքների վրա հիմնված ենթադրությունների այն անհրաժեշտ նշաձողը, որը թույլ կտար կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելը հիմնավոր դիտարկել:

Հարկ է նկատել, որ Եվրոպական դատարանը *Միլիթարյանն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռով, որով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում չի արձանագրել և անձին շարունակական կալանքի տակ պահելը համարել է հիմնավոր, իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ **մեղադրյալի զգալի ֆինանսական վիճակը** նրան թույլ է տալիս արգելանքից ազատվելու դեպքում ազդեցություն գործել վկաների և դատավարության մյուս մասնակիցների վրա: Բացի այդ, որոշման շրջանակներում Եվրոպական դատարանն ընդգծել է, որ պետք է հաշվի առնել **նաև գործի բարդությունը**, ինչպես նաև **հանցակցությանը կարարված** հանցագործությունների բացահայտման գործում հատուկ միջոցառումների իրականացումն ու **ապացույցների հավաքագրման երկարատև գործընթացում վարույթն իրականացնող մարմնի ցուցաբերած ջանասիրությունը** և այն փաստը, որ տեղի ունեցած ենթադրյալ հանցագործության կատարման և դրա առթիվ հարուցված քրեական գործով կատարված քննության միջև **սուկա երկարատև ժամանակահատվածը** մեծ դժվարություններ է առաջացրել քննիչների համար⁵⁷⁴: Եվրոպական դատարանը նույնաբովանդակ դիրքորոշում է արտահայտել նաև *Սոպինն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռով⁵⁷⁵:

19. Սույն որոշման 18-18.1-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքների համատեքստում էական նշանակություն ունին նաև Ռ.Քոչարյանի անձը բնութագրող տվյալների վերլուծությունը: Այսպես՝ ամբաստանյալը մշտապես զբաղեցրել է բարձրագույն պետական պաշտոններ, 1994 թվականին ընտրվել է ԼՂՀ Նախագահ, ապա 1997 թվականին նշանակվել է ՀՀ Վարչապետ, իսկ 1998-2008 թվականներին եղել է ՀՀ Նախագահը: Վերոնշյալը ենթադրում է հսկայական ազդեցություն և լծակներ ինչպես պետական համակարգի տարբեր օղակներում պաշտոններ զբաղեցնող անձանց, այնպես էլ հասարակության տարբեր շերտերի ու շրջանակների նկատմամբ: Ընդ որում, Ռ.Քոչարյանին մեղաազգրվում են իր ծառայողական գործունեության ոլորտում ենթադրաբար

⁵⁷⁴ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mkhitaryan v. Russia* գործով 2013 թվականի փետրվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 46108/11:

⁵⁷⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sopin v. Russia* գործով 2012 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 57319/10:

կատարված հանցավոր արարքներ և պատահական չէ, որ սույն գործի հետ առնչություն ունեցող անձինք ամբաստանյալից գտնվել են ծառայողական կախվածության և ենթակայության հարաբերությունների մեջ, նրանց մի մասն էլ անցնում էին գործով՝ որպես ամբաստանյալի հանցակիցներ: Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռ.Քոչարյանի՝ երկար տարիներ զբաղեցրած պաշտոնը, ունեցած դիրքն ու հեղինակությունը, հսկայական ազդեցությունը, կապերն ու լծակները, ինչպես նաև նրան մեղսագրվող հանցագործությունների բնույթը վկայում էին դատավարության տվյալ փուլում գործի քննությանը միջամտելու, դատավարության մասնակիցների նկատմամբ հնարավոր անօրինական ազդեցություն դրսևորելու ռիսկի շարունակական առկայության մասին:

Վերոշարադրյալի համատեքստում հարկ է մեջբերել Եվրոպական դատարանի՝ *Վահան Խանզադյանի* վերաբերյալ որոշմամբ արձանագրված հետևյալ դիրքորոշումը. «*Եվրոպական*՝ *դատարանը կրկնում է, որ դիմողին կայանքի տակ պահելու հիմնական պարճատարանություններից մեկը, որ ներկայացրել էին ազգային դատարանները, եղել է նրա կողմից արդարադատությանը միջամտելու հավանականությունը: Առկա է եղել վերանգ, որ ազատության մեջ լինելու պարագայում նա կմիջամտի քննությանը՝ հաշվի առնելով իր նախկին աշխատանքը ուսրիկանությունում և այն, որ նա մեղադրվել է իր նախկին ծառայողական գործունեության հետ սերտ կապված հանցագործություն կատարելու մեջ: Այսինքն ազգային դատարանները կարող էին հիմնավոր կերպով անհրաժեշտ համարել նրան կայանքի տակ պահելը»⁵⁷⁶:*

20. Այսպիսով, ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով և ամբաստանյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց գրավ կիրառելով, պատշաճ վերլուծության և գնահատականի չի արժանացրել ամբաստանյալին մեղսագրվող հանցավոր արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, սույն գործի հանգամանքները, ինչպես նաև ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ տվյալ գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ միջոց՝ զսպելու համար ազատության մեջ գտնվելու դեպքում ամբաստանյալ Ռոբերտ Քոչարյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը, հիմնավոր չէ:

Այս առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել նախկինում արտահայտված իր դիրքորոշումն առ այն, որ որպես վարույթն իրականացնող մարմին հանդես եկող Առաջին ատյանի դատարանի դատական ակտը

⁵⁷⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khanzadyan v. Armenia* գործով 2014 թվականի մարտի 11-ի որոշումը, գանգատ թիվ 68571/11:

բեկանելիս Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը պետք է հիմնված լիներ ծանրակշիռ փաստական հանգամանքների վրա և ունենար պատճառաբանվածության առավել բարձր աստիճան: Հակառակ մոտեցումը, Վճռաբեկ դատարանի հանդգամբ, կարող է իր բացասական ազդեցությունը թողնել առաջին ատյանի դատարանում քրեական գործի քննության բնականոն ընթացքի վրա՝ դրանով իսկ սահմանափակելով առաջին ատյանի դատարանի ներքին անկախությունը⁵⁷⁷:

20.1. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ Ռ.Քոչարյանի զբաղեցրած պաշտոնը կարող էր լինել զսպված, ինքնաքննադատ, հասարակության, սեփական անձի, ընտանիքի ու վարույթն իրականացնող մարմնի առաջ պատասխանատու և հաշվետու վարքագիծ դրսևորելու գրավական, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալի անձին, նրա զբաղեցրած պաշտոնին և դիրքին տրված վերոնշյալ մեկնաբանությունը չէր կարող բավարար լինել չեզոքացնելու գործի քննությանը խոչընդոտելու այն բարձր ռիսկը, որը առկա էր դատավարության տվյալ փուլում և որը հիմնավորվում էր գործում առկա, սույն որոշման նախորդ կետերում մեջբերված փաստական տվյալների համակցությամբ: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ վերոնշյալ հանգամանքների վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատողություններն էական հակասություն են պարունակում, ըստ էության բացառում են միմյանց, ուստի, Վճռաբեկ դատարանի հանդգամբ, չեն կարող դիտարկվել որպես բավարար չափով հանդգիչ և հիմնավորված փաստարկներ՝ Առաջին ատյանի դատարանի՝ կալանավորումն անփոփոխ թողնելու վերաբերյալ դատական ակտը բեկանելու համար:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը նախ ընդգծել է, որ ամբաստանյալն ունի ահռելի մեծ ազդեցություն հասարակության յուրաքանչյուր շերտերում ու ոլորտներում *և անգամ նվազագույն, աննշան միջամրությունը որևէ անձի իրավունքներին կարող է բավարար լինել ենթադրյալ ցանկալի նպատակին հասնելու գործում*: Միևնույն ժամանակ, սակայն, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալի նախկինում զբաղեցրած պաշտոնը *ոչ միայն ահռելի ազդեցություն ունենալու իրական լծակ է, այլև զսպված, ինքնաքննադատ և հասարակության, սեփական անձի, ընտանիքի և վարույթն իրականացնող մարմնի առաջ պատասխանատու և հաշվետու վարքագիծ դրսևորելու գրավական*: Այնուհետև, անդրադառնալով Ռ.Քոչարյանին կատմամբ անձնական երաշխավորություն խափանման միջոցի կիրառման հարցին՝ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի անձը բնութագրող միևնույն տվյալներին, այն է՝ զբաղեցրած պաշտոնին ու դիրքին, ունեցած հեղինակությանն ու ազդեցությանը, դարձյալ տվել է հակասական մեկնաբանություն՝ ընդգծելով, որ այդպիսի հատկանիշների առկայության, դրանց կրողը լինելու պայմաններում,

⁵⁷⁷ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Արման և Արքա Մադաթյանների վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 26-ի թիվ ԱՐԴ/0152/01/19 որոշումը:

քիչ հավանական է ամբաստանյալի վարքագծի համապատասխանեցումը երաշխավորողների կարծիքին՝ **դատավարության ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ:**

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ Ռ.Քոչարյանը հանրային բարձր ճանաչելիություն ունեցող անձ է, արդեն 12 տարի է՝ չի զբաղեցնում որևէ պետական պաշտոն և գտնվում է թե՛ իրավապահ մարմինների, թե՛ հասարակության անդամների ու զանգվածային լրատվության միջոցների ուշադրության կենտրոնում և նրա հանրային գործունեությունն առավելապես հրապարակային է, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն որոշմամբ արձանագրված փաստական տվյալների պայմաններում, վերոնշյալ փաստարկները ռոջամտորեն չեն կարող դիտարկվել որպես բավարար հակակշռող գործոններ՝ Ռ.Քոչարյանի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկերը չեզոքացնելու համար: Այսպես՝ այն հանգամանքը, որ ամբաստանյալն արդեն 12 տարի է՝ որևէ պետական պաշտոն չի զբաղեցնում, որևէ կերպ չի նվազեցնում վերջինիս կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականության ռիսկը, ավելին՝ Վերաքննիչ դատարանն իր իսկ որոշման մեջ ընդգծել է, որ Ռ.Քոչարյանի կողմից անգամ նվազագույն, աննշան միջամտությունը որևէ անձի իրավունքներին կարող է բավարար լինել ենթադրյալ ցանկալի նպատակին հասնելու գործում: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ ամբաստանյալը գտնվում է թե՛ իրավապահ մարմինների, թե՛ հասարակության անդամների ու զանգվածային լրատվության միջոցների ուշադրության կենտրոնում և նրա գործունեությունն առավելապես հրապարակային է, ապա Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում գլխավոր դատախազի կողմից վճռաբեկ բողոքում բերված այն փաստարկին, որ որևէ անձի հանրային գործունեության թեկուզ ամբողջական հրապարակայնությունը որևէ կերպ չի բացառում և չի կարող բացառել տվյալ անձի ոչ հրապարակային հարաբերությունների, շփումների, հանդիպումների ու պայմանավորվածությունների հավանականությունը կամ նվազեցնել այն:

21. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանը 2021 թվականի մարտի 26-ի որոշմամբ Ռ.Քոչարյանին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը ճանաչել է ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր⁵⁷⁸: ՀՀ Սահմանադրական դատարանի նշված որոշման հիման վրա Առաջին աստիճանի դատարանը 2021 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ Ռ.Քոչարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցրել է՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործի քննության տվյալ պահին՝ Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի դատական ակտի

⁵⁷⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի մարտի 26-ին կայացված թիվ ՄԴՌ-1586 որոշումը:

օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման ընթացքում, Ռ.Քոչարյանին մեղսագրվող հանցավոր արարքներից մեկով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, քրեական հետապնդումը փաստացի դադարեցվել է և ամբաստանյալին մեղսագրվում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցավոր արարքը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի այն հարցը՝ արդյո՞ք առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու դրվագով Ռ.Քոչարյանին մեղսագրվող հանցավոր արարքի դեպքում գրավը կարող է լինել արդյունավետ խափանման միջոց՝ վերջինիս պատշաճ վարքագիծն ապահովելու տեսանկյունից:

Այս առումով Վճռաբեկ դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ Ռ.Քոչարյանին մեղսագրվող առավել ծանր հանցագործության դրվագով քրեական հետապնդումը դադարեցվել է հանցադեպի բացակայության հիմքով, ընդ որում, Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ հենց այդ դրվագով էր արձանագրել ենթադրյալ հանցագործության, ինչպես նաև դրան ուղեկցող հանգամանքների առավել բարձր հանրային վտանգավորության մասին, որոնք հիմք էին տվել Վճռաբեկ դատարանին եզրահանգելու, որ գործի քննության տվյալ պահին առկա էր ամբաստանյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու բարձր հավանականության շարունակական ռիսկը: Մասնավորապես, ըստ մեղադրանքի՝ վերոնշյալ ենթադրյալ հանցավոր արարքը կատարվել էր պետական տարբեր օղակներում բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց ներգրավմամբ, նրանց մի մասը սույն գործով անցնում էր որպես ամբաստանյալի հավանական հանցակից, վերջիններս Ռ.Քոչարյանից գտնվել են ծառայողական ենթակայության հարաբերությունների մեջ, բացի այդ, տվյալ դրվագով անցնող դատավարության մասնակիցների թիվն աննախադեպ մեծ էր, որպիսի հանգամանքները դատաքննության փուլում խոչընդոտելու գործընթացը կարող էին անվերահսկելի դարձնել:

Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով Ռ.Քոչարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվելու պայմաններում, թեև շարունակում են վերջինիս կողմից հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկերն առկա լինել, այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, Վերաքննիչ դատարանի կողմից 2020 թվականի հունիսի 18-ի որոշմամբ կիրառված խափանման միջոց գրավն ի գործ է լինել արդյունավետ միջոց՝ զպելելու ամբաստանյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

22. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված գլխավոր դատախազի, տուժողների Ա.Հարությունյանի, Ս.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանի, տուժող Ա.Ավագյանի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի, տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Տ.Եգորյանի բողոքներն անհրաժեշտ է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի

18-ի դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

22.1. Անդրադառնալով Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանի վճռաբեկ բողոքում ներկայացված՝ ամբաստանյալի նկատմամբ բոլոր տեսակի խափանման միջոցները վերացնելու կամ վերջինիս նկատմամբ խափանման միջոց անձնական երաշխավորությունը կիրառելու կամ Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված խափանման միջոց գրավի գումարի չափը նվազեցնելու վերաբերյալ փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը. հաշվի առնելով ամբաստանյալ Ռ.Քոչարյանին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը, մասնավորապես այն, որ վերջինիս մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված առանձնապես ծանր հանցագործություն, տվյալ հանցանքն ամբաստանյալը ենթադրաբար կատարել է հանցակցությամբ, ինչպես նաև այն հանգամանքը, որ գործը գտնվում է քննության սկզբնական փուլում և որևէ ապացույց դեռևս չի հետազոտվել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում, պաշտպան Հ.Ալումյանի վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, ամբաստանյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ խափանման միջոցի ընտրության հարցում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն իրավաչափ է, հետևաբար պաշտպանի կողմից ներկայացված՝ Ռ.Քոչարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը վերացնելու կամ այլ խափանման միջոց կիրառելու կամ գրավի չափը նվազեցնելու վերաբերյալ փաստարկները չեն կարող հիմնավոր համարվել:

22.2. Անդրադառնալով տուժողների և տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչների վճռաբեկ բողոքների կապակցությամբ պաշտպան Հ.Ալումյանի կողմից ներկայացված պատասխանին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանում վկայակոչված փաստարկներն առնչվում են մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի կալանքի վերաբերյալ դատական որոշումների բողոքարկման ընթացակարգին ու սուբյեկտների շրջանակին, որոնք պայմանավորված են մինչդատական վարույթի փուլի առանձնահատկություններով և կիրառելի չեն գործի դատական քննության փուլի նկատմամբ:

Ինչ վերաբերում է ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքի կապակցությամբ պաշտպան Հ.Ալումյանի՝ 2021 թվականի հուլիսի 28-ին ներկայացված պատասխանին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիշյալ պատասխանի փաստարկները չեն բխում ինչպես ներկայացված վճռաբեկ բողոքի բովանդակությունից, այնպես էլ հիմքերից, հիմնավորումներից և պահանջից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ,

403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները մերժել: Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 18-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

36.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԳ/0052/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի օգոստոսի 13-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Տիգրան Լեոնիկի Բեգլարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի մայիսի 18-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայագորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90552618 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 19-ի որոշմամբ Տիգրան Բեգլարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 19-ի որոշմամբ Տ.Բեգլարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2018 թվականի մայիսի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճռով Տ.Բեգլարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել զինվորական ծառայության մեջ սահմանափակում՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ դրամական բավարարման գումարից 5 (հինգ) տոկոս պահումով:

3. Ամբաստանյալ Տ.Բեգլարյանի պաշտպան Կ.Բարսեղյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճիռը բեկանվել և փոփոխվել է: Տ.Բեգլարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերադրակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, և «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճվել: Նույն որոշմամբ Տ.Բեգլարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացվել է:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Տիգրան Բեգլարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն/ս, հանդիսանալով ՀՀ ԱԱԾ ԱԶ 5070 զորամասի սպահովման-սպասարկման վաշտի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար, կոչումով կապիտան, զորամասում իրեն հարկյացված սպայական կացարանում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված, ծեծել է իր նկատմամբ սրորադաս (ենթակա) հանդիսացող, կապի խմբի հասրուկ նշանակության օպերատոր, ենթասպա Դավիթ Փառնակի Հարությունյանին, այն է՝ 2018 թվականի մայիսի 8-ին ժամը 20:00-ի

սահմաններում, հիշյալ գործանախ սպայական կացարանում՝ իր սենյակում կենցաղային հարցի շուրջ ծագած վիճարանության ընթացքում աջ ձեռքով հարվածներ է հասցրել Դ.Հարությունյանին պարձառելով ձախ վերհոսքային, ձախ քունքային, քթի հիմի, արտրին շրթոնքի ձախ շրջանի ճանկովածքների, ձախ ակնակապճային շրջանի արյունազեղման, ձախ ակնագուռի ենթաշաղկապենային ճախակողմյան փոքր արյունազեղման ձևով՝ առողջության թեթև վնասի հարկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ»⁵⁷⁹:

6. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճռում արձանագրել է հետևյալը. «(..) Վերլուծելով ու գնահատելով դատաքննությանը հետազոտված սպացույցները և գործի նյութերն իրենց համակցությամբ, դրանց գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ինչպես նաև դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ընտրության վրա հիմնված ներքին հանգումները դատարանը համարել է համարում հետևյալ փաստական հանգումները՝

1. Կապիբան Տիգրան Բեգլարյանը հանդիսացել է վերադաս ենթասպա Դավիթ Հարությունյանի նկատմամբ:

2. 2018 թվականի մայիսի 8-ին նրանց միջև տեղի ունեցած միջադեպի պարձառը կապված չի եղել զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ:

3. Նշված միջադեպը տեղի է ունեցել կապիբան Տիգրան Բեգլարյանի սպայական կացարանում, որը հանդիսանում է ՀՀ ԱԱԾ ՍՋ 5070 գործանախ տարածք (համաձայն դեպքի վայրի գնտության մասին արձանագրության և ուշված գործանախ հրամանատարի կողմից տրված տեղեկանքի):

4. Միջադեպի ընթացքում Տիգրան Բեգլարյանն առնվազն երեք հարված է հասցրել Դավիթ Հարությունյանի գլխին, ինչի արդյունքում վերջինիս պարձառվել են մարմնական վնասվածքներ, որոնք առողջության թեթև վնասի հարկանիշներ չեն պարունակում (համաձայն Տիգրան Բեգլարյանի, Քնարիկ Մարտիրոսյանի և Վան Դանիելյանի նախաքննությամբ ու Դավիթ Հարությունյանի դատաքննությամբ և նախաքննությամբ տրված ցուցմունքների ու դատաբժիշկ-փորձագետի թիվ 121/ս եզրակացության):

5. Նշված միջադեպի ընթացքում Տիգրան Բեգլարյանի և Դավիթ Հարությունյանի միջև հարաբերությունները կրել են զինվորական կանոնագրքային բնույթ, քանի որ նրանք գրավել են զորամասի տարածքում, իսկ Դավիթ Հարությունյանը գրավել է հերթապահության մեջ, որի մասին տեղյակ էր նաև ամբաստանյալը:

6. Միջադեպի ընթացքում Դավիթ Հարությունյանը Տիգրան Բեգլարյանի նկատմամբ որևէ բռնի գործողություն չի կատարել, նրա գործողությունները կրել են պաշտպանողական բնույթ, որոնց արդյունքում Տիգրան Բեգլարյանին մարմնական վնասվածք չի հասցվել:

Վերոգրյալի հիման վրա, դատարանը գրնում է, որ Տիգրան Լեոնիկի Բեգլարյանը կատարել է հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական

⁵⁷⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 80-81:

օրենսգրքի 358.1 հոդվածի 1-ին մասով և որակվում է որպես զորամասում ստորադասին (ենթակային) ծեծել, որը կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ: (...)»⁵⁸⁰:

7. Ամբաստանյալ Տ.Բեգլարյանի պաշտպան Կ.Բարսեղյանի վերաքննիչ բողոքի համաձայն՝ «(...) [Առաջին ասրյանի դատարանի կողմից] չի գնահատվել «զորամասի տարածք» և «զինվորական հանցագործություններ» հասկացությունների բովանդակությունը, որոնք մեղսագրված արարքի որակման համար ունեն էական նշանակություն: Բուն միջադեպը տեղի է ունեցել սպայական կացարանում հանգստի ժամին, ինչպիսի հանգամանքը բացառում է արարքը զինվորական հանցագործություն որակելը, քանի որ միանշանակ զինվորական կարգի դեմ ուղղված չի եղել:

(...)

Դատարանը չի վկայակոչել հարցման արդյունքում ՀՀ ԱԱԾ ԱԶ հրամանատարի կողմից ներկայացված պատասխանը (...) և չի անդրադարձել դրա սպացուցողական նշանակությանը գործի ելքի վրա: (...) Իսկ պատասխանում արձանագրված է, [որ] նշված բնակելի շենքում, թեկուզ շենքը գրնվում է զորամասի սահմաններում, գործում են բնակության ընդհանուր համակեցության կանոնները: Սպաները, ենթասպաները ծառայությունից հեռոտ, ազատ ժամանակ, հանգստի մեջ գրնվելիս, ինչպես նաև արձակուրդի մեջ գրնվելիս հանդիսանում են պարզապես քաղաքացիներ և նրանց վրա չի տարածվում զինվորական կարգը»⁵⁸¹:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշման համաձայն. «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ասրյանի դատարանն ամբաստանյալ Տիգրան Բեգլարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ իր դատողությունները չի կառուցել գործի փաստական հանգամանքներից [թիտղ] ողջամիտ ենթադրությունների վրա, ինչի արդյունքում հանգել է սխալ հետևության ամբաստանյալի արարքի քրեաիրավական որակման վերաբերյալ:

(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ զորամասի տարածքում կատարված ոչ բոլոր արարքներն են համարվում զինվորական հանցագործություն, հետևաբար յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է զինվորական հանցագործությունները սահմանազատել ՀՀ քրեական օրենսգրքով արգելված այլ արարքներից, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող զանցանքներից:

Վերոգրյալի համարեքստում Վերաքննիչ դատարանը փաստում է, որ սույն քրեական գործով ձեռք բերված փաստական փյույաները բավարար չեն հիմնավորված եզրակացության հանգելու առ այն, որ ամբաստանյալի գործողություններն ուղղված են եղել զինվորական ենթակայության կարգը

⁵⁸⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 143-144:

⁵⁸¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 82-101:

խախտելուն: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ թեև միջադեպը Կրեմլի է ունեցել զորամասի փարածքում, սակայն վիճարանության արդյունքում Կրեմլին հարվածելը պայմանավորված է եղել ամբաստանյալի և Կրեմլի միջև առաջացած ներանձնային հարաբերություններով: Այլ կերպ՝ ամբաստանյալի գործողություններն ուղղված են եղել ոչ թե զինվորական ենթակայության կարգի խախտմանը Կրեմլի նկատմամբ բռնի գործողություններ կատարելուն, այլ Կրեմլի դրսևորած վարքագծին (կատարած արտահայտության) ի պարտախան որպես անհատ որոշակի քայլեր ձեռնարկելուն (որը սույն դեպքում արտահայտվել է Դ.Ն.Վարությունյանին հարվածելով՝ առնվազն երեք անգամ):

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործով ձեռք բերված ապացույցների ամբողջությունը բավարար չէ ամբաստանյալ Տիգրան Բեգլարյանի անմեղության կանխավարկածը հաղթահարելու և հաստատված համարելու վերջինիս գործողությունների՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված լինելու հանգամանքը: Վերաքննիչ դատարանը փաստում է, որ գործում առկա փաստական փյուռների ամբողջությունը վկայում է այն մասին, որ Տիգրան Բեգլարյանի գործողությունները հանդիսացել են Կրեմլի կողմից կատարված արտահայտության պարտախան, նպատակ են հետապնդել լուծել Կրեմլի հետ վիճարանության արդյունքում առաջացած հարաբերությունները, որպիսի հանգամանքները վկայում են ամբաստանյալի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հարկանիշների առկայության մասին: (...)»⁵⁸²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, կայացված որոշմամբ թույլ է տրվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի հետևությունները չեն համապատասխանում սույն գործով հետազոտված ապացույցներին և հակասում են ինչպես ապացույցների գնահատման, այնպես էլ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական որակման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել կամ սխալ է գնահատել գործի լուծման համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ ամբաստանյալ Տ.Բեգլարյանի կողմից կատարվել է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն, և նրա արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին:

⁵⁸² Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 72-74:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի դատավճիռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափի է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված անձնական շարժառիթով կատարված հանրորեն վտանգավոր արարքը չի կարող որակվել որպես զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործություն:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում ստորադասին (ենթակային) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ (...):»*

Մեջբերված նորմը պատասխանատվություն է սահմանում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված առավել բարձր վտանգավորություն ներկայացնող հանցանքներից մեկի՝ պետի կողմից ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու կամ դրա սպառնալիքի համար, որպիսի արարքը ոչ միայն ոսնձգում է անձի կյանքի և առողջության դեմ, այլև խախտում է զինվորական կանոնադրքերով սահմանված ենթակայության կարգը, վկայում զինվորական ծառայության նկատմամբ հանցանք կատարած անձի ունեցած անբարեխիղճ վերաբերմունքի մասին, ինչն էլ իր հերթին բացասական ազդեցություն է գործում զինվորական կարգապահության, ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստվածության վրա⁵⁸³:

Այս հանցագործության անմիջական օբյեկտը զինվորական ենթակայության կարգն է, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ հանդես են գալիս անձի կյանքը և առողջությունը:

քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է պետի կողմից ստորադասին ծեծելով, նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Ընդ որում, այս հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր պայման է վերը նշված արարք(ներ)ի կատարումը գորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում:

Սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով արգելված արարքը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ գորամասում կամ զինվորական

⁵⁸³ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Սարգիս Խաչատրյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԳ/0031/01/14 որոշումը:

ծառայություն կրելու այլ վայրում ստորադասի նկատմամբ զինվորական պարտականությունները կատարելու հետ չկապված բռնություն է գործադրում կամ դա գործադրելու սպառնալիք է տալիս և ցանկանում է դա:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է. որպես այդպիսին հանդես է գալիս պետը (հրամանատարը):

13. Զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկությունների կապակցությամբ Վճռաբեկ դատարանը *Մրասպինո Հովհաննիսյանի* գործով որոշմամբ արձանագրել է, որ «(...) [Զ]ինվորական ծառայության մեջ ընդգրկված լինելու փաստն ինքնին հիմք չէ արձանագրելու, որ զինծառայողը յուրաքանչյուր պահի զինվորական ծառայության կոնկրետ պարտականություններ է կատարում: (...) [Ծ]առայության մեջ գրնվելու ժամանակաշրջանում զինծառայողները գրնվում են ոչ միայն զինվորական ծառայական հարաբերությունների, այլ զինվորական օրենսդրության նորմերով չկարգավորվող այլ (անձնական, քաղաքացիաիրավական, ընտանեկան և այլն) իրավահարաբերությունների մեջ: (...) [Զ]որամասի տարածքում կատարված ոչ բոլոր արարքներն են համարվում զինվորական հանցագործություն, հետևաբար յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է զինվորական հանցագործությունը հստակ սահմանազատել ՀՀ քրեական օրենսգրքով արգելված այլ արարքներից, ինչպես նաև կարգապահական պարասիանսարվության հիմք հանդիսացող զանցանքներից: (...)»⁵⁸⁴:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ «(...) [Զ]ինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված անձնական կամ այլ շարժառիթներով իրականացվող հանրորեն վրանգավոր արարքները մինչև օրենքում կատարված փոփոխությունները զինվորական հանցագործություն չեն համարվել: Այդ մասին է վկայում, մասնավորապես, 2013 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքը, որով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում (օրինակ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ, 358.1-րդ, 360-րդ հոդվածները), որոնց դիպրոզիցիաներում առկա է «եթե դա կատարված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ» ձևակերպումը: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքում հստակ ամրագրված է, որ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված արարքները որպես զինվորական հանցագործություն որակելու համար անհրաժեշտ է որպեսզի համապարասիան հոդվածի դիպրոզիցիայում հստակ նշում արված լինի այն մասին, որ արարքը ենթակա է որակման որպես զինվորական հանցագործություն նաև այն դեպքում, երբ կատարված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ»⁵⁸⁵:

⁵⁸⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մրասպինո Հովհաննիսյանի* գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՄԴ/0204/01/11 որոշման 19-րդ և 21-րդ կետերը:

⁵⁸⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մխիթար Մարտիանյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՄԴ/0185/01/13 որոշման 19-րդ կետը:

13.1. Հինք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն ընդգծում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ վերոնշյալ հոդվածով արգելված արարքները կատարվեն զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում և կապված չլինեն զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ:

14. Սույն գործի կյուբերի ուսումնասիրությունից երևում է, որ Տ.Բեգլարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, լինելով վաշտի հրամանատարի պաշտոնակատար, կոչումով կապիտան, զորամասում՝ իրեն հատկացված սպայական կացարանում, զինվորական ծառայության պարտականություններ կատարելու հետ չկապված, ծեծել է իր նկատմամբ ստորադաս (ենթակա) հանդիսացող ենթասպա Դ.Հարությունյանին՝ պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ⁵⁸⁶:

Առաջին ատյանի դատարանը, դատաքննությամբ հետազոտված սպացույցների գնահատման արդյունքում, Տ.Բեգլարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում⁵⁸⁷:

Վերաքննիչ դատարանն իր հերթին եկել է այն եզրահանգման, որ Տ.Բեգլարյանի արարքը համապատասխանում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասի, այլ նույն օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներին: Որպես հիմնավորում Վերաքննիչ դատարանը նշել է, որ թեև միջադեպը տեղի է ունեցել զորամասի տարածքում, սակայն վիճարանության արդյունքում տուժողին հարվածելը պայմանավորված է եղել ամբաստանյալի և տուժողի միջև առաջացած ներանձնային հարաբերություններով, այն է՝ ամբաստանյալի գործողություններն ուղղված են եղել ոչ թե զինվորական ենթակայության կարգի խախտմամբ տուժողի նկատմամբ բռնի գործողություններ կատարելուն, այլ տուժողի դրսևորած վարքագծին (կատարած արտահայտության) ի պատասխան որպես անհատ որոշակի քայլեր ձեռնարկելուն, որը սույն դեպքում արտահայտվել է Դ.Հարությունյանին առնվազն երեք անգամ հարվածելով⁵⁸⁸:

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից բխում է, որ ստորադաս դատարաններն ըստ էության հաստատված են համարել այն փաստը, որ Տ.Բեգլարյանը բռնություն է գործադրել տուժող Դ.Հարությունյանի նկատմամբ զորամասի տարածքում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված: Մինչև ժամանակ, վերը նշված փաստական հանգամանքների պայմաններում, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ արարքը չի կարող որակվել որպես զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն:

⁵⁸⁶ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁵⁸⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁵⁸⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

15. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել առ այն, որ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված անձնական շարժառիթով կատարված հանրորեն վտանգավոր արարքը չի կարող որակվել որպես զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն: Այս առումով Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ օրենսդիրը, ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում հստակ ամրագրելով *«եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ»* հատկանիշը, քրեական պատասխանատվություն է սահմանել նաև զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում պետի կողմից ստորադասի նկատմամբ այնպիսի բռնի գործողություններ կատարելու կամ դրա սպառնալիքի համար, որոնք կապված չեն զինվորական պարտականությունները կատարելու հետ և իրականացվում են անձնական կամ այլ շարժառիթներով:

16. Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված անձնական շարժառիթով կատարված հանրորեն վտանգավոր արարքը չի կարող որակվել որպես զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործություն, իրավաչափ չէ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով որոշում կայացնելիս սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածը: Մինևս այն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը քննարկման առարկա չի դարձրել պաշտպանի վերաքննիչ բողոքում վկայակոչված՝ սպայական կացարանը զորամասի տարածք դիտարկելու և ըստ այդմ՝ Տ.Բեգլարյանի արարքը զինվորական հանցագործություն որակելու իրավաչափության վերաբերյալ փաստարկը, ինչը, ըստ Վճռաբեկ դատարանի, ամբաստանյալի արարքի որակման հարցում կարող էր էական նշանակություն ունենալ:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք են: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով սույն որոշմամբ արձանագրված խախտումները, պետք է քննարկման առարկա դարձնի սպայական կացարանը զորամասի տարածք դիտարկելու մասին պաշտպանի վերաքննիչ բողոքում բարձրացված փաստարկը և Տ.Բեգլարյանի արարքի քրեաիրավական որակման հարցում հանգի համապատասխան հետևության:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տ.Բեգլարյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Տիգրան Լեոնիկի Բեգլարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

37.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0541/11/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորները

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի օգոստոսի 27-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հունվարի 16-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11151718 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար նույն օրն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժին և 2018 թվականի հունվարի 17-ին ընդունվել է քննիչ Հ.Քյասինյանի (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) վարույթ:

2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունվարի 17-ի որոշմամբ ՕՖեյյա Սեդրակի Հարությունյանը ճանաչվել է տուժող:

3. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ կասկածյալ Անահիտ Աբրահամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի

121-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

4. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ թիվ 11151718 քրեական գործով վարույթը կասեցվել է՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի անհայտ լինելու հիմքով:

Քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ վերոնշյալ որոշման դեմ տուժող Օ.Հարությունյանի բողոքը ՀՀ դատախազության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Մ.Աստուխյանի (այսուհետ՝ նաև Դատախազ)՝ 2018 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ մերժվել է:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մարտի 20-ի որոշմամբ դիմող Օֆելյա Հարությունյանի բողոքը բավարարվել է՝ նախաքննության մարմինը պարտավորեցվել է քրեական գործի վարույթը վերսկսել և վերացնել Օ.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

Դատախազի՝ 2019 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ թիվ 11151718 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին քննիչի՝ 2018 թվականի փետրվարի 19-ի որոշումը վերացվել է:

5. Նախաքննության մարմինը 2019 թվականի մայիսի 15-ին որոշում է կայացրել թիվ 11151718 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի անհայտ լինելու հիմքով:

Նշված որոշման դեմ Օ.Հարությունյանի ներկայացրած բողոքը Դատախազի՝ 2019 թվականի հունիսի 17-ի որոշմամբ մերժվել է:

6. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 15-ի և Դատախազի՝ 2019 թվականի հունիսի 17-ի որոշումների դեմ Օֆելյա Հարությունյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ դիմող Օ.Հարությունյանի բողոքն ամբողջությամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշման դեմ դիմող Օ.Հարությունյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ բավարարվել է. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը բեկանվել և փոփոխվել է, դիմող Օ.Հարությունյանի բողոքը բավարարվել է և սահմանվել վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ վերացնելու տվյալ որոշմամբ արձանագրված՝ Օ.Հարությունյանի իրավունքների խախտումները:

9. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մարտի 12-ի որոշմամբ վարույթ է

ընդունվել: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի օգոստոսի 12-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:

10. Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել դիմող Օ.Հարությունյանը՝ խնդրելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

11. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշման համաձայն՝ «Համաձայն բողոքի վերաբերյալ Դատարան ներկայացված նյութերի բողոքաբեր Օֆելյա Հարությունյանը ՀՀ ոստիկանության ԵԲՎ Շենգավիթի բաժնում 2018թ. հունվարի 08-ին զվարճանքի հատկանշանքներով և նույն բաժնում 2018թ. հունվարի 10-ին զվարճանքի բացարձակությամբ հայտնել է, որ 2017թ. դեկտեմբերի 26-ի ժամը 14:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Մանթաշյան փողոցի 1/2 հասցեում գտնվող «Առաքելություն Հայաստան» բարեգործական կազմակերպության Շենգավիթ համայնքի ճաշարանում, սոցիալապես անապահով մարդկանց ամանորյա նվերներ բաժանելու ընթացքում Ասահիյր Աբրահամյանը հրել է իրեն, ինչի հետևանքով ինքն ընկել է գետնին և ստացել մարմնական վնասվածքներ:

Դատարժշկական փորձաքննության 2018թ. հունվարի 08-ի թիվ 0011 եզրակացության համաձայն՝ Օֆելյա Հարությունյանին պատճառվել է աջ բազկի շրջանի արյունազեղման և աջից երկրորդ կողմակրի կտրվածքի ձևով մարմնական վնասվածքներ, որոնք առողջությանը պատճառել են միջին ծանրության վնաս, առողջության րևական քայքայումով:

(...)

Իրականացված նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական փյուռի վերլուծության արդյունքում ՀՀ քննչական կոմիտեի ԵԲՎ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Հ.Քյուսինյանը նկատի ունենալով, որ քրեական գործով կատարվել են անհրաժեշտ հնարավոր բոլոր քննչական և դատավարական գործողությունները, որի արդյունքում չի պարզվել որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը՝ 2019թ. մայիսի 15-ին կայացրել է պատճառաբանված որոշում թիվ 1151718 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի անհայտ լինելու հիմքով:

Նշված որոշման դեմ բերված բողոքը ՀՀ դատախազության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Մ.Անդրոնյանի 2019թ. հունիսի 17-ի որոշմամբ մերժվել է: Ի հիմնավորում նշված որոշման՝ դատախազը նշել է, որ բողոքաբերի կողմից նշված բոլոր անձինք հարցաքննվել են, որի արդյունքում չի հիմնավորվել Ասահիյր Աբրահամյանի կողմից Օֆելյա

Հարստությունյանին հրելու և զեպրնին գցելու հանգամանքը, ուստի հանգել է հեղուկության, որ քննիչի որոշումն օրինական և հիմնավորված է:

Փաստորեն վարույթն իրականացնող մարմինը պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու պարտականությունը, իրացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված՝ անհրաժեշտ հնարավոր բոլոր դատավարական գործողությունները կատարելուց հետո որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայրնի չլինելու դեպքում քրեական գործով վարույթը կասեցնելու՝ օրենքով իրեն վերապահված հայեցողական լիազորությունը, 2019թ. մայիսի 15-ին կայացրել է պարճառարանված որոշում՝ թիվ 11151718 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին:

Բողոքարեթի պարճառարանություններն այն մասին, որ քրեական գործով վարույթն իրականացնող մարմինը չի կատարել բազմակողմանի և օբյեկտիվ քննություն՝ անհիմն են, այդ առումով բավարար փաստարկներ Դատարանին չեն ներկայացվել:

Բողոքի քննության արդյունքում չի հիմնավորվել, որ դատարանի որոշմամբ բողոքարեթի իրավունքների և ազատությունների այնպիսի խախտումներ են թույլ տրվել, որոնք թույլ կրան որոշում կայացնել բողոքը հիմնավորված ճանաչելու և բողոքարեթի իրավունքների ու ազատությունների խախտումը վերացնելու պարտավորություն վարույթն իրականացնող մարմնի համար սահմանելու մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ վիճելի որոշումներով ՕՖԵՅԿ Հարստությունյանի իրավունքների կամ ազատությունների խախտված լինելու վերաբերյալ բավարար հիմնավորումներ Դատարանին չեն ներկայացվել, վարույթն իրականացնող մարմնի գործողությունների և որոշումների օրինականության արուգման ընթացակարգերը և ժամկետները պահպանվել են Դատարանը գրնում է, որ բողոքն անթողչությամբ անհիմն է և ենթակա է մերժման: (...)»⁵⁸⁹:

12. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշման համաձայն. «(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման մեջ որպես հիմք նշված է՝ հայրնի չէ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը, թեև որոշման մեջ արճանագրված է, որ առկա է հանցագործության դեպքը:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ քննիչի այս մտրեցումը թեև թիում է ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի ՄԴՈ-871 որոշումից, որի համաձայն՝ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր, ինչը նշանակում է, որ եթե դեպքը կա,

⁵⁸⁹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 29-32:

նորեւն գործի վարույթը չի կարող կարճվել, սակայն Վերաքննիչ դադարանը գրնում է, որ այնք է որոշ վերապահումներ անել սավածից, հատկապես այն գործերով, որոնք հարուցվում են մասնավոր մեղադրանքի կարգով և, երբ փուժողը նշում է կոնկրետ անձին, որպես հանցագործություն կարարողի:

Բանն այն է, որ այս դեպքում գործ ունենք մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործության դեպքի հետ, որում փուժողը նշում է կոնկրետ անձի (Ասահիր Արրահամյանին), որպես հանցագործություն կարարողի, իսկ իրավասու մարմինը քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ հարակ նշել է Ա.Արրահամյանի կողմից Օ.Հարությունյանին հրելու մասին, որի հետևանքով էլ վերջինս վայր է ընկել և սրացել վնասվածքներ, ինչը նշանակում է, որ վարույթն իրականացնող մարմինը քրեական գործ հարուցելու որոշմանը հարակ ընդգծել է քրեական գործի սահմանները ոչ միայն կոնկրետ արարքով (in rem)՝ Օ.Հարությունյանին հրելու և վայր գցելու դեպքով, այլև անձով (in personam)՝ Ասահիր Արրահամյանով, ինչն իր հերթին նշանակում է, որ հենց այդ արարքի և այդ անձի մասով կարող է քննություն իրականացվել, դրանցից զար սույն քրեական գործով այլ արարքի և անձի վերաբերյալ քննություն չի կարող իրականացվել: Եթե նոր փաստ է ի հայր գալիս, որը համապարասանում է Օրենսգրքի 28-րդ և 184-րդ հոդվածներով սահմանված չափանիշներին, սպա քննիչն իրավունք ունի հարուցելու նոր քրեական գործ և միացնելու սույն գործին կամ առանձին լուժելու դրա ընթացքը, սակայն այլ է վիճակն այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ կոնկրետ արարքի կարարումը վերագրվում է կոնկրետ անձի, քանի որ այդ դեպքում՝ քննիչը նույն փաստերի վերաբերյալ հարուցված քրեական գործով այլ անձանց չի կարող վարույթին ներգրավել: քննիչը քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ նշելով կոնկրետ անձի և նրան ներկայացնելով որպես ենթադրյալ հանցագործությունը կարարողի, դրանով իսկ դնում է արգելք այդ անձից զար, այլ անձի այդ վարույթին մասնակից դարձնելու համար:

(...)

Ասվածը սույն գործի պարագայում նշանակում է հետևյալը. քանի որ քրեական գործը հարուցվել է Օ.Հարությունյանին՝ Ա.Արրահամյանի կողմից հրելու և վայր գցելու դեպքի առթիվ, իսկ նախաքննության մարմինը գրել է, որ Ա.Արրահամյանի կողմից փուժողին հրելու և վայր գցելու հանգամանքը սպացուցների բավարար համակցությանը չի հասարարվել և դրա համար 17.02.2018 թվականին որոշում է կայացրել նրա նկարումը իրականացվող քրեական հետապնդումը ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով դադարեցնելու մասին, ուսրի քրեական գործի վարույթը կասեցնելը, որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայրնի չլինելու հիմքով, կրում է ձևական բնույթ, քանի որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ նշելով Ա.Արրահամյանի անունը նախաքննության մարմինը սահմանափակել է այլ անձի՝ սույն քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելու հնարավորությունը (...):

Վերաքննիչ դադարանը փաստում է, որ իրավասու մարմինը քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելով կոնկրետ անձի կողմից հանցանք

կատարելու փաստի առթիվ, դրանով իսկ սահմանափակել է քրեական վարույթի սահմանները կոնկրետ անձով (in personam), ուստի սպացույցների անբավարարության պարճառաբանությանը քրեական հետապնդումը դադարեցնելու պայմաններում, պետք է նաև կարճեր քրեական գործի վարույթը, հարկապես, որ փուժողը ևս բացառապես այդ անձին է մեղադրում իրեն հրելու և վայր գցելու մեջ կամ հակառակը՝ պետք է մեղադրական եզրակացությանը գործն ուղարկեր դատարան ըստ էության քննության առնելու համար: Միջանկյալ լուծումը սույն դեպքում չի բխում օրենքի պահանջներից և փրամաբանությունից:

Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ մասնավոր մեղադրանքի կարգով քննվող քրեական գործով փուժողը մարմանն է կոնկրետ անձին կամ անձանց իր նկարմանը ենթադրյալ հանցագործությունը կատարողի, իսկ իրավասու մարմինը քրեական գործը հարուցում է ինչպես կոնկրետ փաստով (in rem), այնպես էլ կոնկրետ անձով (in personam), սակայն հետագա քննության արդյունքում հնարավոր չի լինում բավարար սպացույցների համակցությանը քրեական հետապնդում հարուցել կոնկրետ անձի նկարմանը և անհրաժեշտություն է առաջանում որոշում կայացնել այդ անձի նկարմանը քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, սպա Վերաքննիչ դատարանի գնահատմանը քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու հիմքերը համընկնում են, նույնանում են, քանի որ կոնկրետ դեպքին փուժողի կողմից մարմանն է անձի մասնակցությունն սպացուցված չհամարելու պայմաններում, այլևս գործի վարույթը շարունակելը դառնում է ձևական, դրա ելքը ի սկզբանե կանխորոշված է. գործի վարույթը պարզապես կասեցվել է և այլևս որևէ գործողություն չի կատարվելու և որևէ անձի այլևս հնարավոր չի լինելու մեղադրյալ ներգրավել, ինչը որ փաստացի տեղի է ունեցել սույն գործով:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ վերոնշյալ ողջ խառնաշփոթը հերմանք է այն քանի, որ նախաքննության մարմինն ակնհայտորեն անհիմն և չպարճառաբանված որոշում է կայացրել Ա.Արրահամյանի նկարմանը քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Թեև բողոքը չի վերաբերում Ա.Արրահամյանի նկարմանը քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման իրավաչափությանը, սակայն Վերաքննիչ դատարանը փաստում է, որ առանց այդ որոշմանն անդրադառնալու հնարավոր չէ ցույց տալ փուժողի իրավունքների և օրինական շահերի խախտումները, քանի որ հենց այդ որոշումից է ածանցվում նախաքննության մարմնի և դատախազի կողմից թույլ տրված մնացյալ խախտումները:

Ինչպես երևում է Ա.Արրահամյանի նկարմանը քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումից՝ նախաքննության մարմինը փուժողի ցուցմունքը և փորճագետի եզրակացությունը բավարար չի գնահատել մեղադրանք առաջադրելու համար, այն դիտարկելով չփարապրված կասկածների համարեքսպում:

Վերաքննիչ դատարանի գնահատմանը՝ նախաքննության մարմինը դրանով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածով նախատեսված սպացույցների գնահատման համաչափության սկզբունքը՝

ակնհայտորեն արժեզրկել է փուժողի ցուցմունքը, դրան փվել է նվազ նշանակություն այլ ապացույցների համեմատությամբ, ընդ որում՝ չվերլուծելով և չհամադրելով դրանք այլ ապացույցների հետ համակցության մեջ: Այդ որոշումից երևում է, որ քննիչը պարզապես շարադրել է ապացույցները և մեջբերել ՀՀ վճռաբեկ դատարանի որոշ նախատեսյալին որոշումներից հարվածական մասեր և հանգել հեղինակության, որ ապացույցները բավարար համակցություն չեն ձևավորել:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ քննիչի հեղինակությունները փուժողի ցուցմունքը հաշվի չառնելու, դրան նվազ նշանակություն տալու և դրանով պայմանավորված ապացույցների բավարար համակցություն չձևավորելու առումով հերքվում, իսկ Վերաքննիչ դատարանի հեղինակություններն առ այն, որ քննիչի նման գնահատականները հակասում են Օրենսգրքի 25-րդ հոդվածի պահանջներին հասարակում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի Տ.Մարտիրոսյանի վերաբերյալ թիվ ԵՇԿ/Օ121/Օ1/12 գործով 2014թ. մայիսի 31-ի որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումներով:

(...)

Վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ քննիչը փուժողի և վկաների ցուցմունքները անթույլատրելի կամ ոչ հավասարի լինելու վերաբերյալ որևէ այլ հիմնավորում չի ներկայացրել, չի պարճատարանել, թե մասնավորապես ինչո՞ւ է արդարահայրվում փուժողի ցուցմունքի ոչ բավարար լինելը, դրանով իսկ արդեն խախտել է փուժողի իրավունքները և այդ պայմաններում քրեական գործի վարույթը կասեցնելը ձևական բնույթ է կրում:

Վերոգրյալ իրավական վերլուծության համարեքստում Դատարանը փաստում է, որ գործի նախաքննության ընթացքում թույլ է փրվել անձի իրավունքների խախտում, ուստի անհրաժեշտ է բողոքը ճանաչել հիմնավորված՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել անձի իրավունքների և ազատությունների խախտումը: (...)»⁵⁹⁰:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա և հանգեցրել իրավունքի հիմնարար խախտման:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը վիճարկվող որոշմամբ հակասության մեջ է մտել Արթուր Սարունցի, Քեղամ Ղազարյանի, Արթուր Խուրշուդյանի, Լուկաշ Վերանյանի, Լևիկ Պողոսյանի վերաբերյալ գործերով Վճռաբեկ դատարանի հայտնած իրավական դիրքորոշումների հետ:

Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու մասին որոշում կայացնելով՝

⁵⁹⁰ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 31-38:

Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից՝ թույլ տալով վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններն ամրագրող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում:

14. Բողոքաբերն ուշագրավ է համարել մասնավորապես, որ Վերաքննիչ դատարանը, իր որոշմամբ անդրադառնալով Ա.Աբրահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կասեցնելու մասին նախաքննության մարմնի որոշումներին, նշել է, որ թեև դրանք բխում են ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի մարտի 30-ի ՄԴՈ-871 որոշումից, այնուամենայնիվ, ըստ Վերաքննիչ դատարանի՝ պետք է որոշ վերապահումներ անել ասվածից, հատկապես այն գործերով, որոնք հարուցվում են մասնավոր մեղադրանքի կարգով և, երբ տուժողը նշում է կոնկրետ անձին, որպես հանցագործություն կատարողի: Այս առնչությամբ բողոքաբերը փաստարկել է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշմամբ որևէ բացառություն նախատեսված չէ մասնավոր մեղադրանքի գործերի հետ կապված, ուստի քրեական գործի վարույթը կարճման ենթակա լինելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնազուրկ է և հակասում է ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմանը:

15. Անդրադառնալով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նախաքննության մարմնի որոշման՝ ակնհայտորեն անհիմն և չպատճառաբանված լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին, բողոքաբերը նշել է, որ **Ա.Աբրահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը կայացվել է դեռևս 2018 թվականի փետրվարի 17-ին, չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ**, իսկ Առաջին ատյանի դատարանը քննարկել է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին քննիչի՝ 2019 թվականի մայիսի 15-ի որոշման դեմ Օֆելյա Հարությունյանի բողոքը և 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ մերժել այն՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանն արձանագրելով, որ վերաքննիչ բողոքը չի վերաբերում Ա.Աբրահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշմանը, այնուամենայնիվ, սեփական նախաձեռնությամբ, դուրս գալով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, անդրադարձել է դրա օրինականությանն ու հիմնավորվածությանը: Բողոքաբերը նշել է, որ այս պարագայում Ա.Աբրահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի որոշումն ակնհայտորեն անհիմն և չպատճառաբանված լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնազուրկ են, իսկ նախաքննության մարմնի հիշյալ որոշումը բխում է քրեական գործով ձեռք բերված ապացույցների բավարար համակցությունից:

Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, հիշյալ դատական ակտը կայացնելով, արժեզրկել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքը, ինչի արդյունքում էլ խաթարվել է արդարադատության բուն էությունը:

16. Վերագրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմանը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

17. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

18. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հերաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակվի*

(...)

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները (...).

(...)

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, և դրանք չեն կարող փոփոխվել և լրացվել գործի դատական քննության ընթացքում: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:*

19. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու մասին օրենսդրական պահանջին՝ Վճարելի դատարանը Արթուր Սաքունցի գործով կայացված որոշմամբ արձանագրել է, որ *«Այս իրավանորմից, inter alia, բխում է, որ վերաքննիչ դատարանն իրավունք չունի իր դատական ակտը հիմնավորել այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն վերաքննիչ բողոքում»:*

Նպարակային մեկնաբանման ենթարկելով դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պարունակում է դատավարության մասնակցին տրված երաշխիք առ այն, որ իր գործով դատական քննության ընթացքում վերաքննիչ դատարանը չի կարարի տվյալ անձի դատավարական հակառակորդի գործառույթ»⁵⁹¹:

Գեղամ Ղազարյանի գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանը փաստել է. «(...) [Վ]երաքննիչ դատարանում գործը քննվում է բացառապես վերաքննիչ բողոքի առկայության պարագայում և բացառապես դրա հիմքերի ու հիմնավորումների սահմաններում: Այլ կերպ՝ վերաքննության առարկան ոչ թե գործի ըստ էության քննությունն է, այլ ստաշին այսինքն դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության պրոպագանդա: Դրանով պայմանավորված՝ վերաքննիչ դատարանում դատաքննությունը սկսվում է ոչ թե մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ, այլ նախագահողի կողմից դատական ակտի բովանդակության, ինչպես նաև վերաքննիչ բողոքի և դրա դեմ առկա պարասիսանների էության շարադրմամբ»⁵⁹²:

Արթուր Խորշոռյանի գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածում ամրագրված սահմանափակումները բացարձակ բնույթ չեն կրում և դրանք պետք է դիտարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ իրավանքների համատեքստում:

(...) [Վ]երաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից միայն այն դեպքում, երբ առկա է դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս) կամ առկա է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Մյուս բոլոր դեպքերում վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով, հետևաբար իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս արձանագրել դատական սխալ և ուղղել այն»⁵⁹³:

Լուկաշ Վերանյանի գործով Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել, որ «(...) [Բ]արական ակտի բեկանման օրենսդրի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված

⁵⁹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Սաքունցի բողոքի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԳ/0001/11/10 որոշման 11-րդ կետը:

⁵⁹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գեղամ Ղազարյանի գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԳ/0121/01/11 որոշման 27-րդ կետը:

⁵⁹³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Խորշոռյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԱԲԳ/0065/01/11 որոշման 15-րդ կետը:

«անվերապահ» պայմանն իրենից ենթադրում է, որ վերադաս դատարանն իրավասու է դուրս գալու բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից այն բացառիկ դեպքերում, երբ եզրահանգում է, որ ստորադաս դատարանը թույլ է տվել այնպիսի դատական սխալ, որը դատական ակտի ինկերադիվ բեկանման հիմք է: Այսինքն՝ դատական վերանայման սահմաններից դուրս գալու համար անհրաժեշտ է, որ վերադաս դատական արյանը եզրահանգի, որ ստորադաս դատարանը ոչ թե առերևույթ (*prima facie*), այլ հասարակապես թույլ է տվել դատական ակտի անվերապահ բեկանման հիմք հանդիսացող դատական սխալ: Այլ կերպ՝ ստորադաս դատարանի կողմից այդպիսի դատական սխալ թույլ տրված լինելը պետք է կասկած չհարուցի ու աներկբա լինի, այլ ոչ թե այդ հարցի վերջնական պարզման նպատակով պահանջվի լրացուցիչ քննության իրականացում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն եզրահանգում է, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքի հնարավոր առկայության կասկածի ուժով դատավարական կողմի բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալը իրավաչափ չի կարող համարվել»⁵⁹⁴:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ Անահիտ Աբրահամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով⁵⁹⁵:

- Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 17-ի վերոնշյալ որոշումը չի բողոքարկվել և չի վերացվել:

- Նախաքննության մարմինը 2019 թվականի մայիսի 15-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կասեցնելու մասին՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի անհայտ լինելու հիմքով: Այդ որոշման դեմ Օ.Հարությունյանը ներկայացրել է բողոք, որը Դատախազի՝ 2019 թվականի հունիսի 17-ի որոշմամբ մերժվել է⁵⁹⁶:

- Օ.Հարությունյանը բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մայիսի 15-ի և Դատախազի՝ 2019 թվականի հունիսի 17-ի վերոնշյալ որոշումների դեմ⁵⁹⁷:

- Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ դիմող Օ.Հարությունյանի բողոքն ամբողջությամբ մերժել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ⁵⁹⁸:

- Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշման դեմ դիմող Օ.Հարությունյանը բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան,

⁵⁹⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լուկաշ Վերանայման* գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ԵԿԴ/0074/01/17 որոշման 13.1-րդ կետը:

⁵⁹⁵ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

⁵⁹⁶ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁵⁹⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁵⁹⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

որը 2019 թվականի նոյեմբերի 6-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը բավարարելու, Առաջին աստանի դատարանի վերոնշյալ որոշումը բեկանելու և փոփոխելու, վարույթն իրականացնող մարմնի համար ՕՀարությունյանի իրավունքների խախտումները վերացնելու պարտականություն սահմանելու մասին⁵⁹⁹:

21. Վերլուծելով վերոշարադրյալ փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի որոշմամբ Ա.Արքահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է դեռևս 2018 թվականի փետրվարի 17-ին և այդ որոշումը չի բողոքարկվել ու չի վերացվել, իսկ **Առաջին աստանի դատարանը քննության է առել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին քննիչի՝ 2019 թվականի մայիսի 15-ի որոշման դեմ ՕՖելյա Հարությունյանի բողոքը և 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ մերժել է այն՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ**: Վերաքննիչ դատարանն արձանագրելով հանդերձ, որ բերված բողոքը չի վերաբերում Ա.Արքահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմանը, որը ոչ դատախազին, ոչ էլ դատարան չի բողոքարկվել, այնուամենայնիվ, սեփական նախաձեռնությամբ, դուրս գալով ինչպես վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների, այնպես էլ մինչդատական վերահսկողության շրջանակներում բողոքարկված առարկայի սահմաններից, անդրադարձել է դրա օրինականությանն ու հիմնավորվածությանը և իր դատական ակտը հիմնավորել է այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն վերաքննիչ բողոքում:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նախաքննության մարմնի որոշումը բողոքարկելու ժամկետն անցած լինելու, և մանավանդ այդ որոշման դեմ բողոքի բացակայության պայմաններում, հիշյալ որոշման հիմնավորվածությանը և օրինականությանն անդրադառնալով ու այդ մասին որոշում կայացնելով՝ ակնհայտորեն դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից՝ թույլ տալով վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններն ամրագրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում, ինչն էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի խախտման:

Վճարելի դատարանը կրկնում է, որ Վերաքննիչ դատարանում գործը քննվում է բացառապես վերաքննիչ բողոքի առկայության պարագայում և բացառապես դրա հիմքերի ու հիմնավորումների սահմաններում: Վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից միայն այն դեպքում, երբ առկա է դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս) կամ առկա է քրեական գործի վարույթը

⁵⁹⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Մյուս բոլոր դեպքերում վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով, հետևաբար իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս արձանագրել դատական սխալ և ուղղել այն:

22. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ անդրադառնալով Ա.Աբրահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումներին, նշել է, որ թեև նշվածը բխում է ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի ՄԴՈ-871 որոշումից, այնուամենայնիվ պետք է որոշ վերապահումներ անել ասվածից, հատկապես այն գործերով, որոնք հարուցվում են մասնավոր մեղադրանքի կարգով և, երբ տուժողը նշում է կոնկրետ անձին, որպես հանցագործություն կատարողի:

Հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշմամբ որևէ բացառություն նախատեսված չէ մասնավոր մեղադրանքի գործերի հետ կապված, ուստի Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ քրեական գործի վարույթը ենթակա էր կարճման, հիմնագուրկ է և հակասում է ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմանը:

23. Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ **Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ քրեական գործը հարուցվել է Անահիտ Աբրահամյանի կողմից Օֆելյա Հարությունյանին հրելու և վայր գցելու դեպքի առթիվ**, ներկայացված նյութերից չի բխում: Քրեական գործ հարուցելու մասին հետաքննության մարմնի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշման⁶⁰⁰ եզրափակիչ մասի ձևակերպումից երևում է, որ քրեական գործը հարուցվել է Օֆելյա Հարությունյանի առողջությանն անզգուշությամբ միջին ծանրության վնաս պատճառվելու **փաստի առթիվ**, իսկ որոշման նկարագրական մասում ընդամենը նկարագրված է Օֆելյա Հարությունյանի հաղորդման և բացատրության բովանդակությունն այն մասին, որ Անահիտ Աբրահամյանը հրել է իրեն, որի հետևանքով ընկել է գետնին և ստացել վնասվածքներ:

24. Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս անդրադառնալ Ա.Աբրահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման օրինականությանն ու հիմնավորվածությանը և արդյունքում բեկանել Առաջին ատյանի դատարանի որոշումը:

25. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական

⁶⁰⁰ Տե՛ս քրեական գործ, թերթ 21

դատավարության օրենսգրքի 7-րդ և 385-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը բեկանելու հիմք է:

26. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Օ.Հարությունյանի բողոքը մերժելով Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում, ուստի պետք է օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 23-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

38.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0073/01/17

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏԻՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի սեպտեմբերի 3-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Աբրահամ Սարգսի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ պաշտպան Ա.Ջուվանովայի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի փետրվարի 13-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 12158317 քրեական գործը, որը նույն օրն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին՝ նախաքննություն կատարելու համար:

2017 թվականի փետրվարի 13-ին Աբրահամ Սարգսի Աբրահամյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ Ա.Աբրահամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշմամբ Ա.Աբրահամյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով:

2017 թվականի օգոստոսի 8-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի նոյեմբերի 14-ի դատավճռով Ա.Աբրահամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով: Ամբաստանյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ: Տուժողի իրավահաջորդ Գայանե Բաբախանյանի քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակիորեն. Ա.Աբրահամյանից հօգուտ Գ.Բաբախանյանի բռնագանձվել է 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում: Մնացած մասով քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության՝ Գ.Բաբախանյանին իրավունք վերապահելով հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով:

3. Ամբաստանյալ Ա.Աբրահամյանի պաշտպան Ա.Ջուվանովայի և տուժողի իրավահաջորդ Գ.Բաբախանյանի ներկայացուցիչ Դ.Ղազարյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի մայիսի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 14-ի դատավճիռը թողնելով անփոփոխ:

4. Ամբաստանյալ Ա.Աբրահամյանի պաշտպան Ա.Ջուվանովան և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Դ.Ղազարյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքներ: Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ի որոշումներով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Դ.Ղազարյանի բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ պաշտպան Ա.Ջուվանովայի բողոքն ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Աբրահամ Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով այն բանի համար, որ. «(...) նա 2017 թվականի փետրվարի 13-ին՝ ժամը 01-ի սահմաններում, դանակով երկու անգամ հարվածել է Սամվել Ռաֆիկի Սահակյանի ձախ ազդրի, հեղուկային ձախ շրջանին և նրա առողջությանը դիտարկությանը պատճառել ծանր վնաս, որն անզոչությանը առաջացրել է վերջինիս մահը (...)»⁶⁰¹:

6. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հունվարի 11-ին արձանագրային որոշմամբ մերժել է դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը⁶⁰²:

7. Պաշտպան Ա.Ջուվանովան Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 14-ի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի շրջանակներում, ի թիվս այլնի, նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով Ա.Աբրահամյանի միջնորդությունը՝ դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ, վերջինիս զրկել է օրենքով սահմանված նվազագույն պատիժ ստանալու իրավունքից, որի արդյունքում Ա.Աբրահամյանն իր ունեցած հիվանդությունների և դրական բնութագրի պարագայում ստացել է անհամեմատ ծանր պատիժ⁶⁰³:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանն ընդունելի չի համարում պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկն առ այն, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ Աբրահամ Աբրահամյանի միջնորդությունը, նրան զրկել է օրենքով սահմանված նվազագույն պատիժ ստանալու իրավունքից: Այս կասպակցությանը Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը վերաքննիչ բողոքներում չի վիճարկվում, հետևաբար Առաջին ատյանի դատարանը չէր կարող ղեկավարվել դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում պատիժ նշանակվելու կանոններով (...)»⁶⁰⁴:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ սերքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի կարծիքով՝ ստորադաս դատարաններն Ա.Աբրահամյանի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ եկել են պիսալ եզրահանգման, ինչի արդյունքում խախտվել են վերջինիս մի շարք իրավունքներ:

⁶⁰¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 146-148:

⁶⁰² Տե՛ս քրեական գործ, հատոր 5, դատական նիստի արձանագրություն:

⁶⁰³ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 1-8:

⁶⁰⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 82-99:

9.1. Ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանը, մերժելով Ա.Աբրահամյանի միջնորդությունը՝ դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ, վերջինիս գրկել է օրենքով սահմանված նվազագույն պատիժ ստանալու իրավունքից, որի արդյունքում Ա.Աբրահամյանն իր ունեցած հիվանդությունների և դրական բնութագրի պայմաններում ստացել է անհամեմատ ծանր պատիժ:

9.2. Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ քրեական գործով առկա են եղել բավարար հիմքեր, որպեսզի ամբաստանյալի նկատմամբ նշանակվեր նվազագույն պատիժ, ուստի մեղմացման տեսանկյունից պատիժը ենթակա է վերանայման: Բացի այդ, ամբաստանյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան սահմանելով՝ հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին, ինչպես նաև ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված սկզբունքները:

Բողոքաբերը նշել է նաև, որ Ա.Աբրահամյանի նկատմամբ կիրառելի են «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» օրենքի դրույթները և նշանակված պատիժը 9 ամսով ենթակա է կրճատման, ինչի արդյունքում Ա.Աբրահամյանը պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունք կունենա:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշումը, Ա.Աբրահամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակել նվազագույն պատիժ և այն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ պաշտպան Ա.Ջուվանովայի վերաքննիչ բողոքի հիմքի կապակցությամբ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտեր վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտեր կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված պահանջները»:

Վճռաբեկ դատարանը Մկրտիչ Պողոսյանի և մյուսների գործով իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ. «(...) [Վ]երաքննիչ բողոքի հիմքերը

և հիմնավորումները ոչ միայն նախանշում են վերաքննիչ վերանայման սահմանները, այլ նաև կանխորոշում են այն հարցերի շրջանակը, որոնք պետք է քննարկման առարկա դարձվեն վերաքննիչ վարույթի շրջանակներում և որոնց կապակցությամբ վերաքննիչ դատարանի եզրահանգումները պետք է արտացոլվեն վարույթը եզրափակող դատական ակտում: Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին արդյոք վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին և պարձառաքանել դրանցից յուրաքանչյուրի կապակցությամբ իր եզրահանգումները:

(...) Վճռաբեկ դատարանը գրնում է, որ վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ պետք է անդրադառնա բողոքի հիմքերին: Վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ վերաքննիչ բողոք բերելու հիմքը դատական սխալն է, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, (...): Այլ խոսքով վերաքննիչ բողոքի հիմքն ինքնին օժտված է գործի ելքի վրա ազդեցություն ունենալու հասկանիչով:

Ինչ վերաբերում է բողոքի հիմնավորումներին անդրադառնալու հարցին, սպա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ բողոքի այն հիմնավորումներին, որոնք ողջամտորեն կարող են ազդեցություն ունենալ գործի համար նշանակություն ունեցող հարցերի լուծման համար և պարզաճ պարձառաքանել դրանց վերաբերյալ իր եզրահանգումները:

Վճռաբեկ դատարանը գրնում է, որ վերոնշյալ չափանիշների պահպանման դեպքում միայն վերաքննիչ դատարանի որոշումը կհամապատասխանի դատական ակտի պարձառաքանվածության վերաբերյալ օրենսդրական պահանջին և դրա կապակցությամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին (...)⁶⁰⁵»:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարձառաքանված: Պարձառաքանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Դատական ակտի պատճառաքանվածության չափանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաքանման պահանջը ոչ միայն արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից:

Դատական ակտի պատճառաքանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն

⁶⁰⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մկրտիչ Պողոսյանի և մյուսների գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՇԴ/0034/01/15 որոշման 14-15-րդ կետերը:

է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է⁶⁰⁶:

Վճռաբեկ դատարանը *Էրիկ Մարգարյանի* գործով արձանագրել է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը վերաբերելի է նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս, վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության, և որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերոնշյալ պահանջների պահպանման պարագայում միայն վճռաբեկ դատարանը հնարավորություն կունենա ստուգել կայացված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը⁶⁰⁷:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի (մինչ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՕ-200-Ն օրենքը գործող խմբագրությամբ) համաձայն՝ «1. (...) *[Ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պարիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:*

(...)

4. *Դատարանը դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին ամբաստանյալի միջնորդությունը մերժելու դեպքում կայացնում է որոշում (...):*

14.1. Անդրադառնալով դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին միջնորդության վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ որոշման «անմիջական բողոքարկումը» լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման տեսանկյունից: Հետևաբար, այդպիսի որոշումը ենթակա է «հետաձգված բողոքարկման» գործով վարույթն եզրափակող դատական ակտի բողոքարկման շրջանակներում, ինչով էլ պարտադիր պետք է երաշխավորված լինի դատական քննության արագացված

⁶⁰⁶ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ֆրունզիկ Գալստյանի* գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, *Գևորգ Խոստայանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12, *Արսեն Մակարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, *Արամայիս Հակոբյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14, *Մարտուն Հակոբյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱԲԴ/0005/11/16, *Արարատ Մարգարյանի* գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԵԱԴԴ/0005/01/17 որոշումները:

⁶⁰⁷ 'u Վճռաբեկ դատարանի՝ *Էրիկ Մարգարյանի* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՍԴՅ/0045/01/13 որոշման 13-րդ կետը:

կարգ կիրառելու միջնորդության վերաբերյալ դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգումը⁶⁰⁸:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հունվարի 11-ին արձանագրային որոշմամբ մերժել է դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը⁶⁰⁹,

- Պաշտպան Ա.Ջուվանովան Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 14-ի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի շրջանակներում, ի թիվս այլնի, նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով Ա.Աբրահամյանի միջնորդությունը՝ դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ, վերջինիս գրկել է օրենքով սահմանված նվազագույն պատիժ ստանալու իրավունքից, որի արդյունքում Ա.Աբրահամյանն իր ունեցած հիվանդությունների և դրական բնութագրի պարագայում ստացել է անհամեմատ ծանր պատիժ⁶¹⁰,

- Վերաքննիչ դատարանը 2020 թվականի մայիսի 6-ի որոշմամբ ընդունելի չի համարել պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկն առ այն, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ Ա.Աբրահամյանի միջնորդությունը, նրան գրկել է օրենքով սահմանված նվազագույն պատիժ ստանալու իրավունքից: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը վերաքննիչ բողոքներում չի վիճարկվում, հետևաբար՝ Առաջին ատյանի դատարանը չէր կարող դեկավարվել դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում պատիժ նշանակելու կանոններով⁶¹¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14.1-րդ կետերում շարադրված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի պատճառաբանական մասում անդրադարձ է կատարել Առաջին ատյանի դատարանի կողմից դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին պաշտպան Ա.Ջուվանովայի վերաքննիչ բողոքի հիմքին, սակայն, ըստ էության, քննարկման առարկա չի դարձրել դրա առնչությամբ պաշտպանի վերաքննիչ բողոքի հիմնավորումները, որոնք ողջամտորեն կարող էին ազդել գործի ելքի վրա: Ավելին, Վերաքննիչ դատարանը, հակասելով ինքն իրեն, արձանագրել է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին

⁶⁰⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Ալեքսյանի* գործով 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ ՇԴ/0109/06/19 որոշումը:

⁶⁰⁹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁶¹⁰ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁶¹¹ Տե՛ս ս սույն որոշման 8-րդ կետը:

ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը պաշտպանը վերաքննիչ բողոքում չի վիճարկել:

16.1. Բացի այդ, հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանի դատողությունն առ այն, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը վերաքննիչ բողոքներում չվիճարկվելու պայմաններում Առաջին ատյանի դատարանը չէր կարող ղեկավարվել դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում պատիժ նշանակելու կանոններով, Վճռաբեկ դատարանի համար ընդունելի չէ, քանի որ ստորադաս դատարանի մատնանշած վերոգրյալ երկու հանգամանքների միջև բացակայում է պատճառահետևանքային կապը:

16.2. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը չի համապատասխանում դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ օրենսդրական պահանջին և այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին:

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ պաշտպան Ա.Ջուվանովայի վերաքննիչ բողոքի հիմքի կապակցությամբ Վերաքննիչ դատարանի հետևություններն իրավաչափ չեն:

18. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 385-րդ և 393-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշմամբ արձանագրված խախտումների պայմաններում գրկված է բողոքաբերի՝ սույն որոշման 9.2-րդ կետում նշված փաստարկների կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու հնարավորությունից, քանի որ դրանք կարող են քննարկման առարկա դարձվել միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Հետևաբար, նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, պետք է քննության առնի պաշտպան Ա.Ջուվանովայի վերաքննիչ բողոքը՝ դրա հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Մինչև սույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել Ա.Աբրահամյանին կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Աբրահամյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի

Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Աբրահամ Սարգսի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Աբրահամ Սարգսի Աբրահամյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

39.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0149/11/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի սեպտեմբերի 3-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով դիմող Արմեն Սահակի Տեր-Սահակյանի ներկայացուցիչներ Ս.Սարգսյանի և Ա.Գալստյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արմեն Տեր-Սահակյանի՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին հասցեագրված՝ 2018 թվականի հոկտեմբերի 30-ի դիմումին ՀՀ հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ նաև ՀԲԾ) պետի տեղակալ Հ.Ենոքյանը 2018 թվականի նոյեմբերի 9-ին պատասխանել է գրությամբ:

Ա.Տեր-Սահակյանի ներկայացուցիչ Ս.Սարգսյանի՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված՝ 2019 թվականի հունվարի 17-ի բողոքին ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության դատախազ (այսուհետ՝ նաև Դատախազ) Ա.Մնացականյանը 2019 թվականի փետրվարի 5-ին պատասխանել է գրությամբ:

2. Վերոնշյալ գրությունների դեմ 2019 թվականի մարտի 11-ին դիմող Ա.Տեր-Սահակյանի ներկայացուցիչներ Ս.Սարգսյանը և Ա.Գալստյանը բողոք են ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշմամբ ներկայացուցիչներ Ս.Սարգսյանի և Ա.Գալստյանի բողոքը մերժվել է:

3. Ներկայացուցիչներ Ս.Սարգսյանի և Ա.Գալստյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշումը բեկանել է և պարտավորեցրել է ՀՀ գլխավոր դատախազությանը վերացնել բողոքաբերի իրավունքների խախտումը, այն է՝ ներկայացված բողոքի վերաբերյալ կայացնել պատճառաբանված որոշում:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մարտի 9-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի հուլիսի 1-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանի՝ 2018 թվականի նոյեմբերի 9-ի գրության համաձայն՝ Ա.Տեր-Սահակյանի՝ ՀՔԾ պետին հասցեագրված դիմումում բարձրացված հարցերը հանցագործության հատկանիշների վերաբերյալ տվյալներ չեն բովանդակում, ուստի այն չի կարող հանդիսանալ քրեական գործ հարուցելու հիմք⁶¹²:

6. Դատախազ Ա.Մնացականյանի՝ 2019 թվականի փետրվարի 5-ի գրության համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված կարգով դատավարական որոշում կայացնելու, այն է՝ բողոքը վերադաս դատախազի կողմից քննության առնելու համար պարտադիր է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման առկայություն, որպիսին տվյալ դեպքում առկա չէ: Ինչ վերաբերում է ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանի կողմից դիմումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով ստուգման չենթարկելու հանգամանքին, ապա տվյալ գործողությունն իրավաչափ է⁶¹³:

7. Դիմող Ա.Տեր-Սահակյանի ներկայացուցիչներ Ս.Սարգսյանը և Ա.Գալստյանն Առաջին ատյանի դատարան ներկայացրած բողոքում

⁶¹² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 27-28:

⁶¹³ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 65-67:

արձանագրել են, որ և՛ ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանը, և՛ Դատախազ Ա.Մնացականյանը թույլ են տվել անգործություն, որով խախտել են Ա.Տեր-Սահակյանի իրավունքները և օրինական շահերը: Բողոքարեւերը խնդրել են Առաջին ատյանի դատարանին պարտավորեցնել դատախազությանը վերացնել Ա.Տեր-Սահակյանի իրավունքների խախտումը, այն է՝ Ա.Տեր-Սահակյանի հաղորդումը քննարկել ըստ էության և կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը⁶¹⁴:

8. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը (...) գրնում է, որ ՀՀ հայրուկ քննչական ծառայությունը և ՀՀ գլխավոր դատախազությունը բողոքարեւերի կողմից ներկայացված հաղորդմանը պարասխանելով գրությունով դրսւորել են անգործություն, հերււարար դատարանը գրնում է, որ նշված գրությունները մինչդարական վարույթի նկարմանը դարական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա են:

(...) Դատարանն արձանագրում է, որ (...) Արմեն Տեր-Սահակյանի՝ ՀՀ հայրուկ քննչական ծառայությանը հասցեագրված 2018թ. հոկտեմբերի 30-ի հաղորդումն առերւույթ չի համապարասխանել որոշակիության բովանդակային չափանիշին, մանավորասկւ՝ չի բովանդակել տեղեկություններ կոնկրետ հանցավոր արարքի հարկանիշներ մարմանշող տվյալների առկայության մասին, որոնք հնարավորություն կրան ողջամիր ենթարդություն անել, որ այդ տեղեկությունների արուգման արդյունքում կարող են հայրնարերվել քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Հաղորդումը կրել է վերացական բնույթ, որի պայմաններում բացառվում է քրեադատավարական գործիքակազմի անհիմն և անպարականհարմար կիրառումը, հերււարար նաև՝ ոչ հանցավոր իրադարձությունների կասակցությանը անձանց իրավունքների ու օրինական շահերի ասհմանասկւումները և հանրային ռեսուրսների վարնումը:

Դատարանը գրնում է, որ հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները բավարար չեն այն քննարկելուն, արուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները գործողության մեջ դնելու նպարակով պերական գործիքակազմն օգրագործելու համար և ողջամիր հավանականություն չկա, որ դրանց արուգման արդյունքում կարող են հայրնարերվել քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Այսինքն՝ դատարանը փասարում է, որ քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտում թույլ չի տրվել, որոնք կարող էին հանգեցնել Արմեն Տեր-Սահակյանի իրավունքների և օրինական շահերի խախտմանը, հերււարար ներկայացված հաղորդումը չի առաջացրել վարույթն իրականացնող մարմնի պարականությունը դրա կասակցությանը կայացնել ՀՀ քր. դար. օր.-ի 181 հոդվածով նախարեաաված որոշումներից մեկը:

Վերոնշյալի հիման վրա դատարանն արձանագրում է, որ Ա.Տեր-Սահակյանի կողմից ներկայացված հաղորդումը չի համապարասխանում քրեական գործ հարուցելու առիթին ներկայացվող պահանջներին (...):

⁶¹⁴ Տնն նյութեր, հատոր 1, թերթեր 2-10:

*[Դ]ատարանը գրնում է, որ հաղորդումը քննարկող պաշտոնատար անձի գործողություններն օրինական և հիմնավորված են և բողոքարկի իրավունքները և ազատությունները չեն խախտվել, հետևաբար բողոքը ենթակա է մերժման (...)*⁶¹⁵:

9. Առաջին աստանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքում դիմող Ա.Տեր-Սահակյանի ներկայացուցիչներ Ս.Սարգսյանը և Ա.Գալստյանը, եզրահանգելով, որ հաղորդման մեջ նշված փաստերն առերևույթ վկայում են կատարված հանցագործությունների մասին և նախաքննության մարմինը պարտավոր է հաղորդման հիման վրա կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով սահմանված որոշումներից որևէ մեկը, խնդրել են բեկանել Առաջին աստանի դատարանի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ փոփոխել այն և պարտավորեցնել դատախազությանը հաղորդման հիման վրա կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով սահմանված որոշումներից մեկը⁶¹⁶:

10. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Հարկ է արձանագրել, որ (կոնկրետ դեպքում) բողոքարկը կողմը դատարան է բողոքարկել ՀՀ գլխավոր դատախազության անգործությունը:

(...) [Ա]նդրադառնալով դատախազի (...) գրությամբ վկայակոչված (...) պարճատաքանությանը, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ այն անհիմն է, նկարի ունենալով, որ մինչդարական վարույթում դատախազական հսկողության առարկա են հանդիսանում ոչ միայն քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը, այլև նախաքննության մարմնի այն անգործությունը, գործողությունները և որոշումները, որոնք դատավարության մասնակիցների իրավունքների ենթադրյալ խախտումներ են պարունակում:

Հետևաբար դատախազական հսկողության շրջանակներում նախաքննության մարմնի գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքի քննության արդյունքում դատախազը բավարար հիմքերի առկայության դեպքում պարտավոր է համապատասխան որոշում կայացնել և այդ հանգամանքը չի կարող պայմանավորված լինել միայն քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման առկայությամբ, ինչը փոխյալ դեպքում նշել է դատախազը:

Տվյալ դեպքում, դատախազը չի պահպանել բողոքարկի կողմից բողոքում բարձրացված պահանջի վերաբերյալ պարճատաքանված որոշում ընդունելու օրենսդրական պահանջը և բողոքին պարասխանել է գրությամբ:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ դատախազի կողմից չի իրացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված՝ քննիչի գործողությունների դեմ բերված բողոքը լուծելու լիազորությունը, չի պահպանվել նույն օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ պահանջի վերաբերյալ ընդունված որոշման պարճատաքանված

⁶¹⁵ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 52-56:

⁶¹⁶ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 1-13:

լինելու պահանջը, ինչի արդյունքում խախտվել է բողոքաբեր Արմեն Տեր-Սահակյանի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված՝ գործի արդարացի քննության իրավունքը, ինչն էլ հանգեցրել է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված իր գործի արդարացի քննության իրավունքի սահմանափակմանը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քննարկվող դեպքում, ՀՀ գլխավոր դատախազությանը պետք է պարտավորեցնել վերացնել բողոքաբեր կողմի իրավունքների խախտումները, այն է՝ ներկայացված բողոքի վերաբերյալ կայացնել պարճատարանված որոշում:

(...)⁶¹⁷:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ, 102-րդ, 103-րդ հոդվածներով սահմանված իրավադրույթները, դիմողի կողմից ՀՔԾ ներկայացված դիմումի, այնուհետև՝ դրա վերաբերյալ դատախազին ներկայացված բողոքի նկատմամբ կիրառելի իրավակարգավորումների շրջանակը և այդ իրավահարաբերությունների առարկան:

Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը վիճարկվող որոշմամբ պատշաճ չի գնահատել գործի հանգամանքներն իրենց համակցության մեջ՝ այդպիսով թույլ տալով դատական սխալ, որը, խաթարելով արդարադատության բուն էությունը, ազդել է գործի ելքի վրա, այն է՝ քրեական հետապնդման մարմնի համար առաջացրել է կատարման ոչ ենթակա պարտավորություն:

11.1. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտի պատճառաբանական մասում՝ իբրև խնդրո առարկա իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի քրեադատավարական դրույթներ, մեջբերելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 102-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 103-րդ հոդվածի 1-ին մասը, անտեսել է, որ այդ նորմերը և դրանցով կարգավորվող հարաբերությունների սուբյեկտները դիմումների քննարկման փուլում որպես այդպիսին գոյություն չունեն, քանի որ այդ իրավահարաբերությունները կարող են ծագել առնվազն քրեական գործի հարուցման փուլում, այսինքն՝ քրեադատավարական տիրույթ ներմուծվելու պահից, ինչը սույն դեպքում տեղի չի ունեցել, քանի որ թե՛ ՀՀ հատուկ քննչական ծառայություն, թե՛ ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված գրություններն իրենցում չեն բովանդակել հանցագործության մասին մատնանշող փաստական տվյալներ:

⁶¹⁷ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 39-63:

11.2. Բողոքաբերը հատկանշական է համարել նաև այն, որ ներկայացուցիչ Ս.Սարգսյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված բողոքի առարկան քրեական գործ հարուցելը մերժելու մասին, ըստ էության, գոյություն չունեցող որոշումն է: Ըստ բողոքաբերի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով դատավարական որոշում կայացնելու, այն է՝ բողոքը վերադաս դատախազի կողմից քննության առնելու համար պարտադիր է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման առկայությունը, որպիսին տվյալ դեպքում առկա չէ:

11.3. Բացի այդ, անդրադառնալով ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանի կողմից դիմումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով ստուգման չենթարկելու հանգամանքին, բողոքաբերը նշել է, որ տվյալ գործողությունն իրավաչափ է: Բողոքաբերը փաստել է, որ քրեական հետապնդման մարմնին հասցեագրված, անգամ «Հանցագործության մասին հաղորդում» վերնագրված որևէ դիմում ենթակա չէ ստուգման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգերով, եթե այն չի բովանդակում տեղեկություն կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին:

11.4. Ամփոփելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը փաստել է, որ ստորադաս դատարանի կողմից դատախազի համար սահմանվել է պահանջի կատարում, այն է՝ բողոքի կապակցությամբ որոշման կայացում, որն իր հիմքում չունի որևէ դատավարական և փաստական հիմք:

12. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ստյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից Դատախազ Ա.Մնացականյանի՝ դատախազական հսկողության շրջանակներում կայացված գրությունն ինքնին մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկելը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատարանի լիազորություններն են, մասնավորապես՝*

1) (...) օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել*

կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գրնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն սրանապու կամ, եթե դրա վերաբերյալ պարասահան չի արացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

(...) 5. Բողոքը ճանաչելով հիմնավորված դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գրնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապարասահան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (...):»:

15. Վճռաբեկ դատարանը վերահաստատում է նախկինում արտահայտած իր դիրքորոշումն առ այն, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը նախ և առաջ պետք է պարզի, թե՛

ա) բողոքարկված որոշումը կամ գործողությունը (անգործությունը) մտնում են արդյոք մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկայի մեջ,

բ) բողոքաբերի կողմից պահպանվել են արդյոք այդ որոշման կամ գործողության (անգործության) բողոքարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ընթացակարգերը,

գ) բողոքաբերի կողմից պահպանվել են արդյոք մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի ժամանակային սահմանները,

դ) բողոքաբերն արդյոք ուներ բողոք բերելու իրավասություն,

ե) առկա է արդյոք բողոքին կցվող նյութերի ցանկը (դատավարական փաստաթղթերի պատճեններ, փորձագետի եզրակացություն, տեղեկանք և այլն),

զ) ստորագրված է արդյոք բողոքը:

Վերոնշյալ հանգամանքները պարզելուց հետո միայն դատարանը կարող է անդրադառնալ ներկայացված բողոքի հիմքերին⁶¹⁸:

⁶¹⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հայկ Մեյքոնյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ

15.1. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է նաև հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների (անգործության) դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները (անգործությունը) ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների (անգործության) օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին⁶¹⁹:

- մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումներն ու գործողությունները ենթակա են նաև դատախազական հսկողության: Ընդ որում, ինչպես հետևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից, անձն իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքն իրացնելուց առաջ պարտավոր է սպառել իրավունքների պաշտպանության արտադատական միջոցը՝ դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում⁶²⁰:

- դատախազական հսկողության գործիքակազմի սպառումը նախապայման է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը գործադրելու համար: Որպես իրավական պաշտպանության միջոց՝ դրա շրջանակներում ստուգվում է անձի իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշման (գործողության) օրինականությունը, որի արդյունքում դատախազը կամ արձանագրում է վիճարկվող որոշման (գործողության) իրավաչափության փաստը, կամ հերքում այն: Այսինքն՝ դատախազական հսկողության կառուցակարգի սպառման արդյունքում կայացվող որոշումը հիմնվում է անձի իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշման (գործողության) վրա⁶²¹:

ԵԱԴԴ/0009/11/10 որոշման 12-րդ կետը, *mutatis mutandis*, «Էքսպերտ լաբորատորիա» ՄԳԸ-ի գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԱԲԴ/0031/11/14 որոշումը:

⁶¹⁹ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԴ/0003/11/08, Վլադիմիր Բաղդասարյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԴ4/0002/01/11, Արսեն Մակարյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, Հեղինե Պետրոսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԵԿԴ/0043/11/14 որոշումները:

⁶²⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հովհաննես Գինոսյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԼԴ/0023/11/12 որոշման 13-րդ կետը:

⁶²¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սամվել Ղազարյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0018/11/17 որոշման 21-րդ կետը:

- Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե բողոքարկման արդյունքում դատախազի կողմից քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն⁶²²:

- Ընդ որում, այս դեպքում դատական վերահսկողության առարկան քրեական հետապնդման մարմնի որոշումն է, այլ ոչ թե դատախազական հսկողության արդյունքում կայացված դատավարական ակտը կամ դրսևորած անգործությունը⁶²³:

16. Վերահաստատելով սույն որոշման 15-15.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկան անմիջականորեն քրեական հետապնդման մարմինների որոշումները, գործողությունները կամ անգործությունն են, եթե դրանց դեմ բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից⁶²⁴ անկախ նրանից, թե դատախազական հսկողության շրջանակներում դատախազի կողմից քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն⁶²⁵: Ընդ որում, այս դեպքում դատական վերահսկողության առարկան քրեական հետապնդման մարմնի՝ որոշումը, գործողությունը կամ անգործությունն է, այլ ոչ թե դատախազական հսկողության արդյունքում կայացված դատավարական ակտը կամ դրսևորված անգործությունը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ա.Տեր-Սահակյանի՝ ՀՔԾ պետին հասցեագրված դիմումին ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանը պատասխանել է գրությամբ⁶²⁶,

- Ա.Տեր-Սահակյանի ներկայացուցիչ Ս.Սարգսյանի՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված, ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանի գրությամբ դեմ բողոքին Դատախազ Ա.Մանգականյանը պատասխանել է գրությամբ⁶²⁷,

⁶²² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ «Էքսպերտ լաբորատորիա» ՍՊԸ-ի գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԱԲԴ/0031/11/14 որոշումը, ինչպես նաև Էրիկ Արզարյանի գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱԴԴ/0018/11/17 որոշման 16.4-րդ կետը:

⁶²³ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Էրիկ Արզարյանի գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱԴԴ/0018/11/17 որոշման 17-րդ կետը:

⁶²⁴ Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում քրեական հետապնդման մարմնի անգործությունը բողոքարկելու դեպքում դատախազական հսկողության գործիքակազմի սպառումը ոչ պարտադիր լինելու վերաբերյալ մանրամասն տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՄԴՌ-844 որոշումը:

⁶²⁵ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասը:

⁶²⁶ Տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը:

⁶²⁷ Տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը:

- Վերոնշյալ գրությունների դեմ դիմող Ա.Տեր-Սահակյանի ներկայացուցիչներ Ս.Սարգսյանի և Ա.Գալստյանի բողոքը⁶²⁸ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունիսի 24-ի որոշմամբ մերժվել է⁶²⁹,

- Վերաքննիչ դատարանը, դիմող Ա.Տեր-Սահակյանի ներկայացուցիչներ Ս.Սարգսյանի և Ա.Գալստյանի վերաքննիչ բողոքը⁶³⁰ բավարարելով և Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելով, արձանագրել է, որ կոնկրետ դեպքում դատարան է բողոքարկվել ՀՀ գլխավոր դատախազության անգործությունը:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ դատախազական հսկողության շրջանակներում նախաքննության մարմնի գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքի քննության արդյունքում դատախազը բավարար հիմքերի առկայության դեպքում պարտավոր է համապատասխան որոշում կայացնել և այդ հանգամանքը չի կարող պայմանավորված լինել միայն քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման առկայությամբ: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ տվյալ դեպքում դատախազը չի պահպանել բողոքաբերի կողմից բողոքում բարձրացված պահանջի վերաբերյալ պատճառաբանված որոշում ընդունելու օրենսդրական պահանջը և բողոքին պատասխանել է գրությամբ: Վերաքննիչ դատարանի համոզմամբ՝ դատախազի կողմից չի իրացվել քննիչի գործողությունների դեմ բերված բողոքը լուծելու լիազորությունը, չի պահպանվել պահանջի վերաբերյալ ընդունված որոշման պատճառաբանված լինելու պահանջը, ինչի արդյունքում խախտվել է Ա.Տեր-Սահակյանի՝ գործի արդարացի քննության իրավունքը:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ ՀՀ գլխավոր դատախազությանը պետք է պարտավորեցնել վերացնել բողոքաբերի իրավունքների խախտումը, այն է՝ ներկայացված բողոքի վերաբերյալ կայացնել պատճառաբանված որոշում⁶³¹:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն դեպքում դատական վերահսկողության առարկան ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանի՝ 2018 թվականի նոյեմբերի 9-ի գրությունն է (որն էլ, ըստ էության, վիճարկել են բողոքաբերները), այլ ոչ թե Դատախազ Ա.Մ'նացականյանի՝ դատախազական հսկողության շրջանակում կազմված 2019 թվականի փետրվարի 5-ի գրությունը: Այս առնչությամբ հարկ է նաև փաստել, որ ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանի գրությունը կարող էր վիճարկվել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում՝ անկախ նրանից, թե դատախազական հսկողության շրջանակներում բողոքարկման արդյունքում դատախազի կողմից

⁶²⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁶²⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁶³⁰ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

⁶³¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտ է կայացվել, թե դրսևորվել է անգործություն:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա է դիտարկել Դատախազ Ա.Մնացականյանի՝ դատախազական հսկողության շրջանակում կազմված գրությունը, արձանագրել է, որ դատախազը չի պահպանել բողոքաբերի կողմից բողոքում բարձրացված պահանջի վերաբերյալ պատճառաբանված որոշում ընդունելու օրենսդրական պահանջը, արդյունքում պարտավորեցրել է ՀՀ գլխավոր դատախազությանը ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանի գրության դեմ ներկայացված բողոքի վերաբերյալ դատախազական հսկողության շրջանակներում կայացնել պատճառաբանված որոշում: Այդպիսով Վերաքննիչ դատարանը չի քննարկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա հանդիսացող՝ ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանի գրության իրավաչափությունը և որևէ հետևության չի հանգել դրա առնչությամբ, որպիսի մոտեցումը Վճռաբեկ դատարանի համար ընդունելի չէ:

19. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից Դատախազ Ա.Մնացականյանի՝ դատախազական հսկողության շրջանակներում կազմված գրությունն ինքնին մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկելն իրավաչափ չէ:

20. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Դատախազ Ա.Մնացականյանի գրությանը կարող էր իրավական գնահատական տրվել ՀՔԾ պետի տեղակալ Հ.Ենոքյանի գրության իրավաչափության ստուգման հետ մեկտեղ՝ նույն վարույթի շրջանակներում⁶³²:

21. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ, 290-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հինք են Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար⁶³³:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշմամբ արձանագրված խախտումների պայմաններում զրկված է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքում նշված մյուս փաստարկների կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու հնարավորությունից, քանի որ դրանք կարող են քննարկման առարկա դարձվել սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

⁶³² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Սամվել Ղազարյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0018/11/17 որոշման 21-րդ կետը:

⁶³³ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴԴ/0426/11/18 որոշումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, պետք է քննության առնի դիմող Ա.Տեր-Սահակյանի ներկայացուցիչներ Ս.Սարգսյանի ու Ա.Գալստյանի վերաքննիչ բողոքը և հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Արմեն Սահակի Տեր-Սահակյանի ներկայացուցիչներ Ս.Սարգսյանի և Ա.Գալստյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

արորագրություն

Դատավորներ

արորագրություններ

40.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0505/11/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի սեպտեմբերի 3-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչ Լ.Պողոսյանի՝ 2018 թվականի հունիսի 8-ի որոշմամբ հարուցվել է թիվ 58211418 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասի, 214-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հատկանիշներով:

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Գ.Հովհաննիսյանի (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին)՝ 2018 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ Կարեն Համլետի Թորոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Լյուդմիլա Մկրտչի Մկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով՝ 4 դրվագով, և 214-րդ հոդվածի 2-րդ մասով:

2.1. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ մեղադրյալներ Կ.Թորոսյանի և Լ.Մկրտչյանի պաշտպան Կ.Բատիկյանի՝ մեղադրանք առաջադրելու որոշումների բովանդակությունը հստակեցնելու և կոնկրետացնելու վերաբերյալ միջնորդության լուծումը հետաձգվել է:

2.2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի նշված որոշման դեմ պաշտպան Կ.Բատիկյանի բողոքը Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ մերժվել է:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2019 թվականի մարտի 19-ի որոշմամբ դիմողներ Լ.Մկրտչյանի և Կ.Թորոսյանի ներկայացուցիչ Կ.Բատիկյանի բողոքը բավարարել է, սահմանել է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ վերացնելու դիմողներ Լ.Մկրտչյանի և Կ.Թորոսյանի իրավունքների և ազատությունների խախտումը, այն է՝ թիվ 58211418 քրեական գործով մեղադրյալներ Լ.Մկրտչյանին և Կ.Թորոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին 2018 թվականի օգոստոսի 31-ի որոշումների բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

4. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Մ.Արամյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մարտի 19-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 9-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մարտի 19-ի որոշմամբ արձանագրվել է, որ. «(...) [Վարույթն իրականացնող մարմինն իր 31.08.2018 թվականի որոշումներով մեղադրյալներ Լյուդմիլա Մկրտչյանի և Կարեն Թորոսյանի մեղադրանքների ձևակերպման մեջ մանրամասնորեն պետք է նշեր

հանցագործության տեղը, ժամանակը և եղանակը, քանի որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու պարագայում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կրար մեղադրյալներ Լ.Մկրտչյանին և Կ.Թորոսյանին պարզաձ կերպով իրականացնել իրենց պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովել կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Կոնկրետ դեպքում վարույթն իրականացնող մարմնի կողմից չի վիճարկվել պաշտպան Կ.Բարիկյանի կողմից ներկայացված միջնորդությունը, այլ դրա քննարկումն ուղղակիորեն հերքաձգվել է: Այսինքն, վարույթն իրականացնող մարմինը կասկածի տակ չի դրել պաշտպան Կ.Բարիկյանի միջնորդությունն առ այն, որ առաջադրված մեղադրանքները կոնկրետացման կարիք ունեն: Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման նկարագրական-պարճառաքանական մասում նշել մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, դատարանը հանգում է հետևության, որ ներկայացված բողոքը հիմնավոր է:

Դատարանն անընդունելի է համարում վարույթն իրականացնող մարմնի այն դիրքորոշումը, թե մեղադրանքի որոշումների չկոնկրետացնելը դիտվել է իբրև նախաքննության գաղտնիքի բացահայտում: Սա արսուրդային մերածելակերպ է և քրեադատավարական նորմերի պահանջների թյուր ըմբռնում:

Բացի այդ, դատարանն արձանագրում է, որ դատախազության մարմնի կողմից վկայակոչված սկզբունքը, այն է՝ ընթանում է նախաքննություն և գործի ավարտական փուլում մեղադրանքը կլրացվի, չի կարող կիրառելի լինել, քանի որ չհարակեցված մեղադրանքի առկայության պայմաններում առկա է մեղադրյալների պաշտպանության իրավունքի խախտում, իսկ դատախազության մարմնի նման դիրքորոշումը խոչընդոտում է մեղադրյալների պաշտպանության իրավունքի իրականացմանը և խախտում մեղադրյալներ Լ.Մկրտչյանի, Կ.Թորոսյանի իրավունքներն ու ազատությունները:

Նման պայմաններում, դատարանը գտնում է, որ վարույթն իրականացնող մարմինը պաշտպան Կ.Բարիկյանի միջնորդության քննարկումը հերքաձգելով, խախտել է վերջինիս պաշտպանյալների, գործով մեղադրյալներ Լ.Մկրտչյանի և Կ.Թորոսյանի պաշտպանության իրավունքը (...)⁶³⁴:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 25-ի որոշման համաձայն. «(...) [Վ]երաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Դատարանը, մինչդարական վարույթի նկարմամբ դատական վերահսկողության՝ իր լիազորությունների սահմաններում, առանց նախաքննության մարմնի ապացուցողական գործունեությանը (ապացույցներ հավաքելը, արուգելը և գնահատելը) միջամտելու, ուսումնասիրելով և վերլուծելով գործի փաստական տվյալները, հանգել է իրավաչափ և գործի փաստական տվյալներից բխող

⁶³⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 70:

հիմնավոր հետևության այն մասին, որ թիվ 58211418 քրեական գործով մեղադրյալներ Լյուդմիլյա Մկրտչի Մկրտչյանին և Կարեն Համլեյրի Թորոսյանին մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը հարակեցված չէ, մասնավորապես՝ նկարագրական-պատճառարանական մատում հարակ չի նշվել հանցագործության րեղը, ժամանակը և եղանակը, որպիսի պայմաններում խախտվել է մեղադրյալների պաշտպանության իրավունքը:

Ինչ վերաբերում է դատահազի վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ Դատարանը դուրս է եկել իր լիազորությունների փրոյոթից, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի կարգով մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկման ենթակա չէ, ապա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ այն անհիմն է, քանի որ Վճռաբեկ դատարանը 05.11.2010թ. թիվ ԵԿԴ/0060/11/10 որոշմամբ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդարական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա են նահանական քննության մարմինների այն որոշումները և գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքներն ու օրինական շահերը (...)»⁶³⁵:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Բողոքի հեղինակի կարծիքով, ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս դուրս են եկել իրենց լիազորությունների սահմանից՝ թույլ տալով դատական սխալ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

8.1. Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը, որով ղեկավարվել է դատարանը դատական ակտ կայացնելիս, հստակ նախատեսում է այն որոշումների շրջանակը, որոնց օրինականությունը կարող է ստուգել դատարանը՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, և դրանց մեջ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը ներառված չէ: Բողոքաբերի պնդմամբ՝ Առաջին ատյանի դատարանը քննարկել է նախաքննության փուլում գտնվող քրեական գործով մեղադրանքի բովանդակային ձևակերպումը և դրա վերաբերյալ եզրահանգում է կատարել, անգամ դատողություններ է արել քրեական գործով ձեռքբերված ապացույցների վերաբերյալ, գնահատել և վերլուծել դրանք՝ փաստելով, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է մեղադրանքի ձևակերպումը համապատասխանեցնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

8.2. Բողոք բերած անձի պնդմամբ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի

⁶³⁵ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 75:

որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Բողոքաբերը փաստել է, որ այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր են: Բողոքաբերի կարծիքով, եթե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնա այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբերյալ, ապա կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառույթների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ստյանի դատարանի՝ 2019 թվականի մարտի 19-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 25-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք դիմողներ Լ.Մկրտչյանի և Կ.Թորոպյանի իրավունքների խախտման և վարույթն իրականացնող մարմնին այդ խախտումը վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ *«Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կարարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (...):»*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգրքը և մյուս օրենքները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի ստաշին մատուցելով նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում (...):»

12. Մեջբերված իրավանդությունների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինների (պաշտոնատար անձանց) որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտը կոչված է երաշխավորելու սահմանադրությամբ ամրագրված հիմնարար իրավունքների կենսագործումը և ապահովելու անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը պետական մարմինների անօրինական (անիրավաչափ) որոշումներից և գործողություններից: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, այն է՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը ստուգելու արդյունքում պարզել անձի իրավունքների և օրինական շահերի խախտման փաստը և կայացնել համապատասխան որոշում՝ նշված խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության վերաբերյալ⁶³⁶:

12.1. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վալերի Գրիգորյանի գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) [Ե]թե քրեական դատավարության օրենսգրքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման ուղղակի դեպք և կարգ սահմանված չէ, սակայն այդ որոշումները և գործողությունները խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, ապա (...) Սահմանադրությամբ ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի ուժով դրանք ենթակա են դատական կարգով բողոքարկման»⁶³⁷:

⁶³⁶ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԴԴ-1/0003/11/08 որոշման 12-րդ կետը:

⁶³⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վալերի Գրիգորյանի գործով 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ

12.2. Զարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Վարուժան Մանուկյանի գործով արձանագրել է. «(...) [Մ]ինչդարևական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա են նախնական քննության մարմինների այն որոշումները և գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքներն ու օրինական շահերը, ինչը, սակայն, չի նշանակում, որ քրեական դատավարության այս փուլում դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակն անսահմանափակ է: Մինչդարևական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակի հարակեցման նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սահմանել հետևյալ իրավական դիրքորոշումը. գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից զուր, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների այն բոլոր որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման»⁶³⁸:

12.3. Միաժամանակ Վճռաբեկ դատարանը Հովհաննես Գինոսյանի գործով փաստել է, որ «(...) [Ա]նձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը պարկանում է այն որոշումների թվին, որոնց օրինականության և հիմնավորվածության դատական արուգումը հնարավոր է միայն գործի ըստ էության քննության ժամանակ, ինչն անհրաժեշտ նախապայման է դատարանի անկողմնակալության և անմեղության կանխավարկածի սկզբունքների պահպանության համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, չի կարող հանգեցնել անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման: Հետևաբար, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը չի կարող հանդիսանալ մինչդարևական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա (...)»⁶³⁹:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը դիմողներ Լ.Մկրտչյանի և Կ.Թորոսյանի ներկայացուցիչ Կ.Բատիկյանի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված բողոքի քննության արդյունքում ըստ էության քննարկել և գնահատական է տվել նախաքննության մարմնի՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումներին, արդյունքում

ԵԿԴ/0031/11/08 որոշման 12-րդ կետը:

⁶³⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Մանուկյանի գործով 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0060/11/10 որոշման 16-րդ կետը:

⁶³⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հովհաննես Գինոսյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԼԴ/0023/11/12 որոշման 17-րդ կետը:

ճանաչելով դիմողներ Լ.Մկրտչյանի ու Կ.Թորոսյանի իրավունքների և ազատությունների խախտման փաստը: Առաջին ատյանի դատարանը վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել թույլ տրված խախտումը, այն է՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման նկարագրական-պատճառաբանական մասում մեղադրանքի ձևակերպման մեջ նշել հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները⁶⁴⁰: Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ⁶⁴¹:

14. Նախորդ կետում վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-12.3-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, ըստ էության քննության առնելով Լ.Մկրտչյանին և Կ.Թորոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների դեմ բողոքը, դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթի սահմաններից: Ստորադաս դատարանները, անդրադառնալով առաջադրված մեղադրանքների բովանդակային ձևակերպումներին, անտեսել են քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառույթների՝ այդ թվում դատախազական հսկողության և դատական վերահսկողության տարանջատման պահանջները՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը վերածելով բուն արդարադատության իրականացման գործընթացի:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չի հանդիսանում, քանի որ այն բովանդակային առումով կարող է վիճարկվել գործն ըստ էության քննելիս, ինչը չի կարող հանգեցնել անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ենթարկելու պարագայում կվտանգվի մրցակցային սկզբունքի պահպանմամբ քրեական գործով օբյեկտիվ և անաչառ արդարադատության իրականացումն երաշխավորող՝ դատարանի անկախության սահմանադրական սկզբունքը: Հետևաբար, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատարաններն իրավասու չեն ստուգել որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ արդարադատության իրականացման ընթացքում:

⁶⁴⁰ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

⁶⁴¹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

15. Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ դիմողներ՝ Լ.Մկրտչյանի և Կ.Թորոսյանի իրավունքների խախտման և վարույթն իրականացնող մարմնին այդ խախտումը վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

16. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմողներ Լ.Մկրտչյանի և Կ.Թորոսյանի ներկայացուցիչ Կ.Բատիկյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմողներ Լյուդմիլա Մկրտչյանի և Կարեն Թորոսյանի ներկայացուցիչ Կ.Բատիկյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի մարտի 19-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 25-ի որոշումները բեկանել և փոփոխել: Դիմողներ Լյուդմիլա Մկրտչյանի և Կարեն Թորոսյանի ներկայացուցիչ Կ.Բատիկյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

արորագրություն

Դատավորներ՝

արորագրություններ

41.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0957/11/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի սեպտեմբերի 7-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով դիմողներ «Էլիտա Էսվե», «Էլիտ Էսվե» և «Պրեստիժ Լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցիչ Ա.Անդրիկյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի մարտի 29-ին ՀՀ քննչական կոմիտեի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով ու 310-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 12106819 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի ապրիլի 9-ի որոշման հիման վրա, ի թիվս այլնի, առգրավվել են «Էլիտա Էսվե», «Էլիտ Էսվե» և «Պրեստիժ Լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին առնչվող որոշ փաստաթղթեր:

Վերոնշյալ որոշման դեմ դիմողներ «Էլիտա էսվե», «Էլիտ էսվե» ու «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցիչ Ա.Անդրիկյանի բողոքը Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Հ.Տարությունյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ մերժվել է:

2. Ներկայացուցչի բողոքը Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի դատարան)՝ 2020 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ մերժվել է:

3. Ներկայացուցչի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի հունիսի 1-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին աստիճանի դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել է՝ սահմանելով վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ վերացնելու դիմողներ «Էլիտա էսվե», «Էլիտ էսվե» ու «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների իրավունքների և ազատությունների խախտումը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առգրավում կատարելու մասին 2019 թվականի ապրիլի 9-ի որոշման համաձայն՝ Նախաքննության մարմինը, նկատի ունենալով, որ «Էլիտա էսվե», «Էլիտ էսվե» և «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին առնչվող որոշ փաստաթղթերը քրեական գործով կարող են ապացուցողական նշանակություն ունենալ, որոշել է առգրավել դրանք⁶⁴²:

6. Առաջին աստիճանի դատարանը, մերժելով վերոնշյալ որոշման դեմ դիմողներ «Էլիտա էսվե», «Էլիտ էսվե» և «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցչի բողոքը, արձանագրել է. «(...) Ինչպես երևում է բողոքաբերի պահանջից, վերջինս վիճարկում է քննիչի կողմից նյութերի ձեռք բերման իրավաչափությունը, որի ըստ էության քննարկման արդյունքում դատարանը կկանխորոշի սպացուցի օգրագործման թույլատրելիությունը: Այսինքն դատարանը գնահատական տալով առգրավման որոշման և դրա արդյունքում սրացված սպացույցների ձեռքբերման

⁶⁴² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 36:

իրավաչափությանը, արդեն իսկ կանխորոշում է սպազայում ԿՎԿՅԿ սպազուցի «ճակատագիրը»:

(...) [Առաջին արյանի] դադարանը փաստում է, որ այն ներառված չէ ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված այն որոշումների թվում, որոնց համար օրենսդիրը նախատեսել է դատարանական բողոքարկման հնարավորություն: Բացի այդ, բողոքաբերի բարձրագրած հարցի քննությունը դատարանության ավելի ուշ փուլերում, այդ թվում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, հնարավոր է, և այն չի հանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման: [Առաջին արյանի] դադարանը գրնում է, որ նախաքննության մարմնի կողմից իրականացվող սպազուցողական գործունեությանը (սպազուցյցներ հավաքելը, սրուզելը և գնահատելը) դատարանի միջամտությունը ոչ միայն չի բխում մինչդատարանական վարույթի նկատմամբ իրականացվող դատարանական վերահսկողության խնդիրներից, այլև նման միջամտության անթույլատրելիությունն անհրաժեշտ նախասպայման է դատարանի անկողմնակալության սկզբունքի պահպանության համար:

Հիմք ընդունելով վերագրյալը [Առաջին արյանի] դադարանը գրնում է, որ քննիչի կողմից նախաքննության փուլում ԿԿԿԿ-ի ձեռք բերման ընթացակարգի իրավաչափությունը մինչդատարանական վարույթի նկատմամբ դատարանական վերահսկողության առարկա չի հանդիսանում»⁶⁴³:

7. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 20-ի որոշումը, արձանագրել է, որ դիմողի կողմից հայցվող իրավական պաշտպանությունը հանդիսանում է մինչդատարանական վարույթի նկատմամբ հետագա դատարանական վերահսկողության առարկա, այնուհետև եզրահանգել, որ նախաքննության մարմնի վիճարկվող որոշմամբ խախտվել են դիմողների իրավունքներն և օրինական շահերը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ բողոքաբերի կողմից դատարանի առջև բարձրագրված իրավական հարցերը կարող են դառնալ մինչդատարանական վարույթի նկատմամբ իրականացվող դատարանական վերահսկողության օբյեկտ և հայցվող իրավական պաշտպանությունը մինչդատարանական վարույթի շրջանակներում չի կարող սահմանափակվել միայն մինչդատարանական վարույթի օրինականության նկատմամբ իրականացվող դատարանական հսկողությամբ:

(...) Վերաքննիչ դատարանի համոզմամբ ԿՎԿՅԿ որոշման բողոքարկումը դատարանության ավելի ուշ փուլում թեև առերևույթ հնարավոր է, սակայն այն կհանգեցնի անձի, ԿՎԿՅԿ դեպքում՝ իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման, քանի որ դրանք արդեն իսկ խախտված են: Ավելին՝ իրական է նաև այն իրավիճակը, երբ ԿՎԿՅԿ իրավաբանական անձինք քրեական գործով չունենան որևէ դատարանական կարգավիճակ, ուստի և չկարողանան իրացնել քննիչի գործողությունները

⁶⁴³ Տե՛ս ԿԿԿԿ, հատոր 1, թերթեր 83-85:

դատարարության ավելի ուշ փուլում վիճարկելու իրավունքը, մինչդեռ նրանց իրավունքներն անհամաչափորեն սահմանափակվել են քննիչի կողմից կատարված գործողությունների արդյունքում:

Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը, զերծ մնալով մինչդատարական վարույթի նկատմամբ դատարկան վերահսկողության գործառնության հետ անհամապատասխանի ու մինչդատարական վարույթն իրականացնող մարմնի համար կաշկանդող կամ ուղղորդող նշանակություն ունեցող մեկնաբանություններ անելուց, արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը կատարված և ոչ իրավաչափ ճանաչված խուզարկության արդյունքում առգրավել է փաստաթղթեր, որոնց մասին որևէ տեղեկատվության մինչև այդ չի տրամադրվել (այդ մասին նշվեց նաև դատարկան նիստի ընթացքում): Դրանից հետո վարույթն իրականացնող մարմինը, պարտավորված լինելով վերադարձնել ոչ իրավաչափ ճանաչված խուզարկությանը վերցված փաստաթղթերը, ըստ էության կատարել է այդ պարտականությունը: Միևնույն ժամանակ այդ գործողության կատարումից անմիջապես հետո վարույթն իրականացնող մարմինն առանձին որոշմամբ ձեռնամուխ է եղել այդ նույն փաստաթղթերն առգրավելուն:

Այդուհանդերձ Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, փաստաթղթերը վերադարձնելուց անմիջապես հետո դրանց առգրավումն ըստ էության ձևական բնույթ է կրել, քանի որ վարույթն իրականացնող մարմինը փորձել է իրավաչափ տեսք հաղորդել ի սկզբանե ոչ իրավաչափ միջամտության՝ խուզարկության արդյունքում ձեռք բերված փաստաթղթերին հասանելի դառնալու գործընթացին, այսինքն՝ «թունավոր ծառի պտուղները ևս թունավոր են» սկզբունքն այս իրավիճակում ուղղակիորեն կարող է գործել:

Այդ հետևությունը պայմանավորված է նրանով, որ այդ փաստաթղթերն ի սկզբանե ձեռք են բերվել քննչական գործողության՝ խուզարկության կատարման կարգի էական խախտմամբ, ինչպես նաև այն կարևոր հանգամանքով, որ առգրավված փաստաթղթերի մասին վարույթն իրականացնող մարմինը որևէ այլ կերպ չէր կարող տեղեկանալ, բացառությամբ կատարված խուզարկության, որը ճանաչվել է ոչ իրավաչափ:

Վերոգրյալից զար, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարված այդ առգրավման արդյունքում խախտվել են «ԷԼԻՏՍԻ ԷՍՎԵ», «ԷԼԻՏ ԷՍՎԵ» և «ՊՐԵՍՏԻԺ ԼԵՆԴ» ՍՊ ընկերությունների իրավունքները և օրինական շահերը, քանի որ առգրավված փաստաթղթերի բացակայությունը հանգեցնում է վերջիններիս բնականոն գործունեության, այդ թվում՝ փաստաթղթաշրջանառության խաթարման, և վերջիններս կարող են նրանց իրավունքների նկատմամբ կատարված անհիմն և ոչ իրավաչափ միջամտության շարունակականության դեպքում կրել նյութական և ոչ նյութական վնասներ»⁶⁴⁴:

⁶⁴⁴ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 50-62:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը, մեջբերելով մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանների առնչությամբ Վճարելի դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները, իր անհամաձայնությունն է հայտնել Վերաքննիչ դատարանի դատողությունների հետ: Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ նախաքննության մարմնի վիճարկվող որոշումը ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված այն որոշումների թվում, որոնց համար օրենսդիրը նախատեսել է դատական բողոքարկման հնարավորություն: Ավելին, դիմողի կողմից բարձրացված հարցի քննությունը դատավարության ավելի ուշ փուլում, այդ թվում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, հնարավոր է, և այն չի հանգեցնելու դիմողների իրավունքների ու օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

Վերոգրյալի հաշվառմամբ բողոքաբերը եզրահանգել է, որ առգրավում կատարելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չի հանդիսանում:

8.1. Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրելով, որ այն հարցադրումները, որոնք անմիջականորեն փոխկապակցված են անձին առաջադրված մեղադրանքի բովանդակության հետ, դուրս են գտնվում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից, գնահատականի չի արժանացրել, որ տվյալ դեպքում «Էլիտա էսվե», «Էլիտ էսվե» և «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները փաստացի պատկանում են Էդգար Մկրտչյանին, ով մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 310-րդ հոդվածով, հետևաբար կոնկրետ դեպքում հայցվող իրավական պաշտպանությունն առնչվում է առաջադրված մեղադրանքին:

Ըստ բողոք բերած անձի, քննարկվող դեպքում նախաքննության մարմնի վիճարկվող որոշման իրավաչափությունը ենթակա է գնահատման բացառապես դատախազական հսկողության սահմաններում:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է րեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ դիմողներ «Էլիտա էսվե», «Էլիտ էսվե» ու «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ «Էլիտա էսվե», «Էլիտ էսվե» և «Պրեստիժ լենդ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերությունների կողմից հայցվող իրավական պաշտպանությունը հանդիսանում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում: (...)»:

11.1 Մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առարկայի շրջանակի հստակեցման նպատակով Վճռաբեկ դատարանը մշակել է հետևյալ սկզբունքը. **գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից գատ, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների այն բոլոր որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման**⁶⁴⁵:

Ավելին, Վճռաբեկ դատարանն իր կողմից ձևավորած վերոգրյալ ընդհանուր կանոնի կենսագործման շրջանակներում արձանագրել է նաև, որ նախաքննության մարմնի կողմից իրականացվող ապացուցողական գործունեությանը (ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելը) դատարանի միջամտությունը ոչ միայն չի բխում մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության խնդիրներից, այլև նման միջամտության անթույլատրելիությունն անհրաժեշտ նախապայման է դատարանի անկողմնակալության և անմեղության կանխավարկածի սկզբունքների պահպանության համար⁶⁴⁶:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

⁶⁴⁵ Տե՛ս Վարուժան Մանուկյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0060/11/10 որոշման 16-րդ կետը:

⁶⁴⁶ Տե՛ս Հմայակ Արսենյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0125/11/12 որոշման 13-րդ կետը:

- Նախաքննության մարմինը, գտնելով, որ «Էլիտա Էսվե», «Էլիտ Էսվե» և «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին առնչվող որոշակի փաստաթղթերը քրեական գործով կարող են ապացուցողական նշանակություն ունենալ, որոշում է կայացրել առգրավել դրանք⁶⁴⁷,

- Վերոնշյալ որոշման դեմ ընկերությունների ներկայացուցչի բողոքի քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը մերժել է այն, պատճառաբանելով, որ քրեական հետապնդման մարմնի կողմից նախաքննության փուլում նյութերի ձեռք բերման ընթացակարգի իրավաչափությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չի հանդիսանում⁶⁴⁸,

- Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը և սահմանելով վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ վերացնելու դիմողներ «Էլիտա Էսվե», «Էլիտ Էսվե» և «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների իրավունքների ու օրինական շահերի խախտումը, գտել է, որ վիճարկվող որոշման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում թեև առերևույթ հնարավոր է, սակայն այն կհանգեցնի անձի, տվյալ դեպքում՝ իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման, քանի որ դրանք արդեն իսկ խախտված են: Վերաքննիչ դատարանը, որպես դիմողների իրավունքների և օրինական շահերի խախտում դիտարկել է նաև այն, որ փաստաթղթերի բացակայության շարունակական լինելը կարող է հանգեցնել «Էլիտա Էսվե», «Էլիտ Էսվե» և «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բնականոն գործունեության, այդ թվում՝ փաստաթղթաշրջանառության խաթարմանը, որն էլ կարող է հանգեցնել նյութական և ոչ նյութական վնասի առաջացման⁶⁴⁹:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-11.1-րդ կետերում վկայակոչված իրավակարգավորման և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ըստ էության քննության առնելով դիմողների ներկայացուցչի բողոքը, դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության լիազորության շրջանակներից:

Նախ և առաջ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ընդունելով հանդերձ, որ վիճարկվող որոշման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում առերևույթ հնարավոր է, գտել է, որ այն կհանգեցնի իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման, քանի որ դրանք արդեն իսկ խախտված են: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի կողմից որպես ելակետ ընդունված՝ իրավունքների՝ արդեն իսկ խախտված լինելու հանգամանքը, ի հակադրումն

⁶⁴⁷ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁶⁴⁸ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁶⁴⁹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

սույն որոշման 11.1-րդ կետում նշված սկզբունքի, չի կարող դիտարկվել որպես չափանիշ՝ առգրավում քննչական գործողության իրավաչափությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգով ստուգելու համար: Տվյալ դեպքում հայցվող իրավական պաշտպանությունն անմիջապես կապված է նախաքննության փուլում գտնվող քրեական գործով ապացուցողական գործունեության իրավաչափության գնահատման հետ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ հարցը կարող է քննության առարկա դարձվել բացառապես քրեական գործի ըստ էության քննության շրջանակներում, հակառակ պարագայում կարող է խախտվել մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության և քրեական գործի դատական քննության գործառնության տարանջատման սկզբունքը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պնդմանը, թե փաստաթղթերի բացակայության շարունակական լինելը կարող է հանգեցնել «Էլիտա էսվե», «Էլիտ էսվե» և «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բնականոն գործունեության, այդ թվում՝ փաստաթղթաշրջանառության խաթարմանը, հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ այն դեպքում, երբ առգրավված և գործին կցված փաստաթղթերն օրինական տիրապետողին անհրաժեշտ են ընթացիկ հաշվառման, հաշվետվության և այլ օրինաչափ նպատակների համար, նրան հնարավորություն է ընձեռվում ժամանակավոր օգտագործման համար ստանալ այդ փաստաթղթերը կամ դրանցից պատճեններ հանել: Հետևաբար, այս առումով Վերաքննիչ դատարանի փաստարկը ևս ընդունելի չէ Վճռաբեկ դատարանի համար:

14. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ «Էլիտա էսվե», «Էլիտ էսվե» և «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից հայցվող իրավական պաշտպանությունը հանդիսանում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, իրավաչափ չէ:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի դատական ակտը բեկանելու համար:

Մինևսույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 20-ի որոշմանը:

16. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի

Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմողներ «Էլիտա Էսվե», «Էլիտ Էսվե» և «Պրեստիժ լենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցիչ Ա.Անդրիկյանի բողոքը բավարարելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 1-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 20-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

42.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0174/06/21

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի սեպտեմբերի 7-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Իշխան Արմենի Վահանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազի պաշտոնակատար Տ.Ամբարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2020 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական և քրեագիտական գլխավոր վարչության՝ քրեագիտական վարչությունում (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) ՀՀ քրեական օրենսգրքի 384-րդ հոդվածի 2-րդ մասով, 390-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 390-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին ու 2-րդ կետերով, 391-րդ հոդվածի 3-րդ մասով և 395-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 69108320 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ թիվ 69108320 քրեական գործի նյութերով հարուցվել է նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 3-րդ մասով, 376-րդ հոդվածի 3-րդ մասով և 380-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների

հատկանիշներով, առանձնացվել է առանձին վարույթում, որին շնորհվել է 69101421 համարը:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի մարտի 16-ի որոշմամբ Իշխան Արմենի Վահանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 3-րդ մասով և 380-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի մարտի 18-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Իշխան Վահանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Կալանավորման ժամկետի սկիզբը հաշվվել է փաստացի արգելանքի վերցնելու պահից:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2021 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մարտի 18-ի որոշումը բեկանել և վերացրել է մեղադրյալ Ի.Վահանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը՝ նրան անհապաղ ազատ արձակելով:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազի պաշտոնակատար Տ.Ամբարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 21-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից մեղադրյալ Իշխան Վահանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 3-րդ մասով և 380-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար. «Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ագրեսիվ պարտերազմի և 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ՀՀ կառավարության 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրության ժամանակ, զբաղեցնելով Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի թիվ 59703 զորամասի 5-րդ ուսումնական գումարտակի հրամանատարի պաշտոնը, հանդիսանալով իր ենթակա անձնակազմի պետը, 2020 թվականի հոկտեմբերի 10-ին Արցախի Հանրապետության Հաղորդ քաղաքի մոտակայքում գրավող Խոտոհար սարի վրա փռելի ունեցած մարտական գործողությունների ընթացքում [Ի.Վահանյանը] չի կատարել իր անմիջական պետի հրամանը, ինչպես նաև ինքնակամ լքել է մարտադաշտը, որպիսի գործողություններն առաջացրել են ծանր հետևանքներ՝ Արցախի

Հանրապետության պաշտպանության բանակի թիվ 59703 զորամասի 5-րդ ուսումնական գումարակի անձնակազմից գոհվել, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել և գերեվարվել պարտադիր ժամկետային զինծառայողներ:

Այսպես.

Բշխան Արմենի Վահանյանն Արրեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած ագրեսիվ պատերազմի ժամանակ՝ 2020 թվականի հոկտեմբերի 08-ին, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի թիվ 59703 զորամասի հրամանատար, գնդապետ Արթուր Քարամյանի հրամանով նշանակվել է հիշյալ զորամասի 5-րդ ուսումնական գումարակի հրամանատար՝ արանձնելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 129-րդ և 130-րդ հոդվածներով նախատեսված գումարակի հրամանատարի պարտականությունները:

Բշխան Վահանյանը 2020 թվականի հոկտեմբերի 08-ին Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի թիվ 59703 զորամասի հրամանատար Արթուր Քարամյանի կողմից հրաման է ստացել իրեն վարահիված գումարակի անձնակազմի հետ տեղափոխվել Արցախի Հանրապետության Հադրոթ քաղաքի մոտակայքում գտնվող Խոտոհար սարի վրա և իրականացնել հիշյալ վայրում տեղակայված մարտական դիրքերի պաշտպանությունը՝ կանխելով հակառակորդի առաջխաղացումները: Հիշյալ հրամանը կատարելով՝ Բշխան Վահանյանն իրեն վարահիված անձնակազմի հետ միասին տեղափոխվել է նշված վայր, սպա գումարակի անձնակազմին հրաման է տվել դիրքավորվել և անցնել պաշտպանության:

Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի թիվ 59703 զորամասի 5-րդ ուսումնական գումարակի անձնակազմի կողմից վերը նշված սարի վրա դիրքավորվելուց հետո՝ 2020 թվականի հոկտեմբերի 09-ին այդ դիրքեր է այցելել գնդի հրամանատար Արթուր Քարամյանը, ով Բշխան Վահանյանին հարակ հրամաններ է տվել մարտական դիրքերի պաշտպանության կազմակերպման վերաբերյալ, սպա հեռացել:

2020 թվականի հոկտեմբերի 10-ին հակառակորդը շրջանցել է Արցախի Հանրապետության Հադրոթ քաղաքի մոտակայքում գտնվող Խոտոհար սարի վրա տեղակայված դիրքերը և անցել հարձակման: Տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում Վահան Բշխանյանը, հանդիսանալով հիշյալ մարտական դիրքերի պաշտպանությունն իրականացնող Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի թիվ 59703 զորամասի 5-րդ ուսումնական գումարակի անձնակազմի անմիջական պետ, չի կատարել ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 129-րդ և 130-րդ հոդվածներով նախատեսված գումարակի հրամանատարի պարտականությունները, այն է՝ հանդիսանալով գումարակի ողջ անձնակազմի ուղղակի պետը, խաղաղ և պատերազմական ժամանակ պարասխանատու լինելով գումարակի մարտական և զորահավաքային պարաստության և նրա կողմից մարտական առաջադրանքների հաջող կատարման համար, զանգահարել է իր անմիջական

պետ հանդիսացող՝ գորամասի հրամանատար Արթուր Քարամյանին և նրան հայրնել րեղի ունեցող մարտական գործողությունների, հակառակորդի հարձակման, դրա արդյունքում ունեցած զոհերի ու վիրավորների, ինչպես նաև՝ իր կողմից մարտական գործողությունների վայրը լքելու ցանկության մասին, սակայն գորամասի հրամանատար Արթուր Քարամյանի կողմից հրաման է ստացել չլքել մարտական գործողությունների վայրը, խուճապի չմտնել, հավաքել և ապահով վայրում րեղակայել իրեն վարահված զորքը և կազմակերպել ճիշտ նահանջ:

Իր անմիջական պերի՝ գորամասի հրամանատար Արթուր Քարամյանի կողմից սահմանված կարգով րոված օրինական հրամանը չկատարելով և սեփական անձի անվրանգությունը վեր դասելով իր ենթակայության րակ գրնվող զինձառայողների անվրանգությունից, Բշխան Վահանյանն անրեսել է իր ենթակայության րակ գրնվող պարպադիր ժամկերային զինձառայողների նորակոչիկ լինելու և մարտական հերություններին րավարար չրիրապերելու հանգամանքը, հանդիսանալով պաշրոնատար անձ և պարպավոր լինելով հարակ կարարել իրեն րոված մարտական առաջադրանքները, արիարար մարունչել թնամու դեմ, մարտական գործողությունների ընթացքում միայնակ նարել է ավրոմերենան և ինքնակամ լքել մարտադաշր հանդիսացող՝ Արցախի Հանրապերության Հադրութի շրնանում գրնվող Խոռհատր սարի մարտական դիրքերը:

Բշխան Վահանյանի կողմից անմիջական պերի օրինական հրամանը չկատարելուց և մարտական գործողությունների վայրն ինքնակամ լքելուց հերո հիշյալ դիրքերի պաշրպանությունն իրականացող Արցախի Հանրապերության պաշրպանության րանակի թիվ 59703 գորամասի 5-րդ ուսումնական գումարակի անձնակազմը մարտի պարագայում մացել է առանց հրամանատարի, վերջիններին գործողությունները հանակարգող անձ չի եղել, նվազել է նրանց մարտունակությունը, զինձառայողները մարնվել են խուճապի, ինչի հերևանքով Արցախի Հանրապերության պաշրպանության րանակի թիվ 59703 գորամասի 5-րդ ուսումնական գումարակի անձնակազմից, ի թիվս այլ զինձառայողների, զոհվել են Տիգրան Օգանեսյանը և Նարել անունով անձը, ի թիվս այլ զինձառայողների, վիրավորվել են պարպադիր ժամկերային զինձառայողներ Արերր Գասպարյանը, Կարեն Մանուկյանը, Արայիկ Գալսրյանը, Ռոբերր Վարդանյանը, Էրիկ Խաչարրյանը և Նարել Սիրունյանը, ի թիվս այլ զինձառայողների գերելարվել են պարպադիր ժամկերային զինձառայողներ Կարեն Մանուկյանը, Արայիկ Գալսրյանը, Ռոբերր Վարդանյանը, Էրիկ Խաչարրյանը և Նարել Սիրունյանը»⁶⁵⁰:

6. Առաջին առյանի դատարանը, րավարարելով Նախաքնության մարմնի միջնորդությունը, իր դատական ակտը պատճառարանել է հետևյալ կերպ. «(...) քննիչի կողմից ներկայացված (...) փաստական րվյալներն ու րեղելկություններն [Առաջին առյանի դադարանի համար, դարավարության րվյալ փոլում, ողնարորեն րավարար են հանգելու հերևության, որ առկա է հիմնավոր

⁶⁵⁰ Տեն կոլեր, հատոր 1, թերթեր 46-51:

կասկած, որ մեղադրյալ Իշխան Արմենի Վահանյանը հնարավոր է առնչություն ունի իրեն մեղաազարվող ենթադրյալ հանցագործություններին (...):

(...) Անդրադատնալով խափանման միջոց կիրառելու հիմքերին և հաշվի առնելով մեղաազարվող հանցագործությունների բնույթը, դրանց վրանգավորության աստիճանը, մեղադրյալ Իշխան Արմենի Վահանյանին մեղաազարվող արարքի համար նախատեսված պատժի չափը (ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է պատժ ազատազրկում հինգից տասնհինգ տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է պատժ ազատազրկում ութից տասներկու տարի ժամկետով) ինչպես նաև հաշվի առնելով, որ քրեական գործով պետք է իրականացվեն անհրաժեշտ մի շարք քննչական և դատավարական գործողություններ, այդ թվում՝ հարցաքննվել են ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններ ունեցող անձինք, կատարվել առերեսումներ, [Առաջին ատյանի դատարանը հանգում է հետևության, որ դրանք իրենց համակցության մեջ մեծացնում են հավանականությունն առ այն, որ մնալով ազատության մեջ՝ մեղադրյալ Բ.Վահանյանն իր նախկինում զբաղեցրած դիրքով պայմանավորված կարող է անօրինական ազդեցություն գործադրել իր ենթակայության տակ գտնված անձնակազմի վրա՝ այդ կերպ խոչընդոտելով մինչդարակյան վարույթում գործի քննությանը, որպիսի հանգամանքները բացառում են ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալ Բ.Վահանյանի պարզաճ վարքագծի ապահովման հնարավորությունը: (...) Ինչ վերաբերում է նրան, որ մեղադրյալ Բ.Վահանյանն իր խնամքին ունի անչափահաս երեխաներ, վարատող ծնող, բնակության վայրում բնութագրվում է դրական, ծառայության ընթացքում խրախուսվել է և արժանացել պարգևների, այս Առաջին ատյանի դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ հանգամանքները քրեական գործի քննության այս փուլում չեն կարող մեղադրյալի պարզաճ վարքագիծը՝ մասնավորապես դատավարության մասնակիցների/ վրա անօրինական ազդեցություն գործադրելու ռիսկը չեզոքացնող կանխորոշող հանգամանքներ լինել»⁶⁵¹: Միևնույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ նախաքննության մարմնի միջնորդության մեջ նշված վրա՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և քրեական օրենքով արգելված նոր արարք կատարելու հիմքերը, ներկայացված նյութերով չեն հաստատվում⁶⁵²:

7. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, արձանագրել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանի համար ընդունելի չէ Առաջին ատյանի դատարանի՝ [Բ.Վահանյանի կողմից գործի պարզաճ քննությանը խոչընդոտելու բարձր հավանականության վերաբերյալ] եզրահանգումը, քանի որ ներկայացված գործի նյութերում բացակայում է գեթ մեկ ապացույց, որը հնարավորություն կտար հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ մնալով ազատության մեջ մեղադրյալ Իշխան Վահանյանը կարող

⁶⁵¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 190-198:

⁶⁵² Տե՛ս նույն տեղում:

է անօրինական ազդեցություն գործադրել [իր ենթակայության Կասկածը] անձանց վրա:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին սայրանի դատարանի նման եզրահանգումը հիմնադրով է և հաստատված չէ փոխկապակցված հավասարի սպառնալուծների բավարար ամբողջությամբ:

Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է գալիս, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դեպքը, որը վերագրվում է Բ.Վահանյանին, տեղի է ունեցել 2020թ. հոկտեմբերի 10-ին, իսկ վերջինս հարուցված քրեական գործի մասին տեղեկացել է 2021թ. հունվարի 19-ին: Այդ օրն Բ.Վահանյանը հարցաքննվել է որպես վկա, սակայն նրան բացատրվել է, որ հարցաքննության ընթացքում կարող է օգտվել կասկածյալի իրավունքներից:

Բացի այդ, Բշխան Վահանյանը միայն դեմքով է ճանաչում իր դեմ ցուցմունք տրված նորակոչիկներին, և անհասկանալի է, թե ինչպես նա կարող է անօրինական ազդեցություն գործադրել նրանց վրա:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Բշխան Վահանյանը, տեղեկանալով հարուցված քրեական գործի մասին, շուրջ երկու ամիս գրնվելով ազատության մեջ որևէ անգամ չի փորձել անօրինական ազդեցություն գործադրել դատավարությանը մասնակցող անձանց վրա:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Բշխան Վահանյանի ինամքին են գրնվում անչափահաս երեխաները, վարատող ծնողը, մեղադրյալը բնակության վայրում բնութագրվում է դրականորեն, ծառայության ընթացքում իրախոսավել է և արժանացել պարգևների»⁶⁵³:

8. Բ.Վահանյանը վկայի դատավարական կարգավիճակում՝ օգտվելով կասկածյալի իրավունքներից, ի թիվս այլնի, ցուցմունք է տվել, որ 2005 թվականին ավարտել է Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանը՝ ստանալով համագորային հրամանատարի մասնագիտությունը և մինչև 2011 թվականի վերջը ծառայել է Արմավիրի ուսումնական զորամասում որպես դասակի հրամանատար, այնուհետև մինչև 2016 թվականի վերջը ծառայությունը շարունակել է Շամշադինի թիվ 21127 զորամասում՝ որպես վաշտի հրամանատար: 2017 թվականի սկզբից ծառայությունը շարունակել է Ջաբրահիլի թիվ 59703 զորամասում՝ սկզբում որպես վաշտի հրամանատար, այնուհետև՝ բարոյահոգեբանական ապահովման գծով գումարտակի հրամանատարի տեղակալ, իսկ 2020 թվականի մայիս կամ հունիս ամսին նշանակվել է նույն զորամասի 5-րդ ուսումնական գումարտակի շտաբի պետ: 2020 թվականի հոկտեմբերի 7-ին նշանակվել է նույն գումարտակի հրամանատար: Այժմ գտնվում է կադրերի տրամադրության տակ: Կոչումով փոխգնդապետ է⁶⁵⁴:

⁶⁵³ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 50-60:

⁶⁵⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 52-59:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա: Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է *Ապան Ավերիսյանի, Դավիթ Համբարձումյանի, Վալերի Հակոբյանի* և այլոց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Մասնավորապես, բողոքի հեղինակը վկայակոչելով Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշումները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռները՝ փաստել է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել մի շարք հանգամանքներ ու իր եզրահանգումները չի կառուցել այդ հանգամանքների համակցված վերլուծության վրա, ինչի արդյունքում մեղադրյալ Ի.Վահանյանի հետագա պատշաճ վարքագծի ապահովման տեսանկյունից որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու անհրաժեշտության վերաբերյալ հանգել է սխալ հետևության:

Բողոքաբերի պնդմամբ, Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել ենթադրյալ հանցավոր արարքները կատարելիս մեղադրյալ Ի.Վահանյանի զբաղեցրած պաշտոնը՝ Պաշտպանության բանակի թիվ 59703 գորամասի 5-րդ գումարտակի հրամանատար հանդիսանալը, այդ համատեքստում համաձայնակիցների և ենթակա անձնակազմի շրջանակում ձևավորված կապերը, ինչը ողջամիտ է դարձնում մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու ենթադրությունը՝ հաշվի առնելով, որ դեռևս պետք է հարցաքննվեն և առերեսվեն ենթակա գումարտակի անձնակազմի մի շարք զինձառայողներ, որոնց ցուցմունքներում նշված հանգամանքների միջև առկա են էական հակասություններ:

Բացի այդ, մեղադրյալ Ի.Վահանյանին մեղսագրվող արարքների կատարման տեղը, ժամանակը, եղանակը, դրանց դրսևորման ձևը՝ այդ թվում մեղադրյալի դերակատարությունը վկայում են նրա անձի հանրային բարձր վտանգավորության մասին:

Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ վերը նշվածը, մեղսագրվող արարքների առանձնապես ծանր հանցագործություններ լինելու ու սպառնացող պատժի խստության հետ համակցության մեջ բավարար հիմք են տալիս հիմնավորված ենթադրություն անելու, որ մեղադրյալ Ի.Վահանյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը և իրավաչափ նպատակին հնարավոր է հասնել միայն նրա անձնական ազատությունը սահմանափակելով:

9.1. Վերը նշվածի համատեքստում բողոքի հեղինակը նշել է, որ հակառակի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը հիմնված է Ի.Վահանյանի՝ ենթակա անձնակազմին միայն դեմքով ճանաչելու վերաբերյալ հայտարարության վրա՝ առանց վերլուծելու և պատճառաբանելու, թե այդ

հայտարարությունը գործում առկա ինչ փաստական հանգամանքներից է բխում կամ ինչ փաստական տվյալով է հաստատվում:

Անդրադառնալով հարուցված քրեական գործի մասին շուրջ երկու ամիս տեղեկացված լինելով պատշաճ վարքագիծ դրսևորելուն, խնամքին անչափահաս երեխաների և վատառողջ ծնողի առկայությանը, դրական բնութագրվելուն, ծառայության ընթացքում խրախուսվելուն, բողոքի հեղինակը նշել է, որ ազատության մեջ գտնվելու դեպքում՝ մեղադրյալ Ի.Վահանյանի կողմից գործի պատշաճ քննությանը խոչընդոտելու հավանականության ռիսկը բարձր լինելու վերաբերյալ եզրահանգման գալով Առաջին ատյանի դատարանն իրավական գնահատականի է արժանացրել նաև այդ հանգամանքները, մինչդեռ Վերաքննիչ դատարանն այդպիսիք դիտարկելով որպես կալանավորման աննպատակահարմարության հիմնավորում՝ որևէ կերպ չի պատճառաբանել իր անհամաձայնությունն Առաջին ատյանի դատարանի կողմից նույն հանգամանքների վերաբերյալ տրված գնահատականներին:

10. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մարտի 18-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք մեղադրյալ Ի.Վահանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու՝ գործի քննությանը խոչընդոտելու հիմքի բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»:

12.1. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա

հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (...):»

12.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խախտման միջոց կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

(...)

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճատների չներկայանալու կամ այլ ճանապարհով (...):»

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Խախտման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը. (...):»

12.3. Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով⁶⁵⁵: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները բոլոր դեպքերում պետք է պայմանավորված լինեն գործի նյութերից բխող որոշ փաստական տվյալներով: Սակայն մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանավորման հիմք(եր)ի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե այդ փաստական տվյալները մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու, այլ դրանք իրենց համակցության մեջ գնահատման ենթարկելու արդյունքում ձևավորվող փաստարկված դատողությունների վրա: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համապատասխան փաստական տվյալներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելը, դրանք իրարից անջատ գնահատելը կարող է հանգեցնել կալանավորման հիմքի առկայության կամ բացակայության մասին չհիմնավորված եզրահանգման գալուն: Հետևաբար խնդրո առարկա

⁶⁵⁵ Տե՛ս մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱԿԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 որոշումները:

հարցը լուծելիս դատարանի հետևությունները, յուրաքանչյուր դեպքում, պետք է հիմնված լինեն գործի նյութերում առկա ապացույցների, փաստերի կամ այլ տեղեկությունների, այդ թվում՝ քրեական օրենքով արգելված ենթադրյալ հանցանքի կատարման պահից ի վեր մեղադրյալի դրսևորած վարքագծի և նրա անձը բնութագրող այլ հատկանիշների՝ իրենց ամբողջության մեջ գնահատման վրա⁶⁵⁶:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

Իշխան Վահանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 3-րդ մասով և 380-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել պատերազմի և 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ որպես Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի թիվ 59703 զորամասի 5-րդ ուսումնական գումարտակի հրամանատար՝ իր անմիջական պետի հրամանը չկատարելու, ինչպես նաև մարտադաշտն ինքնակամ լքելու համար, որպիսի գործողություններն առաջացրել են ծանր հետևանքներ⁶⁵⁷,

Առաջին ատյանի դատարանը, մեղադրյալ Ի.Վահանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդության քննության արդյունքում, 2021 թվականի մարտի 18-ի որոշմամբ հաստատված է համարել մեղադրյալ Ի.Վահանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 3-րդ մասով և 380-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների առերևույթ կատարված լինելու հիմնավոր կասկածը: Անդրադառնալով նախաքննության մարմնի միջնորդության մեջ նշված՝ կալանավորման հիմքերին, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ներկայացված փաստական տվյալները բավարար են հաստատված համարելու խափանման միջոց ընտրելու՝ գործի քննությանը խոչընդոտելու հիմքի առկայությունը, ընդգծելով, որ մեղազգրվող հանցագործությունների բնույթը և հանրային վտանգավորությունը, ակնկալվող պատժի խստությունը, մի շարք քննչական և դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունն իրենց համակցության մեջ մեծացնում են հավանականությունն առ այն, որ մնալով ազատության մեջ՝ մեղադրյալ Ի.Վահանյանն իր նախկինում զբաղեցրած դիրքով պայմանավորված կարող է անօրինական ազդեցություն գործադրել իր ենթակայության տակ գտնված անձնակազմի վրա՝ այդ կերպ խոչընդոտելով մինչդառական վարությամբ գործի քննությանը, որպիսի հանգամանքները բացառում են ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալ Ի.Վահանյանի պատշաճ վարքագծի ապահովման հնարավորությունը⁶⁵⁸,

Վերաքննիչ դատարանը բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, արձանագրել է, որ ներկայացված նյութերում բացակայում է որևէ փաստական

⁶⁵⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Տիգրան Պետրոսյանի գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԿԴ/0084/06/16 որոշման 13-րդ կետը, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Վալերի Հակոբյանի գործով 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ԵԴ/0548/06/19 որոշումը:

⁶⁵⁷ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁶⁵⁸ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

տվյալ, որը հնարավորություն կտար հիմնավորված ենթադրություն անելու, որ մնալով ազատության մեջ՝ մեղադրյալ Ի.Վահանյանը կարող է անօրինական ազդեցություն գործադրել իր ենթակայության տակ գտնված անձնակազմի վրա: Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Ի.Վահանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերագրյալ հիմքի բացակայության վերաբերյալ եզրահանգման գալով հաշվի է առել հետևյալ հանգամանքները. ա) մեղադրյալ Ի.Վահանյանը միայն դեմքով է ճանաչում իր դեմ ցուցմունք տված պարտադիր ժամկետային զինծառայողներին, և անհասկանալի է, թե ինչպես նա կարող է անօրինական ազդեցություն գործադրել նրանց վրա, բ) տեղեկացված լինելով հարուցված քրեական գործի մասին, շուրջ երկու ամիս գտնվելով ազատության մեջ, դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն չի գործադրել, գ) խնամքին են գտնվում անչափահաս երեխաները և վատառողջ ծնողը, բնակության վայրում բնութագրվում է դրական, ծառայության ընթացքում խրախուսվել է և արժանացել պարգևների⁶⁵⁹:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-12.3-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելիս և մեղադրյալ Ի.Վահանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշում կայացնելիս, պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել մի շարք հանգամանքներ:

Այսպես, Վերաքննիչ դատարանը պատշաճ ուշադրության չի արժանացրել այն առանցքային փաստական տվյալը, որ մեղադրյալը, իրեն մեղսագրվող քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքները կատարելիս, գործել է ի պաշտոնե՝ որպես Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի թիվ 59703 զորամասի 5-րդ ուսումնական գումարտակի հրամանատարի պաշտոնը զբաղեցնող պաշտոնատար անձ: Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես *Դավիթ Համբարձումյանի* գործով Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները⁶⁶⁰, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքն այն մասին, որ ի թիվս այլնի, անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս, առանձնահատուկ դերակատարում ունի նրա՝ հասարակությունում ունեցած դերը, զբաղեցրած պաշտոնն ու հնարավոր ազդեցությունը գործով անցնող վկաների վրա, նրա հնարավորությունները խոչընդոտելու մինչդատական վարույթի բնականոն ընթացքին⁶⁶¹: Այդ համատեքստում անձի ազատության

⁶⁵⁹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁶⁶⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Դավիթ Համբարձումյանի* գործով 2019 թվականի սոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0700/06/18 որոշումը, կետ 16:

⁶⁶¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Neumeister v. Austria* գործով վերը նշված

իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաշվի է առել օրինակ՝ անձի նախկինում ուստիական հանդիսանալը և իր նախկին ծառայողական գործունեության հետ սերտ կապված հանցագործություն կատարելու մեջ մեղադրվելը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում գործի քննությանը միջամտելու հավանականությունը գնահատելու տեսանկյունից⁶⁶²: Այդ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրյալ Ի.Վահանյանը մեղադրվում է իր ծառայողական գործունեության ընթացքում քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքների կատարման մեջ: Ընդ որում, հատկանշական է, որ քրեական գործով որպես վկա ներգրավված անձինք որոշակի փոխհարաբերությունների մեջ են գտնվել մեղադրյալ Ի.Վահանյանի հետ: Մասնավորապես, հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ քրեական գործով որպես վկա ներգրավված են մի շարք պարտադիր ժամկետային զինծառայողներ, ովքեր գտնվել են Ի.Վահանյանի ենթակայության ներքո և ծառայողական կախվածության մեջ են գտնվել նրանից: Ավելին, հարկ է նաև նկատել, որ քրեական գործով որպես վկա ներգրավված են նաև զինված ուժերի սպայական կազմի պաշտոններ զբաղեցնող և մեղադրյալի հետ ենթակայական հարաբերությունների մեջ գտնվող անձինք⁶⁶³: Այս համատեքստում էական նշանակություն ունի նաև այն, որ մեղադրյալ Ի.Վահանյանը շուրջ 15 տարի ծառայություն է իրականացրել Հայաստանի և Արցախի Հանրապետությունների զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում, զբաղեցրել է հրամանատարի պաշտոն, կոչումով փոխգնդապետ է⁶⁶⁴: Նշվածը ողջամտորեն ենթադրում է հեղինակություն, որոշակի ազդեցություն զինված ուժերում ծառայություն իրականացնող անձանց նկատմամբ, ովքեր հանդիսանում են կամ ողջամտորեն կարող են հանդիսանալ քրեական գործին մասնակցող անձ:

Վերոնշյալի հաշվառմամբ կարևոր է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ սույն գործով զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված առավել բարձր վտանգավորություն ներկայացնող ենթադրյալ արարքներ կատարած Ի.Վահանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննարկվում էր առաջին անգամ՝ նախաքննության սկզբնական փուլում: Այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ վկաների նկատմամբ ճնշումների վտանգը կարող է ընդունելի լինել վարույթի սկզբնական փուլում⁶⁶⁵: Այս համատեքստում անհրաժեշտ է հաշվի

վճիռը, *Gabor Nagy v. Hungary (No. 2)* գործով վերը նշված վճիռը:

⁶⁶² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khanzadyan v. Armenia* գործով 2014 թվականի մարտի 11-ի որոշումը, գանգատ թիվ 68571/11:

⁶⁶³ Տե՛ս նյութեր, ի թիվս այլնի, հատոր 1 և 2:

⁶⁶⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁶⁶⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Jarzyński v. Poland* գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 15479/02, կետ 43, *Merabishvili v. Georgia* [GC] գործով 2017 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատներ թիվ 72508/13, կետ 224 ECHR 2017

առնել, որ դեռևս չկատարված քննչական գործողությունները ողջամտորեն կապված են մեղադրյալ Ի.Վահանյանի հետ ծառայողական կախվածության կամ ենթակայական հարաբերությունների մեջ գտնված անձանց հետ: Նման պայմաններում, սույն գործի փաստական հանգամանքների վերը նշված առանձնահատկությունները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ էապես բարձր է հավանականությունն առ այն, որ գործի քննության տվյալ փուլում ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Ի.Վահանյանն օգտագործելով իր նախկին պաշտոնական դիրքը՝ կարող է ազդեցություն գործադրել սույն գործի հետ առնչություն ունեցող և իրենից ծառայողական կախվածության կամ ենթակայական հարաբերությունների մեջ գտնված անձանց նկատմամբ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրված այն պատճառաբանությանը, թե մեղադրյալ Ի.Վահանյանը միայն դեմքով է ճանաչում իր դեմ ցուցմունք տված նորակոչիկ պարտադիր ժամկետային զինծառայողներին և անհասկանալի է, թե ինչպես վերջինս կարող է անօրինական ազդեցություն գործադրել նրանց վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի պնդումը որևէ փաստական տվյալով չհիմնավորված ենթադրություն է և վերոնշյալի պայմաններում չի կարող չեզոքացնել մեղադրյալ Ի.Վահանյանի կողմից իր անմիջական ենթակայության տակ գտնված անձնակազմի վրա անօրինական ազդեցություն գործադրելու հավանականությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի թիվ 59703 զորամասի 5-րդ ուսումնական գումարտակի հրամանատար նշանակվելը (2020 թվականի հոկտեմբերի 8-ին), Ի.Վահանյանը դեռևս 2020 թվականի մայիս կամ հունիս ամսից հանդիսացել է նույն գումարտակի շտաբի պետը⁶⁶⁶, հետևաբար Վերաքննիչ դատարանի դատողությունն այն մասին, որ մեղադրյալը միայն դեմքով է ճանաչում գումարտակի զինծառայողներին, չի բխում գործի փաստական հանգամանքներից:

Վերոնշյալ ծանրակշիռ փաստական հանգամանքները, որոնք իրենց համակցության մեջ բավարար էին մեղադրյալի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար, համակողմանի գնահատման չեն ենթարկվել Վերաքննիչ դատարանի կողմից: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալ Ի.Վահանյանին մեղաազդվող ենթադրյալ հանցավոր արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, նախկին աշխատանքը զինված ուժերում, իր ծառայողական գործունեության հետ կապված հանցանքները ենթադրաբար կատարելը, զինված ուժերում ունեցած կարգավիճակը և սույն գործի մյուս փաստական հանգամանքներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելը, դրանք իրարից անջատ գնահատելը հանգեցրել են կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու՝ գործի քննությանը

(extracts):

⁶⁶⁶ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

խոչընդոտելու հիմքի բացակայության մասին չհիմնավորված եզրահանգման գալուն:

Միաժամանակ, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ որոշում կայացնելիս հաշվի է առնում նաև մեղադրյալի անձը և հարուցված քրեական գործի մասին շուրջ երկու ամիս տեղեկացված լինելով պատշաճ վարքագիծ դրսևորելը, ապա դրանք սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Ի.Վահանյանի՝ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը հակակշռող բավարար գործոններ չեն կարող համարվել: Հետևաբար, դրանք ի գործ չեն երաշխավորելու մեղադրյալի պատշաճ վարքագիծը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում՝ հնարավորություն չտալով ապահովելու նրա անձնական ազատության իրավունքի և վերջինիս մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը:

15. Ուստի, Վճռաբեկ դատարանը չի կարող չեզրահանգել, որ սույն գործում առկա են ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բավարար են հիմնավորելու մեղադրյալ Ի.Վահանյանի կողմից քննության տվյալ փուլում գործի քննությանը խոչընդոտելու հավանականության ռիսկը բավականին բարձր լինելու ենթադրությունը և մինչդատական վարույթի տվյալ փուլում նրան անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը:

Վերոնշյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ մեղադրյալ Ի.Վահանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու՝ գործի քննությանը խոչընդոտելու հիմքի բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

16. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել դատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինչև ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Իշխան Վահանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, վերջինիս նկատմամբ խափանման միջոցի հարցը քննելիս Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման և վերլուծության է ենթարկել գործի փաստական հանգամանքների ամբողջությունը, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մարտի 18-ի որոշմանը⁶⁷՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 (երկու) ամիս ժամկետին պետք է

⁶⁷ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

հաշվակցել մեղադրյալ Ի.Վահանյանին փաստացի արգելանքի վերցնելու պահից մինչև ազատ արձակվելը՝ 2021 թվականի ապրիլի 9-ը, նրա՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Իշխան Արմենի Վահանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 9-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մարտի 18-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 (երկու) ամիս ժամկետին հաշվակցել մեղադրյալ Իշխան Արմենի Վահանյանին փաստացի արգելանքի վերցնելու պահից մինչև ազատ արձակվելը՝ 2021 թվականի ապրիլի 9-ը, նրա՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *արորագրություն*

Դատավորներ՝ *արորագրություններ*

43.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0002/06/19

ՀՀ Վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

նախագահությամբ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի սեպտեմբերի 10-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Արմեն Վարուժանի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 27-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի հունվարի 11-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում (այսուհետ՝ նաև նախաքննության մարմին) հարուցվել է թիվ 71100619 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով:

Նույն օրը Արմեն Վարուժանի Հարությունյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունվարի 13-ի որոշմամբ Ա.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և 2019 թվականի հունվարի 14-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով:

2. 2019 թվականի հունվարի 14-ին Նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել Լոռու մարզի առաջին աստիանի ընդհանուր

իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Ա.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը 2 (երկու) ամիս ժամկետով կիրառելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 29-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Միաժամանակ, պաշտպան Ա.Պապիկյանի միջնորդությունը՝ մեղադրյալ Ա.Հարությունյանի նկատմամբ խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու մասին, մերժվել է:

3. Մեղադրյալ Ա.Հարությունյանի պաշտպան Ա.Պապիկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 29-ի որոշումը բեկանել է, նախաքննության մարմնի միջնորդությունը մերժել է և մեղադրյալ Ա.Հարությունյանին անհապաղ ազատ արձակել կալանքից:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Արմեն Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա, գողություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով Սամվել Հասանյանի, Գևորգ Մանուկյանի և Անդրանիկ Առաքելյանի հետ, նախապես կատարված դերաբաշխման համաձայն՝ 2019 թվականի հունվարի 11-ին՝ ժամը 19⁰⁰-ի սահմաններում, իր վարած Մերսեդես-Բենց մակնիշի, 34 SZ 783 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով վերոհիշյալ անձանց հետ մեկնել է Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի 74/1 հասցեի շենքի մոտ, որտեղ օժանդակելով հանցակիցների գործողություններին՝ վերացրել է խոչընդոտները, այն է՝ նրանց սպասել է ավտոմեքենայում, իսկ Սամվել Հասանյանը, Գևորգ Մանուկյանը և Անդրանիկ Առաքելյանը տեխնիկական միջոցների գործադրմամբ մուտքի դուռն փակելու վնասելու եղանակով սպորինի մուտք են գործել Վարուժան Մաքանյանին պարկանող, վարձակալական հիմունքներով Արսեն Մարտիրոսյանին հանձնված, Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի 74/1-13 հասցեում գրնվող բնակարան, սակայն հանցագործությունն իրենց կամքից անկախ հանգամանքներով ավարտին չի հասցրել՝ բնակարանում համբարակելու

*համար անհրաժեշտ գույք չհայտնաբերելու պատճառով, որից հետո իր վարած վերոհիշյալ ավտոմեքենայով Սամվել Հասանյանին, Գևորգ Մանուկյանին և Անդրանիկ Առաքելյանին տեղափոխել է դեպքի վայրից (...)*⁶⁶⁸:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 14-ի դատական նիստի ձայնագրառման համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով, որ անհրաժեշտ է պատշաճ ծանուցագիր ուղարկել մեղադրյալ Ա.Հարությունյանի բնակության վայրի հասցեով, դատական նիստը հետաձգել և նշանակել է 2019 թվականի հունվարի 15-ին⁶⁶⁹:

6.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 15-ի դատական նիստի ձայնագրառման համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը, նկատի ունենալով, որ մեղադրյալը պատշաճ չի ծանուցվել և անհրաժեշտ է փոստային ծառայության միջոցով ծանուցել մեղադրյալին, դատական նիստը հետաձգել և նշանակել է 2019 թվականի հունվարի 21-ին⁶⁷⁰:

6.2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի դատական նիստի ձայնագրառման համաձայն՝ միջնորդության քննարկմանը ներկայացել են մեղադրյալ Ա.Հարությունյանը և պաշտպան Ա.Պապիկյանը, սակայն չի ներկայացել քննիչ Հ.Մարգարյանը: Վերջինս Առաջին ատյանի դատարանին տեղեկացրել է, որ չի կարող ներկայանալ միջնորդության քննարկմանը, քանի որ տվյալ քրեական գործը ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունից ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե՝ քննչական ենթակայության հարցը լուծելու նպատակով: Դատարանը, նկատի ունենալով, որ պարզ չէ, թե ում վարույթում է գտնվում քրեական գործը, դատական նիստը հետաձգել և նշանակել է 2019 թվականի հունվարի 29-ին⁶⁷¹:

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 29-ի որոշման համաձայն՝ *«(...) Դատարանը անդրադարձնալով մեղադրյալ Արմեն Վարուժանի Հարությունյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու քննիչի կողմից ներկայացրած հիմքերին, գրնում է, որ դրանք նույնպես առկա են:*

Դատարանը փաստում է, որ մեղադրյալ Արմեն Հարությունյանին վերագրվում է ծանր հանցագործության կատարում և գրնում է, որ փյվյալ դեպքում մեղազգրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը նշանակություն ունեն նրա հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում: Ելնելով այդ հանգամանքից դատարանը հիմնավոր է համարում քննիչի մրավախտությունը, ըստ որի մեղադրյալ Արմեն Վարուժանի Հարությունյանն ազատության մեջ մնալով, պատճի ապառնալիքով կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատարանական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելով:

⁶⁶⁸ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 35:

⁶⁶⁹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 53, էլեկտրոնային կրիչ:

⁶⁷⁰ Տե՛ս նույն տեղում:

⁶⁷¹ Տե՛ս նույն տեղում:

Դատարանի նման եզրահանգումները հիմնված են գործի նյութերում առկա այն փաստական փյուռներով, որ մեղադրյալ Արմեն Հարությունյանը դեպքի վայրից դիմել է փախուստի, իսկ ձերբակալվելուց հետո նրա ձերբակալման առավելագույն ժամկետը լրանալու կապակցությամբ ազատ արձակվելուց անմիջապես հետո թաքնվել է քննությունից, որից կարելի է որջամրորեն ենթադրել, որ ազատության մեջ գրնվելու դեպքում կրկին կարող է թաքնվել, ինչպես նաև փախուստի մեջ գրնվող Սամվել Հասանյանի հետ պայմանավորվել և գործի հանգամանքները նրա հետ համաձայնեցված ներկայացնել իրենց շահերին համապատասխան:

Այսպիսով դատարանը գրնում է, որ մեղադրյալ Արմեն Վարուժանի Հարությունյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու համար ներկայացված հիմքերը և պայմանները բավարար են (...)⁶⁷²:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 27-ի որոշման համաձայն՝ «(...) [Խխափանման միջոց կալանավորում ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը դատարանը պարտավոր է քննել անհապաղ, սակայն ոչ ուշ, քան հաջորդ օրը՝ առանց որևէ բացառության: Դրան համապատասխան օրենսդիրը նաև սահմանել է, որ ազատության մեջ գրնվող և պարզաձև կարգով ծանուցված մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը խոչընդոտ չէ միջնորդության քննությանը:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ վերոնշյալ իմպերատիվ պահանջի հետ փրամաքանորեն կապված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածում ամրագրված այն կանոնը, որ ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր (մաս 1-ին): Ինչը նշանակում է, որ եթե դատարանը խափանման միջոց կալանավորման կիրառման վերաբերյալ միջնորդությունը քննել և որոշումը կայացրել է վերոնշյալ ժամկետի խախտմամբ, ապա այդ որոշումն անօրինական է, հարկապես, երբ խոսքը վերաբերում է քննիչի միջնորդությունը բավարարելու մասին որոշմանը, քանի որ այդ դեպքում գործ ունենք անձի հիմնարար իրավունքի սահմանափակման հետ:

Սույն գործի փաստական հանգամանքներից պարզ է դառնում, որ Առաջին ստիպանի դատարանը քննիչի միջնորդությունը քննարկել և որոշում է կայացրել վերոնշյալ պահանջների խախտմամբ:

Ինչպես երևում է նյութերի ուսումնասիրությունից՝ նախաքննության մարմնի միջնորդությունը մեղադրյալ Ա.Հարությունյանի նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու մասին ներկայացվել է դատարան 14.01.2019 թվականին և նույն օրը մակագրվել դատավորին: Նույն օրը դատավորը նշանակել է դատական նիստ, որը մեղադրյալի չներկայանալու պարճատարանությանը հետաձգվել և նշանակվել է 15.01.2019 թվականին:

15.01.2019 թվականի նիստը ևս չի կայացել մեղադրյալի չներկայանալու պարճատարանությանը, իսկ հաջորդ դատական նիստը նշանակվել է 21.01.2019 թվականին, որին ներկա են եղել ինչպես մեղադրյալը, այնպես էլ նրա պաշտպանը,

⁶⁷² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 65-76:

ասկայն նիստը հետաձգվել է քննիչի չներկայանալու պարճատարանությամբ և նշանակվել քննության 29.01.2019 թվականին և այդ օրն էլ դադարանն ավարտել է միջնորդության քննությունը և կայացրել համապատասխան որոշում:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ քննիչի միջնորդությունը կալանավորումը որպես խախտման միջոց կիրառելու մասին դադարանը քննել և բավարարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ, որը Վերաքննիչ դադարանի համար բավարար է փաստելու, որ այդ որոշումը հանդիսանում է անօրինական և անհիմն որոշում և ենթակա է բեկանման:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ դադարանը փորձել է սպառնալի մեղադրյալի մասնակցությունը դատական նիստին՝ ինչպես պահանջում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածը, սպա պետք է արձանագրել, որ այն չի կարող հիմք հանդիսանալ օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ համապատասխան միջնորդությունը քննելու և որոշում կայացնելու համար: Բանն այն է, որ եթե առաջին երկու դատական նիստերին չի ներկայացել մեղադրյալը, իսկ դադարանը հետաձգելով միջնորդության քննությունը փորձել է սպառնալի օրենքի պահանջի կատարումը ազատության մեջ գրավող մեղադրյալին պարշաճ ծանուցելու առումով, քանի որ նա պարշաճ ծանուցված չի եղել դատական նիստերի տեղի և ժամանակի մասին, սպա երրորդ նիստին չի ներկայացել քննիչը, իսկ մեղադրյալը և պաշտպանը ներկայացել են, հետևաբար դատական նիստը հետաձգելը արդարացված չի եղել անկախ նրանից, թե ինչ պարճատարանություններ է ներկայացվել քննիչի չներկայանալու համար: Ասվածը նշանակում է, որ դադարանը կարող էր քննարկել միջնորդությունը և կայացնել որոշում, մինչդեռ դադարանն այս անգամ ևս հետաձգել է դատական նիստը և նշանակել այլ օր, մասնավորապես՝ 29.01.2019թ.:

Վերոգրյալով պայմանավորված Վերաքննիչ դադարանը գրնում է, որ Առաջին արյանի դադարանն իրավունք չունենա նախաքննության մարմնի միջնորդությունը քննության առնետ դրա ներկայացումից հետո 15-րդ օրը, անտեսելով օրենքի ինկտարարիվ պահանջը: Եթե անգամ հիմք ընդունվի այն հանգամանքը, որ առնվազն երկու անգամ միջնորդության քննարկման հետաձգումների պարճատար եղել է ազատության մեջ գրավող մեղադրյալի չներկայանալը դատական նիստերին, սպա ակնհայտ է, որ նա պարշաճ կարգով ծանուցված չի եղել, իսկ դրանից հետո նա ներկայացել է, հետևաբար օրենքի պահանջների անտեսումն որևէ կերպ հիմնավորված չի կարող լինել:

Հետևաբար, վերոգրյալը բավարար է փաստելու, որ առկա է բողոքարկվող դատական ակտն անվերապահ բեկանելու հիմք:

Անդրադառնալով կալանավորման հիմքերի առկայության մասին Առաջին արյանի դադարանի հետևություններին՝ Վերաքննիչ դադարանը փաստում է, որ դրանց առկայության մասին դադարանի հետևությունները հիմնավորված չեն հետևյալ պարճատարանությամբ:

(...) Վերաքննիչ դադարանը գրնում է, որ Առաջին արյանի դադարանը սխալ եզրահանգման է եկել կալանավորման հիմքերի առկայությունը հաստատելիս:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ինքնին այն փաստը, որ մեղադրյալը ձերբակալումից ազատվելուց հետո ներկայացել է դատարան իր վերաքննիչ կալանավորման հարցը քննարկելուն, ընդ որում՝ մեկ անգամ նիստը հետաձգվել և նշանակվել է 8 օր հետո և նա կրկին ներկայացել է միջնորդության քննարկման դատական նիստին, ավելին քննիչը չի ներկայացրել որևէ փաստական փյուռ այն մասին, որ ձերբակալումից ազատվելուց հետո մինչև կալանավորման մասին միջնորդությունը քննելու և լուծելու պահը 15 օր լինելով ազատության մեջ մեղադրյալը դրսևորել է ոչ պատշաճ վարքագիծ, բավարար է փաստելու, որ կալանավորման հիմքերի մասին դատարանի հետևությունները վերացական դատողություններ են, որոնք չունեն որևէ փաստական հիմք:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գրնում է, որ առկա է ևս մեկ հիմք Առաջին աստիճանի դատարանի որոշումը բեկանելու և քննիչի միջնորդությունը մերժելու համար (...)⁶⁷³:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանությունները հակասում են Վճարելի դատարանի արտահայտած դիրքորոշումներին, ինչպես նաև Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ և 285-րդ հոդվածների այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

10. Բողոք բերած անձը գտել է, որ Առաջին աստիճանի դատարանը, մեղադրյալ Ա.Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդության քննարկման վերաքննիչ դատական նիստերը հետաձգելով, նպատակ է հետապնդել պատշաճ ծանուցել և դատական նիստին ապահովել կամ մեղադրյալի և նրա պաշտպանի, կամ վարույթն իրականացնող մարմնի մասնակցությունը, ինչը հստակ օրենսդրական պահանջ է: Փաստորեն, Առաջին աստիճանի դատարանը, յուրաքանչյուր դեպքում հետաձգել է կալանավորման միջնորդությունը քննարկելու նպատակով նշանակված դատական նիստը՝ այն շարունակելու համար օրենքով սահմանված խոչընդոտների առկայությամբ պայմանավորված:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը դատական ակտում արտահայտել է հակասական դիրքորոշում՝ մի դեպքում միանշանակ նշելով, որ կալանավորման վերաքննիչ միջնորդությունը ենթակա էր քննարկման անհապաղ, մյուս դեպքում, ըստ էության, արձանագրելով, որ միջնորդության քննարկումը կարող էր տեղի ունենալ 2019 թվականի հունվարի 21-ին, երբ մեղադրյալն ու պաշտպանը ներկայացել են դատական նիստին: Նման պայմաններում, եթե Վերաքննիչ դատարանն այնուամենայնիվ հնարավոր է համարում

⁶⁷³ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 31-40:

միջնորդության քննարկումն այն ներկայացնելուց օրեր անց, ապա հարց է առաջանում, թե ինչու այն չէր կարող տեղի ունենալ 2019 թվականի հունվարի 29-ին:

11. Ըստ բողոքաբերի՝ մեղադրյալ Ա.Հարությունյանին մեղազգրվում է ծանր հանցագործություն, որի կատարման հանգամանքներով և կատարված հանցագործությանը մեկից ավելի անձանց ներգրավվածությամբ պայմանավորված, դեռևս անհրաժեշտ է տևական քննություն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար: Հետևաբար, առավել քան կարևոր է բացառել մյուս մեղադրյալների, ինչպես նաև դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ հնարավոր ազդեցությունը:

12. Բողոքաբերը նշել է նաև, որ քրեական գործով ձեռք բերված տվյալները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ Ա.Հարությունյանը նաև կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Քրեական վարույթն իրականացնող մարմինը և Առաջին ատյանի դատարանն այդ եզրահանգման են եկել հաշվի առնելով վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, այն է՝ Ա.Հարությունյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ, որի համար սահմանված է պատիժ միայն ազատազրկման ձևով՝ չորսից ութ տարի ժամկետով, նա դեպքի վայրից դիմել է փախուստի, իսկ ձերբակալման առավելագույն ժամկետը լրանալու կապակցությամբ ազատ արձակվելուց անմիջապես հետո թաքնվել է քննությունից: Հետևաբար, մեծ է վտանգը, որ ազատության մեջ մնալու դեպքում վերջինս կարող է կրկին թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

12.1. Բացի այդ, Առաջին ատյանի դատարանում քննիչը, իսկ Վերաքննիչ դատարանում դատախազը ներկայացրել են մեղադրյալի կողմից 2019 թվականի հունվարի 14-ից հետո ազատության մեջ գտնվելու ընթացքում քննությունից խուսափելու հանգամանքը: Մասնավորապես, վերջինս, հանդիսանալով ՀՀ ՊՆ 37082 զորամասի պայմանագրային զինծառայող, պարտավոր էր 2019 թվականի հունվարի 14-ին ժամը 20:20-ին ազատ արձակվելուց հետո, հաջորդ օրը՝ 2019 թվականի հունվարի 15-ին՝ առավոտյան ժամը 09:00-ին, ներկայանալ զորամաս և շարունակել իր ծառայությունը, սակայն Ա.Հարությունյանը ոչ միայն չի ներկայացել ծառայության վայր, այլ նրա գտնվելու վայրը անհայտ է եղել: Դա հիմնավորվել է նրանով, որ վերջինիս ծառայության չներկայանալու փաստի առթիվ Վանաձորի Ռազմական ոստիկանության բաժնի կողմից նյութեր են նախապատրաստվել և ռազմական ոստիկանության աշխատակիցները բազմիցս այցելություն են կատարել նրա բնակության վայր, սակայն նա տանը չի եղել, նրա գտնվելու վայրի մասին ոչինչ հայտնի չի եղել, իսկ նրա ծնողներն էլ հայտնել են, որ որևէ տեղեկություն չունեն վերջինիս գտնվելու վայրի մասին, այսինքն՝ Ա.Հարությունյանը խուսափել և թաքնվել է քննությունից: Ա.Հարությունյանը

ինքնակամ գորամաս է ներկայացել միայն 2019 թվականի հունվարի 17-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, քաջ գիտակցելով, որ երեք օրից ավելի ժամանակով ծառայությունից անհարգելի բացակայելու դեպքում կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածով: Ընդ որում՝ ծառայության վայր ներկայանալուց հետո իր կողմից տրված բացատրության մեջ նշել է, որ տնից բացակայել է, քանի որ ունեցել է անձնական խնդիրներ, որոնց մասին չի ցանկանում բարձրաձայնել: Ըստ բողոքաբերի այս ամենը վկայում է Ա.Հարությունյանի կողմից քննությունից թաքնվելու բարձր ռիսկայնության մասին:

13. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 27-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 29-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ քննության առնելն Առաջին աստիճանի դատարանի որոշումն անվերապահ բեկանելու հիմք է:

15. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):»

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:*

16. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(...)

զ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը իրավախախտում կարարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կարարումը կամ այն կարարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (...):

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է (...):»:

16.1. Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը ձերբակալված կամ կալանավորված անձանց համար երաշխավորում է կալանավորման որոշման օրինականության դատարանի կողմից «սեղմ ժամկետում» քննելու իրավունքը, իսկ կալանքի օրինական չլինելու դեպքում՝ ազատ արձակման որոշում ստանալու իրավունքը⁶⁷⁴:

16.2. Կալանավորման օրինականությունը վիճարկելու իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի շրջանակում իրականացվող վարույթում ոչ միշտ է անհրաժեշտ ապահովել նույն երաշխիքները, ինչ 6-րդ հոդվածի շրջանակում քրեական կամ քաղաքացիական դատավարությունում, այնուամենայնիվ այն պետք է ունենա դատական բնույթ և ապահովի պատշաճ երաշխիքներ ազատությունից զրկելու տվյալ տեսակի համար⁶⁷⁵: Եթե անձի կալանքը տեղավորվում է 5-րդ հոդվածի 1-ին մասի (զ) կետի շրջանակում, ապա պահանջվում է անցկացնել դատական քննություն⁶⁷⁶: Կալանավորված անձին

⁶⁷⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Inseher v. Germany [GC]* գործով 2018 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատներ թիվ 10211/12 և 27505/14, 251-րդ կետ, *Khlaifia and Others v. Italy [GC]* գործով 2016 դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 16483/12, 131-րդ կետ):

⁶⁷⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *A. and Others v. the United Kingdom [GC]* գործով 2009 թվականի փետրվարի 19-ի վճիռը, գանգատ թիվ 3455/05, 203-րդ կետ, *Idalov v. Russia [GC]* գործով 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, 161-րդ կետ:

⁶⁷⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nikolova v. Bulgaria [GC]* գործով 1999

անձամբ կամ ներկայացուցչի միջոցով լաված լինելու հնարավորությունը ընձեռելը ազատությունից զրկելու հարցերով վարույթի կարևորագույն երաշխիքներից է⁶⁷⁷: Եվրոպական դատարանը նշել է, որ կալանավորման դեմ բողոքի քննությունն իրականացնող դատարանը պետք է ապահովի դատական վարույթի երաշխիքները: Վարույթը պետք է լինի մրցակցային և պետք է միշտ ապահովի կողմերի՝ դատախազի և կալանավորված անձի միջև զենքերի հավասարությունը⁶⁷⁸:

17. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկասի և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) արդարացի (...) դատաքննության իրավունք»:

17.1. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն⁶⁷⁹,

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա⁶⁸⁰,

- դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի⁶⁸¹:

թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 31195/96, 58-րդ կետ, *Asenov and Others v. Bulgaria* 1997 թվականի հուլիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, 162-րդ կետ:

⁶⁷⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kampanis v. Greece* գործով 1995 հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 17977/91, 47-րդ կետ:

⁶⁷⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sanchez-Reisse v. Switzerland* գործով 1986 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռ, գանգատ թիվ 9862/82, 51-րդ կետ, *Toth v. Austria* գործով 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռ, գանգատ թիվ 11894/95, 84-րդ կետ, *Kampanis v. Greece* գործով վերը հիշատակված վճիռը:

⁶⁷⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khalifaoui v. France* գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ:

⁶⁸⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁶⁸¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Efstathiou and others v. Greece* գործով

17.2. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել այն մասին, որ այդ իրավունքն ունի բացառիկ նշանակություն՝ անձի իրավունքների պաշտպանության իրավական համակարգում, այն ենթադրաբար խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման հիմնական նախապայմանն է, որի միջոցով է կենսագործվում դատարան դիմելու (*locus standi*) և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անձի իրավունքը:

Ելնելով վերոնշյալ առանձնահատկությունից՝ դատական պաշտպանության իրավունքի իրացմանը ներկայացվող ձևական բնույթի կարգավորումները չպետք է այն աստիճան չափազանցվեն (*excessive formalism*), որ դատական պաշտպանության իրավունքից օգտվելու չափանիշների և պահանջների չպահպանման արդյունքում վրա հասնող իրավական հետևանքն անհամաչափորեն սահմանափակի անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը: Այսինքն՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է հանգեցնեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների էության խախտման⁶⁸²:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*Բննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին*» [միջնորդությունները դատավորի կողմից պետք է քննվեն անհապաղ, բայց ոչ ուշ, քան դրանք սրանալու հաջորդ օրը (...)]»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՕ-280-Ն օրենքը գործող խմբագրությամբ) համաձայն՝ «*Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյալ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գրավող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը: Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին (...)*»:

2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ:

⁶⁸² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Այվազյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴԶ/0007/15/12 որոշման 16-րդ կետը, Լևոն Հարությունյանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշման 13-րդ կետը, Նսիրի Գևորգյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ՍԴ/0088/01/12 որոշման 14-րդ կետը:

18.1. Սույն որոշման 15-17.2-րդ կետերում հիշատակված իրավական նորմերի և դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կալանավորման միջնորդությունը դատարանի կողմից «սեղմ ժամկետում» քննելու նպատակով վկայակոչված քրեադատավարական նորմերն իրավաչափորեն նախատեսում են այն անհապաղ, բայց ոչ ուշ, քան ստանալու հաջորդ օրը քննելու պահանջ: Մյուս կողմից՝ մեղադրյալի լավամ լինելու իրավունքը, կալանավորման հարցի քննարկման վերաբերյալ վարույթի մրցակցային բնույթը և կողմերի միջև «զենքերի հավասարությունը» ապահովելու համար՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածը պարտավորեցնում է դատարանին դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին: Ընդ որում, մեղադրյալի և (կամ) նրա պաշտպանի՝ դատական նիստին մասնակցությունն ապահովելու օրենսդրական պահանջը կոչված է երաշխավորելու նաև անձի՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացումը: Ուստի, միջնորդության՝ օրենքում նշված ժամկետում քննության պահանջը չպետք է գործնականում մեկնաբանվի և կիրառվի այնպես, որ հանգեցնի այլ դատավարական երաշխիքների, մասնավորապես՝ անձի կողմից իրեն ազատությունից զրկելու հարցի քննարկմանը մասնակցելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման և կողմերի հավասարության խախտման: Այլ կերպ՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը «սեղմ ժամկետում» քննելու օրենսդրական հրամայականից շեղումը որոշ դեպքերում կարող է դիտվել իրավաչափ, մասնավորապես՝ եթե պայմանավորված է միջնորդություն ներկայացրած անձի կամ մեղադրյալի՝ դատական նիստին մասնակցությունն ապահովելու համար պատշաճ ծանուցելու օբյեկտիվ անհրաժեշտությամբ:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմինը 2019 թվականի հունվարի 14-ին միջնորդություն է հարուցել Առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալ Ա.Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին⁶⁸³, և նույն օրը՝ 2019 թվականի հունվարի 14-ին, նշանակվել է դատական նիստ: Մեղադրյալ Ա.Հարությունյանի՝ դատական նիստին մասնակցությունն ապահովելու համար, դատական նիստի տեղի և ժամանակի վերաբերյալ վերջինս պատշաճ ծանուցելու նպատակով՝ դատական նիստերը երկու անգամ հետաձգվել են⁶⁸⁴:

- 2019 թվականի հունվարի 21-ին նշանակված նիստին ներկայացել են մեղադրյալ Ա.Հարությունյանը և պաշտպան Ա.Պապիկյանը, սակայն այն հետաձգվել է, քանի որ չի ներկայացել քննիչը: Վերջինս Առաջին ատյանի

⁶⁸³ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

⁶⁸⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ և 6.1-րդ կետերը:

դատարանին տեղեկացրել է, որ չի կարող ներկայանալ միջնորդության քննությանը, քանի որ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունից քրեական գործը ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե՝ քննչական ենթակայության հարցը լուծելու համար⁶⁸⁵:

- Առաջին ատյանի դատարանի՝ 2019 հունվարի 29-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով⁶⁸⁶:

- Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 29-ի որոշումը բեկանվել է, նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է, և մեղադրյալ Ա.Հարությունյանն անհապաղ ազատ է արձակվել կալանքից: Վերաքննիչ դատարանը փաստել է, որ քննիչի միջնորդությունն Առաջին ատյանի դատարանը քննել և բավարարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ: Անդրադառնալով այն հանգամանքին, որ Առաջին ատյանի դատարանը փորձել է ապահովել մեղադրյալի մասնակցությունը դատական նիստին, ինչպես պահանջում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածը, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ այն հիմք չէ օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ համապատասխան միջնորդությունը քննելու և որոշում կայացնելու համար: Վերաքննիչ դատարանը փաստել է, որ եթե առաջին երկու դատական նիստերին չի ներկայացել մեղադրյալը, իսկ Առաջին ատյանի դատարանը, հետաձգելով միջնորդության քննությունը, փորձել է ապահովել օրենքի պահանջի կատարումն ազատության մեջ գտնվող մեղադրյալին պատշաճ ծանուցելու առումով, քանի որ նա պատշաճ ծանուցված չի եղել դատական նիստերի տեղի և ժամանակի մասին, ապա երրորդ նիստին չի ներկայացել քննիչը, իսկ մեղադրյալը և պաշտպանը ներկայացել են, հետևաբար դատական նիստը հետաձգելն արդարացված չի եղել՝ անկախ նրանից, թե ինչ պատճառաբանություններ են ներկայացվել քննիչի չներկայանալու համար⁶⁸⁷:

20. Նախորդ կետում վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 18.1-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանը նախաքննության մարմնի միջնորդության քննարկումը հետաձգել է՝ մեղադրյալի և վարույթն իրականացնող մարմնի՝ քննիչի՝ միջնորդության քննարկմանը մասնակցության օրենսդրական պահանջն ապահովելու համար քայլեր ձեռնարկելու օրյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով:

⁶⁸⁵ Տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը:

⁶⁸⁶ Տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը:

⁶⁸⁷ Տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը:

20.1. Բացի այդ, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտում արտահայտել է հակասական դիրքորոշում՝ մի դեպքում միանշանակ նշելով, որ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը ենթակա էր քննարկման անհապաղ, մյուս դեպքում, ըստ էության, արձանագրելով, որ միջնորդության քննարկումը կարող էր տեղի ունենալ 2019 թվականի հունվարի 21-ին, երբ մեղադրյալն ու պաշտպանը ներկայացել էին դատական նիստին⁶⁸⁸:

21. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ քննության առնելն Առաջին ատյանի դատարանի որոշումն անվերապահ բեկանելու հիմք է, հիմնավոր չէ:

22. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ըստ էության, հանգել է ճիշտ հետևության՝ կալանավորման հիմքերի բացակայության առնչությամբ⁶⁸⁹:

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 11-12.1-րդ կետերում նշված փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գործի նյութերում առկա փաստական տվյալներով դրանք իրենց հաստատումը չեն գտնում:

23. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թեև թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի (մինչ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՕ-280-Ն օրենքը գործող խմբագրությամբ) պահանջների խախտումներ, սակայն կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

⁶⁸⁸ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁶⁸⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Արմեն Վարուժանի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 27-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *արորագրություն*

Դատավորներ՝ *արորագրություններ*

44.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/1026/06/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորները</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հոկտեմբերի 4-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Աշոտ Հրանտի Մինասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2020 թվականի նոյեմբերի 13-ին հարուցվել և ընդունվել է վարույթ թիվ 58231820 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 35-300-րդ հոդվածի 1-ին մասի, 35-305-րդ հոդվածի և 235-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ Աշոտ Մինասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-300-րդ հոդվածի 1-ին մասով, 35-305-րդ հոդվածով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ի

որոշմամբ մեղադրյալ Ա.Մինասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

3. ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Ա.Մարգարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Աշոտ Մինասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 35-300-րդ հոդվածի 1-ին մասով, 35-305-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն արարքների համար, որ «(...) նա, այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ սպորինի կերպով ձեռք է բերել, փոխադրել և պահել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, պայթուցիկ սարքեր և շրջանառությունն արգելված այլ իրեր ու առարկաներ և նախնական համաձայնության գալով Արթուր Գագիկի Վանեցյանի, Աշոտ Արարարի Ավագյանի, Վահրամ Վաղինասկի Բաղդասարյանի և դեռևս ինքնությունները չպարզված այլ անձանց հետ, դիտավորությամբ արեղծելով այլ պայմաններ՝ նախապարտադրել է պետական գործչի սպանություն և իշխանության յուրացում, որպիսի գործողություններն ավարտին չեն հասցվել իրենց կամքից անկախ հանգամանքներով.

Այսպես.

Աշոտ Հրանրի Մինասյանը, դեռևս ինքնությունը չպարզված անձանց հետ նախնական համաձայնությամբ, սպորինի կերպով ձեռք է բերել, փոխադրել և նախկինում սեփականության իրավունքով իրեն պատկանած Մյունխի մարզի Միսիան քաղաքի Բարայելյան փողոց 1/1 հասցեում գրնվող «Վանթեր» ռեստորանային համալիրի տարածքում գրնվող շինություններից մեկում սպորինի պահել է հրազեն, ռազմամթերք, պայթուցիկ սարքեր և շրջանառությունը սահմանափակված այլ իրեր ու առարկաներ, այդ թվում՝ 3 հար 7,62 մմ տրամաչափի «ՊԿ» տեսակի (7,62X54) գնդացիներ, մեկ հար «ՊԿ-74» տեսակի 5,45 մմ տրամաչափի ձեռքի գնդացի, 2 հար օպտիկական սարքով հակադրանակային նոսակներ, 3 հար ինքնաձիգ, նշանակետի խոցման բարձր հավանականություն ունեցող 14 հար օպտիկական սարքով հրացան, 9 արկղ 5.45 մմ տրամաչափի փամփոշիներ՝ յուրաքանչյուրում 2160 հար, 5 արկղ 7.62

մեկ տրամաշախի փամփուշներ, 233 հասր 7.62 տրամաշախի փամփուշներ, մարտավարական և տեխնիկական հասրկանիշներով զգալի ավերածություններ առաջացնող, մարտավարական և տեխնիկական հասրկություններով խոցման բարձր հավանականություն ունեցող 11 հասր պայթուցիչ, 8 հասր էլեկտրական պայթուցիչ, 1 հասր նռնակի պայթուցիչ, 13 հասր մեխանիկական պայթուցիչ, 1 կծիկ վառողաթել, 2 հասր «ՌԳԴ» տեսակի նռնակ, 3 հասր ձեռքի նռնակի պայթուցիչ, 1 հասր «Ֆ-1» տեսակի նռնակ, 1 հասր հակատանկային նռնակի իրան, 1 հասր տրարիլային խորանարդիկ ինքնաշեն մեքուտական շրջանակով, 1 հասր էլեկտրական դեպոնացում իրականացնող սարք:

Բացի այդ, Աշոտ Մինասյանը, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված ռազմական գործողությունների ընթացքում և դրա ավարտից անմիջապես հետո ունենալով հակահիշխանական հայացքներ և համաձայն չլինելով Հայաստանի Հանրապետության կառավարության, վարչապետի կողմից վարած արտաքին և ներքին քաղաքականության հետ, Հայաստանի Հանրապետության վարչապետի գործունեությունը դադարեցնելու և այդպես պետական իշխանությունը յուրացնելու դիրավորությամբ, «Հայրենիք» կուսակցության նախագահ Արթուր Գագիկի Վանեցյանի, «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցության ղեկավար Վահրամ Վաղինակի Բաղդասարյանի, Աշոտ Արարատի Ավագյանի և քննությամբ դեռևս չսարգված այլ անձանց հետ, այլ պայմաններ սրբեծելով՝ ՀՀ վարչապետի անվրանգության սպառնվմանն ուղղված միջոցները, այդ թվում՝ կեցության և գրնվելու վայրերի անվրանգության ամրապնդմանն ուղղված միջոցները, անվրանգության աշխարակիցների կազմը ռառոմնասիրելով և այդ համարերստում ՀՀ վարչապետի սպանության և դրա կատարման տարերակները, այդ թվում՝ ՀՀ վարչապետի անվրանգությունն սպառնվող ծառայությունում, ՀՀ ազգային անվրանգության ծառայությունում իրենց վարահելի մարդկանց ներդնելու և այդպես հանցանքի կատարման խոչընդորդները վերացնելու և դրա կատարումը հեշտացնելու հարցերը քննարկելով ու համաձայնեցնելով, նախապարաստել են պետական գործի՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի սպանությունը և բռնություն գործադրելու միջոցով իշխանությունը զավթելը, ՀՀ կառավարության լիազորություններին տիրանալը, սակայն նրանց գործողություններն ավարտին չեն հասցվել նրանց կամքից անկախ հանգամանքներով, այն է՝ նախապարաստվող առանձնապես ծանր հանցագործությունները բացահայտվել և կանխվել են Հայաստանի Հանրապետության ազգային անվրանգության ծառայության աշխարակիցների կողմից»⁶⁹⁰:

6. Առաջին առյանի դատարանն արձանագրել է «(...) Աշոտ Մինասյանին վերագրվում են հանցավոր արարքներ, (...) որոնցից յուրաքանչյուրին Դատարանը ցանկանում է անդրադառնալ հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության հարցի քննարկման համարերստում: Ընդ որում, առաջադրված մեղադրանքից հարակ է (ըստ մեղադրանքի տեսանկյունի), որ պետական

⁶⁹⁰ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 86-88:

գործի սպանության և իշխանության յուրացման նախապարտապարտությունները նախարակին հասնելու առումով պայմանավորված են եղել մեկը մյուսով և միմյանցից անջատ չեն, քանի որ իշխանության յուրացումը սպանության փրամարանական շարունակությունն է, մասնավորապես՝ ենթադրյալ սպանության միջոցով պետք է իրականացվեր իշխանության յուրացում: Ուարի Դադարանը վերը նշված հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ հիմնավոր կասկածի հարցը պետք է քննարկի համադրության մեջ, այն է՝ ինչպես մեկը մյուսին հնարավոր հասարակելու, այնպես էլ միմյանց բացառելու սկզբունքով:

(...)

Տվյալ դեպքում Աշոր Մինասյանի կողմից որպես սպանության նախապարտապարտությանն ուղղված գործողություններ՝ վարույթն իրականացնող մարմինը, ըստ էության, դիտարկել է պետական գործիչ հանդիսացող վարչապետ Նիկոլ Փաշինյանի անվրանգության ապահովման համակարգի ուսումնասիրությունը, ինչպես նաև անհայտ անձանց կամ անձի պարկանող շինությունում հայրնաբերված մեծ քանակությամբ զենք-զինամթերքը:

Դադարանը հարկ է համարում անդրադառնալ 2020 թվականի նոյեմբերի 14-ի հեռախոսային խոսակցությունները զննելու մասին արձանագրությանը, քանի որ վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես Աշոր Մինասյանի՝ վարչապետին սպանելու մրտադրություն ունենալու հանգամանք է դիտարկել առաջին հերթին 2020 թվականի նոյեմբերի 9-ի ժամը 14:30-ի խոսակցությունը: Ներկայացված միջոտրության համաձայն՝ (հետո նաև հարակեցվեց դադարական նիստի ժամանակ) Աշոր Մինասյանի հետ խոսողն Աշոր Ավագյանն է:

Նախ՝ այդ խոսակցությունը հիմնականում սկսվում է Աշոր Մինասյանի հիվանդանոցում գրնվելու, արդի հետ կապված խնդիրների և հնարավոր միջամտության մասին: Իսկ այն մասը, որը կարող է ինչ-որ կերպ առնչություն ունենալ առաջադրված մեղադրանքի հետ, հետևյալն է.

Խոսակցիցներից ԱԱ-ն Աշոր Ավագյանն է, իսկ Ա-ն Աշոր Մինասյանը:

«ԱԱ: Նիկոլը ինչ ա սասե

Ա: Էս բ... փղան չի ուզում գնա, արդեն պլան ա մշակված ինչ կարգով են փալու, ինչ են փալու՝ Շուշին իրանց, Հադրոթն իրանց, Ղարաբաղին կարգավիճակ, որ պետք ա լինի ճանապարհ, որով կարանք մորենք Ղարաբաղ դուրս գանք

ԱԱ: Վայ, մերը ք..., լավ: Դե ես Վանեցյանին ասեցի վեկայեք խիեք

Ա: Դե, նոր էդ էինք խոսում՝ ես էի, ինքն էր, մեր Ղարաբաղի նախկին ԿԳԲ-ի միմիստրն էր նախկին

ԱԱ: Վեկայեք խիեք, դե հիմա ըրենցա-ըրենցա: Արա, ինչքան սուս եք մնում է դքան ըրենց ա, բնական ա էլի

(...):»

Դադարանը հարկ է համարում ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ խոսակցություններից ուղղակիորեն կամ հարակից հասկացվում՝ ում խիելու մասին է խոսքը, սակայն հաշվի առնելով խոսակցության ընդհանուր բովանդակությունը, Արցախի հողերը հանձնելու հանգամանքը և դադարական նիստի ժամանակ կողմերի դիրքորոշումները՝ Դադարանը համարում է, որ այդ դրվագում խոսք

կարող է գնալ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասին: Մակայն պետք է նկատել, որ խփելու մասին կարծիք կամ դիրքորոշում հայտնում է ոչ թե Աշոտ Մինասյանը, այլ Աշոտ Ավագյանը, իսկ այն, որ Աշոտ Մինասյանն ասում է, որ «նոր էդ էին խոսում (...)», չի կարող դիտվել որպես արտահայտված մերքերի իրականացմանն ուղղված գործողությունների նախապարասպություն, քանի որ այսպեղ խոսք է գնում ընդամենը մերքերի փոխանակման մասին: Եթե անգամ դիտարկենք, որ խոսքը հենց կոնկրետ անձին սպանելու մասին է, սպա նշված խոսակցությունը կարող է համարվել առավելագույնը դիտարկության բացահայտում և ոչ ավելին, ինչը որևէ դեպքում չի կարող քրեաիրավական գնահատականի արժանանալ:

Դատարանի վերոնշյալ դիրքորոշումը պայմանավորված է երկու անձանց միջև տեղի ունեցած խոսակցությունների ամբողջ բովանդակությունը գնահատելու արդյունքում, քանի որ նախ խոսակցությունը սկսվում է Աշոտ Մինասյանի հիվանդանոցում գրնվելու, արդի հետ կապված խնդիրների և հնարավոր միջամտության շուրջ, այնուհետև՝ խոսակցությունը վերաճում է ենթադրյալ հողերը հանձնելու թեմային, որից հետո խոսք է գնում արդեն Նիկոլ Փաշինյանի ենթադրյալ խփելու մասին: Դրանից հետո խոսակցության շարունակությունը կրկին վերաբերում է Աշոտ Մինասյանի արդի հետ կապված առողջական խնդրին, ինչպես նաև՝ վերջինը դժգոհությունն է արտահայտում, որ չի կարողանում կողմնորոշվել, թե ինչ անի, լուծի առողջական խնդիրները, գնա ՊԵ, թե քաղաքական հարցերի լուծմամբ զբաղվի: Ինչպես երևում է՝ ոչ մի խոսք չկա իշխանության յուրացման կամ քաղաքական գործչի պայանության մասին:

Այսինքն՝ վերը նշվածը վկայում է, որ տեղի է ունենում կենցաղային բնույթի խոսակցություն, միմյանց ստորյայի հետ կապված, ինչպես նաև երկրում սրեղծված խառնաշփոթի շուրջ, իսկ այդ հնարավոր խփելու հանգամանքը դա զուր պահի ազդեցության տակ տեսակետի արտահայտում էր, առավելագույնը՝ ցանկության բացահայտում: Ընդ որում, խոսակցության այն միտքը, որ «վեկայեք խփեք, դե հիմա ըրենցս-ըրենցս: Արա, ինչքան սոս էք մնում էդքան ըրենց ս, քնական ս էի» հենց խոսում է այն մասին, որ խփելու տեսակետն առաջանում է պահի ազդեցության տակ, որոշակի ձևով արտահայտում է անձի համբերությունը սպառված լինելու մասին, երբ վերջինը տեղեկանում է, որ տարածքները պետք է հանձնվեն: Հակառակ պարագայում, չկա փաստարկված որևէ տրամաբանություն, թե ինչու պետք է այդպիսի լուրջ, վրանգավոր ենթադրյալ նպատակների իրականացումը քննարկվել բաց հեռախոսակապի միջոցով, տարբեր կենցաղային հարցերի քննարկման միջնահարվածներում և ի վերջո կոնկրետ այդ ուղղությամբ որևէ քայլ չհարակեցվել (եթե ընդունում ենք, որ խոսակցության նպատակը սպանության կազմակերպումն էր):

Նույն գնություն արձանագրության մեջ ներկայացված է մեկ այլ խոսակցություն, որի վերաբերյալ նշված չէ, թե այն երբ է սկսվել, ինչ հեռախոսահամարներով է կատարվել և, վերջապես, ում միջև է տեղի ունեցել: Մակայն առաջադրված մեղադրանքի տեսանկյունից կարող է նշանակություն ունենալ հետևյալ հարվածը՝ «Ա-Գնալ, շրջափակել միանգամից, լրիվին լցնել մեջը, ասել անստակի լակուրներ, կամ ընտրում եք նոր վարչապետ՝ երկիրը փրկում եք, կամ հրաժարական եք տալիս

բողոք, ուստի եք քաշում ձեր տերերը, նոր իշխանություն ենք ձևավորում (...): Այսպես Ա-ն ենթադրվում է, որ Աշոտ Մինասյանն է, սակայն խոսակցության էությունը ոչ թե վարչապետին սպանելու, այլ միանգամայն այլ գործողությունների մասին է: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում իշխանության ձևավորման կարգը՝ ըստ էության, ասված միտքը կարող է վերաբերել Ազգային ժողովի պարզամտավորներին, քանի որ վարչապետին անվարահոություն հայտնելու կամ հրաժարական պահանջելու և նոր վարչապետ ընտրելու իրավասությունը նրանց է վերապահված: Հերևասպես, կարևորվում է այն փաստը, որ Աշոտ Մինասյանը խոսում է ոչ թե կյանքից զրկելու միջոցով վարչապետին իշխանությունից հեռացնելու, այլ հնարավոր սահմանված կարգով նշված նպատակին հասնելու մասին: Ավելին՝ եթե դիտարկենք մեղադրանքն իշխանությունը յուրացնելու մասի տեսանկյունից, ապա խոսքը վերաբերում է ոչ թե Կառավարությանը, այլ Ազգային ժողովին, որի նկատմամբ Աշոտ Մինասյանի կողմից ուրնագություն նստասպարուսարելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը չունի որևէ դիրքորոշում: Ընդ որում, ուշադրության է արժանի, որ հիշյալ խոսակցությունը տեղի է ունեցել Աշոտ Մինասյանի և «Էմ քայլը» խմբակցության պարզամտավոր անդամի միջև (այդ մասին նշեց պաշտպանական կողմը, ինչը չառարկվեց վարույթն իրականացնող մարմնի կողմից), որպիսի պայմաններում դժվար է պարկերացնել հարկապես այդ կուսակցության անդամի հետ սպանության հանգամանքներ քննարկելու հավանականությունը: Ավելին՝ նույն խոսակցության շարունակությունը միանգամայն այլ բովանդակություն ունի և ավարտվում է ծիծաղով:

2020 թվականի նոյեմբերի 12-ին՝ ժամը 21:58-ին, Աշոտ Մինասյանը խոսակցություն է ունենում Վահրամ Բաղդասարյանի հետ (ըստ վարույթն իրականացնող մարմնի՝ արձանագրության մեջ Աշոտ Մինասյանի խոսակցողը նշված է Տ փառով): Խոսակցությունը վերաբերում է հանրահավաքին և դրանից բխող քայլերին, մասնավորապես՝ «Ա- Հա, ինչ ենք որոշում, ինչ ենք անում, այ ձեր ցավը տանել:

Տ- Դե արդեն ժամը 2-ին կկոնկրետացնենք, 4-ին նորից միտինգ ենք անում՝ ինչքան հնարավոր և մեծ, դրսից ինչքան, դրսից ինչ կարանք՝ անենք, արդեն պիտի քայլեր անենք, էլի, մի քանի տարբերակ կա, հլը տեսնենք, վաղը 2-ին կքննարկենք:

Ա- Չեք գգում, որ քայլելով, միտինգ անելով քան դուրս չի գալիս:

Դե գիրենք, բայց պիտի կոնկրետ որոշում կայացնենք, թե որն և քայլը, էլի: Հենց էդ և, փաստորեն էս մարդուն էս դրսի ուժերը պահում են, մինչև ամսի 1-ը միանշանակ ուզում են պահեն:

Ա- Հա, իրանք ուզում են պահեն, որ էդ ամեն ինչն ավարտվի:

Տ- Դե էդ և, էլի, ինքն էլ ուսույիտ և արել սադ, շրջափակել և իրա մնալու տեղերը, քան: Կամ պիտի քախման գնա:

Ա- Մարդ չունեք, որ մտնի իրա նույն գործի մեջ, իրա ախտանայի, նույն Ազգային անվտանգության, սաի՞ սենց և վիճակը, այ լակտրներ, եկեք

Տ- /ընդհ./ աշխատում են, բայց ինքը լրիվ ուրիշ մարդկանցով և: (...):»

Վարդյթն իրականացնող մարմինը վարչապետի անվտանգության սպահովման համակարգի մեջ կողմնակի անձի ներգրավման վերաբերյալ խոսակցությունը դիտել է որպես մեղադրյալ Աշոտ Մինասյանի կողմից իշխանության յուրացման և քաղաքական գործչի սպանության կատարման համար այլ պայմաններ սրեղծել: Սակայն Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ որևէ անձի ներգրավելու ուղղությամբ եթե անգամ աշխատանքներ են տարվում, ապա դրանք կատարվում են ոչ թե Աշոտ Մինասյանի, այլ նրա խոսակցի՝ Վահրամ Բաղդասարյանի կողմից: Ավելին՝ Աշոտ Մինասյանն ընդամենն արտահայտում է դիրքորոշում՝ անան գործողություն կատարելու նպատակահարմարության վերաբերյալ, բայց միանշանակ չէ, թե ներգրավված մարդն ինչ պետք է աներ, քանի որ խոսակցությունից չի բխում անան հանգամանքը, այլ միայն լեզվում է, որ իրենց մարդը մյուսի «սխտանայի մեջ» և սաի «սենց ա վիճակը, այ լակոյրներ եկեք», իսկ անան կենցաղային բառապաշարով խոսակցությունից ամենևին չի բխում այդ եղանակով վարչապետի սպանությանը նախապարտավելը:

Ինչ վերաբերում է այն մտքին, որ «չեք զգում, որ քայլելով, միտքից անելով քան դուրս չի գալիս» և ի պատասխան հնչած՝ «դե գիտենք, բայց պիտի կոնկրետ որոշում կայացնենք, թե որն ա քայլը, էլի: Հենց էդ ա, փաստորեն էս մարդուն էս դրսի ուժերը պահում են, մինչև ամսի 1-ը միանշանակ ուզում են պահեն» նախադասությանը, ապա Դատարանը գրնում է, որ հանրահավաք անելուց հետո հաջորդ քայլի որոշումը կարող է ոչ միանշանակորեն շար տարբեր բնույթի դրսևորումներ ունենալ: Այլ կերպ ասած՝ Դատարանը չունի որևէ հիմք կարծելու, որ հաջորդ քայլը հավանաբար վարչապետի սպանությունը պետք է լիներ, առավել ևս այն դեպքում, երբ ողջ խոսակցությունների տարբեր հարվածներում կարծիք է ասվում հանրահավաքի, շար մարդ հավաքելու, մի քանի տարբերակներ մշակելու և այլ քայլերի մասին:

2020 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 19:30-ին, տեղի ունեցած խոսակցության ժամանակ Աշոտ Մինասյանն իր խոսակցի Վահրամ Բաղդասարյանի հետ քննարկում է հետևյալը.

«Ա: Բշխանը նոր հայտարարություն կատարեց,

Վ: Ինչ անենք

Ա: Մի թող Վահրամը հայտարարություն անի, Վահրամն եմ ասում, Բշխանը Ստդաթելյան, ասա չանի, բաց թողեցինք մենք ժողովրդին, մենք կորցնելու ենք ժողովրդին

Վ: Նոր տրսում էին, դրա համար Աշոտ ջան, հեսա մինչև 8:20 սպասենք, տեսնենք էլի

Ա: Հա, ընգեր, ես վստում եմ էլի, վստում եմ կորցնենք մեր ժողովրդին

Վ: Հասկանում եմ

/այլ թեմա/

Մեջբերված հարվածից ենթադրվում է, որ Աշոտ Մինասյանը հույս է կապում բազմամարդ հավաքների առկայության հետ և մտահոգվում հավաքի մասնակիցների շարքերի նուրսացումից, որպիսի հանգամանքը որևէ կերպ չի

խոսում հոգուր այն փաստի, որ երկրում արեղծված իրավիճակի լուծումը վերջինը արեանում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի սպանությամբ:

Հաջորդ խոսակցությունը, որին Դատարանը ցանկանում է անդրադարձ կատարել, տեղի է ունեցել սույն թվականի նոյեմբերի 2-ին՝ ժամը՝ 13:37-ին: Խոսակցիցներն են Աշոտ Մինասյանը և Նինելը (Դատարանին հայտնի չէ այդ անձի ինքնությունը): Այս խոսակցությունից հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ հարվածը.

«Ն: Երեխուն էլ արե չես արես չէ

Ա: Չէ, չէ, չէ, ոհակ չեմ անում

Ն: Տունը փամփուշտներ կար է Աշոտ, էն պիտապետի էր, ինչ էր:

Ա: Նինել, Նինել, իյա:

Ն: Հա ջան, կներես Աշ, ախր,

Ա: Բյա, Նինել»:

Դատարանի համար պարզ է, որ խոսակցությունը վերաբերում է ինչ-որ գեների և փամփուշտի, սակայն որևէ կերպ փրամաքանական չէ այդ խոսակցությունը վերագրել վարչապետին սպանելուն ուղղված գեներին կամ ընդհանրապես Աշոտ Մինասյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարմանը, քանի որ առաջին հերթին՝ այդ գեները չի հայտնաբերվել, երկրորդ՝ խոսք է գնում փանը պահվող գեների մասին, սակայն Դատարանին ներկայացված տեղեկությունների համաձայն՝ Աշոտ Մինասյանի փանը որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի իրականացվել:

Դատարանը, ընդհանրացնելով գնության արձանագրության վերաբերյալ իր դիրքորոշումը, նշում է, որ խոսակցություններն ունեն բազմաբովանդակ բնույթ, մասնավորապես՝ մերթեր են փոխանակվում կենցաղային հարցերի, Աշոտ Մինասյանի առողջական խնդիրների, երկրում տիրող իրավիճակի, հողերի հանձնման խնդրի, վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետագա քայլերի, Երևան քաղաքում տեղի ունեցող հանրահավաքների, Աշոտ Մինասյանի հետագա անելիքների մասին, որոնց համարված բովանդակության գնահատումը չի ենթադրում, որ տարբեր անձանց հետ ունեցած խոսակցություններով Աշոտ Մինասյանը քրեատիրական տեսանկյունից նախապարտավարական աշխատանքներ է տարել քաղաքական գործչի սպանության և իշխանության յուրացման ուղղությամբ: Ընդ որում, նման ծանրության սարիճակի և հանրային բարձր վրանգավորությամբ հանցագործություններն ու դրանց նախապարտավարական աշխատանքները ենթադրում են բավականին լուրջ գործընթացներ, զաղրնիության պահպանման ու սպառնալից միանգամայն այլ մակարդակ, այլ ոչ թե կենցաղային բնույթի խոսակցություններ կամ բաց կապուղով քննարկումներ:

Հերևաբար, Դատարանը նկատում է, որ խոսակցությունների ընթացքում «խախտելու» և դրան այլընտրանք չլինելու կամ վարչապետի անվրանգության սպառնալից համակարգի մասին մերթերը բավարար չեն Աշոտ Մինասյանի մոտ իշխանությունը յուրացնելու և քաղաքական գործչի սպանության մտադրության առկայությունը հավաստելու համար, քանի որ դրանք առավելապես

բարձրաձայնված մերքեր են, և ինչպես արդեն վերը նշված է, առավելագույնը կարող են հանդիսանալ դիրավորության բացահայտում: Ավելին՝ ընդունելի է պաշտպանական կողմի այն դատողությունը, որ երկրում տիրող իրավիճակը, մասնավորապես՝ պարերազմական գործողությունները, դրա ավարտը, Արցախի և Հայաստանի համար հնարավոր ծանր հետևանքների առաջացման պարկերացումները, կարող էին շար ու շար մարդկանց շրջանակներում առաջացնել նման տեսակի խոսակցություններ, տեղեկատվության փոխանակումներ, գայրոյթի, դժգոհության արտահայտումներ և ինչու ոչ՝ նույնիսկ ենթադրյալ վրանգավոր քայլերի դիմելու ցանկությունների բացահայտումներ:

Ինչ վերաբերում է միջնորդության մեջ նշված այն հանգամանքին, որ գաղտնիության սարիճան սպահովելու համար մեղադրյալ Աշոտ Մինասյանը խոսակցիցներին դիմում է անվան սկզբնաբառերով, ինչպես նաև նույն նպատակով բաց կապուղու փոխարեն օգտագործում է բջջային հավելվածներ, սպա նախ՝ սկզբնաբառերով խոսելու հանգամանքը չի կարող գնահատվել Դատարանի կողմից, քանի որ ներկայացված չէ խոսակցությունների լազերային սկավառակը և Դատարանը չի լսել այդ խոսակցությունները, երկրորդ՝ գնտության արձանագրության ուսումնասիրությունից չի երևում, որ բջջային հավելվածների միջոցով Աշոտ Մինասյանը ցանկացել է հարույս բնույթի ինչ-որ խոսակցություններ վարել, առավել ևս այն մարդկանց հետ, ում նախաքննական մարմինը քննարկվող հանցագործություններում կարևորել է, այլ ընդամենը ոմն Գագոյի հետ խոսելուց հարցում է «Միգնալ» ոմնես, իսկ ինչ-որ «Ժ»-ին (արձանագրությունից չի երևում ով լինելը, համարը, ժամանակահատվածը) ասում է «Վարսասի» հավելվածին կողարկի իր նոր մեքենայի լուսանկարները:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից նախապարասարություն է դիրվել Աշոտ Մինասյանի կողմից սպորինի գենքի ձեռք բերումը և պահումը, ինչպես նաև վարչապետի անվրանգության համակարգի ուսումնասիրությունն ու վարչապետի թիկնագործի մեջ իր գաղտնիարակից մեկին ներառելուն ուղղված գործողությունները:

Դատարանն այլևս չի անդրադառնում վարչապետի թիկնագործի ուսումնասիրությանը (արդեն իսկ քննարկված լինելու պարձառով), սակայն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հայրնաբերված մեծաբանասկ գենքին ու զինամթերքին, որն ըստ վարույթն իրականացնող մարմնի՝ ձեռք է բերվել և պահվել հենց նշված նպարակի իրականացման համար:

Տվյալ դրվագով Դատարանն իր անհամաձայնությունն է հայրնում, քանի որ չկա գեթ մեկ փաստական րվյալ, որը կվկայի այն մասին, թե հարկապես երբ է ձեռքբերվել նման ծավալի գենքն ու զինամթերքը, ինչ նպարակով, և որ ամենակարևորն է, ինչի վրա է հիմնված վարույթն իրականացնող մարմնի համոզվածությունը, որ ուղղակի կապ կա հայրնաբերված ոսգնամթերքի և վարչապետի սպանության նախապարասարության միջև:

Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը համոզիչ րվյալներ չներկայացրեց այն մասին, որ հայրնաբերված գենքը ձեռք է բերվել Աշոտ Մինասյանի կողմից, որպեսզի իրականացվի պետական գործչի սպանություն, քանի որ եթե նույնիսկ

ընդունելի համարվի, որ հայրնաբերված ռազմամթերքը պահվել է մեղադրյալի կողմից (այդ հանգամանքին անդրադարձ կկատարվի ստորև), սակայն գոնե մեկ փվյալով չի երևում, որ դա ձեռք է բերվել սպանության իրականացման նախապատրաստվելու համար: Այլ խոսքով, եթե այդ զենքը ձեռք է բերվել ավելի վաղ, քան ենթադրյալ սպանության դիմավորությունն է առաջացել, սակայն զենքի հայրնաբերումը որևէ կերպ չի կարող դիմավորվել որպես սպանության նախապատրաստություն, այլ այն պետք է որակվի որպես ինքնուրույն ավարտված հանցագործություն:

Այսպիսով վերը նշվածի հաշվառմամբ՝ Գատարանը գալիս է այն հետևության, որ ներկայացված նյութերով չի հաստատվում Աշոտ Մինասյանի առնչությունը սպանության նախապատրաստության համար առաջադրված մեղադրանքում: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 35-300-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանքին, սակայն այս հոդվածի հիմնավոր կասկածը նույնպես բացակայում է, քանի որ եթե Գատարանը հաստատված չի համարում քաղաքական գործչի սպանության նախապատրաստության վերաբերյալ հիմնավոր կասկածը, սակայն դա, առաջադրված մեղադրանքի փրամանքանությամբ, ինքնին բացառում է սպանության իրականացման միջոցով իշխանություն յուրացնելու հիմնավոր կասկածի առկայությունը:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի մասով առաջադրված մեղադրանքին՝ Գատարանը գրնում է, որ անհրաժեշտ է ներկայացնել նաև այս հանցակազմի սանիտի մեկնաբանությունը:

(...)

Գատարանն արձանագրում է, որ նշված շինության և հարկապես՝ առյուծի կենդանավանդակի, որտեղից հայրնաբերվել են զենքերն ու ռազմամթերքը և մեղադրյալ Աշոտ Մինասյանի միջև կապի առկայությունը որևէ կոնկրետ փվյալով, առավել ևս միջնորդության ներկայացման ժամանակ, չի հաստատվում:

Բանն այն է, որ վարույթն իրականացնող մարմինը, որպես նման կապը հիմնավորող փվյալներ, ներկայացրել է օպերատիվ զեկուցագիրը, իսկ դատական նիստում ներկայացրեց նոյեմբերի 16-ի դեպքի վայրի զննության արձանագրությունը, ՀՀ ԱԾ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պաշտոնական կայքից կատարված արտարտման պարզմանը, նոյեմբերի 16-ի վկա Սեյրան Հարությունյանի հարցաքննության արձանագրությունը, նոյեմբերի 17-ի վկա Համլետ Գևորգյանի հարցաքննության արձանագրությունը, նոյեմբերի 16-ի դեպքի վայրի զննության արձանագրությունը, ՀՀ ԱԱԾ Սահմանադրական կարգի պահպանության և ահաբեկչության դեմ պայքարի դեպարտամենտի պետի գրության պարզմանը և կից հեռախոսային խոսակցության վերաբերյալ փաստաթուղթը, որոնք նոյեմբերի 15-ի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն հարուցելու մասին որոշմանը կից դատարանին չեն ներկայացվել, (...):

(...)

Այսպես՝ պետական ռեգիստրի փաստաթղթով չի հաստատվում, որ ինչ-որ ժամանակահատվածում դրա նկատմամբ մեղադրյալ Աշոտ Մինասյանն ունեցել

է իրավունքներ: Դրա մեջ նշված է, որ ՄՊ ընկերության միակ մասնակիցը հանդիսանում է Մինասյան Հրանյրը, որը մեղադրյալ Աշոտ Մինասյանի հայրն է: Առաջին հայացքից թվում է, որ նման հանգամանքը բավարար է եզրակացնելու, որ Աշոտ Մինասյանը կապ ունի նշյալ համալիրի և հարակից փարածքի հետ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այժմ այն չի պարկանում անգամ Աշոտ Մինասյանի հորը, գրնվում է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության հաշվեկշռում (ըստ վարույթն իրականացնող մարմնի), որպիսի հանգամանքը ողջամրորեն հիմք է փայխա մրածելու, որ Աշոտ Մինասյանը միակը չէ, որը կարող է առնչություն ունենալ այդ փարածքի հետ: Այլ կերպ ասած՝ ինչու է վարույթն իրականացնող մարմինը բացառում, որ այդ համալիրի և կոնկրետ շինության հետ կարող են առնչություն ունեցած լինել Հրանյր Մինասյանը, Աշոտ Մինասյանի որդիները, «Միասկան» ջոկարի անդամները, և վերջապես բանկի աշխատակիցները, որոնց գործողությունները չեն համակարգվում ու վերահսկվում բացառապես մեղադրյալ Աշոտ Մինասյանի կողմից: Մանավանդ՝ վարույթն իրականացնող մարմինն հայրնի չէ շինության հետ առնչություն ունեցող բոլոր անձանց շրջանակը և չկա գեթ մեկ րվյալ, որը կվկայի այդ ուղղմանթերքի հավաքման կամ ձեռքբերման ժամանակահատվածը և կապը Աշոտ Մինասյանի հետ:

Ինչ վերաբերում է հյորանոցային համալիրի պահակի («Ամերիաբանկ» ՓԲ ընկերության աշխատակից) ցուցմունքին, ասյա վերջինը նշել է, որ շինության այդ հատվածի (որտեղից գենքը հայրնարտրվել է) պահպանություն ինքը չի իրականացնում, այդ հատվածն իրեն րեաննելի չէ և չի կարող ասել, թե ով ելումուր ունի այդ փարածք: Հայրնել է նաև, որ շինության քննարկվող մասը գրնվում է ճանասպարհին հարակից, ինչպես նաև դրա մյուս կողմը բաց փարածք է, հերևարար բացի ռեսորանային համալիրի փարածքից, այլ կերպ ևս հնարավոր է մուրք գործել այրտել:

Ավածը հիմք է փայխա ենթարտելու, որ քննությանը հերարքքրող փարածքը պահպանվող չէ և ունի գրեթե անսահմանափակ հասանելիություն, որպիսի պայմաններում դրա առնչությունը միայն մեղադրյալ Աշոտ Մինասյանի հետ կապելն առնվազն հիմնավոր չէ: Ավելին՝ դարական նիարում հենց քննիչը հայրնեց, որ բուն ուղղմանթերք պահվելու հատվածն սարիճանասվանդակով փակ է, սակայն չգիրի բանային ում մուր է լինում և շինության հետ առնչություն ունեցող անձանց շրջանակը հարակեցված չէ:

Համվեր Գևորգյանն իր ցուցմունքում նշել է, որ «Կանթեղ» ռեսորանային համալիրին կից Աշոտ Մինասյանն ունի 3 կոնրեյներներ, որտեղ պահում է հագուար, սպասք և օրինական գենքերը, որոնց բանայինները գրնվել են վերջինի մուր, սակայն 2020 թվականի սեպրեմբերի 28-ին հանձնվել է Համվեր Գևորգյանին: Նշել է նաև, որ սոյուծի վանդակի բանայինների գրնվելու վայրի մասին ջունի րտեղեկություններ, ինչպես նաև Աշոտ Մինասյանի հանձնարարությանը գնացել է «օրեկրի» մուր՝ րեանելու՝ մարդ կամ սվրումեքենաներ կան, թե ոչ: Վերջինը կարարել է հանձնարարությունը և հայրնել, որ «մի հար ԿԳԲ-ի սվրո կա, էս սոյուծի վանդակի մուր ել ման են կյամ»:

Դատարանի գնահատմամբ՝ նշված տեղեկությունները ևս չեն հանդիսանում հայրնաբերված զենքերի և մեղադրյալի միջև կապը հաստատող հանգամանքներ, քանի որ Աշոտ Մինասյանը «օբյեկտի» մուր ունեցել է 3 կոնսրեյներներ, ուստի կարող էր հեղափոխվել հյուրանոցային համալիրի շինության շրջակայքով: Եվ վերջապես, ողջամիտ է մեղադրյալի այն տեսակետը, որ արդեն երկրում իրարանցում էր սկսվել, ինքը վարչական ձերբակալման էր ենթարկվել և ուներ այն մտավախությունը, որ իրեն կարող են հերկել և նույնիսկ՝ բռնել: Ավելին՝ Աշոտ Մինասյանը Համլետ Գևորգյանին օբյեկտի շրջակայքում նայելու խնդրանքից հեղու, ասել է, որ ինքը ևս գալիս է: Իսկ երբ Համլետ Գևորգյանը պարասիսանել է, որ ԱՄԾ-ի մեքենա կա առյուծի վանդակի հարվածում, Աշոտ Մինասյանը որևէ արարողոց արձագանք կամ անհանգստություն չի հայտնել:

Միաժամանակ, Դատարանի համար ևս ընդունելի է, որ վերը նշված անձանց խոսակցությունը, հարկապես օբյեկտի մուր ավրումեքենա լինելու փաստի արուզման խնդրանքը (և առյուծի վանդակի մուր մեքենա լինելու պարասիսանք), որոշակի առումով րարօրինակ է և կարող է խոսել Աշոտ Մինասյանի մտավախությունների մասին: Սակայն այդ մտավախությունը կարող է ասհանասիակվել առավելագույնը նրանով կամ հաստատել միայն այն, որ մեղադրյալն իմացել է ուզմանթերք պահված լինելու մասին և ունեցել է մրահոգություն, ինչը որևէ կերպ չի կարող վկայել իր կողմից ձեռք բերելու, պահելու մասին, և հիմք հանդիսանա սզարությունից գրկելու համար: Այլ խոսքով՝ ներկայացված նյութերով չի բացատրում կամ ողջամրորեն հերքում, որ այդ վայրում չէր կարող զենք և զինանթերք պահվել նույն Աշոտ Մինասյանի հարազարների կողմից, օրինակ՝ որդիների, ուլքեր ևս ունեցել են մարտական ուղի և զենքերի հեր անմիջական առնչություն, իսկ Աշոտ Մինասյանը, այդ ամենն իմանալով, գիրակցելով, ցուցաբերած լինի մրահոգություն:

(...)

Այսպիսով՝ Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Աշոտ Մինասյանի առնչությունն առաջադրված երեք մեղադրանքներում չի հաստատվում: Ուստի Դատարանն այլևս առարկայագուրկ է համարում կալանավորման հիմքերին անդրադառնալը՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱԾԻ/0017/06/16 որոշմամբ արարահայրված այն դիրքորոշումը, որ երբ դատարանը հաստատված չի համարում անձի կողմից հանցագործություն կարարած լինելու հիմնավոր կասկածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումը ոչ միայն անհիմար է, այլև այն քննարկման առարկա դարձնելով՝ դատարանն առանձին դեպքերում իրեն կզրկի այդ հարցի կապակցությամբ հիմնավորված հերևության հանգելու հնարավորությունից, քանի որ հանցագործություն կարարած լինելու հիմնավոր կասկածի բացակայությունը փաստելն ինքնին բացառում է կալանավորման հիմքերի, մասնավորապես՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականության գնահատման կարևոր

տարրերից մեկը՝ արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը իրավական գնահատման ենթարկելու հնարավորությունը: (...)»⁶⁹¹:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) քննարկելով հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության հարցը՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քննիչի կողմից Առաջին արյանի դատարան ներկայացված նյութերը բավարար չեն հաստատված համարելու Աշոտ Մինասյանի առնչությունը նրան ՀՀ քրեական օրենսգրքի 35-300-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 35-305-րդ հոդվածով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով վերագրվող ենթադրյալ արարքներին:

Վերը նշվածի պայմաններում Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ քննիչի կողմից Առաջին արյանի դատարան ներկայացված նյութերն Աշոտ Մինասյանի կողմից կատարված որևէ կոնկրետ գործողության մասին վկայող տեղեկություն չեն պարունակում:

Ինչ վերաբերում է Աշոտ Մինասյանի հեռախոսագրույցների ժամանակ արած արտահայտություններին, ապա Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ դրանք ըստ էության, եղել են հուզական արձագանք Արցախի Հանրապետության որոշակի տարածքներ Ադրբեյջանի Հանրապետության վերահսկողության տակ անցնելու վերաբերյալ, քանի որ քննիչի կողմից ներկայացված նյութերում, այդ թվում՝ հեռախոսային մյուս խոսակցություններում առկա չեն տվյալներ այն մասին, որ Աշոտ Մինասյանը կատարել է որևէ կոնկրետ դիտարկողյալ գործողություն ուղղված ՀՀ վարչապետի պանտոֆանի և իշխանության յուրացման համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելուն կամ հարմարեցնելուն, կամ այդ ենթադրյալ հանցագործությունների համար որևէ այլ պայման սրելու:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Աշոտ Մինասյանի կողմից հանցագործությունները կատարած լինելու հիմնավոր կասկածի բացակայության պայմաններում ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է, և Աշոտ Մինասյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի կարող կիրառվել:

Անհուսիքով վերագրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատարանագի կողմից բերված վերաքննիչ բողոքը պետք է մերժել օրինական ուժի մեջ թողնելով Առաջին արյանի դատարանի որոշումը: (...)»⁶⁹²:

Վճռարենկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարենկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 358-րդ հոդվածների պահանջները,

⁶⁹¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 162-198:

⁶⁹² Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 50-83:

Վերաքննիչ դատարանի որոշմամբ արձանագրված հետևություններն անհիմն են և չեն բխում քննությանը ձեռք բերված փաստական տվյալներից:

9. Բողոքաբերն ընդգծել է, որ ստորադաս դատարանները ներկայացված փաստերի ոչ պատշաճ գնահատման արդյունքում հանգել են սխալ հետևության հիմնավոր կասկածի բացակայության մասին:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ դատարանները, չհետևելով հանցագործությունը մեղադրյալ Ա.Մինասյանի կողմից կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածի՝ որպես կալանավորման պայմանի, գնահատման չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին և սխալ գնահատելով դատարան ներկայացված՝ մեղսագրվող հանցագործությունները Ա.Մինասյանի կողմից կատարելու հիմնավոր կասկածը հաստատող տվյալները, կայացրել են անհիմն և անօրինական դատական ակտեր:

9.1. Ըստ բողոքաբերի՝ քրեական գործով ձեռք բերված և դատարան ներկայացված փաստական տվյալներն իրենց համակցության մեջ վկայում են, որ առկա է հիմնավոր կասկած, որ Ա.Մինասյանը կատարել է իրեն մեղսագրվող արարքները և դրանք համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 35-300-րդ հոդվածի 1-ին մասով և 35-305-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին:

9.2. Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ մեղսագրված արարքների համար սահմանված պատիժների խստությունը ծանրակշիռ գործոն է մեղադրյալի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու ռիսկը բարձր գնահատելու համար:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ դատարան ներկայացված միջնորդությանը կից նյութերից երևում է, որ Ա.Մինասյանն իր հանցավոր նպատակին հասնելու համար օգտագործել է իր կապերն ու ազդեցությունն ինչպես կուսակցական գործունեությամբ զբաղվող, այնպես էլ մարտական որոշակի պատրաստվածություն անցած, ռազմական գործողություններին մասնակցած, նախկինում պաշտոնի բերումով հանրային կառավարման տարբեր ոլորտներում կայուն կապեր ունեցող անձանց շրջանում և չունենալով նշված կառույցների կամ անձանց գործունեությանը որևէ կերպ միջամտելու լիազորություն՝ կարողացել է անօրինական ազդեցություն գործադրել, ավելին՝ նրանց ներգրավել ու նրանց մոտ վճռականություն է հարուցել պետական գործչի սպանությունը կազմակերպելու, իշխանությունը յուրացնելու գործընթացի նախապատրաստման փուլում ընդգրկվելու հարցում: Քրեական գործի նախաքննությամբ փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ իր հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով Ա.Մինասյանը և Վ.Բաղդասարյանը նույնիսկ քննարկումներ են ունեցել ՀՀ զինված ուժերում, ՀՀ վարչապետի անվտանգությունն ապահովող ծառայությունում, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում իրենց վստահելի մարդկանց ներդնելու և այդ կերպ իշխանության յուրացմանն ուղղված խոչընդոտները վերացնելու համար:

9.3. Բողոքաբերը փաստարկել է, որ մեծ է նաև հավանականությունը, որ Ա.Մինասյանը կարող է թաքցնել կամ ոչնչացնել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, իր դերակատարությամբ խոչընդոտել հանցագործության մյուս մասնակիցների բացահայտմանը՝ այդպիսով խոչընդոտելով գործի քննությանը:

Բողոքի հեղինակն ընդգծել է նաև, որ Ա.Մինասյանի կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հավանականության գնահատման համար նշանակություն ունեցող հանգամանքներ են՝ հանցագործության քննության բարդությունը, դրանում բազմաթիվ անձանց ներգրավվածությունը, քանի որ դրանով պայմանավորված տևական քննություն է անհրաժեշտ՝ հանցագործությանը ներգրավված բոլոր մասնակիցների ինքնությունը և մասնակցության աստիճանը պարզելու համար:

Բողոք բերած անձը նշել է, որ Ա.Մինասյանը կարողացել է հանգամանակից կերպով պլանավորել հանցագործության կատարումը, այն է՝ առանց խոչընդոտների ապօրինի ձեռք է բերել մեծաքանակ զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր և պայթուցիկ սարքեր, տեղափոխել և պահել է իրեն պատկանող շինությունում, որոնց միայն քանակն ինքնին վկայում է, որ այդ հարցում վերջինս գործել է այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, որոնց ինքնությունը քննության ներկա փուլում չի բացահայտվել, հետևաբար ակնհայտ է, որ ազատության մեջ մնալով՝ Ա.Մինասյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ անօրինական ներգործություն ունենալու կամ հանցակիցների վարքագիծն ուղղորդելու ճանապարհով:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել, կայացնել նոր դատական ակտ՝ բավարարելով մեղադրյալ Ա.Մինասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց երկու ամիս ժամկետով կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ներկայացված նյութերը բավարար չեն Աշոտ Մինասյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 35-300-րդ հոդվածի 1-ին մասով, 35-305-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններ կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար:

12. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող*

անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...) 4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...) գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (...):»:

13. Վերահաստատելով և զարգացնելով կալանավորման պայմաններից «հիմնավոր կասկածի» գնահատման սահմանների վերաբերյալ Վահրամ Գևորգյանի⁶⁹³, Հարություն Խաչատրյանի⁶⁹⁴ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն *Էդգար Եղիազարյանի* գործով ընդգծել է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառարանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ⁶⁹⁵:

Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, ընդգծել է հետևյալ հանգամանքները՝

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումն այն հանցանքին, որի առերևույթ

⁶⁹³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վահրամ Գևորգյանի* գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշումը, կետեր 20-23:

⁶⁹⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հարություն Խաչատրյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԴՁ/0009/06/11 որոշումը, կետեր 13 և 15:

⁶⁹⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱԼԴ/0017/06/16 որոշումը, կետ 14:

կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից⁶⁹⁶, ուստի հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ, դատարանը, վերագրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին՝ այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել⁶⁹⁷, կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն)⁶⁹⁸:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմինը Ա.Մինասյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 35-300-րդ հոդվածի 1-ին մասով, 35-305-րդ հոդվածով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով⁶⁹⁹,

- Նախաքննության մարմինը մեղադրյալ Ա.Մինասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն է ներկայացրել, որն Առաջին ատյանի դատարանի որոշմամբ մերժվել է: Առաջին

⁶⁹⁶ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ներսես Միսակյանի* գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08 որոշումը:

⁶⁹⁷ Այդ առումով մանրամասն տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06:

⁶⁹⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱԿԴ-0017/06/16 որոշումը, կետ 15:

⁶⁹⁹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

ատյանի դատարանը գտել է, որ խոսակցությունների ընթացքում «խփելու» և դրան այլընտրանք չլինելու կամ վարչապետի անվտանգության ապահովման համակարգի մասին մտքերը բավարար չեն Ա.Մինասյանի մոտ իշխանությունը յուրացնելու և քաղաքական գործչի սպանության մտադրության առկայությունը հավաստելու համար, քանի որ **դրանք առավելապես բարձրաձայնված մտքեր են, և առավելագույնը կարող են հանդիսանալ դիտավորության բացահայտում:** Առաջին ատյանի դատարանը նշել է, որ «խփելու» մասին կարծիք կամ դիրքորոշում հայտնել է ոչ թե Ա.Մինասյանը, այլ Ա.Ավագյանը, իսկ այն, որ Ա.Մինասյանն ասել է, որ «նոր էդ էին խոսում (...)», չի կարող դիտվել որպես արտահայտված մտքերի իրականացմանն ուղղված գործողությունների նախապատրաստություն, քանի որ **այստեղ խոսք է գնում ընդամենը մտքերի փոխանակման մասին: Եթե անգամ դիտարկենք, որ խոսքը հենց կոնկրետ անձին սպանելու մասին է, ապա նշված խոսակցությունը կարող է համարվել առավելագույնը դիտավորության բացահայտում և ոչ ավելին, ինչը որևէ դեպքում չի կարող քրեաիրավական գնահատականի արժանանալ:** Առաջին ատյանի դատարանը նշել է, որ վարույթն իրականացնող մարմինը համոզիչ տվյալներ չներկայացրեց այն մասին, որ հայտնաբերված զենքը ձեռք է բերվել Ա.Մինասյանի կողմից, որպեսզի իրականացվի պետական գործչի սպանություն, քանի որ եթե նույնիսկ ընդունելի համարվի, որ հայտնաբերված ռազմամթերքը պահվել է մեղադրյալի կողմից, ապա գոնե մեկ տվյալով չի երևում, որ դա ձեռք է բերվել սպանության իրականացմանը նախապատրաստվելու համար: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 35-300-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքին, ապա, ըստ Առաջին ատյանի դատարանի, այս հոդվածով հիմնավոր կասկածը նույնպես բացակայում է, քանի որ եթե դատարանը հաստատված չի համարում քաղաքական գործչի սպանության նախապատրաստության վերաբերյալ հիմնավոր կասկածը, ապա դա, առաջադրված մեղադրանքի տրամաբանությամբ, ինքնին բացառում է սպանության իրականացման միջոցով իշխանություն յուրացնելու հիմնավոր կասկածի առկայությունը:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքին՝ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ նշված շինության և հատկապես՝ առյուծի կենդանավանդակի, որտեղից հայտնաբերվել են զենքերն ու ռազմամթերքը, և մեղադրյալ Ա.Մինասյանի միջև կապի առկայությունը որևէ կոնկրետ տվյալով, առավել ևս միջնորդության ներկայացման ժամանակ, չի հաստատվում: Առաջին ատյանի դատարանը նշել է, որ պետական ռեզիստի փաստաթղթով չի հաստատվում, որ ինչ-որ ժամանակահատվածում դրա նկատմամբ մեղադրյալ Ա.Մինասյանն ունեցել է իրավունքներ: Դրա մեջ նշված է, որ ՍՊ ընկերության միակ մասնակիցը հանդիսանում է Հ.Մինասյանը, որը մեղադրյալ Ա.Մինասյանի հայրն է: Առաջին հայացքից թվում է, որ նման հանգամանքը բավարար է եզրակացնելու, որ Ա.Մինասյանը կապ ունի նշյալ համալիրի և հարակից տարածքի հետ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այժմ այն չի

պատկանում անգամ Ա.Մինասյանի հորը, գտնվում է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության հաշվեկշռում, որպիսի հանգամանքը ողջամտորեն հիմք է տալիս մտածելու, որ Ա.Մինասյանը միակը չէ, որը կարող է առնչություն ունենալ այդ տարածքի հետ: Առաջին ատյանի դատարանը նշել է, որ ասվածը հիմք է տալիս ենթադրելու, որ քննությանը հետաքրքրող տարածքը պահպանվող չէ և ունի գրեթե անսահմանափակ հասանելիություն, որպիսի պայմաններում դրա առնչությունը միայն մեղադրյալ Ա.Մինասյանի հետ կապելն առնվազն հիմնավոր չէ: Առաջին ատյանի դատարանը ողջամիտ է համարել մեղադրյալի այն տեսակետը, որ արդեն երկրում իրարանցում էր սկսվել, ինքը վարչական ձերբակալման էր ենթարկվել և ուներ այն մտավախությունը, որ իրեն կարող են հետևել և նույնիսկ՝ բռնել: Առաջին ատյանի դատարանը նշել է, որ իր համար ևս ընդունելի է, որ անձանց խոսակցությունը, հատկապես օբյեկտի մոտ ավտոմեքենա լինելու փաստի ստուգման խնդրանքը (և այդուհի վանդակի մոտ մեքենա լինելու պատասխանը), որոշակի առումով տարօրինակ է և կարող է խոսել Ա.Մինասյանի մտավախությունների մասին: Սակայն, ըստ Առաջին ատյանի դատարանի, այդ մտավախությունը կարող է սահմանափակվել առավելագույնը նրանով կամ հաստատել միայն այն, որ մեղադրյալն իմացել է ռազմամթերք պահված լինելու մասին և ունեցել է մտահոգություն, ինչը որևէ կերպ չի կարող վկայել իր կողմից ձեռք բերելու, պահելու մասին, և հիմք հանդիսանալ ազատությունից զրկելու համար: Ըստ Առաջին ատյանի դատարանի՝ ներկայացված նյութերով չի բացատրվում կամ ողջամտորեն հերքվում, որ այդ վայրում չէր կարող զենք և զինամթերք պահվել նույն Ա.Մինասյանի հարազատների կողմից, օրինակ՝ որդիների, իսկ Ա.Մինասյանը, այդ ամենն իմանալով՝ ցուցաբերած լինի մտահոգություն: Առաջին ատյանի դատարանն այնուհետև նշել է, որ այն եզրահանգման է գալիս, որ Ա.Մինասյանի առնչությունն առաջադրված երեք մեղադրանքներում չի հաստատվում, ուստի այլևս առարկայագուրկ է համարում կալանավորման հիմքերին անդրադառնալը⁷⁰⁰,

- Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ քննիչի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը բավարար չեն հաստատված համարելու Ա.Մինասյանի առնչությունը՝ նրան ՀՀ քրեական օրենսգրքի 35-300-րդ հոդվածի 1-ին մասով, 35-305-րդ հոդվածով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով վերագրվող ենթադրյալ արարքներին: Վերաքննիչ դատարանը նշել է, որ քննիչի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերն Ա.Մինասյանի կողմից կատարված որևէ կոնկրետ գործողության մասին վկայող տեղեկություն չեն պարունակում: Վերաքննիչ դատարանը գտել է, որ մեղադրյալ Ա.Մինասյանի կողմից հանցագործությունները կատարած լինելու հիմնավոր կասկածի բացակայության պայմաններում կալանավորման

⁷⁰⁰ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է, և Ա.Մինասյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի կարող կիրառվել⁷⁰¹:

15. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը՝ Ա.Մինասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը քննության առնելիս, այնպես էլ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս, պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել մի շարք առանցքային հանգամանքներ:

Նախևառաջ, հարկ է նկատել, որ թե՛ Առաջին ատյանի դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Ա.Մինասյանի առնչությունը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նրան առաջադրված մեղադրանքին չի հաստատվում, պատշաճ ուշադրություն չեն արժանացրել այն հանգամանքին, որ ռեստորանային համալիրը պատկանել է Ա.Մինասյանի ընտանիքին՝ ձևակերպված է եղել վերջինիս հոր անվամբ: Նույն տարածքը հետագայում Ա.Մինասյանի կողմից տիրապետելու և օգտագործելու մասին բավարար փաստական տեղեկություններ են արձանագրված Հ.Գևորգյանի ցուցմունքում, որը նշել է, որ տարածքում տեղադրված կոնտեյներներն օգտագործվել են Ա.Մինասյանի կողմից: Միաժամանակ, Հ.Գևորգյանն իր ցուցմունքով չի հայտնել, որ այլ անձինք, թեկուզ և Ա.Մինասյանի հարազատները, որևէ կերպ օգտագործել են նշված տարածքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Գևորգյանի ցուցմունքը ստորադաս դատարանների կողմից պատշաճ գնահատականի չի արժանացել: Ավելին, հայտնաբերված ապօրինի գենքի հետ Ա.Մինասյանի առնչության մասին է վկայում նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան ներկայացված հեռախոսային խոսակցության բովանդակությունը, որի ժամանակ Ա.Մինասյանը, գանգահարելով Հ.Գևորգյանին, խնդրել է գնալ և ստուգել՝ օբյեկտի մոտ օտար ավտոմեքենաներ կան, թե ոչ: Հ.Գևորգյանն Ա.Մինասյանի խնդրանքը կատարելուց հետո նրան հայտնել է ռեստորանի, իսկ ավելի կոնկրետ՝ առյուծի վանդակի մոտ ՀՀ ազգային անվտանգության ծառայության ավտոմեքենայի առկայության մասին, որից հետո Ա.Մինասյանը, ըստ խոսակցության՝ այդ տարածք այլևս չի գնալու:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքարկերի այն փաստարկը, որ եթե Ա.Մինասյանը իրականում որևէ առնչություն չի ունեցել նշված համալիրի հետ, ապա անտեղի ու անհիմն կլինեին նրա մտավախությունները, որ իրեն հենց հիշյալ համալիրի մոտ պետք է փնտրեին: Մինչդեռ ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել նաև այս հանգամանքը:

⁷⁰¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի համաձայնությունն Առաջին ատյանի դատարանի՝ մասնավորապես այն դատողության հետ, որ, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով հիմնավոր կասկածը բացակայում է, անհիմն է և չի բխում վարույթն իրականացնող մարմնի միջնորդությանը կից ներկայացված տվյալներից: Ավելին, հարկ է ընդգծել, որ սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում ստորադաս դատարանների կողմից տրված մեկնաբանությունները հակասում են սույն որոշման 12-13-րդ կետերում մեջբերված՝ ենթադրյալ հանցանքի կատարման «հիմնավոր կասկածի» գնահատման չափանիշին: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ Առաջին ատյանի դատարանը նշելով, որ *ներկայացված նյութերով չի բացատվում կամ ողջամորթեն հերքվում, որ հայտնաբերված վայրում չէր կարող զենք և զինամթերք պահվեր նույն Ա.Մինասյանի հարազատների կողմից, օրինակ՝ որդիների, իսկ Ա.Մինասյանը, այդ ամենն իմանալով՝ ցուցաբերած լինի մերսհոգություն,* կիրառել է հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշը, ինչը բնորոշ է ոչ թե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով կալանավորման միջնորդության, այլ քրեական գործի ըստ էության քննությանը: Արդյունքում, ըստ էության խախտվել է քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառնությունների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը պարունակել է քրեական գործի ըստ էության քննությանը բնորոշ՝ արդարադատության իրականացման գործընթացի տարրեր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննիչի կողմից միջնորդությանը կից ներկայացված տվյալների համակցությունը դատավարության տվյալ փուլում ողջամորթեն բավարար է գալու այն եզրահանգման, որ մեղադրյալ Ա.Մինասյանն առնչություն ունի իրեն մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի կատարմանը: Այլ կերպ՝ պետք է փաստել, որ առկա է մեղադրյալ Ա.Մինասյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի կատարման հիմնավոր կասկածը:

16. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ներկայացված նյութերը բավարար չեն Ա.Մինասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար, հիմնավոր չեն:

17. Ինչ վերաբերում է Ա.Մինասյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 35-300-րդ հոդվածի 1-ին մասով և 35-305-րդ հոդվածով նախատեսված արարքներ կատարելու հիմնավոր կասկածի բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններին, ապա Վճռաբեկ դատարանն այդ առումով հայտնում է իր համաձայնությունը: Մասնավորապես,

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված նյութերը, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների գննության արձանագրության տվյալներն իրենց համակցության մեջ բավարար չեն հիմնավոր կասկածի շեմին համապատասխան հավաստելու, որ Ա.Մինասյանը կատարել է որևէ կոնկրետ դիտավորյալ գործողություն՝ ուղղված պետական գործչի սպանության և իշխանության յուրացման համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելուն կամ հարմարեցնելուն, կամ այդ ենթադրյալ հանցագործությունների համար որևէ այլ պայման ստեղծելուն:

18. Այսպիսով, ամփոփելով սույն որոշման 15-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ և 135-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանը, մի կողմից՝ սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով, մյուս կողմից՝ ապահովելով անձի դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները, դատական վերանայման սահմանների վերընթաց նվազման սկզբունքի հաշվառմամբ գտնում է, որ գործը պետք է ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ կալանավորման հիմքերի մատով նոր քննության⁷⁰²:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Աշոտ Հրանտի Մինասյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ

⁷⁰² Տե՛ս Հրայր Հովսեփյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը, կետ 29:

վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ կալանավորման հիմքերի մասով նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

45.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0732/11/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հոկտեմբերի 15-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակա երգով քննության առնելով դիմող Վանիկ Խաչիկի Ասատրյանի ներկայացուցիչ Է.Բեգլարյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 11-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2020 թվականի հունիսի 10-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58212020 քրեական գործը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի հունիսի 23-ի որոշման հիման վրա քննչական խմբում ընդգրկված, ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ (այսուհետ՝ նաև քննիչ) Ա.Տոնոյանի կողմից 2020 թվականի հունիսի 26-ին կատարվել է խուզարկություն:

Քննիչ Ա.Տոնոյանի գործողությունների դեմ մեղադրյալ Վ.Ասատրյանի պաշտպան Է.Բեգլարյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ ազգային

անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ (այսուհետ՝ նաև Դատախազ) Դ.Աղաջանյանի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ մերժվել է:

2. Դիմող Վ.Ասատրյանի ներկայացուցիչ Է.Բեգլարյանի բողոքը՝ վարույթն իրականացնող մարմնին Վ.Ասատրյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2020 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ մերժվել է՝ բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

3. Ներկայացուցիչ Է.Բեգլարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2020 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը բեկանել է և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 29-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Առաջին ատյանի դատարանը, մերժելով ներկայացուցիչ Է.Բեգլարյանի բողոքը, արձանագրել է. «(...) *[Բողոքի շրջանակներում դիմողի ներկայացուցիչը վիճարկում է քննիչ Ա.Տոնոյանի կողմից կատարված գործողությունները՝ կապված Վանիկ Ասատրյանի քննության փայրում կատարված խուզարկության և դրա արդյունքում ձեռք բերված նյութերի որպես ապացույց օգտագործելը անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև դրա բողոքարկման արդյունքում դատախազ Դ.Աղաջանյանի կողմից կայացված «Բողոքը մերժելու մասին» որոշումը, որը կայացվել է պաշտպան Է.Բեգլարյանի կողմից ներկայացված բողոքի քննարկման արդյունքում:*

(...) [Դատարանն արձանագրում է, որ բողոքը՝ քննիչ Ա.Տոնոյանի գործողությունների դեմ, չի մերժում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության աուրկայի մեջ, այն ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված այն որոշումների թվում, որոնց համար օրենսդիրը նախատեսել է դատական բողոքարկման հնարավորություն: Բացի այդ, բողոքում նշված հանգամանքների պարզումը դատավարության ավելի ուշ փուլերում, այդ թվում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, հնարավոր է, և այն չի հանգեցնի անձի իրավունքների

և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման: Ավելին, Գատարանը գրնում է, որ նախաքննության մարմնի կողմից իրականացվող գործունեությանը դատարանի միջամտությունը ոչ միայն չի բխում մինչդատարանական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության խնդիրներից, այլև նման միջամտության անթույլատրելիությունն անհրաժեշտ նախապայման է դատարանի անկողմնակալության և անմեղության կանխավարկածի սկզբունքների պահպանության համար, հետևաբար, այն չի կարող հանդիսանալ մինչդատարանական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա և մինչդատարանական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն չի կարող իրականացվել այն դեպքում, երբ քրեական հետապնդման մարմնի կայացրած որոշումները կամ իրականացրած գործողությունը չի հանդիսանում մինչդատարանական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, նույն կերպ վերահսկողության առարկա չի կարող հանդիսանալ նաև վիճարկվող որոշման կամ գործողության արդյունքում կայացված որոշումը:

(...) Գատարանը (...) արձանագրում է, որ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացված հիմքերի և հիմնավորումների սահմաններում բողոքը չի կարող ըստ էության քննության առնվել մինչդատարանական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող Գատարանի կողմից, քանի որ այն չի մերժում մինչդատարանական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկայի մեջ և չի կարող դառնալ մինչդատարանական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության օբյեկտ (...)⁷⁰³:

6. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը, արձանագրել է, «(...) [Բ]իմողի ներկայացուցչի կողմից վիճարկվում է ոչ թե խուզարկություն կատարելու թույլտվություն արանալու միջնորդությունը քննության առնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը, այլ այդ որոշման հիման վրա խուզարկություն կատարելու ընթացքում քննիչի գործողությունների իրավաչափությունը, ինչը հանդիսանում է մինչդատարանական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա և ընդգրկված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված բողոքարկման ենթակա որոշումների շարքում:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ բնակարանի խուզարկությամբ էականորեն սահմանափակվում է անձի և՛ սահմանադրորեն, և՛ միջազգային ակտերով երաշխավորված բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր ըստ էության քննության առնել բողոքը, պարզել քննիչի գործողությունների իրավաչափության և դրանց արդյունքում դիմողի իրավունքների և օրինական շահերի խախտման առկայության կամ բացակայության մասին, և ըստ այդմ հանգեք համապարասխան եզրակացության:

(...) Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված խախտման բնույթով պայմանավորված Վերաքննիչ դատարանը զրկված է դիմողի ներկայացուցչի

⁷⁰³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 52-56:

ներկայացրած մյուս փաստարկներին անդրադառնալու հնարավորությունից: Հետևաբար, դիմող Վ.Ասատրյանի ներկայացուցիչ Է.Բեգլարյանի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել մասնակի, Առաջին աստիճանի դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 05-ի թիվ ԵԴ/0732/11/20 որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Նոր քննության ընթացքում Առաջին աստիճանի դատարանը պետք է պատշաճ քննության ենթարկի դիմող Վ.Ասատրյանի ներկայացուցիչ Է.Բեգլարյանի բողոքի հիմքերը և օրենքով սահմանված կարգով հանգի համապատասխան հետևության (...))»⁷⁰⁴:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը՝ մասնավորապես, սխալ են կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ, 395-րդ և 398-րդ հոդվածների պահանջները: Բացի այդ, առկա է էական հակասություն Վերաքննիչ դատարանի որոշմամբ և Վճռաբեկ դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների միջև:

Բողոք բերած անձը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, չհետևելով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով թույլատրված խուզարկության ընթացքում քննիչի գործողությունները համարել է մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առարկա:

Ըստ բողոքաբերի՝ քննչական գործողությունների կատարման կարգի պահպանումը, անկախ դատավարության մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը շոշափելու աստիճանից, այնքանով, որքանով դրանց արդյունքում ձեռք են բերվում հետագայում մեղադրանքի հիմքը կազմող ապացույցներ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չեն կարող հանդիսանալ: Քննչական գործողությունների կատարման և դրա արդյունքում ապացույցների ձեռքբերման օրինականության ստուգումը ենթադրում է դրանց մանրակրկիտ, այդ թվում՝ քրեական գործում առկա այլ փաստական տվյալների հետ համադրությամբ վերլուծություն, որը գործի ըստ էության քննության դասական դրսևորում է:

Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ դատարանի որոշմամբ, որը բողոքարկվել է թողնվել է օրինական ուժի մեջ, կատարված խուզարկության ընթացակարգային առանձնահատկությունների և դրա արդյունքում ձեռք բերված ապացույցի թույլատրելիության գնահատումը վերապահված է բացառապես քրեական

⁷⁰⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 95-103:

գործն ըստ էության քննող դատարանին և մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում քննարկվել չի կարող:

Ըստ բողոքաբերի՝ հսկող դատախազի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշումը նույնպես ենթակա չէ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական ստուգման, որպիսի հետևությունը պայմանավորված է *Հովհաննես Գինույանի* գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմամբ:

7.1. Վերոշարադրյալից բացի, բողոքաբերը վճռաբեկ բողոքում անդրադարձել է նաև խուզարկության կատարման փաստական հանգամանքներին:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 5-ի դատական ակտին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր ըստ էության քննության առնել դիմող Վանիկ Ասատրյանի ներկայացուցչի բողոքը:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, փոժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:*

2. *Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում (...):»*

10.1. Մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առարկայի շրջանակի հստակեցման նպատակով Վճռաբեկ դատարանը մշակել է հետևյալ սկզբունքը. **գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից զատ, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների այն բոլոր որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն**

ըստ էության քննելիս անհնար է, կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման⁷⁰⁵:

Ավելին, Վճռաբեկ դատարանն իր կողմից ձևավորած վերոգրյալ ընդհանուր կանոնի կենսագործման շրջանակներում արձանագրել է նաև, որ նախաքննության մարմնի կողմից իրականացվող ապացուցողական գործունեությունը (ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելը) դատարանի միջամտությունը ոչ միայն չի բխում մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության խնդիրներից, այլև նման միջամտության անթույլատրելիությունն անհրաժեշտ նախապայման է դատարանի անկողմնակալության և անմեղության կանխավարկածի սկզբունքների պահպանության համար⁷⁰⁶:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին աստիճանի դատարանի՝ 2020 թվականի հունիսի 23-ի որոշման հիման վրա քննիչ Ա.Տոնոյանի կողմից 2020 թվականի հունիսի 26-ին կատարվել է խուզարկություն⁷⁰⁷: քննիչ Ա.Տոնոյանի գործողությունների դեմ Վ.Ասատրյանի պաշտպան Է.Բեգլարյանի բողոքը Դատախազ Դ.Աղաջանյանի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ մերժվել է⁷⁰⁸,

- Առաջին աստիճանի դատարանն արձանագրել է, որ դիմողի ներկայացուցիչ Է.Բեգլարյանի բողոքը՝ քննիչ Ա.Տոնոյանի գործողությունների դեմ, չի մտնում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկայի մեջ, այն ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված այն որոշումների թվում, որոնց համար օրենսդիրը նախատեսել է դատական բողոքարկման հնարավորություն: Բացի այդ, բողոքում նշված հանգամանքների պարզումը դատավարության ավելի ուշ փուլերում, այդ թվում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, հնարավոր է, և այն չի հանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման: Նույն կերպ, վերահսկողության առարկա չի կարող հանդիսանալ նաև վիճարկվող գործողության բողոքարկման արդյունքում կայացված դատախազի որոշումը: Արդյունքում, Առաջին աստիճանի դատարանը դիմողի ներկայացուցչի բողոքը՝ վարույթն իրականացնող մարմնին Վ.Ասատրյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ, մերժել է⁷⁰⁹:

- Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին աստիճանի դատարանի որոշումը և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելով, արձանագրել է, որ դիմողի ներկայացուցչի կողմից վիճարկվում է ոչ թե խուզարկություն կատարելու

⁷⁰⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Մանուկյանի գործով 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0060/11/10 որոշման 16-րդ կետը:

⁷⁰⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հմայակ Արսենյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0125/11/12 որոշման 13-րդ կետը, «Էլիպոս Էսվե», «Էլիպո Էսվե» և «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ների գործով 2021 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ ԵԴ/0957/11/19 որոշման 11.1-րդ կետը:

⁷⁰⁷ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

⁷⁰⁸ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

⁷⁰⁹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

թույլտվություն ստանալու միջնորդությունը քննության առնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը, այլ այդ որոշման հիման վրա խուզարկություն կատարելու ընթացքում քննիչի գործողությունների իրավաչափությունը, ինչը հանդիսանում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա և ընդգրկված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված բողոքարկման ենթակա որոշումների շարքում: Վերաքննիչ դատարանը ընդգծել է, որ բնակարանի խուզարկությամբ էականորեն սահմանափակվում է անձի և՛ սահմանադրորեն, և՛ միջազգային ակտերով երաշխավորված բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, որպիսի պայմաններում Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր ըստ էության քննության առնել բողոքը⁷¹⁰:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-10.1-րդ կետերում վկայակոչված իրավակարգավորման և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր ըստ էության քննության առնել դիմողի ներկայացուցչի բողոքը, դուրս է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներից:

Նախ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ խուզարկություն կատարելու ընթացքում քննիչի գործողությունների իրավաչափության ստուգումն ընդգրկված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված բողոքարկման ենթակա որոշումների շարքում, չի բխում վերոնշյալ իրավանորմի բովանդակությունից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ բնակարանի խուզարկությամբ էականորեն սահմանափակվում է անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, որպիսի պայմաններում, ըստ Վերաքննիչ դատարանի, Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր ըստ էության քննության առնել բողոքը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի կողմից որպես ելակետ ընդունված՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի էականորեն սահմանափակված լինելու հանգամանքը, ի հակադրումն սույն որոշման 10.1-րդ կետում նշված սկզբունքի, չի կարող դիտարկվել որպես չափանիշ՝ խուզարկություն քննչական գործողության կատարման իրավաչափությունը և դրա արդյունքում ձեռք բերված նյութերի՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ստուգելու համար: Այս առումով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գործի նախնական քննության փուլում քննիչ Ա.Տոնոյանի վիճարկվող գործողությունների՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա հանդիսանալու հարցի լուծման տեսանկյունից որոշիչ նշանակություն պետք է տալ ոչ թե կատարվող

⁷¹⁰ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

գործողությամբ անձի իրավունքն էականորեն սահմանափակվելու հանգամանքին, այլ նրան, որ վիճարկվող գործողությունների՝ խուզարկության կատարման և դրա արդյունքում ձեռք բերված նյութերի՝ որպես թույլատրելի ապացույց օգտագործման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, հնարավոր է և չի հանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ տվյալ դեպքում հայցվող իրավական պաշտպանությունն անմիջապես կապված է նախաքննության փուլում գտնվող քրեական գործով ապացուցողական գործունեության իրավաչափության գնահատման հետ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ հարցը կարող է քննության առարկա դարձվել բացառապես քրեական գործի ըստ էության քննության շրջանակներում, հակառակ պարագայում կարող է խախտվել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և քրեական գործի դատական քննության գործառության ին տարանջատման սկզբունքը:

12.1. Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քննիչ Ա.Տոնոյանի վիճարկվող գործողությունները գործի նախնական քննության փուլում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում չեն կարող բողոքարկվել դատարան, քանի որ նախատեսված չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև դրանց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս հնարավոր է և չի հանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

12.2. Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ քննիչ Ա.Տոնոյանի վիճարկվող գործողությունները մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չհանդիսանալու պայմաններում, նույն կերպ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա չի կարող հանդիսանալ նաև Դատախազ Դ.Աղաջանյանի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշումը⁷¹¹:

13. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր ըստ էության քննության առնել դիմող Վանիկ Ասատրյանի ներկայացուցչի բողոքը, իրավաչափ չէ:

14. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 11-ի դատական ակտը րեկանելու համար:

⁷¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հովհաննես Գինոյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԼԴ/0023/11/12 որոշումը:

Միննույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 5-ի որոշմանը⁷¹² հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի՝ սույն որոշման 7.1-րդ կետում բարձրացված փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Վանիկ Խաչիկի Ասատրյանի ներկայացուցիչ Է.Բեգլարյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 5-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *արտրագրություն*

Դատավորներ *արտրագրություններ*

⁷¹² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

46.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0558/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հոկտեմբերի 15-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով Արմեն Զիվանի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ղարագյոզյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Հ.Մանանդյանի (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին)՝ 2018 թվականի մարտի 26-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 62209118 քրեական գործը:

2018 թվականի ապրիլի 6-ին Արմեն Հովհաննիսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ Ա.Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ Ա.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով, որը հետագայում երկարացվել է:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ Ա.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է և նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ թիվ 62209118 քրեական գործից մեղադրյալ Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ գործն անջատվել է առանձին վարույթում, որին շնորհվել է 62221118 համարը:

2018 թվականի հուլիսի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 26-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներում: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերի կանոններով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Հովհաննիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 3 (երեք) տարի ժամկետով: Միաժամանակ, Ա.Հովհաննիսյանի նկատմամբ կիրառվել է 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և նա ազատվել է ազատազրկման ձևով նշանակված պատժի կրումից: Նույն դատական ակտով Ա.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացվել է և նա ազատ է արձակվել:

3. Պաշտպաններ Ի.Գազարովայի, Հ.Սուքիասյանի, մեղադրող Վ.Սարգսյանի, տուժողի իրավահաջորդ Գ.Աղաջանյանի և ներկայացուցիչ Ա.Ղարագոյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 նոյեմբերի 26-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերը նշված որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ղարագոյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 5-ի որոշմամբ վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ: Վճռաբեկ

դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ սահմանվել է վճարելի բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքների պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Նախաքննության մարմնի կողմից Արմեն Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար. «/Ն/ և 2014 թվականի նոյեմբերի 5-ից ՀՀ արդարադատության նախարարության քրեակարարողական վարչության պետի N 478-Ս հրամանով զբաղեցնելով ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակարարողական հիմնարկի հերթապահ խմբի առաջին կարգի մասնագետի պաշտոնը և հանդիսանալով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառնություններով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, 2018 թվականի մարտի 16-ին՝ ժամը 00:35-ից մինչև 01:15-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակարարողական հիմնարկի շենքում կատարած արարքի համար պարժելու նպատակով մի խումբ անձանց կազմում խոչընդոտել է Արմեն Աղաջանյանին՝ վերջինիս դիրավորությամբ պարձատելով ֆիզիկական ուժեղ ցավ, ինչից հետո խոչընդոտման դեպքը թաքցնելու խմբային շահերից ելնելով, մի խումբ պաշտոնատար անձանց կազմում կատարել է պաշտոնական կեղծիք:

Այսպես.

2018 թվականի մարտի 15-ի լույս մարտի 16-ի գիշերը ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի աշխատակիցները հիշյալ բաժնից ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակարարողական հիմնարկ են տեղափոխել ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 7-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավված Արմեն Աղաջանյանին, ում նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված եղել կալանավորումը: Հիշյալ քրեակարարողական հիմնարկ մուտք գործելիս՝ 2018 թվականի մարտի 16-ին՝ ժամը 00:35-ին, Արմեն Աղաջանյանին ընդունել է նույն քրեակարարողական հիմնարկի հերթապահ խմբի առաջին կարգի մասնագետ, արդարադատության մայրը Արմեն Հովհաննիսյանը: Այդ ժամանակ Արմեն Աղաջանյանի կողմից չբարևելու հարցի շուրջ խոսակցություն է ծավալվել վերջինիս և Արմեն Հովհաննիսյանի միջև, որի ընթացքում միջանցքում Արմեն Աղաջանյանը րվել է անհասցե հայհոյանքներ: Արմեն Հովհաննիսյանը դիրողություն է արել Արմեն Աղաջանյանին՝ պահանջելով իրեն կարգի հրավիրել և հայհոյանքներ չբալ՝ զգուշացնելով, որ շարունակելու դեպքում կրեդափոխի պարժախուց, ինչին Արմեն Աղաջանյանը հայհոյանք րարով պատասխանել է, որ չկա մեկը, ով կարող է իրեն րանել պարժախուց:

Այսուհետև Արմեն Հովհաննիսյանը Արմեն Աղաջանյանին ուղեկցել է հիմնարկի հավաքակայանում գրնվող խուզարկության կատարման համար

նախատեսված սենյակ, և մինչ այդ հայտյանքներ փախու համար պարժելու նպատակով առանց որևէ բառ ասելու ձեռքով հարվածել է նրա դեմքին, այնուհետև քրեակարարողական հիմնարկի մի խումբ ծառայողների հետ նշված սենյակում խոչընդոտել է վերջինիս՝ դիրավորությանը պարճառել է ֆիզիկական ուժեղ ցավ, այն է՝ ձեռքերով ու ոտքերով հարվածներ է հասցրել Արմեն Աղաջանյանի մարմնի տարբեր մասերին՝ պարճառելով առողջությանը թեթև վնասի հարկանիշներ չպարունակող՝ աջ և ձախ այրային շրջանների, ձախ սրունքի շրջանների քերծվածքների, վերին շրթունքի շրջանի սալջարդ վերքի ձևով մարմնական վնասվածքներ:

Այնուհետև, կարճ ժամանակ անց Արմեն Աղաջանյանին խոչընդոտելու դեպքը թաքցնելու խնամքով շահերից ելնելով, Արմեն Հովհաննիսյանը նույն քրեակարարողական հիմնարկի մի խումբ պաշտոնատար անձանց կազմում կարարել է պաշտոնական կեղծիք, այն է՝ կալանավոր Արմեն Աղաջանյանի նկարմամբ ֆիզիկական ուժ՝ ձեռքի հնարք, կիրառելու վերաբերյալ քրեակարարողական հիմնարկի մի խումբ ծառայողների հետ 2018 թվականի մարտի 16-ին կազմել է իրականությանը չհամապատասխանող պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող կեղծ արձանագրություն առ այն, թե իբր նույն օրը՝ ժամը 00:45-ի սահմաններում, հավաքակալանում Արմեն Աղաջանյանին խուզարկելու ժամանակ վերջինս չի ենթարկվել իրենց օրինական պահանջներին, քրեակարարողական ծառայողների հասցեին փվել է հայտյանքներ և զագրախոսել խոչընդոտելով իրենց օրինական գործողությունների կատարմանը: Նկատի ունենալով, որ զգուշացվելուց հետո Արմեն Աղաջանյանը շարունակել է իրեն ազդեցիկ պահել և խոչընդոտել է իրենց օրինական գործողությունների կատարմանը, նրա ազդեցիկ վարքագիծը կանխելու նպատակով իրենց կողմից կիրառվել է ֆիզիկական ուժ՝ ձեռնամուրտի հնարք:

Մինչդեռ, նախաքննությանը պարզվել է, որ հիշյալ արձանագրության մեջ նշված՝ հավաքակալանում խուզարկելու ժամանակ Արմեն Աղաջանյանի կողմից քրեակարարողական հիմնարկի ծառայողների օրինական պահանջներին չենթարկվելու և զագրախոսելով նրանց օրինական գործողությունների կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ փեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում:

Այսպիսով, Արմեն Աղաջանյանի կողմից հայտյանքներ փախու համար պարժելու նպատակով քրեակարարողական հիմնարկի մի խումբ ծառայողների հետ Արմեն Հովհաննիսյանը խոչընդոտել է նրան՝ դիրավորությանը պարճառել ֆիզիկական ուժեղ ցավ, որից հետո խոչընդոտման դեպքը թաքցնելու խնամքով շահերից ելնելով, նույն քրեակարարողական հիմնարկի մի խումբ ծառայողների հետ կարարել է պաշտոնական կեղծիք»⁷¹³:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռում նշվել է հետևյալը. «(...) Դատարանը գրնում է, որ Ա.Հովհաննիսյանի արարքը որպես խոչընդոտում որակելու համար բավարար չէ միայն այն հանգամանքը, որ ամբաստանյալը

⁷¹³ Տե՛ս քրեական գործ. հատոր 2, թերթեր 263-282:

հանդիսանում է քրեակարարողական հիմնարկի աշխատակից՝ պաշտոնատար անձ և, որ նա բռնություն է գործադրել ՔԿՀ-ում գրնայող անձի նկատմամբ, քանի որ անհրաժեշտ է նաև, որ ստկա լինի այլ պայման, մասնավորապես անհրաժեշտ է որպեսզի Արմեն Հովհաննիսյանն այդ բռնությունը գործադրի այնպիսի արարքի համար Ա.Աղաջանյանին պարտելու նպատակով, որը վերջինս կատարել է և այդպիսի արարք կատարելու հանգամանքը կամ փաստը պետք է հաստատված լինի համապատասխան ընթացակարգերով, այլ ոչ թե արարք կատարած լինելու հանգամանքը կազմի Ա.Հովհաննիսյանի սուբյեկտիվ ընկալման արդյունքը: Գործի նյութերի համաձայն Ա.Հովհաննիսյանը բռնություն է գործադրել կայանավոր Ա.Աղաջանյանի նկատմամբ նրա կողմից դրսևորած վարքագծի պարճառով: Կոնկրետ դեպքում պետք է հաշվի առնել, որ Ա.Հովհաննիսյանը դիտարկորոշյալ կատարել է այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լրագրորոշյունների շրջանակից և էական վնաս են պարճառել Ա.Աղաջանյանի իրավունքներին ու օրինական շահերին, ուստի նրա կատարած արարքը ենթակա էր որակման ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հարկանիշներով:

(...)

Գնահատելով Արմեն Հովհաննիսյանի կատարած գործողությունները ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով ձևավորված պահանջների ներքո, պետք է արձանագրել հետևյալը,

- դաճան վերաբերմունքի բնույթը - դաճան վերաբերմունքը դրսևորվել է անձին ծեծի ենթարկելով,

- կիրառված միջոցները և մեթոդները - Արմեն Աղաջանյանը ծեծի է ենթարկվել ձեռքերով ու ոտքերով, ծեծի ընթացքում հարուկ միջոցներ չեն կիրառվել, ծեծը չի ուղեկցվել մշակված հարուկ մեթոդների կիրառմամբ,

- դաճան վերաբերմունքի կրկնությունը և տևողությունը - ըստ գործի նյութերի՝ դաճան վերաբերմունքը տևել է ոչ ավել քան երկու րոպե, ինչը երկարատև չի կարելի համարել: Դաճան վերաբերմունքը չի կրկնվել, չի կիրառվել ընդհարումներով,

- դաճան վերաբերմունքի ենթարկվող անձի տարիքը, սեռը և առողջական վիճակը-դաճան վերաբերմունքի ենթարկված անձը 30 տարեկան տղամարդ է, վարատող, նրա վարատող լինելու մասին (որովայնի հարվածում ստկա պարկի, որում գրնայում են աղիները) Արմեն Հովհաննիսյանը տեղեկացել է միև Արմեն Աղաջանյանի ՔԿՀ մուրք գործելը (նրա վերաբերյալ կազմված փաստաթղթերն ուսումնասիրելիս), Արմեն Աղաջանյանին հասցված վնասվածքներն ուղղված չեն եղել որովայնի շրջանին:

- հավանականությունը, որ նման վերաբերմունքը կարող է վնասել անձի ֆիզիկական, հոգեկան և հոգեբանական վիճակը - ցուցաբերված վերաբերմունքը չի վնասել Արմեն Աղաջանյանի ֆիզիկական, հոգեկան և հոգեբանական վիճակը, քանի որ հակատակ դեպքում նա չէր բարճրաճայնի այդ մասին: Հարկ է նշել նաև, որ դեպքից հետո ՔԿՀ-ի ծառայողներն Ա.Աղաջանյանին ուղեկցել են լվացվելու, նրա հետ հանգիստ պայմաններում գրուցել են, վերջինիս նկատմամբ վստ վերաբերմունքի որևէ դրսևորում այլևս չի կատարվել:

- հասցված վնասվածքների լուրջ հետևանքների կարճ և երկար տևողությունը,
- հասցված վնասվածքները առողջության թեթև վնասի հասկանալիներ չեն պարունակում, իսկ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից փոստոյի հոգեկան վիճակը պարզելու համար դատաբանական մասնաձևերի փորձարկումներ չի նշանակվել, հետևաբար՝ չկան արվյալներ հետևանքների կարճատևության կամ երկարատևության մասին:

Այսպիսով, համակցության մեջ դիտարկելով ՄԻԵԴ-ի մատչելի չափանիշները՝ դատարանն արձանագրում է, որ հասարակած փաստական արվյալներով ու գործի հանգամանքներով Արմեն Հովհաննիսյանի կատարած արարքը ենթակա չէ որակման ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով:

(...)

Դատարանը հնարավոր է համարում սույն քրեական գործով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը վերոնշյալ իրավական նորմի համարեքսպոնում փոփոխելը, նկատի ունենալով, որ նրա արարքին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական և մեղադրանքի նման փոփոխությունը ոչ միայն չի խախտում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, այլև բարելավում է նրա վիճակը: Ընդ որում նման դիրքորոշում է հայտնել նաև պաշտպանական կողմը: Նման պայմաններում դատարանը գտնում է, որ Արմեն Հովհաննիսյանի կատարած արարքը համապատասխանում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հարկանիշներին, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հարկանիշներին: (...)»⁷¹⁴:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հանցակազմի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հանցակազմի քրեաիրավական բնութագրին, դրանց համարեքսպոնում գնահատելով ամբաստանյալ Արմեն Հովհաննիսյանի գործողությունները և գործի փաստական հանգամանքները, եկել է իրավաչափ եզրահանգման այն մասին, որ վերջինիս գործողությունները խոչընդոտում են արարել չեն պարունակում:

Դատարանը գործով հասարակած փաստական արվյալները գնահատելով՝ «Խոչընդոտման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պարծի դեմ» ՄԱԿ-ի 1984 թվականի դեկտեմբերի 10-ի Կոնվենցիայի, խոչընդոտման արգելքն ամրագրած ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի լույսի ներքո, հղում կատարելով Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի վճիռներով ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումներին, գրել է, որ Արմեն Հովհաննիսյանի գործողություններում բացակայում է խոչընդոտման հանցակազմը:

(...) Ելնելով փաստական արվյալները համակցության մեջ դիտարկելով ՄԻԵԴ-ի սահմանած խոչընդոտման չափորոշիչների լույսի ներքո, Դատարանն իրավաչափ եզրահանգման է եկել Արմեն Հովհաննիսյանի արարքում խոչընդոտման հանցակազմի բացակայության մասին: Այս առումով Դատարանի կողմից

⁷¹⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 11-39:

կատարված իրավական վերլուծությունները և դրանցից բխող եզրահանգումներն ընդունելի են Վերաքննիչ դատարանի համար: Դատարանը կատարել է դատաքննությանը հետազոտված սպառնացների բազմակողմանի և խորը իրավական վերլուծություն ու գնահատում, որոնց հետք Վերաքննիչ դատարանը համակարծիք է:

Մեղադրանքի կողմի փաստարկներն այն մասին, որ ամբաստանյալի գործողությունները նպատակ են ունեցել նվաստացնել րուժողին, վրեժխնդիր լինել նրանից, սուբյեկտիվ դատողության արդյունք է: Ճիշդ է, Արմեն Աղաջանյանը ՔԿՀ է մուտք գործել վատառողջ վիճակում (հասար աղիքը եղել է պարկի մեջ, մարմնից դուրս), սակայն գործով չի հաստատվել, որ Արմեն Հովհաննիսյանը խմբի կազմում հարվածներ է հասցրել նաև րուժողի որովայնի շրջանին: Այդ մասին են վկայում րուժողի մարմնական վնասվածքների բնույթն ու տեղակայումը, ինչը հիմնավորվել է դատաբժշկական փորձաքննությամբ: Գործի ելքով շահագրգիռ անձի՝ րուժողի մոր ցուցմունքն այն մասին, որ Արմեն Հովհաննիսյանը խմբի կազմում ծեծի ենթարկվելով իր որդուն, խիել են նաև աղիքներին ու վնասել հասար աղիքը, չի հաստատվել որևէ այլ օբյեկտիվ սպառնացով: Անհիմն են նաև մեղադրանքի կողմի փաստարկներն այն մասին, թե Արմեն Աղաջանյանի նկատմամբ դաժան վերաբերմունքը ունեցել է շարունակություն, քանի որ նրան պարզաձ բժշկական օգնություն չի ցուցաբերվել, ու րուժողը հարկատրված դիմել է ջրաղույի և հացաղույի: Գործով չի հիմնավորվել, որ կախանավորված անձ Արմեն Աղաջանյանի կողմից ջրաղույ և հացաղույ հայտարարելը ուղղակիորեն պայմանավորված է եղել խուզարկության սենյակում ծեծի ենթարկվելու հանգամանքով, ու որ նրա նկատմամբ շարունակական պարզաձ բժշկական օգնություն չի ցուցաբերվել: Այն հանգամանքը, որ Արմեն Աղաջանյանը հրաժարվել է ՔԿՀ-ի բժշկի կողմից մարմնական զննության ենթարկվելուց, չի նշանակում, որ դա հեղևանք է իր նկատմամբ կիրառված բռնության, դրա հեղևանքով առաջացած վրազնասի և անվարահության:

Անիոտիելով Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ մեղադրանքի կողմի փաստարկները՝ Արմեն Հովհաննիսյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հանցակազմի առկայության մասին, բավարար չափով փաստարկված չեն, որանք սուբյեկտիվ դատողության արդյունք են, չեն բխում գործի նյութերից:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ընդունելի չէ Դատարանի այն պնդումը, թե տեղի ունեցած բռնությունը խոշարանգում որակելու համար անհրաժեշտ պայման է, որ դեպքին նախորդած լինի րուժողի կողմից այնպիսի հակաօրինական արարքի կատարում, որը հաստատված է համապատասխան ընթացակարգով: Այդ պնդումը հակասում է ՄԻԵԴ կայուն նախադեպային իրավունքին, ինչպես իրավագիտորեն ընդգծել է մեղադրողը իր բողոքի մեջ:

Անիոտիելով՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բերված վերաքննիչ բողոքները պետք է մերժել, քանի որ Դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի այնպիսի խախտումներ թույլ չեն տրվել, որոնք ազդել

*են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, բացակայում են վիճարկվող դատարանի ակտի բեկանելու հիմքերը: Վիճարկվող դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պարզապարզաբանված (...)*⁷¹⁵:

Վճռարեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռարեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 3-րդ հոդվածի վերաբերյալ ձևավորած նախադեպային պրակտիկան, նշել է, որ սույն գործով տուժող Ա.Աղաջանյանի նկատմամբ կիրառված բռնությունը նպատակ է հետապնդել պատժել վերջինիս, ինչի արդյունքում էլ նրան պատճառվել է ուժեղ ցավ և տառապանք՝ հատկապես նկատի ունենալով այն հանգամանքը, որ ունեցած առողջական խնդիրների պատճառով Ա.Աղաջանյանն արդեն իսկ գտնվել է հյուծված վիճակում, իսկ նրա նկատմամբ գործադրված բռնությունն ուղղված է եղել վերջինիս դիմադրությունը կտրելուն:

Բողոքաբերն ընդգծել է, որ Ա.Աղաջանյանի կողմից քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներին դիմադրություն ցույց տալու կամ որևէ այլ կերպ նրանց պարտականությունների կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ որևէ փաստական տվյալ քրեական գործում առկա չէ:

Ըստ բողոքի հեղինակի՝ Ա.Աղաջանյանի նկատմամբ քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցնելն ունեցել է վրեժխնդրության բնույթ, այն չի նպաստել քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից իրենց առջև դրված խնդիրների լուծմանը և տուժողի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի նպատակն է եղել նվաստացնել և հարկադրաբար ենթարկեցնել վերջինիս:

Բողոք բերած անձը նշել է, որ գործով ձեռք բերված փաստական տվյալների ամբողջության պայմաններում, ստորադաս դատարանները, տուժող Ա.Աղաջանյանի նկատմամբ դրսևորված դաժան վերաբերմունքի բնույթի, տևողության, հասցված վնասվածքների և դրանց արդյունքում առաջացած հետևանքների վերաբերյալ եկել են սխալ եզրահանգումների:

Բողոքաբերի պնդմամբ, Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել գործով ձեռք բերված և մեղադրողի կողմից ներկայացված բողոքում վկայակոչված՝ թույլատրելի, վերաբերելի և հավաստի այն փաստական տվյալները, որոնք «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատում են ամբաստանյալ Ա.Հովհաննիսյանի կողմից խմբի կազմում կալանավորված անձ Արմեն Աղաջանյանին խոշտանգելու հանգամանքը: Այդ կերպ

⁷¹⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 49-րդ, թերթեր 74-109:

ստորադաս դատարանը խախտել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված՝ համակցության մեջ ապացույցները գնահատելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված պահանջը: Արդյունքում՝ ստորադաս դատարանները սխալ են կիրառել քրեական օրենքը, մասնավորապես՝ չեն կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, որը ենթակա էր կիրառման, և կիրառել են նույն օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասը, որը ենթակա չէր կիրառման:

8.1. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշումը, ամբաստանյալ Արմեն Հովհաննիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ նրա նկատմամբ նշանակելով համաչափ պատիժ:

9. Ըստ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ղարագյոզյանի վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշման արդյունքում խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածների պահանջները, ինչի հետևանքով ամբաստանյալի արարքներում չի հաստատվել խոշտանգման փաստը:

Բողոքի հեղինակը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մի շարք գործերով կայացված վճիռների և որոշումների լույսի ներքո՝ փաստարկել է, որ տուժողի նկատմամբ գործադրված բռնությունը պարունակել է խոշտանգման տարրեր, իսկ ստորադաս դատարանների դատական ակտերը հակասել են դրանցով արտահայտված իրավական դիրքորոշումներին:

9.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշումը, ամբաստանյալ Արմեն Հովհաննիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և կայացնել մեղադրական դատավճիռ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Ա.Հովհաննիսյանի արարքը վերաորակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող ենթարկվել խոչրանգման, անանորդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատիժի»:*

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի (այսուհետ՝ նաև՝ ՄԱԿ-ի կոնվենցիա) 1-ին հոդվածի համաձայն՝ *«(...) «[Խոչրանգում] հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիրավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու,*

այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խարսկանության վրա հիմնված ցանկացած պարճատով, երբ նման ցավը կամ տառապանքը պարճատվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապետ հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրամամեր կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պարճամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց»:

Նույն կոնվենցիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր իրավազրոյության ներքո գրնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի ու պարճի մյուս ձևերը, որոնք չեն դասվում 1-ին հոդվածում որպես խոչընդոտ սահմանափակումների շարքը, երբ այդպիսի գործողությունները կատարվում են պետական պաշտոնյայի կամ պաշտոնապետ հանդես եկող մեկ այլ անձի կողմից, կամ նրանց հրահրմամբ, կամ նրանց գիտությամբ կամ լուռ համաձայնությամբ(...)»:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոչընդոտումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պարճի»:

12.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հղում կատարելով ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի ձևակերպմանը, սահմանել է, որ խոչտանգում է համարվում տեղեկություն ստանալու կամ պատժելու կամ վախեցնելու նպատակով անձին դիտավորյալ կերպով սաստիկ ցավ կամ տառապանք պատճառելը⁷¹⁶:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում սահմանված՝ վատ վերաբերմունք հավաքական հասկացությանը և խոչտանգման՝ այլ վերաբերմունքի ձևերից տարբերակելուն, իրավական դիրքորոշում է արտահայտել հետևյալի մասին. «Որոշելու համար, թե արդյո՞ք վատ վերաբերմունքի կոնկրետ դրսևորումը պետք է որակվի որպես խոչընդոտում, Դատարանը պետք է հաշվի առնի 3-րդ հոդվածում ներկայացված այս հասկացության և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հասկացության տարբերությունները: Ինչպես Դատարանը նախկինում գրել է, պարզ է դառնում, որ մարդկությունը եղել է այն, որ այս տարբերակման միջոցով Կոնվենցիայով պետք է հատուկ ամօթի խարսն դրվեր շար լուրջ և դաժան տառապանք պարճատող կանխամերածված անմարդկային վերաբերմունքի վրա (...): Բացի վերաբերմունքի լրջությունից առկա է նաև նպատակային տարր, ինչպես ճանաչվում է Միացյալ ազգերի կազմակերպության՝

⁷¹⁶ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Salman v. Turkey* գործով 2000 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 21986/93, կետ 114:

Խոշորանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պարտի դեմ (...) կոնվենցիայով, որով խոշորանգումը սահմանվում է որպես սուր ցավի կամ փառասպանի դիրավորյալ պարճառում, *inter alia*, փեղեկություն ստանալու, **պարճելու կամ սհաբելելու նպատակով (...)**⁷¹⁷:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) Վատ վերաբերմունքը պետք է որոշակի նվազագույն աստիճանի ծանրության լինի, որպեսզի այն դիրավորյալի 3-րդ հոդվածի ներքո: Այս նվազագույն աստիճանի գնահատումը հարաբերական է, այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպես օրինակ՝ վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական և մտավոր ազդեցությունը, իսկ որոշ դեպքերում՝ նաև՝ սեռը, տարիքը և փոփոխի ստորջական վիճակը (...)⁷¹⁸:

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ. «(...) [Ց]անկացած դեպքում ազատությունից զրկված անձի նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելը, որը նրա վարքագծի պարճառով խիստ անհրաժեշտ չի եղել, նսեմացնում է մարդու արժանապատվությունը և, ըստ էության, խախտում է 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքը (...):

(...) [Կ]րած «ցավը կամ փառասպանքը» կարող է համարվել «դաժան»՝ ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի խնամարով: Դատարանը գրնում է, որ այս «դաժանությունը», ինչպես և 3-րդ հոդվածով պահանջվող «նվազագույն խարությունը» հարաբերական են. դա կախված է գործի հանգամանքներից, ինչպիսիք են վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան հետևանքները, իսկ որոշ դեպքերում՝ զոհի սեռը, տարիքը, ստորջական վիճակը և այլն»⁷¹⁹:

Ընդ որում՝ խոշտանգման միջոցով գործադրված բռնության ֆիզիկական կամ հոգեկան հետևանքները, պարտադիր չէ, որ տուժողի ստորջոյանը պատճառեն տևական վնաս, և ցանկացած դեպքում հասցված ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի խոշտանգման տարրեր պարունակելու հարցը կախված է կոնկրետ գործի հանգամանքների ամբողջությունից: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ «(...) [Բ]շխանությունների գործադրած չհիմնավորված բռնության նպատակն էր եղել ճնշել բողոքի շարժումը, պարճել բանարկայալներին վերջիններիս խաղաղ հացադուլի համար և օրորոցում ինտրել բողոքի ձայն բարձրացնելու բոլոր մտադրությունները: Դատարանի կարծիքով, գանգադարներին նկատմամբ կիրառված վերաբերմունքը պետք է որ նրանց ծանր ցավ և փառասպանք պարճառած լինել՝ Խոշտանգման և այլ դաժան,

⁷¹⁷ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 156:

⁷¹⁸ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Jalloh v. Germany* [GC] գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 54810/00, § 67:

⁷¹⁹ Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Selmouni v. France* գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, 1999 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 25803/94, կետեր 99-100, *Bouyid v. Belgium* [GC] գործով 2015 թվականի սեպտեմբերի 28 վճիռը, գանգատ թիվ 23380/09, կետեր 88 և 100:

անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասի իմաստով (...), թեպետ այն ըստ երևույթին որևէ տեսակետի վրա չէր պարզանշան նրանց առողջությանը: Այս հանգամանքներում Դատարանը եզրակացնում է, որ գանգադարձությունների նկատմամբ կիրառվել էր վերաբերմունք, որը կարող է բնորոշվել որպես ոչ այլ ինչ, քան խոշտանակում»⁷²⁰:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ. «(...) Վերաբերմունքը Դատարանի կողմից ճանաչվել է որպես նվաստացնող և այդպիսով համարվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված արգելք, եթե այն իր զորի մուր առաջացնում է վախի, տառապանքի և նվաստ լինելու զգացում»⁷²¹, եթե այն նվաստացնում կամ ցածրացնում է անհատին (նվաստացնում իր իսկ աչքերում⁷²², և (կամ) այլ անձանց աչքերում⁷²³, անկախ նրանից՝ դա եղել է նպատակը, թե ոչ⁷²⁴, եթե այն կոտորում է անձի ֆիզիկական կամ մտավոր դիմադրությունը կամ դրդում է նրան գործել իր կամքին կամ գիտակցությանը հակառակ⁷²⁵, կամ այն ցուցաբերում է հարգանքի բացակայություն կամ ցածրացնում մարդկային արժանապատվությունը⁷²⁶, (...))⁷²⁷:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը համարելով ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնարար արժեքներից մեկը⁷²⁸, նշել է, որ նույնիսկ ամենաբարդ իրավիճակներում, ինչպես օրինակ՝ ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում, Կոնվենցիայով բացարձակ իմաստով արգելվում են խոշտանգումները և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ **անկախ տուժողի վարքագծից**⁷²⁹ և որևէ բացառություն չի նախատեսվում, ու Եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի

⁷²⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Karabet and Others v. Ukraine* գործով 2013 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգառներ թիվ 38906/07 և 52025/07, կետ 332:

⁷²¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ireland v. the United Kingdom* գործով 1978 թվականի հունվարի 18-ի վճիռը, գանգառ թիվ 5310/71, կետ 167, *Stanev v. Bulgaria* [GC], 2012 թվականի հունվարի 12-ի վճիռը, գանգառ թիվ 36760/06, կետ 203:

⁷²² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Raninen v. Finland* գործով 1997 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգառ թիվ 20972/92, կետ 32:

⁷²³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gutsanovi v. Bulgaria* գործով 2013 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռը, գանգառ թիվ 34529/10, կետ 136:

⁷²⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Labita v. Italy* [GC] գործով 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգառ թիվ 26772/95, կետ 120:

⁷²⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Jalloh v. Germany* [GC] գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգառ թիվ 54810/00, կետ 68:

⁷²⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Svinarenko and Slyadnev v. Russia* [GC] գործով 2014 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգառ թիվ 32541/08 և 43441/08, կետեր 118 և 138:

⁷²⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hovhannisyan v. Armenia* գործով 2018 թվականի հուլիսի 19-ի վճիռը, գանգառ թիվ 18419/13, կետեր 48-49:

⁷²⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Նարթանյանսն ընդդեմ Հայաստանի* գործով 2015 թվականի մարտի 31-ի վճիռը, գանգառներ թիվ 9935/06 և 2339/06, կետ 95:

⁷²⁹ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Labita v. Italy* գործով 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգառ թիվ 26772/95, կետ 119, *Chahal v. The United Kingdom* գործով 1996 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգառ թիվ 22414/93, կետ 79:

2-րդ կետի համաձայն՝ չի թույլատրվում որևէ շեղում կատարել այդ պայմանից, նույնիսկ բնակչության կյանքին սպառնացող արտակարգ դրության դեպքում⁷³⁰:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) երբ անհայրը զրկված է ազատությունից կամ, ընդհանուր առմամբ, բախվել է իրավապահների հետ, ֆիզիկական ուժի ցանկացած կիրառում, որը խիստ անհրաժեշտ չի եղել այդ անձի վարքագծի պարճատուլ, նվաստացնում է մարդկային արժանապատվությունը և սկզբունքորեն հանդիսանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով ամրագրված իրավունքի խախտում:

Դատարանը շեշտում է, որ «սկզբունքորեն» բառը չի կարող ընկալվել այն իմաստով, թե կարող են լինել իրավիճակներ, որոնցում խախտման հայտնաբերում չի նախատեսվում, քանի որ վերոնշյալ հատկության շեմը (...) չի գերազանցվել: Մարդկային արժանապատվության ցանկացած ուրասհարում խախտում է Կոնվենցիայի բուն էությունը (...): Այդ պարճատուլ vis-à-vis անհայրի իրավապահների ցանկացած վարքագիծ, որը նվաստացնում է մարդկային արժանապատվությունը, հանդիսանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Դա հարկապես վերաբերում է նրանց կողմից անհայրի նկարմամբ ֆիզիկական ուժի կիրառմանը, երբ դա խիստ անհրաժեշտ չէ վերջինի վարքագծի պարճատուլ՝ անկախ րվյալ անձի վրա այդ ուժի ունեցած ազդեցությունից:

(...)

Ամեն դեպքում Դատարանը շեշտում է, որ իրավապահի կողմից լիովին իր հսկողության րակ գրնվող անհայրին հասցված սպրակը լուրջ հարձակում է անհայրի արժանապատվության վրա:

Ապրակը խորն ազդեցություն է թողնում անձի վրա: Դեմքին հասցված սպրակն ազդում է անձի մարմնի այն մասի վրա, որն արրահայրում է նրա անհարականությունը, դրսևորում նրա սոցիալական ինքնությունը և հանդիսանում նրա զգայարանների՝ րեստողության, խոսքի և լսողության կենրորնը, որոնք օգրագործվում են այլոց հետ հաղորդակցվելու համար: Հիրավի Դատարանն արդեն առիթ ունեցել է նշելու դեմքի նշանակությունը սոցիալական րոհազդեցության համար (...): Այն նաև հաշվի էր առել մարմնի այդ մասի առանձնահարկությունը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համարեքարում՝ նշելով, որ «հարկապես իր րեղակայման պարճատուլ» անհայրի գլխին հասցված հարվածը նրա ձերբակալության ժամանակ, որն առաջացրել է այրուց և 2 սանրիմեքրանոց արյունազեղում նրա ճակարին, բավականին լուրջ հիմք էր 3-րդ հոդվածով հարց բարձրացնելու համար (...):

Դա հարկապես ճիշտ է, երբ սպրակը հասցվել է իրավապահների կողմից իրենց վերահսկողության ներքո գրնվող անձանց, քանի որ դա ընդգծում է այն

⁷³⁰ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Selmouni v. France* գործով 1999 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 25803/94, կետ 95, *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 90/1997/874/1086, կետ 93:

առավելությունը և ստորադասությունը, որոնք, ըստ սահմանման, բնորոշում են առաջինի և երկրորդի միջև հարաբերությունները նշված հանգամանքներում: (...)

Բացի այդ, անձինք, ովքեր գրնվում են ոստիկանական կայանքի տակ կամ նույնիսկ պարզապես բերման են ենթարկվել կամ կանչվել են ոստիկանապետին ինքնության ստուգման կամ հարցաքննության համար, ինչպես դիմումատերի դեպքում, և, ընդհանուր առմամբ, բոլոր անձինք, ովքեր գրնվում են ոստիկանության կամ համանման մարմնի վերահսկողության ներքո, խոցելի իրավիճակում են: Իշխանությունները, հետևաբար, նրանց պաշտպանելու պարտականություն ունեն (...): Իրենց ոստիկաններից որևէ մեկի կողմից սպարակելու միջոցով նվաստացում պարձատելով՝ իշխանություններն արհամարհում են այս պարտականությունը:

Այն փաստը, որ սպարակը կարող է ոստիկանի կողմից հասցված լինել չմտածված, ում համբերությունից հանել էր գոհի անհարգալից կամ ստորի վարքագիծը, այստեղ տեղին չէ: Հետևաբար, Մեծ Պալատն այս կետում հրաժարվում է Պալատի մտրեցումից: Ինչպես նախկինում նշել է Դատարանը, նույնիսկ ամենաթվարին հանգամանքներում Կոնվենցիան բացարձակ իմաստով արգելում է խոչընդոտումները և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պարիժժը՝ անկախ փոխյալ անձի վարքագծից (...): Ժողովրդավարական հասարակությունում վար վերաբերմունքը երբեք իշխանությունների առջև ի հայտ եկած ինտիմների պարզաճ արձագանքը չէ»⁷³¹:

13. ՄԱԿ-ի կոնվենցիայի և ներպետական օրենսդրությամբ խոշտանգման համար քրեական պատասխանատվության ոլորտում գործող իրավակարգավորումների միջև համապատասխանություն ապահովելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև Եվրոպական դատարանի վճիռների կատարման պահանջով⁷³² 2015 թվականի հունիսի 5-ի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-69 օրենքի ընդունմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններով և լրացումներով ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն նախատեսվեց խոշտանգում հանցագործության կատարման համար, որի դիսպոզիցիան ունի հետևյալ բովանդակությունը. «Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիրությամբ որևէ անձի դիսպոզիցիայի ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պարձատելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խտարովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պարժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ

⁷³¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelanyan v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետեր 100-101, 103-104, 106-108:

⁷³² Տե՛ս օրենքի հիմնավորումները՝ www.parliament.am կայքում:

կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խարսկանության վրա հիմնված ցանկացած պատճառով

(...)

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

(...)

4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից (...):

14. Սույն որոշման 12-13-րդ կետերում կատարված իրավական վերլուծության, այդ թվում նաև դրանցում վկայակոչված միջազգային չափանիշների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով դրսևորված վատ վերաբերմունքը, որպես խոշտանգում որակելու, հետևաբար նաև ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման փաստը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ ի կատարումն դրանում նշված նպատակների՝ դրսևորված վերաբերմունքի արդյունքում հասցված ուժեղ ցավը կամ հոգեկան տառապանքն իր բնույթով լինի «դաժան», ինչն էլ հաստատված համարելու չափորոշիչներ են հանդիսանում՝ **գործադրված բռնության տեսակները, դրա արդյունքում հասցված ֆիզիկական կամ հոգեկան հետևանքները, ազատությունից զրկված կամ ուարկանությունում կամ համանման մարմնում հանցավորի վերահսկողության ներքո լինելը**, իսկ որոշ դեպքերում՝ **տուժողի տարիքային, ստորջական վիճակի և այլ առանձնահատկությունները**:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմնի կողմից Արմեն Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2018 թվականի մարտի 16-ին՝ ժամը 00:35-ից մինչև 01:15-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի շենքում կատարած արարքի համար պատժելու նպատակով մի խումբ անձանց կազմում խոշտանգել է Արմեն Աղաջանյանին՝ վերջինիս դիտավորությամբ պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ, ինչից հետո խոշտանգման դեպքը թաքցնելու խմբային շահերից ելնելով, մի խումբ պաշտոնատար անձանց կազմում կատարել է պաշտոնեական կեղծիք⁷³³,

- Առաջին ատյանի դատարանը դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատման արդյունքում հաշվի առնելով, որ *դաժան վերաբերմունքը դրսևորվել է անձին ծեծի ենթարկելով, ծեծի ընթացքում հստակ միջոցներ չեն կիրառվել, ծեծը չի ուղեկցվել մշակված հստակ մեթոդների կիրառմամբ, դաժան վերաբերմունքը տևել է ոչ ավել քան երկու րոպե, չի կրկնվել, չի կիրառվել ընդհարումներով, դաժան վերաբերմունքի ենթարկված անձը 30 տարեկան տղամարդ է, վարատողը, նրա վարատողը լինելու մասին (որովայնի հարվածում առկա պարկի, որում գտնվում են աղիները) Ա.Հովհաննիսյանը*

⁷³³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

տեղեկացել է մինչ Ա.Աղաջանյանի քրեակարարողական հիմնարկ մուտք գործելը (նրա վերաբերյալ կազմված փաստաթղթերն ուսումնասիրելիս), Ա.Աղաջանյանին հասցված մնասվածքներն ուղղված չեն եղել որովայնի շրջանին, ցուցաբերված վերաբերմունքը չի մնասել նրա ֆիզիկական, հոգեկան և հոգեբանական վիճակը, քանի որ հակառակ դեպքում նա չէր բարձրաձայնի այդ մասին, դեպքից հետո քրեակարարողական հիմնարկի ծառայողներն Ա.Աղաջանյանին ուղեկցել են լվացվելու, նրա հետ հանգիստ պայմաններում գրուցել են, վերջինիս նկարումսք վատ վերաբերմունքի որևէ դրսևորում այլևս չի կարարվել, հասցված մնասվածքները ստոջոյոյան թեթև մնասի հարկանիշներ չեն պարունակում, իսկ քրեական հետարայտում իրականացնող մարմնի կողմից տուժողի հոգեկան վիճակը պարզելու համար դարահոգեբանական փորձարնություն չի նշանակվել, հետևարար չկան տվյալներ հետևանքների կարճարևության կամ երկարարևության մասին, հանգել է այն հետևության, որ Ա.Հովհաննիսյանի արարքը ենթակա էր որակման ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, այլ 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Մինևույն ժամանակ, դատարանը նշել է, որ Ա.Հովհաննիսյանի արարքը որպես խոշտանգում որակելու համար անհրաժեշտ է նակ, որ նա այդ բնությունը գործադրի այնպիսի արարքի համար Ա.Աղաջանյանին պատժելու նպատակով, որը վերջինս կատարել է, և այդպիսի արարք կատարելու հանգամանքը կամ փաստը պետք է հաստատված լինի համարպատասխան ընթացակարգերով, այլ ոչ թե արարք կատարած լինելու հանգամանքը կազմի Ա.Հովհաննիսյանի սուրյեկտիվ ընկալման արդյունքը⁷³⁴,

- Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ստյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է, որ բերված վերաքննիչ բողոքները պետք է մերժել, քանի որ Առաջին ստյանի դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, թույլ չեն տրվել, բացակայում են դատական ակտը բեկանելու հիմքերը, իսկ վիճարկվող դատավճիռն օրինական է, հիմնավորված և պատճառարանված: Մինևույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ ընդունելի չի համարում Առաջին ստյանի դատարանի այն պնդումը, թե տեղի ունեցած բնությունը խոշտանգում որակելու համար անհրաժեշտ պայման է, որ դեպքին նախորդած լինի տուժողի կողմից այնպիսի հակաօրինական արարքի կատարում, որը հաստատված է համարպատասխան ընթացակարգով: Դատարանը գտել է, որ այդ պնդումը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքին⁷³⁵:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի

⁷³⁴ Տեն սույն որոշման 6-րդ կետը:

⁷³⁵ Տեն սույն որոշման 7-րդ կետը:

ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն Ա.Հովհաննիսյանի արարքում խոշտանգման հատկանիշների առկայության, հետևաբար նաև Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութական բաղադրիչն առկա համարելու փաստը գնահատելիս համակողմանի ուշադրության չեն արժանացրել գործի փաստական հանգամանքները: Մասնավորապես, Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութական բաղադրիչի համատեքստում ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն, որ՝

- **տուժողի նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումը խիստ անհրաժեշտություն չի եղել.** տուժող Ա.Աղաջանյանը գտնվել է քրեակատարողական հիմնարկի տարածքում, փաստացի անազատության վիճակում և նրա նկատմամբ բռնություն է գործադրվել քրեակատարողական հիմնարկի տարածքում անհասցե հայիոյանքներ հնչեցնելու կապակցությամբ: Ա.Աղաջանյանը որևէ մեկի նկատմամբ բռնություն չի գործադրել, նրան որևէ պահանջ չի ներկայացվել, որը վերջինս հրաժարվել է կատարել, նա որևէ դիմադրություն ցույց չի տվել, ուստի տուժող Ա.Աղաջանյանի վարքագծով պայմանավորված նրա նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրման անհրաժեշտությունը հիմնավորված չի եղել,

- **տուժողի առողջական վիճակը, վերջինիս վիճակի խոցելիության աստիճանը.** տուժող Ա.Աղաջանյանը գտնվել է քրեակատարողական հիմնարկում՝ պետության վերահսկողության ներքո գտնվող փակ տարածքում և դրանով իսկ պայմանավորված՝ խոցելի իրավիճակում⁷³⁶: Ամբաստանյալ Ա.Հովհաննիսյանը մինչ միջադեպը գննել է Ա.Աղաջանյանի անձնական գործը և տեղեկացել վերջինիս առողջական վիճակի մասին առ այն, որ նա վիրահատվել է, նրա ձախ կողմում պարկ է առկա, որի մեջ է նրա աղին, բացի այդ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուն պես Ա.Աղաջանյանը պահանջել է շտապօգնություն հրավիրել: Գործի այս փաստական հանգամանքները համադրելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սույն որոշման 12.1-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետության պոզիտիվ պարտականությունն է հանդիսացել ապահովելու իր վերահսկողության ներքո, փակ տարածքում, առողջական վիճակով պայմանավորված արդեն իսկ խոցելի իրավիճակում գտնվող Ա.Աղաջանյանի պաշտպանությունը: Այս առումով կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ նշված պարտականության կատարումն ապահովելու համար պետության ներկայացուցիչները՝ ի դեմս քրեակատարողական հիմնարկի ծառայողների, պետք է անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերեն քրեակատարողական հիմնարկ ընդունվող անձանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի առումով: Ինչպես նշվել է ՄԱԿ-ի խոշտանգումների վերաբերյալ Հատուկ զեկուցողի թեմատիկ զեկույցում՝ տարածված պրակտիկա են կալանավայրերում նոր կալանավորների նկատմամբ տարբեր կերպ

⁷³⁶ Տե՛ս սույն որոշման 12.1-րդ կետը:

արտահայտվող չարաշահումները՝ «ընդունելության հատուկ վերաբերմունք» ցույց տալու և վերջիններիս իրենց ենթարկեցնելու համար⁷³⁷, որպիսի մոտեցումն անընդունելի է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համատեքստում,

- տուժողի նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի բնույթը, եղանակը, դրա արդյունքում վերջինիս մոտ առաջացած առողջական և հոգեբանական հետևանքները. դատաբժշկական փորձաքննության թիվ 0467 եզրակացության համաձայն՝ Ա.Աղաջանյանի մարմնական վնասվածքները՝ **աջ և ձախ այտային շրջանների, ձախ սրունքի շրջանների քերծվածքների, վերին շրթունքի շրջանի սալջարդ վերքի ձևով, հասցվել են՝ բութ, կոշտ առարկաներով, չի բացառվում նաև՝ ձեռքերով, ոտքերով, հնարավոր է՝ որոշման մեջ նշված ժամկետին, որոնք առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում**⁷³⁸: Դեպքից մի քանի օր անց՝ 2018 թվականի մարտի 19-ին, Ա.Աղաջանյանը գրավոր դիմում է ներկայացրել քրեակատարողական հիմնարկի պետին և հայտնել, որ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների կողմից իրեն դաժանաբար ծեծի ենթարկելու և բուժօգնություն չցուցաբերելու կապակցությամբ հայտարարում է հացադուլ և ջրադուլ: Ավելին, գործի քննության ընթացքում մահացած տուժող Ա.Աղաջանյանի նախաքննական ցուցմունքի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների կողմից իր նկատմամբ գործադրված բռնությունը, ծառայել է իրեն նվաստացնելու և պատժելու միջոց⁷³⁹:

Գործի փաստական հանգամանքների համատեքստում Վճռաբեկ դատարանի համար ընդունելի չէ ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալ Ա.Հովհաննիսյանի արարքը խոշտանգումից որպես բռնության գործադրմամբ զուգորդված պաշտոնեական լիազորությունների անցում վերաորակելու հիմքում դրվող այն փաստարկը, թե *ծեծի ընթացքում հայրուկ միջոցներ չեն կիրառվել, ծեծը չի ուղեկցվել մշակված հայրուկ մեթոդների կիրառմամբ, դաժան վերաբերմունքը տևել է ոչ ավել քան երկու րոպե, ինչը երկարատև չի կարելի համարել, դաժան վերաբերմունքը չի կրկնվել, չի կիրառվել ընդհարումներով, Ա.Աղաջանյանին հասցված վնասվածքներն ուղղված չեն եղել որովայնի շրջանին, հասցված վնասվածքներն առողջության թեթև վնասի հարկանիշներ չեն պարունակել, իսկ քրեական հետապնդումը իրականացնող մարմնի կողմից տուժողի հոգեկան վիճակը պարզելու համար դատահոգեբանական փորձաքննություն չի նշանակվել, հետևաբար՝ չկան տվյալներ հետևանքների կարճարևության կամ երկարատևության մասին*: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հանգամանքներն իրենց համակցության մեջ չեն կարող բացառել քրեաիրավական իմաստով խոշտանգման հանցակազմի հատկանիշների առկայությունը, խոշտանգման

⁷³⁷ Տե՛ս ՄԱԿ-ի խոշտանգումների, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ այլ պատժի վերաբերյալ Հատուկ զեկուցողի 2010 թվականի փետրվարի 5-ի թեմատիկ զեկույցը, A/HRC/13/39/Add.5, կետ 69:

⁷³⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 11-39:

⁷³⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 11-39:

արդյունքում անձի առողջությանը կարող է նույնիսկ առհասարակ վնաս չպատճառվել, տվյալ դեպքում կարևոր է ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեկան ուժեղ տառապանքի պատճառումը: Նշված հատկանիշի բովանդակությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Էրիկ Եղիսյանի* գործով կայացված որոշմամբ, որտեղ միջազգային չափորոշիչների հաշվառմամբ, ի թիվս այնի, ընդգծվել է, որ «ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեկան ուժեղ տառապանքի» այլընտրանքային հետևանքների առաջացումը գնահատելիս պետք է հաշվի առնել, որ **ցավի առկայությունը չի պահանջում, որ պարտադիր այն լինի ծայրահեղ, երկար, մշտական, սուբյեկտի համար դժվար դիմանալու, չպետք է ներառի մահ, օրգանի անբավարարություն կամ որոշակի ֆունկցիայի լուրջ խանգարում, ուժեղ ցավը կարող է նաև կարճատև լինել**⁷⁴⁰: Նշված դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ Վճռաբեկ դատարանի համար անընդունելի է նաև Առաջին ատյանի դատարանի այն պնդումը, թե *ցուցաբերված վերաբերմունքը չի վնասել Արմեն Աղաջանյանի ֆիզիկական, հոգեկան և հոգեբանական վիճակը, քանի որ հսկատակ դեպքում նա չէր բարձրաձայնի այդ մասին*, որպիսի դիրքորոշումն ըստ էության ընդունելի է համարել նաև Վերաքննիչ դատարանը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հանցանքի կատարման մասին տուժողի կողմից իրավասու մարմիններին հայտնելը չի կարող որևէ կերպ վկայել այն մասին, որ տուժողի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը չի վնասել նրա ֆիզիկական, առավել ևս՝ հոգեկան և հոգեբանական վիճակը: Նշված մոտեցումը բացարձակապես անընդունելի է և ողջամտորեն չի կարող օգտագործվել դատարանի կողմից որպես դատական ակտի պատշաճ պատճառաբանություն:

Ինչ վերաբերում է դեպքից հետո քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից *Ա.Աղաջանյանին լվացվելու ուղեկցելուն, նրա հետ հանգիստ պայմաններում գրուցելուն, վերջինիս նկատմամբ վատ վերաբերմունքի որևէ դրսևորում այլևս չկատարելուն, սակայն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցանքի կատարմանը հաջորդող նշված հանգամանքները որևէ կերպ չեն կարող անդրադառնալ ամբաստանյալին մեղսագրվող արարքի քրեաիրավական որակման վրա: Ամբաստանյալի հետհանցավոր վարքագիծը՝ արտահայտված ամբաստանյալի նկատմամբ դրսևորած վերաբերմունքից հետո նրան լվացվելուն ուղեկցելու կամ առանց բռնության գործադրման գրուցելու (ինչը կարող էր նաև հետապնդել ամբաստանյալի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը թաքցնելու, քողարկելու նպատակ, որպիսի դատողությունը պայմանավորված է նաև հետագայում խոշտանգման դեպքը թաքցնելու խմբային շահերից ելնելով, մի խումբ պաշտոնատար անձանց կազմում պաշտոնեական կեղծիք կատարելու հանգամանքով) կամ կրկին վատ վերաբերմունք չդրսևորելու ձևով չէր կարող որևէ կերպ ազդել ամբաստանյալին մեղսագրված արարքի քրեաիրավական որակման վրա:*

⁷⁴⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էրիկ Եղիսյանի* գործով 2021 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ ԼԴՆ/0030/01/16 որոշումը, կետ 19:

17. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ խոշտանգման հանցակազմի պարտադիր հատկանիշներից է օրենսդրի կողմից նախատեսված հատուկ նպատակների առկայությունը, որոնք նաև համապատասխանում են ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված նպատակներին: Դրանց շարքում ներառված է նաև *այն արարքի համար պարժեղու նպատակը, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ նա կասկածվում կամ մեղադրվում է*: Այս նպատակի բովանդակության առումով Վճռաբեկ դատարանի համար ընդունելի է Վերաքննիչ դատարանի անհամաձայնությունն Առաջին ատյանի դատարանի այն պնդման հետ, որ արարքը որպես խոշտանգում որակելու համար անհրաժեշտ է նաև, որ ամբաստանյալն այդ բռնությունը գործադրի այնպիսի արարքի համար տուժողին պատժելու նպատակով, որը վերջինս կատարել է և այդպիսի արարք կատարելու հանգամանքը կամ փաստը պետք է հաստատված լինի համապատասխան ընթացակարգերով: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդպիսի պահանջը չի համապատասխանում ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածում և ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածում նշված նպատակի բովանդակությանը: Խնդրո առարկա նպատակի իմաստով «արարք»-ը ենթադրում է ցանկացած վարքագծային դրսևորման ակտ, որը պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի մոտ առաջացնում է այդպիսի վարքագիծ դրսևորած անձին խոշտանգելու միջոցով պատժելու նպատակ: Պետական մարմնի ներկայացուցիչն իր դրսևորած վերաբերմունքով պետք է նպատակ հետապնդի իր առավելությունն ընդգծել անձի նկատմամբ, ցուցադրել իր գերակա դիրքը՝ տուժողին հնազանդեցնելու, իրեն ենթարկեցնելու նպատակով: Միաժամանակ, հարկ է նշել, որ խոշտանգման հանցակազմի հատկանիշների առկայության համար պարտադիր կերպով տուժողի դրսևորած վարքագծի ընթացակարգային ամրագրման որևէ պահանջ նախատեսված չէ, այս առումով նախադատելի նշանակություն ունեցող պայմանի նախատեսումը չի բխում խոշտանգման դիսպոզիցիայի պահանջներից:

Վերոգրյալի հաշվառմամբ, սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի դատական ակտում տեղ գտած դիրքորոշումը, որով անընդունելի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին հակասող է համարվել Առաջին ատյանի դատարանի հետևությունն առ այն, որ տեղի ունեցած բռնությունը խոշտանգում որակելու համար անհրաժեշտ պայման է, որ դեպքին նախորդած լինի տուժողի կողմից այնպիսի հակաօրինական արարքի կատարումը, որը հաստատված է համապատասխան ընթացակարգով:

18. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Հովհաննիսյանի արարքը վերաորակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

19. Ուստի, հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Հովհաննիսյանին մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետից նույն օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով վերադրակելու մասով Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելիս՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել խոշտանգման հանցակազմի հատկանիշները, ինչպես նաև պատշաճ գնահատման չի ենթարկել գործով ձեռքբերված ապացույցները: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածներով նախատեսված՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և հիմք են ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, արարքի քրեաիրավական որակման հարցում պետք է հանգի համապատասխան հետևության:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարության տվյալ փուլում չհեռանալու մասին ստորագրությունը կարող է լինել պատշաճ երաշխիք՝ ամբաստանյալ Ա.Հովհաննիսյանի՝ ազատության մեջ գտնվելու դեպքում նրա հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծը չեզոքացնելու համար: Ուստի, ամբաստանյալ Ա.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց պետք է ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Արմեն Զիվանի Հովհաննիսյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 26-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

47.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ-11

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորները</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի հոկտեմբերի 22-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով Կարեն Ծերունի Ալավերդյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 10-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում 2020 թվականի մարտի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 57102920 քրեական գործը:

2020 թվականի մարտի 5-ին Կարեն Ալավերդյանը ձերբակալվել է:

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա.Մարտիրոսյանի՝ 2020 թվականի մարտի 5-ի որոշմամբ միջնորդություն է հարուցվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ թույլատրելու Կարեն Ալավերդյանի նկատմամբ ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի

աշխատասենյակում և ոստիկանության Վաղարշապատի ձերբակալված անձանց ձերբակալվածներին պահելու վայրի (այսուհետ նաև՝ ՁՊՎ) թիվ 2-րդ խցում իրականացնել «Ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառում՝ երկու ամիս ժամկետով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 5-ի որոշմամբ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա.Մարտիրոսյանի միջնորդությունը բավարարվել է, թույլատրվել է Կ.Ալավերդյանի նկատմամբ Վաղարշապատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակում և ոստիկանության Վաղարշապատի ՁՊՎ-ի թիվ 2-րդ խցում իրականացնել «Ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառում՝ 3-օրյա ժամկետով:

2. Առաջին ատյանի դատարանի վերոգրյալ որոշման դեմ Կ.Ալավերդյանի պաշտպան Կ.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 5-ի որոշումը և ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա.Մարտիրոսյանի «Ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը՝ մերժել:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ վարույթ է ընդունվել: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ սահմանել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

4. Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել մեղադրյալ Կ.Ալավերդյանը և պաշտպան Կ.Հակոբյանը՝ խնդրելով մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը, քանի որ այն անհիմն է, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 10-ի որոշումն օրինական է և հիմնավոր:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. «Ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման համաձայն՝ «Հայրնվում է, որ 2020 թվականի մարտի 5-ին ժամը 02 :15-ի սահմաններում Արմավիրի մարզի Աղավնասարոն գյուղի Բ.Ներսիսյան փող. 30 փան դիմաց անհայր անձը նշված հասցեի բնակիչ, 08.08.1984թ. ծնված Հարություն Հարությունյանի և վերջինին պարկանող Զիպ մակնիշի T790 MB 777 ՌԴ համարանիշներով ավտոմեքենայի ուղղությամբ ինքնաձիգից անկանոն կրակոցներ է արձակել և Հ.Հարությունյանին նստիսական սխտորոշմամբ որովայնի շրջանում հրազենային թափանցող վնասվածք է պատճառել:

Փաստի առթիվ ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում 05.03.2020թ. ՀՀ քր. օր.-ի 34-104-րդ հոդվածի 1-ին մասի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 57102920 քրեական գործը:

Նշված արարքը ըստ ՀՀ քր. օր.-ի 19-րդ հոդվածի դասվում է սուսնձնապես ծանր հանցագործությունների շարքին:

Ոստիկանության Վաղարշապատի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ նշված հանցագործությունը կատարել է Կարեն Ծերունի Ալավերդյանը, ծնված 14.01.1986թ. քնակվող Ա/մ Աղավնասյուն գյուղ Հարավ-Արևմտյան շրջ. 2 փ. հասցեում և 05.03.2020թ. ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժնից ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Վաղարշապատի բաժնի ստացվել է քննչական հանձնարարություն՝ հնարավորության դեպքում վերջինիս նկատմամբ իրականացնել հետախուսային խոսակցությունների վերահսկում, ներքին դիտում և արդարքին դիտում ՕՀ միջոցառումներ:

Վերոգրյալի մասին զեկուցելով և ղեկավարվելով՝ Օպերատիվ-հետախուսական գործունեության մասին՝ ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Պ.Օրդյանը հիմնավորված միջնորդություն է ներկայացրել Կ.Ալավերդյանի նկատմամբ ներքին դիտում օպերատիվ-հետախուսական միջոցառում իրականացնելու ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետի օ/գ տեղակալի աշխատասենյակում և ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ-ի թիվ 2 խցում ՏՆերքին դիտում, օպերատիվ-հետախուսական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու նպատակով դադարան դիմելու վերաբերյալ:

քննարկելով միջնորդությունը և կից նյութերը, ինչպես նաև նկատի ունենալով, որ այլ եղանակով անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է և Կարեն Ծերունի Ալավերդյանի նկատմամբ ՏՆերքին դիտում, օպերատիվ-հետախուսական միջոցառման անցկացմամբ կարող են ստացվել հիշյալ տեղեկատվությունը հիմնավորող տվյալներ (...)⁷⁴¹:

6. Առաջին առյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 5-ի որոշման համաձայն՝ «(...) [Ե]/նելով մասնավոր և հանրային շահերի անհրաժեշտ հավասարակշռման անհրաժեշտությունից և նկատի ունենալով, որ այլ եղանակով անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է, և Կ.Ալավերդյանի նկատմամբ ՏՆերքին դիտում, օպերատիվ-հետախուսական միջոցառման անցկացմամբ կարող են ստացվել հիշյալ տեղեկատվությունը հիմնավորող տվյալներ, ինչը կնպաստի ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ ծանր հանցագործության (հայրնաբերմանը, բացահայրմանը, կանխմանը, խախտմանը), դադարանը գրնում է, որ միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման (...)⁷⁴²:

⁷⁴¹ Տե՛ս նյութեր, թերթ 3-4:

⁷⁴² Տե՛ս նյութեր, թերթ 7-8:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Մույն գործի (...) հանգամանքները գնահատելով (...) ՀՀ վճռաբեկ դատարանի նախատեպային որոշման լույսի ներքո վերաքննիչ դատարանը փաստում է, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է դրա բնույթին և նպատակային նշանակությանը ոչ համապատասխան: Մասնավորապես, վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ՝

- միջնորդություն է ներկայացվել քննարկվող միջոցառումը ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակում և ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ-ի թիվ 2-րդ խցում իրականացնելու վերաբերյալ, որպիսի պայմաններում Կ.Ալավերդյանի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի նկատմամբ միջամտություն տեղի չի ունեցել, ինչը բնորոշ է «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանը: Այլ կերպ Կ.Ալավերդյանը, գրնվելով ոստիկան պաշտոնատար անձի աշխատասենյակում և ՁՊՎ-ի թիվ 2 խցում, չի ունեցել և չէր կարող ունենալ ողջամիտ ակնկալիք իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ: Եման պայմաններում, նրա նկատմամբ չէր կարող իրականացվել մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը սահմանափակող «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակը չի տեղավորվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով սահմանված «քնակարան» հասկացության շրջանակներում:

- Առաջին արյանի դատարանը, «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու միջնորդությունը քննության առնելիս, քննարկման առարկա չի դարձրել այն հարցը, թե արդյոք բացակայում են անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակով նույն տեղեկությունների ձեռքբերման այլ միջոցներ, իսկ միջնորդությանը էլ չեն ներկայացվել բավարար փաստական տվյալներ առ այն, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է: Միջնորդություն ներկայացրած մարմինը և Առաջին արյանի դատարանը բավարարվել են միայն այլ եղանակով տեղեկատվության ձեռքբերման անհնարինության մասին ձևական մատուցմանը առանց համապատասխան փաստական հիմքի, ինչն էլ հանգեցրել է մեղադրյալ Կ.Ալավերդյանի իրավունքների անհարկի սահմանափակման (...)»⁷⁴³:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է անհիմն, չպատճառաբանված որոշում, որով խախտվել են ՀՀ քրեական

⁷⁴³ Տե՛ս նյութեր, թերթեր 35-45:

դատավարության օրենսգրքի 284-րդ, 289-րդ հոդվածների, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ, 31-րդ հոդվածների պահանջները, մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, նեղ մեկնաբանելով «բնակարան» հասկացությունը, եկել է սխալ եզրահանգման, ըստ էության, փաստելով, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումը պետք է իրականացվի այնպիսի վայրում, որը բնակարան կհանդիսանա այն անձի համար, ում նկատմամբ պետք է իրականացվի համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումը:

9. Ըստ բողոքաբերի՝ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում կարելի է իրականացնել ոչ թե այն վայրում, որը բնակարան կհանդիսանա այն անձի համար, ում նկատմամբ պետք է իրականացվի օպերատիվ-հետախուզական միջոցառումը, այլ այն վայրում, որը հանդիսանում է բնակարան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով, այլ կերպ ասած՝ այնպիսի վայրում, որը նախատեսված կլինի նույն օրենսգրքի 6-րդ հոդվածով:

10. Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը հիմնավորել է բացառապես *Գոռ Սարգսյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման մեջ արտահայտած իրավական մեկնաբանությունները մեջբերելով, սակայն անտեսել է ամենակարևոր հանգամանքը՝ այն, որ նշված որոշման մեջ Վճռաբեկ դատարանը «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումն անթույլատրելի է ճանաչել ոչ թե այն պատճառով, որ այն իրականացվել է բնակարան չհանդիսացող վայրում, այլ՝ այն պատճառաբանությամբ, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը ոստիկանության աշխատակցի աշխատասենյակում իրականացվել է ոչ թե օրենքով սահմանված՝ որոնողական-հետախուզական բնույթին համապատասխան երևույթների և դեպքերի օբյեկտիվ ընթացքը վերահսկելու, այլ, ըստ էության, հարցաքննության եղանակով Գ.Սարգսյանից գործի համար նշանակություն ունեցող տեղեկությունների ստացման գործընթացը գաղտնի տեսաձայնագրելու նպատակով:

11. Բողոքաբերը նկատել է, որ չնայած այն հանգամանքին, որ միջնորդությունը վերաբերել է երկու տարբեր վայրերում օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելուն, Վերաքննիչ դատարանն, ըստ էության ՁՊՎ խցում օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասն ամբողջությամբ անտեսել է և առանց քննարկման առարկա դարձնելու՝ մեխանիկորեն մերժել է նաև ՁՊՎ խցում օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու միջնորդությունը:

12. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 5-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Կ.Ալավերդյանի նկատմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն իրավաչափ չէ:

14. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ներքին դիրումը բնակարանում հայրուկ և այլ տեղանիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիրման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:*

2. Սույն օրենքում բնակարան հասկացությունը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով»:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«[Ներքին դիրում, նանակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում] օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր սպասույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված ինտիմների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետի համաձայն՝ *«բնակարան՝ շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության համար (...): «Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր ավտոմեքենան, գերային կամ ծովային նավը, ինչպես նաև ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը»:*

15. Վճռաբեկ դատարանը «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանն առնչվող օրենսդրական նորմերի մեկնաբանման և կիրառման առանձնահատկություններին անդրադարձել է *Գոռ Սարգսյանի* գործով, քրեական գործի քննության շրջանակներում ապացույցների համակողմանի գնահատման արդյունքում արձանագրելով, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել էր ոչ թե օրենքով սահմանված՝ որոնողական-հետախուզական բնույթին համապատասխան երևույթների և դեպքերի օբյեկտիվ ընթացքը վերահսկելու, այլ, ըստ էության, հարցաքննության եղանակով վարույթն իրականացնող մարմին կամավոր ներկայացած

Գ.Սարգսյանից գործի համար նշանակություն ունեցող տեղեկությունների ստացման գործընթացը գաղտնի տեսաձայնագրելու նպատակով: Այսինքն՝ տվյալ գործով «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակում փաստացի իրականացվել էր քողարկված հարցաքննություն՝ արժանահավատության բարձր աստիճան ունեցող ապացույց ձեռքբերելու նպատակով՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ հարցաքննության դատավարական կարգի այնպիսի առանցքային պահանջներ, ինչպիսիք են՝ հարցաքննվող անձին իր իրավունքները և պարտականությունները, այդ թվում՝ լուելու, իրավաբանական օգնություն ստանալու հիմնարար իրավունքները պարզաբանելը, ինչպես նաև տեխնիկական միջոցների կիրառման մասին տեղեկացնելը՝ անձին իրավունք վերապահելով այդ առնչությամբ ներկայացնելու իր դիտողություններն ու հայտարարությունները:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ քննարկվող միջոցառումն իրականացվել էր ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակում, որպիսի պայմաններում Գ.Սարգսյանի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի նկատմամբ միջամտություն տեղի չի ունեցել, ինչը բնորոշ է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանը: Այսպես, Գ.Սարգսյանը գտնվելով ոստիկանության պաշտոնատար անձի աշխատասենյակում՝ չի ունեցել և չէր էլ կարող ունենալ ողջամիտ ակնկալիք իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ: Նման պայմաններում, նրա նկատմամբ չէր կարող իրականացվել մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը սահմանափակող «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը⁷⁴⁴:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- 2020 թվականի մարտի 5-ին Նախաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 57102920 քրեական գործը,

- ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ Պ.Օրդյանի տեղեկանքի համաձայն՝ օպերատիվ աղբյուրից ստացվել են տեղեկություններ այն մասին, որ 2020 թվականի մարտի 5-ին՝ ժամը 02:15-ի սահմաններում, Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղի Բ.Ներսիսյան փող. 330 տան դիմաց նշված հասցեի բնակիչ, 08.08.1984թ. ծնված Հարություն Հովհաննեսի Հարությունյանի և վերջինին պատկանող «Ջիպ» մակնիշի T790N46 777 ՌԴ համարանիշերով ավտոմեքենայի ուղղությամբ ինքնաձիգից անկանոն կրակոցներ է արձակել և Հ.Հարությունյանին նախնական ախտորոշմամբ

⁷⁴⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի Գոռ Սարգսյանի գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԿԴ/0229/01/16 որոշումը, 18-19-րդ կետեր:

որովայնի շրջանում հրազենային թափանցող վնասվածք է պատճառել նույն գյուղի բնակիչ, 14.01.1986թ. ծնված Կարեն Ծերունի Ալավերդյանը,

- ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա.Մարտիրոսյանի՝ 2020 թվականի մարտի 5-ի որոշմամբ միջնորդություն է հարուցվել Առաջին ատյանի դատարան՝ թույլատրելու Կարեն Ալավերդյանի նկատմամբ ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակում և ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ-ի թիվ 2 խցում իրականացնել «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում՝ երկու ամիս ժամկետով⁷⁴⁵,

- Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 5-ի որոշմամբ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա.Մարտիրոսյանի միջնորդությունը բավարարվել է, թույլատրվել է Կարեն Ալավերդյանի նկատմամբ Վաղարշապատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակում և ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ-ի թիվ 2 խցում իրականացնել «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում՝ 3-օրյա ժամկետով⁷⁴⁶,

- Վերաքննիչ դատարանը Վճռաբեկ դատարանի՝ *Գոռ Սարգսյանի* գործով նախադեպային որոշման լույսի ներքո փաստել է, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է դրա բնույթին և նպատակային նշանակությամբ ոչ համապատասխան՝ պատճառաբանելով, որ՝

ա) միջնորդություն է ներկայացվել քննարկվող միջոցառումը ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակում և ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ-ի թիվ 2-րդ խցում իրականացնելու վերաբերյալ, որպիսի պայմաններում Կ.Ալավերդյանի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի նկատմամբ միջամտություն տեղի չի ունեցել, ինչը բնորոշ է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանը: Այլ կերպ Կ.Ալավերդյանը, գտնվելով ոստիկան պաշտոնատար անձի աշխատասենյակում և ՁՊՎ-ի թիվ 2 խցում, չի ունեցել և չէր կարող ունենալ ողջամիտ ակնկալիք իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ: Նման պայմաններում, նրա նկատմամբ չէր կարող իրականացվել մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը սահմանափակող «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը:

բ) ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակը չի տեղավորվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով սահմանված «բնակարան» հասկացության շրջանակներում:

գ) Առաջին ատյանի դատարանը, «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու միջնորդությունը քննության

⁷⁴⁵ Տե՛ս նույն որոշման 5-րդ կետը:

⁷⁴⁶ Տե՛ս նույն որոշման 6-րդ կետը:

առնելիս, քննարկման առարկա չի դարձրել այն հարցը, թե արդյոք բացակայում են անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակով նույն տեղեկությունների ձեռքբերման այլ միջոցներ, իսկ միջնորդությամբ էլ չեն ներկայացվել բավարար փաստական տվյալներ առ այն, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է: Միջնորդություն ներկայացրած մարմինը և Առաջին ատյանի դատարանը բավարարվել են միայն այլ եղանակով տեղեկատվության ձեռքբերման անհնարինության մասին ձևական մատնանշմամբ առանց համապատասխան փաստական հիմքի⁷⁴⁷:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է որ *Գոռ Մարգարյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները չեն կարող մեխանիկորեն կիրառվել ոստիկանության աշխատակցի սենյակում «ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառման իրականացման հնարավորությունը բացառելու և դրա իրականացման թույլտվության յուրաքանչյուր որոշում ինքնին՝ բացառապես ոստիկանության աշխատակցի սենյակում իրականացնելու փաստով պայմանավորված ոչ իրավաչափ ճանաչելու համար: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ոստիկանության աշխատակցի սենյակում «ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառման իրականացման յուրաքանչյուր դեպքում *Գոռ Մարգարյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների կիրառելիությունը պետք է որոշվի ոչ թե *in abstracto*՝ զուտ ոստիկանության աշխատակցի սենյակում միջոցառումն իրականացնելու փաստի նույնացմամբ, այլ հիմնվի գործի նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա՝ *in concreto* փաստական հանգամանքների գնահատմամբ՝ պարզելով նաև, թե «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է արդյոք դրա բնույթին և նպատակային նշանակությանը համապատասխան, թե՛ ոչ:

Անդրադառնալով *Գոռ Մարգարյանի* գործի փաստական հանգամանքներին՝ հարկ է նշել, որ դրանցից ակնհայտորեն բխում էր, որ «ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառումն իրականացվել էր հանրային իրավահարաբերությունների պայմաններում, երբ իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցն իր աշխատասենյակում քողարկված հարցաքննություն էր իրականացրել վարույթն իրականացնող մարմին կամավոր ներկայացած մեղադրյալի հետ, որպիսի հանգամանքներում վերջինս չուներ և չէր կարող ունենալ ողջամիտ ակնկալիք իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ:

⁷⁴⁷ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Մինչդեռ, սույն գործով Վերաքննիչ դատարանը, առանց *in concreto* գնահատելու ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակում վերահսկման ենթարկվող անձանց իրավահարաբերությունների բնույթը, զուտ ոստիկանության աշխատակցի սենյակում իրականացնելու փաստով պայմանավորված՝ անթույլատրելի է ճանաչել այդ սենյակում «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը՝ գտնելով, որ Կ.Ալավերդյանի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի նկատմամբ միջամտություն տեղի չի ունեցել, ինչը բնորոշ է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանը: Ընդ որում, ի տարբերություն *Գոռ Մարգարյանի* գործի, տվյալ գործով Վերաքննիչ դատարանը չի ունեցել անհրաժեշտ տվյալներ այդպիսի հանգամանքների ամբողջությունը գնահատելու և նման եզրահանգում կատարելու համար:

Բացի այդ, անընդունելի է նաև Վերաքննիչ դատարանի պնդումն այն մասին, որ ոստիկանության աշխատակցի աշխատասենյակը չի տեղավորվում ՀՀ քրեական դատավարության 6-րդ հոդվածի իմաստով «բնակարան» հասկացության շրջանակներում: Մասնավորապես, ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի կարգավորումից «բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև ծառայողական և անձնական աշխատասենյակը: Այս առումով կարևոր է նկատի ունենալ, որ աշխատասենյակը, իսկ տվյալ դեպքում՝ ոստիկանության աշխատակցի աշխատասենյակը, որպես բնակարան դիտարկելու հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել ոչ թե կոնկրետ անձին այն հատկացված լինելու իրավական հիմքերի առկայությունը, այլ փաստացի այդ տարածքը զբաղեցնելու, դրա հետ որոշակի կապեր ունենալու, այդ տարածքում ծավալվող իրավահարաբերությունների բնույթը բնութագրող հանգամանքները, որոնց ուժով անձը կարող է ունենալ մասնավոր կյանքի անձեռնմխելիության որոշ երաշխիքների լեգիտիմ ակնկալիք⁷⁴⁸ (օրինակ՝ ոստիկանության աշխատակցի սենյակում իրականացվող «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ կարող է վերահսկվել, թե ինչպես է ոստիկանության աշխատակիցը շահադիտական նպատակով իր գործընկերոջը դրդում պաշտոնական փաստաթղթում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնել): Հետևաբար, Վերաքննիչ դատարանի դատողությունն այն մասին, որ ոստիկանության աշխատակցի աշխատասենյակը չի տեղավորվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի իմաստով «բնակարան» հասկացության շրջանակներում, իրավաչափ չէ:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության որոշ երաշխիքների լեգիտիմ ակնկալիքի վերաբերյալ վերը արտահայտված դիրքորոշումները *mutatis mutandis* վերաբերելի են նաև ձերբակալվածների պահման վայրում «ներքին դիտում»

⁷⁴⁸ Տե՛ս *mutatis mutandis*, «Հայփոսթ» ՓԲԲ-ի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ՇԴ/0525/07/18 որոշումը, կետ 16:

օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման նկատմամբ: Այս առումով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ձերբակալվածների պահման վայրում անձի՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության երաշխիքները չեն կարող լիարժեքորեն նույնացվել անձի՝ բնակարանում ունեցած անձեռնմխելիության երաշխիքների հետ, սակայն ձերբակալվածների պահման վայրում այդպիսի երաշխիքների նվազագույն ընկալման հնարավորությունն առհասարակ բացառվել չի կարող: Ուստի, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում՝ «ներքին դիտում» և «արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների հարաբերակցության առումով ձերբակալվածների պահման վայրում վերահսկողություն կարող է իրականացվել անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության նկատմամբ միջամտող՝ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման միջոցով: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի դատողությունն այն մասին, որ ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի ձերբակալվածների պահման վայրի թիվ 2-րդ խցում «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում չէր կարող իրականացվել, քանի որ Կ.Ալավերդյանը խցում չի ունեցել և չէր կարող ունենալ ողջամիտ ակնկալիք իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ, հիմնավոր չէ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, թե «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու միջնորդությունը քննության առնելիս Առաջին ատյանի դատարանը քննարկման առարկա չի դարձրել այն հարցը, թե արդյոք բացակայում են անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակով նույն տեղեկությունների ձեռքբերման այլ միջոցներ, իսկ միջնորդությամբ էլ չեն ներկայացվել բավարար փաստական տվյալներ առ այն, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն հիմնավոր է և համահունչ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Dragojević v. Croatia* գործով հայտնած իրավական դիրքորոշմանը: Մասնավորապես, նշված գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում՝ նշելով, որ գաղտնի դիտում կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությամբ չէին ներկայացվել կատարված հանցագործության վերաբերյալ գործի փաստերի և կոնկրետ հանգամանքների վրա հիմնված փաստական մանրամասներ և չէր հիմնավորվել, որ նախաքննությունը չէր կարող իրականացվել այլ՝ ավելի նվազ միջոցներով⁷⁴⁹:

⁷⁴⁹ Տե՛ս *Dragojević v. Croatia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 68955/11, կետ 95:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում հարուցված է եղել քրեական գործ, Կ.Ալավերդյանը ձերբակալվածի կարգավիճակում գտնվել է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության ներքո, որպիսի պայմաններում նախաքննության մարմինը չի հիմնավորել այդ տեղեկությունները քրեադատավարական լայն գործիքակազմի կիրառմամբ ձեռք բերելու հնարավորության բացակայությունը: Փոխարենը վարույթն իրականացնող մարմինը բավարարվել է այդ տեղեկությունների ձեռքբերման անհնարինության մասին ձևական նշումով:

Վերոգրյալի համատեքստում, հարկ է նաև նշել, որ թեև Վերաքննիչ դատարանն անդրադարձել է համաչափության սկզբունքի պահպանման տեսանկյունից Կ.Ալավերդյանի նկատմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման իրավաչափությանը, սակայն մինչ այդ պատշաճ իրավական գնահատման չի արժանացրել գործի փաստական հանգամանքները՝ խնդրո առարկա օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ հետապնդվող նպատակի լեգիտիմության առումով: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի փաստական հանգամանքներից պարզ է դառնում, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու միջնորդության մեջ իրավասու մարմինը որևէ կերպ չի հիմնավորել, թե ո՞րն է եղել «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման նպատակը, ո՞ր փաստական տվյալների պայմաններում է անհրաժեշտ դարձել «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը և հնարավոր ի՞նչ հանգամանքների պարզման ակնկալիք է ունեցել իրավասու մարմինը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հաշվի առնելով «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ իրականացվող միջամտության էապես բարձր աստիճանը, անընդունելի է առանց այդպիսի անհրաժեշտության հիմնավորման, նշված միջոցառման իրականացումը՝ զուտ գործի քննության լրիվությունն ապահովելու նկատառումներով: Նշվածի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման միայն լեգիտիմ նպատակի առկայության պարագայում է, որ դատարանը կարող է պատշաճ գնահատման ենթարկել խնդրո առարկա միջամտության համաչափությունն այդ նպատակի համեմատ:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ վերը արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Կ.Ալավերդյանի նկատմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու վերաբերյալ Առաջին ստյանի դատարանի որոշումն իրավաչափ չէ, հիմնավոր է:

19. Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ թեև դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը, սակայն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ թույլ տրված խախտումը չի ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Հետևաբար վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Կարեն Ծերունի Ալավերդյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 10-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

48.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0280/01/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի նոյեմբերի 2-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ամբաստանյալ Մայիս Հովսեփի Արզումանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ճանապարհատրանսպորտային պատահարների գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքում, 2018 թվականի նոյեմբերի 25-ին, հարուցվել է թիվ 60192818 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ Մայիս Հովսեփի Արզումանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել՝ չհեռանալու մասին ստորագրություն:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ Մ.Արզումանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի մարտի 2-ի որոշմամբ մեղադրյալ Մ.Արզումանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2020 թվականի մարտի 19-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետև՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռով Մայիս Արզումանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Մ.Արզումանյանի և նրա պաշտպան Ա.Բաբայանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետև՝ նաև Վերաքննիչ դատարան), 2021 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ ամբաստանյալ Մ.Արզումանյանի և նրա պաշտպանի բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճիռը պատժի մասով բեկանել և փոփոխել է, Մ.Արզումանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով: Մ.Արզումանյանի վարքի վերահսկողությանը դրվել է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության համապատասխան տարածքային մարմնի վրա:

Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Ամբաստանյալ Մ.Արզումանյանի պաշտպան Ն.Ալոյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան խնդրելով՝ մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Մայիս Արզումանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «2018 թվականի նոյեմբերի 22-ին՝ ժամը 23:50-ի սահմաններում, «Նիսասն» մակնիշի 01 RR 043 հ/հ

ավերումը ենթան վարել է Երևան քաղաքի Բարայան փողոցի կողմից՝ Ազատության փողոցային՝ ավերումը ենթանների համար նախատեսված գեյմինգումով դեպի Պ.Սևակ փողոցի ուղղությամբ, մոտ 50-55 կմ/ժամ արագությամբ, աջ պարից մոտ 0,5մ հեռավորությամբ: Հասնելով գեյմինգման վերջնամասին՝ թույլ է փվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1 կետի ա) ենթակետի, 23-րդ հոդվածի 3 կետի, 24-րդ հոդվածի 7 կետի ա) ենթակետի, ինչպես նաև Ճանապարհային երթևեկության կանոնների ընդհանուր դրույթներ բաժնի 3-րդ կետի կանոնների պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ ավերումը ենթան վարելով 0,478 մգ/լ ալկոհոլային հարբածության վիճակում և երթևեկության ընթացքում զրուցելով իր կողքին նստած ուղևորի հետ՝ ուշադրությունը շեղել է երթևեկությունից, ինչի արդյունքում ավերումը ենթայի աջ անկյունային մասով վրատերթի է ենթարկել իր երթևեկության ուղղությամբ աջ պարի մոտ մաքրության աշխատանքներ իրականացնող Աստղիկ Սերյոժայի Առաքելյանին՝ ինքն իրեն զրկելով վրատերթը կանխելու փեխնիկական հնարավորությունից՝ անզուգուրությամբ նրան պարճատել մարմնական վնասվածքներ, որից 2018թ. նոյեմբերի 25-ին վերջինս մահացել է»⁷⁵⁰:

6. Առաջին առյանի դատարանն արձանագրել է հետևյալը. (...) «[Հ] աշվի առնելով՝ ամբաստանյալի կարարած հանցավոր արարքի բնույթն ու վրանգավորության աստիճանը, այդ թվում՝ հանցավոր արարքի կարարման եղանակը և հանգամանքները՝ ըստ առաջադրված մեղադրանքի, ամբաստանյալի՝ դարվածություն չունենալը, (...) ամբաստանյալի փարիքը՝ (24 փարեկան), այն, որ ամբաստանյալը բնութագրվում է դրական, (...) [ա]մբաստանյալի փարիժը մեղմացնող հանգամանքի առկայությունը, մասնավորապես այն, որ ամբաստանյալն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել, զղջացել և փվել խոստովանական ցուցմունքներ, ինչպես նաև փուժող կողմին պարճատված վնասը հարթելուն ուղղված գործողությունների կարարումը և փուժողի իրավահաջորդ Առն Նորիկի Սեյրանյանի՝ ամբաստանյալի դեմ բողոք չունենալը (...), [ա]մբաստանյալի պարասիանաարվությունը և փարիժը ճանրացնող հանգամանքի առկայությունը՝ հանցանքը ալկոհոլի ազդեցության փակ կարարելը:

(...)

Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Մայիս Հովսեփի Արզումանյանն իր կարարած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքի համար ենթակա է ազարագրկման՝ 1 (մեկ) փարի ժամկետով՝ զրկելով փրանսարորային միջոցներ վարելու իրավունքից 1 (մեկ) փարի ժամկետով:

(...)

⁷⁵⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 243-244:

Դատարանը, (...) հանգում է հետևության, որ Մայիս Հովսեփի Արզումանյանի ուղղվելը հնարավոր է միայն նշանակված պարիօժը կրելու պարագայում»⁷⁵¹:

7. Վերաքննիչ դատարանը, Մ.Արզումանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, իր որոշմամբ արձանագրել է. «(...) [Վ]երաքննիչ դատարանը հաշվի է առնում ամբաստանյալին վերագրվող հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանը և բնույթը, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները՝ երիտասարդ լինելը, դրական բնութագրվելը և նախկինում դատապարտված չլինելը, պարասխանաբարությունը և պարիօժը մեղմացնող հանգամանքները՝ հերհանցավոր դրական վարքագիծը՝ մեղադրանքը լիովին ընդունելը, խտրովյանական ցուցմունքներ փայլը, կատարած արարքի համար անկեղծորեն զղջալը, այս առումով Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն դեպքում գնահատման է արժանի նաև ամբաստանյալի կողմից տուժողին պարճատված վնասը հարթելուն ուղղված գործողությունների կատարումը և տուժողի իրավահաջորդ Լևոն Մեյրանյանի՝ ամբաստանյալի դեմ բողոք չունենալը, ինչը կատարված հանցագործության հանրային վրանգավորության աստիճանի վրա ազդող կարևոր գործոն է, ինչպես ամբաստանյալի պարասխանաբարությունը և պարիօժը ծանրացնող հանգամանքը՝ հանցանքը ակտիվ ազդեցության փակ կատարելը:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ նշված հանգամանքների համակցությունն էապես նվազեցնում է ինչպես ամբաստանյալ Մայիս Արզումանյանի, այնպես էլ նրա կատարած արարքի հանրության համար վրանգավորության աստիճանը, ինչպես նաև՝ նշված հանգամանքների համակցությունը վկայում է Մայիս Արզումանյանին ազատությունից զրկելու անսպասակախարմարության և առանց պարիօժը փաստացի կրելու պարճի նպարակներին հասնելու հնարավորության մասին, որը բխում է նաև պարիօժ նշանակելու կարևորագույն մարդասիրության սկզբունքի պահանջներից, իսկ պարիօժը պայմանականորեն չկիրառելու անթույլարբելիության վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի եզրահանգումը հիմնավորված չէ:

(...)

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին աստիճանի դատարանի կողմից հասարակված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս փոփոխելու կայացված դատական ակտը, այն է՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճիռը՝ պարճի կրման մասով բեկանելու, ամբաստանյալ Մայիս Արզումանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ազատազրկման ձևով նշանակված հիմնական պարիօժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելու և 2 (երկու) տարի ժամկետով փորճաշրջան սահմանելու (...)»⁷⁵²:

⁷⁵¹ Տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 80-84:

⁷⁵² Տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 176-188:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և խաթարել արդարադատության բուն էությունը:

Ըստ բողոքաբերի՝ ամբաստանյալ Մ.Արզումանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել կատարված արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են վերջինիս կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը, այն որ նա տրանսպորտային միջոցը վարել է ոչ սթափ վիճակում, որպիսի հանգամանքն առավել հավանական է դարձրել ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը, ինչպես նաև ճանապարհային երթևեկության կանոնների խախտման և հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

Մինչդեռ, ամբաստանյալ Մայիս Արզումանյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները պետք է կառուցվեին վերոնշյալ հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ մանրամասն վերլուծության արդյունքում:

Ըստ բողոքաբերի՝ կատարված արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող վերոնշյալ հանգամանքներն էականորեն բարձրացնում են հանցավորի անձի և կատարված արարքի վտանգավորությունը, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնված հանգամանքներն ինքնին չեն կարող բավարար լինել՝ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատժի նպատակների իրացմանը հասնելու համար: Հետևաբար բողոքաբերը հանգել է հետևության, որ Մ.Արզումանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

Միևնույն ժամանակ, բողոքաբերը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ կերպով վերլուծելով և գնահատման ենթարկելով գործում առկա՝ ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, մեղսագրվող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, ամբաստանյալ Մ.Արզումանյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցում հանգել է ճիշտ հետևության՝ իրավաչափորեն արձանագրելով, որ վերջինիս նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր

չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված պատժի նպատակներին:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք ամբաստանյալ Մ.Արզումանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածը սահմանում է. «1. Ավերտնոթիլի կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անվտանգությանը պարճատել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝ (...):

2. Նույն արարքը, որն անվտանգությանը առաջացրել է մարդու մահ (...):»:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ պատիժ նշանակելիս, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս հաշվի առնվող հանգամանքների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում ձևավորված իրավական դիրքորոշումները, Գազիկ Ղուկասյանի վերաբերյալ որոշման շրջանակներում փաստել է, որ վերոնշյալ հանցագործությունների վերաբերյալ գործերով «դատարանները, ի թիվս այլոց, պետք է հստակապես հաշվի առնեն՝

ա. հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները (...),

բ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը բացահայտելու համար դատարանները, յուրաքանչյուր դեպքում ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, պետք է գնահատման ենթարկեն, թե ճանապարհային երթևեկության կանոնների լրջապես խախտումը ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էր հավանական դարձնում ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պարճատելու հնարավորությունը (...): Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ, ի թիվս այլոց, լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոցը ոչ սթաիլ

վիճակում վարելը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը վրանագ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վրանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը: (...),

գ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Մասնավորապես Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում փաստել է, որ դատարանները հապուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե տրանսպորտային միջոցի վարորդը ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն արդյոք գիտակցաբար է թույլ տվել (...):

Ջարգացնելով սույն իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կարևոր նշանակություն ունի այն հարցի պարզումը, թե ճանապարհային երթևեկության կանոնները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-11-րդ հոդվածների իմաստով դիտարկությանը, թե անզուգուրության են խախտվել: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճանապարհային երթևեկության կանոնները դիտարկությանը խախտելը վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության հանրային վրանգավորության առավել բարձր աստիճանի մասին,

դ. հանրոքեն վրանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը (...),

ե. հանցագործությանը պարճատված վնասը (...),

զ. հանցանքի կատարումից անմիջապես հետո, ինչպես նաև հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում հանցավորի դրսևորած վարքագիծը (...):

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարած անձանց նկատմամբ պարճի տեսակի ու չափի, ինչպես նաև նշանակված պարճը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքների իրենց ամբողջության մեջ վերլուծության հիման վրա կառուցելն ունի առանձնապես կարևոր նշանակություն: Ուարի այդ հանգամանքները հաշվի չառնելը, դրանք անտեսելը կարող է հանգեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը (...)⁷⁵³:

⁷⁵³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գագիկ Ղուկասյանի գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0075/01/16 որոշման 13-14-րդ կետերը, ինչպես նաև, *mutatis mutandis*, տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արամ Սահակյանի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ/0003/01/10, Էդմոն Սասարյանի գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11, Արամյայի Հովհաննեսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14 որոշումները:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Արզումանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ.

- Նա «Նիսսան» մակնիշի ավտոմեքենան վարելով ավտոմեքենաների համար նախատեսված գետնանցումով դեպի Պ.Սևակ փողոցի ուղղությամբ, մոտ 50-55 կմ/ժամ արագությամբ, աջ պատից մոտ 0,5մ հեռավորությամբ և հասնելով գետնանցման վերջնամասին՝ թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1 կետի ա) ենթակետի, 23-րդ հոդվածի 3 կետի, 24-րդ հոդվածի 7 կետի ա) ենթակետի, ինչպես նաև Ճանապարհային երթևեկության կանոնների ընդհանուր դրույթներ բաժնի 3-րդ կետի կանոնների պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ ավտոմեքենան վարելով 0,478 մգ/լ ալկոհոլային հարբածության վիճակում և երթևեկության ընթացքում գրուցելով իր կողքին նստած ուղևորի հետ՝ ուշադրությունը շեղվել է երթևեկությունից, ինչի արդյունքում ավտոմեքենայի աջ անկյունային մասով վրաերթի է ենթարկել իր երթևեկության ուղղությամբ աջ պատի մոտ մաքրության աշխատանքներ իրականացնող Աստղիկ Առաքելյանին՝ ինքն իրեն գրկելով վրաերթը կանխելու տեխնիկական հնարավորությունից՝ անզգուշությամբ նրան պատճառել մարմնական վնասվածքներ, որից 2018 թվականի նոյեմբերի 25-ին վերջինս մահացել է⁷⁵⁴:

- Առաջին ատյանի դատարանը, Մ.Արզումանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, հաշվի է առել նրա կատարած հանցավոր արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, հանցավոր արարքի կատարման եղանակը և հանգամանքները, դատվածություն չունենալը, ամբաստանյալի տարիքը, դրական բնութագրվելը, պատիժը մեղմացնող հանգամանքի առկայությունը, այն, որ նա առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել, զոջացել և տվել խոստովանական ցուցմունքներ, տուժող կողմին պատճառված վնասը հարթելուն ուղղված գործողությունների կատարումը և տուժողի իրավահաջորդ Լ.Մեյրանյանի՝ ամբաստանյալի դեմ բողոք չներկայացնելը, ինչպես նաև ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքի առկայությունը՝ հանցանքն ալկոհոլի ազդեցության տակ կատարելը: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ Մ.Արզումանյանի նկատմամբ անհրաժեշտ է նշանակել ազատազրկման ձևով պատիժ, որը նա պետք է կրի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրացումն ապահովելու համար⁷⁵⁵:

- Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալ Մ.Արզումանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորության հարցը, արձանագրել է, որ Մ.Արզումանյանի

⁷⁵⁴ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁷⁵⁵ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ուղղվելը հնարավոր է առանց ազատագրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու, մասնավորապես հաշվի է առել ամբաստանյալին վերագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները՝ երիտասարդ լինելը, դրական բնութագրվելը, նախկինում դատապարտված չլինելը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները՝ հետհանցավոր դրական վարքագիծը՝ մեղադրանքը լիովին ընդունելը, խոստովանական ցուցմունքներ տալը, կատարած արարքի համար անկեղծորեն գղջալը, ամբաստանյալի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված գործողությունների կատարումը և տուժողի իրավահաջորդ Լ.Սեյրանյանի՝ ամբաստանյալի դեմ բողոք չունենալը, ինչպես նաև ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքը՝ հանցանքը ակտիվ ազդեցության տակ կատարելը⁷⁵⁶:

13. Նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Արզումանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական վերլուծության չի ենթարկել ամբաստանյալի կողմից կատարված հանցավոր արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող մի շարք գործոններ:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման և վերլուծության չի ենթարկել ամբաստանյալի կողմից թույլ տրված երթևեկության կանոնների խախտման բնույթը, ինչպես նաև դրանց արդյունքում վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքները: Այսպես՝ Մ.Արզումանյանն ավտոմեքենան վարելով 0,478 մգ/լ ալկոհոլային հարբածության վիճակում և երթևեկության ընթացքում գրուցելով իր կողքին նստած ուղևորի հետ՝ ուշադրությունը շեղել է երթևեկությունից, ինչի արդյունքում ավտոմեքենայի աջ անկյունային մասով վրաերթի է ենթարկել իր երթևեկության ուղղությամբ աջ պատի մոտ մաքրության աշխատանքներ իրականացնող Ա.Առաքելյանին՝ ինքն իրեն գրկելով վրաերթը կանխելու տեխնիկական հնարավորությունից՝ անզգուշությամբ նրան պատճառել մարմնական վնասվածքներ, որից 2018 թվականի նոյեմբերի 25-ին վերջինս մահացել է:

Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ վերոնշյալ հանգամանքներն էականորեն բարձրացնում են ինչպես հանցավորի, այնպես էլ կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը: Ուստի, նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի առնված հանգամանքներն ինքնին չեն կարող բավարար լինել՝ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատժի նպատակների իրացումն ապահովելու համար:

⁷⁵⁶ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

14. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Մ.Արզումանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, պատշաճ վերլուծության չի ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են վերջինիս կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը և դրանց արդյունքում վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքը, այն է՝ տուժողին անգոյություն մահ պատճառելը: Մինևույն ժամանակ, վերոնշյալի համատեքստում համարժեք գնահատականի չեն արժանացվել հանցավորի անձի և կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության աստիճանի մասին վկայող հանգամանքները:

Մինչդեռ, ամբաստանյալ Մ.Արզումանյանի նկատմամբ նշանակված պատժի տեսակի ու չափի, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները պետք է կառուցվեին վերոնշյալ հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ մանրամասն վերլուծության արդյունքում, իսկ դրանք անտեսելը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման:

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Մ.Արզումանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

16. Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում: Այսինքն, թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, որը հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճիռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Մայիս Հովսեփի Արզումանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 9-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

49.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0304/01/15

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի նոյեմբերի 2-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 19-ի որոշման դեմ ամբաստանյալ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի հունիսի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 15112615 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ու վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին:

2015 թվականի դեկտեմբերի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի հուլիսի 17-ի դատավճռով ամբաստանյալ Հ.Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Հ.Առաքելյանի պաշտպան Կ.Քալանթարյանի, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Լ.Մարկոսյանի, տուժողներ Շուշանիկ Մանիջյանի, Փարանձեմ Մուրադյանի, Նունե Արզումանյանի, Գայանե Ալաջյանի, Նաիրե Պետրոսյանի ներկայացուցիչ Վ.Զուռնայանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի մայիսի 19-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 17-ի դատավճիռը: «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ Հ.Առաքելյանն ազատվել է նշանակված պատժից, իսկ տուժողների կողմից ներկայացված քաղաքացիական հայցերը թողնվել են առանց քննության:

Վերաքննիչ դատարանի դատավոր Ն.Հովակիմյանը սույն գործով մնացել է հատուկ կարծիքի, նշելով որ գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցները բավարար չեն հաստատված համարելու, որ Հ.Առաքելյանը կատարել է իրեն մեղսագրված արարքը, հետևաբար Հ.Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում պետք է ճանաչել անմեղձ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճարել բողոքներ են ներկայացրել տուժողների ներկայացուցիչ Վ.Զուռնայանը և ամբաստանյալ Հ.Առաքելյանը: Ներկայացուցիչ Վ.Զուռնայանի վճարել բողոքը Վճարել դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ թողնվել է առանց քննության, իսկ ամբաստանյալ Հ.Առաքելյանի վճարել բողոքը, Վճարել դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճարել դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ սահմանվել է վճարել բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի հուլիսի 17-ի դատավճռով հաստատված է համարել, որ. «ամբաստանյալ Հասմիկ Առաքելյանը չունենալով մշտական աշխատանք որպես արհեստ, ամենեկան եկամուրներ ստանալու նպատակով, զբաղվել է վաշխատությանը, այն է՝ Երևան քաղաքի Ֆիրդուսի փողոցում գործող «Ֆիրդուսի» տոնավաճառում առևտրով զբաղվող Փարանձեմ Վաչագանի Մուրադյանից, Շուշանիկ Աշուրի Մանիջոյանից, Նահրա Թորոյի Գևորգյանից, Նահրե Գրիշայի Պետրոսյանից, Հայաստան Հրաչիկի Պողոսյանից, վերջինիս բարեկամ Նունե Յաշայի Արզումանյանից, Հայաստան Պողոսյանի ծանոթ Վարսենիկ Ազարի Մանուկյանից, Երևան քաղաքի Արշակունյաց փողոցում գործող «Փեթակ» տոնավաճառում առևտրով զբաղվող Գայանե Մեղրժայի Ալաշյանից ամենեկան յոթ, ութ, այնուհետև նաև ամենեկան փաստական փոփոխություններով, ստացել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 09.11.2010թ.-ի թիվ 283 Ն որոշմամբ սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող տոկոսադրույքներ: Այսպես Երևան քաղաքի «Ֆիրդուսի» տոնավաճառի նախկին աշխատակից Փարանձեմ Վաչագանի Մուրադյանը, գրավելով ֆինանսական ծանր կացության մեջ և ունենալով գումարի կարիք, ծանոթ՝ «Ֆիրդուսի» տոնավաճառում նախկինում առևտրով զբաղվող Հայաստան Հրաչիկի Պողոսյանի միջոցով ծանոթացել է Հասմիկ Մակեդոնի Առաքելյանի հետ, ով առաջարկել է ամենեկան տոկոսավճարի դիմաց տրամադրել գումարներ: Ընդհանուր առմամբ Փարանձեմ Մուրադյանը Հասմիկ Առաքելյանից 2013թ.-ի ապրիլ ամսից մինչև 2013թ.-ի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում ստացել է 2.400.000 ՀՀ դրամ և 1.024.225 ՀՀ դրամին համարժեք 2.500 ԱՄՆ դոլար գումար, որից 400.000 ՀՀ դրամը նախնական պայմանավորվածության համաձայն, փոխանցել է Հայաստան Պողոսյանին, ով պարտավորվել է նշված գումարի տոկոսավճարները տրամադրել Հասմիկ Առաքելյանին, իսկ Փարանձեմ Մուրադյանը 2013թ.-ի մայիս ամսից մինչև 2014թ.-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում իր կողմից վերցված գումարների դիմաց նախ՝ ամենեկան 7 տոկոս տոկոսադրույքով, իսկ հետագայում՝ նաև ամենեկան 10 տոկոս տոկոսադրույքով պարբերաբար Հասմիկ Մակեդոնի Առաքելյանին վճարել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող տոկոսադրույքներ: Մույն կերպ, վաշխատությանը ամենեկան կայուն եկամուրներ ստանալու նպատակով՝ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանը, «Ֆիրդուսի» տոնավաճառի նախկին աշխատակից Շուշանիկ Աշուրի Մանիջոյանին 2013թ.-ի մայիս-հունիս ամիսներից մինչև 2014թ.-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում տրամադրել է ընդհանուր առմամբ 3.000.000 ՀՀ գումար և 2013 թվականի հուլիս ամսից մինչև 2014 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում նախ ամենեկան 7 տոկոս տոկոսադրույքով, իսկ հետագայում՝ նաև ամենեկան 10 տոկոս տոկոսադրույքով պարբերաբար Շուշանիկ Աշուրի Մանիջոյանից ստացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի

կրկնապատիկը գերազանցող փոկոսադրույքներ: Նույն կերպ, վաշխառությանը ամենեկան կայուն եկամուրներ ստանալու նպատակով՝ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանը «Ֆիրդուսի» փոնավաճառի նախկին աշխատակից Նաիրա Ռուդոլֆի Գևորգյանին 2013թ.-ի նոյեմբեր ամսին տրամադրել է 100.000 ՀՀ դրամ գումար և 2013թ.-ի դեկտեմբեր ամսից մինչև 2014թ.-ի օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում ամենեկան 10 փոկոս փոկոսադրույքով պարբերաբար Նաիրա Ռուդոլֆի Գևորգյանից ստացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանափակ փոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող փոկոսադրույքներ: Նույն կերպ, վաշխառությանը ամենեկան կայուն եկամուրներ ստանալու նպատակով՝ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանը «Ֆիրդուսի» փոնավաճառի նախկին աշխատակից Նաիրե Գրիշայի Պետրոսյանին 2013թ.-ի օգոստոս ամսից մինչև 2014թ.-ի հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում տրամադրել է 1.400.000 ՀՀ դրամ և 2013թ.-ի սեպտեմբեր ամսից մինչև 2014թ.-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում պարբերաբար ամենեկան նախ 8 փոկոս փոկոսադրույքով, հետո ամենեկան 10 փոկոս փոկոսադրույքով Նաիրե Գրիշայի Պետրոսյանից ստացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանափակ փոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող փոկոսադրույքներ: Բացի այդ, վաշխառությանը ամենեկան կայուն եկամուրներ ստանալու նպատակով՝ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանը «Ֆիրդուսի» փոնավաճառի նախկին աշխատակից Հայաստան Հրաչիկի Պողոսյանին 2013թ.-ի սպրիլ ամսից մինչև 2014թ.-ի փետրվար ամիսն ընկած ժամանակահատվածում տրամադրել է 5.630.000 ՀՀ դրամ և 2013թ.-ի մայիս ամսից մինչև 2014թ.-ի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում նախ՝ ամենեկան 7 փոկոս փոկոսադրույքով, իսկ հետագայում նաև ամենեկան 10 փոկոս փոկոսադրույքով պարբերաբար Հայաստան Հրաչիկի Պողոսյանից ստացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանափակ փոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող փոկոսադրույքներ: Բացի այդ, վաշխառությանը ամենեկան կայուն եկամուրներ ստանալու նպատակով՝ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանը, Հայաստան Պողոսյանի բարեկամ Նունե Յաշայի Արզումանյանին 2013թ.-ի օգոստոսի 15-ից մինչև 2014թ.-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում տրամադրել է ընդհանուր 4.950.000 ՀՀ դրամ գումար և 2013թ.-ի սեպտեմբեր ամսից մինչև 2015թ.-ի հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում նախ ամենեկան 8 փոկոս փոկոսադրույքով, իսկ հետագայում նաև ամենեկան 10 փոկոս փոկոսադրույքով պարբերաբար Նունե Յաշայի Արզումանյանից ստացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանափակ փոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող փոկոսադրույքներ: Բացի այդ, վաշխառությանը ամենեկան կայուն եկամուրներ ստանալու նպատակով Հասմիկ Մակեդոնի Առաքելյանը, Հայաստան Պողոսյանի ծանոթ Վարսենիկ Ազարի Մանուկյանին 2014թ.-ի հունվար ամսին տրամադրել է 973.536 ՀՀ դրամին համարժեք 2.400 ԱՄՆ դոլար, որից նույն օրը Վարսենիկ Մանուկյանը Հասմիկ Առաքելյանի իմացությանը 567.896 ՀՀ դրամին համարժեք 1.400 ԱՄՆ դոլար գումարը տրամադրել է Հայաստան Պողոսյանին, ով պարտավորվել է նշված գումարի փոկոսավճարները տրամադրել վերջինիս,

իսկ մնացած 405.640 ՀՀ դրամին համարժեք 1.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց Հասմիկ Առաքելյանը 2014թ.-ի փետրվար ամսից մինչև 2015թ.-ի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում ամսեկան 10 փոկոս փոկոսադրույքով պարբերաբար Վարսենիկ Ազարի Մանուկյանից սրացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային փոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող փոկոսադրույքներ: Բացի այդ, վաշխատությամբ ամսեկան կայուն եկամուտներ արանալու նպատակով՝ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանը, «Փեթակ» տոնավաճառի նախկին աշխատակից Գայանե Սերյոժայի Արաջյանին 2013թ.-ի հունիս ամսից մինչև 2014թ.-ի հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում փրամադրել է ընդհանուր առմամբ 600.000 ՀՀ դրամ և 370.000 ՀՀ դրամին համարժեք 900 ԱՄՆ դոլար գումար և 2013թ.-ի հուլիս ամսից մինչև 2015թ.-ի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում նախ ամսեկան 7 փոկոս փոկոսադրույքով, իսկ հետագայում նաև ամսեկան 10 փոկոս փոկոսադրույքով պարբերաբար Գայանե Սերյոժայի Արաջյանից սրացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային փոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող փոկոսադրույքներ»⁷⁵⁷:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 19-ի որոշման համաձայն՝ «Առաջին արյանի դադարանը լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ սրուզման է ենթարկել դադարանության ընթացքում հետազոտված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատել վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ինչի արդյունքում իրավաչափ եզրահանգում է կատարել առ այն, որ ամբաստանյալ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանք: Վերաքննիչ դադարանը գտնում է, որ ամբաստանյալ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանք կատարելու հանգամանքն Առաջին արյանի դադարանը հաստատել է համարել մեղադրական դատավճռի հիմքում դրված՝ քրեական գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, և Վերաքննիչ դադարանի գնահատմամբ Առաջին արյանի դադարանի կողմից մեղադրական դատավճռի հիմքում դրված ապացույցների համակցությունը բացառում է ամբաստանյալ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանք չկատարելու ողջամիտ հավանականությունը: Վերաքննիչ դադարանը հարկ է համարում նշել, որ գործով որոշակիորեն շահագրգռված անձանց ցուցմունքները՝ դադարանությամբ հետազոտված հարաբերականորեն չեզոք ապացույցների՝ որպես այլ փաստաթուղթ ճանաչված ապացույցների հետ համակցության մեջ, բավարար է ամբաստանյալի անմեղության կանխավարկածը հաղթահարելու համար:

(...)

⁷⁵⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 15, թերթեր 112-115:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ (...) վերաքննիչ բողոքները պեպք է մերժել, Երևան քաղաքի սուսջին սպյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԿԳ/0304/01/15 քրեական գործով 2019 թվականի հուլիսի 17-ի դատավճիռը թողնել անփոփոխ, Հասմիկ Մակեդոնի Առաքելյանին «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայրարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ ազատել նշանակված պարժից, իսկ Կոմիտասի կողմից ներկայացված քաղաքացիական հայցերը՝ թողնել առանց քննության»⁷⁵⁸:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 35-րդ, 107-րդ, 127-րդ և 365-րդ հոդվածների պահանջները: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը առերևույթ թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական և նյութական իրավունքի հիմնարար խախտում, որն ազդել է գործի ելքի վրա՝ ամբաստանյալն անհիմն ենթարկվել է քրեական պատասխանատվության, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով հայտնած դիրքորոշումներին:

8. Բողոքաբերի համոզմամբ՝ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտա հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարել, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարք, քանի որ մեղադրանքի հիմքում դրվել են միայն գործի ելքով շահագրգիռ անձանց՝ տուժողների և նրանց ընտանիքի անդամների ցուցմունքները, իսկ դրանք հաստատված չեն այլ օբյեկտիվ ապացույցներով:

9. Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջը, քանի որ ամբաստանյալ Հ.Առաքելյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի փոխարեն կիրառել է 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և ամբաստանյալի նկատմամբ չի դադարեցնել քրեական հետապնդումը:

10. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը (դատավճիռն անփոփոխ թողնելու և պատժի մասով)՝ բեկանված մասով գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը, կամ մասնակի բեկանել

⁷⁵⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 18, թերթեր 129-135:

և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը՝ ճանաչելով ու հռչակելով Հ.Առաքելյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքում, կամ մասնակի բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը՝ կիրառելով Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք հիմնավորված և պատճառաբանված են ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքը կատարելու մեջ ամբաստանյալ Հ.Առաքելյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքում ամբաստանյալ Հ.Առաքելյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Առաքելյանի մեղքը հաստատվում է գործով ձեռք բերված և ստորադաս դատարանների դատական ակտերում պատշաճ վերլուծված ապացույցների բավարար համակցությամբ, այն է՝ տուժողներ Փառանձեմ Մուրադյանի, Հայաստան Պողոսյանի, Գայանե Ալաջյանի, Նունե Արզումանյանի, Նաիրա Գևորգյանի, Նաիրե Պետրոսյանի, Վարսենիկ Մանուկյանի, Շուշանիկ Մանիջոյանի ցուցմունքներով, վկաներ Նինա Գևորգյանի, Կարինե Մարգարյանի, Ռինա Արիստակեսյանի, Լուսինե Գևորգյանի, Անահիտ Ալաջյանի, Սոնա Արզումանյանի ցուցմունքներով, ապացույց ճանաչված՝ այլ փաստաթուղթ հանդիսացող Հայաստան Հրաչիկի Պողոսյանի ներկայացրած՝ տոկոսագումարներ վճարելու հանգամանքները հաստատող գրությունների և Նունե Յաչայի Արզումանյանի կողմից ներկայացված՝ փաստաթղթի պատճեններով, ինչպես նաև դատավճռի հիմքում դրված այլ ապացույցներով⁷⁵⁹:

13. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանին վերագրվող մեղադրանքի հիմքում դրվել են միայն գործի ելքով շահագրգիռ անձանց՝ տուժողների և նրանց ընտանիքի անդամների ցուցմունքները, Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով տուժողի՝ որպես շահագրգիռ անձի ցուցմունքների գնահատման վերաբերյալ նախկինում

⁷⁵⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 15, թերթեր 97-112:

արտահայտած դիրքորոշումները⁷⁶⁰, նախ արձանագրում է, որ տուժողի ցուցմունքն ապացույցի ինքնուրույն տեսակ է և ցուցմունքի միջոցով, տուժողը, որպես դատավարական սուբյեկտ, իրացնում է իր իրավունքները և օրինական շահերը: Տուժողի ցուցմունքը չի կարող ինքնաբերաբար անարժանահավատ գնահատվել, և տուժողի՝ դատավարության շահագրգիռ կողմ լինելը, ինքնին, չի նվազեցնում նրա ցուցմունքի ապացուցողական արժեքը: Անդրադառնալով տուժողների հարազատներ հանդիսացող վկաների ցուցմունքների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին, Վճռաբեկ դատարանը վերահաստատում է նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ նրանց կողմից տրված ցուցմունքները նույնպես ենթակա են գնահատման արժանահավատության տեսանկյունից և որպես անանցյալ ապացույցներ, գործում առկա այլ ապացույցների հետ համակցությամբ կարող են օգտագործվել ապացուցման առարկան կազմող հանգամանքները հաստատված համարելու համար⁷⁶¹: Բացի այդ, սույն գործով ամբաստանյալ Հ.Առաքելյանի մեղքը հիմնավորվել է ոչ միայն բողոքաբերի կողմից մատնանշված՝ տուժողների և նրանց ընտանիքի անդամների ցուցմունքներով, այլև սույն որոշման 12-րդ կետում վկայակոչված՝ տոկոսագումարների վճարման վերաբերյալ փաստաթղթերի և այլ ապացույցների համակցությամբ: Ուստի մեղադրանքի հիմքում միայն շահագրգիռ անձանց ցուցմունքները դրված լինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնազուրկ են:

14. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքը կատարելու մեջ ամբաստանյալ Հ.Առաքելյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված են:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Հասմիկ Առաքելյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը՝ կարճման՝ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի ուժով:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վաշխատությունը՝ պարտք փրված դրամի կամ տեսակալին հարկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ սրանալը, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնարու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը՝

(...)

2. Նույն արարքը՝

⁷⁶⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Տիգրան Մարտիրոսյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵՇԴ/0121/01/12 որոշման 25-րդ կետը:

⁷⁶¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Տիգրան Մարտիրոսյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵՇԴ/0121/01/12 որոշման 27-րդ կետը:

(...)

2) որը կարարվել է որպես արհեսար,

(...)

պարտվում է փուլանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապարիկից վեցհարյուրապարիկի չափով, կամ ազարագրկմամբ՝ առավելագույնը չորս փարի ժամկետով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

13) ընդունվել է համաներման մասին օրենք:

(...)

6. Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով: Սույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հարուցվել կամ այլ կերպ չի հարթվել պարճատված վնասը, կամ առկա է վեճ հարուցման ենթակա վնասի կապակցությամբ: Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով: Սույն պարբերությամբ նախարեակված կարգավորումը գործում է, եթե համաներման մասին օրենքով այլ բան նախարեակված չէ»:

Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է՝ «1. Համաներմում հայարարելով՝ պարճից ազարել՝

1) առավելագույնը չորս փարի ժամկետով ազարությունից զրկելու հետ կապված պարճի դադարարարված անձանց:

(...)

5. Քրեական գործի հարուցումը մերճել, հարուցված քրեական գործը կարճել, ինչպես նաև դադարեցնել քրեական հետապնդումը կամ չիրականացնել քրեական հետապնդում 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ կարարած հանցագործությունների դեպքերով (բացառությամբ անախականորեն մարդու մահվան հանգեցրած դեպքերի, որոնցով առկա է փուճողի իրավահաջորդի առարկությունը), որոնցով՝

1) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կարարելու մեջ, որոնց համար նախարեակված է պարիճ ոչ ավելի, քան չորս փարի ժամկետով ազարագրկում (...):

6. Սույն հոդվածի 5-րդ մասը կիրառվում է Հայարանի Հանրապետության քրեական դադարարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների պահպանմամբ» (...):

17. Վերոնշյալ իրավադրույթների կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանը դիրքորոշում է հայտնել առ այն, որ Համաներման մասին օրենքի

2-րդ հոդվածի 5-րդ մասը, նախատեսելով քրեական գործի հարուցումը մերժելու, հարուցված քրեական գործի վարույթը կարճելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ կարգավորումներ, միաժամանակ, նույն հոդվածի 6-րդ մասով սահմանել է, որ հիշյալ 5-րդ մասը կիրառվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների պահպանմամբ: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ համաներման մասին օրենք ընդունելու հիմքով գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ (2-րդ պարբերություն): Ընդ որում, Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ հիշյալ դրույթը գործում է, եթե համաներման մասին օրենքով այլ բան նախատեսված չէ: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված իրավակարգավորումից տարբերվող այլ բան Համաներման մասին օրենքը չի նախատեսել⁷⁶²:

18. Մեջբերված նորմերի վերլուծության և ՀՀ Սահմանադրական դատարանի վերոգրյալ դիրքորոշման հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված հանցավոր արարքի համար նախատեսված է ազատագրկում՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումներով օրենսդիրն արգելել է քրեական գործի հարուցումը մերժել, քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել հանցագործությամբ պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Մինևնույն ժամանակ, հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված կամ այլ կերպ հարթված չլինելը կամ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ վեճի առկայությունը խոչընդոտ չէ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ առավելագույնը չորս տարի ժամկետով ազատագրկման դատապարտված անձանց պատժից ազատելու համար:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանի կողմից չի հարթվել հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասը, ինչպես նաև առկա է վեճ՝ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ⁷⁶³, ինչն արգելք է հանդիսանում Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ ամբաստանյալ Հ.Առաքելյանի

⁷⁶² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի փետրվարի 26-ի թիվ ՍԴՈ-1447 որոշման 4.2-րդ կետը:

⁷⁶³ Տե՛ս քրեական գործ, հատոր 18, թերթեր 97-135:

նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթ կարճելու համար:

20. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Առաքելյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա չէ դադարեցման, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճման:

21. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 19-ի որոշումն օրինական է և հիմնավորված: Հետևաբար, վճռաբեկ բողոքը պետք է մերժել, Վերաքննիչ դատարանի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Հասմիկ Մակեդոնի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 19-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *արորագրություն*

Դատավորներ՝ *արորագրություններ*

50.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0013/06/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի նոյեմբերի 3-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման դեմ մեղադրյալ Մհեր Ժորայի Միլիտոնյանի պաշտպան Ա.Ալիխանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում 2017 թվականի հունիսի 8-ին հարուցվել է թիվ 58156817 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունվարի 14-ի որոշմամբ Մհեր Ժորայի Միլիտոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Մ.Միլիտոնյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունվարի 14-ի որոշմամբ մերժվել է մեղադրյալ Մ.Միլիտոնյանի

նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2019 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունվարի 14-ի որոշումը՝ բեկանել և մեղադրյալ Մ.Միլիտոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

3.1. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մարտի 7-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կասեցվել է՝ մեղադրյալ Մ.Միլիտոնյանի կողմից քննությունից թաքնվելու և գտնվելու վայրը պարզված չլինելու հիմքով:

3.2. 2019 թվականի ապրիլի 15-ին մեղադրյալ Մ.Միլիտոնյանն ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժին:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և մեղադրյալ Մ.Միլիտոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորումը վերահաստատվել է:

4.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունիսի 10-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է մասնակիորեն, և մեղադրյալ Մ.Միլիտոնյանի կալանավորման ժամկետը երկարացվել է 1 (մեկ) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալ Մ.Միլիտոնյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ մեղադրյալ Մ.Միլիտոնյանի կալանավորման ժամկետը երկարացվել է ևս 1 (մեկ) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալ Մ.Միլիտոնյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ բավարարվել է նախաքննական մարմնի միջնորդությունը, և մեղադրյալ Մ.Միլիտոնյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է ևս 20 (քսան) օր ժամկետով: Միաժամանակ, բավարարվել է մեղադրյալ Մ.Միլիտոնյանի պաշտպանի միջնորդությունը, և վերջինիս նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել գրավը՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով:

7. ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գ.Հովակիմյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 9-ի որոշումը՝ մասնակիորեն բեկանել է և մեղադրյալ Մ.Միլիտոնյանին կալանքից գրավով ազատելը ճանաչել է անթույլատրելի:

8. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Մ.Միլիտոնյանի պաշտպան Ա.Ալիխանյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 10-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ.

9. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունվարի 14-ի որոշմամբ Մ.Միլիտոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ. «(...) [Ն] ա իրացնելու նպատակով սպորինի կերպով ձեռք է բերել, պահել և ստաբել է ստանձնապես խոշոր չափերի՝ 28,585 գրամ «Մեթադոն» և 14,24 գրամ «Կոկաին» րեասակի թմրամիջոցներ:

Այսպես.

Երևան քաղաքի քնակիչ Ռուբեն Միրզոյանը ՌԴ-ից ստանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ձեռք բերելու և այն ՀՀ-ում իրացնելու նպատակով 2017 թվականի հունիսի 5-ին հեռախոսազրույց է ունեցել ՌԴ Մոսկվա քաղաքում բնակվող ՀՀ քաղաքացի Մհեր Միլիտոնյանի հետ և վերջինին հայտնել է իր վերոհիշյալ նպատակի մասին:

Մհեր Միլիտոնյանը պատրաստակամություն է հայտնել Ռուբեն Միրզոյանին թմրամիջոցներ իրացնելու վերաբերյալ, և այդ կապակցությամբ պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո Ռուբեն Միրզոյանը Մհեր Միլիտոնյանին տեղեկացրել է թմրամիջոցները սրանսպուր և ՀՀ տեղափոխելու համար Մոսկվա քաղաք մարդ ուղարկելու իր նպատակի մասին:

Դրանից հետո, Ռուբեն Միրզոյանը 2017 թվականի հունիսի 7-ին թիվ 1865 չվերթով «Զվարթնոց» օդանավակայանից Մոսկվա է ճանապարհել իրացնելու նպատակով թմրամիջոցները ձեռք բերելու հարցում իրեն օժանդակող Արթուր Կարապետյանին, իսկ մինչև այդ հեռախոսազանգի միջոցով վերջինի համար սենյակ է ամրագրել Մոսկվա քաղաքում գործող «Ալյոս» հյուրանոցում, որի մասին տեղեկացրել է Արթուր Կարապետյանին և թերթիկի վրա գրառումներ կատարելով՝ նրան է տրամադրել հիշյալ հյուրանոցի հեռախոսահամարը,

անյակի ամրագրման համարը և Մեծեր Միլիտրոնյանի կողմից օգրագործվող 007-963-689-51-30 հեռախոսահամարը:

Ռուբեն Միրզոյանի կողմից Մեծեր Միլիտրոնյանի հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա Արթուր Կարապետյանը Մուսկվա քաղաքում հանդիպել է Մեծեր Միլիտրոնյանին, որից հետո վերջինը ՀՀ փոխադրելու և Ռուբեն Միրզոյանին փոխանցելու համար Արթուր Կարապետյանին է փոխանցվել չարգելված հանգամանքներում ձեռք բերած և պահած առանձնապես խոշոր չափերի՝ 28,585 գրամ «Մեթարոն» և 14,24 գրամ «Կոկաին» տեսակի թմրամիջոցները և դրանք Արթուր Կարապետյանի միջոցով ասորիի կերպով առաքել ու իրացրել Ռուբեն Միրզոյանին:

Այսուհետև, Արթուր Կարապետյանը Մեծեր Միլիտրոնյանից սրացած թմրամիջոցները մնաքային հսկողությունից թաքցնելու նպատակով գլանաձև փաթեթավորել է սև գույնի պոլիէթիլենային թաղանթով, ասպա տեղադրել պահպանակում՝ հետանցքից մեքրել է ուղիղ աղու մեջ, և 2017 թվականի հունիսի 8-ին՝ ժամը 06:00-ին, ՌԴ-ից թիվ 1864 չվերթով վերադառնալով Երևան՝ նշված թմրամիջոցները Ռուբեն Միրզոյանի կազմակերպմամբ մնաքսանենգությանը տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն:

Ժամանելով ՀՀ՝ Արթուր Կարապետյանը «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման արտից ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ԹԱՇԴՊ վարչության աշխատակիցների կողմից բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժին, այսուհետև մնաքսանենգություն իրականացնելու նպատակով տեղափոխվել է Երևան քաղաքի «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓՖ ընկերություն, որտեղ վերջինի բժշկական կենտրոնի ընդհանուր պրոկտորոգիայի բաժանմունքի 2-րդ հարկի պարուհանից իրեն ցած է նետել, ասպա հետանցքից դուրս հանելով պահպանակի մեջ տեղադրված թմրամիջոցներ պարունակող փաթեթը՝ դեն է նետել այն, որը հայրնաբերվել է նշված բժշկական կենտրոնի նկուղային հարկի լուսամտի խորշից՝ նույն օրը կարարված տեղանքի գնությունը (...)⁷⁶⁴:

10. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 10-ի որոշումը կայացվել է դատավոր Ա.Բեկթաշյանի նախագահությամբ⁷⁶⁵:

10.1. Առաջին ատյանի դատարանի (նախագահությամբ՝ դատավոր Վ.Գրիգորյանի) 2019 թվականի օգոստոսի 9-ի որոշման համաձայն՝ «(...) Մ.Միլիտրոնյանին կալանքի տակ պահելու հիմքերի վերաբերյալ ունեցած մերավախություններն անցած ժամանակահատվածում նվազել է, քանի որ նախաքննությունն ըստ էության հասել է ավարտական փուլ, ՌԴ-ից կանավոր է եկել Հայաստան, իսկ դա համադրելով մեղադրյալի անձին վերաբերելի այն տեղեկությունների հետ, որ ամուսնացած է և ինսամքին ունի անչափափաս երեխա, Հայաստանում ունի բնակության վայր, ուստի դադարանի գնահատմամբ գրավն

⁷⁶⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 8-9:

⁷⁶⁵ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 19-21:

այս փուլում կարող է գործուն երաշխիք հանդիսանալ անձի պարզաձև վարքագիծն ապահովելու համար:

Վերևարար քննության առնելով ներկայացված միջնորդությունը, սույն որոշմամբ շարադրված իրավադրոյթների և վճուարեկ դատարանի մտերեցումների համարեքարում գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները, դատարանը գտնում է, որ մեղադրյալ Մ.Միլիտոնյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու միջնորդությունը ենթակա է քավարարման (...)⁷⁶⁶:

11. Վերաքննիչ դատարանի (նախագահության՝ դատավոր Ա.Բեկթաշյանի) 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման համաձայն՝ «(...) Առաջին արյանի դատարանը գրավի թույլատրելիության հարցի քննարկումն իրականացնելիս պարզաձև գնահատման չի արժանացրել մեղադրյալ Մհեր Միլիտոնյանին մեղաագրվող արարքի բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, մասնավորապես՝ այն, որ Մհեր Միլիտոնյանին մեղաագրվում է առանձնապես ծանր հանցագործության կատարում, որի համար պարտիժ է նախատեսված միայն ազատազրկման ձևով՝ յոթից տասնհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա: Բացի այդ, Առաջին արյանի դատարանի կողմից հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Մհեր Միլիտոնյանը մեղադրվում է բնակչության առողջության դեմ ուղղված դիտավորությամբ կատարվող առանձնապես ծանր հանցանք կատարելու մեջ և նրան վերագրվող արարքի ծավալում ներառված է նաև այն, որ նա իրացնելու նպատակով ասօրինի կերպով ձեռք է բերել, պահել և առաքել է առանձնապես խոշոր չափերի 28,585 գրամ «Մեթաբոն» և 14,24 գրամ «Կոկաին» փաստիկ թմրամիջոցներ:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հիմնազորել են Առաջին արյանի դատարանի այն եզրահանգումները, որ գրավի կիրառումն ի գորտու է կանխել մեղադրյալ Մհեր Միլիտոնյանի ոչ իրավաչափ վարքագիծը, քանի որ ներկայացված նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ սպառնացող հնարավոր պարտի խստությունն էականորեն բարձրացնում է մեղադրյալ Մհեր Միլիտոնյանի կողմից կրկին անգամ թաքնվելու հավանականությունը: Ավելին նախաքննական մարմնի 2019 թվականի հունվարի 14-ի որոշմամբ Մհեր Միլիտոնյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Վերոգրյալ եզրահանգումների պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գրավն ի գորտու չէ մեղադրյալ Մհեր Միլիտոնյանի անազատության կանխավարկածը հաղթահարելու և նրա նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու համար:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ մեղադրյալ Մհեր Միլիտոնյանը ՀՀ-ում ունի բնակության վայր, ամուսնացած է, ինքնաբերական ունի անչափափաս երեխա, սպա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ փյվյալ դեպքում դրանք քավարար չեն գալու հետևության, որ մեղադրյալ Մհեր Միլիտոնյանը, ազատության մեջ լինելու

⁷⁶⁶ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 30-36:

դեպքում, կրկին չի թաքնվի քրեական վարույթն իրականացնող մարմնից և չի կարարի նոր հանցանք:

Այսպիսով քննության առնելով վերը նշված բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Առաջին աստիճանի դատարանի 2019 թվականի օգոստոսի 9-ի որոշումը պետք է մասնակիորեն բեկանել և մեղադրյալ Մհեր Միլիպոսյանին կալանքից գրավով ազատելը պետք է ճանաչել անթույլատրելի (...)⁷⁶⁷:

12. 2019 թվականի սեպտեմբերի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան:

12.1. 2019 թվականի հոկտեմբերի 14-ին որոշում է կայացվել քրեական գործը դատական քննության նշանակելու մասին: Նույն որոշմամբ Մ.Միլիպոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը թողնվել է անփոփոխ:

12.2. 2020 թվականի փետրվարի 11-ին կայացած դատական նիստի ընթացքում մեղադրող Հ.Ենոքյանը միջնորդել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումների համատեքստում վերանայել ամբաստանյալ Մ.Միլիպոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավի թույլատրելիությունը և գրավի կիրառումը ճանաչելով անթույլատրելի՝ վերացնել այն:

12.3. Կոտայքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ ամբաստանյալ Մ.Միլիպոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը վերացնելու և գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ մեղադրողի միջնորդությունը մերժվել է:

12.4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2020 թվականի մարտի 30-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Կոտայքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 11-ի որոշումը:

12.5. Վճռաբեկ դատարանը 2020 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է⁷⁶⁸:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

13. Բողոքի հեղինակը, մատնանշելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, գտել է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 9-ի որոշումը և մեղադրյալ Մ.Միլիպոսյանին կալանքից գրավով ազատելը ճանաչելով անթույլատրելի, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի

⁷⁶⁷ Տե՛ս նյութեր, հատոր, թերթեր 93-100:

⁷⁶⁸ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, Մհեր Միլիպոսյանի վերաբերյալ թիվ ԿԴ/0036/01/19 քրեական գործը:

խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

13.1. Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Բեկթաշյանը նույն գործով որոշում է կայացրել և՛ որպես առաջին ատյանի դատավոր, և՛ որպես վերաքննիչ ատյանի դատարանի դատավոր: Ուստի, բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Բեկթաշյանը ոչ իրավաչափորեն է մերժել ինքնաբացարկ հայտնելու մասին իր միջնորդությունը, քանի որ նույն գործով նույն անձի վերաբերյալ նույն հարցի շուրջ որպես դատավոր մասնակցել է գործի քննությանն առաջին ատյանի դատարանում:

13.2. Բացի այդ, բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Բեկթաշյանին է ներկայացվել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 14-ի՝ քրեական գործը դատական քննության նշանակելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը, սակայն Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս դրանք հիմք չի ընդունել՝ անհարկի միջամտելով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի գործունեությանը և վտանգելով առաջին ատյանի դատարանի ներքին անկախությունը:

13.3. Բողոքաբերը նաև հավելել է, որ Վերաքննիչ դատարանը չի նշել, թե կոնկրետ ինչ հանգամանքների հիման վրա է եզրահանգել, որ գրավն ի գործու չէ կանխելու Մ.Միլիտոնյանի ոչ իրավաչափ վարքագիծն այն պարագայում, երբ նա մշտապես իրավաչափ վարքագիծ է դրսևորել: Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ իր պաշտպանյալը կամավոր է ներկայացել վարույթն իրականացնող մարմնին, երիտասարդ է, բնութագրվում է դրական, ունի մշտական բնակության վայր, ամուսնացած է, խնամքին է գտնվում կինը և անչափահաս երեքուկես տարեկան երեխան, ունի ծանր՝ քաղցկեղային հիվանդություն, որը հայտնաբերվել է 1995 թվականին, ծանր վիրահատություն է տարել, յոթ անգամ քիմիաթերապիա է ընդունել:

14. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բավարարել վճռաբեկ բողոքը և բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավասու էր արդյո՞ք Վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Բեկթաշյանը քննել Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 9-ի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքն այն պայմաններում, երբ նույն գործով նույն անձի կալանավորման ժամկետը երկարացնելու մասին որոշում էր կայացրել առաջին ատյանի դատարանում:

16. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ իրեն*

ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի օրենքի հիման վրա արեղծված անկախ և անաչառ տրիբունալի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային լսումների իրավունք»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով դատարանը պետք է լինի անկողմնակալ: Անկողմնակալությունը ստուգման նպատակով Եվրոպական դատարանը տարանջատում է սուբյեկտիվ մոտեցումը (չափանիշը), որը նպատակ ունի պարզել դատավորի շահագրգովածությունը կոնկրետ գործով կայացված որոշման մեջ, և օբյեկտիվ մոտեցումը (չափանիշը), որը կոչված է որոշել, թե արդյոք դատավորն ապահովել է անհրաժեշտ երաշխիքներ այս առնչությամբ ցանկացած ողջամիտ կասկած բացառելու համար⁷⁶⁹: Երկրորդ չափանիշի կիրառումը պահանջում է պարզել, թե արդյոք անկախ արդարադատություն իրականացնող անձի վարքագծից, առկա են փաստեր, որոնք կարող են կասկածի տակ դնել դատավորի անաչառությունը⁷⁷⁰:

16.1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև ՀՀ դատական օրենսգիրք) 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է՝

1) քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը, բացառությամբ այն դեպքերի, երբ սուկա են ինքնաբացարկ հայրարարելու հիմքեր.

(...)

4) զերծ մնալ այնպիսի գործողություններ ձեռնարկելուց, որոնք ողջամտության սահմաններում կարող են արեղծել ինքնաբացարկի հիմքեր.

(...):»:

ՀՀ դատական օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիրորդի մտք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ:

2. Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլնի, այն դեպքերը, երբ՝

(...)

3) դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանն այլ դատարանում»:

16.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

⁷⁶⁹ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Piersack v. Belgium* գործով 1982 թվականի հոկտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 8692/79, 30-րդ կետը, *Grievs v. the United Kingdom [GC]* գործով 2003 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 57067/00, 69-րդ կետը:

⁷⁷⁰ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Castillo Algar v. Spain* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 28194/95, 45-րդ կետը, *Morel v. France*, 2000 թվականի հունիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 34130/96, 42-րդ կետը:

«Գալարավորը, (...) [ուն] հայրնի են քրեական դատավարությանն իրենց մասնակցությունը բացառող հանգամանքներ, պարտավոր են դրանց մասին հայրնել դատավարության շահագրգռված մասնակիցներին, քրեական վարույթն իրականացնող մարմին, իսկ այն դեպքում, երբ նրանք կասկածում են իրենց մասնակցությամբ գործի նորմալ քննության հնարավորությամբ՝ հայտարարել ինքնաբացարկ կամ գործով վարույթից իրենց հեռացնելու մասին միջնորդություն: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Գալարավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով»:

Նույն օրենսգրքի 299-րդ հոդվածի համաձայն՝ եթե դատավորը պարզում է, որ գործով առկա է նույն օրենսգրքի 90-րդ հոդվածով սահմանված ինքնաբացարկի հիմք, ապա որոշում է կայացնում ինքնաբացարկի մասին:

16.3. Վերոշարադրյալ նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատավորի չեզոքությունն ու դրա հասարակական ընկալումը դատական համակարգի կայացրած որոշումների նկատմամբ հասարակության վստահության կարևոր նախապայմաններն են: Դրանով պայմանավորված՝ ՀՀ դատական օրենսգրքի 70-րդ հոդվածում ամրագրված է, որ ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է ողջամտության սահմաններում իրեն դրսևորել այնպես, որ նվազագույնի հասցվեն ինքնաբացարկի անհրաժեշտության դեպքերը, իսկ 71-րդ հոդվածն ամրագրում է, որ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ: Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է ինքնաբացարկի պարտադիր, իհարկե, ոչ սպառիչ հիմքերի ցանկ, որն, ի թիվս այլնի, ներառում է դատավորի մասնակցությունը տվյալ գործի քննությանն այլ դատարանում: Ընդ որում, այդ հիմքերի, և, մասնավորապես, քննարկվող հիմքի առանձնացումն օրենսդրի կողմից բխում է այն տրամաբանությունից, որ դրանք բավարարում են ընդհանուր այն պահանջին, որ անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով դատավորի անաչառության մեջ: Քննարկվող հիմքի նախատեսումը միանգամայն համահունչ է անկողմնակալ դատարանի՝ Եվրոպական դատարանի մշակած օբյեկտիվ չափանիշին:

16.4. Միևնույն ժամանակ, նշված նորմի մեկնաբանությունից բխում է, որ նշված հիմքի առկայությունը բացառում է դատավորի կողմից նույն գործի քննությունը վերադաս դատական աստիճանում, եթե խոսքը վերաբերում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակում կամ գործի ըստ էության քննության արդյունքում կոնկրետ դատավորի կողմից կայացված դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի քննությանը: Հետևաբար, կոնկրետ դատավորի կողմից նույն քրեական գործով մինչդատական վարույթի շրջանակում տարբեր

միջնորդությունների նկատմամբ դատական վերահսկողության գործառույթի իրականացումը չի բացառում վերջինիս կողմից վերադաս դատական ատյանում թեև նույն քրեական գործով, սակայն մեկ այլ դատավորի կողմից կայացված՝ մեկ այլ միջնորդության վերաբերյալ դատական ակտի դեմ բերված բողոքի քննությունը: Մասնավորապես, նույն տրամաբանությամբ քրեական գործով կալանավորման կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու նախորդ միջնորդության քննությունը չի խոչընդոտում նոր միջնորդության քննությունն ինչպես մեկ այլ, այնպես էլ նույն դատավորի կողմից:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, *Նախագահությանը դատավոր Ա.Բեկթաշյանի*, 2019 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ մասնակիորեն բավարարել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և մեղադրյալ Մ.Միլիտոնյանի կալանավորման ժամկետը երկարացրել 1 (մեկ) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալ Մ.Միլիտոնյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը⁷⁷¹: Առաջին ատյանի դատարանը, *Նախագահությանը դատավոր Վ.Գրիգորյանի*, 2019 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ մասնակիորեն բավարարել է նախաքննության մարմնի մեկ այլ միջնորդությունը, և մեղադրյալ Մ.Միլիտոնյանի կալանավորման ժամկետը երկարացրել 20 (քսան) օր ժամկետով: Միաժամանակ, բավարարվել է մեղադրյալ Մ.Միլիտոնյանի պաշտպանի միջնորդությունը, և վերջինիս նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է կիրառել գրավը՝ որպես գրավի գումարի չափ սահմանելով 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը⁷⁷²: Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, Վերաքննիչ դատարանը, *Նախագահությանը դատավոր Ա.Բեկթաշյանի*, 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 9-ի որոշումը՝ մասնակիորեն բեկանել է և մեղադրյալ Մ.Միլիտոնյանին կալանքից գրավով ազատելը ճանաչել է անթույլատրելի⁷⁷³:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից բխում է, որ դատավոր Ա.Բեկթաշյանը մասնակցել է Մ.Միլիտոնյանին կալանավորելու հարցի քննությանը թե՛ առաջին ատյանի և թե՛ վերաքննիչ դատարաններում: Սակայն Վերաքննիչ դատարանում Ա.Բեկթաշյանի կողմից քննվել է ոչ թե իր նախագահությամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 10-ին կայացրած՝ Մ.Միլիտոնյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման, այլ Առաջին ատյանի դատարանի՝ մեկ այլ դատավորի՝ Վ.Գրիգորյանի նախագահությամբ 2019 թվականի օգոստոսի 9-ին կայացրած որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը: Վերոնշյալ

⁷⁷¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁷⁷² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁷⁷³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

հանգամանքը գնահատելով սույն որոշման 16-16.4-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով առկա չի եղել դատավոր Ա.Բեկթաշյանի՝ օրենքով նախատեսված պարտադիր ինքնաբացարկի հիմք, որը օբյեկտիվ, անաչառ դիտորդի մոտ կարող էր ողջամիտ կասկած առաջացնել տվյալ գործով դատավորի անաչառության վերաբերյալ:

Հետևաբար, Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դատավոր Ա.Բեկթաշյանն իրավասու էր քննելու Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 9-ի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքն այն պայմաններում, երբ նույն գործով նույն անձի կալանավորման ժամկետը երկարացնելու հարցը քննության էր առել Առաջին ատյանի դատարանում:

19. Ինչ վերաբերում է Մ.Միլիտոնյանին կալանքից գրավով ազատելու իրավաչափությանը, ապա Վճարելի դատարանն իրավաչափ է համարում Առաջին ատյանի դատարանի՝ գրավի կիրառմամբ անձի պատշաճ վարքագիծն ապահովելու դիրքորոշման այն հիմնավորումը, որ Մ.Միլիտոնյանին կալանքի տակ պահելու հիմքերի վերաբերյալ մտավախությունները նվազել են, քանի որ նախաքննությունը նշված դատական ակտի կայացման պահին հասել է ավարտական փուլ, վերջինս ՌԴ-ից կամավոր է եկել Հայաստան, ամուսնացած է և խնամքին ունի անչափահաս երեխա, Հայաստանում ունի բնակության վայր, և որ այս փուլում գրավը կարող է գործունե երաշխիք լինել անձի պատշաճ վարքագիծն ապահովելու համար⁷⁷⁴:

20. Վճարելի դատարանը հիմնավոր է համարում նաև բողոքաբերի՝ սույն որոշման 13.2-րդ կետում ներկայացված փաստարկներն այն մասին, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 14-ի՝ քրեական գործը դատական քննության նշանակելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը, որով Մ.Միլիտոնյանի նկատմամբ ընտրված գրավը թողնվել է անփոփոխ:

21. Անփոփոխվելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինևույն ժամանակ, Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ 2019 թվականի սեպտեմբերի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, և որ նույն դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 14-ի՝ քրեական գործը դատական քննության նշանակելու մասին որոշմամբ Մ.Միլիտոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը թողնվել է անփոփոխ: 2020 թվականի

⁷⁷⁴ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

վերսրվարի 11-ի որոշմամբ ամբաստանյալ ՄՄԻլիտոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը վերացնելու և գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ մեղադրողի միջնորդությունը մերժվել է: Հետևաբար, բողոքարկված դատական ակտը եղել է ժամանակավոր, կորցրել է իր իրավական նշանակությունը, և չի կարող բեկանվել⁷⁷⁵:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Ճանաչել Մհեր Ժորայի Միլիտոնյանի իրավունքների խախտման փաստը:
3. Մհեր Ժորայի Միլիտոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

⁷⁷⁵ Տե՛ս սույն որոշման 12-12.3-րդ կետերը:

51.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/1314/06/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի նոյեմբերի 5-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Իշխան Վալերիկի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մարտի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի դեկտեմբերի 26-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) հարուցվել է թիվ 58237919 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 312-րդ հոդվածի 2-րդ մասով ու 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ Իշխան Վալերիկի Գասպարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով ու 308-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ Նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ի.Գասպարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2020 թվականի փետրվարի 21-ի որոշմամբ բավարարվել է մեղադրյալ Ի.Գասպարյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու մասին Նախաքննության մարմնի միջնորդությունը:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2020 թվականի մարտի 18-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել է և Ի.Գասպարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Նախաքննության մարմնի միջնորդությունը՝ մերժել:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 12-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Մեղադրյալ Ի.Գասպարյանի պաշտպանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել այն:

Դատավարության մյուս մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Նախաքննության մարմնի կողմից մեղադրյալ Իշխան Գասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 308-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար. «*[Ի.Գասպարյանը], հանդիսանալով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ընթացիկ հսկողության 8-րդ բաժնի ավագ տեսուչ, այսինքն՝ իշխանության ներկայացուցչի գործառույթներով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, ի պաշտոնն պարտավոր լինելով ստուգումներով, ուսումնասիրություններով արձանագրել հարկային պարտավորությունների կատարումից խուսափող կամ հարկային իրավահարաբերությունների ոլորտում այլ հակահրավակյան գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների խախտումները և սպառնալից սահմանված կարգով դրանց ընթացքը, նույն բաժնի պաշտոնատար անձանց՝ գլխավոր տեսուչ Հարություն Պողոսյանի և ավագ տեսուչ Վիգեն Բաբախանյանի հետք «Մանուկ Հազարյան» ԱԶ-ի փափուկ կահույքի արտադրամասում հայտնաբերելով չգրանցված թվով 4*

աշխատողներ, շահադիպական շահագրգռվածությունից ելնելով, ծառայության շահերին հակառակ որևիցե միջոցներ չեն ձեռնարկել իրավախախտումը կանխելու և բացահայտելու ուղղությամբ, ընդհակառակը՝ նախնական համաձայնությամբ, իրենց լիազորությունների շրջանակներում Մանուկ Ղազարյանի օգրին գործողություններ չկատարելու, այն է՝ սրուգումներ չիրականացնելու, չգրանցված աշխատողներ պահելու փաստը չարձանագրելու, յուրաքանչյուր չգրանցված աշխատողի համար օրենքով նախատեսված փուզանք մուծելուց խուսափելու համար, 2019թ. հոկտեմբերին վերջինիցս պահանջել և նրա արտադրամասում սրացել են խոշոր չափերով՝ 300.000 ՀՀ դրամ կաշառք, որից հետո նշված 4 չգրանցված աշխատողների կապակցությամբ պատշաճ գործողություններ չկատարելու համար Մանուկ Ղազարյանից ամսական պահանջել են 50.000 ՀՀ դրամի կաշառք:

2019թ. նոյեմբերին Հարություն Պողոսյանն ըստ պայմանավորվածության Էջմիածին-Երևան ավտոճանապարհի ՃՈ հենակետի մոտ հանդիպելով Մանուկ Ղազարյանին, որպես կաշառք սրացել է հերթական 50.000 ՀՀ դրամը, իսկ 2019 թվականի դեկտեմբերի 26-ին գումար սրանալու նպատակով Վիգեն Բարսիսյանը հանդիպել է Մանուկ Ղազարյանին վերջինիս խանութում և փոների կապակցությամբ 2 ամսվա կրթվածքով պահանջել և որպես կաշառք սրացել 100.000 ՀՀ դրամ, սակայն բռնվել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում:

Այսպիսով, Իշխան Գասպարյանը, շահադիպական շահագրգռվածությունից ելնելով, ծառայության շահերին հակառակ չի կատարել ծառայողական պարտականությունները և մի խումբ պաշտոնատար անձանց հետ նախնական համաձայնությամբ, մեկ միասնական դիմումությամբ սրացել է խոշոր՝ 450.000 ՀՀ դրամի չափով կաշառք»⁷⁷⁶:

6. Մեղադրյալ Ի.Գասպարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը հիմնավորող նյութերին, ի թիվս այնի, Նախաքննության մարմինը կցել է վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումը⁷⁷⁷:

6.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2019 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ հաստատված համարելով մեղադրյալ Ի.Գասպարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններն առերևույթ կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածը, արձանագրել է. «(...) [Վ]արության իրականացնող մարմնի կողմից միջնորդությանը կից ներկայացված նյութերը հնարավորություն են տալիս եզրակացության հանգելու առ այն, որ Իշխան Գասպարյանը հնարավոր

⁷⁷⁶ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 23-24:

⁷⁷⁷ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 2, 8-19:

է կատարած լինի իրեն վերագրվող արարքները, ուստի վերագրվող արարքներ/ ի կատարմանը նրա առնչության վերաբերյալ առկա է հիմնավոր կասկած, որը հասարակվում է.

- Մանուկ Ղազարյանից հաղորդում վերցնելու մասին 2019թ. դեկտեմբերի 26-ի արձանագրությամբ և որպես կասկածյալ նրա հարցաքննության նույն օրվա արձանագրությամբ, որոնց համաձայն՝ Մ.Ղազարյանը մատնանշել է, ի թիվս այլոց, Բշիան Գասպարյանին՝ որպես կաշառք պահանջող և սրացող անձի,

- Մ.Ղազարյանի և Ի.Գասպարյանի ստերես հարցաքննության՝ 2019թ. դեկտեմբերի 28-ի արձանագրությամբ, որի համաձայն՝ Մ.Ղազարյանն իր ցուցմունքները պնդել է Ի.Գասպարյանի հետ ստերեսման ժամանակ (...)⁷⁷⁸:

7. Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով Ի.Գասպարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ Նախաքննության մարմնի միջնորդությունը, իր դատական ակտում արձանագրել է, որ հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածը պահպանվել է և շարունակում է մնալ «հիմնավոր»՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) [Ուխտամասիրելով [Առաջին արյանի դատարանն ներկայացված նյութերը] (...) [Առաջին արյանի դատարանն արձանագրում է, որ Բշիան Գասպարյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններ ենթադրաբար կատարելու մեջ: [Առաջին արյանի դատարանը գրնում է, որ վերագրվող արարքներ/ի կատարմանը Բշիան Գասպարյանի առնչվելու վերաբերյալ շարունակում է առկա լինել հիմնավոր կասկած, որը հասարակվում է՝

- Մ.Ղազարյանից հաղորդում վերցնելու մասին՝ 2019թ. դեկտեմբերի 26-ի արձանագրությամբ և որպես կասկածյալ նրա հարցաքննության նույն օրվա արձանագրությամբ, որոնց համաձայն՝ Մ.Ղազարյանը, ի թիվս այլոց, մատնանշել է Բշիան Գասպարյանին՝ որպես կաշառք պահանջող և սրացող անձի,

- Մ.Ղազարյանի և Ի.Գասպարյանի ստերես հարցաքննության՝ 2019թ. դեկտեմբերի 28-ի արձանագրությամբ, որի համաձայն՝ Մ.Ղազարյանն իր ցուցմունքները պնդել է Ի.Գասպարյանի հետ ստերեսման ժամանակ,

- Վիգեն Բարսիսանյանի նկարմամբ իրականացված «կաշառք արանալու նանասկում» և «ներքին դիրում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 26-ի արձանագրություններով, որոնց համաձայն՝ 2019թ. դեկտեմբերի 26-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում Վ.Բարսիսանյանը այցելել է ՀՀ Արմավիրի մարզի Թաիրով-Փարաքար ավերոնայրոդու Մայրաքաղաքային փ., 153շ. հասցեում գործող «ՄՎ» կահույքի վաճառքի խանութ-արահ, որտեղ հանդիպել է Մ.Ղազարյանին, որի ընթացքում վերջինս Վ.Բարսիսանյանին է փոխանցել նրա կողմից որպես կաշառք պահանջված 100.000 ՀՀ դրամը,

- Մարիաննա Հովհաննիսյանի հարցաքննության՝ 2020թ. հունվարի 15-ի արձանագրությամբ,

⁷⁷⁸ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 8-19:

- միջնորդությանը կից ներկայացված այլ նյութերով (...)»⁷⁷⁹:

8. Վերաքննիչ դատարանը 2020 թվականի մարտի 18-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Առաջին արյանի դատարանի որոշումն (...) առերևույթ անհիմն է հիմնավոր կասկածը հաստատելու մասով, քանի որ քննիչի միջնորդությանը կից ներկայացված նյութերի հիման վրա հնարավոր չէ հերևություն անել հիմնավոր կասկածի առկայության, դրա ողջամիտ և հիմնավոր լինելու մասին: Դեռ ավելին, ինչն առավել ուշագրավ է, դատարանի որոշման մեջ նշված ապացույցները և փաստական փյույթները, որոնց վրա հիմնվելով [Առաջին արյանի դատարանը հաստատում է համարել հիմնավոր կասկածի առկայությունը, դրա հիմնավոր և ողջամիտ լինելը, նյութերում բացակայում են, ինչը հիմք է տալիս Վերաքննիչ դատարանին այնդեղու, որ [Առաջին արյանի դատարանի] որոշումը կրում է ձևական բնույթ:

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ քննիչի կողմից դատարան ներկայացված նյութերում բացակայում են՝ Մ.Ղազարյանից հատորում վերցնելու մասին արձանագրությունը, որպես կասկածյալ նրա հարցաքննության արձանագրությունը, Մ.Ղազարյանի և Ի.Գասպարյանի առերեսման արձանագրությունը, իսկ մնացած փաստական փյույթներով հնարավոր չէ հաստատված համարել մեղադրյալ Ի.Գասպարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 311-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ հիմնավոր կասկածը: (...) [Դ]րանցում առկա չեն այնպիսի փաստական փյույթներ, որոնք հիմք կտային հերևություն անել Ի.Գասպարյանին մեղաազրվող արարքում հիմնավոր կասկածի ոչ միայն առկայությունը, այլև դրա ողջամիտ և հիմնավոր լինելը (...)»⁷⁸⁰:

9. 2020 թվականի հուլիսի 15-ին Արմավիրի մարզի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Իշխան Վալերիկի Գասպարյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը ըստ էության քննելու համար, և Ի.Գասպարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ⁷⁸¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ մեղադրյալ Ի.Գասպարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու պայմանի՝ հիմնավոր կասկածի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը կրում է ձևական բնույթ, այն ձևավորվել է մի շարք էական հանգամանքների անտեսմամբ:

⁷⁷⁹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 76-78:

⁷⁸⁰ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 24-31:

⁷⁸¹ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԱՐԴԿ/0010/01/20 քրեական գործը:

Որպես հիմնավորում բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնավորված է մի շարք ապացույցներով, որոնք Նախաքննության մարմնի կողմից ներկայացված չեն եղել դատարան, իրավական գնահատման չի ենթարկել այն հանգամանքը, որ նշված ապացույցներն արդեն իսկ ներկայացվել և իրավական գնահատական են ստացել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից՝ մեղադրյալ Ի.Գասպարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննելիս: Հետևաբար, ըստ բողոքի հեղինակի, այդ նյութերը կցված են եղել դատական գործին և վերստին նույն փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայել է, ինչը բխում է նաև որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետի երկարացումը կանոնակարգող քրեադատավարական նորմերի պահանջներից: Բողոքի հեղինակը փաստել է, որ կալանավորման եղանակով անձի անձնական ազատության սահմանափակման ժամկետը երկարացնելու միջնորդությանը կից Նախաքննության մարմինը ներկայացրել է լրացուցիչ նյութեր, որոնք ձեռք են բերվել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրված լինելուց հետո:

Նշվածի համատեքստում բողոքի հեղինակը նշել է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը բավարար են եղել ինչպես մեղսագրվող արարքների կատարման հիմնավոր կասկածի, այնպես էլ կալանավորման հիմքերի առկայությունը հաստատելու համար:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մարտի 18-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 21-ի որոշմանը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ մեղադրյալ Ի.Գասպարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու պայմանի, այն է՝ հիմնավոր կասկածի շարունակական առկայության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնված է նաև այնպիսի փաստերի և ապացույցների վրա, որոնք Նախաքննության մարմնի կողմից ներկայացված նյութերում բացակայում են:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք:*

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: (...):»:

Նույն օրենսգրքի 285-րդ հոդվածի համաձայն՝ *«1. (...) [Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատարանը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարանն (...) կալանքի տակ պահելու*

ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հասարակող նյութերը: (...):

13.1. Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում, հիմք ընդունելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում ձևավորված վերաբերելի մոտեցումները, Վճարելի դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով նրա անձնական ազատությունը կալանավորման եղանակով սահմանափակելու ժամկետը երկարացնելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճարելի դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով:

ա) շարունակվում են առկա լինել կալանավորման պայմանները (հանցանք կատարած լինելու կասկածը պահպանված է ու շարունակում է մնալ «հիմնավոր» և այլն) ու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր,

բ) գործի քննության ընթացքն ապահովելու համար վարույթն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն⁷⁸²:

13.2. Մինևույն ժամանակ, Վճարելի դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի շրջանակներում անդրադառնալով կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատական որոշման վերաքննիչ վերանայման առանձնահատկություններին, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ վերաքննիչ դատարանը որպես կանոն պարտավոր է հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի կարգով քննության արդյունքում կայացված որոշումը դատական ստուգման ենթարկել այն նյութերում պարունակվող փաստական տվյալների շրջանակներում, որոնք հետազոտվել են ստորադաս դատարանում, և միայն դրանց հիման վրա գնահատական տալ համապատասխան

⁷⁸² Տե՛ս մասնավորապես, Վճարելի դատարանի՝ թիվ ԱՎԴ/0022/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԱԼԴ/0017/06/16 և այլ գործերով կայացված որոշումները:

միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին առաջին ատյանի դատարանի հետևությունների իրավաչափությանը: Այլ խոսքով՝ առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս վերաքննիչ դատարանը պետք է հիմք ընդունի ստորադաս ատյանի դատարանի տրամադրության տակ եղած նյութերը և դրանց համատեքստում համապատասխան գնահատական տա բողոքարեթի փաստարկներին⁷⁸³:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմինը որպես Ի.Գասպարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը հիմնավորող նյութ Առաջին ատյանի դատարան է ներկայացրել նաև մեղադրյալ Ի.Գասպարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումը⁷⁸⁴,

- Նշված դատական ակտով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արձանագրել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերով, այդ թվում՝ Մ.Ղազարյանից հաղորդում վերցնելու և վերջինիս որպես կասկածյալ տված հարցաքննության արձանագրություններով, համաձայն որոնց՝ Մ.Ղազարյանը որպես կաշառք պահանջող և ստացող անձ մատնանշել է նաև Ի.Գասպարյանին, ինչպես նաև վերջինիս և Մ.Ղազարյանի միջև կատարված առերես հարցաքննության արձանագրությամբ, համաձայն որի՝ Մ.Ղազարյանն առերես պնդել է իր ցուցմունքը, հաստատված է Ի.Գասպարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հանցագործությունների առերևույթ կատարված լինելու հիմնավոր կասկածը⁷⁸⁵:

- Առաջին ատյանի դատարանը, Ի.Գասպարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության քննության շրջանակում գնահատելով Նախաքննության մարմնի կողմից ներկայացված նյութերը, մեղադրյալ Ի.Գասպարյանի կողմից նրան մեղսագրվող հանցագործությունները առերևույթ կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի շարունակական առկայության վերաբերյալ հետևությունը հիմնավորված է համարել, ի թիվս այլնի, Մ.Ղազարյանից հաղորդում վերցնելու, կասկածյալի կարգավիճակում վերջինիս հարցաքննության, նրա և Ի.Գասպարյանի միջև կատարված առերես հարցաքննության արձանագրություններով⁷⁸⁶,

- Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը և մերժելով Նախաքննության մարմնի միջնորդությունը, արձանագրել

⁷⁸³ Տե՛ս մասնավորապես, *Գոռ Դուրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ՏԳ/0052/06/14, *Գևորգ Գալստյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ՇԳ/0182/06/16, *Շահեն Կեշիշյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԳ/0097/06/17 որոշումները:

⁷⁸⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁷⁸⁵ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

⁷⁸⁶ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

է, որ կալանավորման պայմանի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանի հետևության հիմքում դրված՝ Մ.Ղազարյանից հաղորդում վերցնելու, կասկածյալի կարգավիճակում վերջինիս հարցաքննության, նրա և Ի.Գասպարյանի միջև կատարված առերես հարցաքննության արձանագրությունները բացակայում են Նախաքննության մարմնի կողմից դատարան ներկայացված նյութերում, իսկ մնացած փաստական տվյալներով հնարավոր չէ հաստատված համարել մեղադրյալ Ի.Գասպարյանի կողմից նրան մեղսագրված հանցագործությունները առերևույթ կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը⁷⁸⁷:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-13.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել Նախաքննության մարմնի կողմից ներկայացված նյութերը: Մասնավորապես, տվյալ պարագայում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Նախաքննության մարմինը որպես միջնորդությունը հիմնավորող նյութ դատարան է ներկայացրել նաև մեղադրյալ Ի.Գասպարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումը, որում վկայակոչված են Մ.Ղազարյանից հաղորդում վերցնելու, կասկածյալի կարգավիճակում նրա հարցաքննության, վերջինիս և Ի.Գասպարյանի միջև կատարված առերես հարցաքննության արձանագրությունները, որոնք Նախաքննության մարմինը ներկայացրել է Ի.Գասպարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված միջնորդությանը կից:

Նշված պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր կասկածի շարունակական առկայության վերաբերյալ հետևությունը Առաջին ատյանի դատարանը կարող էր հիմնավորել՝ վկայակոչելով Մ.Ղազարյանից հաղորդում վերցնելու, կասկածյալի կարգավիճակում նրա հարցաքննության, վերջինիս և Ի.Գասպարյանի միջև կատարված առերես հարցաքննության արձանագրությունները՝ նկատի ունենալով, որ Առաջին ատյանի դատարանը համապատասխան միջնորդությունը քննելիս իր տրամադրության տակ ունեցել է մեղադրյալ Ի.Գասպարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վերոնշյալ դատական ակտը, որով բացահայտված է եղել նշված նյութերից յուրաքանչյուրի բովանդակությունը:

15.1. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, մեղադրյալ Ի.Գասպարյանին կալանքի տակ պահելու

⁷⁸⁷ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Ժամկետը երկարացնելու օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում, անհրաժեշտության դեպքում Նախաքննության մարմնից կարող էր պահանջել Մ.Ղազարյանից հաղորդում վերցնելու, կասկածյալի կարգավիճակում նրա հարցաքննության, վերջինիս և Ի.Գասպարյանի միջև կատարված առերես հարցաքննության արձանագրությունները: Հարկ է նկատել նաև, որ Վերաքննիչ դատարանի նշված նյութերը պահանջելու պարագայում չէր վտանգվի նաև դատարանների միջև գործառույթային կապը կամ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգող դատարանի անկողմնակալությունը: Վերոհիշյալ դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ նշված նյութերը Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ ներառված են կալանավորման պայմանը հաստատող փաստական տվյալների շրջանակներում:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ մեղադրյալ Ի.Գասպարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու պայմանի, այն է՝ հիմնավոր կասկածի շարունակական առկայության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնված է նաև այնպիսի փաստերի և ապացույցների վրա, որոնք Նախաքննության մարմնի կողմից ներկայացված նյութերում բացակայում են, հիմնավոր չէ:

16. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն դիրքորոշմանը, որ Վերաքննիչ դատարանի կողմից նշված նյութերն արդեն իսկ ներկայացվել և իրավական գնահատական են ստացել Առաջին ատյանի դատարանի կողմից՝ մեղադրյալ Ի.Գասպարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննելիս, ուստի վերստին նույն փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված պնդումը հակասում է Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի վերաբերելի պահանջներին⁷⁸⁸:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մարտի 18-ի դատական ակտը բեկանելու համար: Սակայն հաշվի առնելով, որ սույն գործով մինչդատական վարույթն ավարտվել է, Ի.Գասպարյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերաբերյալ կայացվել է նոր որոշում⁷⁸⁹, ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող

⁷⁸⁸ Տե՛ս ի թիվս այնի, սույն որոշման 13.1-րդ կետը:

⁷⁸⁹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

բեկանվել, քանի որ այն եղել է ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել է իր իրավական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Իշխան Վալերիկի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի մարտի 18-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

52.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԱԴ/0025/01/15

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորները</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2021 թվականի նոյեմբերի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր երևան եկած հանգամանքի հիմքով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հունիսի 28-ին Արագածոտնի մարզի քննչական բաժնի Թալինի քննչական խմբի քննիչ Վ.Մխիթարյանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 54102614 քրեական գործը:

2015 թվականի փետրվարի 6-ին ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ս.Մինասյանի (այսուհետ նաև՝ Նախաքննության մարմին) որոշմամբ թիվ 54102614 քրեական գործն ընդունվել է վարույթ:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ Արտյոմ Ֆերդինանտի Նիկոյանը ճանաչվել է տուժող:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ Ֆերդինանտ Նիկոյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

2015 թվականի մարտի 16-ին Նախաքննության մարմնի կողմից Վահրամ Ֆիոդորի Մկոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չեռանալու մասին ստորագրությունը:

2015 թվականի հուլիսի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճռով Վ.Մկոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2 (երկու) տարի ժամկետով: Վճռվել է նաև տուժողի իրավահաջորդ Ֆերդինանտ Նիկոյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանի ներկայացրած քաղաքացիական հայցը բավարարել մասնակիորեն և պատասխանող «Ռոսգոստրախս Արմենիա» ՓԲԸ-ից բռնագանձել 5.033.376 ՀՀ դրամ, որից 1.776.000 ՀՀ դրամը՝ որպես ավտոմեքենային պատճառված վնասի, իսկ 3.257.376 ՀՀ դրամը՝ տուժող Արտյոմ Ֆերդինանտի Նիկոյանի առողջության վերականգնմանն ուղղված ծախսերի հատուցում: Հայցի մնացած մասը թողնվել է առանց քննության՝ տուժողի իրավահաջորդ Ֆ.Նիկոյանին վերապահելով քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելու իրավունք:

3. Վերոնշյալ դատավճռի դեմ ամբաստանյալ Վ.Մկոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճել է և Վ.Մկոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով: Տուժողի իրավահաջորդ Ֆերդինանտ Նիկոյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել տուժողի իրավահաջորդ Ֆ.Նիկոյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանը՝ խնդրելով քաղաքացիական հայցի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

5. Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 24-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդ Ֆ.Նիկոյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

6. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Վ.Էլբակյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված հաղորդման հիման վրա առ այն, որ

Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 2017 թվականի ապրիլի 5-ին, տուժող Արտյոմ Նիկոյանը մահացել է, Արագածոտնի մարզի դատախազության դատախազ Վ.Ղազարյանի՝ 2017 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ, նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցվել է վարույթ, որով քննությունը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչությանը:

7. Արտյոմ Նիկոյանի մահվան վերաբերյալ նոր երևան եկած հանգամանքի քննության արդյունքներով Արագածոտնի մարզի դատախազության ավագ դատախազ Վ.Մելքոնյանի կողմից 2019 թվականի օգոստոսի 26-ին կազմված եզրակացության հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը 2019 թվականի սեպտեմբերի 16-ին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ խնդրելով նոր երևան եկած հանգամանքի հիմքով Վահրամ Մկոյանի վերաբերյալ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

8. Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ հարուցվել է դատական ակտի վերանայման վարույթ և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի նոյեմբերի 3-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

II. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. Նախաքննության մարմնի կողմից Վահրամ Մկոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով այն արարքի համար, որ նա «2014 թվականի հունիսի 18-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, իր վարած «Տոյոտա 4 Ռոնեո» մակնիշի 34 UM 551 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով դեպի Գյումրի քաղաք երթևեկելիս Արմավիր-Գյումրի ավտոճանապարհի 44-րդ կմ հատվածում իր երթևեկության համար վրանգավոր իրադրության առաջացման, այն է՝ շուրջ 80-150մ հեռավորությունից հայրնաբերելով, որ հանդիպակաց երթևեկող Արտյոմ Նիկոյանի վարած «Օպել Վեկորա» մակնիշի 34 NZ 198 հաշվառման համարանիշի ավտոմեքենան երթևեկում է իր երթևեկելի՝ դեպի Գյումրի ուղեմասով, այդ պահից սկսած ժամանակին չձեռնարկելով անհրաժեշտ համապարասխան միջոցներ, առանց իր երթևեկության ուղղությունը փոխելու ժամանակին կատարած արգելակումով իր ավտոմեքենայի ընթացքի արագությունն իջեցնելու՝ ընդհուպ այն կանգնեցնելու ուղղությամբ, այլ իր երթևեկության համար վրանգավոր իրադրությունը հայրնաբերելով շարունակել է երթևեկությունը, ուշացած դիմել է արգելակման, մասնրել է դեպի ձախ, դրանով իսկ թույլ տվել ՃԵԿ-ի 67-րդ պահանջին հակասող գործողություն, ինչի արդյունքում իր վարած ավտոմեքենան դուրս է բերել

հանդիսակազմ՝ ղեպի Արմավիր երթուղիի գոյի, որտեղ ընդհարվել է Արդյուն Նիկոյանի վարած «Օպել Վեկորա» մակնիշի 34 NZ 198 հաշվառման համարանիշի ավտոմեքենային և Ա.Նիկոյանի առողջությանն սնագոյությանը պարճատվել է ծանր մարմնական վնասվածք՝ կյանքին վրանգ սպառնացող»⁷⁹⁰:

10. Դատարճչկական փորճաքնության 2014 թվականի հունիսի 27-ի թիվ 37/հ եզրակացության համաճայն՝ «Ա.Նիկոյանի սրացած մարմնական վնասվածքները բաց, թափանցող գանգոդեղային վնասվածքի՝ զույգ աչքերի վերին կույերի արյունազեղումների, գլխի ճախ հեղմաճակարաքունքային շրջանի փափուկ կյուվածքների սալարդի, գանգի բազմակի բազմաբեկորային կորվածքների, գլխուղեղի ծանր սալարդի, գլխուղեղի արյունազեղման, ճախից կողերի կորվածքների, թոքերի սալարդի, զույգ ազրոսկրերի կորվածքների ձևով, հասցվել են բույ սուարկաներով, հնարավոր է որոշման մեջ նշված ժամկետում, և պարճատվել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող»⁷⁹¹:

11. Առացին աույանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճռի համաճայն՝ «Դատարանը գրնում է, որ ամբասարանյալին մեղասգրված արարքը ճիշտ է որակված և համասարափանում է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հորվածի 1-ին մասով նախարեալված հանցագորճության հարկանիշներին (...): Դատարանը գրնում է, որ սպացուցված է նաև այդ արարքը Վահրամ Մկոյանի կողմից կարարելը, ինչպես նաև նրա մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հորվածի 1-ին մասով նախարեալված հանցագորճության կարարման մեջ, որի համար նա ենթակա է պարճի: (...)»⁷⁹²:

12. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշման համաճայն՝ «ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հորվածի 1-ին մասի սանցիայով նախարեալված ազարագրկման ձևով պարճի սուավեազույն ժամկետը երկու րարի է, այսինքն՝ Վահրամ Մկոյանին մեղասգրվող արարքը ոչ մեճ ճանրության հանցագորճություն է: Ըար սուաշարված մեղարանքի Վահրամ Մկոյանին մեղասգրվող ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հորվածի 1-ին մասով նախարեալված արարքն ավարվել է 2014 թվականի հունիսի 18-ին:

Վերաքննիչ դատարանը, նկարիոնենալով, որ Վահրամ Մկոյանին մեղասգրվող ոչ մեճ ճանրության հանցագորճությունն ավարված համարելու օրվանից սնցել է ավելի քան 2 րարի և Վերաքննիչ դատարանի րրամարության րակ սուկա չէ փասարական որևէ րվյալ այն մասին, որ քրեական պարասփանարվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքն ընդհարվել է նրա կողմից միջին ճանրության, ճանր կամ սուանճասպես ճանր նոր հանցանքի կարարմամբ, ինչպես նաև Վահրամ Մկոյանը չի սուարկում վաղեմության ժամկետներն սնցնելու հիմքով իր վերաբերյալ քրեական գորճի կարճման ու քրեական հերասպորման դարարեցման ղեմ, գրնում է, որ պերք է թիվ ԱԲԱԴ/0025/01/15 քրեական գորճի վարույթը կարճել և Վահրամ Մկոյանի նկարմամբ քրեական հերասպորմը

⁷⁹⁰ Տեն քրեական գորճ, հատոր 1-ին, թերթեր 122-123:

⁷⁹¹ Տեն քրեական գորճ, հատոր 1-ին, թերթեր 44-45:

⁷⁹² Տեն քրեական գորճ, հատոր 3-րդ, թերթեր 128-144:

դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով»⁷⁹³:

13. 2014 թվականի հունիսի 18-ին ավտովթարի ենթարկվելուց ու ծանր մարմնական վնասվածք ստանալուց հետո Ա.Նիկոյանը տարբեր ժամանակահատվածներում բուժում է ստացել «Իզմիրյան» և «Արմենիա» բժշկական կենտրոններում ու դեպքից շուրջ 3 տարի անց՝ 2017 թվականի ապրիլի 5-ին մահացել է⁷⁹⁴:

14. Նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի ընթացքում նշանակված՝ 2017 թվականի դեկտեմբերի 15-ի՝ հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության թիվ 268/հձ եզրակացության համաձայն՝ «(...) [Ի]նչպիսիք անիշխայես հետո 2014թ. և 2017թ. մահվանից հետո կայացված ախտորոշումները ըստ էության համապատասխանում են միմյանց, որից հետևում է, որ մահը պետք է պայմանավորված լիներ դեռևս 2014թ. արագած վնասվածքներով, այդ թվում գանգոռեղային վնասվածքով: Բսկ բժշկական փաստաթղթերի հետազոտումն աստիճանաբար ցուցաբերում է դեպքի ախտաբանական փոփոխությունները, մասնավորապես դիակի ախտաբանական փոփոխությունները, որոնք ցուցաբերում են մահվան հետ չի գրնվում պարանոսական կապի մեջ, քանի որ ըստ այդ եզրակացության (ախտաբանական փոփոխությունները եզրակացություն թիվ 169) չի արված որևէ եզրահանգում գլխուղեղի տրամաբանական կամ հետադարձաբանական ախտաբանական մասին: Վերոգրյալը հիմք է տալիս կարարելու եզրահանգում, որ ախտաբանական փոփոխությունները ժամանակ չի իրականացվել դիակի լիարժեք ուսումնասիրություն, այն է՝ չի կատարվել զանգի խոռոչի հերձում և գլխուղեղի մակրոսկոպիկ և միկրոսկոպիկ ուսումնասիրություն, ինչը մահվան պարճառի որոշման համար ունի անհրաժեշտ կարևորություն՝ կրճալանդակի և որովայնի օրգանների ուսումնասիրության հետ համարել ներքին օրգանների և հյուսվածքների ախտաբանական փոփոխությունների գնահատման առումով, իսկ բժշկական փաստաթղթերի, դիակի ախտաբանական փոփոխությունները ուսումնասիրության փոփոխությունները ընդհանուր առմամբ վկայում են արտահայտված բորբոքային բնույթի հիվանդությունների մասին: Հանձնաժողովը հարկ է համարում նշելու, որ, քանի որ ինչպես նշվեց վերը, լիարժեք չի իրականացվել դիակի ախտաբանական փոփոխությունների, ուսումնասիրությունների, փոխ արոյգ և միանշանակ գնահատականներ իրականացված հետազոտությունների, ախտորոշումների, բուժումների, դրանց ընթացքում թույլ տրված հնարավոր բացթողումների և դրանց պարանոսական կապին մահվան հետ հնարավոր չէ»⁷⁹⁵:

15. 2019 թվականի հունիսի 27-ին նախաքննության մարմինը ստացել է կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության թիվ 18-0374 եզրակացությունը, համաձայն որի՝ «Ելնելով Ա.Նիկոյանի դիակի

⁷⁹³ Տես քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 31-36:

⁷⁹⁴ Տես նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութեր, թերթեր 14-18, 86:

⁷⁹⁵ Տես նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութեր, թերթեր 95-98:

ախարաբանասանսարումիական հեղազոտության թիվ 169 «Եզրակացության» րվյալներից՝ նրա ներքին օրգանների նկարագրված ախարաբանական փոփոխությունների զարգացվածության աստիճանից, ինչպես նաև սույն փորձաքննության իրականացման շրջանակներում կատարված հյուսվածքաբանական հեղազոտության արդյունքներից, գրնում ենք, որ թիվ 169 «Եզրակացության» մեջ նկարագրված «Երոնիկական օարեոմիելիդ, երկրորդմանի րոբալ թոբաբոբ՝ միկրոարսցեանների առաջացումով: Էնրոգեն ինրոբսիկացիա, երկամների ոլորուն խողովակների ծանր դիարոբֆիա և նեկրոգ, լյարդի հյուսվածքում նեկրոզի րարածուն օջահներ, րրամականի ալրոց, անհավասարաչափ արյունալեցում՝ կարդիոմիոցիդների ֆրանգմենրացիայի և միոլիզի բազմաթիվ օջահներով, թոբերի ալրոց: Ամիլոիդոզ երկամների և փայծաղի ախրահարումով: Էրոգիդ գասրիիդ: «Անասարկա» ախարաբանական փոփոխությունների համակցությունն ինքնին կարող էր հանգեցնել Ա.Նիկոյանի մահվանը և ալրայիսք, ելնելով ներկայացված բժշկական փասրաթղթերի րվյալներից, գրնում են պարանասիերանրային կասի մեջ 2014թ. արացված և թիվ 37/հ «Փորձագերի եզրակացության» մեջ նշված մարմնական վնասվածքների և դրանց արդյունքում զարգացած հեղազոտության բարդությունների հեղ:

Ներկայացված «Արմենիա» ՀԲԿ-ում 2014 թվականի հունիսի 19-ին Արոյում Նիկոյանի անվանը լրացված թիվ 2771-15-37 արացիոնար հիվանդի բժշկական քարրի րվյալների, «Իզմիրլյան» ԲԿ-ում 30.03.2015թ. Ա.Նիկոյանի անվանը լրացված թիվ 1261/169/936/1299/1494 արացիոնար հիվանդի բժշկական քարրի քերոպարճենի րվյալների, 23.01.2017թ. «Արմենիա» ՀԲԿ-ում Ա.Նիկոյանի անվանը լրացված թիվ 340 մեծահասակի հիվանդության պարմագրի րվյալների, ինչպես նաև Ա.Նիկոյանի դիակի ախարաբանասանսարումիական հեղազոտության թիվ 169 «Եզրակացության» րվյալների համարված վերլուծության արդյունքերը հիմք են րայիս եզրակացնել, որ նրան րվյալ ժամկերներում նշված բուժասարարություններում ցուցաբերված բուժօգնությունը եղել է բավարար ծավալով, համապարասիանել է բավարար ծավալով իրականացված հեղազոտությունների արդյունքում նրան րրված ախորոշումներին ու կլինիկական վիճակին, նշված բուժասարարություններում րարբեր ժամկերներում իրականացված վիրահարական միջամրությունները կատարվել են ժամանակին, բավարար ծավալով և եղել են ցուցված:

Համարելով ներկայացված՝ Ա.Նիկոյանի վերաբերյալ լրացված բժշկական փասրաթղթերի րվյալների, նրա դիակի ախարաբանասանսարումիական հեղազոտության թիվ 169 «Եզրակացության» և սույն փորձաքննության իրականացման շրջանակներում կատարված հյուսվածքաբանական հեղազոտությանը ձեռք բերված րվյալների վերլուծության արդյունքերը, հաշվի առնելով նաև դարարբժշկական փորձաքննության թիվ 37/հ «Փորձագերի եզրակացության» մեջ արճանագրված 18.06.2014թ.-ին Ա.Նիկոյանի արացած մարմնական համակցված վնասվածքների բնոյթը, րեղակայություններն ու ծանրության աստիճանը, մասնավորապես ծայրահեղ ծանր համակցված գանգոդեղային վնասվածքը և վնասվածքները արանսարուն հաջորդող՝ մինչ

05.04.2017թ.-ին նրա մասին ընկած ժամանակահատվածում հիմնականում դրանով և զույգ ազդերի կորսվածքներով պայմանավորված զարգացած ախտաբանական կայուն փոփոխությունների բնույթը, ընթացքի առանձնահատկությունները ու արտահայտվածության աստիճանները, գրնում ենք, որ հիմքեր չկան համարելու, որ «Արմենիա» ՀԲԿ-ում և «Իզմիրյան» ԲԿ-ում Կարբեր ժամկետներում Ա.Նիկոյանին ցուցաբերված բուժօգնության ընթացքում թույլ են փորձվել այնպիսի թերություններ կամ բացթողումներ, որոնք գրնվելին պատճառահետևանքային կապի մեջ նրա մահվան հետ:

Ա.Նիկոյանի վերաբերյալ դատաբժշկական փորձաքննության թիվ 268/հձ «Եզրակացության» մեջ փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդները նշված չեն, ուստի դրանց գիտականորեն հիմնավորված լինելու վերաբերյալ հարցը պարզել հնարավոր չէ»⁷⁹⁶:

16. Նույն օրը՝ 2019 թվականի հունիսի 27-ին, նախաքննության մարմինը ստացել է նաև լրացուցիչ հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության թիվ 18-1051 եզրակացությունը, համաձայն որի՝ «Ելնելով Ա.Նիկոյանի դիակի ախտաբանաանատոմիական հետազոտության թիվ 169 «Եզրակացության» փյալներից՝ նրա ներքին օրգանների նկարագրված ախտաբանական փոփոխությունների զարգացվածության աստիճանից, ինչպես նաև սույն փորձաքննության իրականացման շրջանակներում կատարված հյուսվածքաբանական հետազոտության արդյունքներից, գրնում ենք, որ Ա.Նիկոյանի դիակի ախտաբանաանատոմիական ուսումնասիրության ընթացքում կատարված հետազոտությունները՝ այդ թվում՝ դիակերձումը, իրականացվել է ճիշտ, թիվ 169 «Եզրակացության» մեջ նկարագրված «Խրոնիկական օսրետոմիելիտ, երկկողմանի փոքրալ թոքաբորբ՝ միկրոարքանների առաջացումով: Էնդոգեն ինֆոքսիկացիա, երկկողմանի ոլորուն խողովակների ծանր դիստրոֆիա և նեկրոզ, լյարդի հյուսվածքում նեկրոզի փարածուն օջախներ, արբանականի այրուց, անհամաարաչափ արյունալեցում՝ կարդիոմիոցիտների ֆրանգմենտացիայի և միոլիզի բազմաթիվ օջախներով, թոքերի այրուց: Ամիոլիոզ՝ երկկողմանի և փայծաղի ախտահարումով: Էրոզիալ գաստրիտ: «Անասարկա» ախտաբանական փոփոխությունների համակցությունն ինքնին կարող էր հանգեցնել Ա.Նիկոյանի մահվան, սակայն հաշվի առնելով 19.06.2014թ. ժամկետում «Արմենիա» ՀԲԿ-ում նրան փորված ախտորոշումը՝ այդ թվում՝ ծանր գանգրուլեզային վնասվածքի վերաբերյալ, նպատակահարմար էր Ա.Նիկոյանի դիակի ախտաբանաանատոմիական ուսումնասիրության ընթացքում ի թիվս կրծքավանդակի և որովայնի խոռոչի օրգանների իրականացնել գանգր կազմող ոսկրերի և գլխուղեղի հետազոտություն՝ կրած գանգրուլեզային վնասվածքից և դրա կապակցությամբ կատարված վիրահատական միջամտությունից հետո ախտաբանական փոփոխությունների գնահատման նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վթարի արդյունքում Ա.Նիկոյանի վիճակի

⁷⁹⁶ Տե՛ս նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութեր, թերթեր 175-194:

ծանրությունը պայմանավորող հիմնական վնասվածքներից է հանդիսացել ծանր գանգոռեղային վնասվածքը գլխուղեղի ախտահարումով և կենտրոնական նյարդային համակարգի ֆունկցիաների կայուն խանգարումով, որոնք ինքնին գրնվում են պարճատահերևանքային կապի մեջ Ա.Նիկոյանի վիճակի ծանրությունը պայմանավորող ախտաբանական փոփոխությունների ընդհանուր համակցության, դրանց զարգացման ընթացքով պայմանավորված բացասական դինամիկայի հետ, ուստի գլխուղեղի ախտաբանական փոփոխությունները Ա.Նիկոյանի մահվան բերած ախտաբանությունների համակցությունից տարանջատման ենթակա չէ: Համադրելով ներկայացված՝ Ա.Նիկոյանի վերաբերյալ լրացված բժշկական փաստաթղթերի տվյալների, նրա դիակի ախտաբանաանատոմիական հետազոտության թիվ 169 «Եզրակացության» և սույն փորձաքննության իրականացման շրջանակներում կատարված հյուսվածքաբանական հետազոտությամբ ձեռք բերված տվյալների վերլուծության արդյունքները, հաշվի առնելով նաև դատաբժշկական փորձաքննության թիվ 37/հ «Փորձագետի եզրակացության» մեջ արձանագրված 18.06.2014թ.-ին Ա.Նիկոյանի սրացած մարմնական համակցված վնասվածքների բնույթը, տեղակայություններն ու ծանրության աստիճանը, մասնավորապես ծայրահեղ ծանր համակցված գանգոռեղային վնասվածքը և վնասվածքները սրանսպուն հաջորդող՝ մինչ 05.04.2017թ.-ին նրա մահն ընկած ժամանակահատվածում հիմնականում դրանով և զույգ ազդերի կտրվածքներով պայմանավորված զարգացած ախտաբանական կայուն փոփոխությունների բնույթը, ընթացքի առանձնահատկությունները ու արտահայտվածության աստիճանները, գրնում ենք, որ հիմքեր չկան համարելու, որ «Արմենիա» ՀԲԿ-ում և «Բզմիրյան» ԲԿ-ում տարբեր ժամկետներում Ա.Նիկոյանին ցուցաբերված բուժօգնության ընթացքում թոյլ են տրվել այնպիսի թերություններ կամ բացթողումներ, որոնք գրնվելին պարճատահերևանքային կապի մեջ նրա մահվան հետ»⁷⁹⁷:

III. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

17. Ըստ բողոքաբերի՝ նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութերից երևում է, որ ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած հանգամանքներ, որոնք ինքնին, ինչպես նաև՝ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալ Վ.Մկոյանի կատարած հանցանքի ավելի ծանր լինելը:

18. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի ընթացքում նշանակված և 2019 թվականի հունիսի 24-ին ավարտված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունից երևում է, որ Ա.Նիկոյանի մահը գտնվում է պատճառահետևանքային կապի մեջ 2014 թվականին ստացած (փորձագետի թիվ 37/հ եզրակացության մեջ նշված) մարմնական վնասվածքների և

⁷⁹⁷ Տե՛ս նոր երևան եկած հանգամանքի հետևանքով հարուցված վարույթի նյութեր, թերթեր 197-216:

դրանց արդյունքում զարգացած հետվսասվածքային բարդությունների հետ: Բողոքաբերը գտել է, որ հիշյալ հանգամանքն առերևույթ ապացուցում է, որ Վ.Մկոյանը կատարել է ավելի ծանր հանցանք, քան այն, որը նախկինում վերջինիս մեղաազարկել է: Այսինքն՝ ըստ բողոքաբերի՝ Վ.Մկոյանը կատարել է հանցանք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, այլ ոչ թե նույն հոդվածի 1-ին մասով, հետևաբար քրեական գործը նոր քննության նպատակով պետք է ուղարկվի առաջին ատյանի դատարան՝ Վահրամ Մկոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդման առումով համապատասխան գործընթաց իրականացնելու համար:

18.1. Բողոքի հեղինակն ընդգծել է, որ տուժող Ա.Նիկոյանը մահացել է քրեական գործով կայացված դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, ինչը նշանակում է, որ դրանք կայացրած դատարանները, ինչպես նաև քրեական հետապնդման մարմինները չեն իմացել և չէին կարող իմանալ նշված հանգամանքի մասին:

19. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

IV. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

20. Վճռաբեկ դատարանի համոզմամբ, դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո նոր հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելը որպես նոր հանգամանք դիտարկելու իրավական հնարավորության բացակայությունն առաջացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության խնդիր: Ուստի առկա օրենսդրական բացի համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիմել ՀՀ Սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան)՝ նշված նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

Ա. Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումով գործը քննության ընդունելու հիմնավորումները.

21. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել ներքոշարադրյալ հարցերը.

1) Արդյո՞ք դիմումով բարձրացվող խնդիրը ենթակա է Սահմանադրական դատարանի քննությանը (ratione materia).

Սույն դիմումի շրջանակներում բարձրացվում է տուժողի (տուժողի իրավահաջորդի) սահմանադրական հիմնարար իրավունքների պաշտպանության խնդիրը: Մասնավորապես, դատական ակտն օրինական

ուժի մեջ մտնելուց և վերջնական (*res judicata*) դատնալուց հետո հանցավոր արարքի հետ պատճառական կապի մեջ գտնվող նոր հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելու դեպքում տուժողի (տուժողի իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության անհնարինությունը *prima facie* հանգեցնում է նրանց դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների խախտման: Նշվածն իր հերթին հանգեցնում է հիմնական իրավունքները կարգավորելիս օրենքով դրանց իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսելու սահմանադրական պահանջի խախտման: Բացի այդ, այն անհնար է դարձնում այդ հիմնական իրավունքի վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջի իրականացումը:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ Վճռաբեկ դատարանը բարձրացնում է գործող սահմանադրական իրավակարգավորումների պայմաններում տուժողի (տուժողի իրավահաջորդի) արդար դատաքննության իրավունքի պաշտպանության խնդիրը: Մասնավորապես, ներպետական և միջազգային իրավական փաստաթղթերի համեմատական ուսումնասիրությունից հետևում է, որ այդ իրավունքը կրող սուբյեկտների շրջանակը տարբեր է: Եթե «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) որպես նշված իրավունքի կրող է համարում այն անձին, ում քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների կապակցությամբ առկա է վեճ, կամ նրան առաջադրված է մեղադրանք, ապա ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը և ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, նշված իրավունքը կրող հատուկ սուբյեկտների շրջանակ չեն առանձնացնում: Այլ կերպ՝ ներպետական օրենսդրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք օգտվում է արդար դատաքննության իրավունքից: Այսինքն՝ պետք է արձանագրել, որ այդ առումով ներպետական օրենսդրությամբ սահմանված երաշխիքի իրավական գործողության շրջանակը, ի համեմատություն միջազգային իրավական փաստաթղթում ամրագրված շրջանակի, առավել լայն է: Ուստի, արդար դատաքննության իրավունքը կրող սուբյեկտների շրջանակը որոշելիս պետք է ելնել ներպետական օրենսդրությամբ ամրագրված կարգավորումներից՝ միաժամանակ հաշվի առնելով այդ իրավունքի բովանդակության վերաբերյալ միջազգային մարմինների կողմից տրված մեկնաբանությունները⁷⁹⁸:

Վերոգրյալի պայմաններում, նկատի ունենալով, որ տուժողը (տուժողի իրավահաջորդը) ներպետական սահմանադրական մակարդակում դիտարկվում

⁷⁹⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Լիլիթ Վարդանյանի և Զարինե Ալվազյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0016/01/14 որոշումը, կետ 19.1:

է որպես արդար դատաքննության իրավունքի կրող, ապա այդ իրավունքի համատեքստում է ենթակա դիտարկման նաև քրեական դատավարությունում տուժողի (տուժողի իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության ամբողջական հայեցակարգը, այդ թվում՝ քրեական արդարադատության մատչելիության իրավունքն ու քրեական դատավարությունում սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև հատուցում ստանալու իրավունքը: Այս առումով անհրաժեշտ է երաշխավորել քրեական դատավարությունում տուժողի իրավունքների պաշտպանության դուալիստական մոտեցման լիարժեք իրացումն այն առումով, որ մի կողմից՝ տուժողի (տուժողի իրավահաջորդի) մասնակցությամբ ապահովվի ենթադրյալ հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվության անխուսափելիությունը, ընդ որում՝ անկախ դատական ակտն օրինական ուժի մեջ մտած լինելու հանգամանքից, մյուս կողմից՝ նոր փաստական հանգամանքների պայմաններում անհրաժեշտ ծավալով փոխհատուցում ստանալու հնարավորությունը: Այս համատեքստում խնդրո առարկա իրավունքը մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև Միավորված ազգերի կազմակերպության՝ «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների» 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/34 հռչակագրի⁷⁹⁹, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժածի կարգավիճակի մասին» R(85)11 հանձնարարականի դրույթները⁸⁰⁰՝ արդարադատության մատչելիության և փոխհատուցման իրավունքների վերաբերյալ:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը կարծում է, որ սույն դիմումով բարձրացվող խնդիրը գտնվում է Սահմանադրական դատարանի առարկայական իրավագրության տիրույթում:

2) Արդյո՞ք դիմողը Սահմանադրական դատարան դիմելու պատշաճ սուբյեկտ է (ratione personae).

ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասի և 169-րդ հոդվածի 4-րդ մասի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն իրավասու է իր վարույթում գտնվող կոնկրետ գործով դիմել Սահմանադրական դատարան: Տվյալ դեպքում, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ հարուցվել է դատական ակտի վերանայման վարույթ և բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ, որի շրջանակներում էլ դիմումը

⁷⁹⁹ Տես Միավորված ազգերի կազմակերպության՝ «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների» 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/34 հռչակագիրը:

⁸⁰⁰ Տես Recommendation R(85)11 of the Committee of Ministers to Member states on the position of the victim in the framework of criminal law and procedure, Council of Europe, 28 June 1985:

ներկայացվում է Սահմանադրական դատարան, ուստի Վճռաբեկ դատարանը Սահմանադրական դատարան դիմելու պատշաճ սուբյեկտ է:

3) Արդյո՞ք ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերով ՀՀ Սահմանադրական դատարանի առարկայական իրավագործությանը վերապահված գործերով ներկայացված դիմումում Վճռաբեկ դատարանի կողմից առաջադրվող հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում:

Սույն դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ Վճռաբեկ դատարանին հայտնի չէ առաջադրվող հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշում, որը նաև հրապարակված կլինի Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում:

4) Արդյո՞ք Վճռաբեկ դատարանի դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում ներկայումս իրականացվում է գործի դատաքննություն.

Սույն դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ Վճռաբեկ դատարանին հայտնի չէ առաջադրվող հարցի վերաբերյալ այլ՝ վարույթ ընդունված և դատաքննության նշանակված դիմում, որի մասին նաև նշված կլինի Սահմանադրական դատարանի նիստերի ժամանակացույցում:

5) Արդյո՞ք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի գործողությունը դադարել է կամ այն չի կիրառվել կամ ենթակա չէ կիրառման.

Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը ներկայումս գտնվում է գործողության մեջ և շարունակվելու է պահպանել իր իրավական գործողությունը մինչև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 2022 թվականի հուլիսի 1-ը⁸⁰¹: Այս առումով Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում Սահմանադրական դատարանի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ բարձրացվող սահմանադրաիրավական խնդիրն առկա է նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում: Ուստի, բարձրացվող խնդիրը տուժողի (տուժողի իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության հայեցակարգի ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ մարտահրավերներից է, որն անհրաժեշտ է լուծել՝ ելնելով տուժողի (տուժողի իրավահաջորդի) սահմանադրական հիմնարար իրավունքների բովանդակությունից:

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հիմքերի կիրառելիությանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դրանք չեն կիրառվել և օբյեկտիվորեն չէին էլ կարող կիրառվել՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո նոր հանրորեն

⁸⁰¹ Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, www.arlis.am :

վտանգավոր հետևանքների վրա հասնելու փաստը օրենսդրությամբ որպես նոր հանգամանք դիտարկելու՝ դատական ակտի վերանայման հիմքի բացակայության պատճառով: Հետևաբար, թե՛ վճռաբեկ բողոքի հեղինակի կողմից բողոքը ներկայացնելիս, թե՛ Վճռաբեկ դատարանի կողմից այն վարույթ ընդունելու հարցը լուծելիս և առերևույթության մակարդակով դատական ակտի վերանայման հիմքերը ստուգելիս, օբյեկտիվորեն չէր կարող կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը: Այդ պատճառով ներկայացված դիմումը քննարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ դատական ակտի վերանայման՝ նոր երևան եկած հանգամանքի համատեքստում: Մակայն, ինչպես կներկայացվի սույն դիմումի շրջանակներում, դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո նոր հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելու փաստը չի կարող հանդիսանալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման նոր երևան եկած հանգամանք, այն կարող է դիտարկվել միայն որպես նոր հանգամանք, որն էլ սահմանված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասում և հանդիսանում է Սահմանադրական դատարան ներկայացվող սույն դիմումի առարկան:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ներկայացվող դիմումով գործը քննության ընդունելու փուլում Վճռաբեկ դատարանը Սահմանադրական դատարանի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ սույն պարագայում տուժողի մահվան փաստը որպես նոր հանգամանք դիտարկելու և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի օրենսդրական բացն արձանագրելու դեպքում սույն գործի շրջանակներում այն ենթակա է լինելու անմիջական կիրառման՝ դատական ակտի վերանայման՝ նոր երևան եկած հանգամանքով հարուցված վարույթը դատական ակտի վերանայման նոր հանգամանքով վարույթի փոխակերպելու միջոցով: Այլ կերպ, անձի մահվան փաստը ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման ուժով իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում կարող է ընկալվել որպես նոր հանգամանք, ինչպես օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ թիվ ՍԴՌ-1348 որոշման ուժով արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում Սահմանադրական դատարանի որոշումից հետո ընկալվեց որպես նոր հանգամանք, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ենթարկվեցին վերանայման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով⁸⁰²: Հարկ է ընդգծել, որ քրեական դատավարությունում վարույթի փոխակերպման գաղափարն ընդունելի է նաև Սահմանադրական դատարանի համար և որպես այլ իրավական խնդրի լուծում առաջ է քաշվել վերջինիս կողմից: Մասնավորապես, թիվ ՍԴՌ-1382 որոշման շրջանակներում Սահմանադրական արդարադատություն

⁸⁰² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշումը:

իրականացնող բարձր դատարանը գտել է, որ համապատասխան հիմքերի առկայության դեպքում դատարաններն իրավասու են *ընդհանուր հիմունքներով* քննվող վարույթը փոխակերպել անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման *հարույ վարույթի*⁸⁰³: Ուստի, վարույթների փոխակերպման առնչությամբ ներկայումս ձևավորված է կայուն իրավակիրառ պրակտիկա, բացի այդ, նշված գաղափարն իր օրենսդրական ամրագրումն է ստացել նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մի շարք կարգավորումների շրջանակներում⁸⁰⁴: Հետևաբար, սույն դիմումով բարձրացվող հարցով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի օրենսդրական բացն արձանագրելու դեպքում սույն գործով այն լինելու է կիրառման ենթակա անմիջական նորմ՝ նոր երևան եկած հանգամանքի հիմքով հարուցված դատական ակտի վերանայման վարույթից անցում կատարելով նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթի:

22. Այսպիսով, ամփոփելով նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կարծում է, որ ներկայացվող դիմումը *prima facie* համապատասխանում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի պահանջներին:

Բ. Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումի հիմնավորումները.

23. Սույն գործով Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող իրավական հարցը հետևյալն է. *դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հանցավոր արարքի հետ պարձառական կապի մեջ գրնվող նոր հանրորեն վրանգավոր հետևանքների վրա հասնելը, որոնք կարող են հիմք հանդիսանալ անձին ավելի ծանր հանցանք մեղաագրելու համար, որպես նոր հանգամանք դիտարկելու իրավական հնարավորության բացակայության պայմաններում* ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ *սույն օրենսդրական բացն արդյո՞ք չի սրբեղծում փոստոյի (փոստոյի իրավահաջորդի) դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների, այդ թվում՝ արդարադատության մարչելիության իրավունքի, սոցիալական արդարության վերականգնման և հարուցում սրանալու իրավունքի իրացման անհատթօհարելի խոչընդոտ, ինչպես նաև հանգեցնում հիմնական իրավունքները կարգավորելիս օրենքով դրանց իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսելու, Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջների խախտման:*

⁸⁰³ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ ՍԳՈ-1382 որոշումը, կետ 5:

⁸⁰⁴ Տե՛ս օրինակ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 422-րդ հոդվածը:

1) Դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո նոր հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելը՝ որպես դատական ակտերի վերանայման հիմք՝ գործող իրավական կարգավորումների համատեքստում.

24. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե սուկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գրել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

24.1. Ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտի, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով, որպես մարդու խախտված իրավունքներն արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգնելու բացառիկ արդարադատական միջոցի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, դրա միակերպ ընկալման ու կիրառման խնդիրներին Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում⁸⁰⁵: Հատկանշական է, որ դատական ակտերի վերանայման նոր երևան եկած հանգամանքների համատեքստում Սահմանադրական դատարանը նշել է, որ՝

– նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն իրավական լուրջ երաշխիք է անձի խախտված իրավունքները վերականգնելու, դատական սխալներն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ⁸⁰⁶,

– այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ **չնայած օբյեկտիվորեն գոյություն են ունեցել գործով վերջնական դատական ակտի կայացման պահին**, սակայն հայտնի չէին և (կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում՝ նորահայտ են⁸⁰⁷:

Վերոգրյալի հետ մեկտեղ, մեկ այլ որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ *նոր հանգամանքների հիման վրա* դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության

⁸⁰⁵ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՈ-1222 որոշումը, կետ 6:

⁸⁰⁶ Տե՛ս նույն տեղում:

⁸⁰⁷ Տե՛ս նույն տեղում:

իրենց սահմանադրական իրավունքը⁸⁰⁸: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը կարևորել է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական և(կամ) կոնվենցիոն իրավունքների վերականգնումը: Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետևանքների վերացում⁸⁰⁹:

25. Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագրության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարտվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կերի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը րվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայր են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

25.1. Վերոնշյալ հոդվածի 2-րդ մասի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն, և քրեական գործերով դրանք պետք է գնահատվեն թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո, ինչը հստակորեն թույլատրում է պայմանավորվող պետություններին վերաբացել գործը նոր հանգամանքների առկայության դեպքում կամ երբ տեղ են գտել վարույթի էական թերություններ⁸¹⁰: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ՝

- այն հանգամանքները, որոնք գործի դատավարության ընթացքում գոյություն են ունեցել, սակայն դատարանին հայտնի չեն եղել և ի հայտ են գալիս միայն դատավարության ավարտից հետո, «նոր երևան եկած» հանգամանքներ են,

- այն հանգամանքները, որոնք ծագում են դատավարության ավարտից հետո, կոչվում են «նոր» հանգամանքներ:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «նոր կամ նոր երևան եկած» հանգամանքներ եզրույթը ներառում է նոր ապացույցներ, որոնք վերաբերում են նախկինում գոյություն ունեցող

⁸⁰⁸ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 15-ի թիվ ՍԳՌ-751 որոշումը, կետ 9:

⁸⁰⁹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԳՌ-1099 որոշումը, կետ 6:

⁸¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի [ՄԳ]՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 129:

վաստերին⁸¹: Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած մոտեցման համաձայն՝ վարույթի վերաբացումը հիմնավորող հիմքերն ըստ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի, պետք է այնպիսին լինեն, որ կամ հոգուտ անձի կամ ի վնաս վերջինիս **ազդեն գործի ելքի վրա**⁸²:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածում նախատեսված են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքների՝ հետևյալ երեք խումբ դեպքերում վերանայելու հիմքերը.

- օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվել են ոչ իրավաչափ գործողությունների կատարման հանգամանքներ, որոնք հանգեցրել են չհիմնավորված կամ անօրինական դատական ակտի կայացմանը,

- ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է,

- համագործակցության վարույթով դատավճիռ կայացնելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հիմնավորում են, որ համագործակցության համաձայնագիր կնքած անձը քրեական հետապնդման մարմնին դիտավորյալ հայտնել է սուտ տեղեկություններ կամ թաքցրել է որևէ էական տեղեկություն կամ խոչընդոտել է համագործակցության արդյունքում բացահայտված հանցագործության հետագա քննությանը:

26.1. Վճռաբեկ դատարանն անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտին՝ իր նախադեպային իրավունքի շրջանակներում նշել է, որ այն, լինելով օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերի վերանայման բացառիկ եղանակ, հնարավորություն է տալիս ուղղել թույլ տրված հնարավոր դատական սխալները, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները: Նշված նպատակի կենսագործման համար նոր երևան եկած հանգամանքները, ի թիվս այլոց, հիմնականում բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

ա) պետք է հայտնի եղած չլինեն դատարանին դատական ակտ կայացնելիս՝ վերջինիս կամքից անկախ պատճառներով,

բ) պետք է գործի համար ունենան էական նշանակություն՝ պայմանավորված գործի ելքի վրա դրանց անմիջական ազդեցության հնարավորությամբ,

⁸¹ Տե՛ս նույն վճիռը, կետեր 131-133:

⁸² Տե՛ս նույն տեղում:

զ) պետք է գոյություն ունեցած լինեն օբյեկտիվ իրականությունում մինչև դատական ակտի կայացումը, սակայն բացահայտված լինեն (ի հայտ գան) դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո,

դ) պետք է առերևույթ կասկածի տակ դնեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավաչափությունը:

Նշված հատկանիշներին համապատասխանող նոր երևան եկած հանգամանքները, հանգեցնելով դատական ակտի վերանայման, կարող են իրենց ազդեցությունն ունենալ անձի մեղավորության, մեղսագրված արարքի հանցավորության կամ դրա ծանրության որոշման վրա⁸¹³:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ դատական ակտերի վերանայման կառուցակարգում ևս կարևորվում է անձի իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության երաշխիքների ապահովումը: Մասնավորապես, նշված կառուցակարգը, պայմանավորված օրինական ուժի մեջ մտած և վերջնական դատական ակտերի վերանայման առանձնահատկություններով, պահանջում է պատշաճ ուշադրության արժանացնել անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով նախատեսված իրավական երաշխիքների ապահովումը: Նկատի ունենալով, որ դատական ակտերի վերանայումն անմիջականորեն հարաբերակցվում է նաև անձի՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի հետ, ուստի **նշված կառուցակարգը գործադրելիս անհրաժեշտ է գնահատման ենթարկել նաև այս սկզբունքի բաղկացուցիչ մասը կազմող՝ իրավական երաշխիքների ամբողջությունը՝ ապահովելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության և թույլ տրված հնարավոր դատական սխալների վերացման անհրաժեշտության միջև արդարացի հավասարակշռությունը, ինչը պետք է անվերապահորեն ուղեկցվի նաև անձի արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող երաշխիքների պաշտպանությամբ**⁸¹⁴:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածում նախատեսված են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը նոր հանգամանքների՝ հետևյալ չորս խումբ դեպքերում վերանայելու հիմքերը.

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ,

- Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ

⁸¹³ Տե՛ս *Դավիթ Հարությունյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի հունվարի 10-ի թիվ ՍԴՅ3/0070/01/16 որոշումը, կետ 16:

⁸¹⁴ Տե՛ս նույն որոշումը, կետ 21:

որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը,

- Բարձրագույն դատական խորհուրդն ընդունել է որոշում, որով տվյալ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ տվյալ գործով արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար,

- Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված այլ նոր հանգամանքների դեպքերում:

Մինևույն ժամանակ, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ թիվ ՍԴՈ-1348 որոշման ուժով արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում նույնպես ընկալվում է որպես նոր հանգամանք, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով⁸¹⁵:

28. Կրկին անգամ դատվելու արգելքը, որն իրավունքի ընդհանուր սկզբունքներից է և հայտնի է նաև *non bis in idem* ձևակերպմամբ, որպես յուրաքանչյուր քրեադատավարական համակարգի հիմնապատկեր, իր ամրագրումն է ստացել սահմանադրական և կոնվենցիոն մակարդակներում: Որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պաշտպանության երաշխիք՝ այն առանձնանում է հետևյալ երեք հատկանիշներով. ա) նույն արարքի համար անձը կարող է դատապարտվել ոչ ավելի, քան մեկ անգամ (*nemo debet bis vexari pro una et eadem causa*): Նշված հատկանիշն ինչպես անհատի, այնպես էլ հասարակության շահերի պաշտպանության գրավականն է⁸¹⁶, բ) նույն արարքի փաստական հանգամանքների համար նոր քրեական հետապնդում սկսվել կամ «քրեական հայց» ներկայացվել չի կարող, որովհետև քրեական հետապնդման առարկան լինում է սպառված, գ) դատական ակտն օրինական ուժ ստանալուց հետո որպես կանոն այլևս չի կարող վերանայվել, դատական ակտով կայացված արդյունքը պետք է ընդունելի լինի մյուս բոլոր դատական ատյանների համար (*res judicata pro veritate habetur*): Վերջինս բացառում է միմյանց հակասող դատական ակտերի կայացման հնարավորությունը և նպաստում դատական իշխանության համակարգում փոխադարձ հարգանքի պահպանմանը⁸¹⁷: Նշվածի լույսի ներքո այս սկզբունքի պատմահամեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ընդհանուր առմամբ միտված է նույն արարքի համար կրկին քրեական վարույթի իրականացումն արգելելուն⁸¹⁸:

⁸¹⁵ Տես ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշումը:

⁸¹⁶ Տես Van Den Wyngaert C and Stessens G, “The International Non Bis In Idem Principle: Resolving Some of the Unanswered Questions” (1999) 48 International and Comparative Law Quarterly 779:

⁸¹⁷ Տես նույն տեղում:

⁸¹⁸ Lehouck, R G, “A Definition of Punishment for Implementing the Double Jeopardy Clause’s Multiple-Punishment Prohibition” (1981) 90 Yale L J 632:

Վերոգրյալի հաշվառմամբ պետք է արձանագրել, որ դատապարտյալի հիմնարար իրավունքների պաշտպանության նկատառումներով դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն հետագայում վերանայվել չի կարող⁸¹⁹, ինչն ընդհանուր կանոն է և դատական ակտի կայունության ապահովման երաշխիք⁸²⁰, որից ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի 2-րդ մասը և Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում են բացառություն՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների կամ հիմնարար խախտումների առկայության դեպքում⁸²¹: Հետևաբար, ինչպես նշում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը⁸²²: **Այլ կերպ, դատական ակտերի վերանայման բացառիկ հանգամանքները պետք է ունենան լեգիտիմ հիմքեր՝ հաղթահարելու համար դատական ակտերի կայունության և իրավական որոշակիության ապահովման սկզբունքները:**

29. Անդրադառնալով որպես դատական ակտի վերանայման բացառիկ հիմքեր՝ նոր և նոր երևան եկած հանգամանքների գնահատման չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանը, սույն որոշման 24.1-րդ և 25.1-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ փաստում է, որ դրանց տարբերակման հիմքում ընկած են համապատասխան հանգամանքի ծագման պայմանները, որոնք էլ հենց պայմանավորում են դրանց տարբերակման տրամաբանությունը:

Այսպես, «նոր երևան եկած» կամ միջազգային փաստաթղթերում օգտագործվող՝ «*newly discovered*» ձևակերպումները վկայում են այն մասին, որ ինքնին հանգամանքն այդպիսին գնահատվելու համար պետք է նախկինում՝ մինչև դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը, օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցած լինի, սակայն դատական ակտը կայացնելուց հետո նոր երևան գա: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ *Էդուարդ Աղայանի* բացատրական բառարանի համաձայն ևս «երևան գալ» ձևակերպումը ենթադրում է հայտնվել, ասպարեզ գալ, հայտնաբերվել, ինչը տեղի է ունենում որոշակի իրադարձությունից հետո⁸²³: Այսինքն՝ հանգամանքը *նոր երևան գալու*

⁸¹⁹ Կրկին անգամ դատվելու արգելի սկզբունքի համատեքստում դատապարտյալի իրավունքների մասին տե՛ս *Դավիթ Բարսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴԻ/0043/01/11 որոշումը, կետ 22:

⁸²⁰ Դատական ակտի կայունության հատկանիշի մասին տե՛ս *Մելիք Մեսրոպյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 11-ի թիվ ԵԷԴ/0040/01/12 որոշումը, կետ 11.1:

⁸²¹ Հիմնարար խախտումների գնահատման չափանիշի մասին տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշումը, կետ 19:

⁸²² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

⁸²³ Տե՛ս Բացատրական բառարան, Էդուարդ Բագրատի Աղայան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, էջ 342:

համար պետք է ծագի առնվազն հետևյալ երկու պարտադիր պայմանների միաժամանակյա առկայությամբ՝ ա) նախկինում՝ մինչև դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը, գոյություն ունեցած լինի օբյեկտիվ իրականության մեջ, սակայն հայտնի չլինի, և բ) հայտնաբերվի, բացահայտվի կամ ինչպես օգտագործում է օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածում՝ «ի հայր գա» դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Դրանք, Վճռարեկ դատարանի կողմից սույն որոշման 26.1-րդ կետում նշված այլ պայմանների հետ, նոր երևան եկած հանգամանքի գնահատման *sine qua non* հատկանիշներն են, որոնց բացակայության դեպքում ինքնին հանգամանքը որպես նոր երևան եկած դիտարկվել չի կարող: Նշված գաղափարն արտացոլված է նաև հայրենական ակադեմիական գրականության աղբյուրներում, որոնք իրենց հերթին հղումներ են պարունակում այդ հատկանիշները որպես նոր երևան եկած հանգամանքների հիմնարար բնութագրիչներ դիտարկող արտասահմանյան ակադեմիական աղբյուրներին⁸²⁴:

Ընդ որում, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, որը *explicit* չի սահմանում նշված հատկանիշներն օրենսդրական մակարդակով, քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերում դրանք ստացել են նորմատիվային ամրագրում: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ամրագրում է, որ նոր երևան եկած հանգամանքները, բացառությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված ոչ իրավաչափ գործողությունների, հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք բերած անձն ապացուցում է, որ **այդ հանգամանքները գոյություն են ունեցել գործի լուծման պահին**, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն⁸²⁵: Նույն կարգավորումն իր արտացոլումն է ստացել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում⁸²⁶:

Միաժամանակ, հարկ է նշել, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը *explicit* նորմատիվային ամրագրում չի տվել վերոնշյալ իրավապայմաններին, գործող կարգավորումներն *implicit* նկատի են ունենում դրանք: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված նոր երևան եկած հանգամանքների ընդհանուր ձևակերպումները վկայում են այն մասին, որ որպես նոր երևան եկած վկայակոչվող հանգամանքները դատական ակտն օրինական ուժի մեջ

⁸²⁴ Տե՛ս Արմեն Հովհաննիսյան, Նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում, Երևան, Հայրապետ հրատ., 2018, *Տիգրան Մարկոսյան*, Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը քաղաքացիական դատավարությունում, Երևան, ԵՊՀ հրատ., 2013:

⁸²⁵ Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, www.arlis.am:

⁸²⁶ Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, www.arlis.am:

մտնելուց հետո ի հայտ գալու համար պետք է նախկինում գոյություն ունեցած լինելին:

30. Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման նոր հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ դրանք չունենալով «նոր երևան գալու» հատկանիշը՝ ռետրոսպեկտիվ կարգով կապված չեն նախկին՝ մինչև դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելն անցած ժամանակահատվածի հետ: Ի տարբերություն նոր երևան եկած հանգամանքների, նոր հանգամանքները նախկինում գոյություն ունեցած չեն լինում և ծագում են դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Հենց այդ հատկանիշի ուժով էլ դրանք բնութագրվում են որպես նոր հանգամանքներ և տարբերակվում նոր երևան եկած հանգամանքներից:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ ի տարբերություն նոր երևան եկած հանգամանքների, որոնց ցանկը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ուժով ենթադրում է այդպիսի հանգամանքների ոչ սպառիչ թվարկում, նոր հանգամանքների ցանկը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասում ներպետական կարգավորումների մակարդակով ըստ էության ունի սպառիչ թվարկում: Մասնավորապես, թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ «միջազգային պայմանագրերով նախատեսված այլ նոր հանգամանքների դեպքերով» ձևակերպումը ենթադրում է ոչ սպառիչ թվարկում, սակայն այն վերաբերում է բացառապես միջազգային փաստաթղթերով նախատեսված հիմքերին, ներպետական մակարդակով նախատեսված հանգամանքների մասով օրենսդրի կողմից ձևակերպված ցանկը սպառիչ է և հնարավորություն չի ընձեռում քննարկման առարկա դարձնել այլ՝ օրենսդրի կողմից *explicit* չնախատեսված նոր հանգամանքները որպես դատական ակտի վերանայման հիմք դիտարկելու հարցը:

31. Այսպիսով, ամփոփելով որպես *non bis in idem* սկզբունքից բացառություն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման նոր և նոր երևան եկած հանգամանքներին բնորոշ հատկանիշների համեմատական վերլուծությունը, պետք է փաստել, որ թեև նոր և նոր երևան եկած հանգամանքները զուգահեռաբար վերաբերում են նախկինում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստական հանգամանքներին, ինչի մասին նշել է նաև Եվրոպայի խորհուրդը՝ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության բացատրական զեկույցում⁸²⁷, սակայն դրանցից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշները տարբեր են, տարբեր է նաև դրանց հիմքում ընկած տրամաբանությունը: Մասնավորապես, հայրենական, միջազգային և ակադեմիական աղբյուրների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը կրկին արձանագրում է, որ՝

⁸²⁷ Տե՛ս Explanatory Report to the Protocol No. 7 to the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Council of Europe, European Treaty Series - No. 117, Strasbourg, 22.XI.1984, կետ 31:

- նոր երևան եկած հանգամանքները պետք է գոյություն ունեցած լինեն օբյեկտիվ իրականությունում մինչև դատական ակտի կայացումը, սակայն բացահայտված լինեն (ի հայտ գան) դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո,

- նոր հանգամանքները գոյություն չունեն և ողջամտորեն չեն էլ կարող գոյություն ունենալ մինչև դատական ակտի կայացումը, դրանք ծագում են բացառապես դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Ընդ որում, կարևոր է ընդգծել, որ նոր և նոր երևան եկած հանգամանքների տարբերակման այս մոտեցումն անվիճելի է և ունի միանշանակ ընկալում հայրենական, միջազգային և ակադեմիական բոլոր մակարդակներում: Այդ պատճառով էլ դրանք սահմանազատվել են օրենսդրի կողմից և չեն կարող նույնացվել, նախկինում գոյություն չունեցած և իր բնույթով նոր հանգամանքը չի կարող մեխանիկորեն դիտարկվել որպես նոր երևան եկած հանգամանք և հակառակը: Այդպիսի մոտեցումը կվտանգի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման բացառիկության հատկանիշը՝ կայունության սկզբունքով հանդերձ, քանի որ գերծ կլինի լեգիտիմությունից, ինչը նաև պահանջում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ բացառիկ վերանայման ռեժիմը գործադրելիս դատական ակտի կայունության հատկանիշը հաղթահարելու համար⁸²⁸:

32. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճռով Վահրամ Մկոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ այն բանի համար, որ 2014 թվականի հունիսի 18-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, իր վարած ավտոմեքենայով դեպի Գյումրի քաղաք երթևեկելիս թույլ է տվել ՃԵԿ-ի 67-րդ հոդվածի պահանջին հակասող գործողություն, ինչի արդյունքում իր վարած ավտոմեքենան դուրս է բերել հանդիպակաց՝ դեպի Արմավիր երթևեկելի գոտի, որտեղ ընդհարվել է Արտյոմ Նիկոյանի վարած ավտոմեքենային և Ա.Նիկոյանի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր մարմնական վնասվածք՝ կյանքին վտանգ սպառնացող⁸²⁹,

- Վ.Մկոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճել և Վ.Մկոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով: Տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության⁸³⁰,

- Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 24-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի՝ քաղաքացիական հայցի մասով ներկայացված

⁸²⁸ Տե՛ս վերը վկայակոչված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

⁸²⁹ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

⁸³⁰ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է և դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ⁸³¹,

- տուժող Արտյոմ Նիկոյանը 2017 թվականի ապրիլի 5-ին մահացել է⁸³², ինչը, փորձաքննության եզրակացությունների համաձայն՝ պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում 2014 թվականին ստացած վնասվածքների հետ⁸³³,

- 2019 թվականի սեպտեմբերի 16-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 5-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը⁸³⁴: Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ հարուցվել է դատական ակտի վերանայման վարույթ և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ⁸³⁵:

33. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 24-31-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել տուժողի մահվան փաստը որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հիմք դիտարկելու հնարավորության հարցը:

Այսպես, սույն գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ Վ.Մկոյանի նկատմամբ դատական ակտ կայացնելու և այն օրինական ուժի մեջ մտնելու պահի դրությամբ կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք ստացած տուժողը Ա.Նիկոյանը եղել է կենդանի, սակայն դատական ակտն օրինական ուժի մետ մտնելուց հետո մահացել է, ինչը, ըստ փորձագետի եզրակացության, պատճառահետևանքային կապի մեջ է գտնվել ստացված ծանր մարմնական վնասվածքի հետ: Նման պայմաններում պարզ է դառնում, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ծագած տուժողի մահվան փաստը գոյություն չի ունեցել մինչև դատական ակտի կայացումը: Հետևաբար, այն չի կարող դիտարկվել որպես դատական ակտի վերանայման նոր երևան եկած հանգամանք:

Նշված փաստական հանգամանքների համատեքստում Վճռաբեկ դատարանը հանգում է այն համոզման, որ տուժողի մահվան հանգամանքը կարող է դիտարկվել միայն որպես դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ծագած նոր հանգամանք, ինչը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, նախատեսված չէ գործող քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասում:

⁸³¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁸³² Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

⁸³³ Տե՛ս սույն որոշման 14-16-րդ կետերը:

⁸³⁴ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁸³⁵ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

2) Առկա օրենսդրական բացը որպես տուժողի (տուժողի իրավահաջորդի) իրավունքների իրացման անհաղթահարելի խոչընդոտ.

34. Մի շարք որոշումներում անդրադառնալով օրենսդրական բացի հիմնահարցերին՝ Սահմանադրական դատարանը ձևավորել է հետևյալ իրավական մոտեցումները⁸³⁶.

1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից.

2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը, որպես օրենսդրական բաց, կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով.

3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից.

4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը.

5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

35. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում նշել, որ բարձրացված իրավական խնդիրն օրենսդրական իրավակարգավորման այնպիսի թերություն է, որի պայմաններում անհնար է դառնում ապահովել դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ծագած տուժողի մահվան փաստի հիմքով այդ ակտի բացառիկ վերանայումը: Մասնավորապես, նկատի ունենալով, որ մի կողմից՝ տուժողի մահվան փաստը չի կարող դիտարկվել որպես նոր երևան եկած հանգամանք, մյուս կողմից՝ օրենսդրի կողմից

⁸³⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ թիվ ՍԴՌ-864, ՍԴՌ-914, ՍԴՌ-922, ՍԴՌ-1020, ՍԴՌ-1056, ՍԴՌ-1143 որոշումները:

չի նախատեսվել այդպիսի նոր հանգամանքի տեսակ, ապա առաջանում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման իրավական փակուղի՝ օրենսդրական ոչ լիարժեք կարգավորման հետևանքով:

Վերոնշյալը, ի թիվս այլնի, հիմնավորվում է այն հանգամանքով, որ բարձրացված խնդիրն առկա է եղել նաև հայրենական քրեական դատավարության օրենսգրքի նույն մոդելն ունեցող Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքում, որի վերաբերյալ ներկայացված օրենսդրական բացը լուծվել է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի կողմից⁸³⁷: Ընդ որում, սույն գործի և Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի կողմից քննության առնված գործի փաստական հանգամանքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ըստ էության նույնաբնույթ են եղել, այն է՝ տուժողը ստացած մարմնական վնասվածքներից մահացել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո և առաջացել է այդ հիմքով դատական ակտի վերանայման անհրաժեշտություն, որպիսի հիմքը նախատեսված չի եղել ներպետական օրենսդրությամբ⁸³⁸: Նշված որոշման հիման վրա Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածում կատարվել են օրենսդրական փոփոխություններ, ինչի արդյունքում նոր հանգամանքների շարքում որպես դատական ակտի վերանայման հիմք են նախատեսվել նաև այն օրինական ուժի մեջ մտնելուց հետո նոր հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելը, որոնք կարող են հիմք հանդիսանալ անձին ավելի ծանր հանցանք մեղազգրելու համար, ինչպես նաև ի հայտ եկած այլ նոր հանգամանքներ:

36. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները համադրելով գործող քրեադատավարական կարգավորումների հետ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ համապատասխան իրավական հիմքերի բացակայության և առաջացած փակուղային իրավիճակի պատճառով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված դատական ակտերի բացառիկ վերանայման իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը:

Նշվածն ուղղակիորեն հանգեցնում է տուժողի (տուժողի իրավահաջորդի) սահմանադրական հիմնարար իրավունքների, այն է՝ դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների, այդ թվում՝ արդարադատության մատչելիության իրավունքի, սոցիալական արդարության վերականգնման և հատուցում ստանալու իրավունքի խախտման: Այս պայմաններում նաև վտանգվում են Միավորված ազգերի կազմակերպության՝ «Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների» 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/34 հռչակագրի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Բրեական իրավունքի և

⁸³⁷ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի մայիսի 16-ի թիվ 6-Պ որոշումը:

⁸³⁸ Տե՛ս նույն տեղում:

դատավարության շրջանակներում տուժածի կարգավիճակի մասին» R(85)11 հանձնարարականի դրույթները՝ արդարադատության մատչելիության և փոխհատուցման իրավունքների վերաբերյալ:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ որպես բարձրագույն դատական ատյան՝ իրավունքի զարգացման և օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնությունից իրականացման շրջանակներում, ելնելով տուժողի (տուժողի իրավահաջորդի) հիմնարար իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից, եթե փորձի դատական մեկնաբանության միջոցով լուծել բարձրացված խնդիրը, այն է՝ նոր հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելու փաստը «տեղավորելով» դատական ակտի վերանայման նոր երևան եկած հանգամանքի ոչ սպառիչ ցանկում, ինչը նաև բողոքաբերը խնդրել է Վճռաբեկ դատարանից, ապա կխաթարվի նոր և նոր երևան եկած հանգամանքների տարբերակման ողջ էությունն ու տրամաբանությունը՝ նախատեսված ոչ միայն հայրենական, այլ նաև միջազգային մակարդակով՝ մշակված ընդհուպ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի շրջանակներում: Մյուս կողմից, կխաթարվեն նաև դատապարտյալի հիմնարար իրավունքները, կխախտվի *non bis in idem* սկզբունքի պաշտպանությունը՝ դատական ակտի կայունության հատկանիշով հանդերձ: Ինչպես արձանագրվել է սույն որոշման շրջանակներում, կոնկրետ դեպքում դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ծագած՝ տուժողի մահվան փաստը մեխանիկորեն չի կարող դիտարկվել որպես նոր երևան եկած հանգամանք, այն կվտանգի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման բացառիկության հատկանիշը, քանի որ գերծ կլինի լեգիտիմությունից:

Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ, ինչպես արդեն նշվել է սույն որոշման շրջանակներում, բարձրացված խնդիրը ՀՀ քրեական արդարադատության համակարգի ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ մարտահրավերներից է՝ լուծված չլինելով նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում, որը պետք է օրինական ուժի մեջ մտնի 2022 թվականի հուլիսի 1-ից: Մասնավորապես, նոր օրենսգրքի 403-րդ հոդվածը, որը համապատասխանաբար 1-ին և 3-րդ մասերում տարբերակում է դատական ակտերի վերանայման նոր և նոր ի հայտ եկած հանգամանքները, նոր հանգամանքների ներքո սահմանում է բացառապես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով հաստատված հանգամանքների սպառիչ ցանկ: Այս առումով պետք է նկատել, որ նոր օրենսգրքի մշակման աշխատանքների (*travaux preparatoires-ի*) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի սկզբանե օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հիմքերը չեն տարբերակվել նոր և նոր ի հայտ եկած հանգամանքների, այլ ընդհանուր՝ մեկ ամբողջական ցանկով բնորոշվել են որպես նոր հանգամանքներ⁸³⁹, որպիսի պարագայում բարձրացված խնդիրը կարող էր չառաջանալ: Սակայն, սկսած այն պահից,

⁸³⁹ Տե՛ս Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, www.e-draft.am:

երբ օրենսդիրը որդեգրել է նշված հանգամանքներն ըստ ծագման և հայտնի դառնալու պահերի նոր և նոր ի հայտ եկած հանգամանքների տարբերակելու մոտեցումը, միաժամանակ նոր հանգամանքների ցանկը պայմանավորելով բացառապես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով հաստատված հանգամանքների հետ, առաջացել է բարձրացված փակուղային իրավիճակը. իրավունքի գերակայության և տուժողի (տուժողի իրավահաջորդի) հիմնարար իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը պահանջում է երաշխավորել դատական ակտի վերանայումը, սակայն, ըստ Վճարելի դատարանի, առկա օրենսդրական բացը հնարավոր չէ հաղթահարել դատական մեկնաբանության հնարքների կիրառման միջոցով:

Այսպիսով, վերոնշյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ բարձրացված օրենսդրական բացը ենթակա է լուծման Սահմանադրական արդարադատություն իրականացնող բարձր դատարանի կողմից: Միաժամանակ, հարկ է նշել, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը նոր և նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու հիմնախնդիրների վերաբերյալ Սահմանադրական դատարանն ունի մի շարք որոշումներ և դրանցում արտացոլված են ուղենիշային դիրքորոշումներ: Դրանցից հատկանշական է Սահմանադրական դատարանի այն մոտեցումը, որ գործնականում առաջին հերթին հանցագործության հետևանքով տուժած անձի իրավունքների ու արժանապատվության խախտում դիտարկվեց այն, որ օրենսդրության մեջ բացակայում էր նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերջնական որոշումների վերանայման մեխանիզմը⁸⁴⁰: Ներկայումս նոր հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելու փաստի հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման մեխանիզմի բացակայությունը ևս հանգեցնում է տուժողի (իրավահաջորդի) հիմնարար իրավունքների խախտման:

37. Ամփոփելով վերոգրյալը, Վճարելի դատարանը եզրահանգում է, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո նոր հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելը, որոնք կարող են հիմք հանդիսանալ անձին առավել ծանր հանցանքի կատարում մեղսագրելու համար, որպես նոր հանգամանք դիտարկելու իրավական հնարավորության բացակայության պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ առկա օրենսդրական բացը ստեղծում է տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների, այդ թվում՝ արդարադատության մատչելիության իրավունքի, սոցիալական արդարադատության վերականգնման և հատուցում ստանալու իրավունքի իրացման անհաղթահարելի խոչընդոտ, ինչպես նաև հանգեցնում

⁸⁴⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ ՍԴՌ-935 որոշումը, կետ 6:

հիմնական իրավունքները կարգավորելիս օրենքով դրանց իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսելու, Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջների խախտման:

38. Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր կասկածներ ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 68-րդ հոդվածի 2-րդ մասին, 75-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության առնչությամբ, և գտնում է, որ սույն գործի լուծումը հնարավոր է այդ իրավանորմի կիրառման միջոցով: Ուստի հաշվի առնելով, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրական դատարանը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիմել Սահմանադրական դատարան՝ կիրառման ենթակա նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 23-րդ և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 68-րդ հոդվածի 2-րդ մասին, 75-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով, որ առկա օրենսդրական բացը ստեղծում է տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների, այդ թվում՝ արդարադատության մատչելիության իրավունքի, սոցիալական արդարության վերականգնման և հատուցում ստանալու իրավունքի իրացման անհաղթահարելի խոչընդոտ, ինչպես նաև հանգեցնում հիմնական իրավունքները կարգավորելիս օրենքով դրանց իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր նախատեսելու, Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող

53.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՔԲԴ/0198/01/08

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2021 թվականի նոյեմբերի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 7-ի որոշման դեմ Վահե Ռոմենի Դազարյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 2251-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2008 թվականի մարտի 2-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ, թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

2008 թվականի մարտի 3-ին Վահե Ռոմենի Ղազարյանը ձերբակալվել է:

2008 թվականի մարտի 6-ին Վ.Ղազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մարտի 6-ի որոշմամբ Վ.Ղազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ Վ.Ղազարյանի վերաբերյալ գործի նյութերն անջատվել են առանձին վարույթում:

2008 թվականի ապրիլի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 10-ի դատավճռով Վ.Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Վ.Ղազարյանի պաշտպաններ Լ.Սահակյանի, Ե.Վարոսյանի և Տ.Սաֆարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2008 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 10-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի որոշմամբ դատապարտյալ Վ.Ղազարյանի բողոքը վերադարձվել է:

5. 2021 թվականի մայիսի 13-ին Վահե Ղազարյանը հիմնարար խախտման հիմքով վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 7-ի որոշման դեմ Վ.Ղազարյանի վճռաբեկ բողոքի քննության ընթացակարգը վերանայվել է որոշվել բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Նախաքննության մարմնի կողմից Վահե Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Մ]ա անմիջական մասնակցություն է ունեցել 2008 մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած լայնածավալ բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ, սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների կատարմամբ, այն է՝ 2008 թվականի մարտի 1-ին ջարդելով վնասել է Ֆրանսիայի դեսպանատան դիմաց Գրիգոր Լուսավորիչ փողոցի վրա գրավող շինարարության պարիսպները վերածելով դրանք մետաղյա ձողերի, դիմադրություն ցուցաբերելու և մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված առարկաների, որից հետո, ժամը 15-ի սահմաններում զանգվածային անկարգությունների մյուս մասնակիցների հետ չենթարկվելով հակաօրինական գործողությունները դադարեցնելու ուսիականների պահանջներին, գոռալով, հայիոյանքներ տալով, Երևանի քաղաքապետարանի մոտ հասարակական կարգի պահպանության գծով ծառայություն իրականացնող, իշխանության ներկայացուցիչներ հանդիսացող ուսիականության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելով մետաղյա ձողեր, քարեր և այլ իրեր է նետել վերջիններիս վրա, ինչպես նաև մասնակցել է ջարդարարների հարձակումներից տարբեր ուղղություններով փախչող ուսիականների հետապնդմանը (...)»⁸⁴¹:

6.1. Առաջին առյանի դատարանում, գործի քննության ընթացքում, պաշտպանության կողմը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Արմեն Մարտիրոսյանին, ինչը դատարանի կողմից մերժվել է⁸⁴²:

6.2. Առաջին առյանի դատարանը հաստատված է համարել, որ ամբաստանյալ Վ.Ղազարյանը անմիջական մասնակցություն է ունեցել 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած լայնածավալ բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ, սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների կատարմամբ, և անձամբ կատարել է նշված գործողություններից հետևյալը՝ ջարդելով վնասել է պարիսպներ՝ վերածելով դրանք մետաղյա ձողերի, բռնություն է գործադրել ուսիականների նկատմամբ՝ նետելով նրանց վրա մետաղյա ձողեր, քարեր և այլ իրեր, երբ

⁸⁴¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 269-275:

⁸⁴² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրություն, թերթեր 72-73:

նրանք իրականացնելիս են եղել հասարակական կարգի պահպանության գծով ծառայությունը, հետապնդել է ջարդարարների հարձակումից փախչող ոստիկաններին⁸⁴³:

6.3. Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ Գառնիկ Սարգսյանի, ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Էդուարդ Վարդերեայանի, նույն բաժանմունքի օպերիվազոր Գագիկ Գևորգյանի ցուցմունքները, զանգվածային անկարգությունների տեսաձայնագրություններ պարունակող լազերային տեսասկավառակի գնության արձանագրությունը, ապացույց ճանաչված 9 լուսանկարները, դեպքի վայրի գնության արձանագրությունները, պայթուցատեխնիկական և քիմիական համալիր փորձաքննությունների՝ 2008 թվականի մարտի 21-ի թիվ 07100803 և 07050803 եզրակացությունները⁸⁴⁴:

7. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, 2008 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ փաստել է. «(...) Վահե Ղազարյանը անմիջական մասնակցություն է ունեցել 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած լայնածավալ բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ համաշխարհային կոլեկտիվի ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ սուսերկանների գործադրմամբ, սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների կատարմանը, այն է՝ ջարդելով վնասել է պարիսպներ վերածելով դրանք մեքենայի ձողերի, բռնություն է գործադրել ոստիկանների նկատմամբ՝ ներելով նրանց վրա մեքենայի ձողեր, քարեր և այլ իրեր, երբ նրանք իրականացնելիս են եղել հասարակական կարգի պահպանության գործով ծառայությունը, հետապնդել է ջարդարարների հարձակումից փախչող ոստիկաններին, այսինքն կատարել հանցանք, որ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 225 հոդվածի 2-րդ մասով, Երևանի քրեական դատարանի կողմից նրա գործողություններին տրվել է ճիշտ քրեաիրավական գնահատական, այդ առթիվ ամբաստանյալի և նրա պաշտպանների պաշտպանությունները հերքվում են գործի փաստական փյուռի վերոնշյալ համակցությամբ, ոստիկանության արյանի դատարանի 10.06.2008 թվականի դատավճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ ամբաստանյալ Ղազարյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելու առումով պաշտպանների կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժել (...)»⁸⁴⁵:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

⁸⁴³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 92-94:

⁸⁴⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 92-93:

⁸⁴⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 144-148:

8. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) և ՀՀ օրենսդրության մի շարք նորմեր: Մասնավորապես, բողոքաբերը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճռում գործի փաստական հանգամանքների մասին շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում հետազոտված ապացույցներին, դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ:

Ըստ բողոքաբերի՝ քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված, ինչպես նաև դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով հիմնավորվել է, որ իր գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմը:

Անդրադառնալով վկաներ Է.Վարդերեայանի, Գ.Գևորգյանի ցուցմունքներին՝ բողոքաբերը փաստել է, որ դատարանը չէր կարող որպես ապացույց օգտագործել ոստիկանների տված իրարամերժ, հակասական և ոչ արժանահավատ ցուցմունքները և դրանք դնել դատավճռի հիմքում, քանի որ ինչպես նրանց ցուցմունքների, այնպես էլ մյուս ապացույցների հետազոտմամբ հաստատվում է, որ նշված ոստիկանները կամ չեն եղել ընդհանրապես տվյալ վայրում, կամ էլ այնտեղ չեն տեսել իրեն: Վկա Գառնիկ Սարգսյանի ցուցմունքի հետ կապված բողոքաբերը նշել է, որ դատարանը չի պատճառաբանել, թե հատկապես ինչ հիմքերով է արժանահավատ համարել վկայի նախաքննական, այլ ոչ թե դատարանում տված ցուցմունքները:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով ամրագրված պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, որը դրսևորվել է նրանում, որ դատաքննության ընթացքում պաշտպանության կողմը միջնորդություն է ներկայացրել դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել ՀՀ ԱԺ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանին, ով դատաքննության ընթացքում ուսումնասիրված ապացույցների համաձայն ներկա և ակնատես է եղել կատարվածին, ինչն Առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է:

9. Վերագրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 10-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 7-ի որոշումը, կայացնել արդարացման դատական ակտ, քրեական գործի վարույթը կարճել՝ ճանաչելով և հռչակելով իր անմեղությունը մեղսագրված արարքում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում

են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

11. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագրության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կերի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը փոխյ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայր են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համատեքստում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունները պետք է հարգեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը և թույլատրեն գործով վարույթի վերսկսում միայն այն դեպքերում, երբ այն կատարելու լեգիտիմ հիմքերը գերազանցում են իրավական որոշակիության սկզբունքը: Մասնավորապես, այն դատական ակտի վերանայումը, որն օրինական ուժ է ստացել, չպետք է թույլատրվի միայն գործը վերաքննելու և նոր որոշում կայացնելու նպատակով, այլ պետք է հետապնդի դատական պիսակները և արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները շտկելու նպատակ⁸⁴⁶:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, *«հիմնարար խախտում»* հասկացությունը ենթադրում է միայն դատավարական ընթացակարգի լուրջ խախտումը, որն էապես խաթարում է նախորդ դատավարության ամբողջականությունը, կարող է հիմք հանդիսանալ ոչ անձի օգտին գործի վերանայման համար, եթե նա արդարացվել է կամ մեղավոր է ճանաչվել նվազ ծանր հանցագործության համար, քան օրենքով նախատեսվածը, որը ենթակա էր կիրառման: Հետևաբար, նման դեպքերում, դատախազի կամ վերադաս դատարանի կողմից զուտ գործով

⁸⁴⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bratyakin v. Russia* գործով 2006 թվականի մարտի 9-ի որոշումը, գանգատ թիվ 72776/01:

ապացույցների պարզ վերագնահատումը չէր կարող բավարարել նշված չափանիշին: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է իրավիճակներին, երբ անձը մեղավոր է ճանաչվել և գործի վերանայումը կարող է լինել իր օգտին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թիվ 7 արձանագրության Բացատրական գեկույցի 31-րդ կետում ընդգծված է, որ «4-րդ հոդվածը չի խոչընդոտում գործի կրկնակի քննությանը՝ հոգուր դատասպարարված անձի, և դատական ակտի ցանկացած այլ փոփոխությանը՝ ի շահ դատասպարարչայի»: Նման դեպքերում, համապատասխանաբար, խախտման բնույթը նախ և առաջ ենթակա է գնահատման՝ պարզելու համար, թե արդյո՞ք թույլ է տրվել պաշտպանական իրավունքի խախտում, և, ըստ այդմ, արդյո՞ք գործով առկա է եղել խոչընդոտ՝ արդարադատության պատշաճ իրականացման համար: Վերջապես, 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի վերանայման հիմքերն ամեն դեպքում, *in fine*, պետք է լինեն այնպիսին, որ «ագդեն գործի ելքի վրա» կամ հոգուտ անձի, կամ հակառակը⁸⁴⁷:

11.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

11.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խախտում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

11.3. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

⁸⁴⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 133:

397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշդ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»⁸⁴⁸:

11.4. «Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՌ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճատահերևանքային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկատմամբ արդարացի պարիթ նշանակելուն, հանցագործությունից րոժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճատված վաար հարուցելուն: Այսինքն առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեգրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսենացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը արացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»⁸⁴⁹:

12. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...)»:

12.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռով⁸⁵⁰ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության

⁸⁴⁸ Տես Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

⁸⁴⁹ Տես ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

⁸⁵⁰ Տես *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

կողմի իրավունքները, և արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ⁸⁵¹,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»⁸⁵²,

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին⁸⁵³,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն⁸⁵⁴,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել

⁸⁵¹ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

⁸⁵² Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

⁸⁵³ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

⁸⁵⁴ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topic v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

այլ ապացույցների, միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին: Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին⁸⁵⁵,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վճճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները⁸⁵⁶:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Վ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա անմիջական մասնակցություն է ունեցել 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած լայնածավալ բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ, սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների կատարմանը, այն է՝ 2008 թվականի մարտի 1-ին ջարդելով վնասել է Ֆրանսիայի դեսպանատան դիմաց՝ Գրիգոր Լուսավորիչ փողոցի վրա գտնվող շինարարության պարիսպները՝ վերածելով դրանք մետաղյա ձողերի, դիմադրություն ցուցաբերելու և մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված առարկաների, որից

⁸⁵⁵ Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետ:

⁸⁵⁶ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

հետո, ժամը 15-ի սահմաններում զանգվածային անկարգությունների մյուս մասնակիցների հետ չենթարկվելով հակաօրինական գործողությունները դադարեցնելու ոստիկանների պահանջներին, գոռալով, հայիոյանքներ տալով, Երևանի քաղաքապետարանի մոտ հասարակական կարգի պահպանության գործով ծառայություն իրականացնող, իշխանության ներկայացուցիչներ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելով՝ մետաղյա ձողեր, քարեր և այլ իրեր է նետել վերջիններիս վրա, ինչպես նաև մասնակցել է ջարդարարների հարձակումներից տարբեր ուղղություններով փախչող ոստիկանների հետապնդմանը⁸⁵⁷,

- Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, պաշտպանության կողմը միջնորդել է դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Արմեն Մարտիրոսյանին, ինչը դատարանի կողմից մերժվել է⁸⁵⁸,

- Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ ամբաստանյալ Վ.Ղազարյանը անմիջական մասնակցություն է ունեցել 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած լայնածավալ բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ, սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների կատարմանը, և անձամբ կատարել է նշված գործողություններից հետևյալը՝ ջարդելով վնասել է պարիսպներ՝ վերածելով դրանք մետաղյա ձողերի, բռնություն է գործադրել ոստիկանների նկատմամբ՝ նետելով նրանց վրա մետաղյա ձողեր, քարեր և այլ իրեր, երբ նրանք իրականացնելիս են եղել հասարակական կարգի պահպանության գծով ծառայությունը, հետապնդել է ջարդարարների հարձակումից փախչող ոստիկաններին⁸⁵⁹:

- Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է վկաներ՝ Գառնիկ Սարգսյանի, ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Էդուարդ Վարդերեսյանի, նույն բաժանմունքի օպերլիազոր Գագիկ Գևորգյանի ցուցմունքները, զանգվածային անկարգությունների տեսանյութային գրություններ պարունակող լազերային տեսասկավառակի գննության արձանագրությունը, սպացույց ճանաչված 9 լուսանկարները, դեպքի վայրի գննության արձանագրությունները, պայթուցիկներին հիմնական և քիմիական համալիր փորձաքննությունների՝ 2008 թվականի մարտի 21-ի թիվ 07100803 և 07050803 եզրակացությունները⁸⁶⁰,

⁸⁵⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁸⁵⁸ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

⁸⁵⁹ Տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը:

⁸⁶⁰ Տե՛ս սույն որոշման 6.3-րդ կետը:

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը, դատական ակտում նշել է, որ Վ.Ղազարյանն անմիջական մասնակցություն է ունեցել 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած լայնածավալ բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ, սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների կատարմանը, այն է՝ ջարդելով վնասել է պարիսպներ՝ վերածելով դրանք մետաղյա ձողերի, բռնություն է գործադրել ոստիկանների նկատմամբ՝ նետելով նրանց վրա մետաղյա ձողեր, քարեր և այլ իրեր, երբ նրանք իրականացնելիս են եղել հասարակական կարգի պահպանության գործով ծառայությունը, հետապնդել է ջարդարարների հարձակումից փախչող ոստիկաններին⁸⁶¹:

14. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Վ.Ղազարյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Վ.Ղազարյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների վստահելիությունն ու արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Վ.Ղազարյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակիցներ՝ ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Է.Վարդերեսյանի, նույն բաժանմունքի օպերիվագոր Գ.Գևորգյանի ցուցմունքներն են:

Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության

⁸⁶¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Վ.Ղազարյանին մեղաագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Այսինքն՝ բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ, ընդունելի են Վճռաբեկ դատարանի համար, քանի որ պաշտպանական կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու վկա Ա.Մարտիրոսյանին և ապացուցողական զանգվածում ներառելու վերջինիս ցուցմունքները, որը կասկածի տակ էր դնում ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն ու հիմնավորում դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանական կողմի առաջ քաշված վարկածը: Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով, այնպես էլ սույն գործով, հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման⁸⁶²:

15. Վերոգրյալի հաշվառմամբ անդրադառնալով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Վ.Ղազարյանի մեղավորության հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հեղուկությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ «Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

⁸⁶² Տե՛ս *Matevosyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 61730/08, 41-րդ կետ, *mutatis mutandis*, *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1.Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պարզաձև իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավասարի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չհարստիվող բոլոր կասկածները նրա օգրին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տալիս է հաստատող պարասխաններ»:

15.1. Վերլուծելով ապացուցման քրեադատավարական կանոնները, մասնավորապես անդրադառնալով «ապացույցների բավարարություն» հասկացությանը՝ Վճռաբեկ դատարանն Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով որոշման մեջ նշել է, որ.

«(...) «[Ապացույցների բավարարությունը] որոշելու չափանիշներն են.

1) անմեղության կանխավարկածը,

2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,

3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պարճատաբանվածությունը:

(...) Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

(...) Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մտք պետք է

առաջացնի այն վարահոսությունը, որ սպացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

(...) Ապացույցի արժանահավաստության հասկանիչը նույնպես վերաբերում է սպացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավաստ է այն սպացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավաստության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) սպացույցի աղբյուրի հասկանիչները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հասկանիչները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հասկանիչներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մերասպիտելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) սպացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

(...):

Յուրաքանչյուր սպացույց արժանահավաստության տեսանկյունից պետք է գնահատվի սպացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների սրացման աղբյուրները և սպացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավաստության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից սրացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից սրացված տեղեկությունների արժանահավաստությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել սրացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ սպացույցների հետ, պարզել դրանց համապարասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում դրա պարձառները:

Ապացույցի արժանահավաստության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա:

(...) Ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է սրանում և օբյեկտիվացվում սպացույցների բավարարությունը որոշելու մյուս՝ դատավարական որոշումների հիմնավորման և պարձառաբանման չափանիշի միջոցով (...):

(...) [Բ]րեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես սպացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» սպացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» սպացուցողական չափանիշ ստեղծվելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (սպացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակասակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած,

ասկայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (սիստր ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ասպացույցների այնպիսի ծավալով, որը կբացատրի դրա ասպացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»⁸⁶³:

16. Սույն որոշման 15-15.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով 13-րդ կետում ներկայացված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել այն հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ սույն գործի փաստական հանգամանքների և գործի նյութերի համատեքստում արդյո՞ք կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ուներ առանցքային նշանակություն՝ դրանց արժանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից:

Այսպես, դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքների և գործի նյութերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Վ.Ղազարյանի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին ակտիվորեն չենթարկվելու և նրանց նկատմամբ բռնություն գործադրելու համար⁸⁶⁴, ինչը հիմնավորվել է վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակիցներ՝ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներով⁸⁶⁵:

Նման պայմաններում, դեպքի ժամանակագրությունը՝ 2008 թվականի մարտի 1-ին Երևանի Գրիգոր Լուսավորչի փողոցում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների պահից մինչև Վ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանքի առաջադրումը՝ ողջամտորեն ստվերում են այն հիմնավորող, գործով ուղղակի ասպացույց հանդիսացող՝ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վստահելիությունն ու ճշգրտությունը՝ կասկածի տակ դնելով դրանց արժանահավատությունը և վկայում Վ.Ղազարյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքների խախտման մասին:

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության

⁸⁶³ Տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-31-րդ և 33-րդ կետերը:

⁸⁶⁴ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁸⁶⁵ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հոչակելու Վ.Ղազարյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վահե Ռոմենի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հունիսի 10-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 7-ի որոշումը բեկանել:

2. Վահե Ռոմենի Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող *ստորագրություն*

Դատավորներ *ստորագրություններ*

54.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ2/0030/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2021 թվականի նոյեմբերի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման դեմ ամբաստանյալ Բուդյոնի Շիրակի Նորոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի օգոստոսի 26-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնում (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) հարուցվել է թիվ 30102018 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ թիվ 30102018 քրեական գործով վարույթը կասեցվել է՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունիսի 27-ի որոշմամբ հարուցվել է թիվ 30102419 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հունիսի 28-ի որոշումներով թիվ 30102018 քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է, և թիվ 30102018 քրեական գործը միացվել է թիվ 30102419 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ Բուդյոնի Շիրակի Նորոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկու դրվագ):

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի սեպտեմբերի 24-ի և նույն թվականի սեպտեմբերի 26-ի որոշումներով Բ.Նորոյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկու դրվագ):

2019 թվականի հոկտեմբերի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Դատական քննության արագացված կարգի կիրառմամբ՝ Առաջին ատյանի դատարանը 2020 թվականի մարտի 19-ի դատավճռով Բ.Նորոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով՝ երկու դրվագով և նրա նկատմամբ յուրաքանչյուր դրվագով պատիժ է նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Բ.Նորոյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Ամբաստանյալ Բ.Նորոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2020 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 19-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Բ.Նորոյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հունիսի 21-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանը 2021 թվականի նոյեմբերի 4-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Նախաքննության մարմնի կողմից Բուդյոնի Նորոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկու դրվագով) մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար. «(...) [Ն]ա ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության պետի 2018 թվականի փետրվարի 9-ի թիվ 243-Ա հրամանով զբաղեցնելով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Գյումրիի պահպանության բաժնի ոստիկանության վաշտի ոստիկանի պաշտոնը, հանդիսանալով պաշտոնատար անձ, 2018 թվականի օգոստոսի 13-ից 25-ն ընկած ժամանակահատվածում ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկություններ, օգրվելով րան դուռը բաց լինելու հանգամանքից, սայորինի մուտք է գործել Ռուզաննա Ասատրյանին պարկանող Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղի 12-րդ փողոցի 8 րուն և այնտեղից գաղտնի հափշտակել րարբեր ոսկյա զարդեր՝ պարճատելով խոշոր չափի գույքային վնաս:

Բացի այդ, Բուդյոնի Նորոյանը 2019 թվականի հունիսի 27-ին՝ ժամը 14:30-ից 15:30-ի սահմաններում, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկություններ, պարուհանից սայորինի մուտք է գործել Ռուզաննա Եղիազարյանին պարկանող Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղի 14-րդ փողոցի 4 րուն և այնտեղից գաղտնի հափշտակել գումար և ոսկյա զարդեր՝ պարճատելով խոշոր չափի գույքային վնաս:

Այսպես.

Բուդյոնի Նորոյանը 2018 թվականի օգոստոսի 13-ից 25-ն ընկած ժամանակահատվածում իր ծանոթ Ռուզաննա Ասատրյանին րեսնելու նպատակով գնացել է վերջինիս պարկանող Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղի 12-րդ փողոցի 8 րուն և համոզվելով, որ վերջինս րանը չէ, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկություններ օգրվելով այն հանգամանքից, որ րան դուռը գրնվել է բաց վիճակում, սայորինի մուտք է գործել վերը նշված րուն և հյուրասենյակի զգեստապահարանում գրնվող պայուսակից գաղտնի հափշտակել է րարբեր րեսակի և արժողության ոսկյա զարդեր՝ Ռուզաննա Ասատրյանին պարճատելով խոշոր չափերով՝ 980.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

(...)

Բացի այդ, Բուդյոնի Նորոյանը 2019 թվականի հունիսի 27-ին՝ ժամը 14:30-ից 15:30-ի սահմաններում համագյուղացուն հանդիպելու նպատակով գնացել է վերջինիս ազգական Ռուզաննա Եղիազարյանին պարկանող Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղի 14-րդ փողոցի 4 րուն, ձայն րվել րան անդամներին, սակայն որևէ մեկը չի արձագանքել, ինչից հետո բարձրացել է երկրորդ հարկում գրնվող պարզամբ, բաց դռներից մեկով մուտք գործել սենյակ: Տեսնելով, որ այնտեղ որևէ մեկը չկա, իջել է ներքև, որից հետո րան կողային պարի կողքով հեռանալու ընթացքում նկատել է, որ երկրորդ հարկի պարուհաններից մեկը գրնվում է բաց վիճակում և արդեն իսկ համոզված լինելով, որ րան անդամները բացակայում են րանից, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկություններ՝

բաց պայտուհանից ապօրինի մուտք է գործել վերը նշված փան ննջասենյակ և զգեստապահարանում առկա սև դրամասպանակի միջից գաղտնի հափշտակել 37.850 ՀՀ դրամին համարժեք 5000 ռուբլի, իսկ սպիտակ պոլիէթիլենային փուպակից՝ 350.000 ՀՀ դրամի արժողության թվով 4 ոսկյա մատրանիներ՝ Ռուզաննա Եղիազարյանին պարձատելով խոշոր չափերով՝ ընդհանուր 387.850 ՀՀ դրամի գույքային փաստ: Երկու օրը տեղեկանալով, որ իրեն նկատել են վերը նշված քնակարանի պարզգամքում և կասկածում են կատարված գողության մեջ, իր փան հողամասում պահած 5000 ՌԴ ռուբլին և գողացված ոսկյա զարդերը փարել և զգել է նույն պայտուհանի փակ և հեռացել (...)»⁸⁶⁶:

6. Առաջին առյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) Դատարանը, հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները (...), գտնում է, որ Բուդյոնի Երոյանը կատարել է երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախատեսված հանցավոր արարք, որի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության և պարժի:

Ամբաստանյալի նկատմամբ պարժի նշանակելիս դատարանը հաշվի է առնում նրա կողմից կատարված հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանը և բնույթը, նրա անձը:

Դատարանը ամբաստանյալի անձը բնութագրող տվյալներ է դիտում բնակության վայրում և ուսումնական հաստատություններում դրական բնութագրվելը, նախկինում արատավորված չլինելը, գործին կցված ՀՀ ՊՆ համասպարասիան գորամասից սրացված շնորհակալական նամակում առկա Բուդյոնի Շիրակի Երոյանին բնութագրող դրական հատկանիշները՝ օրինակելի վարքը, կարգապահությունը:

Դատարանը ամբաստանյալի քրեական պատասխանատվությունը և պարժի մեղմացնող հանգամանքներ է դիտում, նրա կողմից մեղքն ընդունելը, կատարած արարքի համար անկեղծորեն զղջալը, նաև այն, որ տուժողներին պարձատված փաստը վերականգնված է, և վերջիններս նրա նկատմամբ բողոք պահանջ չեն ներկայացրել:

Դատարանը ամբաստանյալի քրեական պատասխանատվությունը և պարժի ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում:

(...)

Դատարանը պարժի տեսակը և չափը ընտրելիս ղեկավարվում է պարժի նշանակման ընդհանուր սկզբունքներով, որպիսիք են՝ օրինականությունը, արդարությունը, պարժի անհատականացումը և մարդասիրությունը և հաշվի առնելով ամբաստանյալի կողմից կատարած հանցանքի հաստատական վրանգավորությունը, նրա անձը, վերոնշյալ մեղմացնող հանգամանքներն իրենց համակցությամբ, ծանրացնող հանգամանքների բացակայությունը գտնում է, որ նրանց նկատմամբ պարժի պետք է սահմանվի ազատագրկման ձևով, որով հնարավոր կլինի հասնել սոցիալական արդարության վերականգնմանը,

⁸⁶⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 122-123:

պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը, որով էլ կապահովվեն նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված արդարության, պարասիսանսարվության անհարականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (...)⁸⁶⁷:

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է, որ. «(...) [Ա] մքապարանյալ Բուդյոնի Նորոյանի նկատմամբ պատժի տեսակները և չափերը՝ այդ թվում նաև հանցանքների համակցությանը վերջնական պատիժը որոշելիս Առաջին արյանի դատարանը ղեկավարվել է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, բազմակողմանի գնահատման է ենթարկել ամքապարանյալի անձը բնութագրող, պարասիսանսարվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պարասիսանսարվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, նրա կողմից կատարված հանցագործությունների բնույթն ու վրանգավորության աստիճանը, որպիսի պայմաններում իրավացիորեն վերջինի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ (...):

Ինչ վերաբերում է ամքապարանյալ Բուդյոնի Նորոյանի վերաքննիչ բողոքում նշված այն հանգամանքին, որ Առաջին արյանի դատարանը սույն քրեական գործով քննության ժամանակ 2018 թվականի օգոստոսի 13-25-ն ընկած ժամանակահատվածում իր կողմից ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու հանցագործության համար 1-ին դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով դատապարտելով ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման պատժի նկատմամբ պարտավոր էր կիրառել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» (այսուհետև՝ Համաներման մասին օրենք) ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը և համաներում հայտարարելով՝ իրեն ազատել պատժից, սպա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին արյանի դատարանի կողմից Բուդյոնի Նորոյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման հարցը սոխասարակ քննարկման առարկա չի դարձվել, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Բուդյոնի Նորոյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման հարցը ենթակա է լուծման Առաջին արյանի դատարանի կողմից՝ դատավճռում առկա անհարակությունը մեկնաբանելու ընթացակարգով (ամանապիսի իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Վճռաբեկ դատարանը Գայանե Նորիկի Փահլևանյանի վերաբերյալ գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԼԴ/0224/01/11 որոշմամբ):

(...) Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով՝ խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, մասնավորապես այն, որ ամքապարանյալ Բուդյոնի Նորոյանը ուրիճգել է ոչ միայն անձի սեփականության իրավունքի, այլև մեկ այլ՝ քրեաիրավական պաշտպանության բարձր աստիճանով օժտված, հիմնարար սոցիալական արժեքի՝ բնակարանի անձեռնմխելիության

⁸⁶⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 70-72:

դեմ, մեղքի ձևը և տեսակը (նողակի դիտարկությունը կատարված լինելը), պարճառված վնասի չափը, փաստում է, որ վերը նշված հանցամասնքների համակցությունն առավել քան վկայում է ինչպես ամբաստանյալի անձի, այնպես էլ նրա կատարած հանցանքների հանրային բարձր վրանգավորության աստիճանի մասին, ուստի Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերջինիս նողկելը հնարավոր չէ առանց պարտիժը կրելու, այսինքն՝ նրա նկատմամբ կիրառելի չէ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը (...)⁸⁶⁸:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների, «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) դրույթների պահանջները, ինչպես նաև ստորադաս դատարանների հետևությունները հակասում են պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքի հեղինակը փաստել է, որ պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկվել իր՝ որպես ամբաստանյալի անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական և ժողովրդագրական հատկանիշները, հանցագործությունից հետո իր դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ դրական բնութագրվելը, վարույթն իրականացնող մարմին ինքնակամ ներկայանալը, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր ճանաչելը, կատարածի համար անկեղծորեն զղջալը, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված վնասն ամբողջությամբ հատուցելը, ինչն էական նշանակություն ունի հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազեցման տեսանկյունից:

8.1. Բողոքաբերը միաժամանակ փաստարկել է, որ դատարանը 2018 թվականի օգոստոսի 13-25-ն ընկած ժամանակահատվածում իր կողմից ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու համար առաջին դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով իր նկատմամբ պատիժ նշանակելով ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, պարտավոր էր կիրառել Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածը և իրեն ազատել պատժից:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել ստորադաս դատարանների դատական ակտերը և իր նկատմամբ նշանակված վերջնական պատիժը ՀՀ քրեական

⁸⁶⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 142-144:

օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Համաներման մասին օրենքի ուժով ամբաստանյալ Բ.Նորոյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով իրեն մեղաագրված հանցավոր արարքներից առաջին դրվագով ենթակա էր պատժից ազատման:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պարասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարժից, կամ պարժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պարժարեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:*

11.1. Համաներման ինստիտուտի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ համաներմուն իրենից ներկայացնում է ինքնուրույն գործող իրավական ինստիտուտ, որի կիրառելիության հիմքում դրված են մի կողմից՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները, իսկ մյուս կողմից՝ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունվող մարդասիրական բնույթ ունեցող պետաիրավական նորմատիվ ակտը, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսվում են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներմումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներմումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության⁸⁶⁹:

⁸⁶⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Ավերիսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11, Գարիկ Ղազարյանի գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ՏԴ/0088/01/11, Լևոն Խոսրոբյանի և Արսյոմ Ալեքսանյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԿԴ/0046/01/14, Արիզ Տիգրանյանի գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0501/01/18 որոշումները:

12. Համաներման մասին օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Մոյն օրենքը կարգավորում է 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող, մեղադրվող կամ հանցագործություն կատարած անձանց նկարանամբ համաներում հայտարարելու հետ կապված հարաբերությունները»:

Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Համաներում հայտարարելով՝ պարժից ազարել՝ առավելագույնը չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պարժի դատասարված անձանց»:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Հանցագործությունների և դատավճիռների համակցության դեպքերում համաներումը կիրառվում է վերջնական պարժի նկարանամբ՝ հանցագործությունների կամ դատավճիռների համակցության կանոններով այն սահմաններուց հետո: (...)»:

12.1. Համաներման մասին օրենքի վերը մեջբերված դրույթներին համանման կարգավորումներ է պարունակում նաև «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը, որոնց վերաբերյալ Վճռաբեկ դատարանը *Լևոն Խոտարիկյանի և Արտյոմ Ալեքսանյանի* գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Համաներման կիրառելիության համար օրենսդիրը նախատեսել է որոշակի ժամանակային սահմանափակումներ: Ընդ որում, այդ առումով կարևորվում է ոչ թե գործի քննության կամ Համաներման ակտի կիրառման, այլ հանցագործության կատարման պահը: Մասնավորապես, Համաներման ակտի 15-րդ կետից երևում է, որ օրենսդրի կամքն է Համաներման ակտը կիրառել այն անձանց նկարանամբ, ովքեր հանցագործություն են կատարել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ: Այլ խոսքով՝ Համաներման ակտը կիրառելի է միայն այն իրավասարաբերությունների նկարանամբ, որոնք ծագել են մինչև նշված օրը հանցանք կատարելու հետևանքով:

Վերոնշյալից հետևում է, որ Համաներման ակտի, դրա առանձին դրույթների վկայակոչումը սահմանափակված է մինչ այդ օրը կատարված հանցագործությունների շրջանակով: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունը կատարվել է Համաներման ակտով սահմանված ժամանակահատվածից հետո, այդ հանցագործության համար Համաներման ակտի կիրառելիության հարցի քննարկումն առարկայազուրկ է, քանի որ բացակայում է Համաներման ակտի կիրառման համար անհրաժեշտ իրավասարաբերությունը:

Այսպես, հանցագործությունների համակցության նկարանամբ Համաներման ակտի 20-րդ կետով նախատեսված կարգավորման կիրառելիության հարցը քննարկման առարկա կարող է դառնալ այն դեպքում, երբ համակցությունը կազմող հանցագործությունները կատարվել են մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ, քանի որ այդ ժամանակահատվածից հետո ծագած իրավասարաբերությունների նկարանամբ քննարկվող կարգավորումը չի կարող վկայակոչվել և կիրառվել:

(...)

(...) Անհուփելով վերագրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործությունների համակցության դեպքում համաներումը հանցագործությունների համակցության կանոններով սահմանված վերջնական պարփի նկարմամբ կիրառելու վերաբերյալ Համաներման ակտի 20-րդ կետով նախատեսված կարգավորումը կիրառելու պայմաններն են՝

ա) հանցագործությունների համակցությունը կազմող հանցանքները կատարվել են մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ,

բ) (ա) կետում նշված հանցագործություններից ոչ մեկը ընդգրկված չէ Համաներման ակտի 9-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված հանցագործությունների շրջանակում:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև արձանագրել, որ բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունների համակցությունը կազմող հանցանքներից մեկը կամ մի քանիսը կատարվել են 2013 թվականի սեպտեմբերի 1-ից հետո, ապա Համաներման ակտի կիրառելիության հարցը պետք է քննարկվի միայն մինչև այդ ժամանակահատվածը կատարված հանցագործության (հանցագործությունների) մասով (...)⁸⁷⁰:

12.2. Վերահաստատելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն կիրառելի է նաև «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի՝ խնդրո առարկա դրույթների նկատմամբ, ուստի Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումը կիրառելու համար անհրաժեշտ է, որպեսզի հանցագործությունների համակցությունը կազմող հանցանքները կատարված լինեն մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ: Մինևույն ժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունների համակցությունը կազմող հանցանքներից մեկը կամ մի քանիսը կատարվել են 2018 թվականի հոկտեմբերի 21-ից հետո, ապա Համաներման մասին օրենքի կիրառելիության հարցը պետք է քննարկվի միայն մինչև այդ ժամանակահատվածը կատարված հանցագործության (հանցագործությունների) մասով:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Նախաքննության մարմնի կողմից Բ.Նորոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկու դրվագով) մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա **2018 թվականի օգոստոսի 13-ից 25-ն** ընկած ժամանակահատվածում ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, ապօրինի մուտք է գործել Ռ.Ասատրյանին պատկանող բնակարան և այնտեղից գաղտնի հափշտակել տարբեր ոսկյա զարդեր՝ պատճառելով խոշոր չափի գույքային վնաս, ինչպես նաև՝ 2019 թվականի հունիսի 27-ին՝ ժամը 14:30-ից 15:30-ի սահմաններում, ուրիշի գույքի

⁸⁷⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լևոն Խոսրոփյանի և Արփյում Ալեքսանյանի* գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԿԲ/0046/01/14 որոշման 14-16-րդ կետերը:

գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, ապօրինի մուտք է գործել Ռ.Եղիազարյանին պատկանող բնակարան և այնտեղից գաղտնի հափշտակել գումար ու ոսկյա զարդեր՝ պատճառելով խոշոր չափի գույքային վնաս⁸⁷¹:

- Առաջին ատյանի դատարանի դատավճռով Բ.Նորոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով՝ երկու դրվագով, որոնցից յուրաքանչյուրով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ, հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակի գումարելու սկզբունքով վերջինիս նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման⁸⁷²:

- Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, այն թողել է օրինական ուժի մեջ: Մինևույն ժամանակ անդրադառնալով ամբաստանյալ Բ.Նորոյանի վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի օգոստոսի 13-25-ն ընկած ժամանակահատվածում իր կողմից առաջին դրվագով կատարված գողության համար ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով պատիժ նշանակելով ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, պարտավոր էր կիրառել Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածը և համաներում հայտարարելով՝ իրեն ազատել նշված պատժից՝ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից Բ.Նորոյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման հարցն առհասարակ քննարկման առարկա չի դարձվել, որպիսի պայմաններում այն ենթակա է լուծման Առաջին ատյանի դատարանի կողմից՝ դատավճռում առկա անհատակությունը մեկնաբանելու ընթացակարգով⁸⁷³:

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից բխում է, որ ամբաստանյալ Բ.Նորոյանին մեղսագրված երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործություններից առաջինը, որի համար նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով, վերջինս կատարել է մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ը, այսինքն՝ մինչև Համաներման մասին օրենքի ընդունումը, ինչպես նաև քրեական գործի նյութերում բացակայում է Համաներման մասին օրենքն ամբաստանյալ Բ.Նորոյանի նկատմամբ կիրառելուն խոչընդոտող որևէ հանգամանք:

14. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-12.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների

⁸⁷¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁸⁷² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁸⁷³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին աստիճանի դատարանը, ամբաստանյալ Բ.Նորոյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ հոդվածով՝ երկու դրվագով և յուրաքանչյուր դրվագով պատիժ նշանակելով ազատազրկում 4 (չորս) տարի ժամկետով ու նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ վերջնական պատիժ նշանակելով 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկում՝ առանց գույքի բռնագրավման, անտեսել է այն հանգամանքը, որ վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ մեղազգրված հանցագործություններից առաջին դրվագով արարքը կատարվել է մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ն ընկած ժամանակահատվածում, հետևաբար այս դրվագով 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկում պատիժ նշանակելիս Առաջին աստիճանի դատարանը պետք է քննարկման առարկա դարձներ Համաներման մասին օրենքի դրույթների կիրառելիության հարցը և նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ վերջինիս ազատեր պատժից, որպիսի պայմաններում կբացակայեին նաև ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնների կիրառման փաստական և իրավական հիմքերը⁸⁷⁴:

14.1. Մինևույն ժամանակ, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ ամբաստանյալ Բ.Նորոյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառելիության հարցը ենթակա էր լուծման Առաջին աստիճանի դատարանի կողմից՝ դատավճռում առկա անհստակությունը մեկնաբանելու ընթացակարգով, ինչպես նաև որպես փաստարկ Վճռաբեկ դատարանի՝ *Գայանե Փահլևանյանի*⁸⁷⁵ գործով որոշումը մատնանշելուն, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդ որոշման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները սույն գործով կիրառելի չեն, քանի որ վերոհիշյալ ընթացակարգը վերաբերում է այն դեպքերին, երբ գործի դատական քննության ընթացքում դատարանն անձի նկատմամբ չի կիրառում կիրառման ենթակա համաներման ակտը և դատավճիռը մտնում է օրինական ուժի մեջ: Հետևաբար, Վերաքննիչ դատարանն իր հերթին ստուգման ենթարկելով Առաջին աստիճանի դատարանի դատական ակտի հիմնավորվածությունը և օրինականությունը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում՝ այդ կերպ կայացնելով դատական ակտերին ներկայացվող պատճառաբանվածության չափանիշին⁸⁷⁶ չհամապատասխանող դատական ակտ:

⁸⁷⁴ Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վարուժան Ավետիսյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշումը:

⁸⁷⁵ Տե՛ս *mutatis mutandis*, *Գայանե Փահլևանյանի* գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԼԴ/0224/01/11 որոշման 15-րդ կետը:

⁸⁷⁶ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ֆրունզիկ Գալստյանի* գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը, *Գևորգ Խնուսյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԼԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը, *Արսեն Մակարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշման 14-րդ կետը, *Արամայիս Հակոբյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշման 17.1-րդ կետը:

15. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 8-րդ կետում բարձրացված՝ իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունների՝ ոչ հիմնավոր լինելու մասին փաստարկներին⁸⁷⁷, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Բ.Նորոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը որոշելիս ստորադաս դատարանները, համադրված վերլուծության և իրենց ամբողջության մեջ պատշաճ գնահատման ենթարկելով սույն գործի փաստական տվյալները, մասնավորապես ամբաստանյալի դրական բնութագրվելը, նախկինում արատավորված չլինելը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները (մեղքն ընդունելը, կատարած արարքի համար անկեղծորեն զղջալը, տուժողներին պատճառված վնասը վերականգնելը, վերջիններիս կողմից պահանջ չներկայացնելը), պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ ամբաստանյալը ոտնձգել է անձի սեփականության և բնակարանի անձեռնմխելիության իրավունքների դեմ, մեղքի ձևը և տեսակը (ուղղակի դիտավորությամբ կատարված լինելը), հանգել են հիմնավորված հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրագործմանը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Բ.Նորոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը չկիրառելով, իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելով, այդ մասով կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (առաջին դրվագով) նշանակված պատժի մասով ամբաստանյալ Բ.Նորոյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի դրույթների կիրառելիության հարցը չքննարկելով և արդյունքում նրան ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (առաջին դրվագով) նշանակված պատժից չազատելով, թույլ են տվել դատական սխալ, այն է՝ խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի պահանջները և չեն կիրառել կիրառման ենթակա՝ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտերի կայացմանը: Նշված խախտումներն իրենց բնույթով էական են, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների՝ հիմք են այդ մասով ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար:

⁸⁷⁷ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաներման մասին օրենքի ուժով ամբաստանյալ Բ.Նորոյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով իրեն մեղսագրված հանցավոր արարքներից առաջին դրվագով ենթակա էր պատժից ազատման: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Բ.Նորոյանը պետք է կրի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկրորդ դրվագով) նշանակված՝ 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Բուդյոնի Շիրակի Նորոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկու դրվագով) Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի մարտի 19-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Բուդյոնի Շիրակի Նորոյանի նկատմամբ կիրառել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և նրան ազատել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (առաջին դրվագով) նշանակված 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկումից: Ամբաստանյալ Բուդյոնի Շիրակի Նորոյանին թողնել կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (երկրորդ դրվագով) նշանակված՝ 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկումը:

3. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել օրինական ուժի մեջ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

55.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԳ/0053/01/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորները</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատախազ՝</i>	Լ.ՇԻՐՎԱՆՅԱՆԻ
<i>պաշտպան՝</i>	Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2021 թվականի նոյեմբերի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով Սերինե Ռաֆիկի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի մայիսի 15-ին ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 27101817 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ Սերինե Ռաֆիկի Հայրապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով: Մեղադրյալ Ս.Հայրապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ Ս.Հայրապետյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, ու նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

2018 թվականի մայիսի 30-ին նախաքննության մարմնի կողմից հայտարարվել է քրեական գործով նախաքննության ավարտ, և նույն թվականի հունիսի 29-ին գործով կազմվել է մեղադրական եզրակացություն:

2018 թվականի հուլիսի 4-ին ՀՀ Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Ռ.Գևորգյանի (այսուհետ՝ նաև Դատախազ) որոշմամբ Ս.Հայրապետյանին մեղազգրված արարքը որակվել է մեղադրական եզրակացությամբ տրված որակումից նվազ ծանր պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը քրեական գործը, մեղադրական եզրակացության հաստատված փոփոխություններով, ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ Ս.Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել և քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

3. Մեղադրող Ռ.Գևորգյանի և տուժողի ներկայացուցիչ Ա.Թևոսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը թողնելով անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: 2021 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքի քննության ընթացակարգը վերանայվել է և որոշվել բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

Ս.Հայրապետյանի պաշտպաններ Ա.Ղազարյանը և Հ.Սարգսյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքի պատասխան խնդրելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Նախաքննության մարմնի կողմից 2018 թվականի հունիսի 29-ին կազմած մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի համաձայն. «*Մերինե Հայրապետյանը* մեղադրվում է հանրորեն վրանգավոր այն արարքի համար, որ նա, իր և գործարուի միջև 01.10.2017 թվականին կնքված աշխատանքային թիվ 6 պայմանագրի հիման վրա հանդիսանալով նախկին «Արարաշարի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, իսկ 14.09.2007 թվականին «Արարաշարի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և ներկայիս «Արարաշար ԲԿ» ՓԲԸ-ի միաձուլվելուց հետո, ԲԿ-ի տնօրենի 2013 թվականի մարտի 5-ի հրամանով սրանալով Արարաշարի պոլիկլինիկական ծառայության վերահսկման լիազորություն, որից հետո վերը նշված 01.10.2007 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա գործարուի հետ 01.07.2013 թվականին կնքված թիվ 1 համաձայնագրի 2.1.7 կետի համաձայն ունենալով պաշտոնական հրահանգներով կամ տնօրենի հրամաններով և կարգադրություններով իր համար սահմանված պարտականությունների կատարման պարտավորություն, այնուհետև ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 1-ի N 07-Ն հրամանի հիման վրա ԲԿ-ի տնօրենի կողմից 14.03.2016 թվականին արված թիվ 61 հրամանով հանդիսանալով ՀՀ քաղաքացիների կողմից զենք ձեռք բերելու թույլտվություն սրանալու համար բժշկական եզրակացություն փրամադրելու նպատակով բժշկական սրուգման կարգի պահպանման, վերահսկման պատասխանատվություն և տեղեկացված լինելով, որ զենք ձեռք բերելու թույլտվություն սրանալու համար բժշկական եզրակացությունը, ըստ ԲԿ-ի գնացուցակի պետք է փրամադրվի 5.000 ՀՀ դրամ վճարի դիմաց, ունենալով կազմակերպական-տնօրինչական լիազորություններ, այսինքն՝ հանդիսանալով պաշտոնատար անձ, անձնական շահագրգռվածությունից ելնելով դիտարկությանը չի կատարել իր ծառայողական պարտականությունները, այն է՝ 272 քաղաքացիների, առանց պարտադիր վճարման ենթակա գումար գանձելու, արվել է ԲԿ-ի տնօրենի կողմից ներկայացված և ՀՀ Արարաշարի մարզպետի կողմից հաստատված «Արարաշար ԲԿ» ՓԲԸ-ի 2016 թվականին վճարովի ծառայությունների գնացուցակի 14-րդ բաժնի 6-րդ ենթաբաժնի «բ» կետով որպես 3 և ավելի քաղաքացի պարունակող զենքի փրամադրմանը խոչընդոտող հիմնարկությունների բացակայության մասին 5.000 ՀՀ դրամ վճարի դիմաց փրամադրվող բժշկական եզրակացություններ, որն անգործությանը առաջացրել է ծանր հետևանքներ, այն է՝ «Արարաշար ԲԿ» ՓԲԸ-ին 1.360.000 ՀՀ դրամ գույքային վնասի չափով պարճառվել է էական վնաս: Այսպիսով՝ Մերինե Ռաֆիկի Հայրապետյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մեղավորությանը հանրության համար վրանգավոր արարք կատարելու, այն է՝ պաշտոնական լիազորությունները չարաշահելու մեջ»⁸⁷⁸:

⁸⁷⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 12, թերթեր 154-155:

6. Դատախազի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշման համաձայն՝ «(...) [Այսպես ցուցնելի բավարար համակցությամբ հիմնավորվել է որ. Սերինե Հայրապետյանը, 14.09.2007թ. «Արտաշարի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Արտաշարի ԲԿ» ՓԲԸ-ի միաձուլվելուց հետո, իր և գործարարի միջև 01.10.2007թ. կնքված աշխատանքային թիվ 6 պայմանագրի հիման վրա փաստացի հանդիսանալով «Արտաշարի ԲԿ» ՓԲԸ-ի փոխորեն և ի պաշտոնե ղեկավարելով նույն ԲԿ-ի Արտաշարի պոլիկլինիկան, իսկ «Արտաշարի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրենի 2013 թվականի մարտի 5-ի թիվ 45 հրամանով սրանալով «Արտաշարի ԲԿ» ՓԲԸ-ի պոլիկլինիկական ծառայության վերահսկման լիազորություն, որից հետո վերը նշված աշխատանքային պայմանագրի հիման վրա գործարարի հետ 01.07.2013թ. կնքված թիվ 1 համաձայնագրի 2.1.7 կետի համաձայն ունենալով պաշտոնական հրահանգներով կամ տնօրենի հրամաններով և կարգադրություններով իր վրա դրված պարտականությունների կատարման անմիջական ղեկավարի օրինական պահանջներին ենթարկվելու պարտավորություն, իսկ ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 1-ի N 07-Ն հրամանի հիման վրա «Արտաշարի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրենի 14.03.2016թ. տրված թիվ 61 հրամանով լինելով ՀՀ քաղաքացիների կողմից զենք ձեռք բերելու թույլտվություն սրանալու համար բժշկական եզրակացություն տրամադրելու նպատակով արեղծված հանձնաժողովի նախագահ, ունենալով ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 1-ի N 07-Ն հրամանի համաձայն ՀՀ քաղաքացիներին տրամադրվող զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների և ֆիզիկական թերությունների բացակայության մասին բժշկական եզրակացություններն իր ստորագրությամբ ու կնիքով հաստատելու լիազորություն, հանդիսանալով պաշտոնավար անձ, իր կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմանի հետևանքով չի կատարել իր վրա դրված պարտականությունները, այն է՝ պարզաձև վերահսկում չի իրականացրել քաղաքացիներին տրամադրվող զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների և ֆիզիկական թերությունների բացակայության մասին ՀՀ Արարարի մարզպետի կողմից հաստատված «Արտաշարի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների 2016 թվականի գնացուցակի 14-րդ բաժնի 6-րդ ենթաբաժնի «բ» ենթակետով սահմանված երեք և ավելի քաղաքիչ պարունակող 5.000 ՀՀ դրամ վճարի դիմաց տրամադրվող բժշկական եզրակացությունների տրամադրման գործընթացի նկատմամբ, ինչի հետևանքով 272 քաղաքացիների, առանց գումար գանձելու, իսկ 16 քաղաքացիներից 5.000 ՀՀ դրամի փոխարեն 3.000 ՀՀ դրամ գումար գանձելու պայմաններում տրամադրվել են զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների բացակայությունների մասին բժշկական եզրակացություններ, որի հետևանքով «Արտաշար ԲԿ» ՓԲԸ-ի օրինական շահերին 1.392.000 ՀՀ դրամ գույքային վնասի ձևով պարճատվել է էական վնաս: Վերոգրյալի հիման վրա անհրաժեշտ է սույն քրեական գործով Ս.Հայրապետյանին մեղաազրված հանցագործությունը որակել մեղադրական եզրակացությամբ կատարված որակումից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մաս, նվազ ծանր

պարասիանաարվություն նախարեսող օրենքին համապարասիան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով»⁸⁷⁹:

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի դատական նիստի ընթացքում ամբաստանյալ Ս.Հայրապետյանի պաշտպաններ Ա.Ղազարյանը և Հ.Սարգսյանը միջնորդել են վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: 2018 թվականի հոկտեմբերի 27-ի դատական նիստում վերջիններս ներկայացրել են գրավոր միջնորդություն այն պատճառաբանությամբ, որ դատախազի կողմից սույն քրեական գործը դատարան է ուղարկվել ըստ էության քննելու՝ առանց քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված պարտադիր ընթացակարգի պահպանման Ս.Հայրապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով վերադրակված մեղադրանքը առաջադրելու⁸⁸⁰:

8. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Համադրելով [Նախաքննության մարմնի կողմից կազմված մեղադրական եզրակացության և Դատախազի՝ 04.07.2018թ. թիվ 27101817 քրեական գործով հանցագործությունը մեղադրական եզրակացությամբ կարարված որակումից նվազ ծանր պարասիանաարվություն նախարեսող օրենքին համապարասիան որակելու և այդ փոփոխություններով մեղադրական եզրակացությունը հասարարելու մասին որոշման մեջ] (...) առկա փաստական հանգամանքները Դատարանն արձանագրում է, որ դրանցում առկա են էական բազմաթիվ փարբերություններ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ կողմը նկարագրող հանգամանքներում: Այսինքն՝ թե մեղադրանքի ծավալի, թե գործողությունների նկարագրության առումով կարարվել են էական փոփոխություններ:

Դատարանը փաստում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կերի համաձայն դատախազն իրավասու է վերադրակել արարքը նվազ ծանր պարասիանաարվություն նախարեսող հոդվածով, սակայն միևնույն ժամանակ օրենսդիրը նույն հոդվածի 2-րդ մասով խնկերարիվ պահանջ է դրել այն մասին, որ նախորդ մեղադրանքից փաստական հանգամանքներով էսպես փարբերվող մեղադրանքով փոխարինելու հիմքերի առկայության դեպքում դատախազը պարարավոր է գործը վերադարձնել քննիչին լրացուցիչ մեղադրանք առաջադրելու կամ մեղադրանքը փոխելու համար: Հերևարար Դատարանը գրնում է, որ դատախազի կողմից սույն քրեական գործի ջրջանակներում թույլ է րրվել դատավարական խախտում. այն է՝ դատախազը պարարավոր լինելով, հիմքերի առկայության պայմաններում գործը, փաստական հանգամանքներով նախորդ ներկայացված մեղադրանքից էսպես փարբերվող մեղադրանքով փոխարինելու կամ մեղադրանքը լրացնելու համար, քննիչին վերադարձնել իր 04.07.2018թ. որոշմամբ Սերինե Հայրապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի մեղադրանքը վերադրակել է նվազ

⁸⁷⁹ Տն քրեական գործ, հատոր 12, թերթ 7:

⁸⁸⁰ Տն քրեական գործ, հատոր 13, թերթ 101-102:

ծանր պայրասխանաարվություն նախատեսող օրենքին համապարասխան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով, որից հետո քրեական գործն ուղարկել է դադարան ըստ էության քննության առնելու համար:

(...) [Դատարանի 04.07.2018թ. որոշումը, Սերինե Հայրապետյանի (...) պաշտպանական իրավունքի իրացման տեսանկյունից որևէ կերպ չի կարող փոխարինել որպես մեղադրյալ ներգրավելու ինչպես որոշմանը, այնպես էլ մեղադրանք առաջադրելու կարգին և իրավական հետևանքներին՝ անկախ Ս.Հայրապետյանին նախկինում առաջադրված մեղադրանքի նկատմամբ նվազ ծանր պայրասխանաարվություն նախատեսող քրեաիրավական որակումից: Դադարանը փաստում է, որ սույն գործով Սերինե Հայրապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքով չկա հասարակված մեղադրական եզրակացություն և այն չի կարող քննության առարկա լինել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով չկա առաջադրված մեղադրանք, այլ առկա է դատարանի որոշում թիվ 27101817 քրեական գործով հանցագործությունը մեղադրական եզրակացությամբ կատարված որակումից նվազ ծանր պայրասխանաարվություն նախատեսող օրենքին համապարասխան որակելու և այդ փոփոխություններով մեղադրական եզրակացությունը հասարակելու մասին, որում սակայն դատարանի կողմից չեն կատարվել սահմանադրական և քրեադատարանական վերաբերելի իրավական նորմերի հրամայական պահանջները, ինչպես նաև օրենքով նախատեսված դատարանական միջոցներ չեն ձեռնարկվել Սերինե Հայրապետյանին սահմանված պարզա ընթացակարգով մեղադրանք առաջադրելու համար, որպիսի թույլ տրված սխալի հետևանքով խախտվել է ամբաստանյալի (...) պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

Դատարանը փաստում է նաև, որ դատարանի կողմից չի պահպանվել նաև ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 333-րդ հոդվածի պահանջը, այն է՝ նրա կողմից չի հրապարակվել մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը, այլ հրապարակվել է իր կողմից 04.07.2018թ. կայացված որոշման հատվածը:

(...) Դատարանը հանգում է այն հետևության, որ առկա է ամբաստանյալ Սերինե Ռաֆիկի Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ արարքի մեջ հանցակազմ չկա, ուստի քրեական հետապնդումը նրա նկատմամբ ենթակա է դադարեցման»⁸⁸¹:

9. Վերաքննիչ դատարանը 2019 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) [Թ]եև Դատարանը իր որոշմամբ Սերինե Հայրապետյանին վերագրել է առավել նվազ պայրասխանաարվություն նախատեսող արարքի կատարում, սակայն որոշման մեջ նշել է այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք էականորեն փարբերվում են Սերինե Հայրապետյանին նախորդ ներկայացված մեղադրանքից: Վերաքննիչ դատարանը հարկապես կարևորում է, որ Դատարանը Սերինե Հայրապետյանի մեղադրանքի

⁸⁸¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 107-110:

ծավալում է ներառել նաև 16 քաղաքացիներից 5000 ՀՀ դրամի փոխարեն 3000 ՀՀ դրամ գանձելու փաստը, որի հաշվառմամբ փոխել է նաև պատճառված գույքային վնասի չափը: Եշվածից առավել ակնհայտ է, որ Դատարանն իր որոշման մեջ նշել է այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք էականորեն տարբերվում են Սերինե Հայրապետյանին նախորդ ներկայացված մեղադրանքից: Վերաքննիչ դատարանը գրնում է, որ մեղադրանքը փաստական հանգամանքներով նախորդ ներկայացված մեղադրանքից էապես տարբերվող մեղադրանքով փոխարինելու դեպքում, Դատարանը պարտավոր էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով քրեական գործը վերադարձնել Քննչին: (...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կառուցակարգի նախատեսումը պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ մեղադրանքի փոփոխման ընթացակարգի պահպանման հրամայականով, ինչն առանցքային նշանակություն ունի մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրական և արդյունավետ կազմակերպման ասպահովման տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում Սերինե Հայրապետյանին առաջադրված մեղադրանքի փոփոխումը հնարավոր էր միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-203-րդ հոդվածներով սահմանված պահանջների պահպանմամբ, ինչը սույն գործով պահպանված չէ: Վերաքննիչ դատարանի համար ամբողջությամբ ընդունելի է Սերինե Հայրապետյանի պաշտպանության իրավունքի խախտման վերաբերյալ Առաջին սայրանի դատարանի հիմնավորումները:

Ադրադատնալով Դատարանի վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ մեղադրական եզրակացությունը և 2018 թվականի հուլիսի 04-ի որոշումը տրամադրվել է Սերինե Հայրապետյանին, ինչով և ասպահովվել է նրա պաշտպանության իրավունքը, սպա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դրանց տրամադրումը չէր կարող երաշխավորել պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացում, քանի որ առաջադրված մեղադրանքի փոփոխման ՀՀ քրեադատավարական ընթացակարգի խախտումը գրկել է Սերինե Հայրապետյանին մեղադրյալի այն իրավունքներից, որոնք նա կարող էր ունենալ սահմանված ընթացակարգով մեղադրանքը փոփոխելու դեպքում (...)»⁸⁸²:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի մեկնաբանել քրեադատավարական նորմերը,

⁸⁸² Տե՛ս քրեական գործ, հատոր 14, թերթեր 71-73:

որի արդյունքում կիրառել է այն օրենքը, որը չպետք է կիրառեր՝ կայացնելով անօրինական և անհիմն դատական ակտ, որը խաթարում է արդարադատության բուն էությունն ու հակասում է Վճռաբեկ դատարանի՝ *Ֆրունզիկ Գալստյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Բողոքաբերը, վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածը, նշել է որ այն հատուկ նորմ է, որով դատախազի վրա պարտականություն է դրված, առանց առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու, փոխել առաջադրված մեղադրանքի որակումը՝ պայմանով, որ այն պետք է նվազ ծանր պատասխանատվություն նախատեսի: Բողոքաբերի պնդմամբ՝ մեղադրյալի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման մասին հիմնավորումը ներկայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ իրավական ընթացակարգով, որի շրջանակում մեղադրյալն իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվել է իրեն մեղսագրվող արարքի բնույթի և հիմքի մասին, ինչպես նաև նրան տրվել են բավարար ժամանակ և հնարավորություններ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Արդյունքում, բողոքաբերը եզրահանգել է, որ մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի խախտվել, այլ ընդհակառակը՝ վերը նշված հիմնավորմամբ վերականգնվել են մեղադրյալի խախտված իրավունքները:

Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 176-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ ու 24-րդ հոդվածները՝ բողոքաբերը նշել է, որ դատախազն օժտված չէ մեղադրանք առաջադրելու լիազորությամբ, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով որոշում կայացնելուց հետո դատախազն այլ գործողություններ կատարելու լիազորություն չունի, հետևաբար չնախատեսված լիազորությունների չիրականացումը չի կարող համարվել դատախազի կողմից թույլ տրված՝ քրեադատավարական նորմերի խախտում:

Բողոք ներկայացրած անձի կարծիքով, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ անհիմն նեղացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով դատախազին վերապահված լիազորության շրջանակը: Ըստ բողոքաբերի՝ հնարավոր չէ արարքի որակումը փոխել առանց մեղադրանքի ձևակերպման մեջ որոշակի փոփոխություններ կատարելու, իսկ դա կարող է հանգեցնել մեղադրանքների ծավալների որոշակի տարբերությունների: Ուստի բողոքաբերի պնդմամբ՝ յուրաքանչյուր դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառումը նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով դատախազին տրված լիազորությունը կդարձնի ձևական և առարկայագուրկ:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2019 թվականի ապրիլի 25-ի

որոշումը և քրեական գործն ուղարկել Առաջին աստիճանի դատարան՝ այլ կազմով ըստ էության քննելու համար:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ամբաստանյալ Ս.Հայրապետյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին Առաջին աստիճանի դատարանի և այն անվիտիվ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատախազը մեղադրական եզրակացությամբ գործն սրանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝

(...)

2) իր որոշմամբ մեղադրանքի ձևակերպումից հանել առանձին կետեր, որակել հանցագործությունն այն օրենքին համապատասխան, որն, ի տարբերություն մեղադրական եզրակացությամբ կատարված որակումից, նախատեսում է նվազ ծանր պատասխանատվություն, և այդ փոփոխություններով հասարակել մեղադրական եզրակացությունը.

(...):

2. Մեղադրանքը լրացնելու կամ այն առավել ծանր կամ փաստական հանգամանքներով նախորդ ներկայացված մեղադրանքից էապես տարբերվող մեղադրանքով փոխարինելու հիմքերի առկայության դեպքում դատախազը պարտավոր է գործը վերադարձնել քննիչին լրացուցիչ մեղադրանք առաջադրելու կամ մեղադրանքը փոխելու համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ մեղադրանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացված հիմնավորումն է՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«[Մեղադրական եզրակացության] եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները և առաջադրված **մեղադրանքի ձևակերպումը**՝ նշելով տվյալ հանցագործությունը նախատեսող քրեական օրենքի նորմերը (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:*

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը: (...):»:

14. Անդրադառնալով մեղադրանքի (մեղադրանքի ձևակերպման) հասկացությանը՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է

արտահայտել, համաձայն որի՝ այն կոնկրետ անձին մեղաագրվող հանցավոր գործողության կամ անգործության նկարագրությունն է դատավարական փաստաթղթերում: Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար վտանգավոր և հակաիրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշերին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը⁸⁸³:

15. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի կապակցությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի կիրառության շրջանակը պետք է գնահատվի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության ավելի ընդհանուր իրավունքի լույսի ներքո: Քրեական հարցերում մեղադրյալին առաջադրված մեղադրանքների վերաբերյալ ամբողջական, մանրամասն տեղեկատվության տրամադրումը և, հետևաբար, իրավաբանական որակումը, որ դատարանը կարող էր տվյալ հարցով տալ, կարևոր նախաապայման է՝ վարույթի արդարությունն ապահովելու համար⁸⁸⁴,

- Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը կապված են նրանով, որ մեղադրանքի բնույթի ու հիմքի վերաբերյալ տեղեկացվելու իրավունքը պետք է դիտարկվի մեղադրյալի՝ իր պաշտպանությունը նախաապարաստելու իրավունքի լույսի ներքո⁸⁸⁵,

- Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետը պաշտպանյալին իրավունք է տալիս տեղեկացված լինել ոչ միայն մեղադրանքի «հիմքի» մասին, այսինքն՝ այն արարքների, որոնք նա ենթադրաբար կատարել է, և որոնց վրա հիմնված է մեղադրանքը, այլև մեղադրանքի «բնույթի», այսինքն՝ այդ արարքներին տրված իրավական բնութագրի մասին⁸⁸⁶:

16. Վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված լիազորությունների իրացմամբ դատախազի կողմից մեղադրանքի փոփոխությունը կատարվում է երկու

⁸⁸³ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Ճաղարյանի և մյուսների* գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11, *Արկադի Պասյանի* գործով 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշումները:

⁸⁸⁴ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Pélessier-ը and Sassi v. France» գործով 1999 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 25444/94, կետ 52, «Sejdovic v. Italy» գործով 2006 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 56581/00, կետ 90:

⁸⁸⁵ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Pélessier-ը and Sassi v. France» գործով 1999 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 25444/94, կետ 54, «Dallo v. Hungary» գործով 2001 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 29082/95, կետ 47:

⁸⁸⁶ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Mattocchia v. Italy» գործով 2000 թվականի հուլիսի 25-ի վճիռը, գանգատ թիվ 23969/94, կետ 59, «Penev v. Bulgaria» գործով 2010 թվականի հունվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 20494/04, կետ 32,42:

տարբեր իրավական ընթացակարգերով՝ դատախազի կողմից անմիջականորեն կամ գործը քննիչին վերադարձնելով, որոնցից յուրաքանչյուրի կիրառումն ուղղակիորեն կախված է մեղադրանքի ծավալի և իրավաբանական որակման փոփոխությունից: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է նվազեցնել մեղադրանքի ծավալը, մասնավորապես՝ մեղադրանքի ձևակերպումից հանել առանձին կետեր կամ արարքը որակել այնպիսի հոդվածով, որը նախատեսում է նվազ ծանր պատասխանատվություն, ապա դատախազը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լիազորված է իր որոշմամբ անմիջականորեն համապատասխան փոփոխություններ կատարել մեղադրական եզրակացության մեջ և հաստատել այն այդ փոփոխություններով: Ի տարբերություն նշված կարգավորման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 2-րդ մասը դատախազի համար նախատեսում է *լրացուցիչ մեղադրանք առաջադրելու կամ մեղադրանքը փոփոխելու համար գործը քննիչին վերադարձնելու մասին որոշում կայացնելու խնկերաարիվ պահանջ այն դեպքում, երբ անհրաժեշտ է.*

- *լրացնել մեղադրանքը,*
- *առաջադրված մեղադրանքը փոխարինել առավել ծանր մեղադրանքով,*
- *մեղադրանքը փոխարինել նախկինում ներկայացված մեղադրանքից՝ փաստական հանգամանքներով էսպես փարբերվող մեղադրանքով:*

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումը բխում է մեղադրանքից պաշտպանվելու համար բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու՝ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 3-րդ կետով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետով երաշխավորված իրավունքից, որն արդար դատաքննության իրավունքի հիմնարար պահանջներից մեկն է: Վերոնշյալ քրեադատավարական նորմերից բխում է, որ օրենսդրական կարգավորման հիմքում դրված է իրավաչափ այն գաղափարը, որ մեղադրանքի ձևակերպման փոփոխության, մասնավորապես, դրա իրավական և փաստական կողմի լրացման, իրավական կողմի խստացման կամ փաստական կողմի էական փոփոխության դեպքում պետք է կիրառվեն մեղադրանքի փոփոխման և լրացման դատավարական ընթացակարգերը՝ պահպանելով մեղադրանք առաջադրելու կարգը: Միայն նշված դատավարական ընթացակարգերի պահպանմամբ՝ հնարավոր կլինի ապահովել պաշտպանության իրավունքի տարրերից՝ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու պահանջը (ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին կետ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետ), որից ուղղակիորեն բխում է նաև մեղադրանքից պաշտպանվելու համար բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու երաշխիքի իրացումը:

16.1. Ինչ վերաբերում է մեղադրանքը լրացնելու դատավարական ինստիտուտին, ապա այն ենթադրում է մեղադրանքի ծավալի ընդլայնում՝ հանցավոր գործունեության նոր դրվագներ ներառելով կամ մեղադրյալին

վերագրվող փաստական հանգամանքների շրջանակն առանձին հանգամանքներով լրացնելով կամ արարքը մի քանի հոդվածներով որակելով, եթե նախկինում այն որակված է եղել մի հոդվածով, կամ միևնույն հոդվածի սահմաններում նաև այլ կետերով կամ մասերով որակելով:

Անդրադառնալով առաջադրված մեղադրանքն ավելի ծանր մեղադրանքով փոխարինելուն՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն վերաբերում է անձին մեղսագրվող արարքին տրված իրավական գնահատականը խստացնելուն՝ մեղադրանքի ծավալը լրացնելով և (կամ) մեղադրանքը փոփոխելով կամ առանց դրա:

Ինչ վերաբերում է գործը քննիչին վերադարձնելու երրորդ դեպքին, այն է՝ մեղադրանքը նախկինում ներկայացված մեղադրանքից՝ փաստական հանգամանքներով էապես տարբերվող մեղադրանքով փոխարինելու էությանը, ապա այն ենթադրում է հանցակազմի տարրերը կազմող փաստական հանգամանքների էական փոփոխություն՝ առանց արարքին տրված իրավական գնահատականը փոփոխելու կամ նույնիսկ արարքը նվազ ծանր պատասխանատվություն նախատեսող նորմով որակելով:

16.2. Վերոշարադրյալ վերլուծության լույսի ներքո անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի՝ վերը հիշատակված կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը մեղադրական եզրակացությանը ստացված գործը քննիչին չվերադարձնելու հնարավորություն նախատեսում է միայն մեղադրանքի ծավալի նեղացման և (կամ) առանց փաստական հանգամանքների էական փոփոխության անձին մեղսագրված արարքը նվազ խիստ պատասխանատվություն նախատեսող նորմով վերադարձնելու դեպքում: Մեղադրանքի լրացման կամ մեղադրանքի փոփոխման մնացած բոլոր դեպքերում մեղադրանք առաջադրելու կամ մեղադրանքը փոփոխելու համար գործը քննիչին վերադարձնելու մասին որոշում կայացնելու ինպերատիվ պահանջ է նախատեսված:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունիսի 29-ին կազմված մեղադրական եզրակացությանը Ս.Հայրապետյանին մեղսագրվել են պաշտոնատար անձի՝ որպես հանցագործության հատուկ սուբյեկտի, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմի հատկանիշներ՝ նշելով, որ վերջինս «ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 1-ի N 07-Ե հրամանի հիման վրա ԲԿ-ի փնտրելի կողմից 14.03.2016 թվականին տրված թիվ 61 հրամանով հանդիսացել է] ՀՀ քաղաքացիների կողմից զենք ձեռք բերելու թույլտվություն սրանապու համար բժշկական եզրակացություն տրամադրելու նպատակով բժշկական սրուզման կարգի պահպանման, վերահսկման պարասիանսարուն և տեղեկացված է եղել] (...), որ զենք ձեռք բերելու թույլտվություն սրանապու համար բժշկական եզրակացությունը, ըստ ԲԿ-ի գնացուցակի պեղք է տրամադրվի 5.000 ՀՀ դրամ վճարի դիմաց, ունեցել է] կազմակերպական-փնտրիչական լիազորություններ, այսինքն՝ հանդիսացել է] պաշտոնատար անձ, անձնական

շահագրգռվածությունից ելնելով դիտարկությանը չի կատարել իր ծառայողական պարտականությունները», արդյունքում առանց պարտադիր վճարման ենթակա՝ 5.000 ՀՀ դրամ գումարը գանձելու, 272 քաղաքացիների տրամադրվել են բժշկական եզրակացություններ, և «Արտաշատ ԲԿ» ՓԲԸ-ին 1.360.000 ՀՀ դրամի չափով գույքային վնաս է պատճառվել⁸⁸⁷: Մինչդեռ Դատախազի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ փոփոխվել են Ս.Հայրապետյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված վերոնշյալ փաստական հանգամանքները: Այսպես, նշված որոշմամբ փաստվել է, որ Ս.Հայրապետյանը վերոնշյալ նույն հրամանների ուժով եղել է ոչ թե քննարկվող բժշկական եզրակացությունները տրամադրելու գործընթացի պատասխանատուն, այլ «ՀՀ քաղաքացիների կողմից զենք ձեռք բերելու թույլտվություն արանսպու համար բժշկական եզրակացություն տրամադրելու նպատակով սրտեղծված հանձնաժողովի նախագահ», ով «ունենցել է ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի մարտի 1-ի N 07-Ն հրամանի համաձայն ՀՀ քաղաքացիներին տրամադրվող զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների և ֆիզիկական թերությունների բացակայության մասին բժշկական եզրակացությունները իր ստորագրությամբ ու կնիքով հաստատելու լիազորություն», անձնական շահագրգռվածության և մեղքի դիտարկության ձևի փոխարեն նշվել է, որ վերջինս «իր կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անսիրտ վերաբերմունքի հետևանքով չի կատարել իր վրա դրված պարտականությունները, այն է՝ պատշաճ վերահսկում չի իրականացրել քաղաքացիներին տրամադրվող զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների և ֆիզիկական թերությունների բացակայության մասին (...) բժշկական եզրակացությունների տրամադրման գործընթացի նկատմամբ»: Բացի այդ, նշված որոշմամբ Ս.Հայրապետյանին մեղադրվել է նաև 16 քաղաքացիներից 5.000 ՀՀ դրամի փոխարեն 3.000 ՀՀ դրամ գումարի դիմաց բժշկական եզրակացությունների տրամադրելը և «Արտաշատ ԲԿ» ՓԲԸ-ին, ոչ թե 1.360.000 ՀՀ դրամի, այլ 1.392.000 ՀՀ դրամ գույքային վնասի պատճառելը⁸⁸⁸:

18. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ դատախազի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշման պատճառաբանական մասում նշվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք էականորեն տարբերվում են Ս.Հայրապետյանին առաջադրված նախորդ մեղադրանքից, սակայն դատախազի կողմից չի պահպանվել գործը քննիչին վերադարձնելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը: Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ նշել է, որ դատախազի կողմից չի պահպանվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 333-րդ հոդվածի պահանջը, այն է՝ նրա կողմից հրապարակվել է ոչ թե մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը, այլ իր՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշումից հատված: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը, վկայակոչելով

⁸⁸⁷ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁸⁸⁸ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի իմպերատիվ պահանջն այն մասին, որ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն այն ամբաստանյալի նկատմամբ և այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել, եզրահանգել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով ներկայացված մեղադրանքով դատարանում քրեական գործի քննություն չի կարող իրականացվել՝ մեղադրանք առաջադրված չլինելու և հետագա դատաքննության՝ առարկայագուրկ լինելու պատճառով: Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ հակառակ դեպքում՝ կխախտվեն Ս.Հայրապետյանի արդար դատաքննության և պաշտպանության իրավունքները: Արդյունքում Առաջին ատյանի դատարանն արձանագրել է քրեական հետապնդումը բացառող հիմքի՝ արարքում հանցակազմի բացակայության առկայությունը⁸⁸⁹:

19. Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողել է անփոփոխ՝ նշելով, որ Սերինե Հայրապետյանին առաջադրված մեղադրանքի փոփոխումը հնարավոր էր միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-203-րդ հոդվածներով սահմանված պահանջների պահպանմամբ, ինչը սույն գործով պահպանված չէ: Արդյունքում Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ ընդունելի է համարել Սերինե Հայրապետյանի պաշտպանության իրավունքի խախտման վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հիմնավորումները⁸⁹⁰:

20. Սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից բխում է, որ Դատախազի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Ս.Հայրապետյանին մեղսագրված արարքի, մասնավորապես՝ դրա օբյեկտիվ կողմի փաստական հանգամանքներն էապես տարբերվում են Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունիսի 29-ին կազմած մեղադրական եզրակացության եզրափակիչ մասում տեղ գտած փաստական հանգամանքներից: Բացի այդ, Դատախազի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ մեղադրանքը ոչ միայն փոփոխվել է, այլ նաև լրացվել է՝ ներառելով նաև 16 քաղաքացիներից 5.000 ՀՀ դրամի փոխարեն 3.000 ՀՀ դրամ գումարի դիմաց բժշկական եզրակացությունների տրամադրում և արդյունքում «Արտաշատ ԲԿ» ՓԲԸ-ին, ոչ թե 1.360.000 ՀՀ դրամի, այլ 1.392.000 ՀՀ դրամ գույքային վնասի պատճառումը: Ուստի, սույն որոշման 13-15.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանը հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դիրքորոշումներն առ այն, որ Դատախազը մեղադրանք առաջադրելու կամ մեղադրանքը փոփոխելու համար գործը քննիչին ուղարկելու մասին որոշում չկայացնելով և իր որոշմամբ Ս.Հայրապետյանին առաջադրված մեղադրանքը լրացնելով ու այն փաստական հանգամանքներով էապես տարբերվող մեղադրանքով փոխարինելով, խախտել է ՀՀ քրեական

⁸⁸⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁸⁹⁰ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որի հետևանքով Ս.Հայրապետյանին պատշաճ դատավարական ընթացակարգով մեղադրանք չի առաջադրվել՝ խախտելով վերջինիս պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

21. Անփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Ս.Հայրապետյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով, իսկ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելով, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Ոստի ներկայացված վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Սերինե Ռաֆիկի Հայրապետյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի նոյեմբերի 19-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

56.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԳ/0124/01/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախազանգիությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Կ.ՍԵՐՈԲՅԱՆԻ
պաշտպաններ՝ Ռ.ԲԱԼՈՅԱՆԻ
Զ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

6 նոյեմբերի 2021 թվական

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 21-ի որոշման դեմ ամբաստանյալ Արտակ Ռոբերտի Գրիգորյանի պաշտպաններ Ռ.Բալոյանի և Զ.Վարդանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2020 թվականի հունիսի 26-ին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի, 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 38-311-րդ հոդվածի 1-ին մասի, 38-311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 312-րդ հոդվածի 1-ի մասի և 312-րդ

հողվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58213320 քրեական գործը, որի նախաքննությունը 2020 թվականի հուլիսի 16-ից շարունակվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

2020 թվականի հուլիսի 21-ին Արտակ Ռոբերտի Գրիգորյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ Ա.Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել վեց դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, վեց դրվագ 311-րդ հոդվածի 2-րդ մասով, մեկ դրվագ 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և վեց դրվագ 314-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ Ա.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերացվել է և նրան մեղադրանք է առաջադրվել վեց դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, վեց դրվագ՝ 311-րդ հոդվածի 2-րդ մասով, վեց դրվագ՝ 314-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ թիվ 58213320 քրեական գործից անջատվել է մեղադրյալներ Արտակ Գրիգորյանի և Հակոբ Ղայթանջյանի վերաբերյալ քրեական գործը, որին շնորհիվ է 62222520 համարը:

2. 2020 թվականի սեպտեմբերի 4-ին թիվ 62222520 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանը քրեական գործը դատական քննության նախապատրաստելու փուլում՝ 2020 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը թողել է անփոփոխ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունիսի 11-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի պաշտպաններ Ռ.Բալոյանի և Զ.Վարդանյանի միջնորդությունը՝ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին բավարարվել է, և ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելը ճանաչվել է թույլատրելի՝ գրավի չափ սահմանելով 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը:

3. Դատախազ Կ.Մերոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2021 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի

դատարանի՝ 2021 թվականի հունիսի 11-ի որոշումը բեկանել, ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը վերացրել և որպես խափանման միջոց է ընտրել կալանավորումը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպաններ Ռ.Բալոյանը և Զ.Վարդանյանը վճռաբեկ բողոք են բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի նոյեմբերի 3-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Արտակ Գրիգորյանին վեց դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, վեց դրվագ՝ 311-րդ հոդվածի 2-րդ մասով և վեց դրվագ՝ 314-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա զբաղեցնելով ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության Վանաձորի հաշվառման-քննական բաժանմունքի տեսուչի պաշտոնը, իրեն տրված լիազորությունների շրջանակում հանդիսանալով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, 2020 թվականի փետրվարին պայմանավորվածություն է ձեռք բերել իր մտերիմ, Գյումրի քաղաքի բնակիչ Սետ Գրիգորյանի հետ, սահմանված կարգի խախտմամբ՝ առանց ավտոմեքենա վարելու տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները պատշաճ ստուգելու՝ կաշառքի դիմաց ձևական բնույթ կրող տեսական և գործնական քննություններ ընդունելու պարագայում քաղաքացիներին վարորդական վկայականներ տրամադրելու համար իրեն օժանդակելու հարցում: Ձեռք բերված պայմանավորվածությունն իրագործելու նպատակով Սետ Գրիգորյանը հանձն է առել քաղաքացիների հավաքագրումը, նրանցից, ինչպես նաև միջնորդներից կաշառքի առարկա հանդիսացող գումարների ստացումը և դրանց փոխանցումն Արտակ Գրիգորյանին: Արտակ Գրիգորյանը Սետ Գրիգորյանի հետ համաձայնության գալուց հետո՝ 2020 թվականի փետրվար-մայիս ամիսների ընթացքում, վերջինիս օժանդակությամբ, վեց դրվագով ակնհայտ ապօրինի գործողության համար ստացել է կաշառք, վեց դրվագով չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները, ինչպես նաև վեց դրվագով կատարել է պաշտոնեական կեղծիք⁸⁹¹:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունիսի 11-ի որոշման համաձայն՝ «(..) 2020 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ քննարկելով Ա.Գրիգորյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը հիմնավոր կամ անհիմն լինելու հարցը, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գրել է, որ մեղադրյալի ազատության մեջ գրնվելու

⁸⁹¹ Մանրամասն տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 46-50:

պարագայում սուկա է ողջամիտ ենթադրություն, որ վերջինս կարող է խոչընդոտել գործի քննությանը քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով:

Սույն քրեական գործից առանձնացված և Շիրակի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ՇԴ/0143/01/20 քրեական գործով 2021 թվականի մայիսի 03-ին, արագացված դատական քննության կարգի կիրառմամբ կայացվել է դատական ակտ, որով սույն գործով որպես մեկ այլ քրեական գործով անցնող մեղադրյալներ դատակոչված անձինք համաձայնություն են հայտնել առաջադրված մեղադրանքի հետ և դրանով իսկ չեզոքացրել այն մրսահոգությունը, որ Ա.Գրիգորյանը մնալով ազատության մեջ կարող է անօրինական ազդեցություն գործադրել նրանց վրա:

Միևնույն ժամանակ դատարանը գրնում է, որ լիովին չի չեզոքացել Ա.Գրիգորյանի կողմից պարզաձև վարքագիծ դրսևորելու նպատակով նրա նկատմամբ այլ խախտման միջոց կիրառելու անհրաժեշտությունը, մասնավորապես պայմանավորված առաջադրված մեղադրանքի ծանրությամբ, Ա.Գրիգորյանի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ առանց հարգելի պարճատների վարույթն իրականացնող մարմնի կանչով չներկայանալու ճանապարհով գործի քննությանը խոչընդոտելու իմաստով:

Դատարանը գրնում է, որ վերը նշված ողջամիտ ենթադրությունը չեզոքացնելու և գործի քննության ընթացքում Ա.Գրիգորյանի պարզաձև վարքագիծն ապահովելու նպատակով բավարար երաշխիք կարող է հանդիսանալ գրավի կիրառմամբ խախտման միջոցի ընտրությունը:

Նման եզրահանգման հիմք է հանդիսանում նաև Ա.Գրիգորյանի անձը և ընտրանեկան դրությունը:

Անդրադառնալով գրավի առարկային Դատարանը, ի թիվս այլնի, հաշվի առնելով, մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքների բնույթը, ամբաստանյալի անձը, մասնավորապես այն, որ ամոսնացած է, ունի մշտական բնակության վայր, բնութագրվում է դրական, և նկարի ունենալով, որ գրավի գումարի սահմանումը չունի վնասը հարուցելու նպատակ կամ նշանակություն, գրնում է, որ պաշտպանության կողմի որպես գրավի առարկա առաջարկված նախընտրելի գումարի չափը 5.000.000 ՀՀ դրամը գումարի վճարումը կարող է ապահովել ամբաստանյալ Ա.Գրիգորյանի պարզաձև վարքագիծը քրեական գործի դատաքննության ընթացքում (...)⁸⁹²:

7. Վերաքննիչ դատարանի 2021 թվականի հուլիսի 21-ի որոշման համաձայն՝ «(...) Առաջին արյանի դատարանը գնահատման չի արճանացրել Արարակ Գրիգորյանին մեղսագրվող արարքների բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, մասնավորապես այն, որ նրան մեղսագրվում է վեց դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, վեց դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով և վեց դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքներ,

⁸⁹² Տես նյութեր, հատոր 1, թերթեր 46-52:

որոնցից ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքի համար հիմնական պարիժ է նախատեսված միայն ազարագրկման ձևով՝ երեքից յոթ փարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք փարի ժամկետով:

Վերաքննիչ դադարանը հարկ է համարում նկատել, որ ամբաստանյալին վերագրվող արարքների բնույթը և վրանգավորության աստիճանը թեև չեն կարող գնահատվել որպես կայանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ, դրանք էական նշանակություն ունեն խախտման միջոցի տեսակն ընտրելիս:

Բացի այդ, Առաջին արյանի դադարանը պարզաճ ուսումնասիրության չի ենթարկել կայանավորման հիմքերը:

Այսպես.

Անդրադատնալով գործի քննությանը խոչընդոտելու վրանգին՝ Վերաքննիչ դադարանը գրնում է, որ ամբաստանյալ Արարակ Գրիգորյանն ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել գործի քննությանը:

Վերաքննիչ դադարանի նման եզրահանգման հիմքում ընկած են հետևյալ հանգամանքները.

- Շիրակի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դադարանի ՇԿ/0143/01/20 քրեական գործով ոչ բոլոր անձանց վերաբերյալ է կայացվել դադարվճիտ, մասնավորապես՝ թիվ ՇԿ/0143/01/20 քրեական գործից ամբաստանյալ Սեդր Ժորժիկի Գրիգորյանի վերաբերյալ մասն անջարվել է որպես առանձին վարույթ, իսկ գործի դադարվնությունը շարունակվել է ամբաստանյալներ Դավիթ Վիկտորի Դարբինյանի, Մանվել Ալբերտի Բաղդասարյանի, Հայկազ Հանկերի Սեդրակյանի, Գևորգ Հայկազի Հակոբյանի, Անդրանիկ Գևորգի Հակոբյանի, Արշավիր Վարդանի Սարգսյանի, Արվան Վարդգեսի Ներսիսյանի, Հովհաննես Հակոբի Թորոսյանի, Հրաչ Խաչիկի Բարսեղյանի, Ալֆրեդ Վարդանի Ծարությունի, Կարեն Զոնիկի Դավթյանի և Արայում Մանվելի Ղազարյանի մասով, այնուհետև, 2021 թվականի մայիսի 03-ին դադարանի դադարվճով Դավիթ Դարբինյանը, Մանվել Բաղդասարյանը, Հայկազ Սեդրակյանը, Գևորգ Հակոբյանը, Անդրանիկ Հակոբյանը, Արշավիր Սարգսյանը, Արվան Ներսիսյանը, Հովհաննես Թորոսյանը, Հրաչ Բարսեղյանը, Ալֆրեդ Ծարությունը, Կարեն Դավթյանը և Արայում Ղազարյանը դադարապարվել են փարքեր չափերի տուգանքով, իսկ Սեդր Գրիգորյանի վերաբերյալ, ով նույնպես հանդիսանում է ամբաստանյալ և ըստ գործում առկա փաստական փյախների վեց դրվագով օժանդակել է Արարակ Գրիգորյանի կողմից ակնհայտ սպորինի գործողության համար կաշառք արանալուն, մեկ դրվագով Արարակ Գրիգորյանին դրդել է չարաշահել իր պաշտոնական լիազորությունները և կարարել պաշտոնական կեղծիք, մեկ դրվագով կարարել է կաշառք արանալու օժանդակության փորձ, մեկ դրվագով կարարել է կաշառք արանալու պարրվակով խարդախություն ղեկու վերջնական դարական սկր առկա չէ:

- Մեր Գրիգորյանը նախաքննության ընթացքում Կովել է Արտակ Գրիգորյանի կողմից կաշառք ստանալու հանգամանքը բացահայտող, վերջինին մի շարք հանցավոր արարքներ կատարելու մեջ մերկացնող ցուցմունքներ:

Ինչ վերաբերում է Առաջին արյանի դատարանի կողմից նշված Արտակ Գրիգորյանի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու մեկ այլ եղանակով՝ առանց հարգելի պարճառների վարույթն իրականացնող մարմնի կանչով չներկայանալու հիմքերին, սալա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ վերը նշված հիմքերի մասով Առաջին արյանի դատարանի հետևությունները հիմնված չեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա, քանի որ դրա կապակցությամբ որևէ փաստական փյույթ չկա: Ավելին, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ նախկինում Առաջին արյանի դատարանի կողմից ամբաստանյալ Արտակ Գրիգորյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն անստիպելի թողնելու վերաբերյալ կայացված որոշմամբ այդպիսի հիմքեր նախատեսված չեն եղել:

Իսկ ինչ վերաբերում է ամբաստանյալ Արտակ Գրիգորյանի անձը բնութագրող փյույթներին, սալա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գրավն ի գորու չէ կանխել ամբաստանյալ Արտակ Գրիգորյանի ոչ իրավաչափ վարքագիծը, այն է՝ ամբաստանյալ Արտակ Գրիգորյանը, գտնվելով ազատության մեջ, կարող է խոչընդոտել գործի քննությանը (...)⁸⁹³:

Վճարակ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարակ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակների կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-137-րդ և 143-րդ հոդվածների խախտումներ, որի արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը, Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնված չէ հիմնավոր և փաստարկված պատճառաբանությունների վրա, որոնցով կհիմնավորվեր, թե ինչու գրավն ի գորու չէ ապահովել Ա.Գրիգորյանի պատշաճ վարքագիծը:

Բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է գործի նյութերից բխող հետևյալ հանգամանքները.

- Ա.Գրիգորյանը երբևէ չի խոչընդոտել գործի քննությանը, ունի բարձրագույն կրթություն, ամուսնացած է, բնութագրվում է դրական, ունի մշտական բնակության վայր,

- գործի քննության ընթացքում շուրջ մեկ ամիս գտնվել է ազատության մեջ և որևէ կերպ չի խոչընդոտել գործի քննությանը,

- տառապում է «Զարկերակային հիպերտենզիա III^o» հիվանդությամբ և այդպիսով գտնվում է կորոնավիրուսային համավարակի ծանր զարգացման ռիսկային խմբում,

⁸⁹³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 126-144:

- ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածներով առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել և ցուցմունքներ տալով օժանդակել է քննությանը,

- սույն գործից առանձնացված և Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ՇԴ/0143/01/20 քրեական գործով 2021 թվականի մայիսի 3-ին, արագացված դատաքննության կիրառմամբ, կայացվել է դատական ակտ, ըստ որի՝ սույն դեպքի առթիվ քննվող տվյալ քրեական գործով անցնող մեղադրյալներն առաջադրված մեղադրանքներում իրենց լիովին մեղավոր են ճանաչել, որպիսի հանգամանքը չեզոքացրել է այն մտահոգությունը, որ ազատության մեջ մնալով ամբաստանյալ Ա.Գրիգորյանը կարող է անօրինական ազդեցություն գործադրել նրանց վրա:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոք բերած անձինք խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 21-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը կամ օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունիսի 11-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ գրավն ի գորու չէ կանխել ամբաստանյալ Արտակ Գրիգորյանի ոչ իրավաչափ վարքագիծը:

11. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ ստկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնախեղության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի ստկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1.Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խախտման միջոց կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել միջնորդական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճատների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասխանաարվությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Խախտման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը.

3) տարիքը և առողջական վիճակը.

4) սեռը.

5) գրադմունքի տեսակը.

6) ընտանեկան դրությունը և ինսամարկյալների առկայությունը.

7) գույքային դրությունը.

8) բնակության մշտական վայրի առկայությունը.

9) այլ էական հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գրավը դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի կամ դատախազության ղեկավարի մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է: Որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը»:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ներպետական իշխանությունները, անձին ազատ արձակելու կամ կալանավորելու մասին որոշում կայացնելիս, պետք է փնտրեն նաև

այլընտրանքային միջոցներ, որոնք թույլ կտան ապահովել տվյալ անձի ներկայությունը դատաքննությանը⁸⁹⁴,

- կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ այլ միջոցներով հնարավոր չէ լիարժեք երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը⁸⁹⁵,

- կալանքի որպես խիստ միջոցի կիրառումը կարող է արդարացվել, երբ այլ ներգործության ուժով նվազ միջոցների կիրառելիությունը քննարկվել է և որոշվել, որ դրանք բավարար չեն մասնավոր կամ հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու համար, ինչը կարող է պահանջել, որ անձը կալանավորվի⁸⁹⁶,

- 5-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է ոչ միայն «ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունքը», այլ նաև նախատեսում է, որ «ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»⁸⁹⁷,

- գրավը կարող է պահանջվել այնքան ժամանակ, որքան առկա կլինեն կալանքը հիմնավորող պատճառները⁸⁹⁸:

13. Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, հարուցված քրեական գործի, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով⁸⁹⁹:

⁸⁹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ *Idalov v. Russia* գործով 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, 140-րդ կետ:

⁸⁹⁵ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sahin Alpay v. Turkey* գործով 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, 181-րդ կետ:

⁸⁹⁶ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Djundiks v. Latvia* գործով 2014 թվականի ապրիլի 15-ի վճիռը, գանգատ թիվ 14920/05, 89-րդ կետ:

⁸⁹⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khudoyorov v. Russia* գործով 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 6847/02, 183-րդ կետ:

⁸⁹⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Musuc v. Moldova* գործով 2007 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 42440/06, կետ 42, *Aleksandr Makarov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 15217/07, 139-րդ կետ:

⁸⁹⁹ Տե՛ս մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱՎԴ-0022/06/08, ԼԴ-0197/06/08, ԵԿԴ-0580/06/09, ԵԿԴ-0678/06/10, ՏԴ-0052/06/14, ԵԱԲԴ-0386/06/15 և այլ գործերով

13.1. Միննույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում անդրադառնալով անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս նրան վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը հաշվի առնելու կարևորությանը, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ թեև մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ, դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Մեղազգրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող նյութ հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին⁹⁰⁰:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արտակ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել վեց դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, վեց դրվագ՝ 311-րդ հոդվածի 2-րդ մասով և վեց դրվագ՝ 314-րդ հոդվածի 1-ին մասով⁹⁰¹:

- Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի հունիսի 11-ի որոշմամբ արձանագրել է, որ սույն քրեական գործից առանձնացված և Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ՇԴ/0143/01/20 քրեական գործով 2021 թվականի մայիսի 3-ին, արագացված դատական քննության կարգի կիրառմամբ, կայացվել է դատական ակտ, որով սույն գործով որպես մեկ այլ քրեական գործով անցնող մեղադրյալներ դատակոչված անձինք համաձայնություն են հայտնել առաջադրված մեղադրանքի հետ և դրանով իսկ չեզոքացրել այն մտահոգությունը, որ Ա.Գրիգորյանը մնալով ազատության մեջ կարող է անօրինական ազդեցություն գործադրել նրանց վրա: Միննույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ լիովին չի չեզոքացել Ա.Գրիգորյանի կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելու նպատակով նրա նկատմամբ այլ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը, մասնավորապես՝ պայմանավորված առաջադրված մեղադրանքի ծանրությամբ, Ա.Գրիգորյանի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ առանց հարգելի պատճառների վարույթն իրականացնող մարմնի կանչով չներկայանալու ճանապարհով գործի քննությանը խոչընդոտելու իմաստով: Առաջին ատյանի դատարանը գտել է, որ վերը նշված ողջամիտ ենթադրությունը չեզոքացնելու և գործի քննության

կայացված որոշումները:

⁹⁰⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վահագն Պողոսյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ1/0062/06/12 որոշումը:

⁹⁰¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

ընթացքում Ա.Գրիգորյանի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով բավարար երաշխիք կարող է հանդիսանալ գրավի կիրառմամբ խափանման միջոցի ընտրությունը, որպիսի եզրահանգման հիմք է հանդիսանում նաև Ա.Գրիգորյանի անձն ու ընտանեկան դրությունը:

Անդրադառնալով գրավի առարկային՝ Առաջին ատյանի դատարանը, ի թիվս այլնի, հաշվի առնելով, մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքների բնույթը, ամբաստանյալի անձը, մասնավորապես այն, որ ամուսնացած է, ունի մշտական բնակության վայր, բնութագրվում է դրական, գտել է, որ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի վճարումը կարող է ապահովել ամբաստանյալ Ա.Գրիգորյանի պատշաճ վարքագիծը քրեական գործի դատաքննության ընթացքում⁹⁰²:

- Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը գնահատման չի արժանացրել Ա.Գրիգորյանին մեղսագրվող արարքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը պատշաճ ուսումնասիրության չի ենթարկել կալանավորման հիմքերը: Անդրադառնալով գործի քննությանը խոչընդոտելու վտանգին՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանն ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել գործի քննությանը: Նման եզրահանգման հիմքում ընկած է այն, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ՇԴ/0143/01/20 քրեական գործով ոչ բոլոր անձանց վերաբերյալ է կայացվել դատավճիռ, մասնավորապես՝ թիվ ՇԴ/0143/01/20 քրեական գործից ամբաստանյալ Սետ Գրիգորյանի վերաբերյալ մասն անջատվել է որպես առանձին վարույթ, ում վերաբերյալ դեռևս վերջնական դատական ակտ առկա չէ: Բացի այդ, Սետ Գրիգորյանը նախաքննության ընթացքում տվել է Արտակ Գրիգորյանի կողմից կաշառք ստանալու հանգամանքը բացահայտող, վերջինին մի շարք հանցավոր արարքներ կատարելու մեջ մերկացնող ցուցմունքներ:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի կողմից նշված վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու մեկ այլ եղանակով՝ առանց հարգելի պատճառների վարույթն իրականացնող մարմնի կանչով չներկայանալու հիմքերին, արձանագրել է, որ վերը նշված հիմքերի մասով Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնված չեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա, քանի որ դրա կապակցությամբ որևէ փաստական տվյալ չկա: Իսկ ինչ վերաբերում է ամբաստանյալ Ա.Գրիգորյանի անձը բնութագրող տվյալներին, ապա Վերաքննիչ դատարանը գտել է, որ գրավը ի գործ ոչ կանխել ամբաստանյալ Ա.Գրիգորյանի ոչ իրավաչափ վարքագիծը, այն է՝ վերջինս, գտնվելով ազատության մեջ, կարող է խոչընդոտել գործի քննությանը⁹⁰³:

⁹⁰² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁹⁰³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13.1-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ գրավն ի գործու չէ կանխել ամբաստանյալ Ա.Գրիգորյանի ոչ իրավաչափ վարքագիծը, հիմնավորված չէ՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

- թեև արարքի բնույթով ու վտանգավորության աստիճանով պայմանավորված՝ Ա.Գրիգորյանին մեղսագրվում են միջին ծանրության և ծանր հանցագործություններ, սակայն այդ հանգամանքն ինքնին չի կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք,

- սույն գործով դատակոչված և մեկ այլ՝ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ՇԳ/0143/01/20 քրեական գործով անցնող անձինք (բացառությամբ մեկ անձի) համաձայնություն են հայտնել առաջադրված մեղադրանքի հետ և դատական քննության արագացված կարգի կիրառմամբ՝ 2021 թվականի մայիսի 3-ի դատավճռով նրանց նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ,

- ամբաստանյալ Ա.Գրիգորյանը նախկինում դատապարտված չէ, վատառողջ է, ամուսնացած է, խնամքին են գտնվում կինը և երեխաները, ունի մշտական բնակության վայր, բարձրագույն կրթություն, բնութագրվում է դրական⁹⁰⁴, սույն քրեական գործով շուրջ 11 (տասնմեկ) ամիս գտնվել է անազատության մեջ:

Բացի վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ որպես վարույթն իրականացնող մարմին հանդես եկող Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելիս Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը պետք է հիմնված լիներ ծանրակշիռ փաստական հանգամանքների վրա և ունենար պատճառաբանվածության առավել բարձր աստիճան: Հակառակ մոտեցումը, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, կարող է իր բացասական ազդեցությունը թողնել առաջին ատյանի դատարանում քրեական գործի քննության բնականոն ընթացքի վրա՝ դրանով իսկ սահմանափակելով առաջին ատյանի դատարանի ներքին անկախությունը: Մինչդեռ, տվյալ դեպքում, որպես վարույթն իրականացնող մարմին հանդես եկող՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելիս, Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը չի համապատասխանել վերոնշյալ չափանիշին⁹⁰⁵:

16. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի հանգամանքների, այդ թվում նաև՝ նախորդ կետում մեջբերված հանգամանքների համատեքստում ամբաստանյալ Ա.Գրիգորյանի կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունն առնվազն նվազել է այն աստիճան,

⁹⁰⁴ Տե՛ս ի թիվս այլնի, նյութեր, հատոր 1, թերթեր 8, 33-34:

⁹⁰⁵ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արման և Արքա Մադայթյանների* գործով 2020 թվականի մայիսի 26-ի թիվ ԱԲԴ/0152/01/19 որոշումը:

որ գրավն ի գորու է կանխել ամբաստանյալ Ա.Գրիգորյանի ոչ պատշաճ վարքագիծը:

17. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ գրավն ի գորու չէ կանխել ամբաստանյալ Արտակ Գրիգորյանի ոչ իրավաչափ վարքագիծը, հիմնավոր չէ:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելը թույլատրելի ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հունիսի 11-ի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Բացի այդ, հաշվի առնելով, որ Առաջին ատյանի դատարանի վերոգրյալ որոշման հիման վրա որպես գրավ վճարված 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարը, սույն որոշումը կայացնելու պահի դրությամբ չի վերադարձվել գրավատուին⁹⁰⁶, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է Ա.Գրիգորյանին անհապաղ ազատել կալանքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արտակ Ռոբերտի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 21-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելը թույլատրելի ճանաչելու մասին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հունիսի 11-ի որոշմանը՝ հիմք

⁹⁰⁶ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 52 :

ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Արտակ Ռոբերտի Գրիգորյանին անհապաղ ազատել կալանքից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող

ստորագրություն

Դատավորներ

ստորագրություններ

57.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0197/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏԻՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

26 նոյեմբերի 2021 թվական

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Մանուկ Բորիսի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման դեմ վերջինիս և պաշտպան Ն.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Բ Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի մայիսի 14-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի և 273-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 48166019 քրեական գործը:

2019 թվականի օգոստոսի 29-ին Մանուկ Բորիսի Գևորգյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը:

2019 թվականի սեպտեմբերի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի

1-ին մասով հարուցվել է թիվ 48104919 քրեական գործը, որը նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ միացվել է թիվ 48166019 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ ՄԳևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2019 թվականի նոյեմբերի 27-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել ՄԳևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 273-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

2019 թվականի դեկտեմբերի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2020 թվականի հունվարի 22-ի դատավճռով ՄԳևորգյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ՄԳևորգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Մեղադրող ՄՏիգրանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2020 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի դատավճիռը՝ պատժի մասով բեկանել և փոփոխել է, ՄԳևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված՝ 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ վերացրել: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման դեմ ամբաստանյալ ՄԳևորգյանը և պաշտպան ՆԳրիգորյանը բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանը 2021 թվականի նոյեմբերի 3-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը դատական նիստում քննության առնելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Մանուկ Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) /Մյա 2019 թվականի մայիս ամսվա սկզբներին, չսպառված օրը, Արմավիր քաղաքի Մ.Հերացի փողոցի

1-ին հասցեում գրնվող «Կարինե-85» արտադրական կոդակրատիվի տարածքից գրնվելով իր հանգուցյալ հայր Բորիս Գևորգյանին պատկանող, 1958 թվականի գործարանային արտադրության, 5,6մմ տրամաչափի, 80608 համարի «SOԶ-8» մոդելի ակոսափող հրազենը և թվով 8 հատ գործարանային արտադրության 5,6 տրամաչափի օղակավոր բոցավառման, հրացանային սպորտային-որտորական ռազմամթերք հանդիսացող փամփուշները, դրանք սպորտիկ կերպով պահել է նույն արտադրամասի տարածքում, որոնք 2019թ մայիսի 14-ին կատարված խուզարկության ժամանակ ներկայացրել է ոստիկանության աշխատակիցներին»⁹⁰⁷:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ամբաստանյալ Մանուկ Բորիսի Գրիգորյանի կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը:

Որպես պատասխանատվությունը մեղմացնող և անձը բնութագրող հանգամանքներ են դիտարկում այն, որ ամբաստանյալ Մանուկ Բորիսի Գևորգյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել, անկեղծորեն զղջացել է կատարած հանցանքի համար և ակտիվորեն աջակցել հանցագործությունը բացահայտելուն, բնութագրվում է դրականորեն, նախկինում արատավորված չի եղել, բազմանդամ ընտանիքի կերակրողն է, ինքնաբերական գրնվում նաև անչափահաս դուստրն ու երկրորդ խմբի հաշմանդամ, վարատող մայրը, ֆիզիկապես վարատող է, որի կապակցությամբ ազատվել է իսկական զինվորական ծառայությունից:

Հաշվի առնելով նշված հանգամանքները, դատարանը գրնում է, որ հնարավոր է ամբաստանյալ Մանուկ Բորիսի Գևորգյանի հետագա ուղղումն ու վերադասարակումն առանց հասարակությունից մեկուսացնելու և նպաստակահարմար չէ, որ վերջինս ազատագրվման ձևով պատիժ կրի, ոստիկանը նրա նկատմամբ պետք է կիրառել ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածն ու նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել: (...)»⁹⁰⁸:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Մ.Գևորգյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը լրիվ և բազմակողմանի գնահատման չի ենթարկել նրան մեղադրված արարքի հանրային վրանգավորության բնույթն ու աստիճանը: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը պարզաձև գնահատման չի ենթարկել Մ.Գևորգյանի մտքից հայրնաբերված գեների և ռազմամթերքի տեսակը և հարկությունները, մինչդեռ դրանք ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանրային վրանգավորության բնութագրիչներից են և այդ հանցագործության վերաբերյալ յուրաքանչյուր գործով պետք է գնահատման ենթարկվեն՝ ի սպաստվումն պատժի անհատականացման սկզբունքի:

⁹⁰⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 139:

⁹⁰⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 55-56:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ սույն դեպքում զենքի և ռազմամթերքի տեսակը և հատկությունները էականորեն բարձրացնում են ՄԳևորգյանի կատարած հանցագործության բնույթն ու վրանգավորության աստիճանը:

Վերաքննիչ դատարանը նաև փաստում է, որ Առաջին արյանի դատարանը, խախտելով ՀՀ Վճռաբեկ դատարանի Պ.Բայրամյանի գործով 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշման մեջ ձևավորած իրավական դիրքորոշումները, հաստատված է համարել այնպիսի մեղմացնող հանգամանքներ, որոնք իրական չեն, հետևաբար ողջամերորեն չեն նվազեցնում ամբաստանյալի և նրա կատարած արարքի հանրային վրանգավորությունը, խոսքը մասնավորապես վերաբերում է դատարանի կողմից, որպես մեղմացնող գնահատված այն հանգամանքները, որ ամբաստանյալ Մանուկ Բորիսի Գևորգյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել, անկեղծորեն զղջացել է կատարած հանցանքի համար և ակրիվորեն աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

Ինչպես երևում է գործի նյութերից՝ խուզարկության ժամանակ ՄԳևորգյանը ունենալով հնարավորություն ներկայացնելու ռազմամթերք հանդիսացող փամփուշները՝ չի ներկայացրել դրանք, ավելին՝ որպես մեղադրյալ հարցաքննվելիս չի ընդունել իրեն առաջադրված մեղադրանքը:

Դատական քննության փուլում մեղադրանքի հետ համաձայն լինելը և արագացված դատաքննության կարգ կիրառելու միջնորդություն ներկայացնելը՝ բավարար չեն հաստատված համարելու Առաջին արյանի դատարանի կողմից վկայակոչած մեղմացնող հանգամանքները:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ սույն գործով Առաջին արյանի դատարանի կողմից վկայակոչած՝ ամբաստանյալի անձը բնութագրող և քրեական պարասիսանսարվությունն ու պարիժը մեղմացնող մնացած հանգամանքները բավարար էին մինչև 3 րարի ժամկետով ազատազրկման ձևով պարիժ նախարեսող հանցագործության համար 6 ամիս ժամկետով ազատազրկման ձևով պարիժ նշանակելու համար, իսկ այդ պարիժի կրման նպատակահարմարության հարցի լուծման տեսանկյունից դրանք էական նշանակություն չունեն:

(...) Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին արյանի դատարանը ՄԳևորգյանի նկատմամբ 6 ամիս ժամկետով նշանակված պարիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս բազմակողմանի գնահատման չի ենթարկել արարքի հանրային վրանգավորության աստիճանը բնութագրող՝ վերևում նշված հանգամանքները՝ թույլ տալով արդարության և պարասիսանսարվության անհարակաճացման սկզբունքները, պարիժի նպատակները, պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները և պարիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտում:

Առաջին արյանի դատարանի կողմից պարիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ արված հետևությունները հիմնավորված չեն գործի փաստերով: Արդյունքում՝ Առաջին արյանի դատարանի դատավճիռը չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ

հողվածով սահմանված՝ դատարանի ակտի ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պարզապարզության պահանջներին:

(...) Ամբաստանյալ Մ.Գևորգյանի նկատմամբ նշանակված պարիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշդ կիրառում է:

(...) Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում բացակայում են Մ.Գևորգյանի նկատմամբ նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմքերը (...)⁹⁰⁹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Ըստ բողոքաբերների՝ պատժի նպատակների իրացման տեսանկյունից Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ և օբյեկտիվ եզրահանգման առ այն, որ առկա են Մ.Գևորգյանի նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը, վերջինիս ուղղումը հնարավոր է առանց ազատագրվման ձևով նշանակված պատիժը կրելու և դրա միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին, իսկ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջները:

Բողոքի հեղինակները նշել են, որ ստորադաս դատարանը չի պատճառաբանել, թե հանցագործության առարկայի որակական կամ տեսակային որ հատկանիշն է, որ կարող էր ազդել հանցագործության վտանգավորության աստիճանի բարձրացման վրա, այն դեպքում, երբ հայտնաբերված առարկաները ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով սահմանված հանցագործության առարկաներից ամենանվազ վտանգավորություն ներկայացնողներն են թե՛ տրամաչափի, թե՛ կիրառության ոլորտի և թե՛ խոցելիության հնարավորության առումով, իսկ Մ.Գևորգյանը դրանք ոչ թե ձեռք է բերել, այլ դա պատկանել է իր հորը, ինչն էականորեն նվազեցնում է արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը:

Բողոք բերած անձինք ընդգծել են, որ գործով հաստատված է համարվել, որ Մ.Գևորգյանը որևէ գործողություն չի կատարել հրազենը և փամփուշտները ձեռք բերելու ուղղությամբ և հանգամանքների բերումով ստիպված է եղել հրազենը տեղափոխել անվտանգ վայր, դա հետագայում իրացնելու նպատակ չի ունեցել: Բացի այդ, Մ.Գևորգյանը շուրջ տասներեք տարի հանդիսացել է որսորդմիության անդամ, և իրավունք ուներ ոստիկանությունում հաշվառելով

⁹⁰⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 44-53:

ձեռք բերել և պահել որսորդական ակոսափող ցանկացած հրազեն և դրա փամփուշտները, հետևաբար նրա կողմից այդ հանցանքի կատարման վտանգավորության աստիճանը ևս պետք է դիտարկվեր որպես նվազ վտանգավոր, ինչն էլ, սակայն, որևէ կերպ քննարկման առարկա չի դարձվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Բողոքաբերները շեշտել են, որ ՄԳևորգյանը նախաքննության ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ, տվել է ճշմարտացի ցուցմունքներ, ըստ էության, կրկնելով մեղադրանքում ներկայացված դեպքի հանգամանքները, ուստի նրա կողմից տրված ցուցմունքները պետք է գնահատվեն ինքնախոստովանական և ունենան մեղադրանքն ընդունելու նշանակություն, ինչն էլ կատարվել է Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտում, որի վերաբերյալ, սակայն, Վերաքննիչ դատարանը հայտնել է իր անհամաձայնությունը՝ անտեսելով մեղադրանքն ամբաստանյալի կողմից ընդունելու փաստը:

Բողոքի հեղինակները փաստարկել են, որ ՄԳևորգյանի ազատագրվմամբ նրա ընտանիքը կգրկվի միակ կերակրողից, ինչը կհանգեցնի բացասական հետևանքների, ինչպիսի հանգամանքներն էլ որևէ կերպ հաշվի չեն առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Բողոք բերած անձինք նշել են նաև, որ ամբաստանյալն ունի բարձրագույն կրթություն, կայուն աշխատանք, բնութագրվում է դրականորեն, զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչով պայմանավորված վճարում է հարկեր և հանդիսանում է գործատու տասնյակ քաղաքացիների համար, ինչպես նաև վերջինիս մայրը՝ Սուսաննա Դարբինյանը, երկրորդ կարգի հաշմանդամ է:

8.1. Բացի այդ, բողոքի հեղինակները, վկայակոչելով կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (*non bis in idem*) հիմնարար պահանջը, փաստել են, որ ՄԳևորգյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատական ակտն ուղարկվել է կատարման, ինչի հիման վրա վերջինս, 2020 թվականի մարտի 5-ին, ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայությունում վերցվել է հաշվառման, այսինքն՝ նրա նկատմամբ սահմանված փորձաշրջանը սկսվել է ի կատար ածվել, որի ավարտին, բողոքը ներկայացնելու պահին, մնացել է շուրջ մեկ ամիս: Նշվածի հաշվառմամբ բողոքաբերները եզրահանգել են, որ ՄԳևորգյանն արդեն իսկ կրել է Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված փորձաշրջանը, հետևապես՝ պատիժը, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից նշանակված վեց ամիս ժամկետով ազատագրվումը պետք է դիտարկվել որպես նույն արարքի համար կրկնակի պատժի կրում, ինչը հանգեցնելու է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության պահանջի խախտման:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի դատավճի:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ ՄԳևորգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ (...):»*

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

11.1. Վերոնշյալ իրավադրույթը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի հանդգնությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված, ՀՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա⁹¹⁰

⁹¹⁰ Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տես Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մարտիրոսի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի

հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն⁹¹¹:

11.2. Անդրադառնալով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս հանցավորի անձը բնութագրող տվյալները գնահատման ենթարկելու կարևորությանը՝ Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, այլև հանցավորի անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեաիրավական, ֆիզիկական հատկությունների համակցությունը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, սեռը, դատվածությունը և այլն): Մասնավորապես Վճռաբեկ դատարանը փաստել է հանցավորի ընտանեկան դրությունը, վերջինիս ընտանիքի կյանքի պայմանների վրա նշանակված պատժի ազդեցությունը, նրա խնամքին այլ անձանց առկայությունը, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղն ու դիրքը, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագիրը և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները գնահատման ենթարկելու անհրաժեշտությունը⁹¹²:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- ՄԳևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա կոռուպտիվի տարածքում ապօրինի կերպով պահել է իր հանգուցյալ հորը՝ Բորիս Գևորգյանին պատկանող ակոսափող հրազենը և հրացանային սպորտային-նրսորդական ռազմամթերք հանդիսացող փամփուշտները, որոնք խուզարկության ընթացքում ներկայացրել է ոստիկանության աշխատակիցներին⁹¹³,

- Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ամբաստանյալ ՄԳևորգյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված

օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

⁹¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մամոն Ամիրխանյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ/0034/01/12, Արսեն Մկրտչյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԴ/0093/01/12, Վանյա Բեգյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13, Արամայիս Հովհաննիսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14, Մեհր Հովհաննիսյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0039/01/15 և այլ որոշումները:

⁹¹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հազարապետ Հարությունյանի գործով 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07, Նարեկ Մարգարյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, Սերոբ Սարգսյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՄԴ/0109/01/12, Սեյրան Աղախանյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12, Ջոն Շիրվանյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0091/01/14 և այլ որոշումները:

⁹¹³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

հանցանք, որի համար էլ պետք է պատասխանատվություն կրի և միաժամանակ արձանագրել, որ վերջինիս հետագա ուղղումն ու վերադաստիարակումը հնարավոր է առանց հասարակությունից մեկուսացնելու և նպատակահարմար չէ, որ վերջինս ազատագրվման ձևով պատիժ կրի, նրա նկատմամբ պետք է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածն ու նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել⁹¹⁴,

- Վերաքննիչ դատարանն արձանագրելով, որ ՄԳևորգյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը լրիվ և բազմակողմանի գնահատման չի ենթարկել նրան մեղսագրված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, պատժի մասով բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և ամբաստանյալ ՄԳևորգյանի նկատմամբ նշանակված 6(վեց)ամիս ժամկետով ազատագրվման ձևով պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելը՝ վերացրել, դատավճիռը մնացած մասով թողնելով անփոփոխ⁹¹⁵:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման 11-11.2-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ ՄԳևորգյանի նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պատիժը կրելու պարտականություն սահմանելիս պատշաճ վերլուծության չի ենթարկել գործի փաստական տվյալների ամբողջությունը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը թեպետ արձանագրել է, որ ստորադաս դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել հայտնաբերված զենքի և ռազմամթերքի տեսակն ու հատկությունները, այնուամենայնիվ որևէ կերպ չի պատճառաբանել, թե հանցագործության առարկա համարվող «ՏՕԶ-8» մոդելի ակոսափող հրազենը և թվով 8 հատ գործարանային արտադրության 5,6 տրամաչափի օդակավոր բոցավառման, հրացանային սպորտային-որսորդական ռազմամթերք հանդիսացող փամփուշտներն կոնկրետ ինչ հատկություններով կարող էին էականորեն բարձրացնել ՄԳևորգյանի կատարած հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել այնպիսի մեղմացող հանգամանքներ, որոնք իրական չեն, մասնավորապես այն, որ ամբաստանյալն իրեն լիովին մեղավոր է ճանաչել, անկեղծորեն զոջացել է կատարած հանցանքի համար և ակտիվորեն աջակցել հանցագործությունը բացահայտելուն: Մինչդեռ հարկ է նկատել, որ ամբաստանյալ ՄԳևորգյանն առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել և միջնորդել, որպեսզի կիրառվի դատական քննության արագացված կարգ⁹¹⁶: Տվյալ պայմաններում անհասկանալի է Վերաքննիչ դատարանի այն պնդումը, որ մեղադրանքի հետ համաձայն լինելը

⁹¹⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁹¹⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁹¹⁶ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

դեռևս բավարար չէր հաստատված համարելու Առաջին ատյանի դատարանի կողմից մեղմացնող համարվող հիշյալ հանգամանքի առկայությունը: Նշվածի համատեքստում հարկ է նաև նշել, որ էական համարվել չէր կարող նաև Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված այն փաստարկը, թե նախաքննության ընթացքում ՄԳևորգյանը մեղքը չի ընդունել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ խուզարկության ժամանակ ՄԳևորգյանը հնարավորություն է ունեցել ներկայացնելու ռազմամթերք հանդիսացող փամփուշտները, սակայն չի ներկայացրել դրանք, ապա հարկ է նշել, որ նշված հանգամանքը կոնկրետ դեպքում չի կարող վկայել ամբաստանյալի անձի և նրա կատարած արարքի հանրային բարձր վտանգավորության մասին՝ այն պայմաններում, երբ գործի նյութերից երևում է, որ վերջինս խուզարկության ընթացքում ոստիկանության աշխատակիցներին կամովին ներկայացրել է հրազենը⁹⁷:

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նյութերում առկա՝ ՄԳևորգյանի անձը բնութագրող փաստական տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը, մասնավորապես՝ դրական բնութագրվելը, նախկինում դատապարտված չլինելը, խնամքին անչափահաս երեխայի և վատառողջ ծնողի առկայությունը, բազմանդամ ընտանիքի կերակրողն ու վատառողջ լինելը, խուզարկության ընթացքում հրազենը կամովին հանձնելը, կատարած արարքի համար լիովին զոջալը⁹⁸, նախկինում Հայաստանի Հանրապետության որսորդների և ձկնորսների միավորման անդամ լինելն ու ողորկափող որսորդական հրացան ձեռք բերելու թույլտվություն ունենալը⁹⁹, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, վկայում է ՄԳևորգյանի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը կրելու աննպատակահարմարության ու առանց պատիժը փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու հնարավորության մասին, ուստի վերջինիս նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության՝ համակողմանի վերլուծության ենթարկելով կատարված արարքի հանրային վտանգավորությունը և բնույթը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների, ինչպես նաև անձը բնութագրող տվյալների համակցությունը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ ՄԳևորգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

16. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, ՄԳևորգյանի նկատմամբ նշանակված պատիժը

⁹⁷ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը և քրեական գործ, հատոր 1, թերթեր 11-31:

⁹⁸ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁹⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 133 և 134-136:

պայմանականորեն չկիրառելը վերացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, որը Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք է:

Մինչև ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված դատավճիռն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը բողոքաբերների՝ սույն որոշման 8.1-րդ կետում նշված փաստարկին անդրադառնալն առարկայագուրկ է համարում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Մանուկ Բորիսի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի հունվարի 22-ի դատավճիռն՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *արտոբազմություն*

Դատավորներ՝ *արտոբազմություններ*

58.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0273/01/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախազահույթյամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորները՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Հ.ՄՈՎՍԵՍՅԱՆԻ

26 նոյեմբերի 2021 թվական

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Մուրադ Բորիկի Մովսեսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Բ Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում 2018 թվականի օգոստոսի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 11118218 քրեական գործը:

2018 թվականի օգոստոսի 18-ին Նվեր Բաղդասարյանը ձերբակալվել է, իսկ օգոստոսի 20-ին՝ ազատվել արգելանքից:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ Ն.Բաղդասարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք

է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ թիվ 11118218 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է նոր քրեական գործ, որին տրվել է 11119918 համարը, և այն միացվել է թիվ 11118218 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումներով Մուրադ Մովսեսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին և հայտարարվել է հետախուզում:

2018 թվականի հոկտեմբերի 14-ին Մ.Մովսեսյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրիի բաժին:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ Մ.Մովսեսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով:

1.3. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ Մ.Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ ընտրված խափանման միջոցը վերացվել՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) ընդունման հիմքով:

1.4. 2019 թվականի փետրվարի 13-ին մեղադրյալ Ն.Բաղդասարյանի պաշտպան Վ.Քոչյանը Մ.Մովսեսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման դեմ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազություն: Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Գևորգյանի՝ 2019 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ Մ.Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նախաքննության մարմնի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը վերացվել է:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի մարտի 29-ի որոշմամբ Մ.Մովսեսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, նույն օրը Մ.Մովսեսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ մեղադրյալ Ն.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ ընտրված խափանման միջոցը վերացվել՝ վնաս պատճառած արարքը քրեական օրենքով իրավաչափ համարվելու հիմքով:

2019 թվականի մայիսի 3-ին Մ.Մովսեսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Դատական քննության ընթացքում Մ.Մովսեսյանի պաշտպան Լ.Սիմոնյանը միջնորդել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Գևորգյանի՝ 2019 թվականի փետրվարի 15-ի որոշումը ճանաչել անօրինական և վերացնել, որպես հետևանք՝ Մ.Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնել, իսկ գործի վարույթը կարճել⁹²⁰:

2.1. Առաջին ատյանի դատարանը 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ պաշտպան Լ.Սիմոնյանի միջնորդությունը բավարարել է՝ վերացրել Մ.Մովսեսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ նախաքննության մարմնի որոշումը վերացնելու մասին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Գևորգյանի՝ 2019 թվականի փետրվարի 15-ի որոշումը և Համաներման ակտի կիրառմամբ Մ.Մովսեսյանի նկատմամբ քրեական հետապնդումը համարել դադարեցված: Առաջին ատյանի դատարանի նույն որոշմամբ Մ.Մովսեսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը ստորագրությունը չհեռանալու մասին, վերացվել է:

3. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի նոյեմբերի 3-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Նախաքննության մարմնի կողմից Մուրադ Մովսեսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) /Մյա 2018 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, ալկոհոլի ազդեցության տակ Երևան քաղաքի Շարուրի փողոցի 28-րդ շենքի մոտ գործով ինքնությունը չպարզված տաքսու վարորդի հետ զրուցելու ընթացքում

⁹²⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 37-42:

բարձրաձայն սեռական բնույթի հայտյանքներ է հնչեցրել, որի ժամանակ նույն շենքի բնակիչ Նվեր Բաղդասարյանը, լսելով բազմաբնակարան շենքի բակում վերջինիս կողմից բարձրաձայն հնչեցրած սեռական բնույթի հայտյանքները, նրան կարգի հրավիրելու համար դիտողություն է արել: Մ.Սովետյանը ցավագին ընդունելով Ն.Բաղդասարյանի դիտողությունը՝ վիճաբանել է նրա հետ, որի ժամանակ իր անձը հակադրելով հասարակությանը, խուլիգանական մղումներից ելնելով, դիտավորությամբ կուպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որը զուգորդվել է և բռնություն գործադրելով և դրա սպառնալիքով, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, մասնավորապես՝ ձեռքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Նվեր Բաղդասարյանի գլխի և մարմնի փարբեր շրջաններին, պարճառելով առողջության թեթև վնասի հարկանիշներ չպարունակող ճակարի շրջանի արյունազեղման, զոյգ արմնկահողերի, աջ արունքի շրջանների քերծվածքների ձևով մարմնական վնասվածքներ, փրական ժամանակ՝ շուրջ 15-20 բույե սեռական բնույթի հայտյանքներ է հնչեցրել ինչպես իրեն դիտողություն կատարած Ն.Բաղդասարյանին, այնպես էլ՝ անհասցե: Նրա վիճաբանության ձայներից նշված շենքի բակ են եկել նույն շենքի բնակիչները, որի ժամանակ նա հրել է իրեն դիտողություն կատարած Նվեր Բաղդասարյանի կնոջը՝ Ալվարդ Ալվազյանին, իսկ շենքի մուտքում որպես զենք օգտագործվող առարկայի՝ զարեջրի սպակե շշով փորձել է հարվածել իրեն դիտողություն կատարած վերջինիս դարերը՝ Մերի Բաղդասարյանին, ինչպես նաև թքել է Տաթևիկ Հարությունյանի և Անժելա Բաբաջանյանի վրա, չի ենթարկվել հասարակական կարգը չխախտելու բնակիչների բազմաթիվ հորդորներին և իր հակահասարակական վարքագիծը շարունակել է շենքի մուտքից դուրս՝ Շարուրի փողոցում՝ կրկին հնչեցնելով սեռական բնույթի հայտյանքներ և չի ենթարկվել նաև իրեն կարգի հրավիրելու կոչ անող իր որդուն, ինչի հետևանքով խաթարվել է շենքի բնակիչների անորդրը»⁹²¹:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման համաձայն՝ «(Օրենսդիրը սահմանել է երկու փարբեր ընթացակարգ և ժամանակահատված դատախազի կողմից քննիչի որոշումը վերացնելու վերաբերյալ. մեկ դեպքում քննիչի որոշումը կարող է վերացվել դատախազի կողմից (նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կամ վերջինի վերադասի) այն սրանալուց հետո 7 օրվա ընթացքում, իսկ դրանից հետո նախաքննական մարմնի որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում:

Այսինքն՝ օրենսդիրը հարակ սմրագրել է, որ 7 օրվա ժամկետում դատախազական հսկողության արդյունքում համապատասխան որոշման չվերացման պարագայում, այն կարող է վեց ամսվա ընթացքում վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից:

⁹²¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 132-133:

Քրեական դատավարության օրենսգրքի հասրուկ մասի 263-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պարձենը սրանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, Կրոժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պարասիանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

Դատախազը բողոքը սրանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պարձենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին (...):

Վերը նշված հոդվածի կարգավորումներ նախատեսվում է դատախազի կողմից 7 օրվա ընթացքում բողոքի քննարկում և դրա լուծում, ընդ որում, այդ ժամկետը հոսում է բողոքի սրացման պահից:

Դատարանի գնահատմամբ վկայակոչված երկու հոդվածների միջև որոշակի առումով առկա է իրավական հակասություն, որը փարքեր մեկնաբանությունների առիթ է հանդիսանում: Այսպես՝ 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել դատախազը՝ որոշման պարձենը սրանալու պահից 7 օրվա ընթացքում, իսկ դրանից հետո՝ կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում: Մինչդեռ, 263-րդ հոդվածը նախատեսում է քրեական հետապնդումը դադարեցնելու կամ գործի վարույթը կարճելու որոշումը վերադաս դատախազի կողմից բողոքի սրացման պահից 7 օրվա ժամկետում վերացման հնարավորություն:

Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի կարգավորման առաջին հայացքից սրացվում է այնպես, որ յուրաքանչյուր դեպքում և ցանկացած ժամանակ, երբ Կրոժող կողմը որոշումն ինչ-ինչ պարձառնելով սրացել է ամիսներ կամ փարիներ անց, կարող է բողոքարկել այն և վերադաս դատախազի կողմից կարող է այն բավարարվել: Ետսքը վերաբերում է նույնիսկ այն դեպքերին, երբ մինչ այդ համապարասիան որոշումը դատախազական, այդ թվում՝ գլխավոր դատախազի կողմից արուզվել և անհոփոփ է թողնվել: Այլ խոսքով՝ բերված օրինակում դատավարական նմանատիպ որոշումները կարող են անսահմանատիպ ժամկետում կրկին վերանայվել: Սակայն Դատարանի գնահատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով նախատեսված դատախազական 7 օրյա և այնուհետև՝ գլխավոր դատախազի 6 ամսվա ժամկետների սահմանումն ինքնանպատակ չէ և նախատեսված է, որպեսզի յուրաքանչյուր դեպքում դատավարության կողմերը, փվյալ դեպքում՝ մեղադրվողը, ունենա իրավական որոշակիության, կանխատեսելիության հնարավորություն քրեական գործի ընթացքի վերաբերյալ, իսկ քրեական

հետապնդման մարմիններն օժտված չլինեն անասանապահական ժամկետներով: Այլ կերպ ասած՝ դադարավարության ընդհանուր մասի սկզբունքներով քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման վերացման վերջնաժամկետ նախատեսվում է 6 ամիս, այն էլ ուղղակիորեն նշված է, որ այդ ընթացքում որոշումն ընդամենը մեկ անգամ կարող է վերացվել և միայն գլխավոր դատախազի կողմից: Հետևաբար, ժամկետների առումով նույնիսկ սահմանափակվում է գլխավոր դատախազի գործողությունները: Ավելին՝ օրենսդրի կողմից 7 օրյա ժամկետն անցնելուց հետո միայն գլխավոր դատախազի կողմից որոշման վերացման լիազորության սահմանումը նույնպես պարահասկան չէ, այլ նպատակ է հետապնդում, որպեսզի ավելի լուրջ երաշխիքներ ամրագրի այն դեպքերի համար, երբ 7 օրյա դատախազական հսկողությունից հետո որոշումը հնարավոր լինի վերացվել միայն մեկ անգամ, այն էլ գլխավոր դատախազի կողմից:

(...)

Ոստի Դադարանը գրնում է, որ քրեական գործի վարույթը կարճելու և/կամ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումները կարող են վերացվել այն համապատասխան դատախազի կողմից արացվելուց հետո 7 օրյա ընթացքում, իսկ նշված ժամկետից հետո որոշումը կարող է վերացվել միմիայն գլխավոր դատախազի կողմից՝ վեց ամսվա ընթացքում: Ավելին՝ վերը նշված 6 ամսյա ժամանակահատվածը, որպես կանոն, լիովին բավարար է, որպեսզի գործով շահագրգիռ անձինք հնարավորություն ունենան րեդեմպտիան և ծանոթանան կայացված որոշմանը, որից հետո՝ բողոքարկել այն: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, սակայն եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը:

Տվյալ դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածը ներառված է ընդհանուր մասում, իսկ 263-րդ հոդվածը՝ հատուկ մասում, ուստիև հիշյալ կանոնի կիրառմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի գործածությունը չպետք է հասկաի 21-րդ հոդվածին:

(...) Սույն գործի դեպքում պետք է նկատել, որ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՀ քննչական կոմիտեի Շենգակիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Քյասինյանի որոշմամբ Մոլդադ Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, ընդունված խափանման միջոցը՝ վերացվել՝ համաներում հայտարարելու մասին ՀՀ օրենքի ընդունման հիմքով: Այդ որոշումը 2018 թվականի դեկտեմբերի 11-ին ուղարկվել է Շենգակիթ վարչական շրջանի դատախազին, ինչից հետո այդ որոշումը չի վերացվել, այսինքն՝ ողջամիտ է, որ դատախազությունում օրինականությունը հաստատվել է»⁹²²:

⁹²² Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 79-89:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 15-ի որոշման համաձայն՝ «(...) [Վ]երաքննիչ դադարանը հարկ է համարում ընդգծել, որ գործի փաստական փյուռքները վկայում են այն մասին, որ ի խախտումն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի պահանջների՝ մեղադրյալ Նվեր Բաղդասարյանի շահերի պաշտպան Վաչագան Քոսյանի կողմից Մուրադ Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին ավագ քննիչ Հ.Քյասինյանի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատարանագ Գ.Գևորգյանին է բողոքարկվել դրա կայացումից ավելի քան երկու ամիս անց՝ 2019 թվականի փետրվարի 14-ին, իսկ հաջորդ օրը՝ փետրվարի 15-ին, քննարկելով ներկայացված բողոքը, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատարանագ Գ.Գևորգյանն իր որոշմամբ այն բավարարել է և Մուրադ Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին ավագ քննիչ Հ.Քյասինյանի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը վերացրել, ընդ որում որևէ անդրադարձ չի կատարվել բողոքարկման 7-օրյա ժամկետի բացթողումը հարգելի համարելուն և այն վերականգնելու անհրաժեշտությանը: Մինչդեռ քրեական գործի նյութերից պարզ է դառնում, որ թեև Մուրադ Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին ավագ քննիչ Հ.Քյասինյանի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը գործով մյուս մեղադրյալ Նվեր Բաղդասարյանին և նրա պաշտպան Վաչագան Քոսյանին չի ուղարկվել, սակայն նրանք առնվազն 2018 թվականի դեկտեմբերի 27-ին տեղեկացված են եղել որոշման առկայության մասին և օրենքով նախատեսված 7-օրյա ժամկետում այն բողոքարկելու հնարավորություն են ունեցել, ինչից սակայն չեն օգտվել և որևէ միջոց չեն ձեռնարկել բողոքարկման իրենց իրավունքն իրացնելու համար, որի պայմաններում հիմնավորված են նաև Առաջին սայրյանի դադարանի եզրահանգումներն առ այն, որ փյուռք դեպքում ավագ քննիչ Հ.Քյասինյանի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված կարգով կարող էր վերացվել միայն ՀՀ գլխավոր դատարանագի կողմից, հակառակ պարագայում, Վերաքննիչ դադարանի գնահատմամբ, խախտվում է նաև իրավական որոշակիության սկզբունքը: (...)

Հիմք ընդունելով նաև Երևան քաղաքի շրջանի ընդհանուր իրավասության դադարանի փեճարկվող որոշման մեջ տեղ գրած պարճառաբանություններն ու իրավական վերլուծությունները, վերաքննիչ քրեական դատարանը գրնում է, որ Առաջին սայրյանի դադարանը հանգել է ճիշտ եզրակացության, կայացրել օրինական և պարճառաբանված որոշում, հերևաբար ներկայացված վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման: (...)»⁹²³:

⁹²³ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 153-173:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել գործի ելքի վրա ազդող դատական պիսալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որի պայմաններում կայացված դատական ակտն անհիմն է և ենթակա է բեկանման:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը պիսալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ ու 263-րդ հոդվածներով սահմանված կարգավորումները, ինչը հանգեցրել է իրավունքի հիմնարար խախտման: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով սահմանված է ոչ թե նույն օրենսգրքի 21-րդ հոդվածով նախատեսված կանոնին հակասող, այլ դրանից բացառություն նախատեսող նորմ, համաձայն որի՝ քրեական հետապնդումից հրաժարվելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքի լուծումը վերապահված է ոչ թե համապատասխան (հսկող) դատախազին, այլ՝ նրա վերադասին: Այս համատեքստում, բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանների պնդումները՝ ենթադրյալ հակասությունների առկայության և Մ.Մովսեսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու լիազորությունը գործող օրենսդրությամբ միայն ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լինելու վերաբերյալ, հիմնազուրկ են:

8.1. Դատավարական նմանատիպ որոշումների անսահմանափակ ժամկետում, այս կամ այն պատճառներով դատավարության մասնակիցների կողմից ուշացումով ստանալու դեպքերում բողոքարկելու և դրա հիման վրա որոշումները վերանայելու անթույլատրելիության մասին ստորադաս դատարանների եզրահանգումների վերաբերյալ բողոքաբերը նշել է, որ տվյալ դեպքում շուրջ 2 ամիս ժամկետը անսահմանափակ չի կարող համարվել, քանի որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացրած որոշումները կարող են բազմաթիվ պատճառներով հասանելի չդառնալ դատավարության մասնակիցներին և նման պայմաններում ժամկետների բացթողումը պետք է գնահատել ողջամտության համատեքստում, ինչը տվյալ գործով առկա է, քանի որ դատախազին բողոք ներկայացրած Ն.Բաղդասարյանի շահերի պաշտպան Վ.Բոսյանն իր բողոքում նշել է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը որպես կողմ չի ստացել և այլ հիմնավոր տվյալներ նրա կողմից այդ որոշումն ավելի շուտ ստանալու վերաբերյալ ստորադաս դատարանները չեն վկայակոչել:

9. Բողոքաբերը նշել է նաև, որ ստորադաս դատարանների եզրահանգումների համաձայն՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան որոշումը պատշաճ կարգով դատավարության մասնակիցներին ուղարկելու և այն բողոքարկելու իրավունքի իրացումը չապահովելու պայմաններում, այդ պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման իրավական հետևանքների անբարենպաստ ռիսկի կրողը պետք է լինի այն անձը, որի

համար այդ իրավունքի իրացումը չի ապահովվել: Սակայն, ըստ բողոքաբերի՝ նման մոտեցումը չի կարող համարվել իրավաչափ, քանի որ այն անհիմն կերպով սահմանափակում է կողմի բողոքարկման իրավունքը:

10. Անդրադառնալով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Գևորգյանի կողմից վիճարկվող որոշումը սխալ դատավարական կարգով վերացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը, բողոքաբերը նշել է, որ այն հիմնավոր չէ, քանի որ հակասում է օրինականության, գործի արդարացի քննության, մրցակցության սկզբունքներին և դրանց կիրառման վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումներին:

11. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2020 թվականի ապրիլի 15-ի որոշումը, և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Մ.Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նախաքննության մարմնի որոշումը վերացնելու վերաբերյալ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Գևորգյանի՝ 2019 թվականի փետրվարի 15-ի որոշումը վերացնելու և Համաներման ակտի կիրառմամբ Մ.Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցված համարելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար:*

(...)

3. Քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վարթարացման, բացառությամբ սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերի:

4. Դատարանագր քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պարձենը սրանսարու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատարանագի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝
«(...)

4. քննիչը, մասնավորապես, լիազորված է՝
(...)

28) ընդունել որոշում քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և այդ որոշման պարձենը 24 ժամկա ընթացքում ուղարկել դատարանագին որոշման օրինականությունը ստուգելու նպատակով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի համաձայն՝
«1. քննիչը կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պարտահանողին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև այն ֆիզիկական անձին կամ իրավաբանական անձի ներկայացուցչին, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, պաշտած ծանուցմամբ անհասպաղ ուղարկում է քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը՝ պարզաբանելով գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը և որոշման բողոքարկման կարգը և ժամկետները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝
«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պարձենն սրանսարու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պարտահանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատարանագին»:

2. Դատարանագր բողոքը սրանսարու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պարձենն անհասպաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին (...):»:

14. Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի որոշումը վերացնելու տարբեր ընթացակարգեր: Այսպես, առաջին ընթացակարգը նախատեսված է ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով, որի համաձայն՝ **դատախազը** քրեական գործը կարճելու մասին քննիչի կայացրած որոշման պատճենն ստանալու պահից՝ 7 օրվա ընթացքում, իսկ **ՀՀ գլխավոր դատախազը** քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը՝ այն կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում, լիազորված են վերացնելու նշված որոշումները: Ընդ որում, և՛ դատախազը, և՛ ՀՀ գլխավոր դատախազն իրենց այդ լիազորությունն իրավասու են գործադրել դատախազական հսկողության շրջանակներում՝ **անկախ բողոքի առկայությունից:**

Հաջորդ վերաբերելի կարգավորումը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝ կանկաձյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, նրանց պաշտպանները, տուժողը, նրա ներկայացուցիչը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը կամ նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև այն ֆիզիկական անձը կամ իրավաբանական անձի ներկայացուցիչը, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող են քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը **դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում** բողոքարկել վերադաս դատախազին: Վերադաս դատախազը **բողոքը ստանալու պահից** յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Նշված կարգավորումից ուղղակի հետևում է, որ **վերադաս դատախազը համապատասխան բողոքի առկայության դեպքում** նույնպես լիազորված է **վերացնելու բողոքարկված որոշումը:**

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումների համեմատությունից երևում է նաև, որ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի՝ քննարկվող որոշումները վերացնելու ժամկետների հաշվարկը կատարվում է, որպես ելակետ ընդունելով այդ որոշման պատճենն ստանալու պահը (դատախազի դեպքում) կամ կայացնելու օրը (ՀՀ գլխավոր դատախազի դեպքում), իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածը սահմանում է երկու ժամկետ՝ առաջինը վերաբերում է բողոք բերելուն և սկսվում է վիճարկվող որոշման պատճենը դատավարության մասնակցի կողմից ստանալու պահից, իսկ որոշում կայացնելու համար վերադաս դատախազին վերապահված յոթնօրյա ժամկետը հոսում է վերջինիս կողմից համապատասխան **բողոքը ստանալու պահից:** Այսինքն, եթե դատավարության մասնակիցը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ է բողոք ներկայացրել, ապա վերադաս դատախազը պարտավոր է քննարկել բողոքը և համապատասխան որոշում կայացնել՝ անկախ նրանից, թե բողոքարկված որոշումը մինչ այդ իրեն հասանելի եղել է, թե ոչ: Օրինակ, եթե քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի որոշումը կողմն ստացել է այն կայացնելուց հետո ութերորդ օրը, ապա այդ օրվանից սկսած նա յոթնօրյա ժամկետում իրավասու է բողոք բերել վերադաս դատախազին, որն էլ բողոքը ստանալու պահից յոթնօրյա ժամկետում

պետք է քննարկի այն և համապատասխան որոշում կայացնի՝ անկախ նրանից, թե բողոքարկված որոշումը մինչ այդ իրեն հասանելի եղե՞լ է, թե ոչ: Հակառակ պարագայում, դատավարության մասնակիցը ոչ իրավաչափորեն կզրկվի և չի իրացնի բողոք բերելու իր իրավունքը:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինները պարտավոր են քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը **պատշաճ ծանուցմամբ անհապաղ ուղարկել** կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, տուժողին, նրա ներկայացուցչին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այլ անձանց՝ պարզաբանելով որոշման բողոքարկման կարգը և ժամկետները, իսկ նշված անձինք իրենց հերթին պարտավոր են պահպանել բողոք բերելու համար օրենքով սահմանված յոթնօրյա ժամկետը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ վարույթն իրականացնող մարմինը պատշաճ չի կատարել իր պարտականությունը, որի պատճառով դատավարության մասնակիցը որոշումը չի ստացել, կամ ստացել է ուշացումով, վերջինս չպետք է զրկվի բողոքարկման իր իրավունքից: Նման դեպքերում դատախազը պարտավոր է վարույթն իրականացնող մարմնի գործողությունները և բողոքաբերի վարքագիծը գնահատել ողջամտության սահմաններում՝ *mutatis mutandis* հաշվի առնելով Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները⁹²⁴: Եթե կպարզվի, որ վարույթն իրականացնող մարմինը թերացել է և որոշումն դատավարության մասնակցին չի տրամադրել կամ տրամադրել է ուշացումով՝ վերջինիս կամքից անկախ պատճառներով, ապա դա չի կարող հիմք հանդիսանալ բողոքն ըստ էության չքննարկելու կամ այդ հիմքով մերժելու համար, այդ դեպքում բողոքը /իրավունքի ուժով (*ex jure*) պետք է համարվի ժամկետում տրված: Իսկ եթե կպարզվի, որ վարույթն իրականացնող մարմինը գործել է բարեխղճորեն և որոշման պատճենը համապատասխան դատավարության մասնակցին ուշ հասանելի լինելը պայմանավորված է եղել բողոքաբերի վարքագծով, ապա այդ հանգամանքը կարող է բողոքն ըստ էության չքննելու հիմք հանդիսանալ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով սահմանված է ոչ թե նույն օրենսգրքի 21-րդ հոդվածին հակասող կարգավորում, այլ օրենսդիրը, դատավարության մասնակիցներին հնարավորություն ընձեռելով բողոքարկելու քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները, նախատեսել է համապատասխան ընթացակարգ, որը կոչված է ապահովելու անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված՝ բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը:

⁹²⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՍԴՌ-1249 որոշումը և Վճռաբեկ դատարանի՝ Վարդան Գրիգորյանի գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԿԴՅ/0030/06/17 որոշումը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ Մ.Մովսեսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, և 2018 թվականի հոկտեմբերի 15-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով⁹²⁵,

- նախաքննության մարմնի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ Համաներման ակտի կիրառմամբ Մ.Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է⁹²⁶,

- մեղադրյալ Ն.Բաղդասարյանի պաշտպանի՝ 2019 թվականի փետրվարի 13-ի բողոքի հիման վրա Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Գևորգյանի՝ 2019 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ Մ.Մովսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նախաքննության մարմնի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը վերացվել է⁹²⁷,

- 2019 թվականի մայիսի 5-ին Մ.Մովսեսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան,

- Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ պաշտպան Լ.Սիմոնյանի միջնորդությունը բավարարվել է և Մ.Մովսեսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ նախաքննության մարմնի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը վերացնելու մասին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Գևորգյանի՝ 2019 թվականի փետրվարի 15-ի որոշումը վերացվել է և Համաներման ակտի կիրառմամբ Մ.Մովսեսյանի նկատմամբ քրեական հետապնդումը համարվել է դադարեցված: Առաջին ատյանի դատարանը պատճառաբանել է, որ քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումները կարող են վերացվել այն համապատասխան դատախազի կողմից ստացվելուց հետո 7 օրվա ընթացքում, իսկ նշված ժամկետից հետո որոշումը կարող է վերացվել միայն գլխավոր դատախազի կողմից՝ վեց ամսվա ընթացքում: Ավելին՝ վերը նշված վեցամսյա ժամանակահատվածը, որպես կանոն, լիովին բավարար է, որպեսզի գործով շահագրգիռ անձինք հնարավորություն ունենան տեղեկանալ և ծանոթանալ կայացված որոշմանը, որից հետո՝ բողոքարկել այն⁹²⁸:

- Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ գտնելով, որ հիմնավորված են Առաջին ատյանի դատարանի եզրահանգումներն առ այն, որ նախաքննության մարմնի՝ 2018

⁹²⁵ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

⁹²⁶ Տե՛ս սույն որոշման 1.3-րդ կետը:

⁹²⁷ Տե՛ս սույն որոշման 1.4-րդ կետը:

⁹²⁸ Տե՛ս սույն որոշման 2.1.-րդ և 6-րդ կետերը:

թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված կարգով կարող էր վերացվել միայն ՀՀ գլխավոր դատախազի կողմից, հակառակ պարագայում, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, խախտվում է իրավական որոշակիության սկզբունքը⁹²⁹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ և 263-րդ հոդվածներով սահմանված նորմերը՝ գտնելով, որ դրանց միջև առկա է հակասություն, մինչդեռ նշված նորմերի միջև որևէ հակասություն առկա չէ: Հետևաբար, ստորադաս դատարանների այդ պնդումները և Մ.Մովսեյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու լիազորությունը գործող օրենսդրությամբ միայն ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լինելու վերաբերյալ դատողություններն անհիմն են:

17. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև ստորադաս դատարանների հետևյալ երկու փաստարկներին.

- քննիչի որոշումը 2018 թվականի դեկտեմբերի 11-ին ուղարկվել է Շենգավիթ վարչական շրջանի դատախազին, որից հետո 7-օրյա ժամկետում այն չի վերացվել, այսինքն՝ ողջամիտ է, որ դատախազությունում այդ որոշման օրինականությունը հաստատվել է,

- առնվազն 2018 թվականի դեկտեմբերի 27-ի՝ առերես հարցաքննության ժամանակ, շահագրգիռ անձ Ն.Բաղդասարյանը և վերջինի պաշտպանը տեղյակ են եղել, որ Մ.Մովսեյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, սակայն որևէ քայլ չեն ձեռնարկել որոշումը ստանալու և բողոքարկման իրենց իրավունքն իրացնելու համար⁹³⁰:

Վերոնշյալ փաստարկների կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *նախ* ստորադաս դատարանների առաջին փաստարկը հիմնված է ենթադրության վրա, քանի որ քրեական գործի նյութերով չի հաստատվում, որ հիշյալ որոշման օրինականությունը դրա նկատմամբ հսկողություն իրականացնող կամ մեկ այլ դատախազի կողմից հաստատվել է: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անձի կողմից օրենքով սահմանված բողոքարկման իր իրավունքն իրացնելու հնարավորությունը չի կարող կախվածության մեջ դրվել դատախազի կողմից դատախազական հսկողության շրջանակներում քրեական դատավարության օրենսգրքով նրան վերապահված լիազորություններն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից: Հակառակ մեկնաբանության պարագայում, անձի բողոքարկման իրավունքը բովանդակային առումով կկլանվի դատախազական

⁹²⁹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁹³⁰ Տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը:

հսկողության գործառույթի մեջ, մինչդեռ դրանք տարբեր բովանդակություն ունեցող և նպատակներ հետապնդող կառուցակարգեր են:

Երկրորդ՝ ոչ Առաջին ատյանի, ոչ էլ Վերաքննիչ դատարանները կասկածի տակ չեն դրել այն փաստը, որ մեղադրյալ Ն.Բաղդասարյանը և նրա պաշտպան Վ.Քոսյանը չեն ստացել վիճարկվող որոշումը: Ավելին, Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ վիճարկվող որոշումը մեղադրյալ Ն.Բաղդասարյանին և նրա պաշտպան Վ.Քոսյանին չի ուղարկվել: Դրա հետ մեկտեղ Վերաքննիչ դատարանը փաստարկել է, որ Ն.Բաղդասարյանը և նրա պաշտպանը, տեղյակ լինելով, որ Մ.Մովսեսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, որոշումը ստանալու համար որևէ քայլ չեն ձեռնարկել:

Մինչդեռ, գործի նյութերից երևում է, որ 2018 թվականի դեկտեմբերի 27-ի՝ առերես հարցաքննության ժամանակ, մեղադրյալ Ն.Բաղդասարյանը Մ.Մովսեսյանին հարց է տվել, թե նա Համաներման ակտն իր նկատմամբ կիրառելու համաձայնություն տվե՞լ է, թե ոչ, և ստացել է դրական պատասխան⁹³¹: Այս հարցն ու պատասխանը ստորադաս դատարանները գնահատել են որպես ապացույց առ այն, որ Ն.Բաղդասարյանը և նրա պաշտպանը հաստատապես տեղեկացված են եղել Մ.Մովսեսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ **որոշման առկայության մասին**: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Ն.Բաղդասարյանի հարցադրումն ավելի շատ կարող է վկայել հակառակի մասին: Բացի այդ, համաներման ակտի կիրառման համաձայնություն տալու հանգամանքի մասին տեղեկանալը, ըստ Վճռաբեկ դատարանի, բավարար չէր, որպեսզի կողմը հաստատապես գիտակցեր, որ արդեն իսկ այդպիսի որոշում է կայացվել, պարտավոր լինել միջոցներ ձեռնարկել այն ստանալու համար և կանխատեսել, որ այդպիսի միջոցներ չձեռնարկելու արդյունքում կարող է զրկվել բողոքարկման իր իրավունքից: Նման պայմաններում ստորադաս դատարաններն անհամաչափ բեռ են դրել կողմի վրա՝ որոշումը կողմին հանձնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը փոխարինելով այն ստանալու համար միջոցներ ձեռնարկելու պարտավորությամբ:

18. Վերոգրյալի պայմաններում Վճռաբեկ դատարանը չափազանց ընդհանրական և վերացական է համարում ստորադաս դատարանների այն դատողությունը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի կարգավորման պայմաններում, երբ, օրինակ, տուժող կողմը որոշումն ինչ-ինչ պատճառներով ստացել է ամիսներ կամ տարիներ անց՝ դատավարական նմանատիպ որոշումները կարող են անսահմանափակ ժամկետում կրկին վերանայվել: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր նման իրավիճակում բողոքը քննող դատավարական սուբյեկտը, ելնելով կոնկրետ հանգամանքներից, պարտավոր է գնահատել բողոքը ու չներկայացնելու պատճառները, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմնի

⁹³¹ Տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 3-րդ, թերթ 54:

գործողությունները, կողմերից յուրաքանչյուրի վարքագիծը և հանգել համապատասխան հետևության:

19. Անդրադառնալով Մ.Մովսեսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը վերացնելու վերաբերյալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Գևորգյանի՝ 2019 թվականի փետրվարի 15-ի որոշումն Առաջին ատյանի դատարանի կողմից վերացնելու իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակում⁹³², այնպես էլ գործի դատական քննության փուլում դատարանը լիազորված չէ վերացնելու դատախազի որոշումը, որպիսի մոտեցումը բխում է դատական իշխանության սահմանադրաիրավական բովանդակությունից և դրան համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատարանի լիազորություններից⁹³³:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, դատական ակտ կայացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Առաջին ատյանի դատարանի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 15-ի որոշումը բեկանելու և գործը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումներն ու հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Մուրադ Բորիկի Մովսեսյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

⁹³² Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Փնջիկ Թևրոյանի գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱԲԳ/0024/11/15 որոշումը:

⁹³³ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-844 որոշման 8-րդ կետը:

իրավասության դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվական ապրիլի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

59.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0159/11/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դիմող՝</i>	Զ.ՄԵԶԼՈՒՄՅԱՆԻ

26 նոյեմբերի 2021 թվական

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 28-ի որոշման դեմ դիմողներ Զարուհի Մեջլումյանի և Մհեր Ենոքյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի հունվարի 13-ին Զ.Մեջլումյանը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնում ներկայացրել է հանցագործության մասին հաղորդում, որի հիման վրա նախապատրաստվել են նյութեր և նույն թվականի հունվարի 22-ին ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի քննչական բաժին՝ հետագա ընթացքը լուծելու համար:

1.1. 2019 թվականի հունվարի 23-ին նույն բաժնում ստացվել է նաև Մ.Ենոքյանի՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված՝ հանցագործության մասին հաղորդումը:

1.2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Քարտաշյանը, վերանայելով Զ.Մեջլումյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերը, 2019 թվականի հունվարի 23-ի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Նշված որոշման դեմ Մ.Ենոքյանի բողոքը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ա.Արսենյանի՝ 2019 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ մերժվել է:

2. Վերոնշյալ որոշումների դեմ դիմողներ Զ.Մեջլումյանի և Մ.Ենոքյանի բողոքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ մերժվել է:

3. Դիմողներ Զ.Մեջլումյանի և Մ.Ենոքյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 15-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դիմողներ Զ.Մեջլումյանը և Մ.Ենոքյանը բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի մայիսի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանը 2021 թվականի նոյեմբերի 5-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

5. Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանի որոշումը պատճառաբանված և հիմնավորված չէ, թույլ է տրվել դատական սխալ՝ քրեադատավարական իրավունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, ըստ բողոքի հեղինակների՝ խախտվել են ՀՀ Սահմանադրության 3-րդ, 25-րդ, 26-րդ, 29-րդ, 31-րդ, 34-րդ, 63-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 17-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոշարադրյալի՝ բողոք բերած անձինք նշել են, որ իրենք ներկայացրել են բազմաթիվ փաստական տվյալներ այն մասին, որ Նարեկ Մայրանի արարքներն ակնհայտ կերպով պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ու 2-րդ կետերով, 143-րդ հոդվածի 1-ին մասով և 144-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի հատկանիշներ, մինչդեռ դրանք պատշաճ գնահատման չեն ենթարկվել, ինչի արդյունքում կայացվել են չհիմնավորված և չպատճառաբանված որոշումներ, ավելին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներն առհասարակ չեն ուսումնասիրվել:

5.1. Բողոքաբերներն ընդգծել են, որ իրենց կողմից ներկայացված մեկ տասնյակ ժամից ավելի տեսագրություններով սկավառակը և 167 էջից

բաղկացած նյութերը 2019 թվականի հունվարի 22-ին են ուղարկվել քննիչին, իսկ վերջինս, առանց ուսումնասիրելու և անդրադառնալու դրանց և հիմնվելով միայն Ջ.Մեջլումյանի և Ն.Մալյանի բացատրությունների վրա, մեկ օր անց կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, ինչը դատարանների կողմից նույնպես պատշաճ ուշադրության չի արժանացել:

5.2. Բողոք բերած անձինք նշել են, որ Ն.Մալյանը ոչ միայն ապօրինի կերպով հավաքել, պահել, տարածել և օգտագործել է իրենց անձնական և ընտանեկան կյանքի՝ իրենց ամուսնության փաստի և քրեակատարողական հիմնարկում ունեցած տեսակցությունների մասին տեղեկություններ, այլև Ջ.Մեջլումյանին ներկայացրել է որպես անբարոյական կին՝ այդպիսով իրենց ընտանիքին պատճառելով հոգեկան ուժեղ տառապանքներ:

5.3. Բողոքի հեղինակները փաստել են նաև, որ իրենց նկատմամբ հանրային տրամադրություններ գրգռելու նպատակով Ն.Մալյանն ապօրինի կերպով ձեռք է բերել և տարածել Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի կողմից Մ.Ենոքյանին ներում շնորհելու հարցի քննարկման վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, ինչպես նաև լինելով ոստիկանական համակարգի երբեմնի բարձրաստիճան պաշտոնյա, օգտագործելով հին կապերը, ոստիկանության արխիվից ձեռք է բերել, ապօրինի պահել ու հանրայնացրել 20 տարվա վաղեմության տեսանյութ, որն առհասարակ ապացույց չի հանդիսացել Մ.Ենոքյանի վերաբերյալ 1996 թվականի քրեական գործով: Ընդ որում՝ ըստ բողոքաբերների՝ վերոնշյալ գործողությունները Ն.Մալյանի կողմից կատարվել են այն սոցիալական և անձնական բնույթի խտրականության հիմքով, որ Ջ.Մեջլումյանն ամուսնացած է ցմահ բանտարկյալի հետ:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերները խնդրել են բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և ճանաչել իրենց իրավունքների խախտումը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Զարուհի Մեջլումյանը 2019 թվականի հունվարի 13-ին տված հանցագործության մասին հաղորդման մեջ նշել է հետևյալը. «(...) *Նսարեկ Բորիսի Մալյանը տեսական ժամանակ հեղափոխում է ինձ, սպառնալիքներ է հնչեցնում անձնական կյանքի գաղտնի տվյալների հրապարակման մասին և հրապարակում է, արելություն է սերմանում իմ անձի նկատմամբ՝ հակում է ինձ ինքնասպանության, պատրաստում ինձ ու իմ անչափահաս երեխային հոգեկան ծանր տրտապանք, խախտում սահմանադրական իմ իրավունքները, ուրքի տակի փալաս դարձնում իմ արժանապատվությունը (...)*»⁹³⁴:

8. Նյութերի նախապատրաստման ընթացքում Ջ.Մեջլումյանը 2019 թվականի հունվարի 13-ին և 16-ին ըստ էության բացատրություններ է տվել

⁹³⁴ Տե՛ս գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 3:

այն մասին, որ աշխատում է ՀՀ պետական վերահսկողական ծառայությունում որպես լրատվական բաժնի ղեկավար, 2013 թվականին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ամուսնացել է ցմահ դատապարտյալ Մ.Ենոքյանի հետ: 2010 թվականից զբաղվել է դատական սխալների վերհանմամբ: 2015 թվականին հասել է ցմահ դատապարտյալներից մեկի ազատմանը, ով մի քանի օր անց մահացել է: Վերջինիս հուղարկավորության օրը, ՀՀ ոստիկանության նախկին պետի խորհրդական Ն.Մայանը, ֆեյսբուքյան հարթակում սկսել է հարձակում գործել իր նկատմամբ, որը կրել է պարբերական բնույթ՝ երեք տարի: 2018 թվականի դեկտեմբերի վերջից հարձակման նոր ալիք է սկսվել իր նկատմամբ՝ պայմանավորված իր ամուսնու հնարավոր ազատման լուրի հետ: 2018 թվականի դեկտեմբերի վերջին Ն.Մայանը «Ֆեյսբուք» սոցիալական կայքէջում կատարել է հրապարակում, որի բովանդակությունը ենթադրում էր, որ նա տեղեկացված է իր և ամուսնու երկարատև տեսակցությունների մասին՝ դրանք մեկնաբանելով որպես սեռական կարիքները հոգալու միջոց, իսկ մի քանի օր անց առցանց հեռարձակմամբ վերոնշյալ հանգամանքը ներկայացրել է որպես հաստատված փաստ: Զ.Մեջլումյանն ընդգծել է, որ դա իր անձնական կյանքի վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն է, որը Ն.Մայանը դարձրել է հանրության քննարկման առարկա, ինչի հետևանքով իր անձի հանդեպ վիրավորանքների և ատելության տարափ է սկսվել, որը խաթարել է իր հոգեկան անդորրը, ինչպես նաև ծանր ազդեցություն թողել իր որդու և ամուսնու վրա, որդին խուսափել է հաճախել դպրոց, դարձել է ներամիտի: Զ.Մեջլումյանը նշել է, որ հաջորդ տեղեկատվությունը, որը գաղտնի է եղել, և որը Ն.Մայանը հրապարակել է՝ իր և Մ.Ենոքյանի ամուսնության փաստն է: Վերոնշյալ տեղեկությունների հրապարակումը Զ.Մեջլումյանը պայմանավորել է իր կարգավիճակով՝ նշելով որ որպես դատապարտյալի կին, պետական պաշտոնատար անձ և լրագրող, իր նկատմամբ դրսևորվում է խտրական վերաբերմունք: Զ.Մեջլումյանը հավելել է նաև, որ Ն.Մայանը հրապարակել է իր ամուսնու վերաբերյալ քրեական գործից քսաներեք տարվա վաղեմության կադրեր, որն ավելի սուր ազդակ է դարձել իրեն պարսավելու, իր հանդեպ ատելություն սերմանելու, վիրավորելու և արժանապատվությունը նվաստացնելու համար:

Անդրադառնալով Ն.Մայանի կողմից իրեն ինքնասպանության հակելուն՝ Զ.Մեջլումյանը նշել է, որ երբևէ ինքնասպանության փորձ չի կատարել, խոսքը պարբերաբար բնույթ կրող ինքնասպանության մտքերի մասին է՝ պայմանավորված տևական ժամանակ՝ 2015 թվականից սկսած, միևնույն անձի կողմից իրեն պատճառվող հոգեկան խիստ տառապանքներով, նվաստացումներով, զրպարտանքներով և վիրավորանքներով⁹³⁵:

9. Ն.Մայանն ըստ էության բացատրություն է տվել այն մասին, որ Զ.Մեջլումյանի հաղորդումն ամբողջությամբ սուտ է, ինքը երբևէ չի ցանկացել Զ.Մեջլումյանի մոտ առաջացնել ինքնասպանություն կատարելու

⁹³⁵ Տե՛ս գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 4-6, 11-12:

վճռականություն, իսկ իր իրավաչափ քննադատությանը պետական ծառայողը՝ դատապարտված մարդասպանի տիկինը, պարտավոր է վերաբերվել որպես ժողովրդավարական հասարակությունում արտահայտման դրսևորում: Ինչ վերաբերում է վերջինիս անձնական կյանքի գաղտնիք հանդիսացող տեղեկությունները հրապարակելուն, ապա իրեն բացարձակ չի հետաքրքրում Զ.Մեջլումյանի անձնական կյանքը, այլ իրեն՝ որպես ՀՀ քաղաքացի, հետաքրքրում է պետական ծառայող հանդիսացող անձի և ծանրացուցիչ հանգամանքներում սպանության համար դատապարտված և պատիժը կրող անձի հարաբերությունների բնույթը, իսկ այդ տեղեկությունն ունի հանրային բարձր հետաքրքրություն, ավելին՝ նշված տեղեկատվությունը հանրամատչելի փաստ է, Զ.Մեջլումյան ինքն է գիտակցված գործողությունների արդյունքում հանրամատչելի դարձրել այն՝ անորոշ շրջանակի անձանց համար: Ն.Մալյանն ընդգծել է, որ ամուսնական կապի մասին տեղեկությունն իրեն հայտնի է դարձել այնպիսի աղբյուրներից, որոնք իմացել են հենց Զ.Մեջլումյանից, բացի այդ, վերջինս այդ փաստը հրապարակային հայտարարություններում ներկայացրել է որպես Մ.Ենոքյանի վերասոցիալականացման չափանիշ: Ն.Մալյանը նշել է նաև, որ Զ.Մեջլումյանի և Մ.Ենոքյանի տեսակցությունների և նրանց ամուսնացած լինելու վերաբերյալ տեղեկություններն ինքը տարածել է որպես շրջանառվող լուրեր և չի պնդել որպես փաստական հանգամանք, այլ խնդրել է իրավասու մարմիններին, որ այդ հանգամանքները ստուգվեն՝ նպատակ ունենալով պարզել պետական պաշտոնատար անձի հնարավոր ներագդեցությունը Մ.Ենոքյանի ներման գործընթացի նկատմամբ:

Ն.Մալյանը հայտնել է նաև, որ իր հրապարակումներով դիտավորություն չի ունեցել ոտնահարել Զ.Մեջլումյանի իրավունքները կամ նրա նկատմամբ ատելություն սերմանել, դրանք պայմանավորված չեն եղել վերջինիս սոցիալական վիճակով, այլ հետապնդել են վերջինիս կողմից իր դիրքի հնարավոր չարաշահումը բացառելու նպատակ⁹³⁶:

10. Մինք Ենոքյանի 2019 թվականի հունվարի 14-ի՝ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված՝ հանցագործության մասին հաղորդման համաձայն՝ «(...) Նարեկ Մալյանը կատարել է և շարունակում է կատարել հանցագործություններ (արարքներ), որոնք ուղղված են կոնցս՝ Զարուհի Արամի Մեջլումյանի, նրա որդու (...) և իմ սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ (...) և մեզ պարճատում է հոգեկան ուժեղ տրտապանքներ, այսինքն՝ կատարում է (շարունակաբար) հանցագործություններ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 143-րդ և 144-ով, ինչպես նաև հոդված 119 մաս 2 կետ 1,2,3-ով:

(...)

Նարեկ Մալյանն իր FB (ֆեյսբուքյան) էջում՝ Narek Malyan, սույն թվականի հունվարի 9-ին, ժամը 20:01-ին ուղիղ եթերով ելույթ է ունեցել և հայտնում է բոլորին (հազարավոր մարդկանց), որ կինս՝ ՀՀ Պետական վերահսկողական ծառայության լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ Զարուհի Մեջլումյանը

⁹³⁶ Տե՛ս գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 14-16:

հաճախակի երկարաժամկետ տեսակցություններ է ունենում ինձ հետ (...): Յուրաքանչյուր պարագայում Նարեկ Մայանը (...) հրապարակավ հայտնում է իմ և կնոջս անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ և ամեն անգամ շեշտում է մեր սեռական կյանքը:

(...)

Մայանի գործողությունները պայմանավորված են] նրանով, որ ես դատապարտյալ եմ և փաստացի նա ներխուժել է մեր անձնական և ընտանեկան կյանք այս հանգամանքից ելնելով (...):»⁹³⁷:

11. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2019 թվականի հունվարի 23-ի որոշումը քննիչը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Նյութերի նախապարաստումն ընթացքում ՋՄԵջլումյանի կողմից ինքնասպանության կամ դրան ուղղված կոնկրետ գործողություններ կատարելու վերաբերյալ որևէ փաստական տվյալ ձեռք չի բերվել, իսկ ՋՄԵջլումյանի կողմից նշված ինքնասպանության հակելու վերաբերյալ արտահայտություններն ընդամենը նրա սուբյեկտիվ ընկալումն է: (...)

Վարույթ իրականացնող մարմինն այդ համարվածությունը հարկ է համարում անդրադառնալ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածին՝ այն է ինքնասպանության հասցնելը (...): Տվյալ պարագայում ՋՄԵջլումյանը ոչ միայն չի կատարել ինքնասպանություն կամ դրան ուղղված գործողություններ, այլև Ն.Մայանի կողմից վերը նշված [հանցակազմի] օբյեկտիվ կողմի գործողությունները կատարելու վերաբերյալ փաստական տվյալներ նյութերի նախապարաստումն ընթացքում ձեռք չեն բերվել:

Վարույթ իրականացնող մարմինը քննարկել է նաև ՋՄԵջլումյանի կողմից նշված այն հանգամանքները, որոնք վերաբերում են անձնական տեղեկություններ հրապարակելուն:

(...)

Հարկ է նշել, որ նյութերի նախապարաստումն ընթացքում պարզվել է, որ Ն.Մայանը Զարուհի Մեջլումյանի և Մհեր Ենոքյանի ամուսնական կապի մասին տեղեկությունները հրապարակել է ոչ թե որպես անհատ անձանց տեղեկություններ, այլ նկատի ունենալով նշված անձանց նկատմամբ հասարակական մեծ հեղափոխությունը, ինչպես նաև հասարակության տրամադրվածությունը նրանց նկատմամբ: (...)

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ հանրամատչելի են համարվում, ի թիվս այլոց, այն անձնական տվյալները, որոնք տվյալների սուբյեկտի կողմից հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար: Հետևաբար Ն.Մայանի կողմից հրապարակվել են ՋՄԵջլումյանի և Մ.Ենոքյանի ամուսնության և տեսակցությունների մասին արդեն իսկ հանրամատչելի դարձած տեղեկությունները:

⁹³⁷ Տե՛ս գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 228-238:

Բացի այդ վարույթ իրականացնող մարմինն արձանագրում է, որ քրեակիրավական պաշտպանություն ունեն ոչ բոլոր անձնական տեղեկությունները և առավել ևս ոչ այն տեղեկությունները, որոնք սուբյեկտիվ ընկալմամբ կամայականորեն վկայակոչվում են ենթադրյալ տուժողի կողմից: (...) Ինչ վերաբերում է ամուսնու ով լինելու տեղեկությունների պաշտպանությանը, սպա այդպիսի տեղեկությունների պաշտպանությունը կամ դրանց գաղղրնիք հանդիսանալը նախատեսված չէ օրենքով (...):

քննարկելով ԶՄեջլումյանի կողմից նշված այն հանգամանքը, որ ՆՄայյանն իր գործողություններով դիրավորությամբ իրեն հոգեկան ուժեղ տառապանք է պարճատել՝ վարույթ իրականացնող մարմինը հարկ է համարում անդրադառնալ այն հանգամանքներին, որ ՆՄայյանի կողմից հրապարակվել է հանրամարջելի դարճած ԶՄեջլումյանի և ՄԵնոքյանի ամուսնության փաստը և վերջինիս ներում արանալու հնարավոր զարգացումները, որը առանձնակի հեղաքրքրություն է ներկայացնում հանրության լայն շրջանակների համար, և հրապարակմանը սոցցանցերի օգտատերերի կողմից տարաքնույթ մեկնաքանություններ տալը և կարծիքներ հայտնելը, որոնք ԶՄեջլումյանի մուր առաջացնելու էին իր քնորոշմամբ հոգեկան տառապանք չէր կարող կանհատարեսվել ՆՄայյանի կողմից, իսկ նման տառապանքներ տարճատելուն ուղղված գործողություններ վերջինիս կողմից չեն կատարվել, այլ ընդամենն իրականությանը համապատասխանող տեղեկություններ են տարաճվել: (...)

Այսպիսով, վարույթ իրականացնող մարմինը (...) հանգում է հիմնավոր եզրահանգման, որ Նարել Մայյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ, 111-րդ, 119-րդ և 144-րդ հոդվաճներով նախատեսված հանցագործությունների հանցակազմ չեն պարունակվում (...)⁹³⁸:

12. Դատախազի՝ 2019 թվականի փետրվարի 18-ի որոշման համաճայն՝ «(...) Ինչ վերաբերվում է ՀՀ քր. օր-ի 143-րդ հոդվաճի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման հանգամանքին, սպա հարկ է փաստել, որ նյութերի նախատարաքանման ընթացքում ճեռք չեն բերվել փաստական տվյալներ, որոնք կվկայելին որն է մեկի կողմից կախված սեռից, ոսասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ճագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, գույքային վիճակից, ճունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անճնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի իսխարելու վերաբերյալ:

(...)

Այսպիսով, (...) վարույթն իրականացնող մարմնի կողմից ճեռք բերված փաստական տվյալների համակցությունը բավարար հիմք է հանդիսացել կատարվաճին իրավական գնահատական տալու և հիմնավոր հեղուության հանգելու առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ, 111-րդ, 119-րդ, 143-րդ և 144-րդ

⁹³⁸ Տեն գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 243-249:

հողվածներով նախատեսված արարքների կատարման փաստի վերաբերյալ ցուցանիսներ ձեռք չեն բերվել (...)»⁹³⁹:

13. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 15-ի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը հաստատել է համարում այն հանգամանքը, որ իր իրավասության սահմաններում, վարույթն իրականացնող մարմինը (...) նախապարտադրված նյութերում չհայտնաբերելով ենթադրյալ արարքների վերաբերյալ հանցակազմի հարկանիշներ եկել է փաստարկված և հիմնավոր որոշման: Դատարանն արձանագրում է, որ հետաքննության փուլում ձեռք բերված ապացույցների և փաստաթղթերի օբյեկտիվ ամբողջականությունը բավարար է եղել, որպեսզի դրանց գնահատմամբ վարույթն իրականացնող մարմինը կայացնի պարճադատարանված որոշում, ինչը և կատարվել է:

(...)

Ինչ վերաբերում է բողոքարար Մ.Ենոքյանի այն պնդմանը, թե նյութերի նախապարտադրման ընթացքում իրենից և Զ.Մեջլումյանի անչափահաս երեխայից բացառություն չի վերցվել, ապա դատարանը փաստում է, որ (...) թեև վարույթն իրականացնող մարմինը (...) ստացել է Մ.Ենոքյանի հաղորդումը և (...) նրանից չի վերցրել բացառություն, այդուամենայնիվ (...) դրա անհրաժեշտությունը չի եղել, պայմանավորված այն հանգամանքով, որ նրա հաղորդումն ըստ էության նույնական է եղել Զ.Մեջլումյանի կողմից ներկայացված հաղորդմանը և ինքնին բավարար չի եղել նրա ասածի առնչությամբ քրեական գործ հարուցելու համար (...): Իսկ Զ.Մեջլումյանի անչափահաս երեխայից բացառություն վերցնելու անհրաժեշտությունը կարող է կասկած լինել վարույթն իրականացնող մարմնի նպատակահարմարությունից (...):

(...)

Դատարանն արձանագրում է, որ թեև քննիչ Քարպաշյանն իր կողմից 23.01.2019 թվականին կայացված որոշմամբ չի անդրադարձել Ն.Մալյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի հանցակազմի առկայության կամ բացակայության հանգամանքին, սակայն նշված հանգամանքին անդրադարձել է դատախազ Ա.Արսենյանը՝ նշելով, որ նյութերի նախապարտադրման ընթացքում ձեռք չեն բերվել փաստական ցուցանիսներ, որոնք կվկայեին քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի դատաբանական նշված արարքներից որևէ մեկի առկայության վերաբերյալ: (...)»⁹⁴⁰:

14. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով (...) որ Զարուհի Մեջլումյանի և Մհեր Ենոքյանի հաղորդումների կասկակցությամբ նյութերի նախապարտադրման ընթացքում կատարվել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, գրնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հուլիսի 15-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ մերժելով դիմողներ Զարուհի Մեջլումյանի և Մհեր Ենոքյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը (...)»⁹⁴¹:

⁹³⁹ Տե՛ս գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 29-40:

⁹⁴⁰ Տե՛ս գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 103-113:

⁹⁴¹ Տե՛ս գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 82-90:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք դիմողներ Ջ.Մեջլումյանի և Մ.Ենոքյանի հաղորդումների հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

16. ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ *«Մարդու արժանապատվությունն անխախտելի է»:*

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընդհանրական կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: (...)*

(...)

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

16.1. Մարդու արժանապատվության, կարծիքի ազատ արտահայտման իրավունքի և դրանց հարաբերակցության վերաբերյալ Սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն⁹⁴²,

- մարդու արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը, ի թիվս այլևի, հանդիսանում է անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից զերծ մնալը⁹⁴³,

- մարդու արժանապատվությունը, լինելով բոլոր իրավունքների և ազատությունների հիմք, կանխորոշում է իրավունքների և ազատությունների թե՛ բովանդակությունը, թե՛ իրացման սահմանները⁹⁴⁴,

⁹⁴² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ ՍԳՌ-913 որոշման 4-րդ կետը:

⁹⁴³ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՍԳՌ-1121 որոշման 6-րդ կետը:

⁹⁴⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ ՍԳՌ-1612 որոշման 4.1-րդ կետը:

- արտահայտվելու ազատությունը ոչ միայն մարդու իրավունքների ու ազատությունների, այլև հանրային շահերի համակարգում սկզբունքային կարևորության բաղադրիչ է, որի երաշխավորումը սահմանադրաիրավական և միջազգային իրավական պահանջ է: Միաժամանակ, այն ինչպես միջազգային իրավական փաստաթղթերով, այնպես էլ Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով և օրենքով սահմանված կարգով ենթակա է սահմանափակման՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության (հանրային շահերի) կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով⁹⁴⁵,

- կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրացման շրջանակը որոշելու նպատակով որոշիչ նշանակություն ունի նաև անձի պատվի և համբավի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը: Այսինքն՝ մարդու արժանապատվության, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությունը՝ կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրականացման բովանդակային սահման է⁹⁴⁶:

17. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի (...) նկատմամբ հարգանքի իրավունք»:

Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պարասահմանափակության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պարժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում (...) բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու (...) նպատակով»:

17.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), անդրադառնալով Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին, այն դիտարկել է ոչ միայն պետության բացասական պարտավորությունների լույսի ներքո՝ զերծ մնալու մարդու անձնական և ընտանեկան կյանքին անհիմն և ապօրինի միջամտությունից, այլև դրական պարտավորությունների շրջանակներում, այն է՝ պետություններին պարտավորեցնում է ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք կոչված

⁹⁴⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՍԴՌ-1396 որոշման 6-րդ կետը:

⁹⁴⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 5-ի վերը նշված որոշման 4.1-րդ կետը:

կլինեն ապահովելու հարգանքն անձնական կյանքի նկատմամբ, այդ թվում նաև՝ մասնավոր անձանց փոխհարաբերություններում⁹⁴⁷:

17.2. Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ «անձնական կյանքը» լայն հասկացություն է, ենթակա չէ սպառնալի սահմանման և կարող է ընդգրկել անհատի ֆիզիկական և սոցիալական ինքնության բազմակի հայեցակետեր⁹⁴⁸: Մասնավորապես, այն ներառում է անձի հեղինակությունը⁹⁴⁹, ֆիզիկական, հոգեկան և բարոյական անձեռնմխելիությունը⁹⁵⁰, հոգեբանական բարեկեցությունը և արժանապատվությունը⁹⁵¹, այդ թվում՝ մարդու սեռական կյանքը⁹⁵²:

17.3. Վերոգրյալի հետ մեկտեղ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ վերաբերմունքը, որը չի հասնում խստության այնպիսի մակարդակի, որպեսզի դիտարկվի Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում, այնուամենայնիվ կարող է խախտել անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը, եթե վերջինիս ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության վրա ունեցել է բավականաչափ անբարենպաստ ազդեցություն: Անձի հեղինակության նկատմամբ ոտնձգությունը Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում դիտարկելու համար, այն պետք է հասնի լրջության որոշակի մակարդակի և իրականացվի այնպես, որ վնաս պատճառի անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի իրականացմանը⁹⁵³:

17.4. Միաժամանակ, անհատի անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը քննարկելով Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքի համատեքստում՝ Եվրոպական դատարանը նշել է, որ այս երկու իրավունքներն արժանի են հավասար հարգանքի, և անհրաժեշտ է հավասարակշռել դրանք⁹⁵⁴: Նշվածի հաշվառմամբ, Դատարանը մի շարք գործերով այս երկու իրավունքները հավասարակշռելիս կիրառել է հետևյալ չափանիշները՝ հանրային

⁹⁴⁷ *Evans v. The United Kingdom* գործով 2007 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 6339/05, կետ 75:

⁹⁴⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *S. And Marper v. The United Kingdom* գործով 2008 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 30562/04 և 30566/04, կետ 66:

⁹⁴⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Axel Springer v. Germany* գործով 2012 թվականի փետրվարի 7-ի, գանգատ թիվ 39954/08, կետ 83:

⁹⁵⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Söderman v. Sweden* գործով 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 5786/08, կետ 80, *X And Y v. The Netherlands* գործով 1985 թվականի մարտի 26-ի վճիռը, գանգատ թիվ 8978/80, կետ 22:

⁹⁵¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Beizaras and Levickas v. Lithuania* գործով 2020 թվականի մայիսի 14-ի վճիռը, գանգատ թիվ 41288/15, կետ 117:

⁹⁵² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Dudgeon v. the United Kingdom* գործով 1981 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 7525/76, կետ 41:

⁹⁵³ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Association Accept and Others v. Romania* գործով 2021 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 19237/16, կետեր 66-68:

⁹⁵⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Couderc And Hachette Filipacchi Associés v. France* գործով 2015 թվականի նոյեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 40454/07, կետ 91:

հետաքրքրություն ներկայացնող քննարկմանը նպաստելը, թիրախավորված անձի հայտնիությունը, նրա նախկին վարքագիծը, հայտարարության թեման, տեղեկությունների ձեռքբերման եղանակը և հավաստիությունը, հրապարակման բովանդակությունը, ձևը և հետևանքները⁹⁵⁵: Ընդ որում՝ այս չափանիշներն սպառիչ չեն, և դրանց գնահատումը կախված է գործի կոնկրետ հանգամանքներից⁹⁵⁶:

18. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արված արտահայտությունները և վարքագիծն անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտում դիտարկելու համար դրանք պետք է ունենան Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կիրառվող վերոնշյալ չափանիշներին համարժեք լքշության որոշակի աստիճան: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը, Եվրոպական դատարանի դիրքորոշումների հաշվառմամբ, ընդգծում է, որ այդ չափանիշները գնահատելիս պետք է տարբերակում դրվի մասնավոր անձանց և որպես հանրային կամ հասարակական գործիչներ հանդես եկող անձանց միջև, քանի որ, որպես կանոն, անձնական կյանքի ոլորտին չեն դասվում անհատի հանրային կամ հասարակական գործունեությունը, աշխատանքային, գործնական հարաբերությունները, հանրային մեծ հետաքրքրություն ներկայացնող կամ հանրամատչելի տեղեկությունները և այլն: Բացի այդ, եթե անձը զբաղվում է հանրային գործունեությամբ, նրա անձնական կյանքի սահմանները որոշակիորեն նեղանում են, և նա չի կարող ամբողջ ծավալով օգտվել այդ իրավունքից, եթե, իհարկե, արված արտահայտությունները չեն վերաբերում բացառապես անձի մասնավոր կյանքին և չեն հետապնդում բացառապես դրա հետ կապված հասարակության հետաքրքրասիրության բավարարման նպատակ⁹⁵⁷:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ *«Հեղաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հարկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար: (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական գործ հարուցելու սույն օրենսգրքով նախատեսված սովորների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հեղաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:*

⁹⁵⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Jishkariani v. Georgia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 18925/09, կետ 46:

⁹⁵⁶ Տե՛ս նույն տեղում:

⁹⁵⁷ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Von Hannover v. Germany (No. 2)* գործով 2012 փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 40660/08 և 60641/08, կետ 110:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝
«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի
բացակայության դեպքում դատարհազր, քննիչը, հետաքննության մարմինը
որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

(...)

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա
դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: (...):»

19.1. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քրեական գործի հարուցման
փուլի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններին, Միրվարդ
Գևորգյանի գործով նշել է, որ պայմանավորված դատական վերահսկողության
խնդիրներով դրանք ընդգրկում են հետևյալ հարցադրումները.

«ա) արդյոք պահպանվել են «Քրեական գործ հարուցելը» վերառնությունը
կրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխում զեպրեղված
պահանջները,

բ) արդյոք միճարկվող որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի
եզրահանգումները համապատասխանում են նրա կողմից ձեռք բերված
փյլալների ամբողջությանը,

գ) արդյոք ձեռք են բերվել ողջամրորեն անհրաժեշտ փյլալներ քրեական գործ
հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող
հանգամանքները պարզելու համար,

դ) վեր հանված խախտումներն արդյոք հանգեցրել են անձի իրավունքների
կամ օրինական շահերի խախտման»⁹⁵⁸:

20. Մինևույն ժամանակ, անդրադառնալով դատական ակտի
պատճառաբանված լինելու հատկանիշին՝ Վճռաբեկ դատարանն Արսեն
Մակարյանի գործով որոշմամբ արձանագրել է. «(...) [Յ]ուրաքանչյուր
դեպքում դատարանները պարտավոր են կայացնել ոչ միայն օրինական և
հիմնավոր, այլև բավարար չափով և պարզաճ կերպով պարճառաբանված
դատական ակտեր: Այլ կերպ՝ դատական ակտի պարճառաբանությունների
հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ:
Պարճառաբանությունը պերք է կառուցվի տրամաբանորեն կապված և
գործի փաստական հանգամանքներից բխող բացառապես հարակ, որոշակի
և համոզիչ հերևությունների հիման վրա: Հակառակ պարագայում քրեական
դատավարության խնդիրները չեն իրագործվի, իսկ տրամաբանությունը՝
կիարիվի: Դատական ակտի պարճառաբանությունների հիմքում վերացական
դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի
պարճառաբանության ոչ պարզաճ լինելու մասին»⁹⁵⁹:

21. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

⁹⁵⁸ Տեն Վճռաբեկ դատարանի՝ Միրվարդ Գևորգյանի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ
ԼԴ/0018/11/16 որոշման 13-րդ կետը:

⁹⁵⁹ Տեն Վճռաբեկ դատարանի՝ Արսեն Մակարյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ
ԵԿԴ/0016/01/15 որոշման 14-րդ կետը:

- նախաքննության մարմինը նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժել է՝ այն պատճառաբանությամբ, որ Նարեկ Մալյանի գործողություններում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ, 111-րդ, 119-րդ և 144-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը⁹⁶⁰,

- վերոնշյալ որոշման դեմ Մ.Ենոքյանի կողմից բերված բողոքը Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի դատախազ Ա.Արսենյանը մերժել է՝ նշելով, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք բերված փաստական տվյալների համակցությունը բավարար հիմք է կատարվածին իրավական գնահատական տալու և հիմնավոր հետևության հանգելու առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ, 111-րդ, 119-րդ, 143-րդ և 144-րդ հոդվածներով նախատեսված արարքների կատարման փաստի վերաբերյալ տվյալներ ձեռք չեն բերվել⁹⁶¹,

- Առաջին ատյանի դատարանը, քննարկելով դիմողներ Զ.Մեջլումյանի և Մ.Ենոքյանի բողոքը, մերժել է այն՝ նշելով, որ հետաքննության փուլում ձեռք բերված ապացույցների և փաստաթղթերի ամբողջությունը բավարար է եղել, որպեսզի դրանց գնահատմամբ վարույթն իրականացնող մարմինը կայացնի քրեական գործի հարուցումը մերժելու մասին փաստարկված և հիմնավոր որոշում, ինչը և կատարվել է⁹⁶²,

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, իր հերթին փաստել է, որ Զ.Մեջլումյանի և Մ.Ենոքյանի հաղորդումների կապակցությամբ նյութերի նախապատրաստման ընթացքում կատարվել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն⁹⁶³:

22. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 19-20-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները դատական ակտերի պատճառաբանությունների հիմքում դրել են այն ընդհանրական դատողությունը, թե վարույթն իրականացնող մարմինը կատարել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, և ձեռք բերված փաստական տվյալների ամբողջությունը բավարար է եղել, որպեսզի դրանց գնահատմամբ կայացվի քրեական գործի հարուցումը մերժելու մասին հիմնավորված որոշում:

Այսպես՝ ստորադաս դատարանները, դիմողներ Զ.Մեջլումյանի և Մ.Ենոքյանի բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, պատշաճ կերպով չեն պարզել, թե արդյո՞ք վիճարկվող որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի եզրահանգումները համապատասխանում են նրա կողմից ձեռք բերված տվյալների ամբողջությանը, և արդյո՞ք ձեռք են բերվել ողջամտորեն անհրաժեշտ տվյալներ՝ քրեական գործ

⁹⁶⁰ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

⁹⁶¹ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

⁹⁶² Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

⁹⁶³ Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար:

Մասնավորապես, ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել այն, որ քննիչը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման հիմքում դրել է միայն Զ.Մեջլումյանի և Ն.Մայանի բացատրությունները և իրավական նորմերի վկայակոչմամբ գտել, որ վերջինիս գործողություններում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները: Այս առումով հատկանշական է այն, որ քննիչը Զ.Մեջլումյանի հաղորդման հիման վրա հետաքննության մարմնի նախապատրաստած նյութերը ստացել է 2019 թվականի հունվարի 22-ին և դրանց հիման վրա մեկ օր անց կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: Հետևաբար, տվյալ դեպքում ստորադաս դատարանները պետք է պատշաճ իրավական գնահատականի արժանացնեին, թե արդյո՞ք օբյեկտիվորեն հնարավոր էր, որ քննիչը մեկ օրվա ընթացքում պատշաճ կերպով ուսումնասիրեր դիմողների ներկայացրած բազմաթիվ նյութերը և իր եզրահանգումները կառուցեր ձեռք բերված տվյալների ամբողջության հիման վրա՝ հաշվի առնելով նաև այն, որ դրանց վերաբերյալ քննիչի որոշումը որևէ փաստական վերլուծություն չի պարունակում:

Բացի այդ, ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել բողոքաբերների բարձրացրած փաստարկն այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներն առհասարակ չեն ուսումնասիրվել: Մասնավորապես այս առումով դատարանները պատշաճ վերլուծության և գնահատման չեն ենթարկել այն հանգամանքը, որ քննիչն իր որոշմամբ ընդհանրապես անդրադարձ չի կատարել դիմողների հաղորդումներում մատնանշված՝ վերոնշյալ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայության կամ բացակայության հարցին, ինչը ողջամիտ կասկածներ է առաջացնում ներկայացված հաղորդումների կապակցությամբ լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն իրականացված լինելու վերաբերյալ: Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն դատողությանը, որ նշված հանգամանքին անդրադարձել է դատախազը⁹⁶⁴, ապա Վճռաբեկ դատարանն այն ընդունելի չի համարում, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ և 185-րդ հոդվածների համադրված վերլուծության հիման վրա փաստում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը և հիմնավորվածությունն ստուգելիս դատախազը լիազորված է վերացնել այդ որոշումը և հարուցել քրեական գործ՝ նախաքննություն կատարման համար այն ուղարկելով քննիչին, կամ հաստատել բողոքարկվող որոշման օրինականությունը, և լիազորված չէ ինքնուրույն իրավական գնահատական տալ այն ենթադրյալ արարքներին, որոնք վարույթն իրականացնող մարմինը

⁹⁶⁴ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

քննարկման առարկա չի դարձրել, և որոնցում կոնկրետ հանցակազմի հատկանիշների առկայության կամ բացակայության հարցին իրավական գնահատական չի տվել:

22.1. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն որոշման 16-18-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ չեն գնահատել Ջ.Մեջլումյանի և Մ.Ենոքյանի անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տվյալների հրապարակման, նրանց ամուսնույթյան փաստի, քրեակատարողական հիմնարկում ունեցած տեսակցությունների, ինչպես նաև Մ.Ենոքյանի հնարավոր ներման գործընթացի և վերջինիս վերաբերյալ քրեական գործի հետ կապված արխիվացված տեսանյութի ձեռքբերման և հրապարակման իրավաչափությունն ու դրանց վերաբերյալ քննիչի հետևությունների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս համատեքստում ստորադաս դատարանները սույն որոշմամբ սահմանված չափանիշների լույսի ներքո չեն պարզել, թե առկա է արդյո՞ք Ն.Մալյանի արտահայտությունների և հրապարակումների՝ որպես խոսքի ազատ արտահայտման իրավունքի և անձի անձնական կյանքի իրավունքի միջև անհրաժեշտ հավասարակշռություն, թե ոչ: Մասնավորապես այս առումով, ի թիվս այլնի, չի պարզվել, թե ի՞նչ նպատակ են հետապնդել արված արտահայտությունները և հրապարակումները, և դրանք ի՞նչ ազդեցություն են ունեցել դիմողների վրա, արդյո՞ք դրանք այն աստիճան են ունենցել վերջիններիս հեղինակությանը, որ վնաս են պատճառել նրանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի իրականացմանը:

22.2. Բացի այդ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, ստորադաս դատարանները պատշաճ քննարկման առարկա չեն դարձրել դիմողների, ինչպես նաև Ջ.Մեջլումյանի անչափահաս երեխայի մոտ հոգեկան ուժեղ տառապանքի առկայության կամ բացակայության փաստի պարզման ուղղությամբ վարույթ իրականացնող մարմնի ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունն ու բավարարությունը և նշված հանգամանքի հետ կապված դիմողների ներկայացրած փաստարկները:

Հետևաբար, նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմողներ Ջ.Մեջլումյանի և Մ.Ենոքյանի հաղորդումների հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

23. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ջ.Մեջլումյանի և Մ.Ենոքյանի կողմից ներկայացված հաղորդումների հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 358-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ հիմք են Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար⁹⁶⁵:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները և անդրադառնալով բողոքաբերների փաստարկներին՝ կայացնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող դատական ակտ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 15-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *արտրագրություն*

Դատավորներ՝ *արտրագրություններ*

⁹⁶⁵ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴԿ/0426/11/18 որոշումը:

60.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0237/06/19

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի դեկտեմբերի 7-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով, քննության առնելով մեղադրյալ Ռուբեն Սուրենի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ապալյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի մայիսի 23-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13201616 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին):

2017 թվականի նոյեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11860717 քրեական գործը, որը Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ միացվել է թիվ 13201616 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ թիվ 13201616 քրեական գործով Ռուբեն Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ թիվ 13201616 քրեական գործով Ռ.Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նույն թվականի մայիսի 22-ին վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով (24 դրվագով):

1.1. 2018 թվականի հուլիսի 20-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 13205118 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ թիվ 13205118 քրեական գործով Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը, իսկ նույն թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ թիվ 13205118 քրեական գործով Ռ.Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ և 2-րդ կետերով (6 դրվագ) և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ կետով (4 դրվագ):

Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ թիվ 13201616 քրեական գործը միացվել է թիվ 13205118 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 13205118 համարով:

1.2. Նախաքննության մարմնի՝ 2019 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ Ռ.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով (24 դրվագ), 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ և 2-րդ կետերով (6 դրվագ), 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ կետով (4 դրվագ):

2019 թվականի ապրիլի 12-ին Նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխելու և որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու մասին:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ Նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

3. Դատախազ Ն.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հունիսի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 13-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբեր 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 13-ի որոշման համաձայն. «(...) [Այնձի նկատմամբ խափանման միջոց կալանավորում ընտրելու մասին միջնորդությունները քննարկելուց առաջ, մինչև անդրադառնալը մեղաազրվող արարքին առնչություն ունենալուն, իսկ դրանից հետո խափանման միջոց ընտրելու հիմքերին, դատարանը նախ պետք է անդրադառնա խափանման միջոց կալանավորում ընտրելու այլ պայմանների, որոնցից է նաև անձի նկատմամբ նույն քրեական գործով այլ խափանման միջոցի բացակայությունը:

Ինչպես երևում է քննիչի կողմից ներկայացված նյութերից, սույն գործով դեռևս 2018 թվականի օգոստոսի 24-ին Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել «ստորագրությունն չհեռանալու մասին», որը մինչ օրս վերացված չէ:

Ինչ վերաբերվում է քննիչի այն հայտարարությանը, որ դատարան ներկայացված որոշումը վերնագրված է «Ընտրված խափանման միջոցը փոփոխելու և...», ապա հարկ է նկատել, որ որոշման միայն վերնագիրն այլ խափանման միջոցի բացակայություն չէ, քանի որ վերնագիրը չի կարող օգրագործվել դատավարական հարկատրանսի միջոցի մեկնաբանման համար, առավել ևս այն պայմաններում, երբ որոշման նկարագրական և պարճատարանական մասում Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ ընտրված «ստորագրությունն չհեռանալու մասին» խափանման միջոցի բացակայությունը վկայող որևէ ձևակերպում առկա չէ:

(...)

Ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի պահանջից, խափանման միջոցը կարող է փոխվել վարույթն իրականացնող մարմնի կողմից, այսինքն կարող է փոխվել այնպիսի խափանման միջոցով, որը կարող է ընտրվել հենց այդ մարմնի կողմից: Այսինքն, նախնական քննության փուլում քննվող քրեական գործով «ստորագրությունն չհեռանալու մասին» խափանման միջոցը «կալանավորում» խափանման միջոցով փոփոխելու որոշում չի կարող կայացվել ոչ քննիչի, ոչ էլ դատարանի կողմից, քանի որ «կալանավորում» խափանման միջոցն ընտրվում է դատարանի կողմից, իսկ «ստորագրությունն չհեռանալու մասին» խափանման միջոցի իրավաչափության գնահատման իրավասություն ունի քրեական հետապնդում իրականացնող մարմինը:

Հարկ է նկատել նաև, որ խափանման միջոցը փոփոխելը, դա խափանման միջոցի բացակայություն չէ:

Այսպիսով, ելնելով վերը նշված իրավանդությունից, դատարանը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է մերժման: (...)»⁹⁶⁶:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 12-ի որոշման համաձայն. «(...) Վերաքննիչ դատարան ներկայացված նյութերից պարզ է դառնում, որ նախաքննության մարմինը մեղադրյալ Ռուբեն Հովհաննիսյանի նկատմամբ թիվ 13205118 քրեական գործով որպես խափանման միջոց է ընտրել ստորագրությունը չհեռանալու մասին:

Վերաքննիչ դատարանը նաև փաստում է, որ հետագայում մինչ մեղադրյալ Ռուբեն Հովհաննիսյանի նկատմամբ կայանալորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարան միջնորդություն ներկայացնելը նախկինում ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, քննիչի կողմից վերացված չի եղել:

Այսինքն մեղադրյալի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց ընտրված լինելու պայմաններում նախաքննության մարմինը Դատարան է ներկայացրել միջնորդություն ընտրված խափանման միջոցը փոփոխելու և մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կայանալորում կիրառելու մասին, որը սակայն Դատարանի կողմից մերժվել է, այն հիմնավորմամբ, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի «ստորագրությունը չհեռանալու մասին» և «կայանալորում» խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված:

Դատարանի փաստարկն այն մասին, թե խափանման միջոցի փոփոխելը մեկը մյուսով փոխարինելը, ենթադրում է նոր խափանման միջոցի կիրառություն և արդեն իսկ վկայում է նախկինում ընտրված խափանման միջոցի վերացված լինելու մասին, ընդունելի չէ Վերաքննիչ դատարանի համար:

Դատարանը մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում իրավասու չէ փոփոխել քննիչի վարույթում գրնվող քրեական գործով մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը: Նման իրավասությամբ դատարանը օժտված է իր վարույթում գրնվող քրեական գործով այսինքն դատարանը իրավասու է փոփոխել ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի տեսակը՝ սուկա հիմքերի պայմաններում: (...)»⁹⁶⁷:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ սերքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի կարծիքով՝ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, մասնավորապես չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ, 134-րդ, 144-րդ և 151-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

⁹⁶⁶ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 348:

⁹⁶⁷ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 76:

7.1. Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը, վերլուծելով վերոնշյալ նորմերը, նշել է, որ անհրաժեշտ է տարանջատել խափանման միջոցների կիրառման ընդհանուր անհրաժեշտությունը յուրաքանչյուր տեսակի խափանման միջոցի ընտրության անհրաժեշտությունից: Այսպես, ըստ բողոքաբերի՝ եթե բոլոր խափանման միջոցների կիրառման նպատակը նույնն է՝ կանխել քրեական գործով վարույթի ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը և ապահովել դատավճռի կատարումը, ինչով էլ պայմանավորվում է առհասարակ դրանց կիրառման անհրաժեշտությունը, ապա դրանցից յուրաքանչյուրի ընտրությունը պայմանավորված է այլ անհրաժեշտությամբ, և խափանման միջոցը վերացվում է այն դեպքում, երբ վերանում է խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունն ընդհանրապես, այլ ոչ թե յուրաքանչյուր տեսակի խափանման միջոցի ընտրության անհրաժեշտությունը, հետևաբար, անհիմն են դատարանների հետևություններն այն մասին, որ նախքան միջնորդություն ներկայացնելը վարույթն իրականացնող մարմինը չի վերացրել նախկինում ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, քանի որ մեղադրյալ Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ առհասարակ խափանման միջոց կիրառելու՝ ընդհանուր նպատակներով պայմանավորված անհրաժեշտությունը չի վերացել, ավելին՝ քննությամբ ձեռք բերված տվյալներով, մասնավորապես այն, որ վերջինս խախտել է արդեն իսկ կիրառված խափանման միջոցի պայմանները, առաջացել է առավել խիստ հարկադրանքի միջոցը կալանավորումը, կիրառելու անհրաժեշտությունը:

7.2. Բացի այդ, բողոք բերած անձը փաստարկել է, քանի որ արդեն իսկ կիրառված խափանման միջոցի վերացումը, դրանից հետո կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն ներկայացնելը, դրա քննությունը քրեադատավարական իմաստով ենթադրում է որոշակի տևողություն, որը շատ դեպքերում օրեր է տևում, ուստի, սահմանափակումները վերացված լինելու պարագայում մեղադրյալը կարող է առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը, հատել ՀՀ սահմանը:

7.3. Բողոքի հեղինակն ընդգծել է նաև, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու բացառիկ իրավասությունը դատարանին վերապահված լինելու պայմաններում նախաքննական մարմնի կողմից ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կալանավորում խափանման միջոցով փոխելը ենթադրում է երկու տարբեր մարմինների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավասությունների իրականացում: Հետևաբար, դատարանների՝ ընտրված խափանման միջոցը փոփոխելու կապակցությամբ հետևությունները ևս անհիմն են և չպատճառաբանված:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 12-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ մեղադրյալ Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառելով կալանավորումը երկու ամիս ժամկետով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կիրառված խափանման միջոցը վերացնելու և փոփոխելու դատավարական ընթացակարգերի սահմանազատման հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդիր: Ոստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք ստորադաս դատարանների կողմից մեղադրյալ Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժելն այն պատճառաբանությամբ, որ նախքան միջնորդություն ներկայացնելը որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացված չի եղել:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«քննիչը, մասնավորապես, լիազորված է՝*

22) որոշում ընդունել խափանման միջոցներ ընտրելու, փոխելու, վերացնելու և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու մասին, բացառությամբ կալանքի (...).

(...)

24) դիմել դատարան մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու (...) միջնորդություններով.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի (մինչ 2020 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-196-Ն օրենքը գործող խմբագրությամբ) համաձայն՝ *«1. Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պայշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կարարումն ապահովելու նպատակով:*

2. Խափանման միջոցներն են՝

1) կալանավորումը.

(...)

3) ստորագրությունն չհեռանալու մասին.

(...)

4. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով*

ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել միջնորդական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճատների չեղարկման պարտավորված արարք.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի (մինչ 2020 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-196-Ն օրենքը գործող խմբագրությամբ) համաձայն՝ «1. Անհրաժեշտության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից խափանման միջոցը կարող է փոխվել:

2. Խափանման միջոցը վերացվում է, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը:

(...)»:

12. Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերի վերլուծությունից բխում է, որ խափանման միջոցները, նպատակ ունենալով կանխել քրեական գործով վարույթի ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ վարքագիծը և ապահովել դատավճռի կատարումը, կիրառվում են միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձը կարող է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կամ դրանցից որևէ մեկը: Ընդ որում՝ վերոնշյալ նպատակների իրականացման և անձի ենթադրյալ ոչ պատշաճ վարքագծի բացասական դրսևորումների չեզոքացման համար անհրաժեշտ և պիտանի խափանման միջոցի կոնկրետ տեսակի ընտրության հարցն օրենսդիրը վերապահել է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը՝ միաժամանակ վերջինիս տալով անհրաժեշտության դեպքում այն ավելի մեղմով կամ խստով փոխելու կամ վերացնելու հնարավորություն: Այս առումով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ խափանման միջոցը փոխելը և վերացնելը նույն բովանդակությունը չկրող և իրավական տարբեր նշանակություն և հետևանքներ ունեցող դատավարական գործողություններ են, որոնք անհրաժեշտ է տարբերակել միմյանցից: Այսպես՝ խափանման միջոցը վերացվում է այն դեպքում, երբ վերանում են այն կիրառելու փաստական և (կամ) իրավական հիմքերը, և որպես այդպիսին վերանում է նաև ընդհանրապես որևէ տեսակի խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը, մինչդեռ խափանման միջոցը փոխելու դատավարական ինստիտուտը գործադրվում է այն դեպքում, երբ ոչ միայն չեն վերացել խափանման միջոց կիրառելու հիմք հանդիսացած հանգամանքները, այլև

բարելավման կամ վատթարացման տեսանկյունից ենթարկվել են այնպիսի փոփոխությունների, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին հասնելու տեսանկյունից հնարավոր է դարձել կամ անհրաժեշտություն է առաջացել այն փոխարինել ավելի մեղմ կամ ավելի խիստ ռեժիմ ունեցող հարկադրանքի միջոցով: Հետևաբար, նման իրավիճակներում վարույթն իրականացնող մարմինը կայացնում է ոչ թե խափանման միջոցը վերացնելու, այլ խափանման միջոցը փոփոխելու մասին որոշում:

12.1. Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է նկատել, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու լիազորությունը վերապահված է բացառապես դատարանին, ուստի այն դեպքերում, երբ նախաքննության փուլում մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը չի ծառայում իր նպատակներին և անհրաժեշտություն է առաջանում այն փոխարինել կալանավորմամբ, ապա վարույթն իրականացնող մարմինը, մի կողմից՝ չկարողանալով գործադրել խափանման միջոցի վերացման ինստիտուտը, քանի որ շարունակում են առկա լինել խափանման միջոց կիրառելու հիմքերը, մյուս կողմից՝ չունենալով ընտրված խափանման միջոցը կալանավորմամբ փոխարինելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն, նման միջնորդությամբ դիմում է դատարան: Վերոշարադրյալի հետ կապված՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանի կողմից անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը բավարարելու դեպքում ոչ թե տեղի է ունենում արդեն իսկ կիրառված խափանման միջոցի հետ կապակցված կիրառություն, այլ խափանման միջոցի փոփոխություն, մեկը մյուսով փոխարինում՝ նոր խափանման միջոցի կիրառություն և նախկինում ընտրված խափանման միջոցի գործողության դադարեցում:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

- Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի ապրիլի 7-ի և նույն թվականի օգոստոսի 24-ի որոշումներով համապատասխանաբար թիվ 13201616 և թիվ 13205118 քրեական գործերով Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը⁹⁶⁸:

- Նախաքննության մարմինը 2019 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ թիվ 13201616 քրեական գործը միացրել է թիվ 13205118 քրեական գործին և 2019 թվականի ապրիլի 12-ին Ռ.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով (24 դրվագ), 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ և 2-րդ կետերով (6 դրվագ) և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ կետով (4 դրվագ)⁹⁶⁹:

- 2019 թվականի ապրիլի 12-ին Նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալ Ռ.Հովհաննիսյանի

⁹⁶⁸ Տե՛ս սույն որոշման 1-ին և 1.1-րդ կետերը:

⁹⁶⁹ Տե՛ս սույն որոշման 1.1-րդ և 1.2-րդ կետերը:

նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխելու և որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու մասին⁹⁷⁰:

- Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ Նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է՝ այն պատճառաբանությամբ, որ Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ 2018 թվականի օգոստոսի 24-ին որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը միջնորդության քննարկման ժամանակ դեռևս վերացված չի եղել: Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը՝ Առաջին ատյանի դատարանը փաստել է նաև, որ նախաքննության փուլում «ստորագրությունը՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը «կալանավորում» խափանման միջոցով փոխելու որոշում չի կարող կայացվել ոչ քննիչի, ոչ էլ դատարանի կողմից, քանի որ «կալանավորում» խափանման միջոցն ընտրվում է դատարանի կողմից, իսկ «ստորագրությունը՝ չհեռանալու մասին» խափանման միջոցի իրավաչափության գնահատման իրավասություն ունի քրեական հետապնդում իրականացնող մարմինը⁹⁷¹:

- Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, իր հերթին փաստել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով «ստորագրությունը՝ չհեռանալու մասին» և «կալանավորում» խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված, իսկ դատախազի փաստարկն այն մասին, թե խափանման միջոցի փոփոխելը՝ մեկը մյուսով փոխարինելը, ենթադրում է նոր խափանման միջոցի կիրառություն և արդեն իսկ վկայում է նախկինում ընտրված խափանման միջոցի վերացված լինելու մասին, ընդունելի չէ Վերաքննիչ դատարանի համար⁹⁷²:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-12.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասին և 151-րդ հոդվածին և նշելով, որ մեղադրյալի նկատմամբ նախաքննության մարմնի կողմից որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացված չլինելու պայմաններում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը չի կարող բավարարվել, քանի որ դա կհանգեցնի ստորագրությունը չհեռանալու մասին խափանման միջոցի և կալանավորման կապակցված կիրառման, ինչն անթույլատրելի է, հաշվի չեն առել, որ տվյալ դեպքում ենթակա էր կիրառման ոչ թե խափանման միջոցը վերացնելու, այլ փոփոխելու ընթացակարգը: Մասնավորապես ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ վարույթն իրականացնող մարմինն անձի նկատմամբ

⁹⁷⁰ Տե՛ս սույն որոշման 1.2-րդ կետը:

⁹⁷¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁹⁷² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ընտրված խափանման միջոցը վերացնում է այն դեպքում, երբ վերանում են այն կիրառելու փաստական և (կամ) իրավական հիմքերը, մինչդեռ տվյալ դեպքում դրանք ոչ միայն վերացած չեն եղել, այլև վարույթն իրականացնող մարմնի գնահատմամբ ենթարկվել են այնպիսի փոփոխությունների, որ անհրաժեշտություն է առաջացել մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու համար այն փոխարինել ավելի խիստ խափանման միջոցով, և ի տարբերություն մյուս խափանման միջոցների, կալանավորման դեպքում նախաքննության մարմնի կողմից համապատասխան որոշման կայացումը չի կարող բավարար լինել այն փոխելու համար, քանի որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու իրավասությամբ օժտված է բացառապես դատարանը: Այս առումով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անձի նկատմամբ արդեն իսկ կիրառված խափանման միջոցի վերացումը չի կարող դիտվել որպես կալանավորման կիրառման պարտադիր պայման, քանի որ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը բավարարելու դեպքում նախկինում կիրառված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կդադարի գործել:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ստորադաս դատարանների մոտեցումն ընդունելի համարելու պարագայում ստացվում է, որ այն դեպքերում, երբ նախաքննության փուլում կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը չի ծառայում իր նպատակներին և անհրաժեշտություն է առաջանում այն փոխարինել կալանավորմամբ, ապա վարույթն իրականացնող մարմինը նման միջնորդություն ներկայացնելու համար ստիպված պետք է կայացնի խափանման միջոցը վերացնելու մասին որոշում, որպիսի մոտեցումն ակնհայտ է, որ չի բխի խափանման միջոցը վերացնելու և փոփոխելու ինստիտուտների նպատակային նշանակությունից, կհակասի խափանման միջոցի կիրառման խնդիրներին և նպատակներին, իսկ միջնորդության ներկայացումը կկորցնի իր իմաստն ու կդառնա առարկայագուրկ, քանի որ խափանման միջոցը վերացնելու մասին որոշման կայացումն արդեն իսկ ենթադրում է հիմքերի իսպառ բացակայություն:

Բացի այդ, նախքան մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն ներկայացնելը, անձի նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի վերացումը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակների, երբ օրինակ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության քննությունը որոշակի ժամանակահատված տևի, և խափանման միջոցի բացակայության պայմաններում, անձը կկարողանա անարգել մեկնել այլ տեղանք, փոխել բնակության վայրը, հատել ՀՀ սահմանը և այլն: Ավելին՝ եթե դատարանը մերժի կալանավորման միջնորդությունը, ապա վարույթն իրականացնող մարմինն ըստ էության կգրկվի նաև անձի նկատմամբ որևէ այլ խափանման միջոց կիրառելու հնարավորությունից:

15. Ուստի, հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից մեղադրյալ Ռ.Հովհաննիսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժելն այն պատճառաբանությամբ, որ նախքան միջնորդություն ներկայացնելը որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացված չի եղել, իրավաչափ չէ:

16. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ և 151-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար⁹⁷³:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է ըստ էության քննության առնի Նախաքննության մարմնի ներկայացրած միջնորդությունը և հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Ռուբեն Սուրենի Հովհաննիսյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 13-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 12-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *արտրագրություն*

Դատավորներ՝ *արտրագրություններ*

⁹⁷³ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի վերաբերյալ գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

61.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0279/06/21

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորները*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի դեկտեմբերի 24-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Ժիրայր Խաչիկի Բրուտյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում 2021 թվականի փետրվարի 4-ին հարուցվել է թիվ 86150621 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 1-ին մասի, 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի և 258-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) 2021 թվականի մայիսի 5-ին հարուցվել է թիվ 69104321 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 223.3-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 5-րդ կետերի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ վերոնշյալ քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 86150621 համարի ներքո:

2021 թվականի մայիսի 7-ին Ժիրայր Խաչիկի Բրուտյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի մայիսի 7-ի որոշմամբ Ժ.Բրուտյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2021 թվականի մայիսի 8-ի որոշմամբ մեղադրյալ Ժ.Բրուտյանի պաշտպաններ Հ.Բաբայանի և Ռ.Հակոբյանի բողոքը բավարարվել է և հաստատվել է Ժ.Բրուտյանի ձերբակալման ոչ իրավաչափ լինելու փաստը: Նույն որոշմամբ մեղադրյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

3. Պաշտպաններ Հ.Բաբայանի և Ռ.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի մայիսի 24-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 8-ի որոշումը՝ կալանավորման մասով, բեկանել է, Նախաքննության մարմնի միջնորդությունը մերժել է, մեղադրյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացրել է, և նրան ազատել է կալանքից:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Ժիրայր Բրուտյանին ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա 2011թ. «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող «Աֆո» մականվամբ Ռաֆայել Խոյեցյանի, «Խոյ» մականվամբ Ռաֆիկ Խոյեցյանի և «Զապ Լենինականակի» մականվամբ Անդրանիկ Սողոյանի, «Ալո Շահումյանակի» մականվամբ Ալեքսանդր Մակարյանի, «Պաշի Կոլա Սուրո Լենինականակի» մականվամբ Սուրեն Ավետիսյանի, «Մանեթի Կոլա Մամո» մականվամբ Մամիլե Հարությունյանի, «Հասան» մականվամբ Ասյան Ոստյանի կողմից «թագադրվելով», արագել է «օրենքով գողի»՝ քրեական

աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ և «գողական աշխարհում» հայրնի դառնալով որպես «Ժիրո Շահումյանակի» և հանդիսանալով քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորման՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամ, որը գործում է իր կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապարասխանում պետության կողմից սահմանված վարքագծի համապարարադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաստի ձևերին, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցավոր արարքի կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (հանդիսները) լուծելը կամ անօրինական օգուր կամ այլ առավելություն սրանալը, 2020թ. փետրվարի 22-ի դրությամբ շարունակելով պահպանել «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը, ղեկավարել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորում՝ դրա կողմից հետապնդվող նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ կատարելու, մասնավորապես՝ հանցագործություն կատարելու համար քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամներ հանդիսացող անձանց տալով հանձնարարություններ:

Իրենց հերթին, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամներ հանդիսացող անձինք, սրանալով և կատարելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ կատարելու մասին «Ժիրո Շահումյանակի» մականվամբ հայրնի, «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի հանձնարարությունները, մասնակցել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը:

Այսպես.

«Ժիրո Շահումյանակի» մականվամբ հայրնի, «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ժիրայր Բրուպյանը ՀՀ ԱԾ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում պահվող, նույն հիմնարկում այսպես կոչված «զոն նայողի» գործառույթներն իրականացնող «քրեական հեղինակության» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող «Կիլիկիացի Հարութիկ» մականվամբ Հարություն Թորոպյանին 2020թ. փետրվարի 22-ից հետո, քննությամբ դեռևս չպարզված օրը, հանձնարարել է ՀՀ ԱԾ «Արմավիր» քրեակարարողական հիմնարկում պահվող, «քրեական հեղինակության» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող, այսպես կոչված «զոն նայող» Սմբար Ավդալյանին իր անունից հրահանգել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված և ճանաչված վարքագծի կանոնների համաձայն ծեծի ենթարկելու միջոցով «պարծել» ՀՀ ԱԾ «Արմավիր» քրեակարարողական հիմնարկի թիվ 3-րդ տեղամասի կալանավոր Սամվել Քրմոյանին «Կյաժ» մականվամբ Աշոտ Պետրոսյանի սպանության համար, սակայն Սմբար Ավդալյանը հրաժարվել է կատարել «Ժիրո Շահումյանակի»

մականվամբ հայրնի, «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի հանձնարարությունը:

Շարունակելով իր հանցավոր մեղադրությունը «Ժիրո Շահունյանսկի» մականվամբ հայրնի, «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող ժիրայր Բրուսյանն իր հանձնարարությունը չկատարելու համար նախաձեռնել է ՀՀ ԱԾ «Արմավիր» ՔԿ հիմնարկի 3-րդ մասնաշենքում «զոն նայողի», քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Սմբար Ավդալյանին փոխարինելու գործընթաց:

Մասնավորապես՝ Ժիրայր Բրուսյանը ՀՀ ԱԾ «Արմավիր» ՔԿ հիմնարկի 3-րդ մասնաշենքում «զոն նայողի», քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Սմբար Ավդալյանի կողմից իր հանձնարարությունը չկատարելու համար հանձնարարել է «Կիլիկիացի Հարութիկ» մականվամբ հայրնի Հարություն Թորոսյանին «Արմավիր» քրեակարարողական հիմնարկի երրորդ մասնաշենքում քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոններով առաջնորդող, «իրենց խոսքը պահող նորմալ մարդ» գրնել:

Իր հերթին «Կիլիկիացի Հարութիկ» մականվամբ հայրնի «քրեական հեղինակության» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Հարություն Թորոսյանը Ժիրայր Բրուսյանի հանձնարարության կատարմանը ներգրավել է ՀՀ ԱԾ «Արմավիր» ՔԿ հիմնարկում պահվող, նույն հիմնարկի 6-րդ մասնաշենքի այսպես կոչված «զոն նայող» «քրեական հեղինակության» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Արթուր Բարոսյանին, ով երաշխավորել, սպա առաջարկել է քրեակարարողական հիմնարկում պահվող «Պզե» մականվամբ Գևորգ Գևորգյանի թեկնածությունը:

«Պզե» մականվամբ հայրնի Գևորգ Գևորգյանը, կրելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման վարքագծի կանոնները և ընդունելով «Ժիրո Շահունյանսկի» մականվամբ հայրնի Ժիրայր Բրուսյանի «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը, ինչպես նաև Հարություն Թորոսյանի՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «քրեական հեղինակության» կարգավիճակը, ժամանակավորապես սրանձնել է «Արմավիր» ՔԿ հիմնարկի երրորդ մասնաշենքում այսպես կոչված «զոն նայողի» գործառույթները և 20 օրվա ընթացքում երեք անգամ ծխախոտի, ուրեխի և այլնի տեսքով «դրսից բերված գրեֆներ» է բաժանել քրեակարարողական հիմնարկի 3-րդ մասնաշենքում պահվող կալանավորված և դադարապարկված անձանց, նույն մասնաշենքում պահվող կալանավորված և դադարապարկված անձանց հանձնարարել է 2021թ.-ի հունվարի 18-ին և հունվարի 24-ին իրականացնել անկարգություններ՝ դրանով իսկ փաստացի իր անդամակցությունն ունենալով քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը՝ «գողական աշխարհին» (...)⁹⁷⁴:

⁹⁷⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 73-75:

6. Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի մայիսի 8-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) [Ա]նդրադատնայով մեղադրյալի կայանավորման պայմանների առկայության կամ բացակայության հարցին՝ դատարանը նախ արձանագրում է, որ ներկայացված նյութերում առկա փաստական տվյալներն ու տեղեկությունները, մասնավորապես՝ Հարություն Վոլոդյայի Թորոպյանի և Գևորգ Հովհաննեսի Գևորգյանի նկարումսը ՀՀ ԱԾ «Երևան-Կենտրոն» քրեակարարողական հիմնարկի թիվ 13-րդ խցում իրականացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքների գնտության արձանագրությունը, ՀՀ ոստիկանության Բնարերպով ԱԿԲ-ից 05.05.2021թ. ստացված գրությունը, ՀՀ ԱԾ «Արևմտի» ԶԿՀ-ի աշխատակիցների կողմից ներկայացված զեկուցագրերը և աշխատակիցներ Տ.Կիրակոսյանի ու Ա.Զիլինգարյանի կողմից կազմված արձանագրությունները, «Լազերային սկավառակի պարունակությունը ուսումնասիրելու վերաբերյալ» արձանագրությունը, վկաներ Մուրեն Զիլինգարյանի, Արտակ Պետրոսյանի հարցաքննության արձանագրությունները, «Պրայմ Կրայմ կեդրոն» կայքում առկա Ժիրայր Բրուսյանի վերաբերյալ տեղեկատվությունը գնելու մասին արձանագրությունը, ՀՀ ԱԾ քրեակարարողական ծառայությունից և ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունից ստացված գրություններն ու «Ներքին դիտում» ՕՀՄ իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը քննության առնելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 03.02.2021թ. որոշումը, որոնց համակցությունը հիմք է տալիս փաստելու, որ քրեական գործի տվյալ փուլում նախաքննության մարմնի միջնորդությանը կից ներկայացվել են տվյալ փուլի չափանիշներին վերաբերվող բավարար սպացույցներ, փաստեր և տեղեկություններ՝ մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցանքը նրա կողմից կատարված լինելու հիմնավոր կասկածի առկայության մասին հետևության հանգելու համար:

(...) Բնարարանը եզրահանգում է, որ միջնորդական վարույթի իրականացնող մարմնի կողմից դատարան են ներկայացվել վարույթի տվյալ փուլին բնորոշ բավարար տեղեկություններ, փաստեր և սպացույցներ, որոնք ընդհանուր առմամբ մատնանշում են մեղադրյալի առնչությունը նրան վերագրվող ենթադրյալ հանցագործության կատարմանը, ինչպես նաև ողջամերոն հիմնավորում են, որ դեպքը, որի կատարման մեջ նա մեղադրվում է, համընկնում է նրան վերագրվող ենթադրյալ հանցանքին:

Մասնավորապես, համապատասխան օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքների վերաբերյալ փաստական տվյալները վերաբերելի չափանիշներով բովանդակային գնահատման ենթարկելով առկա մյուս փաստական տվյալների հետ միասին, դատարանը գտնում է, որ ենթադրյալ արարքի ենթադրարար կատարման ժամանակի վերաբերյալ քննիչի պարզարանումները ողջամիտ են, նկատի ունենալով, որ քրեական գործի սկզբնական փուլին վերաբերելի չափանիշներով, որով հիմնավոր կասկածի առկայության համար համեմատարար առավել նվազ տվյալներ են անհրաժեշտ, ներկայացված փաստական տվյալները բավարար են հանգելու այն հետևության,

որ առկա է հիմնավոր կասկած առ այն, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն վերագրվող արարքի կատարմանը:

Դատարանը, անդրադառնալով քննիչի կողմից նշված կալանավորման հիմքերին, համաձայնվելով դրանց վերաբերյալ քննիչի պարզապահությունների և հիմնավորումների հետ և մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության բարձր աստիճանը, նրա անձը, գրնում է, որ առկա է ողջամիտ հավանականություն, որ իրեն վերագրվող արարքի համար մեղադրանքի առաջադրումից հետո մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով և կատարել քրեական օրենքով չթույլատրված նոր արարք:

Դատարանը, անհուփելով վերագրյալը, եզրահանգում է, որ մեղադրյալին ազատությունից զրկելու համար առկա է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ նա կատարել է իրեն վերագրվող արարքը, և առկա են նրան վերագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա հիմնված ապացույցներ, որոնց և կալանավորման հիմքերի միաժամանակյա առկայությունը հիմք է տալիս արձանագրելու, որ քննիչի միջնորդությունը պարզապահված է ու ենթակա է բավարարման:

Դատարանը, նման եզրակացության հանգելով, ելնում է նաև հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռության հաստատման սկզբունքից, ինչը բխում է անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակների միջև համասնամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից:

Դատարանը, հաշվի առնելով մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վրանգավորության բարձր աստիճանը, քննիչի միջնորդությունը բավարարելու վերաբերյալ դատարանի հիմնավորումներից բացի, գրնում է, որ ակնկալվող պարժի իսպությունն իր հերթին մեծացնում է վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու հավանականությունը, հետևաբար՝ նաև գործով վերջնական ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամրելու վրանգը (...):»⁹⁷⁵:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Անդրադառնալով Ժիրայր Բրուրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրվող ենթադրյալ հանցագործությանը նրա առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության մասին Առաջին արյանի դատարանի հետևությանը, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես կասկածը հիմնավորող ներկայացված

⁹⁷⁵ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 129-139:

(...) նյութերը չեն բավարարում այն անհրաժեշտ սանդղակին, որն անհրաժեշտ է հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար:

(...) Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ քննիչի միջնորդությանը կից Առաջին աստիճանի դադարան ներկայացված նյութերն ինչպես առանձին վերցված, այնպես էլ իրենց համակցության մեջ հնարավորություն չեն տալիս փաստելու ժիրայր Բրուսյանի առնչությունն իրեն մեղսագրվող հանցավոր արարքին:

(...) Վերաքննիչ դադարանը գրնում է, որ՝

- «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքների գննության արձանագրությունում նշված խոսակցությունների բովանդակությունը հնարավորություն չի տալիս որոշումներ կատարելու անելու այն մասին, որ փարվող խոսակցությունները վերաբերվում են սույն գործով մեղադրյալ ժիրայր Բրուսյանին: Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ նման հիմնավորման համար հիմք ծառայող փաստական փաստերն առկա չեն նաև գործի մյուս նյութերում: Վերաքննիչ դադարանը գրնում է, որ վերոհիշյալ արձանագրությունով հիմնավորվում է, որ գրուցակիցները խոսում են նաև՝ ոմն «Ժիրոյի» մասին: Վերոգրյալի պայմաններում՝ Վերաքննիչ դադարանի համար ընդունելի է վերաքննիչ բողոքի փաստարկն այն մասին, որ հնարավոր չէ անգամ հիմնավոր կասկածի մակարդակում հաստատել համարելու, որ արձանագրությունում նշված խոսակցությունները վերաբերվում են ժիրայր Բրուսյանին,

- «Բրականացված «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման մասին» արձանագրությունում նշված խոսակցությունները բովանդակային առումով նույնական է «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքների գննության արձանագրությունում նշված խոսակցությունների բովանդակությանը: Ընդ որում՝ նշված են ոչ միայն կոնկրետ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում արձանագրված խոսակցությունների բովանդակությունը, այլև այդ արձանագրությունը կազմող պաշտոնապար անձի սուբյեկտիվ մեկնաբանությունները, որոնք չեն քիսում խոսակցությունների բովանդակությունից: Մասնավորապես՝ Վերաքննիչ դադարանի համար հասկանալի անհասկանալի է, թե վերոհիշյալ արձանագրությունում նշված խոսակցությունների բովանդակությունը կազմող կոնկրետ որ հանգամանքների և դրանց ինչպիսի համադրության և վերլուծության վրա հիմնվելով է հիշյալ արձանագրությունը կազմող պաշտոնապար անձը կարեգորիկ եզրակացություն կատարել այն մասին, որ գրուցակիցները խոսում են ժիրայր Բրուսյանի մասին,

- ՀՀ ԱԾ քրեակարարողական ծառայությունից և ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունից ստացված գրություններն իրենց բնույթով օպերատիվ են: Այս կապակցությամբ Վերաքննիչ դադարանը հարկ է համարում նշել, որ օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը դասվում է այն օպերատիվ-հետախուզական միջոցառումների շարքին, որոնց արդյունքն ամրագրված է միայն փաստաթղթային ձևով, աղբյուրը բացահայտված չէ: Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ գործի նյութերում առկա չեն այլ հանգամանքներ, որոնք հնարավորություն կրան գնահատել այդ փաստերը,

- «Պրայմ Կրայմ կեյր ռու կայքում սոկա ժիրայր Բրուսյանի վերաբերյալ տեղեկատվությունը գննելու մասին» արձանագրությունում նշված տեղեկատվության ծագման աղբյուրն անհայտ է, դրանում սոկա տեղեկության հավաստիությունը գնահատել հնարավոր չէ, միաժամանակ գործի նյութերում սոկա չեն այլ հանգամանքներ, որոնք հնարավորություն կտան գնահատել այդ տվյալները,

- գործում սոկա մյուս նյութերը ժիրայր Բրուսյանի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի գնահատման տեսանկյունից որևէ նշանակություն չունեն:

(...) Վերաքննիչ դադարանը գտնում է, որ գործի նյութերում սոկա փաստական տվյալների վերլուծությունն ու համադրությունը հնարավորություն չի տալիս եզրակացնելու, որ ժիրայր Բրուսյանը հնարավոր է, որ կատարած լինի ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ենթադրյալ հանցանքը:

(...) Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ Առաջին սայրանի դադարանը քննիչի միջնորդության քննության ժամանակ բովանդակային առումով չի ունեցել բավարար փաստական տվյալներ ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղաագրվող ենթադրյալ հանցագործությանն ժիրայր Բրուսյանի առնչությունը (հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածը) հաստատված համարելու համար, որպիսի պայմաններում փաստելով դրա սոկայությունը հանգել է ոչ իրավաչափ հետևության:

Անդրադառնալով Դատարհագի և քննիչի՝ «ներքին դիրում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն տալու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին սայրանի դադարանի՝ 2021 թվականի փետրվարի 3-ի որոշման կապակցությամբ Վերաքննիչ դադարանում արված դիտարկմանը, սպա Վերաքննիչ դադարանը գտնում է, որ հիշյալ դադարանի սկզբով ընդամենը թույլատրվել է իրականացնել «ներքին դիրում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, իսկ դադարանի սկզբում օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու մասին միջնորդության բովանդակության մեջբերումը որևէ նշանակություն չի կարող ունենալ ժիրայր Բրուսյանի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի գնահատման տեսանկյունից:

Ամփոփելով՝ Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ Առաջին սայրանի դադարանն անբեռել է այն հանգամանքը, որ ժիրայր Բրուսյանի նկատմամբ կայանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությանը կից Առաջին սայրանի դադարան ներկայացված նյութերում բացակայել է ժիրայր Բրուսյանի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը:

(...)

Վերաքննիչ դադարանը կալանավորման վերտիշյալ պայմանի բացակայության պայմաններում այլևս առարկայազուրկ է համարում անդրադառնալ մեղադրյալ ժիրայր Բրուսյանի նկատմամբ կալանավորումը

*որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի բացակայության վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկին (...)*⁹⁷⁶:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործության հիմնավոր կասկածի մասին վկայող, ինչպես նաև մեղադրյալի կողմից քննությունից թաքնվելու, քննությանը խոչընդոտելու և քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բավարար փաստական տվյալների համակցության առկայության պայմաններում՝ բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, թույլ է տվել դատական պիսալ, այն է՝ կայացրել է մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշում:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարան ներկայացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքների գննության արձանագրությունից երևում է, որ Ժ.Բրուտյանի, Հ.Թորոսյանի, Գ.Գևորգյանի, Ա.Բարոյանի և մի շարք այլ անձանց մասնակցությամբ ստեղծված խմբավորումը գործել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) վարքագծի կանոններով: Այդ փաստական տվյալներից ակնհայտ է, որ այդ խմբավորման համար ընդունելի է ենթադրյալ հանցանք կատարած անձին քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված և ճանաչված վարքագծի կանոնների համաձայն ծեծի ենթարկելու միջոցով «պատժի» ենթարկելը, որպիսի հանգամանքը փաստվել է նաև Հ.Թորոսյանի և Գ.Գևորգյանի միջև տեղի ունեցած խոսակցություններում: Մինչդեռ, նշված հանգամանքները պատշաճ գնահատման չեն արժանացել, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգել է անհիմն և չպատճառաբանված եզրահանգման Ժ.Բրուտյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցանք կատարելու հիմնավոր կասկածի բացակայության վերաբերյալ:

8.1. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքների գննության արձանագրությունում նշված խոսակցությունների բովանդակությունը հնարավորություն չի տալիս ողջամիտ ենթադրություն անելու այն մասին, որ տարվող խոսակցությունները վերաբերում են սույն գործով մեղադրյալ Ժ.Բրուտյանին, բողոքաբերը փաստել է, որ նշված անհիմն եզրահանգումն արդյունք է դատարան ներկայացված փաստական տվյալների ոչ պատշաճ գնահատման:

⁹⁷⁶ Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 39-52:

Բողոքաբերը նշել է, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունից և ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունից ստացված գրությունները վկայում են Ժ.Բրուտյանի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածի շեղը հաղթահարված լինելու մասին:

8.2. Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ առկա են նաև բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալ Ժ.Բրուտյանը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք:

Այս առումով Առաջին ատյանի դատարանը կայացրել է կալանավորման միջնորդությունը բավարարելու մասին օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մայիսի 24-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 8-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ներկայացված նյութերը բավարար չեն Ժիրայր Բրուտյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար:

11. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...) 4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):»:

11.1. Վերահաստատելով և զարգացնելով կալանավորման պայմաններից «հիմնավոր կասկածի» գնահատման սահմանների վերաբերյալ *Վահրամ Գևորգյանի*⁹⁷⁷, *Հարություն Խաչատրյանի*⁹⁷⁸ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն *Էդգար Եղիազարյանի*

⁹⁷⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վահրամ Գևորգյանի* գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշումը, կետեր 20-23:

⁹⁷⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հարություն Խաչատրյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԴ2/0009/06/11 որոշումը, կետեր 13 և 15:

գործով ընդգծել է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ⁹⁷⁹:

Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, ընդգծել է հետևյալ հանգամանքները՝

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումն այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում) է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից⁹⁸⁰, ուստի հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ, դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին՝ այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ

⁹⁷⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը, կետ 14:

⁹⁸⁰ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ներսես Միսակյանի* գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԴ/1/0003/11/08 որոշումը:

այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել⁹⁸¹, կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն)⁹⁸²:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմնի կողմից Ժիրայր Բրուտյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով⁹⁸³,

- Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Նախաքննության մարմնի կողմից դատարան են ներկայացվել վարույթի տվյալ փուլին բնորոշ բավարար տեղեկություններ, փաստեր և ապացույցներ, որոնք ընդհանուր առմամբ մատնանշում են մեղադրյալի առնչությունը նրան վերագրվող ենթադրյալ հանցագործության կատարմանը, ինչպես նաև ողջամտորեն հիմնավորում են, որ դեպքը, որի կատարման մեջ նա մեղադրվում է, համընկնում է նրան վերագրվող ենթադրյալ հանցանքին⁹⁸⁴:

- Վերաքննիչ դատարանը գտել է, որ գործի նյութերում առկա փաստական տվյալների վերլուծությունն ու համադրությունը հնարավորություն չի տալիս եզրակացնելու, որ Ժ.Բրուտյանը հնարավոր է, որ կատարած լինի ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ենթադրյալ հանցանքը: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ժ.Բրուտյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությանը կից Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերում բացակայել է Ժ.Բրուտյանի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը⁹⁸⁵:

13. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-11.1-րդ կետերում մեջբերված իրավադրույթի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ստուգման ենթարկելով Ժ.Բրուտյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործության հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումների իրավաչափությունը, պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել մի շարք առանցքային հանգամանքներ:

⁹⁸¹ Այդ առումով մանրամասն տես, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06:

⁹⁸² Տես Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը, կետ 15:

⁹⁸³ Տես սույն որոշման 5-րդ կետը:

⁹⁸⁴ Տես սույն որոշման 6-րդ կետը:

⁹⁸⁵ Տես սույն որոշման 7-րդ կետը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին աստիճանի դատարանը հանգել է հիմնավոր հետևության առ այն, որ նյութերում առկա փաստական տվյալները բավարար են դատավարության տվյալ փուլում ողջամիտ ենթադրություն անելու, որ առկա է մեղադրյալ Ժ.Բրուտյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը՝ հիմք ընդունելով նյութերում առկա փաստական տվյալները, այդ թվում նաև՝ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված փաստական տվյալները, համաձայն որոնց՝

- «Ժիրոն» Հարություն Թորոսյանից «3-րդ կորպուսի համար» հարցրել է, թե «ո՞վ կա մի հատ նորմալ տղա, որ կարա մեր խոսքը պահի»:

- Հ.Թորոսյանը «Պզեհի» հայտնել է, որ վերջինս բոլորի ներկայությամբ հայտարարի, որ «գողական կասայի» հետ կապված հարցերով դիմեն նրան:

- «Ժիրոն» և Հ.Թորոսյանը քննարկումներ են ունեցել «Պզեհի» անձի և արարքների վերաբերյալ, այդ թվում նաև՝ Հ.Թորոսյանի և «Պզեհի» միջև տեղի ունեցած վերոնշյալ խոսակցությունից հետո քրեակատարողական հիմնարկում «Պզեհի» արված հայտարարության վերաբերյալ:

- Հ.Թորոսյանը հայտնել է, որ «Ժիրոն», նաև այլ «գողեր» զանգել են իրեն, ինչից հետո ինքը «գոնը» վերցրել է «Սմբոյից» և տվել «Պզեհին»:

- «Ժիրոն» ծեծելու վերաբերյալ հանձնարարություն է տվել Հ.Թորոսյանին:

- Ս.Ավդալյանը Հ.Թորոսյանից հարցրել է. «դու չգանգի՞ր, ասիր տփի Սամվելիկին», «Հարութ, դու ինձի չե՞ս ասել տփի», իսկ Հ.Թորոսյանը հայտնել է, որ եթե վերջինս պարտավորվել է, պետք է կատարի:

- «Սմբատիկը» Գևորգ Գևորգյանին հայտնել է, որ իրեն զանգել են և ասել, որ ծեծի ենթարկի «Սամվելիկին»:

- Հ.Թորոսյանը գրույցների ընթացքում օգտագործում է «Ժիրոն», «Քաչալ», «Շահումյանցի» արտահայտությունները⁹⁸⁶:

Բացի այդ, գործի նյութերում առկա՝ ՀՀ ոստիկանության Ինտերպոլ ազգային կենտրոնական բյուրոյի պետի, ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետի առաջին տեղակալի՝ 2021 թվականի մայիսի 5-ի գրությունների, «Պրայմ Կրայմ կետ ռու (primecrime.ru) կայքում առկա Ժիրայր Բրուտյանի վերաբերյալ տեղեկատվությունը զննելու մասին» արձանագրության համաձայն՝ 2011 թվականի մայիսին Երևան քաղաքում, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված և ճանաչված վարքագծի կանոնների համաձայն, մի շարք «օրենքով գողերի» կողմից որպես «օրենքով գող» «թագադրվել է» Ժիրայր Բրուտյանը («Խչոյի տղա Ժիրոն», «Ժիրիկ», «Շահումյանցի Ժիրոն», «Ժիրոն Շահումյանսկի»), ով առնվազն մինչև 2021 թվականի մայիսի 5-ը պահպանել է քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «օրենքով գողի» կարգավիճակը⁹⁸⁷:

⁹⁸⁶ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 19-29, 31-52:

⁹⁸⁷ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 64-65, 78, 83-87:

Վերագրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում առկա նյութերն իրենց համակցության մեջ դատավարության տվյալ փուլում բավարար են Ժ.Բրուտյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի շեմը հաղթահարելու համար՝ հաշվի առնելով նաև, որ Վերաքննիչ դատարանը ստուգման է ենթարկել մեղադրյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ առաջին անգամ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի որոշման իրավաչափությունը:

14. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի հետևությանն առ այն, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքների գննության արձանագրությունում նշված խոսակցությունների բովանդակությունը հնարավորություն չի տալիս ողջամիտ ենթադրություն անելու այն մասին, որ տարվող խոսակցությունները վերաբերում են սույն գործով մեղադրյալ Ժ.Բրուտյանին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման 13-րդ կետում մեջբերված փաստական տվյալները, այդ թվում նաև՝ Հ.Թորոսյանի կողմից կիրառվող անհատականացնող արտահայտությունները հնարավորություն են տալիս «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ապացուցողական չափանիշին համապատասխան արձանագրելու, որ խոսակցությունները վերաբերում են մեղադրյալ Ժիրայր Բրուտյանին:

14.1. Անդրադառնալով «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքների, «Պրայմ Կրայմ կետ ռու (primecrime.ru) կայքում առկա Ժիրայր Բրուտյանի վերաբերյալ տեղեկատվությունը գննելու մասին» արձանագրության, ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունից և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունից ստացված գրությունների առնչությամբ Վերաքննիչ դատարանի հետևություններին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանը «հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի» առկայության հարցը քննարկելիս վերոնշյալ փաստական տվյալները գնահատման է ենթարկել միմյանցից անջատ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր այդ փաստական տվյալները գնահատել իրենց համակցության մեջ, որպիսի պայմաններում վերջինս կհանգեր հիմնավորված հետևության մեղադրյալ Ժ.Բրուտյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ:

14.2. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում, դատարան ներկայացված նյութերի առնչությամբ կատարել է գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ խորը վերլուծություն, ինչը բնորոշ է արդարադատության իրականացման բուն գործընթացին:

14.3. Մինևսույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի համար ընդունելի է Վերաքննիչ դատարանի դատողությունն առ այն, որ «ներքին դիտում»

օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն տալու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 3-ի որոշման մեջ մեջբերված՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի միջնորդության բովանդակությունը որևէ նշանակություն չի կարող ունենալ մեղադրյալ Ժ.Բրուտյանի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի գնահատման տեսանկյունից:

15. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ներկայացված կյուրթերը բավարար չեն Ժիրայր Բրուտյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելու համար, հիմնավոր չէ:

16. Վերոնշյալ եզրահանգման պայմաններում, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ մեղադրյալ Ժ.Բրուտյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայությանը:

Այսպես, հաշվի առնելով գործում առկա փաստական տվյալները, այդ թվում նաև՝ Ժ.Բրուտյանին մեղսագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, այն, որ վերջինիս մեղսագրվում է առաջադրվել առանձնապես ծանր հանցագործություն՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից քրեական ենթանշակույթ կրող խմբավորում ղեկավարելը (պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա), ինչպես նաև այն, որ Ժ.Բրուտյանը ենթադրաբար հանդիսանում է քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «օրենքով գողի» կարգավիճակ ունեցող անձ, ունի լայն քրեական կապեր Հայաստանի Հանրապետության և այլ երկրների տարածքներում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության՝ արձանագրելով, որ ներկայացված կյուրթերը վկայում են այն մասին, որ մեղադրյալ Ժ.Բրուտյանը մնալով ազատության մեջ կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով և կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք:

17. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ և 135-րդ հոդվածների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել դատական սխալ, ինչպես նաև այն, որ տվյալ դեպքում կալանավորումը

որպես խափանման միջոց կիրառելու հիմքերն ամբողջ ծավալով քննարկման առարկա են դարձվել Առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ բողոքում, Վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում, որպիսի պայմաններում ապահովված են անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները⁹⁸⁸, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 8-ի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 (երկու) ամիս ժամկետին պետք է հաշվակցել 2021 թվականի մայիսի 7-ից մինչև 2021 թվականի մայիսի 24-ը Ժ.Բրուտյանի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Ժիրայր Խաչիկի Բրուտյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 24-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մայիսի 8-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 (երկու) ամիս ժամկետին հաշվակցել 2021 թվականի մայիսի 7-ից մինչև 2021 թվականի մայիսի 24-ը Ժիրայր Խաչիկի Բրուտյանի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

արորագրություն

Դատավորներ՝

արորագրություններ

⁹⁸⁸ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

62.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0012/06/20

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2021 թվականի դեկտեմբերի 24-ին

ք.Երևանում

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Աղասի Ալեքսիի Թաթույանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում (այսուհետ նաև՝ Նախաքննության մարմին) 2020 թվականի փետրվարի 29-ին հարուցվել է թիվ 19100620 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի մարտի 16-ի որոշմամբ Աղասի Ալեքսիի Թաթույանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Թաթույանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2020 թվականի մարտի 17-ի որոշմամբ Ա.Թաթույանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2020 թվականի օգոստոսի 12-ին Ա.Թաթույանը հայտնաբերվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ Ա.Թաթույանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Թաթույանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով:

3. Մեղադրյալ Ա.Թաթույանի պաշտպան Գ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 2-ի որոշումը, մերժել է մեղադրյալ Ա.Թաթույանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը, վերացրել Ա.Թաթույանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը, և նրան ազատել կալանքից:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի մարտի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Ադաի Թաթույանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Նյա Հենրիկ Վլադիմիրի Գասոյանի և դեռևս քննությամբ չչարզված անձի հետ միասին 2020 թվականի փետրվարի 29-ին ժամը 17:45-ի սահմաններում, Վանսաձոր քաղաքի Երևանյան խճուղու 113 հասցեի շենքի մոտ, Վանիկ Վաղարշակի Այվազյանի վարած «Վագ 2121» մակնիշի 34 TA 853 համարանիշի ավտոմեքենայով իրենց ավտոմեքենայի վազանը խոչընդորդելու հարցի շուրջ առաջացած վիճարկության պարճառով, նույն օրը ժամը 18:40-ի սահմաններում, Վանսաձոր քաղաքի Տավրոսի 4-րդ փողոցի 12/1 հասցեում գրավոր Վանիկ Այվազյանի բարեկամներ Արթուր և Էդուարդ Ուիյանների ավտոբնակում, իրենց անձի առավելությունն ընդգծելով, բացահայտ

անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, հայտնել են Վանիկ Այվազյանին, վիճարանել նրա, Ալիկ և Էդուարդ Ուփյանների հետ, որի ընթացքում Աղասի Թաթույանը ձեռքով հարվածել է Վանիկ Այվազյանի դեմքին նրա առողջությանը պարճառել առողջության թեթև վնասի հարկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք ձախ ստորին կուպի արյունազեղում, զենքով արքճանակով, կրակել նրա ուրքերի փակ, իսկ Հենրիկ Գասոյանը որպես զենք օգրագործվող առարկայով կացնի պոչի մասով, հարվածել է Վանիկ Այվազյանի մեջքին, ինչպես նաև քննությանը չպարզված անձը դանակի պոչով Էդուարդ Ուփյանի գլխին նրա առողջությանը պարճառել առողջության կարճարև քայքայումով թեթև մարմնական վնասվածք:

Շարունակելով իրենց խուլիգանական գործողությունները Աղասի Թաթույանը, Հենրիկ Գասոյանը և դեռևս ինքնությունը չպարզված անձը գարեջրի շշերով և կացնով ջարդել են հիշյալ ավերուրնակի դրան սպակեպար հարվածի սպակիները և իրենց նշյալ գործողություններով դիրավորությանը կուպի կերպով խահարել հասարակական կարգը, քացահայր անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ ու հեռացել:

Չբավարարվելով իրենց վերոհիշյալ գործողություններով Աղասի Թաթույանը հիշյալ ավերուրնակ է վերադարձել Հենրիկ Գասոյանի, Սպարուակ Մերգելի Դերճյանի և դեռևս գործով չպարզված մի խումբ այլ անճանց հետ և շարունակելով իրենց խուլիգանական գործողությունները, մի կողմ են հրել դեպքի վայր կանչված Աշուր Ուփյանին, մուրք գործել ավերուրնակ ու միաճամանակ, գիրակցելով համարեղ գործելու հանգամանքը և լրացնելով միմյանց գործողությունները, իրենց մուր առկա որպես զենք օգրագործվող սուր կրող-ճակող գործիքներով, կացնով հարվածներ են հասցրել Էդուարդ ու Արթուր Ուփյանների մարմնի փարքեր մասերին Էդուարդ Ուփյանի առողջությանը պարճառել կյանքին վրանագ սպառնացող ճանր մարմնական վնասվածքներ կրճքավանդակի աջ կեսի ճակած-կրած թախանցող վերք աջից 6-8-րդ կողակրերի և աջ թոքի վնասումներով, հեռնոսնևնորարքսով, գլխի ճակարային շրջանի կրած վերք, աջից և ճակից գագաթային շրջանների ու քթի մեջքի շրջանի սայջարդ վերքեր, իսկ Արթուր Ուփյանի առողջությանը պարճառել առողջության կարճարև քայքայումով թեթև մարմնական վնասվածքներ գլխի գագաթային և ճոճրակային շրջանների պարոված վերքեր, աջ դասարակի սայջարդ և աջ ազրրի վերին երրորդակակի միջային մակերեսի վերք և դիմել փահտուպի»⁹⁸⁹:

6. Առաջին առյանի դատարանը 2020 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ արճանագրել է հետևյալը. «(...) Դարարանը (...), հանգում է որջամիք ենթադրության, որ մեղսագրվող հանցավոր արարքների հետ մեղադրյալ Աղասի Ալեքսի Թաթույանի առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածը շարունակում է առկա լինել:

(...)

⁹⁸⁹ Տեն նյութեր, հատոր 1, թերթեր 64-66:

Գատարանն արձանագրում է, որ շարունակվում են սուկա լինել մեղադրյալ Աղասի Ալեքսիի Թաթույանին կալանքի տակ պահելու պայմանները և հիմքերը: Մասնավորապես, Գատարանը փաստում է, որ շարունակվում է սուկա լինել հիմնավոր կասկածն առ այն, որ մեղադրյալ Ա.Թաթույանն առնչություն ունի իրեն մեղաագրված արարքներին: Բացի այդ, Գատարանը, հաշվի առնելով մեղադրյալ Աղասի Ալեքսիի Թաթույանին մեղաագրված արարքների բնույթը և հանրային վրանգավորության աստիճանը, այն, որ նրան մեղաագրվում է ծանր հանցագործությունների կատարում, նաև այն, որ Ա.Թաթույանը ենթադրյալ հանցագործությունները կատարելուց հետո, թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից, նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, գրնում է, որ շարունակվում է պահպանվել և մեծ է ազարության մեջ մնալու դեպքում մեղադրյալի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը:

(...)

Գատարանն արձանագրում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ սպառնալու գործի քննության ընթացքը: Մասնավորապես, տոժողներ են ճանաչվել և հարցաքննվել Էդուարդ Ուիյանն ու Սյարգյակ Դերձյանը, հարցաքննվել են մի շարք անձինք, կատարվել են ազդարարումներ, դեպքի վայրի զննություններ, նշանակվել են դատաբժշկական, դատաստարանքագիրական, դատամատրատորոշմային փորձաքննություններ, սրացվել են դրանց եզրակացությունները, որոնք ծանոթացվել են կողմերին, նշանակվել են համալիր դատաձգարանական, դատահետքարանական, դատաբժշկական, դատակենսարանական, մանրաթելերի և դատանյութագիրական և դատակենսարանական փորձաքննություններ, որոնց եզրակացությունները դեռևս չեն սրացվել, հանձնարարություններ են տրվել հետաքննության մարմնին: Մի շարք քննական և դատավարական գործողությունների կատարումը հետաձգվել է նախաքննական մարմնից անկախ պարճատներով՝ պայմանավորված նշանակված դատակենսարանական և համալիր դատաձգարանական, դատահետքարանական, դատաբժշկական, դատակենսարանական, մանրաթելերի և դատանյութագիրական փորձաքննությունների եզրակացությունների սրացմամբ: Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ մեղադրյալ Աղասի Ալեքսիի Թաթույանին կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է 2020 թվականի հոկտեմբերի 12-ին, սակայն քրեական գործով դեռևս անհրաժեշտ է սրանսպ նշանակված փորձաքննությունների եզրակացությունները, կատարել արդյունքներից բխող այլ քննական ու դատավարական գործողություններ, բացի այդ Հենրիկ Գատյանը դեռևս գրնվում է հետախուզման մեջ և չեն պարզվել նաև մյուս մասնակիցների ինքնությունները, գրնում է, որ այս պայմաններում միջնորդությունը պետք է բավարարել և մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնել երկու ամսով մինչև 2020 թվականի դեկտեմբերի 12-ը:

Այսպիսով, դադարանը գրնում է, որ մեղադրյալ Ադասի Ալեքսիի Թաթույլյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու համար ներկայացված հիմքերը և պայմանները բավարար են (...)»⁹⁹⁰:

7. Վերաքննիչ դատարանը 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Թաթույլյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելիս արձանագրել է. «(...) Վերաքննիչ դադարանը հանգում է հետևության այն մասին, որ մեղադրյալ Ադասի Թաթույլյանի կալանավորման վերաբերյալ (...) Գադարանն իր տրամադրության տակ բավարար փյալներ է ունեցել այն մասին, որ առկա է հիմնավոր կասկած դեպքին Ադասի Թաթույլյանի առնչության մասին (առկա է հիմնավոր կասկած):

Անդրադատնալով կալանավորման մյուս պայմանների առկայության հարցին Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ (...) ներկայացված նյութերի ուսումնասիրությամբ պարզված՝ մեղադրյալի արգելանքի տակ գրնվելու անցած ժամանակահատվածում քրեական գործով կարարված դադարավարական գործողությունների իրողությունը հիմք է տալիս հանգելու այն հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի դրսևորվել բավարար ջանասիրություն ապահովելու գործի քննության ողջամիտ ընթացքը: Վերաքննիչ դադարանի նշված եզրահանգումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

Անհրաժեշտ ջանասիրությունը վարույթն իրականացնող մարմինը պարճատարանել է այն հանգամանքով, որ կարարվել են մի շարք քննչական և դարավարական գործողություններ, մասնավորապես՝ տոժողներ են ճաննաչվել և հարցաքննվել է դուարդ Ուիյանն ու Սյարարակ Դերճյանը, հարցաքննվել են մի շարք անճիք, կարարվել են աղարավումներ, դեպքի վայրի զննություններ, նշանակվել են դարարճչկական, դարասարարարագիրական, դարամարնարողմային փորճարնություններ, սրացվել են դրանց եզրակացությունները, որոնք ճանտթացվել են կողմերին: Բացի այդ, նշանակվել են համալիր դարաճարանական, դարահետքարանական, դարարճչկական, դարանյութագիրական և դարակենսարանական փորճարնություններ, որոնց եզրակացությունները դեռևս չեն սրացվել, հանճարարություններ են տրվել հետարնության մարմնին:

Վերաքննիչ դադարանն արճանագրում է, որ 14.08.2020թ. մեղադրյալ Ադասի Թաթույլյանի նկարմամբ ընտրված իսսիանման միջոց կալանավորումը վերահասարտելու մասին միջնորդությունը բավարարվելուց հետո, մինչև 02.10.2020թ.՝ կալանքի ճամկետի երկարացման միջնորդության ներկայացումը, սույն գործով նսսիարնության մարմնի կողմից, բացատությամբ, դարակենսարանական փորճարնություն նշանակելուց և Ա.Թաթույլյանի ու վկա Վ.Այվազյանի հետսիտսահամարների վերճանտումները սրանալուց, որևէ քննչական և դարավարական գործողություն չի կարարվել, ինչը հասարարել է նսն քննիչ Վ.Գրիգորյանն առաչին ստյանի դադարանում միջնորդության

⁹⁹⁰ Տեն նյութեր, հաստոր 1, թերթեր 87-93:

քննության ժամանակ: Վերը նշվածը վկայում է այն մասին, որ նախաքննության մարմնի կողմից անհրաժեշտ ջանասիրություն չի ցուցաբերվել գործի քննության նկատմամբ, ինչն արդեն իսկ բավարար հիմք է կալանավորման ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժելու համար՝ ստանց անդրադարձալու կալանավորման հիմքերի շարունակական սուկայության հիմնավորումներին (...)⁹⁹¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը, մատնանշելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, գտել է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց քննությամբ էական են, ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Բացի այդ, բողոքաբերի պնդմամբ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «անհրաժեշտ ջանասիրություն» եզրույթը:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ մինչև կալանավորման երկարացման միջնորդություն ներկայացնելը վարույթն իրականացնող մարմինը կատարել է բազմաթիվ քննչական և այլ դատավարական գործողություններ, ինչի մասին արձանագրել է նաև Առաջին ատյանի դատարանը՝ միջնորդությունը բավարարելիս:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե ինչու՞ Առաջին ատյանի դատարանի կողմից արձանագրված փաստերը չեն կարող որպես հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացվող որոշման համար:

Վերաքննիչ դատարանը, անհրաժեշտ ջանասիրության հարցը գնահատելով միայն մեղադրյալ Ա.Թաթույանի վերաբերյալ կատարված քննության սահմաններում, անտեսել է այն հանգամանքը, որ հիշյալ քրեական գործը քննվում է բազմաթիվ անձանց մասնակցությամբ կատարված ծանր հանցագործության վերաբերյալ և ըստ էության քննության մեծ և զգալի մասը վերաբերում է կոնկրետ դեպքի ամբողջական բացահայտմանը, այլ ոչ թե կոնկրետ մեղադրյալ Ա.Թաթույանի կողմից կատարված արարքների վերաբերյալ ապացույցների ձեռք բերմանը:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ու փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 2-ի որոշումը:

⁹⁹¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 44-54:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանավորման ժամկետի երկարացման պայմանի՝ նախաքննական մարմնի անհրաժեշտ (հատուկ) ջանասիրության (*due diligence*) մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ են արդյոք նախաքննության մարմնի կողմից «անհրաժեշտ ջանասիրություն» դրսևորելու պայմանը պահպանված չլինելու հիմքով Աղասի Թաթույանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 2-ի որոշումը բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»:

12.1. Անդրադառնալով կալանքի ժամկետի երկարացման հարցին՝ Վճռաբեկ դատարանն *Սպան Ավերիսյանի* վերաբերյալ գործով կայացված որոշման շրջանակներում ընդգծել է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) շարունակում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը⁹⁹²:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնախնայելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

⁹⁹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սպան Ավերիսյանի* գործով 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը:

(...)

զ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...):»

13.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով կալանքի ժամկետի երկարացման պայմաններից՝ նախաքննություն իրականացնող մարմնի «հատուկ ջանասիրությամբ», իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ **քննության բարդությունը և առանձնահատկությունները** գործոններ են, որոնք պետք է հաշվի առնել՝ պարզելու համար, թե արդյոք իրավասու մարմինները վարույթն իրականացրել են «հատուկ ջանասիրությամբ»⁹⁹³:

14. Սույն որոշման 12-13.1-րդ կետում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննությունն իրականացնող մարմնի «անհրաժեշտ ջանասիրությունը», կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եզրույթաբանությամբ՝ «հատուկ ջանասիրությունը» (*due diligence*) մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու պայմաններից է:

Մասնավորապես, հիմնավոր կասկածի կենսունակությունը, համաձայն որի՝ ձերբակալված անձն է կատարել հանցագործությունը *sine qua non* պայման է կալանքի երկարաձգման օրինականության համար, սակայն ժամանակի ընթացքում այն այլևս բավարար չէ կալանքի երկարաձգումն արդարացնելու համար: Երբ «հիմնավոր կասկածի» առկայությունն այլևս բավարար չէ կալանքի հետագա երկարացման համար, պետք է հիմնավորվի, թե արդյո՞ք անագատության մեջ պահելու հիմքերը շարունակում են լինել «հիմնավոր» և «բավարար», և արդյո՞ք իշխանությունները «հատուկ ջանասիրություն» են ցուցաբերել գործի քննության ընթացքում⁹⁹⁴:

Կալանքի ժամկետի երկարացման օրինականության ստուգման համատեքստում «հատուկ ջանասիրության» գնահատումը նպատակ է հետապնդում երաշխավորելու մեղադրյալի ազատության իրավունքը: Այսպես, դատական քննության «սպասող» մեղադրյալի ազատության կանխավարկածի հաղթահարումը չի կարող արդարացվել ավելի երկար ժամանակահատվածով, քան անհրաժեշտ է գործի համակողմանի քննությունն իրականացնելու համար: Ոստի, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունն ապահովելու նկատառումներով անձի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել այնքան ժամանակ, քանի դեռ նախաքննական մարմինն ակտիվ քննություն է կատարում գործի հանգամանքների պարզման

⁹⁹³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Scott v. Spain* գործով 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 21335/93, կետ 75:

⁹⁹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Magee v. The United Kingdom* գործով 2015 թվականի մայիսի 12-ի որոշումը, գանգատներ թիվ 26289/12, 29062/12, 29891/12, կետ 88:

ուղղությամբ: Կարևոր է ընդգծել, որ անձի ազատության իրավունքի գերակայության գաղափարից ելնելով՝ այդ իրավունքի սահմանափակման ժամանակահատվածում վարույթն իրականացնող նախաքննական մարմինը պետք է քննի գործը **հասրուկ ջանասիրությամբ**⁹⁹⁵՝ նպատակ հետապնդելով հնարավորինս սեղմ ժամկետում ավարտել գործի նախաքննությունը և գործն ուղարկել դատարան՝ անձի՝ իր վերաբերյալ գործի հրապարակային դատական քննությունն ապահովելու համար: Հակառակ պարագայում, եթե նշված պայմանը պահպանված չէ և գործով ակտիվ նախաքննությունը հարաբերականորեն դադարեցված է, ապա, արտակարգ հանգամանքների բացակայության պարագայում⁹⁹⁵, անձի ազատության իրավունքի շարունակական սահմանափակումն այլևս արդարացված համարվել չի կարող:

Մինչև ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վարույթն իրականացնող մարմնի՝ «հատուկ ջանասիրության» գնահատումը չի կարող կատարվել քանակական ցուցիչով: Այս պայմանի առկայությունը չի կարող հաստատվել զուտ քննչական և դատավարական գործողությունների քանակով՝ անձի ազատության իրավունքի շարունակական սահմանափակումն արդարացնելու համար: Այլ կերպ, «հատուկ ջանասիրությունը» չի կարող ենթարկվել ձևական մեկնաբանության (*excessive formalism*) և յուրաքանչյուր դեպքում՝ ըստ գործի փաստական հանգամանքների, պետք է բովանդակային գնահատվի՝ որոշելու համար նախաքննական մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումների բավարարությունը:

Վերոնշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ «հատուկ ջանասիրությունը» գնահատելիս դատարանները ոչ միայն պետք է հաշվի առնեն իրականացված քննչական և դատավարական գործողությունների քանակական կազմը, այլ նաև ուշադրության արժանացնեն գործի բարդությունը: Այս առումով կարևոր է մի կողմից՝ գործով անցնող մեղադրյալների, վկաների, տուժողների, դատավարությանը մասնակցող այլ անձանց, մյուս կողմից՝ մեղադրյալ(ներ)ին մեղսագրվող արարքների քանակը, դրանց փաստական և իրավական բովանդակությունը, ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը և հավաքվող ապացույցների ծավալը: Միաժամանակ, գործի բարդությունը որոշելիս պետք է նաև հաշվի առնել վկաների գտնվելու վայրը պարզելու և նրանց հարցաքննելու նպատակով ձեռնարկվող միջոցառումների շրջանակը (օրինակ՝ միջազգային իրավական օգնությամբ այլ երկրում կամ պաշտպանության ներքո գտնվող վկաներին հարցաքննելու նպատակով կատարվող գործողությունները):

⁹⁹⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Fenech v. Malta* գործով 2021 թվականի մարտի 23-ի որոշումը, գանգատ թիվ 19090/20, կետ 96: Նշված վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում չի արձանագրել, երբ COVID-19 համավարակով պայմանավորված բացառիկ հանգամանքների պայմաններում քրեական վարույթը շուրջ երեք ամիս կասեցված է եղել, սակայն դրանից առաջ և հետո քրեական վարույթը ակտիվ ընթացքի մեջ է գտնվել:

Բացի այդ, «հատուկ ջանասիրության» առկայությունը որոշելիս հարկ է նաև հաշվի առնել գործով անցնող շահագրգիռ անձանց վարքագիծը՝ գործի արագ քննությանը չխոչընդոտելու տեսանկյունից: Մասնավորապես, գործի քննության ձգձգումը կարող է պայմանավորված լինել դատավարության մասնակիցների, այդ թվում՝ անազատության մեջ գտնվող մեղադրյալի կողմից գործի քննության ընթացքը շեղելու (օրինակ՝ ի սկզբանե սուտ մատնություն կատարելու միջոցով), իրենց վարքագծով պարզման ենթակա հանգամանքների բացահայտման խոչընդոտներ ստեղծելու հանգամանքներով, որոնք կարող են առաջացնել լրացուցիչ քննչական և դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտություն:

Վերոգրյալի հետ մեկտեղ, նախաքննական մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումների բավարարությունը որոշելիս կարևոր է գնահատել նաև գործի նախաքննության ընդհանուր տևողությունը, կալանքի ժամկետի երկարացմանը նախորդող ժամանակահատվածում կատարված և հաջորդող ժամանակահատվածում պլանավորվող քննչական և դատավարական գործողությունների ծավալը, վերջինիս հարաբերակցությունը գործի ընդհանուր քննության ծավալի և կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետի հետ: Միաժամանակ, այս առումով հարկ է նկատի ունենալ, որ նախաքննության մարմնի՝ «հատուկ ջանասիրությունը» գնահատելիս և մեղադրյալի ազատության իրավունքի շարունակական սահմանափակման անհրաժեշտությունը որոշելիս դատարանները պետք է ձեռնպահ մնան այն աստիճանի քննություն իրականացնելուց, որ մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող նախնական դատական վերահսկողությունը վերաճի գերատեսչական վերահսկողության կամ դատախազական հսկողության: Մասնավորապես, անհրաժեշտ է հաշվի առնել, որ կալանքի ժամկետի երկարացմանը նախորդող ժամանակահատվածում կատարված և հաջորդող ժամանակահատվածում պլանավորվող քննչական և դատավարական գործողությունների ծավալի որոշման բացառիկ իրավասությունը վերապահված է նախաքննության ընթացքն ուղղորդող քննիչին: Դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանների խնդիրն է ընդհանուր առմամբ գնահատման ենթարկել նախաքննության ընթացքի ակտիվությունը՝ առանց միջամտելու վարույթն իրականացնող մարմնի բացառիկ իրավասությանը վերապահված հանգամանքների որոշման շրջանակին և նախաքննության խնդիրներին: Ընդ որում, նախաքննության ընդհանուր տևողության համատեքստում կալանքի ժամկետի երկարացմանը նախորդող ժամանակահատվածում կատարված և հաջորդող ժամանակահատվածում պլանավորվող քննչական և դատավարական գործողությունների ծավալը գնահատելիս պետք է հաշվի առնել, որ կալանքի ժամկետի շարունակաբար երկարացման բոլոր միջնորդությունների քննության ժամանակ նախաքննության մարմնի «հատուկ ջանասիրությունը» նույն սանդղակի լինել չի կարող: Մասնավորապես, նախաքննության փուլից ու պարզման ենթակա, տվյալ պահի դրությամբ ուրվագծված փաստական հանգամանքների շրջանակից կախված, ողջամտորեն

ակնկալվող «հատուկ ջանասիրությունը» չի կարող նույն աստիճանի լինել կալանքի ժամկետի երկարացման առաջին և դրան պարբերաբար հաջորդող միջնորդությունների քննության ժամանակ: Հետևաբար, այն պետք է ճկուն մեկնաբանության ենթարկվի՝ ըստ կալանքի ժամկետի երկարացման յուրաքանչյուր միջնորդության հիմքում ընկած փաստական հանգամանքների:

Վերոգրյալի հետ մեկտեղ, կալանքի ժամկետի երկարացման նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետությունն ապահովելու նպատակով նախաքննության մարմինը պետք է գործի բարեխղճորեն և դատարանին ներկայացնի «հատուկ ջանասիրության» դրսևորումը հիմնավորող նյութերը: Դատարանին պետք է ներկայացվեն համապատասխան փաստական տվյալներն անձի ազատության իրավունքի սահմանափակմանը կամ կալանքի տակ պահելու ժամկետի նախորդ երկարացմանը հաջորդող ժամանակահատվածում ձեռնարկված միջոցառումների մասին: Նշվածի գնահատման պայմաններում միայն կարող է հաղթահարվել անձի ազատության կանխավարկածը և ապահովվել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը: Նախաքննության մարմնի՝ «հատուկ ջանասիրությունը» հիմնավորող նյութերի գնահատմամբ միայն կարող է արդյունավետ դատական վերահսկողություն իրականացվել անձի ազատության իրավունքի հետագա սահմանափակման անհրաժեշտության նկատմամբ: Դատարանի խնդիրն է որոշել, թե նախաքննական մարմինն արդյո՞ք անհրաժեշտ ջանասիրությամբ ակտիվ քննություն է կատարում գործի հանգամանքների պարզման ուղղությամբ անձի ազատության իրավունքի սահմանափակման ժամանակահատվածում: Ուստի, այդպիսի նյութեր չներկայացնելը կարող է դիտարկվել որպես «հատուկ ջանասիրության» բացակայություն:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- 2020 թվականի փետրվարի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ⁹⁹⁶,

- Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի մարտի 16-ի որոշմամբ Ա.Թաթույանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 17-ի որոշմամբ Ա.Թաթույանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով⁹⁹⁷,

- 2020 թվականի օգոստոսի 12-ին Ա.Թաթույանը հայտնաբերվել է, և Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ նրա նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է⁹⁹⁸,

⁹⁹⁶ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

⁹⁹⁷ Տե՛ս նույն տեղում:

⁹⁹⁸ Տե՛ս նույն տեղում:

- Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Թաթույանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով: Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը: Մասնավորապես, տուժողներ են ճանաչվել և հարցաքննվել Էդուարդ Ուփյանն ու Սպարտակ Դերձյանը, հարցաքննվել են մի շարք անձինք, կատարվել են առգրավումներ, դեպքի վայրի զննություններ, նշանակվել են բազմաթիվ փորձաքննություններ, ստացված եզրակացությունները ծանոթացման համար ներկայացվել են կողմերին, իսկ որոշ եզրակացություններ դեռևս չեն ստացվել, հանձնարարություններ են տրվել հետաքննության մարմնին: Մի շարք քննչական և դատավարական գործողությունների կատարումը հետաձգվել է՝ պայմանավորված նշանակված դատակենսաբանական և համալիր դատաձգաբանական, դատահետքաբանական, դատաբժշկական, դատակենսաբանական, մանրաթելերի և դատանյութագիտական փորձաքննությունների եզրակացությունների ստացմամբ: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով, որ մեղադրյալ Ա.Թաթույանին կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է 2020 թվականի հոկտեմբերի 12-ին, սակայն քրեական գործով դեռևս անհրաժեշտ է ստանալ նշանակված փորձաքննությունների եզրակացությունները, կատարել արդյունքներից բխող այլ քննչական ու դատավարական գործողություններ, բացի այդ Հենրիկ Գասոյանը դեռևս գտնվում է հետախուզման մեջ և չեն պարզվել նաև մյուս մասնակիցների ինքնությունները, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ այս պայմաններում միջնորդությունը պետք է բավարարել և մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնել երկու ամսով՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 12-ը⁹⁹⁹,

- Վերաքննիչ դատարանը, մեղադրյալ Ա.Թաթույանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելիս, արձանագրել է, որ մեղադրյալի՝ արգելանքի տակ գտնվելու անցած ժամանակահատվածում քրեական գործով կատարված դատավարական գործողությունների իրողությունը հիմք է տալիս հանգելու հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի դրսևորվել բավարար ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ողջամիտ ընթացքը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ 2020 թվականի օգոստոսի 14-ից՝ մեղադրյալ Ա.Թաթույանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելուց հետո, մինչև 2020 թվականի հոկտեմբերի 2-ը՝ կալանքի ժամկետի երկարացման միջնորդության ներկայացումը, սույն գործով նախաքննության մարմնի կողմից, բացառությամբ դատակենսաբանական փորձաքննություն նշանակելուց և Ա.Թաթույանի ու վկա Վ.Այվազյանի հեռախոսահամարների վերծանումները ստանալուց, որևէ

⁹⁹⁹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

քննչական և դատավարական գործողություն չի կատարվել, ինչը հաստատել է նաև քննիչ Վ.Գրիգորյանը՝ Առաջին ատյանի դատարանում միջնորդության քննության ժամանակ: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ վերը նշվածը վկայում է այն մասին, որ նախաքննության մարմնի կողմից անհրաժեշտ ջանասիրություն չի ցուցաբերվել գործի քննության նկատմամբ, ինչն արդեն իսկ բավարար հիմք է կալանավորման ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժելու համար¹⁰⁰⁰:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ա.Թաթույանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման է ենթարկել գործի փաստական հանգամանքները՝ հաստատված համարելով վարույթն իրականացնող մարմնի՝ հատուկ ջանասիրության բացակայությունը: Մասնավորապես, ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարանին չի ներկայացվել որևէ ապացույց՝ մեղադրյալ Ա.Թաթույանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու որոշումը վերահաստատելու՝ 2020 թվականի օգոստոսի 14-ի որոշումից հետո մինչև միջնորդության ներկայացումը կատարված քննչական և դատավարական գործողության մասին: Այսպես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործի նյութերում առկա են միայն մինչև 2020 թվականի օգոստոսի 14-ը կատարված գործողությունների վերաբերյալ նյութեր: Ընդ որում, Վերաքննիչ դատարանի կողմից հիշատակված՝ դատակենսաբանական փորձաքննություն նշանակելու, Ա.Թաթույանի ու վկա Վ.Այվազյանի հեռախոսահամարների վերծանումները ստանալու վերաբերյալ տվյալները ևս բացակայում են գործի նյութերում:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ նախաքննության մարմնի կողմից «անհրաժեշտ ջանասիրություն» դրսևորելու պայմանը պահպանված չլինելու հիմքով Ադասի Թաթույանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 2-ի որոշումը բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր են:

17. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս դատական պիսալ թույլ չի տվել, Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումն օրինական է և հիմնավորված: Հետևաբար, վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

¹⁰⁰⁰ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Ադասի Ալեքսիի Թաթույանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ

ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Հատոր XIII



Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am

